ՉԱՐԼԶ ԴԻԿԿԵՆՍ

ԴԱՎԻԹ ԿՈՊՊԵՐՖԻԼԴ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՎԵՊ

Անգլերենից թարգմանեց ՓԻԼԻՊՊՈՍ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
Ձեռնարկելով «Դավիթ Կոպպերֆիլդ»-ի ներկա հրատարակությունը, Հայպետհրատը նպատակահարմար համարեց վերադառնալ Փ. Վարդանյանի՝ բնագրից կատարած թարգմանությանը, որը վերջին անգամ լույս է ընծայվել 1912 թվականին՝ հայկական տպագրության չորսհարյուրամյա հոբելյանի առթիվ: Ելնելով այսօրվա գրական լեզվի պահանջներից, թարգմանության մեջ կատարվում են լեզվա-ոճական որոշ շտկումներ, որոնք անխուսափելի են այսպիսի գործում: Միաժամանակ խմբագրությունն աշխատել է պահպանել թարգմանչի ոճի յուրահատկությունները և անհարկի միջամտություններով չաղարտել նրա լեզուն:

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

Ա. ԳԼՈՒԽ

Իմ ծնունդը

Ո՞վ կլինի իմ կենսագրության հերոսը. ե՞ս թե մի ուրիշ մարդ՝ այդ կիմացվի հետևյալ թերթերից: Հենց սկզբից սկսելու համար՝ իսկույն կասեմ, որ ես ծնվել եմ մի ուրբաթ օր, կես-գիշերին (գոնե այսպես են պատմել ինձ, և ես հավատում եմ): Նկատել են, որ ժամացույցի խփելը և իմ ճվալը մեկ է եղել:

Դայակս ու մեր հարևան պառավները, որոնք այն օրից էին հետաքրքրվել իմ անձով, երբ մենք դեռ ամենևին չէինք կարող իրար մոտիկից ճանաչել, ծնվելուս օրն ու ժամն իմանալով հրատարակում են՝ առաջին, թե այս աշխարհում ես անբախտ կլինեմ. և երկրորդ՝ ուրվականներ և ոգիներ տեսնելու ձիրք կունենամ: Ամեն մի երեխա, ասում են նրանք, որ թշվառություն է ունեցել ուրբաթ գիշերվա երկրորդ կեսին ծնվելու, անպատճառ օժտված կլինի այդ երկու ձիրքով:

Առաջին կետի մասին ավելորդ է խոսել, որովհետև այդ գուշակության ճշմարիտ կամ սուտ լինելը իմ կյանքի պատմությունից կերևա: Երկրորդին գալով՝ բավական է ասել, որ ես մինչև այսօր ուրվականներ չեմ տեսել, եթե միայն չենթադրենք, թե նրանք օրորոցիս մեջ են այցելել ինձ: Սակայն ես բնավ չեմ գանգատվում, որ զրկվել եմ այդ շնորհից. ընդհակառակը՝ շատ գոհ կլինեմ, եթե իմ ժառանգության այդ մասը մի ուրիշ մարդ գրաված լինի:

Ես շապկով եմ աշխարհ եկել[1]:

Այս շապիկի մասին թերթերի մեջ տպված է լինում, թե նա վաճառվում է չնչին գնով՝ տասնհինգ գինեով[2]: Բայց արդյոք այդ միջոցին նավաստիները պատրաստ փող չե՞ն ունեցել,

[1] Հասարակ անգլիացի ժողովրդի կարծիքով ծովում չի խեղդվի այն մարդը, որ մի մանկական շապիկ է կրում իր վզին իբրև հմայիլ կամ թալիսման:— Այս և հետևյալ ծանոթությունները թարգմանչինն են:
[2] Գինե՝ անգլիական ոսկեդրամ է՝ հավասար 21 շիլինգի: Մի ֆունտ ստեռլինգը հավասար է 20 շիլինգի. շիլինգը՝ մոտ 50 կոպեկի, պեննին կամ պենսը շիլինգի տասներկուերորդ մասն է:

թե՞ շապիկի հրաշագործ զորությանը չհավատալով, լավ են համարել՝ շապիկի փոխարեն մի խցանե գոտի գնել — չգիտեմ. ստույգն այս է, որ միայն մի մուշտարի է մեզ մոտ գալիս իմ շապիկը գնելու, և հատկապես մի մակլեր, որ միայն երկու ֆունտ է առաջարկում պատրաստ դրամով, իսկ մնացածը խոստանում է խերեսի գնով վճարել, որովհետև չի կամենում ավելի թանկ գնահատել ջրում խեղդվելուց ապահովող հմայիչը: Եվ մայրս դադարում է ոչ միայն հայտարարություններ տպել ու նրանց գինը զուր վճարել, այլև ստիպված է լինում ծախելու իր իսկ ունեցած խերեսը: Տասը տարի անցնելուց հետո իմ շապիկը վիճակ գցեցին հիսուն հոգու մեջ. տոմսակի գինը երկու շիլինգ էր. տանողը հինգ շիլինգ պիտի տար: Ես ինքս վիճակահանության ներկա էի և լավ եմ հիշում, որ շատ շփոթած ու տրտմած էի՝ տեսնելով, թե ինչպե՞ս են վարվում իմ անձնավորության մի մասի հետ: Չեմ մոռացել, որ շապիկը վիճակվեց մի պառավ կնոջ, որը իր հին քսակից ակամա հինգ շիլինգ հանեց՝ բոլորն էլ սև դրամով, ու երկունկես պենսի պակաս. երկար ժամանակ և թվաբանական մեծ հանճար հարկավոր եղավ այս բանը նրան ապացուցելու, սակայն իզուր: Եղելությունն այս է, և ամեն մարդ զարմանալով կհիշի, որ պառավը ջրահեղձ չեղավ, այլ բախտ ունեցավ իննսուներկուամյա հասակում առոք-փառոք իր անկողնում մեռնել: Ես իմացա, որ նա մինչև իր վերջին շունչը պարծեցել է, թե ոչ մի ժամանակ ուրիշ կերպ չի անցկացել ջրից, բայց միայն կամրջով, և թե թեյ խմելիս (որ սաստիկ սիրել է) միշտ բարկացել է այն անբարիշտ նավաստիների և մյուս նավորդների վրա, որոնք հանդգնություն են ունեցել «հեռու տեղեր քարշ գալու»: Զուր են փորձել բացատրել նրան, որ եթե այդ հեռու տեղեր ու երկրներ քարշ գալու եղեռնական զբաղմունքը չլիներ, մենք կյանքի շատ վայելքներից, գուցե և նույնիսկ թեյից, զուրկ կմնայինք: Նա միշտ եռանդով և անդրդվելի համոզմունքով պատասխանել է. «Ոչ, պետք չէ քարշ գալ»:

Եվ դեսուդեն քարշ չգալու համար՝ դարձյալ դառնամ իմ ծննդյան հարցին:

Ծնվել եմ Բլենդրոտընում, Սուֆոլկի կայսրության մեջ, կամ «այն կողմերում», ինչպես ասում են սկովտացիք: Ես որբածին զավակ էի: Երբ իմ աչքերը բացվեցին արևի լույսը տեսնելու, հորս աչքերը վեց ամսից ի վեր գոցված էին: Այսօր անգամ ես մի տարօրինակ բան եմ զգում, երբ մտածում եմ, որ նա երբեք չի տեսել ինձ. ավելի տարօրինակ բան եմ զգում իմ մանկության այն օրերը հիշելիս, երբ ապրում էի նրա սպիտակ տապանաքարի մոտերքում: Որքան եմ կարեկցել այդ ննջեցյալին, որ գիշերային խավարով պատած՝ մենակ պառկած էր հանգստարանի մեջտեղում, մինչ մեր փոքրիկ սենյակը այնպես տաք էր ու լուսավոր. ինձ թվում էր, թե անգթություն էր նրան մենակ դրսում թողնել և փակել մեր դռները նրա առջև:

Մեր գերդաստանի ամենագլխավոր անդամը հորս հորաքույրն էր, հետևաբար իմ տատը, որի մասին հետո երկար պիտի խոսեմ: Միս Տրոտուդը կամ միս Բեթսին, ինչպես որ խեղճ մայրս էր կոչում նրան, երբ քաջություն էր ունենում արտասանելու (որ շատ սակավ էր պատահում) այդ սոսկալի անձի անունը, ամուսնացած էր մի մարդու հետ, որ իրենից շատ ջահել էր և սիրուն, բայց սիրուն ոչ այն հին առածի իմաստով, թե «սիրունը նա է, ով բարի է»: Ասողներ կային, թե նա ծեծելիս է եղել միս Բեթսիին, և, մի անգամ, տնտեսական հաշիվների առթիվ վիճելիս, արագ ու հաստատ կերպով որոշել է դուրս նետել նրան երկրորդ հարկի պատուհանից: Միս Բեթսին, իր մարդու անզուսպ բնավորության այդ բացահայտ ապացույցների դիմաց լավ է համարել փող տալ նրան, որպեսզի նա հոժարակամ բաժանվի և հեռանա: Մարդն էլ դրամը ստանալուն պես հեռացել է Հնդկաստան և այնտեղ, ըստ մեր գերդաստանի ավանդության, նրան տեսել են մի **բեբունի**[3] հետ փիղ նստած շրջելիս: Սակայն ես կարծում եմ, թե այդտեղ մի սխալ կա. նրա ընկերը երևի կապիկ չէր, այլ բեբու, կամ բեգում, որ նշանակում է՝ հնդկական իշխանուհի: Ինչևիցե, տասը տարի անցնելուց հետո, լուր հասավ մեզ, թե նա մեռել է: Ոչ ոք չգիտե, թե տատս ինչպես ընդունեց այդ լուրը. ապահարզան ստանալուց հետո նա սկսել էր նորից իր օրիորդական անունը կրել և մի տուն էր գնել ծովի

[3] Բեբուն կամ բեբուին — կապկի տեսակ է. հայերեն՝ շնագլուխ:

հեռավոր ափին, և այնտեղ էլ բնակվում էր իր սպասուհու հետ մեն-մենակ, աշխարհից բոլորովին կտրված։

Հայրս, կարծեմ, մի ժամանակ միս Բեթսիի սիրելին էր, բայց միս Բեթսին սաստիկ դժգոհ էր մնացել նրա ամուսնությունից, որովհետև, նրա կարծիքով, մայրս «մի մոմե տիկին» էր — ուրիշ ոչինչ։ Նա երբեք մորս չէր տեսել, բայց գիտեր, որ մայրս քսան տարեկանից ջահել է։ Այնուհետև հայրս և միս Բեթսին բնավ իրար չեն հանդիպել։ Պսակվելիս իմ հայրը տարիքով երկու անգամ մեծ է եղել մորիցս, և բավական վատառողջ։ Նա մեռել է մի տարուց հետո, իմ ծնվելուց վեց ամիս առաջ, ինչպես արդեն ասել եմ։

Այսպես էր իրերի վիճակն այն՝ հիշատակության արժանի, և թող ներվի ինձ ասել, նշանավոր ուրբաթ գիշերը։ Ես իրավունք ունեմ պնդելու, թե հաստատ գիտեմ այդ գիշերվա դեպքերը և կամ թե իմ անձնական հիշողության վրա է հիմնված այն բոլորը, ինչ որ այսուհետև պիտի պատմեմ։

Մայրիկս, հիվանդ ու վշտահար, նստած էր վառարանի մոտ և կրակին էր նայում արտասվալիր աչքերով. նա հուսահատ մտածում էր թե՛ իր և թե՛ անհայր որբի մասին, որի աշխարհ գալը, մինչ այդ աշխարհը առանձին հաճույք չէր զգա նրա գալուց, արդեն ողջունվել էր հարյուրավոր մարգարեական գնդասեղներով[4], որոնք դրված էին պահարանի աչքում։ Եվ ահա մայրս, ինչպես ասացի, նստած էր վառարանի մոտ՝ մարտ ամսի պայծառ ու ցուրտ երեկոյին և տխուր մտածում էր, թե անկարող կլինի դիմանալ իրեն սպասող երկունքին, և իր արտասուքը սրբելիս՝ հանկարծ պատուհանից մի անծանոթ կին տեսավ, որ գալիս էր պարտեզի միջով։

Երկրորդ անգամ դուրս նայելով, մայրիկս պարզ գուշակեց, թե եկվորը միս Բեթսին է։ Մայր մտնող արեգակը պարտեզի ցանկապատի հետևից լուսավորում էր եկվորին, և սա այնպես հաստատ և համարձակ էր առաջ գալիս, ինչպես միս Բեթսին միայն կարող էր առաջ գալ։

Տան դռանը հասնելուն պես՝ նա մի նոր ապացույց տվեց, որ եկողը հենց ինքն է։ Հայրս միշտ ասելիս է եղել, թե իր հորաքույրը երբեք մի հասարակ ադամորդու պես չի շարժվել. և ահա դռան զանգակը հնչեցնելու փոխարեն՝ միս Բեթսին մոտենում է վերոհիշյալ պատուհանին և քիթը այնպես հպում ապակուն, որ քթի ծայրը, լուսահոգի մորս ասելով՝ իսկույն նեթ մի սպիտակ ու տափակ բան է դառնում։

Այս դեպքն այնպես է ցնցում մայրիկիս, որ ես մինչև այժմ համոզված եմ՝ ուրբաթ գիշերով աշխարհ գալս միս Բեթսիին եմ պարտական։

Մայրս շփոթված վեր թռավ և կանգնեց բազկաթոռի հետևը՝ անկյունում։ Միս Բեթսին ամբողջ սենյակը ծանր ու հանդարտ դիտելուց հետո՝ աչքերը հոլանդական ժամացույցի սլաքի նման դեսուդեն շրջեց և, վերջապես, մորս նշմարեց։ Հետո հրամայելու սովոր անձի խրոխտ հայացքով նշան տվեց մորս, որ գնա դուռը բանա։ Մայրիկս գնաց։

— **Կարծեմ** միստրիս Դավիթ Կոպպերֆիլդն եք,— ասաց միս Բեթսին, առաջին բառը շեշտելով, ցույց տալու համար, թե իր ենթադրությունը հիմնված է մորս սև հագուստի և երեխա բերելու մերձ վիճակի վրա։

— Այո,— թույլ ձայնով պատասխանեց մայրիկս։

— Ես միս Տրոտուդն եմ. անունս անշուշտ լսած կլինեք,— ասաց հյուրը։

Մայրիկս պատասխանեց, թե պատիվ է ունեցել լսելու. բայց ցավելով զգում էր, որ անկարող է ցույց տալ, թե մեծ հաճույք չէր վայելել այդ պատվից։

— Այժմ ահա տեսնում եք նրան,— ասաց միս Թեթսին։

---

[4] Անգլիական հին սովորությամբ՝ երեխայի ծնվելուց առաջ գնդասեղներ են ցցում բարձի մեջ, ասելով. «Բարով եկար փոքրիկ հյուր», և կամ՝ «Աստված օրհնե երեխային»։

Մայրս գլուխ տվեց և խնդրեց նրան ներս բարեհաճել։

Նրանք մտան այն սենյակը, որից մայրս մի րոպե առաջ դուրս էր ելել, որովհետև մյուս սենյակում հորս մահվան օրից ի վեր կրակ չէր վառվել։ Նստեցին։ Միս Բեթսին լուռ էր, իսկ մայրս ինքն իրեն զուր զսպելուց հետո, վերջապես սկսեց լաց լինել։

— Դե՛, դե՛, դե՛,— գոչեց արագ միս Բեթսին։— Այդպիսի բաներ հարկավոր չեն, բավական է։

Մայրս անկարող էր արտասուքը զսպել և շարունակում էր հեկեկալ։

— Հանիր գլխանոցդ, ա՛յ աղջիկ,— ասաց միս Բեթսին,— թույլ տուր երեսդ տեսնել։

Մայրս ահից քար կտրած, ուզենար էլ՝ չէր կարող այդ տարօրինակ պահանջին դիմադրել։ Նա հրամանը կատարեց, բայց այնպիսի դողդոջ ձեռքերով, որ գլխանոցը բաց անելիս՝ իր ճոխ ու սիրուն մազերն էլ քանդեց։

– Օ՛հ, աստված իմ,– գոչեց միս Բեթսին,– դու դեռ կատարյալ երեխա ես։

Մայրիկս, իրոք, չնայած իր հասակին, շատ նորատի էր երևում. նա գլուխը կախեց, ասես թե ջահել երևալը հանցանք լիներ, և հառաչելով ասաց, թե վախենում է, որ այդպես ջահել այրի է և արդեն մայր պիտի դառնա, եթե միայն կենդանի մնա։ Այս խոսքերին հաջորդող կարճ լռության միջոցին մայրս զգաց, որ միս Բեթսին թեթև շոյում է նրա մազերը. նա վախենալով նայեց տատիս. միս Բեթսին, իր շրջազգեստի փեշերը վեր քաշած, ձեռքերը ծնկին ծալած, ոտքերը վառարանի վանդակին դեմ տված՝ խոժոռ դեմքով մտիկ էր տալիս կրակին։

– Աստծու սիրուն,– գոչեց հանկարծ միս Բեթսին,– ինչո՞ւ են Րուկրի [5]անվանել սրան։

– Ձեր խոսքը մեր տան մասի՞ն է, տիկին,– հարցրեց մայրս։

– Ինչո՞ւ Րուկրի,– կրկնեց միս Բեթսին։– Եթե ավելի խելք ունենայիք, դու և նա, չէ՞ որ Կուկրի[6] կանվանեիք սրան, քան Րուկրի։

– Այդ անունը միստր Կոպպերֆիլդն է տվել,– պատասխանեց մայրիկս։– Տունը գնելիս նա սիրով մտածում էր, թե որոներ կլինեն սրա շուրջը։

Հանկարծ, երեկոյան քամին մի սաստիկ մռնչյուն հանեց պարտեզի հին պտղիների մեջ, և մայրիկս ու միս Բեթսին ակամա այն կողմը նայեցին։ Ահագին ծառերը մեկմեկու գաղտնիք հայտնող հսկաների նման հակվում էին դեպի իրար և մի քանի վայրկյան այսպես հանդարտ մնալուց հետո՝ նորից մոլեգնաբար ուղղվում, իրենց հուժկու բազուկները տատանելով, ասես թե լսած բաներից հանգիստ գտնելու անկարող. մինչ որոների հողմակոծ ու բզկտված հին բները մրրկահույզ ծովի երեսին ծփփփող ջարդված նավի բեկորների պես, ճոճվում էին ամենաբարձր ճյուղերի վրա։

– Թռչունները որտե՞ղ են,– հարցրեց միս Բեթսին։

– Թռ՞...:– Մայրս բոլորովին ուրիշ բանի վրա էր մտածում։

– Որորները, որտե՞ղ են կորել որոները,– նորից հարցրեց միս Բեթսին։

– Մեր այստեղ բնակվելու օրից ես նրանց չեմ էլ տեսել,– ասաց մայրս։– Մենք կարծում էինք... միստր Կոպպերֆիլդը կարծում էր, թե այստեղ շատ որորներ կլինեն, բայց բույները շատ հնացել էին և արդեն վաղուց ամայի էին։

---

[5] Rook — րուկ, անգլերեն նշանակում է որոր կամ ճայ (ագռավի մի տեսակ, իսկ Rookery, րուկրի կոչվում է որորների երամի բույնը, որ նրանք սովոր են հյուսել դարևոր դղյակների շուրջը կանգնած ծառերի վրա։ Անգլիացիք սիրում են այդ թռչուններին, որոնց բնակվելը ազնվական դղյակների մոտերքում սրանց հնության նշանն է համարվում։

[6] Կուկրի — խոհանոց կամ խոհարարության արվեստ։

– Ահա այդպես էր Դավիթ Կոպպերֆիլդը,– գոչեց միս Բեթսին։– Կարծես ողջ-ողջ կանգնած լինի աչքիս առջև։ **Ռուկրի** անվանել այս տունը, մինչդեռ շուրջը և ոչ մի հատ որոր չկա, և թռչուններ երևակայել՝ միայն բներ տեսնելով։ Թե խենթություն չէ, հապա ի՞նչ է։

– Մր. Կոպպերֆիլդը վախճանված է,– նկատեց մայրս,– և եթե դուք համարձակվեք իմ առջև անվայել խոսել նրա մասին...

Խեղճ մայրս, կարծես, մի վայրկյան ուզեցավ հարձակվել տատիս վրա և խեղդել նրան։ Այդ կռվում միս Բեթսին անշուշտ մի ձեռքով էլ կհաղթեր մորս, թեկուզ մայրս ավելի առողջ լիներ այն երեկո։ Սակայն մորս քաջությունը վաղանցուկ էր, և նրա աթոռից վերկենալուն պես նորից նստեց և իսկույն ուշաթափվեց։

Երբ որ նա ուշքի եկավ, գուցե նույնիսկ միս Բեթսիի օգնությամբ, տատս արդեն կանգնած էր պատուհանի մոտ։ Երեկոյան վերջալույսը տեղի էր տվել մթության, և նրանք կարող էին միայն վառարանի աղոտ լույսով տեսնել միմյանց։

– Հը՛մ,– ասաց միս Բեթսին, նորից նստելով աթոռի վրա, ասես թե միայն պատահմամբ պատուհանից դուրս նայած լիներ,– ուրեմն ե՞րբ եք սպասում։

– Ամբողջ մարմինս դողում է,– թոթովեց մայրս։– Այս ի՞նչ է, չգիտեմ։ Մահս արդեն մոտեցել է։

– Չէ՛, չէ՛, չէ՛,– ասաց միս Բեթսին։– Եկ մի բաժակ թեյ խմիր։

– Օ՛հ, աստված իմ, աստված իմ։ Մի՞թե կարծում եք, որ թեյն ինձ կօգնի,– հարցրեց մայրս հուսահատ։

– Հարկավ կօգնի,– պատասխանեց միս Բեթսին։– Դատարկ երևակայություն է, ուրիշ ոչինչ։ Քո աղջկա անունն ի՞նչ է։

– Դեռ չգիտեմ՝ աղջի՞կ կլինի, թե՞ տղա,– ասաց մայրս։

– Աստված օրհնի երեխային,– գոչեց միս Բեթսին, անգիտակցաբար կրկնելով բարձի վրա նշանակված երկրորդ մաղթանքը, բայց ոչ թե իմ, այլ մորս հասցեին։– Ես հարցնում եմ ձեր աղախնու անունը։

– Պեգգոտի,– ասաց մայրս։

– Պեգգոտի,– կրկնեց միս Բեթսին փոքր-ինչ գրգռված։ Ո՞վ է լսել, որ մի մարդկային արարած այդպիսի անուն ստանա եկեղեցում։

– Այդ նրա ազգանունն է,– երկչոտ ձայնով պատասխանեց մայրիկս։– Մր. Կոպպերֆիլդը այդպես էր կոչում նրան՝ երկուսիս մկրտության անունները չխառնելու համար, որոնք միևնույնն են։

– Ա՛յ Պեգգոտի,– գոչեց միս Բեթսին, դուռը բանալով։– Թեյ։ Տանտիկինդ փոքր-ինչ տկար է։ Շուտ արա։

Միս Բեթսին այդ պատվերը մի այնպիսի սաստով տվեց, կարծես աշխարհի սկզբից անժխտելի իշխանություն վայելած լիներ մեր տանը, ապա դուրս նայեց՝ Պեգգոտիին տեսնելու, որ անծանոթ ձայնից շվարած՝ ճրագը ձեռքին գալիս էր. հետո դուռը փակեց և, առաջվա պես տեղը նստելով, փեշերը հավաքեց, ոտները վառարանի վանդակին դրեց և ձեռքերն իրար կցեց ծունկի վրա։

– Ասացիր, գուցե աղջիկ կլինի՞,– ասաց միս Բեթսին։– Ես վստահ եմ, որ աղջիկ կլինի։ Սիրտս վկայում է, որ աղջիկ կլինի։ Եվ, իմացած եղիր, սիրելիս, որ այդ աղջկա ծնվելու րոպեից սկսած...

– Գուցե տղայի...– սիրտ առավ մեջ բերելու մայրիկս։

– Ասում եմ քեզ, սիրտս վկայում է, որ աղջիկ կլինի,– կրկնեց միս Բեթսին։– Խնդրեմ ինձ չհակաճառես։ Այդ աղջկա ծնվելու օրից սկսած՝ ես նրա բարեկամը պիտի լինեմ։ Ես վճռել եմ նրա կնքամայրը լինել և նրան անվանել՝ Բեթսի Տրոտուդ Կոպպերֆիլդ։ Պետք է հոգալ, որ այդ Բեթսի Տրոտուդի կյանքում սխալմունքներ չպատահեն։ Պետք է հսկել, որ **նրա** զգացմունքների հետ չխաղան։ Պետք է լավ կրթել նրան և զգուշացնել, որ կուրորեն չմտերմանա այնպիսի մեկի հետ, որ արժանի չէ մտերմության։ Այդ մասին հոգ տանելը իմ պարտքը կլինի։

Յուրաքանչյուր խոսքից հետո միս Բեթսին գլուխը թոթվում էր, ասես թե հին վշտերից գրգռվելով և ճիգ թափելով, որ նրանք շատ պարզ չարտահայտվեն։ Գոնե մայրս այդպես էր կարծում՝ աղոտ լույսով նրան դիտելիս. և մայրս այն աստիճան սարսափել էր միս Բեթսիից, այնքան թույլ էր, այնքան ընկճված ու շփոթված, որ անզոր էր որոշ կերպով մի բան տեսնել և իր ասելիքն իմանալ։

– Եվ Դավիթը քեզ հետ լա՞վ էր վարվում,– հարցրեց միս Բեթսին փոքր-ինչ լռելուց հետո, երբ նրա գլուխը դադարել էր շարժվելուց։– Արդյո՞ք սիրով էիք իրար հետ։

– Շատ երջանիկ էինք,– ասաց մայրս։– Միստր Կոպպերֆիլդը միշտ բարի էր դեպի ինձ։

– Եվ, իհարկե, քեզ երես էր տալիս,– վրա բերեց միս Բեթսին։

– Այժմ, երբ ես դարձյալ անտեր ու մենակ եմ մնացել այս անկարեկից աշխարհում, տեսնում եմ, որ նա ինձ երես էր տալիս,– ասաց մայրս լաց լինելով։

– Դե լավ, մի՛ լար,– ասաց միս Բեթսին։– Դուք մեկմեկու շատ էլ հարմար չէիք, սիրելիս... եթե միայն հնարավոր է, որ երկու անհատ լիովին իրար հարմարվեն... այդ էր հարցնելուս պատճառը։ Դու որբ էիր, չէ՞։

– Այո։

– Եվ վարժուհի՞։

– Վարժուհի այն տանը, ուր միստր Կոպպերֆիլդն էլ հաճախ գալիս էր։ Նա ինձ հետ միշտ սիրով էր վարվում, միշտ ուշադիր էր դեպի ինձ, միշտ կարեկից։ Ի վերջո, նա ինձ առաջարկություն արեց, ես ընդունեցի, և մենք իսկույն ամուսնացանք,– ասաց մայրս պարզորեն։

– Ա՛հ, խեղճ մանուկ,– ասաց միս Բեթսին մտամոլոր, աչքերն անքթիթ կրակին հառած։– Դու որևէ բան անել գիտե՞ս։

– Կներեք, տիկին...– թոթվեց մայրս։

– Օրինակի համար՝ տուն կառավարել,– շարունակեց միս Բեթսին։

– Չեմ կարծում, որ այնքան լավ, ինչքան որ կցանկանայի,– պատասխանեց մայրս։– Բայց միստր Կոպպերֆիլդն ինձ դաս էր տալիս...

– (Ինքն ի՞նչ գիտեր, որ քեզ դաս տար),– փնթփնթաց փակագծի մեջ միս Բեթսին։

– Ես հույս ունեի, թե բան սովորելու փափագս միացնելով սովորեցնելու այն համբերության հետ, որ ուներ միստր Կոպպերֆիլդը, հետզհետե առաջ կգնամ, եթե... եթե միայն անգութ մահը... – Այստեղ մայրս նորից լացեց փղձուկից։

– Լավ է, լա՛վ,– ասաց միս Բեթսին։

– Ես միշտ գրում էի տան հաշիվները և ամեն երեկո վերստուգում մր. Կոպպերֆիլդի հետ,– ասաց մայրս, նորից դառնապես լաց լինելով։

– Լավ է, լա՛վ,– ասաց միս Բեթսին։– Բավ է, մի՛ լար։

– Եվ մենք երբեք չէինք վիճում այդ մասին, միայն երբեմն մր. Կոպպերֆիլդը նկատում էր, թե իմ երեքներն ու հինգերը իրար շատ են նմանվում, կամ թե իմ յոթերի ու ինների պոչը շատ երկար է դուրս գալիս,– ասաց մայրիկս և դարձյալ լաց եղավ։

– Այդքան լալուց դու կհիվանդանաս,– նկատեց միս Բեթսին,– և այդ ոչ քեզ օգուտ կբերի, ոչ էլ սանիկիս։ Բավական է, էլ չկրկնես։

Այդ փաստը փոքր-ինչ հանգստացրեց մայրիկիս, թեև նրա տկարությունը սաստկանում էր։ Այնուհետև բավական երկար լռություն տիրեց, որ երբեմն ընդհատվում էր կրակի առջև նստած տատիս «ահ, ահ» հառաչանքներով։

– Որքան գիտեմ, Դավիթն իր կարողությունը հասութաբեր բանկում էր դրել,– ասաց տատս վերջապես։– Ի՞նչ թողեց նա քեզ։

– Մր. Կոպպերֆիլդը... – պատասխանեց մայրս դժվարությամբ խոսելով,– այնքան բարի էր, որ հասույթի մի մասն իմ անունով հաստատեց։

– Եվ որքա՞ն,– հարցրեց միս Բեթսին։

– Տարեկան հարյուր և հինգ ստեռլինգ,– ասաց մայրս։

– Կարող էր է՛լ ավելի վատ բան անել,– նկատեց տատս։

Վատ բառը հանգամանքին հարմար եկավ։ Մայրիկս արդեն այն աստիճան նվաղել էր, որ Պեգգոտին, որը թեյ ու կարագ էր ներս բերել, մի ակնթարթում նրա վիճակը նկատեց,– միս Բեթսին էլ վաղուց նկատած կլիներ, եթե մթությունը չարգելեր, և իսկույն վերի սենյակը տարավ նրան։ Այնտեղ նստած էր Հեմ Պեգգոտին՝ նրա քեռորդին, որին մի քանի օր առաջ մորիցս ծածուկ թաքցրել էր մեր տանը՝ պետք եղած րոպեին մանկաբարձի կամ բժշկի հետևից ուղարկելու համար։

Այդ երկու միացյալ զորությունները գրեթե միասին վրա հասնելով, շատ զարմացան, երբ տեսան, որ կրակի առջև նստած էր մի անծանոթ պատկառելի կին, որը գլխարկը ձախ թևից կախած՝ բամբակ էր խցկում իր ականջները։ Պեգգոտին նրան չէր ճանաչում, մայրս էլ նրա մասին բան չէր ասում, ուստի նա մի խորհրդավոր տեսիլքի նման մի բան էր թվում սենյակի մեջ։ Բամբակի ահագին պաշարը, որ նա գրպանից հանում էր ականջների մեջ խցկելու համար, ամենևին չէր վնասում նրա պատկերի վեհությանը։

Բժիշկը վերև գնաց և երբ իջնելուց հետո տեսավ, որ միգուցե մի քանի ժամ մնալու է այդ անծանոթ տիկնոջ հետ դեմ առ դեմ նստած, որոշեց քաղաքավարի ու սիրալիր լինել նրա հետ։ Այդ բժշկից ավելի հեզ ու համեստ մարդ չէր գտնվի աշխարհում։ Որևէ սենյակ մտնելիս կամ դուրս գալիս՝ նա սահում էր պատերի մոտով, որպեսզի որքան կարելի է քիչ տեղ բռնի։ Նա քայլում էր Համլետի ոգուց էլ հանդարտ, գուցե և ավելի զգույշ։ Գլուխը մի կողմ էր թեքում։ Մասամբ իր խոնարհությունն զգալով, մասամբ էլ ամենքին հաճելի լինելու բարի փափագ ունենալով, նա անգամ շանը՝ կատաղի շանը, կոպիտ խոսք չէր ասի։ Գուցե մի կես բառ կամ վանկ ուղղեր նրան՝ մեղմ ձայնով, քանի որ իր խոսելու եղանակն էլ քայլերի նման հեզիկ էր, բայց սաստել շանը կամ սպառնալ – ոչ երբեք։

Մր. Չիլիպն անուշ ժպտալով, գլուխը թեքած, ողջունեց տատիս և, և ձեռքը ձախ ականջին դնելով, ասաց.

– Երևի թե մի տեղական գրգիռ է, տիկին։

– Ի՞նչ,– գոչեց տատս և իսկույն բամբակը շշի խցանի պես ականջից հանեց։

Տատիս այդ սաստկությունից մր. Չիլիպը այն աստիճան շփոթվեց, որ ինչպես հետո մորս էր պատմում, չէր կարողանում հասկանալ, թե ի՞նչ հրաշքով խելքը չկորցրեց։ Սակայն նույն մեղմությամբ կրկնեց.

– Մի տեղական գրգիռ եք զգում երևի։

– Այդ ի՞նչ հիմար բան ասացիք,– նկատեց տատս,– և նույն րոպեին նորից խցեց ականջը։

Մր. Չիլիպին էլ ուրիշ բան չմնաց անել, եթե ոչ նստել, ահուդողով դիտել տատիս, որ առաջվա պես նայում էր կրակին, և սպասել, մինչև որ իրեն երկրորդ անգամ վերև կանչեն։ Կանչվելուց և մի քառորդ ժամ վերի սենյակում մնալուց հետո նա վերադարձավ։

– Ինչպե՞ս է, լա՞վ է,– ասաց տատս, հանելով բամբակն այն ականաջից, որ ավելի մոտ էր բժշկին։

– Լավ է, տիկին,– պատասխան տվեց մր. Չիլիպը,– մեր բանը կամաց է առաջ գնում։

– Ի՞նչ,– ասաց տատս գոռոզ ձայնով և առաջվա պես ականջը խցեց։

Մր. Չիլիպը, ինչպես որ հետո պատմել էր մորս, գրեթե զայրացավ, մանավանդ իբրև բժիշկ վիրավորված զգալով իրեն։ Բայց և այնպես մոտ երկու ժամ սպասեց, կրակի առաջ նստած՝ տատիս նայելով, մինչև որ նորից վերև կանչեցին։ Այդ երկրորդ անգամ հեռանալուց հետո էլ նա վայր իջավ։

– Լա՞վ է,– ասաց տատս, բամբակը միևնույն ականջից հանելով։

– Լավ է, տիկի՛ն,– պատասխանեց մր. Չիլիպը։– Մեր բանը, տիկին, շատ կամաց է առաջ գնում։

– Է՛-է՛-է՛հ,– գոչեց տատս մի այնպիսի վիրավորիչ եղանակով, որ մր. Չիլիպը էլ չհամբերեց։ Քիչ էր մնացել գժվեր սրտնեղությունից, ինչպես որ հետո իմացա։ Այս պատճառով լավ համարեց դուրս գնալ և, չնայելով հողմի հոսանքին ու մթությանը, սանդուղքի վերևը նստել՝ սպասելով, մինչև որ դարձյալ կանչեն իրեն։

Հեմ Պեգգոտին՝ պետական դպրոցի այդ աշակերտը, որ քրիստոնեականն անգիր գիտեր, ուրեմն կարող էր արժանահավատ վկա համարվել, հետևյալ օրը պատմեց, թե այն միջոցին, երբ այդ դեպքից մի ժամ հետո ինքն ուզում էր դռնից ներս նայել, Բեթսին, որն գրգռված ետ ու առաջ էր գնում, հանկարծ նշմարեց նրան և ճանկերով բռնեց։ Երևի թե տատիս ականջները բամբակով ամուր չէին խցկված, որ նա, հենց որ սաստկացան վերևի ձայներն ու քայլերը՝ ավելի ևս սկսեց զգացնել խեղճ զոհին իր զայրույթը, նրան դեսուդեն քաշքշելով, օձիքը թափ տալով, մազերը փետելով, նրա ականջների մեջ բամբակ խցկելով, կարծես իր ականջները լինեին։ Այս բոլորը փոքր ի շատե հաստատեց տղայի մորաքույրը, որը տեսել էր նրան կես-գիշերից կես ժամ անց, այսինքն՝ նրա ազատվելուց փոքր-ինչ հետո, և վկայեց, թե այդ րոպեին Հեմը նույնքան կարմիր էր, որքան և ես։

Անհիշաչար մր. Չիլիպը, չգիտե ոխ պահել որևէ մեկի դեմ, մանավանդ մի այդպիսի ժամանակ։ Ազատ վայրկյան գտնելու պես՝ նա թեթև սահելով մտավ ներքևի սենյակը և քնքուշ ձայնով ասաց տատիս.

– Երջանիկ եմ, կարող եմ ձեզ շնորհավորել։

– Ի՞նչ շնորհավորել,– հարցրեց տատս խրոխտաբար։

Մր. Չիլիպը նորից սոսկաց տատիս ուժգին խոսելու եղանակից, և նրա սիրտը շահելու համար անուշ ժպտաց։

– Տեր ողորմյա, ի՞նչ է պատահել այս մարդուն,– գոչեց տատս ավելի զայրացած։– Լեզուն կապվե՞լ է, ինչ է։

– Հանգստացեք, արգո տիկին,– ասաց մր. Չիլիպը ամենաքաղցր եղանակով։– Էլ հուզվելու ամենևին տեղիք չկա։ Աղաչում եմ, միամտացեք։

Մինչև այժմ ես հրաշք եմ համարում, թե ինչպես տատս թափ չտվեց մր. Չիլիպին, թափ չտվեց, մինչև որ նրա ասելիքը դուրս բերեր։ Տատս միայն գլուխը շարժեց, բայց այնպես որ բժիշկը սարսափ զգաց։

– Արգո տիկին,– շարունակեց մր. Չիլիպը փոքր-ինչ շունչ քաշելուց հետո,– ես երջանիկ եմ, որ կարող եմ շնորհավորել ձեզ: Ամեն բան վերջացավ և լավ վերջացավ:

Այս ճառն արտասանելու համար մր. Չիլիպի գործ դրած հինգ-վեց րոպեի ընթացքում տատս շեշտակի մտիկ էր տալիս նրա երեսին:

– Ինչպե՞ս է նա,– հարցրեց տատս, կրծքին խաչելով թևերը, որոնցից մեկի վրա դեռ կախված էր գլխանոցը:

– Շատ լավ է, տիկին, և հույս կա, որ շուտով բոլորովին կառողջանա,– պատասխանեց մր. Չիլիպը:– Այնքան լավ է, ինչքան մի նորատի կին կարող է լավ լինել այսպիսի ծանր հանգամանքներում: Եվ եթե կամենաք տեսնել նրան, արգելք չկա: Գուցե նրան թեթևություն պատճառեք:

– Իսկ նա՞: Նա ինչպե՞ս է,– հարցրեց տատս սաստկությամբ:

Մր. Չիլիպը փոքր-ինչ ավելի թեքեց գլուխը և մի սիրուն թռչնիկի պես նայեց տատիս:

– Ինչպե՞ս է երեխան, ասաց տատս:– Աղջիկն ինչպե՞ս է:

– Տիկին,– պատասխանեց մր. Չիլիպը,– կարծում էի, թե արդեն գիտեք: Նորածինը տղա է:

Մի խոսք անգամ չասաց տատս, այլ միայն գլխանոցի թելը բռնեց, իբրև մի պարսատիկ, և նրանով խփեց մր. Չիլիպի գլխին, հետո ծուռ-ծուռ դրեց իր գլխին, դուրս գնաց և այլևս ետ չեկավ: Նա անհետացավ մի չարացած փերիի և կամ այն գերբնական ոգիներից մեկի պես, որոնց ես իբր կոչված էի տեսնելու. և էլ երբեք ետ չեկավ:

Երբեք: Ես պառկած էի օրորոցում, մայրիկս իր անկողնում, իսկ Բեթսի Տրոտուդ Կոպպերֆիլդը գնացել էր ընդմիշտ երազների ու ստվերների աշխարհը, այն խորհրդավոր գավառը, որտեղից ես նոր էի եկել. և սենյակիս պատուհանից փայլող լուսինը շողշողում էր ինձ նման նորեկների երկրավոր կայանի վրա, լույս տալով և այն շիրիմին, որի տակ հանգչում էր ինձ կյանք շնորհող էակի աճյունը:

Բ. ԳԼՈՒԽ
Ես դիտում եմ

Իմ մանկությունը հիշելիս ամենից առաջ մտքիս առջև պատկերանում են՝ նախ մայրս իր սիրուն մազերով ու ջահել տեսքով, և հետո բոլորովին անտեսք Պեգգոտին՝ իր սև-սև աչքերով, որոնք կարծես մթնեցնում էին նրա ամբողջ դեմքը, և իր այնպես կարմիր ու կլոր թշերով, որ ես զարմանում էի, թե ինչո՞ւ թռչունները չէին գալիս ավելի սիրով նրանց կտցելու, քան մի խնձոր:

Հիշում եմ, թե ինչպես մայրս և Պեգգոտին՝ ինձնից փոքր-ինչ հեռու նստած, կռանալով կամ չոքելով ձեռքները դեպի ինձ են մեկնում, և ես տմբտմբալով մեկից մյուսին եմ գնում: Պարզ հիշում եմ, կարծես այդ այսօր լիներ, թե ինչպես շոշափում էի Պեգգոտիի ցուցամատը, երբ նա աշխատում էր բռնել ինձ,– այն մատը, որ շատ կարելուց քերիչի նման կոշտացել էր:

Գուցե ասելիքս ցնորք համարվի, բայց ինձ թվում է, թե մեզնից շատերը իրենց մանկության օրերից հիշում են ավելի շատ բան, քան կարծում են, և թե երեխաների դիտողության ձիրքը վերին աստիճանի զորեղ ու ճիշտ է: Դիտելու ձիրքով հռչակված մարդկանց մասին կարելի է ասել, որ նրանք այդ շնորհքը պահպանել են մանկությունից, և ոչ թե հետո են ստացել. ես նկատել եմ, որ ընդհանրապես այդ մարդիկ թարմ զգացմունք և զվարթ սիրտ ունեն, որ դարձյալ մանկությունից ժառանգած կլինեն:

Գուցե մեղադրեն ինձ, թե սիրում եմ «քարշ գալ» մտքով, այնուամենայնիվ, պետք է ասեմ, որ վերոհիշյալ նկատողությունը մասամբ իմ անձնական փորձի վրա է հաստատված, եթե հետևյալ պատմությունից երևա, որ ես մի սրատես մանչուկ եմ եղել և կամ այրական հասակումս էլ լավ եմ պահպանել իմ մանկության հիշատակները, ապա ուրեմն ես իսկապես իրավունք ունեմ պարծենալու այդ երկու ձիրքերով։

Դեպի մանկությանս օրերը ետ նայելիս, ինչպես ասացի, տեսնում եմ, որ առարկաների խառնուրդից նախ և առաջ մայրս և Պեգգոտին են որոշակի պատկերանում մտքիս առջև։ Է՞լ ինչ եմ մտաբերում։ Հապա տեսնեմ։

Ահա անցյալի մշուշից որոշակի ջոկվում է մի տուն. դա մեր տունն է, թեև հին, բայց միշտ հիշելի ինձ համար։ Գետնահարկում տեսնում եմ Պեգգոտիի խոհանոցը՝ դեպի բակը նայող դռնով. բակի մեջտեղում՝ մի սյուն և դրա վրա մի աղավնաբույն՝ առանց աղավանիների. դենը մի ընդարձակ շնաբույն՝ առանց շան. հետո բազմաթիվ վիթխարի հավեր, որոնք ահարկու և ամեհի շարժումներով դեսուդեն են ման գալիս։ Ահա մի աքլոր, որ ձող է որոնում վրան թառելու և առանձին ուշադրությամբ վրաս է նայում, մինչ ես դողալով եմ դիտում նրան խոհանոցի պատուհանից. ա՛հ, ինչպես չար էր այդ աքլորը։ Ահա երկար-երկար վզով սագեր, որոնք շտապում են դեպի ինձ, երբ ես անցնում եմ վանդակի մոտով. երազումս անգամ տեսնում եմ նրանց, ինչպես առյուծ է տեսնում երազում այն մարդը, որ վայրենի գազաններով է շրջապատված։

Ահա մի երկար նրբանցք Պեգգոտիի խոհանոցից մինչև տան ճակատի դուռը. ի՛նչ անվերջ էր թվում նա ինձ։ Անլույս մառանը նրբանցքի մեջն է, և գիշերվա մթին, եթե ճրագ չունես ձեռքիդ, պետք է վազելով այնտեղից անցնես, որովհետև ով գիտե ինչեր կլինեն այն տակառների, կճուճների ու պուլիկների արանքում, որոնցից սապոնի, թուռշիի, պղպեղի, մոմի և սուրճի խառն հոտ է փչում։ Հետո գալիս է երկու սենյակ – մեկը այն, ուր երեկոյան նստում ենք մայրիկս, ես և Պեգգոտին, որովհետև Պեգգոտին գրեթե միշտ մեզ հետ է, երբ մենք մենակ ենք և նա ազատ է իր գործից, և մյուսը՝ այն սենյակը, ուր հավաքվում ենք տոն օրերին։ Դա մի լայն դահլիճ է, որ ինձ, սակայն, դուր չի գալիս։ Տխուր բաներ է հիշեցնում ինձ այդ դահլիճը, որովհետև Պեգգոտին ինձ պատմել էր,– չեմ հիշում ե՞րբ, բայց երևի մի դար առաջ,– թե հորս թաղման հանդեսին այնտեղ են հավաքված եղել սևեր հագած հյուրերը։ Այդ սենյակում էր, որ մի կիրակի երեկո մայրիկս Ղազարի հարության պատմությունը կարդաց Պեգգոտիին և ինձ, և ես այնպես վախեցա, որ պետք համարեցին անկողնուց դուրս հանել ինձ և պատուհանից ցույց տալ այն լռիկ հանգստարանը, ուր բոլոր ննջեցյալները խաղաղ քնած էին պայծառ լուսնով լուսավորված դամբարաններում։

Ոչ մի տեղ ես չեմ տեսել այդ հանգստարանի դալարի պես կանաչ դալար, նրա ծառերի պես ստվերաշատ ծառեր, նրա շիրիմների պես լուռ շիրիմներ։ Ամեն առավոտ, հենց որ իմ անկողնու մեջ չոքելով դուրս եմ նայում, տեսնում եմ այնտեղ արածող գառներ, տեսնում եմ ինչպես փայլուն լույսը շողշողում է արեգակի ժամացույցի վրա և զարմանալով ասում ինքս ինձ. «Մի՞թե ժամացույցը գոհ է, որ կարող է ժամանակ ցույց տալ այդ տխուր շրջակայքում»։

Ահա մեր վանդակապատ նստարանը եկեղեցում։ Ինչպե՛ս բարձր է նրա թիկունքը։ Նրա մոտի լուսամուտից կարելի է տեսնել մեր տունը, և առավոտյան ժամերգության ժամանակ Պեգգոտին անդադար աչքը ձգում էր դեպի մեր տունը, որ տեսնի, թե արդյոք գողեր չե՞ն մտել և կամ հրդեհ չի՞ պատահել։ Բայց Պեգգոտին չի ուզում, որ ես էլ նույնն անեմ, և նայելս նկատելուն պես աչքով սաստում է, որ միայն պաստորին մտիկ տամ։ Սակայն ես չեմ կարող շարունակ պաստորին նայել. ես նրան լավ եմ ճանաչում առանց այն տարօրինակ սպիտակ բանի, որ նա հագած ունի, և վախենում եմ, որ միգուցե իր վրա ակնապիշ նայելս տեսնի և հանկարծ աղոթքն ընդհատելով հարցնի, թե ինչո՞ւ եմ այդպես նայում։ Բայց ի՞նչ անեմ։ Անտարակույս հորանջելը վատ բան է, սակայն չէ՞ որ հարկավոր է մի բան անել։ Ես էլ մորս եմ մտիկ տալիս, իսկ նա կարծես չի տեսնում ինձ։ Մտիկ եմ տալիս մոտիկ կանգնած երեխային, և նա ծամածռում է իր երեսը։ Մտիկ եմ տալիս գավթի միջով ներս թափանցող

ճառագայթին և տեսնում մի մոլորված էակ – չկարծեք թե մի մեղավոր մարդ, այլ մի ոչխար, որ մտադիր է եկեղեցի մտնել։ Դիտում եմ որմերի վրա փորագրված անունները և աշխատում մտածել նոր վախճանված մր. Բոջերսի մասին և երևակայել, թե արդյոք միստրիս Բոջերսը որքա՞ն լաց եղավ, երբ նրա մարդը զոհ գնաց երկարատև հիվանդության, որի դեմ բժիշկները չէին կարողացել դարման գտնել։ Հարցնում եմ ինձ. արդյո՞ք դիմել էին մր. Չիլիպին, և եթե նրա տված դեղն էլ զուր էր անցել, ապա կցանկանայի իմանալ, թե նա ի՞նչ զվարճություն էր զգում մր. Բոջերսի տապանագիրը ամեն կիրակի կարդալիս։ Մր. Չիլիպի սպիտակ փողկապը դիտելուց հետո՝ սկսում եմ բեմին մտիկ տալ։ Ի՞նչ լավ խաղալու տեղ կլիներ դա ինձ համար, ինչ լավ բերդ, եթե մի ուրիշ տղա նրա աստիճաններից բարձրանալով ուզենար ինձ պաշարել, և ես թավշե բարձեր ու ծոպեր շպրտեի նրա գլխին։ Այնինչ տոթից ու քահանայի թմրեցուցիչ մրմունջից աչքերս քիչ-քիչ փակվում են, այլևս ոչինչ չեմ լսում և թրխկալով գլորվում եմ նստարանից։ Երկյուղից համարյա թե մեռած եմ։ Պեգգոտին վերցնում է ինձ ու տուն տանում։

Այժմ տեսնում եմ մեր տան ճակատը. ննջարանի բաց պատուհաններից բուրավետ օդ է ներս մտնում. որորների հին բները դեռ ճոճվում են պտղիների գագաթին։ Ահա տան ետևի այգումն եմ՝ այն բակից դուրս, ուր գտնվում է աղավնանոցն ու շան բույնը. դա կատարելապես թիթեռների աշխարհ է՝ բարձր ցանկապատով և փակ դռնով։ Ծառերը բեռնավորված են առատ ու հասուն պտուղներով, որոնց նմանը ուրիշ ոչ մի այգում չկա. մայրս քաղում էր մի քանի հատ և քթոցն ածում, մինչ ես նրա մոտ կանգնած, թաքուն թռցնում եմ մի քանի հաղարջ, անշարժ նայում հեռուն։ Քամիները սկսվում են, և ամառը փախչում է։ Ձմեռվա երեկոները մենք խաղում ենք ներքևի հարկում և պար գալիս։ Բազկաթոռի մեջ նստելուց հոգնելով՝ մայրիկս սկսում է մատներին փաթաթել իր ցոլուն մազերը և շտկել ճկուն իրանը, և թե որքան գոհ է այդպես սիրուն լինելուց, ոչ ոք չգիտի այդ՝ ավելի լավ, քան ես։

Դրանք են իմ ամենահին հիշատակները. և եթե ավելացնեմ, որ մենք կարծես մի քիչ վախենում էինք Պեգգոտիից և շատ բաներում նրա կամքին հետևում,– այդ կլինի ամենաառաջին կարծիքս, եթե միայն կարելի է դա կարծիք համարել։

Մի երեկո Պեգգոտին և ես մենակ նստած էինք դահլիճի վառարանի մոտ։ Ես նրա համար կարդում էի մի պատմություն՝ կոկորդիլոսների մասին։ Կամ ես էի շատ պարզ կարդում և կամ նա էր անչափ հետաքրքիր, համենայն դեպս, այնքանը կարող եմ հիշել, որ ունկընդիրս մի աղոտ տպավորություն ստացավ, այն է՝ թե կոկորդիլոս ասածդ մի տեսակ բույս է։ Ես հոգնել էի կարդալուց, և քունս սաստիկ տանում էր. բայց որովհետև այդ երեկո, իբրև մի առանձին շնորհ, իրավունք էին տվել ինձ մի հարևան կնոջ մոտ հյուր գնացած մորս վերադարձին սպասելու,– ես կգերադասեի մեռնել աթոռիս վրա մնալով, քան թե անկողին մտնել։ Ինչքան թմբրությունս սաստկանում էր, այնքան Պեգգոտին մեծացած և ուռած էր երևում ինձ։ Ես փորձում էի երկու մատով բանալ աչքերս և անքթիթ նայել Պեգգոտիի վրա, որ փութաջան կարում էր. դիտել նրա մեղրամոմի կտորը, որով թելը մոմում էր – ինչքա՛ն կնճռոտ գծեր կային վրան և որքան հին պետք է լիներ այդ կտորը. դիտել նրա նախշուն խփով հարդե կողովը, ուր պահում էր իր մետրաչափը. փոքրիկ տուփը՝ դուրս քաշվող կափարիչով, որի վրա նկարված էր ս. Պողոսի տաճարը՝ կարմիր ներկված գմբեթով. պղնձե մատնոցը և վերջապես իր դեմքը, որ շատ սիրուն էր երևում ինձ։ Քունս այնպես էր տանում, որ եթե մի վայրկյան դադարեի աչքերս ճոթռել, բանս արդեն պրծած էր։ Հանկարծ՝

– Պեգգոտի,– ասացի ես,– դու երբևիցե ամուսնացած եղե՞լ ես։

– Մեղա քեզ տեր,– գոչեց Պեգգոտին։– Որտեղի՞ց միտքդ ընկավ այդպիսի բան, մաստր Դեվի։

Եվ այնպես սաստիկ ասաց այդ, որ ես իսկույն սթափվեցի։ Նա վայր դրեց կարը և շեշտակի վրաս նայեց, ասեղի թելը մինչև ծայրը քաշելով։

– Ամուսնացած եղե՞լ ես թե ոչ, Պեգգոտի,– կրկնեցի ես։– Դու գեղեցիկ կինարմատ ես։

Թեև Պեգգոտին բոլորովին ուրիշ գեղեցկություն ուներ, քան մայրիկս, բայց նա էլ ինձ իր տեսակում չքնաղ էր թվում: Մեր դահլիճում մի աթոռակ կար ծիրանի թավշե երեսով, որի վրա մայրս մի ծաղկեփունջ էր նկարել: Այդ աթոռի երեսը և Պեգգոտիի գույնը միանգամայն իրար նման էին: Թավիշը փափուկ էր, Պեգգոտին կոշտ, բայց դրանից բանի էությունը չէր փոխվում:

– Ես գեղեցի՞կ, ա՛յ Դեվի,– ասաց Պեգգոտին:– Չէ, որդի ջան: Բայց ո՞ր քամին խելքիդ փչեց ամուսնության մասին հարցնել:

– Չգիտեմ: Միանգամից հո երկու մարդ ունենալ չի կարելի, չէ՞, Պեգգոտի:

– Իհարկե չէ,– հաստատ կերպով պատասխանեց Պեգգոտին:

– Բայց եթե մարդը մեռնի, չէ՞ որ կարելի է մեկ ուրիշին գնալ, Պեգգոտի:

– Կարելի է. ով ինչպես ուզենա:

– Իսկ դու ինչպե՞ս կուզենայիր, Պեգգոտի:

Այդ հարցնելիս ես ուշադրությամբ նայեցի նրան, ինչպես որ նա էր ինձ նայում:

– Իմ կարծիքը,– ասաց Պեգգոտին, աչքերն ինձնից դարձնելով և փոքր-ինչ վարանելուց հետո՝ կարը նորից սկսելով,– կարծիքս այն է, մաստր Դեվի, որ ես երբեք ամուսնացած չեմ եղել, երբեք էլ մարդու գնալու չեմ. ես այսքանը միայն գիտեմ:

– Մի՞թե նեղացար վրաս, Պեգգոտի,– հարցրի ես՝ մի րոպե լուռ նստելուց հետո:

Կարծեցի, թե իրոք նեղացել է, որովհետև շատ կարճ կտրեց իմ խոսքը: Բայց սխալվում էի. նա ձեռագործը (դա մի կարկատվող գուլպա էր) մի կողմ դրեց, ձեռքերը մեկնեց և ամուր տրորեց իմ գանգրահեր գլուխը: Ասում եմ՝ ամուր տրորեց, որովհետև, երբ նա ուժգին շարժումներ էր անում, նրա զգեստի կոճակներից մի քանիսը թռչում էին մարմնի գեր լինելուց: Եվ ես հիշում եմ, որ մինչ նա ինձ գգվում էր, այդ կոճակներից երկու հատը ճայթելով պոկ եկան և սենյակի մյուս կողմը թռան:

– Դեհ, այժմ էլի մի բան կարդա կոկորդիլոսների մասին,– ասաց Պեգգոտին, որ դեռ լավ չէր ըմբռնել այդ բառը, որովհետև ես չեմ սիրում որևէ բան կիսատ լսել:

Ես բնավ չէի հասկանում, թե ինչո՞ւ Պեգգոտին այնպիսի խորամանկ աչքով նայեց վրաս և կամ ինչո՞ւ հանկարծ կոկորդիլոսների մասին բան լսելու փափագ զգաց: Ինչևիցե, մենք նոր եռանդով վերադարձանք դեպի այդ հրեշները. մեկ թաղում էինք նրանց ձվերն արևակեզ ավազի մեջ, որ ձագեր դուրս գան, մերթ գրգռում էինք նրանց և փախչում ոլոր-մոլոր տեղերով, մինչ նրանք, իբրև ծանրամարմին հրեշներ, չէին կարող այդ անել. մեկ էլ բնիկների նման ջուրն էինք նետվում նրանց հետևից և տեգեր մխում նրանց երախը: Մի խոսքով, կոկորդիլոսների պատմությունը գրեթե անգիր գիտեինք. գոնե ես գիտեի, եթե ոչ Պեգգոտին, որ կարծես մտքերի մեջ խորասուզված լինելուց մի քանի անգամ ասեղով ծակեց իր մատներն ու ձեռքերը:

Կոկորդիլոսներին թողած, արդեն անցել էինք ալիգատորներին, երբ պարտեզի դռան զանգակը հնչեցրին: Իսկույն ելանք դեպի դուռը. եկողը մայրս էր, որն այդ երեկո ավելի սիրուն երևաց ինձ, քան երբևիցե, և նրա հետ գալիս էր սև մազերով ու կարճ մորուքով մի պարոն, որ դեռ անցյալ կիրակի մեզ հետ միասին մեր տուն էր եկել եկեղեցուց:

Երբ մայրիկս շեմքի վրա կանգ առավ ինձ մի համբյուր տալու, պարոնն ասաց, թե թագավորն էլ ինձնից ավելի երջանիկ չէ, և կամ նման մի բան:

– Ի՞նչ են նշանակում այդ խոսքերը,– հարցրի ես պարոնին մորս ուսերի ետևից:

Նա գլուխս շոյեց, բայց նրա ձայնն ու կերպարանքը, չգիտեմ ինչու, դուր չեկան ինձ, և ես նեղացա, որ ինձ գգվեցիս նա, մորս ականջն էլ շոշափեց: Ես նրան բոլոր ուժերով ետ հրեցի:

– Ա՛յ Դեվի,– նկատեց մայրիկս:

– Սիրուն մանկիկ,– ասաց պարոնը։– Չեմ զարմանում, որ նա նախանձում է։

Ոչ մի ժամանակ մորս երեսն այդպես վարդագույն չէի տեսել։ Նա թեթև հանդիմանեց իմ կոպտությունը և իր շալի մեջ փաթաթելով ինձ, շնորհակալություն հայտնեց պարոնին, որ նեղություն էր կրել մինչև մեր տուն հասցնել իրեն։ Մնաս բարով ասելիս՝ նա աջը մեկնեց պարոնին և կարծեմ այդ միջոցին վրաս նայեց։

– Դե, դու էլ ինձ բարի գիշեր ասա, սիրուն տղա,– ասաց պարոնը, կռանալով, որ համբուրի մորս ձեռքը։ (Այդ ես լավ նկատեցի)։

– Բարի գիշեր,– ասացի ես։

– Եկ, բարեկամանանք,– ասաց պարոնը ծիծաղելով։– Եկ մեկմեկու ձեռք թոթվենք։

Աջ ձեռքս մայրիկիս ձախ ձեռքումն էր. ես մեկնեցի մյուսը։

– Բայց դա ձախն է, Դեվի,– ծիծաղեց պարոնը։

Մայրս արձակեց աջ ձեռքս, բայց ես վճռել էի չմեկնել աջը, և ձախ ձեռքս տվի պարոնին։ Նա ամուր սեղմեց, ասելով թե քաջ տղա եմ և հեռացավ։

Հիմա էլ տեսնում եմ, թե ինչպես նա պարտեզի մեջ երեսը ետ դարձրեց և դռնակից դուրս գնալիս՝ իր չարագուշակ սև աչքերով մի վերջին ակնարկ ուղղեց մեզ։

Պեգգոտին, որ այդ միջոցին անշարժ ու լուռ կանգնած էր, իսկույն փեղկերը փակեց, և մենք մտանք դահլիճ։ Մայրիկս փոխանակ վառարանի առաջ նստելու, ինչպես որ միշտ անում էր, տեղ բռնեց սենյակի մյուս ծայրում, մի ինչ-որ երգ մրմնջալով։

– Հուսամ, տիկին, որ լավ անցկացրիք այս երեկոն,– ասաց Պեգգոտին, որ մոմակալը ձեռքին, տակառի պես անշարժ կանգնած էր ճիշտ սենյակի մեջտեղը։

– Շատ շնորհակալ եմ, Պեգգոտի,– պատասխանեց մայրս զվարթ ձայնով,– շա՛տ ուրախ երեկո էր։

– Ինչևիցե, նոր մարդու հետ ծանոթանալը մի դուրեկան փոփոխություն է։

– Այո՛, շատ հաճելի,– նկատեց մայրս։

Պեգգոտին դարձյալ անշարժ մնաց սենյակում, մայրիկս նորից սկսեց երգել, իսկ իմ վրա քուն եկավ, և ես նիրհեցի, և նիրհիս մեջ ձայներ էի լսում, բայց ոչ այնքան պարզ, որ ասածները հասկանայի։ Եվ երբ սթափվեցի այդ կիսարթուն դրությունից, տեսա, որ Պեգգոտին ու մայրս արտասվել էին։

– Չեմ կարծում, որ մի այդպիսի պարոն դուր գար մր. Կոպպերֆիլդին,– ասաց Պեգգոտին,– երդում եմ անում, որ դուր չէր գա։

– Տեր ողորմյա,– գոչեց մայրս,– դու ուզում ես խելագարության հասցնել ինձ։ Արդյոք աշխարհիս երեսին կգտնվի՞ ինձ նման մի թշվառ աղջիկ, որ այնքան տանջանք կրեր իր աղախնուց։ Բայց ինչո՞ւ եմ աղջիկ անվանում ինձ։ Չէ՞ որ ես ամուսնացած էի, Պեգգոտի։

– Երկինքը վկա,– պատասխանեց Պեգգոտին։

– Ուրեմն ինչպե՞ս համարձակվեցիր,– ասաց մայրիկս,– ուզում եմ ասել՝ ինչպե՞ս սիրտ արիր, Պեգգոտի, այնքան կոպիտ, այնքան դառն բաներ ասել երեսիս, մինչ լավ գիտես, որ այս տանից դուրս մի բարեկամ չունեմ, որին դիմել կարենայի։

– Հենց դրա համար էլ կասեմ, տիկին, որ այդ բանը ձեզ վայել չէ։ Ո՛չ, վայել չէ։ Ինչ էլ ասեք, վայել չէ։ Ո՛չ։

Պեգոտտին տաքանալով մոմակալն այնպես շարժեց, որ ես կարծեցի, թե գետնովը կտա։

– Գութ չունես, դու, որ այդպիսի անարդար բաներ ես ասում,– շարունակեց մայրս, ավելի ուժգին լաց լինելով։– Ինչպես ես սիրտ անում, Պեգգոտի, կարծել, թե բանն արդեն վերջացել է, քանի որ ես քեզ, այ անիրավ, հազար անգամ կրկնել եմ, թե մի աննշան քաղաքավարությունից ուրիշ ոչինչ չի պատահել։ Դատարկ-դատարկ խոսում ես հիացման մասին։ Ես ի՞նչ անեմ դրա դեմ։ Եթե մարդիկ այնքան հիմար են, որ հիանում են ինձանով, մի՞թե ես եմ մեղավոր։ Հարցնում եմ քեզ, ես դրա դեմ ի՞նչ կարող եմ անել։ Մի՞թե ուզում ես, որ գլուխս սափրեմ, երեսիս մուր քսեմ և կամ դեմքս եռման ջրով կամ կրակով և կամ մի ուրիշ այդպիսի բանով այլանդակեմ։ Գիտեմ, Պեգգոտի, քո ուզածն էլ հենց այդ է։ Համոզված եմ, որ կուրախանայիր այդ բանից։

Կարծեմ, այդ ամբաստանությունը սաստիկ դիպավ Պեգգոտիի սրտին։

– Իսկ այս սիրուն որդյակս,– գոչեց մայրս, բազկաթոռիս մոտենալով ու գգվելով ինձ։– Իմ Դեվիս։ Ո՞ր քարասիրտը կհամարձակվի ակնարկել, թե ես սեր չունեմ այս հրեշտակիս համար, այս անգին գանձիս համար, որի նմանը դեռ չի եղել աշխարհում։

– Այդպիսի ակնարկ երբեք ոչ ոք չի արել,– ասաց Պեգգոտին։

– Հենց դու արիր, Պեգգոտի,– պատասխանեց մայրիկս։– Ինքդ էլ գիտես, որ արիր։ Քա խոսքերից ուրիշ ի՞նչ կարելի էր հասկանալ, ա՛յ անսիրտ. այնինչ դու էլ ինձ նման լավ գիտես, որ ես միայն սրա սիրուն անցյալ ամսին նոր հովանոց չգնեցի ինձ համար, թեև հինը արդեն մաշվել է և շղարշը գզգզվել։ Այս բանը հո լա՞վ գիտես, հո չե՞ս կարող ուրանալ։

Այնուհետև մայրիկս գորովանքով դարձավ ինձ և իր թուշը իմ թշին դնելով՝ ասաց.

– Ես քեզ համար փի՞ս մայրիկ եմ, Դեվի ջան։ Ես մի անգութ, անսիրտ, ինքնասեր, չար մայրի՞կ եմ քեզ համար։ Դե ասա «այո», ասա որդի ջան, և Պեգգոտին քեզ կսիրի։ Նրա սերը հո իմից ավելի կարժի, Դեվի։ Ես քեզ իսկի չեմ սիրում, չէ՞։

Այստեղ մենք բոլորս միասին լաց եղանք։ Հիշում եմ, որ ամենից ավելի ճվացողը ես էի, բայց երեքս էլ սրտանց էինք լաց լինում։ Ես իսպառ հուսահատվել էի և կարծեմ վրդովված սրտիս հենց առաջին հուզմունքից «չար գազան» անվանեցի Պեգգոտիին։ Պատվական արարածը սաստիկ վշտացավ և հավանական է, որ այս առթիվ նրա շրջազգեստը բոլորովին անկոճակ մնաց, որովհետև երբ նա մորս հետ հաշտվելուց հետո՝ ինձ հետ էլ հաշտվելու համար բաղկաթոռիս մոտ չոքեց, կոճակները դեսուդեն թռան մի սոսկալի ճայթյունով։

Բոլորս էլ միանգամայն ընկճված սրտով գնացինք քնելու։ Հեկեկանքս երկար ժամանակ արգելում էր ինձ քուն մտնել և երբ մի անգամ ես հեծկլտանքով անկողնուս մեջ ցնցվեցի, տեսա, որ մայրս նստած է իմ կողքին, գլուխը վրաս խոնարհած։ Ես քուն մտա նրա գրկում և շատ խոր քնեցի։

Հետևյա՞լ կիրակին էր արդյոք կամ ավելի ուշ, լավ չեմ հիշում, ես նորից տեսա այն պարոնին։ Օրերը մտքիցս ընկել են։ Բայց նա եկեղեցումն էր և հետո դուրս ելավ մեզ հետ միասին։ Նա մեր տունը եկավ, մեզ հետ էլ ներս մտավ, պատճառ բռնելով, թե ուզում է տեսնել մեր գեղեցիկ կոնկենին (geranium), որ փթթում էր դահլիճի պատուհանում։ Չեմ ասի, թե նա շատ հետաքրքրվեց այդ բույսով, սակայն հեռանալուց առաջ մորս խնդրեց մի ծաղիկ շնորհել իրեն։ Մայրս առաջարկեց, որ նա ինքն ընտրի մի հատ, բայց նա մերժեց, չգիտեմ ինչո՞ւ, և այն ժամանակ մայրս մի փոքրիկ ոստ պոկեց և նրան տվեց։ Պարոնն ասաց, թե երբեք չի բաժանվի այդ պարգևից. և նա ինձ հիմար երևաց, որովհետև մի՞թե չգիտեր, որ ծաղիկը մի երկու օրից հետո կթառամի։

Պեգգոտին սկսել էր երեկոներն առաջվանից սակավ նստել մեզ հետ։ Մայրս այժմ հարգանքով էր վարվում նրա հետ և կարծես ավելի մեծ հարգանքով, քան թե առաջ, և մենք երեքս մտերիմ էինք իրար հետ. բայց և այնպես այն չէինք, ինչ որ առաջ, նախկին զվարթությունն անհետացել էր մեր միջից։ Երբեմն ինձ թվում էր, թե Պեգգոտին դժգոհ էր, որ մայրս սկսել էր

հագնել պահարանի ամենաշքեղ զգեստները և կամ թե շուտ-շուտ գնալ դրացուհու մոտ. բայց ես չէի կարողանում լավ հասկանալ, թե ինչու էր դժգոհ։

Հետզհետե ես ընտելացա սևամորուս պարոնին։ Այժմ էլ նա ինձ սիրելի չէր, այժմ էլ ես նրան նախանձում էի. բայց թե լոկ մանկական բնազդից և անորոշ զգացումից զատ, թե մայրիկիս սիրելու համար ես ու Պեգգոտին այդ մարդու օգնության կարոտ չէինք, ես մի ուրիշ պատճառ էլ ունեի խորշելու նրանից կամ զզվելու,– այդ պատճառը դեռ մատչելի չէր տհաս մտքիս։ Առժամանակ ես միամիտ էի։ Ես կարող էի միայն մանր-մունր բաներ դիտել, բայց դեռ ուժիցս վեր էր այդ մանրիկ բաներից մի այնպիսի ուռկան հյուսել, որ ես դրանով մարդ բռնեի։

Մի աշնան առավոտ, մինչ ես ու մայրս նստած էինք մեր պարտեզում, հանկարծ տեսանք մր. Մեորդստոնին (արդեն գիտեի նրա անունը) ձի հեծած դեպի մեզ գալիս։ Նա կանգ առավ, մորս ողջունեց և ասաց, թե Լոռուստոֆտ է գնում նավակով զբոսնող բարեկամներին տեսնելու, և հետո զվարթ-զվարթ առաջարկեց ինձ իր թամբի առջև նստեցնել, եթե միայն ուզենամ։

Եղանակն այնպես ախորժելի ու պարզ էր, և ձին քայլելու եռանդից այնպես կայտառ փռնչում էր և դոփում ցանկապատի առջև, որ ես էլ գնալու փափագ զգացի։ Մայրս վերև ուղարկեց ինձ, որ Պեգգոտին շորերս փոխի. այդ միջոցին մր. Մեորդստոնը ձիուց իջավ և երասանը բռնելով սկսեց հանդարտ դեսուդեն քայլել քսուկի (aubépine) ցանկապատի դրսի կողմից, մինչև մայրս կամաց ման էր գալիս ներսի կողմից։ Պեգգոտին ու ես մի փոքրիկ լուսամուտից դիտում էինք նրանց. նրանք կռացան՝ իրենց բաժանող քսուկի ցանկապատն ավելի մոտիկից զննելու համար, և Պեգգոտին, որ մինչ այդ վայրկյանը հրեշտակի պես զվարթ էր, հանկարծ այնպես չարացավ, որ ձեռքի խոզանակը սկսեց մազերիս ներհակ կողմը շարժել, այն էլ չափազանց բիրտ կերպով։

Վերջապես մր. Մեորդստոնը և ես ճանապարհ ընկանք, և ձին թեթևաքայլ առաջ գնաց մարգագետնով։ Պարոնը բռնել էր ինձ մի ձեռքով, և ես թեպետ անհանգիստ տղաներից չէի, բայց և այնպես անդադար ուզում էի ետ նայել նրա երեսը դիտելու համար։ Նա ուներ, եթե կարելի այսպես ասել, սևորակ ծանծառ աչքեր, դժվարանում եմ ավելի հարմար բառ գտնել բնորոշելու այն աչքերը, որոնք այնքան խորություն չունեն, որ հայացքը նրանց մեջ ընկղմես,– աչքեր, որոնք այս կողմ այն կողմ դառնալիս երբեմն շիլ էին երևում։ Երբ ես թաքուն դիտում էի նրան, վրաս մի տեսակ ահ էր գալիս, և զարմանալով հարցնում էի ինձ՝ թե արդյոք ի՞նչ է նրա մտամոլոր թարթափանքի պատճառը։ Նրա մազերը և մորուքը մոտիկից նայելիս ավելի խիտ և ավելի սև էին երևում։ Դեմքի ստորին մասը բոլորովին քառակուսի էր, իսկ կզակը, որ ամեն օր թրաշվելուց սև-սև կետերով էր ծածկվել, հիշեցնում էր ինձ ճիշտ այն մոմե պատկերը, որ կես տարի առաջ ցույց էին տվել մեր գյուղում։ Նրա կանոնավոր հոնքերը, երեսի սպիտակ գույնը, սև մազերն ու բծերը – սատանան տանի այդ բոլորը և նրա հիշատակը – ստիպում էին չնայելով իմ երկբայության, խոստովանել որ նա գեղեցիկ տղամարդ է։ Հավաստի եմ, որ խեղճ մայրս էլ միևնույն կարծիքին էր։ Մենք հասանք մի ծովեզրյա պանդոկի, ուր երկու պարոն մի առանձին սենյակում սիգար ծխելով փռված էին առնվազն չորս աթոռի վրա. երկուսն էլ հասարակ **ժաքետով** էին։ Մի անկյունում խառնիխուռն դիզված էին զանազան շորեր, նավորդի վերարկուներ և մի դրոշակ։

Մեր ներս մտնելուն պես նրանք անշնորհք կերպով տեղերից թռան ու գոչեցին.

– Հե՛յ, Մեորդստոն, կարծում էինք, թե մեռել ես։

– Դեռ ոչ,– ասաց մր. Մեորդստոնը։

– Իսկ այդ տղան ո՞վ է,– հարցրեց պարոններից մեկը, ինձ բռնելով։

– Սա Դևին է,– պատասխանեց մր. Մեորդստոնը։

– Ո՞ր Դեվին,– հարցրեց միևնույն պարոնը։ Դեվի Ջոնսը՞։

– Դեվի Կոպպերֆիլդը,– ասաց մր. Մեորդստոնը։

– Ի՞նչ: Այն հրապուրիչ միստրիս Կոպպերֆիլդի բեռն ու դա՞րդը,– գոչեց պարոնը,– այն փոքրիկ ու սիրուն այրի՞ն:

– Քինիոն,–ասաց մր. Մեորդստոնը,– զգույշ կացեք, լսող կա: Մի չարաճճի ականջ է դնում:

– Եվ ո՞վ է այդ չարաճճին,– հարցրեց պարոնը ծիծաղելով:

Ես իսկույն գլուխս բարձրացրի իմանալու, թե ո՞վ է:

– Շեֆիլդցի Բրուքսը,– ասաց մր. Մեորդստոնը:

Ես ուրախացա, լսելով, որ չարաճճին շեֆիլդցի Բրուքսն է, որովհետև սկզբում կարծել էի, թե ես եմ:

Երևի թե այդ շեֆիլդցի Բրուքսը մի շատ ծաղրելի համբավ ուներ, որ նրա անունը հիշվելուն պես երկու պարոնն էլ քահ-քահ ծիծաղեցին, մր. Մեորդստոնն էլ նույնը արեց: Այդ քրքիջից հետո Քինիոն կոչվող պարոնն ասաց.

– Եվ ի՞նչ է մտածում շեֆիլդցի Բրուքսը առաջիկա գործի մասին:

– Չեմ կարծում, որ Բրուքսը այդ գործից շատ բան հասկանա,– պատասխանեց մր. Մեորդստոնը. – բայց երևի թե ընդհանրապես հավան չէ:

Նորից քրքիջ բարձրացավ, և մր. Քինիոնն ասաց, թե մի **շիշ շերրի**[7] կապսպրե Բրունքսի կենացը խմելու համար: Եվ երբ գինի բերին, նա ինձ էլ մի քիչ առաջարկեց, հետն էլ **բիսքվիթ** և իմ խմելուց առաջ ոտքի ելավ ու ասաց. «Կորչի այդ շեֆիլդցի Բրուքսը»: Բաժակը թունդ ծափահարությամբ և այնպիսի զվարթ ծիծաղով ընդունվեց, որ ես էլ սկսեցի ծիծաղել, իսկ նրանք ավելի քրքջացին: Մի խոսքով բոլորս էլ շատ ուրախ էինք:

Ծովափի ժայռերում մի պտույտ անելուց հետո, նստեցինք արոտի վրա, սկսեցինք հեռադիտակով աչքի անցնել շրջակայքը: Երբ դիտակն ինձ էին տալիս, ես ոչ մի բան չէի կարողանում նշմարել, թեև ասում էի, որ լավ եմ տեսնում. այնուհետև պանդոկ վերադարձանք ճաշելու: Այն երկու պարոններն անդադար ծխում էին, և ես ժաքետների կծու հոտից հետևացնում էի, թե այդ հագուստների կարելուց ի վեր պարոնները ուրիշ ոչինչ չեն արել, բացի ծխելուց: Չմոռանամ ասել, որ ճաշից հետո մենք նավ մտանք, ուր նրանք երեքն էլ խցիկն իջան և սկսեցին թղթեր զննել. նավի հարկից ներքև նայելիս ես նկատեցի, որ նրանք շատ են զբաղված: Այդ միջոցին ինձ թողել էին մի շիկահեր և զվարճալի մարդու հետ, որ իր ահագին գլխի վրա մի փոքրիկ փայլուն գլխարկ էր կրում, իսկ շերտավոր շապկի կրծքին մեծ տառերով մակագրված էր «Արտուտիկ»: Կարծեցի թե այդ նրա անունն է, չէ՞ որ միշտ նավի վրա է բնակվում և տուն չունի, որ իր անունը դռան վրա գրի. երևի այդ պատճառով է լանջին գրել: Բայց երբ ես նրան «Արտուտիկ» անվանեցի, նա ասաց, թե այդ իր անունը չէ, այլ նավինը:

Ամբողջ օրը նկատում էի, որ մր. Մեորդստոնը մյուս երկու պարոններից ավելի լուրջ ու ծանր է: Նրանք շատ կայտառ ու անհոգ էին. իրար հետ համարձակ կատակ էին անում, բայց նրա հետ՝ շատ սակավ: Ինձ թվում էր, թե նա մյուսներից ավելի հնարագետ և զգուշամիտ է, և թե նրանք էլ ինձ նման ահ են զգում նրանից: Նշմարեցի նաև, որ մր. Քինիոնը ինչ-որ բան պատմելիս, երկու անգամ աչքի ծայրով մր. Մեորդստոնին նայեց, կարծես ստուգելու, թե չի՞ բարկանա արդյոք. մի անգամ էլ, երբ մր. Պեսնիգը (մյուս պարոնը) սկսել էր անչափ եռանդուն խոսել, մր. Քինիոնը ոտքով հրեց նրան և աչքով թաքուն նշան արեց ուշքը դարձնելու մր. Մեորդստոնին, որ լուռումունջ նստած էր: Չեմ կարող մտաբերել, որ մր. Մեորդստոնը ամբողջ օրվա ընթացքում գեթ մի անգամ ծիծաղած լիներ, բացի շեֆիլդցի Բրուքսին հիշելիս, որի մասին հենց ինքն էր կատակ արել:

Երեկոյան դեմ տուն վերադարձանք. հրաշալի երեկո էր: Մայրիկս և մր. Մեորդստոնը դարձյալ մի անգամ զբոսանք արին քսուկի ցանկապատի երկայնքով, մինչ ես թեյ էի խմում:

---

[7] Խերեսի գինի:

Պարոնի մեկնելուց հետո, մայրիկս ինձ պատմել տվեց, թե այն օրն ինչպե՞ս անցկացրի և կամ թե նրանք ի՞նչ խոսեցին և արին։ Պատմեցի, ինչ որ լսել էի իր մասին, և նա ծիծաղելով ասաց, թե այն պարոններն անամոթ ու վայրահաչ մարդիկ են. սակայն ես տեսա և զգացի, որ պատմածս իրեն դուր եկավ։ Ինչպես որ ես գիտեմ այսօր, այնպես էլ ճիշտ այն օրը գիտեի, որ գուշակությունս ուղիղ էր։ Այս առթիվ հարցրի նրան, թե արդյոք ճանաչո՞ւմ է շեֆիլդցի Բրուքսին. նա պատասխանեց, թե ոչ, միայն կարծում է, թե այդ մարդը մի դանակ շինող կլինի։

Ինչպե՞ս ասեմ, որքան էլ հավաստի լինի, մայրիկիս դեմքն արդեն վաղուց փոխված է, արդեն չկա, այլևս գոյություն չունի, մինչ ես այս րոպեիս էլ պարզ տեսնում եմ նրան ճիշտ այնպես, ինչպես որ փողոցով անցնող յուրաքանչյուր անձի դեմք։ Ինչպե՞ս ասեմ, թե նրա անմեղ ու կուսական գեղեցկությունը թառամած է ու կորած, քանի որ նրա շունչը մինչև այսօր էլ դիպչում է թշիս, ինչպես դիպել էր այն երեկո։ Կարելի՞ է միթե ասել, թե նա ընդմիշտ փոխված է, մինչ իմ սիրտը, մանկական զգացումներիս հավատարիմ, միայն այդպես է հիշում նրան և այսօր էլ սրբությամբ պահում այն, ինչ-որ երբեմն սիրել էր։

Մորս մասին գրելիս ես ճիշտ այնպես եմ երևակայում նրա պատկերը, ինչպես որ ես այն երեկո, երբ մեր խոսակցությունը վերջանալուց հետո՝ ես գնացի քնելու, իսկ նա եկավ բարի գիշեր ասելու ինձ։ Նա զվարթ-զվարթ չոքեց անկողնուս մոտ և կզակը ձեռքերի վրա դնելով ու ժպտալով ասաց.

– Հապա կրկնիր Դեվի ջան, ի՞նչ ասացին իմ մասին։ Հավատալս չի գալիս։

– Հրապուրիչ. . . – սկսեցի ես։

Մայրիկս ձեռքը շրթունքներիս դրեց, որ լռեմ։

– Հրապուրիչ չէ,– ասաց նա ծիծաղելով։– Անկարելի է, Դեվի, որ հրապուրիչ ասած լինեն։ Հաստատ գիտեմ, որ այդպես չէ։

– Բայց ասացին՝ հրապուրիչ միստրիս Կոպպերֆիլդ,– կրկնեցի ես շեշտելով։– Եվ սիրուն։

– Չէ՛, չէ՛, սիրուն չէր լինի նրանց ասածը։ Իսկի սիրուն չէր լինի,– ընդհատեց մայրս, դարձյալ մատները իմ շրթունքին դնելով։

– Եվ սիրուն ու փոքրիկ այրին։ Հենց այդպես։

– Ա՛խ, ի՛նչ անամոթ, ի՛նչ հիմար մարդիկ են եղել,– գոչեց մայրս և ծիծաղելով երեսը ծածկեց։ Ի՛նչ անշնորհք մարդիկ են եղել, չէ՞, Դեվի։

– Այո՛, մայրիկ։

– Բայց տես, այդ մասին բան չպատմես Պեգգոտիին. նա կբարկանա նրանց վրա։ Ես էլ սաստիկ բարկացած եմ, բայց կուզենայի, որ Պեգգոտին բան չիմանար։

Ես, իհարկե, խոսք տվի։ Մենք մի քանի անգամ իրար ամուր համբուրեցինք, և հետո ես անուշ քուն մտա։

Կարծեմ հաջորդ օրն էր, այսքան ժամանակ անցնելուց հետո, լավ չեմ հիշում, որ Պեգգոտին ինձ այն զարմանալի ու համարձակ առաջարկությունն արավ, որի մասին այժմ պիտի խոսեմ. բայց այդ դեպքը գուցե և երկու ամսից հետո էր պատահել։

Առաջվա պես մի երեկո նա ու ես նստած էինք (մայրիկս դարձյալ տանը չէր) գուլպայի և մետրաչափի, մեղրամոմի, սուրբ Պողոսի պատկերով կափարիչ ունեցող փոքրիկ տուփի և կոկորդիլոսների գրքի հետ միասին, երբ Պեգգոտին, մի քանի անգամ վրաս նայելուց և բերանը իբր թե խոսելու համար, բայց առանց բան ասելու բանալուց հետո,– որից հարկավ կվախենայի, եթե չկարծեի, թե նա միայն հորանջում է,– վերջապես ասաց փաղաքշանքով.

– Մաստր Դեվի, լավ չէ՞ր լինի, որ երկուսս միասին մի երկու շաբաթով Յարմաուտ գնայինք եղբորս մոտ։ Ինչպե՞ս լավ քեֆ կանեինք։

– Եղբայրդ բարի՞ մարդ է,– հարցրի ես։

– Մի գիտենայիր, թե որքա՜ն բարի,– գոչեց Պեգգոտին, ձեռքերը բարձրացնելով։– Հապա ծո՞վը, նավակնե՞րը, ծովա՞փը, հապա Է՞մը, որ սիրով քեզ հետ խաղ կաներ...

Պեգգոտին ակնարկում էր իր Հեմ քեռորդուն, որ արդեն հիշված է առաջին գլխում, բայց այնպես հնչեցնելով նրա անունը, որ կարծես մի էական բայ լիներ[8]։

Ես հրապուրվեցի այդ զբոսանքի հեռանկարով և պատասխանեցի, թե իրոք կուզենայի գնալ, բայց մայրիկս թույլ կտա՞։

– Մի գինեի վրա գրազ կգամ,– ասաց Պեգգոտին, ուշադիր վրաս նայելով,– որ թույլ կտա։ Եթե կամենաս, հենց որ տուն գա, հարցնեմ իրեն։ Ի՞նչ կասես։

– Բայց մենք որ գնանք, նա ինչ կանի,– ասացի ես և որպեսզի ավելի ուժ հաղորդեմ հարցին, արմունկս սեղանին դեմ տվի։– Չէ՞ որ նրան անկարելի է մենակ մնալ։

Եվ Պեգգոտին հանկարծ սկսեց մի ծակ որոնել գուլպայի կրունկում, որը, սակայն, այնքան փոքր էր, որ չէր էլ արժի կարկատել։

– Քեզ եմ ասում, ա՛յ Պեգգոտի, հո չի՞ կարող նա մենակ մնալ։

– Ա՛յ, օրհնվես դու,– ասաց Պեգգոտին, վերջապես կրկին վրաս նայելով։– Միթե չգիտե՞ս, որ նա երկու շաբաթով հյուր պիտի գնա մեր հարևան տիկին Գրեյպրի մոտ։ Տիկին Գրեյպրի տանը շատ հյուրեր պետք է հավաքվեն։

Օ՛, եթե այդպես է, պատրաստ էի Յարմաուտ գնալ, միայն թե անհամբեր սպասում էի մորս վերադարձին Գրեյպրի տանից (այն երեկո մայրս հենց նրա մոտ էր), որ ստույգ իմանամ, թե թույլ կտա՞ իրագործել մեր երևելի ծրագիրը։ Մայրս այնքան չզարմացավ, որքան ես ենթադրել էի, և անմիջապես հավանություն տվեց, որ գնանք. մենք էլ միևնույն գիշեր ամեն բան պատրաստեցինք և որոշեցինք, որ իմ սենյակի ու սննդի փողոն առանձին վճարվի Յարմաութում։

Մեկնելու օրը շուտ վրա հասավ։ Շուտ վրա հասավ մինչև անգամ ինձ համար, որ տենդային տագնապի մեջ ժամ-ժամ սպասում էի, թե ահա գետինը կշարժվի և կամ՝ մի հրեղեն սար կբարձրանա, և կամ բնության մի ուրիշ դղրդյուն կպատահի և մեր արշավը կխափանի։ Մենք գնալու էինք մի կառքով, որ պիտի մեկներ հետևյալ օրը, նախաճաշից հետո։ Ինչքան փող ասես կտայի, միայն թե թույլ տային ինձ հենց գիշերվանից հագնվել և կոշիկներով ու գլխարկով քնել։

Այսօր էլ սիրտս հուզվում է, թեև այդ մասին թեթև եմ խոսում, երբ հիշում եմ, թե ինչպես շտապում էի մեր երջանիկ տունը թողնել՝ առանց բնավ կասկածելու, թե ի՞նչ եմ թողնում հավիտյան։

Սիրով եմ մտաբերում, որ երբ կառքը դռան առջևն էր, և մայրիկս ինձ համբուրում էր, ես գորովալի սեր զգացի դեպի նա և դեպի այն տունը, որից դեռ ոչ մի անգամ չէի բաժանվել, և լաց եղա։ Քաղցր է ինձ հիշել, որ մայրիկս էլ լաց էր լինում։

Քաղցր է ինձ հիշել, որ երբ կառքը սկսեց շարժվել, մայրիկս բակի դռնակից դուրս վազեց և հրամայեց կանգ առնել, որպեսզի էլի մի անգամ համբուրի ինձ։ Սիրելի է հիշատակել և այն սրտառուչ թախիծն ու գութը, որով նա դարձյալ մի անգամ գրկեց ինձ։

Երբ մենք նրան ճանապարհի վրա կանգնած թողինք, մր. Մեորդստոնը մոտեցավ նրան և կարծես թե կշտամբեց, թե ինչո՞ւ է այնքան հուզված։ Ես ետ էի նայում կառքի միջից և

[8] Անգլերեն է — նշանակում է՝ եմ, իսկ հեմ՝ ապուխտ։

զարմանում, թե նա այնտեղ ի՞նչ գործ ուներ։ Պեգգոտին էլ, որ մյուս կողմից էր մտիկ տալիս, շատ գոհ չէր, ինչքան որ նկատեցի։

Երկար ժամանակ լուռ նստած նայում էի Պեգգոտիին և մտածում՝ եթե նա հանկարծ դեն ձգի ինձ, ինչպես անում են հեքիաթներում, արդյոք ես չէ՞ի կարողանա նորից գտնել մեր տունը այն կոճակների օգնությամբ, որ նա անշուշտ թափած կլիներ ճանապարհին։

Գ. ԳԼՈՒԽ
Փոփոխություն

Կառապանի ձին աշխարհիս ամենածույլ ձիերից մեկն էր. գոնե ըստ իս։ Գլուխը քարշ գցած՝ նա հազիվ էր ոտքերը շարժում, կարծես թե հաճույք էր զգում այն մարդկանց համբերությունը փորձելուց, որոնք սպասում էին իր տարած ծրարներին։ Եվ ինձ թվում էր, թե նա իրոք երբեմն ծիծաղում է այդ հաճույքից. բայց կառապանն ասում էր, թե միայն հազում է։

Կառապանն էլ իր ձիու նման սովոր էր գլուխը կախ գցել և շնչելիս՝ ձեռքերը ծնկներին դրած ու վայր թեքված՝ մրափել։ Ասում եմ քշելիս, բայց հավաստի եմ, որ ձին առանց քշվելու էլ կառքը Յարմաութ կհասցներ, որովհետև իր բանը լավ գիտեր, իսկ գալով խոսակցության, կառապանը սուլելուց զատ ուրիշ ձայն հանելու ընդունակ չէր։

Պեգգոտին ծնկների վրա մի զամբյուղ էր բռնել, որի միջի պաշարը, եթե Լոնդոն էլ գնալու լինեինք, մեզ կբավեր։ Մենք մեկ ուտում էինք, մեկ քնում։ Պեգգոտին քնելիս կզակը զամբյուղի ունկին էր դեմ տալիս, և եթե ինքս չլսեի, երբեք չէի հավատա, թե մի թույլ կինարմատ կարող է նրա նման սաստիկ խռմփոց հանել։

Ճանապարհին այնքա՜ն շատ պտույտներ արինք, այնքա՜ն տեղեր մտանք ելանք, որ ես հոգնեցի, և միայն երբ Յարմաութին մոտեցանք, ուրախություն զգացի։ Ծովափի ցած տարածությունը դիտելիս Յարմաութը ջրով տոգորված սև սպունգի նման մի խոնավ բան երևաց ինձ. և ես մտածեցի, որ եթե երկիրը, աշխարհագրության դասագրքիս ասելով, իրոք կլոր է, ուրեմն ինչպե՞ս կարող էր նրա մի մասն այդ աստիճան տափակ լինել։ Բայց երևի թե Յարմաութը բևեռներից մեկի վրա է, բացատրեցի ես, որ այդքան տափակ դիրք ունի։

Երբ ավելի մոտեցանք, տեսա որ ամբողջ տափարակի եզերքը ուղիղ գծով ձգված է երկնքի տակ, և ակնարկեցի Պեգգոտիին, որ եթե այդ տափարակի վրա տեղ-տեղ բլրակներ պատահեին, եթե ցամաքը ծովից ավելի որոշակի զատված լիներ և քաղաքը ջրաթաթախ հացի նման թրջված չլիներ, տեսարանն ավելի սիրուն կլիներ։ Բայց Պեգգոտին սովորականից ավելի հաստատակամությամբ պատասխանեց, թե պետք է ամեն բան այնպես ընդունել, ինչպես որ կա, և թե իրեն գալով՝ նա **Յարմաութի տառեխ** անունն անգամ, որ տալիս են այդ քաղաքի բնակիչներին, պարծանք է համարում իր համար։

Երբ փողոց մտանք (որ շատ տարօրինակ թվաց ինձ) և ձկան, կուպրի, կանեփի, խծուծի ու ձյութի հոտը քթիս դիպավ, և ես տեսա դեսուդեն վազող նավաստիներ, ձկնորսներ և սալահատակի վրա դղրդող անթիվ սայլեր, այն ժամանակ զգացի, որ զուր եմ մեղադրել այդ գործունյա քաղաքը։ Այդ որ հայտնեցի Պեգգոտիին, նա հիացավ և ասաց, թե ամենքն էլ (երևի թե ի ծնե տառեխ կոչվելու շնորհ ունեցողները) գիտեն, որ Յարմաութը աշխարհիս ամենասիրուն քաղաքն է։

– Այս էլ քեզ, Էմը,– գոչեց Պեգգոտին,– այնպես է մեծացել, որ չես էլ ճանաչի։

Հեմն իրավ սպասում էր մեզ իջևանի դռան առջև, ինձ տեսնելուն պես նա հին բարեկամի նման առողջությունս հարցրեց։ Առաջին վայրկյանին իմ մտքից անգամ չանցավ, որ ես նույնքան եմ ճանաչում նրան, որքան և նա՝ ինձ, որովհետև իմ ծնվելու գիշերվանից նա ոտք չէր դրել մեր տունը։ Սակայն մեր բարեկամությունը շատ առաջ գնաց, երբ որ նա ինձ շալակելով՝ դեպի իրենց տունը տարավ։ Նա մի ահագին պատանի էր վեց ոտնաչափ բարձրությամբ, հաղթանդամ ու թիկնավետ. բայց մանկական ժպտուն դեմքով և շիկագույն

մազերով, որոնք ոչխարի բրդի նման գոռուզ էին։ Հագին ուներ կոշտ քաթանից կարված բաճկոն և այնպիսի կարծր վարտիք, որ ինքն իրեն գետնի վրա կկանգներ, եթե մեջը սրունքներ անգամ չլինեին։ Իսկ այն բանը, ինչ որ ուներ գլխի վրա, ավելի հեշտ էր մի հին տան կպրոտ տանիք անվանել, քան գլխարկ։

Հեմը կրում էր ինձ իր մեջքի վրա, իսկ թևի տակ բռնել էր մեր արկղը։ Պեգգոտին տանում էր մյուս արկղը։ Մեր անցած փողոցները լիքն էին տաշեղի, բեկորների և ավազի կույտերով, անցանք գազի գործարանների, ճոպան մանելու, նավ շինելու, նավ կազմելու, նավ կպրելու, նավ խծծելու, նավ ծեփելու, նավ քանդելու սարայների, դարբնոցների և սրանց նման անթիվ շենքերի առջևից և վերջապես երբ հասանք այն միահարթ տխուր տափարակին, որ ես տեսել էի հեռվից, Հեմն ասաց.

– Այս էլ ձեզ մեր տունը, մաստր Դեվի։

Պշնելով նայեցի ամայի տարածության չորս կողմը, դեպի ծովը, դեպի գետը, բայց որևէ տան հետք անգամ չգտա։ Այնտեղ կար մի սև բարկաս կամ մի ուրիշ հնացած նավի նման շենք՝ բարձր և անշուք, ձագարի պես վրան տնկված մի երկաթե խողովակով, որ շատ հանդարտ ծխում էր. դրանից զատ ես ուրիշ ոչինչ չէի տեսնում, որ մարդկային բնակության տեսք ունենար։

– Ա՞յդ է ձեր տունը, այդ նավի նման բա՞նը,– հարցրի ես։

– Հենց այդ է, մաստր Դեվի,– պատասխանեց Հեմը։

Ալադինի հրաշակերտ պալատում անգամ բնակվելը այնքան ինձ չէր հրապուրի, որքան այդ շենքում ապրելու միտքը։ Նավի մոտ մի սիրուն դռնակ էր բացվում։ Նա ուներ մի վերնահարկ և փոքրիկ-փոքրիկ լուսամուտներ, սակայն ամենից հիանալին այն էր, որ նա հարյուր անգամ ջրերի վրա երթևեկած հին նավ էր, մի իսկական նավ, որ ցամաքի վրա բնակարան լինելու չէր կոչված։ Այդ էր ինձ հիացնողը։ Եթե նա հենց սկզբից բնակության համար շինված լիներ, ես նրան փոքրիկ կամ անհարմար և կամ մենավոր կգտնեի. բայց քանի որ այդ նպատակով չէր շինված, ուրեմն կատարյալ բնակարան էր։

Ներսից նա վերին աստիճանի մաքուր էր, ամեն բան կարգին։ Մեջը կար մի սեղան, մի հոլանդական ժամացույց, մի պահարան և պահարանի վրա՝ մի ափսե, որի վրա նկարված էր հովանոց բռնած մի տիկին, հետն էլ զինվորի նման մի երեխա, որ շրջանակ էր գլորում։ Որպեսզի ափսեն չընկնի, նրա առջև մի սուրբ գիրք էր դրված, բայց եթե ափսեն հանկարծ ընկներ, գրքի շուրջը շարված բոլոր բամակները, պնակներն ու թեյամանը ջարդուփշուր կլինեին։ Պատերից կախված էին, շրջանակի մեջ և ապակու տակ, պատկերներ սրբազան պատմությունից։ Մինչև այսօր էլ այդպիսի պատկերներ փերեզակների ձեռքին տեսնելիս՝ ես իսկույն մտաբերում եմ Պեգգոտիի եղբոր տան ներքին ամբողջ տեսարանը։ Նկարների մեջ երևում էին կարմիր հագած Աբրահամը, որ գնում էր կապույտ հագած Իսահակին զոհելու, և գեղնազգեստ Դանիելը, որ նստած էր կանաչագույն առյուծների գբում։ Վառարանի քիվի վերևը երևում էր Սենդրլենդում շինված Սառա ջեն նավի պատկերը՝ իսկական փայտե կայմով,– նկարչության ու հյուսնության մի սքանչելի ձեռնակերտ, որի նման տենչալի բան, իմ կարծիքով, չէր գտնվի աշխարհում։ Առաստաղի գերաններից քարշ էին արված մի քանի հատ երկաթե կեռեր, որոնց գործածությունը դեռ չէի հասկանում, և մի քանի զզրոցներ, արկղիկներ ու գործիքներ, որոնք կարող էին և աթոռի տեղ գործածվել։

Շեմքից անցնելիս մի ակնարկ բավական էր, որ այդ բոլորը տեսնեի (չմոռանաք, որ սրատես մանուկ էի)։ Այնուհետև Պեգգոտին մի դռնակ բաց արեց՝ ննջարանը ցույց տվեց։ Դրա նման սիրուն ու կատարյալ ննջարան դեռ օրումս չէի տեսել – մի փոքրիկ լուսամուտով նավի քթում, մի փոքրիկ հայելիով, որ խեցիների շրջանակ ուներ, մի փոքրիկ մահճակալով, որ ճիշտ իմ հասակի չափ էր, և ծովային բույսերի փնջիկով, որ դրված էր սեղանի վրա կապտագույն սափորի մեջ։ Պատերը ձյունի պես սպիտակ էին և վերմակը այնպես փայլուն, որ գրեթե աչք

էր շլացնում: Այդ հրաշալի տնակում մի բան առանձնապես ուշքս գրավեց. դա ձկան հոտն էր,– այն աստիճան թափանցիկ հոտ, որ երբ քիթս սրբելու համար թաշկինակս հանեցի, դա էլ այնպիսի հոտ արձակեց, որ հենց իմանաս մեջը խեցգետին փաթաթված լիներ: Այս գյուտի մասին ես հայտնեցի Պեգգոտիին, և նա բացատրեց, որ իր եղբայրը ձուկ, խեցգետին, աստակոս և խաչափաս վաճառող է. հետո կաթսաների ու տակառների սենյակում ես ինքս տեսա մի փոքրիկ ավազանի մեջ այդ կենդանիների մի ահագին դեզ, ուր նրանք զարմանալի կերպով իրար խառնված, շարունակ աշխատում էին մի բան բռնել և ինչ էլ բռնեին, այլևս բաց չէին թողնում:

Շատ քաղաքավարի կերպով ընդունեց մեզ սպիտակ գոգնոցով մի պառավ կին, որ արդեն սկսել էր մեզ ռեվեռանս անել, թեև ես Հեմի շալակին նստած՝ դեռ կես մղոն հեռու էի տանից: Մեզ ողջունեց և մի շատ սիրուն փոքր աղջիկ (գոնե ինձ այդպես երևաց), որ վզին կապույտ ուլունքների մանյակ ուներ. բայց նա մերժելով մերժեց իմ համբույրը և իսկույն փախավ: Համեղ ճաշը երբ վերջացրինք,– պատրաստել էին խաշած ձուկ, կարագի մեջ տապակած գետնախնձոր և, հատուկ ինձ համար, կոտլետներ, ներս մտավ մի երկայնահեր տղամարդ, որ շատ բարի դեմք ուներ: Տեսնելով որ նա Պեգգոտիին «սիրունիկս» անվանեց և մի ամուր համբույր տվեց նրա թշին, իսկույն իմացա, (քանի որ Պեգգոտիի սովորական համեստությունն ինձ հայտնի էր), որ եկվորը նրա եղբայրը կլինի, ինչպես և իրոք ստուգվեց, երբ մեզ իրար հետ ծանոթացրին և ասացին, թե նա միստր Պեգգոտին է, տանտերը:

– Ուրախ եմ, սըր, որ տեսնում եմ ձեզ,– ասաց մր. Պեգգոտին:– Մենք անտաշ կոպիտ մարդիկ ենք, բայց ձեզ ծառայելու միշտ պատրաստ:

Ես շնորհակալություն հայտնեցի և ասացի, որ անկասկած երջանիկ կլինեմ այս հիանալի տնակում:

– Ինչպե՞ս է ձեր մայրիկը, սըր,– հարցրեց մր. Պեգգոտին:– Արդյոք լիովին առո՞ղջ թողիք նրան:

Պատասխանեցի, թե այո, բոլորովին առողջ, զվարթ և ավելացրի, թե մայրիկս շատ-շատ ողջունում է նրան, մր. Պեգգոտիին, թեև ասածս մի հնարովի բան էր:

– Շա՛տ շնորհակալ եմ,– ասաց մր. Պեգգոտին:– Դե ուրեմն, եթե կամենաք մի երկու շաբաթ մեզ մոտ մնալ սրա հետ (իր քրոջն ակնարկելով) և Հեմի ու փոքրիկ Էմլիի հետ միասին, ես անչափ ուրախ կլինեմ:

Այսպիսի հյուրասիրություն ցույց տալուց հետո մր. Պեգգոտին գնաց երեսը կաթսայի եռման ջրով լվանալու, ասելով թե՝ «սառ ջուրը երբեք կեղտը ամբողջովին չի մաքրում»: Նա իսկույն ետ եկավ, ավելի վայելուչ կերպարանք ստացած, բայց այն աստիճան կարմրած, որ չէի կարող չնկատել, թե նրա երեսը մի բանով նման է խեցգետնի, աստակոսի և խաչափառի,– նման նրանով, որ նա տաք ջուր չմտած շատ սև էր, իսկ դուրս գալուց հետո՝ շատ կարմիր:

Թեյից հետո, երբ դռները փակեցին և բոլորս միասին հավաքվեցինք (գիշերներն արդեն միգապատ ու ցուրտ էին), մեր օթևանը այնպես հաճելի երևաց ինձ, որ ասել անգամ չեմ կարող: Լսել հողմի մռնչալը ծովի վրա, գիտենալ, որ մառախուղը փռված է դրսում՝ ամայի շրջակայքում, նայել կրակին և մտածել, որ չորս կողմը ուրիշ տուն չկա, և այն մեկն էլ, ուր նստած ես, մի նավ է,– արդարև մի դյութիչ բան էր: Փոքրիկ Էմլին էլ չէր քաշվում և եկել նստել էր իմ կողքին ամենացածրիկ և վերջին սնդուկի վրա, վառարանի անկյունում, ուր միայն երկուսիս նստելու չափ տեղ կար: Գոգնոցով պառավը բան էր հյուսում կրակի հանդեպ: Կարով զբաղված Պեգգոտին այն աստիճան տանն էր զգում ինքն իրեն, իր սուրբ Պողոսի և մոմի կտորի հետ, որ կարծես դրանք իրենց կյանքում մի ուրիշ հարկ տեսած անգամ չլինեին: Հենը, որ արդեն տվել էր ինձ **կոնչինայի** առաջին դասը, աշխատում էր մտաբերել բախտ գուշակելու մի եղանակ, և թղթերը շուռ տալիս՝ իր ձկնոտ բթամատով հետք էր դրոշմում

նրանց վրա։ Մր. Պեգգոտին լիվլե էր ծխում։ Զգում էի, որ մտերմական խոսակցության րոպեն հասել է։

– Մր. Պեգգոտի,– ասացի ես։

– Ի՞նչ կհրամայեք, սըր։

– Դուք նրա՞ համար եք Հեմ[9] անվանել ձեր որդուն, որ Նոյի պես տապանի մեջ եք բնակվում։

Մր. Պեգգոտին կարծես թե շատ խորիմաստ գտավ այդ գաղափարը, և ասաց.

– Ո՛չ, սըր։ Ես նրան երբեք որևէ անուն չեմ տվել։

– Հապա ո՞վ է դրել այդ անունը,– հարցրի ես։

– Իհարկե հայրը,– ասաց մր. Պեգգոտին։

– Կարծում էի, թե հայրը դուք եք։

– Ջոն եղբայրս էր նրա հայրը,– ասաց մր. Պեգգոտին։

– Արդեն մեռե՞լ է, հարցրի ես մի կարճատև լռությունից հետո։

– Խեղդվել է,– ասաց մր. Պեգգոտին։

Շատ զարմացա, որ մր. Պեգգոտին Հեմի հայրը չէ, և կամենալով տան մյուս անդամների աջակցության աստիճանն էլ ճիշտ իմանալ, ուղղակի դիմեցի մր. Պեգգոտիին.

– Իսկ փորքիկ Էմլի՞ն,– հարցրի ես, աչքս աղջկա կողմը դարձնելով։– Սա ձե՛ր աղջիկն է, չէ՞, մր. Պեգգոտի։

– Ո՛չ, սըր։ Իմ աներձագ Տոմի աղջիկն է։

Մի երկրորդ պատկառելի լռությունից հետո ակամա հարցրի.

– Նա է՞լ է մեռել, մր. Պեգգոտի։

– Խեղդվել է,– ասաց մր. Պեգգոտին։

Զգում էի, թե որքան դժվար է նույն նյութը շոշափել, բայց դեռ ամեն բան չէի իմացել, այնինչ ուզում էի իմանալ։ Ուստի հարցրի։

– Իսկ դուք ինքներդ որդի չունե՞ք, մր. Պեգգոտի։

– Ո՛չ, մաստեր,– պատասխանեց նա թեթև ժպտալով։– Ես ամուրի եմ։

– Ամուրի՞, գոչեցի ես զարմացած։– Ուրեմն սա ո՞վ է, մր. Պեգգոտի։– Եվ այս ասելիս մատնացույց արի բան հյուսող գոգնոցավոր պառավին։

– Դա միստրիս Գրմիջն է,– ասաց մր. Պեգգոտին։

Սակայն այդ վայրկյանին Պեգգոտին, իմ դայակ Պեգգոտին, այնպես ազդու նշան արեց՝ էլ ուրիշ բան չհարցնելու, որ ես ստիպվեցի մինչև մեր քնելու ժամը մունջ նստել և մեր լռիկ շրջանը դիտել։ Այնուհետև Պեգգոտին, իմ փոքրիկ ննջարանում բացատրեց ինձ, թե Հեմը և Էմլին որբեր են. մեկը տանտիրոջս եղբորորդին է, մյուսը՝ աներձագի աղջիկը. նա երկուսին էլ որդեգրել է ամենափոքր հասակից, իսկ մրս. Գրմիջը նրա ընկերոջ այրին է, մի ընկերոջ, որ թշվառության մեջ էր ընկել ու մեռել։– «Եղբայրս էլ մի չքավոր մարդ է»,– ասաց Պեգգոտին,– «բայց ոսկու նման ազնիվ է և երկաթի պես հավատարիմ»,– սրանք Պեգգոտիի բուն խոսքերն են։ Սակայն նրա ասելով, մի բան միայն կարող էր շատ զայրացնել եղբորը և հիշոցներ ասել տալ. այդ նրա վեհանձնության մասին ակնարկելն էր. այդ մասին խոսք բացվելիս՝ նա աջ բռունցքով սաստիկ խփում էր սեղանին (այդպիսի հարվածից արդեն մի սեղան կոտրվել է) և

[9] Ham – Քամ։

սոսկալի երդում անում, որ եթե նորից բան ասեն, նա ինքն իրեն **կխողխողի** և կամ կփախչի։ Ոչ ոք չկարողացավ մեկնել ինձ այդ սարսափելի խողխողել բառը, բայց բոլորն էլ վկայեցին, թե անպատճառ մի հանդիսավոր անեծք կլինի։

Սիրտս հաստատ վկայում էր, որ տանտերը բարի մարդ է, և մի անուշ թմրության մեջ լսում էի, թե ինչպես կանայք նավի մյուս խուցը հեռացան, որ իմի նման փոքրիկ էր, և ինչպես մր. Պեգգոտին և Հեմը երկու հեմըկ[10] կախ տվին առաստաղի կեռերից, որոնց մասին հիշված է վերևում։ Եվ մինչ նիրհս սաստկանում էր, ծովի կողմից մոլեգնաբար մռնչող քամին, ալիքները վրդովելով, մի տեսակ ահ էր ձգում սրտիս մեջ, թե կես գիշերին անդնդասույզ կլինենք. բայց միևնույն ժամանակ զգում էի, որ վերջ ի վերջո նավի մեջ եմ, և մր. Պեգգոտին այստեղ է և մեզ կօգնի, ինչ վտանգ էլ պատահեր։

Սակայն գիշերը հանգիստ անցավ։ Եվ հենց որ արևի լույսը հայելուս խեցապատ շրջանակի վրա փայլեց, ես վեր կացա ու դուրս վազեցի Էմլիի հետ քարեր հավաքելու ծովափին։

– Դու, կարծեմ, լավ նավաստի ես,– ասացի ես Էմլիին։

Չեմ կարող պնդել, թե կարծիքս իրոք այդ էր, սակայն քաղաքավարությունը պահանջում էր մի բան ասել, և այդ րոպեին մեր մոտով անցնող առագաստը այնպես ցոլաց Էմլիի պայծառ աչքերի մեջ, որ ես իսկույն ներշնչվեցի այդ իսկ միտքը հայտնելու։

– Ո՛չ,– պատասխանեց Էմլին, գլուխը շարժելով։– Ես ծովից վախենում եմ։

– Վախենո՛ւմ,– գոչեցի ես մի պարծենկոտ արիությամբ և համարձակ մտիկ տվի հսկայազոր օվկիանոսին։– Իսկ ես ամենևին չեմ վախենում։

– Ա՛հ, ծովը սաստիկ անգութ է,– ասաց Էմլին։– Ես տեսել եմ՝ որքան անգութ էր մերոնցից մի քանիսի հետ։ Տեսել եմ, ինչպես նա մեր տան չափ մի մեծ նավ ջարդուփշուր արեց։

– Չլինի թե հենց այն նավը. . .

– Որի վրա հա՞յրս խեղդվեց,– ասաց Էմլին։– Ո՛չ։ Այն չէ. ես երբեք այն նավը չեմ տեսել։

– Հայրիկի՞դ էլ չես տեսել,– հարցրի ես։

Փոքրիկ Էմլին գլուխը թոթվեց և ասաց.

– Չեմ հիշում, որ տեսած լինեմ։

Ինչպիսի՛ զուգադիպություն։ Սկսեցի պատմել, թե ես էլ իմ հորը երբեք չեմ տեսել, թե մայրիկս ու ես երջանիկ ենք միասին և հուսով ենք, որ միշտ էլ այդպես երջանիկ կապրենք. թե հորս գերեզմանը մեր տան մոտի հանգստարանումն է, մի ծառի տակ, որի շուրջը ես շատ անգամ ման եմ գալիս լուսադեմին, թռչնիկների ծլվլոցը լսելով։ Սակայն Էմլիի ու իմ որբության միջև, ինչպես որ իմացա, մի տեսակ տարբերություն կար։– Նրա մայրը հորից առաջ էր մեռել, և թե հոր գերեզմանը որտե՞ղ էր, ոչ ոք չգիտեր. միայն այս բանը հայտնի էր, որ ծովի խորքումն է։

– Հետո,– ասաց Էմլին, խեցիներ ու կոպիճներ որոնելով,– քո հայրը մի պարոն էր, մայրդ էլ տիկին է, իսկ իմ հայրը ձկնորս էր, մայրս էլ ձկնորս, ապերս էլ ձկնորս է։

– Ապե՞րդ, մր. Պեգգոտի՞ն,– հարցրի ես։

– Ա՛յ նա, որ այնտեղ է,– պատասխանեց Էմլին, նավի կողմը նայելով։

– Այո, իմ խոսքն էլ նրա մասին է։ Նա կարծեմ շատ բարի մարդ է, չէ՞։

– Բարի՞,– ասաց Էմլին։– Եթե ես մի ազնվական տիկին լինեի, նրան մի երկնագույն կապա կընծայեի ադամանդե կոճակներով, մի զույգ նանկինի վարտիք, մի կարմիր թավշե

[10] Hammock — ճոճի նման անկողին։

բաճկոնակ, մի լայնեզր ծուռ գլխարկ, մի մեծ ոսկե ժամացույց, մի արծաթե ծխաքաշ և ոսկով լիքը մի սնդուկ։

Ես հաստատեցի, որ մր. Պեգգոտին անտարակույս արժանի է այդ գանձերին։ Միայն թե, ճշմարիտն ասեմ, փոքր-ինչ դժվարանում էի պատկերացնել նրան այնպես շքեղ պճնված, ինչպես որ կցանկանար տեսնել նրան իր աների թոռնիկը. վստահ չէի մանավանդ, որ լայնեզր ծուռ գլխարկը նրան որևէ կերպ հարմար գար։

Վերոհիշյալ իրերը թվելիս Էմլին դիտում էր կապույտ երկինքը, ասես թե մի փառավոր տեսիլ նշմարելով վերևում։ Մենք շարունակեցինք խեցիներ ու կոպիճներ որոնել։

– Դու կուզենայի՞ր տիկին լինել,– հարցրի ես։

Էմլին վրաս նայեց և «այո» ասաց ծիծաղելով։

– Այո՛, շատ կուզենայի։ Այն ժամանակ բոլորս պարոններ և տիկիններ կլինեինք. ես էլ, ապերն էլ։ Հեմն էլ, մրս. Գըմիջն էլ։ Այն ժամանակ չէինք վախենա փոթորկից։ Եվ եթե խեղճ ձկնորսներին որևէ փորձանք պատահեր, նրանք վստահ կլինեին, որ մենք փողով կօգնենք նրանց։

Այս բոլորը շատ գոհացուցիչ, ուրեմն և շատ բնական թվացին ինձ։ Ես գովեցի Էմլիի նկարագրած պատկերը, և նա սիրտ առնելով ինձ կամացուկ հարցրեց.

– Ուրեմն դու ծովից չե՞ս վախենում։

Ծովն այնքան հանդարտ էր, որ կարող էի համարձակ վրան նայել, բայց հավատացած եմ, որ եթե մի թեթև ալիք դեպի իմ կողմը թավալվեր, ես լեղապատառ կփախչեի, Էմլիի ջրահեղձ ազգականներին հիշելով։ Բայց և այնպես պատասխանեցի «ոչ» – և հարեցի. «կարծեմ դու էլ չես վախենում, թեև ասացիր, թե վախենում ես»,– որովհետև նա գնում էր իսկ և իսկ այն փայտաշեն խարխուլ թմբի եզրով, որի վրա ցատկել էինք, և ես իրոք վախենում էի, թե նա կընկնի։

– Է՛հ, այստեղ վախենալու բան չկա,– ասաց Էմլին։– Բայց ծովի գոռալու ժամանակ ես սարսափով վեր եմ ցատկում քնած տեղից և դողալով մտածում եմ ապոր ու Հեմի մասին, ինձ թվում է, թե նրանք կանչում են – օգնեցեք մեզ, օգնեցե՛ք։ Ահա դրա համար ես կցանկանայի տիկին լինել։ Իսկ այժմ այստեղ ամենևին ահ չեմ զգում։ Այ, տե՛ս։

Նա առաջ վազեց մի անհարթ գերանի վրայով, որ բավական բարձր տեղից ձգվում էր դեպի անդունդը՝ առանց որևէ բազիրքի։ Այս դեպքը այն աստիճան ազդեց վրաս, որ եթե ես նկարիչ լինեի, այսօր անգամ ճշտությամբ կնկարեի նրան և ցույց կտայի, թե ինչպես էր Էմլին դեպի մահ սլանում՝ ծովին ուղղած հայացքով, որ երբեք չպիտի մոռանամ։

Թեթև, համարձակ, ճկուն, ժիր աղջիկը, վազելով ետ եկավ, և ես ծիծաղեցի երկյուղիս ու ճիչիս վրա, որ զուր էի արձակել, զուր, որովհետև մոտերքում ոչ ոք չկար, որ օգներ։ Սակայն տարիներ անցնելուց հետո, արդեն այրական հասակում, ես շատ անգամ հարցրել եմ ինձ, թե երեխայի այդ հանկարծական հանդգնության և նրա խիզախ հայացքի մեջ արդյոք չկա՞ր (ինչեր չկան, որ մեզ անհայտ են) մի տեսակ որդիական կարեկցություն դեպի հայրը, մի բուռն փափագ միանալու նրա հետ ալիքներում, նույն այդ օրը վերջ դնելով իր կյանքին։ Եղել է մի ժամանակ, երբ մտածել եմ. եթե նրան սպասող կյանքը հանկարծ բացվեր աչքիս առջև և այնպես բացվեր, որ ես կարենայի մանուկ խելքովս լավ ըմբռնել այդ կյանքը, և եթե դրան պահպանելը իմ բազկի մեկ շարժումից կախված լիներ,– արդյոք բազուկս կմեկնեի՞ փրկելու նրան անկումից։ Եղել է ժամանակ – չեմ ասի, թե երկար,– երբ ես հարցրել եմ ինքս ինձ. եթե այն առավոտ փոքրիկ Էմլին աչքիս առջև անհետանար ծովի մեջ, ավելի լավ չէ՞ր լինի,– և պատասխան տվել. այո՛, ավելի լավ կլիներ։

Այս մասին գրել գուցե դեռ վաղ է։ Թերևս շտապելու հարկ չկա։ Բայց թող գրածս գրված մնա։

Երկար ժամանակ ման եկանք, զանազան իրեր հավաքելով, և մի քանի հատ ծովաստղ ջուրը նետեցինք։ Ես դեռ այնքան ծանոթ չէի այդ կենդանիների հետ, որ գիտենայի՝ արդյոք նրանք գո՞հ են մեր արարքից, թե՞ դժգոհ։ Վերջ ի վերջո ճանապարհ ընկանք դեպի տուն։ Երբ հասանք խեցգետինների ավազանին՝ ես ու Էմլին մի անմեղ համբյուր տվինք մեկմեկու և երկուսս էլ զբոսանքից կարմրած՝ առույգ-առույգ ներս մտանք նախաճաշիկ անելու։

– Կարծես երկու սարյակ լինեն,– ասաց մր. Պեգգոտին. և ես այդ խոսքը փաղաքշանքի տեղ ընդունեցի։

Ավելորդ է ասել, որ ես արդեն սիրահարված էի Էմլիի վրա։ Եվ հարկավ իմ սերը դեպի այդ մանուկն ավելի գողտրիկ էր, ավելի քնքուշ, ավելի մաքուր ու անձնվեր, քան պատանեկան հասակի սերը, որքան էլ սա վսեմ լինի և ազնիվ։ Այդ կապտաչյա երեխան մի տեսակ եթերական շողերով էր շրջապատված մտքիս մեջ և հրեշտակ էր թվում ինձ։ Եվ եթե նա մի լուսապայծառ առավոտ թևեր ստանար և աչքիս առջև երկինք սլանար, այդ երևույթը ես շատ բնական կգտնեի։

Ամբողջ ժամերով ձեռք-ձեռքի տված զբոսնում էինք Յարմաութի միակերպ տափարակի վրա։ Օրերը զվարթ անցնում էին, ասես թե նույնիսկ ժամանակը դեռ մանուկ լիներ և մեր խաղերին մասնակցեր։ Ես ասացի Էմլիին, որ պաշտում եմ նրան և պատրաստ եմ թրով մեռցնել ինձ, եթե նա էլ ինձ չսիրի։ Նա պատասխանեց, թե ինքն էլ ինձ է սիրում է, և ես վստահ եմ, որ ասածը ճշմարիտ էր։

Գալով մեր վիճակի անհավասարության, մեր հասակի մանկության և կամ որևէ ուրիշ արգելքի,– Էմլին ու ես անփույթ էինք այդ մասին, որովհետև մեզ համար ապագան գոյություն չուներ. մենք ապրում էինք ներկայով։ Մրս. Գըմիջը և Պեգգոտին հիացած էին մեր վրա, և մի երեկո, մինչ Էմլին ու ես իրար գուրգուրելով նստած էինք սնդուկի վրա, նրանցից մեկը շշնջաց. «Աստված իմ, որքան սիրուն է այդ զույգը»։ Մր. Պեգգոտին ժպտաց, իսկ Հեմն ամբողջ երեկո քիթ-բերանը ծռմռելով անցկացրեց։ Երևի թե մենք նրանց համար մի սիրուն խաղալիք էինք և կամ Կոլիսիոնի մանրանկար պատկերի նման զվարճալի մի բան։

Շուտով նկատեցի, որ մրս. Գըմիջը այնքան գոհ չէ, որքան պետք էր սպասել մր. Պեգգոտիի հոգատարությանը նայելով։ Նա շարունակ տրտում էր և երբեմն ավելի էր փնթփնթում, քան կուզենար մեր փոքրիկ ընկերությունը։ Ես նրան շատ էի ափսոսում, բայց երբեմն էլ մտածում էի, թե նույնիսկ մրս. Գըմիջի համար ավելի լավ կլինի, եթե նա մի ջոկ սենյակ ունենա և այնտեղ նստի, մինչև որ սիրտը զվարճանա։

Երբեմն մր. Պեգգոտին **Զվարթ ընկերոջ** պանդոկն էր գնում։ Այդ ես իմացա մեր գալու երրորդ կամ չորրորդ իրիկունը, երբ մրս. Գըմիջը, ժամը ութից փոքր-ինչ անց, մտիկ տվեց հոլանդական ժամացույցին և ասաց. «Ես գիտեմ, նա այնտեղ է. վաղուց գիտեի, որ այնտեղ կերթա»։

Ամբողջ օրը մրս. Գըմիջը դժգոհ էր, իսկ երեկոյան դեմ, երբ կրակը ծուխ էր տալիս, մինչև անգամ արտասվեց։– Օ՜հ, ես մի խեղճ, անտուն անտեր արարած եմ,– ասաց նա այդ անախորժ պատահարի պատճառով։– Ամեն ինչ ինձ հակառակ է։

– Է՜հ, շուտով կանցնի,– ասաց Պեգգոտին։– Չէ՞ որ ծուխը մեզ էլ այնքան անախորժ է, որքան և ձեզ։

– Բայց ես ավելի եմ զգում,– ասաց մրս. Գըմիջը։

Շատ ցուրտ օր էր, քամին թափանցող։ Մրս. Գըմիջի վառարանի մոտ բռնած անկյունը իմ կարծիքով ամենատաքն էր, և ամենից հանգիստ աթոռը անշուշտ նրանն էր. բայց նա դարձյալ դժգոհ էր։ Անդադար գանգատվում էր, թե ցուրտ է, թե ցուրտը մրջյունի պես նրա մեջքը ծակոտում է։ Ի վերջո նա լաց եղավ և կրկնեց, թե ինքը մի թշվառ, անօգնական էակ է, և ամեն բան իր ցանկության հակառակ է կատարվում։

– Իրավ շատ ցուրտ է,– ասաց Պեգգոտին։– Բոլորս էլ զգում ենք։

– Բայց ես ամենից ավելի եմ զգում,– ասաց մրս. Գըմիջը։

Միևնույնը կրկնվեց և ճաշին, երբ ես, իբրև մի պատվավոր հյուր, ավելի առաջ մեծարվեցի, քան թե մրս. Գըմիջը։ Ձկներն էլ կոշտ ու մանրիկ թվացին նրան, գետնախնձորն էլ փոքր-ինչ այրված։ Բոլորս համամիտ էինք, որ այդ մի անախորժ պատահմունք է. բայց մրս. Գըմիջն ասաց, թե նա մեզանից ավելի է զգում այդ բանը, և սկսեց նորից արտասվել, վերոհիշյալ տրտունջը ավելի սաստիկ կրկնելով։

Հետևաբար, երբ մր. Պեգգոտին ժամը մոտ իննին տուն եկավ, անկյունում նստած վշտահար մրս. Գըմիջը ամենաթշվառ և ողորմելի դրության մեջ էր։ Պեգգոտին զվարթ սրտով կարում էր։ Հեմն իր ահագին կոշիկներն էր կարկատում. իսկ ես փոքրիկ Էմլիի հետ նստած, բան էի կարդում ամենքի համար։ Մրս. Գըմիջն ամբողջ երեկո հառաչանքից բացի, մի ուրիշ ձայն չէր հանել և աչքերը չէր բարձրացրել։

– Դե, ինչպե՞ս եք, իմ սիրելիք,– ասաց մր. Պեգգոտին, իր աթոռի վրա նստելով։– Ինչպե՞ս է գնում ձեր գործը։

Բոլորս էլ մի-մի ողջույն տվինք նրան, բացի մրս. Գըմիջից, որ միայն գուլպայի վրա գլուխը շարժեց։

– Ի՞նչ ես քիթդ կախ արել,– ասաց մր. Պեգգոտին, ձեռքերն իրար խփելով։– Սիրտ առ, նանի։ (Մր. Պեգգոտին ուզում էր ասել՝ պառավ աղջիկ)։

Մրս. Գըմիջը, ըստ երևույթին, սիրտ առնելու տրամադիր չէր։ Նա գրպանից հանեց մետաքսե սև թաշկինակը և աչքերը սրբեց. բայց փոխանակ նորից գրպանը դնելու, պահեց ձեռքում, էլի մի անգամ աչքերը սրբեց և շարունակեց ձեռքում պահել թաշկինակը, որպեսզի մյուս անգամ էլ գործածելու պատրաստ լինի։

– Ի՞նչ է պատահել, ա՛յ նանի,– ասաց վերստին մր. Պեգգոտին։

– Ոչինչ,– պատասխանեց մրս. Գըմիջը։– Դու **Զվարթ ընկերի՞ց** ես գալիս, Դանիել։

– Այո՛, այս երեկո էլ մի քիչ նստեցի **Զվարթ ընկերում**,– ասաց մր. Պեգգոտին։

– Շատ ցավում եմ, որ ես եմ քեզ այնտեղ քշում,– ասաց մրս. Գըմիջը։

– Ինձ քշե՞լ։ Ինչո՞ւ քշել,– պատասխանեց մր. Պեգգոտին ծիծաղելով։– Ես հո սիրով եմ այնտեղ գնում։

– Շատ սիրով,– ասաց մրս. Գըմիջը գլուխը շարժելով։– Այո՛, այո՛, շատ սիրով։ Ցավում եմ, որ այնտեղ գնալուդ պատճառը ես եմ։

– Դո՞ւ։ Այդպիսի բան իմ մտքով անգամ չի անցել,– ասաց մր. Պեգգոտին։– Խնդրեմ, դու էլ այդպիսի բաներ չմտածես։

– Այո՛, այո՛,– գոչեց մրս. Գըմիջը։– Ես գիտեմ, թե ինչ եմ ասում։ Ես մի թշվառ, անտեր, անտիրական արարած եմ, և գիտեմ, որ ոչ միայն ինձ բոլորն հակառակ են, այլև ես մի բեռ եմ դարձել բոլորի համար։ Այո՛, այո՛, ես ուրիշնեից ավելի եմ զգում... ա՛յդ է իմ ցավը։

Ականջ դնելով այդ բոլորին, ես ակամա մտածեցի, թե բացի մրս. Գըմիջից՝ տան մյուս անդամներն էլ կարող են վարակվել, այդ ցավով։ Սակայն մր. Պեգգոտին այդպիսի բան չմտածեց, այլ միայն խնդրեց մրս. Գըմիջին, որ սիրտ առնի ու զվարթանա։

– Ինքս էլ չգիտեմ, ի՞նչ եմ ուզում,– ասաց մրս. Գըմիջը։– Գիտեմ միայն, թե ես ինչ եմ։ Իմ վշտերն ինձ դառնացրել են։ Ես զգում եմ վշտերս, և ահա դրանք են դառնացնում ինձ։ Երանի թե չզգայի, բայց որ զգո՛ւմ եմ։ Երանի թե մի անզգա սիրտ ունենայի, բայց որ չունե՛մ։ Ես մի բեռ եմ այս տան համար։ Չեմ էլ զարմանում, որ այսպես եմ։ Ես գիշեր-ցերեկ տանջում եմ թե՛ ձեր քրոջը և թե՛ մաստեր Դեվիին։

Իմ գութն էլ այժմ շարժվեց, և ես գոչեցի ամենամեծ տագնապով.

– Ո՛չ, մրս. Գըմիջ, դուք ամենևին էլ չեք տանջել ինձ։

– Ես գիտեմ, որ արածս լավ չի. ինձ պետք էր հենց սկզբից անկելանոց գնալ։ Լավ էր գնայի մեռնեի։ Ես մի անօգնական թշվառ էակ եմ։ Ամեն բան ինձ հակառակ է, ես էլ բոլորին զզվեցրել եմ. ուրեմն թողեք գնամ, կորչեմ այստեղից։ Լավ է, Դանիել, մեր գյուղի անկելանոցը գնամ, այնտեղ մեռնեմ, որ դուք էլ ինձնից ազատվեք։

Մրս. Գըմիջն այդ ասելով հեռացավ և քնելու գնաց։ Նրա գնալուց հետո մր. Պեգգոտին, որ թեև լուռ էր, բայց սրտով շատ կարեկցում էր պառավին, մեկ-մեկ նայեց բոլորիս, մինչ նրա դեմքն այդ զգացմունքից հուզված էր, և քչփչաց.

– Իր ծերուկն է միտքն ընկել։

Ես չհասկացա, թե որ ծերուկն է մրս. Գըմիջի միտքը գրավել, բայց իմ պառկելու ժամանակ Պեգգոտին հայտնեց ինձ, թե ծերուկը հանգուցյալ մր. Գըմիջն է. թե մրս. Գըմիջի տխրելուն պես եղբայրը սովոր է այդ բացատրությունը առաջ բերել, իբր մի հաստատ ճշմարտություն, որ միշտ հուզել է նրա սիրտը։ Փոքր-ինչ հետո ես լսեցի, թե ինչպես մր. Պեգգոտին իր ճոճից, ուր արդեն պառկել էր, մի քանի անգամ կրկնեց Հեմին. «Խեղճ կին, ծերուկն է միտքն ընկել»։ Այնուհետև հենց որ մր. Գըմիջի վրա նորից մի թախիծ էր գալիս,– ինչը որ մի քանի անգամ կրկնվեց մեր այնտեղ լինելու միջոցին,– մր. Պեգգոտին միևնույն պատճառով էր արդարացնում պառավի վիշտը, միշտ էլ ջերմ կարեկցությամբ։

Այսպես անցավ երկու շաբաթ, առանց ուրիշ փոփոխության, բացի ծովի հորդելուց ու նվազելուց, որոնց համեմատ փոխվում էին մր. Պեգգոտիի գնալ-գալու ժամերը, ինչպես և Հեմի զբաղմունքները։ Պարապ ժամերին Հեմը մեզ հետ զբոսնելու էր գնում, և զանազան նավեր ու նավակներ ցույց տալիս. մի երկու անգամ էլ մեզ մակույկով ծովի վրա պտտեցրեց։ Չգիտեմ ինչն է պատճառը, որ մարդուս մեջ մի քանի թեթև տպավորություններ մի տեղի հետ ավելի սերտ են շաղկապվում, քան մյուսի. սակայն շատերը կվկայեն, որ իրենք էլ այդ նկատել են՝ մանավանդ իրենց մանկության հիշատակների շրջանում։ Երբեք չի պատահել, որ ես Յարմաութի անունը կարդալով կամ լսելով՝ նույն րոպեին չմտաբերեի մի կիրակի առավոտ, երբ նստած էինք ծովափին։ Եկեղեցու զանգը հնչում էր. փոքրիկ Էմլին հենված էր ուսիս. Հեմն անհոգաբար քարեր էր նետում ծովի մեջ, իսկ արեգակը ջրի երեսի թանձր մեգը քշելով, ցոլացնում էր հեռավոր նավերը և նրանց ստվերները։

Վերջապես մեկնելու օրը հասավ։ Ես արիություն ունեցա մնաս բարով ասելու մր. Պեգգոտիին և մրս. Գըմիջին. բայց փոքրիկ Էմլիից բաժանվելու մասին մտածելիս սիրտս գրեթե խորտակվում էր։ Մենք թև-թևի տված մինչ իջևանը գնացինք, ուր կառքը կանգնելու էր, և ճանապարհին խոստացա նամակ գրել նրան։ (Այս խոստումը հետո կատարեցի, գրելով նրան մի այնպիսի նամակ, որի տառերը վարձու բնակարաններ ծանուցող հայտարարությունների տառերից էլ խոշոր էին)։ Շատ մորմոքիչ էր մեր հրաժեշտի վայրկյանը, և սրտիս մեջ երբեք այդպիսի դատարկություն չէի զգացել, ինչպես այն օրը։

Ամբողջ բացակայությանս միջոցին ես ապերախտ էի գտնվել դեպի մեր տունը. շատ սակավ էի հիշել նրան և կամ բնավ չէի հիշել։ Սակայն հենց որ մեկնեցինք, մանկական խիղճս կշտամբելով ցույց տվեց ինձ դեպի տուն տանող ճանապարհը, և որքան վիշտս սաստկանում էր, այնքան ավելի զգում էի, որ իմ բույնը այնտեղ է, որ իմ սփոփանքը և ընկերը մայրս է։

Եվ քանի առաջ էինք գնում, այդ զգացումս աճում էր, և որքան մեզ հանդիպող ծանոթ իրերը շատանում էին, այնքան էլ մեր տունը տեսնելու, մայրիկիս գիրկն ընկնելու ջերմ փափագս սաստկանում էր։ Բայց Պեգգոտին իմ ոգևորության մասնակից լինելու փոխարեն՝ աշխատում էր զսպել ինձ (թեև շատ քնքշաբար), և անհանգիստ ու շփոթված էր երևում։

Բայց և այնպես, մեր տունը, մեր Բլենդրոտըն Րուկրին վերջ ի վերջո երևան եկավ մեր ձիու ուզած րոպեին։ Ինչպե՛ս լավ եմ հիշում նրան և այն աշնան պարզ երեկոն, անձրևաբեր գորշ ամպերով ծածկված երկնքով։

Դուռը բացվեց, և, ես, ուրախության հուզմունքից ծիծաղելով ու լալով սպասում էի մորս։ Սակայն դուրս ելնողը մայրս չէր, այլ մի անծանոթ աղախին։

– Այս ինչ է, Պեգգոտի,– ասացի ես ողորմելի ձայնով։– Մի՞թե մայրիկը դեռ չի եկել։

– Եկել է, եկել, մաստր Դեվի,– ասաց Պեգգոտին,– բայց փոքր-ինչ սպասիր, ես քեզ . . . լսիր, ես քեզ ինչ կասեմ։

Պեգգոտին կառքից իջնելիս իր գրգռվածության և բնական դանդաղկոտության շնորհիվ զգեստն այնպես պատռեց, որ ես ամոթից ու շվարումից ոչ մի բան չասացի նրան այդ մասին։ Երբ վերջապես գետնի վրա ոտք դրեց, նա շտապով ձեռքս բռնեց և, զարմանալի բան, իսկույն ինձ խոհանոց տարավ և դուռը փակեց։

– Պեգգոտի,– ասացի ես զարհուրած։– Այս ի՞նչ է նշանակում։

– Ոչինչ, ոչինչ, որդի ջան,– պատասխանեց նա, աշխատելով զվարթ ձևանալ։

– Ես զգում եմ, որ մի բան է պատահել։ Ասա՛, ո՞ւր է մայրիկը։

– Մայրի՞կը, Դեվի ջան,– կրկնեց Պեգգոտին։

– Այո՛, մայրիկը։ Ինչո՞ւ նա չի երևում դռնակի մոտ և ինչո՞ւ ենք մենք այստեղ մտել։ Ա՛խ, Պեգգոտի։

Աչքերս արտասուքով լցվել էին, և ես ընկնելու վրա էի։

– Աստված իմ, գթա այս մանկանը,– գոչեց Պեգգոտին, ինձ բռնելով։

– Ի՞նչ եղավ քեզ, սիրելիս։ Ասա՛, խոսի՛ր, որդի ջան։

– Հո նա էլ չի՞ մեռել, Պեգգոտի։

– Ո՛չ,– աղաղակեց Պեգգոտին բարձր ձայնով. հետո նստեց և սկսեց հևալ, ասելով թե ես նրան հարված տվի։

Ես բոլոր ուժովս համբուրեցի նրան հարվածիս ազդեցությունը ջնջելու և կամ մի նորը տալու համար, որ ավելի ազդու լիներ, և կանգնեցի նրա առջև, տագնապալից ու զննող հայացք նետելով երեսին։

– Գիտե՞ս ինչ կա, սիրելիս, վաղուց պիտի պատմեի քեզ,– ասաց Պեգգոտին,– բայց . . . չէի կարողանում մտքերս լավ կերոնտացնել (ուզում էր ասել՝ կենտրոնացնել)։

– Դե պատմիր,– գոռացի ես է՛լ ավելի սարսափած։

– Մաստր Դեվի, գիտե՞ս ինչ կա,– ասաց Պեգգոտին, շտապ-շտապ բանալով գլխարկի կապը և շնչասպառ խոսելով։– Գիտե՞ս ինչ կա։ Հապա իմացիր։ Գիտե՞ս, որ այժմ դու հայրիկ ունես։

Ես դողացի, քար կտրեցի։ Կարծես թե մի գերեզմանի կամ մեռելի գարշ հոտ փչեց երեսիս։

– Մի նոր հայրիկ,– ասաց Պեգգոտին։

– Մի նո՞ր,– կրկնեցի ես։

Պեգգոտին թեթև հազաց, հենց իմանաս մի կարծր բան կանգնած լինե կոկորդում, և ձեռքը մեկնելով ասաց.

– Եկ տես նրան։

– Ես չեմ ուզում տեսնել նրան։

– Մայրիկի՞դ էլ չես ուզում տեսնել,– ասաց Պեգգոտին։

Այլևս չէր կարելի ընդդիմանալ, և մենք մտանք դահլիճը, ուր նա ինձ թողեց։ Վառարանի մի կողմում մայրս էր նստած, մյուս կողմում՝ մր. Մեորդստոնը։ Մայրիկս կարը դեն ձգեց և շտապելով, բայց կարծես թե այլայլված, վեր կացավ։

– Կլարա, չմոռանաս, սիրելիս,– ասաց մր. Մեորդստոնը։– Զգույշ պահիր քեզ, միշտ զգույշ։ Բարև Դեվի, ինչպե՞ս ես։

Ես ձեռք տվի նրան։ Մի վայրկյան վարանելուց հետո մոտեցա մորս և համբուրեցի. նա էլ ինձ համբուրեց, զգվելով ուսս թոթվեց և նորից նստեց կարելու։ Ես չէի վստահում ոչ նրան նայել, ոչ մյուսին, բայց լավ զգում էի, որ այն մյուսը երկուսիս էլ դիտում է, այս դրության մեջ ես մոտեցա պատուհանին և երկար ժամանակ մտիկ էի տալիս ցրտից ճլորած թփիկներին։

Հենց որ փախչելու հնար գտա, վերի հարկը բարձրացա։ Իմ առաջվա սիրուն ննջարանս փոխված էր. այժմ պիտի հեռավոր մի սենյակի մեջ քնեի։ Դանդաղելով վայր իջա գոնե մի բան գտնելու, որ նախկին ձևը պահպանած լիներ. ամեն բան փոխված էր. և այսպես որոր-մոլոր պտույտ էի գալիս բակի մեջ, բայց ստիպված եղա շուտով հեռանալ, որովհետև մի ժամանակ դատարկ շնարանում այժմ մի ահագին գամփռ էր պառկած. **նրա** նման սևադունչ ու սևամազ, որ ինձ տեսնելուն պես դուրս թռավ և քիչ էր մնում կծեր ինձ։

Դ. ԳԼՈՒԽ
Աչքից ընկել եմ

Եթե այն սենյակը, ուր տեղափոխված էր իմ անկողինը, վկայելու ընդունակ մի բանական էակ լիներ, այսօր ես նրան կհրավիրեի (կուզենայի իմանալ, թե ո՞վ է այժմ նրա մեջ քնում) հաստատելու, թե սիրտս որքան ընկճված էր, երբ ես նրա մեջ մտա։ Վերև գնալիս լսում էի, որ շունը իմ հետևից հաչում էր. սենյակն օտարոտի և տխուր էր երևում ինձ, անշուշտ ինչպես և ես նրան։ Ես նստեցի և ձեռքերս ծալելով սկսեցի մտածել։

Մտածում էի շատ տարօրինակ բաների մասին. սենյակիս տեսքի մասին, առաստաղի ճեղքերի մասին, պատերին կպցրած թղթի մասին, լուսամուտի ապակու փոսիկների մասին, որոնք դրսի իրերը վետ-վետ ու երերուն էին ցույց տալիս, լվացարանի սեղանի մասին, որի երեք ոտքերը կարծես թե ցավագար լինեին և ինքն էլ էր դժգոհ, ինչպես որ մրս. Գլմիջն էր իր «ծերուկին» հիշելիս։ Ես շարունակ լալիս էի, թեև ցուրտ ու լքում զգալուց բացի՝ չգիտեի լացիս բուն պատճառն ինչ է։ Այս հուսահատ դրության մեջ վերջապես միտքս ընկավ, որ ես չարաչար սիրահարված եմ Էմլիի վրա, թե ինձ նրանից հափշտակել են և այստեղ բերել, ուր ինձ ոչ ոք կարոտ չէ և իմ նկատմամբ նրա չափ հոգատար չէ։ Այս դառն զգացումներից ընկճված, ես կծկվեցի վերմակիս տակ և լալով քուն մտա։

Ես արթնացա, լսելով մի ձայն, թե,– «ահա այստեղ է», զգացի, որ մեկը քրտնած գլուխս բաց է անում։ Մայրիկս և Պեգգոտին եկել էին ինձ տեսնելու, և ձայն հանողը նրանցից մեկն էր։

– Դեվի,– ասաց մայրիկս,– ի՞նչ ունես։

Զարմացա, որ նա կարող է այդպիսի բան հարցնել, և պատասխանեցի՝ ոչինչ։ Այնուհետև շուռ եկա, շրթունքիս դողը թաքցնելու, որպեսզի նա սրտիս վիճակը չիմանա։

– Դեվի,– ասաց մայրիկս։– Դեվի, որդյակ իմ։

Ինչ էլ մայրիկս ասեր, այնքան ինձ չէր հուզի, որքան հուզեցին այդ «որդյակ իմ» խոսքերը։ Ես արտասուքս վերմակի տակ թաքցի և մի ձեռքով ետ հրեցի մայրիկիս, որ ուզում էր բարձրացնել ինձ։

– Այս քո գործն է, Պեգգոտի, ա՛յ դու անգութ արարած,– գոչեց մայրիկս։– Ես այս «առաջուց գիտեի»։ Ինչպե՞ս է խիղճդ տանում հարազատ որդուս իմ դեմ գրգռել և կամ թե մի ուրիշի դեմ, որին ես սիրում եմ։ Այս ի՞նչ է նշանակում, Պեգգոտի։

Խեղճ Պեգգոտին աչքերն ու ձեռքերը դեպի վեր ուղղեց և իմ ճաշի աղոթքի եղանակով պատասխան տվեց.

– Թող աստված ձեզ թողություն շնորհի, մրս. Կոպպերֆիլդ, և այնպես անի, որ դուք երբեք այդ խոսքերի համար չզղջաք։

– Քիչ է մնում, որ խելագարության հասցնես ինձ,– գոչեց մայրիկս։– Այն էլ ե՞րբ։ Մի այնպիսի ժամանակ, երբ ամենաչար թշնամիս անգամ չէր ուզի իմ երջանկությունը վրդովել։ Ա՛յ դու, **փիս** Դեվի, ա՛յ դու բարբարոս Պեգգոտի։ Օ՛հ, աստված իմ,– աղաղակում էր վրդովված ու գրգռված մայրս՝ մեկ ինձ, մեկ Պեգգոտիին դիմելով։– Այս ի՞նչ անպիտան աշխարհ է, որ փոքր-ինչ քաղցրություն վայելես թե չէ, իսկույն էլ դառնության ես հանդիպում։

Այդ վայրկյանին ես մի ձեռքի հպում զգացի, որը ոչ մայրիկինս էր, ոչ էլ Պեգգոտիի, և իսկույն կուչ եկա։ Այդ մր. Մեորդստոնի ձեռքն էր, որ ծանրանում էր թևիս վրա։

– Այս ի՞նչ է, Կլարա, սիրելիս,– ասաց նա։– Արդեն մոռացար, որ պետք է սիրտդ ամուր պահես։

– Շատ ցավում եմ, Էդուարդ,– ասաց մայրս։– Ուզում էի հանգիստ լինել, բայց ահա բարկացա։

– Իրավ եմ ասում,– նկատեց մյուսը։– Ես չեմ ուզում այդպիսի բան լսել քեզնից, այն էլ ճիշտ այս միջոցին։

– Բայց մի՞թե անգթություն չի նեղացնել ինձ, հենց այժմ,– պատասխանեց մայրիկս՝ շրթունքը կծելով։– Չէ՞ որ դա... շատ... շատ կոպիտ վարմունք է։

Մարդը դեպի ինքը քաշեց նրան, ականջին մի բան շշնջաց և երեսը համբուրեց։ Երբ ես մորս գլուխը մր. Մեորդստոնի ուսին հենած ու ձեռքերը նրա վզին փարված տեսա, իսկույն նեթ հասկացա, որ այդ մարդը միշտ կարող է այնպես թեքել մորս ճկուն բնավորությունը, ինչպես որ ինքը կամենա։

– Ներքև իջիր, սիրելիս,– ասաց մր. Մեորդստոնը։– Ես էլ կգամ Դավթի հետ։ Իսկ դու, աղջիկ-պարոն,– շարունակեց նա, Պեգգոտիի վրա մի խոժոռ հայացք գցելով, մինչ ժպտում էր մորս ճանապարհ ձգելիս,– դու տիրուհուդ անունը գիտե՞ս։

– Այսքան տարի նա տիրուհիս է. մի՞թե կարելի է, որ անունը չիմանամ,– պատասխանեց Պեգգոտին։

– Ճշմարիտ է,– ասաց մր. Մեորդստոնը։– Բայց սանդուղքով բարձրանալիս ես լսեցի, որ դու նրան այնպիսի անուն ես տալիս, որ նրանը չէ։ Նա իմ անունն է ընդունել. այդ հո գիտե՞ս։ Ուրեմն խնդրեմ՝ չմոռանաս։

Պեգգոտին անհանգիստ աչքով նայեց ինձ և առանց պատասխան տալու հեռացավ, երևի թե զգում էր, որ իր գնալը ցանկալի է պարոնին, իսկ մնալը՝ ավելորդ։ Երբ ես և մր. Մեորդստոնը մենակ մնացինք, նա դուռը փակեց, նստեց աթոռի վրա և իր առջև կանգնեցնելով ինձ, շեշտակի աչքերիս մեջ նայեց։ Զգում էի, որ իմ աչքերն էլ բևեռված են նրա աչքերին։ Այսպես նրա հետ դեմ առ դեմ գտնվելը հիշելով, կարծես այսօր էլ լսում եմ, թե ինչպես իմ սրտիկը թնդում էր։

– Դավի՛թ,– ասաց նա, շրթունքը սեղմելով։– Եթե ես մի ըմբոստ ձի կամ թե շուն ունենամ, ի՞նչ ես կարծում, ի՞նչ կանեմ։

– Չգիտեմ։

– Ես նրան կծեծեմ։

Ես պատասխանել էի նրան նվաղած ձայնով, իսկ այժմ շունչս գրեթե կտրվեց։

– Ես նրան այնպես կինազանդեցնեմ, որ ցավից ոսկորները կճռճռան։ Ես ասել եմ. ահա մի ստամբակ տղա, որին այնքան պիտի սանձեմ, որ երակների արյունը քամվի։ Այդպես էլ կանեմ... Այս ի՞նչ է երեսիդ վրա։

– Կեղտ,– ասացի ես։

Ես գիտեի, նա էլ գիտեր, որ արտասուքիս հետքն է այդ. սակայն եթե նա քսան անգամ էլ իր հարցը կրկներ, ամեն անգամ քսան-քսան հարված տալով ինձ, դարձյալ ես կուզենայի շունչս փչել, քան թե ուրիշ պատասխան տալ։

– Դու հասակիցդ ավելի խելոք տղա ես,– ասաց նա իրեն հատուկ ծանր ժպիտով,– և տեսնում եմ, որ մեր միտքը լավ ես հասկացել։ Գնա իսկույն երեսդ լվա, ա՛յ պարոն, և եկ միասին վար իջնենք։

Նա ցույց տվեց լվացվելու սեղանը և գլխով նշան արեց, որ իր հրամանն անմիջապես կատարեմ։ Չէի կասկածում, որ նա առանց խղճալու իսկույն գետնով կտա ինձ, եթե ես նրան դիմադրեմ։

– Կլարա, հոգիս,– ասաց նա, երբ իր պատվերը կատարեցի և նա իմ թևից բռնելով մորս սենյակը տարավ ինձ,– այսուհետև քեզ վշտացնող չի լինի։ Մենք կշտապենք մեր ստահակի բարքն ուղղել։

Աստված վկա է, որ գուցե ընդմիշտ ուղղվեի ես և ավելի լավ մարդ դառնայի, եթե այդ րոպեին մի քաղցր խոսք ասվեր ինձ։ Եթե այդ միջոցին մր. Մերոդստոնը մի քաջալերական բառ ասեր ինձ, իմ մանկական տգիտությանը զիջեր և սիրալիր բացատրությամբ հասկացներ, որ ես **մեր տանն** եմ, **մեր հարկի** տակ, արդեն դրանով նա իմ սիրտը կգրավեր, և ես կեղծավոր հնազանդության տեղ՝ հոժարակամ հնազանդություն ցույց կտայի նրան և ատելության փոխարեն՝ հարգանք կզգայի դեպի նա։ Ինձ թվում էր, թե մայրիկս տրտմեց այնպես շվարած տեսնելով ինձ իր սենյակում, և թե ավելի տրտում աչքով նայեց ինձ, երբ ես համրաքայլ մոտենում էի աթոռին, և գուցե ուզեց, որ ժիր-ժիր վազեմ,– բայց և այնպես այն րոպեին նա ոչ մի բան չարտասանեց, իսկ հետո արդեն ուշ էր։

Մենք երեքս միասին ճաշեցինք։ Կարծես թե մր. Մերոդստոնը, շատ սիրով էր մայրիկիս հետ, սակայն, ամաչելով պիտի ասեմ, այդ հանգամանքը չհաշտեցրեց ինձ նրա հետ. մայրիկս էլ նրա հետ սիրով էր։ Նրանց խոսակցությունից իմացա, որ մր. Մերոդստոնի ավագ քույրը մեզ մոտ պիտի գա բնակվելու և նույն երեկո էլ սպասվում է։ Լավ չեմ հիշում՝ ա՞յդ միջոցին էր արդյոք, թե՞ հետո, լսեցի որ թեև մր. Մերոդստոնը մի հաստատ զբաղմունք չունի, սակայն մի որոշ եկամուտ է ստանում մի լոնդոնցի գինեվաճառի տնից, որի հետ իր գերդաստանը դեռ պապից սկսած կապ է ունեցել, և որ քույրն էլ մի այդպիսի հասույթ է ստանում միևնույն տնից. ինչևիցե, հարևանցի եմ հիշատակում այս բանը։

Ճաշից հետ, մինչ մենք վառարանի առջև նստած էինք, և ես մտածում էի, թե ի՞նչ կերպ Պեգգոտիի մոտ փախչեմ, առանց նոր տանտիրոջ բարկությունը շարժելու, մի կառք մոտեցավ պարտեզի դռանը։ Մր. Մերոդստոնը գնաց դիմավորելու եկվորին. մայրիկս էլ գնաց նրա հետևից։ Մինչ ես երկյուղով հետևում էի մայրիկիս, նա հանկած դահլիճի դռան հետևը, մթության մեջ շուռ եկավ, առաջվա պես գրկեց ինձ և տաք-տաք համբուրեց, շշնջալով, որ ես սիրեմ և հնազանդ լինեմ իմ նոր հորը։ Այս բոլորը նա շտապ-շտապ և թաքուն արեց, կարծես թե արածը մի հանցանք լիներ, բայց և մեծ ջերմությամբ, և ձեռքս բռնած՝ տարավ ինձ մինչև պարտեզի այն տեղը, ուր կանգնած էր իր մարդը։ Այստեղ նա թողեց ինձ և նրա թևը մտավ։

Եկվորը միս Մերոդստոնն էր, մի անժպիտ սևահեր տիկին, ձայնով ու երեսով եղբոր նման, ահագին քթի վերևը իրար կցված թավ հոնքերով, որոնցով կարծես մտադիր էր փոխարինել ծնոտի մորուքը, որ իբրև կին չէր կարող կրել բնական տեղում։ Նա բերում էր իր հետ երկու հատ բիրտ ու կոպիտ սև սնդուկ, որոնց խուփերի վրա պղնձե մեխերով նշանակված էին նրա

անվան սկզբնատառերը։ Կառապանի վարձը նա հանեց մի կարծր ու կոշտ պողպատե քսակից, իսկ քսակը պահել էր թևից շղթայով կախված զնդանի նման մի խոր պայուսակում, որի բերանը փակվելիս շաչեց։ Ես դեռ կյանքում չէի տեսել մի այնպիսի մետաղե կին, ինչպես որ Էրմիս Մեորդստոնը։

Նրան ամեն տեսակ մեծարանքով դահլիճ տարան և միայն այնտեղ նա հանդիսաբար ողջունեց մորս, իբրև մի նոր և մերձավոր ազգականի։ Հետո իմ վրա նայեց և հարցրեց.

– Սա ձե՞ր որդին է, հարս։

Մայրս դրական պատասխան տվեց։

– Առհասարակ ես տղա չեմ սիրում,– ասաց միս Մեորդստոնը։– Ինչպե՞ս ես դու, ա՛յ տղա։

Այդ քաջալերական ողջույնին ես պատասխանեցի, թե շատ լավ եմ և հույս ունեմ, թե նա էլ լավ է, բայց այս բոլորը այնպես չոր-չոր ասացի, որ միս Մեորդստոնը իսկույն վճռեց իմ մասին.

– Անշնո՛րհք է։

Այս վճիռը շատ հաստատ ձայնով տալուց հետո, նա խնդրեց ցույց տալ իր սենյակը, որ այն օրից ի վեր ինձ համար մի ահ ու սարսափի տեղ դարձավ։ Ոչ մի աչք չտեսավ երբեք, որ երկու սև սնդուկները չփակված կամ բաց թողնվեին այդ սենյակում։ Միայն մի երկու անգամ, միս Մեորդստոնի բացակայության ժամանակ, դռան արանքով ներս նայելիս, ես նկատեցի բազմաթիվ պողպատե շղթաներ և զանազան կեռ երկաթներ, որոնք նրա հայելու շուրջն ահեղ շարքով կախված էին. դրանք միս Մեորդստոնի արդուզարդի իրերն էին։

Ինչքան կարողացա այն ժամանակ հասկանալ՝ նա եկել էր ընդմիշտ մեզ մոտ մնալու և մտադիր չէր հեռանալ։ Հետևյալ առավոտյան նա սկսեց «օգնել» մորս, մինչև երեկո ամեն բան տեղից շարժեց, առաջվա կարգն ու սարքը տակնուվրա անելով։ Առաջին նշանավոր բանը, որ ես նկատեցի միս Մեորդստոնի վրա, նրա հարատև կասկածն էր, թե առավոտները տան որևէ անկյունում մի մարդ թաքցրած կլինեն։ Այս պատիր կարծիքով նա օրվա ո՛ր ժամին ասես իջնում էր ածխի ամբարը և կամ մութ շտեմարանը և ոչ մի դռնակ չէր բաց անում, որ իսկույն նորից չփակեր՝ այն համոզումով, թե ահա բռնեց թաքնված մարդուն։

Թեև միս Մեորդստոնը ոչ մի բանով թռչունի նման չէր, բայց արշալույսը բացվեր թե չէ՝ արտույտի պես զարթնում էր։ Եվ մինչ ամենքը քնած էին, նա արդեն պտույտ էր գալիս (մինչև այսօր էլ հավաստի եմ թաքնված մարդուն գտնելու համար)։ Պեգգոտին մինչև անգամ պնդում էր, թե միս Մեորդստոնը քնելիս մեկ աչքը բաց է պահում. սակայան ես համաձայն չէի նրա հետ, որովհետև այդ կարծիքը լսելուց հետո՝ ինքս իմ վրա մի քանի անգամ փորձել էի ու գտել, որ այդպես քնել անհնարին է։

Միս Մեորդստոնը գալու երկրորդ օրը աքլորի կանչելուց առաջ վեր կացավ և զանգը տվեց։ Երբ մայրիկս նախաճաշի ժամին վար իջնելով թեյ պատրաստելու վրա էր, միս Մեորդստոնը քթի ծայրով նրա թուշը շոշափեց, որ համբույրի նշան էր, և ասաց.

– Գիտե՞ս, Կլարա, սիրելիս, ես նրա համար եմ այստեղ եկել, որ ձեր հոգսերի բեռը որքան կարելի է թեթևացնեմ։ Դուք դեռ այնքան գեղեցիկ եք և մանուկ (այս խոսքերից մայրս ժպտաց ու կարմրեց, բայց կարծես վշտացավ), որ լավ կլիներ ազատել ձեզ ձեր պարտականությունների այն մասից, որ ես ինքս կարող եմ կատարել։ Ուստի սիրելիս, եթե կամենաք ձեր բանալիները ինձ հանձնել, ապագայում ես ամեն բան կհոգամ։

Այդ օրվանից սկսած միս Մեորդստոնը ցերեկով բանալիներն իր բանտանման պայուսակի մեջ էր պահում, իսկ գիշերով բարձի տակ, և այնուհետև նրանք ոչ մորս ձեռքն էին ընկնում, ոչ էլ իմ։

Մայրս, սակայն, զանց չառավ բողոքելու՝ իր հեղինակությունը նվազեցնելու դեմ: Մի երեկո, մինչ Մեորդստոնը մի քանի տնտեսական մտքեր էր հայտնում եղբորը, նրա հավանությունը գտնելով, մայրս հանկարծ լաց եղավ և ասաց, թե նրանք կարող են իր կարծիքն էլ հարցնել:

– Կլարա,– ասաց մր. Մեորդստոնը խստությամբ:– Կլարա, զարմանում եմ վրադ:

– Այո, Էդուարդ, հեշտ է ասել՝ զարմանում եմ,– գոչեց մայրիկս,– և ամրության մասին խոսել, բայց դու ինքդ չէիր ուզի, որ ես ամուր ու պինդ լինեի:

Պիտի ասեմ, որ ամրությունը այն երևելի հատկությունն էր, որով պարծենում էին թե՛ մր. և թե՛ միս Մեորդստոնը: Չգիտեմ, թե այն ժամանակ ես ինչպես կհայտնեի իմ միտքը, եթե պետք լիներ այդ ամրությունը բնորոշել. բայց պարզ զգում էի, որ դա մի բռնակալություն է, միայն թե ուրիշ անունով, մի դաժան, կամակոր և ամբարտավան նկարագիր, որ երկուսին էլ հատուկ էր: Նրանց դավանությունը, իմ այսօրվա կարծիքով, հետևյալն էր. մր. Մեորդստոնը ամուր մարդն էր և ոչ ոք նրա շուրջը իրավունք չուներ նրա չափ ամուր լինելու, որովհետև նրա ամրության առջև ամեն մարդ պարտավոր էր մեջք ծռել ու խոնարհվել: Միս Մեորդստոնը բացառություն էր: Նրան թույլ էր տրված ամուր լինել, բայց միայն հանուն ազգակցական, այն էլ միայն ենթակա և ստորադրյալ պաշտոնի մեջ: Մայրս երկրորդ բացառությունն էր: Նա կարող էր, մինչև անգամ պարտավոր էր ամուր լինել, բայց միայն պայմանով, որ նրանց ամրությանը հնազանդվի և հավատա՝ թե մի ուրիշ ամրություն չկա աշխարհիս երեսին:

– Շատ ծանր է ինձ,– ասաց մայրս,– որ իմ տանն անգամ. . .

– **Ի՞մ** տանը,– կրկնեց մր. Մեորդստոնը:– Կլարա:

– **Մեր** տանը, ուզում եմ ասել,– թոթովեց մայրս հայտնապես զարհուրած:– Հուսամ, որ դու կհասկանաս ասելիքս, Էդուարդ. . . Շատ դառն է ինձ, որ հենց **քո** տանը ես չեմ կարող մի բառ ասել մեր տնային գործերի մասին: Մեր ամուսնանալուց առաջ ես ինքս էի կառավարում ամեն բան, և կարծեմ շատ լավ: Ուրիշներն էլ այդ կհաստատեն,– ասաց մայրիկս հեկեկալով:– Հարցրու Պեգգոտիին, արդյոք լավ չէ՞ր իմ տնտեսությունը, երբ ոչ ոք չէր խառնվում գործերիս:

– Էդուարդ,– ասաց միս Մեորդոստոնը,– վերջ դնենք այս բոլորին: Ես վաղը հեռանում եմ:

– Լսիր, Ջեն Մեորդստոն,– ասաց նրա եղբայրը:– Խոսքերիդ նայելով կարելի է կարծել, որ դու դեռ քիչ ես ճանաչում ինձ:

– Ես այն կասեմ միայն,– շարունակեց խեղճ մայրիկս, էլ ավելի նեղն ընկնելով և ավելի սաստիկ արտասվելով,– միայն կասեմ, որ ոչ մեկի հեռանալը չեմ ուզում: Ես շատ անբախտ ու թշվառ կլինեմ, եթե ով էլ լինի՝ հեռանա: Իմ խնդրածը մեծ բան չէ: Ես պահանջող չեմ: Ես կուզենայի միայն, որ ինձ հետ էլ երբեմն խորհրուրդ տեսնեն: Ով էլ ինձ օգնելու լինի, ես նրան շատ շնորհակալ կլինեմ, միայն թե երբեմն-երբեմն գեթ ձևի համար, իմ կարծիքն էլ հարցնեին: Ինձ թվում էր, Էդուարդ, թե իմ անփորձ ու ջահել լինելս փոքր-ինչ առաջ սիրելի էր քեզ. գոնե ինքդ էիր այդպես ասում. իսկ այժմ կարծեմ հենց դրա համար ես ատում ինձ: Որքա՜ն խիստ ես:

– Էդուարդ, ասաց կրկին միս Մեորդստոնը,– վերջ դնենք այս բոլորին: Ես վաղը հեռանում եմ:

– Ջեն Մեորդստոն,– դարձյալ որոտաց մր. Մեորդստոնը:– Կլռե՞ս, թե՞ ոչ: Ինչպե՞ս ես համարձակվում. . .

Միս Մեորդստոնը բանտից հանեց թաշկինակն ու աչքերի առջև բռնեց:

– Կլարա,– շարունակեց մր. Մեորդստոնը մորս դիմելով,– դու ինձ զարմացնում ես, ապշեցնում ես: Այո՜, սիրելի էր ինձ ամուսնանալ մի անփորձ ու միամիտ էակի հետ և կրթել նրա բնավորությունը և տալ նրան այնքան ամրություն, պնդություն և հաստատություն, ինչքան որ պետք է: Սակայն, երբ Ջեն Մեորդստոնը զիջում է մեզ մոտ գալ այս գործում ինձ

օգնելու համար, և մի աղախնու դեր կատարել, և երբ նա մի անարգիչ հատուցման է հանդիպում...

– Օ՜հ, աստծո սիրուն, Էդուարդ,– գոչեց մայրիկս,– մի ասի, թե ես ապերախտ եմ: Ես ապերախտ չեմ: Ոչ մի ժամանակ և ոչ ոք իմ մասին այդպիսի բան չի ասել. ես շատ թերություններ ունեմ, բայց ապերախտ չեմ: Ո՜չ, ո՜չ, սիրելիս:

– Եվ երբ Ջեն Մեորդստոնը իր բարության փոխարեն մի անարգիչ հատուցման է հանդիպում,– առաջ տարավ մր. Մեորդստոնը մորս լռելուն սպասելուց հետո,– այն ժամանակ իմ սերը սառչում է և ուրիշ զգացման տեղի տալիս:

– Օ՜հ, մի ասա այդպիսի բան, սիրելիս,– գոչեց մայրս աղերսանքով:– Մի՜ ասի, Էդուարդ. ես չեմ դիմանա այդ մեղադրանքին: Ինչ թերություն էլ ունենամ, դարձյալ բարեսիրտ եմ: Ես այդ չէի ասի, եթե վստահ չլինեի, որ այդպես եմ: Կուզես, հարցրու Պեգգոտիին: Հաստատ գիտեմ, նա էլ կասի, որ ես բարի եմ:

– Թուլություն ասված բանը, Կլարա, մազի չափ արժեք չունի իմ աչքում,– պատասխանեց մր. Մեորդստոնը:– Ջուր են խոսքերդ:

– Աղաչում եմ, եկ հաշտվենք և իրար հետ սիրով լինենք,– ասաց մայրս,– ես չեմ կարող սառնության և տհաճության դիմանալ: Սիրտս այնքան տխուր է: Գիտեմ, ես շատ պակասություններ ունեմ, և դու, Էդուարդ, լավ ես անում, որ կամենում ես ուղղել ինձ քո ամրությամբ: Ջեն, ինչ-որ կամենաք՝ արեք, ես ոչ մի բանում չեմ դիմադրի, միայն թե շատ կհուսահատվեմ, եթե որոշեք թողնել մեզ...

Վշտի սաստկությունից մայրիկս չկարողացավ ասելիքը վերջացնել:

– Ջեն Մեորդստոն,– ասաց մր. Մեորդստոնը, քրոջը դիմելով,– կոպիտ խոսքեր բանեցնելը սովորական չէ մեր միջև: Ես մեղավոր չեմ, որ այս երեկո մի տարօրինակ դեպք պատահեց: Ինձ գրգռեցին: Դու էլ մեղավոր չես. քեզ էլ գրգռեցին: Ուրեմն մոռանանք այդ բոլորը: Բայց որովհետև,– շարունակեց նա իր վեհանձն խոսքերից հետո,– այս տեսարանը մի երեխայի համար չէ, ուրեմն Դավիթ, դու գնա քնիր:

Աչքերումս հավաքված արտասուքից ես հազիվ կարողացա դուռը գտնել, այնպես էի հուզվել մորս վշտից: Մթության մեջ խարխափելով իմ սենյակը բարձրացա, սիրտ չունեի անգամ Պեգգոտիին բարի գիշեր ասելու և կամ թե մոմ խնդրելու: Մի ժամից հետո նա ինքը եկավ իմ ննջարանը և զարթեցնելով ինձ ասաց, թե մայրիկս տխուր-տխուր գնացել է քնելու, իսկ մր. և միս Մեորդստոնները դեռ նստած են դահլիճում:

Հետևյալ առավոտյան ես սովորականից առաջ վար իջա: Դահլիճի մոտով անցնելիս մորս ձայնը լսեցի և կանգ առա դռան առջև: Նա հեզամիտ հլությամբ ներում էր խնդրում միս Մեորդստոնից, վեհանձն տիկինը վերջ ի վերջո ներեց նրան, և նրանք լիովին հաշտվեցին: Այն օրից ի վեր ոչ մի անգամ չտեսա, որ մայրիկս մի բանի մասին կարծիք հայտներ՝ առաջուց միս Մեորդստոնի միտքը չիմացած, չտեսա, որ ամեն անգամ, երբ միս Մեորդստոնը բարկության րոպեներին (չնայելով իր պնդության՝ այդ կետում նա թույլ էր) ձեռքը պայուսակի կողմն էր մեկնում, իբր թե բանալիները հանելու և մորս վերադարձնելու համար,– մայրս սարսափ չզգար, այդ շարժումից:

Մեորդստոնների արյունին հատուկ սև գույնը մթնեցնում էր մինչև անգամ նրանց կրոնական զգացմունքը, որ դաժան ու մոլեգին էր: Վերջերս, այդ կետի մասին մտածելիս, ես կարծել եմ, թե այդ հատկությունը առաջ էր գալիս մր. Մեորդստոնի ամրությունից, որ թույլ չէր տալիս նրան ետ կանգնել պատիժներից ամենածանրը գործ դնելուց, ուր էլ միայն առիթ գտներ մեկին կամ մյուսին պատժելու: Ինչևիցե, լավ եմ հիշում այդ երեկո զարհուրելի դեմքերը, որոնք սովորաբար ուղեկցում էին մեզ դեպի մեր եկեղեցին և դրա փոխված պատկերը: Ահա գալիս է սարսափելի կիրակին, և ես առաջինն եմ մեր հին նստարանը ոտք դնում, իբրև մի մահապարտ, որին տարել են վերջին աղոթքը լսելու: Ահա միս Մեորդստոնն իր՝ նաշի

ծածկույթի նման թավշյա սև զգեստով. նա գալիս է անմիջապես իմ հետևից, նրան հետևում է իմ մայրը և ապա մորս ամուսինը: Պեգգոտին այլևս մեզ հետ չի: Լսում եմ միս Մեորդստոնի մրմունջը և այն ահեղ խոսքերը, որ նա շեշտում է ամբարտավան հաճությամբ և շեշտելիս գոռոզ-գոռոզ շուրջն է նայում, ասես կամենալով հասկացնել, թե մուս բոլոր աղոթողները միայն անբարիշտ մեղավորներ են: Ահա մայրիկս, որին մեկ-մեկ նայում եմ. նրա շրթունքները համարյա թե անշարժ են, և նա նստած է իր ամուսնու և տալի միջև, որոնց աղոթքը որոտման պես երկու կողմից դռնչում է նրա աջ ու ձախ ականջի մեջ: Հանկարծական ահով բռնված ես մտածում եմ. մի՞թե աստված դրանց աղոթքը կընդունի. բայց որովհետև այդ միջոցին գլուխս փոքր-ինչ շարժում եմ, միս Մեորդստոնն իր սաղմոսով խփում է կողքիս, և ես սաստիկ ցավ եմ զգում:

Ահա դուրս ենք գալիս եկեղեցուց, և ես տեսնում եմ, որ հարևան կանայք մորս ու ինձ դիտում են և իրար հետ փսփսում: Մերոնք իրար ձեռք տված առաջ են անցնում, իսկ ես ծանրաքայլ հետևում եմ նրանց, նկատելով դրացիների հայացքը, և հարցնում ինքս ինձ. – Մի՞թե մորս քայլերն առաջվա պես թեթև չեն. մի՞թե նրա թարմ գեղեցկությունը թառամել է: Արդյոք ոչ ոք այդ դրացիներից չի՞ հիշի, թե ինչպես մի ժամանակ նա և ես միասին էինք տուն գնում: Եվ այսպիսի հարցերով գլուխս մաշում էի մինչև այն տխուր ու ցավագին օրվա վերջը:

Մի օր ինձ վարժարան տալու մասին խոսք եղավ: Այս միտքը նախ և առաջ մր. և միս Մեորդստոնները հայտնեցին, մայրս էլ, իհարկե, նրանց համամիտ գտնվեց: Սակայն խնդիրը դեռ վճռված չէր, և ես առժամանակ մեր տանն էի դաս առնում:

Կարո՞ղ եմ արդյոք այդ դասերը մոռանալ: Դաս տվողն ըստ անվան մայրիկս էր, բայց իրոք ես մր. Մեորդստոնի ու նրա քրոջ վերահսկողության ներքո էի, որոնք միշտ ներկա էին դասերին, առիթ փնտրելով վարժելու մորս այն նզովված ամրության մեջ, որ մեզ երկուսիս պատուհասն էր: Ես հավաստի եմ, որ հատկապես այդ նպատակով ինձ տանը թողին: Ես բավական ուշիմ ու ուսումնասեր տղա էի, երբ ապրում էի միայն մորս հետ: Հազիվ եմ մտաբերում, թե ինչպես եմ այբուբենը սովորել նրա ծնկների վրա: Դեռ այսօր էլ առաջին դասագրքիս սև-սև տառերը տեսնելիս հիշում եմ, թե որքան նրանց ձևերը, տարօրինակ, նորանշան էին երևում ինձ, սակայն ոչ մի զզվելի կամ դառն հիշատակ չեն թողել նրանք սրտիս մեջ: Ընդհակառակն՝ ինձ թվում է, թե մի ծաղկաշատ շավղով էի գնում մինչև նույնիսկ կոկորդիլոսների հայտնի գիրքը, և այդ բոլոր ճանապարհը մայրիկս ինձ հեշտացնում էր իր հեզիկ ձայնով ու քաջալերիչ հորդորով: Բայց Մեորդստոնների առջև կատարվող հանդիսավոր, խիստ դասերը հիշելիս՝ զգում եմ, որ դրանք իմ հոգեկան հանգստությունը վրդովող դառն-դառն հարվածներ էին և ամենօրյա չարչարանք ու տառապանք: Իմ գլուխը պտույտ էր գալիս այդ դասերից և հավատացած եմ, որ մայրիկս ինձնից պակաս չէր տանջվում նրանց պատճառով: Օ՜հ, որքան հոգնեցուցիչ, տաղտկալի, տաժանելի և անիմաստ էին այդ անվերջ դասերը:

Կփորձեմ ցույց տալ, թե ինչպե՞ս էին լինում դրանք, և կհիշեմ մի առավոտ:

Նախաճաշից հետո ես իջնում եմ մեր երկրորդ դահլիճը, իմ գրքերը, տետրակն ու քարետախտակը հետս բերելով: Մայրիկս արդեն սպասում է ինձ սեղանի առջև, բայց ոչ ոք այնքան, որքան մր. Մեորդստոնը, որ պատուհանի առջև բազկաթոռում նստած, իբր թե գիրք է կարդում, կամ թե միս Մեորդստոնը, որ մորս կողքին նստած է, երկաթե ուլունք անցկացնելով թելի վրա: Այդ երկուսին տեսնելն արդեն մի բթացուցիչ ազդեցություն է անում իմ վրա, և ես սկսում եմ զգալ, որ անվերջ ջանքով սերտած բառերս մեկ-մեկ փախչում են իմ գլխից և չգիտեմ ո՞ւր գնում: Այսօր անգամ ես չեմ կարող ըմբռնել, թե ո՞ւր էին գնում:

Տալիս եմ մորս իմ ձեռքն ընկած առաջին գիրքը. գուցե դա քերականություն է, գուցե պատմություն, գուցե աշխարհագրություն: Գիրքը մորս հանձնելիս մի վերջին հուսահատ հայացք եմ նետում գրքի բաց երեսի վրա և սկսում շտապով ասել օրվա դասս, որ դեռ թարմ է մտքիս մեջ. բայց ահա սայթաքում եմ մի բառի վրա: Մր. Մեորդստոնն աչքերը բարձրացնում է: Ես սայթաքում եմ մի ուրիշ բառի վրա: Միս Մեորդստոնն է աչքերը բարձրացնում: Ես

կարմրում, այլայլվում եմ, փախցնում եմ հինգ-վեց բառ և կանգ առնում շփոթված։ Մայրիկս հարկավ թույլ կտար ինձ նայել գրքին, եթե միայն համարձակվեր, բայց նա չի համարձակվում, և միայն ասում է հանդարտ.

– Ա՛խ, Դեվի, Դեվի։

– Այժմ, Կլարա, մի քիչ պետք է ամրությամբ վարվել այդ տղայի հետ,– ասում է մր. Մեորդստոնը։– Ինչացո՞ւ է այդ «Ա՛խ, Դեվի, Դեվի»-ն. դա երեխայություն է։ Երկուսից մեկը. նա կամ գիտի իր դասը և կամ չգիտի։

– Նա չգիտի իր դասը,– վճռում է միս Մեորդստոնը զարհուրելի եղանակով։

– Ինձ էլ թվում է, թե չգիտի,– ասում է մայրս։

– Ուրեմն երկար խոսելն էլ ավելորդ է, Կլարա,– վրա է բերում միս Մեորդստոնը։ Ետ տվեք նրան գիրքը։ Թող գնա դասը լավ սերտի։

– Ես էլ հենց այդ էի ուզում, սիրելի Ջեն,– պատասխանում է մայրիկս։– Դե, գնա, Դեվի, էլի մի անգամ դասդ կրկնիր և այդքան ապուշ մի՛ լինիր։

Հնազանդվում եմ նրա հրամանի առաջին կետին, բայց երկրորդ կետն էլ կատարելը իմ ուժերից վեր է, քանի որ ես շատ ապուշ եմ։ Դասը նորից ասելիս ես սայթաքում եմ հենց սկզբում և ճիշտ այնտեղ, ուր առաջ ազատ սահել էի, և կանգ առնում մտածելու, բայց ոչ թե դասի մասին, այլ թե՝ քանի արշին շղարշ է գնվել միս Մեորդստոնի գլխանոցի համար, կամ թե ի՞նչ կարժենա մր. Մեորդստոնի խալաթը, և կամ մի ուրիշ այս տեսակ ծիծաղելի բան, որի հետ ամենևին գործ չունեի և չէի կարող ունենալ։ Մր. Մեորդստոնը մի անհամբեր շարժում է անում, որին վաղուց սպասում էի։ Նույն անում է և միս Մեորդստոնը։ Մայրիկս մի հլու հայացք է ձգում նրանց վրա, գոցում է գիրքս և մի կողմ դնում, իբրև մի ապառիկ, որ ես պետք է վճարեի մյուս դասերս ավարտելուց հետո։

Շատ չանցած այդ ապառիկները դիզվում են և ցած գլորված ձյունե գնդակի նման արագ աճում։ Եվ որքան գնդակն աճում է, այնքան էլ ապուշությունս ավելանում։ Դրությունս արդեն տագնապալի է. ես զգում եմ, որ խրվել եմ անիմաստ բաների անդունդի մեջ, որից փրկվելու հնար չկա, և անձնատուր լինում ճակատագրիս։ Իրավ, անհույս են այդ հայացքները, որ մայրս և ես փոխանակում ենք շփոթվելով։ Սակայն մեր թշվառ դասերի ամենամեծ էֆեկտը տեղ է գտնում այն րոպեին, երբ մայրիկս (կարծելով թե ոչ ոք իրեն չի դիտում) շրթունքի մեղմ շարժումով փորձում է մի կերպ օգնել ինձ։ Իսկույն միս Մեորդստոնը, որ դարանամիտ լրտեսի պես սպասում էր միայն այդ րոպեին, սպառնական բամբ ձայնով ասում է.

– Կլա՛րա։

Մայրիկս ցնցվում է, շառագունում և թեթև ժպտում։ Մր. Մեորդստոնը բազկաթոռից վեր է կենում, դասագիրքը գլխիս շպրտում և ուսերիցս բռնելով սենյակից դուրս վռնդում ինձ։

Դասերս հաջող էլ որ վերջանան, դարձյալ ինձ մի սոսկալի տանջանք է սպասում. դա մր. Մեորդստոնի հատուկ ինձ համար շարադրած թվաբանական ահեղ խնդիրն է, որ նա այսպես է առաջարկում ինձ. «Ես գնում եմ պանրավաճառի խանութ և առնում հինգ հազար գլուխ Գլոչեստրի պանիր՝ ամեն մեկը չորս ու կես պենսով. ուրեմն...»։ Միս Մեորդստոնը ներքուստ հրճվում է։ Ես մինչև ճաշը այդ պանիրների վրա քրտնում եմ առանց վճիռը գտնելու. քարետախտակը սրբելուց մատներիս կաշին սևացել է. վերջապես մի կտոր հաց են տալիս ինձ, որպեսզի պանիրներից վրեժ առնեմ, և ես մինչև երեկո պատժված եմ մնում։

Որքան կարող եմ այդ հեռավոր ժամանակը մտաբերել, թշվառ դասերիս ընթացքը գրեթե միշտ այդպես էր լինում։ Գործերս շատ լավ առաջ կգնային, եթե Մեորդստոնները ներկա չլինեին. նրանք նույն թովչական ազդեցությունն էին անում իմ վրա, ինչ-որ օձը թռչնիկի վրա։ Եթե դասս լավ գիտենայի, ես ուրիշ ոչինչ չէի վաստակում, բայց միայն ճաշին լինելու թույլատվություն. միս Մեորդստոնը չէր տանում, որ ես պարապ եմ մնում, և եթե ես

անզգուշություն ունենայի նրան անգործ երևալու, նա իսկույն եղբոր ուշադրությունն էր հրավիրում վրաս, ասելով. «Սիրելի Կլարա, աշխատանքի պես լավ բան չկա. մի զբաղմունք տվեք ձեր որդուն»,– և դարձյալ ինձ գործի էին դնում: Ինձ հասակակից տղաների հետ խաղալու հնար ես համարյա չունեի. Մեորդստոնների մռայլ փիլիսոփայությամբ, բոլոր մանուկները իժեր էին (չնայելով որ մի ժամանակ մի Մանուկ էր նստած Աշակերտած Խմբի մեջ), որոնք կարող էին վարակել իրար:

Մոտ վեց ամիս շարունակվող այդ վարմունքի հետևանքն այն եղավ, որ ես մի անշնորհք տխուր ու զայրացկոտ տղա դարձա: Դրա պատճառը մասամբ սիրտս ճնշող այն հանգամանքն էր, որ աշխատում էին օրստօրե հեռացնել ինձ իմ մորից: Հավաստի եմ, որ ես վերջապես մի կոպիտ, բիրտ անասուն կդառնայի, եթե մի բան արգելք չլիներ:

Այդ բանը հետևյալն էր: Հայրս թողել էր գրքերի մի փոքրիկ հավաքածու վերի հարկի սենյակում, որ կից էր իմ ննջարանին և ուր ոչ ոք ոտք չէր դնում, ինձնից բացի: Այդ օրհնած փոքրիկ սենյակից կարգով գալիս էին ենկերություն անելու ինձ Րոդրիկ Րենդոմը, Պերեգրին Պիկը, Հումֆրի Կլինկերը, Տոմ Ջոնսը, Ուեկֆիլդի երեցը, Դոն Քիշոտը, Ժիլ Բլան և Ռոբինզոն Կրուզոն: Այս փառավոր խումբը արթուն էր պահում երևակայությունս և ապագայի հույսեր վառում սրտիս մեջ: Դրանք և Արաբական Գիշերները, կախարդական հեքիաթների հետ միասին ոչ մի վնաս չէին տալիս ինձ, որովհետև եթե նրանց մեջ մի վնասակար բան էլ լիներ, դա չէր դիպչում ինձ. ես այդ բանը չէի հասկանում: Զարմանում եմ այժմ, թե որտեղի՞ց այդքան գրքեր կարդալու ժամանակ էի գտնում տաժանելի պարապմունքներիս միջոցին: Իմ կրած վշտերիս մեջ դրանք մի-մի սփոփանք էին ինձ համար: Վեպերի բոլոր լավ անձերը նույնանում էին մտքիս մեջ ինձ սիրելի մարդկանց հետ, իսկ չարերը մր. և միս Մեորդստոնների հետ: Ամբողջ ութ օր ես ինքս ինձ Տոմ Ջոնս էի երևակայում (մի մանկական, անմեղ Տոմ Ջոնս). մի ամիս էլ շարունակ՝ Րոդրիկ Րենդոմ: Շատ հափշտակված էի մանավանդ՝ չեմ հիշում որ ճամփորդության արկածների հատորով, որ գտել էի գրադարանում. սակայն միտքս է, որ ես կոշկի մի կաղապարով սպառազինված՝ ամբողջ օրեր պտույտ էի գալիս մեր տան շուրջը, կարծելով թե վայրենիներ պիտի հարձակվեն նրա վրա. ես ինքս ինձ երևակայում էի մի անգլիական նավատորմի քաջ նավապետ, որ վճռել է իր կյանքը թանկ ծախել, թշնամիների դեմ կռվելով: Փույթ չէ, որ լատիներեն դասագրքով հարված էին տալիս նավապետի գլխին. դրանից հետո նա մի մազի չափ չէր կորցնում իր պատիվը. մնում էր միշտ նավապետ և հերոս՝ ամեն քերականներին և ամեն մեռած ու կենդանի լեզուներին հակառակ:

Այդ էր միակ ու մշտական սփոփանքս: Դրա մասին մտածելիս ես միշտ պատկերացնում եմ աչքիս առջև մի գեղեցիկ ամառային երեկո, գեղջուկ մանուկները հանգստարանի բակում խաղում են, իսկ ես գիրք եմ կարդում անկողնուս վրա: Շրջակայքի յուրաքանչյուր մարագը, եկեղեցու ամեն մի քարը և հանգստարանի յուրաքանչյուր անկյունը գրքերիս հետ մի կապ ուներ իմ մտքի մեջ և ներկայացնում էր այդ գրքերում հիշված մի որևէ անվանի տեղ: Ահա Տոմ Պայպսը մագլցելով եկեղեցու աշտարակի վրա է բարձրանում. ահա Ստրապը, պայուսակը շալակին, մեր ուռենու ցանկապատի մոտ հանգստանում է, և ես հաստատ համոզված եմ, որ **կոմմոդոր** (նավերի հրամանատար) Տրունիոնը մեր գյուղական պանդոկումն է խորհուրդ տեսնում Պիկլի հետ:

Այժմ ընթերցողին լավ հայտնի է, ինչպես և ինձ, թե ինչ էի ես մանկությանս այն շրջանում, որ նկարագրում եմ այս րոպեիս:

Մի առավոտ ես գրքերս առած մեր դահլիճը մտնելիս, տեսա, որ մայրս շատ վարանած է, միս Մեորդստոնը՝ հաստատ տրամադրված, իսկ մր. Մեորդստոնը զբաղված էր ճկուն գավազանի ծայրին մի ինչ-որ բան կապելով: Երբ ներս մտա, նա գավազանը երկու անգամ շաչեցնելով, օդում ճոճեց:

– Այո՛, Կլարա,– ասաց մր. Մեորդստոնը:

– Չեմ կասկածում, սիրելի Ջեն, որ ձեր ասածը ճշմարիտ է,– վրա բերեց մայրս թոթովելով։– Բայց... մի՞թե այդ ծեծն օգտակար էր Էդուարդի համար։

– Իսկ դու, Կլարա, կարծում ես թե վնասակա՞ր էր,– հարցրեց խստությամբ մր. Մեորդստոնը։

– Այդ է խնդիրը,– կնքեց միս Մեորդստոնը վճռաբար։

Իսկ մայրս հեզությամբ պատասխանեց.

– Հարկավ այդպես է, սիրելի Ջեն։

Եվ ոչ մի ուրիշ խոսք չասաց։

Գուշակեցի, որ այդ խոսակցության առարկան ես եմ և նայեցի մր. Մեորդստոնի աչքերին, որոնք շեշտակի ուղղված էին իմ վրա։

– Դե, Դավիթ,– ասաց նա և նրա աչքերը չարաչար պսպղացին,– այսօր պիտի զգույշ լինես։

Նա կրկին փորձեց և շաչեցրեց իր գավազանը, այս անելուց հետո գոհ սրտով մի կողմ դրեց և իր գիրքը վերցրեց։

Դա մի լավ միջոց էր հենց սկզբից արթնացնելու իմ միտքը։ Զգում էի, որ դասիս բառերը ոչ թե հատ-հատ և կամ տող-տող, այլ ամբողջ էջերով են փախուստ տալիս իմ գլխից. ես փորձում էի բռնել նրանց, բայց նրանք, եթե կարելի է այսպես ասել, կարծես թե չմուշկներ հագած սլանում էին, և այնպես արագ, որ քամին էլ հետևներից չէր հասնի։

Սկիզբը վատ էր, շարունակությունը՝ ավելի վատ։ Այդ օրը ես ներս էի մտել հաստատ հույսով, որ գովասանք կստանամ, որովհետև լավ էի սերտել դասերս. սակայն հաշիվներս բոլորովին սխալ դուրս եկան։ Անվճար պարտքերիս գումարը գիրք գրքի հետևից ստվարանում էր, և միս Մեորդստոնը անքթիթ աչքերով դիտում էր շարունակ մեզ։ Եվ երբ վերջապես հինգ հազար պանիրներին հասանք, (որոնք այս անգամ, ինչպես հիշում եմ, պատիժով էր փոխարինվել), մայրիկս թունդ լաց եղավ։

– Կլարա,– ասաց միս Մեորդստոնը ազդարար ձայնով։

– Ես փոքր-ինչ տկար եմ, սիրելի Ջեն,– ասաց մայրս։

Մր. Մեորդստոնը հանդիսավոր ակնարկ արեց քրոջը, ապա գավազանը վերցնելով վեր կացավ աթոռից և ասաց.

– Իրավ որ, Ջեն, դժվար է Կլարայից պահանջել, որ նա հաստատությամբ դիմանա այն տանջանքին ու ցավին, որ այսօր հասցրեց նրան Դավիթը։ Դրա համար պետք կլիներ ստոիկյան պնդություն ունենալ։ Կլարան անշուշտ շատ է ուղղվել և ամրացել. բայց դեռ չի կարելի շատ բան պահանջել նրանից։ Դավիթ, եկ միասին վերև գնանք։

Մինչ նա ինձ դեպի դուռն էր քաշում, մայրիկս մեր վրա սլացավ։ Միս Մեորդստոնը բռնեց նրան և գոչեց.

– Կլարա, խելքդ թռցրե՞լ ես։

Մայրս փակեց ականջներն ու դառնապես լաց եղավ։

Մր. Մեորդստոնը ծանր ու հանդարտ քայլերով վերև բարձրացավ ինձ հետ միասին։ Հավաստի եմ, որ գործադիր իշխանության այդ հանդիսավոր վերելքը մի հրճվանք էր պատճառում նրան։ Երբ վերև հասանք, նա հանկարծ գլուխս բռնեց և իր թևի տակ սեղմեց։

– Մր. Մեորդստոն, սըր,– գոչեցի ես։– Թողեք ինձ, աղաչում եմ, մի ծեծեք ինձ։ Ես դասերս լավ եմ սերտում, բայց չեմ կարող պատասխանել ձեր և միս Մեորդստոնի առջև։ Չեմ կարող։

– Չե՞ս կարող, իրա՞վ, Դավիթ։ Ահա իսկույն կտեսնենք։

Կարծես թե նա մամլիչով էր ճնշում գլուխս, բայց ես ուժգին ցնցում անելով նրա ճանկերից դուրս պրծա և պաղատեցի, որ չլկի ինձ։ Սակայն մի վայրկյան միայն տևեց այդ. հետևյալ վայրկյանին մր. Մեորդստոնը սաստիկ կերպով զարկեց ինձ. ես էլ իսկույն նրա ձեռքը բռնեցի, որով ուզում էր բերանս փակել, և ամբողջ ուժով կծեցի։ Դեռ այսօր էլ, երբ հիշում եմ այդ դեպքը, ատամներս կրճտում են։

Այնուհետև մր. Մեորդստոնը իր հարվածներն այնպես արագացրեց, որ կարծես ուզում էր սպանել ինձ։ Չնայած մեր հանած աղմուկին, ես լսում էի սանդուղքի կողմից ոտքի ձայներ և կանացի ճիչ. դա մորս ու Պեգգոտիի աղիողորմ լացն ու կոծն էր։ Վերջապես մր. Մեորդստոնը հեռացավ և դուրս գնալիս դուռը փակեց. ես հատակի վրա մնացի, իսպառ ջարդված, բորբոքված և իմ թշվառ դրությունից զայրացած ու կատաղած։

Հիշում եմ, թե ինչ անբնական լռություն էր տիրում ամբողջ տանը, երբ ես փոքր-ինչ ուշքի եկա։ Հենց որ բարկությունս սկսեց իջնել և ցավիս մորմոքը մեղմանալ, ես մտածեցի, թե ինձնից ավելի մեղապարտ էակ աշխարհիս երեսին չկա։

Որոշ ժամանակ հատակի վրա ընկած ականջ էի դնում, բայց ոչ մի շշուկ չէր հասնում ինձ։ Հազիվ սողալով, պատկերս տեսա հայելու մեջ. ուռած, կարմրած, այլանդակված, ահռելի էր երես։ Ես ինքս ինձնից սարսափեցի։ Սպիներով ծածկված անդամներս այն աստիճան կսկծում ու ցավում էին, որ ամենաթեթև շարժումից անգամ սկսում էի լալ, սակայն այս բոլորը ոչինչ էր հանցավոր լինելուս դառնության առջև։ Կարող եմ ասել, որ եթե ես իրոք մի ահագին ոճիր էլ գործած լինեի, հանցավորությանս զգացումն ավելի սաստիկ չէր լինի։

Արդեն սկսել էր մթնել, և ես պատուհանը փակեցի (երկար ժամանակ պառկած էի գլուխս շեմքին դեմ տված, մեկ լալով, մեկ նիրհելով և մեկ ականջ դնելով). այդ միջոցին դռան բանալին ճռնչաց և միս Մեորդստոնը ներս մտավ, մի բաժակ կաթ, փոքր-ինչ միս և մի կտոր հաց բերելով։ Առանց մի բառ ասելու, այդ բոլորը սեղանի վրա դրեց, օրինակելի համառությամբ վրաս նայեց և դուրս գնաց. գնալիս դուռը նորից փակեց։

Արդեն վաղուց գիշեր էր, իսկ ես պատուհանի առջև մենակ նստած էի, մտածելով – մի՞թե այլևս ոչ ոք չի գա։ Ամենայն հույս կորցնելուց հետո, շորերս հանեցի և անկողին մտա, և անկողնում հարցնում էի ինձ ահ ու դողով, թե ի՞նչ կլինի իմ վիճակը։ Արդյոք իրա՞վ ես քրեական հանցավոր եմ։ Արդյոք չե՞ն բանտարկի ինձ։ Կամ թե արդյոք կախելու վտանգ չի՞ սպառնում ինձ։

Երբեք չեմ մոռանա, թե ինչպե՞ս հետևյալ առավոտյան զվարթ սրտով զարթնեցի և հետո հանկարծ նոր աղետը հիշելով, վիատ տագնապ զգացի։ Դեռ անկողնուց չէի ելել, երբ միս Մեորդստոնը ներս մտավ կարճ խոսքերով ինձ հայտնելու, թե կարող եմ կես ժամ զբոսնել պարտեզում. ոչ ավելի, և նույն րոպեին դուրս գնաց, դուռը բաց թողնելով, որպեսզի ես օգուտ քաղեմ այդ շնորհից։

Այդպես էլ արեցի և ամեն առավոտ անում էի բանտարկությանս միջոցին, որ ճիշտ հինգ օր տևեց։ Եթե կարենայի մենակ տեսնել մայրիկիս, ես չոքելով կմոտենայի նրան և լալով ներողություն կխնդրեի. սակայն այդ միջոցին միս Մեորդստոնից բացի, ես ուրիշ մարդ չէի տեսնում։ Ինձ թույլ էր տրված դահլիճ իջնել միայն իրիկվա աղոթքի ժամին, երբ տան բոլոր անդամները միասին էին հավաքվում. այդ ժամին միս Մեորդստոնը վերև գալով ինձ դահլիճ էր իջեցնում և դռան մոտ կանգնեցնում, հենց իմանաս ես մի ավազակ լինեի, հետո հանդիսավոր կերպով հետ տանում իմ բանտը՝ առաջ քան աղոթողներից գեթ մեկը տեղից շարժվեր։ Այդ միջոցներին նկատում էի, որ մայրս շատ հեռու էր կանգնում և այնպիսի դիրքով, որ ես չէի կարողանում նրա երեսը տեսնել. իսկ մր. Մեորդստոնի ձեռքը մի մեծ կտավե թաշկինակով փաթաթված էր։

Անկարելի էր բացատրել, թե ինչպես երկար տևեցին այդ հինգ օրերը։ Դրանք իմ հիշողության մեջ ամբողջ տարիների տեղ են գրավում։ Ես ականջ էի դնում ամեն բանի, ինչ-որ կատարվում

էր մեր տանը. զանգակների հնչյուններին, դռների շռնդոցին, խոսակցության շշուկին, սանդուղքից հասնող քայլերի ձայնին, ականջ էի դնում դրսից լսվող քրքջին, ուրախ սուլոցին կամ երգին, և դրանց զվարթ թնդյունից ավելի սրտամաշ էր դառնում տրամադրությունը իմ արգելարանում. հետևում էի ժամերի անորոշ ընթացքին, մանավանդ գիշերները, երբ հանկարծ քնից սթափվելով կարծում էի, թե արդեն առավոտ է, այնինչ մերոնք դեռ չէին պառկել, և իմ առջև դեռ մի երկար ու տագնապալի երազներով լի գիշեր կար: Բայց ահա լուսանում էր, կեսօր էր գալիս, երեկո. տղաները վազվզում էին հանգաստարանի մարգի վրա, իսկ ես պատուհանիս հետևից թաքուն դիտում էի նրանց, վախենալով, որ նրանք բանտում նստելս չիմանան: Տարօրինակ էր թվում ինձ, որ ես այլևս իմ սեփական ձայնը չեմ լսում: Միայն ճաշի ու ընթրիքի հետ գալիս էր ուրախության պես մի թռուցիկ բան, բայց դրանց հետ էլ իսկույն անցնում: Մի երեկո մի զովարար անձրև եկավ և հետզհետե ստվերով պատեց եկեղեցին, իմ սիրտը և սրտիս ամեն տագնապներն ու խայթերը: Այդ բոլորը դեռ այն աստիճան վառ ու թարմ է մտքիս մեջ, որ կարծես, ոչ թե հինգ օր, այլ մի ամբողջ տարիներ տևած լիներ:

Կալանավորությանս վերջին գիշերը ես արթնացա, հանկարծ անունս լսելով, որ մեկը շշնջում էր: Վար ցատկեցի անկողնուց և մթության մեջ, բազկատարած ասացի.

– Այդ դո՞ւ ես, սիրելի Պեգգոտի:

– Ես եմ, ես, հոգյակ Դեվի,– պատասխանեց նա:– Բայց տես, մկնիկի պես զգույշ եղիր, թե չէ կատուն կլսի:

Իմացա, ով է այդ կատուն. միս Մեորդստոնի սենյակը իմին կից էր:

– Ինչպե՞ս է մայրիկս, Պեգգոտի. շա՞տ է բարկացած իմ վրա:

Պեգգոտին լաց էր լինում դռան ծակի մյուս կողմում, ինչպես և ես այս կողմում: Վերջապես նա պատասխանեց.

– Չէ՛, չէ՛, այնքան էլ չէ:

– Ի՞նչ են ուզում անել ինձ հետ, Պեգգոտի ջան: Չգիտե՞ս:

– Ուսումնարան... Լոնդոնի մոտերը,– պատասխանեց Պեգգոտին:

Ես ստիպեցի նրան, որ իր խոսքերը կրկնի, որովհետև շտապելուց մոռացել էի բերանիս տեղ ականջս դնել դռան ծակին, ուստի և նրա պատասխանը՝ փոխանակ լսելիքիս հասնելու, միայն կոկորդս էր խտղել:

– Ե՞րբ, Պեգգոտի:

– Վաղը:

– Դրա՞ համար էր, որ այսօր միս Մեորդստոնը բոլոր շորերս պահարանից հանեց:

– Այո,– ասաց Պեգգոտին:– Կապոց:

– Իսկ մայրիկիս չե՞մ տեսնի:

– Այո՛,– ասաց Պեգգոտին:– Առավոտյան:

Հետո նա բերանը ավելի պինդ հպեց փականքի ծակին և շտապ-շտապ արտասանեց մի քանի խոսք այնպիսի հուզմունքով ու եռանդով, ինչպես երբեք աշխարհումս որևէ բառ չէր հաղորդվել փականքի ծակով, և նրա ամեն մի բառն ընդհատվում էր փղձուկից:

– Սիրելի Դեվի, հոգյակ իմ... Եթե վերջին օրերս... ես քեզ այնպես չեմ գգվել, ինչպես որ միշտ գգվել եմ... չկարծես թե իմ սերը դեպի քեզ պակասել է... Օ՛հ, աչքիս լույս, ես առաջվանից ավելի եմ սիրում քեզ... բայց ես քո օգտի համար էի այնպես վարվում... մեկ էլ ուրիշի... Դեվի, ոսկի տղաս... լսո՞ւմ ես ինձ: Կարողանո՞ւմ ես լսել:

– Այո՛, այո՛... Պեգգոտի,– ասացի ես հեկեկալով։

– Գառնուկ իմ,– շարունակեց Պեգգոտին ամենաջերմ կարեկցությամբ,– ահա թե խնդիրս ինչ է. երբեք չմոռանաս ինձ... ես էլ քեզ չեմ մոռանա երբեք... միշտ էլ մայրիկիդ լավ կնայեմ, Դեվի... ինչպես որ քեզ եմ նայել։ Ես ոչ մի ժամանակ չեմ բաժանվի նրանից։ Կգա մի օր... երբ նա գուցե սրտանց կուզենա... իր խեղճ գլուխը... հիմար, համառ Պեգգոտիի գրկի վրա դնել... Եվ նամակներ կգրեմ քեզ, հոգյակ իմ... չնայելով որ անուս եմ... և ... և...

Եվ Պեգգոտին սկսեց փականքի ծակը համբուրել, որովհետև ինձ համբուրել չէր կարող։

– Շնորհակալ եմ քեզնից, իմ սիրելի Պեգգոտի,– ասացի ես։– Օ՛հ, շատ շնորհակալ եմ, շա՛տ, շա՛տ։ Բայց մի խնդիր ունեմ, կկատարե՞ս։ Խոսք կտա՞ս գրել մր. Պեգգոտիին, և փոքրիկ Էմլիին, և միստրիս Գըմիջին, և Հեմին, որ ես այնպես վատ տղա չեմ, ինչպես որ գուցե նրանք կարծում են։ Գրիր նրանց, որ ես ամենքին ուղարկում եմ իմ սերը, մանավանդ փոքրիկ Էմլիին։ Խոսք կտա՞ս, անգին Պեգգոտի։

Բարեսիրտ կինը խոսք տվեց, և մենք երկուսս ջերմ գորովով համբուրեցինք փականքի ծակը, և ես այդ ծակը մինչև անգամ շփեցի, կարծե թե նա Պեգգոտիի ազնիվ երեսը լիներ և հետո բաժանվեցինք։ Այդ գիշերվանից սկսած մի այնպիսի զգացում դեպի Պեգգոտին արմատ բռնեց սրտիս մեջ, որ դժվար է պարզ բացատրել։ Նա մայրիկիս չփոխարինեց, ոչ ոք էլ աշխարհիս երեսին այդ չէր անի. սակայն սրտիս մեջ դատարկ անկյունը լցրեց, և ես մի այնպիսի հակում զգացի դեպի նա, որի նմանը դեռ ոչ մի էակի համար չէի զգացել։ Դա մի ծիծաղելի կիրք էր, այո՛. բայց եթե հանկարծ Պեգգոտին մեռներ, ես չգիտեմ ի՞նչ կանեի և ի՞նչ դեր կկատարեի այդ դիպվածում, որ ինձ համար մի իսկական ողբերգություն կլիներ։

Առավոտյան միս Մեորդստոնն առաջվա պես եկավ ինձ մոտ և ասաց, թե ես դպրոց պիտի ուղարկվեմ,– մի վճիռ, որ ինձ համար իր կարծածի չափ նոր բան չէր։ Հայտնեց նմանապես, որ ես իսկույն շորերս հագնեմ և վայր իջնեմ նախաճաշիկ ընդունելու։ Այնտեղ տեսա մայրիկիս, որի դեմքը բոլորովին սփրթնել էր և աչքերն արտասուքից կարմրել էին. ես նրա գիրկն ընկա և վշտագին սրտիս խորքից ներողություն խնդրեցի։

– Օ՛հ, Դեվի,– ասաց նա։– Ինչպե՞ս դու սիրտ արիր վշտացնելու այն մարդուն, որին ես սիրում եմ։ Աշխատիր ուղղվել, սիրելիս. աղոթք արա, որ ուղղվես։ Ես ներում եմ քեզ, Դեվի, բայց շատ ցավում եմ, որ դու այդպիսի վատ կրքեր ունես։

Նրան համոզել էին, որ ես չարասիրտ տղա եմ, և նա ավելի այս բանից էր վշտացած, քան իմ մեկնելուց։ Այս հանգամանքը մի անտանելի ցավ ազդեց ինձ։ Ես փորձեցի վերջին նախաճաշիս համն առնել, բայց արտասուքի շիթերը հացի վրա ընկան և թեյիս մեջ կաթեցին։ Նկատեցի, որ մայրիկիս աչքերը մեկ իմ վրա, մեկ արթուն միս Մեորդստոնի վրա է ուղղում, հետո ներքև և կամ մի կողմ մտիկ անում։

– Դուրս տարեք մաստր Կոպպերֆիլդի սնդուկը,– ասաց միս Մեորդստոնը, երբ կառքի դղրդյուն լսվեց դռան մոտ։

Ես կարծում էի, թե Պեգգոտին կգա, բայց եկողը նա չէր, ոչ էլ մր. Մեորդստոնը։ Իմ նախաճանոթ կառապանն էր կանգնած դռան առջև։

– Կլարա,– ասաց միս Մեորդստոնն ազդու ձայնով։

– Իսկույն, սիրելի Ջեն,– պատասխանեց մայրիկս։– Բարով գնաս, Դեվի։ Գնալը քեզ օգուտ է։ Բարի ճանապարհ, որդյակ իմ։ Արձակուրդին տուն կգաս, և ես վստահ եմ, որ լավ տղա դարձած կտեսնեմ քեզ։

– Կլարա՛,– կրկնեց միս Մեորդստոնը։

– Իսկույն, իսկույն, սիրելի Ջեն,– կրկնեց մայրիկս, որ բռնել էր ինձ իր գրկում։– Ամբողջ սրտով ներում եմ քեզ, հոգյակ իմ։ Աստծու օրհնությունը քեզ ընկեր։

– Կլարա՛,– երրորդեց միս Մեորդստոնը։

Միս Մեորդստոնը բարի եղավ մինչև կառքն առաջնորդելու ինձ և ասելու.

– Ես հուսով եմ, որ դու կուղղվես, եթե ոչ՝ բանդ վատ կվերջանա։

Այնուհետև ես կառք նստեցի և ծույլ ձին ճանապարհի ընկավ։

Ե. ԳԼՈՒԽ
Հեռացված եմ մայրական տնից

Արդեն մի կես մղոն անցել էինք և թաշկինակս բոլորովին արտասուքով թրջվել էր, երբ հանկարծ կառապանը կանգ առավ։

Կամեցա տեսնել, թե ինչ կա, և հիացմամբ տեսա Պեգգոտիին, որ մացառի հետևից դուրս թռչելով, ցատկեց մեր կառքի մեջ։ Նա երկու թևով գրկեց ինձ և այնպես սեղմեց իր կրծքին, որ քիթս բոլորովին տրորեց. սակայն ես ցավը միայն հետո զգացի։ Պեգգոտին ոչ մի բառ չասաց։ Նա իր ձեռքը մինչև արմունկը գրպանը մխեց, մի քանի հատ՝ կարկանդակով լի թղթե ծրար դուրս հանեց և իմ գրպանը խոթեց. մի քսակ էլ տվեց ինձ, և այս բոլորն առանց մի խոսք ասելու։ Երկրորդ և վերջին անգամ ինձ իր գրկում սեղմելուց հետո՝ արագ-արագ իջավ կառքից, դեպի տուն վազեց, և համոզված եմ, որ շուտ վազելուց զգեստի կոճակներից և ոչ մեկը տուն չհասցրեց։ Ես վերցրի մեկը և երկար ժամանակ պահում էի, իբրև հիշատակ։

Կառապանը շուռ գալով վրաս նայեց՝ ասես թե հարցնելու՝ արդյոք փախչող կինը ետ կգա՞։ Ես գլուխս թոթվեցի և ասացի, թե չեմ կարծում։

– Ուրեմն առաջ,– ասաց նա դանդաղաշարժ ձիուն, որը առաջ շարժվեց։

Աչքերիս ամբողջ արտասուքը քամելուց հետո սկսեցի մտածել, որ երկար լալուց օգուտ չկա, մանավանդ որ ոչ Րոդրիկ Րենդոմը, ոչ էլ Բրիտանական նավատորմի նավապետը, որքան հիշում էի, ամենադժվար պարագաներում անգամ լաց չէին լինում։ Կառապանն իմ հասատատ տրամադրությունը նկատեց և առաջարկեց ինձ ձիու գավակին փռել թաշկինակս, որ ցամաքի։ Շնորհակալ եղա և հոժարություն հայտնեցի։ Ձիու մեջքի վրա թաշկինակս շատ փոքր թվաց ինձ։

Այժմ ազատ էի հետազոտելու քսակը։ Դա շինված էր ամուր կաշվից, ճարմանդով էր, և մեջը երեք փայլուն շիլինգներ կային, որոնք անշուշտ սրբված էին կավճով, որպեսզի ավելի դուր գան ինձ։ Սակայն քսակի բովանդակության ամենալավ գանձերը երկու հատ կես կրոններն[11] էին, միասին փաթաթված մի թղթի մեջ, որի վրա մորս ձեռքով գրված էր. «Դեվիին։ Սիրուս հետ»։ Ես այն աստիճան հուզվեցի, որ խնդրեցի կառապանին ետ տալ ինձ թաշկինակս, բայց նա ասաց, որ ավելի լավ կլինի, եթե առանց թաշկինակի կառավարվեմ։ Ես էլ տեսա, որ լավ կլինի, և արտասուքս թևով սրբեցի։ Լացս այսպես վերջացավ։

Եվ լավ եղավ, որ վերջացավ, որովհետև հուզմունքս այնքան մեծ էր, որ ամեն րոպե պատրաստ էի հեկեկալ։ Այնինչ մեր ձին կամաց առաջ էր շարժվում։ Մի քանի մղոն անցնելուց հետո ես հարցրի կառապանին, թե արդյոք մինչև ճանապարհի ծայրը կտանի՞ ինձ։

– Ո՞ր ծայրը,– հարցրեց նա։

– Այն ծայրը,– ասացի ես։

– Ո՞րն է այն ծայրը։

---

[11] Հինգ ֆրանկանոց։

– Լոնդոնը։

– Չե՞ս տեսնում, որ այս ձին,– ասաց կառապանը, երասանակը շարժելով, ցույց տալու համար, թե որ ձիու մասին է իր խոսքը,– խոզի նման կես ճանապարհին կսատկի, եթե մինչև այդ ծայրը քշելու լինեմ։

– Ուրեմն միայն մինչ Յարմաո՞ւթ, կտանեք ինձ,– հարցրի ես։

– Կարելի է, ասաց կառապանը։– Այնտեղ ես ձեզ դիլիժանսին կհանձնեմ, իսկ դիլիժանսը կհասցնի ուր որ պետք է։

Կառապանը, որի անունը մր. Բարկիս էր, մի դանդաղկոտ տղամարդ էր, ինչպես արդեն նկատել եմ, և սակավախոս։ Մեր խոսակցությունն անտարակույս հոգնեցրեց նրան։ Իբրև ուշադրության նշան՝ ես մի կարկանդակ շնորհեցի նրան, որ նա փղի պես միանգամից կուլ տվեց՝ առանց որևէ շարժում ցույց տալու իր հաստ ու գեր դեմքի վրա, ինչպես որ փիղն էլ չէր ցույց տա։

– Այս նա՞ է թխել,– հարցրեց մր. Բարկիսը, առաջվա պես գլուխը կախելով և ձեռքերը ծնկներին դեմ անելով։

– Ուզում եք ասել Պեգգոտի՞ն, սըր։

– Ա՛հ,– ասաց մր. Բարկիսը,– նրա մասին է խոսքս։

– Այո՛, նա է մեր կարկանդակները պատրաստում և բոլոր կերակուրները եփում։

– Իրա՞վ,– ասաց մր. Բարկիսը։

Նա շուրթերն այնպես ամփոփեց, որ կասեիր, թե սուլել է ուզում, բայց չսուլեց. այլ սկսեց ձիու ականջները դիտել, որոնց վրա երևի թե մի նոր բան էր նկատել, և երկար նայելուց հետո՝ վերջապես ասաց.

– Իսկ ուրի՞շ բան։

– Էլ ի՞նչ բան, հարցրի ես, կարծելով, թե մր. Բարկիսը մի ուտելու բան է ուզում։

– Ջահել-ջհուլ բարեկամներ, սիրեկաններ չունի՞,– հարցրեց մր. Բարկիսը։

– Պեգգոտի՞ն։

– Այո՛, նա։

– Օ՛հ, ո՛չ։ Նա այդպիսի բաներ չունի։

– Չունի, հա՞։

Եվ նորից շուրթերը սուլելու համար ուռցրեց, բայց չսուլեց, և առաջվա պես անշարժ մնաց, ձիու ականջներին մտիկ տալով։

– Ասում եք, թե ամեն տեսակ կարկանդակներ շինել գիտի,– ասաց մր. Բարկիսը մի երկար լռությունից հետո։– Գաթաներ էլ շինել գիտի՞։

– Լավ գիտի,– պատասխանեցի ես։

– Լա՛վ։ Գիտեք, ես ձեզ ի՞նչ կասեմ,– ասաց մր. Բարկիսը։ Գուցե դուք նրան մի նամակ գրելու լինեք, չմոռանաք ավելացնել, թե Բարկիսը նրան ուզում է։ Չե՞ք մոռանա։

– Թե Բարկիսը նրան ուզում է,– կրկնեցի ես միամիտ սրտով։– Ավելի ոչի՞նչ։

– Այդ է, է՛լի,– ասաց նա։– Բարկիսը նրան ուզում է, պրծավ գնաց։

– Բայց չէ՞ որ դուք ինքներդ վաղը Բլենդրոտին կվերադառնաք, մր. Բարկիս,– ասացի ես (և ձայնս դողաց, որովհետև ես այնտեղից հեռու պիտի մնայի)։ Լավ չէ՞ր լինի, որ ձեր միտքն անձամբ նրան հայտնեիք։

Բայց որովհետև մր. Բարկիսը գլուխը թոթվելով առաջարկս մերժեց և հաստատ կրկնեց, թե «Բարկիսն ուզում է, այս է խնդիրը»,– ես էլ հանձն առա նրա պատվերը կատարել: Ես հենց այդ նույն իրիկունը, մինչ սպասում էի Յարմաութում դիլիժանսի մեկնելուն, գրիչ, թուղթ և թանաք ճարելով, հետևյալ նամակը գրեցի Պեգգոտիին.

«Սիրելի Պեգգոտի, ես հաջողությամբ հասա Յարմաութ: **Բարկիսն ուզում է**»:

Մր. Բարկիսն իմ խոստումը ստանալուց հետո՝ բոլորովին լռեց, իսկ ես վերջին անցքերից թուլացած ու նվաղած՝ գլուխս մի պարկի դեմ տվի ու մինչև Յարմաուտ հասնելս մեռածի պես քնեցի: Երբ իջևանի բակից այդ քաղաքին նայեցի, այնքան օտար թվաց, որ ես մր. Պեգգոտիի գերդաստանից մի մարդ տեսնելու հույսս իսկույն կտրեցի, թեև շատ կցանկանայի գոնե փոքրիկ Էմլիին տեսնել:

Դիլիժանսն արդեն բակում կանգնած էր՝ փայլուն ու մաքուր, բայց չլծված, և ոչ մի նշան ցույց չէր տալիս, թե երբևէ դեպի Լոնդոն կմեկնի: Ես ահով մտածում էի, թե ի՞նչ կլինի իմ սնդուկը, որ մր. Բարկիսը կառքից հանելով բակի մեջտեղն էր դրել, և վերջապես ի՞նչ կլինեմ ես ինքս: Մր. Բարկինսն իր կառքի քեղիները դարձրել էր և արդեն պատրաստվում էր ետ գնալ: Այդ վայրկյանին մի կին դուրս նայեց պատուհանից՝ որի մեջ ապուխտներ ու մորթած հավեր էին կախված, և հարցրեց.

– Դա՞ է Բլենդրոտընից եկած փոքրիկ ջենտլմենը:

– Այո՛, տիկին,– ասացի ես:

– Ձեր անունն ի՞նչ է:

– Կոպպերֆիլդ, տիկին:

– Ուրեմն դուք չեք,– ասաց տիկինը:– Այդպիսի անունով մարդու համար ոչ մի ճաշ չի պատվիրված այստեղ:

– Իսկ Մեորդստոնի՞ համար,– հարցրի ես:

– Մեորդոստոնի համար պատվիրված է:

– Մեորդստոնը ես եմ, տիկին:

– Եթե դուք եք մաստր Մեորդստոնը,– ասաց տիկինը,– հապա ինչո՞ւ ուրիշ անուն եք տալիս ձեզ:

Բացատրեցի բանի էությունը. տիկինը հնչակը քաշեց ու գոչեց. – Ուիլիամ, ցույց տուր պարոնին ճաշարանը:– Մի սպասավոր այս հրամանը լսելուն պես խոհանոցից դուրս վազեց և բավական զարմացավ, որ միայն ինձ պիտի ցույց տա ճաշարանը:

Դա մի երկար ու լայն սենյակ էր, ահագին քարտեզներով զարդարված: Ես շփոթվեցի, և կարծում եմ, որ եթե այդ քարտեզներն իսկապես օտար երկրներ լինեին և ես նրանց մեջ ընկած լինեի, ես ինքս ինձ ավելի միայնակ ու մոլորված չէի զգա: Գլխարկս ձեռքիս բռնած հազիվ համարձակվեցի դռանը ամենից մոտ գտնվող աթոռի եզրին նստել, և երբ սպասավորը հատուկ ինձ համար սփռոց փռեց և աղամանը սեղանին դրեց, հավատացած եմ, որ ես համեստությունից բոլորովին կարմրեցի:

Նա ինձ համար մի քանի տեսակ կերակուր ու փոքր-ինչ կանաչեղեն բերեց և պնակների խուփն այնպիսի շռինդով բաց արեց, որ ես ակամա կարծեցի, թե վրաս բարկացած կլինի: Բայց սիրտս անչափ թեթևացավ, երբ նա սեղանին մի աթոռ մոտեցնելով, քաղցրությամբ ասաց ինձ.

– Այժմ համեցեք, հսկա պարոն:

Շնորհակալություն հայտնեցի և նստեցի սեղանի առջև, սակայն դժվար էր ինձ փոքր ի շատե հաջող շարժել դանակն ու պատառաքաղը և չթափել վրաս **սոուսը**, քանի որ առջևս կանգնած

սպասավորն անդադար վրաս նայելով միանգամայն շփոթեցնում էր ինձ։ Երկրորդ պնակին որ հասա նա ասաց.

– Ահա ձեզ մի կես շիշ **էյլ**։ Կցանկանա՞ք այժմ անուշ անել։

– Շնորհակալ եմ։ Այո՛,– ասացի։

Նա լցրեց մի ահագին բաժակ և լույսի դեմ բռնեց, կարծես թե գույնից հիացած։

– Արևս վկա, շատ է, չէ՞,– ասաց նա։

– Այո՛, կարծեմ շատ է,– պատասխանեցի ես ժպտալով։

Սաստիկ ուրախ էի, որ սպասավորը զվարթ մարդ է։ Նա շարժուն աչքերով, կարմիր թշերով և ցից-ցից թավ մազերով տղա էր։ Մի ձեռքը կողքին դեմ տված, մյուսով էլի բաժակը բարձր բռնած՝ նա շատ դուրեկան տեսք ուներ։

– Երեկ այստեղ մի պարոն կար,– ասաց նա,– մի պարոն՝ Տոպսոյր անունով։ Ճանաչո՞ւմ եք նրան։

– Ո՛չ, չեմ ճանաչում։

– Կարճ վարտիք ու մուճակներ ուներ հագին, լայն գլխարկ, գորշագույն զգեստ, վզին պուտպուտավոր փողկապ։

– Ո՛չ,– ասացի ես վարանելով։– Պատիվ չունեմ ճանաչելու նրան։

– Զարմանում եմ,– շարունակեց սպասավորը, բաժակի սիրուն ցոլքը դիտելով։– Այդ պարոնը երեկ մեզ մոտ եկավ և ահա ճիշտ ա՛յս էյլից պահանջեց. անպատճառ ուզում էր ա՛յս էյլից։ Ասացի նրան, թե վնաս կտա։ Նա չլսեց։ Եվ ի՞նչ եք կարծում. խմելն ու մեռած ընկնելը մեկ եղավ։ Էյլը նրա համար շատ թունդ էր. այս է բանը։

Ես վախեցա այդ սոսկալի պատահարից և ասացի սպասավորին, թե ավելի լավ չի՞ լինի, թե էյլի տեղ մի բաժակ ջուր խմեմ։

– Տարակույս չկա,– պատասխանեց սպասավորը, բաժակը շարունակ լույսի տակ բռնելով և մի աչքը փակելով։– Այստեղ մեր պարոնները չեն սիրում, որ իրենց պատվերը չկատարվի. այդ բանից նրանք վշտանում են։ Ուրեմն եթե հրամայեք՝ ես կխմեմ։ Ես այս բանին սովոր եմ, իսկ սովորությունը երկրորդ բնությունն է։ Չեմ կարծում, որ սա ինձ վնաս տա. եթե միայն գլուխս ետ արած՝ միանգամից դատարկեմ։ Թույլ կտա՞ք։

Պատասխանեցի, թե շատ գոհ կլինեմ, միայն թե էյլը չվնասի նրան, եթե ոչ ամենևին չէի կամենա, որ խմի։ Երբ նա գլուխը ետ ձգեց՝ բաժակը միանգամից պարպելու համար, ես մահվան սարսափ զգացի, թե նա էլ թշվառ մր. Տոպսոյրի նման տեղն ու տեղը հոգին կտա։ Սակայն էյլը նրան ոչ մի վնաս չտվեց. ընդհակառակն՝ խմելուց նա կարծես ավելի զվարթացավ։

– Իսկ այստեղ ի՞նչ ունենք,– ասաց նա պատառաքաղը պնակիս մեջ մխելով։– Կոտլետնե՞ր, թե մի ուրիշ բան։

– Կոտլետներ,– պատասխանեցի ես։

– Աստված իմ, ինչպես չիմացա, որ կոտլետներ պիտի լինեն,– գոչեց նա։– Հենց դրանք են հարկավոր էյլի վատ ազդեցությունը ջնջելու համար։ Ա՛յ, բախտ։

Նա մի ձեռքով մի հատ կոտլետ վերցրեց, մյուսով մի կարտոֆիլ, և սկսեց երկուսն էլ ուտել ամենամեծ ախորժակով։ Քեֆս եկավ նրան նայելիս։ Հետո նա վերցրեց մի ուրիշ կոտլետ և մի ուրիշ կարտոֆիլ. հետո դարձյալ մի հատ կոտլետ և մի հատ կարտոֆիլ։ Այս բոլորը մաքրելուց հետո նա մի **պուդդինգ** բերեց և իմ առջև դնելով, խոր մտածմունքի մեջ ընկավ, որ մի քանի վայրկյան տևեց։

– Ինչպե՞ս եք հավանում կարկանդակը,– ասաց նա հանկարծ։

– Սա կարկանդակ չէ, պուդդինգ է,– պատասխանեցի ես։

– Պուդդի՞նգ,– գոչեց նա։– Իրավ որ պուդդինգ է։ Ի՞նչ եք կարծում,– հարեց նա, պուդդինգը մոտիկից զննելով,– մրգո՞վ է, թե չէ։

– Մրգով է։

– Իրա՞վ։ Մեկ իմանայիք՝ որքան եմ սիրում այդ պուդդինգը,– գոչեց նա, մի մեծ գդալ վերցնելով։– Կատարյալ բախտ է, էլի՛։ Դե, ուրեմն, եկ սկսենք, տեսնենք, ով ավելի շուտ կուտի։

Եվ, իհարկե, սպասավորն ավելի կերավ։ Նա մի քանի անգամ հրավիրեց ինձ, որ չտապեմ և ետ չմնամ, բայց ի՞նչ կարող էր անել իմ թեյի գդալը նրա ահագին գդալի դեմ, իմ ճարպկությունը՝ նրանի դեմ, իմ ախորժակը՝ նրա սոսկալի ախորժակի դեմ։ Հենց սկզբից ես ետ մնացի և նրան հասնելու հույս կորցրի։ Չեմ հիշում, որ օրումս տեսած լինեի նրա չափ պուդինգ սիրող մի արարած։ Այս կերակուրն էլ սպառելուց հետո՝ նա ծիծաղեց. կարծես համը բերանն էր մնացել։

Այսպես կայտառ ու հաճոյալից տեսնելով նրան, ես խնդրեցի թուղթ, գրիչ ու թանաք բերել, որպեսզի վերոհիշյալ նամակը գրեմ Պեգգոտիին։ Նա ոչ միայն իսկույն բերեց ինչ-որ ուզում էի, այլև բարություն ունեցավ ուսիս հետևից նայելու, թե ինչ եմ գրում։ Երբ վերջացրի, նա հարցրեց, թե ես ո՞ր դպրոցն եմ գնում։

– Լոնդոնի մոտերքում գտնվող դպրոցը,– ասացի ես, որովհետև այդ էլ բոլորը, ինչ-որ գիտեի։

– Տեր աստված,– գոչեց նա ամենատխուր կերպարանքով։– Շատ եմ ցավում դրա համար։

– Ինչո՞ւ եք ցավում,– հարցրի ես։

– Ա՛խ, աստված իմ,– շարունակեց նա։– Ցավում եմ, որովհետև հենց այդ դպրոցում նրանք նորերս մի աշակերտի կողերը կոտրեցին. երկու կողը կոտրեցին... նա մի փոքր տղա էր։ Ես ձեզ կասեմ մինչև անգամ... սպասեցեք... դուք քանի՞ տարեկան եք։

– Ութնկես։

– Այո, նա էլ այդ հասակի տղա էր – ճիշտ ութնկես տարեկան, երբ նրա կողերից մեկը փշրեցին, իսկ երկու ամիս հետո մյուս կողն էլ փշրեցին։

Չկարողացա ուրանալ և կամ թաքցնել սպասավորից, թե այդ դեպքը մի ցավալի պատահար է, և հարցրի, թե ինչի՞ց էր պատահել։ Նրա պատասխանը չսփոփեց ինձ, որովհետև երկու սոսկալի բառերից էր բաղկանում. **ծեծում են:**

Ճամփորդներին կանչող փողի հնչյունը ի դեպ վերջ դրեց այս տագնապիչ խոսակցությանը. ես վեր կացա և անվստահ հպարտությամբ քսակս դուրս հանելով, հարցրի, թե որքա՞ն պիտի վճարեմ։

– Ահա այս է թղթի գինը,– ասաց սպասավորը։– Արդյոք երբևէ առիթ ունեցե՞լ եք նամակի թուղթ գնելու։

Չէի հիշում, որ գնած լինեմ։

– Գիտե՞ք, այս թուղթը շատ թանկ է մաքսի պատճառով. թերթը արժի երեք պենս։ Էլ վճարելու բան չկա, բացի սպասավորին տալու ընծայից։ Թանաքին գալով խոսելն էլ ավելորդ է. այս արդեն ես իմ վրա կընդունեմ։

– Ուրեմն որքա՞ն պիտի հասնի ձեզ... որքա՞ն է իմ վճարելիքը... որքա՞ն պետք է տալ սպասավորին... Խնդրեմ ասացեք,– թոթովեցի ես կարմրելով։

– Եթե ես երեխաներ չունենայի, երեխաներս էլ ծաղիկ չունենային,– ասաց սպասավորը,– այն ժամանակ վեց պենս էլ չէի վերցնի։ Եթե ես պարտավոր չլինեի պառավ մորս ու սիրասուն

քրոջս խնամել (այստեղ նա շատ հուզվեց), մի ֆարտինգ[12] էլ չէի վերցնի։ Եթե պաշտոնս լավ լիներ և հետս լավ վարվեին, ես դեռ ինքս կխնդրեի մի չնչին բան ընդունել ինձանից, փոխանակ ձեզնից ստանալու։ Բայց ես ուրիշներից մնացող փշրանքով եմ ապրում... և ամբարի մեջ քարածխի վրա քնում...

Եվ այս ասելիս սպասավորը լաց եղավ։

Խեղճ մարդու աղետները շատ հուզեցին ինձ, և ես զգացի, որ նրան ինը պենսից պակաս տալը մի կոպիտ անգթություն կլինի։ Հետևաբար իմ երեք փայլուն շիլինգներից մեկը նրան տվի. նա մեծ ակնածությամբ ու խոնարհությամբ ընդունեց և հետևյալ րոպեին եղունգի վրա հնչեցրեց լավությունը փորձելու համար։

Մի բան փոքր-ինչ շփոթեցրեց ինձ։ Երբ օգնում էին ինձ կառք նստել, նկատեցի, որ մարդկանց կարծիքով ամբողջ ճաշը ես միայն կերած կլինեմ՝ առանց ուրիշի մասնակցության։ Այս գյուտն անելուս առիթ տվեց պատուհանից խոսող կնոջ ձայնը, որ ասում էր կոնդուկտորին. – Մտիկ արա, Ջորջ, որ այդ տղան չպայթի։– Պանդոկի աղախինները դուրս թափվեցին և սկսեցին քրքջալով դիտել ինձ, ասես թե մի նորահայտ հրաշք լինեի։ Իմ դժբախտ բարեկամը՝ պանդոկի սպասավորը, որ արդեն նորից զվարթացել էր, ոչ միայն չէր շվարել, այս բոլորից, այլ դեռ ինքն էլ առանց քաշվելու, մասնակցում էր նրանց ընդհանուր զարմանքին։ Եթե նրա մասին ես որևէ տարակույս ունենայի, այդ հանգամանքը հարկավ աչքերս փոքր-ինչ կբանար, սակայն նկատի առնելով մանուկ հասակիս լիահավատ ակնածությունը մեծերից (մի հատկություն, որ այժմյա մանուկները դժբախտաբար վաղ են զոհում աշխարհային իմաստությանը), հակամետ եմ կարծելու, թե մինչև անգամ այդ միահամուռ ծիծաղի ժամանակ ոչ մի կասկած նրա մասին մտքովս չանցավ։

Բայց պիտի խոստովանեմ՝ ինձ շատ վշտացնում էր, որ կոնդուկտորն ու կառապանը հեգնության առարկա էին արել ինձ, ասելով թե իմ ծանրության պատճառով շարունակ մի կողմ է թեքվում դիլիժանսը, և թե ես լավ կանեմ, եթե ապագայում ֆուրգոնով ճամփորդեմ։ Կարծեցյալ ախորժակիս պատմությունն արդեն մյուս ուղեկիցներն էլ գիտեին. ուստի նրանք էլ չարաչար ծաղրում էին ինձ և հարցնում՝ արդյոք պանսիոնին երկո՞ւ հոգու, թե՞ երեքի թոշակ կվճարվի ինձ համար, կամ արդյոք մի առանձի՞ն սակարկություն արված կլինի իմ մասին, թե՞ ինձ էլ մյուսների պես սովորական վճարով կընդունեն։ Բայց այս կատակների ամենավատ հետևանքն այն եղավ, որ ուր էլ պետք լիներ մի բան ուտել, ես ամոթից պետք է ծոմ պահեի և թեթև ճաշից հետո ամբողջ գիշեր սոված մնայի, որովհետև շտապելուս պատճառով կարկանդակներս պանդոկումն էի թողել։ Երկյուղս արդարացավ։ Երբ կանգ առանք իջևանում ընթրելու, ես չվստահեցի որևէ կերակրի համը տեսնել, թեև ախորժակս սաստիկ էր. այլ վառարանի մոտ նստելով ասացի, թե ոչինչ չեմ ուզում ուտել։ Այս էլ ինձ հանաքներից չազատեց. խռպոտ ձայնով ու շառագուն դեմքով մի պարոն, որ գրեթե ամբողջ ճանապարհին սենդվիչ[13] էր ուտում և իր շշից օղի քամում, նկատեց, թե ես նման եմ բոայի, որ մի անգամ փորը լցնելուց հետո մի քանի օր կուշտ է մնում, և այս ասելուն պես շարունակեց խաշած մսի ահագին կտորը սպառել։

Մենք մեկնել էինք Յարմաութից ցերեկվա ժամը երեքին և հետևյալ առավոտյան ութին Լոնդոն պիտի հասնեինք։ Ամառվա կեսն էր և շատ ախորժելի երեկո։ Գյուղերի միջով անցնելիս ես աշխատում էի պատկերացնել ինձ նրանց տների ներքին սարքը և բնակիչների զբաղմունքը. և երբ տղաները մեր հետևից վազ էին տալիս ու դիլիժանսի վրա ցատկում, ես հարցնում էի ինձ, թե արդյոք նրանց հայրերը կենդանի՞ են և կամ իրենք իրենց տանը բախտավո՞ր են։

---

[12] Մեկ պենսի մեկ 1/4 մասը։

[13] Sandwich – կարագով հաց՝ մեջը պաղ մսի կտորով. գերմաներեն՝ բուտրբրոդ։ Սենդվիչ բառն ավստրիական կղզիների անվան հետ կապ չունի, այլ ծագում է լորդ Սենդվիչի անունից։ Այս լորդը թուղթ խաղալիս սովոր է եղել միշտ կարագով հաց ունենալ սեղանի վրա, հետն էլ մսի, պանրի և այլ շերտեր, որպեսզի ավելի հանգիստ խաղա։

Խորհելու նյութեր շատ կային, սակայն մտքերս անդադար դեպի իմ ուղևորության նպատակն էին սլանում և շատ տխուր զգացմունքներ ներշնչում ինձ: Մերթ հիշում էի մայրիկիս, մերթ Պեգգոտիին, մերթ էլ փորձում էի մտաբերել, թե ինչ տղա էի, քանի դեռ մր. Մեորդոստոնին չէի կծել, սակայն իզուր. այնքան հնացած էին ինձ թվում այդ բոլոր բաները:

Գիշերը երեկոյի չափ քաղցր չէր. արդեն ցուրտ էր, և որպեսզի ես դիլիժանսից դուրս չընկնեմ, ինձ նստեցրել էին երկու ջենտլմենի մեջտեղը (մեկը խոպոտն էր, իսկ մյուսը մի ուրիշ պարոն), որոնք մրափելիս այնպես ինձ ճխլտում էին, որ ես գրեթե խեղդվում էի: Երբեմն էլ նրանք այնպես էին հրում ինձ, որ ականս ճչում էի. «Ա՛խ, պարոններ, ներեցեք»,– և այս նրանց ամենևին դուր չէր գալիս, որովհետև ձայնս նրանց խանգարում էր: Դիմացս նստած էր մի ահագին մուշտակով պառավ տիկին՝ այն աստիճան փաթաթված, որ մթության մեջ մի խոտի դեզ էր հիշեցնում, քան տիկին: Այդ տիկինն ուներ մի կողով և երկար ժամանակ չէր իմանում, թե որ ծակը խոթի այն. վերջապես գտավ, որ կարող է ոտքերիս տակը սլլեցնել, որովհետև ոտքերս կարճ էին: Կողովն այնչափ նեղում էր ինձ ու չարչարում, բայց հենց որ իմ ամենաթեթև շարժումից նրա մեջ մի բաժակ զնգզնգար մի ուրիշ առարկայի զարնվելով, տիկինը չարաչար ինձ քացի էր տալիս և ասում.

– Այս ի՞նչ անհանգիստ սատանա ես դու, ա՛յ տղա:

Վերջապես արեգակը ծագեց, և ընկերներս սկսեցին ավելի անուշ քուն վայելել: Գիշերվա տանջանքից հետո այժմ նրանք մի այնպիսի ահեղ հռնչյուն ու խորդյուն էին արձակում, որ ասել անգամ չի կարելի: Արեգակի բարձրանալու հետ՝ նրանց քունը մեղմանում էր և բոլորն էլ մի առ մի արթնանում: Հիշում եմ, թե որքան էի ապշած, երբ յուրաքանչյուրը պնդում էր, թե ոչ մի րոպե չի քնել, և չարանում, եթե ասեին, թե քնել է:

Ավելորդ է պատմել, թե որքան հրաշալի երևաց ինձ Լոնդոնը, երբ հեռվից նրան տեսա: Նրան դիտելիս ինձ թվում էր, թե իմ սիրած հերոսների արկածները միշտ կրկնվում են այդ վիթխարի քաղաքում, որ իմ կարծիքով շատ ավելի սքանչելի բաներ ու ոճիրներ պետք է պարունակեր, քան աշխարհիս մի որևէ ուրիշ քաղաք: Հետզհետե մոտեցանք և մտանք մի հյուրանոցի բակ Ուայտչեպի թաղում, որ մեր վերջին կայարանն էր: Էլ չեմ հիշում, թե ինչպես էր կոչվում այդ հյուրանոցը. **«Կապույտ Ցո՞ւլ»**, թե **«Կապույտ Վարազ»**, միայն միտքս է, որ նա մի կապույտ կենդանու անուն ուներ, և կենդանին դիլիժանսի քամակին էլ նկարված էր:

Կոնդուկտորը կառքից իջնելիս վրաս նայեց և գրասենյակի դռանը մոտենալով հարցրեց.

– Ո՞վ է սպասում Մեորդստոն անունով ցուցակ մտած երեխային, որ գալիս է Բլենդրոտընից: Թող գան նրան տանելու:

Ոչ ոք պատասխան չտվեց:

– Խնդրեմ, սըր, փորձեցեք Կոպպերֆիլդի անունը տալ,– ասացի ես,– հուսահատ ցած նայելով:

– Ո՞վ է սպասում Մեորդստոն անունով հիշատակված, բայց ինքն իրեն Կոպպերֆիլդ կոչող երեխային, որ գալիս է Սուֆֆոլկ նահանգի Բլենդրոտընից և այստեղ պիտի մնա, մինչև որ մարդ գա հետևից,– հարցրեց առաջնորդը:– Ասացեք, ո՞վ է սպասում:

Սպասող չկար: Ես տագնապով շուրջս նայեցի. սակայն նայելս ոչ ոքի վրա ազդեցություն չարեց, բացի մի միականի ջենտլմենից, որ բարի եղավ ասելու, թե լավ կլիներ մի պարան անցկացնել վզիս և ինձ մի անտեր անասունի պես մսուրին կապել:

Սանդուղք դրին դիլիժանսի մոտ, և ես ցած իջա դեզանման պառավից հետ. չէի համարձակվում տեղից շարժվել, մինչև նա իր կողովը չվերցներ: Բոլոր ուղևորներն արդեն իջել էին, հակերը հանձնվել, ձիերն արձակվել, և դիլիժանսն էլ կառատուն քաշվել ծառաների ձեռքով: Բայց և այնպես, դեռ ոչ ոք չէր հայտնվում հարցնելու Սուֆֆոլկի Բլենդրոտընից եկած փոշոտ մանկան մասին:

Ավելի մենակ, քան նույնիսկ Ռոբինզոն Կրուզոն, որի մոտ գոնե մարդ չկար, որ նրա միայնությունը տեսներ, ես գրասենյակ մտա և հերթապահ գրագրի հրավերով հակեր կշռող կշռաթաթի վրա նստեցի։ Այդտեղ, մինչ ես բեռների, հակերի, ծրարների ու գրքերի շեղջի միջև նստած էի, ախոռի հոտը շնչելով (որ ընդմիշտ այդ առավոտյան հետ զոդված է մնացել մտքիս մեջ), անթիվ և մեկը մյուսից ահռելի մտքեր սկսեցին ինձ պաշարել։ Ենթադրենք, թե ոչ ոք չերևա ինձ հարցնելու. մինչև ե՞րբ այնուհետև թույլ կտան ինձ այստեղ մնալ։ Միթե այնքա՞ն կպահեն, որ իմ յոթ շիլինգից էլ ոչ մեկը չմնա։ Մի՞թե գիշերն այս փայտե սարայում կանցկացնեմ մյուս հակերի հետ միասին, և առավոտյան բակի ջրհանից կլվացվեմ։ Եվ կամ մի՞թե ամեն երեկո դուրս կանեն ինձ, որպեսզի առավոտները վերադառնամ ու սպասեմ, մինչև որ հարցնող լինի իմ մասին։ Հապա եթե այս բանի մեջ սխրանք չլինի՞ և մր. Մեորդստոնը գիտությամբ ամբողջ խաղը հնարած լինի՝ ինձնից ընդմիշտ ազատվելու համար,– ի՞նչ պիտի անեմ այն ժամանակ։ Անգամ եթե թույլ էլ տան ինձ այստեղ մնալ մինչև որ բոլոր շիլինգներս վերջանան, այնուհետև ո՞վ կպահի գրեթե սովամահ տղային։ Այս հանգամանքը դուր չէր գա կայարանի հյուրերին, էլ չասենք, որ թաղման ծախս էլ կպատճառեր «Կապույտ Ցուլի» կամ «Վարազի» տիրոջը։ Իսկ եթե փորձեմ իսկույն ևեթ տուն փախչել, ճանապարհը ինչպե՞ս գտնեմ, ինչպե՞ս հասնեմ մինչև տուն,– եթե հասնեմ էլ, արդյոք վստա՞հ եմ, որ բացի Պեգգոտիից, գեթ մեկը կուզենա ընդունել ինձ գոհ սրտով։ Արդյոք տեղական ոստիկանին չներկայանա՞մ և չասե՞մ, թե պատրաստ եմ նավաստի գրվել կամ զինվոր, բայց հասակս դեռ այնքան փոքր է, որ ինձ հարկավ կմերժեն... Այս և սրանց նման հազար մտքեր տոչորում էին ինձ և ահ ու դողով պաշարում։ Այս տագնապի ամենասաստիկ վայրկյանին հանկարծ մի մարդ ներս մտավ և գրագրին մի բան շշնջաց. գրագիրն իսկույն կշեռքի վրայից վերցրեց ինձ և դեպի նորեկը հրեց, իբրև թե մի ապրանք, որ արդեն կշռված, գնված ու վճարված է։

Նոր բարեկամի հետ ձեռք ձեռքի տված գրասենյակից դուրս գնալիս, ես նրա վրա մի թաքուն հայացք գցեցի։ Նա մի նիհար ու վտիտ երիտասարդ էր, ներս ընկած գունատ այտերով և մր. Մեորդստոնի կզակի նման սև կզակով. սակայն դրանով էլ վերջանում էր նրանց նմանությունը, որովհետև երիտասարդի մորուքն ածիլված էր և գլխի մազերը քրքրված ու չոր էին, ոչ թե մյուսինի պես օծված ու պսպղուն։ Հագին ուներ մի սև զգեստ և սև վարտիք, երկուսն էլ կարճ ու մաշված. զգեստի թևերը հազիվ էին հասնում դաստակին, իսկ վարտիքը՝ կոճերին։ Չէր կարելի ասել, թե նրա սպիտակ փողպատը շատ մաքուր է։ Չեմ կարծել, չեմ էլ կարծում, թե նրա միակ սպիտակեղենը այդ լիներ, սակայն ուրիշի հետքն անգամ չէր նշմարվում նրա վրա։

– Դո՞ւք եք նոր տղան,– ասաց նա։

– Այո, սըր,– պատասխանեցի ես, ենթադրելով, թե ես եմ։ (Հաստատ բան չգիտեի)։

– Ես Սալեմ Հոուսի վարժապետներից մեկն եմ,– հայտնեց նա։

Ես գլուխս տվի նրան սարսափած։ Սալեմի գիտնական մարդու առջև ես մոռացա հիշել սնդուկիս պես մի չնչին բան և միայն այն ժամանակ վստահեցի ակնարկել նրան այդ մասին, երբ բակից արդեն փոքր-ինչ հեռացել էինք։ Իմ խոնարհ նկատումից հետո, թե սնդուկը կարող է ինձ մի օր պետք գալ, մենք ետ գնացինք, և նա ասաց գրագրին, թե երեկոյան մարդ կուղարկի այդ սնդուկը տանելու համար։

– Սըր,– ասացի ես, երբ կայարանից դուրս ելանք,– խնդրեմ շնորհ արեք ասելու, թե մինչև ո՞ւր պիտի գնանք։

– Մինչև Բլեկհիթի մոտերքը,– պատասխանեց նա։

– Շատ հեռո՞ւ է,– հարցրի ես անվստահ։

– Բավական հեռու։ Բայց մենք հանրակառքով կգնանք այնտեղ։ Մի վեց մղոն կլինի։

Ես այնքան հոգնած էի ու ջարդված, որ դարձյալ վեց մղոն անցնելն ուժիցս վեր թվաց ինձ։ Ես սիրտ առա պատմելու վարժապետին, թե ամբողջ գիշեր ո՛չ քնել եմ, ո՛չ բան կերել, և ասացի, թե շատ շնորհակալ կլինեմ, եթե նա ինձ թույլ տա որևէ ուտելիք գնել։ Վարժապետը, կարծեմ, շատ զարմացավ ու կանգ առնելով վրաս նայեց։ Մի քանի վայրկյան մտածելուց հետո, նա ասաց, թե մտնելու է մի հարևան պառավի տուն և թե ես լավ կանեմ, եթե մի հատ հաց և մի ուրիշ սննդարար բան առնեմ և պառավի տանը նախաճաշ անեմ, ուր գուցե կաթ էլ ճարվի։

Երբ հացթուխի պատուհանին մոտեցանք, աչքերս վառվեցին սիրուն ու հյութիչ կարկանդակների տեսքից. կուզենայի բոլորն էլ գնել, բայց վարժապետը խորհուրդ տվեց բավականանալ միայն մի բլիթով, որ կարժեր երեք պենս։ Նպարավաճառի մոտ էլ մի հատ ձու ու մի շերտ ճարպ գնեցինք։ Այս բոլորի գինը ես իմ երկրորդ շիլինգից վճարեցի և մոտս դեռ այնքան մանր փող մնաց, որ Լոնդոնի կյանքը շատ էժան թվաց ինձ։ Մեր պաշարը վերցրած, շարունակեցինք առաջ գնալ աղմկալի բազմության միջով, որի իրարանցումն ու աղաղակը անտանելի էր արդեն հոգնած գլխիս համար. հետո անցանք մի կամուրջ, որ երևի Լոնդոն Բրիջն էր (կարծեմ այդպես ասաց վարժապետը, բայց լավ չլսեցի. քունս սաստիկ տանում էր), և վերջապես հասանք պառավի տունը։ Դա մի աղքատանոց էր, այդ երևում էր ճակատի վերնագրից, որ կարդացի. «Այս տունը շինված է քսանհինգ չքավոր կանանց համար»։

Սալեմ Հոուսի վարժապետը շարժեց իրար նման սև ու փոքրիկ դռներից մեկի հնչակը. ամեն դուռը մի փոքրիկ ու գունավոր լուսամուտ ուներ մի կողմից, մի հատ էլ վերևից։ Մտանք մի փոքրիկ սենյակ, ուր մի պառավ կին կրակ էր արծարծում կասկարայի տակ։ Պառավ կինը վարժապետին տեսնելուն պես փուքսը վայր դրեց և, դո՞ւ ես, իմ Չարլիկ, կամ սրա նման մի բան ասաց. բայց երբ ինձ էլ նկատեց, շփոթվելուց վերկացավ և ձեռքերն իրար շփելով գլուխ տվեց։

– Կարո՞ղ ես այս պատանի ջենտլմենի համար մի նախաճաշիկ պատրաստել,– ասաց Սալեմ Հոուսի վարժապետը։

– Այդ ի՞նչ հարցմունք է։ Իհարկե կարող եմ,– պատասխանեց պառավը։

– Ինչպե՞ս է միստրիս Ֆիբբիտսընը,– հարցրեց վարժապետը, նայելով մի ուրիշ պառավ կնոջ, որ նստած էր կրակի մոտ բազկաթոռում։

Այդ պառավն այնքան նման էր հնոտիներից կազմված կապոցի, որ սխալմամբ վրան չնստելու համար մինչև այժմ փառք եմ տալիս աստծուն։

– Ա՛խ, նրա բանը վատ է,– ասաց առաջին պառավը։– Այսօր նրա վատ օրն է։ Կարծում եմ, որ եթե մեր կրակը պատահմամբ մարի, նա էլ հետը կմարի և այլևս չի զարթնի։

Այս խոսքերից հետո նրանք մտիկ տվին պառավին. ես էլ միևնույնն արի։ Թեև եղանակը տաք էր, բայց նա, կարծեք, կրակից բացի ուրիշ բանի մասին չէր մտածում։ Ակներև էր, որ նա կրակի վրա դրված կասկարային անգամ նախանձում է և գոհ չէ, որ իմ ձուն ու ճարպի շերտը այդ թավայի մեջ պիտի խորովեին, ես մինչև անգամ նկատեցի, որ նա թաքուն սպառնում է ինձ բռունցքով, մինչ մյուսները նախաճաշ պատրաստելու վրա էին։ Արեգակը ներս էր շողում լուսամուտից, բայց պառավը իր կռնակը և բազկաթոռի լայն թիկունքը նրա դեմ դարձրած՝ փութաջան պատսպարում էր կրակը, ասես կամենալով տաք պահել նրան, փոխանակ ինքը նրանով տաքանալու, և վախով հսկում էր վրան։ Հենց որ նախաճաշիս պատրաստությունը վերջացավ և թավան կրակից հանեցին, պառավն այնպես ուրախացավ, որ ցնծության ճիչ հանելով ծիծաղեց, և պիտի ասեմ՝ չէր կարելի այդ ծիծաղը քաղցրահնչուն անվանել։

Ես նստեցի իմ բլիթն, ձուն ու ճարպը վայելելու. մի բաժակ էլ կաթ տվին ինձ։ Նախաճաշս հիանալի էր։ Մինչ այսպես քեֆ էի անում, տան պառավն ասաց վարժապետին.

– Չարլիկ, սրինգդ հե՞տդ է։

– Հետս է,– պատասխանեց նա։

– Մի բան ածես մեզ համար,– ասաց պառավը զգվանքով։– Խնդրում եմ։

Վարժապետն իսկույն հանեց իր փեշի տակից սրնգի երեք կտորները և մեկը մյուսին անցկացնելով, սկսեց նվագել։ Իմ կարծիքը, բազմամյա մտածմունքից հետո, այն է, թե աշխարհիս երեսին ոչ մի մարդ չէր կարող նրանից վատ նվագել։ Նա սարսափելի ձայներ էր հանում իր գործիքից, ձայներ, որոնց նմանը դեռ ոչ մի արարած չէր հնչեցրել բնական կամ արհեստական միջոցով։ Չգիտեմ, թե ի՞նչ եղանակ էր նվագում նա, կամ որևէ եղանակ կա՞ր նրա սուլոցի մեջ, միայն թե նվագի արդյունքն այն եղավ, որ առաջին՝ բոլոր վշտերս նորոգվեցին, և ես չէի կարողանում արտասուքս զսպել. երկրորդ՝ ախորժակս փախավ և երրորդ՝ այնպիսի նիրհ եկավ վրաս, որ դժվարանում էի աչքերս բաց պահել։ Թմրությունը բոլորովին տիրեց ինձ, և սենյակի առարկաները սկսեցին մեկ-մեկ անհետանալ, նաև անկյունի բաց պահարանը, հետո բարձրաթեք աթոռները, հետո վերև տանող ոլորապտույտ սանդուղքը և վերջապես վառարանի քիվի վրա գցված՝ սիրամարգի երեք փետուրները... Դեռ ներս մտնելիս հարցրել էի ինձ, թե ի՞նչ կաներ սիրամարգը, եթե իր զարդերին վիճակված դերն իմանար։ Քունս սաստկացավ, գլուխս կախ ընկավ... սրնգի ձայնը էլ չի լսվում. դրա փոխարեն դիլիժանսի շարժումն է թնդում... ես նորից ճամփի վրա եմ։ Հանկարծ կառքը ցնցվում է, ես խրտնելով քնից սթափվում եմ և դարձյալ լսում սրնգի ձայնը։ Սալեմ Հոուսի վարժապետը, մի ոտքը մյուսին դրած, աղիողորմ փչում է, մինչ պառավ տանտիկինը հիացած նայում է նրան ակնապիշ։ Բայց ահա նա էլ անհետացավ, վարժապետն էլ անհետացավ, ամեն բան անհետացավ, ո՛չ սրինգ կա այլևս, ո՛չ վարժապետ, ո՛չ Սալեմ Հոուս, ո՛չ էլ Դավիթ Կոպպերֆիլդ. բնավ ոչինչ բացի խոր քնից։

Բայց կարծեմ մի անգամ տեսա իբր թե երազիս մեջ, որ մինչ վարժապետը շարունակում էր իր սոսկալի սրինգը փչել, հափշտակված տանտիկինը, որը փոքր առ փոքր մոտեցել էր նրան, նրա աթոռի վրա կռացավ. վզին փարվեց և նրան եռանդով համբուրեց. սրնգի ձայնն իսկույն լռեց։ Երևի այդ միջոցին և փոքր-ինչ հետո ես կիսարթուն դրության մեջ էի, որովհետև երբ վարժապետը իր խաղը նորից սկսեց (ապացույց, որ նա իրոք դադարել էր նվագելուց), ես լսեցի, թե ինչպես միևնույն պառավը հարցրեց մր. Ֆիբբիտսընին. – Հիանալի է, չէ՞, (այսինքն սրինգը), իսկ մրս. Ֆեբբիտսընը պատասխանեց.– այո՛, այո՛,– և կախ ընկավ դեպի կրակը, անշուշտ կարծելով, թե դրա միջից էր հնչում այդ ամբողջ հրաշալիքը։

Արդեն բավական քնած կլինեի, երբ Սալեմ Հոուսի վարժապետը, իր սրնգի երեք մասերն իրարից բաժանեց, առաջվա պես գրպանը դրեց և հրավիրեց ինձ, որ գնանք։ Հանրակառքը շատ մոտիկ էր. մենք նստեցինք կտրի վրա. սակայն ես դեռ այնքան թմրած էի, որ երբ կառքը մի նոր ճամփորդ ընդունելու համար կանգնեց, ինձ ներսի պարապ կողմը նստեցրին, ուր ես դարձյալ խոր քնի մեջ սուզվեցի, որը և տևեց մինչև ձիերի հանդարտ քայլով բարձրանալը մի ծառազարդ բլրի վրա։ Կառքը կանգ առավ. արդեն հասել էր նպատակին։

Վարժապետը և ես մի քանի քայլ անելուց հետո Սալեմ Հոուսին մոտեցանք. դա մի տխուր շինություն էր՝ աղյուսե բարձր պարսպով շրջապատված։ Պարսպի դռան ճակատին գրված էր Սալեմ Հոուս։ Դռան հնչակը որ քաշեցինք, նրա փոքրիկ լուսամուտի միջով մի ժանգոտ դեմք դուրս նայեց. այս դեմքը, ինչպես որ դուռը բացվելուն պես նկատեցի, պատկանում էր մի պարարտ ցուլի նման հաստավիզ մարդու, որի գլխի մազերը կարճ խուզված էին, ճակատը գունդ էր և ինքը միոտանի։

– Ահա նոր տղան,– ասաց վարժապետը։

Փայտոտանին վերից վար դիտեց ինձ (դրա համար շատ ժամանակ պետք չեղավ, չէ՞ որ ես փոքր էի) և դռները փակելով, բանալին իր գրպանը դրեց։ Մինչ մենք հաստատուն ու տերևախիտ ծառերի միջով դիմում էինք դեպի տուն, նա վարժապետի հետևից կանչեց.

– Հե՛յ։

Ետ նայեցինք։ Միոտանին իր խցիկի առջև, մուտքի դռան մոտ, ձեռքին մի զույգ կոշիկ բռնած՝ կանգնած էր։

– Տեսեք, մր. Մելլ,– ասաց նա։– Ձեր գնալուց հետո կոշկակարը եկել էր։ Ասաց, թե ամենևին չի կարելի նորից կարկատել։ Ասաց, թե նախկին կոշիկներից մի կտոր էլ չի մնացել սրանց վրա, և զարմացավ, թե ինչպես եք ուզում, որ այսպիսի անպետք հնոտիք կարկատի։

Այս ասելով նա կոշիկները մր. Մելլին շպրտեց. իսկ սա վերցրեց դրանք և սկսեց տխուր-տխուր զննել։ Այդ միջոցին ես առաջին անգամ նկատեցի, որ նրա հագած կոշիկները ավելի են մաշված, և գուլպան բողբոջի պես դուրս է ցցվել մի ծակից։

Սալեմ Հոուսը մի աղյուսաշեն քառակուսի տուն էր՝ երկու թևով, դրսից մերկ ու անզարդ։ Նրա մեջն ու շուրջը մի այնպիսի լռություն էր տիրում, որ ես ասացի մր. Մելլին, թե աշակերտներն անշուշտ զբոսնելու գնացած կլինեն. բայց նա զարմանալով հարցրեց՝ մի՞թե չգիտեմ, որ այժմ արձակուրդ է, թե բոլոր աշակերտները ցրված են, թե վարժարանի տեսուչ մր. Կրիկլը մրս. և միս Կրիկլի հետ ծովափ է գնացել, և թե վատ վարքիս փոխարեն ինձ պատժելու համար է, որ ես հատկապես արձակուրդի միջոցին եմ այստեղ ուղարկվել։

Նրա ցույց տրված սերտարանի նման ողբալի և ամայի տեղ ես օրումս չէի տեսել։ Այսօր էլ աչքիս առաջ կանգնած է։ Դա մի երկայն դահլիճ էր՝ երեք շարք երկարաձիգ սեղաններով և վեց շարք նստարաններով, չորս կողմի որմերին մեխեր էին խփված՝ քարետախտակներ ու գլխարկներ կախելու համար։ Կեղտոտ հատակի երեսին բզկտված տետրակների շեղջեր էին ցրված, ամբիոնի վրա թղթից շինված շերամի տուփեր էին երևում։ Երկու թշվառ, անտեր մնացած մկնիկներ ետ ու առաջ էին վազվզում մի թակարդի մեջ և կարմիր-կարմիր աչքերով սնունդ որոնում անկյուններում։ Մի թռչնիկ էլ, որ փակված էր իրենից քիչ մեծ վանդակում, միակերպ շխշխում էր մերթ ձողի վրա թռչելով, մերթ դեպի վար ցատկելով, բայց ո՛չ երգում էր, ո՛չ ծլվլում։ Ամբողջ սենյակը տոգորված էր ցեցակեր շորերի, փտած խնձորների և բորբոսնած մրգերի գարշ հոտով։ Ավելի թանաք չէր սրսկվի այդ դահլիճում, եթե նույնիսկ շինվելու օրից ծածկ չունենար, և տարին տասներկու ամիս անձրևի, ձյունի, կարկուտի տեղ՝ միայն թանաք թափված լիներ նրա մեջ։

Այդ բոլորը ես դիտեցի ծանր քայլերով սերտարանում ման գալիս, մինչ մր. Մելլը հեռացել էր իր անբուժելի կոշիկները վերի սենյակը տանելու համար։ Հանկարծ սեղանի վրա աչքիս դիպավ ստվարաթղթից շինված մի նշանակ՝ «Զգուշացեք կծում է» վերնագրով։

Նույն վայրկյանին ես ամբիոնի վրա թռա, կարծելով թե սեղանի ներքև մի ահագին շուն կլինի։ Սակայն զուր էի ահ ու դողով որոնում նրան. շուն չկար։ Դեռ խուզարկությունս շարունակում էի, երբ մր. Մելլը վերադարձավ և հարցրեց, թե ինչ եմ անում ամբիոնի վրա։

– Ներեցեք, սըր,– ասացի ես,– ուզում եմ տեսնել, թե որտե՞ղ է շունը։

– Շո՞ւնը,– հարցրեց նա։– Ի՞նչ շուն։

– Հապա այն ի՞նչ է, եթե շուն չէ, սըր։

– Ի՞նչն է այն, որ շուն չէ։

– Այն կենդանին, սըր, որից պետք է զգուշանալ և որ կծում է։

– Չէ՛, Կոպպերվիլդ,– ասաց մր. Մելլը լրջությամբ. – դա շուն չէ։ Տղա է։ Ինձ պատվիրված է, Կոպպերֆիլդ, ձեր մեջքին կապել այդ նշանակը։ Ցավում եմ, որ հենց սկզբից ձեզ հետ այսպես պիտի վարվեմ, բայց ի՞նչ անեմ, ստիպված եմ։

Այս ասելով նա վար քաշեց ինձ ամբիոնից և կռնակիս կապեց նշանակը, ինչպես մի զինվորական պայուսակ, և այն րոպեից՝ ուր էլ գնայի, բախտ ունեի նրան իմ վրա կրելու։

Հնարավոր չէ երևակայել, թե ինչեր եմ քաշել այդ նշանակից։ Արդյոք որևէ մարդ կտեսե՞ր ինձ, թե չէր տեսնի միևնույն է. ինձ շարունակ թվում էր, թե մեկն ու մեկը կարդում է այն։

Մխիթարություն չէր ինձ համար, որ մեջքս անդադար շուռ տալիս ես ոչ մի մարդ չէի նկատում, որովհետև միշտ կարծում էի, թե գոնե մի մարդ կանգնած կլինի իմ հետևում։ Անողորմ միոտանին ավելի էր տանջում ինձ։ Նրա պարտքն էր հսկել վրաս, և հետևաբար, հենց որ ես մեջքս դեմ էի տալիս որևէ ծառի կամ պատի, նա ահեղ ձայնով գոռում էր. – Հե՛յ, Կոպպերֆիլդ։ Լավ ցույց տուր նշանակդ, եթե ոչ իմաց կտամ։– Խաղալու տեղը առջևի կողմից ծածկված բակ էր տան ետևում, դեպի ուր նայում էին խոհանոցի ու մառարնի պատուհանները. և ես գիտեի, որ մինչ ամեն առավոտ այնտեղ ակամա զբոսնում էի, ծառաներն էլ նշանակս կարդում են, մսագործն էլ կարդում է, հացթուխն էլ կարդում է. կարճ՝ ամեն անցորդ կարդում է, թե պետք է ինձանից զգուշանալ, որովհետև ես կծում եմ։ Միտքս է, որ ես ինքս իրոք սկսեցի վախենալ ինձնից, իբրև մի վայրենի և կծող տղայից։

Այդ բակում մի հին դուռ կար, որի վրա բազմաթիվ աշակերտների անուններ էին փորագրված, և նա այդպիսի քանդակներով բոլորովին ծածկված էր։ Արձակուրդը վերջանալու վրա էր, և տղաները շուտով վերադառնալու էին. այս մասին ահ ու դողով մտածելիս՝ ես չէի կարողանում հատկապես մի աշակերտի անունը կարդալով չհարցնել ինքս ինձ, թե արդյոք նա ի՞նչ եղանակով ու հոգով կարտասանի. «Զգուշացեք, կծում է» խոսքերը։ Այդտեղ կար Ջ. Ստիրֆորթ կոչված մի տղա, որի անունն ամենից խոր և ամենից շատ էր փորագրված։ Թվում էր ինձ, թե Ջ. Ստիրֆորդը նշանակիս մակագիրը բարձր ձայնով կկարդա և հետո մազերս կփետի։ Կար և Թոմի Տրեդլս անունով մեկը. դա ինձ ծաղրի առարկա կանի, ձևացնելով, իբր թե սաստիկ վախենում է ինձնից, մտածում էի ես։ Երրորդին գալով, որ Ջորջ Դիմպլն էր, ենթադրում էի, թե նա երգելով կհնչեցնի նշանակիս մակագիրը։ Եվ մինչ ես, մի փոքրիկ, երկչոտ մանուկ, մի առ մի կարդում էի այդ անունները (որոնց տերերից, մր. Մելլի ասելով, քառասունհինգը դեռ Սալեմ Հոուսի սաներ էին), հանկարծ ինձ այնպես թվաց, թե նրանք բոլորն էլ միաձայն գոռում են. «Կովենտրի բանտը տարեք դրան», և ջոկ-ջոկ ճվում. «Զգուշացեք կծում է»։

Միևնույնը պատահում էր սեղաններն ու նստարանները դիտելիս, ննջարանի դատարկ անկողինները երեկոյան աչքի անցնելիս, նույնը և իմ հատուկ անկողնում։ Ամեն գիշեր երազիս մեջ կամ մորս էի տեսնում այնպես զվարթ, ինչպես առաջ էր, կամ թե մր. Պեգգոտիի մոտ հյուր գնալս, կամ մի դիլիժանսով ճամփորդելս. կամ թե պանդոկի անբախտ սպասավորի հետ ճաշելս, և այս բոլոր դեպքերում մարդիկ պշնած նայում էին ինձ, տեսնելով որ գիշերվա շապկից ու նշանակից զատ՝ ուրիշ ոչինչ չունեմ հագիս։

Այս ձանձրալի ու միակերպ կյանքը և դպրոցի բացման մոտալուտ վտանգը անտանելի տրամադրություն էին պատճառում ինձ։ Ամեն օր մր. Մելլը երկար դասեր էր տալիս ինձ, և ես հաջողությամբ պատրաստվում էի, որովհետև ո՛չ մր. Մեորդստոնը կար այնտեղ, ո՛չ էլ միս Մեորդստոնը։ Դասերից առաջ և հետո զբոսնում էի փայտոտանու հսկողության տակ։ Որքան լավ եմ մտաբերում տան շրջակայքի խոնավությունը, բակի մամոռոտ ու քրքրված սալահատակը, ջրի ճաքոտած հին տակառը և մի քանի տխուր ծառերի գունաթափ բները, որոնք կարծես մյուսներից ավելի էին անձրև կերել և զուրկ մնացել արևից։ Ժամը մեկին մր. Մելլը և ես ճաշում էինք երկար ու դատարկ ճաշարանում, ուր բացի ճարպի հոտ բուրող սեղաններից, ուրիշ ոչ մի կարասի չկար. հետո դարձյալ պարապում երեկոյան թեյից առաջ, որ մր. Մելլն ընդունում էր մի կապույտ բաժակից, իսկ ես անագե բաժակից։ Ինչպես որ ցերեկվա ժամերին, այնպես էլ մինչև երեկոյան ժամը յոթը կամ ութը մր. Մելլը նստած էր մնում սերտարանի ամբիոնի վրա, ուր գրչով, թանաքով, քանոնով, թղթերով ու գրքերով զբաղված՝ փութաջան պատրաստում էր ինչ-որ բան։ Ես իմացա, որ դա Սալեմ Հոուսի վերջին կիսամյակի տեղեկագիրն է։ Երեկոյան գործն ավարտելուց հետո նա սկսում էր այնպիսի եռանդով իր սրինգը փչել, որ երբեմն կարծում էի, թե ահա ինքն էլ ոտքով գլխով սրնգի փողը կմտնի և նրա ծակով դուրս կթռչի իր վերջին շնչի հետ։

Պատկերացնում եմ իմ փոքրիկ անձն այդ կիսամութ սենյակում. ահա նստած եմ, գլուխս դեմքիս դեմ տված, մր. Մելլի վշտագին նվագածությանը ականջ դնելով ու վաղվա դասերս

սերտելով։ Ահա գրքերս ծալված են ու կողքի դրված, բայց ես դարձյալ ականջ եմ դնում մր. Մելլի նվագին ու կարծես լսում նրա սրնգի հեծեծանքի միջով, թե մեր տանը ինչ է կատարվում, և հողմն ինչպես է գոռում Յարմաութի ամայի ափերին։ Օ՜հ, մենակ, թշվառ ու հեգ եմ ես։ Ահա մտնում եմ թափուր ու դատարկ ննջարանը և անկողնուս վրա նստած աղիողորմ լաց լինում։ Պեգգոտիի սփոփիչ խոսքերին կարոտ։ Առավոտյան վայր եմ իջնում սանդուղքից և պատուհանի աղոտ ապակու միջով ահա տեսնում ուսումնարանի զանգակը, որ կախված է սայլատան կտրի վրա, հողմացույց աքլորի տակ։ Ես սարսռում եմ նրան տեսնելիս, որովհետև արդեն մոտ է այն ժամը, երբ նա հնչելով գործի կկանչի Ջ. Ստիրֆորթին ու մյուսներին, ժանգոտ դուռը կբանա, և ահարկու մր. Կրիկլը ներս կմտնի... և ես նրան կներկայանամ իմ անբաժան նշանակով։

Մր. Մելլը երկար-բարակ չէր խոսում հետս, բայց սովոր էլ չէր կոպտությամբ վարվել։ Ես կարծում եմ, որ մենք անխոս էինք ընկերություն անում իրար հետ։ Մոռացա հիշատակել, որ երբեմն նա սովոր էր ինքը իր հետ խոսակցել, բռունցքը սեղմել, ատամները կրճտել և մազերը փետել։ Սակայն այս տարօրինակ սովորությունը միայն սկզբում էր վախեցնում ինձ. հետո բոլորովին ընտելացա նրան։

Ջ. ԳԼՈՒԽ
Ընդարձակում եմ բարեկամներիս շրջանը

Արդեն մի ամիս է, որ վարում էի այդ կյանքը, երբ փայտոտանին, մի ավել ու ջրի դույլ բռնած, սկսեց դեսուդեն ընկնել. պետք էր կարծել, թե պատրաստվում է ընդունել մր. Կրիկլին և սաներին։ Ենթադրությունս սխալ չէր, որովհետև շատ չանցած՝ ավելն ու դույլը նաև սերտարան մտան և այնտեղից դուրս քշեցին թե՛ մր. Մելլին, թե՛ ինձ։ Չգիտեմ թե մենք ուր գնացինք ապրելու, միայն այս գիտեմ, որ շարունակ մի քանի օր պատահում էինք երկու-երեք նորատի կանանց, որոնց մինչև այժմ ոչ մի անգամ չէի տեսել, և անդադար հալածված էինք մի այնպիսի փոշուց, որ ես ամեն վայրկյան փռշտում էի, կարծես թե Սալեմ Հոուսը մի ահագին քթախոտի տուփ լիներ։

Մի օր մր. Մելը հայտնեց ինձ, թե նույն երեկոյան մր. Կրիկլը պիտի գա։ Երեկոյան թեյից հետո լսեցի, թե արդեն ժամանակն է։ Քնելուս ժամից փոքր-ինչ առաջ փայտոտանին պատվիրեց ինձ ներկայանալ մր. Կրիկլին։

Շինության այն մասը, ուր բնակվում էր մր. Կրիկլը, բուն վարժարանից գեղեցիկ էր և առջևը մի գեղեցիկ պարտեզ ուներ. մեր զբոսնելու փոշոտ բակը դրա հետ համեմատած մի փոքր անապատ էր, որ թերևս ուղտերին միայն դուր կգար։ Նրբանցքի միջով սրտատրոփ անցնելիս՝ համարձակություն ունեցա դիտելու, որ տան այդ մասն էլ մյուսից ավելի վայելուչ չէ։ Ես այնպես շփոթված ներս մտա, որ չտեսա մինչև անգամ միս. Կրրիկլին և միս Կրիկլին (թեև երկուսն էլ ներկա էին հյուրասենյակում) և ոչ մի բան բացի նույն ինքը մր. Կրիկլից, որ մի կլոր ջենտլմեն էր՝ ժամացույցի հաստ շղթայով ու շղթայի զարդերով։ Նա նստած էր բազկաթոռում մի փոքրիկ սեղանի մոտ, որի վրա մի հատ բաժակ և մի շիշ կար։

– Ա՜,– ասաց մր. Կրիկլը։– Դա՞ է ուրեմն այն տղան, որի ատամները պիտի սղոցենք։ Շուռ տվեք տեսնեմ։

Միոտանին շուռ տվեց ինձ, որ նշանակս պարզ երևա մր. Կրիկլին, և մի քանի ժամանակ այս դիրքի մեջ բռնելով ինձ, նորից շուռ տվեց երեսովս դեպի նա, իսկ ինքը կանգնեց նրա կողքին։ Մր. Կրիկլը ահարկու դեմք ուներ, ներս ընկած փոքրիկ աչքեր, հաստ երակներով ծածկված ճակատ, կլոր քիթ և լայն կզակ։ Գլուխը ճաղատ էր. վրան մնացել էին մի քանի ճարպոտ, գորշ մազեր, որոնք քունքերի հետևից դեպի վեր բարձրանալով միանում էին գանգի կատարին։ Սաստիկ ապշեցրեց ինձ, որ նա գրեթե անձայն է և միայն շշնջում է խոսելիս։ Այդպես խոսելու

դժվարությունից և կամ թե այդ բանից գրգռված նրա երեսը ավելի չար արտահայտություն էր ստանում, և ճակատի երակները ավելի էին արյունով լցվում. ուստի բնավ չպետք է զարմանալ, որ նրա այդ հատկությունը մյուսներից ավելի տպավորվեց մտքիս մեջ։

– Տեսնենք,– ասաց մր. Կրիկլը։– Ի՞նչ ունեք ասելու դրա մասին։

– Առժամանակ ոչ մի վատ բան,– պատասխանեց փայտոտանին։– Դեռ ոչ մի առիթ չի եղել։

Մր. Կրիկլի հույսերը կարծես չքացան, իսկ նրա կինն ու դուստրը (երկու նիհար ու լռիկ անձեր, որոնց այժմ միայն նկատեցի) գոհ մնացին փայտոտանու պատասխանից։

– Մոտեցիր,– ասաց մր. Կրիկլը, նշան անելով ինձ։

– Մոտեցիր,– ասաց փայտոտանին, միևնույն նշանը կրկնելով։

– Ես պատիվ ունեմ ճանաչելու հայրացուիդ՝ խորթ հորդ,– շշնջաց մր. Կրիկլն ականջիցս բռնելով,– նա մի շատ հարգելի և հաստատ բնավորություն ունեցող մարդ է։ Նա ինձ ճանաչում է, իսկ ես նրան։ Իսկ դու ճանաչո՞ւմ ես ինձ, հը՞,– ասաց մր. Կրիկլն ու վայրենի զվարճությամբ ականջս կսմթեց։

– Դեռ ոչ, սըր,– պատասխանեցի ես, գոռալով ցավից։

– Դեռ ո՞չ, հը՞,– կրկնեց մր. Կրիկլը,– բայց շուտով կճանաչես։ Չէ՞։

– Շուտով կճանաչես, այնպես չէ՞,– կրկնեց իսկույն փայտոտանին։

Հետո հասկացա, որ նա իր զորեղ ձայնի շնորհիվ պատիվ էր ստացել մր. Կրիկլի թարգմանը լինելու աշակերտների առջև։

Անասելի սարսափից պատասխան տվի, թե հույս ունեմ ճանաչելու, և այդ միջոցին ականջս կարծես այրվում էր, այնքան սաստիկ էր կսմթել։

– Իմացիր, թե ով եմ ես,– փսփսցաց մր. Կրիկլը, ականջս վերջին անգամ հուպ տալով, բայց այնպես, որ աչքերս արտասուքով լցվեցին։– Ես թաթար եմ։

– Թաթար է,– կրկնեց փայտոտանին։

– Եթե ես ասեմ՝ պիտի անեմ այսինչ բանը, անշուշտ կանեմ,– շարունակեց մր. Կրիկլը.– և եթե ասեմ՝ այսինչ բանը պիտի արվի, անշուշտ պիտի արվի։

– Անշուշտ պիտի արվի,– վրա բերեց կաղը։

– Ես մի հաստատ ու վճռական մարդ եմ,– ասաց մր. Կրիկլը։– Հաստատ ու վճռական. իմացած եղիր՝ ինչ մարդ եմ։ Ես կատարում եմ իմ պարտքը. այդ էլ իմացիր։ Եթե նույնիսկ իմ մարմինը և արյունը (այս ասելիս նա մրս. Կրիկլի վրա նայեց) կամքիս հակառակ ոտքի ելնի, էլ նրա մարմինը ու արյունը չի։ Ես կուրանամ նրան։ Իսկ այն պարոնը եկե՞լ է,– հարցրեց նա դիմելով կաղին։

– Ո՛չ,– պատասխանեց վերջինս։

– Ո՞չ,– ասաց մր. Կրիկլը։– Նա ավելի լավ գիտի։ Նա ինձ ճանաչում է։ Եվ թող հեռու կենա։ Ասում եմ, թող հեռու կենա,– ասաց մր. Կրիկլը, խփելով սեղանին և կնոջ վրա նայելով,– թող հեռու կենա և չգա, որովհետև լավ գիտի, թե ո՞վ եմ ես։ Այժմ բարեկամ, դու էլ ահա սկսում ես ճանաչել ինձ։ Գնա կորի՛ր։ Տարե՛ք սրան։

Շատ գոհ եղա, որ վռնդում են ինձ, որովհետև մրս. և միս Կրիկլը սկսել էին արտասվել, և ես հավասար տանջվում էի թե՛ նրանց վշտով, և թե՛ իմով։ Սակայն ես մտադիր էի հատկապես ինձ վերաբերյալ մի խնդիր հայտնել և ինքս զարմանալով իմ բարության վրա, ասացի.

– Արդյոք չե՞ք հաճի, սըր...

– Հը՞, ի՞նչ,– փսփսաց մր. Կրիկլը և հայացքն իմ վրա այնպես սևեռեց, որ կարծես ուզում էր իր աչքերով շանթակեզ անել ինձ։

– Չե՞ք հաճի արդյոք,– թոթովեցի ես... – Եթե հաճեիք... ես ցավում եմ արարքիս վրա և զղջացել եմ... հաճեիք թույլ տալ, որ նշանակս հանվի, քանի դեռ տղաները չեն եկել...

Արդյոք մր. Կրիկլը իրոք ուզում էր վրաս հարձակվել, թե ուզում էր միայն վախեցնել ինձ, չգիտեմ. բայց նա հանկարծ բազկաթոռից վեր ցատկեց, իսկ ես նետի նման դուրս թռա և միայն ննջարանումս կանգ առա, ուր անմիջապես անկողնու մեջ խրվելով, մոտ երկու ժամ դողացի։

Հետևյալ առավոտյան հայտնվեց մր. Չարպը։ Մր. Չարպը մր. Կրիկլի օգնականն էր և մր Մելլի ավագը։ Մր. Մելլը աշակերտների հետ էր ճաշում և ընթրում, իսկ մր. Չարպը սեղանակից էր մր. Կրիկլին։ Նա մի թուլակազմ ջենտլմեն էր՝ մեծ քթով, և սովոր միշտ մի կողմ թեքելու գլուխը, որ կարծես անչափ ծանր էր իր համար։ Մազերը հարթ էին և ալեձև. սակայն հենց առաջին վերադարձող աշակերտը հայտնեց ինձ, թե մր. Չարպը կեղծամ է կրում (այն էլ ուրիշից առնված) և ամեն շաբաթ երեկո կանոնավորապես նորոգում է և մազերը գանգրացնել է տալիս։

Հատկապես Թոմ Տրեդլս աշակերտն էր, որ այս տեղեկությունն ինձ տվեց։ Նա առաջինն էր վերադարձել։ Նա ինքն ինձ հետ ծանոթացավ, ասելով թե իր անունը կարող եմ գտնել դրսի դռան աջակողմյան անկյունում, նիգից վեր։

– Ուրեմն դո՞ւք եք Տրելդսը,– ասացի ես։

– Ես ինքս,– պատասխանեց նա, և իսկույն ամեն տեսակ բաներ հարցրեց իմ անձի և մեր գերդաստանի մասին։

Ինձ համար բարի պատահմունք էր, որ ետ եկող աշակերտներից առաջինը հատկապես Տրեդլսն է։ Նա շատ զվարճացավ իմ նշանակը տեսնելով, և ազատեց ինձ դրան թաքցնելու կամ ցույց տալու նեղությունից, որովհետև հենց որ աշակերտները գալիս էին, մեծ լինեին թե փոքր, նա իսկույն կանչում էր նրանց և ասում. «Տեսեք, տեսեք, ինչ խաղ է»։ Իմ բախտից՝ տանից եկող աշակերտների մեծ մասը տրտում էր և այնքան տրամադիր չէր ծաղր ու կատակ անելու, ինչքան որ սպասում էի։ Սակայն ոմանք վայրենի հնդիկների նման պար էին գալիս իմ շուրջը և չկարողանալով դիմադրել ինձ շուն երևակայելու փորձությանը, շոյում էին ինձ, որ չկծեմ, և ասում. «Կուշ, Կաստոր»։ Հարկավ այս բոլորը շատ վշտացնում էր ինձ ու շատ արտասուք պատճառում. սակայն ընդհանրապես իմ սպասածի չափ վատ չէր։

Այն օրից սկսեցին ինձ բուն աշակերտ համարել, երբ որ եկավ Ջ. Ստիրֆորթը։ Նա վեց տարով ինձնից մեծ, շատ գեղեցիկ պատանի էր, որ մեծ գիտականի հռչակ ուներ վարժարանում։ Ինձ տարան նրա մոտ, իբրև մի իսկական դատավորի մոտ. նա ընդունեց ինձ բակում գտնվող մի հովանու տակ և պատժիս հանգամանքները մանրամասն հարցնելուց հետո հաճեցավ վճռել. «Սատանան էլ այդպիսի պատիժ չէր հնարի»,– մի վճիռ, որի համար ես հավիտյան շնորհապարտ եմ նրան։

Այնուհետև նա զբոսնելով մի կողմ տարավ ինձ և հարցրեց.

– Որքա՞ն փող ունես, Կոպպերֆիլդ։

– Յոթ շիլլինգ։

– Լավ կանես, որ այդ փողը ինձ տաս պահելու,– ասաց նա։– Սակայն, եթե միայն կամենաս. իսկ եթե ոչ, կարող ես չտալ։

Իսկույն փութացի կատարել այդ մտերմական առաջարկությունը և Պեգգոտիի քսակը բանալով, բոլոր փողերս Ստիրֆորթի ափի մեջ պարպեցի։

– Գուցե կուզենայիք հենց այժմ մի բան գնել,– հարցրեց նա։

– Ոչ, շնորհակալ եմ,– պատասխանեցի ես։

– Բան գնելը դա շատ հեշտ է, գիտե՞ս,– ասաց Ստիրֆորթը։– Միայն ասա, թե ինչ ես ուզում։

– Ո՛չ, ո՛չ, շատ շնորհակալ եմ, սըր,– կրկնեցի ես։

– Գուցե կուզենայիք մի կամ երկու շիլինգի կասիս[14] գնել և ձեռաց պարպել երեկոյան ննջարանում,– ասաց Ստիրֆորթը. – Դու, կարծեմ, իմ սրահում պիտի քնես։

Այդպիսի բան մտքովս էլ երբեք չէր անցել, բայց և այնպես ասացի.

– Այո՛, կուզենայի։

– Շատ լավ,– գոչեց Ստիրդորթը։– Գուցե կուզենայիք մեկ շիլինգ էլ ծախսել նշի կարկանդակներ գնելու համար։

– Այո, այդ էլ կուզենայի։

– Մեկն էլ գուցե բիսկվիտ և կամ միրգ առնելու համա՞ր,– ասաց Ստիրֆորթը։– Չէ՞ որ փողերդ կբավեն։

Ես ժպտացի, որովհետև նա ժպտաց, սակայն զգում էի, որ շփոթված եմ։

– Լավ ուրեմն,– ասաց Ստիրֆորթը։– Կաշխատենք ամեն բան առնել այս փողով. գլխավորն այդ է։ Ես պատրաստ եմ ամեն բան անել քեզ համար։ Ես երբ էլ կամենամ կարող եմ դուրս գալ, և այդ բոլորը թաքուն ներս կսլլեցնեմ։

Այս ասելով նա գրպանը դրեց փողերս և մտերմաբար ասաց, որ միամիտ լինեմ. նա կհոգա, ինչ-որ պետք է, և ամեն բան լավ կլինի։

Նա իր խոսքը կատարեց և ամեն բան լավ արեց, եթե միայն լավ էր այն, ինչ-որ ծածուկ զգում էի, թե վատ է, որովհետև մորս երկունակես կրոնը վատնվել էր։ Բարեբախտաբար ես պահեցի գոնե այն թղթի կտորը, որի մեջ նրանք փաթաթված էին. թանկագին խնայողություն։ Երբ որ երեկոյան ննջարան բարձրացանք, Ստիրֆորթը հանեց իմ բոլոր յոթ շիլինգով գնած պաշարը և մի առ մի շարելով լուսափայլ անկողնուս վրա, ասաց.

– Ահա քեզ փառավոր խնջույք, Կոպպերֆիլդ։– Դե հարգիր մեզ։

Հասակիս նայելով ինձ ամոթ էր **թամադայի** պաշտոն հանձն առնել, քանի որ ներկա էր Ստիրֆորթը. այդ մասին մտածելիս անգամ դողում էի։ Ես խնդրեցի նրան, որ նա ինքը մեզ հարգելու շնորհ անի, և որովհետև ննջարանի մյուս տղաներն էլ առաջարկս կրկնեցին, նա զիջեց և մեր խնդիրը ընդունեց։ Այնուհետև նա բարձիս վրա նստած՝ սկսեց ուտելիքը բաժանել մեզ, պետք է ասել՝ լիակատար արդարությամբ և կասիս մատռվակել մի փոքրիկ անոտ գավաթով, որ իր հատուկ սեփականությունն էր։ Ես նստած էի նրա ձախ կողմը, իսկ մյուսները մեր շուրջը՝ մերձավոր անկողինների և կամ թե հատակի վրա։

Որքա՜ն լավ եմ մտաբերում այդ երեկույթը և մեր կիսաձայն խոսակցությունը և կամ՝ նրանց զրույցները և իմ մնջիկ ունկնդրությունը. մտաբերում ննջարանի պատուհանից ներս նայող լուսնի ցոլմունքը և ապակիների թեթև փայլը հատակի վրա. մեզ շրջապատող ստվերը և երբեմն, երբ պետք էր լինում որևէ բան որոնել, Ստիրֆորթի վառած ֆոսֆորի լուցկիների կապույտ բոցը, նրանց բռնկելն ու մարելը. իմ խորհրդավոր երկյուղը, մթության և մեր կոչունքի գաղտնության հետևանք և այն զսպված շշունջը, որով ասվում էր ամեն բան, և այն հանդիսավոր զգացումը, որով ականջ էի դնում ընկերներիս պատմածին, և ուրախությունս, որ մենակ չեմ, և այն սարսափը, որ տիրեց ինձ (թեև փորձում էի ժպիտ ցույց տալ), երբ հանկարծ Տրեդլսն ասաց, թե ուրվական է տեսնում անկյունում։

[14] Հաղարջից պատրաստված անուշ օղի կամ շարբաթ։

Շատ բաներ լսեցի պանսիոնի և դրա բնակիչների մասին։ Լսեցի, թե մր. Կրիկլն իրավամբ է թաթար անվանում ինքն իրեն. թե նա բոլոր ուսուցիչներից ամենախիստն ու դաժանն է, թե նա ամեն օր հարձակվում է աշակերտների վրա և անգթաբար հարվածներ տալիս աջ ու ձախ, թե նա ծեծելուց բացի, ոչինչ չգիտե, և թե (Ջոն Ստրիֆորթի ասելով) հետին աշակերտից էլ տգետ է. թե նա մի քանի տարի առաջ գայլիկոն վաճառող խանութպան է եղել Լոնդոնի մի աննշան շուկայում, և թե այդ առևտրի մեջ սնանկություն կրելով և մրս. Կրիկլի կարողությունը վատնելուց հետո է դպրոց հիմնել՝ իր գործերն ուղղելու համար։ Այսպիսի և սրանց նման ուրիշ շատ բան էլ լսեցի աշակերտներից, զարմանալով, թե որտեղից են այդ բոլորն իմացել։

Լսեցի, թե փայտոտանին, որի անունը Տեոնգե էր, մի վայրագ բարբարոս է եղել, որ առաջ ծառայել էր մր. Կրիկլի գայլիկոնի առևտրում և այս ծառայության մեջ ոտքը կոտրելուց հետո նրա հետ միասին մանկավարժական ասպարեզ է մուտք գործել։ Տղաների ասելով՝ նա շատ ստորություններ է արել մր. Կրիկլի համար և նրա բոլոր գաղտնի գործերը իմացել է։ Լսեցի, թե Տեոնգեն, բացի մր. Կրիկլից, ամբողջ պանսիոնը, վարժապետներով ու աշակերտներով միասին, իրեն անձնական թշնամին է համարում, և թե նրա միակ հաճույքը ամենքի հետ դժնդակ ու չար լինելն է։ Լսեցի, թե մր. Կրիկլն ունեցել է մի որդի, որ հաշտ չի եղել Տեոնգեի հետ, և օգնել է հորը դպրոցական գործերում։ Այս որդին մի օր սաստիկ հանդիմանել է հոր տմարդի ընթացքն աշակերտների հետ, և բացի այդ, ասածներին նայելով, բողոքել է հոր վարմունքի դեմ մոր հետ։ Այս պատճառով մր. Կրիկլը նրան տանից վռնդել է, և այն օրից է, որ մրս. և միս Կրիկլը տխուր են։

Սակայն իմ լսած բաների մեջ ամենից ավելի զարմանալին այն էր, թե ամբողջ Սալեմ Հոուսում միայն մի աշակերտ կար, որին մր. Կրիկլը ոչ մի անգամ չի համարձակվել ձեռքով դիպչել, և թե այդ աշակերտը Ջեյմս Ստրիֆորթն է։ Եվ երբ մի համեստ տղա (ոչ ես) հարցրեց նրան, թե ի՞նչ կանի նա, եթե մր. Կրիկլն իրոք ուզենա ծեծել նրան,– Ստիրֆորթը մի լուցկի վառեց իր պատասխանին փայլ տալու համար և ասաց.

– Ես թանաքի շիշը նրա ճակատին կշպրտեմ։ Այդ կլինի առաջին գործս։

Այդ լսելով, մենք շունչներս բռնած լուռ մնացինք մի քանի վայրկյան։

Լսեցի նմանապես, որ մր. Չարպի և մր. Մելլի ստացած ռոճիկը մի ողորմելի բան է, և թե ամեն անգամ, երբ մր. Կրիկլի սեղանի վրա տաք ու սառ խորոված են պտտեցնում, մր. Չարպը սովոր է ասել, թե նա սառն է նախապատիվ համարում։ Այդ էլ հաստատեց Ստիրֆորթը, որ տեսչի մոտ ճաշող միակ աշակերտն էր։ Լսեցի նաև, որ մր. Չարպի կեղծամը հարմար չի գալիս գլխին, և թե նա զուր է պարծենում. մեկն ասած «զուր է պճնվում» այդ կեղծամով, որովհետև իր կարմիր մազերը միշտ տակից երևում են։

Լսեցի, թե աշակերտներից մեկը, որ ածխավաճառի որդի էր, ի հաշիվ ածխի է վարժարան ընդունվել. դրա համար էլ նրան անվանել են «փոխանակություն», մի անուն որ առնված է թվաբանության դասագրքի այդ նյութի մասին խոսող հատվածից։ Լսեցի, թե ճաշին գործածվող գարեջուրը ծնողներից բռնի առնված մի հարկ է կամ գողություն, ինչպես և պուդինգը։ Լսեցի, թե միս Կրիկլը ամբողջ պանսիոնի կարծիքով սիրում է Ստիրֆորթին, և ես շատ հավանական գտա այդ, որովհետև Ստիրֆորթն իրոք մի գեղեցիկ պատանի էր՝ սիրուն դեմքով, գրավիչ ձայնով, վայելուչ ձևերով և շքեղ գանգուրներով։ Իմացա նունպես, թե մր. Մելլը շատ բարի մարդ է, բայց ոչ մի կոպեկ փող չունի, իսկ նրա մայրը՝ հետին չքավոր է։ Այս լսելիս հիշեցի իմ նախաճաշիկը և նրա «Չարլիկ իմ» խոսքերը, և գոհ եմ այժմ, որ այս մասին ոչ ոքի բան չասացի։

Այս և սրան նման զրույցները խնջույքից հետո էլ մի քանի ժամանակ տևեցին։ Հյուրերից շատերը կերուխումը վերջացնելուն պես գնացել էին քնելու. մնացողներս էլ դեռ շարունակում էինք, արդեն կիսամերկ շշնջալ և ականջ դնել։

– Բարի գիշեր, փոքրիկ Կոպպերֆիլդ,– ասաց վերջապես Ստիրֆորթը։– Վստահ եղիր, դու իմ հովանավորության տակ կլինես։

– Օ՛հ, դուք շատ բարի եք,– պատասխանեցի ես շնորհակալ սրտով։– Ես ձեզ շատ և շատ պարտական եմ։

– Քույր ունե՞ս դու,– հարցրեց Ստիրֆորդը հորանջելով։

– Ո՛չ։

– Ափսոս։ Եթե ունենայիր, հավաստի եմ, որ նա մի սիրուն, հեզիկ ու վառվռուն աչքերով նազելի աղջիկ կլիներ, ես էլ սիրով կծանոթանայի նրա հետ։ Բարի գիշեր, Կոպպերֆիլդ։

– Բարի գիշեր, սըր։

Ես դեռ երկար մտածում էի նրա մասին անկողնուս մեջ և հիշում եմ, որ մի անգամ էլ բարձրացա նայելու նրան. նա պառկած էր լուսնի լույսի մեջ, սիրուն երեսը դեպի վեր դարձրած և գլուխը բազկին թեթև հենած։ Իմ կարծիքով նա մի հզոր անձնավորություն էր. հարկավ այս էր պատճառը, որ իմ միտքը նրանով էր շարունակ զբաղված։ Լուսնի աղոտ շողերի մեջ դեռ չէր երևում նրա անորոշ ապագան, և ոչ մի ստվեր չէր մթնեցնում այն շավիղը, որի վրա նրա հետ միասին զբոսնում էի երազում։

Է. ԳԼՈՒԽ
Իմ առաջին կիսամյակը Սալեմ Հոուսում

Հետևյալ օրն իսկ ուսումը կանոնավոր սկսվեց։ Խոր տպավորություն թողեց վրաս աղմկալի ձայներին հանկարծ հաջորդող այն գերեզմանային լռությունը, որ տիրեց բոլորիս, երբ նախաճաշից հետո մր. Կրիկլը դասարան մտավ և դռան մոտ կանգնեց, առասպելական հրեշի նման աչքի անցնելով իր գերիներին։

Տեռնգեն կանգ առավ նրա թևի հետևը։ Չեմ հասկանում, թե ինչո՞ւ նա ահեղ ձայնով «լռություն» գոռաց, քանի որ ամենքս քարի պես մունջ էինք ու անշարժ։

Ահա մր. Կրիկլը շրթունքը շարժեց, և մենք լսեցինք Տեռնգեին, որ հետևյալն ասաց.

– Դե՛ տղաներ. ահա նոր կիսամյակը եկավ։ Հետամուտ եղեք ձեր գործին. ժիր-ժիր սերտեցեք ձեր դասերը և մի՛ ծուլանաք, եթե ոչ ես էլ ժիր-ժիր կպատժեմ ձեզ։ Ես չեմ ծուլանա այդ բանում։ Որքան էլ ձեր մարմինը քերեք, զարկերիս հետքը չեք ջնջի։ Դե ուրեմն, սկսեցեք։

Այս սոսկալի առաջաբանից հետո Տեռնգեն անհետացավ, իսկ մր. Կրիկլը մոտեցավ ինձ և ասաց. որ եթե ես լավ կծող եմ, նա էլ վարպետ կծող է։ Հետո վերցրեց իր ճիպոտը և այսպես շարունակեց։

– Ի՞նչ կասես այս ճիպոտին, հը՞։ Լա՞վ ատամներ ունի, հը՞։ Սո՞ւր ատամներ, հը՞։ Լավ կծեց, հը՞։ Լավ կծեց, հը՞։

Յուրաքանչյուր հարցման հետ նա ճիպոտով զարկում էր մարմնիս, և ես գալարվում էի սաստիկ ցավից։ Այսպես ուրեմն շատ շուտ ստացա Սալեմ Հոուսի անդամ լինելու պատիվը (ինչպես ասաց Ստիրֆորթը), բայց շատ էլ արտասուք թափել տվեց ինձ այդ պատիվը։

Սակայն սխալ կլինի, եթե ասեմ, թե ես էի միայն այդ պատիվն ընդունողը։ Ընդհակառակը՝ աշակերտների մեծ մասը (մանավանդ փոքրերից) ուշադրության միևնույն նշաններին արժանացան, երբ մր. Կրիկլը սկսեց պտույտներ անել դասարանում։ Դեռ օրվա զբաղմունքն սկսելուց առաջ, վարժարանի կեսը լաց էր լինում ու կծկվում. իսկ մի քանիսը լացեցին ու կուչ

եկան մինչև դասերի վերջանալը,– այս մասին լավ է՝ լռեմ, որ խոսքերս ծայրահեղ չհամարվեն։

Անտարակույս աշխարհիս երեսին ոչ մի մարդ այն աստիճան իր պաշտոնը չի սիրել, որքան սիրում էր մր. Կիրկլը։ Աշակերտներին ծեծելուց ու չարչարելուց նա նույնքան զվարճություն էր զգում, որքան զգում է սովալլուկ թշվառը բան ուտելուց։ Չէր կարող նա դիմադրել մանավանդ մի առողջ մանուկ պատժելու տենչին և չէր կարող հանգստանալ, մինչև որ ամբողջ օրվա համար նշան չգծեր նրա կլորակ թշերի վրա։ Ես ինքս մի կարմրաթշիկ մանուկ էի և փորձով գիտեմ, թե ինչ եմ ասում։ Դեռ այսօր անաչառ բարկությունից ամբողջ արյունս եռ է գալիս, երբ հիշում եմ այդ տգետ անասունին, որ նույնքան էր ընդունակ իր ստանձնած սուրբ պաշտոնը վարելու, որքան և Նորին Մեծության առաջին ծովակալը և կամ զորքի սպարապետը լինելու։ Այս պաշտոնների մեջ նա գուցե հազար անգամ պակաս չարիք հասցներ, քան մանկավարժական ասպարեզում։

Եվ մենք, այդ անխիղճ կուռքի փոքրիկ զոհերս, որքա՞ն էինք նվաստանում նրա առջև։ Ո՞ր աստիճան եղկելի բան է, մտածում եմ այժմ, դեռ կյանքի ասպարեզը չմտած՝ սովորել սողալ և ստորանալ մի այդպիսի գարշ արարածի առջև։

Ահա դարձյալ նստած եմ սեղանիս առջև, նրա աչքերը դիտելով, ստրկաբար դիտելով, մինչ նա տողում է մի ուրիշ աշակերտի թվաբանության տետրակը, մի զոհի, որի մատները փոքր-ինչ առաջ միևնույն քանոնով դաղվել էին և որ այժմ թաշկինակ է դրել մատներին, որպեսզի նրանց կսկիծն ամոքի։ Ես շատ բան ունեմ անելու։ Ծուլությունից չէ, որ նայում եմ մր. Կրիկլի աչքերին, այլ նայում եմ, որովհետև նրանք բուռն ուժով քաշում են ինձ, և ես մի անդիմադրելի կարիք եմ զգում իմանալու, թե հաջորդ վայրկյանին նա ի՞նչ կանի և ո՞ւմ կպատժի. ի՞նձ, թե՞ ուրիշ աշակերտի։ Հետևս նստած փոքրիկ տղաները դիտում են նրան միևնույն տագնապով, և նա գիտի այդ, թեև այնպես է ձևանում, իբր թե չգիտի։ Տետրը գծելիս նա դեմքը ծռմռում է և հանկարծ մի կողմնակի հայացք նետում մեր շարքի վրա, և մենք բոլորս խորասուզվում ենք գրքերի մեջ և բոլորս դողում։ Մի վայրկյան անցնելուց հետո մեր աչքերը նորից նրա վրա են բևեռվում։ Մի անբախտ աշակերտ, որ իր խնդիրը վատ էր լուծել, նրա հրամանով մոտենում է ամբիոնին։ Հանցավորը ներողություն է խնդրում, խոստանալով թե հետևյալ օրը լավ կպատրաստի խնդիրը։ Մր. Կրիկլը, դեռ նրան հարված տալուց առաջ, մի ինչ-որ կատակ է անում, և մենք թշվառ էակներս ծիծաղում ենք, ծիծաղում, չնայելով, որ մեր դեմքերը մեռելի գույն են ստացել, և լեղիներս պատռելու վրա են։

Դարձյալ նստած եմ սեղանիս առջև երեկոյան դեմ, ամառվա տոթին։ Աշակերտներն այնպես են բզզում ու տզզում իմ շուրջը, որ կարծես թե ճանճեր լինեն։ Մի երկու ժամ առաջ մեզ տրված գաղջ կերակրի անախորժ ճարպը դեռ սրտիս վրա նստած է, և գլուխս կապարի պես ծանրացել է։ Ինչ ասես որ չէի տա, միայն թե կարողանայի մի քիչ քնել։ Նստած նայում եմ մր. Կրիկլին, նիրհոտ աչքերս բվի ձագի նման թարթափելով, և ինձ թվում է, թե նա մշուշով պատած դեռ շարունակում է տողերը գծել. բայց ահա նա հանկարծ վեր է կենում, թաքուն-թաքուն մոտենում է, և նրա ճիպոտի մի հարվածը թմրությունից դեպի արթունություն է կոչում ինձ։

Դասերը վերջացան, և մենք բակումն ենք. սակայն իմ աչքերը դեռ դյութված են նրանով, թեպետ չեմ կարող տեսնել նրան։ Ես գիտեմ, որ նա այժմ իր սենյակում ճաշում է, և ակամա աչքերս ուղղում եմ դեպի այդ սենյակի պատուհանը։ Երբ նա անցնում է պատուհանի մոտով, իմ դեմքը աղերսական ու հլու արտահայտություն է ստանում. իսկ հենց որ նա դուրս է նայում, ամենաքաջ աշակերտն անգամ (բացի Ստիրֆորթից) նույնիսկ զվարթ աղաղակի և կամ երգի մեջտեղում քարացածի պես կանգ է առնում և մի լուրջ փիլիսոփայի դիրք տալիս մարմնին։ Մի օր Տրեղլսը (աշխարհիս ամենաթշվառ պատանին) գնդակ խաղալիս պատահմամբ այդ պատուհանի ապակուն դիպցրեց և փշրեց։ Այս րոպեիս անգամ սարսռում եմ այդ սոսկալի դեպքը հիշելիս. գնդակը կարող էր թռչելով դիպչել և նույնիսկ մր. Կրիկլի սրբազան գլխին։

Խեղճ Տրեդլս։ Ահա նա իր երկնագույն նեղ բաճկոնով և նույն գույնի վարտիքով, որոնք գերմանական երշիկների ձև էին տալիս նրա թևերին ու սրունքներին։ Սալեմի դպրոցում նրանից ավելի առույգ ու զվարթ, բայց նրանից էլ անբախտ պատանի չկար։ Ամբողջ կիսամյակի ընթացքում ամեն օր ծեծում էին նրան ճիպոտով, բացի մի տոնից, երբ ճիպոտի փոխարեն միայն քանոնով հարված տվին ձեռքերին. ամեն օր էլ նա պատրաստվում էր գանգատ գրել իր քեռուն, սակայն երբեք չէր գրում։ Գլուխը քարշ արած մի քանի րոպե տխուր նստում էր և ապա սկսում ծիծաղել ու կմախքներ գծել քարետախտակի վրա, մինչև որ աչքերի արտասուքը ցամաքեր։ Սկզբում ես չէի հասկանում, թե ինչ սփոփանք է տալիս նրան կմախքներ նկարելը, և որոշ ժամանակ նրան ճգնավոր էի համարում, որ այդ մահվան նշաններով ուզում է իրեն հիշեցնել, թե կյանքն այստեղ կարճատև է, ուրեմն և ճիպոտի գործածությունը մի վաղանցուկ բան։ Հետո միայն ստուգեցի, որ կմախքներ նկարելու միակ պատճառը այն հանգամանքն է եղել, որ դրանք հեշտ են նկարվում և հարդարանքի կարոտ չեն։

Պատվական տղա էր այդ Տրեդլսը. նրա համոզումով իրար պաշտպանելը մի սրբազան պարտք էր աշակերտների համար։ Այսպես մի օր, երբ Ստիրֆորթը եկեղեցում ծիծաղեց, սպասավորը կարծելով, թե այդ անողը Տրեդլսն է, նրան դուրս արեց։ Խեղճը դուրս գնաց, ամբողջ ժողովրդի առջև անարգված։ Սակայն չասաց, թե ով էր իսկապես հանցավորը, թեև հետևյալ օրը նրան սաստիկ պատժեցին և բանտ նստեցրին, ուր նա մի քանի ժամվա ընթացքում իր լատիներեն բառագրքի բոլոր էջերը կմախքների գերեզմանոց դարձրեց։ Բայց այս անգամ վարձրատրություն էլ ստացավ. Ստիրֆորթը հրապարակավ հայտնեց, թե Տրեդլսը քաջ տղա է։ Թեև ես ո՛չ Տրեդլսի հասակն ունեի, ո՛չ էլ նրա արիությունը, բայց ինչ ասես պատրաստ էի կրել՝ գովասանք ստանալու համար։

Ես հրճվում էի, երբ տեսնում էի Ստիրֆորթին միս Կրիկլի հետ միասին թև-թևի տված եկեղեցի գնալիս։ Գեղեցկության կողմից միս Կրիկլը հարկավ չէր կարող փոքրիկ Էմլիին հավասարվել, և ես չէի սիրում նրան. այդ համարձակությունը չունեի, բայց և այնպես նա շատ հրապուրիչ և ազնվական օրիորդ էր թվում ինձ։ Երբ Ստիրֆորթը սպիտակ անդրավարտիքով ման էր գալիս միս Կրիկլի հովանոցը ձեռքին բռնած, ես պարծենում էի, որ նա իմ բարեկամն է, և վստահ էի, որ օրիորդը չի կարող սրտանց չպաշտել նրան։ Իմ կարծիքով մր. Չարպն էլ, մր. Մելլն էլ նշանավոր անձինք էին, սակայն Ստիրֆորթը նրանց առջև նույնն էր, ինչպես արեգակն աստղերի առջև։

Ստիրֆորթը շարունակում էր հովանավորել ինձ և շատ օգտակար բարեկամ էր, որովհետև նրա օգնությանն արժանացող աշակերտին ոչ ոք չէր համարձակվում վշտացնել։ Հարկավ նա չէր կարող պաշտպանել ինձ մր. Կրիկլից, որ շատ խիստ էր վարվում ինձ հետ, բայց երբ ես սովորականից սաստիկ էի պատժվում, նա ասում էր, թե ինձ պակասում է իր համարձակության մի մասը և թե իրեն գալով, նա երբեք թույլ չէր տա, որ իր հետ այդպես վարվեին. սրանով կարծես կամենում էր սիրտ տալ ինձ, և, ես շատ շնորհակալ էի։ Մր. Կրիկլի խստությունը միայն մի շահ բերեց ինձ, ինչքան որ գիտեմ՝ միայն մի շահ։ Մի օր նա, նստարանների միջև ետ ու առաջ գնալիս նկատեց, որ մեջքիս նշանակը խանգարում է նրան՝ անցնելիս հարվածել ինձ. այս պատճառով նշանակը հանվեց, և ես այլևս չտեսա այն։

Մի պատահական հանգամանք այն աստիճան ամրացրեց Ստիրֆորդի և իմ մտերմության կապը, որ ես մեծ բավականություն ու հպարտություն զգացի, թեպետ այդ մտերմությունը երբեմն նեղում էր ինձ։ Մի օր, մինչ Ստիրֆորդը վեհանձնաբար խոսում էր ինձ հետ զբոսավայրում, ես համարձակվեցի նկատելու, թե ինչ-որ բան կամ ինչ-որ մարդ (լավ չեմ հիշում, թե ո՞ր բանը կամ մարդը) նմանություն ունի «Պերեգրին Պիկլի» այսինչ առարկայի կամ անձի հետ։ Նույն րոպեին Ստիրֆորդթը ոչինչ չասաց, սակայն երեկոյան, մեր ննջարան գնալու միջոցին, հարցրեց ինձ, թե արդյոք չունե՞մ այդ գիրքը։

Պատասխանեցի, թե ոչ, և պատմեցի նրան, թե ինչպես եմ կարդացել «Պերեգրին Պիկլը» և մյուս բոլոր գրքերը, որոնք հիշված են նախորդ էջերում։

– Եվ դու հիշո՞ւմ ես նրանց բովանդակությունը,– հարցրեց Ստիրֆորդը։

– Այո, շատ լավ,– պատասխանեցի ես։

Եվ իրավ, ես լավ հիշողություն ունեի և կարծում էի, թե կարդացած գրքերիցս և ոչ մեկը չեմ մոռացել։

– Եթե այդպես է,– ասաց Ստիրֆորթը,– դու այդ ամենը կպատմես ինձ։ Գիշերները ես ուշ եմ քնում, առավոտյան էլ սովոր եմ վաղ վերկենալ։ Մենք այդ բոլորը մի առ մի կանցնենք, և դա կլինի «Արաբական գիշերների» պես մի բան։

Այս առաջարկությունը վերին աստիճանի փաղաքշեց ինձ ու հրապուրեց, և մենք նույն երեկոյան ձեռնամուխ եղանք նրա իրագործմանը։ Թե պատմելիս որքա՞ն էի քանդում և այլանդակում հեղինակներիս վեպերը չեմ կարող ասել, չեմ էլ ուզում գիտենալ. սակայն հոգով-սրտով սիրում էի նրանց և ըստայնմ աշխատում ճիշտ կատարել իմ պարտքը։ Ինձ թվում էր, թե զուրկ չէի պարզ, կենդանի ու գրավիչ ոճով պատմելու շնորհից, և գործս լավ էր առաջ գնում։

Սակայն վատն այն էր, որ գիշերվա դեմ շատ անգամ քունս տանում էր և կամ թե բան պատմելու տրամադրություն չէի ունենում։ Այդպիսի դեպքերում պաշտոնս սաստիկ ծանրանում էր, բայց այնուամենայնիվ անհրաժեշտ էր, որ գործս կատարեմ, որովհետև անկարելի էր հուսախաբ անել և կամ վշտացնել Ստիրֆորթին։ Նմանապես և առավոտները շատ ախորժելի չէր քնատ վերկենալ զանգակից առաջ, այնինչ սաստիկ կցանկանայի դարձյալ մի ժամ հանգստանալ, և Ստիրֆորթի աննկուն կամքին հնազանդվելով, Շեհերազադե թագուհու նման մի երկար պատմություն սկսել. բայց որովհետև դրա փոխարեն Ստիրֆորթը օգնում էր ինձ այն դասերս պատրաստելու, որոնք առանձին դժվարություն էին պատճառում ինձ, հետևաբար մեր տուրևառի մեջ ես ոչ մի կորուստ չէի կրում։ Սակայն թող ներվի ինձ վկայություն տալ արդարությանս մասին։ Ստիրֆորթի պահանջները կատարելիս՝ ես ոչ անձնական շահով էի առաջնորդվում, ոչ էլ վախի զգացումով։ Ես նրան սիրում ու հարգում էի, և նրա գովասանքը ինձ համար մի գերագույն հատուցում էր։ Ես այնքան էի գնահատում դրան, որ այսօր էլ սիրտս հուզվում է այդ դատարկ բաները հիշելիս։

Ստիրֆորթն էլ, պետք է ասել, ուշադիր էր դեպի ինձ, և մի օր մի այնպիսի ուրույն եղանակով ցույց տվեց այդ, որ չէր կարող շատ դուր գալ խեղճ Տրեդլսին և մյուս ընկերներիս։ Պեգգոտիի խոստացած նամակը, օ՜հ, ինչ պատվական նամակ էր, ստացել էի դեռ կիսամյակի սկզբին, հետն էլ մի կարկանդակ՝ նարինջների մեջ թաղված, և երկու շիշ օշարակ։ Ես պարտք համարեցի այս գանձերը Ստիրֆորթի ոտքի տակ դնել և խնդրել, որ բաժանի։

– Գիտե՞ս ինչ կասեմ, Կոպպերֆիլդ,– ասաց նա։– Օշարակը կպահենք կոկորդ թրջելու համար, երբ որ դու վեպեր պատմելու լինես։

Ես կարմրեցի այդ լսելիս և համեստաբար խնդրեցի նրան անհոգ լինել իմ մասին։ Բայց նա ասաց, թե պատմելու ժամանակ ձայնս կերկեր կամ խոպոտ է դուրս գալիս, և թե օշարակը մինչև վերջին կաթիլը կոկորդս թրջելուն պետք է ծառայի։ Այս պատճառով նա շշերը իր սնդուկը դրեց, որոնց միջից մաս-մաս ածում էր իր սրվակի մեջ և ապա կաթիլ-կաթիլ խմեցնում ինձ փետուրի միջով, երբ պետք էր դատում կազդուրել ինձ։ Երբեմն էլ այս դարմանը ավելի ազդու անելու համար՝ մեջը կաթեցնում էր նարնջի կամ զեբջեֆիլի կամ թե անանուխի հյութ. և թեպետ չի կարելի ասել, թե այս փորձերից հեղուկի համն ազնվանում էր, և կամ ուժեղանում, թե քնելուց առաջ ու զարթնելուց հետո միշտ այդպիսի խմիչք ընդունելը ստամոքսի համար շատ օգտակար էր, բայց և այնպես ջերմ գոհությամբ կուլ էի տալիս և սրտանց շնորհակալ էի իմ խնամակալ Ստիրֆորթին։

Պերեգրինի արկածները պատմելու համար կարծեմ ամիսներ պետք եղան, իսկ մյուսների պատմությունը ավելի երկար տևեց։ Կարող եմ ասել, որ եթե պատմությունս երբեմն ընդհատվում էր, բնավ նյութերի պակասությունից չէր լինում, այդ-իսկ օշարակը միայն այն

ժամանակ վերջացավ, երբ վերջացավ և վերջին վեպը։ Պատմելուս միջոցին խեղճ Տրեդլսը երբեք չէր կարողանում հիշել նրան և միաժամանակ թե՛ ծիծաղելու և թե՛ լալու տարօրինակ հակում չզգալ. հունաց ողբերգության պարի պաշտոն էր կատարում, մեկ ծիծաղից թուլանալով զվարճալի տեղերում, մեկ էլ ահից սարսռելով այն րոպեին, երբ արկածը մի վտանգավոր կերպարանք էր ստանում։ Այս բոլորը շատ անգամ շփոթում էր պատմությանս ընթացքը։ Սակայն իր ասելով այդ ամենը կատակ էր։ Մի անգամ էլ, երբ ես իսպանական Ալգունզիլի արկածն էի պատմում «Ժիլ Բլա»-ից, Տրեդլսը սկսեց իբր թե ահից ատամները կրճտացնել, իսկ երբ Ժիլ Բլան և ավազակների գնդապետը Մադրիդում իրար հանդիպեցին, նա մի այնպես սարսափելի ճիչ արձակեց, որ նույն րոպեին նրբանցքով անցնող մր. Կրիկլը լսեց նրան, և հենց այդ երեկո Տրեդլսը սաստիկ ծեծ կերավ ննջարանի խաղաղությունը վրդովելու համար։

Ի բնե ռոմանտիկ ու ցնորական երևակայությունս անչափ զարգացավ գիշերային մթության մեջ պատմած վեպերիս շնորհիվ, ուստի և չեմ կարծում, որ նրանք ինձ մի էական օգուտ տված լինեն։ Սակայն աշակերտները սիրում էին ինձ, իբրև մի զվարճարար խաղալիք, և պատմելու շնորհիս հռչակն արագ տարածվում էր դպրոցի մեջ և ընդհանուր ուշադրության առարկա անում իմ անձը, չնայելով որ տարիքով ես ամենից փոքրն էի։ Այդ բոլորը դրդում էր ինձ փութաջան լինել և առաջադեմ։

Չեմ կարծում, որ կարելի լինի շատ բան սովորել մի այնպիսի դպրոցի մեջ, որ միայն բարբարոսական խստությամբ է կառավարվում, ով էլ լիներ նրա տեսուչը՝ մի խելոք մարդ, թե հիմար։ Սալեմ Հոուսի աշակերտներն ընդհանրապես տգետ էին. ուսանելու եռանդը նրանց մեջ մարել էր անվերջ ծեծի ու լլկանքի պատճառով, և նրանք չէին կարող առաջ գնալ, ինչպես չի կարող առաջ գնալ այն մարդը, որ իր կյանքի մեջ միայն տառապանք ու հալածանք է կրում։ Սակայն իմ փոքրիկ սնապարծությունը, Ստիրֆորթից օգնություն գտնելով, փոքր ի շատե մղում էր ինձ դեպի ուսում, և թեպետ պատիժներից շատ չէր ազատում, բայց գոնե ստիպում էր ինձ, քանի որ Սալեմում էի, բարձրանալ ընդհանուր մակարդակից։ Այս էր պատճառը, որ ես կարողացա գիտության գեթ հատ ու կտոր փշրանքներ ձեռք բերել։

Այս բանում Ստիրֆորթից բացի, ինձ նպաստում էր և մր. Մելլը, որի սերը դեպի ինձ միշտ շնորհակալությամբ պիտի հիշեմ։ Ցավ էր ինձ տեսնել, որ Ստիրֆորթն արհամարհում էր այդ մարդուն և երբեք առիթ չէր փախցնում վիրավորելու նրա զգացմունքը՝ կամ անձամբ և կամ թե ուրիշների ձեռքով։ Այդ ինձ սաստիկ տանջում էր, մանավանդ որ ես,– չկարողանալով բան թաքցնել Ստիրֆորթից, ինչպես որ անկարող էի չբաժանել նրա հետ որևէ կարկանդակ և կամ մի ուրիշ անուշեղեն,– մտերմաբար պատմել էի նրան այն երկու պառավների մասին, որոնց մոտ տարել էր ինձ մր. Մելլը։ Այժմ վախենում էի, թե Ստիրֆորթը հրապարակ կհանի գաղտնիքս և մր. Մելլին ծաղրելու զենք կդարձնի։

Ո՞վ կմտածեր այն առաջին առավոտը,– երբ նախաճաշ վայելեցի և քուն եղա սիրամարգի փետուրների հովանու տակ, սրնգի նվագը լսելով,– թե ինչ հետևանքներ կունենա իմ հյուրասիրվելն այն թշվառ, անշուք տնակում։ Սակայն անսպասելի և շատ ծանր հետևանքներ ունեցավ։

Մի օր մր. Կրիկլը, տկարության պատճառով, իր սենյակում պիտի մնար։ Բնական է, որ այս դեպքն ուրախացներ աշակերտներին և ցնծության աղմուկ հաներ սերտարանում։ Խնդությունից իրար անցնող մանուկներին կարգի բերելը հեշտ բան չէր, և թեպետ ահեղ Տեոնգեն երկու անգամ ներս մտավ և ամենաչարերի անունը գրեց, բայց այս բանը տղաների վրա մի առանձին ազդեցություն չունեցավ. նրանք գիտեին, որ ինչ էլ անեն, հետևյալ օրը պիտի պատժվեին. ուրեմն, լավ էր գոնե այսօր զվարճանալ։

Օրը շաբաթ էր, և մեր դասերը մինչև կեսօր տևեցին։ Այնուհետև, սովորության համաձայն, մենք պետք է ազատ լինեինք և խաղայինք բակում, բայց որպեսզի մեր ձայներով մր. Կրիկլին անհանգիստ չանենք, մեզ հրամայեցին մինչև երեկո սերտարանում մնալ ու թեթև դասերով

պարապել։ Որովհետև այդ օրը շաբաթ էր, մր. Չարպը գնացել էր իր կեղծամը կոկել տալու, իսկ աշակերտների վրա հսկելու պարտքը թողել էին մր. Մելլին, դժվար գործերը սովորաբար միշտ նրան էին վիճակվում։

Եթե կարելի լիներ ցուլի և կամ արջի հետ համեմատել մր. Մելլի պես հեզ մարդուն, ես կասեի, թե այն օրվա գոռում-գոչումի ժամանակ նա հազար շներով հալածված արջի կամ ցուլի նման էր։ Հիշում եմ, թե ինչպես նա շշմած գլուխը աջ ձեռքին դեմ տված՝ անասելի ճիգ թափելով, աշխատում էր ամբիոնի վրայից առաջ տանել իր պաշտոնի ծանր գործը՝ այն սոսկալի ժխորի մեջ, որ կարող էր անգամ Ստորին Պալատի նախագահին խելագարության հասցնել։ Բոլոր տղաներն իրենց տեղերից դուրս էին թռել։ Ոմանք ցատկում էին, ոմանք տրոփում, ոմանք պարում, ոմանք երգում, ոմանք սուլում, ոմանք ոռնում կամ թե ճվում. մի քանիսն էլ նրա շուրջը ոստոստելով ու կայթելով, հեգնում էին նրան առջևից ու հետևից, ծաղրում նրա չքավորությունը, ծիծաղում նրա կոշիկների վրա, նրա զգեստի, նրա մոր և վերջապես նրա վերաբերյալ ամեն բանի, որից պետք էր պատկառել։

– Լռություն,– գոչեց մր. Մելլը, հանկարծակի վեր կենալով, և սկեսց ձեռքի գրքով ամբիոնը բախել։– Ի՞նչ անուն տամ ձեր արարքին։ Անկարելի է համբերել դրան։ Մարդ կարող է խելքը թռցնել ձեր ձեռքից։ Ի՞նչու եք ինձ հետ այդպես վարվում, ա՛յ տղաներ։

Նա իմ գրքով էր ամբիոնը ծեծում։ Ես կազնած էի նրա մոտ և տեսա, որ երբ շուրջը նայեց, բոլոր տղաները միանգամից լռեցին՝ ոմանք ահից, ոմանք էլ գուցե զղջալուց։

Ստիրֆորթի նստարանը երկար սենյակի հակառակ կողմն էր։ Նա կանգնած էր մեջքը պատին դեմ տված, ձեռքերը գրպանները դրած, և երբ մր. Մելլը նրա վրա էր նայում, նա սուլելու ձև էր տալիս շրթունքներին։

– Լռություն, մր. Ստիրֆորթ։

– Ինքներդ լռեցեք,– ասաց Ստիրֆորթը, բոլորովին կարմրելով։– Այդ ո՞ւմն եք հրաման տալիս։

– Նստեցեք,– ասաց մր. Մելլը։

– Ինքներդ նստեցեք,– պատասխանեց Ստիրֆորթը,– և ձեր գործը տեսեք։

Հավանության շշուկ և նույնիսկ մի թեթև ծափահարություն լսվեց. սակայն մր. Մելլն այն աստիճան սփրթնել էր, որ անմիջապես լռություն տիրեց. և մի աշակերտ, որ վազել-կանգնել էր նրա հետևը՝ նորից նրա մորը կերպարանելու համար, նույն րոպեին միտքը փոխեց և ձևացրեց թե գրիչ է սրում։

– Եթե կարծում եք, Ստիրֆորթ,– ասաց մր. Մելլը,– թե ինձ անհայտ է այն ազդեցությունը, որ դուք բանեցնում եք այստեղ ամենքի վրա, շատ եք սխալվում։

Այս ասելիս մր. Մելլը, երևի թե պատահմամբ գլխիս դրեց իր ձեռքը։

– Չարաչար սխալվում եք,– շարունակեց նա,– եթե կարծում եք, որ չեմ նկատում, թե ինչպես եք դրդում ձեր փոքր ընկերներին ամեն տեսակ վիրավորանք հասցնել ինձ։

– Ձեր վրա մտածելու նեղություն անգամ չեմ ուզում քաշել,– ասաց Ստիրֆորթը սառնությամբ,– ուրեմն և սխալվել էլ չեմ կարող ձեր մասին։

– Եվ եթե դուք,– առաջ տարավ մր. Մելլը սաստիկ դողացող շրթունքով,– օգուտ եք քաղում ձեր արտոնյալ դրությունից մի ջենտլմենի նախատելու համար. . .

– Մի ի՞նչ։ Ո՞վ է այդ ջենտլմենը,– գոչեց Ստիրֆորթը։

Այդ վայրկյանին մեկն աղաղակեց. «Բավական է։ Ամոթ քեզ, Ստիրֆորթ»։ Դա Տրեղլսն էր, որին մր. Մելլը իսկույն ևեթ հրամայեց լռել։

– Եթե համարձակվում եք մի ջենտլմենի նախատել, որն անբախտ է, որ երբեք ձեզ չի վնասել և որին դուք չպիտի նախատեք շատ ու շատ պատճառներով, որոնք կարծեմ, հասկանալի պիտի լինեն ձեր հասակի ու խելքի պատանուն,– շարունակեց մր. Մելլը ավելի դողդոջուն ձայնով,– ուրեմն ձեր արածը մի անարգ, վատթար և ցած բան է: Այժմ, սըր, կարող եք նստել և կամ թե կանգնած մնալ, ինչպես կամենաք:– Կոպպերֆիլդ, շարունակեցեք:

– Սպասի՛ր, Կոպպերֆի՛լդ,– ասաց Ստիրֆորթը, սերտարանի մեջտեղը կանգնելով:– Ահա ինչ կասեմ ձեզ մեկ ընդմիշտ, մր. Մելլ. եթե համարձակություն ունեք անարգ կամ սառը անվանելու և կամ մի ուրիշ այսպիսի մակդիր տալու ինձ, դուք ուրեմն մի աներես ու լիրբ մուրացկան եք: Միշտ էլ դուք մուրացկան էիք, այդ ձեզ էլ լավ հայտնի է. իսկ այսուհետև լիրբ ու աներես մուրացկան:

Չգիտեմ՝ Ստիրֆո՞րթն էր ուզում առաջ նետվելով մր. Մելլին հարված հասցնել, թե՞ մր. Մելլն էր տեղից թռել Ստիրֆորթին խփելու համար, և կամ արդյոք մտադի՞ր էին մի այսպիսի բան անել,– միայն թե հանկարծ ամբողջ սերտարանը քար կտրածի պես լռեց. մեր մեջ կանգնած էր մր. Կրիկլը Տեոնգեի հետ միասին, իսկ մրս. ու միս. Կիրկլը զարհուրած ներս էին նայում դռան միջով: Մր. Մելլն արմունկներն ամբիոնին դեմ էր տվել և ձեռքով երեսը ծածկել՝ առանց մի բառ ասելու:

– Մր. Մելլ,– ասաց մր. Կրիկլը, նրա թևից քաշելով, և այս անգամ նրա շշունջը այնքան լսելի էր, որ Տեոնգեն ավելորդ համարեց նրա խոսքերը կրկնել,– հուսամ, որ դուք ինքներդ ձեզ չեք մոռացել:

– Ո՛չ, սըր, ո՛չ,– պատասխանեց վարժապետը, երեսը բանալով և սաստիկ հուզմունքից ձեռքերն իրար շփելով:– Ո՛չ, սըր, ո՛չ: Խելքս վրաս է, մր. Կրիկլ... ես չեմ մոռացել ինքս ինձ... Ես հիշում եմ ինքս ինձ... Կցանկանայի միայն, որ դուք էլ... դուք էլ, սըր, փոքր-ինչ առաջ հիշեիք ինձ: Դա մի վեհանձն ու ավելի արդար վարմունք կլիներ և շատ վշտերից կազատեր ինձ: Այո՛, սըր:

Մր. Կիրկլը խստադեմ նայեց մր. Մելլին, ձեռքը դրեց Տեոնգեի ուսին և ամբիոնի վրա նստեց: Այդ գահի բարձրունքից մր. Մելլին մի քանի վայրկյան սուր դիտելուց հետո, մինչ նա սաստիկ հուզված շարունակում էր գլուխը թոթվել և ձեռքերը տրորել, մր. Կրիկլը դարձավ Ստիրֆորթին և ասաց.

– Որովհետև դա չի ուզում բացատրություն տալ, գոնե դուք, սըր, ասեցեք, թե ի՞նչ էր նշանակում այս բոլորը:

Ստիրֆորթը չփութաց պատասխանել, այլ լուռ կանգնած էր, հակառակորդի վրա արհամարհոտ ու բարկացած հայացք նետելով: Հիշում եմ, թե այդ րոպեին որքան ազնիվ թվաց նա ինձ և որքան գեղջուկ ու հասարակ էր մր. Մելլը նրա առջև:

– Թող հայտնի, թե ի՞նչ էր ուզում հասկացնել արտոնյալ շնորհագյուտեր ասելով,– ասաց վերջախես Ստիրֆորթը:

– Շնորհագյուտե՞ր,– կրկնեց մր. Կրիկլը և նրա ճակատի երակներն ուռեցին:– Ո՞վ է բան ասել շնորհագյուտերի մասին:

– Ահա դա,– ասաց Ստիրֆորթը:

– Խնդրեմ պարզեցեք, սըր, ի՞նչ էր ձեր այդ խոսքի իմաստը,– հարցրեց մր. Կրիկլը օգնականին չար-չար նայելով:

– Իմաստն այս էր, մր. Կիրկլ,– պատասխանեց մր. Մելլը մեղմ ձայնով,– որ ոչ մի աշակերտ իրավունք չունի անարգել ինձ, օգուտ քաղելով իր արտոնյալ դրությունից:

– Անարգել ձե՞զ,– ասաց մր. Կրիկլը:– Ո՛վ է այստեղ... երկնային... Սակայն խնդրեմ թույլ տվեք հարցնել ձեզ, միստր... ինչպե՞ս էր ձեր անունը... (այստեղ մր. Կրիկլը ձեռքերը կրծքին

դրեց իր ճիպոտի հետ միասին և հոնքերն այնպես կիտեց, որ փոքրիկ աչքերը համարյա թե անհետացան) հարցնել, թե որ համարձակվեցիք շնորհագյուտ խոսքն արտասանել, արդյոք դրանով արժանապես հարգած եղա՞ք իմ անձը, ինձ,– ասաց մր. Կրիկլը, հանկարծ գլուխն առաջ տնկելով և նույն վայրկյանին ետ քաշելով,– ինձ, որ այս հաստատության գլուխն եմ և ձեր մեծավորը։

– Պատրաստ եմ խոստովանել, որ արածս խոհեմ բան չէր,– ասաց մր. Մելլը։– Ես այդպես չէի վարվի, եթե համբերությունից չհանեին ինձ։

Այստեղ Ստիրֆորթը վրա բերեց.

– Հետո, ասաց, թե ես անարգ եմ, թե ես ստոր եմ, վատթար եմ. ես էլ մուրացկան անվանեցի նրան։ Գուցե այս անունը չտայի, եթե զայրացած չլինեի. բայց մի անգամ տալուց հետո, հետևանքն էլ վրաս եմ առնում։

Գուցե առանց դատելու, որ Ստիրֆորթը ծանր հետևանքից վախենալու տեղիք չունի, ես մի տեսակ պարծանք զգացի նրա արիական խոսքերից։ Կարծեմ տղաներն էլ նույնը զգացին, որովհետև նրանց մեջ թեթև շարժում ընկավ, թեև ոչ ոք բան չասաց։

– Ես զարմանում եմ, Ստիրֆորթ, թեև անկեղծությունը պատիվ է բերում ձեր բնավորությանը,– ասաց մր. Կրիկլը,– հարկավ պատիվ է բերում, բայց և այնպես զարմանում եմ։ Թե ինչպես դուք մի այդպիսի մականուն տվիք այն մարդուն, որ ծառայում և ռոճիկ է ստանում Սալեմ Հոուսում։

Ստիրֆորթը թեթև ծիծաղեց։

– Այդ պատասխան չէ իմ հարցմանը, սըր,– ասաց մր. Կրիկլը։– Մի ավելի որոշ բան եմ սպասում ձեզնից, Ստիրֆորթ։

Եթե փոքր-ինչ առաջ մր. Մելլը գռեհիկ էր թվացել աչքիս իմ ընկերոջ սիրուն պատկերի առջև, էլ չեմ կարող արտահայտել, թե որքան ավելի գռեհիկ էր նույն ինքը մր. Կրիկլը։

– Թող ուրանա,– ասաց Ստիրֆորթը։

– Ուրանա՞,– գոչեց մր. Կիրկլը։– Ի՞նչ ուրանա, Ստիրֆորթ։

– Թե մուրացկան է։

– Բայց որտե՞ղ է մուրացել։

– Եթե ինքը մուրացկան չէ, գոնե իր ամենամոտիկ ազգականը մուրացկան է,– ասաց Ստիրֆորթը։– Եվ մի՞թե այդ միևնույնը չէ։

Նա ինձ նայեց, իսկ մր. Մելլը կամացուկ ուսիս դրեց իր ձեռքը։ Ես կարմրելով ու զղջանք զգալով մտիկ տվեցի նրա երեսին, բայց մր. Մելլը ակնապիշ դիտում էր Ստիրֆորթին։ Նա շարունակում էր շոյել ուսս, սակայն աչքերը դեռ անքթիթ հառած էին Ստիրֆորթի վրա։

– Որովհետև դուք սպասում եք, մր. Կրիկլ,– ասաց Ստիրֆորթը,– որ արդարացնեմ ինքս ինձ և իմ մեղքը պարզ հայտնեմ, ասելիքս այն կլինի, որ դրա մայրն անկելանոցում ապրող մուրացկան է։

Մր. Մելլը շարունակ դիտում էր նրան և հանդարտ շփում իմ ուսը։ Ես լսեցի, թե ինչպես նա կամաց շշնջաց ինքն իրեն. «Իմ սպասածն էլ հենց այդ էր»։

Մր. Կիրկլը հոնքերը կիտած, բռնազբոսիկ քաղաքավարությամբ օգնականին դարձավ և ասաց.

– Լսո՞ւմ եք, մր. Մելլ, թե ի՞նչ է ասում ջենտլմենը։ Արդ՝ համեցեք, խնդրեմ, բոլորիս ներկայությամբ հաստատել կամ հերքել նրա խոսքերը։

– Նա լիովին արդար է, սըր, և ես հերքելու բան չունեմ,– ասաց մր. Մելլն ամենախորին լռության մեջ։– Նրա խոսքերը միանգամայն ճշմարիտ են։

– Այժմ հաճեցեք հանդիսաբար վկայել,– ասաց մր. Կիրկլը, գլուխը մի կողմ թեքելով և աչքերը ամբողջ սերտարանի վրա հածելով,– վկայել, թե արդյոք մինչ այսօր ինձ հայտնի՞ էր այդ բանը։

– Չեմ կարծում, որ բացարձակ հայտնի լիներ,– պատասխանեց մր. Մելլը։

– Այդ ի՞նչ ասել է,– գոչեց մր. Կիրկլը։– Միթե չգիտե՞ք, որ հայտնի չէր։ Իրավ չգիտե՞ք, թշվառական։

– Չեմ կարծում, որ դուք երբևէ շատ փառավոր համարած լինեք իմ նյութական կացությունը,– վրա բերեց օգնականը։– Ձեզ քաջ հայտնի է իմ այժմյան վիճակս ձեր դպրոցում, առաջվանն էլ լավ հայտնի էր։

– Եթե այդպես է,– ասաց մր. Կիրկլը, և նրա ճակատի երակները ավելի հաստացան,– ուրեմն պետք է ենթադրել, թե դուք մեզ մոտ մի թյուր դիրք եք ունեցել և այս տունը սխալմամբ չքավորների դպրոց համարել։ Մր. Մելլ, մեզ կմնա բաժանվել. և քանի շուտ, այնքան լավ։

– Եվ ամենալավը՝ հենց իսկույն,– ասաց մր. Մելլը, պատրաստվելով դուրս գնալ։

– Սըր, սպասեցեք։

– Ավելորդ է,– ասաց մր. Մելլը։– Մնաք բարով, մր. Կիրկլ, և դուք ամենքդ, աշակերտներ։ Իսկ ձեզ, Ջեյմս Ստիրֆորթ, ես չեմ կարող հեռանալիս մի ուրիշ բան մաղթել, բայց եթե այն, որ մի օր դուք ամոթ զգաք ձեր այսօրվա արարքից։ Այս րոպեիս ես լավ կհամարեի, որ դուք ինձ ո՛չ բարեկամ լինեք, ո՛չ էլ որևէ մեկին, որին ես կարեկից եմ։

Նա դարձյալ մի անգամ ուսիս դրեց իր ձեռքը, սրինգը ու գրքերը սեղանից հանեց և բանալին հաջորդի համար թողնելով, իր ամբողջ ունեցվածքը թևի տակ բռնած՝ դուրս եկավ վարժարանից։ Այնուհետև մր. Կրիկլը Տեոնգեի միջնորդությամբ մի ճառ ասաց, որի մեջ շնորհակալություն հայտնեց Ստիրֆորթին Սալեմ Հոուսի անկախությունն ու բարի համբավը, թերևս շատ ջերմ պաշտպանելու համար, և ճառը կնքեց Ստիրֆորթի աջը սեղմելով։ Իսկ մենք երիցս կեցցե գոռացինք՝ ի պատիվ Ստիրֆորթի, ես էլ եռանդով մյուսների հետ գոռացի, թեև սիրտս շատ ընկճված էր։ Ի վերջո մր. Կրիկլը ճիպոտով ծեծեց Տրեդլսին, որովհետև նա կեցցեներին ձայնակցելու փոխարեն, լաց էր լինում մր. Մելլի հեռանալու պատճառով։ Այս էլ վերջացնելուց հետո՝ մր. Կիրկլը ետ քաշվեց դեպի իր բազմոցը կամ անկողինը և կամ չգիտեմ դեպի ուր։

Մենք մենակ մնացինք և միտքս է, թե որքան շփոթված էինք նայում իրար վրա։ Ես այնպես էի կշտամբում ինձ և պատահած դեպքին մասնակցելուս համար զղջանք զգում, որ անպատճառ լաց կլինեի, եթե չվախենայի, որ շուտ-շուտ վրաս նայող Ստիրֆորթը դժգոհ կլինի իմ արտասվելուց, դրա մեջ հարգանքի պակասություն նշմարելով դեպի ինքը։ Այնքան մեծ էր ակնածությունս նրանից։ Նա շատ բարկացած էր Տրեդլսի վրա և ասաց, թե ուրախ է, որ նա ծեծ կերավ։

Իսկ Տրեդլսը, որ գլուխը սեղանին դրած արդեն իր վիշտը փարատել էր մի քանի կմախք նկարելով, պատասխանեց, թե փույթ չէ, որ իրեն ծեծեցին, և ցավալին միայն այն է, որ մր. Մելլի հետ վատ վարվեցին։

– Ո՞վ վատ վարվեց, ա՛յ աղջիկ,– ասաց Ստիրֆորթը։

– Ո՞վ։ Իհարկե դու,– պատասխանեց Տրեդլսը։

– Ես ի՞նչ արի որ,– հարցրեց Ստիրֆորթը։

– Ինչպես թե ինչ արիր,– վրա բերեց Տրեդլսը։– Դու նրա սիրտը խոր խոցեցիր և նրան պաշտոնից զրկեցիր։

– Սիրտը խոցեցի,– կրկնեց Ստիրֆորթն արհամարհանքով։– Միամիտ կաց, օրիորդ Տրեդլս, նրա սիրտը քոնի պես դյուրազգաց չէ, շուտ կբուժվի։ Իսկ գալով պաշտոնին, երևելի պաշտոմ էր, չէ՞, մի՞թե կարծում ես, թե չեմ գրի մորս և չեմ հոգա, որ նրան մի գումար ուղարկի։

Ստիրֆորթի այս դիտավորությունը շատ վեհանձն թվաց մեզ։ Լսել էինք, որ նրա մայրը մի հարուստ այրի է և գրեթե միշտ որդու կամքը կատարող։ Մենք չափազանց ուրախացանք, Տրեդլսի պարտության վրա, իսկ Ստիրֆորթին մինչև երկինք բարձրացրինք, մանավանդ երբ նա համաձայնեց մեզ հայտնել, թե ինչ որ արել է, հատկապես մեր օգտի համար, մեծ բարիք հասցրել մեզ իր անշահասեր վարմունքով։ Սակայն ստիպված եմ ասել, որ այն գիշեր իմ վեպերից մեկը մթության մեջ պատմելիս, կարծես լսում էի մր. Մելլի հին սրնգի ձայները, որոնք սովորականից ավելի տխուր էին հնչում այս անգամ։ Ստիրֆորթը քնեց վերջապես, ես էլ պառկեցի, բայց սիրտս դեռ արտասվում էր այն լալագին ձայներից։

Բայց շատ չանցած ես մոռացա մր. Մելլին, հափշտակվելով Ստիրֆորթով, որ հոժարակամ հանձն էր առել ավանդել մեզ նրա դասերից մի քանիսը և պարապել մեզ հետ առանց դիմելու որևէ ձեռնարկի օգնության (իր ասելով՝ նա ամեն գիրք անգիր գիտեր) մինչև որ նոր ուսուցիչ գտնվեր։ Նոր ուսուցիչը մեզ մետ եկավ մի տարրական վարժարանից և պաշտոնն սկսելուց առաջ ճաշի հրավիրվեց տեսչի մոտ, որպեսզի այնտեղ ներկայացվի Ստիրֆորթին։ Ստիրֆորթը շատ հավանեց նրան և ասաց մեզ, թե եփված մարդ է։ Ես լավ չհասկացա, թե կրթության ո՞ր աստիճանն են ցույց տալիս այդ բառերը, բայց և այնպես, շատ հարգեցի նորեկին և ոչ մի վայրկյան չէի կասկածում նրա գերազանց գիտության մասին, թեև նա այն խնամքի քառորդ մասն էլ չէր ընծայում նվաստիս, ինչ որ ընծայում էր մր. Մելլը։

Այդ միջոցին դարձյալ մի անսովոր դեպք պատահեց մեր դպրոցական կյանքի ամենօրյա ընթացքում։ Նրա հիշատակը դեռ այսօր էլ կենդանի է մտքիս մեջ և հավիտյան այսպես կմնա շատ և շատ պատճառներով։

Մի երեկո, մինչ մենք մի սոսկալի տագնապի մեջ էինք, որովհետև մր. Կրիկլը չարաչար զայրացել էր, Տեոնգեն ներս մտավ և իր սովորական կոպիտ ձայնով ասաց.

– Մարդիկ են եկել Կոպպերֆիլդին տեսնելու։

Նա և մր. Կրիկլը մի քանի բառ փոխանակեցին իրար հետ որոշելու համար, թե ո՞ր սենյակում պետք է ընդունել հյուրերին։ Շվարմունքից սիրտս մարելու վրա էր այդ բանակցության ժամանակ։ Ինձ պատվիրեցին, որ հետևի սանդուղքով վերև գնամ մաքուր շապիկ հագնելու և ապա իջնեմ հյուրասենյակը։ Կատարեցի այդ պատվերը մի այնպիսի հապճեպ կերպով, որ անկարելի է նկարագրել։ Արդյոք ովքե՞ր են եկողները, մտածում էի ես։ Մի՞թե մր. Մեորդստոնը և իր քույրը։ Կամ թե գուցե մայրի՞կս է։ Այս վերջին ենթադրությամբ շոյված՝ ես ետ քաշեցի ձեռքս հյուրասենյակի դռան փականքից, որ արդեն բռնել էի, և լաց եղա մի քանի վայրկյան, ապա թե ներս մտնելու սիրտ առա։

Սկզբում ոչ ոք չերևաց ինձ, բայց երբ դռան հետևը մի շարժում լսելով ետ նայեցի, հիացմունքով տեսա մր. Պեգգոտիին և Հեմին, որոնք գլխարկներն իջեցնելով ու բարձրացնելով ողջունում էին ինձ և իրար հրում։ Ակամա ծիծաղեցի, սակայն ավելի նրանց տեսնելուս զվարճությունից, քան տարօրինակ շարժումներից։ Մենք սրտանց իրար աջ մեկնեցինք, սակայն ես դեռ այնքան սաստիկ էի քրքրջում, որ ի վերջո պետք եղավ ինձ թաշկինակս հանել, որ արտասուքս սրբեմ։

Մր. Պեգգոտին, որ ամբողջ ժամանակ, ինչքան հիշում եմ, բերանն անգամ չէր բացել, շատ հուզվեց, արտասուքս տեսնելով, և Հեմին կամաց մշտեց, որ գեթ նա սկսի մի բան ասել։

– Կտրիճ կացեք, մաստր Դեվի,– ասաց Հեմը պարզ ժպիտով։– Համա մեծացել եք, հա՜։

– Մի՞թե մեծացել եմ,– հարցրեցի ես, աչքերս նորից սրբելով։

Լալուս պատճառը երևի թե այն խնդությունն էր, որ զգում էի հին բարեկամներիս տեսնելուց։

– Արևս վկա, մեծացել եք, մաստր Դեվի,– ասաց Հեմը։– Մեծացել է, այնպես չէ՞, ապեր։

– Այո՛, շատ է մեծացել,– հաստատեց մր. Պեգգոտին։

Նրանք երկուսն էլ, իրար նայելով, ծիծաղեցին, ես էլ միացա այդ ծիծաղին և քիչ էր մնացել՝ նորից լայի։

– Մայրիկս ինչպե՞ս է, մր. Պեգգոտի,– հարցրի ես։– Առո՞ղջ է։

– Փառք աստծու, շատ առողջ,– պատասխանեց մր. Պեգգոտին։

– Իսկ իմ սիրելի պառավ Պեգգոտի՞ն։

– Լավից լավ։

– Իսկ փոքրիկ Էմլի՞ն։

– Հիանալի։

– Իսկ մրս. Գըմի՞ջը։

– Նա էլ առողջ է։

Որոշ ժամանակ լուռ մնացինք։ Այս լռությունն ընդհատելու համար մր. Պեգգոտին գրպաններից հանեց երկու ահագին խաչափառ, մի վիթխարի խեցգետին, մի քանի մանր կարիտոս, և այս բոլորը Հեմի ձեռքերի վրա դիզեց։

– Երբ մեզ մոտ էիք, մաստր Դեվի, կարծեմ սիրում էիք այս բաները,– ասաց մր. Պեգգոտին։– Ահա մենք էլ համարձակվեցինք բերել։ Գիտե՞ք, պառավ Գըմիջն է խաշել. . . Ինքն է խաշել, մաստր Դեվի,– կմկմաց մր. Պեգգոտին, կարծես ակամա երկարացնելով խոսքը, որովհետև դժվարանում էր ուրիշ ասելու բան գտնել։– Այո՛, պառավ Գըմիջը ինքն է խաշել, հավատացեք, և ինչո՞ւ չպիտի խաշեր։

Ես շնորհակալություն հայտնեցի։ Մր. Պեգգոտին Հեմին աչքով անելուց հետո,– որ ապուշի պես ժպտում էր ու խեցեմորթներին մտիկ տալիս և չէր շտապում ազատել քեռուն նեղ դրությունից,– ասաց.

– Եվ այսպես, մաստր Դեվի, ծովի ետ քաշվելուց և հաջող քամուց օգտվելով, նավակ նստեցինք և Գրևզընդ եկանք։ Եվ ինչո՞ւ չգայինք։ Քույրս գրել էր, որ եթե Գրևզընդ գամ, անպատճառ այստեղ հանդիպեմ և մաստր Դեվիին տեսնեմ և շատ-շատ ողջույն հայտնեմ իր և ամբողջ ընտանիքի կողմից և ասեմ, որ բոլորն էլ տանը, փառք աստծու, առողջ են, շատ առողջ,– թող միամիտ լինի մաստր Դեվին։ Իսկ երբ որ վերադառնամ, գիտեք, կերթամ կպատմեմ Էմլիին, թե ահա եկա, տեսա և փառք աստծու լիովին առողջ գտա ձեզ. նա էլ բոլորն իմ քրոջը կգրի, և մենք բոլորս կուրախանանք։

Ես սրտանց շնորհակալ եղա և փոքր-ինչ կարմրելով ասացի, թե երևի փոքրիկ Էմլին արդեն բավական փոխված կլինի այն օրից, երբ մենք միասին կոպիճներ ու խեցիներ էինք հավաքում ծովափին։

– Ինչ ասել կուզի,– գոչեց մր. Պեգգոտին։– Նա շուտով կին կդառնա։ Ահա սրան հարցրեք։

Նա ակնարկեց Հեմին, որ զվարճությունից վառված դեմքով հաստատական նշան արեց և աչքերը խեցիներին հառեց։

– Եվ ինչպե՛ս սիրուն է,– ասաց մր. Պեգգոտին, և նրա աչքերը ցոլացին։

– Եվ ինչպե՛ս գիտուն,– վրա բերեց Հեմը։

– Եվ տեսնեիք, ինչպես է գրում, մաստր Դեվի,– ասաց մր. Պեգգոտին։– Գրած տառերը սև սաթի պես են և այնպես խոշոր, որ որտեղից էլ նայես, կտեսնես։

Քաղցր էր լսել, թե մր. Պեգգոտին ինչպիսի հիացմունքով էր խոսում իր փոքրիկ սիրելիի մասին: Ահա այս րոպեիս էլ տեսնում եմ խոժոռ ու մազոտ և սիրավառ հպարտությամբ փայլող դեմքը, որ անզոր եմ նկարագրել: Ազնիվ աչքերն կարծես ներքին կրակից կայծակում են ու վառվում: Լայն կուրծքն ուրախ-ուրախ բարձրանում է և իջնում: Եռանդից բռունցքները սեղմվում են՝ խոսելիս այնպես է շեշտում ասածներն իր ջլապինդ աջ բազկով, որ կարծես դարբնի մուրճ լիներ իմ գաճաճ տեսությամբ:

Հեմն էլ հուզված էր քեռու նման: Անշուշտ շատ բան կպատմեին նրանք Էմլիի մասին, եթե չքաշվեին Ստիրֆորթից, որ հանկարծ երգելով ներս մտավ և տեսնելով որ խոսում եմ մի անկյունում երկու անծանոթ անձերի հետ, ընդհատեց երգը և ասաց. «Ես չգիտեի Կոպպերֆիլդ, որ դուք այստեղ եք» (եկվոր հյուրերը սովորաբար մի ուրիշ սենյակումն էին ընդունվում): Ասաց և ուզում էր հեռանալ:

Բայց ես նրան բռնեցի, ինքս էլ չգիտեմ, թե ինչո՞ւ: Արդյոք ուզում էի պարծենա՞լ նրա նման մի ընկերոջով, պատմել նրան, թե ինչպե՞ս եմ մր. Պեգգոտիի բարեկամությունը վաստակել,– ինչևիցե, բռնեցի նրան և ասացի մտերմաբար (սակայն, աստված իմ, ինչպես եմ հիշում այս բոլորն այնքան տարիներ անցնելուց հետո).

– Աղաչում եմ, Ստիրֆորթ, մի հեռացեք: Սրանք Յարմաուտցի նավավարներ են, երկուսն էլ բարի ու լավ մարդիկ և դայակիս ազգական. այժմ եկել են ինձ տեսնելու Գրևզընդից:

– Ի՞րավ,– ասաց Ստիրֆորթը շուռ գալով:– Շատ ուրախ եմ տեսնելու դրանց: Բարով եք եկել:

Նրա ողջ վարմունքի մեջ մի այնպիսի անբռնազբոսիկ դրություն կար, մի այնպիսի հրապուրիչ շնորհ, որին անկարելի էր դիմադրել: Նրա նուրբ ձևերը, առույգ տեսքը, զվարթ ձայնը, գեղեցիկ դեմքն ամենքի վրա ազդում էին մի թովչական զորությամբ, որ շատերին հատուկ չէ: Ես նկատեցի, որ նա իսկույն երկուսին էլ դուր եկավ, և ուրախ էի, որ նրանք պատրաստ են նույն րոպեին իրենց սիրտը բանալ նրա առջև:

– Երբ որ ձերոնց նամակ գրեք, մր. Պեգգոտի,– ասացի ես,– խնդրեմ գրեցեք, որ միստր Ստիրֆորթը շատ բարի է դեպի ինձ, և թե չգիտեմ՝ ի՞նչ կանեի այստեղ առանց նրա:

– Դատարկ խոսքեր,– ասաց Ստիրֆորթը ծիծաղելով:– Խնդրեմ չգրեք այդպիսի բան:

– Եվ եթե մր. Ստիրֆորթը մի օր Նորֆոլկ կամ Սուֆոլկ գա, մր. Պեգգոտի,– շարունակեցի ես,– վստահ եղեք, որ ես անպատճառ նրան Յարմաութ կբերեմ ձեր տունը ցույց տալու համար: Ստիրֆո՛րդ, մի այնպիսի սիրուն տուն դուք երբեք չեք տեսել: Նավակից է շինված:

– Մի՞թե նավակից,– ասաց Ստիրֆորթը:– Ուրեմն մի իսկական նավարարի վայել տուն է:

– Այդպես էլ է, սըր, հենց այդպես,– հաստատեց Հեմն աղմկալի ծիծաղելով:– Ձեր ասածը ճշմարիտ է, երիտասարդ ջենտլմեն: Մաստր Դեվի, ջենտլմենի ասածը բոլորովին ճշմարիտ է: Իսկական նավավար: Եվ դեռ ինչպե՞ս իսկական: Փնտրեք էլ՝ նմանը չեք գտնի: Արևս վկա:

Մր. Պեգգոտին էլ քեռորդուց պակաս չէր հրճված Ստիրֆորդի հաճոյական խոսքերից, բայց համեստությամբ թույլ չտվեց նրան այդպիսի շունդով ընդունել հատուկ իր անձին վերագրված պատիվը:

– Այո, սըր,– ասաց նա և գլուխ տվեց, համեստ-համեստ ժպտալով ու փողպատի ծայրերը անդրավարտիքի տակ մտնցնելով,– շնորհակալ եմ, սըր, շատ շնորհակալ: Անում եմ ինչ-որ միայն կարող եմ անել իմ հասարակ կոչման մեջ:

– Ամենալավ մարդն էլ դրանից ավել չի անի, մր. Պեգգոտի,– ասաց Ստիրֆորթը, որ արդեն գիտեր բարեկամիս անունը:

– Հավաստի եմ սըր, որ դուք էլ միշտ այդպես եք անում,– ասաց մր. Պեգգոտին,– և, հուսով եմ, միշտ հաջող: Շնորհակալ եմ, սըր: Շատ շնորհակալ ձեր մարդասեր ընդունելության համար: Ես մի անտաշ կոպիտ մարդ եմ, սըր, բայց հավատացեք, շիտակ մարդ եմ. գոնե կարծում եմ,

թե շիտակ եմ, հասկացա՞ք։ Իմ տնակը մի առանձին տեսնելու բան չէ, բայց նրա դռները միշտ բաց կլինեն ձեր առջև, երբ էլ կամենաք մեզ շնորհ բերել մաստր Դեվիի հետ միասին։ Սակայն, ներեցեք... ես մի կատարյալ խխունջ եմ,– ասաց մր. Պեգգոտին, ուզենալով իմացնել իր ծանրաշարժ լինելը, որովհետև ամեն մի խոսքից հետո ուզում էր գնալ և դարձյալ ակամա կանգնած էր մնում տեղում։– Դե, մնաք բարով, երկուսիդ էլ աստված առողջ ու երջանիկ պահի։

Հեմն էլ միևնույն մաղթանքը կրկնեց, և մենք շատ սրտագին հրաժեշտ առանք նրանցից։ Այդ երեկո ես ուզում էի Էմլիի մասին մի քանի բան պատմել Ստիրֆորդին, բայց չհամարձակվեցի անունը տալ վախենալով թե ընկերս կծաղրի ինձ։ Երկար ժամանակ և բավական անհանգիստ մտածում էի մր. Պեգգոտիի այն խոսքերի մասին, թե Էմլին արդեն կին դառնալու վրա է, և վերջ ի վերջո որոշեցի, թե դրանք անմիտ խոսքեր են։

Մր. Պեգգոտիի բերած խեցեմորթները հենց այն երեկո թաքուն վերև տարանք և մի փառավոր ընթրիք սարքեցինք։ Սակայն Տրեդլսն այս անգամ էլ բախտ չունեցավ։ Խեցգետինը վնասեց նրան, և նա ամբողջ գիշեր ցավ քաշեց։ Առավորյան նրան ստիպեցին մի սև դեղ ու հատիկներ ընդունել, և այնպիսի քանակով, որից Դիմպլի վկայությամբ (սա բժշկի որդի էր), նույնիսկ ձիու կազմվածքը կքայքայվեր և բացի այդ՝ նրան մի լավ ծեծեցին և հունարեն Ս. Գրքից վեց գլուխ թարգմանելու պատիժ տվին, որովհետև չէր կամեցել հիվանդության պատճառն ասել։

Կիսամյակի մնացած մասն ամենօրյա պայքարի ու ճգնության անվերջ շարք էր մեր դպրոցական կյանքի մեջ։ Ամառն անցավ, նրան հաջորդեց հով առավոտներով աշունը, երբ ատելի զանգակը անկողնուց դուրս էր քշում մեզ. այլևս մի քանի շաբաթ, և ահա վրա հասան ձմեռվա ցուրտ ու խոնավ գիշերները, երբ միևնույն զանգակը դեպի անկողին էր քշում մեզ։ Առավոտյան՝ մթապատ և վատ տաքացրած սերտարան. երեկոյան՝ դարձյալ նույն սերտարանը՝ միանգամայն սառցարան, ուր մենք ցրտից սարսռում էինք ու դողում։ Ահա իրար հաջորդած նախաճաշեր, ճաշեր և ընթրիքներ – մեկ խաշած և մերթ տապակած գառան միս, կոշտ հաց, կծված կարագ, զզգզված դասագրքեր, ջախջախված քարետախտակներ, արտասվաթոր տետրակներ, քանոնի ու ճիպոտի հարվածներ, ապտակներ, փետված մազեր, անձրևային կիրակիներ, ճարպալից պուդինգներ և թանաքով տոգորված գարշ մթնոլորտ։

Լավ եմ հիշում, թե ինչպես ձմեռվա արձակուրդի հեռավոր գաղափարը, որ երկար ժամանակ մի անշարժ կետ էր թվում, սկսեց հետզհետե մոտնել մեզ և աճել, թե ինչպես ժամանակն ամիսներով հաշվելուց հետո՝ շաբաթներով և օրերով սկսեցինք հաշվել. թե ինչպես սկսեցի երկյուղ կրել, թե արդյոք տուն կդարձնե՞ն ինձ, և թե որքան ուրախացա, երբ Ստիրֆորթը հայտնեց, թե **անպատճառ** կարձակեն։ Բայց ե՞րբ կգա այդ արձակման երջանիկ օրը։ Գալող շաբաթ, այս շանաթ, վաղը չէ՝ մյուս օր, վաղը, այսօր, այս երեկո,– և ահա նստած եմ Յարմաութ տանող կառքի մեջ և գնում եմ դեպի տուն։

Կառքումն էլ քունս ընդհատվում է դպրոցական կյանքի խառնափնթոր պատկերների երազով։ Սակայն զարթնելով, դուրս նայելով տեսնում եմ, որ շրջակայքը Սալեմ Հոուսի բակը չէ, և որ ականջիս հնչող ձայնը Տրեդլիսն ապատակ տվող մր. Կրիկլի ձայնը չէ, այլ կառապանի, որ քշում է ձիերին։

Ը. գլուխ
Արձակուրդը և մանավանդ մի երջանիկ երեկո

Արշալույսին հասանք իջևան, ուր կառքը կանգ առավ, և մենք մի հյուրանոց մտանք, բայց ոչ այն, ուր ապրում էր իմ բարեկամ սպասավորը։ Ինձ տարան մի փոքրիկ մաքուր սենյակ, որի դռան վրա գրված էր՝ Դելֆին։ Շատ ցուրտ էր, և ես մրսում էի, չնայած ինձ համար

պատրաստված տաք թեյին, որ դրել էին սեղանի վրա, վառարանի կրակի մոտ։ Այս պատճառով հաճությամբ մտա «Դելֆինի» անկողինը, վերմակը վրաս քաշեցի և քուն եղա։

Մեր բարեկամ մր. Բարկիսը գալու էր իմ հետևից առավոտյան ժամը իննին։ Ես վեր կացա ութին և դեռ նրա գալուց առաջ արդեն պատրաստ էի։ Կարճատև քնից գլուխս դեռ պտույտ էր գալիս։ Մր. Բարկիսն ինձ այնպես դիմավորեց, որ կարծես թե մեր վերջին բաժանումից հետո հինգ րոպե էլ անցած չլիներ, և կամ թե ես մի վայրկյան միայն հյուրանոց մտած լինեի մի փոքրիկ արծաթ մանրելու և կամ մի ուրիշ չնչին բան հոգալու համար։

Հենց որ արկղս ու ես կառք մտանք և կառապանը իր տեղը նստեց, ծույլ ձին սովորական քայլով առաջ գնաց։

– Շատ եք դրստվել, մր. Բարկիս,– ասացի ես, կարծելով թե խոսքերս նրան դուր կգան։

Մր. Բարկիսը թևով սրբեց երեսը և հետո նայեց այդ թևին, ասես թե իր կարմրության հետքը վրան փնտրելով, բայց մի ուրիշ պատասխանի արժանի չարավ իմ կոմպլիմենտը։

– Արդեն կատարել եմ ձեր պատվերը, մր. Բարկիս,– ասացի ես։– Գրել եմ Պեզգոտիին։

– Աա՛,– ասաց մր. Բարկիսը։

Նա վատ էր տրամադրված և չոր-չոր էր պատասխան տալիս։

– Մի՞թե լավ չարի, որ գրեցի, մր. Բարկիս,– հարցրի ես մի թեթև վարանումից հետո։

– Ի՞նչ,– ասաց մր. Բարկիսը։

– Չէ՞ որ պատվիրել էիք նամակ գրել։

– Նամակ գրելը գուցե լավ էր,– ասաց մր. Բարկիսը,– բայց բան դուրս չեկավ։

Առանց հասկանալու նրա միտքը, զգուշությամբ հարցրի.

– Ի՞նչ բան դուրս չեկավ, մր. Բարկիս։

– Ոչինչ դուրս չեկավ,– ասաց նա, կողմնակի վրաս նայելով։– Ոչ մի պատասխան։

– Ուրեմն սպասում էիք պատասխանի՞, մր. Բարկիս,– հարցրի ես՝ աչքերս մեծ-մեծ բանալով, որովհետև կառապանի խոսքից մի նոր լույս ծագեց մտքիս մեջ։

– Երբ մարդ ասում է, թե ուզում է,– ասաց մր. Բարկիսը, աչքերը կամաց վրաս ուղղելով,– ասել է, թե պիտի սպասի մի պատասխանի։

– Ուրեմն, մր. Բարկիս...

– Ուրեմն,– ասաց մր. Բարկիսը, աչքերը ձիու ականջներին դարձնելով,– ես էլ մինչև այժմ սպասում եմ պատասխանին։

– Այդ մասին խոսե՞լ եք նրա հետ. մր. Բարկիս։

– Ո՛չ... ո՛չ... – փնթփնթաց նա մտածկոտ։– Ո՛չ խոսել եմ, ո՛չ էլ կխոսեմ այդ մասին։ Վեց բառ անգամ չեմ ասի նրան։ Եվ ինչպե՞ս ասեմ ես ինքս։

– Կուզե՞ք ես կասեմ, մր. Բարկիս։

– Եթե ուզենաք, ասացեք,– ասաց մր. Բարկիսը, նորից վրաս նայելով,– ասացեք, թե Բարկիսը սպասում է պատասխանի։ Բայց ի՞նչ է նրա անունը։

– Նրա անո՞ւնը։

– Այո,– ասաց մր. Բարկիսը, գլուխը շարժելով։

– Պեզգոտի։

– Մկրտությա՞ն անունն է, թե ազգանունը,– հարցրեց մր. Բարկիսը։

– Մկրտության անունը Կլարա է, իսկ Պեգգոտի ազգանունն է։

– Մի՞թե,– ասաց մր. Բարկիսը։

Նա կարծես, թե մտածության մի անսպասելի նյութ գտավ այդ պարագայի մեջ և երկար ժամանակ լուռ մնաց, մտմտալով ու հևալով։

– Դե լավ,– ասաց նա վերջապես։– Ուրեմն կասեք. «Պեգգոտի, Բարկիսը սպասում է պատասխանի»։ Նա կհարցնի. «Ո՞ր բանին»։ Դուք կասեք. «Այն բանին, ինչ-որ քեզ հայտնել եմ»։ «Ի՞նչ էիր հայտնել», կհարցնի նա։ Դուք էլ կասեք. «Բարկիսն ուզում է»։

Մր. Բարկիսը այս ճարտար թելադրությունն անելիս՝ այնքան արմունկով մշտեց ինձ, որ կողքս ցավեց։ Այնուհետև նորից դեպի ձին կախ ընկավ և այլևս ոչ մի ակնարկ չարեց մեր խոսակցության առարկայի մասին։ Միայն թե կես ժամից հետ գրպանից մի կտոր կավիճ հանեց և կառքի նստարանի վրա՝ «Կլարա Պեգգոտի» գրեց,– երևի թե հիշելու համար։

Ինչ տարօրինակ զգացում էր այն, որ հուզեց ինձ, երբ մոտեցա մեր տանը, որ սակայն իմը չէր այլևս, ուր յուրաքանչյուր առարկա մեր երջանիկ հին տունը պետք է հիշեցներ ինձ, որ, սակայն, կարծես մի անհետացած երազ էր։ Հիշեցի այն օրերը, երբ մայրիկս, ես և Պեգգոտին մեկ անձ էինք, երբ դեռ ոչ ոք չէր խառնվել մեր գործերին, և այս հիշատակն այնպես ուժով պաշարեց ինձ, որ չգիտեի՝ ուրախանա՞մ տուն գնալուս վրա, թե՞ ափսոսամ, որ Սալեմում չմնացի՝ այս բոլորը Ստիրֆորթի ընկերության մեջ մոռանալու համար։ Սակայն ես արդեն տանն էի և տերևաթափ կնձենիները ճոճվում էին աշնան հողմից, որ մռնչալով քայքայում էր որորների հին բները և նրանց բեկորները իր թևերի վրա փախցնում։

Կառապանը պարտեզի դռնակի մոտ տեղավորեց սնդուկս և հեռացավ։ Ես ծանոթ շավղով դիմեցի տան կողմը, շարունակ աչքս հառած պատուհաններին. վախենում էի, թե ահա մր. Մեորդստոնի դեմքը կտեսնեմ։ Սակայն ոչ մի դեմք չերևաց, և ես մոտենալով դռանը, առանց բախելու բաց արի ու կամաց ներս մտա։ Դեռ լույս էր։

Աստվա՛ծ իմ, ինչ մանկական հիշատակներ արթնացան իմ մեջ, երբ նախասենյակը մտնելիս՝ մայրիկիս ձայնը լսեցի, որ գալիս էր դահլիճից։ Նա անուշիկ երգում էր, երևի թե այնպես, ինչպես որ երգած կլիներ մի ժամանակ՝ ինձ իր գրկում օրորելիս։ Երգի եղանակը ինձ համար նոր էր, բայց և այնքան սրտառուչ, որ գորովս շարժվեց, և ես ընդունեցի նրան իբրև մի հին բարեկամի, որին վախուց չէի տեսել։

Մորս երգի ներդաշնակ ու տրտում եղանակից հետևեցի, որ նա մենակ է, և սուսիկ ներս մտա։ Նա նստած էր կրակի առջև և կաթ էր տալիս մի ծծկեր մանկան, նրա թաթիկը իր վզին սեղմած։ Նա անքթիթ մտիկ էր տալիս երեխայի երեսին և երգում նրա համար։ Պարզ էր, որ նա մենակ է։

– Մայրի՛կ։

Նա սոսկած և ճիչ հանեց։ Բայց ինձ տեսնելուն պես՝ «Ահ, Դավիթ ջան, իմ սիրելի, իմ անգին որդիս», և չոքելով շատ անգամ համբուրեց ինձ. հետո գլուխս մոտեցրեց գրկում հանգչող փոքրիկ էակին և նրա թաթիկը շրթունքիս դրեց։

Երանի թե նույն րոպեին մեռնեի, մեռնեի այն երջանիկ զգացումով, որով հոգիս լցված էր։ Այնուհետև կյանքիս ոչ մի վայրկյանում ես երկնքի դռանը այնպես մոտիկ չեմ եղել։

– Սա քո եղբայրն է,– ասաց մայրիկս, ինձ գգվելով։– Ա՛խ սիրելի Դեվիս, սիրուն, անգին որդյակս։

Այս ասելով նորից ու նորից համբուրեց ինձ ու վզիս փարվեց։ Այդ իսկ միջոցին Պեգգոտին վազելով ներս մտավ, մեր առջև գետին ընկավ և մի քառորդ ժամ այդ դրության մեջ մնաց խելագարի շարժումներով։

Այսպես վաղ չէին սպասել ինձ. կառապանը սովորական ժամից առաջ էր եկել: Իմացա, որ մր . Մեորդստոնը և իր քույրը հյուր են գնացել հարևանի մոտ և իրիկնապահից առաջ չպիտի ետ գան: Ինձ համար դա մի անսպասելի երջանկություն էր: Մտքովս էլ չէր անցել, թե մայրիկս, Պեգգոտին ու ես դարձյալ մի անգամ միասին կգտնվեինք իրար հետ՝ առանց ուրիշների ներկայության: Ես կարծեցի, թե հին օրերը վերադարձել են:

Միասին ճաշեցինք կրակի հանդեպ: Պեգգոտին ուզում էր ոտքի վրա ծառայել մեզ, բայց մայրիկս թույլ չտվեց և պահանջեց, որ ինքն էլ մեզ հետ սեղան նստի: Առջևս դրված էր իմ սեփական հին ափսեն՝ մի առագաստավոր մարտանավի պատկերով, որ բացակայությանս միջոցին Պեգգոտին պահել էր մի թաքուն տեղ: Իր ասելով՝ եթե հարյուր ստեռլինգ էլ իրեն տային, չէր ուզի, որ այդ ափսեն կոտրվի: Ես գտա և իմ առաջվա բաժակը՝ **Դավիթ** մակագրությամբ, ինչպես և իմ փոքրիկ պատառաքաղն ու դանակը, որ այլևս չէր կտրում:

Ճաշի ժամանակ հարմար դատեցի մր. Բարկիսի մասին խոսք բանալ Պեգգոտիի առջև, բայց ես ասելիքս դեռ չէի ավարտել, երբ նա սկսեց ծիծաղել և երեսը գոգնոցով ծածկեց:

– Պեգգոտի,– ասաց մայրիկս,– ի՞նչ է պատահել քեզ:

Պեգգոտին ավելի ամուր ծիծաղեց և գոգնոցն այնպես վերև քաշեց, որ ոչ միայն երեսը, այլ գլուխն էլ նրա մեջ, ինչպես մի տոպրակի մեջ, անհետացավ:

– Ի՞նչ ես անում, ա՛յ գիժ կին,– ասաց մայրս զուր փորձելով ետ քաշել նրա գոգնոցը և նմանապես ծիծաղելով:

– Ա՛յ ախմախ մարդ,– գոչեց Պեգգոտին:– Նա ուզում է պսակվել ինձ հետ:

– Ինչո՞վ է ախմախ: Իմ կարծիքով նա լավ մարդ կլիներ քեզ համար,– նկատեց մայրս:

– Է՛հ, չգիտեմ,– ասաց Պեգգոտին:– Էլ մի հարցնեք: Եթե նա ոսկուց էլ ստեղծված լիներ, ես չէի ուզի նրան: Ոչ ոքի էլ չեմ ուզում:

– Ուրեմն ինչո՞ւ չես հայտնում նրան, որ չես ուզում,– ասաց մայրս:

– Հայտնել նրա՞ն,– գոչեց Պեգգոտին, գոգնոցի տակից դուրս նայելով:– Բայց նա այդ մասին մի բառ անգամ չի ասել ինձ: Եվ լավ է անում, որ չի ասում: Երևի գիտի, թե ինչ ապտակ կստանար ինձանից:

Պեգգոտիի երեսը կրակի նման վառվել էր, բայց նա կրկին գոգնոցով ծածկեց և նորից քրքիջ հանեց: Այսպես արեց երեք անգամ և հետո միայն շարունակեց ճաշը:

Ես նկատեցի, որ թեպետ մայրիկս ծիծաղում է Պեգգոտիի վրա նայելիս, բայց ավելի լուրջ ու մտախոհ է, քան առաջ: Այս փոփոխությունը հենց սկզբից դիպել էր աչքիս: Նրա երեսը, թեև առաջվա պես սիրուն էր, բայց արդեն գունատ էր ու հոգսերով մաշված, իսկ նիհար ու սպիտակ ձեռքերի կաշին համարյա թե թափանցիկ էր: Սակայն մի ուրիշ փոփոխություն էլ դիպավ աչքիս. այդ նրա խոսելու և շարժվելու եղանակն էր, որ այժմ անհանգիստ ու երերուն էր դարձել: Վերջապես նա աջը մեկնեց և հավատարիմ հին աղախնու ուսին դնելով՝

– Պեգգոտի, սիրելիս, դու հո մարդու չե՞ս գնա,– ասաց:

– Ե՞ս, ե՞ս մարդու գնամ,– գոչեց Պեգգոտին, աչքերը չռելով:– Տերը փրկի, ազատի:

– Այժմ էլ հո չե՞ս գնա,– կրկնեց մայրս:

– Երբեք,– աղաղակեց Պեգգոտին:

Մայրս նրա ձեռքը բռնեց և ասաց.

– Մի թողնիր ինձ, Պեգգոտի: Մնա իմ մոտ: Գուցե երկար չանի այդ: Ի՞նչ պիտի անեմ ես առանց քեզ:

– Ես ձեզ թողնե՞մ, սիրելի տիկին։ Տեր ողորմյա,– գոչեց Պեգգոտին։– Ինչ էլ որ տան ինձ աշխարհում, ձեզ չեմ թողնի։ Եվ որտեղի՞ց է ձեր փոքրիկ գլուխը մտել այդ բանը։

Պեգգոտին գիտեր երբեմն այնպես խոսել մորս հետ, կարծես թե նա երեխա լիներ։ Մայրս միայն շնորհակալություն հայտնեց և ուրիշ բան չասաց, իսկ Պեգգոտին շարունակեց արագ-արագ և տաք-տաք.

– Ես ձեզ թողնե՞մ։ Խնդրեմ ասացեք, ո՞ր քամին ձեր խելքին փչեց այդ բանը։ Պեգգոտին քեզնից հեռանա՞։ Այ տեսնելու բան։ Ո՛չ, ո՛չ, ո՛չ,– ասաց Պեգգոտին, գլուխը ցնցելով և ձեռքերը կրծքին ծալելով։– Ո՛չ, Պեգգոտին չի հեռանա, միամիտ կացեք, սիրելի՛ս։ Ես գիտեմ, կան այստեղ այնպիսի կատուներ, որոնք կուրախանան, եթե նա փախչի. բայց նա չի փախչի և այդ ուրախությունը չի տա նրանց։ Իհարկե, դժգոհ կմնան, բայց ես հողել եմ նրանց գլուխը, ես մինչև պառավելս չեմ բաժանվի ձեզանից։ Իսկ երբ պառավեմ, խլանամ, կուրանամ, թուլանամ, բոլորովին անպետք դառնամ, կերթամ իմ Դեվիի մոտ ու կխնդրեմ, որ ինձ իր մոտ ընդունի։

– Եվ ես ուրախությամբ կընդունեմ քեզ, Պեգգոտի,– ասացի ես։– Վստահ եղիր, որ թագուհու պես կընդունեմ քեզ։

– Հոգյակ իմ, ես այդ գիտեմ,– գոչեց Պեգգոտին։– Աստված քո սիրտն անարատ պահի։

Եվ նա առաջուց համբուրեց ինձ՝ իմ ապագա ասպնջակության համար։ Հետո նորից գլուխը գոգնոցով ծածկեց և էլի մի անգամ կուշտ ծիծաղեց մր. Բարկիսի հասցեին։ Այդ էլ վերջացնելուց հետո՝ իր գիրկն առավ երեխային և որոշ ժամանակ զգվեց նրան։ Հետո սեղանը հավաքեց և ապա նա եկավ՝ արդեն մի ուրիշ գլխանոցով, ձեռագործի տուփը թևի տակ բռնած, հետն էլ մետրը և մոմի կտորը. իսկ և իսկ առաջվա պես։

Նստեցինք կրակի առջև և սկսեցինք զվարթ-զվարթ խոսել իրար հետ։ Ես պատմեցի, թե ինչպիսի խիստ տեսուչ է մր. Կիրկլը, և ունկնդիրներս հոգով-սրտով ցավակցություն հայտնեցին ինձ։ Պատմեցի, թե որ աստիճան լավ տղա է Ստիրֆորթը և ինչպես նա ինձ տեր է կանգնում, և Պեգգոտին ասաց, թե սիրով պատրաստ է քսան մղոն հետիոտն անցնել, միայն թե կարենար տեսնել նրան։ Փոքրիկ մանուկը որ արթնացավ, ես նրան գիրկս առա ու փայփայեցի։ Իսկ երբ նա նորից քուն մտավ, հանդարտ նստեցի մորս մոտ, ինչպես որ անում էի երբեմն, փարվեցի գրկին, վառված այտս ուսին դրի, և նրա սիրուն մազերը դարձյալ հրեշտակի թևի նման հովանի եղան իմ գլխին... Արդարև ես երջանիկ էի։

Վառարանի հանդեպ, բորբոքուն կրակի զանազան ձևերը դիտելով, այսպես նստած միջոցիս թվում էր ինձ, թե ոչ մի ժամանակ չեմ հեռացել մեր տանից, թե մր. Մեորդստոնը և միս Մեորդստոնը ճիշտ այդպիսի ձևեր են և բոցերը մարելուն պես կանհետանան, և թե իմ հիշած բաներից ոչ մեկը իրականում գոյություն չունի, բացի մորիցս, Պեգգոտիից ու ինձնից։

Պեգգոտին մի գուլպա էր կարկատում, քանի որ կարող էր բան տեսնել. հետո ձախ ձեռքը գուլպայի մեջ մտցրած և աջով ասեղը բարձր բռնած սպասեց, մինչև որ կրակը նորից վառվի։ Չեմ կարող հասկանալ, թե Պեգգոտին ո՞ւմ գուլպաներն էր միշտ կարկատում, կամ որտեղի՞ց էր առաջ գալիս այդ՝ կարկատանի կարոտ գուլպաների անսպառ, անվերջ պաշարը։ Իմ մանկության հենց առաջին օրերից տեսել էի նրան ձեռագործի այդ տեսակով միայն զբաղված, և ոչ երբեք մեկ ուրիշով։

– Շատ կուզենայի իմանալ,– ասաց Պեգգոտին, որ խոսելու մարմաջ զգալով սովոր էր միանգամայն անսպասելի բաներ հարցնել,– կուզենայի իմանալ, թե ի՞նչ է անում Դեվիի տատը։

– Տեր ողորմյա,– ասաց մայրս մտմտուքից սթափվելով։– Այդ ի՞նչ հիմար հարցմունք է։

– Հիմար է, թե հիմար չէ, բայց իրավ կուզեի իմանալ։

– Որտեղի՞ց միտքդ ընկավ այդ տատը։ Մի՞թե հիշելու ուրիշ մարդ չկար։

– Ինքս էլ չգիտեմ՝ որտեղից,– ասաց Պեգգոտին։ Իմ հիմար գլուխը մտքեր ընտրել չգիտի։ Երբ կամենան, գալիս են, երբ կամենան՝ հեռանում։ Ցանկալի էր իմանալ, թե ի՞նչ եղավ այն տատը։

– Շատ անմիտ ես, Պեգգոտի,– կրկնեց մայրս։– Մի՞թե կցանկանայիր, որ նա նորից այստեղ գար։

– Աստված փրկի, ազատե,– գոչեց Պեգգոտին։

– Ուրեմն այդպիսի անախորժ բաներ մի՛ էլ հիշի։ Միս Բեթսին երևի փակվել է իր ծովեզրյա տնակում և այնտեղ էլ կմնա։ Համենայն դեպս չեմ կարծում, որ նորից գա մեզ վրդովելու։

– Ես էլ եմ կարծում, թե չի գա,– ասաց Պեգգոտին՝ այս անգամ մտամոլոր եղանակով։– Հարկավ չի գա… Միայն կուզենայի իմանալ, թե մեռնելիս ի՞նչ կթողնի Դեվիին։

– Իրավ խենթ ես, Պեգգոտի, որ այդպիսի բաներ ես անցկացնում մտքովդ։ Մի՞թե չգիտես, որ մեր Դեվիի ծնվելն անգամ զայրացրել էր այդ տատին։

– Իսկ այժմ հո ավելի շատ բարկացած կլինի Դեվիի վրա,– ասաց Պեգգոտին։

– Իսկ ինչո՞ւ անպատճառ այժմ։

– Որովհետև այժմ եղբայր ունի։

Մայրիկս սկսեց լաց լինել ու նեղանալ Պեգգոտիի վրա, որ համարձակվում էր այսպիսի բան ասել։

– Ինչո՞վ է հանցավոր քո դեմ այս անմեղ մանուկը,– գոչեց նա։– Ի՞նչ վատություն է արել քեզ և կամ ուրիշին, ա՛յ նախանձոտ Պեգգոտի։ Ա՛յ անամոթ։ Դու ավելի լավ կանեիր, եթե մարդու գնայիր… Ինչպե՞ս է նրա անունը… այն մր. Բարկիսին։ Եվ ինչո՞ւ չես ուզում նրան։

– Չեմ ուզում, որովհետև այդ բանը շատ կուրախացներ միս Մեորդստոնին,– վրա բերեց Պեգգոտին։

– Ի՛նչ չար ես, Պեգգոտի,– ասաց մայրս։– Մի՞թե ծիծազելի չէ, որ այդքան նախանձում ես միս Մեորդստոնին։ Ուզում ես, որ բոլոր բանալիները քո ձեռքին լինեն և ամբողջ տնտեսությունը ինքդ վարես։ Հասկանում եմ քո միտքը։ Բայց մի՞թե չգիտես, որ միայն մեզ սիրելուց է տնտեսությունը հանձն առել, դու գիտես, և լավ գիտես, թե նա որքան բարի է։

– Կորչի նրա բարությունը,– փնթփնթաց Պեգգոտին, ավելացնելով և մի ուրիշ խոսք, որի միտքը չհասկացա։

– Հասկանում եմ ասելիքդ, ա՛յ պնդերես կին,– շարունակեց մայրս։– Քեզ էլ հայտնի է, Պեգգոտի, որ ես լավ եմ հասկանում։ Ուրեմն ինչպես դու չես կարմրում ամոթից։ Այժմ դարդդ միս Մեորդստոնն է, Պեգգոտի։ Այո՛, այդ չես կարող ուրանալ։ Սակայն մի՞թե հարյուր անգամ չես լսել նրանից, որ ես, իր կարծիքով, շատ անհոգ եմ և… և շատ…

– Եվ շատ սիրուն,– թելադրեց Պեգգոտին։

– Դիցուկ թե,– ասաց մայրիկս կես-ժպիտով։– Ես ինչո՞վ եմ մեղավոր, որ իմ մասին այդպիսի հիմար կարծիք ունեն։

– Ո՞վ է ասում, թե մեղավոր եք։

– Հարկավ ոչ ոք։ Չէ՞ որ հարյուր անգամ լսած կլինես նրանից, թե հատկապես դրա համար է ուզում ազատել ինձ տնտեսության հոգսերից։ Նրա կարծիքով ես ընդունակ չեմ տան գործերը հոգալու։ Ես ինքս էլ հո վստահ չեմ, թե կարող եմ հոգալ։ Եվ չե՞ս տեսնում, որ առավոտվանից մինչև գիշեր ոտքի վրա է և անդադար պտույտ է գալիս, միշտ դիտելով ամեն բան, մտնելով ամեն ծակ ու ծուկ, ածխատուն, մառան, սարդափ, շտեմարան և չգիտեմ, թե էլ ո՞ւր, և դու համարձակվում ես բամբասել, թե նա մեզ նվիրված չէ։

– Ամենևին չեմ բամբասել,– ասաց Պեգգոտին։

– Ինչպե՞ս չէ,– կշտամբեց նրան մայրիկս։– Քո բանն ու գործը միայն այդ է, այդ քեզ զվարճություն է պատճառում։ Իսկ երբ խոսում ես մր. Մեորդստոնի բարի-բարի դիտավորությունների մասին...

– Այդ մասին ոչ մի ժամանակ չեմ խոսել։

– Այո, չես խոսել, բայց շարունակ հեգնել ես,– ասաց մայրիկս։– Եվ այդ է քո վատ կողմը։– Դու անդադար հեգնում ես։ Այս րոպեիս ասացի, որ հասկանում եմ քեզ, Պեգգոտի, և կարդում եմ սրտիդ մեջ եղածը, ինչպես ինքդ էլ լավ գիտես։ Մր. Մեորդստոնի բարի-բարի դիտավորությունների մասին խոսելիս՝ փոխանակ հեգնելու նրան, ինչպես որ միշտ սովոր ես անել (մինչդեռ գիտեմ, որ սրտիդ խորքում հարգում ես նրան),– դու ինձ նման պիտի համոզված լինես, որ նրա դիտավորություններն ու նպատակները բոլորովին ազնիվ են։ Եթե փոքր-ինչ խիստ է վարվում մեկի հետ... դու հասկանում ես ինձ։ Պեգգոտի, Դեվին էլ անշուշտ կհասկանա, որ խոսքս իր մասին չէ... կհասկանա, որ այդ խստության նպատակն է օգտավետ լինել այն մեկին։ Ինչպես որ նա ինձ է սիրում, այնպես էլ սիրում է այն մեկին և նրան բարիք կամենում։ Իսկ թե ո՞րն է բարի, ո՞րն է չար, նա հարկավ ինձնից ավելի լավ գիտի, որովհետև հաստատակամ, խոհուն ու լուրջ տղամարդ է, իսկ ես մի թույլ, անմիտ, թեթևսոլիկ արարած եմ։ Եվ որքա՞ն չարչարվում է իմ պատճառով,– շարունակեց մայրիկս, և նրա այտերը սրտից հոսող արտասուքով թրջվեցին։– Ես շատ ու շատ երախտապարտ եմ դեպի նա և պարտավոր ամեն բանում հնազանդվել նրան, հոգով-սրտով հնազանդվել։ Սակայն մեկ տեսնեիր, Պեգգոտի, թե որքան եմ մաշվում ու կշտամբում ինձ, որ չեմ կարողանում լավ կատարել այս սրբազան պարտքերը։ Այս պատճառով ես թշվառ եմ համարում ինձ և չգիտեմ ի՞նչ անեմ։

Պեգգոտին գուլպայի կրունկն իր կզակին դնելով, լուռ նայում էր կրակին։

– Է՛հ, Պեգգոտի,– ասաց մայրիկս, ձայնը փոխելով,– էլ չկռվենք իրար հետ, ես չեմ կարող թշնամություն համբերել։ Դու իմ հավատարիմ ընկերն ես։ Եթե երբեմն ծիծաղելի, անամոթ, ու խենթ եմ անվանում քեզ, ապա բոլորի իմաստը միայն այն է, որ դու հավատարիմ ընկեր ես, միշտ էլ ինձ ընկեր ես եղել՝ սկսած այն երեկոյից, երբ մր. Կոպպերֆիլդը առաջին անգամ տուն բերեց ինձ, և դու պարտեզի դռնակի մոտ իմ գալուստը ողջունեցիր։

Պեգգոտին չհապաղեց ընդունել այս հաշտության դաշինքը, որ և կնքվեց մի ջերմ ու պինդ համբյուր տալով ճակատիս։ Ես կարծում եմ, թե հենց սկզբից, հասկացել էի վերոհիշյալ խոսակցության իմաստը, իսկ այժմ հավաստի եմ, որ բարեսիրտ Պեգգոտին դիտությամբ էր գրգռում մայրիկիս, որպեսզի նա, հանդիմանելով աղախնուն, սիրտը փոքր-ինչ հովացնի։ Եվ նա հասավ իր նպատակին, որովհետև մայրիկս արդեն հանգիստ էր, և Պեգգոտին չէր դիտում նրան զննող հայացքով։

Թեյից հետո, երբ Պեգգոտին կրակը բորբոքեց ու մոմերը վառեց, ես կարդացի նրան մի գլուխ կոկորդիլոսների գրքից, որ նա հանել էր իր գրպանից (չիմացա, թե մի՞շտ էր պահել գրպանում). հետո սկսեցինք Սալեմ Հոուսի մասին խոսել և վերջապես անցանք Ստիրֆորթին, որին գովելուց չէի կարողանում կշտանալ։ Մենք լիովին երջանիկ էինք, և այդ երեկոն, վերջին երեկոն, որով մանկական կյանքիս այդ շրջանը կնքվելու էր, հավիտյան անջինջ կմնա մտքիս մեջ։

Ժամը մոտ տասին անիվների դղրդյուն լսվեց։ Մենք վեր կացանք, և մայրիկս արագ ասաց ինձ, թե արդեն ուշ է, թե մր. Մեորդստոնն ու նրա քույրը խորհուրդ են տալիս, որ տղաները վաղ պառկեն, և թե ինձ էլ ժամանակն է քնելու։ Ես համբուրեցի նրան ու մի մոմ բռնած վերի հարկը բարձրացա։ Իմ ննջարանը մտնելիս լսեցի մր. Մեորդստոնի ու նրա քրոջ տուն գալը և ինձ այնպես թվաց, թե նրանք մի սառ քամի բերին իրենց հետ, որ մի վայրկյանում փչեց-տարավ մեր հին հարկի ընտանեկան ջերմությունը։

Առավոտյան նախաճաշի կանչեցին ինձ, և ես ակամա վայր իջա, որովհետև մր. Մեորդոստոնի աջը կծելուց ի վեր ոչ մի անգամ չէի տեսել նրան: Դեռ ճաշարանը չմտած՝ մի քանի անգամ կանգ առա, ետ դարձա, նորից իջա. բայց վերջապես պետք էր մտնել, և մտա:

Նա կանգնած էր մեջքը կրակին դարձրած. միս Մեորդստոնը թեյ էր ածում: Մր. Մեորդստոնը ինձ տեսնելով շիտակ վրաս նայեց, բայց ոչ մի շարժումով ցույց չտվեց, թե ճանաչում է ինձ:

Րոպեական վարանումից հետո մոտեցա նրան և ասացի.

– Ներեցեք, սըր, շատ եմ ափսոսում արարքիս համար և հուսով եմ, որ կներեք ինձ:

– Գոհ եմ, որ զղջացել ես, Դավիթ,– ասաց նա:

Նա մեկնեց ինձ այն ձեռքը, որ ես կծել էի: Աչքս ակամա մի վայրկյան հառած մնաց այն կարմիր սպիի վրա, որ դեռ երևում էր. սակայն ես սպիից ավելի կարմրեցի, երբ նրա խոժոռ դեմքն աչքիս դիպավ:

– Բարով ձեզ, օրիորդ,– ասացի ես, միս Մեորդստոնին դիմելով:

– Ա՛հ,– հառաչեց միս Մեորդստոնը և մատների փոխարեն թեյի քամիչը մեկնելով ինձ, հարցրեց. – Որքա՞ն է տևում ձեր արձակուրդը:

– Մեկ ամիս, օրիորդ:

– Ո՞ր օրվանից սկսած:

– Այսօրվանից:

– Ուրեմն արդեն կարելի է մեկ օրն անցած համարել,– ասաց միս Մեորդստոնը:

Նա առավ օրացույցը և մատիտով գծեց այդ օրը, և այնուհետև ամեն առավոտ հաշվից հանում էր մի-մի օր: Սկզբում, մինչև տասը թվին հասնելը, այս գործողությունը տհաճությամբ էր կատարում, բայց տասից հետո հաճությամբ, իսկ վերջին թվերին հասնելիս՝ զվարճությամբ:

Հենց գալուս առաջին օրը դժբախտություն ունեցա չարաչար վախեցնելու միս Մեորդստոնին, թեև նրա երկաթե սիրտն այդպիսի թուլության ենթակա չէր: Ես մտա այն սենյակը, ուր նա նստած էր մորս հետ: Փոքրիկ մանուկը, որ մի քանի շաբաթական էր, հանգչում էր մորս գոգում: Զգուշությամբ վերցրի նրան և սկսեցի գգվել: Հանկարծ միս Մեորդստոնը այնպես ճվաց, որ քիչ էր մնում մանուկն ընկներ իմ գրկից:

– Ի՞նչ եղավ ձեզ, սիրելի Ջեննի,– գոչեց մայրս:

– Տեր իմ աստված, մի՞թե չես տեսնում, Կլարա,– աղաղակեց միս Մեորդստոնը:

– Ի՞նչ տեսնեմ, որտե՞ղ տեսնեմ:

– Ա՛յ տես, տղան վերցրեց երեխային:

Միս Մեորդստոնը քար էր կտրել սարսափից, բայց և այնպես տեղից թռավ ու վրաս նետվելով, գրկիցս խլեց երեխային: Հետո սիրտը գնաց, դալկացավ. նրան կեռասի օշարակ տվին: Ուշքի որ եկավ, հանդիսաբար հրամայեց ինձ, որ ոչ մի առթիվ և երբեք չհամարձակվեմ եղբորս դիպչել, և խեղճ մայրիկս, որի ցանկությունը հարկավ այդ չէր, հեզաբար նրա արգելքը հաստատեց, ասելով.

– Ձեր պահանջը, հարկավ հիմնավոր է, սիրելի Ջեննի:

Մի ուրիշ անգամ էլ, երբ երեքս միասին նստած էինք, այդ իսկ անմեղ մանուկը (որին սաստիկ սկսել էի սիրել մորս սիրուն) միս Մեորդստոնի ահեղ բարկության պատճառ դարձավ: Մայրիկս նայում էր իր ծնկների վրա պառկած երեխայի աչքերին:

– Դեվի, հապա մոտեցիր,– ասաց նա ինձ և իմ աչքերի մեջ էլ նայեց:

Միս Մեորդստոնը մի կողմ դրեց իր ուլունքը:

– Իրավ, որ իրար շատ նման են,– ասաց մայրս մեղմ ձայնով։– Սրանց աչքերն իմի պես են, գույնն էլ ճիշտ իմի գույնն է։ Ի՛նչ զարմանալի նմանություն։

– Այդ ի՞նչ բանի մասին ես խոսում, Կլարա,– հարցրեց միս Մեորդստոնը, տեղից բարկությամբ վերկենալով,– դու, կարծեմ, երբեմն խելքդ իսպառ թռցնում ես։

– Սիրելի Ջեննի,– թոթովեց մայրս։

– Այո, բոլորովին թռցնում,– կրկնեց միս Մեորդստոնը։– Ո՞ւմ մտքով երբևիցե կանցներ իմ եղբոր երեխային քո որդու հետ համեմատել։ Ի՞նչ նմանություն։ Նմանության հետք էլ չկա։ Բոլորովին տարբեր են, ամեն բանով տարբեր, միշտ էլ տարբեր կմնան։ Ես չեմ ուզում այստեղ նստել և այդպիսի համեմատություններ լսել։

Ասաց և սիգաճեմ դուրս գնաց, դուռը հետևից շրխկացնելով։

Կարճ ասած՝ ես ցանկալի չէի միս Մեորդստոնին, ոչ ոքի էլ ցանկալի չէի։ Ինձ իրոք սիրողները չէին համարձակվում սեր արտահայտել, իսկ ատողներն այդ զգացումն այնպես պարզ էին ցույց տալիս, որ մնում էի վարանած և ապուշի նման միշտ անշնորհք ու տրտում։

Տեսա, որ ես ամենքի համար բեռ եմ, ինչպես նրանք էլ ինձ համար։ Իմ պատճառով տան հանգստությունը խանգարվել էր։ Հենց որ ես ներս էի մտնում նրանք խոսակցության միջոցին, փոքր-ինչ առաջ զվարթ երևացող մորս դեմքը հանկարծ վշտի ամպով սքողվում էր։ Եթե մր. Մեորդստոնի տրամադրությունը լավ լիներ, իմ երևալը միանգամից նրան կաշկանդում էր. իսկ եթե միս Մեորդստոնը որևէ բանից դժգոհ լիներ, ինձ տեսնելով ավելի էր զայրանում։ Հասկանում էի, որ մայրիկս նրանց շրջանում մի զոհ է, որ նա չի համարձակվում ինձ սեր ցույց տալ, որովհետև վախենում է, որ նրանք կվիրավորեն և հետո իրեն կհանդիմանեն։ Նա հարատև տագնապի մեջ էր, երկյուղ կրելով, որ կամ ինքը մի դառնություն կհասցնի նրանց և կամ թե ես մի որևէ տհաճության տեղի կտամ։ Իմ ամենաթեթև շարժումից անգամ նա դողալով մտիկ էր տալիս նրանց աչքին։ Ուստի ես վճռեցի ըստ կարելույն հեռու մնալ նրանց շրջանից, և այսպես իմ տխուր ննջարանում առանձնացած՝ ամեռվա շատ ու շատ ժամեր անցկացրի, որևէ գիրք կարդալով։

Երբեմն-երբեմն, երեկոյան դեմ, իջնում էի Պեգգոտիի խոհանոցը և նրա հետ ժամանակ անցկացնում։ Այնտեղ սիրտս հանգիստ էր, ես ազատ էի շունչ քաշում։ Սակայն այս հնարներից ոչ մեկն էլ դահլիճի բնակիչներին դուր չէր գալիս։ Այնտեղ տիրող հալածանքի ոգին երկուսիս վրա էլ արգելք դրեց։ Իմ ներկայությունը դեռ անհրաժեշտ էր մորս կրթությունը լրացնելու համար, ուստի և չէր կարելի թույլ տալ ինձ, որ բացակա լինեմ։

Մի երեկո, մինչ ուզում էի սովորությանս պես ճաշից հետո հեռանալ, մր. Մեորդստոնն ասաց .

– Դավիթ, ես շատ դժգոհ եմ, որ դու միշտ մռայլ ես։

– Եվ արջի նման մռմռան,– ավելացրեց միս Մեորդստոնը։

Ես գլխիկոր կանգնած էի։

– Մեկ ընդմիշտ իմացիր, Դավիթ,– շարունակեց մր. Մեորդստոնը,– որ մռայլ ու դաժան բնութից վատ բան չկա։

– Եվ դրա նման ստամբակ ու համառ տղա՝ ես օրումս չեմ տեսել,– նկատեց քույրը։– Սիրելի Կլարա, կարծեմ դու էլ դիտել ես այդ։

– Խնդրեմ ներեցեք, սիրելի Ջեննի,– ասաց մայրիկս,– սակայն վստա՞հ եք... ներեցեք համարձակությանս... արդյոք հավաստի՞ եք, որ լավ եք ճանաչում Դեվիին։

– Զարմանում եմ, Կլարա, քո հարցումից,– պատասխանեց միս Մեորդստոնը։– Ես ինքս ինձից կամաչեի, եթե չկարողանայի որևէ տղայի, քոնի և կամ ուրիշի, բնավորությունը հասկանալ։

Շատ խորատես լինելու հավակնություն ես չունեմ, բայց, փառք աստծո, առողջ խելքից հո զուրկ չեմ։

– Անտարակույս, սիրելի Ջեննի, ձեր խելքը շատ թափանցող է։

– Ո՛չ, ո՛չ։ Խնդրեմ, Կլարա, այդպիսի բաներ մի՛ ասի,– գոչեց բարկությամբ միս Մեորդստոնը։

– Սակայն գիտեմ, և ամեն մարդ գիտի,– շարունակեց մայրիկս,– որ դուք շատ կորովի խելքի տեր եք։ Եվ ես այնքան օգուտ եմ քաղում ձեր խելքից (գոնե պարտավոր եմ օգուտ քաղել), որ ոչ ոք չի կարող ինձնից ավելի ճանաչել նրան։ Ուստի եթե հանդգնում եմ կարծիք հայտնել...

– Ասել, թե ես չեմ հասկանում քո որդուն,– ընդհատեց միս Մեորդստոնը, իր դաստակի շղթան շարժելով։– Դիցուկ թե, Կլարա, չեմ հասկանում։ Դիցուք թե այդ էակն անհասանելի է իմ տկար մտքին։ Բայց գուցե եղբորս սուր միտքն ընդունակ լինի ըմբռնելու դրա բնավորությունը։ Եվ կարծեմ նա հենց այդ մասին էլ մտադիր էր բան ասել, երբ մենք կոպիտ կերպով նրա խոսքի թելը կտրեցինք։

– Կլարա,– ասաց մր. Մեորդստոնը ծանր ու լուրջ եղանակով,– կարծում եմ, որ մի այդպիսի խնդիր քննելու համար այստեղ կարող էին քեզնից ավելի իրազեկ դատավորներ գտնվել և քեզնից ավելի անաչառ։

– Էդուարդ,– ասաց մայրս հեզաբար,– տարակույս չկա, որ ամեն խնդրում դու ավելի ձեռնհաս դատավոր ես, քան թե ես։ Այդպես է և Ջեննին։ Ես ուզում էի միայն ասել. . .

– Դու միայն թե թույլ, անիմաստ բան ասացիր, սիրելիս։ Խնդրեմ այսուհետև զգուշացիր և ավելի ուշադիր եղիր ասածդ բանին։

Մորս շուրթերը դողացին։ Կարծես թե ուզում էր ասել. «Այո, այո, սիրելի Էդուարդ», բայց ոչինչ չպատասխանեց։

– Ցավում եմ, Դավիթ,– ասաց մր. Մեորդստոնը, վրաս շիլ-շիլ նայելով,– որ դու այդպիսի դաժան ու մռայլ բարք ունես։ Ես չեմ կարող հանդուրժել, որ իմ առջև այդպիսի բնավորություն զարգանա, և պետք կհամարեմ մի դարման գտնել դրա դեմ։ Դու էլ աշխատիր ուղղվել։ Մենք բոլորս կաշխատենք։

– Ներեցեք, սըր,– թոթովեցի ես։– Գալուցս ի վեր դաժան կամ մռայլ չեմ եղել։

– Ստախոսության մի՛ դիմիր, սըր,– գոչեց նա մի այնպիսի զայրույթով, որ մայրս մեքենաբար ձեռք մեկնեց ինձ՝ մեզ իրարից բաժանելու համար։– Դու գիտությամբ ես առանձնանում քո սենյակը, գիտությամբ ես ջոկվում մեզնից, մինչ պարտական ես այստեղ լինել, և ոչ այնտեղ։ Այս է ահա իմ պատվերը։ Բացի այս, պահանջում եմ, որ դու միշտ հնազանդ ու հլու լինես։ Դու հո ինձ ճանաչում ես, Դավիթ։ Ասածս պիտի կատարվի։

Միս Մեորդստոնը մի խռպոտ քրքիջ արձակեց։

– Ես պահանջում եմ,– շարունակեց մր. Մեորդստոնը,– որ դու խոնարհ, պատրաստակամ ու արթուն լինես իմ առջև, Ջեննի Մեորդստոնի առջև և մորդ առջև։ Չեմ կամենում, որ մի մանկական քմահաճույքով խույս տաս, խորշես այս սենյակից, իբրև մի ժանտահար տեղից։ Նստի՛ր։

Նա հրամայեց ինձ իբրև մի շան, ես էլ հնազանդվեցի իբրև շուն։

– Էլի մի բան,– ասաց նա։– Նկատել եմ, որ ստոր ու գռեհիկ ընկերության հակամետ ես։ Արգելում եմ քեզ ծառաների հետ ընկերանալ։ Խոհանոցը չի բարվոքի այն բազմաթիվ թերություններդ, որ ուղղվելու կարոտ են։ Գալով այն կնոջը, որ քեզ շարունակ երես է տալիս, բան չեմ ասի. քանի որ ինքդ էլ, Կլարա,– շարունակեց նա մորս դիմելով,– հին սովորությամբ և անտեղի ֆանտազիայով մի այնպիսի համակրություն ես շնորհում նրան, որ վաղուց պետք էր դեն ձգել։

– Անհասկանալի, աններելի մոլորություն,– գոչեց միս Մեորդստոնը։

– Կասեմ միայն,– ասաց մր. Մեորդստոնը, խոսքը վերստին ինձ ուղղելով,– թե ինձ ախորժելի չէ մրս. Պեգգոտիի հետ ընկերանալդ և թե դու պարտավոր ես ետ քաշվել այդ տեսակ ընկերություններից։ Այժմ, Դավիթ, դու ինձ լավ ես հասկանում և գիտես, թե ինչ կլինի հետևանքը, եթե հրամանս բառ առ բառ չկատարես։

Ես այդ հետևանքը գիտեի գուցե նրա կարծածից լավ, գոնե մորս վերաբերմամբ, ուստի և կետ առ կետ կատարեցի հրամանը։ Այնուհետև իմ սենյակը չէի քաշվում, այլևս Պեգգոտիի մոտ ապաստան չէի որոնում, այլ ամեն օր և երեկո նստում էի դահլիճում, անհամբեր սպասելով, որ գիշերը վրա հասնի և իրավունք ունենամ ննջարանս մտնելու։

Ի՜նչ սոսկալի բռնադատություն էր ամբողջ ժամերով միևնույն դիրքը պահպանել, անշարժ նստել, որպեսզի առիթ չտամ միս Մեորդստոնին տրտնջալու, թե իր հանգիստը խանգարում եմ, ինչպես որ միշտ սովոր էր անել՝ հենց որ փոքր-ինչ ձեռքս կամ ոտքս շարժեի. չհամարձակվել մինչև անգամ աչքս բարձրացնել, վախենալով, որ չհանցիպի մի բծախնդիր ու արհամարհոտ հայացքի, որ պատրաստ էր գանգատվելու նոր առիթ գտնել իմ մեջ։ Ի՜նչ անտանելի, դժնակ բան էր նստել, լսել ժամացույցի միակերպ չիկ-չիկը. շարունակ դիտել միս Մեորդստոնի ուլունքների դերձանի վրա անցվելը. մտքով հարցնել, թե արդյոք ե՞րբ նա մարդու կերթա, և եթե գնա, ո՞վ կլինի այդ թշվառ մարդը. վերջապես վառարանի զարդերը համրել և որմերի գույնզգույն վիժակները մտամոլոր աչքի անցնել։

Որքա՜ն ձանձրալի էին իմ միայնակ զբոսանքները ձմեռվա վատ եղանակին, տղմուտ, ցեխոտ շրջակայքում, ուր երևակայությամբ հետս էի տանում մեր դահլիճը՝ հանդերձ միս Մեորդստոնի, այդ ճնշիչ բեռով, որ չէի կարողանում թոթափել, այդ գարշելի ճիվաղով, որ ընկճում, խեղդում, բթացնում էր իմ միտքը։

Որքա՜ն ճաշեր ես կերա տագնապալից լռությամբ, միշտ զգալով, թե մի ավելորդ ափսե կա, և դա իմն է. մի ավելորդ ախորժակ կա, և դա իմն է. մի ավելորդ բաժին կա, և դա իմն է. մի ավելորդ աթոռ կա, և դա իմն է. մի ավելորդ մարդ է նստած, և այդ ես եմ։

Ի՜նչ երեկոներ... երբ ճրագները վառելուն պես հրամայում էին ինձ մենակ պարապել։ Ինձ արգելված էր որևէ հետաքրքրական գիրք կարդալ, և ես չարաչար մաշվում էի անմարսելի, ծանր ու չոր թվաբանական խնդիրների վրա, որոնց թվերն ու չափերը երգի էին փոխվում մտքիս մեջ, որոնց օրենքներն ու կանոնները չէին ուզում գլուխս մտնել, և կամ մի ականջովս մտնում էին և մյուսով դուրս թռչում։

Որքա՜ն հորանջներ էի արձակում՝ հակառակ իմ ջանքերին. որքա՜ն ցնցումներ զսպում, հանկարծական նիրհ զգալիս։ Ինչպե՜ս կարճ էին պատասխան տալիս իմ պատահական հարցերին։ Ինչպե՜ս չնչին ու աննշան, բայց և նեղիչ զրոյի տեղ էին դնում ինձ, և որքա՜ն ես սփոփվում էի, երբ ժամը ինը խփելուն պես՝ միս Մեորդստոնը հրամայում էր ինձ. գնա քնի՜ր։

Այսպես դանդաղ, համր անցավ արձակուրդը։ Վերջապես մի առավոտ միս Մեորդստոնն ասաց.

– Վերջին օրն էլ ահա հասավ։

Եվ այս ասելով. վերջին բաժակ թեյը տվեց ինձ։

Այս անգամ մայրական տնից բաժանվելը սրտիս դառը չէր թվում։ Ես ընկել էի մի անզգա թմրության մեջ, որից փոքր-ինչ սթափվեցի Ստիրֆորթին տեսնելու մխիթարիչ հույսով, թեպետ և մր. Կրիկլն էր նշմարվում նրա պատկերի հետևից։ Ահա դարձյալ մր. Բարկիսը պարտեզի դռան մոտ և դարձյալ միս Մեորդստոնի սաստիկ ձայնը. «Կլարա», երբ որ մայրս կռացավ ինձ համբուրելու և բարի ճանապարհ մաղթելու։

Ես էլ համբուրեցի թե՛ նրան և թե՛ մանուկ եղբորս և վերին աստիճանի տրտմեցի, բայց ոչ թե այն պատճառով, որ նրանից հեռանում եմ. մեզ բաժանող անդունդը վաղուց արդեն բացված

էր և ամեն օր լայնանում էր... Շատ ջերմ էր, շատ սրտագին նրա համբույրը, սակայն դարձյալ դա չէ, որ մինչև այսօր վառ է մնացել մտքիս մեջ, այլ մի ուրիշ բան, որ հաջորդեց այդ համբույրին։

Ես արդեն կառք էի նստել, երբ լսեցի մայրիկիս ձայնը, որ կանչում էր ինձ։ Շուռ եկա. նա մենակ էր պարտեզի դռան մոտ՝ երեխային բարձր բռնած, որպեսզի կարողանամ նրան տեսնել։ Եղանակը ցուրտ էր, բայց հանդարտ, և մորս գլխի ոչ մի մազը և հանդերձի ոչ մի ծալքը չէր շարժվում, մինչ նա աչքերը վրաս բևեռած նայում էր, փոքրիկ մանկանը բարձր բռնած։

Այդ դրության մեջ կորցրի նրան։ Այդ դիրքով տեսա նրան հետո երազիս մեջ, պանսիոնում։ Լուռ և անշարժ կանգնած էր անկողնուս մոտ, երեխային ամուր գրկած, վրաս ակնապիշ նայելով։

Թ. ԳԼՈՒԽ
Մի անմոռանալի ծննդյան օր

Լռում եմ այն բոլորի մասին, ինչ որ պատահեց միչև մարտ ամսի կեսերը, այսինքն՝ իմ ծննդյան տարեդարձը։ Սակայն չեմ էլ կարող մտաբերել մի ուրիշ բան, բացի այն, որ ես սկսել էի ավելի հափշտակվել Ստիրֆորթով։ Կիսամյակի վերջերը, եթե ոչ ավելի վաղ, նա դպրոցը պիտի թողներ։ Այժմ նա ինձ ավելի անկախ, ավելի զվարթ ու սրամիտ էր երևում, ուրեմն ավելի գրավիչ, քան թե առաջ. էլ ուրիշ բան չեմ հիշում։ Այդ միջոցին տեղի ունեցած ահագին դեպքի հիշատակը կարծես կլանել, ջնջել է մյուս բոլոր անցքերի հետքը, որպեսզի միայն ինքը մտքումս վառ մնա։

Դժվարանում եմ մինչև անգամ հավատալ, թե Սալեմ Հոուս ետ գալուս օրից մինչև այդ տարեդարձի օրը ճիշտ երկու ամիս անցած լիներ։ Կարող եմ միայն ենթադրել, թե դա մի եղելություն է, եթե ոչ՝ կմնար կարծել, թե արձակուրդի և այդ դեպքի միջև ոչ մի անջրպետ չի ընկել և մեկ դեպքն անմիջապես հետևել է մյուսին։

Այն օրվա եղանակն անգամ միտքս է։ Դեռ ծծում եմ այն մեզը, որ ամեն բան պատել էր. նշմարում եմ նրա միջով այն եղյամը, որ սավանով ծածկել էր ամեն ծառ ու շինություն. զգում եմ խոնավ մազերիս կպչելն այտերիս. տեսնում սեղանների երկար շարքը կիսամութ սերտարանում, ճրագների աղոտ լույսը, որ անզոր է առավոտյան ստվերները փարատել և տղաների շնչից գոյացաղ ոլորապտույտ գոլորշին պաղ օդում, մինչ նրանք շփշփում են պաղ ձեռքերը և ոտներով դոփում գեթ փոքր-ինչ տաքանալու համար։

Նախաճաշից հետո նոր էինք զբոսավայրից վերադարձել, երբ մր. Չարպը ներս մտավ և ասաց .

– Դավիթ Կոպպերֆիլդ, ձեզ հարցնում են։ Հյուրասենյակը գնացեք։

Ես սպասում էի Պեգգոտիի ընծայաբեր կողովին և երեսս կարմրեց այդ հրամանը լսելիս։ Հենց որ շտապով վեր կացա, ընկերներիցս մի քանիսը հիշեցրին, որ չմոռանամ իրենց համար էլ բաժին հանել կողովից։

– Այդքան մի՛ շտապեք, Կոպպերֆիլդ,– ասաց մր. Չարպը,– դեռ ժամանակ ունեք, սիրելիս, շատ մի՛ շտապեք։

Նրա խոսքերի գորովալիր եղանակն անպատճառ կզարմացներ ինձ, եթե ժամանակ ունենայի ուշք դարձնելու նրա վրա։ Վազելով հյուրասենյակը գնացի։ Այնտեղ սեղանի առջև նստած էր մր. Կրիկլը իր ճիպոտով ու լրագրով. այնտեղ էր և մրս. Կրիկլը, մի բաց նամակ ձեռքին բռնած։ Կողով չկար։ Մր. Կրիկլը նախաճաշ էր վայելում։

– Դավիթ Կոպպերֆի՛լդ,– ասաց մրս. Կրիկլը, հրավիրելով ինձ բազմոց, ինքն էլ կողքիս նստելով։– Մի բան ունեմ քեզ հայտնելու, մի առանձին բան, սիրելիս։

Մր. Կրիկլը, որին ես երկչոտ աչքով դիտում էի, գլուխը շարժեց՝ առանց իմ վրա նայելու, և մի կտոր հաց կուլ տվեց՝ իր հառաչանքը ծածկելու համար։

– Դու մանուկ ես դեռ,– ասաց մր. Կրիկլը, և չես կարող հասկանալ, թե աշխարհս որքան փոփոխական է և մարդկային կյանքը որքան վաղանցուկ։ Սակայն, Դավիթ, բոլորս էլ կոչված ենք այս բանը փորձով հասկանալ։ Ոմանք հասկանում են դեռ մանուկ հասակում, ոմանք ծերության ժամանակ, ոմանք էլ ամբողջ կյանքի ընթացքում։

Ես ուշի-ուշով նայում էի նրան։

– Երբ դու կաղանդից հետո ուսումնարան վերադարձար,– շարունակեց նա փոքր-ինչ լռելուց հետո,– արդյոք ամենքն էլ ձեր տանը առո՞ղջ էին... Ուզում եմ իմանալ,– ասաց նա մի երկրորդ լռությունից հետո,– արդյոք մայրիկդ առո՞ղջ էր։

Ես դողացի, չգիտեմ ինչից, շարունակելով սուր-սուր դիտել նրա երեսը, սակայն առանց որևէ բան ասելու։

– Որովհետև,– ասաց նա,– ցավելով պիտի հայտնեմ, որ այս առավոտ մի նամակ ստացանք Բլենդրոտընից... Գրում են, թե մայրիկդ հիվանդ է, սիրելի Դավիթ, շա՛տ հիվանդ։

Մի մեգ իջավ մրս. Կրիկլի ու իմ միջև, և կարծես թե այդ մեգի մեջ մորս պատկերը մի վայրկյան երերաց։ Այնուհետև աչքերիցս ջերմ արտասուք վազեց։ Տիկնոջ դեմքն անշարժ էր։

– Մայրիկդ ծանր հիվանդ է,– հարեց նա։

Ես ամեն բան հասկացա։

– Վախճանվել է։

Այլևս կարիք չկար այս գույժը հայտնելու ինձ։ Ես արդեն հուսակտուր ճչում էի և գիտեի, որ որբ եմ մնացել այս աշխարհում։

Մրս. Կրիկլը շատ գթասեր էր դեպի ինձ։ Նա ամբողջ օրը իր սենյակում պահեց ինձ, երբեմն մենակ թողնելով մի վայրկյան։ Ես շարունակ լաց էի լինում և լալուց հոգնելով՝ քնում էի, իսկ զարթնելուց հետո՝ նորից սկսում լաց լինել ու հեկեկալ։ Արտասուքս բոլորովին որ քամվեց, սկսեցի մտածել, և այն ժամանակ վշտիս բեռը ավելի ծանրացավ։ Ինձ թվում էր, թե սիրտս կիզող ու կեղեքող ցավերն այլևս երբեք չեն փարատվի։

Սակայն մտքերս դեռ մոլոր էին, դեռ չէին կարող ինձ հասած թշվառության վրա ամփոփվել, այլ միայն հածում էին դրա շուրջը։ Մտածում էի մեր փակ ու լուռ տան մասին։ Մտածում էի մանկան մասին, որ մրս. Կրիկլի ասելով արդեն վաղուց հիվանդ մաշվում էր և գուցե այլևս երկար չապրեր։ Մտածում էի հորս շիրիմի մասին, մեր տան մոտի գերեզմանոցում, և պատկերացնում մայրիկիս՝ այնտեղ ննջած, ինձ լավ հայտնի ծառերի տակ։ Երբ մրս. Կրիկլն ինձ մենակ թողեց, ես կանգնեցի աթոռի վրա՝ հայելու մեջ տեսնելու, թե աչքերս որքա՞ն են կարմրել և վիշտս որքա՞ն արտահայտվել երեսիս վրա։ Մի քանի ժամ անցնելուց հետո մտածում էի, միթե արտասուքս այն աստիճան քամվե՞լ է, որ այլևս ոչ մի կաթիլ չի մնացել մայրիկիս թաղմանը թափելու համար, որին ներկա պիտի լինեի։ Հետո նկատեցի, որ տրտմությունս մի տեսակ ծանրություն է դրոշմել դեմքիս, և կարևոր գտա այս բանը, որովհետև այժմ աշակերտները մի առանձին ակնածությամբ կնայեին վրաս։

Եթե երբևէ մի տղա ընկճված է եղել անկեղծ վշտից, անշուշտ ես էի այդ տղան։ Բայց և այնպես լավ հիշում եմ, որ ծանրաթախիծ լրջությունս մի տեսակ հաճություն էր պատճառում ինձ, երբ դուրս գնացի ման գալու, մինչ ընկերներս նստած էին դասարանում։ Հենց որ նրանք թաքուն-թաքուն մտիկ էին տալիս պատուհանից, ես սկսում էի ավելի տխուր երևալ և քայլերս

համրեցնել: Դասերից հետո, երբ նրանք հետս խոսելու եկան, ես ինքս սրտիս խորքում գովեցի ինձ, որ հպարտ չեմ նրանց հետ, այդ բոլորի առջև բարեսեր ու հեզ, ինչպես և առաջ:

Հետևյալ երեկոյան մեկնելու էի դեպի տուն, բայց ոչ թե փոստի դիլիժանսով, այլ ֆարմըր կոչված ծանր կառքով, որ սովորաբար գեղջուկներին էր տանում-բերում: Մեկնելուս նախօրը գիշերը ոչ մի արկածի չպատահեցի այլևս, և ննջարան մտնելուս պես Տրեդլսը պահանջեց, որ գլխիս տակ իր բարձը դնեմ: Չգիտեմ, դրանով ի՞նչ լավություն ուզեց անել, քանի որ ես իմ բարձն ունեի. բայց խեղճ տղան ուրիշ բան չուներ ինձ տալու, բացի թերևս կմախքներով լիքը թերթիկից: Այդ էլ նա ինձ պարգևեց հրաժեշտի րոպեին, իբրև դարման վշտերիս և դյուրություն ալեկոծ սրտիս:

Հաջորդ օրը, երեկոյան դեմ, ես հեռացա Սալեմ Հոուսից: Այն րոպեին մտքովս անգամ չէր անցել, թե ընդմիշտ եմ թողում նրան: Ամբողջ գիշեր անչափ դանդաղ շարժվելուց՝ միայն առավոտյան ժամը տասին Յարմաութ հասանք: Իսկույն կառքից դուրս նայեցի մր. Բարկինսին տեսնելու, բայց նա իջևան չէր եկել: Նրա փոխարեն դիմացս ելավ սև հագած և լայնեզր գլխարկով մի գերուկ, ծանրաշունչ, զվարթերես գունդ ու կլոր ծերունի, որի գուլպաներից վեր մանր ու գունատ ժապավեններ էին կապված ծնկներին: Նա մոտեցավ կառքին ու ասաց.

– Դո՞ւք եք մր. Կոպպերֆիլդը:

– Ես եմ, սըր:

– Ուրեմն, պատանի ջենտլմեն, հաճեցեք իջնել,– ասաց նա, կառքի դռնակը բանալով:– Ես պատիվ կունենամ ձեզ դեպի տուն տանելու:

Զեռք տվի նրան զարմացած, թե ո՞վ է արդյոք այդ պարոնը, և միասին առաջ գնալով եկանք հասանք մի նեղ փողոց ու կանգ առանք մի կրպակի առջև, որի դռան ճակատին գրված էր.

«Օմր

Պաստառագործ, դերձակ, մանրավաճառ, հուղարկավորության և սգո առարկաների հայթայթիչ և այլն և այլն»:

Դա մի փոքր ու խեղդուկ կրպակ էր՝ ամեն տեսակ կարած ու չկարած շորերով լեցուն, որի մի պատուհանում սև գլխարկներ էին շարված: Մտանք հետևի փոքր սենյակը: Այնտեղ երեք նորատի աղջիկ սև զգեստներ կարելով էին զբաղված. սեղանի վրա սև կերպասներ էին դիզված և հատակը շերտերով ու ծվեններով ծածկված: Կրակարանը լավ վառված էր և օդի մեջ տաք շղարշի մղձկոտ հոտ էր տարածվում... մի հոտ, որ բոլորովին անհայտ էր ինձ մինչև այն օրը:

Երեք դեռահաս աղջիկները, որոնք ժիր-ժիր աշխատում էին, ներս մտնելուս պես գլուխները բարձրացրին և նույն րոպեին շարունակեցին իրենց գործը. կարել, կարել ու կարել: Միևնույն ժամանակ փոքրիկ բակից, ուր մի գործարան էր երևում, շարունակ հնչում էր մուրճի միակերպ թնդյունը՝ րատ-տատ-տատ, րատ-տատ-տատ:

– Տեսնենք, Միննի, ինչպե՞ս է գործը առաջ գնում,– ասաց առաջնորդս աղջիկներից մեկին:

– Շատ լավ, հայրիկ,– զվարթ-զվարթ պատասխանեց աղջիկը, առանց գլուխը բարձրացնելու:– Միամիտ կաց, ժամանակին պատրաստ կլինի:

Մր. Օմրը իր լայնեզր գլխարկը հանեց, նետեց ու հևաց: Նա այնքան գեր էր, որ ստիպված էր խոսելուց առաջ որոշ ժամանակ շունչ քաշել:

– Գոհ եմ,– ասաց նա վերջապես:

– Հայրիկ,– նկատեց Միննին հանաքով,– ինչի՞ց է, որ այդքան գիրանում ես:

– Ինքս էլ չգիտեմ, չեմ հասկանում, սիրելիս,– ասաց հայրը,– բայց զգում եմ, որ հաստանում եմ:

– Գուցե նրանից, որ դարդ չունես,– ասաց Միննին։– Կյանքդ հանգիստ, սիրտդ՝ թեթև։

– Եվ ինչո՞ւ թեթև չլինի,– նկատեց մր. Օմրը։– Ոչ մի բանից չեմ գրգռվում, գրգռվել չարժի էլ։

– Հարկավ չարժի, հայրիկ։– Մենք բոլորս փառք աստծո, ուրախ ենք, չէ՞։

– Այդպես է, այդպես, սիրելիս,– հաստատեց մր. Օմրը։– Այժմ հանգստացա և կարող եմ այս փոքրիկ աշակերտի չափն առնել։ Խնդրեմ, կրպակս համեցեք, մաստր Կոպպերֆիլդ։

Մր. Օմրի հրավերով առաջ անցա. նա մի կտոր մահուդ ցույց տվեց ինձ և ասաց. «Այնպես ընտիր մահուդը, որ միայն ծնողների վրա սուգ պահելիս կարելի է հագնել։ Հետո սկսեց չափս առնել և գրքի մեջ նշանակել։ Այս անելիս խնդրում էր ինձ ուշք դարձնել իր կրպակի տեսակ-տեսակ ապրանքներին, որոնցից մի քանիսը, իր ասելով, նոր ձևի են, նոր են սկսել լույս տեսնել և մի քանիսը արդեն հնացել և ընկել են **մոդայից**։

– Եվ այս է պատճառը, որ մենք բավական վնասվում ենք,– ասաց Օմրը։– Բայն ի՞նչ արած։ Մոդաները մարդկանց պես են։ Չես իմանում ինչո՞ւ, ե՞րբ և ինչպե՞ս են աշխարհ գալիս. չես էլ իմանում ինչո՞ւ, ե՞րբ և ինչպե՞ս են անհետանում։ Ամեն բան, իմ կարծիքով, մարդկային կյանքի նման է, եթե ուղիղ տեսակետից նայելու լինենք։

Անձնական վշտովս համակված՝ ես տրամադիր չէի խորասուզվել այդ հարցի մեջ, որ թերևս ուժիցս վեր էր։ Մր. Օմրը, ծանր հևալով աղջիկների սենյակը տարավ ինձ։ Հետո մի դռնակ բացեց, որի հետևից մի նեղ սանդուղք էր վար իջնում, և գոչեց.

– Թեյ բերեք կարագ ու հացով։

Եվ մինչ ես մտամոլոր ականջ էի դնում դրսից հնչող մուրճի ձայնին և դիտում սենյակում բանող աղջիկներին, նախաճաշը բերին մի ափսեի վրա դրված։ Ինձ համար էր։

– Ես ձեզ վաղուց եմ ճանաչում,– ասաց մր. Օմրը մի քանի րոպեից հետո, որոնց ընթացքում ես գրեթե ձեռք չտվի նախաճաշին. սև-սև իրերի պատկերը ձեռնտու չէր մարդու ախորժակը գրգռելու համար,– արդեն վաղուց եմ ճանաչում, մանուկ բարեկամ։

– Իրա՞վ, սըր։

– Գրեթե ձեր ծննդյան օրից, մինչև անգամ դրանից էլ առաջ,– ասաց մր. Օմրը։– Դուք դեռ աշխարհ չէիք եկել, որ ես ճանաչում էի ձեր հորը։ Նրա հասակը հինգ ոտնաչափ և իննուկես մատ էր, իսկ գերեզմանի խորքը քսանհինգ ոտնաչափ։

Րատ-տատ-տատ, րատ-տատ-տատ, րատ-տատ-տատ,– հնչեց դրսից։

– Այո, ճիշտ քսանհինգ ոտնաչափ, գուցե և փոքր-ինչ ավելի,– ասաց մր. Օմրը ժպտալով։ Բայց մոռացել եմ՝ ո՞վ էր այդպես ապսպրել. նա՞ ինքը, թե՞ մայրիկդ։

– Արդյոք ձեզ հայտնի չէ՞, սըր, թե ինչպես է փոքրիկ եղբայրս,– հարցրի ես։

Մր. Օմրը գլուխը շարժեց.

Րատ-տատ-տատ, րատ-տատ-տատ, րատ-տատ-տատ։

– Նա մոր գրկումն է,– ասաց նա։

– Խեղճ մանուկ։ Միթե նա՞ էլ մեռել է։

– Հարկավոր չէ անչափ տրտմել,– ասաց մր. Օմրը։– Այո՛, մանուկը մեռել է։

Բոլոր վերքերս նորից բացվեցին այս գույժից։ Ես վեր կացա և գլուխս մի ուրիշ սեղանի դեմ տվի, որ կանգնած էր անկյունում։ Սակայն Միննին դրա վրա դրված սև շորերը հավաքեց, որպեսզի իմ արտասուքով չթրջվեն։ Միննին սիրուն ու բարեսիրտ աղջիկ էր. նա քնքուշ ձեռքով ուղղեց աչքերիս վրա ընկած մազերս և ուզում էր սփոփել ինձ, սակայն ինքը շատ ուրախ էր, որ իր գործը համարյա թե վերջացնելու վրա է։

Այդ իսկ միջոցին մուրճի շաչյունը լռեց, և մի գեղեցիկ երիտասարդ ներս մտավ։ Նա ձեռքին մի մուրճ ուներ, իսկ բերանում մանրիկ գամեր, որ պետք է նախ դուրս հաներ խոսելու հնար ստանալու համար։

– Դե, Ջորեմ, քո գործը հապա ինչպե՞ս է,– ասաց մր. Օմրը։

– Շատ լավ,– պատասխանեց Ջորեմը։– Արդեն պրծա։

Միննին փոքր-ինչ կարմրեց, իսկ մյուս երկու աղջիկները ժպտալով իրար մտիկ տվին։

– Ուրեմն դու ճրագո՞վ էիր բանում այս գիշեր, մինչ ես կլուբումն էի։ Հա՞,– հարցրեց մր. Օմրը, մի աչքը խփելով։

– Այո, սըր,– ասաց Ջորեմը։ Չէ՞ որ ինքներդ ասել էիք, որ եթե գործս վաղ վերջացնեմ, զբոսանքի կերթանք, Միննին և ես... ձեզ հետ միասին։

– Հե՛, հե՛, հե՛,– ծիծաղեց մր. Օմրը հազալով։– Իսկ ես կարծում էի, թե ինձ հաշվից դուրս կհանեք։

– Որովհետև դուք այդպես էիք ասել, ես էլ գործս շուտ վերջացրի,– շարունակեց երիտասարդը։– Կուզենա՞ք տեսնել, թե ինչպես է շինված։

– Այս րոպեիս,– ասաց մր. Օմրը վերկենալով։ Եվ հետո, դառնալով ինձ, հարցրեց. – իսկ դուք, որդյակ, չէ՞իք կամենա աչքի անցնել ձեր...

– Ո՛չ, ո՛չ, հայրիկ,– ընդհատեց Միննին։

– Կարծում էի, սիրելիս, թե նրան հաճելի կլինի,– ասաց մր. Օմրը։– Սակայն գուցե քո ասածը ճշմարիտ լինի։

Չեմ կարող ասել, թե ինչպե՞ս հասկացա, որ նրանք իմ սիրելի, իմ անձկալի մոր դագաղն են տեսնելու գնում։ Ես օրումս չէի լսել, չէի էլ տեսել, թե ինչպե՞ս եմ դագաղ շինում, այնուամենայնիվ, գործարանում հնչող հարվածները լսելուս պես բանի էությունն իմացա, և երբ երիտասարդը ներս մտավ, արդեն գիտեի, թե ինչ էր նրա շինածը։

Կարն արդեն վերջացել էր։ Աղջիկներից երկուսը, որոնց անունը դեռ չգիտեի, վերկենալով՝ գոգերին կպած կտորտանքը և թելերը թափ տվին և սկսեցին կրպակը կարգի բերել։ Միննին մնաց պատրաստ շորերը երկու ահագին տուփերի մեջ դարսելու համար։ Այդ անում էր ծնկաչոք ու մի կայտառ երգ երգելով։ Ջորեմը, որ անշուշտ նրա սիրահարն էր, թաքուն ներս մտավ և համբուրեց նրան (կարծեմ բնավ ուշք չդարձնելով իմ վրա)։ Նա ասաց, թե մր. Օմրը գնացել է կառք վարձելու, ինքն էլ շտապում է պատրաստ լինել։ Ասաց ու փախավ։ Այնուհետև Միննին իր մկրատն ու մատնոցը գրպանը դրեց, սև թելով ասեղը զգուշությամբ կրծքին ցցեց, սիրուն կրկնոցն ու գլխարկը շտապով հագավ, հարդարվելով դռան հետևի հայելու առջև, որի մեջ նրա գոհ դեմքի ցոլացումը տեսա։

Այս բոլորը տեսնում էի անկյունից, ուր նստած էի սեղանի առջև՝ մտքերիս մեջ ընկղմած։ Փոքր-ինչ հետո կրպակի առջև մի կառք կանգնեց, որի մեջ նախ տուփերը դրին, հետո ես նստեցի և վերջապես մր. Օմրը՝ դստեր ու փեսայի հետ։ Կառքը նման էր այն սայլերին, որոնցով սովորաբար կահկարասիք, և կամ թե դաշնամուր են տեղափոխում. գույնը սև էր, ձին էլ սև ու երկայնապոչ։ Այդ կառքում բոլորիս համար բավական տեղ կար։

Չեմ հիշում, որ կյանքումս մի այդպիսի տարօրինակ բան զգացած լինեմ, ինչ-որ զգացի այդ խմբի մեջ գտնվելիս։ Դեռ մի անփորձ, խակ մանուկ՝ ես չէի կարող այդ մարդկանց զվարթությունն իրենց արհեստի հետ հաշտեցնել։ Նրանց համար այդ ուղևորությունը մի զբոսանք էր։ Չէի բարկանում նրանց վրա, այլ սարսափում, մտածելով, թե այնպիսի էակների մեջ եմ ընկել, որոնք բացառություն են մարդկային ազգից։ Նրանք անչափ ուրախ էին։ Ծերը նստած էր առջևից և ձին էր քշում. մյուս երկուսը նրա հետևը... և հենց որ նա մի բան էր ասում, երկուսն էլ թեքվում էին դեպի նրա գեր երեսը՝ մեկը մի կողմից, մյուսը՝ մյուսից, իբր թե

միայն նրանով լինեին զբաղված: Երբեմն ինձ հետ էլ փորձում էին խոսել, բայց ես լուռ էի՝ վերարկուիս մեջ փաթաթված, զայրանալով նրանց սիրային քծինքի ու քրքիջի վրա ու զարմանալով, թե ինչո՞ւ աստված նրանց սրտի կարծրությունը չի պատժում:

Ճանապարհին, երբ ձիուն գարի տալու համար կանգ առան, իրենք էլ լավ կերուխում սարքեցին ու քեֆ արին. ես ոչ մի բանի չդիպա և շարունակեցի ծոմ բռնել: Վերջապես երբ սկսեցինք մեր տանը մոտենալ, ես արագ վար ցատկեցի կառքի հետևից, որպեսզի մի այդպիսի ընկերության հետ չմոտենամ այն հանդիսավոր պատուհաններին, որոնք կույր-կույր նայում էին վրաս, երբեմն պայծառ, իսկ այժմ գոցված աչքերի նման:

Ահա խեղճ մայրիկիս պատուհանը և դրան կից՝ մեկ ուրիշը, որ իմն էր կոչվում մեր երջանկության օրերում: Օ՜հ, զուր էի մտատանջ եղել Սալեմ Հոուսում, թե աչքերիս արտասուքը սպառվել է:

Դեռ տան գավթին չհասած, արդեն Պեգգոտիի գրկումն էի, և նա ինձ ներս տարավ: Ինձ տեսնելուն պես հեկեկաց, բայց և իսկույն զսպելով իրեն, սկսեց ինձ հետ հանդարտ խոսել ու հուշիկ ման գալ, կարծես վախենալով, որ մեռելն անհանգիստ չլինի: Իմացա, որ նա վաղուց չի քնել և ամբողջ գիշերներով հսկել է: «Եվ չե՛մ քնի, չե՛մ թողնի խեղճ տիրուհուս, մինչև որ հողին չհանձնվի նրա մարմինը», ասում էր նա:

Մր. Մեորդստոնը ամենևին ուշք չդարձրեց իմ վրա, երբ մտա այն սենյակը, ուր նա կրակի առջև նստած էր, լռիկ-լռիկ լաց լինելով: Միս Մեորդստոնը, որ նամակներով ծածկված սեղանի մոտ զբաղված էր, չոր մատները մեկնեց ինձ և պաղ շշուկով հարցրեց.

– Չափդ արդեն առե՞լ են:

– Այո:

– Իսկ շապիկներդ բերե՞լ ես:

– Այո, միս Մեորդստոն, բոլոր իրեղեններս բերել եմ:

Եվ ուրիշ սփոփանք չլսեցի այդ երկաթե օրիորդից: Համոզված եմ, որ նա անասելի հաճույք էր զգում հանդես հանելու այն բոլորը, ինչ որ ինքնատիրություն, ամրություն, մտքի հաստատություն, պնդություն, կամքի զորություն էր անվանում,– միով բանիվ՝ իր դժնդակ բնավորության բոլոր դիվային ցուցակը: Նա պարծենում էր մանավանդ իր գործնական տաղանդով, որ և ցույց էր տալիս այս ողբալի պայմաններում, գրչի ու թանաքի վերածելով ամեն խնդիր: Ոչ մի բան չէր հուզում նրան: Այդ օրվա ամբողջ մնացորդը, հետևյալ օրն էլ՝ առավոտից մինչև երեկո, նա սեղանի առջև անսասան և անշփոթ անցկացրեց. իր կոշտ գրիչը թղթի վրա ման ածելով, ամենքի հետ սառ խոսելով, առանց դեմքի գեթ մի մկանը թուլացնելու, ձայնի գեթ մի շեշտը մեղմացնելու, հագուստի գեթ մի ծալքը կամ հյուղեն շարժելու:

Նրա եղբայրը երբեմն վերցնում էր մի գիրք, բայց տեսնում էի, որ չի կարդում: Նա հատորը բաց էր անում և ուղիղ նայում էջի վրա, իբր թե կարդալով, բայց ոչ մի թերթ շուռ չէր տալիս. հետո հանկարծ վեր էր կենում և ետ ու առաջ էր գնում: Ես ամբողջ ժամերով ձեռքերս ծալած նստում էի, դեսուդեն նայում և կամ նրա քայլերը համրում: Նա քիչ էր խոսում քրոջ հետ, իսկ ինձ հետ՝ ամենևին, և մեր տան խորհրդավոր լռության մեջ ուրիշ շարժուն բան չկար, միայն նա... և ժամացույցի ճոճանակը:

Թաղման նախորդ օրերը սակավ էի տեսնում Պեգգոտիին. միայն սանդուղքով բարձրանալիս կամ իջնելիս պատահում էի նրան այն սենյակի դռան առջև, ուր հանգչում էին մայրիկս և եղբայրս: Սակայն ամեն երեկո իմ ննջարան էր գալիս և սնարիս մոտ նստում, մինչև որ քնեմ: Կարծեմ թաղումից մի երկու օր առաջ – ես շփոթում եմ այդ տխուր ժամանակի օրերը, որոնց միակերպ ընթացքը ոչ մի բանով չէր փոխվում,– նա մորս սենյակը տարավ ինձ: Միտքս է միայն, որ մահիճը ծածկող ձյունափայլ ու թարմ սավանի տակ մեր տան սրբազան լռությունը

իբրև մարմնացած երևաց ինձ, և երբ Պեգգոտին ուզեց սավանը կամաց ետ քաշել, ես գոչեցի. «Օ՜հ, ո՛չ, ո՛չ», և նրա ձեռքը բռնեցի։

Եթե թաղման հանդեսը դեռ երեկ կատարված լիներ, դարձյալ ավելի լավ չէի հիշի։ Դահլիճի տեսքը ներս մտնելուս րոպեին, մոմերի լույսը, գինով լի շշերի փայլը, բաժակների ու պնակների ձևը, կարկանդակի անուշ բուրմունքը, միս Մեորդստոնի զգեստի հոտը և մեր սև հագուստը, այս բոլորն անջինջ է մնացել մտքումս։ Մր. Չիլիպն էլ այնտեղ էր. նա մոտենում է ինձ և ասում.

– Ինչպե՞ս եք, մաստր Դավիթ։

– Չեմ կարող ասել, թե շատ լավ, և մեկնում եմ իմ աջը, որ նա բռնում է իր աջի մեջ։

– Աստված իմ,– ասում է նա քաղցր ժպիտով ու փոքր-ինչ տամուկ աչքերով,– այս մեր փոքրիկ բարեկամներն աճելով աճում են մեր շուրջը, և այնպես շուտ, որ չես էլ կարող ճանաչել նրանց։ Չէ՞, տիկին։

Այդ հարցը նա ուղղում է միս Մեորդստոնին, որ ոչ մի պատասխան չի տալիս։

– Պետք է ասել, որ շատ բան դեպի լավն է փոխվել այստեղ։ Չէ՞, տիկին,– հարցնում է մր. Չիլիպը։

Միս Մեորդստոնը միայն հոնքերը կիտելով ու գլուխը շարժելով է պատասխան տալիս։ Շվարած մր. Չիլիպը շարունակ աջս բռնած մի անկյուն է քաշվում և բերանն այլևս բաց չի անում։

Ես նկատեցի այդ, որովհետև տուն գալուցս ի վեր ամեն բան նկատում եմ, ինչ որ կատարվում է իմ շուրջը, թեև ինքս ոչ մի բանի մասնակից չեմ։ Եվ ահա զանգակը հնչում է, և մր. Օմրն իր ընկերներով ներս են գալիս հայտնելու, թե ամեն բան պատրաստ է։ Պեգգոտին արդեն վաղուց պատմել էր ինձ, թե հորս հուղարկավորության միջոցին էլ հյուրերը միևնույն դահլիճում են հավաքված եղել։

Այդտեղ են մր. Մեորդստոնը, մեր հարևան մր. Գրայպը, մր. Չիլիպը և ես։ Մեր դուրս գնալու ժամանակ դիակներն արդեն պարտեզում են, նրանք հանդարտ տանում են առջևից՝ կնձենիների ծառուղով, անց են կենում դռան միջով և մտնում են այն հանգստարանը, ուր ես ամառ ժամանակ այնքան հաճախ ականջ էի դրել թռչունների առավոտյան դայլայլին։

Կանգնում ենք գերեզմանի շուրջը։ Այդ օրը կարծես մյուսներին ամենևին նման չէ. երկինքն էլ մի ուրիշ տեսակ է՝ մոխրագույն։ Հանդիսավոր լռության րոպեն գալիս է, միանալով այն լռությանը, որ տիրում է հողին հանձնվող դագաղում։ Կանգնած ենք գլխաբաց։ Ահա հնչում է քահանայի պարզ ձայնը. «Ես եմ հարություն և կյանք, ասե Տեր»։ Հետո հառաչանք ու լաց եմ լսում։ Մտիկ եմ տալիս. ահա մեր բարի, հավատարիմ աղախինը, այն միակ անձը, որ այժմ ինձ աշխարհիս երեսին ամենից շատ է սիրելի և որին, մանկական սրտիս վկայությամբ, մի օր աստված անշուշտ կասի. «Մուտ հուրախության տեառն քո»։

Հանդիսականների փոքրիկ խմբում շատերի դեմքը ծանոթ է ինձ. այդ դեմքերը ես շատ անգամ դիտել եմ եկեղեցում։ Նրանք դեռ այն օրից են մայրիկիս տեսել, երբ նա նոր էր գյուղ եկել իր նորափթիթ գեղեցկությամբ։ Ուշադրություն չեմ դարձնում նրանց վրա – զբաղված եմ միայն իմ վշտով,– բայց և այնպես տեսնում եմ նրանց և ամեն մեկին ճանաչում։ Տեսնում եմ հետևի շարքում և Միննիին, որ աչքով է անում իմ մոտ կանգնած նշանածին։

Վերջացած է ամեն բան։ Գերեզմանը ծածկված է, և մենք նրան թողնում ենք։ Ահա դարձյալ մեր տունը, այնպես սիրուն ու անփոփոխ, մտքիս մեջ այնպես կապված այն բոլորի հետ, ինչ-որ չկա այլևս, որ նրան տեսնելիս ցավը ավելի սաստկանում է։ Ինձ ներս են մտցնում. մր. Չիլիպը ջուր է տալիս ինձ, որ խմեմ, և երբ ասում եմ, թե ուզում եմ իմ սենյակը բարձրանալ, նա կանացի մեղմությամբ մնաս բարով է մաղթում ինձ։

Այս ամենը կրկնում եմ, կարծես երեկ է պատահել։ Շատ ավելի նոր դեպքեր մտքիս միջից սահել-անցել են դեպի այն ափը, ուր յուրաքանչյուր մոռացված բան մի ժամանակ կհիշվի, բայց այդ օրվա հիշատակը օվկիանոսի ժայռի նման կանգուն է։

Վստահ էի, որ Պեգգոտին սենյակս կգա։ Կիրակնօրյա խորհրդավոր հանգիստը (այդ օրը կիրակի էր) մեր սրտերի տրամադրությանը հարմար էր։ Նա կողքիս նստեց իմ փոքրիկ անկողնի վրա, և մեկ ձեռքս համբուրելով, մեկ շփելով, ինչպես անում էր եղբորս հետ, ամեն բան պատմեց, ինչ-որ պատահել էր այդ միջոցին։

– Վաղուց արդեն մայրիկը տկար էր,– ասաց Պեգգոտին։ Նա մաշվում էր և անբախտ էր։ Երբ փոքրիկն աշխարհ եկավ, կարծեցի, թե հիվանդը կլավանա, բայց սխալվեցի, հիվանդությունը սաստկացավ, և մայրիկս սկսեց օրեցօր նվաղել։ Երեխայի ծնվելուց առաջ նա սիրում էր մենակ-մենակ լաց լինել. իսկ հետո օրոր էր երգում նրա վրա, և այնպիսի գողտրիկ ձայնով, որ մի անգամ նրան լսելիս ես կարծեցի, թե ձայնը օդի մեջ է հնչում և դեպի երկինք սլանում։ Վերջերս ավելի երկչոտ էր դարձել, ամեն բանից վախենում էր։ Ամեն մի կոպիտ խոսք հարվածի պես դիպչում էր սրտին։ Սակայն դեպի ինձ միշտ բարի էր։ Խեղճ տիրուհիս, երբեք չէր փոխվում դեպի անշնորհք Պեգգոտին։

Այստեղ Պեգգոտին կանգ առավ և փոքր-ինչ ձեռքս շոյեց։

– Միայն մի անգամ էր, որ նորից նրան այնպես տեսա, ինչպես որ առաջ էր. այդ քո գալստյան գիշերն էր, հոգիս։ Իսկ մեկնելու օրը նա ինձ ասաց. « Էլ երբեք տեսնելու չեմ հրեշտակիս։ Այսպես է ասում սիրտս, Պեգգոտի, և գիտեմ, որ այն ճշմարիտ է»։ Այնուհետև աշխատում էր հանգիստ երևալ, և երբ այդ մարդիկ հանդիմանում էին նրան, թե անհոգ է, անճարակ է, նա հավատում էր, որ այդպես է, թեև վաղուց արդեն այդ բոլորը անցել էր։ Բայց երբեք մարդուն այն բանը չէր ասում, ինչ-որ սովոր էր ինձ ասել։ Վախենում էր ասել մարդուն։ Միայն մի երեկո, հոգին ավանդելուց մի շաբաթ առաջ, կանչեց նրան և ասաց.

«Սիրելիս, զգում եմ, որ մահս մոտեցել է։ Այժմ, Պեգգոտի, սիրտս հանգիստ է»,– ասաց նա ինձ, երբ միևնույն գիշերը ես նրան անկողին մտցրի։ «Խեղճ մարդս քիչ-քիչ կընտելանա իր վշտին և հետո ամեն բան կանցնի։ Ես շատ հոգնած եմ, Պեգգոտի։ Մի թողնի ինձ, մոտս մնա, մինչև որ քնեմ։ Օրհնվեն զավակներս։ Աստված պահե որբ որդուս»։

– Այնուհետև ես նրան մենակ չէի թողնում,– շարունակեց Պեգգոտին։– Շատ անգամ այն երկուսի հետ էլ խոսում էր, որովհետև սիրում էր նրանց։ Այդպես էր նրա բնավորությունը։ Նա չէր կարող իր մերձավորներին չսիրել։ Բայց հենց որ նրանք հեռանում էին, դեպի ինձ էր շուռ գալիս, կարծես թե միայն իր Պեգգոտիի մոտ հանգստություն գտնելով, և այնպես քնում։

Վերջին օրը, իրիկնադեմին, համբուրեց ինձ և ասաց. «Եթե փոքրիկ մանուկս էլ մեռնի, խնդրեմ նրան իմ գիրկը դիր, և թող մեզ միասին թաղեն»։ (Այդպես էլ արինք, որովհետև միայն մեկ օր ապրեց մորից հետո, խեղճ գառնուկը)։ «Թող իմ անգին Դեվին էլ մինչև գերեզման հասցնի մեզ,– ասաց նա,– և ասա նրան, որ իր մայրը, վերջին շունչը փչելուց առաջ, մի անգամ չէ, հազար անգամ օրհնեց նրան»։

Պեգգոտին դարձյալ լռեց և թեթև շփեց իմ ձեռքը։

– Կես-գիշերն արդեն անցել էր,– շարունակեց նա,– երբ հիվանդը ջուր խնդրեց, և հենց որ տվի, այնպիսի քաղցր ժպիտով նայեց վրաս, հոգյակը։ Առավոտը լուսացավ, արեգակը ծագել էր։ Այն ժամանակ նա ասաց, թե որքան մր. Կոպպերֆիլդը բարի է եղել դեպի նա, որքան հեզ, ներողամիտ։ Մայրիկդ ասաց. «Երբ որ ես կասկածում էի ինքս ինձնից, լուսահոգին կրկնում էր, թե սիրող սիրտն ավելի կարժի, քան աշխարհիս բոլոր իմաստությունը, և թե նա երջանիկ էր իմ սիրով»։

«Պեգգոտի,– ասաց մայրիկդ փոքր-ինչ հետո,– մոտեցիր ինձ, սիրելիս... ավելի մոտիկ, ավելի մոտիկ։ Գլուխս փոքր-ինչ վերցրու և դեպի քեզ շուռ տուր... Երեսդ անհետանում է իմ աչքից... ես ուզում եմ վրադ նայել»։ Այդպես էլ արի, և, ա՛հ, Դավիթ, եկավ հասավ այն րոպեն, երբ

պիտի ճշմարտվեր, ինչ-որ ասել էի քեզ մի անգամ... թե նա ուրախ կլինի իր խեղճ գլուխը հիմար պառավ Պեգգոտիի բազկի վրա դնելու... և նա մեռավ իբրև մի նիրհած մանուկ։

Այսպես վերջացավ Պեգգոտիի պատմությունը։ Մորս մահվան այս հանգամանքները լսելուս րոպեից նրա վերջին ժամանակի տեսքը անհետացավ իմ մտքից։

Այդ րոպեից ի վեր հիշողությանս մեջ նա դարձյալ պատկերանում էր իբրև այն նորատի մայրիկը, առաջին հիշատակներիցս անբաժան այն զվարթ մայրիկը, որ սիրում էր գգվել գանգուրներս և պարել ինձ հետ դահլիճում։ Պեգոտիի պատմությունը՝ փոխանակ մորս կյանքի վերջին շրջանը հիշեցնելու, նրա նախկին սիրուն պատկերը ամրապնդեց հոգուս մեջ։ Տարօրինակ կթվա այս բանը, բայց և այնպես ճշմարիտ է։ Մահվան մեջ նա թռավ անցավ դեպի իր ժպտուն երիտասարդությունը, մյուս ամեն բան ջնջվեց։

Գերեզմանում ննջող մայրը իմ մանկության մայրիկն էր. նրա գրկում հանգչող մանուկը, ես ինքս էի՝ այն մանկան նման հավիտյան փարված նրա սրտին։

Ժ. ԳԼՈՒԽ
Ինձ անտես են թողնում, հետո խնամում

Հուղարկավորության հաջորդ օրը, երբ առավոտյան լույսը նորից ազատ մեր տունը մտավ, միս Մեորդստոնը շտապով ասաց Պեգգոտիին, որ նա մեկ ամսվա ընթացքում տանից հեռանա։ Որքան էլ Պեգգոտին գարշանք զգար այդ քարասիրտ օրիորդին ծառայելուց, այնուամենայնիվ հավաստի եմ, որ իմ սիրուն լավ կհամարեր մեզ մոտ մնալ, քան մի ուրիշ տեղ ամենալավ պաշտոն վարել։ Նա ինձ ասաց, թե պիտի բաժանվենք, և բացատրեց, թե ինչու, և մենք միասին շատ սրտանց լաց եղանք։

Գալով ինձ և կամ թե ապագայիս՝ ո՛չ խոսք կար, ո՛չ էլ զրույց։ Եղբայրն ու քույրը կարծեմ ուրախ կլինեին՝ ինձ էլ մի ամսից հետո ճանապարհ դնել։ Մի օր քաջություն ունեցա հարցնելու միս Մեորդստոնին, թե ե՞րբ վարժարան կուղարկեն ինձ։ Նա չոր ու ցամաք պատասխանեց, թե գուցե բնավ էլ չուղարկեն։ Ուրիշ ոչինչ։ Շատ էի ուզում իմանալ, թե արդյոք ի՞նչ են մտադիր անել ինձ հետ. նմանապես և Պեգգոտին. բայց մեզ չհաջողվեց բան իմանալ այդ մասին։

Վիճակիս մեջ մի փոփոխություն էր առաջ եկել, որ որքան էլ ինձ հաճելի թվար ներկա դառը պայմաններում, բայց կարող էր, եթե նրան լավ հասկանայի, մեծ հոգսեր պատճառել ինձ ապագայիս նկատմամբ։ Բանն այս է, որ մինչև այժմ վրաս ծանրացող բռնությունը բոլորովին թողված էր։ Ոչ միայն չէին պահանջում, որ ժամերով տխուր նստած մնամ դահլիճում, այլ դեռ հաճախ պատահում էր, որ այնտեղ մտնելուս պես՝ միս Մեորդստոնը հոնքերը կիտելով նշան էր տալիս, որ հեռանամ։ Այլևս չէր արգելված, որ ես գոհեհիկ Պեգգոտիի հետ ժամեր անցնեմ. հարցնող էլ չկար, թե ո՞ւր եմ գնում և ի՞նչ անում. միայն թե մր. Մեորդստոնից հեռու ման գայի։ Սկզբում սաստիկ վախենում էի, թե նա նորից իր ձեռքը կառնի իմ կրթելու պաշտոնը, և կամ ինքը միս Մեորդստոնը կնվիրվի այդ գործին. սակայն տեսա, որ երկյուղս անհիմն է. նրանք իմ մասին անհոգ էին։

Չեմ ասի, թե այս գյուտը մի առանձին վիշտ պատճառեց ինձ։ Ես դեռ ճնշված էի մորս մահվան հարվածից և անտարբեր դեպի աշխարհիս բաները։ Իրավ է, երբեմն մտածում էի, թե բոլորովին ինձ անտես կթողնեն, այլևս ոչ ոք իմ մասին խնամք չի տանի և ես, անկիրթ մնալով, մի շրջմոլիկ, անտաշ ու գծուծ մարդ կդառնամ. երբեմն էլ մտածուն էի՝ այս թշվառության առաջն առնելու համար հերոսներիս նման վերկենալ փախչել և մի ուրիշ տեղ բախտ որոնել.

սակայն այս մտքերը միայն վաղանցուկ ցնորքներ էին, լոկ չինական ստվերներ, որոնք նկարվում էին իմ սենյակի որմի վրա, որպեսզի իսկույն չքանան, որմը դարձյալ մերկ թողնելով։

– Պեգգոտի,– ասացի ես մի երեկո խոհանոցում,– մր. Մեորդստոնը ոչ մի ժամանակ չի սիրել ինձ, իսկ այժմ հո բոլորովին ատում է. ուրախ կլիներ մինչև անգամ չտեսնել ինձ։

– Գուցե վշտից է,– ասաց Պեգգոտին գլուխս շոյելով։

– Բայց չէ՞ որ ես էլ վիշտ ունեմ։ Եթե իմանայի, թե պատճառը միայն վիշտն է, ոչ մի բան չէի ասի։ Բայց այստեղ մի ուրիշ բան կա, Պեգգոտի, ուրիշ բան։

– Որտեղի՞ց գիտես, թե վշտից չէ,– հարցրեց Պեգգոտին, փոքր-ինչ լռելուց հետո։

– Օ՛հ, նրա վիշտն ամենևին նման չէ իմին։ Այս րոպեին միս Մեորդստոնի մոտ նստած նա տխուր է, բայց բավական է, որ ես ներս մտնեմ և նրա աչքերում մի ուրիշ բան կերևա։

– Ի՞նչ կերևա։

– Ջայրույթ,– ասացի ես, ճակատս ակամա հայրացուիս նման կնճռոտելով։– Եթե միայն վիշտ ունենար, այդպես չար-չար չէր նայի վրաս։ Ահա ես էլ սգավոր եմ, ես էլ եմ տրտմած, բայց այս չի արգելում ինձ մարդասեր ու բարի լինել ամենքի հետ։

Պեգգոտին մի քանի վայրկյան լուռ մնաց. ես էլ լուռ-լուռ շարունակեցի մսրած մատներս վառարանի մոտ տաքացնել։

– Դեվի,– ասաց նա վերջապես։

– Ի՞նչ է, Պեգգոտի։

– Ես ամեն միջոց, ամեն հնար գործ դրի, սիրելիս, Բլենդրոտընում որևէ պաշտոն գտնելու, բայց այդպիսի բան չգտա։

– Այժմ ի՞նչ ես մտադիր անել, Պեգգոտի,– հարցրի ես տխրությամբ։– Մի՞թե կերթաս թափառելու՝ որևէ տեղ ճարելու համար։

– Կարծում եմ, Դեվի, թե ստիպված կլինեմ Յարմաութ գնալ և այնտեղ ապրել։

– Յարմաո՞ւթ,– ասացի ես, փոքր-ինչ սիրտ առնելով։– Իսկ ես կարծում էի, ո՞վ գիտե աշխարհիս որ ծայրը կթռչես։ Յարմաութը հո հեռու չէ՞, մեկ-մեկ հո կտեսնվե՞մ քեզ այնտեղ։ Դու հո բոլորովին չե՞ս թողնի ինձ, Պեգգոտի։

– Աստված չանի,– գոչեց Պեգգոտին եռանդով։– Քանի որ այստեղ ես, հոգյակ իմ, ես շաբաթը մեկ կայցելեմ քեզ։ Մինչև կյանքիս վերջը՝ շաբաթը մեկ։

Այս խոստումը մի ծանր քար գլորեց իմ սրտից, սակայն Պեգգոտին միայն դրանով չբավականացավ։

– Գիտե՞ս ինչ կա, սիրելի Դավիթ,– շարունակեց նա։– Ես ուզում եմ նախ մի երկու շաբաթով եղբորս մոտ հյուր գնալ, փոքր-ինչ հանգստանալ, խելքս գլուխս հավաքել։ Տեսնում եմ, որ այստեղ քեզ շատ կարոտ չեն։ Գուցե քեզ էլ թույլ տան ինձ հետ գնալ։

Քանի որ Պեգգոտիից բացի, մեր տանը ոչ ոք չկար, որի հետ կամենայի հարաբերություն ունենալ, նրա առաջարկը վերին աստիճանի դուր եկավ ինձ։ Քաղցր էր ինձ այն գաղափարը, թե Յարմաութի բարեկամներիս ազնիվ դեմքը նորից կտեսնեմ. ամոքիչ էր վշտերիս համար այն հույսը, թե նորից կիրակնօրյա առավոտյան անդորրությունը կվայելեմ, զանգակների անուշ հնչյունը կլսեմ, նավերի երերվելը մշուշապատ ծովի երեսին կտեսնեմ, Էմլիի հետ ափերի վրա կզբոսնեմ, ցավերս նրան կպատմեմ, նրա հետ միասին խեցիներ ու կապիճներ կհավաքեմ։ Թեպետ էլ նույն րոպեին երանական զգացումներս պղտորվեցին կասկածով, թե միս Մեորդստոնը հոժարություն չի տա մեկնելու, բայց այս տարակույսն էլ փարատվեց,

որովհետև հենց նույն երեկոյան, երբ նա եկել էր մթերանոցը զննելու, Պեգգոտին զարմանալի արիությամբ մոտեցավ նրան ու իր միտքը բացատրեց։

– Ի՞նչ պիտի անի այնտեղ։ Ծուլությո՞ւն,– ասաց միս Մեորդստոնը, թթու դրած վարունքների փարչը դիտելով։– Ծուլությունն է ամեն չարյաց արմատը։ Սակայն այնտեղ թե այստեղ, բոլորը մեկ է. նա միշտ ծույլ ու դատարկ կմնա։

Նկատեցի, որ Պեգգոտին պատրաստ է մի կծու պատասխան տալ, բայց իմ սիրուն նա լեզուն բռնեց և լուռ մնաց։

– Հըմ,– ասաց միս Մեորդստոնը, շարունակելով դիտել թթուն,– այժմ ամենից կարևորն այն է, որ եղբայրս հանգիստ մնա և իր սիրտը ոչ մի բանով չվրդովի։ Այս պատճառով կարծում եմ թե լավ կանեմ, եթե ձեր խնդիրը կատարեմ։

Շնորհակալություն հայտնեցի նրան, բայց ուրախությունս ծածկելով, որպեսզի իր հավանությունը ետ չառնի։ Կարծեմ արածս խոհեմություն էր, որովհետև նույն րոպեին նա այնպես թթու վրաս նայեց, որ ասես փարչի բոլոր կծվությունը կուլ տված լիներ։ Բայց հավանությունը տրված էր, այդպես էլ մնաց. և ամիսը լրանալուն պես Պեգգոտին ու ես արդեն մեկնելու պատրաստ էինք։

Մր. Բարկիսը եկավ Պեգգոտիի հակը վերցնելու։ Որքան հիշում եմ, նա երբեք մեր պարտեզի դռնով չէր անցել. բայց այս անգամ ներս էլ մտավ և ահագին հակը շալակելիս իմ վրա մի այնպիսի հայացք նետեց, որի մեջ կարծես իմաստ էլ կար, եթե միայն կարելի էր որևէ իմաստ գտնել մր. Բարկիսի դեմքի վրա։

Պեգգոտին հարկավ տրտում էր մեր տանից բաժանվելիս, ուր այնքան տարի ապրել էր և ուր սնվել էին իր սրտի երկու զորեղ զգացումները. սեր դեպի մայրս և սեր դեպի ինձ։ Առավոտյան նա հանգստարան գնաց, և այժմ, կառքում նստած, թաշկինակ էր բռնել արտասվաթոր աչքերի վրա։

Քանի որ նա այդ դրության մեջ էր. մր. Բարկիսը կենդանության ոչ մի նշան չէր ցույց տալիս։ Նա նստած էր իր տեղում և կուռքի նման անշարժ էր։ Բայց երբ Պեգգոտին սկսեց դեսուդեն նայել և հետս խոսել, մր. Բարկիսը գլուխը թոթվեց և մի քանի անգամ ծիծաղեց, թեև բնավ չհասկացա, թե ո՞ւմ վրա և ինչո՞ւ։

– Ի՛նչ լավ օր է, մր. Բարկիս,– ասացի ես քաղաքավարության համար։

– Կարծեմ վատ չէ,– ասաց մր. Բարկիսը, որ սովոր էր զգուշությամբ արտահայտել իր միտքը և խույս տալ հաստատական ոճերից։

– Այժմ Պեգգոտին բոլորովին հանգստացել է, մր. Բարկիս,– նկատեցի ես, նրան հաճելի բան ասելու համար։

– Իրա՞վ,– ասաց մր. Բարկիսը։

Եվ այս հանգամանքի մասին մի քանի վայրկյան խորամանկ դեմքով մտածելուց հետո, դարձավ դրացուհուն և ասաց.

– Հա՞, իրա՞վ հանգստացել եք։

Պեգգոտին ծիծաղեց և դրական պատասխան տվեց։

– Չէ, ուղիղն ասացեք, բոլորովի՞ն եք հանգստացել, լիովի՞ն,– մռմռաց կառապանը, քիչ-քիչ մոտենալով ու մշտելով Պեգգոտիին։– Ասացեք, լա՞վ եք հանգստացել, բոլորովի՞ն։ Հա՞, թե չէ։

Եվ նա շարունակեց այնպես մոտենալ և Պեգգոտիին արմունկով հրել, որ մենք վերջ ի վերջո, կառքի ձախ անկյունում սեղմված մնացինք, և ես հազիվ էի շունչ քաշում։

Երբ Պեգգոտին խնդրեց նրան ուշք դարձնել վրաս, մր. Բարկիսը տեղ տվեց ինձ և սկսեց ետ քաշվել։ Ես չէի կարող չնկատել, թե որ աստիճան նա գոհ է, որ հնար է գտել, առանց

խոսակցության նյութ որոնելու, այդպես պարզ, հեշտ ու հաճելի կերպով արտահայտելու իր միտքը: Նա զվարճանում էր այդ գյուտով: Փոքր-ինչ հետո նորից դարձավ դեպի Պեգգոտին ու կրկնեց. «Ղո՞րդ հանգստացել եք» և առաջվա պես ճզմեց մեզ: Շատ չանցած՝ նորից ճզմեց և հարցումը երրորդեց: Վերջապես բանն այնտեղ հասավ, որ նրա մոտենալը տեսնելուս պես ես վերև էի ցատկում, պատճառաբանելով, թե ուզում եմ շրջակայքը լավ դիտել, և դրանով ազատվում խեղդվելուց:

Մր. Բարկիսն այնպես քաղաքավարի էր, որ մի պանդոկի առջև կանգ առավ՝ մեզ գարեջրով ու խորովածով հյուրասիրելու համար: Այդտեղ անգամ, մինչ Պեգգոտին խմելու վրա էր, մր. Բարկիսն այնքան սաստիկ հրեց նրան, որ նրա կլթիկը բռնեց: Սակայն երբ ճանապարհի վերջին հասանք, մր. Բարկիսը կատակները դադարեցրեց և երբ վերջապես Յարմաութի քարահատակի վրա անցանք, կառքն սկսեց այնպես ցնցել ու տատանել բոլորիս, որ մր. Բարկիսին ուրիշ բանի վրա մտածելու ժամանակ էլ չմնաց:

Մր. Պեգգոտին և Հեմը սպասում էին մեզ հին պանդոկի դռան առջև: Նրանք մեծ սիրով դիմավորեցին Պեգգոտիին ու ինձ և աջ մեկնեցին մր. Բարկիսին, որ մինչև ծոծրակը ծռված գդակով ու վարանած ժպտուն դեմքով մի անմիտ պատկեր էր ներկայացնում: Նրանք Պեգգոտիի իրերը վերցրին, և մենք արդեն հեռանալու վրա էինք, երբ մր. Բարկիսը ցուցամատով մի խորհրդավոր նշան արեց ինձ, որ դռան կամարի տակ մտնենք:

– Բանը լավ է առաջ գնում, չէ՞,– փսփսաց նա:

Ես մտիկ արի նրա դեմքին և, աշխատելով խորիմաստ ձևանալ, ասացի.

– Օ՛, օ՛:

– Շատ լավ է առաջ գնում, չէ՞,– կրկրնեց մր. Բարկիսը մտերմական եղանակով:

– Օ՛օ,– ասացի ես նորից:

– Դուք հո գիտեք ո՞վ է ուզում,– ասաց բարեկամս:– Բարկիսն է ուզում, միայն Բարկիսը:

Ես հաստատական նշան արի:

– Շատ լավ է, շատ,– ասաց մր. Բարկիսը, ձեռքս թոթվելով:– Ես ձեր բարեկամն եմ: Դուք գործը լավ սկսեցիք, այժմ բանս հաջող է:

Քանի շատ էր մր. Բարկիսն աշխատում հասկացնել իր միտքը, այնքան ավելի մթնացնում էր, և եթե ես նրա երեսը ժամերով էլ դիտեի, դարձյալ այնքան բան կիմանայի, որքան կարելի է իմանալ մի կանգնած ժամացույց դիտելիս: Բայց Պեգգոտին արդեն կանչում էր ինձ: Երբ փոքր-ինչ հեռացանք, նա հարցրեց, թե բարեկամս ի՞նչ էր ասում:

– Ասում էր, թե բանը լավ է առաջ գնում,– պատասխանեցի ես:

– Ա՛յ անամոթ արարած,– գոչեց Պեգգոտին:– Սուտ է նրա ասածը: Բայց ի՞նչ կասես, եթե հանկարծ ուզենամ մարդու գնալ:

– Կասեմ, թե կշարունակես հիմիկվա նման սիրել ինձ,– ասացի ես մի վայրկյան մտածելուց հետո:

Իմ բարեսիրտ դայակը, բոլոր անցորդներին և նույնիսկ առջևից գնացող ազգականներին զարմացնելով, փողոցի մեջտեղում կանգնեց և սկսեց համբուրել ինձ և երդվել, թե հավիտյան պիտի սիրի ինձ:

– Ի՞նչ կասես, հը՞,– կրկնեց նա, երբ որ նորից շարժվեցինք:

– Եթե ուզենաս... մր. Բարկիսի՞ն մարդու գնալ:

– Այո,– ասաց Պեգգոտին:

– Կասեմ, որ հիանալի բան կանես։ Այն ժամանակ քո սեփական կառքն ու ձին կունենաս, ամեն անգամ ինձ տեսնելու կգաս, և այդ ոչինչ չի նստի քեզ, Պեգգոտի։

– Մեկ այս տղայի խելքը տեսեք,– գոչեց Պեգգոտին։– Ես էլ ահա մի ամիս է ճիշտ այդ եմ մտածել։ Այո, հոգիս, մտածել եմ, որ այն ժամանակ ավելի անկախ կլինեմ և հարկավ իմ տանը ավելի սիրով կաշխատեմ, քան ուրիշների մոտ։ Հետո մայրիկիդ էլ մոտիկ կլինեմ,– շարունակեց նա մեղմիկ,– շուտ-շուտ կերթամ նրա գերեզմանը տեսնելու, իսկ երբ մեռնեմ, ինձ էլ նրա մոտ կթաղեն։

Որոշ ժամանակ լուռ մնացինք։ Հետո նա զվարթ ասաց.

– Այնուամենայնիվ մարդու գնալը մտքիցս էլ չէր անցնի, եթե իմ Դեվին այդ չուզենար։ Չէր անցնի, եթե քսան անգամ էլ ծանուցում անեին եկեղեցում և նշանի մատանին պատրաստ լիներ։

– Հապա մեկ երեսիս նայիր, Պեգգոտի,– ասացի ես։– Մի՞թե չես տեսնում, որ ես ուրախ եմ այդ բանից և հոգով սրտով քեզ եմ համակրում։

Եվ իրոք, անչափ ուրախ էի, որ նա մտադիր է ամուսնանալ։

– Հավատում եմ, աչքիս լույս, հավատում,– ասաց Պեգգոտին, նորից իր կրծքին սեղմելով ինձ։– Այդ մասին ես գիշեր-ցերեկ մտածել եմ, և ամեն բան կշռել, և կարծում եմ, որ լավ կանեմ, եթե մարդու գնամ։ Բայց ուզում եմ եղբորս հետ էլ խորհուրդ տեսնել։ Իսկ առայժմ, Դեվի, դու ոչ ոքի բան չասես, թող երկուսս միայն գիտենանք։ Բարկիսը մի բարեսիրտ, պարզ մարդ է, և ես լավ կկատարեմ իմ պարտքը և կաշխատեմ կատարել։ Այն ժամանակ «մեր բանը լավ առաջ կերթա»,– վերջացրեց Պեգգոտին, ուրախ-ուրախ քրքջալով։

Մր. Բարկիսի այդ խոսքերն այնպես ի դեպ կրկնվեցին և այնքան մեզ զվարթացրին, որ ամբողջ ճանապարհը ծիծաղելով կտրեցինք և զվարթ հասանք մր. Պեգգոտիի տնակին։

Տնակի դրսի տեսքը միևնույն էր, միայն թե ես նրան մի քիչ փոքրացած գտա։ Դռան մոտ կանգնած էր մրս. Գըմիջը, որ կարծես մեր վերջին հրաժեշտից հետո չէր շարժվել իր տեղից։ Տնակի ներքին սարքն էլ առաջվանն էր. ննջարանումս միևնույն կապույտ սավոռն էր դրված՝ նույն ծովային ծաղիկներով։ Դուրս ելա շտեմարանը տեսնելու, և դարձյալ նույն խաչափառները գտա, նույն խեցիներն անկյունում, ուր նրանք առաջվա պես վխտում էին, կծելու բան փնտրելով։

Էմլին միայն չէր երևում, և ես հարցրի մր. Պեգգոտիին, թե որտե՞ղ է նա։

– Վարժարանումն է, սըր,– ասաց նա, ճակատը սրբելով, որովհետև քրտնել էր քրոջ հակը կրելուց։ Հետո պատի ժամացույցին մտիկ տվեց և հարեց. – Մի քսան րոպեից և կամ կես ժամից հետո տուն կգա։ Նրա բացակայությունը մեզ ամենքիս զգալի է, հավատացեք։

Մրս. Գըմիջը հառաչեց։

– Հերիք է տխրես, ա՛յ պառավ,– գոչեց մր. Պեգգոտին։

– Օ՛հ, ոչ մի մարդ ինձնից ավելի չի զգում այդ,– ասաց մրս. Գըմիջը։– Ես մի թշվառ անտեր էակ եմ. միայն նա է, որ կամքիս հակառակ չի գնում։

Մրս. Գըմիջը շարունակ փնթփնթալով և տնքալով գնաց կրակ վառելու։ Մր. Պեգգոտին, որ դիտում էր նրան, դիմեց մեզ, ձեռքը շրթունքին դնելով, և կամացուկ ասաց. «Էլի ծերուկին է հիշում»։ Այս խոսքերը մի հիմնավոր առիթ տվին ինձ կարծելու, թե իմ վերջին այցելությունից հետո ոչ մի բարվոքում չի կատարվել մրս. Գըմիջի տրամադրության մեջ։

Եվ այսպես՝ ամբողջ տնակն առաջվա նման մի զվարճալի օթևան էր, և ինչո՞ւ չպիտի զվարճալի լիներ. նա սակայն նախկին տպավորությունը չարեց վրաս։ Մինչև անգամ մի տեսակ հիասթափվաց զգացի։ Պատճառը գուցե այն լիներ, որ փոքրիկ Էմլին տանը չէր։ Ես

գիտեի, թե որ շավղով է տուն գալիս, և շատ չանցած՝ արդեն զբոսնում էի այն շավղի վրա՝ նրան դիմավորելու ցանկությամբ։

Հեռվից նշմարեցի մի պատկեր և իսկույն ճանաչեցի Էմլիին։ Թեև նա մի քիչ աճել էր, սակայն դարձյալ փոքրիկ էր։ Երբ մոտեցավ, տեսա, որ նրա կապուտակ աչքերն այժմ ավելի պայծառ են, փոսիկներով այտերն այժմ ավելի բողբոջուն, և ամբողջ պատկերն ավելի զվարթ և սիրուն. բայց և այնպես, տարօրինակ բան, հանկարծ ուզեցի այնպես ձևանալ, թե իբր նրան չեմ տեսնում, և անցնել մոտով, իբր առանց վրան ուշք դարձնելու։ Եթե չեմ սխալվում, այս տեսակ մի բան հետո էլ արել եմ կյանքումս։

Փոքրիկ Էմլին ամենևին բանի տեղ չդրեց արարքս։ Նա ճանաչեց ինձ, սակայն փոխանակ շուռ գալու և անունս տալու, ծիծաղեց ու փախավ։ Այդ ինձ ստիպեց իսկույն նրա հետևից ընկնել, բայց նա այնպես արագ էր վազում, որ միայն տնակի մոտ բռնեցի նրան։

– Ա՛հ, այս դո՞ւ ես,– ասաց նա։

– Հը, ճանաչեցի՞ր ինձ, Էմլի։

– Իսկ դու իբր թե չճանաչեցիր ինձ,– ասաց Էմլին։

Ուզում էի համբուրել նրան, բայց նա իր վարդագույն շրթունքը ծածկեց, ասելով, թե այլևս երեխա չէ, և առաջվանից թունդ քրքջալով ներս վազեց։

Պարզ է, որ նա կամենում էր հետս ընկնել ու գրգռել ինձ։ Այս փոփոխությունը նրա վարմունքի մեջ շատ զարմանալի թվաց ինձ։ Թեյի սեղանն արդեն պատրաստ էր. փոքրիկ սնդուկի առաջվա տեղն էր. սակայն Էմլին, փոխանակ կողքիս նստելու, գնաց փնթփնթան մրս. Գըմիջի մոտ նստեց, և երբ մր. Պեգգոտին հարցրեց, թե ինչո՞ւ է այդպես անում, նա դեմքը թաքցնելու համար մազերը երեսին փռեց ու սկսեց ծիծաղել։

– Ա՛յ դու փիսիկ,– ասաց մր. Պեգգոտին, և հուշիկ-հուշիկ շոյեց նրան իր մեծ թաթով։

– Այո, այո, չար փիսիկ է, մաստր Դեվի,– կրկնեց Հեմը, և սկսեց Էմլիի հետ քրքջալ մի այնպիսի հրճվանքով ու հիացումով նրան նայել, որ ինքն էլ կրակի նման կարմրեց։

Տեսա, որ բոլորն էլ երես են տալիս Էմլիին, և ամենից շատ՝ նույն ինքը մր. Պեգգոտին։ Բավական էր, որ Էմլին իր սիրուն թշիկը մր. Պեգգոտիի կոշտ մորուքին մոտեցներ, որպեսզի սա Էմլիի ամեն քմահաճույքը կատարեր։ Գոնե ինձ այդպես էր թվում, երբ տեսնում էի, թե ինչպես է գգվում նրան աղջիկը։ Եվ ես լիովին արդարացնում եմ ծերուկին։ Էմլին այնքան հեզ էր, այնպես քաղցրիկ, և իր երկչոտ, փոքր-ինչ խորամանկ հայացքով՝ այնքան գրավիչ, որ ինձ առաջվանից ավելի հափշտակեց։

Շատ էլ քնքուշ սիրտ ուներ, որովհետև երբ մենք թեյից հետո վառարանի առջև նստեցինք և մր. Պեգգոտին, իր ծխամորճը քաշելով, իմ կրած կորուստը հիշեց, Էմլիի աչքերն արտասուքով լցվեցին, և նա սեղանի մյուս կողմից այնքան սրտագին վշտով վրաս նայեց, որ ես մի ջերմ շնորհակալություն զգացի դեպի նա։

– Ահա սա էլ որբուկ է,– ասաց մր. Պեգգոտին, Էմլիի գանգուրների հետ խաղալով։– Ահա սա էլ,– շարունակեց նա, մի ամուր հարված տալով Հեմի կողքին,– թեև կարծես ոչ մի բանով որբի նման չէ։

– Եթե ձեզ նման մի խնամակալ ունենայի, մր. Պեգգոտի,– ասացի ես, գլուխս կախելով,– այն ժամանակ գուցե ես էլ որբ չզգայի ինքս ինձ։

– Լավ ասացիք, մաստր Դեվի,– գոչեց Հեմը ցնծությամբ։– Արևս վկա, լավ ասացիք։ Հիանալի։ Ապրեք, սըր։ Հուռռա՛, հուռռա՛։

Այստեղ նա ետ տվեց մր. Պեգգոտիի հարվածը, իսկ Էմլին վեր կացավ իր բարերարին համբուրելու։

– Ինչպե՞ս է, սըր, ձեր բարեկամը,– հանկարծ հարցրեց մր. Պեգգոտին։

– Ստիրֆո՞րթը։

– Հենց նա,– գոչեց մր. Պեգգոտին Հեմի կողմը դառնալով։– Չէ՞ի ասում քեզ, թե նրա անունը մեր արհեստն է հիշեցնում[15]։

– Դուք ասում էիք, որ նրա անունը Րդդրֆորթ[16] է,– նկատեց Հեմը ժպտալով։

– Ստիր, թե Րդդր, մի՞թե երկուսն էկ մեկ չէ,– ասաց մր. Պեգգոտին։– Դե լավ, ինչպե՞ս է նրա առողջությունը, սըր։

– Շատ առողջ էր մեր բաժանվելու միջոցին, մր. Պեգգոտի։

– Ահա բարեկամ,– գոչեց մր. Պեգգոտին, ծխամորճը թափ տալով։– Մարդ բարեկամ ունենա, այդպիսի մեկին ունենա։ Վրան նայելուս մարդու քեֆը գալիս է։

– Եվ գեղեցիկ է, այնպես չէ՞,– ասացի ես, այդ գովասանքից զմայլված։

– Գեղեցի՞կ,– ասաց մր. Պեգգոտին։– Այնպես գեղեցիկ, որ... որ... էլ չգիտեմ, ի՞նչ ասեմ։ Եվ կրտիճ է, շա՛տ կտրիճ։

– Առյուծի պես կտրիճ է,– ասացի ես։– Եվ չեք կարող երևակայել, թե որ աստիճան համարձակ և անկեղծ է։

– Եվ կարծեմ,– շարունակեց մր. Պեգգոտին, ծխի քուլաների միջից վրաս նայելով,– կարդալումն էլ կտրուկ է, այս բանում ամենքին էլ ջարդուբուրդ կանի, չէ՞։

– Այո,– ասացի ես հրճվանքով,– բան չկա, որ չգիտենա։ Զարմանալի ընդունակ է։

– Ա՛յ քեզ ընկեր,– մռմռած մր. Պեգգոտին և գլուխը շարժեց։

– Նրա համար ոչ մի դժվար բան չկա,– շարունակեցի ես։– Ինչ դաս էլ տաս, մի նայելով կսովորի։ Ոչ ոք չի կարող լավ կրոկետ խաղալ, իսկ ճատրակում, քանի քար ուզենաս առաջուց կտա, և էլի կհաղթի։

Մր. Պեգգոտին նորից գլուխը շարժեց, կարծես ասելու համար. «Անշուշտ կհաղթի»։

– Եվ գիտե՞ք, ինչ լեզու ունի,– գոչեցի ես։– Ռում ասես կհամոզի։ Հապա մեկ նրա երգելը լսեիք, մր. Պեգգոտի։

Մր. Պեգգոտին դարձյալ գլուխը շարժեց, իբր թե ասելու համար. «Կասկած չկա»։

– Այնքան էլ վեհանձն է, այնքան բարի ու ազնիվ,– շարունակեցի ես, սիրած ելույթովս հափշտակված,– որ ինչքան էլ գովես, գովասանքդ նրա արժանիքին հավասար չի գա։ Ես հավաստի եմ, որ ոչ մի ժամանակ չեմ կարողանա լիովին պարտահատույց լինել նրան այն վեհանձն ուշադրության փոխարեն, որ շնորհում էր ինձ, մինչ ես այնքան ցած էի նրանից թե՛ տարիքով, թե՛ ուսումով։

Մինչ ես արագ խոսում էի, հանկարծ հայացքս Էմլիի դեմքին դիպավ, որ սեղանի վրա խոնարհած, գրեթե առանց շունչ քաշելու ամենախորին ուշադրությամբ լսում էր ինձ. նրա աչքերն ադամանդի պես վառվում էին, և թշիկները բորբոքվել էին։ Այնքան սիրուն էր, այն աստիճան սքանչելի այդ ակնապիշ դրության մեջ, որ ես շվարած լռեցի։ Հենց այդ րոպեին մյուսներն էլ նրան մտիկ տվին և սկսեցին ծիծաղել։

– Էմլին էլ կուզենար տեսնել նրան, ինչպես և ես,– ասաց Պեգգոտին։

Էմլին ամենքի հայացքը իր վրա ուղղված տեսնելով, շփոթվեց, գլուխը կախ արեց, և նրա երեսը ավելի կարմրեց։ Եվ երբ իր փռված գանգուրների միջով նկատեց, որ շարունակում ենք

---

[15] Steer – ստիր՝ ղեկ։

[16] Rudder — րդդր՝ նմանապես ղեկ։

դիտել իրեն (ես գոնե պատրաստ էի ժամերով դիտել), հանկարծ փախավ սենյակից և մինչև ննջելու ժամը ետ չեկավ։

Ես պառկեցի առաջվա փոքրիկ անկողնու մեջ, նավատան հետևի մասում։ Քամին դարձյալ սկսեց փչել ու մռնչալ, ինչպես առաջ էր։ Բայց այս անգամ ինձ թվում էր, թե մեռածներին է ողբում։ Չէի կարծում այս անգամ, թե ծովի ալիքները կես-գիշերին կլեռնանան և տնակը կփախցնեն, այլ պատկերացնում էի մտքիս մեջ այն սոսկալի փոթորիկը, որ արդեն ջրահեղձ էր արել մայրական հարկիս երջանկությունը։ Հետո, երբ որ հողմի մոլեգնությունը փոքր-ինչ իջավ, ես մի փոքրիկ հավելված արի սովորական աղոթքիս վրա, աղաչելով աստծուն՝ շուտ հասցնել ինձ այրական հասակին, որ կարողանամ ամուսնանալ չնաշխարհիկ Էմլիի հետ։ Այս անուշ ցնորքով օրորված՝ վերջ ի վերջո քուն մտա։

Օրերն անցնում էին իրար հետևից այնպես ախորժ, ինչպես առաջ, միայն այն մեծ տարբերությամբ, որ այժմ Էմլին և ես սակավ էինք զբոսնում ծովափին։ Այժմ նա դասեր ուներ սերտելու, կարեր ուներ կարելու, և օրվա մեծ մասը բացակա էր։ Սակայն զգում էի, որ եթե այդպես էլ չլիներ, մենք դարձյալ չէինք կարողանա առաջվա նման միասին շրջել։ Թեև նա զվարթ էր, թեև կայտառ իբրև մանուկ, բայց արդեն կին էր թվում իմ աչքին։ Միայն մի տարվա մեջ ինձնից ավելի էր զարգացել, առաջվա նման սիրում էր ինձ, բայց սիրում էր և ծաղրել ինձ ու տանջել։ Շատ անգամ, երբ գնում էի դիմավորելու նրան, գիտությամբ ուրիշ ճանապարհով էր ետ գալիս և հետո խաբվելուս վրա ծիծաղում։ Ամենից ավելի դուրեկան էին ինձ այն ժամերը, երբ նա շեմքի վրա մենակ նստած զբաղված էր լինում ձեռագործով. այն ժամանակ ես էլ նստում էի նրա ոտքի տակ, աստիճանների վրա, և որևէ բան կարդում նրան։ Այս րոպեիս անգամ թվում է ինձ, թե ոչ մի ժամանակ չեմ տեսել մի ավելի լուսափայլ արևի մուտք, քան այդ ապրիլի երեկոներին. ոչ մի ժամանակ չեմ տեսնի մի ավելի պայծառ էակ, քան թե այն, որ նստած էր հին տնակի շեմքին. մի ավելի վճիտ երկինք, մի ավելի կապույտ ծով, մի ավելի հրավառ հորիզոն և դրա վրա ճոճվող ավելի սիրուն նավեր։

Մեր գալու հենց առաջին իրիկունը մեզ այցելեց մր. Բարկիսը շատ անիմաստ ու շփոթված դեմքով և ձեռքին նարիջներով լիքը թաշկինակ բռնած։ Նա չասաց, թե ո՞ւմ համար է այդ գանձը, ուստի երբ հեռացավ, կարծեցինք, թե կապոցը մոռացմամբ է թողել։ Հեմը նրա հետևից վազեց և իսկույն վերադարձավ լուր բերելով, թե նարինջները Պեգգոտիի համար են ընծա բերված։ Այս դեպքից հետո ամեն երեկո ճիշտ միևնույն ժամին, գալիս էր մեզ մոտ խորհրդավոր այցելուն և միշտ որևէ կապոց բերում, սակայն առանց երբեք ակնարկելու, թե ում համար, և դնելով դռան հետևը հեռանում։ Այս քնքուշ սիրո նվերները շատ բազմազան ու տարօրինակ բաներ էին. իմիջիայլոց հիշում եմ երկու զույգ խոճկորի ոտքեր, մի ահագին ասեղի բարձ, քսան խնձոր, մի զույգ սև սաթե օղ, մի քանի հատ իսպանական սոխ, մի տուփ դոմինո, մի վանդակ՝ մեջը կանարյան թռչնակով և մի սպիտակ խոզի զիստ։

Մր. Բարկիսն առհասարակ ուրույն կերպով էր հարսնախոսություն անում։ Շատ սակավ խոսք կլսեիր նրա բերնից։ Սովորաբար գալիս, նստում էր կրակի առջև նույն դիրքով, ինչպես իր կառքի մեջ, և հիացումով մտիկ տալիս կարը ձեռքին նստած Պեգգոտիին։ Մի երեկո, երևի թե սիրուց բորբոքվելով, իր սիրեկանի մեղրամոմի կտորը թռցրեց, գրպանը դրեց և տուն տարավ։ Այնուհետև, երբ պետք էր լինում Պեգգոտիին թել մոմել մի անասելի զվարճություն էր մր. Բարկիսի համար՝ հանել գրպանից այդ կտորը, որ արդեն գրեթե հալված էր, տալ նրան և հետո նորից գրպանը դնել։ Նա կարծես անչափ գոհ էր ինքն իրենից և խոսելու հարկ չէր տեսնում։ Մինչև անգամ Պեգգոտիի հետ ծովեզերքին զբոսնելիս՝ ավելորդ էր դատում խելքին զոռ տալ սիրային խոսքեր գտնելու համար, այլ միայն շտապում էր հարցնել, այն էլ միայն երբեմն, թե նա արդյոք հանգի՞ստ է։ Լավ եմ հիշում, որ Պեգգոտին, նրա հեռանալուն պես, երեսը գոգնոցով ծածկում էր և ամբողջ կես ժամ ծիծաղից թուլանում։ Ընդհանրապես մենք բոլորս շատ թի քիչ զվարթ էինք, բացի թշվառ մրս. Գլմիջից, որի ամուսինը երևի թե ճիշտ այդպես էր նրա սիրտը գրավել, որովհետև մր. Բարկիսի հարսնախոսություն անելը տեսնելիս նա անդադար ողորմած հոգուն էր մտաբերում։

Արդեն մոտենում էր տուն վերադառնալու ժամանակը, երբ իմացանք, որ Պեգգոտին ու մր. Բարկիսը մի օրով զբոսնելու պիտի գնան և ինձ ու Էմլիին իրենց հետ տանեն: Էմլիի հետ մի ամբողջ օր միասին գտնվելու զվարճությունից ես այս դեպքի նախորդ գիշերը գրեթե անքուն անցկացրի: Առավոտյան բոլորս էլ վաղ վերկացանք և մինչ նախաճաշ անելու վրա էինք, հեռվից երևաց մր. Բարկիսը, որ կառքով գալիս էր դեպի իր ցանկալին:

Պեգգոտին հագել էր մի համեստ ու մաքուր սև զգեստ, իսկ մր. Բարկիսը պճնվել էր մի կապտագույն նոր ֆրակով. դերձակը դրան այնպիսի երկար թևեր էր տվել, որ հագնողը նույնիսկ սաստիկ ցրտին ձեռնոցի կարիք չէր զգա, և այնպիսի բարձր օձիք, որ ջենտլմենի հետևի մազերը դեպի վեր էին տնկվում: Ֆրակի ահագին կոճակները աստղերի պես պսպղուն էին: Գորշագույն վարտիքն ու դեղին բաճկոնակը մր. Բարկիսի արդուզարդը արժանապես լրացնելով, վայելչության բուն տիպար էին հանդիսացնում նրան աչքիս առջև:

Երբ մենք արդեն հավաքվել էինք դռան մոտ, ես տեսա մր. Պեգգոտիի ձեռքին մի հին մուճակ, որ կառքի հետևից պետք է նետվեր, իբրև մեր ուղևորության բարի ելքի գրավական: Այս նպատակով նա մուճակը մրս Գըմիջին հանձնեց:

– Ոչ, Դանիել, թող մեկ ուրիշը նետի,– ասաց մրս. Գըմիջը:– Ես մի թշվառ անտեր արարած եմ: Ինձ չի կարելի մարդկանց ուրախությանը մասնակցել:

– Բավական է, ա՛յ պառավ,– գոչեց մր. Պեգգոտին:– Ահա վերցրու ու ձգիր:

– Չէ՛, չէ՛ Դանիել. – ասաց մրս. Գըմիջը, հեծելով ու գլուխը շարժելով:– Ես այնքան անբախտ եմ, որ ամեն բան ինձ հակառակ է կատարվում: Չէի ցավի, եթե սիրտս այսքան զգայուն չլիներ: Քո բանն ուրիշ է, Դանիել, դու ինձ նման զգայուն չես, դարդ ու ցավից ազատ ես: Դու ձգիր:

Բայց այդ րոպեին Պեգգոտին, բոլորին մի առ մի համբուրելուց հետո կառք մտնելով, ուր ես ու Էմլին արդեն կողք կողքի նստած էինք, բարձր ձայն տվեց մրս. Գըմիջին, որ մուճակն իսկույն նետի: Մրս. Գըմիջն էլ վերջապես այս պահանջը կատարեց, բայց և մեր մեկնելու ժամի զվարճությունը փոքր-ինչ փչացրեց, որովհետև սկսեց լաց լինել և հանկարծ ընկավ Հեմի գիրկը ասելով, թե վաղուց գիտեր, որ ինքը բեռ է բոլորի համար, և թե լավ կլիներ, եթե իսկույն իրեն անկելանոց տանեին: Այս գաղափարը ես հիմնավոր գտա, և գոհ կլինեի, եթե Հեմն անմիջապես գլուխ բերեր:

Սակայն արտասվալի տեսարանն արգելք չեղավ մեր մեկնելուն: Ճանապարհ ընկանք, և մի որոշ ժամանակից հետո կանգ առանք մի եկեղեցու առջև, ուր մր. Բարկիսը ձիու սանձը սյունին կապեց, իսկ ինքը Պեգգոտիի հետ ներս մտավ, Էմլիին ու ինձ կառքում թողնելով: Ես օգուտ քաղեցի այս հանգամանքից Էմլիի իրանը գրկելու համար և խնդրելու, որ մենք իրար հետ, քանի որ ես երկար չեմ մնալու Յարմաութում, շատ սիրով լինենք և ամբողջ օրը շատ երջանիկ: Փոքրիկ Էմլին զիջեց և մինչև անգամ թույլ տվեց համբուրել իրեն: Այս զիջումով քաջալերված, ես սիրտ առա երդվելու նրան, թե երբեք մի ուրիշ աղջիկ չպիտի սիրեմ նրանից բացի և պատրաստ եմ այն մարդու արյունը թափել, որ կհանդգնի սիրեկանիս սիրուն թեկնածել:

Որքա՛ն ծիծաղեց խոսքերիս վրա փոքրիկ Էմլին: Պետք էր տեսնել այդ հրաշալի էակին, երբ նա իրեն ինձնից խելոք ու հասակավոր կարծելով, վստահ-վստահ ասաց. «Դու մի անմիտ տղա ես»: Հետո սկսեց այնպես զվարթ քրքրջալ, որ նրան նայելու հրճվանքից ես մոռացա այդ վիրավորիչ ածականը:

Մր. Բարկիսն ու Պեգգոտին եկեղեցում բավական երկար մնացին, բայց վերջապես դուրս ելան, և մենք առաջ գնացինք: Ճանապարհին մր. Բարկիսը հանկարծ դեպի ինձ շուռ եկավ և մի խորամանկ ակնարկով, որ ամենևին սպասելի չէր նրանից, հարցրեց.

– Հիշո՞ւմ եք, սըր, թե ի՞նչ անուն էի գրել կառքում:

– Կլարա Պեգգոտի,– պատասխանեցի ես:

– Ի՞նչ եք կարծում, ի՞նչ անուն կգրեի այժմ, եթե կավիճ ունենայի։

– Դարձյալ Կլարա Պեգգոտի,– ասացի ես։

– Կլարա Պեգգոտի Բարկիս,– գոչեց նա և այնպես սաստիկ ծիծաղեց, որ ամբողջ կառքը դղրդաց։

Կարճ ասած, նրանք պսակվել էին, և պսակվելու համար էին եկեղեցի մտել։ Պեգգոտին կամեցել էր, որ կարգը անշշուկ կատարվի. քահանան տեղի էր տվել և այս պատճառով ոչ մի վկա ներկա չէր եղել հանդեսին։ Համեստ կինը փոքր-ինչ շփոթվեց, երբ մր. Բարկիսը այնպես որոտաձայն հրապարակեց իրենց զուգությունը, և այս հանգամանքն արգելեց նրան համբուրել ինձ ու կրկնել, թե իր սերը դեպի ինձ միշտ անփոփոխ կմնա։ Սակայն մի քանի րոպեից նա հանգստացավ և ասաց, թե շատ ուրախ է, որ բանն արդեն վերջացել է։

Մոտեցանք մի փոքրիկ պանդոկի, որ զարտուղի ճամփի վրա էր գտնվում։ Այնտեղ մեզ սպասում էին և մի փառավոր ճաշ էին պատրաստել։ Օրը շատ ուրախ անցավ։ Եթե վերջին տասը տարվա ընթացքում Պեգգոտին ամեն օր մի-մի անգամ ամուսնացած լիներ, դարձյալ ավելի հանգիստ ու անբռնազբոսիկ չէր լինի. նա բնավ չէր փոխվել և միևնույնն էր, ինչ-որ միշտ։ Թեյից առաջ նա դուրս ելավ Էմլիի և ինձ հետ զբոսնելու, մինչ մր. Բարկիսը փիլիսոփայորեն ծխում էր, երևի իր երջանկության մասին մտածելով։ Եթե այդպես է, ուրեմն պետք է ասել, որ մտածմունքից նրա ախորժակը նորից բացվեց, որովհետև թեպետ ճաշին, ինչպես որ հաստատ հիշում եմ, մի ահագին պատառ խոզի միս էր կերել՝ չգիտեմ թե ինչ կանաչով, և երկու հատ տապակած վառեկ, այնուամենայնիվ, թեյի ժամանակ կարիք զգաց մի մեծ բաժին խոզի սառ ճարպ պահանջելու իր համար, որը և վայելեց զարմանալի հեշտությամբ։

Տարիներ անցնելուց հետո շատ անգամ հիշել եմ, որ այդ հարսանիքն իրոք մի տարօրինակ, զվարճալի և անմեղ բան էր։ Արևը մայր մտնելուն պես մենք վերստին կառք նստեցինք և հանգիստ ճանապարհ ընկանք դեպի տուն, երկնային աստղերը դիտելով և նրանց վրա խորհրդածելով։ Ես էի երկնային երևույթների գլխավոր մեկնիչը և մր. Բարկիսը մտավոր հորիզոնն ընդարձակողը։ Պատմում էի նրան, ինչ-որ միայն գիտեի, սակայն ինչ էլ խելքիս փչեր, նա պատրաստ էր սիրով լսել և անպայման հավատալ,– այնքան մեծ էր նրա պատկառանքը իմ անհուն գիտության հանդեպ։ Երբ ես լռեցի, նա բավական լսելի ձայնով ասաց կնոջը, թե ես մի նորատի հրաշք եմ։

Երբ գիտական պաշարս սպառվեց և կամ լավ ասած՝ երբ մր. Բարկիսի մտավոր ուժերը հատան, Էմլին ու ես ծածկվեցինք մի հին շալով ու մինչև ճանապարհի վերջը դրա տակը մնացինք։ Օ՜հ, որքան եմ սիրում նրան։ Որքա՜ն երջանիկ կլինեի (մտածում էի ես), եթե նրա հետ ամուսնացած լինեի, նրա հետ միասին որևէ դաշտում կամ անտառում ապրեի, միշտ անթառամ, միշտ պատանի մնայի, թև-թևի տված նրա հետ միասին ծաղկազվարճ ու լուսափայլ հովիտներում շրջեի, նրա հետ միասին մեռնեի և երգեցիկ թռչունների դայլայլով նրա հետ միասին թաղվեի։ Ամբողջ ճանապարհին հոգիս պաշարված էր այս տեսակ սին, անմեղության լույսով փայլուն և վերամբարձ աստղերի նման երերուն ցնորքներով ու մտքերով։ Քաղցր է ինձ հիշել, որ Պեգգոտիի ամուսնությանը ներկա էին Էմլիի և ինձ նման անարատ, անբիծ սրտեր։ Հանձին մեր, կարծես թե Սերը և Շնորհը ուղեկից էին դայակիս հարսանեկան թափորին։

Արդեն ուշ գիշերով նավի տնակին հասանք։ Մր. Բարկիսը, մրս. Բարկիսը բարի գիշեր մաղթեցին մեզ և իսկույն իրենց սեփական բնակարանը գնացին։ Ահա այդ րոպեին էր, որ ես առաջին անգամ Պեգգոտիին կորցնելս զգացի։ Անտարակույս այն գիշերը ես շատ տրտում կանցկացնեի, եթե չգիտենայի, որ հենց այն հարկի տակ պիտի հանգչեմ, ուր հանգչելու էր և Էմլին։

Մր. Պեգգոտին ու Հեմը լավ գիտեին, թե ինչ եմ ես զգում, և աշխատում էին վիշտս փարատել հյուրասեր և քաղցր վարմունքով։ Ընթրիքի ժամանակ Էմլին նստեց սնդուկի վրա իմ կողքին, առաջին անգամ երկրորդ այցելությանս միջոցին, և այս եղավ մեր հիանալի օրվա հիանալի վերջաբանը։

Գիշերվա դեմ ծովը հորդացավ և ընթրիքից հետո մր. Պեգգոտին ու Հեմը ձուկ որսալու գնացին։ Վրաս մի տեսակ քաջություն եկավ, երբ այդ խաղաղ տնակում ես մենակ մնացի պաշտպանելու մրս. Գըմիջին ու Էմլիին, և միակ ցանկությունս էր, որ մեր վրա մի առյուծ կամ մի վիշապ և կամ մի ուրիշ ամեհի գազան հարձակվի, որպեսզի առիթ ունենամ սպանել նրանց և հերոսի փառք վաստակել։ Բայց որովհետև Յարմաութի ամայի տափարակում այդ գազաններից ոչ մեկն էլ չկար, լավ համարեցի քնել մինչև առավոտ, զանազան հրեշներ երազելով։

Առավոտյան Պեգգոտին մեզ մոտ եկավ և սովորական եղանակով պատուհանիս մոտ նստեց, զարթնելուն պես այդ դրության մեջ տեսնելով նրան, կարծեցի, թե երեկվա հարսանիքն էլ մի երազ էր։ Թեյից հետո նա ինձ իր տունը տարավ, որ մի սիրուն, կոկիկ տնակ էր։ Դրա միջի կահ-կարասիքը ուշադրությունս գրավեց, հատկապես դահլիճում գտնվող (տնեցոց առօրյա նստելու տեղն աղյուսահատակ խոհանոցն էր) սև փայտե զզրոցը։ Նրա երեսը բացվում իջնում էր, մի գրասեղան կազմելով, որի խորքում դրված էր ֆոքսի «Նահատակներ» կոչված շարադրության մեծ հատորը։ Իսկույն այդ պատվական գիրքը բաց արի, որից այժմ մի բառ անգամ չեմ հիշում, և սկսեցի եռանդով կարդալ։ Այնուհետև երբ էլ գնայի Պեգգոտիի մոտ, միշտ չոքում էի աթոռի վրա և զզրոցը բանալով պատվական գրքի բովանդակությունը կլանում։ Ինձ հրապուրում էին մանավանդ նրա անթիվ նկարները, որոնք պատկերացնում էին մարդկային ֆանատիկոսությունից առաջ եկած ամեն տեսակ արհավիրք, լլկանք ու չարչարանք։ Այն ժամանակից մինչև այսօր նահատակների պատմության և Պեգգոտիի տան հիշատակը միշտ իրարից անբաժան են մտքիս մեջ։

Դայակիս տունը գնալիս ես ամբողջ օրով հրաժեշտ առա մր. Պեգգոտիից, Հեմից, մրս. Գըմիջից, Էմլիից և գիշերն անգամ մնացի Պեգգոտիի տան վերնահարկի սենյակում, ուր անկողնու սնարից վեր կոկորդիլոսների հռչակավոր գիրքն էր դրված դարակի վրա։ Պեգգոտիի ասելով՝ այդ սենյակն ինձ համար էր պատրաստված, միշտ էլ՝ միևնույն դրության մեջ պետք է պահվեր։

– Ջահել թե պառավ՝ քանի կենդանի մնամ, սիրելի Դեվի,– ասաց նա,– և այս հարկը գլխիս վրա տարածվի, այս սենյակը դու միշտ պատրաստ կգտնես, իբր թե ամեն րոպե քեզ սպասելիս լինի։ Ես ամեն օր սա կհավաքեմ, ինչպես որ հավաքում էի առաջվա փոքրիկ ննջարանդ, և եթե դու, տեր մի՛ արասցե, Չինաստան էլ գնալու լինես, կարող ես ապահով լինել, որ այս սենյակը միշտ քեզ համար մաքուր կպահվի։

Ես ամբողջ սրտով հավատում էի բարի դայակիս անդրդվելի անձնվիրությանը ու ջերմ սիրուն դեպի ինձ և շնորհակալություն հայտնեցի նրան, բայց ոչ այնքան, ինչքան կցանկանայի. այդ խոսքերը Պեգգոտին առավոտյան ասաց ինձ, վզիս ամուր փարվելով, և ես երկար խոսելու միջոց չգտա, որովհետև հենց նույն առավոտ պիտի մեկնեի դեպի տուն։ Առավոտյան էլ ճանապարհ ընկա մր. Բարկիսի ու Պեգգոտիի հետ միասին։ Նրանք ինձնից տխուր սրտով բաժանվեցին մեր պարտեզի դռնակի մոտ։ Ես էլ շատ տրտում էի հեռացող կառքին նայելիս, որը ետ էր տանում Պեգգոտիին մեն-մենակ թողնելով ինձ հին կնձենիների հովանու տակ, այն տան հանդեպ, ուր այլևս ոչ ոք չկար, որ սիրեր ինձ կամ կարեկցեր։

Այժմ ես այնպիսի անտերունչ դրության մեջ ընկա, որի մասին չեմ կարող առանց սարսափի մտածել։ Ես բոլորովին աչքից ընկած էի, մենակ էի ապրում, առանձին, զուրկ մարդկային կարեկցությունից, զուրկ տղաների ընկերությունից, լիովին մատնված միայն իմ տխուր մտքերին, որոնց ստվերը կարծես թղթիս վրա էլ փռվում է, մինչ գրում եմ այս տողերը։

Օ՜հ, ինչեր չէի տա, որ մի դպրոց ուղարկեին ինձ, որքան էլ նա խիստ պահվեր, միայն թե կարողանայի բան սովորել. միևնույն է, թե ի՞նչ բան և կամ ինչպե՞ս: Սակայն մի այսպիսի հույս չէր ժպտում ինձ: Նրանք ատում էին ինձ. գիտությամբ, համառ կերպով ու չարաչար արհամարհում: Կարծեք այդ միջոցին էր, որ Մեորդստոնի դրամական գործերը խանգարվեցին. բայց նրա ատելությունը դեպի ինձ չէր կարելի միայն դրանով բացատրել: Այդ մարդը չէր կարող հանդուրժել ինձ և մերժելով ու դեն ձգելով ինձ, կարծես ուզում էր իր գլխից հանել այն գաղափարը, թե ես իրավունք ունեմ որևէ խնամք սպասելու նրանից... և հասավ իր նպատակին:

Չի կարելի ասել, թե ինձ իրոք լլկում էին. ո՛չ: Չէին ծեծում ինձ և կամ սոված չէին պահում, այլ միշտ, ամեն օր, կանոնավոր միակերպ և անվրդով սառնությամբ արհարհում էին: Անցնում էին իրար հետևից օրեր, շաբաթներ, ամիսներ, բայց նրանց քարասիրտ անհոգությունն իմ մասին մի մազի չափ չէր փոխվում: Այդ ժամանակը մտաբերելիս շատ անգամ հարցրել եմ ինձ. արդյոք ի՞նչ կանեին, եթե հանկարծ հիվանդանայի: Մի՞թե կթողնեին, որ մեն-մենակ ընկած մնամ իմ ամայի սենյակում, անխնամ մեռնեմ, թե ո՞վ էլ լինի վրա կհասներ ցավիս դարման անելու:

Երբ մր. Մեորդստոնը և միս Մեորդստոնը տանն էին լինում, ես ճաշում էի նրանց հետ. իսկ նրանց բացակայության ժամանակ մենակ էի հաց ուտում: Ինձ թույլ էին տալիս երբ էլ ուզենամ ազատ քարշ գամ տան մոտերքում և կամ շուրջը, միայն թե ոչ ոքի հետ ծանոթություն չանեմ. երևի վախենում էին, որ կգանգատվեմ որևէ մեկին: Այս էր պատճառը, որ չնայած մր. Չիլիպի ստիպողական հրավերներին, հազիվ էի համարձակվում նրա մոտ գնալ: Մի քանի ժամանակից ի վեր այրիացած բժշկի բնակարանը մի իսկական դեղատուն էր դարձել. ես սիրում էի երբեմն-երբեմն նրա մոտ լինել, մի որևէ նոր գիրք կարդալ, նրա դեղերի համատարած բուրմունը շնչել և կամ նրա ցուցմունքով մի նյութ ծեծել հավանգում:

Միևնույն պատճառով, անշուշտ նաև հին ոխից դրդված դեպի իմ բարի դայակը, սակավ էին թույլ տալիս ինձ այցելություն անել Պեգգոտիին: Իր խոստման համեմատ նա ամեն շաբաթ գալիս էր ինձ տեսնելու կամ աշխատում հանդիպել ինձ մեր տան մոտերքում և միշտ որևէ ընծա բերում ինձ համար: Սակայն երբ ես էի նրան տեսնելու փափագ հայտնում, խստիվ մերժվում էր և միայն երկար միջոցներից հետո, այն էլ միայն մի օրով էր թույլ տրվում ինձ նրա տանը լինել: Այս կարճատև այցերիս ժամանակ առիթ էի ունենում նկատելու, որ մր. Բարկիսը փոքր-ինչ ագահ է, կամ թե Պեգգոտիի ասելով՝ «փոքր-ինչ ժլատ» է,– փողերի դեզը մահճակալի տակ է պահում, մի արկղի մեջ, ուր նրա վկայությամբ, հին շորերից զատ ոչինչ չկար: Այդ արկղի մեջ թաքնված գանձերն այն աստիճան ամաչկոտ ու վախկոտ էին, որ նրանց մի չնչին մասն անգամ լույս աշխարհ հանելու համար պետք էր խորամանկություն բանեցնել: Եվ խեղճ Պեգգոտին ստիպված էր շատ նուրբ, շատ խորագետ հնարների դիմել, որպեսզի կարողանար շաբաթվա ծախսերի անհրաժեշտ փողը ձեռք բերել:

Այդ բոլոր ամիսների ընթացքում ես այնպես հուսահատ էի և այն աստիճան արհամարհված, որ շատ թշվառ կլինեի, եթե հին գրքերիս մեջ մխիթարանք չգտնեի: Միակ սփոփանքս նրանք էին. ես անբաժան էի նրանցից, ինչպես և նրանք ինձնից, և միշտ ու միշտ կարդում էի նրանց և կրկնում, էլ չգիտեմ քանի անգամ:

Մոտենում եմ կյանքիս այն շրջանին, որի հիշատակը ոչ մի ժամանակ չպիտի ջնջվի իմ մտքից, քանի դեռ ընդունակ կլինեմ որևէ բան հիշելու: Այս հիշատակը շատ անգամ, բոլորովին կամքիս հակառակ, եկել կանգնել է աչքիս առջև իբրև մի ահեղ ուրվական և վրդովել նույնիսկ երջանիկ օրերս:

Մի առավոտ սովորականի պես տանից դուրս գալով, տխուր ու պարապ շրջում էի փողոցում. հանկարծ մոտակա անկյունի մյուս կողմն անցնելիս՝ մր. Մեորդստոնի դեմ ելա, որ մի պարոնի հետ էր գալիս: Այդ անակնկալ հանդիպումից շփոթված, ուզում էի մոտերովն անցնել, երբ պարոնը ճանապարհս կտրեց և ասաց.

– Ա՛, այս դո՞ւ ես, Բրուքս։

– Ոչ, սըր. ես Դավիթ Կոպպերֆիլդն եմ։

– Լավ է, լա՛վ։ Դու Բրուքսն ես,– շարունակեց ջենտլմենը։– Շեֆիլդցի Բրուքսը։ Ես քեզ ճանաչում եմ։

Այս լսելուն պես՝ ավելի ուշով դիտեցի նրան։ Նրա ծիծաղը փոքր-ինչ ծանոթ թվաց ինձ, և ես ճանաչեցի մր. Քինիոնին, որին տեսնելու համար մր. Մեորդստոնը Լոուստոֆտ էր տարել ինձ մի ժամանակ, երբ... էլ ի՞նչ հարկավոր է հիշել, թե ե՞րբ։

– Ինչպե՞ս ես Բրուքս, և որտե՞ղ ես սովորում,– ասաց մր. Քինիոնը։

Նա ձեռքն ուսիս դրեց և դարձրեց ինձ, որ իրենց հետ գնամ։ Չգիտեի ի՞նչ ասեմ, շվարած նայում էի մր. Մեորդստոնին։

– Առայժմ տանն է,– ասաց վերջինս։– Ոչ մի տեղ չի ուսանում, ես չգիտեմ՝ ինչ անեմ դրան։ Հեշտ կառավարելու տղա չի։

Մր. Մեորդստոնն իր նախկին չար հայացքով մի վայրկյան վրաս նայեց և ակներև զզվանքով շուռ եկավ ինձնից։

– Է՛հ,– գոչեց մր. Քինիոնը, մեզ երկուսիս դիտելով։– Ի՛նչ լավ եղանակ է։

Լռություն հաջորդեց։ Մտածում էի, թե ինչպե՞ս ազատվեմ այդ պարոնի թաթից և հեռանամ։

– Դու կարծեմ էլի այն աչքաբաց տղան ես, չէ՞, Բրուքս,– ասաց մր. Քինիոնը։

– Այո, հիմարներից չէ,– վրա բերեց իսկույն մր. Մեորդստոնը։– Թողեք գնա։ Կարող եք վստահ լինել, որ շատ սիրով կհեռանա։

Մր. Քինիոնը ուսս ազատեց, և ես շտապով տուն գնացի։ Երբ պարտեզի դռնակին հասնելով ետ նայեցի, տեսա որ մր. Մեորդստոնը հանգստարանի ցանկապատին հենված, խոսակցում էր մր. Քինիոնի հետ։ Նրանք դեպի իմ կողմն էին նայում, և անշուշտ ես էի նրանց խոսակցության առարկան։

Այն գիշեր մր. Քինիոնը մեր տանը քնեց։ Հետևյալ առավոտյան, նախաճաշից հետո, երբ ես աթոռս սեղանից ետ քաշելով ուզում էի պարտեզ իջնել, մր. Մեորդստոնը հրամայեց ինձ սենյակում մնալ։ Այնուհետև նա մյուս սեղանի մոտ նստեց, քույրն էր կողքին տեղ բռնեց։ Մր. Քինիոնը, ձեռքերը գրպանների մեջ դրած, պատուհանից դուրս էր նայում, իսկ ես կանգնած դիտում էի ամենքին։

– Դավիթ,– ասաց մր. Մեորդստոնը,– պատանու համար այս աշխարհը գործ տեսնելու ասպարեզ է, այլ ոչ թե դատարկ երազելու և հողմ արածելու ասպարեզ։

– Ինչպես որ դու ես անում,– հարեց քույրը։

– Ջեննի Մեորդստոն, համեցեք խնդրեմ չընդհատել ինձ։ Կրկնում եմ, Դավիթ, քանի որ մարդս ջահել է, պարտավոր է գործ կատարել, և ոչ թե դժգոհ-դժգոհ պտույտ գալ ու ցնորքներով ապրել։ Եվ այս ճշմարիտ է, մանավանդ քեզ նման մի ստամբակի համար, որ կարոտ է արմատական ուղղման։ Այդպիսի մեկին մի լավություն անելու համար՝ անհրաժեշտ է բանուկ կյանքի պայմաններին ենթարկել նրան և թեքել ու կոտրել։

– Եվ պիտի գիտենաս, որ համառությունը չի օգնի քեզ,– ավելացրեց միս Մեորդստոնը։– Պետք է ընկճել այդ համառությունը և, կընկճվի, այո՛, կընկճվի։

Եղբայրը մասամբ հանդիմանության, մասամբ հավանության հայացք նետեց քրոջ վրա և շարունակեց.

– Քեզ երևի հայտնի է, Դավիթ, որ ես հարուստ չեմ։ Համենայն դեպս, իմացած եղիր, որ հարուստ չեմ։ Մինչև այժմ դու բավական պիտանի դաստիարակություն ստացար։

Դաստիարակությունը ահագին ծախս է պահանջում, սակայն այսպես էլ որ չլիներ, կամ եթե միջոց էլ ունենայի այդ ծախսը հոգալու, դարձյալ իմ համոզումով դպրոցական կրթությունը որևէ օգուտ չի տա քեզ։ Անելիքդ շատ պարզ է. պիտի կռվես աշխարհի հետ, և որքան շուտ սկսես կռիվը, այնքան լավ։

Ինձ թվում էր, թե այդ մարտն արդեն սկսվել էր, և դրա դառնության համն արդեն առել էի։ Այժմ դա հաստատ պիտի սկսվեր։

– Դու լսած կլինես առևտրական տան մասին,– ասաց մր. Մեորդստոնը։

– Ո՞ր տան մասին, սըր։

– Մեորդստոնի և Գրինբիի առևտրական տան մասին, որ գինու առևտուր է անում,– ասաց նա։

Երևի ես վարանել էի, որ մր. Մեորդստոնը հարկ համարեց շտապով ասել.

– Մի՞թե երբեք չես լսել, թե ինչ ասել է առևտրական տուն, առևտրական գրասենյակ, գինու մառան, մթերանոց, գործարան և կամ մի ուրիշ այսպիսի բան։

– Կարծեմ լսել եմ, սըր, մի ինչ-որ առևտրական տան մասին, բայց չեմ հիշում՝ երբ,– ասացի ես, փոքր-ինչ մտաբերելով նրա և քրոջ եկամուտի աղբյուրները։

– Երբ էլ լինի, բոլորը մեկ է,– ասաց նա։– Այժմ իմացիր, որ այդ առևտրական տան կառավարիչը մր. Քինիոնն է։

Ակնածությամբ մտիկ տվի այդ պարոնին, մինչ նա շարունակում էր պատուհանից դուրս նայել։

– Մր. Քինիոնն ասում է, թե շատ տղաներ կան նրա մոտ զբաղված, և թե դու էլ կարող էիր նրա ձեռքի տակ աշխատել, և միևնույն պայմաններով։

– Հարկավ, եթե մի ուրիշ գործ չգտնի, մր. Մեորդստոն,– նկատեց մր. Քինիոնը կամացուկ։

Մր. Մեորդստոնը ուշք չդարձրեց այդ խոսքերին և գրեթե ցասկոտ շարժումով շարունակեց.

– Պայմաններն այն են, որ դու սնունդ կստանաս և ձեռքի փող էլ կունենաս։ Իսկ բնակարանիդ մասին արդեն հոգացել եմ. դրա վարձը ես կվճարեմ։ Իսկ ճերմակեղենիդ գալով...

– Որ արդեն իմ հոգալու բանը կլինի,– մեջ մտավ միս Մեորդստոնը։

– Այդ էլ, ինչպես և հագուստդ, իմ ծախսով կպատրաստվի,– շարունակեց մր. Մեորդստոնը,– որովհետև դու անկարող ես դեռ ինքդ գնել։ Եվ այսպես, Դավիթ, այժմ դու Լոնդոն կերթաս մր. Քինիոնի հետ և կսկսես անկախ ապրել։

– Մի խոսքով, մենք քեզ արդեն տեղավորել ենք,– նկատեց քույրը։– Այժմ կմնա, որ պարտքդ լավ կատարես։

Լավ էի հասկանում, որ այս բոլորի նպատակը շուտով ինձնից ազատվելն է, բայց անկարող եմ լավ մտաբերել՝ արդյոք մր. Մեորդստոնի որոշումը ուրախությո՞ւն պատճառեց ինձ, թե՞ տրտմություն։ Տպավորությունս շատ պարզ չէր, և ես կարծես տատանվում էի այդ երկու զգացմունքների միջև՝ առանց լիովին ենթարկվելու մեկին կամ մյուսին։ Մտքերս էլ լավ պարզելու ժամանակ չկար. մր. Քինիոնը հետևյալ առավոտ մեկնելու էր։

Ահա տեսեք ինձ այդ առավոտ սև շղարշով փաթաթված, մի սպիտակ հին գլխարկ դրած, մի սևագույն բաճկոնակ, լայն ու կոպիտ կտավե վարտիք,– որ ինձ համար միս Մեորդստոնի ասելով մի լավ զրահ պիտի լիներ կյանքի ահեղ մարտի մեջ։– Ահա այսպես հագնված և ամբողջ հարստությունս մի փոքրիկ պայուսակում ամփոփված, ես՝ թշվառ մանուկս, (ինչպես որ անշուշտ կասեր մր. Գըմիջը) նստեցի մր. Քինիոնի հետ Յարմաութ գնացող փոստի կառքը, որտեղից արդեն դիլիժանսով պիտի Լոնդոն գնայի։ Ահա մեր տունն ու եկեղեցին ետ

են մնում, ծնողներիս գերեզմանները ծածկվում են, մանկական խաղերիս վայրերը այլևս չեմ տեսնում, և երկինքը դատարկ է։

ԺԱ. ԳԼՈՒԽ
Սկսում եմ գլխիս ճարն ինքս տեսնել, և այդ ինձ դուր չի գալիս

Արդեն բավական ապրած լինելով աշխարհիս երեսին, ես գրեթե կորցրել եմ որևէ բանի վրա զարմանալու ընդունակությունս. այնուամենայնիվ չեմ հասկանում, թե ինչպե՞ս կարողացան այնքան հեշտ դեն ձգել ինձ այն մատաղ հասակումս։ Չեմ հասկանում, թե ինչպե՞ս չգտնվեց գոնե մի մարդ, որ տեր կանգներ ինձ նման տղային, որ այնքան ընդունակ էր, ժիր, զգայուն, եռանդուն և հոգով ու մարմնով այնքան քնքուշ։ Սակայն այդպիսի մարդ չգտնվեց, և տասնամյա հասակումս ես մի փոքրիկ ծառա դարձա Մեորդստոնի և Գրինբիի վաճառատանը։

Մեորդստոնի և Գրինբիի առևտրական տունը գտնվում էր Թեմզայի ափին, Բլեքֆրայրըսի թաղում։ Նոր շենքերի շնորհիվ այժմ այդ տեղը ուրիշ տեսք է ստացել. բայց առաջ տունը վերջինն էր դեպի գետն իջնող անձուկ փողոցում, որ նավամատույցի սանդուղքով էր վերջանում։ Նա մի խարխուլ հին շենք էր՝ առանձին բակով, որ գետի հորձանալու ժամանակ բոլորովին ծածկվում էր ջրով, իսկ նվազելու ժամանակ ցեխի մեջ մտնում. մկները վխտում էին նրա բակում։ Դարավոր ածխով մրոտված, փոշով ախտոտված սենյակներ, կիսավեր աստիճաններ, քանդված հատակներ, մառանում կռվող պառավ մկների սուր ծվծվոց և համատարած փտություն ու գարշություն. այս է, ինչ-որ լավ հիշում եմ երկար տարիների շարքից հետո։ Այս բոլորը պատկերանում է աչքիս առջև ճիշտ այնպես, ինչպես որ էր այն չարաբաստիկ րոպեին, երբ դողդոջ ձեռքումս մր. Քինիոնի աջը բռնած առաջին անգամ այնտեղ մտա։

Մեորդստոնի և Գրինբիի տունը բազմատեսակ ճյուղեր ուներ, սակայն նրա գլխավոր գործն էր գինի և օղի վաճառել փոստատար նավերին։ Լավ չեմ հիշում, թե ո՞ւր էին գնում այդ նավերը, բայց մի քանիսը կարծեմ մինչև արևմտյան և արևելյան Հնդկաստան էին հասնում։ Գիտեմ միայն, որ այդ առևտրի հետևանքներից մեկն էր դատարկ շշերի մի ահագին քանակություն և մառանում բանող մի քանի մարդիկ ու տղաներ, որոնց պաշտոնն էր աչքի անցնել ամեն մի շիշ, ճաքածները ջոկել, մյուսները ողողել, ցայել և սրբել. այնուհետև լիքը շշերին նշանակ ու խցան դնել, զմռսել ու կնքել և վերջապես արկղների մեջ տեղավորել։ Այս էր ահա և իմ անելիքը մյուս տղաների հետ միասին։

Բոլորս միասին չորս հոգի էինք։ Ինձ համար որոշված տեղը մի անկյուն էր, ուր մր. Քինիոնը միշտ կարող էր ինձ տեսնել և իր գրասենյակի պատուհանից դիտել։ Ահա այդտեղ էր, ուր պիտի սկսեի իմ սեփական վաստակով ապրել։ Ավագ տղան պատվեր ստացավ պաշտոնիս մեջ հրահանգելու ինձ։ Նրա անունն Միկ Ուոկր էր, և նրա հագուստի աչքի ընկնող մասերը մի գզգզած գոգնոց և մի թղթե գլխանոց էին։ Նա պատմեց ինձ, թե իր հայրը թիավար է և ամեն տարի մի ոսկեձոպ սև թավշե ֆես հագած մասնակցում է լորդմեյըրի հանդիսավոր թափորին։ Ծանոթացրեց ինձ մեր ընկերներից մեկի հետ, որին մի տարօրինակ անուն էին տալիս մառանում, այն է՝ «Ալյուրոտ Փաթաթես»։ Հետո միայն իմացա, որ դա մկրտության անունը չէ, այլ այդպես են մականվանել նրան իր երեսի պատճառով, որ իրավ ալյուրի նման սպիտակ էր։ Փաթաթեսի հայրը ջրկիր էր և հրշեջ մի նշանավոր թատրոնում, իսկ փոքրիկ քույրը՝ պանտոմիմների մեջ դեր կատարող։

Անկարելի է բառերով բացատրել այն հոգեկան տագնապը, որ զգացի մի այսպիսի ընկերության մեջ ընկնելիս։ Ի՞նչ համեմատություն, ի՞նչ անհուն տարբերություն իմ

մանկության ընկերների, էլ չասեմ Ստիրֆորթի ու Տրեղլսի, և այդ Միկ Ուոկրի ու Փաթաթեսի միջև... Չի կարելի նկարագրել, թե ի՞նչ զգացի, երբ տեսա, որ ժամանակով մի բարեկիրթ և պիտանի մարդ դառնալու ոսկի հույսերս ի չիք դարձան: Մառանը հեզհետե պիտի ջնջեր մտքիս միջից այն բոլորը, ինչ ես սովորել էի մինչև այժմ, խեղդեր, սպաներ սրտիս ազնիվ ձգտումները դեպի առաջ: Այս ամենի դառնությունը վհատեցնում էր ինձ. ամաչում էի իմ ողորմելի վիճակից, լքյալ և անտերունչ կացությունից: Հենց որ Ուոկրը դուրս էր գնում մառանից, ես սկսում էի լաց լինել, արտասուքս այն ջրի հետ խառնելով, որի մեջ ցայում էի շշերը, և թվում էր ինձ, թե ահա սիրտս էլ մի ճաքած շշի նման կպայթի:

Պատի ժամացույցը տասներկուսն անց կեսը խփեց և բոլորը շարժվեցին, ճաշի գնալու պատրաստվելով: Մր. Քինիոնը վեր կացավ և գրասենյակի պատուհանից նշան արեց ինձ, որ իր մոտ գնամ: Գնացի: Այնտեղ կանգնած էր մի միջահասակ հուժկու մարդ, որի ահագին ու պսպղուն գլուխը հավկիթի պես անմազ էր, իսկ երեսը շատ ուռած: Հագած էր մի գորշագույն զգեստ ու նեղ վարտիք. երկուսն էլ բավական հին, սքանչելի էին սակայն շապկի տնկված օձիքները: Ձեռքին ուներ մի թեթև գավազան՝ կոթը փնջով զարդարուն, և զգեստի կոճակից կախ՝ մի լոռնետ, որ, ինչպես հետո իմացա, միայն զարդի առարկա էր, որովհետև ջենտլմենը սակավ էր նրան աչքին դնում և դնելիս ամենևին բան չէր տեսնում:

– Ահա սա է,– ասաց մր. Քինիոնը, ինձ մատնանիշ անելով:

– Ուրեմն սա՞ է մր. Կոպպերֆիլդը,– ասաց օտարականը մի տեսակ զիջող ձայնով և շնորհաշուք երևալու եղանակով, որ շատ սաստիկ ազդեց վրաս:– Հուսամ, որ առողջ եք, սըր:

Պատասխանեցի, թե լիովին առողջ եմ, և հուսամ՝ նա էլ առողջ է: Այն ինչ – վկա է երկինք – հոգիս հիվանդ էր. սակայն կյանքիս այդ միջոցին տրամադիր չէի որևէ մեկին գանգատվելու իմ վիճակից. ուստի և ասացի, թե շատ առողջ եմ, և հուսամ նա էլ առողջ է:

– Շնորհակալ եմ: Փառք աստծու, լիովին առողջ եմ,– ասաց անծանոթ ջենտլմենը:– Մի նամակ եմ ստացել մր. Մեռրդստոնից. խնդրում է ընդունել իմ տան հետևի սենյակում... որ այժմ դատարկ է... և կարող է վարձու տրվել, իբրև մի քնելու տեղ այս նորատի աշակերտին, որին այժմ պատիվ ունեմ...

Անծանոթը ձեռքը շարժեց և կզակը օձիքի մեջ իջեցրեց:

– Սա մր. Միկաբրն է,– ասաց մր. Քինիոնը:

– Հըմ, ազգանունս իրավ այդ է,– ասաց անծանոթը:

– Մր. Մեռրդստոնը վաղուց ճանաչում է մր. Միկաբրին,– ասաց մր. Քինիոնը:– Պարոնը մեր գրասենյակի համար զանազան պատվերներ հանձն առնող միջնորդ է: Մր. Մեռրդստոնը նրան գրել է, որ քեզ համար մի բնակարան գտնի, և պարոնը հոժար է իր տանն ընդունել քեզ:

– Ահա հասցես,– ասաց մր. Միկաբրը:– Ուինդզորի Դարաթափ, Սիթիի փողոց... Միով բանիվ, մր. Կոպպերֆիլդ, բնակարանս այնտեղ է,– կնքեց մր. Միկաբրը, նորից սիրուն ժպտալով:

Գլուխ տվի նրան:

– Անտարակույս,– շարունակեց մր. Միկաբրը,– դուք մեր մայրաքաղաքում շատ պտույտներ շրջած չեք լինի, և հավանական է, որ դեպի Ուինդզորի Դարափը գնալիս դուք մոլորվեք այս նոր Բաբելոնի բավիղներում. ուստի այս երեկո պատիվ կունենամ անձամբ գալ ձեր հետևից և ծանոթացնել ամենակարճ ճանապարհի հետ, որպեսզի... կարճ ասած...

Սրտանց շնորհակալ եղա, որ նա պատրաստ է այդպես սիրով նեղություն կրել ինձ համար:

– Ուրեմն, ո՞ր ժամին կհաճեիք, որ... – ասաց մր. Միկոբրը:

– Մոտ ութ ժամին,– ասաց մր. Քինիոնը:

– Ութից առաջ այստեղ կլինեմ,– ասաց մր. Միկոբրը։– Մնաք բարով, մր. Քինիոն։ Չեմ ուզում այլևս խանգարել ձեզ։

Նա գլխարկը հագավ և գավազանը կռան տակ դրած՝ դուրս գնալուն պես մի զվարթ երգ մրմնջալով հեռացավ։

Այն ժամանակ մր. Քինիոնը հրավիրեց ինձ որքան կարելի է օգտակար լինել Մեորդստոնի և Գրինբիի առևտրական ֆիրմային, ստանալով կարծեմ, շաբաթակն վեց շիլլինգ վարձատրություն։ Սակայն լավ չեմ հիշում – վե՞ց, թե՞ յոթ։ Այս կետի մասին անվստահ լինելուցս հետևացնում եմ, որ ռոճիկս առաջ վեց շիլինգ էր և հետո միայն յոթ դարձավ։ Առաջին շաբաթվա ռոճիկը մր. Քինիոնն իսկույն վճարեց ինձ (կարծեմ իր սեփական գրպանից)։ Այս գումարից վեց պենս Փաթաթեսին տվին իմ արկղը Ուինդզորի Դարափը տանելու համար, որովհետև ինքս տանելու ուժ չունեի. վեց պենս էլ ծախսեցի մոտակա պանդոկում՝ ճաշի համար, որ բաղկացած էր մսեղեն կարկանդակից և մի բաժակ ջրից։ Այնուհետև հանգստյան մեկ ժամը զբոսանքի նվիրեցի, ման գալով փողոցներում։

Երեկոյան, սահմանված ժամին, մր. Միկաբրը նորից երևաց։ Նրա ազնվությանը պատիվ բերելու համար՝ ես ձեռքերս ու երեսս լվացի, և մենք միասին ճանապարհ ընկանք դեպի մեր տունը, որ կարծեմ այսուհետև այդպես պետք է անվանեմ։ Ճանապարհին մր. Միկաբրը աշխատում էր փողոցների անուններն և անկյունավոր տների ձևը տպավորել մտքիս մեջ, որպեսզի հետևյալ առավոտյան ինձ համար հեշտ լինի վերադառնալ։

Հենց որ հասանք Ուինդզորի Դարափի տունը, որ իր տիրոջ պես մի անշուք տեսք ուներ, բայց և նրա մեծաշուք երևալու հավակնությունը, մր. Միկոբրը ներկայացրեց ինձ մրս. Միկոբրին, մի նիհար ու գունատ տիկնոջ, որ չէր կարող այլևս գեղափթիթ համարվել։ Տիկինը նստած էր ճաշարանում մի կրծքի մանուկ բռնած գրկի մեջ (առաջին դստիկոնը կաի-կարասիքից բոլորովին զուրկ էր և միայն պատուհանի վարագույրներով զարդարված, որոնց նպատակն էր հարևանների աչքին փոշի ցցանել)։ Մանուկը նրա երկվորյակներից մեկն էր, և ես կարող եմ հիմիկվանից ասել, որ այդ գերդաստանի հետ հարաբերություն ունենալուցս ի վեր երբեք չեմ տեսել, որ երկվորյակները երկուսն էլ միասին հեռու լինեին մոր կրծքից։ Մեկն անպատճառ կրծքին ամուր կպած էր մնում միշտ անհագ ախորժակով։

Այնտեղ կային և ուրիշ երկու երեխա – մաստր Միկաբրը՝ չորս տարեկան, և միս Միկաբրը՝ մոտ երեք տարեկան։ Տան բոլոր ծառայությունը կատարում էր մի թխադեմ նորատի կին, որ սովոր էր շարունակ փռնչալ։ Կես ժամ չանցած այս կինը հայտնեց ինձ, թե ինքը մի որբ է և եկել է Ս. Ղուկասի որբանոցից։ Իմ սենյակը գտնվում էր վերևի հարկում. դա մի փոքրիկ խցիկ էր՝ բոլորովին անզարդ, բայց կապտագույն առաստաղով ու որմերով։

– Մտքիցս անգամ չէր անցել,– ասաց մրս. Միկաբրը, սենյակն ինձ ցույց տալու համար իր մանկան հետ վերև գալով ու չնչասպառ նստելով,– մտքովս անգամ չէր անցել, մինչ հայրիկիս ու մայրիկիս մոտ էի ապրում իբրև աղջիկ, թե մի օր ստիպված կլինեմ վարձու սենյակ տալ իմ տանը։ Սակայն այս միջոցին մր. Միկաբրը այնպես նեղ հանգամանքների մեջ է գտնվում, որ ստիպված ենք խոնարհվել նրանց առջև։

– Այո՛, տիկին,– ասացի ես։

– Եվ հատկապես այժմ սաստիկ ծանր են մր. Միկաբրի հանգամանքները,– ասաց մրս. Միկաբրը, և արդյոք նա հնար կգտնի՞ իր վիճակը թեթևացնելու, չգիտեմ։ Հարկավ, մայրիկիս տանը ապրելիս գաղափար անգամ չունեի, թե կարիք ասածդ ինչ բան է, բառիս բուն իմաստով, բայց անճարը կերել է բանջարը, սովոր էր ասել հայրիկս։

Հաստատ չգիտեմ, թե ումի՞ց եմ լսել – մր. Միկաբրի՞ց, թե՞ ուրիշից, իբր մր. Միկաբրը մի ժամանակ նավատորմի սպա էր եղել, միայն թե այս բոպեիս համոզված եմ, որ նա երբեմն ծառայել է նավատորմում։ Այժմ նա մի տեսակ միջնորդ էր զանազան առևտրական տների համար, սակայն կարծեմ շատ քիչ բան էր վաստակում, գուցե և ոչինչ։

– Եթե մր. Միկաբրի պարտատերերը չկամեցան նրան ժամանակ տալ,– շարունակեց մրս. Միկաբրը,– հետևանքը իրենց համար իսկ վատ կլինի։ Որքան գործը շուտ վերջացնեն, այնքան լավ։ Ինչպես որ քարից արյուն չես քամի, այնպես էլ փող չես հանի մր. Միկաբրի քսակից, մանավանդ այս րոպեիս, էլ դատական ծախսերը չասենք։

Երբեք չհասկացա, թե ի՞նչ բան դրդեց մրս. Միկաբրին այդ աստիճան սրտաբաց լինել իմ առջև – արդյոք նրա թյուր կարծի՞քն իմ վաղահաս անկախության մասին, թե այն հանգամանքը, որ նա պատրաստ էր, եթե մի ուրիշ ունկնդիր չգտնվեր, իր ցավը անգամ երկվորյակներին պատմել. միայն այս կասեմ, որ երբ էլ տիկինն ինձ պատահեր, նրա խոսակցության բուն նյութը միշտ միևնույն էր։

Խե՛ղճ մրս. Միկաբր։ Նա ասաց ինձ, թե ամեն ջանք գործ է դրել իր վիճակը բարվոքելու, և ես բնավ կասկած չունեմ այդ մասին։ Փողոցի դռան հենց մեջտեղում մի ահագին պղնձե նշանակ էր փայլում այսպիսի մակագրությամբ. «Ազնիվ օրիորդների վարժարան ընդ տեսչությամբ մրս. Միկաբրի», բայց չեմ իմացել որ երբևէ այդ վարժարանում, և չեմ տեսել, որ գեթ մի օրիորդ այնտեղ գար և կամ գալու ցանկություն հայտներ, և կամ թե նույնիսկ մրս. Միկաբրը մի օրիորդ ընդունելու պատրաստվեր։ Իմ տեսած կամ լսած միակ այցելուները պարտատերերն էին։ Դրանք էին գալիս օրվա ամեն ժամերին, և մի քանիսը շատ կատաղի մարդիկ էին։ Մանավանդ մեկը՝ մի կեղտոտ դեմքով կոշկակար, հենց առավոտյան ժամը յոթին էր գալիս, մտնում էր սանդուղքի տակ և այնտեղից գոռում. «Հե՛յ, մր. Միկաբր, խլացե՞լ եք. թե մեռե՞լ։ Դուրս եկեք էլի՛։ Ի՞նչ եք թաքնվել։ Ինչո՞ւ պարտքերդ չեք վճարում։ Այս ի՛նչ ստոր վարմունք է։ Վճարեցեք և կերթամ։ Դե՛հ, դուրս եկեք։ Ո՞ր ազնիվ մարդն այսպես կվարվի։ Այս ինչի՞ նման է։ Գոնե մի ձայն հանեցե՛ք»։ Այս տեսակ ճառերի դեմ ոչ մի պատասխան չընդունելով, մարդը սկսում էր ավելի ճարտար լեզու թափել, և երբեմն լսում էի՝ «Ա՛յ ավազակ, ա՛յ սրիկա, այ կախվելու անպիտան» և ուրիշ ազդու բառեր։ Այս էլ որ չօգներ, սկսում էր փողոցից դեպի երկրորդ հարկի պատուհանները գոռալ, ուր, գիտեր, որ մր. Միկաբրը թաքնված է։ Ո՞վ գիտի, թե այդպիսի ժամանակ որքան էր մաշվում ու չարչարվում տանտերը. մի օր նրա կինը ճչալով հայտնեց ինձ, թե մր. Միկաբրը մտադիր է մինչև անգամ ածելիով մորթել իրեն։ Սակայն նրա հուսահատական տրամադրությունը երկար չտևեց։ Կես ժամից հետո նա արդեն մեծ եռանդով փայլ էր տալիս իր կոշիկներին և մի կայտառ երգ սուլելով դուրս գնում՝ ավելի սիգաճեմ, քան առաջ։ Նույն դյուրաթեք բնավորությունն ուներ և մրս. Միկաբրը։ Տեսել եմ նրան հարկահանի երևալուց հետո ուշաթափ եղած ժամը երեքին, իսկ ժամը չորսին գառան կոտլետ և տաք էլ վայելելիս, որ գնել էր գրավ դնելով իր երկու թեյի գդալը։ Մի երեկո էլ, միշտ ժամը վեցին տուն գալով տեսա, որ դատարանը մր. Միկաբրի տան կահույքը գրավեց, իսկ տիկինը նվաղելով հատակի վրա ընկավ (իհարկե երկվորյակներից մեկին գրկած), և նրա բոլոր գլխի զարդը քրքրվեց։ Սակայն երբեք էլ այնքան ուրախ չէի տեսել նրան, որքան որ ճիշտ այդ երեկո, երբ նա հորթի կոտլետ ճաշակելով խոհանոցի կրակի առջև, զվարթ-զվարթ պատմում էր, թե ինչպե՞ս են ապրել իր հայրիկն ու մայրիկը, ինչպիսի քեֆեր արել, ինչպիսի հյուրեր ընդունել։

Ահա այս տան և այս գերդաստանի մեջ էի անցկացնում ազատ ժամերս։ Ես ինքս էի հոգում նախաճաշիկս, մի պեննիի կաթ և մի պեննիի հաց գնելով։ Մի կտոր պանիր, մի կտոր էլ հաց պահում էի առանձին պահարանի ծածուկ դարակում երեկոյան ընթրիքիս համար։ Այս բոլորը մի ահագին խրամ էր բացում իմ վեց կամ յոթ շիլինգի մեջ, և ես ամբողջ օրերով աշխատում էի մառանում և ամբողջ շաբաթ պիտի ապրեի այդ գումարով։ Երկուշաբթի առավոտից մինչև շաբաթ երեկո մենակ էի այդ մարդկանց մեջ և ոչ ոք որևէ խորհուրդ, որևէ խրախույս, մի նպաստ, մի սփոփանք չէր տալիս ինձ։

Ես դեռ այնքան անփորձ էի, այնքան միամիտ, այն աստիճան անձեռնահաս մի ինքնուրույն կյանք վարելու – և միթե կարելի՞ էր, որ այդպես չլինեի,– որ առավոտները գործի գնալիս շատ անգամ չէի կարենում դիմադրել և մի չորացած կարկանդակ գնելու գայթակղության, և դրա վրա էի վատնում այն փողը, որ պիտի ճաշիս համար պահեի։ Այդ օրերը ճաշի փոխարեն

միայն հացով էի բավականանում և կամ մի կտոր պուդինգով։ Մտաբերում եմ պուդինգի երկու կրպակ, ուր մտնում էի փոփոխակի, նայելով քսակիս վիճակին։ Մեկը գտնվում էր ս. Մարտին եկեղեցու հետևի բակում, որ այժմ անհետացել է։ Այդ կրպակի պուդինգը չամչից էր, բայց գինը թանկ՝ երկու պեննի, այսինքն երկու անգամ ավելի, քան հասարակը։ Հասարակը պատրաստվում էր մի ուրիշ կրպակում Ստրենդի վրա։ Նա մի ծանր, անմարսելի պուդինգ էր՝ կոպիտ և նոսր ցրված չամիչներով, բայց տաք էր լինում ճիշտ անցնելուս միջոցին, և շատ օրեր նա էր կազմում իմ ճաշը։ Իսկ կանոնավոր ճաշերիս համար առնում էի երշիկ ու հաց մի պեննիով, կամ թե չորս պեննիանոց մսեղեն կերակուր մի որևէ պանդոկում և կամ մի կտոր հաց ու պանիր, մի բաժակ էլ գարեջուր մեր մառանի կողմերը գտնվող մի անպիտան սրճարանում, որի անունը «Առյուծ» էր. էլ չեմ հիշում՝ կապո՞ւյտ, թե՞ կարմիր մակդիրով։ Մի օր տանից վերցրած մի բոմբի փաթաթելով մի թղթի մեջ և գրքի նման թևիս տակ բռնելով, մտա Դրըրի Լենիի մոտ գտնվող հռչակավոր պանդոկը և մի լավ **սուկիի** խորոված պատվիրեցի։ Չեմ իմանում, թե պանդոկի սպասավորն ի՞նչ մտածեց, ինձ նման մի փոքրիկ տղայի մենակ գալը տեսնելով, բայց միտքս է, որ մինչ ես ուտում էի, նա մի ուրիշ տղա կանչեց, և երկուսն էլ սկսեցին զարմանալով վրաս նայել։ Ես ընծայեցի նրան կես պեննի, և ուրախ կլինեի, եթե չընդուներ։

Կարծեմ մի կես ժամի արձակուրդ էլ տալիս էին մեզ թեյի համար։ Եթե գրպանումս փող լիներ, մի բաժակ կաթով սուրճ էի պատվիրում և մի պատառ կարագով հաց, իսկ եթե չլիներ, մտիկ էի տալիս Ֆլիտ Ստրիտում գտնվող մսավաճառի կրպակին, կամ թե թափառելով մինչև Կըվընտ Գարդընի շուկան գնում և աչքս տնկում այնտեղ դրված անանասներին։ Սիրում էի շրջել և Ադելֆիի թատրոնի ստվերապատ կամարների տակ։ Մի երեկո այդ կամարների տակից դուրս գալիս հանկարծ մի գինետուն ընկա, որի դիմացը ածխակիր մանուկներ էին պար գալիս. ես էլ ուրիշների հետ դուրսը նստելով սկսեցի նրանց խաղին նայել։ Արդյոք նրանք ի՞նչ մտածեցին իմ մասին։

Դեռ այնքա՜ն փոքր էի, այնքա՜ն մանուկ, որ շատ անգամ ճաշիս փողը մի բաժակ էյլի կամ պորտըրի վրա վատնելու համար որևէ պանդոկ մտնելիս, պանդոկի զարմացած տերը դժվարանում էր խնդիրս կատարել։ Մի երեկո մոտեցա սեղանին և ասացի.

– Մի բաժակ էյլ, ամենալավ տեսակից։

Այդ օրը ինձ համար մի առանձին օր էր, կարծեմ ծննդյանս օրը։

– Ամենալավի և թունդի գինը երկուսուկես պեննի է,– ասաց պանդոկի տերը։

– Ուրեմն խնդրեմ,– ասացի ես, փողը դարակի վրա դնելով,– այդ թունդից մի բաժակ։

Պանդոկապետը մի տարօրինակ ժպիտով վերից-վար չափեց ինձ և փոխանակ էյլ տալու, որմի հետևը նայեց ու մի բան ասաց իր կնոջը։ Կինը եկավ գուլպան ձեռքին և ապշությամբ սկսեց դիտել ինձ։ Ահա երեքս էլ կանգնած ենք՝ տերը դարակին հենված, կինը՝ աչքերը վրաս սևեռած, իսկ ես փոքր-ինչ այլայլված ու շփոթված։ Նրանք ինձ հարցուփորձ արին, թե անունս ի՞նչ է, ո՞վ եմ, քանի՞ տարեկան եմ, որտե՞ղ եմ ապրում, ի՞նչ գործի եմ և ինչպե՞ս եմ պանդոկ եկել։ Ծնողներիս անպատվություն չբերելու համար բավական շինծու պատասխաններ տվի։ Նրանք մի բաժակ էյլ առաջարկեցին ինձ, որ կարծեմ շատ ընտիր տեսակից չէր, ոչ էլ թունդ, և կինը փողս դարակից հանելով ետ տվեց ինձ։ Երբ դուրս էի գնում, նա բուն մայրական գգվանքով համբուրեց ինձ և կամացուկ ասաց, որ չշտապեմ թունդ խմիչքներ գործածել։

Այս բոլորը հիշելիս, ո՛չ այդ ժամանակվա միջոցներիս սղությունն եմ խտացնում, ո՛չ էլ կյանքիս դժվարությունը։ Գիտեմ, որ երբ մր. Քինիոնն ինձ մի ավելորդ շիլինգ էր տալիս, ես դրան ճաշի և կամ թեյի վրա էի ծախսում։ Գիտեմ, որ առավոտից մինչև գիշեր աշխատում էի գռեհիկ տղաների ու մարդկանց հետ, ինքս էլ թշվառ նրանց նման։ Գիտեմ, որ փողոցներում քարշ էի գալիս համարյա թե սննդի կարոտ և կիսամերկ։ Ես գիտեմ, որ եթե աստծու ողորմությունը չլիներ, այս լքյալ վիճակիս մեջ ես մի գող և կամ շրջմոլիկ կդառնայի։

Բայց և այնպես գոնե դիրքս Մեորդստոնի ու Գրինբիի մոտ որոշ էր և գոնե մի որևէ պաշտոն ունեի։ Բացի այն, որ մր. Քինիոնը, չնայելով իր անհոգության ու շատ զբաղված լինելուն, ավելի մեղմ էր վարվում ինձ հետ, քան մյուսների հետ, ես ոչ ոքի առիթ չէի տալիս ինքնասիրությունս շոշափելու, որովհետև երբեք տրտունջ չէի հայտնում իմ վիճակից, և ոչ ոք չգիտեր, թե ինչպե՞ս եմ այդտեղ ընկել։ Ես լուռ էի տանջվում, և սրտիս ցավն ուրիշներին անհայտ էր, թե որքան էի տանջվում – արդեն ասել եմ, ես անզոր եմ արտահայտել, սակայն չնայելով վշտիս անչափ դառնությանը, զսպում էի ինձ և իմ գործին հետևում։ Հենց սկզբից հասկացել էի, որ ընկերներիս ծաղր ու ծանակից չեմ ազատվի, եթե իմ գործը նրանց նման լավ չկատարեմ։ Եվ շուտով ես արհեստիս այնքան լավ հմտացա, որ ոչ ոքից ետ չէի մնում։ Բայց որքան էլ ես մտերմաբար վարվեի նրանց հետ, դարձյալ շարժումներիս ու ձևերիս մեջ կար մի բան, որը որոշակի զատում էր ինձ այդ խմբից և մի հայտնի տարբերություն դնում մեր միջև։ Տղաները ինձ «լիտտլ ջենտ» (փոքրիկ պարոն) և կամ «փոքրիկ Սուֆոլկցի» էին անվանում։ Գրիգոր անունով մի բանվոր, որ բեռ կապողների ուստան էր, և Տիպ անունով մի ուրիշը, որ սայլապան էր, երբեմն պարզապես ինձ «Դավիթ» էին կոչում, սակայն այս պատահում էր մեր առանձին մտերմության րոպեներին, երբ ես, առանց գործս ընդհատելու փորձում էի զվարճացնել նրանց հին ընթերցանությանս բեկորները պատմելով, որոնք արդեն համարյա թե անհետացել էին իմ մտքից։ Մի օր Ալյուրոտ Փաթաթեսը զայրացել էր, թե ինչո՞ւ են այդքան ուշադրություն ընծայում ինձ, բայց Միկ Ուոկրը նույն րոպեին խելքի բերեց հիմարին։

Ոչ մի հույս չէի տեսնում ազատվելու այս տաժանելի վիճակից, չէի էլ մտածում այս մասին։ Սակայն մի րոպե էլ չէի հաշտվում դրա հետ. ընդհակառակը՝ շատ թշվառ էի համարում ինձ, թեև լռությամբ թաքցնում էի աղետս։ Մինչև անգամ Պեգգոտիին գրած բազմաթիվ նամակներիս մեջ աշխատում էի ճշմարտությունը ծածկել, մասամբ ամոթից, մասամբ էլ սիրուցս դեպի նա։

Մր. Միկաբրի գործերի խանգարումը, հոգուս տագնապը սաստկացնում էր։ Անտերունչ կացության մեջ ես սրտով կապվել էի նրա տան հետ։ Փողոցներում մենակ շրջելիս շատ անգամ հիշում էի մրս. Միկաբրի՝ հաշիվներն ու միջոցները և մր. Միկաբրի պարտքերի բեռը սարի պես ծանրանում էր սրտիս վրա։ Շաբաթ երեկոները, որոնք ինձ համար տոն էին,– որովհետև նախ՝ հետս վեց կամ յոթ շիլինգ էի բերում, մտածելով, թե ինչե՛ր կառնեմ այս փողով, և երկրորդ՝ վաղ էի վերադառնում տուն,– այդ երեկոները մրս. Միկաբրը իմ մոտ էր գալիս և աղիողորմ գանգատներ հայտնում, որոնք շարունակվում էին և կիրակի առավոտները, մինչև ես մի համեստ նախաճաշ էի պատրաստում։ Մր. Միկաբրի համար մի հասարակ բան էր երեխայի նման լաց լինել, շաբաթ երեկոյան գանգատների սկզբին և դեռ երեկոն չվերջացած՝ մի զվարթ ռոմանս հնչեցնել։ Շատ եմ տեսել, ինչպես նա դառն արտասուք թափելով տուն էր գալիս ընթրիքից առաջ և ասում, թե իր համար բանտից զատ ուրիշ ապաստան չկա, իսկ ընթրիքից հետո հաշիվներ անում, թե ի՞նչ կնստի առաջին հարկում մի պատշգամբ կամ **բելվեդեռ** շինելը, «եթե հանկարծ բախտը ժպտա»։ Այս առմամբ մրս. Միկաբրը հար նման էր իր մարդուն։

Չնայելով այդ մարդկանց և իմ հասակի ծաղրաշարժ տարբերությանը, մեր միջև մի տարօրինակ բարեկամություն էր հաստատվել, որ անշուշտ մեր վիճակների հետևանք էր։ Բայց ես քաշվում էի նրանց ընտանեկան սեղանին մասնակցելու հրավերներն ընդունելուց (գիտենալով, որ նրանք հարատև կռվի մեջ են հացթուխի ու մսագործի հետ և իրենք էլ շատ անգամ սոված են մնում), մինչև այն օրը, երբ մրս. Միկաբրը մի կատարյալ մտերմություն ընծայեց ինձ։

– Մաստր Կոպպերֆիլդ,– ասաց մրս. Միկաբրը,– ես օտարի տեղ չեմ դնում ձեզ, ուստի և համարձակ հայտնում եմ, որ մր. Միկաբրի ճգնաժամն արդեն հասել է։

Այս լուրը սաստիկ վշտացրեց ինձ և ես՝ խորին կարեկցությամբ մտիկ տվի մրս. Միկաբրի արտասուքից կարմրած աչքերին։

– Բացի մի կտոր հոլանդական պանրից, որ բոլորովին անհարմար է մեր մանուկ գերդաստանի պետքերին ,– ասաց մրս. Միկաբրը,– մի փշրանք անգամ չի մնացել շտեմարանում: Հայրիկիս ու մայրիկիս մոտ ապրելիս, ես սովոր էի շտեմարան բառը գոծածել և այժմ լեզուս ինքն իրեն է դա կրկնում: Ասելիքս այս է, որ մեր տանը բնավ ուտելու բան չկա:

– Աստվա՛ծ իմ,– գոչեցի ես սոսկալով:

Այդ րոպեին իմ շաբաթական թոշակից գրպանումս մնացել էր մոտ երեք շիլինգ (որից պետք է եզրակացնել, թե մեր խոսակցությունը չորեքշաբթի երեկո է պատահել). իսկույն այդ գումարը հանեցի և սրտագին հուզմունքով առաջարկեցի տիկնոջը – ընդունել իբրև մի փոքրիկ փոխառություն: Սակայն լեդի Միկաբրը համբուրեց ինձ և ստիպեց, որ գումարը գրպանս դնեմ, ասելով, թե նա երբեք առաջարկս չի ընդունի:

– Ո՛չ, սիրելի մաստր Կոպպերֆիլդ,– ասաց նա,– այդպիսի բան մտքովս անգամ չի անցել: Բայց, ազնիվ բարեկամ, կարող եք ինձ համար մի ուրիշ տեսակ լավություն անել, որ մեծ սիրով կընդունեմ:

– Հրամայեցեք, լեդի, ի՞նչ և կամենաք, պատրաստ եմ անել:

– Ես ինքս անձամբ,– ասաց մրս. Միկաբրը,– զանազան ժամանակ և ծածուկ գրավ եմ դրել մի քանի հատ արծաթեղեն՝ վեց թեյի գդալ, երկու աղաման ու մի զույգ շաքարի ունելի, և փող ստացել դրանց փոխարեն: Սակայն ծանր բան է երկվորյակներիս հետ վաշխառուի մոտ գնալը, և այն սակարկություններըը չարաչար նեղում են ինձ, մանավանդ որ հայրիկս ու մայրիկս են միտքս ընկնում: Ունեմ և մի քանի ուրիշ չնչին իրեր, որոնք մեզ շատ հարկավոր չեն: Մր. Միկաբրն իր քնքուշ զգացումով ամենևին ընդունակ չէ մի այնպիսի գործ գլուխ բերել, իսկ ռամիկ Կլիկկետն արժանի չէ, որ ես նրան մի առանձին հավատ ընծայեմ. այդ կնշանակեր երես տալ նրան: Ուստի, մաստր, Կոպպերֆիլդ, եթե թույլ տայիք. . .

Մրս. Միկաբրի միտքը հասկացա և խնդրեցի նրան հրամայել ինձ ինչ էլ կամենա: Եվ հենց այդ երեկո նա ինձ հանձնարարեց դուրս տանել ավելի թեթև իրերը, և այնուհետև գրեթե ամեն առավոտ, Մեորդստոնի ու Գրիմբիի մոտ գնալուցս առաջ, ես կատարում էի այդպիսի նուրբ պատվերներ:

Մր. Միկաբրն ուներ մի քանի գիրք դարակի վրա, որ նա անվանում էր մատենադարան. այդտեղից էլ սկսեցինք: Գրքերը մի առ մի տանում էի Սիտի Ռոդ, մի հասարակ բուկինիստի մոտ, որ նաև երգեցիկ թռչուններ ծախող էր, և ինչ գնով ասես վաճառում նրան: Նա իր կրպակի հետևի տանն էր բնակվում և սովոր էր ամեն երեկո լավ հարբել, ամեն առավոտ էլ իր կնոջից ծեծ ուտել: Երբեմն, երբ վաղ էի գնում նրա մոտ, նա ուռած աչքով ու արյունոտ ճակատով էր լինում և զուր որոնում էր իր քրքրված հագուստների գրպանի մեջ այն փողը, որ տալու էր ինձ, մինչ կինն անեծք էր թափում նրա գլխին: Երբեմն, մարդը փողը կորցրած լինելով, խնդրում էր ինձ մյուս անգամ գալ, սակայն կինը միշտ ճարում էր մի գումար (որ կարծեմ թոցրած էր լինում մարդու գրպանից) և արդեն թաքուն կերպով սանդուղքի վրա ինձ հետ վերջացնում առևտուրը:

Շուտով ես վաշխառուի կրպակումն էլ քաջածանոթ անձ դարձա: Այս կրպակի ջենտլմենն գործակատարը շատ լավ էր վարվում ինձ հետ և երբեմն, մինչ ինքը բերածս իրերը զննելով էր զբաղվում, ինձ լատիներեն բառեր էր հոլովել տալիս և կամ թե բայեր խոնարհել:

Այս դեպքերից հետո մրս. Միկաբրն անհրաժեշտ էր համարում մի փառավոր ընթրիք սարքել, որին ինձ էլ ստիպողաբար հրավիրում էր մասնակցել, և լավ միտքս է, թե ինչպես այն ժամանակ քեֆ էր անում նրա սովատանջ գերդաստանը:

Վերջապես մր. Միկաբրի ճգնաժամը վրա հասավ. մի առավոտ նրան բռնեցին և Կինգս Բենչի բանտը[17] տարան: Գնալիս նա ինձ ասաց, թե ընդմիշտ իր արևը խավարել է, և ես հավատացի,

[17] Արքունի դատարանի բանտ, ուր փակում էին պարտապաններին:

թե նրա սիրտն էլ իմի նման կոտրված կլինի։ Սակայն հետո իմացա, որ հենց նույն օրը ճաշից հետո ընկերների հետ զվարթ-զվարթ կոն է խաղացել բանտի մեջ։

Մր. Միկաբրի բանտարկության առաջին իսկ կիրակին ես նրան տեսնելու և հետը ճաշելու պիտի գնայի։ Պետք եղավ իմանալ, թե ի՞նչ ճամփով կարելի էր հասնել բանտը։ Ասացին՝ նախ այսինչ տեղը գնալ, հետո այնինչ տեղը, այնտեղից էլ մի ուրիշ տեղ. հետո կտեսնեմ մի մեծ բակ, ուղիղ կանցնեմ այդ բակով, և դիմացս մի բանտապահ դուրս կգա։ Այդպես էլ արի, և վերջապես բանտապահը դուրս եկավ։ Նրան տեսնելուս պես Րոդրիկ Բեդմոնին հիշեցի, որ մերկ ու թշվառ մարդիկ էր գտել բանտն ընկնելիս։ Սիրտս հանկարծ այնպես թնդաց, և աչքերս այնպես մթնեցին, որ էլ չիմացա, թե բանտապահը ո՞ւր կորավ։

Մր. Միկաբրն սպասում էր ինձ դռան մոտ. բարձրացանք նրա սենյակը (հինգերորդ հարկ) և դառնապես լաց եղանք։ Նա հանդիսաբար պատվիրեց ինձ խրատվել իր վիճակից և միշտ հիշել, որ եթե մարդ տարեկան քսան ստեռլինգ եկամուտ ունի և տասնինը ստեռլինգ և տասնինը շիլինգ ու վեց պենս է ծախսում, ասել է թե երջանիկ է. իսկ եթե քսանմեկ ստեռլինգ ծախսի, այն ժամանակ նա թշվառ, կորած մարդ է։ Այս ասելուն պես մր. Միկաբրը մի շիշ պորտըր գնելու համար մի շիլինգ պարտք արավ ինձանից, հանուն մրս. Միկաբրի մի մուրհակ տալով ինձ, թաշկինակով աչքերը սրբեց և նույն րոպեին զվարթացավ։

Նստեցինք մի փոքր վառարանի առջև. դրա ժանգոտ վանդակից աջ ու ձախ կողմից մի-մի աղյուս էր դրված, որպեսզի կրակը մեղմ վառվի և շատ ածուխ չսպառվի։ Այդ միջոցին մի ուրիշ պարտապան մր. Միկաբրի սենյակում ապրող ընկերակիցը, ներս մտավ, մի տապակած գառան ազդր բերելով, որ մեր ընկերովի ճաշը պիտի կազմեր։

– Այժմ, մաստր Կոպպերֆիլդ,– ասաց մր. Միկաբրը,– խնդրեմ հաճեցեք վերևի հարկը բարձրանալ և տեսնել Հոպկինս գնդապետին։ Հայտնեցեք նրան իմ ողջույնը, ասացեք, որ իմ ընկերն եք, և խնդրեցեք մի դանակ ու մի պատառաքաղ շնորհել մեզ։

Հոպկինս գնդապետը երկուսն էլ շնորհեց, խնդրելով փոխադարձ ողջույն հայտնել մր. Միկաբրին։ Նրա փոքրիկ սենյակում մի կեղտոտ կին և երկու դժգույն աղջիկ տեսա, երկուսն էլ գզգզված մազերով։ Լավ է, որ գնացել էի դանակ ու պատառաքաղ խնդրելու, այլ ոչ թե սանր։ Հոպկինս գնդապետը ինքն էլ իր թավ մորուքով ու սաստիկ մաշված վերարկուով, որի տակ ուրիշ շոր չկար, մի շատ գծուծ ու ողորմելի տեսք ուներ։ Նրա անկողինը ծալված կենում էր մի անկյունում, իսկ ընտանիքի պնակները, բաժակներն ու պուտուկները մի դարակի վրա էին շարված։ Գուշակեցի,– աստված գիտե, թե ինչպես,– որ թեև գզգզված մազերով աղջիկները Հոպկինս գնդապետի զավակներն են, բայց կեղտոտ կինը նրա ամուսինը չէ։

Որքան էլ մեր ճաշը բոշայական լիներ, բայց և այնպես անախորժ չէր։ Ճաշից հետո, ես ետ տարա Հոպկինս գնդապետի պատարաքաղն ու դանակը և տուն վերադարձա այցելությանս մասին մրս. Միկաբրին հաշիվ տալու։ Ինձ տեսնելուն պես նա ուշաթափ եղավ, հետո Էգ-հոտ[18], որ փոքր-ինչ մխիթարվենք մեր գործերի մասին խոսելով։

Չգիտեմ ինչպես վաճառվեց տան կահ-կարասին՝ ընտանիքի ապրուստը հոգալու համար, և կամ թե ով վաճառեց. միայն այս գիտեմ, որ վաճառողը ես չէի։ Այնուամենայնիվ, կահ-կարասին վաճառեցին և սայլով տարան, բացի անկողիններից, երկու-երեք աթոռից և խոհանոցի սեղանից։ Այս մնացած գույքով տեղափոխվեցինք Ուինդզորի Դարափի ամայի տան երկու ներքնի սենյակները, ուր և գիշեր-ցերեկ ապրում էինք մրս. Միկաբրը, մանուկները, Որբուկն ու ես, չեմ հիշում մինչև երբ, բայց բավական երկար ժամանակ։ Վերջապես մրս. Միկաբրը վճռեց բնակություն հաստատել բանտում, ուր իր մարդն արդեն մի ջոկ սենյակ էր ստացել։ Ես հանձնեցի տանտերին նրա փակված տան բանալին, որ նա գոհությամբ ընդունեց, և անկողինները բանտ տարվեցին, բացի իմից։ Իմ բնակության համար մի փոքր խցիկ վարձեցինք Կիգս Բենչի մոտերքում, և ես շատ ուրախացա, որովհետև մր.

[18] Տաք խմիչք, որ օղիով կամ էյլից, ձվից ու շաքարից է պատրաստվում։

Միկաբրի ընտանիքի հետ այնպես սերտ կապվելուցս հետո կդժվարանայի զատվել նրանցից։ Որբ աղախնու համար էլ մի առանձին անկյուն ճարվեց նույն բանտի մոտերքում։ Իմ համեստ խցիկը համարյա թե տանիքումն էր, որտեղից մի զվարճալի պատկեր էր բացվում՝ հետևի բակն իր փայտի պահեստով։ Նա մի դրախտ թվաց ինձ, մանավանդ երբ մտածեցի, որ մր. Միկաբրի ճգնաժամն արդեն անցել է։

Այդ միջոցին ես շարունակ աշխատում էի Մեորդստոնի ու Գրինբիի մառանում միևնույն հասարակ գործի վրա, միևնույն գռեհիկ ընկերների հետ և միևնույն նվաստ կացության մեջ, ինչպես և առաջ։ Սակայն իմ բախտից ոչ ոքի հետ սերտ բարեկամություն չունեի և երբեք չմոտեցա այն երիտասարդ բանվորներին, որոնք ճաշից հետո քարշ էին գալիս փողոցներում։ Այժմ էլ ես անբախտ էի առաջվա պես, բայց սրտիս վիշտը մենակ էի կրում և թաքցնում։ Միայն երկու փոփոխություն կարող եմ հիշել այդ օրերից. նախ՝ որ շորերս ավելի մաշվել ու գզգզվել էին, երկրորդ՝ որ բավական թեթևացել էի մր. Միկաբրի և նրա կնոջ մասին հոգ տանելու կարիքից. մի քանի ազգականներ ու բարեկամներ արդեն սկսել էին օգնել նրանց, և նրանք ավելի հանգիստ էին ապրում բանտի մեջ, քան երբևիցե իրենց տանը։ Այժմ ես նրանց հետ էի նախաճաշում մի որոշ պայմանով, որի մանրամասնությունները մոռացել եմ։ Մոռացել եմ նմանապես, թե բանտի դռներն առավոտյան ո՛ր ժամին էին այցելուների առջև բացվում. միայն գիտեմ, որ ես ժամը վեցին վեր էի կենում և Լոնդոնի կամրջի վրա զբոսնելու գնում։ Սիրում էի այնտեղ նստել և անցուդարձ անող բազմությանը նայել, ջրի վրա ցոլացող արևի շողքին մտիկ տալ և կամ Մոնումենտի[19] լուսաճաճանչ գագաթը դիտել։ Երբեմն Որբուկն էլ այնտեղ էր գալիս Տաուըրի[20] մասին սոսկալի բաներ լսելու ինձնից, որոնց ճշմարտությանը ես ինքս հարկավ, հավատում էի։ Երեկոյան սովոր էի բանտ վերադառնալ և մր. Միկաբրի հետ բակում շրջել, կամ թե մրս. Միկաբրի հետ ճատրակ խաղալ, ականջ դնելով նրա հիշողություններին այն երջանիկ օրերից, երբ նա իր հայրիկի ու մայրիկի հարկի տակ էր բնակվել։ Արդյոք հայտնի՞ էր մր. Մեորդստոնին, թե ինչպես և որտեղ եմ ապրում,– չգիտեմ։ Այս մասին ոչ մեկին բան չէի ասել Մեորդստոնի ու Գրինբիի մառանում։

Թեև մր. Միկաբրի ճգնաժամն անցել էր, բայց նրա գործերը դեռ խճճված էին մի ինչ-որ թղթի պատճառով, որի մասին շատ էին զրուցում և կարծեմ պարտատերերի հետ կանխավ հաստատված մի պայմանագիր պիտի լիներ, սակայն դրա բուն նշանակությունը չէի հասկանում և նա ինձ մի դիվային թուղթ էր թվում և կամ թե սատանայի հետ կնքված դաշինք, որի նմանները լսած էի, թե մի ժամանակ գոյություն են ունեցել Գերմանիայում։ Վերջապես այդ մուրհակն անհետացավ – ո՞ւր և ինչպե՞ս՝ չգիտեմ. գոնե դադարեց գայթակղության քար լինելուց, ինչպես առաջ էր, և մրս. Միկաբրը հաղորդեց ինձ, թե «իր ընտանիքի» խորհրդով մր. Միկաբրը բանտից ազատվելու համար որոշել է սնանկացած հռչակել իրեն և թե հույս կա, որ նրա նման անմեղ մարդը պետական օրենքով վեց ամիս կարձակվի։

– Եվ այն ժամանակ,– ասաց մր. Միկաբրը, որ ներկա էր,– երկնային ողորմությամբ ես կսկսեմ բոլորովին նոր կյանք վարել և երջանիկ կլինեմ, եթե... միով բանիվ, եթե գործերս հաջող ընթանան։

Այդ միջոցին, որքան հիշում եմ, մր. Միկաբրը մի աղերսագիր էր շարադրում Ստորին Պալատի անունով, որպեսզի Պալատը բարեհաճի պարտ ու պատշաճ ռեֆորմ մտցնել պարտապանների բանտարկության օրենքի մեջ։

Բանտում մի կլուբ կար, ուր մր. Միկաբրը, իբրև ջենտլմեն, մեծ հեղինակություն էր վայելում։ Նա իր աղերսագրի գաղափարը կլուբին բացատրեց, և կլուբը միաձայն հավանություն

---

[19] Այդպես է կոչվում Լոնդոնի կամրջի մոտերքում գտնվող աշտարակը, որ 1666 թ. համաճարակ հրդեհի հիշատակին է կառուցված։

[20] Բանտ, որ1098 թ. Ուիլլիամ Աշխարհակալն էր շինել տվել կղզու ըմբոստ բնակիչներին բանտարկելու համար։ Տաուըրի մեջ տառապել ու գլխատվել են բազմաթիվ պետական անձինք։ Այժմ մի ճոխ զինանոց է և թանգարան։

հայտնեց նրան։ Այս հավանությամբ քաջալերված, մր. Միկաբրը,– որ իսկապես բարի մարդ էր և շատ ժիրաջան այն բոլոր գործերում, որոնք իր անձի հետ ամենևին կապ չունեին, և միշտ պատրաստ զբաղվելու ամեն բանով, որից իր համար ոչ մի օգուտ չկար,– մեծ եռանդով սկսեց հորինել, մշակել, գրել, ջնջել, ուղղել, մաքրել աղերսագիրը։ Մի քանի օր ու գիշեր այսպիսի եռանդով աշխատելուց հետո շարադրությունը մի ահագին թերթի վրա արտագրեց և իր սեղանի վրա փռեց, ծանուցում անելով թե՛ կլուբի անդամներին և թե՛ բանտի մյուս բնակիչներին, որ որոշյալ ժամին իր սենյակը բարեհաճեն անցնել և այդ թուղթը ստորագրեն։

Թեպետ ես անձամբ ճանաչում էի բանտի բոլոր բնակիչներին, ինչպես և նրանք՝ ինձ, այնուամենայնիվ, այս հանդիսավոր գործողության լուրը հետաքրքրությունս այնքան շարժեց, որ ես մի երկու ժամվա արձակուրդ խնդրեցի Մեորդստոնի և Գրինբիի մառանից և վաղօրոք գնացի նստեցի մր. Միկոբրի սենյակի մի անկյունում, որպեսզի հյուրերի մեկ-մեկ ներս մտնելը լավ տեսնեմ։ Կլուբի ավագ անդամները ինչքան որ սենյակում տեղավորվելու հնար կար, արդեն սեղանի շուրջը շարված էին մր. Միկաբրի հետ միասին, մինչ իմ հին բարեկամ Հոպկինս գնդապետը (որ այս հանդիսավոր դեպքի առթիվ լվացվել էր) անմիջապես սեղանի մոտ էր կանգնել թղթի բովանդակությունը այն անձերին կարդալու համար, որոնք դեռ ծանոթ չէին դրա հետ։ Ահա դուռը բացվեց, և բանտի բնակիչները սկսեցին հետզհետե ներս մտնել, թուղթը հերթով ստորագրել և ստորագրելուց հետո դուրս գնալ, հնարվորություն տալով ներս գալու դրսում դրսում սպասող բազմության։ Հոպկինս գնդապետն ամեն մեկին հաջորդաբար հարցնում էր. «Կարդացե՞լ եք»։– «Ո՛չ» – Ուրեմն կցանկանա՞ք, որ կարդամ»։ Եվ եթե անդամը գեթ մի թեթև ցանկություն հայտներ լսելու, Հոպկինս գնդապետը հնչուն ձայնով, առանց մի բառ բաց թողնելու, թուղթը ծայրեծայր կարդում էր։ Գնդապետը պատրաստ էր միևնույնը քսան հազար անգամ կարդալ, եթե քսան հազար մարդ մի առ մի նրան լսելու փափագ հայտներ։ Չեմ մոռացել, թե ինչպես քաղցր էին հեղեղում այսպիսի ֆրազները. «Ազգային ներկայացուցիչների վեհավայր կաճառդ», «ներքոստորագրյալներս պատիվ ունենք խոնարհաբար մատչելու պատկառելի ատյանիդ». «նորին վեհափառության ողորմած թագուհու ամենաթշվառ հպատակներս» և այլն։ Կարելի էր կարծել, թե այս խոսքերից յուրաքանչյուրը մի-մի նյութ է, մի-մի իրական անուշ բան, որ զմայլեցնում է նրա դեմքը։ Այնինչ մր. Միկաբրը հեղինակի սնապարծ դեմքով լսում էր նրան և ինքնագոհ ժպիտով մտիկ տալիս դիմացի պարսպի բևեռներին։

ԺԲ. ԳԼՈՒԽ
Մտքումս դրի մի վճռական քայլ անել

Վերջապես արքունի ատյանը մր. Միկոբրի գործը քննեց ու վճռեց, որ այս ջենտլմենը բանտից ազատվի։ Ես շատ ուրախացա։ Նրա պարտատերերն անողոք չհանդիսացան, և, մրս Միկաբրի ասելով, մինչև անգամ վրեժխնդիր կոշկակարը հայտնեց, թե ամենևին չար միտք չունի նրա դեմ, այլ միայն կամենում է, իրեն հասանելի գումարը ետ ստանալ, որ մարդկային բնության լիովին պատշաճ ցանկություն էր։

Մր. Միկաբրը ատյանի վճիռը լսելուն պես բանտ վերադարձավ, որովհետև վերջնական արձակում ստանալուց առաջ պարտավոր էր մի քանի մանր ծախքեր հոգալ և մի քանի ձևականություններ կատարել։ Կլուբը ցնծությամբ ընդունեց նրան և միևնույն երեկոյան մի երաժշտական հանդես կազմեց նրա պատվին, իսկ մրս. Միկաբրը և ես, նրա քնած մանուկներով շրջապատված, մի լավ ընթրիք վայելեցինք։

– Այս երջանիկ դեպքի առթիվ խնդրում եմ ձեզ, մաստր Կոպպերֆիլդ,– ասաց մրս. Միկաբրը,– մի բաժակ գրոգ պարպել ի հիշատակ լուսահոգի հայրիկիս ու մայրիկիս։

– Մի՞թե նրանք արդեն մեռած են,– հարցրի ես, գրոգի բաժակը պարպելով։

– Մայրիկս այս աշխարհից ճիշտ այն միջոցին հեռացավ, երբ մր. Միկաբրի գործերն արդեն սկսել էին խանգարվել և կամ թե խանգարվելու վրա էին։ Հայրիկս մի քանի անգամ մարդուս համար երաշխավոր եղավ և հետո հոգին ավանդեց, շատերին սուգ պատճառելով։

Մրս. Միկաբրը գլուխը կախեց և ջերմ արտասուք կաթեցրեց իր գրկում գտնվող երկվորյակի վրա։

Մտածելով, որ դրանից պատեհ վայրկյան չեմ գտնի, ինձ շատ հետաքրքրող մի հանգամանք պարզելու համար՝ հարցրի նրան.

– Կարո՞ղ եմ արդյոք հարցնել, տիկին, թե ի՞նչ եք մտադիր անել այժմ, երբ մր. Միկաբրը դուրս է եկել նեղ վիճակից և արդեն ազատ է։ Արդյոք մի բան վճռե՞լ եք։

– Իմ գերդաստանը,– ասաց մրս. Միկաբրը, որ միշտ հանդիսավոր եղանակով էր արտասանում այդ խոսքերը, թեև ես երբեք հնար չգտա իմանալու, թե հատկապես ո՞ւմ է այդ պատվավոր հորջորջումը վերագրում,– իմ գերդաստանն այն կարծիքի է, թե մր. Միկաբրին անհրաժեշտ է Լոնդոնը թողնել և գավառում արդյունավորել իր ձիրքերը։ Մր. Միկաբրը մեծ ձիրքի տեր անձ է, մր. Կոպպերֆիլդ։

– Այդ մասին ամենևին տարակույս չունեմ,– ասացի ես։

– Մեծ ձիրքի,– կրկնեց մրս. Միկաբրը։– Իմ գերդաստանը հավաստի է, որ մի այդպիսի ջենտլմեն հեշտ կարող է օգտակար լինել Քըստըմ Հոուսում[21]։ Իմ գերդաստանը միայն տեղական ազդեցություն ունենալով ցանկանում է, որ մր. Միկաբրը Պլիմութ տեղափոխվի։ Գերդաստանիս համոզումով անհրաժեշտ է, որ նա իսկույն այդ քաղաքում հաստատվի։

– Որ նա իսկո՞ւյն պատրաստ լինի,– հարցրի ես։

– Այո՛, իսկույն,– վրա բերեց մրս. Միկաբրը,– այսինքն մի հարմար դիպվածգտնելուն պես։

– Իսկ դո՞ւք, լեդի։ Դո՞ւք էլ նրա հետ Պլիմութ կերթաք։

Այդ օրվա անցքերի, երկվորյակների և գուցե գրոգի ազդեցությամբ մրս. Միկաբրի ջղերն այնպես էին գրգռվել, որ նա լալով ասաց հետևյալը.

– Ես մենա՞կ թողնեմ մր. Միկաբրի՛ն։ Երբե՛ք։ Այո, երբեմն պատահել է, որ նա ինձնից իր նեղ վիճակը թաքցրել է, բայց այս արել է այն հավատով, որ մենակ կարող է փորձանքից դուրս գալ։ Այո՛, նա վաճառեց, նույնիսկ կեսից էլ պակաս վաճառեց այն մարգարտե մանյակը և ոսկե ապարանջանը, որ մայրիկս էր ընծայել ինձ. չնչին գնով դեն գցեց իմ բուստե զարդը, որ հայրիկիս պարգևած հարսանեկան օժիտս էր, բայց և այնպես աստված չանե, որ ես նրան մենակ թողնեմ։ Երբե՛ք,– գոչեց տիկինը, ավելի հուզվելով։– Ո՛չ մի ժամանակ չեմ թողնի նրան։ Այս մասին մի էլ հարցնեք. ավելորդ է։

Ես փոքր-ինչ շփոթվեցի. մտքովս էլ չէր անցել խնդրել մրս. Միկաբրին, որ նա այդպիսի բան անե... և շվարած նայում էի նրան։

– Մր. Միկաբրը հարկավ թերություններ ունի։ Չեմ ուրանում անզգույշ է։ Չեմ ուրանում, երկար ժամանակ իր եկամուտների աղբյուրը և պարտքերը ծածկում էր ինձնից, այո՛, այս երկուսն էլ ծածկում էր,– շարունակեց տիկինը, աչքերը պատին հառեկով,– բայց և այնպես ոչ մի ժամանակ չեմ թողնի նրան։

Մրս. Միկաբրի հեկեկանքն ու ճիչը այն աստիճան սաստկացան, որ ես սարսափեցի ու վազելով ընկա կլուբի դահլիճը, ուր մր. Միկաբրը մի երկար սեղանի գլխին նստած զվարթ երգում էր ընկերների հետ միասին.

Հառա՛ջ Դոբբին,

[21] Custom House — մաքսատուն։

Հառա՛ջ Դոբբին,

Մի՛ ձախ, մի՛ աջ,

Հառաջ, հառաջ – հո՛ւա, լա, հո՛։

Եվ հենց որ հայտնեցի մր. Միկաբրին, թե նրա կինն ինչ աղիողորմ դրության մեջ է, նա լաց եղավ և նույն րոպեին ինձ հետ միասին դուրս վազեց, թափ տալով ճանապարհին կարիտոսների գլուխներն ու ոտիկները, որոնք հացկերույթի ժամանակ իր բաճկոնի վրա էին ընկել։

– Էմմա, հրեշտա՛կս,– գոչեց մր. Միկաբրը իր սենյակը նետվելով,– այդ ի՞նչ է պատահել քեզ։

– Ես երբե՛ք չեմ թողնի քեզ, Միկաբր,– աղաղակեց կինը։

– Հոգյակ իմ,– ասաց մր. Միկաբրը, նրան գրկելով։– Լիովին աներկբա եմ այդ մասին։

– Զավակներիս հա՛յրն է, երկվորյակներիս հա՛յրն է։ Իմ սրտի ամուսի՛նն է,– ճվում էր մրս. Միկաբրը կտրատվելով,– և ես թողնե՞... թողնե՞մ մր. Միկաբրին... Ո՛չ երբեք։

Մր. Միկաբրը այնքան հուզվեց կնոջ անձնվիրության այս ազդու նշաններից (ես հո բոլորովին արտասուքով թրջված էի), որ նրան պինդ սեղմեց կրծքին, աղաչելով իր վրա նայել և հանգստանալ։ Բայց ինչքան շատ էր աղաչում իր վրա նայել, այնքան ավելի դես ու դեն էին շրջվում մրս. Միկաբրի աչքերը, և քանի շատ էր թախանձում նրան հանգստանալ, այնքան ավելի ընդդիմանում էր տիկինը։ Այս պատճառով մր. Միկաբրն էլ սկսեց դառնորեն լաց լինել, և նրա արտասուքը մերինի հետ խառնվեց։

– Խնդրեմ, մաստր Կոպպերֆիլդ, մի աթոռ վերցրեք,– ասաց վերջապես մր. Միկաբրը,– և փոքր-ինչ ինչ նստեցեք նրբանցքում, մինչև որ սրան անկողին դնեմ։

Ուզում էի բարի գիշեր ասել և բոլորովին հեռանալ, բայց մր. Միկաբրը թույլ չտվեց։ Տեղի տալով նրա կամքին, ես նստեցի նրբանցքի պատուհանի մոտ և սպասեցի։ Մի որոշ ժամանակից հետո նա էլ դուրս եկավ մի աթոռով և կողքիս նստեց։

– Ինչպե՞ս է այժմ մրս. Միկաբրը, սըր,– հարցրի ես։

– Շատ ընկճված է, բարեկամ,– ասաց մր. Միկաբրը գլուխը թոթվելով,– գրգռված է։ Ոհ, ի՛նչ սոսկալի օր էր այս օրը։ Այժմ բոլորովին մենակ ենք. էլ ոչինչ չի մնացել մեզ համար։

Մր. Միկաբրը ձեռքս սեղմեց, հառաչեց ու նորից սկսեց լաց լինել։ Այս ամբողջ տեսարանը վերին աստիճանի սիրտս շարժեց և զարմացրեց ինձ։ Կարծում էի, թե մի ուրախ երեկո կունենամ, և չէի սպասել, թե հույսերս այդպես փուչ կելնեն։ Եվ իրավ, ինչո՞ւ պիտի չուրախանային ամուսինները, քանի որ նրանց գործն այնպես լավ էր վերջացել։ Սակայն մր. Միկաբրը և նրա կինը այնքան էին ընտելացել իրենց գերությանը, իրենց դառը վիճակին, որ կարծես նավաբեկված էին համարում իրենց այդ վիճակից ազատվելով։ Նրանց բոլոր ճկունությունն անհետացել էր, և ես երբեք այսպես թշվառ չէի տեսել նրանց, ինչպես որ այդ երեկո։ Երբ բանտի զանգակն այցելուների հեռանալու ժամն իմացրեց, մր. Միկաբրն այն աստիճան հուսահատ դեմքով միչև դուռը առաջնորդեց ինձ, որ ես իրոք վախեցա նրանց մենակ թողնել այնտեղ։

Այդ երեկոյան անսպասելի իրարանցման և վհատության մասին մտածելով, տուն գնալիս պարզ տեսա, որ մր. Միկաբրը և նրա կինը մտադիր են գերդաստանով հանդերձ հեռանալ Լոնդոնից, և թե ուրեմն մեր բաժանումը մոտալուտ է։ Ի՞նչ կմնար ինձ անել այս բարեկամներիս կորցնելուց հետո, որոնք այնքան սիրելի էին դարձել ինձ։ Ամբողջ գիշեր ես այս խնդրով զբաղվեցի անկողնուս մեջ, և ահա այս անքնության միջոցին էր, որ առաջին անգամ, ինքս էլ չգիտեմ թե ինչպես, մի բան անցավ մտքովս, որ և հետզհետե մի որոշ վճռի ձև ստացավ։

Ես այնքան էի մտերմացել Միկաբրենց հետ, այնքան էի ընկերացել նրանց վշտերին, որ մի նոր բնակարան որոնելը և օտար մարդկանց հետ ապրելը միևնույն էր ինձ համար, թե նորից մատնվել կյանքի անհայտ բերմունքներին, որոնց վտանգն արդեն բավականին ճանաչել էի դառը փորձով։ Ողորմելի վիճակիս մասին մտածելիս այնպես դրանից զզվեցի և դրա պատճառած վիրավորիչ զգացումը, խոր վերքը, ամոթն ու կսկիծը այնպես ուժով բորբոքվեցին սրտիս մեջ, որ ես վճռեցի – չի կարելի այլևս այս վիճակին դիմանալ։

Բայց ո՞վ պիտի ինձ հնար տար ազատվելու դրանից։ Հարկավ, ես ինքս, ուրիշից օգնություն չէր կարելի սպասել։ Միս Մեռրդստոնի մասին գրեթե ոչինչ չէի լսում, իսկ մր. Մերռդստոնի մասին՝ և ոչ մի խոսք։ Միայն մի երկու անգամ նոր ու հին հագուստ էի ստացել Բլենդրոտրնից՝ միշտ մր. Քինիոնի հասցեին գրված տոմսակով, թե «Ջ. Մ. հույս ունի, որ Դ. Կ. գործով է զբաղված և իր պարտքն արժանապես կատարում է։ Այս տոմսակներում մի ակնարկ անգամ չկար, թե երբևէ կազատվեմ հասարակ բանվորի վիճակից, որին ինձ մատնել էին։

Հետևյալ օրն իսկ իմացա, որ մրս. Միկաբրը զուր չէր խոսել գնալու մասին։ Նրանք մի շաբաթով սենյակ վարձեցին իմ բնակած տանը, և շաբաթը լրանալուն պես պիտի Պլիմութ մեկնեին։ Ճաշից հետո մր. Միկաբրն անձամբ եկավ Մեռրդստոնի ու Գրինբիի գրասենյակը և հայտնեց մր. Քինիոնին, թե իր գնալու օրը ստիպված կլինի բաժանվել ինձնից, և այս առթիվ մի գովասանական վկայություն տվեց իմ մասին, որին կարծեմ արժանի էի։ Մր. Քինիոնը կանչեց Տիպպ սայլորդին, որ ամուսնացած մարդ լինելով մի ավելորդ անկյուն ուներ, և այս անկյունն ինձ համար վարձեց՝ առանց կարծիքս հարցնելու, այնինչ ես արդեն անելիքս վճռել էի։

Ես այսպես մինչև յոթնակի լրանալը մր. և մրս. Միկոբրի հետ մի հարկի տակ մնացի, և կարծես թե այդ միջոցին մեր բարեկամությունը ավելի զորացավ։ Վերջին կիրակին նրանք ինձ ճաշի հրավիրեցին, և մենք լավ տապակած թարմ խոզի միս վայելեցինք խնձորի սոուսով և մի պուդինգ։ Մի օր առաջ ես մի փայտե ձի էի գնել փոքրիկ Ուիլկինս Միկաբրի համար, իբրև հրաժեշտի ընծա, և մի տիկնիկ՝ փոքրիկ Էմմայի համար, մի շիլինգ էլ պարգևել էի Որբուկին, որ այժմ անպաշտոն պիտի մնար։

Օրը շատ ուրախ անցավ, թեև ամենքս հուզված էինք վերահաս բաժանման պատճառով։

– Մաստր Կոպպերֆիլդ,– ասաց մրս. Միկաբրը,– ես երբեք չպիտի կարենամ մր. Միկաբրի աղետները մտաբերել՝ առանց ձեզ էլ հիշելու։ Ձեր վարմունքը միշտ ազնիվ էր և մարդասեր. դուք մի վարձաբնակ չէիք մեր տանը, այլ ճշմարիտ բարեկամ։

– Իմ սիրելի Կոպպերֆիլդը,– ասաց մր. Միկաբրը, որ վերջերս սկսել էր ինձ այդպես անվանել,– մի այնպիսի սիրտ ունի, որ ընդունակ է մերձավորների թշվառությանը կարեկցել, երբ որ նրանք ամպով են ծածկված... այնպիսի գլուխ, որ ընդունակ է մտածել... այնպիսի ձեռք, որ... միով բանիվ, մի այնպիսի շնորհ, որ կարող է օգուտ քաղել այդ բոլոր ձիրքերից։

Շնորհակալություն հայտնեցի այդ գովեստի համար և կրկնեցի, թե շատ եմ ցավում, որ իրարից բաժանվելու ենք։

– Իմ պատանի բարեկամ,– ասաց մր. Միկաբրը,– ես ձեզնից ավելի հասակով եմ, ձեզնից ավելի փորձառու... կարճ ասած՝ ավելի տեղյակ կյանքի դժվար պարագաներին, քան թե դուք։ Առժամանակ, քանի որ գործերս թռիչք չեն առել (որ սակայն ժամե ի ժամ սպասելի է), չեմ կարող ձեզ ուրիշ բան տալ, բացի խորհուրդից։ Եվ այս խորհուրդն ուշադրության արժանի է մանավանդ այն պատճառով, որ նախ... համառոտ ասենք, ես ինքս դրան ոչ մի ժամանակ չեմ հետևել, և երկորդ...

Մր. Միկաբրը, որ մինչ այդ վայրկյանը զվարթերես ու ժպտուն էր, հանկարծ լռելով հոնքերը կիտեց, ապա ասաց.

– Եվ երկրորդ, տեսեք՝ որքա՜ն թշվառ եմ։

– Սիրելի Միկաբր,– գոչեց կինը։

– Ասում եմ,– շարունակեց մր. Միկաբրը առաջվա ժպիտով,– տեսեք որքան թշվառ եմ։ Խորհուրդս այս է։ Մի թողնեք վաղվան այն բանը, ինչ-որ կարելի է այսօր անել։ Հետաձգումը ժամանակի գողն է, բռնեցեք նրա օձիքից։

– Հայրիկիս կանոնն էլ այդ էր,– նկատեց մրս. Միկաբրը։

– Հոգիս,– ասաց մր. Միկաբրը,– հայրիկդ անշուշտ լավ մարդ էր, և աստված չանի, որ ես նրա արժանիքը նվազեցնեմ։ Այսուհետև հազիվ թե մեզ մի ուրիշ մարդ պատահի, որ նրա պես վայելուչ հագնվեր և նրա հասակում առանց ակնոցի արագ կարդար, ինչ-որ գրված է թղթի վրա։ Բայց և այնպես մեր ամուսնության վերաբերմամբ նա շատ շտապով իրագործեց վերոհիշյալ կանոնը, և այնքան շտապով, սիրելիս, որ ես միչև այսօր չեմ կարողացել արագահաս հարսանիքի ծախքը հոգալ։

Մր. Միկաբրը մի կողմնակի հայացք նետեց իր կնոջ վրա և հարեց.

– Սակայն, սիրելիս, ես այդ մասին ամենևին չեմ ցավում. ընդհակառակն՝ ուրախ եմ։

Ապա նորից հոնքերը կիտեց և մի րոպե լուռ մնաց։

– Երկրորդ խորհուրդս հայտնի է ձեզ, Կոպպերֆիլդ,– ասաց մր. Միկաբրը։– Տարեկան քսան ստեռլինգ եկամուտ, ծախս՝ տասնինը ստեռլինգ, տասնինը շիլինգ ու վեց պենս, և հետևանքը՝ երջանկություն։ Տարեկան քսան ստեռլինգ եկամուտ, տարեկան ծախս՝ քսան ստեռլինգ ու վեց պենս, և հետևանքը՝ թշվառություն։ Այնուհետև ծաղիկը թառամում է, տերևը չորանում, և ծառն ընկնում... կարճ ասած՝ մարդս ընդմիշտ կորչում է։ Ահա ինձ նման։

Եվ այս օրինակն ավելի մտահար անելու համար մր. Միկաբրը ամենամեծ ախորժակով մի բաժակ պունշ պարպեց և մի զվարթ որսորդական երգ երգեց։

Ես չհրաժարվեցի ասել նրան, թե այդ կանոնները չեմ մոռանա, թեև հարկ չկար ասելու, քանի որ դրանց ճշմարտության կենդանի օրինակներն արդեն վաղուց քանդակված էին մտքիս մեջ։ Հետևյալ առավոտյան ամբողջ գերդաստանին դիլիժանսների կայարանում հանդիպեցի և ցավոք սրտի ականատես եղա, թե ինչպես նրանք կառքի հետևի և դրսի մասում տեղ բռնեցին։

– Մաստր Կոպպերֆիլդ,– ասաց մրս. Միկաբրը,– ապրեք, զորանաք։ Երբեք չեմ մոռանա, թե ինչ էիք դուք մեզ համար, եթե նույնիսկ կարելի լիներ մոռանալ։

– Կոպպերֆիլդ,– ասաց մր. Միկաբրը,– մնաք բարով։ Մաղթում եմ ձեզ երջանկություն և հաջողություն։ Եթե համոզվեմ մշտահոլով տարիների ընթացքում, որ իմ թշվառ ճակատագիրը մի ազդարար դաս է եղել ձեզ համար, ուրեմն աշխարհիս երեսին զուր ապրած չեմ լինի։ Հենց որ գործերս մի հաջող թռիչք առնեն (և գրեթե հավաստի եմ, որ կառնեն), ես կփութամ օգնության աջ մեկնել ձեզ։

Կարծում եմ, որ երբ մրս. Միկաբրը մանուկների հետ հանդերձ կառքի հետևը տեղ բռնեց, իսկ ես տրտում նրանց նայելով ճամփի վրա մնացի, նրա աչքերի մեզը փարատվեց, և նա տեսավ, որ ես իրոք մի փոքրիկ և անտերունչ էակ եմ։ Այսպես եմ կարծում, որովհետև նա մի մայրական սիրո զգվանքով նշան արեց ինձ, որ կառքի վրա բարձրանամ, հետո վզիս փաթաթվելով մի այնպիսի համբույր տվեց ինձ, որի նմանը հարազատ որդուն միայն կարող էր տալ։ Դիլիժանսից վայր ցատկելս և նրա մեկնելը մեկ եղավ. մի քանի վայրկյանից հետո բարեկամներս արդեն չէին երևում իրենց ճոճած թաշկինակների բազմության մեջ։ Եվս մի րոպե և ամեն բան անհետացավ։ Որբուկն ու ես, իրար նայելով, մենակ մնացինք ճանապարհի մեջտեղում։ Հետո իրար ձեռք տվինք, նա, կարծեմ ս. Ղուկասի որբանոցը գնաց, իսկ ես գնացի օրվա գործս սկսելու Մեորդստոնի ու Գրինբիի մառանում։

Սակայն մտադիր չէի այլևս մաշվել այդ մառանում։ Ո՛չ։ Վճռել էի այդտեղից հեռանալ, փախչել,– որևէ կերպով գնալ գտնել այն միակ ազգականիս, որ մնացել էր աշխարհում, և տատիս պատմել թշվառ կյանքիս արկածները, միս Բեթսիին։

Արդեն ասել եմ – ես չգիտեմ, թե այս հուսահատական որոշումն ինչպե՞ս ծագեց մտքիս մեջ, բայց նա մի անգամ ծագելուց հետո արդեն հաստատ արմատ բռնեց և անդրդվելի վճիռ դարձավ։ Չեմ կարծում, որ լիովին վստահ լինեի, թե մի լավ բան առաջ կգա իմ վճռից, սակայն համոզված էի, որ վճիռս վճիռ է և անշուշտ պիտի կատարվի։

Առաջին անգամ այս որոշումը անելուս բազմավրդով գիշերվանից ի վեր հարյուր անգամ, հազար անգամ հեղեղել էի մտքիս մեջ մայրիկիս հին պատմությունը ծննդյանս մասին, որ ես նրան այնքան սիրով կրկնել էի տալիս և արդեն անգիր գիտեի։ Այդ պատմության մեջ տատս գալիս ու գնում էր, իբրև մի ահեղ երևույթ, սակայն նրա վարմունքի մեջ մի փոքրիկ բան էի նշմարում, որ ինձ սիրտ էր տալիս։ Ես չէի մոռացել, որ մորս ասելով՝ միս Բեթսին մեղմիկ շոյել էր նրա սիրուն մազերը։ Գուցե դա մի ենթադրություն էր մորս կողմից, գուցե տատս ամենևին նրան չէր շոյել. այնուամենայնիվ, ես այդ դեպքից եզրակացրել էի, որ տատս հարկավ գեթ մի վայրկյան գորովով էր լցվել մորս մանկական գեղեցկությունից, որ ես այնքան հիշում էի, որ ինձ այնքան հաճելի ու սիրելի էր։ Այս միտքը մեղմացնում էր ամբողջ պատմության խստությունը։ Եվ ահա թերևս այս բանից ծագեց իմ որոշումը, որ երկար ժամանակ հոգուս մեջ ապրելուց հետո վերջապես մի անդառնալի վճիռ դարձավ։

Բայց չգիտեի, թե որտեղ է բնակվում միս Բեթսին, ուստի մի երկար նամակ գրեցի Պեգգոտիին, ուր իմիջիայլոց հարցնում էի՝ արդյոք հայտնի՞ է նրան, և հարևանցի ավելացնում, թե նորերս լսել եմ նրա նման մի տիկնոջ մասին, որ ապրում է այսինչ տեղը (տեղի անունն էլ հնարեցի), և այժմ կուզեի իմանալ, թե այդ անձը միս Բեթսի՞ն է, թե՞ մի ուրիշ կին։ Նույն նամակով հաղորդում էի Պեգգոտիին, թե ինձ մի կես գինե է հարկավոր, և թե շատ շնորհակալ կլինեմ, եթե ուղարկի, բայց թե ինչո՞ւ եմ այս գումարը խնդրում, պարտքս վճարելիս կգրեմ։

Պեգգոտին պատասխանը չուշացրեց և նրա նամակը անձնվեր սիրով լի էր, ինչպես և միշտ։ Նա ուղարկում էր ինձ կես գինե (երևակայում եմ ինչ տառապանքով հանած կլիներ մր. Բարկիսի սնդուկից) և գրում էր, թե միս Բեթսին Դուվրի մոտերքնումն է բնակվում, բայց թե արդյոք բուն Դուվրո՞ւմ թե Հայթո՞ւմ, Սանդգետո՞ւմ թե Ֆոլկստոնո՞ւմ – այդ չգիտե։ Սակայն մեր բանվորներից մեկը բացատրեց ինձ, թե այդ բոլոր մանր քաղաքներն իրար կից են։ Այս բավական էր, որ ես շաբաթվա վերջը փախուստ տայի։

Իբրև մի պարկեշտ պատանի, չէի ուզում վատ հիշատակ թողնել Մեռրդստոնի և Գրիմբիի մառանում. հետևաբար հարկ համարեցի մինչև շաբաթ երեկո այնտեղ մնալ, և որովհետև ծառայության մտնելիս մի շաբաթվա ռոճիկս կանխիկ էի ստացել, որոշեցի ռոճիկների վճարման ժամին գրասենյակ չգնալ իմ թոշակն ընդունելու համար։ Այս էր ահա կես գինե փոխ առնելու պատճառը. ճանապարհիս ծախսը դրանով պիտի հոգայի։ Եվ այսպես, երբ շաբաթ երեկոն հասավ, և բոլոր բանվորները Տիպպ սայլապանի առաջնորդությամբ գրասենյակը մտան իրենց վարձը ստանալու, ես Միկ Ուոկրին մի կողմ քաշեցի և խնդրեցի նրան՝ իր հերթը հասնելուն պես ասի մր. Քինիոնին, թե ես սնդուկս Տիպպի տունը տանելու եմ գնացել. ապա Ալյուրոտ Փաթաթեսին մնաս բարով ասելով, դուրս փախա։

Սնդուկս իմ հին բնակարանումն էր, դեպի մյուս կողմը։ Նրա համար պատրաստել էի հետևյալ հասցեն. «Մաստր Դավթին, ցպահանջ, փոստի գրասենյակը, Դուվր։ Հասցեն գրել էի գինետան տակառներին փակցվող տոմսակներից մեկի վրա՝ հակառակ կողմից, և գրպանս դրել այն մտքով, որ հետո սնդուկիս ամրացնեմ. այսինքն, երբ նա բնակարանից դուրս հանվի։ Այժմ պետք էր մի մարդ գտնել, որ օգներ ինձ սնդուկս դիլիժանսների կայարանը տանելու։

Բլեկֆայըրսի փողոցում, կոթողի մոտ, մի երկայնասրունք տղա տեսա, որ մի իշասայլի առջև էր կանգնած։ Մտովի անցնելիս մտածեցի, թե նա երևի մի բեռնակիր է և սկսեցի դիտել նրան։

– Ի՞նչ ես աչքերդ վրաս չռել,– գոռաց նա։– Գնա կորի՛ր։

Ասացի, թե չար մտքով չեմ նայում նրան, այլ կուզենայի իմանալ, թե արդյոք նա չէ՞ր կամենա մի բան անել ինձ համար։

– Ի՞նչ բան,– հարցրեց երկայնասրունքը կոպիտ ձայնով։

– Մի սնդուկ տանել։

– Ինչպիսի՞ սնդուկ։

Բացատրեցի, թե իմ սնդուկը, որ այն ինչ տեղ է գտնվում, պետք է Դուվր գնացող դիլիժանսների կայարանը տանել, և թե ես պատրաստ եմ վեց պեննի վճարել նրան։

– Վեց պեննիով կարելի է,– ասաց նա և իր երկանիվ սայլակի վրա թռչելով, քշեց իշին դեպի իմ բնակարանը, բայց այնպես արագ, որ հազիվ էի հասնում հետևից։

Այդ երիտասարդը հանդուգն դեմք ուներ, որ ինձ բնավ դուր չէր գալիս. այն էլ դուր չէր գալիս, որ նա խոսելիս հարդ էր ծամում։ Բայց սակարկությունն արդեն վերջացած էր. էլ չէր կարելի ետ կանգնել։ Ես ու նա սենյակս բարձրացանք և սնդուկս միասին դուրս հանելով՝ սայլակը դրինք։ Ես չուզեցի հասցեի տոմսը սենյակում կպցնել սնդուկին, որպեսզի տանտիրոջ ընտանիքը դիտավորությանս մասին բան չիմանա. ուստի սայլորդին խնդրեցի, որ մի րոպե Կինգս Բենչի բանտի մոտ կանգ առնի։ Երկայն ոտքերով երիտասարդը բանտ բառը լսելուն պես, իր իշուկին այնպես խփեց, որ մի ակնթարթում ինքն էլ, էշն էլ, սայլն էլ, սնդուկն էլ խելագարվածի նման փախան։ Երբ նրա հետևից հասա, վազելուց ու կանչելուց շունչս արդեն կտրվում էր։

Տոմսը շտապ-շտապ գրպանիցս հանելիս՝ չգիտեմ, ինչպես եղավ, գինես վայր գցեցի և նույն վայրկյանին վերցնելով բերանս դրի։ Եվ մինչ շտապում էի տոմսակը սնդուկիս կպցնել և արդեն կպցրել էի, սայլորդը հանկարծ ապտակ տվեց կզակիս։ Ոսկին բերանիցս դուրս թռավ և մի ակնթարթում նրա ձեռքն ընկավ։

– Հը՛,– ասաց նա և չար-չար ծիծաղելով օձիքս բռնեց։– Այս ի՞նչ բան է։ Արևս վկա, ոստիկանին հայտնելու բան է։ Ա՛յ դու սրիկա, ո՞վ գիտե որտեղի՞ց ես ճանկել այս ոսկին։ Դե գնանք ոստիկանի մոտ, ոստիկանի մո՛տ։

– Թողեք ինձ աստծու սիրուն,– գոչեցի ես։– Ետ տվեք փողս։

– Ոստիկանի մոտ։ Բանի էությունը նա կպարզի։

– Ետ տվեք, սնդուկս ու ոսկին,– գոռում էի ես սաստիկ լալով։

Երիտասարդը պատասխանեց. – «Գնանք, գնանք ոստիկանի մոտ» և քաշեց ինձ դեպի էշը, ասես թե այդ կենդանու ու ոստիկանի միջև մի որևէ կապ լիներ. բայց հանկարծ միտքը փոխեց, սայլի մեջ թռավ։ Եվ ասելով, թե ուղիղ ոստիկանի մոտ է գնում, մտրակեց էշին և արշավեց ավելի հապճեպ, քան թե առաջ։

Ամբողջ ուժս հավաքելով վազեցի, ընկա նրա քամակից, բայց թե՛ շունչս կտրվելուց և թե՛ վախից չէի կարենում ոչ մի մարդ օգնության կանչել։ Մոտ կես մղոն այդպես վազելիս՝ քիչ էր մնում, որ առնվազն քսան անգամ կառքերի տակ ընկնեի։ Մեկ կորցնում էի նրան, մեկ նշմարում, մեկ մտրակի հարված ստանում փողոցով անցնող կառավարողներից, մեկ ցեխի մեջ գլորվում և վերկենալով նորից վազում, հրում, մշտում անցորդներին, կամ թե զարկվում լապտերի սյունին և դարձյալ վազում... Վերջապես ահից ու տագնապից ուժասպառ և կարծելով, թե ամբողջ Լոնդոնի գոնե կեսը իմ հետևից վազում է, թողի որ սայլորդը սնդուկս ու ոսկին տանի ուր որ էլ սիրտը կամենա։ Այնուհետև ծանր հևալով ու դառն արտասուք թափելով, սակայն առանց կանգ առնելու, ոտք դրի Դուվր տանող Գրինվիչի ճամփի վրա,– դեպի տատիս անհայտ տունը,– հետս կրելով այնքան բան, ինչքան բերել էի աշխարհ գալու գիշերը, որ այն աստիճան վրդովել էր միս Բեթսիին։

ԺԳ. ԳԼՈՒԽ
Համարձակ քայլիս հետևանքը

Ինձ թվում էր, թե պատրաստ եմ մինչև նույնիսկ Դուվրը վազել. բայց վերջապես տեսնելով, որ զուր եմ հետամուտ լինում երիտասարդին, նրա սայլակին ու իշին, Գրինվիչի ճանապարհը բռնեցի: Այնտեղ փոքր-ինչ ուշքի եկա և կանգ առա մի դարաթափի առջև, որի մեջտեղում մի ահագին արձան՝ ջուր էր ժայթքում բերանից. հետո մի դռան շեմքի վրա նստեցի այնպես հոգնած ու ջարդված, որ շունչ անգամ չէի գտնում կորած ոսկիս ու սնդուկը ողբալու:

Արդեն մութը կոխել էր. դեռ նստած էի. ժամացույցը տասը խփեց, բայց գիշերն ամառային էր, և եղանակը բարեբախտաբար սքանչելի: Փոքր-ինչ շունչ առնելուց հետո, երբ սրտիս թրթռումը մեղմացավ, վերկացա և առաջ գնացի: Վերադարձի մասին, չնայելով հուսահատական վիճակիս, մտածել անգամ չէի ուզում. ինձ թվում էր, որ եթե իմ առջև մինչև անգամ զվիցերական ձյունի հյուսեր դիզվեին, դարձյալ ես ետ չէի գնա:

Եվ քայլերս շարունակեցի, թեև միջոցներիս սղությունը (գրպանումս միայն երեք պեննի կար, որոնք չգիտեմ ի՞նչ հրաշքով էին մեջը մնացել մինչև շաբաթ երեկո) արդեն սկսել էր տագնապել ինձ: Մտքումս արդեն հեղեղում էի մի լրագրական հայտարարություն, որ երկու օրից հետո գուժելու էր, թե մի սովամահ տղա են գտել ցանկապատի տակ. բայց հակառակ այս մռայլ ենթադրության, արագ ու շտապ առաջ էի գնում: Վերջապես դիմացս մի կրպակ ելավ, որի ճակատին գրված էր. «Մր. Դոլլոբին առնում է տղամարդկանց ու կանանց հին շորեր և լավ գին վճարում ամեն տեսակ հնոտիների, ոսկորների և կերակրի մնացորդների համար»: Տանտերը նստած էր դռան առջև և լիվլե էր ծխում: Կրպակի մի պատից դեպի մյուսը չվանների վրա ճոճվում էին անթիվ զգեստներ ու վարտիքներ, և այս բոլորը ցույց տալու համար միայն երկու ճրագ էր վառված կրպակում: Դրանց աղոտ ու նսեմ լույսի տակ՝ տերը մի վրեժխնդիր մարդ երևաց ինձ, որ իր բոլոր թշնամիներին կախել էր և զվարճանում էր նրանց դիակների տեսքով:

Մր. Միկաբրի և նրա կնոջ մոտ ձեռք բերած վերջին փորձառությունս անմիջապես թելադրեց ինձ, թե գուցե այդ կրպակում կարելի լինի գեթ առ ժամանակ սովից փրկվելու հնար գտնել: Ես մտա մի նեղ փողոց բաճկոնս հանեցի, ծալեցի, թևիս տակ դրի և նորից կրպակի դռանը մոտեցա:

– Ներեցեք, սըր,– ասացի:– Ես ծախում եմ այս բաճկոնը, և շատ էժան:

Մր. Դոլլոբին բաճկոնը վերցրեց, լիվլեն մի կողմ դրեց, ինձ հետ միասին ներս մտավ, ճրագների ծայրը մատներով ուղղեց, բաճկոնս սեղանի վրա փռեց, զննեց, քննեց, շուռ տվեց, հետո բռնեց ճրագի առջև, նորից մի լավ աչքի անցրեց և վերջապես ասաց.

– Ի՞նչ է այս փոքրիկ բաճկոնի գինը:

– Դուք ավելի լավ կիմանաք, սըր, թե ի՞նչ արժի,– պատասխանեցի համեստաբար:

– Հո չեմ կարող համ գնել, համ ծախել,– ասաց մր. Դոլլոբին:– Դուք ինքներդ գին դրեք:

– Տասնութ պենս կտա՞ք... – հարցրի ես վարանելով:

Մր. Դոլլոնին բաճկոնս նորից ծալեց և ետ տալով ասաց.

– Տունս վաղուց կքանդվեր, եթե մի այնպիսի չնչին բանի համար ինը պենս անգամ վճարեի:

Այդ տեսակետից բանի վրա նայել դժվար էր ինձ: Ի՞նչ իրավունք ունեի պահանջելու, որ մր. Դոլլոբին ինձ նման մի օտարականի օգտին իր տունը քանդեր: Սակայն կարիքս ստիպողական էր. պետք եղավ սիրտս ամրացնել և ասել, թե ինը պենսի էլ հոժար եմ, եթե նրան հաճո է: Մր. Դոլլոբին փոքր-ինչ փնթփնթաց և տվեց ինձ ինը պենս: Բարի գիշեր մաղթեցի նրան և

կրպակից դուրս եկա, վաստակելով այդքան գումար և կորցնելով մի բաճկոն։ Սակայն երբ ժակետս կոճկեցի, բաճկոնիս պակասը շատ զգալի չերևաց ինձ։

Այնինչ բավական պարզ գուշակում էի, որ շուտով ժակետս էլ բաճկոնի օրինակին կհետևի, և ես ստիպված կլինեմ միայն շապիկով ու վարտիքով Դուվր հասնել։ Բայց կիսամերկ մնալու վտանգը փույթ չէր ինձ, միայն թե շուտով տեղ հասնեի։ Նորից ճանապարհ ընկա և,– զարմանալի բան,– չնայած որ գրպանումս միայն ինը պենս կար, կարծեմ սիրտս զվարթ էր և ուրիշ հոգս չունեի, բացի այն, որ դեռ երկար պիտի գնամ և որ իշի տերը չար օյին խաղաց իմ գլխին։

Ճանապարհին մտածում էի, թե գիշերը որտե՞ղ անցկացնեմ։ Որոշեցի քնել հին պանսիոնիս պարսպի տակ՝ այն անկյունի մոտ, ուր երբեմն խոտ էին դիզում։ Ասում էի ինքս ինձ գոնե նախկին ընկերներիս մոտիկ կլինեմ և այն ննջարանին, ուր այնքան վեպեր էի պատմել, թեև ընկերներս չեն իմանա, որ այժմ որմի տակ պառկած եմ, և ննջարանը պատսպարան չի տա ինձ։

Օրվա դեպքերն և գիշերվա հոգնությունը գրեթե լիովին ընկճել էին ինձ, երբ Բլեքհիսի տափարակին հասա։ Մթության մեջ Սալեմ Հոուսը գտնելը դժվար էր, բայց գտա և մի խոտի դեզ ինձ լավ հայտնի անկյան մոտ. հետո պարսպի շուրջը պտտեցի, պատուհաններին մտիկ տվի և ստուգելով, որ լույս չկա և ներսի մարդիկ քնած են,– պառկեցի։ Երբեք չեմ մոռանա այն մենակության ծանր զգացումը, որ սրտիս տիրեց, երբ կյանքումս առաջին անգամ գլուխս գետնին դրի գիշերելու մի մարդաբնակ հարկից դուրս։

Քնեցի. ինչպես անշուշտ քնած կլինեին և ուրիշ հազարավոր ինձ նման վտարանդի էակներ, որոնց առջև դռները փակ էին և հաչող շներով պահպանված։ Եվ երազ տեսա, իբր թե պանսիոնի անկողնուս մեջ եմ գտնվում և վեպեր պատմում շուրջս հավաքված տղաներին։ Սակայն հանկարծ զարթնելիս, ոչ թե պառկած, այլ նստած գտա ինձ, Ստիրֆորթի անունը թոթովելով և պշնելով դեպի վեր, ուր անթիվ աստղեր պսպղում էին ու շողշողում։ Երբ մտաբերեցի, թե որտե՞ղ եմ ընկած այդ ուշ ժամին, մի տարօրինակ բան զգացի և, չգիտեմ ինչից, խրտնած ոտքի ելա ու սկսեցի ման գալ։ Բայց աստղերի արդեն նվազող նշույլը և երկնքի աղոտ լույսը, որ առավոտի ավետաբերն էին սիրտ տվին ինձ. և որովհետև շատ հոգնած էի, նորից գետնի վրա ընկա ու քնեցի, թեև զգում էի, որ մրսում եմ ու սարսռում։ Սակայն արևի ճառագայթները տաքացրին ինձ, և հենց որ Սալեմ Հոուսի առավոտյան զանգակը հնչեց, վերկացա։ Եթե հույս ունենայի, թե Ստիրֆորթը դեռ այնտեղ է, կթափառեի շրջակայքում նրա դուրս գալուն սպասելով. բայց գիտեի, որ նա վաղուց հեռացել է պանսիոնից։ Գուցե Տրեդլսը դեռ մնացած լիներ, բայց չէի կարող թշվառ վիճակս նրան հայտնել. նրա զգուշության վրա այդքան վստահություն չունեի, թեև սրտի ազնվությունն ինձ լիովին հայտնի էր։ Եվ այսպես հենց այն րոպեին, երբ մր. Կրիկլի աշակերտները վերկենալու վրա էին, ես պարսպի մոտից թաքուն հեռացա և փոշոտ ճամփով գնացի դեպի Դուվր։ Մի ժամանակ, երբ ես էլ այն աշակերտներից մեկն էի, շատ էի զբոսնել այդ ճամփի վրա, բայց մտքովս էլ չէր անցել, թե մի օր, իբրև պանդուխտ պիտի անցնեմ նույն ճամփով։

Որքա՜ն տարբեր էր այդ կիրակի առավոտն այն կիրակի առավոտից, որ երբեմն վայելել էի Յարմաութում։ Շտապով առաջ դիմելիս տոն օրվա զանգակների ղողանջյունը լսեցի, եկեղեցի գնացող մարդիկ տեսա, մի երկու եկեղեցու մոտով անցա, ուր ժողովուրդն արդեն հավաքվել էր և որտեղից երգի ձայն էր դուրս թռչում, մինչ գավթի ստվերում զովանալով լուռ նստած ժամկոչը վրաս նայում ու զարմանում էր, թե ինչո՞ւ ես ներս չեմ մտնում։ Ամեն մարդ և ամեն բան կիրակնօրյա խաղաղությամբ ու հանգստով երջանիկ էր, բացի ինձնից։ Այս զգգվված մազերովս և հավատացողների շրջանից մերժված մարդու նման էի։ Եթե ես այդ միջոցին չհիշեի լալով նստած սիրուն մորս և նրա վրա գորոված պառավ տատիս պատկերը, հազիվ թե ուժ գտնեի մինչև հետևյալ օրը քայլելու։ Սակայն այս պատկերն ինձ առաջնորդ էր, և ես գնում էի նրա հետևից։

Այդ կիրակի ուղիղ ճամփով քսաներեք անգլիական մղոն անցա, և անցա բավական մեծ դժվարությամբ, որովհետև երկար քայլելու անվարժ էի։ Հիշում եմ, որ ոտքերս արդեն ջարդվում էին, և ես սաստիկ հոգնել էի, երբ ընթրիքի հացս ուտելով փոքր-ինչ նստեցի Ռոչեստրի կամրջի վրա։ Մի քանի տներ «Ուղևորների համար» վերնագրով հրապուրեցին ինձ, բայց վախենում էի մնացած պենսերս վատնել, վախենում էի մանավանդ ինձ պատահող շրջմոլիկ էակներից։ Այս պատճառով որոշեցի դուրսը քնել, և հասա մինչև Չետեմ։ Գիշերվա ժամին Չետեմը կրի, շարժուն կամուրջների, տղմուտ գետի վրա անկայմ կանգնած նավերի մի մռայլ տեսարան էր ներկայացնում։ Լուռ մոտեցա այնտեղի զինանոցի գալարուն պատնեշին, որի վրա գիշերապահ զինվորը ետ ու առաջ էր քայլում, և պառկեցի մի հրետանու ներքև, ուր մոտիկում գտնվող զինվորի ծանր քայլերով քաջալերված՝ մինչև առավոտ խոր քնեցի։ Զինվորը նույնքան իմ մասին մտածելիս կլիներ, որքան Սալեմ Հոուսի աշակերտները, երբ ես նրանց պարսպի տակ ընկած էի։

Մարմնիս բոլոր անդամները և մանավանդ թմրած ոտքերս սաստիկ ցավում էին առավոտյան, երբ զարթնեցի թմբուկների դոփյունից և քայլող զնդերի տրոփյունից, որոնք կարծես ամեն կողմից պաշարել էին ինձ։ Ես մի նեղ փողոց իջա և զգալով, որ այն օրը չեմ կարող շատ հեռու գնալ, եթե ուժերս չհավաքեմ, որոշեցի հանգստանալ և ժակետիս վաճառման գործով զբաղվել։ Ժակետս հանեցի, որ սովորեմ առանց դրան ման գալու, և թևիս տակ սկսեցի մերձակա կրպակներն աչքի անցնել։

Մի ժակետ ծախելու համար շատ հարմար էր այդ տեղը. հին շորերով առևտուր անող կրպակների թիվը սակավ չէր, և նրանց տերերը դռների առջև, իրար հետ խոսակցելով կանգնած էին և հարկավ հաճախորդների էին սպասում։ Սակայն հին շորերի հետ միասին կրպակների մեջ պսպղում էին և մի քանի սպայական համազգեստներ ոսկեզօծ ուսադիրներով։ Այդպիսի շքեղ իրեր վաճառող կրպակներից վախենալով, չէի վստահում իմ ապրանքը նրանցից մեկին առաջարկել և երկար ժամանակ ման էի գալիս մոտերքում։

Համեստությունս դրդրեց ինձ աչք դարձնել այն երկրորդական կրպակներին, ուր, ինչպես մր. Դոլլոբիի մոտ, հասարակ նավաստու հագուստներ էին վաճառվում։ Վերջապես գտա մի այդպիսի անշուք կրպակ կեղտոտ փողոցի եղենջապատ անկյունում։ Նրա բակի ցանկապատի վրա կախված էին նավաստու հին-հին շորեր, որոնք տեղ չէին գտել արդեն լիքը կրպակում. իսկ դրա առջև խառնիխուռը դիզված էին հին հրացաններ, ատրճանակներ, գոճաց կաշու գլխարկներ և հազար տեսակ ժանգահար բանալիներ, որոնցով կարծեմ աշխարհիս բոլոր դռները կարելի կլիներ բանալ։

Դողդոջ սրտով մի քանի աստիճան վար իջա այդ ցածր ու անձուկ նկուղի մեջ մտնելու համար, ուր լարերով ծածկված մի փոքրիկ պատուհանը կարծեմ ավելի մթություն էր տարածում, քան թե լույս. հանկարծ աղտոտ որջի խորքից գորշ մորուքով մի գարշելի ծեր դուրս վազեց և մազերիցս բռնեց։ Սոսկալի էր այդ ծերուկն իր կեղտոտ բրդե բաճկոնով և բերնից սաստիկ փչող ռոմի հոտով։ Նրա որջում կար գծուծ վերմակով մի մահճակալ և մի ուրիշ նեղ պատուհան, որի միջով երևում էր հետևի եղնջոտ դաշտավայրը և մի կաղ էշ։

– Օ՛հ, ի՞նչ ես անում այստեղ,– ճվաց ծերունին մի վայրենի ու միակերպ ձայնով։– Օ՛հ, աչքերս ու անդամներս, ի՞նչ ես ուզում։ Օ՛հ, թոքերս ու լյարդս, ի՞նչ ես ուզում։ Օհ, գուռո՛ւ, գուռո՛ւ։

Այդ ճիչից և մանավանդ վերջին անհայտ խռնչյունից ես այնպես սոսկացի, որ պատասխանելու հնար չգտա։ Ծերունին շարունակ մազերիցս բռնած, դարձյալ գոռաց այնպիսի ճիգ թափելով, որ քիչ էր մնում աչքերը դուրս ընկնեին։

– Օ՛հ, ի՞նչ ես ուզում դու այստեղ։ Օ՛հ, աչքերս ու անդամներս, ի՞նչ ես ուզում։ Օ՛հ, գուռո՛ւ, գուռո՛ւ։

– Եկել եմ հարցնելու, թե այս ժակետը չե՞ք առնի,– ասացի ես դողդողալով։

– Օ՜հ, հապա տեսնեմ, ի՞նչ ժակետ է,– գոչեց ծերը։– Օ՜հ, սրտիս այրուցքը, տուր տեսնեմ այդ ժակետը։ Օ՜հ, աչքերս, անդամներս, տուր տեսնեմ։

Այս ասելով նա մազերս արձակեց իր գիշատիչ թռչնի ճանկերի նման մատներից և ակնոց դրեց իր բորբոքված աչքերին։

– Օ՜հ, ինչքա՞ն ես ուզում այս ժակետի համար,– գոչեց ծերը զննելուց հետո։– Օ՜հ, գուռո՜ւ... Ուրեմն ինչքա՞ն։

– Երեք շիլինգ,– ասացի ես, փոքր-ինչ սիրտ առնելով։

– Օ՜հ, թոքերս ու լյարդս, ո՛չ, ո՛չ,– աղաղակեց ծերունին։– Օ՜հ, աչքերս, ո՛չ։ Օ՜հ, անդամներս, ո՛չ։ Շատ շատ՝ տասնութ պենս։ Չե՞ս ուզում։ Գուռո՜ւ, գուռո՜ւ։

Այս հառաչանքների ժամանակ նրա աչքերը դուրս ցատկելու չափ չռվում էին, իսկ ձայնը քամու նման մեղմ սկսվելով, աստիճանաբար սաստկանում էր և ահագին բախումից հետո հանկարծ կտրվում. ուրիշ համեմատություն չեմ կարող գտնել։

– Շատ լավ, տասնութ պենսի էլ հոժար եմ,– ասացի ես, կամենալով շուտ վերջացնել սակարկությունը։

– Օհ, փորս,– գոռաց ծերը, ժակետս սեղանի վրա շպրտելով։– Գնա կորիր այստեղից։ Օ՜հ, թոքերս, անդամներս... գուռո՜ւ... էլ ի՞նչ ես փող հարցնում։ Դրա փոխարեն մի արշին բան վերցրո՜ւ։

Երբեք այդպես չէի սարսափել. այնուամենայնիվ, խոնարհաբար ասացի, թե ինձ փող է հարկավոր և ուրիշ ոչինչ չեմ ուզում, բայց եթե նրան նեղություն եմ տալիս, դուրս կերթամ և դրսում կսպասեմ նրա վճռին։ Եվ դուրս ելա նրա նկուղից ու մի անկյունի ստվերում նստեցի։ Այնքան նստեցի, որ ժամեր անցան. ստվերը արևի լույսին տեղի տվեց, լույսը նորից ստվեր դարձավ, իսկ ես շարունակ փողին սպասելով նստած էի։

Ի պատիվ հնավաճառների ուզում եմ կարծել, թե նրանց դասակարգի մեջ ոչ մի ժամանակ այդ խելագար ծերի նման գիննճան մարդ չէր եղել։ Շուտով իմացա, որ նրա այլանդակ բնավորությունը ամբողջ շրջակայքին հայտնի էր և նրան հոգին սատանային ծախած մարդ էին համարում։ Այս իմացա նրա կրպակի առջև անդադար աղմուկ հանող փողոցային մանուկներից, որոնք թռչկոտելով ճչում էին. – «Է՛յ, Չարլի, Չարլի, զուր ես աղքատ ձևանում։ Ոսկիներդ շուտով դուրս բեր։ Ցույց տուր, տեսնենք, քանիսո՞վ ես հոգիդ ծախել սատանային։ Դե շուտ արա։ Ոսկիներդ մահճիդ մեջ են, է՛յ Չարլի։ Պատռիր մահիճը և դուրս բեր մի քանի հատ»։ Այս ծաղրական խոսքերը և անկողինը պատռելու համար առաջարկված դանակը ծերին այնքան էին գրգռում, որ նա ամեն րոպե որջից դուրս էր նետվում և մանուկներին հալածում։ Երբեմն էլ, կատաղությունից կուրացած, իմ վրա էր հարձակվում և ինձ էլ նրանցից մեկը համարելով այնպես գոռում, որ կարծես ուզում էր կտոր-կտոր անել ինձ. սակայն ժամանակին ուշքի էր գալիս և իսկույն դեպի որջը ետ-ետ փախչում։ Այնտեղ մոլեգնաբար սկսում էր **Նելսընի մահվան** երգը երգել ամեն մի տողից հետո «օ՜հ, օ՜հ, գուռո՜ւ, գուռո՜ւ մռնչալով։ Դժբախտությանս չափը լրացնելու համար փողոցի տղաները տեսնելով ինձ կրպակի մոտ, այն էլ գրեթե անշարժ նստած, կիսամերկ, կարծեցին, թե գիժ ծերունու աշակերտն եմ, և սկսեցին քարկոծել ինձ ու նախատել։

Մի քանի անգամ ծերը փորձեց համոզել ինձ, որ փոխանակություն անեմ. այս նպատակով մեկ ձուկ որսալու կարթ էր բերում իր որջից, մեկ՝ ջութակ, գլխարկ, մեկ՝ սրինգ։ Սակայն ես դիմադրում էի այդ գայթակղիչ առարկաներին և շարունակ նստած մնում, լալագին աղաչելով, որ կամ փողս վճարի, կամ էլ ժակետս ետ տա։ Վերջապես նա սկսեց կես-կես պենսի դուրս հանել, և այս սակարկությունը երկու ժամ տևեց։

– Օ՜հ, աչքերս, անդամներս,– գոչեց նա, երկար ժամանակից հետո իր գարշելի գլուխը որջի դռնից դուրս տնկելով։– Հոժա՞ր ես, անպիտան, որ բանը երկու պենսով վերջանա։

– Ո՛չ, չեմ կարող,– ասացի ես։– Ուզում եք, որ սովից մեռնե՞մ։

– Օ՛հ, թոքերս ու լյարդս։ Երեք պենս եմ տալիս քեզ։ Առ և գնա։

– Եթե հնար լիներ, առանց մեկ պենսի էլ կերթայի,– ասացի ես,– բայց սաստիկ փող է հարկավոր։

– Օ՛հ, գո՛ւռ...ռո՛ւ,– (իրավ չեմ կարող բացատրել, թե ո՞ր աստիճան ահռելի էր այս հռռոցը, որ նա արձակեց դռան հետևից, միայն իր զզվելի գլուխը ցույց տալով)։– Դե, թող չորս պենսով վերջանա։ Առ և կորիր աչքիցս։

Այնքան նեղացած ու հոգնած էի, որ վերջապես տեղի տվի և փողը ժլատ ծերունու ճիրաններից վերցնելով, դեռ արևը մայր չմտած ճանապարհ ընկա։ Սովն ու ծարավը չարաչար տանջում էին ինձ, բայց երեք պենս ծախսելով ես լիովին կազդուրվեցի ու նույն երեկոյան տասը վերստ ճանապարհ կտրեցի։

Գիշերը որ վրա հասավ, ուռած ոտքերս առվակի ջրով լվացի, մի քանի թարմ տերևներով փաթաթեցի և պառկեցի մի ուրիշ խոտի դեզի տակ։ Առավոտյան նորից ճանապարհ ընկնելիս անցնում էի այգիների և գայլուկի արտերի միջով։ Աշունը արդեն մոտեցել էր, խնձորները հասել էին, գայլուկը հնձում էին։ Այս ամենը սքանչելի էր, և ես մտքումս դրի առաջիկա գիշերը գայլուկի արտում անցկացնել։ Սիրուն տերևներով պատատված երկարաշար ձողերը լավ ընկեր կլինեն ինձ, մտածում էի ես։

Ցերեկը շատ շրջմոլիկներ էին պատահում ինձ ու վախեցնում։ Նրանցից մի քանիսը կատարյալ սրիկաների նման էին. անցկենալիս կանգնում էին, ձայն էին տալիս, որ մոտենամ, և երբ ես փախչում էի, քար էին շպրտում իմ հետևից։ Հիշում եմ մեկին, որ իր շալակած կրակարանին ու փուքսին նայելով մի կաթսայագործ պիտի լիներ, նրա հետ գալիս էր և մի կին։ Այդ մարդը այնպես չար-չար մտիկ տվեց ինձ և այնպես որոտագին ձայնով կանչեց, որ ես ակամա կանգ առա և շուռ եկա։

– Մոտեցիր, երբ քեզ կանչում են,– ասաց նա,– եթե ոչ՝ այս րոպեիս քեզ շան սատակ կանեմ։

Լավ համարեցի ետ դառնալ, և մոտենալով տեսա, որ նրա ընկերուհու մի աչքը ջարդված է։

– Ո՞ւր ես գնում,– հարցրեց ինձ կաթսայագործը և մրոտ ձեռքով շապկիս օձիքից բռնեց։

– Գնում եմ Դուվր,– պատասխանեցի։

– Որտեղի՞ց ես գալիս,– ասաց նա, օձիքս թափ տալով։

– Լոնդոնից։

– Իսկ բան ու գործդ ի՞նչ է։ Սրիկա չե՞ս։

– Ո՛...չ, սըր։

– Սուտ ես ասում, փուչ կենդանի։ Տես հա՛, եթե ուզենաս ազնվությամբ պարծենալ, այս րոպեիս գլուխդ կջախջախեմ։

Այս ասելիս նա ազատ բռունցքով ինձ խփելու շարժում արավ։

– Մի շիշ գարեջրի փող ունե՞ս,– գոռաց նա։– Եթե ունես, տուր շտապով, քանի որ ինքս չեմ հանել։

Հարկավ կհանեի, եթե չտեսնեի, որ կինը գլուխը թոթվեց և կարծես «Մի՛»-ի շարժում արեց շուրթերով։

– Ես բոլորովին աղքատ եմ, սըր, և փող չունեմ,– ասացի ես, ժպտալու փորձ անելով։

– Խաբում ես, անպիտան,– գոչեց նա, այնպես սուր նայելով դեմքիս, որ կարծես գրպանիս փողը տեսած լիներ։

– Ոչ, սը՛ր,– թոթովեցի ես։

– Հապա որտեղի՞ց ես թռցրել այս իմ եղբոր թաշկինակը։ Ետ տուր իսկույն։

Մի վայրկյանում նա վզիս մետաքսե թաշկինակը հափշտակեց և կնոջը շպրտեց։

Կինը իբր թե հանաքի տեղ դնելով այդ, ծիծաղեց և թաշկինակս դեպի ինձ նետեց։ Նա դարձյալ ինձ մի նշան արեց շրթունքով, թե՝ փախի՛ր... Սակայն առաջ, քան նրա պատվերին հետևեի, կաթսայագործը այնպես ուժով թաշկինակը ձեռքիցս կորզեց, որ ես փետրի նման ետ թռա։ Հետո իր վզին փաթաթեց, կնոջը դարձավ, հայհոյեց և մի հարվածով նրան տապալեց։ Երբեք չեմ մոռանա, թե՝ կինը ինչպես գետնին փռվեց և նրա մազերը փոշու հետ խառնվեցին։ Արդեն բավական հեռացել էի, երբ մի անգամ ետ նայեցի. կինը նստած էր ճանապարհի եզերքին և երեսից հոսող արյունը շալով սրբում էր մինչ կաթսայագործն արդեն շարունակում էր իր ուղին։

Այս արկածն այն աստիճան վախեցրեց ինձ, որ հետո մի կասկածելի մարդ տեսնելուս պես ճանապարհից շեղվում էի և մի ապահով տեղ թաքնվում, մինչև որ նա բոլորովին անհետանար։ Եվ որովհետև այսպիսի շեղումներ շուտ-շուտ էին պատահում, ուղևորությունս երկար տևեց։ Սակայն ես ամենևին չէի վհատվում։ Թե այս և թե ուրիշ սրանց նման փորձանքների մեջ ինձ սիրտ էր տալիս մանկամարդ մորս սիրուն պատկերը, այն պատկերը, որ դեռ իմ աշխարհ գալուցս առաջ հատուկ էր նրան։ Այս երևակայական պատկերը շարունակ ինձ ուղեկից էր։ Նա հետս էր, երբ պառկում էի գայլուկի արտում քնելու, հետս էր և առավոտյան զարթնելիս. ամբողջ օրը նա գնում էր իմ առջևից։ Նրա մասին մտածելով՝ ես մտա Կենտրբըրի և այն օրից մինչև այսօր այդ քաղաքի լուսապայծառ մեծ փողոցը, տներն ու դռները, հոյակապ մայր տաճարը, վրան սավառնող թռչուններով, մորս պատկերի հետ կապված մնացին մտքիս մեջ։ Երբ վերջապես Դուվրի ավազոտ դաշտի վրա ոտք դրի, նույն պատկերը, շրջակա տեսարանի տխրությունը հուսատու լույսով զվարթացրեց և չթողեց ինձ մինչև այն րոպեն, երբ ես, վեցօրյա թափառումից հետո, առաջին անգամ մուտք գործեցի այն քաղաքը, որ իմ բուն նպատակն էր։ Եվ զարմանալի բան. մինչ պատռոտած մուճակներով, կիսամերկ մարմնով, արևակեզ, փոշոտ դեմքով արդեն մտել էի ամենաջերմ ձգտումներիս առարկա դարձած քաղաքի մեջ,– տենչալի պատկերը հանկարծ մի երազի պես անհետացավ և ես մենակ, անօգնական և հուսահատ մնացի։

Ամենից առաջ թիավարներին սկսեցի հարցնել տատիս մասին և զանազան պատասխաններ ստացա։ Մեկն ասաց, թե մեծ փարոսի մոտերքում է բնակվում և այս պատճառով նրա ընշանցքը խանձվել է. մյուսը՝ թե կապված է նավահանգստի դրսի խարսխին և միայն ծովի տեղատվության ժամանակ կարելի է տեսնել նրան. երրորդը՝ թե նրան բանտարկել են երեխաներ գողանալու համար. չորրորդը՝ թե վերջին փոթորկի ժամանակ մի ավելի վրա է նստել և թռել փախել դեպի Կալե։ Թիավարներից հետո կառապաններին դիմեցի. բայց նրանք էլ տատիս չհարգող անպատկառ հանաքիչներ դուրս եկան, իսկ մանրավաճառ խանութպանները, իմ արտաքին տեսքին նայելով մինչև անգամ առանց հարցիս սպասելու պատասխան էին տալիս՝ թե ոչ մի ապրանք դեռ չեն ստացել ինձ համար։ Եվ այսպես ճանապարհիս վերջակետին ես ավելի թշվառ էի, քան թե ամբողջ թափառմանս միջոցին։ Փողերս բոլորովին հատել էին, էլ ծախելու բան չունեի։ Ես սոված էի, ծարավ էի, ուժաթափ էի և կարծես նույնքան հեռու իմ նպատակից, որքան և Լոնդոնում էի։

Մինչ այդպես հարցուփորձ էի անում, առավոտն անցավ։ Վերջապես շուկայի մոտերքում մի փակ կրպակի առջև նստեցի և սկսեցի մտածել, թե այժմ քայլերս ո՞ր կողմն ուղղեմ։ Այդ միջոցին հրապարակով անցնող մի կառապանի ձիու ծածկոցը վայր ընկավ։ Վերցրի ծածկոցը և կառապանին տալիս, նրա բարի դեմքը նկատելով սիրտ արի հարցնելու, թե արդյոք կարո՞ղ է ասել՝ որտե՞ղ է բնակվում միս Տրոտուդը, թեև այս հարցումը ստեպ կրկնելուց լեզուս արդեն հոգնել էր։

– Տրոտո՞ւդ. . .,– ասաց կառապանը։– Սպասիր։ Այդ անունը կարծեմ լսել եմ։ Մի պառավ տիկին է, չէ՞։

– Այո, ավելի պառավ, քան ջահել,– ասացի ես։

– Իրեն այսպես ուղիղ պահո՞ղ,– ասաց կառապանը, ինքն էլ ուղիղ դրստվելով։

– Այո՛, այո՛, նա կլինի։

– Միշտ էլ ձեռքին մի պայուսա՞կ, դեմքն էլ խոժո՞ռ, իսկ խոսելիս բավական դաժան և կտրո՞ւկ։

Ուրախությունից սիրտս թնդաց՝ այս նկարագրի անսխալ ճշտությունը լսելով։

– Ուրեմն, սիրելիս, լսիր ինչ կասեմ,– ասաց կառապանը մտրակը դեպի ծովափն ուղղելով։– Եթե ուղիղ այսպես գնաս, հետո դեպի աջ, ծովափի մոտ մի քանի տներ կտեսնես։ Այնտեղ արդեն ամեն մարդ նրա տունը ցույց կտա։ Բայց դժվար թե կարողանաս մի բան պոկել նրանից։ Ահա քեզ մի պեննի։

Շնորհակալությամբ ընդունեցի այդ պեննին և իսկույն մի հաց գնեցի։ Հացն ուտելով, բարեկամիս ցույց տված կողմը գնացի և բավական երկար ման գալուց հետո մի քանի տներ տեսա։ Մտա մի խանութ և հարցրի – չե՞ն կարող արդյոք ասել, որտեղ է բնակվում միս Բեթսի Տրոտուդը։ Այս դիմումն ուղղեցի սեղանի հետևը կանգնած մարդուն, որ բրինձ էր կշռում մի նորատի աղջկա համար, սակայն վերջինս, կարծելով թե իրեն եմ հարցնում, իսկույն շուռ եկավ և ասաց.

– Իմ տիրուհի՞ն։ Ի՞նչ եք կամենում նրանից։

– Կուզեի խոսել նրա հետ, եթե թույլ տաք,– ասացի ես։

– Այսինքն՝ ողորմություն խնդրել նրանից, հա՞։

– Օ՛հ, ո՛չ, ո՛չ,– վրա բերի ես իսկույն, բայց նույն րոպեին էլ հիշելով, որ գալուս նպատակը հենց այդ էր, շփոթվեցի և զգացի, որ երեսս կարմրում է։

Տատիս նաժիշտը (գոնե իր խոսքերի հիման վրա այդպիսի պաշտոն վերագրեցի նրան) բրինձը փոքրիկ զամբյուղը դրեց և դուրս ելավ խանութից, ասելով, որ իրեն հետևեմ, եթե ուզում եմ միս Տրոտուդի կեցած տեղն իմանալ։ Երկրորդ թույլտվությանը չսպասած, գնացի աղջկա հետևից, թեև ծնկներս սրտիս հուզումից ծալվում էին, և մենք հասանք մի շատ գեղեցիկ տնակի, որ կամարաձև պատուհաններ ուներ։ Նրա պատշգամբի առջև մաքուր ավազով հատակած մի քառակուսի ծաղկոց էր տարածվում։

– Ահա միս Տրոտուդի տունը,– ասաց աղջիկը։– Էլ ուրիշ ասելիք չունեմ։

Ասաց ու դռնակից ներս վազեց, ասես վախենալով, որ գալուս համար պատասխանատու չդարձնեն իրեն։ Ես ցանկապատի մոտ մնացի և վշտահար մտիկ էի անում տան դահլիճի պատուհանին։ Դրա կիսաբաց շղարշե վարագույրի միջով միայն մի կանաչ լուսարգել տեսա, որ պատուհանի շրջանակին էր հաստատված, մի փոքրիկ սեղան և մի ահագին բազկաթոռ, որի մեջ գուցե նույն րոպեին իմ տատը նստած լիներ պատկառելի վեհությամբ։

Մուճակներիս վիճակը ողորմելի էր։ Ներբանները մաս-մաս պոկվել էին, իսկ երեսների կաշին այնքան պատռվել ու ծակոտվել, որ նախկին ձևի հետքն անգամ չէր մնացել։ Գլխարկս (որ ի դեպ ասեմ՝ գիշերվա գլխանոցի պաշտոն էր վարել շատ անգամ) այնքան ճմլված էր, որ աղբակույտի կոտրած փարչն անգամ չէր ամաչի հետը մրցել։ Իսկ գիշերվա խշտիների խոտով ու ցեխով կեղտոտված, ծվեն-ծվեն դարձած վարտիքս ու շապիկս համարձակ կարող էին թռչնահալած խրտվիլակի դեր կատարել տատիս այգում։ Լոնդոնից դուրս գալուցս ի վեր ոչ մի սանր, ոչ մի խոզանակ չեր շոշափել մազերս։ Երեսիս, ձեռքերիս ու վզիս կաշին անդադար արևի ու հողմի ազդեցությանը ենթարկվելով բոլորովին ճաքճքել էր ու սևացել։ Ես նման էի կրի հնոցից նոր դուրս պրծած բանվորի. ամբողջ մարմինս սպիտակ փոշով էր ծածկվել։ Ահա

այս էր կերպարանքս, որով պիտի առաջին անգամ ներկայանայի ահեղ տատիս, և շվարած մտածում էի. նա ի՞նչ կզգա ինձ այդպես այլանդակ տեսնելով։

Մի քանի ժամանակ այս դրության մեջ սպասելուց հետո, ոչ մի շարժում չտեսնելով դահլիճի պատուհանում, հետևություն արեցի, թե տատս այնտեղ չի լինի։ Այնուհետև աչքերս երկրորդ հարկի պատուհանին ուղղեցի, որի մեջ մի կարմրայտ, բարեհամբույր և գորշահեր ջենտլմեն նկատեցի, որ ինձ նշմարելուն պես ծաղրալի կերպով մի աչքը խփեց, մի քանի անգամ դեմքը ծռեց, գլխով արավ, հետո ժպտաց ու հեռացավ։

Առաջ էլ շփոթված էի, բայց այդ անսպասելի արարքից ավելի նեղն ընկնելով արդեն ուզում էի մի տեղ թաքնվել՝ անելիքիս մասին լավ մտածելու համար, երբ տանից հանկարծ մի տիկին դուրս ելավ։ Գլուխը թաշկինակով կապած էր, հագին ուներ պարտիզպանի ձեռնոցներ, թևից կախ էր արել հարկահանի տոպրակի նման մի պայուսակ և բռնել էր մի մեծ դանակ։ Մի նայելով իմացա, որ նա միս Բեթսին է. գալիս էր ճիշտ այնպես հաստատ քայլերով ու սիգաճեմ, ինչպես մորս ասելով՝ մի ժամանակ ման էր եկել մեր Բլենդրտընի պարտեզում։

– Կորի՛ր,– ասաց միս Բեթսին, գլուխը ցնցելով և դանակն օդում շարժելով։– Գնա կորի՛ր։ Այստեղ ոչ մի տղա ոտք դնելու իրավունք չունի։

Սրտատրոփ դիտում էի նրան։ Նա գնաց ծաղկոցի մի անկյունը և սկսեց մի ինչ-որ արմատ փորել։ Այն ժամանակ ես հուսահատ մարդու քաջությամբ ոտքերիս ծայրով ներս մտա և նրա մոտ կանգնելով թեթև դիպա նրա զգեստին։

– Աղաչում եմ, տիկին...– սկսեցի ես։

Նա երերաց և վրաս նայեց։

– Աղաչում եմ, տատի՛կ։

– Ի՞նչ,– գոչեց միս Բեթսին անասելի զարհուրանքով։

– Թույլ տվեք, տատիկ... ես ձեր թոռն եմ։

– Աստված իմ,– ասաց տատս, և ասելն ու հողի վրա նստելը մեկ եղավ։

– Ես Դավիթ Կոպպերֆիլդն եմ, Բլենդրոտընից։ Սուֆոլկի կոմսությունից... Դուք եղել եք մեր տանը մի ուրբաթ գիշեր... աշխարհ գալուս գիշերը, և տեսել սիրելի մորս։ Նա մեռավ և այն օրից ես շատ ու շատ թշվառ եմ։ Ինձ արհամարհեցին, անտես արին, ուսում չտվին և հետո մի այնպիսի գործի դրին, որ ամենևին հարմար չէր ինձ։ Ես վճռեցի ձեզ մոտ փախչել։ Ճանապարհիս հենց սկզբին ինձ կողոպտեցին. շարունակ վեց օր ոտքով եմ եկել և մեկնելուս օրից անկողնու մեջ չեմ քնել։

Այստեղ հանկարծ սիրտս լցվեց, միանգամայն քաջությունս կորցրի և հնոտիներս ցույց տալով, որոնք քաշած աղետներիս վկան էին, սկսեցի սաստիկ հեկեկալ և այնքան արտասուք թափեցի, ինչքան որ հավաքվել էր սրտիս մեջ ամբողջ շաբաթվա ընթացքում։

Մինչ այդ՝ տատիս երեսը զարմանքից բացի, ուրիշ զգացում չէր արտահայտում. ավազի վրա անշարժ նստած, նա ակնապիշ նայում էր ինձ։ Բայց հենց որ սկսեցի լաց լինել, մի ակնթարթում տեղից վեր թռավ, օձիքս բռնեց և ինձ քաշելով իր սենյակը տարավ։ Այնտեղ նա ամենից առաջ մի մեծ դարակ բաց արեց, մի քանի հատ շիշ հանեց և սկսեց ամեն մեկից հեղուկներ ածել բերանս։ Պետք է կարծել, թե այդ շշերն առանց ջոկելու էր վերցնում, որովհետև ինչպես հաստատ հիշում եմ, ես թե՛ անիսոնի ջուր կուլ տվի, թե՛ անչոուսի սոուս, թե՛ քացախ և թե՛ ձեթ։ Բայց այս կազդուրիչ դարմանները ցանկալի ազդեցություն չունեցան, և ես շարունակում էի լալ ու ճվալ։ Այն ժամանակ տատս բազմոցի վրա պառկեցրեց ինձ, գլխիս տակ մի շալ փռեց և ոտքերիս տակ մի թաշկինակ, որպեսզի բազմոցի երեսը չաղտոտեմ, իսկ ինքը նստեց արդեն հիշված բազկաթոռի մեջ, լուսարգելի հետևը, այնպես որ ես իր դեմքը

չտեսնեմ, և սկսեց հառաչել, մերթընդմերթ թնդանոթի բոմբյունի պես «Տեր ողորմյա» արձակելով։

Փոքր-ինչ հետո զանգակը հնչեցրեց։

– Ջենետ,– ասաց նա ներս մտնող սպասուհուն,– վերև գնացեք, իմ կողմից մր. Դիկին բարև արեք և ասացեք, որ հետը խոսելու բան ունեմ։

Ջենետը կարծեմ զարմացավ, փայտի նման պառկած տեսնելով ինձ (տատիս անհանգիստ չանելու համար չէի շարժվում), բայց ոչինչ չասաց և իսկույն հեռացավ լսած պատվերը կատարելու։ Տատս ձեռքերը հետևը դրած վեր ու վար ման էր գալիս սենյակում։ Վերջապես այն ջենտլմենը, որ փոքր-ինչ առաջ քիթը բերանը ծռմռելով նայել էր ինձ երկրորդ հարկի պատուհանից, ժպիտը երեսին ներս մտավ։

– Մր. Դիկ,– ասաց տատս,– խնդրեմ հիմար չձևանաք, որովհետև ոչ ոք չի կարող ձեզնից ավելի խելոք լինել, եթե միայն կամենաք։ Այդ մենք գիտենք։ Ուրեմն հիմար չձևանաք։

Ջենտլմենի դեմքը մի վայրկյանում լրջացավ, և նա ինձ այնպես մտիկ տվեց, որ կարծես ուզում էր ասել. Տես հա՛, պատուհանի դեպքը մարդու չասես։

– Մր. Դիկ,– շարունակեց տատս,– արդյոք լսե՞լ եք Դավիթ Կոպպերֆիլդի անունը։ Խնդրեմ չասեք, թե ձեր հիշողությունը տկար է. երկուսս էլ լավ գիտենք, որ շատ սուր է։

– Դավիթ Կոպպերֆիլդ... – ասաց մր. Դիկը, որ կարծես շատ բան չէր հիշում այդ մասին։– Դավիթ Կոպպերֆի՞լդ։ Այո՛, հարկավ։ Ինչպես չէ։ Լսել եմ։ Դավիթ, անշուշտ։

– Շատ լավ,– ասաց տատս։– Ուրեմն իմացեք. ահա նրա որդին։ Սա իր հոր նման կլիներ, եթե մորը նման դուրս չգար։

– Նրա՞ որդին,– կրկնեց մր. Դիկը։– Այսինքն Դավթի՞ որդին։ Իրա՞վ։

– Այո,– հաստատեց տատս։– Եվ սա մի լավ օյին է խաղացել, առել փախել է։ Ահ, երբեք սրա քույր Բեթսի Տրոտուդը այսպիսի բան չէր անի, փախուստ չէր տա։

Տատս գլուխը շարժեց լիակատար վստահությամբ, որ քույրս մի ուրիշ բնավորություն կունենար և այդպիսի բան չէր անի, թեև աղջիկը աշխարհ երբեք չէր եկել։

– Էհ,– ասաց մր. Դիկը,– մի՞թե քույրը չէր փախչի։

– Այդ ի՞նչ հարց է,– գոչեց տատս զայրագին։– Եթե ասում եմ՝ չէր փախչի, ուրեմն չէր փախչի։ Նա իր տատի մոտ կապրեր, և մենք իրար կսիրեինք։ Եվ ասացեք խնդրեմ, ինչո՞ւ կփախչեր սրա քույր Բեթսի Տրոտուդը, և ո՞ւր կփախչեր իմ տանից։

– Ոչ մի տեղ,– ասաց մր. Դիկը։

– Հետևաբար, մր. Դիկ,– ասաց տատս, այդ պատասխանով մեղմացած,– ինչո՞ւ եք ապուշ ձևանում, քանի որ դուք նշատարից էլ սուր միտք ունեք։ Այժմ տեսնում եք ձեր առջև կրտսեր Դավիթ Կոպպերֆիլդին, և ես ուզում եմ իմանալ ձեզնից, թե ի՞նչ անեմ սրան։

– Ի՞նչ անեք,– կրկնեց մր. Դիկը մեղմ ձայնով և ծոծրակը քորելով։– Ի՞նչ անեք։ Այս տղին, հա՞։

– Այո,– ասաց տատս լրջորեն և ցուցամատը բարձրացնելով։– Մտածեցեք, ես կարոտ եմ մի հիմնավոր խորհրդի։

– Հը, ի՞նչ խորհուրդ տամ,– ասաց մր. Դիկը։– Եթե ձեր տեղը լինեի... – շարունակեց նա աչքերը վրաս տնկելով,– ես ձեր տեղը որ լինեի... – իմ պատկերը հանկարծ մի միտք թելադրեց նրան և նա ասաց քաջաբար,– սրան բաղնիք կտանեի։

– Ջենետ,– ասաց տատս հաղթական ժպիտով, որի իմաստը չհասկացա այն ժամանակ,– մր. Դիկը միանգամից ամեն բան վճռեց։ Լոգարանը պատրաստեցեք։

Թեև ես շատ ուշադիր էի այդ խոսակցությանը, բայց միևնույն ժամանակ հետաքրքիր աչքով դիտում էի տատիս, մր. Դիկին, Ջենետին և նույնիսկ սենյակը։

Տատս մի բարձրահասակ տիկին էր. դեմքի գծերը խիստ էին, բայց ոչ անհաճո։ Երեսի վրա, ձայնի, կեցվածքի, քայլվածքի մեջ մի տեսակ անընկճելի զորություն կար, որ հասկանալի է, թե ի՞նչ ուժգին ազդեցություն արած կլիներ մորս պես քնքուշ էակի վրա. սակայն չնայելով պատկերի բրտությանը ու կարծրությանը, նա ավելի գեղեցիկ էր, քան տգեղ։ Ինձ զարմացրին մանավանդ նրա աշխույժ ու վառվռուն աչքերը։ Երկու մասի բաժանված գորշ մազերն ամփոփված էին մի անպաճույճ գլխանոցի տակ, որի երկու ծայրերը հանգույց էին կազմում կզակի ներքև։ Մոխրագույն շրջազգեստը շատ մաքուր էր և կարծես դիտավորյալ այնպես ձևած, որ նրա շարժումները չարգելի։ Սկզբում այդ զգեստը մի կարճեցրած ամազոնկա թվաց ինձ, թեև տատս ոչ մի ժամանակ ձի չէր հեծել։ Նա կրում էր տղամարդու ոսկե ժամացույց՝ մեծ շղթայով ու կնիքով։ Շապկի շուրթերն էլ պարանոցի ու դաստակի վրա ճիշտ այրական շապկի ձև ունեին։

Մր. Դիկը գորշահեր էր և կարմրայտ. նրա մասին այսքան ասելը բավական էր, եթե հարկ չլիներ ավելացնել, թե սովոր էր գլուխը թեք բռնել, սակայն ոչ ծերությունից։ Այս ինձ հիշեցնում էր մր. Կրիկլի աշակերտներից մեկի գլուխը, որ նմանապես թեքվում էր ծեծից հետո։ Մր. Դիկի դուրս ընկած գորշ ու խոշոր, միշտ տամկափայլ աչքերը, մտամոլոր հայացքը, անպայման հնազանդությունը միս Բեթսիին և այն մանկական հրճվանքը, որ զգում էր տատիցս գովեստ լսելիս, առիթ էին տալիս կարծելու, թե նա փոքր-ինչ խելացնոր է։ Եթե այսպես է, հապա ինչո՞ւ էր տատիս մոտ ապրում, հարցնում էի ինքս ինձ, և չէի կարողանում պատասխան գտնել։ Նա հագել էր իբրև վայելուչ ջենտլմեն, մի մոխրագույն լայն զգեստ ու բաճկոն և սպիտակ անդրավարտիք, իսկ վզին ուներ ժամացույցի ոսկե շղթա։ Գրպաններում փող կար, որ ասես թե պարծենալով անդադար շղկացնում էր։

Ջենետը մոտ քսան տարեկան սիրուն աղջիկ էր, շատ մաքուր ու կոկիկ։ Թեև նրա վրա այդ միջոցին մի ուրիշ բան չնկատեցի, բայց հետո իմացա, թե Ջենետն այն բազմաթիվ նաժիշտներից մեկն է, որոնց տատս հատկապես նրա համար էր իր մոտ պահում, որ վարժեցնի նրանց ատելով ատել տղամարդկանց։ Այս կրթությունը սովորաբար նրանով էր վերջանում, որ բոլորն էլ մարդու էին գնում այս կամ այն փոնչու։

Սենյակն էլ Ջենետի կամ տատիս պես մաքուր էր։ Մի րոպե առաջ, երբ այն սենյակի մասին մտածելով գրիչս վայր դրի, հանկարծ երեսիս մի ծովային օդ փչեց՝ ծաղիկների բույրով լի, և նորից տեսա փայլուն ու հստակ կահ-կարասին, տատիս անմատչելի բազկաթոռն ու կլոր սեղանը պատուհանի կանաչ լուսարգելի մոտ, գորգի վրա փռած կտավը, թեյամանի նախշուն ծածկոցը, կատուն, երկու դեղձանիկը, հին չինապակու անոթները, վարդերով լցված սափորը, զանազան բաժակներով, շշերով ու սրվակներով լի պահարանը և վերջապես, ինչ-որ բնավ չի հարմարվում այդ բոլորին, դիվանի վրա տարածված և ակնապիշ շուրջը նայող մի փոշոտ տղա՝ այսինքն ինձ։

Ջենետը նոր էր գնացել լոգարանը պատրաստելու, երբ տատս բարկությունից հանկարծ կարմրեց և ինձ սարսափ պատճառելով սաստիկ գոռաց.

– Ջենետ, էշերը։

Մի ակնթարթում Ջենետը խոհանոցից ներս վազեց, ասես թե ամբողջ տունը հրդեհված լիներ, նետի նման դեպի դիմացի մարգը սլացավ և տիկիններ կրող երկու էշ դուրս քշեց, կարծելով թե նրանք մտադիր են ծաղկոցը մտնել. մինչդեռ տատս, որ նմանապես դուրս էր նետվել, մի մանուկ կրող էշի սանձից բռնեց, սրբավայրից դուրս հանեց և վերջապես մի ապտակ տվեց իշապանին, որը համարձակվել էր նվիրական մարգը պղծել։

Մինչև այս օրս ես չգիտեմ, թե արդյոք տատս մի օրինական իրավունք ունե՞ր իր տան առջև տարածվող փոքրիկ մարգի վրա, բայց նա հավաստի էր, որ ունի, և այս արդեն բավական էր։

Ոչ մի թշնամանք, որ անմիջապես պատժի արժանի էր, չէր կարող այնքան զայրացնել նրան, որքան էշի ոտք դնելն այդ անարատ գետնի վրա։ Ինչ բանով էլ միս Բեթսին զբաղված լիներ, ինչ շահեկան խոսակցության էլ բռնված լիներ, էշի երևալը բավական էր, որ նրա մտքերի ընթացքը մի վայրկյանում հիմնիվեր շփոթվեր և նա կենդանու վրա խոյանար։ Տան զանազան անկյուններում միշտ պահված կային ջրով լի դույլեր ու կժեր՝ հանդուգն տղաների գլխին թափելու համար. դռան հետևը մի թաքուն տեղ, դրված էին զանազան ձևի գավազաններ. ամեն մի ժամ հանկարծական հարձակումներ էին պատահում և պատերազմը անվերջ էր։ Երևի թե իշատեր տղաներին այս պատերազմը դուր էր գալիս, և կամ գուցե էշերը բանի էությունը հասկանալով, իրենց բնական համառությամբ սիրում էին միշտ միևնույն մարգով անցնել,– միայն այս գիտեմ, որ հաշտություն չկար։ Մինչև իմ բաղնիքը պատրաստվում էր, երեք անգամ աղմուկ բարձրացավ և երրորդի ժամանակ, որ ամենից սաստիկն էր, տատս մենակ կռվի բռնվեց տասնհինգ տարեկան մի շիկահեր պատանու հետ, որի գլուխը պատին էր դմբել, առաջ քան տղան հասկանար, թե բանը ինչո՞ւմն է։ Այս փոթորկալի ընդհատումները ծիծաղս շարժում էին, որովհետև նույն միջոցին տատս սկսել էր գդալով արգանակ տալ ինձ։ Նա հաստատ համոզված էր, որ ես սովից մեռնում եմ, և հարկ էր համարում փոքրիկ չափերով սնունդ տալ ինձ. բայց դեռ բերանս չբացած՝ գդալը դեն էր զգում ու դուրս նետվում, «Ջենետ, էշերը» գոռալով։

Լոգարանը շատ կազդուրեց ինձ։ Երկար ման գալուց, բացօթյա մնալուց սկսել էի անդամներիս մեջ սուր ցավ զգալ և այժմ այնպես հոգնած էի, որ հազիվ կարողացա մի հինգ րոպե արթուն մնալ։ Լոգարանից հետո տատս ու Ջենետը մր. Դիկի շապիկն ու վարտիքը հագցրին ինձ և երկու թե երեք ահագին շալով փաթաթեցին։ Չգիտեմ՝ ես ինչի՞ էի նման այս փաթեթների մեջ, միայն գիտեմ, որ շոգում էի։ Թմրած ու նվաղած ընկա տատիս բազմոցի վրա և քուն մտա։

Երա՞զ էր, թե՞ իսկություն, չեմ կարող ասել, միայն զգացի, որ տատս իբր թե վրաս կռացավ, մազերս շոյեց, բարձս շտկեց և մի քանի րոպե ինձ դիտելով կանգնած մնաց սնարիս մոտ։ Հենց իմանաս ականջիս դիպան և «Թշվառ տղա», «Սիրուն մանուկ» խոսքերը։ Սակայն, երբ բոլորովին արթնացա, ոչ մի նշան չգտա, որ հաստատեր, թե այս խոսքերը տատս է ասել, որովհետև նա նստած էր պատուհանի առջև և ծովին էր նայում լուսարգելի հետևից, որ ինչպես ուզենաս պտույտ էր գալիս առանցքի վրա։

Զարթնելուս պես ճաշի նստեցինք. մեզ բերին մի տապակած հավ ու պուդինգ։ Ես ինքս տապակած հավի նման էի և հազիվ էի կարողանում ձեռքերս շարժել, բայց որովհետև տատս ինքն էր փաթաթել ինձ, ոչ մի տրտունջ չէի հայտնում իմ կաշկանդված դրության մասին, որպեսզի նա չվշտանա։ Այս ամբողջ ընթացքում սաստիկ ուզում էի իմանալ, թե ի՞նչ կանի ինձ, սակայն նա խորին լռությամբ շարունակում էր իր ճաշը և մեկ-մեկ երեսիս նայելով հառաչում. «Օ՜հ, աստված իմ, աստված իմ»։ Այս հառաչանքները հարկավ չէին կարող տարակույսներս փարատել։

Երբ որ սեղանը հավաքեցին և մի շիշ գինի բերին, տատս ինձ էլ մի փոքրիկ բաժակ գինի տվեց և հրամայեց մր. Դիկին հրավիրել, որը և իսկույն վար իջավ ամենալուրջ կերպարանքով։ Նա պիտի ականջ դներ պատմությանս, որ տատս մաս-մաս դուրս էր քաշում իմ բերնից՝ զանազան հարցումներ անելով։ Պատմելուս միջոցին տատս անքթիթ մտիկ էր տալիս մր. Դիկին, որ այլապես վաղուց կքներ, և հոնքեր կիտելով արգելում նրան ժպտալ։

– Չեմ կարող հասկանալ,– գոչեց տատս, երբ պատմությունս վերջացրի,– թե ի՞նչ էր փչել այն ողորմելի մանկան (մորս) խելքին, որ նա երկրորդ անգամ մարդու գնաց։

– Գուցե սիրահարվել էր երկրորդ մարդուն,– ասաց մր. Դիկը։

– Սիրահարվե՞լ,– կրկնեց տատս։– Ի՞նչ եք ուզում ասել։ Ո՞վ էր ստիպում նրան սիրահարվել։

– Գուցե. . . – ժպտալով ասաց մր. Դիկը փոքր-ինչ մտածելուց հետո,– գուցե իր զվարճության համար էր այդպես արել։

– Զվարճությո՞ւն, այդ էր պակաս,– պատասխանեց տատս։– Մեծ զվարճություն այն միամիտ էակի համար՝ կապվել մի անզգամի հետ, որ վաղ թե ուշ նրա հոգին պիտի հաներ։ Եվ ի՞նչ էր սպասում այն միամիտ մանուկը, կցանկանայի իմանալ։ Չէ՞ որ արդեն մի անգամ ամուսնացած էր։ Մի՞թե այդ բավական չէր։ Չէ՞ որ գտել էր Դավիթ Կոպպերֆիլդին, որ օրորոցից սկսած սովոր էր քարշ գալ մոմե պաճուճակների հետևից։ Չէ՞ որ արդեն երեխա էլ ուներ. . . այսինքն երկու երեխա, մեկն ինքն էր, երբ մի ուրբաթ գիշեր ահա սա աշխարհ եկավ։ Էլ ի՞նչ էր ուզում։

– Մր. Դիկը կամաց վրաս նայեց, կարծես ուզելով հասկացնել, թե բնավ պատասխանելու բան չունի։

– Մինչև անգամ շնորհք էլ չունեցավ մի այնպիսի երեխա բերելու, որ նման լիներ ամեն մի կնոջ բերածին,– շարունակեց տատս։– Ո՞ւր կորավ այս տղայի քույրը՝ միս Բեթսի Տրոտուդը։ Ծնված էլ չէ, կասեք դուք։ Խնդրեմ այդպիսի հիմար բան չասեք։

Մր Դիկը վախեցավ։

– Եվ ի՞նչ էր անում այն ծուռվիզ ախմախ բժիշկը, այն Ջիլիպսը թե Շիլիպսը,– ասաց տատս։– Միայն թութակի նման կրկնում էր. «Տղա է, տղա է»։ Տղա էլ դուրս եկավ։ Գետինն անցնեն տղամարդիկ։

Այս բացականչության սաստկությունը բոլորովին չշփոթեցրեց մր. Դիկին. ճշմարիտն ասած՝ ես էլ չշփոթվեցի։

– Եվ կարծես այդ բոլորը հերիք չլիներ, կարծես քիչ էր, որ այս տղայի քրոջը՝ Բեթսի Տրոտուդին աշխարհ չբերեց,– գոչեց տատս,– դեռ ուրիշի հետ ամուսնացավ, այն էլ ո՛ւմ հետ... մի ինչ-որ Մըրդըրըրի[22] հետ, մի սրիկայի հետ, որ պիտի թշվառացներ այս մանկանը։ Եվ ամուսնության հետևանքն այն եղավ, որ ահա նրա որդին Կայենի նման փոխել և աստանդական թափառում է։ Մի՞թե չէր կարելի գուշակել, որ անշուշտ այսպես կլինի։

Մր. Դիկն ուշի-ուշով վրաս նայեց ստուգելու համար, թե որքա՞ն եմ նմանվում Կայենին։

– Հետո այն կինն էլ, այն հեթանոսական անունով կինը, հա, այն Պեգգոտին էլ հիմարացավ, մարդու գնաց, կարծես թե ամուսնական կյանքի չարիքներն իրեն անհայտ լինեին։ Իհարկե մարդը նրան միշտ դմփելիս կլինի։ Տեղն է, տեղն է, թող դմփի։

Ես չկարողացա համբերել, որ այդպես բամբասեն բարի դայակիս և այդպիսի բան կամենան նրան։ Ասացի տատիս, թե սխալվում է, ասացի, թե Պեգգոտին մի պատվական, հավատարիմ, անձնվեր, բարեսիրտ կին է, թե մորս էլ, ինձ էլ միշտ սիրել է, թե մայրս նրա գրկումն է հոգին ավանդել և իր վերջին երախտագիտության համբյուրը նրա երեսի վրա կնքել։ Այս երկու անձի հիշատակը ձայնս խեղդեց, և ես արտասվելով պատմեցի, թե Պեգոտիի տան դուռը միշտ բաց է եղել ինձ համար, թե ամեն բան, ինչ-որ նրանն է, այն էլ իմն է, թե ես նրա մոտ մի ապաստան կորոնեի, եթե չվախենայի բեռ լինել այդ չունևոր կնոջը,– այս բոլորը պատմեցի և, ի վերջո, հեկեկալով գլուխս ձեռքիս դեմ տվի։

– Լավ է, լավ, բավական է,– ասաց տատս։– Տղան իրավունք ունի պաշտպանելու իրեն սրտով սիրողներին. . . Ջենե՛տ, էշե՛ր։

Լիովին հավաստի եմ, որ եթե այն անպիտան էշերը չլինեին, տատս անշուշտ կհաշտվեր ինձ հետ, որովհետև իր աջն ուսիս էր դրել, և ես զիջողությամբ քաջալերված՝ արդեն ուզում էի նրա վզին փարվել և պաշտպանություն խնդրել։ Սակայն հանկարծական ընդհատումի և դրսի կռվի պատճառով տատիս մտքերի շփոթվելը առժամանակ վերջ դրեց բոլոր քնքուշ

[22] Murderer — մարդասպան։

զգացումներին։ Տատս սաստիկ զայրացած էր. նա հայտնեց մր. Դիկին, որ հաստատ որոշել էր տեղական օրենքների հիման վրա դատի կանչել Դուվրի բոլոր իշապաններին, և նրա ցասումը մինչև թեյի ժամը տևեց։

Թեյից հետո պատուհանի մոտ նստեցինք. երևի ավելի լավ հսկելու համար, որ հիմար կենդանիները նորից չասպատակեն, և մինչև մթնելն այդպես մնացինք։ Ջենետը մոմերը բերեց, վարագույրները վայր քաշեց և ճատրակը սեղանի վրա դրեց։

– Դեհ, մր. Դիկ,– ասաց տատս, լրջությամբ նրան նայելով և առաջվա պես ցուցամատը բարձրացնելով,– էլի մի բան պիտի հարցնեմ ձեզ։ Մտիկ արեք այս տղային։

– Դավթի որդո՞ւն,– ասաց մր. Դիկը ուշադիր և տագնապած դեմքով։

– Այո, այո,– հաստատեց տատս։– Ի՞նչ կանեիք սրան այժմ։

– Ինչ կանեի Դավթի որդո՞ւն։

– Այո՛, այո՛, Դավթի որդուն։

– Օ՛,– ասաց մր. Դիկը։– Հը՛մ... Ես դրան... ես կասեի դրան, որ գնա քնի։

– Ջենետ,– գոչեց տատս գոհ սրտով, ինչպես և առաջ։– Մր. Դիկը միանգամից ամեն բան վճռեց։ Եթե անկողինը պատրաստ է, ննջարան տանենք տղային։

Ջենետը պատասխանեց, թե անկողինը պատրաստ է, և ինձ մի գերու նման վերև տարան։ Տատս գնում էր իմ առջևից, Ջենետը հետևից։ Այս թափորի ժամանակ մի բան միայն փոքր ի շատե հույս տվեց ինձ, և հատկապես այն, որ տատս սանդուղքի գլխին կանգ առավ և հարցրեց. – Որտեղի՞ց է գալիս խանձի հոտը։ Ջենետը պատասխանեց, թե նա այրել է խոհանոցում իմ հին շապիկը փոքր-ինչ աբեթ պատրաստելու համար։ Այս լավ նշան էր։ Սակայն իմ վրա ոչ մի ուրիշ հագուստ չկար, բացի այն շալերից, որոնցով ինձ կապկպել էին։ Ննջարանում ինձ մենակ թողին մի հատ ճրագով, որ տատիս ասելով, ճիշտ հինգ րոպե պիտի վառվեր, և ոչ ավելի։ Նրանք դուրս գնալիս դուռը կողպեցին։ Տատս երևի կարծում է, մտածեցի ես, թե ես փախչելու սովոր տղա եմ, և դրա համար է այսպիսի զգուշություն բանեցնում։

Ննջարանս մի սիրուն սենյակ էր վերևի հարկում, դեպի ծովը նայող պատուհանով, որտեղից երևում էր լուսնի ցոլացումը ջրի երեսին։ Երեկոյան աղոթքս ասելուն պես ճրագը հանգավ։ Ես դեռ երկար նստած մնացի, լուսնի փայլին նայելով. ինձ թվում էր, թե նրա երերուն ճաճանչի մեջ ահա տեսնում եմ իմ ապագան և կամ նրա շողքի հետ երկնքից իջնող մայրիկիս, որ իր մանկանը գրկում բռնած, անհուն սիրով նայում է վրաս, ինչպես նայել էր վերջին անգամ։ Հիշում եմ, որ հոգուս այս հանդիսավոր տրամադրությունը շնորհակալության ու հանգստյան տեղի տվեց, երբ պատուհանից շուռ գալով աչքս ձյունի պես սպիտակ անկողնուն դարձրի, ուր պիտի պառկեի ինչպես մի փափուկ բլնի մեջ։ Մի առ մի հիշեցի այն տեղերը, ուր բացօթյա գիշերել էի մենակս և ջերմ սրտով աղաչեցի աստծուն այլևս անհարկ չթողնել ինձ և թույլ չտալ, որ երբևէ մոռանամ անտուն-անտեր խեղճ և անօգնական թշվառներին։ Այնուհետև երկնային լուսատուի հեզիկ ցոլմանը նայելով, փոքր առ փոքր անուրջների աշխարհին իջա, և անուշիկ քունն աչքերս փակեց։

ԺԴ. ԳԼՈՒԽ
Տատս որոշում է իր անելիքն իմ մասին

Մյուս առավոտ, երբ ներքև իջա, տատս սեղանի առջև մտազբաղ նստած էր՝ առանց նկատելու, որ թեյամանի քըլթքըլթացող ջուրը թափվում է և ամբողջ սփռոցը թրջել է։ Մտնելս նրան սթափեցրեց։ Հավաստի էի, որ իմ մասին է մտածում և շատ էի ուզում նրա միտքն իմանալ։ Վախենալով սակայն, նրան անհանգիստ անելուց, զգուշացա որևէ բան հարցնել։

Բայց աչքերս, որոնք լեզվիս չափ կամքիս հակառակ չէին, նախաճաշի ժամանակ անդադար տատիս վրա էին սևեռվում։ Նա էլ շուտ-շուտ վրաս էր նայում մի այնպիսի տարօրինակ հայացքով, կարծես թե ես անչափ հեռու նստած լինեի, այլ ոչ թե փոքրիկ սեղանի մյուս կողմը։ Նախաճաշն ավարտելուց հետո նա մեջքը բազկաթոռին դեմ տված, հոնքերը կիտեց, բազուկները կրծքին կցեց և սկսեց ուշի ուշով և անքթիթ դիտել ինձ։ Ես բոլորովին շփոթվեցի և տագնապս ծածկելու համար, նորից փորձեցի բան ուտել, բայց պատառաքաղս ընդհարվում էր դանակիս, մսի կտորները՝ փոխանակ բերանս դնելու՝ անչափ վերև էի բարձրացնում և ընդունած թեյս՝ փոխանակ վար իջնելու՝ ծուռ էր սահում կոկորդս. այնպես որ վերջ ի վերջո ամեն բանից հրաժարվեցի և կարմրելով նստած մնացի տատիս զննող խորաթափանց հայացքի տակ։

– Էսի՛ր,– ասաց նա վերջապես։

Համեստաբար գլուխս վերցրի, և աչքերս նրա սուր ու փայլուն աչքերին դիպան։

– Ես գրեցի նրան,– ասաց տատս։

– Ո՞ւմ...

– Քո խորթ հորը։ Նա պարտավոր է իմ պահանջը կատարել, եթե ոչ՝ ես գիտեմ ինչ կանեմ նրան։

– Արդյոք նա գիտի՞, տատիկ, թե ես այժմ որտեղ եմ,– հարցրի ես սոսկալով։

– Ես գրել եմ նրան,– ասաց տատս։

– Ուրեմն... մտադիր եք... նրա մո՞տ ուղարկել ինձ,– թոթովեցի դողահար։

– Չգիտեմ,– ասաց տատս։– Կտեսնենք։

– Օ՛հ, ի՞նչ կլինի իմ վիճակը,– գոչեցի ես,– եթե նորից մր. Մեորդստոնի ձեռքն ընկնեմ։

– Այդ մասին ոչինչ չգիտեմ,– գլուխը շարժելով ասաց տատս։– Կտեսնենք։

Նրա խոսքերից սիրտս լցվեց. վիհատություն եկավ վրաս։ Տատս, կարծեմ, էլ չէր մտածում իմ մասին։ Նա մի կոպիտ գոգնոց կապեց և սկսեց թեյի անոթները լվանալ. ամեն բան մատուցարանի վրա շարեց, սրբիչը ծալեց, բաժակները ծածկեց և կանչեց Ջենետին, որ գա վերցնի։ Այնուհետև ձեռնոցները հագավ, սեղանի երեսի փշրանքները մի փոքրիկ վրձինով մաքրեց, այնպես որ սփռոցի վրա ոչ մի փշրանք չմնաց, և հետո աթոռների փոշին թափ տվեց, թեև նրանց վրա փոշու նշան անգամ չկար, որովհետև արդեն մաքրված էին։ Այս բոլորն անելուց հետո, գոհ սրտով ձեռնոցներն ու գոգնոցը հանեց, ծալեց, դրեց պահարանի այն անկյունը, որտեղից որ վերցրել էր, ապա ձեռագործի տուփը կլոր սեղանի վրա դնելով, հանգիստ նստեց բազկաթոռի մեջ, բաց պատուհանի մոտ, կանաչագույն լուսարգելի հետևը, և սկսեց կարել։

– Հապա մի վերև գնա մր. Դիկի մոտ,– ասաց նա, թելն ասեղին անցկացնելով,– բարև արա իմ կողմից և հարցրու թե ինչպես է գնում իր հիշատակարանը։

Իսկույն վեր կացա այդ պատվերը կատարելու։

– Դիկի անունը երևի քեզ կարճ է թվում, չէ՞,– ասաց տատս այնպես սուր նայելով աչքիս, ինչպես նայել էր ասեղի ծակին։– Շատ կարճ, չէ՞։

– Իրավ որ երեկ կարճ թվաց,– պատասխանեցի միամտաբար։

– Սակայն չկարծես, թե նա չունի մի ավելի երկար անուն,– ասաց տատս ավելի վսեմ եղանակով։– Բեբլի... Մր. Րիչարդ Բեբլի, ահա ջենտլմենի բուն անունը։

Ուզում էի ասել իմ մանկական միամտությամբ, թե լավ կհամարեմ ջենտլմենի իսկական անունը տալ, բայց տատս գոչեց.

– Չհամարձակվես, երբեք։ Նա չի սիրում իր անունը լսել. այս նրա քմահաճույքն է։ Սակայն զարմանալու բան չկա. այնքան նախատինք է ստացել այդ անունը կրող անձերից, որ կատարյալ իրավունք ունի նրան մահու չափ ատելու։ Այժմ նրա անունը մր. Դիկ է, ինչպես մեզ մոտ, այնպես էլ ամեն տեղ, թեև նա ոչ մի տեղ սովոր չէ գնալ։ Ուրեմն, որդի, տես, երբեք չտաս նրան մի ուրիշ անուն, բայց միայն մր. Դիկ։

Խոստացա այդպես անել և բարձրացա տված պատվերը կատարելու, մտածելով ճանապարհին, որ եթե մր. ԴԻկը ամբողջ առավոտ այնպես փութաջան է աշխատել, ինչպես աշխատում էր նրա բաց դռնով ներքև իջնելուս րոպեին,– ուրեմն հիշատակարանը շատ առաջ գնացած կլինի։ Ես նրան դարձյալ նույն զբաղմունքի մեջ գտա։ Գլուխը քարշ արած՝ նա գրում էր մի երկար գրչով և այնպես էր խորասուզված իր գործերի մեջ, որ իմ գալը չիմացավ։ Նրա սենյակի անկյունում մի մեծ թղթե ֆոռան տեսա, դեզ-դեզ թղթեր, բազմաթիվ ձեռագրեր, անթիվ գրիչներ և տասի չափ թանաքի շշեր, որոնց մեջ անշուշտ մի դույլ թանաք կտեղավորվեր։ Վերջապես ջենտլմենը նկատեց ինձ և գրիչը ցած դնելով ասաց.

– Ա՛, ֆեբոս։ Աշխարհի գործերն ինչպե՞ս են։ Սակայն գիտեք, ի՞նչ կասեմ,– հարեց նա ձայնն իջեցնելով,– չէի ուզի ասել, բայց կասեմ,– և նա ականջիս փսփսաց. – աշխարհս խելագար է, կապելու գիժ է, որդյակ իմ։

Եվ այս ասելիս քթախոտ քաշեց սեղանի վրա դրված կլոր տուփից և քրքրջաց։

Առանց վստահանալու կարծիք հայտնել այդ ծանր խնդրի մասին, ես նրան ասացի, ինչ որ տատս պատվիրել էր։

– Շատ լավ,– ասաց մր. Դիկը,– իմ կողմից էլ նրան բարև արեք և ասացեք, որ գործս... կարծեմ, լավ է գնում... Այո՛, լավ,– հարեց նա, գլխի մազերը քրքրելով և ձեռագրի վրա մի կասկածոտ հայացք նետելով։– Դուք սովորե՞լ եք վատժարանում։

– Այո՛ սըր, բայց կարճ ժամանակ,– ասացի ես։

– Չե՞ք հիշի, թե ո՞ր թվին գլխատեցին Կառլոս Առաջին թագավորին,– հարցրեց նա, շեշտակի վրաս նայելով և գրիչը վերցնելով, որ պատասխանը իսկույն գրի։

– Եթե չեմ սխալվում՝ 1649 թվին։

– Հըմ,– ասաց մր. Դիկը, ականջի հետևը քորելով և երկմտությամբ ինձ նայելով։– Գրքերում այդպես է ասված, բայց սխալ է։ Եթե այդ դեպքը երկու հարյուր հիսուն տարի առաջ է կատարվել, ուրեմն թագավորին շրջապատող մարդիկ ինչպես կարողացան նրա կտրված գլխի շփոթության մի մասը իմ գլխի մեջ անցկացնել։

Այս հարցը վերին աստիճանի զարմացրեց ինձ, և ես ոչ մի բացատրություն չգտա։

– Տարօրինակ բան,– շարունակեց մր. Դիկը, ձեռագրին վստահ նայելով և նորից մազերը քրքրելով։– Մինչև այժմ չեմ կարողանում պարզաբանել այս խնդիրը. չեմ կարողանում լավ լուծել։ Սակայն փույթ չէ,– ասաց նա աշխուժանալով։– Հոգ չէ, հոգ չէ, դեռ բավական ժամանակ կա։ Ողջույն միս Տրոտուդին և ասացեք նրան, որ գործս շատ լավ է առաջ գնում։

Մինչ ուզում էի հեռանալ, նա ինձ հարցրեց.

– Ինչպե՞ս եք հավանում այս ֆոռանը։

Պատասխանեցի, թե շատ լավն է։ Բարձրությունը առնվազն յոթ ոտնաչափ կլիներ։

– Ես ինքս եմ շինել։ Մի օր երկուսս միասին բաց կթողնենք,– ասաց մր. Դիկը։– Իսկ այս տեսնո՞ւմ ես։

Նա ցույց տվեց, որ ֆոռանը ձեռագրերից է շինված։ Թեև տառերը շատ մանր էին և տողերը սեղմ, այնուամենայնիվ աչքի անցնելիս նկատեցի, որ մի երկու տեղ Կառլոս Առաջինի գլխի մասին ակնարկություն կա։

– Տեսնո՞ւմ եք, ինչքան թոկ կա, և ինչպես նուրբ է փաթաթված,– գոչեց մր. Դիկը:– Եվ հենց որ սա վերև սլանա, բոլոր գրված փաստերն էլ իր հետ հեռու կտանի: Իմ գիտական փաստերը այս կերպով եմ տարածում: Բայց արդյոք որտե՞ղ կլինեն, չգիտեմ. այս կախված է հանգամանքներից... հողմից, օդից և այլն: Բայց և այնպես վստահ եմ, որ տարածվում են:

Մր. Դիկի դեմքն այնքան համեստ ու բարի էր և չնայելով առույգ ու զվարթ արտահայտությանը, այնքան հարգո, որ ես իրավ կարծեցի, թե հանաք է անում: Ես ժպտացի, նա էլ ժպտաց, և մենք իրարից բաժանվեցինք իբրև շատ մտերիմ բարեկամներ:

– Դե, որդի,– ասաց տատս, երբ ներքև իջա:– Ինչպե՞ս է այս առավոտ մր. Դիկի առողջությունը:

Հայտնեցի նրան մր. Դիկի ողջույնը և ասացի, թե գործերն էլ միանգամայն հաջող են:

– Իսկ դու նրա մասին ի՞նչ ես մտածում,– հարցրեց տատս:

Մի ներքին դրդումով ուզում էի փախչել այդ հարցից և պատասխանեցի, թե մր. Դիկը մի շատ բարի ջենտլմեն է, սակայն այդպիսի հնարով չէր կարելի տատիս մոլորեցնել: Նա կարը ծնկի վրա դրեց, ձեռքերը կցեց և ասաց:

– Քույրդ՝ Բեթսի Տրոտուդը ինչ էլ մտածեր մեկի մասին, արձակ համարձակ կհայտներ ինձ: Դու էլ աշխատիր նրան նմանվել և շիտակ խոսիր:

– Իրավ... իրավ չգիտեմ, տատի ջան, արդյոք մր. Դիկի... խելքը փոքր-ինչ ցնդած չէ՞,– ասացի ես, կակազելով ու զգալով, որ մի նուրբ խնդիր եմ շոշափում:

– Ամենևին,– ասաց տատս:

– Իրա՞վ,– հարցրի կամացուկ:

– Եթե կա աշխարհիս երեսին գոնե մի մարդ, որի խելքը մի մազի չափ անգամ ցնդած չէ, դա մր. Դիկն է,– ասաց տատս ամենահաստատ եղանակով:

Ես չկարողացա ուրիշ բան ասել, բացի միայն կրկնել համեստաբար.

– Օհ, իրա՞վ:

– Խելագար են համբավել նրան,– շարունակեց տատս:– Եվ ինձ քաղցր է հաստատել, որ միայն համբավել են. եթե ոչ ես նրա ընկերությունն ու խորհրդները չէի վայելի տասը տարվա ընթացքում, և հատկապես այն օրից, երբ քույրդ՝ Բեթսի Տրոտուդը հույսերս չքացրեց:

– Ուրեմն վաղո՞ւց,– ասացի ես:

– Եվ ովքե՞ր են հանդգնել խելագար անվանել նրան,– գոչեց տատս:– Մր. Դիկն ինձ հեռու մոտիկ ազգական է. այս թողնենք: Կասեմ միայն, որ եթե ես չլինեի, մր. Դիկի ավագ եղբայրը նրան գժատուն կդներ: Այս է բանը:

Ես մի փոքր կեղծավորություն բանեցրի, տատիս զայրույթը տեսնելուս պես ինքս էլ զայրացած ձևանալով:

– Ամբարտավան ավանակ,– ասաց տատս:– Միայն այն պատճառով, որ փոքր եղբայրը տարօրինակ է,– թեև ոչ այնքան, ինչքան որ ուրիշներն են,– չուզեց նրան իր մոտ պահել և ուղարկեց մի մասնավոր հիվանդանոց: Այնինչ հայրը մեռնելիս հատկապես ավագին էր հանձնել խնամք տանել եղբոր մասին, որին ինքն էլ իսկական ապուշ էր համարում: Ինչպե՞ս չասեմ այդ հորը, թե իսկական ապուշը հարկավ ինքն էր:

Եվ այդպես համոզված տեսնելով տատիս, ես էլ համոզված ձևացա:

– Պետք եղավ, որ ես միջամտեմ,– շարունակեց տատս:– Գնացի այն ամբարտավանի մոտ և ասացի. ձեր եղբայրը ողջամիտ է, գոնե ձեզնից ավելի ողջամիտ: Թող նա իր փոքրիկ թոշակը ստանա և իմ տունը գա ապրելու: Ես չեմ վախենում նրանից. ես հպարտ չեմ, ես պատրաստ

եմ խնամել նրան և չեմ տանջի նրան, ինչպես ոմանք արել են, բացի հիվանդանոցի սպասավորներից։ Բավական վիճելուց հետո,– շարունակեց տատս,– ուզածս արի, և այն օրից մր. Դիկն իմ տանն է։ Աշխարհում նրա պես համեստ, նրա պես բարի մարդ չկա։ Իսկ գալով խորհուրդներին... ես միայն գիտեմ, թե ի՞նչ արժե նրա խելքը։

Տատս իր զգեստը թոթվեց և գլուխը ցնցեց, և այս երկու շարժումներով ասես ուզեց մարտի կանչել ամբողջ աշխարհը, բացի հարկավ մր. Դիկից։

– Մի քույր էլ ուներ,– ասաց տատս,– նրան՝ անձնվեր մի էակ, որին ինքն էլ սիրում էր։ Բայց այդ քույրն այն արավ, ինչ որ անում է ամեն մի աղջիկ... մարդու գնաց. մարդն էլ, մյուս բոլոր մարդկանց պես, թշվառության մատնեց նրան։ Այդ հանգամանքը մր. Դիկին (բացի, իհարկե, նրա խելքը) այնպես ցնցեց, որ նրա հոգեկան վիշտն ու եղբորից զգացած վախը ջերմային տենդ առաջ բերին։ Այդ պատահեց նրա այստեղ գալուց առաջ, սակայն դեպքի հիշատակը մինչև այսօր տագնապում է նրան։ Կառլոս Առաջինի մասին բան չասա՞ց քեզ։

– Ասած, տատիկ։

– Հա՞,– ձայն հանեց տատս, քթի ծայրը տրորելով, որ նշան էր, թե դժգոհ էր։– Այո՛, նա սիրում է այլաբանորեն խոսել... իր հիվանդությունն այդ թագավորի կրած վրդովման ու հուզման հետ է կապակցել, որ շատ բնական է. դա մի ճարտասանական ձև է, մի տեսակ համեմատություն, որ գործ է ածում մտքերը պարզելու համար։ Եվ ինչո՞ւ չպիտի գործածի, եթե հարմար է գալիս իր ճաշակին։

– Իրավ որ,– ասացի ես։

– Գիտեմ, որ գործնական ասպարեզում ընդունված չէ այդպես խոսել կամ գրել,– ասաց տատս,– այս պատճառով մր. Դիկից պահանջում են, որ ոչ մի այլասացիկ բառ ու ոճ չբանեցնի իր հիշատակարանում։

– Հենց իր կյանքի նակարագի՞րն է այդ հիշատակարանը, տատիկ։

– Այո՛, որդի,– ասաց տատս, նորից քիթը տրորելով։– Նա պատրաստում է իր գործերի տեղեկագիրը, որ տալու է դիվանապետ լորդին և կամ թե մի ուրիշ լորդի... մի խոսքով, այնպիսի անձանց, որոնք հատուկ նրա համար են թոշակ ստանում, որ խնդիրներ ընդունեն։ Կարծում եմ այս օրերս կուղարկի։ Դեռ չի կարողացել վերոհիշյալ այլաբանությունը ձեռագրից ջնջել հանել, սակայն փույթ չէ. գոնե զբաղված է։

Եվ ես հետո իրոք իմացա, որ մր. Դիկը տասը տարուց ի վեր ջանացել է Կարլոս Առաջինի անունը հիշատակարանից դուրս քշել. բայց նա շարունակ ներս է սպրդել, և այսօր էլ այնտեղ է։

– Դարձյալ կրկնում եմ,– ասաց տատս,– ինձնից զատ ոչ ոք չգիտե գնահատել նրա խելքի արժեքը։ Նա մի պատվական, ընկերասեր, բարի ու հեզ էակ է։ Իսկ եթե սիրում է երբեմն ֆոռան թողնել... ում ինչ փույթ։ Չէ՞ որ Ֆրանկլինն էլ թողնում էր։ Այնինչ Ֆրանկլինը, եթե չեմ սխալվում, քուեկրը[23] էր և կամ մի այդպիսի բան։ Եվ իմ կարծիքով ֆոռան թողնող մի քուեկրը ավելի շատ ծիծաղելի է, քան մի ուրիշ մարդ։

---

[23] Quakers — երերականք կոչվում են Ջորջ Ֆոքսի (1624-1691) կրոնական վարդապետության հետևորդները։ Նրանք իրենց «Քրիստոնեկան միության ընկեր» և «Լույսի զավակներ» են անվանում։ Սկզբում հալածված էին անգլիական կառավարությունից, բայց հետո ազատ դավանության իրավունք ստացան։ Տարածված են Հյուսիսային Ամերիկայում և մասամբ Գերմանիայում։ Ընդունում են բողոքական եկեղեցու էական ուսմունքը, սակայն ավելի նշանակություն են տալիս մարդու ընդաբույս ներքին լույսին, քան Ս. Գրքի տառին։ Առանձին եկեղեցական դասակարգ չունեն, նրանց պաշտամունքը շատ պարզ է. երգ, պատկերներ չկան, ս. Խորհուրդներ չկան։ Լուռ նստում են, մինչև որ մեկը ներշնչվելով սկսի խոսել, և հետո հանդարտ բաժանվում։ Բարոյական կանոնները շատ խիստ են.

Եթե կարողանայի ենթադրել, թե այդ բոլորը տատս պատմում է իր վստահությունը դեպի ինձ ցույց տալու և իմ միտքը զարգացնելու համար, ես շատ փաղաքշված կլինեի և շատ բարիք կսպասեի այդ շնորհից։ Սակայն չէր կարելի չնկատել, որ նա ոչ թե ինձ էր ասում իր ճառը, այլ իրեն՝ հատկապես իր միտքը հուզող մի խնդիր պարզելու համար, թեև խոսելիս ուրիշ ունկնդիր չունենալուց ինձ էր դիմում։

Այս էլ պիտի ասեմ, որ անօգնական ու խեղճ մր. Դիկին ընծայված վեհանձն խնամքը տեսնելով, ես ոչ միայն մի ինքնասիրական հույս զգացի, թե տատս ինձ հետո հովանավոր կլինի, այլև մի սրտագին սեր դեպի նա։ Սկսեցի հավատալ, որ նա, չնայած իր տարօրինակ և ուրույն հաճույքներին, վստահության ու հարգանքի արժանի անձ է։ Թեև այդ օրն էլ նա անցյալ օրվա պես գրգռված էր, թեև նորից շուտ-շուտ դուրս էր վազում էշերի հետ կռվելու համար, թեև սաստիկ չարացած էր, որ անցկացող տղաներից մեկն աչքով էր արել Ջենիին (դրանից էլ մեծ վիրավորանք չէր կարելի հասցնել տատիս),– բայց և այնպես նա ավելի ակնածություն ազդեց ինձ, քան երկյուղ։

Մինչև տատիս նամակին մի պատասխան գար մր. Մեորդստոնից, ես անասելի տագնապի մեջ էի, բայց աշխատում էի զսպել ինձ և որքան կարելի է հաճոյանալ տատիս և մր. Դիկին։ Վերջինս և ես շատ էինք ուզում մեծ ֆոռանը բաց թողնել, բայց ես տանից ինչպե՞ս դուրս գայի, քանի որ առաջին օրը վրաս փաթաթված տարօրինակ զարդերից զատ՝ ուրիշ հագուստ չունեի, և ստիպված էի ներսը նստել, բացի մի ժամվա կարճ զբոսանքից, որ կարող էի անել հատկապես արևի մայր մտնելուց հետո և միայն առողջապահական նպատակով։ Վերջապես մր. Մեորդստոնի պատասխանը եկավ, և ես սարսափելով իմացա տատից, թե խորթ հայրս հետևյալ օրը գալու է նրա հետ անձամբ խոսելու։ Հետևյալ օրն իմ աննման զգեստավորությամբ նստած, ես անհամբեր համրում էի ժամերը։ Հույսերս հետզհետե նվազում էին, ահս աճում էր և, ամեն րոպե, ցնցվելով սպասում էի այն սոսկալի մարդուն, որի պատկերն անգամ հիշելիս սարսուռ էի զգում։

Այդ օրը տատս սովորականից փոքր-ինչ ավելի խրոխտ ու սեգ էր, բայց ոչ մի բանով ցույց չէր տալիս, թե պատրաստ է ինձ սարսափ ազդող այցելուին ընդունելու։ Նա գործում էր պատուհանի առջև, իսկ ես նրա մոտ նստած էի, մր. Մեորդստոնի գալստյան կարելի և անկարելի հետևանքները հեղեղելով մտքիս մեջ։ Արդեն երեկոն մոտենում էր, ճաշի ժամն անցել էր. տատիս համբերությունը հատավ, և նա հրամայեց ճաշ բերել։ Բայց հանկարծ այդ րոպեին նա մի էշ տեսավ և ճիչ հանեց, և ես իսկույն նկատեցի միս Մեորդստոնին, որ մի ավանակ հեծած առոք-փառոք գալիս էր նվիրական գետնի վրայով. նա տան առջև կանգ առավ և սկսեց չորս կողմը նայել։

– Կորեք այդ տեղից,– գոչեց տատս, գլուխը շարժելով և բռունցքը պատուհանից դուրս տնկելով։– Գործ չունեք այստեղ։ Գնացեք, գնացեք։ Մի տես, մի տես այդ հանդուգն արարածին։

Միս Մեորդստոնի անվրդով սառնությունից տատս այնքան շվարեց, որ մի վայրկյան անշարժ մնաց և կարծեմ ուժ չգտավ դուրս նետվելու, ինչպես անում էր այդպիսի դիպվածներում։ Այդ վայրկյանից օգտվելով ես շտապեցի հայտնել նրան, թե ով է եկվոր տիկինը և հայտնել, թե տիկնոջ ետևից էշով եկող ջենտլմենն էլ ուրիշ մարդ չէ, բայց եթե նույն ինքը մր. Մեորդստոնը։

– Ինձ ինչ, թե ով է,– գոչեց տատս, այնպիսի շարժումներ անելով, որոնք բնավ ողջույնի նմանություն չունեին։– Ես թույլ չեմ տա ոտնակոխ անել իմ սահմանը։ Է՛յ, հեռացիր։ Դուրս արա դրան։ Ջանետ, դո՛ւրս։

Եվ ես տատիս հետևը կանգնած՝ մի տաք կռվի ականատեսն եղա. էշը, չորս ոտքը գետնին խրած՝ ամենքին դիմադրում էր. Ջենետը նրա սանձը ետ էր քաշում, մր. Մեորդստոնը

մերժում են զինվորական ծառայությունը, երդումը, հակառակ են ամեն տեսակ զբոսանքների, շռայլության. ոչ ոքի առջև գլխարկ չեն հանում և ամեն մարդու ասում են **դու:**

աշխատում էր նրան առաջ քշել, միս Մեորդստոնը հովանոցով հարվածում էր Ջենետին, և բազմաթիվ տղաներ այս տեսարանով հրապուրված՝ սարսափելի հարայ էին տալիս։ Բայց տատս հանկարծ նրանց միջև մի իշապան տղա նկատելով, որ իր ոխերիմ թշնամին էր, թեև հազիվ տասներեք տարեկան էր, մարտի դաշտը սլացավ, ճանկեց նրան, տապալեց, բաճկոնը գլխին անցկացրեց և քաշեքաշ տարավ իր պարտեզը, ուր նրան ամուր բռնելով, իսկույն Ջենետին հրամայեց ոստիկաններ ու դատավորներ կանչել, որպեսզի հանցավորին տեղն ու տեղը քննեն, դատեն և պատժեն։ Սակայն ընդհարման վերջին մասը երկար չտևեց, որովհետև չարաճճի տղան այս տեսակ պատերազմի բոլոր խորամանկ հնարներին, որոնց մասին տատս գաղափար անգամ չուներ, քաջածանոթ լինելով, շատ չանցած դրա ձեռքից դուրս պրծավ, ածուները ոտնատակ տվեց և հաղթական ծիծաղելով փախավ գնաց իր էշի հետ։

Միս Մեորդստոնը կռվի վերջին րոպեներին արդեն գրաստից իջել էր և դռան աստիճանների ներքևը կանգնած սպասում էր, թե տատս ե՞րբ կընդունի նրանց։ Տատս, թեև կռվելուց դեռ փոքր-ինչ գրգռված նրանց առջևից անցնելով՝ սիգաճեմ ներս մտավ և ուշք անգամ չդարձրեց հյուրերի վրա, մինչև որ Ջենետը պաշտոնապես նրանց գալը չհայտներ։

– Արդյոք հեռանա՞մ, տատի,– հարցրի ես դողալով։

– Ո՛չ, սըր,– ասաց տատս։– Ամենևին։

Այս ասելուն պես նա ինձ իր մոտի անկյունը հրեց, մի աթոռով էլ առաջս կտրեց, ասես թե մի բանտի մեջ և կամ դատարանի պատվարի հետևը փակելով ինձ։ Ամբողջ տեսակցության միջոցին ես այդ դիրքը պահպանեցի և այդ տեղից տեսա մր. Մեորդստոնի և նրա քրոջ ներս մտնելը։

– Ա՛,– ասաց տատս,– պատիվ չունեի իմանալու, թե ում էի հանդիմանում մի րոպե առաջ։ Սակայն ես ոչ ոքի թույլ չեմ տալիս իմ մարգերը կոխկրտել և բացառություն չեմ անում, թույլ էլ չեմ տա, որ արվի։

– Այդ կանոնը, սակայն, ուրիշների համար փոքր-ինչ նեղիչ է,– ասաց միս Մեորդստոնը։

– Իրա՞վ,– ասաց տատս։

Մր. Մեորդստոնը վախենալով, որ թշնամական ընդհարումը չկրկնվի, մեջ մտավ և ասաց.

– Միս Տրոտուդ։

– Խնդրեմ ներեցեք,– նկատեց տատս համարձակ նրա երեսին նայելով։– Դո՞ւք եք այն մր. Մեորդստոնը, որ ամուսնացել էր իմ հանգուցյալ եղբորորդու՝ Դավիթ Կոպպերֆիլդի այրու հետ, որ բնակվում էր Բլենդրոտընի Րուկրիում, կարծեմ Րուկրիում։ Այս ինչ անուն է, աստված իմ։

– Ես եմ,– ասաց մր. Մեորդստոնը։

– Ներեցեք, սըր, համարձակությանս,– վրա բերեց տատս։– Կարծեմ ավելի երջանիկ կլինեիք, եթե բնավ չամուսնանայիք այն խեղճ մանկան հետ և նրան հանգիստ թողնեիք։

– Համամիտ եմ միս Տրոտուդի հետ, որ մեր արտասվելի Կլարան ամենայն առմամբ մանուկ էր,– նկատեց միս Մեորդստոնը դրստվելով։

– Դուք և ես, տիկին,– ասաց տատս,– կարող ենք շատ բախտավոր համարել մեզ, որ արդեն բավական ապրած լինելով, տղամարդկանց որոգայթին զոհ լինելու վտանգից ազատ ենք։ Մեր մասին հարկավ ոչ ոք չի ասի, թե մանուկ ենք։

– Անշուշտ,– պատասխանեց միս Մեորդստոնը, թեև կարծեմ ակամա։– Եղբայրս, իհարկե, ավելի երջանիկ կլիներ, ինչպես ասացիք, եթե այդ ամուսնությամբ չկապվեր։ Ես էլ միշտ նույն կարծիքն եմ ունեցել։

– Չեմ կասկածում, որ ունեցած լինեք,– ասաց տատս։– Ջենետ,– կանչեց նա, զանգակը հնչեցնելով։– Բարով արեք մր. Դիկին և խնդրեցեք, որ այստեղ գա։

Մինչև ջենտլմենի գալը տատս անշարժ ու լուռ նստած էր և հոնքերը կիտած մտիկ էր անում դիմացի պատին։ Երբ ներս մտավ, տատս ներկայացրեց հյուրերին։

– Մր. Դիկ, իմ մտերիմ ու վաղեմի բարեկամը, որի դատողությանը միշտ ահագին կշիռ եմ տալիս,– հարեց տատս շեշտելով, սաստելու համար մր. Դիկին, որ սկսել էր եղունգը կրծել և ապուշի պես կանգնած էր։

Մր. Դիկն անմիջապես մատը շրթունքից հեռացրեց և ծանր ու լուրջ կերպարանք առավ։ Տատս գլուխը թեքեց դեպի մր. Մեորդստոնը, որը և սկսեց.

– Միս. Տրոտուդ, ձեր նամակն ստանալուն պես հարկ համարեցի պարտքս կատարել՝ մանավանդ հարգանացս հավաստիքը ձեզ անձամբ հայտնելու համար...

– Շնորհակալ եմ,– ասաց տատս, սուր-սուր նայելով նրա դեմքին։– Իմ մասին կարող եք անփույթ լինել։

– Հարկ համարեցի, չնայելով ճանապարհի դժվարությանը,– շարունակեց մր. Մեորդստոնը,– անձամբ գալ, քան թե գրով պատասխանել։ Այս թշվառ տղան, որ փախել է իր հովանավորներից և գործից...

– Եվ որի տեսքը,– մեջբերեց նրա քույրը, ամենքի ուշադրությունն իմ տարօրինակ հագուստի վրա դարձնելով,– մի խայտառակ և անշնորհք բան է։

– Ջենի Մեորդստոն,– ասաց եղբայրը,– խնդրեմ մի՛ ընդհատիր ինձ։ Այս թշվառ տղան, միս Տրոտուդ, շատ ընտանեկան շփոթների ու տագնապների պատճառ է եղել թե՛ լուսահոգի կնոջս օրով և թե՛ նրա մահից հետո։ Դա մի համառ և ստամբակ բնավորություն ունի, մի ըմբոստ ու ապառաժ սիրտ, մի անբարեհամբույր և դժնդակ տրամադրություն։ Քույրս և ես շատ բան դրինք ուղղելու դրան, բայց իզուր։ Եվ ես անհրաժեշտ համարեցի, կամ լավ է ասել՝ երկուսս միասին անհրաժեշտ գտանք այս անաչառ և ցավալի հանգամանքը անձամբ գալով ձեզ հայտնել։

– Չեմ կարծում, որ եղբորս ասածի ճշմարտությունը իմ կողմից էլ պետք լինի հաստատել,– ավելացրեց միս Մեորդստոնը։– Միայն թույլ տվեք ասել, որ իմ համոզմունքով աշխարհիս երեսին դրանից ավելի վատ տղա չկա։

– Շատ խիստ եք,– ասաց տատս։

– Բայց ոչ այնքան, որքան խիստ են փաստերը,– պատասխանեց միս Մեորդստոնը։

– Հը,– ասաց տատս։– Շարունակեցեք, սըր։

– Թե ինչպես պետք է դաստիարակել դրան, այս մասին ես իմ առանձին հայացքն ունեմ,– շարունակեց մր. Մեորդստոնը, որի երեսը, մինչ տատս ու նա իրար աչքով չափում էին, հետզհետե մռայլվում էր։

– Եվ այս հայացքը մասամբ այն ծանոթության վրա է հիմնված, որ ունեմ տղայի մասին, և մասամբ իմ եկամտի ու դրամական միջոցների վրա։ Միջոցներիս վերաբերմամբ ոչ մի մարդ իրավունք չունի ինձնից հաշիվ պահանջել. ես վարվել եմ գաղափարներիս համեմատ, և այս մասին ավելի խոսելն ավելորդ է։ Բավական է ասել, որ ես տղայի համար մի պատվական գործ գտա և նրան իմ բարեկամի հսկողության ներքո դրի։ Բայց նա չի հավանում այդ գործը, նա փախչում է պաշտոնից, շրջմոլիկ է դառնում և ցնցոտիներ հագած այստեղ գալիս ձեզ դիմելու, միս Տրոտուդ։ Այժմ ձեզ եմ թողնում անաչառ կշռել, թե ձեր զիջողությունը դեպի այս տղան ինչ հետևանք կունենա։

– Սակայն պատվական գործից սկսենք,– ասաց տատս։– Եթե այս տղան ձեր հարազատ որդին լիներ, անշուշտ դարձյալ միևնույն գործին կդնեիք, չէ՞։

– Եթե եղբորս հարազատ որդին լիներ, հարկավ մի ուրիշ բնավորություն կունենար,– նկատեց միս Մեորդստոնը։

– Կամ եթե սրա խեղճ մայրը կենդանի լիներ, այն ժամանակ էլ սրան այդ ազնիվ գործին կդնեիք, չէ՞,– հարցրեց տատս։

– Հավաստի եմ,– ասաց մր. Մեորդստոնը, գլուխը փոքր-ինչ կախելով,– որ ինչ էլ ես և քույրս վճռեինք անել, նույնը և Կլարան կընդուներ։

Միս Մեորդստոնը բավական լսելի մրմունջով եղբոր ասածը հաստատեց։

– Հըմ,– ասաց տատս։– Խեղճ մանուկ։

Մր. Դիկը, որ շարունակ իր գրպանի փողերն էր հնչեցնում, այժմ նրանց այնպես շարժեց, որ տատս պետք համարեց մի խիստ հայացք ձգել նրա վրա և ապա ասել.

– Իսկ որբի տարեկան եկամուտը, ա՞յդ էլ անշուշտ մոր հետ մեռավ։

– Այդ էլ մեռավ նրա հետ միասին,– պատասխանեց մր. Մեորդստոնը։

– Իսկ այն փոքրիկ կալվա՞ծքը... տունն ու պարտեզը – այն որորների բույնը՝ առանց որորների – մի՞թե այն էլ չմնաց որդուն։

– Առաջին ամուսնու կողմից այն կալվածքը մորն էր կտակված անպայման,– սկսեց մր. Մեորդստոնը, բայց տատս անզուսպ ցասումով ընդհատեց նրան և գոչեց.

– Տեր իմ աստված, անպայման, և դո՞ւք եք ասում այդ բանը։ Գիտեմ, որ Դավիթ Կոպպերֆիլդը պայմանի մասին չէր մտածի, նույնիսկ եթե երեսին տայիր, թե անհրաժեշտ է պայման դնել։ Հավատում եմ, որ նա իր կնոջը պայմաններով չէր կապի։ Սակայն երբ կինը երկրորդ անգամ մարդու գնաց... երբ հատկապես ձեզ հետ պսակվելու թշվառությունը ունեցավ... մի՞թե այն ժամանակ էլ ոչ ոք ի նպաստ այս տղայի մի բառ չասաց։

– Հանգուցյալ կինս իր երկրորդ մարդուն սիրում էր և լիովին նրան հավատում,– նկատեց մր. Մեորդստոնը։

– Ձեր հանգուցյալ կինը, սըր, աշխարհի գործերին անտեղյակ մի շատ անբախտ, մի շատ թշվառ ու միամիտ մանուկ էր,– պատասխանեց տատս, գլուխը սաստիկ շարժելով։– Այդպես էր նա։ Այժմ տեսնենք՝ էլ ի՞նչ ունեք ասելու։

– Միայն մի բան, միս Տրոտուդ,– ասաց խորթ հայրս։– Ես եկել եմ Դավթին ետ տանելու, և տանելու առանց որևէ պայմանի և հետն այնպես վարվելու, ինչպես որ ինձ հաճելի կլինի։ Պարտավոր չեմ ումևիցե հաշիվ տալ կամ թե բան խոստանալ։ Գուցե դուք, միս Տրոտուդ, մտադիր եք դրա փախուստն արդարացնել և գանգատներին ականջ դնել։ Ձեր ուրույն վարմունքը մեզ հետ, տեղիք է տալիս այսպիսի ենթադրություն անելու։ Սակայն իմացած եղեք, միս Տրոտուդ, որ եթե դրան գեթ մի անգամ արդարացնեք, միշտ էլ պիտի արդարացնեք։ Եթե մի անգամ որոշեք նրա և իմ մեջտեղը կանգնել, միշտ էլ պիտի այդ դիրքը բռնեք, միս Տրոտուդ։ Ես կատակ չեմ անում, ինձ հետ էլ թող կատակ չանեն։ Այս առաջին ու վերջին անգամ այստեղ գալուս նպատակն է տուն տանել նրան։ Պատրա՞ստ է գալ։ Եթե պատրաստ չէ,– և դուք ասեք, թե որևէ պատճառով, որ ես չեմ ուզում իմանալ, նա իսկապես պատրաստ չէ,– այն ժամանակ իմ տան դուռը միշտ նրա համար փակ կլինի, իսկ ձերը հարկավ բաց։

Տատս ուշի-ուշով ականջ էր դնում այդ ճառին, ականջ դնում բոլորովին ուղիղ նստած, ձեռքերը ծնկների վրա ծալած և շեշտակի նայելով խոսակցին։ Երբ սա վերջացրեց, տատս առանց իր դիրքը մի մազի չափ փոխելու՝ աչքերը շիտակ միս Մեորդստոնի վրա ուղղեց և ասաց.

– Իսկ դուք, տիկին, ի՞նչ կասեք։

– Ոչինչ, միս Տրոտուդ,– պատասխամեց միս Մեորդստոնը։– Բոլոր ասելիքս և ամեն բան, ինչ որ գիտեմ, եղբայրս այնպես լավ բացատրեց, որ ինձ ոչինչ չի մնում անելու, բայց միայն շնորհակալություն հայտնել ձեր քաղաքավարի վերաբերմունքի համար, ձեր անզուգական քաղաքավարության համար,– հարեց միս Մեորդստոնը հեգնությամբ, որ, սակայն, տատիս վրա այնքան ազդեց, որքան կազդեր այն թնդանոթի վրա, որի ներքև քնել էի Չետեմում։

– Լսենք այժմ, թե տղան ինքն ի՞նչ կասի,– հարցրեց տատս, ինձ դառնալով։– Ուզո՞ւմ ես, Դավիթ, սրանց հետ գնալ։

Պատասխանեցի, թե չեմ ուզում, և խնդրեցի տատիս թույլ չտալ, որ ինձ տանեն։ Ասացի, թե մր . Մեորդստոնը և նրա քույրը ամենևին չեն սիրել ինձ և երբեք հետս լավ չեն վարվել։ Ասացի, թե իմ պատճառով թշվառացրին մայրիկիս, որ ինձ այնքան սիրում էր, և թե այս բոլորը, ես լավ գիտեմ, ինչպես որ գիտի և Պեգգոտին։ Ասացի, թե ոչ ոք հասակիս նայելով չի հավատա, թե որքան եմ չարչարվել։ Վերջապես պաղատեցի, աղաչեցի տատիկիս (էլ չեմ հիշում ի՞նչ խոսքերով, բայց միտքս է, որ շատ հուզված էի) տեր կանգնել, թևարկել ինձ և պաշտպանել հորս սիրուն։

– Մր . Դիկ,– ասաց տատս,– ի՞նչ անեմ այս երեխային։

Մր . Դիկը փոքր-ինչ մտածեց և հանկարծ զվարթանալով պատասխանեց .

– Հրամայեցեք, որ իսկույն դրա չափն առնեն և մի ձեռք հագուստ կարեն։

– Մր . Դիկ,– ասաց տատս հաղթանակով,– ձեր աջը տվեք, ձեր ողջամիջ կարծիքն անգին է։

Նա մեկնված աջն ամուր սեղմեց և հետո ինձ իր մոտ քաշելով, ասաց մր . Մեորդստոնին .

– Եթե կամենաք, կարող եք իսկույն հեռանալ։ Տղան իմ մոտ կմնա։ Եթե սա իրոք այնպես է, ինչպես որ ասում եք, ես կաշխատեմ սրա համար առնվազն այնքան անել, ինչքան որ դուք եք արել։ Սակայն ես ձեր ոչ մի խոսքին չեմ հավատում։

– Միս Տրոտուդ,– ասաց մր . Մեորդստոնը վերկենալով և ուսերը թոթվելով,– եթե դուք մի տղամարդ լինեիք . . .

– Ի՜նչ անմիտ ու դատարկ խոսք,– գոչեց տատս։– Խնդրեմ, այդպիսի բաներ չասեք ինձ։

– Այդ ինչ նուրբ քաղաքավարություն է,– աղաղակեց միս Մեորդստոնը ոտքի կանգնելով։– Արդարև, գերազանց։

Տատս ամենևին աչք չդարձրեց քրոջ խոսքերին և շարունակելով եղբորը դիմել, սաստկությամբ ասաց .

– Մի՞թե կարծում եք, որ ինձ անհայտ է այն կյանքը, որին մատնել էիք սրա մորը, այն խեղճ, անբախտ և միամիտ մանկանը։ Կարծում եք չգիտե՞մ, թե որքան չարաղետ էր այդ քնքուշ ու հեզ արարածի համար այն օրը, երբ նա առաջին անգամ ձեզ տեսավ, և դուք կաթոգին հայացք ու քնքուշ ժպիտ կեղծելով, մի անմեղ գառնուկ ձևացաք նրան։

– Այդպիսի վայելուչ լեզու դեռ օրումս չէի լսել,– բացականչեց միս Մեորդստոնը։

– Մի՞թե կարծում եք,– շարունակեց տատս,– թե չէի կարող հասկանալ ձեզ, այնպես լավ հասկանալ, ինչպես որ այս րոպեիս լավ տեսնում ու լսում եմ ձեզ,– ինչ-որ սակայն, ուղիղն ասած, ամենևին հաճույք չի պատճառում ինձ։ Օ՜հ, աստված իմ։ Ո՞վ կարող էր սկզբում ավելի անուշ, ավելի բարի, ավելի գրավիչ ձևանալ, քան մր . Մեորդստոնը։ Խեղճ ու շվարած մանուկը դեռ իր օրում այդպիսի մարդ չէր տեսել։ Մարդը մի մարմնացյալ քաղցրություն էր։ Մարդը պաշտելով պաշտում էր նրան։ Մարդը պաշտում, գուրգուրում էր նրա մանկան։ Մարդն ասում էր, թե մանկան համար մի երկրորդ հայր կլինի . . . գորովասիրտ, որդեսեր հայր, և երեքը միասին երանելի կյանք կվարեն մշտազվարճ բուրաստանում։ Այդպես չէ՞։ Ո՜ւֆ։ Հեռացե՜ք այստեղից։

– Ոչ մի ժամանակ չէի տեսել այս տիկնոջ պես նորահարաշ էակ,– ասաց միս Մեորդստոնը։

– Եվ երբ այն հիմար մանկանը ձեր ճանկը գցեցիք,– ասաց տատս,– թող ների ինձ աստված, որ այդպես եմ անվանում նրան... իսկույն սկսեցիք վերակրթել նրան, այնպես չէ՞։ Սկսեցիք վանդակում փակված թռչնի նման տանջել նրան և ստիպել, որ իր անցյալ կյանքը մոռանա և ձեր ուզած երգը երգի։

– Այս կինը կամ հարբած է, կամ խելագար,– գոչեց միս Մեորդստոնը, զայրանալով, որ չի հաջողվում իր կողմը դարձնել տատիս ճառի հոսանքը։– Հավաստի եմ, հարբած է։

Միս Բեթսին այս ընդհատումը բանի տեղ չդրեց, կարծես թե այդպիսի բան պատահած էլ չլիներ, և շարունակեց մր. Մեորդստոնի գլխին թափել իր ճառի հեղեղը։

– Մր. Մեորդստոն,– ասաց նա, մատը նրա դեմ շարժելով,– դուք մի բռնակալ էիք այն անմեղ մանկան համար. դուք նրա սիրտը խորտակեցիք։ Նա մի գողտրիկ ու սիրալիր սիրտ ուներ... ես այդ ձեզնից առաջ գիտեի, շատ առաջ... և դուք նրա թուլության այդ ազնիվ ու գերազանց կողմն ընտրեցիք՝ այն վերքերը տալու համար, որոնք գերեզման իջեցրին նրան։ Այս է ահա ճշմարտությունը, որ կարող եք ընդունել կամ չընդունել ձեր սփոփանքի համար և ի պարծանքս ձեր արբանյակների։ Ինչպես կամենաք։

– Թույլ տվեք հարցնել ձեզ, միս Տրոտուդ,– մեջ մտավ միս Մեորդստոնը,– թե ո՞ւմ եք եղբորս արբանյակներ անվանում այդ ընտիր ոճերով, որոնց ականջս սովոր չէ։

Սակայն միս Բեթսին դարձյալ խուլ մնալով դեպի այդ ձայնը, առաջվա պես շարունակեց.

– Ճանաչելով այն քնքուշ մանկան մի քանի տարի ձեզնից առաջ, ինչպես որ արդեն ասացի, պարզ տեսնում էի, որ նա վաղ թե ուշ երկրորդ անգամ մարդու կերթա (մարդկային խելքից վեր է իմանալ, թե ինչո՞ւ նախախնամությունը կամեցավ, որ դուք նրան հանդիպեք), այդ պարզ էր, սակայն բնավ չէի կարծում, թե նա ձեզ նման մի մարդ կընտրի։ Այս ես իմացա, մր. Մեորդստոն, երբ նա այս երեխային աշխարհ բերեց, այս խեղճ մանկանը, որին դուք սկսեցիք չարչարել՝ սրանով մորը տանջելու համար։ Այս հրեշտակները ձեզ համար դառն են և այս է ձեզ ատելի անում փոքրիկ Դավթի պատկերը։ Ա՛յ, ա՛յ։ Ինչո՞ւ եք ձեր հոնքերը պռստում։ Առանց այդ էլ գիտեմ, որ ասածս ճշմարիտ է։

Այս ամբողջ ընթացքում մր. Մեորդստոնը դառն մոտ էր կանգնած և տատիս էր նայում ժպտուն դեմքով, մինչ նրա սև հոնքերը երբեմն կիտվում էին։ Թեև ժպիտը դեռ խաղում էր շուրթերի վրա, բայց նկատեցի, որ երեսի գույնը հանկարծ թռավ, և նա սկսեց մի վազող մարդու նման շունչ քաշել։

– Ողջույն ձեզ, սըր, և բարով գնաք,– ասաց տատս։– Բարով գնաք և դուք տիկին,– հարեց տատս, հանկարծ նրա քրոջը դառնալով։

Հավաստի եղեք, որ եթե մի ուրիշ անգամ էլ համարձակվեք գետնիս վրայով իշով անցնել, ես ձեր գլխանոցը կթռցնեմ և գետնով կտամ, ոտքերիս տակ կտրորեմ։ Իմացեք, հա՛։

Միայն նկարիչը, այն էլ ոչ հասարակ նկարիչը, կարող էր տատիս դեմքը պատկերացնել, երբ նա այս անսպասելի վերջաբանն արտասանեց, և նկարել միս Մեորդստոնի կերպարանքը, երբ սա լսեց։ Այդ սաստի ուժն այնպես ազդու էր, որ միս Մեորդստոնը, առանց մի բառ ասելու, լուռ ու մունջ եղբոր թևն առավ և խրոխտաճեմ դուրս եկան տանից։ Տատս շարունակեց պատուհանի մոտ նստած մնալ, նրանց հեռանալը դիտելով և անշուշտ պատրաստ անմիջապես իր սպառնալիքը գործի դնելու, եթե էշը երևար։

Բայց տատիս հրամանին չլսող չկար։ Նրա երեսը հետզհետե զվարթացավ։ Այս տեսնելով՝ ես սիրտ առա նրան համբուրելու և վզին փարվելով, ամենաջերմ շնորհակալություն հայտնեցի։ Հետո մոտեցա մր. Դիկին և նրա աջը պինդ սեղմեցի. նա էլ իմը ամուր թոթվեց և մի քանի անգամ թունդ ծիծաղեց, գործիս հաջող ելքի համար, ինձ խնդակից լինելով։

– Մր. Դիկ,– ասաց տատս,– դուք և ես միասին այս տղայի խնամակալը կլինենք։

– Երջանկություն է ինձ համար Դավթի որդու խնամակալը լինել,– պատասխանեց մր. Դիկը։

– Շատ բարի,– ասաց տատս։– Ուրեմն բանը պրծած է։ Գիտե՞ք ինչ կա, մր. Դիկ։ Ես կցանկանայի սրան Տրոտուդ անվանել։

– Ինչո՞ւ չէ, շատ լավ կանեք,– ասաց մր. Դիկը։– Դավթի որդի Կոպպերֆիլդ։

– Այսինքն՝ Տրոտուդ Կոպպերֆիլդ,– նկատեց տատս։

– Անտարակույս։ Այո՛, հարկավ Տրոտուդ Կոպպերֆիլդ,– ասաց մր. Դիկը շփոթվելով։

Այս գաղափարն այնպես տատիս հափշտակեց, որ միևնույն օրն ինձ համար գնված շապիկների վրա իր ձեռքով հատուկ թանաքով «Տրոտուդ Կոպպերֆիլդ» գրեց և պատվիրեց, որ հենց այն օրը ապսպրած մյուս բոլոր շորերիս վրա էլ նույնը գրվի։

Այսպես սկսեցի մի նոր կյանք՝ նոր անունով և բոլորովին նոր շրջանում։ Տագնապալից օրերից հետո այս նոր վիճակը երազ էր թվում ինձ։ Մտքովս էլ չէր անցնում, թե ինչպե՞ս ընկա իմ տատի և մր. Դիկի տարօրինակ հովանու տակ։ Առհասարակ այդ առաջին օրերին չէի կարողանում իմ մասին մի որոշ բան մտածել։ Միայն երկու բան պարզ չէր ինձ համար. նախ՝ որ Բլենդրոտընում վարած կյանքս հեռացավ և կարծես թե մի անհուն ու միգապատ տարածության մեջ կորավ. երկրորդ՝ որ Մեորդստոնի ու Գրինբիի մառանում անցկացրած օրերիս վրա ընդմիշտ մի վարագույր քաշվեց։ Ես ակամա մի վայրկյան այս պատմության միջոցին նրան վերև քաշեցի և ուրախ սրտով ցած թողի։ Այնքան դառն է ինձ համար այն կյանքի հիշատակը, այնքան հարուստ բարոյական տանջանքներով ու տագնապիչ վշտերով, որ երբեք չեմ կամեցել հարցնել ինձ, թե գերությունս այն մառանում որքան տևեց։ Արդյոք մի տարի՞, թե՞ ավելի կամ պակաս – չգիտեմ։ Գիտեմ միայն, որ այն բոլորը կար և անցավ, ինչպես գրեցի այս էջերում. էլ ոչ մի խոսք այդ մասին։

ԺԵ. ԳԼՈՒԽ
Նորից եմ սկսում

Շատ չանցած մր. Դիկն ու ես այնքան մտերմացանք, որ օրվա աշխատանքը լրանալուն պես սկսում էինք միասին մեծ ֆռռանը բաց թողնել։ Դժվար էր մր. Դիկի աշխատանքը, անշարժ նստած, ամեն օր մշակում էր իր հիշատակարանը, որը, սակայն, չնայած նրա անդուլ ջանքերին, բնավ առաջ չէր գնում, որովհետև Կառլոս Առաջին թագավորն այսպես կամ այնպես միշտ սպրդում էր ձեռագրի մեջ, որից հետո պետք էր լինում ամբողջ թերթը դեն գցել և նորը սկսել։ Չէր կարելի չզարմանալ այդ հարատև ձախողանքների մեջ մր. Դիկի ցույց տված համբերության և տոկունության վրա, իրոք զարմանալի էր նրա զուր ճիգը՝ հեռու պահելու Կառլոս Առաջին թագավորին, և թագավորի համառությունը՝ անդադար ներս նետվելու հիշատակարանի մեջ և տակնուվրա անելու արդեն գրված թղթերը։ Արդյոք ի՞նչ էր հիշատակարանի նպատակը, ինչո՞ւ էր գրվում և կամ թե գրվելուց հետո ի՞նչ բանի պիտի ծառայեր,– այս մասին կարծեմ մր. Դիկն էլ ոչինչ չգիտեր, ինչպես և ոչ մի ուրիշ մահկանացու։ Սակայն պետք էլ չէր նրան այս հարցերի վրա չարչարվել, որովհետև եթե կար աշխարհիս երեսին մի հաստատ բան, այդ այն էր, որ հիշատակարանը երբեք չպիտի վերջանար։

Սրտաշարժ էր տեսնել մր. Դիկին, երբ ֆռռանը սավառնելով դեպի երկինք էր բարձրանում։ Երբեմն կարելի էր կարծել, թե այն բոլորը, ինչ որ իր սենյակում պատմել էր ինձ հիշատակարանի անպետք թերթերից շինված ֆռռանի միջոցով մտքեր, փաստեր ու թվեր տարածելու մասին, մի հիվանդ երևակայության արդյունք է, սակայն այսպես կարծել չէր կարելի, երբ նա ֆռռանը բաց թողնելով ակնապիշ մտիկ էր անում նրա երերուն թռիչքին և

լարի ձգվելն ու քաշվելը ձեռքի մեջ զգում: Այդ միջոցին նրա աչքերը քաջառողջ մտքի լույսով էին վառվում: Երբեմն-երբեմն, երբ ես երեկոյան դեմ բլրի վրա նրա հետ նստած նայում էի, թե ինչպես է դիտում օդապար-ֆոռանի վերասլացումը, ինձ թվում էր, թե ինքն էլ հոգով նրա հետ միասին դեպի երկինք է սլանում: Իսկ երբ սկսում էր լարը հավաքել, և ֆոռանը քիչ-քիչ ցած իջնելով լուսապայծառ երկնքից վերջապես դիակի նման տապալվում էր գետնի վրա,– այն ժամանակ մր. Դիկը հոգեզմայլ քնից հետզհետե սթափվում էր, ֆոռանը վշտահար դեմքով վերցնում և մտամոլոր չորս կողմը նայում, կարծես ինքն էլ նրա հետ միասին ընկած լիներ արփիափայլ բարձունքից: Այն ժամանակ ես սրտանց վշտակցում էի մր. Դիկին:

Որքան սերտանում էր մտերմությունս մր. Դիկի հետ, այնքան էլ շնորհ էի գտնում նրա սրտակից բարեկամի առջև, այսինքն՝ տատիկիս: Տատիս սիրտն այն աստիճան տաքացել էր իմ վրա, որ մի քանի շաբաթից հետո նա Տրոտուդ անունս, որ ինքն էր տվել, կրճատեց և սկսեց Տրոտ անվանել ինձ: Մինչև անգամ քաջալերեց ինձ հուսալու, որ եթե սկսածիս պես շարունակեմ, մի օր գուցե նույն տեղը բռնեմ իր սրտում, ինչ-որ բռնել էր Բեթսի Տրոտուդ քույրիկս:

– Տրոտ,– ասաց տատս մի երեկո, երբ նա և մր. Դիկը պատրաստվում էին ճատրակ խաղալ:– Արդեն ժամանակ է կրթությանդ մասին մտածելու:

Այդ իմ հոգսերի միակ առարկան էր, և ես անչափ ուրախացա տատիս խոսքերից:

– Կուզենայի՞ք Կենտրբերիի վարժարանը մտնել:

– Պատասխանեցի, թե շատ կցանկանայի, մանավանդ որ այդ վարժարանը հեռու չէր Դուվրից:

– Լավ,– ասաց տատս:– Կուզենայի՞ր հենց վաղը գնալ:

Արդեն վարժված լինելով տատիս որոշումների արագությանը, բնավ չզարմացա այս հանկարծական առաջարկին և ասացի.

– Այո՛:

– Շատ լավ,– կրկնեց տատս:– Ջենետ, կապսպրես որ վաղը, ժամը տասին, գորշ ձի լծած փոքրիկ կառքն այստեղ գա, և այս գիշերվանից մաստր Տրոտուդի իրեղենները կկապոտես:

Տատիս պատվերը սիրտս հրճվանքով լցրեց, բայց միևնույն րոպեին ես կշտամբեցի ինքս ինձ այս եսասիրական զգացումիս համար, երբ տեսա, թե պատվերն ինչ տպավորություն արեց մր. Դիկի վրա: Մեր մոտալուտ հրաժեշտը նրան այնպես վշտացրեց, և նա սկսեց ճատրակի խաղն այնպես վատ առաջ տանել, որ տատս մի քանի անգամ նրա մատներին ոսկորով զարնելուց հետո՝ տախտակը փակեց և ասաց, թե չի ուզում այլևս նրա հետ խաղալ: Սակայն մր. Դիկը, լսելով տատից, թե ես երբեմն-երբեմն շաբաթ օրերը տուն կգամ, ինքն էլ չորեքշաբթի օրերն ինձ կայցելի, նորից զվարթացավ և հանդիսավոր խոսք տվեց մի ուրիշ և ավելի մեծ ֆոռան շինել: Առավոտյան նա դարձյալ տրտում էր և պատրաստ էր, եթե տատս չարգելեր, իր գրպանի բոլոր փողերը, արծաթն ու ոսկին ինձ պարգևել իրեն սփոփելու համար: Տատս թույլ տվեց նրան միայն հինգ շիլինգ ընծայել ինձ,– մի գումար, որ ընծայողի ջերմ խնդրանքով վերջ ի վերջո տասի հասավ: Մենք իրարից շատ սրտաշարժ հրաժեշտ առանք պարտեզի դռնակի մոտ, և ծերունին տուն չմտավ, մինչև որ ես ու տատս չանհետացանք նրա աչքից:

Հասարակաց կարծիքին անտարբեր, տատս համարձակ քշեց գորշիկ ձին Դուվրի փողոցների միջով և իսկական կառապանի նման շիտակ նստած՝ քաջ գիտում էր աշխույժ կենդանու յուրաքանչյուր շարժումը, առանց թույլ տալու նրան, որ գեթ մազի չափ իր հաճույքին հետևի: Երբ քաղաքից դուրս եկանք, սանձը փոքր-ինչ թուլացրեց, և նայելով ինձ, որ բարձերի մեջ թաղված էի, հարցրեց՝ գո՞հ եմ, թե՞ ոչ:

– Շատ գոհ, տատի, շնորհակալ եմ,– ասացի ես:

Տատս գոհ մնաց և իր հաճությունը հայտնելու համար մտրակի կոթով գլուխս շոյեց, որովհետև ձեռքերը զբաղված էին։

– Մե՞ծ է, տատիկ, այդ վարժարանը,– հարցրի ես։

– Ինքս էլ չգիտեմ,– ասաց նա։– Կերթանք նախ մր. Ուիկֆիլդի մոտ։

– Նա վարժարանի տեսո՞ւչն է։

– Ո՛չ, Տրոտ, նա մի գործակալ է։

Այլևս բան չհարցրի մր. Ուիկֆիլդի մասին, տատս էլ ոչինչ չասաց, և մինչե մեր Կենտրբերի հասնելն ուրիշ նյութերի մասին խոսեցինք։ Բազարի օր էր, և պետք եղավ շուկայով անցնել։ Տատս մեծ հմտությամբ քշեց գորշ ձին անթիվ սայլերի, տակառների, բանջարեղենի դեզերի և մանրուքի վրանների միջով։ Այս պտույտների միջոցին մազ էր մնում, որ աջ ու ձախ շեղված ապրանքները կամ սեղանները շուռ տայինք, ուստի շրջակա մարդիկ չէին դիմավորում մեզ շատ հաճելի խոսքերով՝ սակայն տատս շարունակում էր անվրդով առաջ քշել, և ես հավաստի եմ, որ մինչև անգամ թշնամիների երկրի միջով միևնույն արիությամբ ու սառնությամբ կանցկենար։

Վերջապես կանգ առանք մի հինավուրց տան առջև, որ հարևան շենքերի շարքից մի քանի քայլ դուրս էր ընկնում դեպի փողոցը. նրա վանդակապատ պատուհաններն ու քանդակված մարդակները ավելի էին դուրս ցցվում, կարծես ձգտելով տեսնել, թե ի՞նչ է կատարվում փողոցի վրա։ Այս տան դրսի մաքրությունն անբիծ էր։ Կամարակապ մուտքի դռան վրա դրոշմված էին զանազան պտուղներ ու ծաղիկներ, և հնչակի պղնձե կոթը աստղի պես փայլում էր։ Դռան առջևի երկու քարե աստիճանները այնպես սպիտակ էին, որ ասես նուրբ կտավով ծածկված լինեին, և անկյուններն ու խորշերը, դրվագներն ու զարթերը, փոքրիկ պատուհաններն ու ապակիները, թեև բոլորն էլ հին էին, բայց սարերի վրա պսպղացող ձյունի նման ջինջ ու պայծառ։

Երբ մեր ձին դռան առջև կանգ առավ, և ես աչքերս այդ դռան վրա ուղղեցի, ստորին հարկի նեղ պատուհանից (տան մի մասը կազմող փոքրիկ ու կլոր աշտարակում) մի մեռելային դեմք երևաց և նույն րոպեին անհետացավ։ Այնուհետև կամարակապ դուռը բացեցին, և նույն դեմքը դուրս ելավ։ Այստեղ էլ նա մեռելագույն էր, թեև շեկ-շեկ բծերով, որոնք երբեմն նշմարվում են կարմրահեր մարդկանց երեսին։ Եվ իրոք դուրս եկողը կարմրահեր պատանի էր. ինչպես հետո իմացա՝ տասնհինգ տարեկան, թեպետ շատ ավելի հասակավոր էր երևում։ Նրա մազերը մինչև արմատը խուզված էին, ո՛չ հոնքեր ուներ, ո՛չ արտևանունք, և մթակարմիր աչքերն այնպես մերկ էին և անպատսպառ, որ չէի կարողանում հասկանալ, թե ինչպե՞ս էր քնում։ Նա թիկնեղ ու ոսկրոտ էր. հագին ուներ մի մաքուր և բոլորովին սև զգեստ, որ մինչև վիզը կոճկված էր, միայն փողպատի սպիտակ ծայրը դուրս թողնելով։ Հատկապես աչքիս ընկավ մանավանդ նրա երկար, վտիտ, իսկ և իսկ կմախքի ձեռքը, երբ նա մեր պոնիի առջև կանգնելով, սկսեց իր կզակը շփել և մեզ դիտել։

– Մր. Ուիկֆիլդը տա՞նն է, Ուրիաս Հիպ,– հարցրեց տատս։

– Մր. Ուիկֆիլդը տանն է, տիկին, հաճեցեք ներս հրամայել,– ասաց Ուրիաս Հիպը, երկար ձեռքը դեպի այն սենյակն ուղղելով, որ ուզում էր ցույց տալ մեզ։

Իջանք կառքից և խնդրելով ձին բռնել, մտանք մի ցած ու երկար և դեպի փողոցը նայող սենյակ։ Դրա պատուհանից դուրս նայելիս նկատեցի, որ Ուրիաս Հիպը պոնիի ռնգներին է փչում և իսկույն ծածկում, ասես մի տեսակ հմայություն անելով։ Հին ու մեծ վառարանի դեմուդեմ կախված էին երկու պատկեր. մեկը մի ալեխառն մազերով ու սև հոնքերով, սակայն ոչ ծեր պարոնի դեմք էր (նա նայում էր կարմիր թելով կապված թղթերի վրա), մյուսը մի գրավիչ ու հեզադեմ տիկին էր։

Կարծեմ Ուրիասի պատկերը որոնելու վրա էի, երբ սենյակի ծայրի դուռը բացվեց և մի ջենտլմեն ներս մտավ, որին տեսնելուս պես պատի պատկերին մտիկ արի ստուգելու՝ արդյոք դա շրջանակից դուրս չէ՞ր եկել։ Սակայն պատկերը իր տեղն էր, և երբ պարոնը լույսին մոտեցավ, նկատեցի, որ նա իր կենդանագրից ավելի ծեր է։

– Միս Բեթսի Տրոտուդ,– ասաց նա,– խնդրեմ ներս հրամայեցեք։ Զբաղված էի և սպասել տվի, ներեցեք։ Իմ կյանքը ձեզ հայտնի է և գիտեք, որ այս աշխարհի հետ մի բանով եմ միայն կապված։

Միս Բեթսին շնորհակալ եղավ, և մենք պարոնի սենյակը մտանք, որ մի պաշտոնական գրասենյակի պես լիքն էր մատյաններով, թղթերով, անագե տուփերով և այլն։ Սենյակի պատուհանները դեպի այգին էին նայում և որի մեջ ճիշտ վառարանի քիվի վրա, մի երկաթե պահարան էր ամրացված, որին նայելով զարմանում էի, թե ծխնելույզ մաքրողները ինչպե՞ս են կարողանում նրա հետևով անցկենալ՝ վառարանը մաքրելիս։

Ջենտլմենը ինչպես իսկույն իմացա, նույն ինքը մր. Ուիկֆիլդն էր։ Նա գործի մարդ էր, իրավաբան էր և մի հարուստ լորդի կալվածների կառավարիչ։

– Դե, միս Տրոտուդ,– ասաց նա,– ո՞ր քամին է ձեզ այստեղ բերել։ Հուսամ՝ բարի քամին։

– Այո,– պատասխանեց տատս։– Սակայն դատական գործով չեմ եկել։

– Եվ լավ եք արել, որ այդպիսի գործով չեք եկել։

Նրա մազերն այժմ բոլորովին սպիտակ էին, թեև հոնքերը դեռ սև։ Երեսը շատ դուրեկան էր, մինչև անգամ գեղեցիկ։ Այտերը փոքր-ինչ կարմիր էին, ինչ-որ ես սովոր էի, Պեգգոտիի բացատրությանը նայելով, պորտվեյնի գործածության հետևանք համարել, նույն գինու ազդեցությանը վերագրեցի նաև պարոնի ձայնի թավ հնչունությունն ու մարմնի գիրությունը։ Հագուստը շատ վայելուչ էր, զգեստը կապույտ, բաճկոնը շերտավոր, վարտիքը նանկինից, իսկ նուրբ ծայրերով շապկի լանջն ու բատիստի փողպատը կարապի վզի փետուրների նման ձյունափայլ ու քնքուշ էին։

– Սա իմ եղբորորդին է,– ասաց տատս։

– Չգիտեի, որ եղբորորդի ունեք, միս Տրոտուդ,– ասաց մր. Ուիկֆիլդը։

– Ճիշտն ասած՝ եղբորորդուս որդին է,– նկատեց տատս։

– Իրա՞վ։ Չգիտեի, որ եղբորորդու որդի ունեք,– ասաց մր. Ուիկֆիլդը։

– Ես որդեգրել եմ սրան,– ասաց տատս, ձեռքն այնպես շարժելով, որ կարելի էր կարծել, թե նրա համար բոլորը մեկ է՝ ինչ գիտեր կամ չգիտեր պարոնը։– Ես սրան բերել եմ՝ տալու մի այնպիսի վարժարան, որ սրան լավից լավ կրթեն և հետը լավ վարվեն։ Ասացեք, որտե՞ղ կա մի այդպիսի դպրոց, ո՞վ է պահում, և ամեն բան, ինչ որ պետք է գիտենալ։

– Պատասխանելուց առաջ,– ասաց մր. Ուիկֆիլդը,– կցանկանայի իմ սովորական հարցն ուղղել ձեզ։ Ձեր այդ քայլի շարժառիթն ի՞նչ է։

– Այդ ինչ մարդ եք, տեր ողորմյա՛,– գոչեց տատս։– Միշտ հազար ու մի բան եք մտածում, մինչ մտածելու բան էլ չկա։ Շարժառիթս շատ պարզ է. ես ուզում եմ, որ տղան մի օգտակար ու բախտավոր մարդ դառնա։

– Կարծում էի, թե մի խառն ու բարդ շարժառիթ է,– ասաց մր. Ուիկֆիլդը, գլուխը շարժելով և երկբայությամբ ժպտալով։

– Խառն ու բարդ զահրումար,– գոչեց տատս։– Կարծում եք, թե աշխարհումս միայն դո՞ւք եք պարզ ու հայտնի շարժառիթով գործ բանում։ Մի՞թե ձեզ նման ուղիղ գործող ուրիշ մարդ չկա։

– Ինչո՞ւ չէ, միս Տրոտուդ։ Սակայն ես մի շարժառիթ միայն ունեմ կյանքում։ Ուրիշ մարդիկ տասը, քսան, հարյուրավոր ունեն։ Իմս միայն մի հատ է։ Այս է ահա տարբերությունը։

Անցնենք սակայն ձեր խնդրին։ Ուզում եք իմանալ, թե ո՞րն է ամենալավ ուսումնարանը։ Ինչ էլ լիներ ձեր շարժառիթը, ուզում եք իմանալ, թե ո՞րն է ամենալավը։

– Այո՛,– ասաց տատս։

– Ամենալավում, որ ինձ հայտնի է,– ասաց մր. Ուիկֆիլդը մտածելով,– ձեր թոռը չի կարող այժմ ընդունվել։

– Եվ ինչո՞ւ։

– Որովհետև լիքն է և գիշերօթիկ աշակերտների համար տեղ չունի։

– Սակայն մի՞թե սրան չի կարելի մի ուրիշ տեղ բնակվել և երթևեկ լինել,– հարցրեց տատս։

Մր. Ուիկֆիլդը հնարավոր գտավ այդպես անել։ Կարճ խոսակցությունից հետո նա առաջարկեց տատիս իր հետ միասին այն դպրոցը գնալ, անձամբ տեսնել, թե ի՞նչ կարգեր կան այնտեղ, և ապա միասին աչքի անցնել մի քանի տուն, ուր կարելի լիներ ինձ տեղավորել։ Տատս ընդունեց այս առաջարկը, բայց երբ ուզում էինք դուրս գնալ, մր. Ուիկֆիլդը դռան մոտ կանգնեց և ասաց.

– Մեր փոքրիկ բարեկամը գուցե ունենա մի որևէ շարժառիթ չուղեկցելու մեզ։ Լավ չէ՞ր լինի, որ մնար և այստեղ սպասեր։

Տատս կարծեմ մտադիր էր հակառակել, բայց ես գործը դյուրացնելու համար ասացի, թե սիրով կմնամ, և մնալով մր. Ուիկֆիլդի գրասենյակում, նստեցի առաջվա աթոռիս վրա՝ սպասելու մինչև որ նրանք վերադառնան։

Այդ աթոռը դրված էր ճիշտ մի նեղ նրբանցքի դեմ, որ այն փոքրիկ կլոր սենյակով էր վերջանում, որի պատուհանի մեջ տեսել էի Ուրիաս Հիպի գունատ դեմքը։ Նա մերձակա ախոռն էր տարել մեր պոնին և այժմ նստած էր սեղանի առջև ու մի թուղթ էր արտագրում, որը դրված էր մի պղնձե շրջանակի մեջ։ Թեև նա նստած էր իմ հանդեպ, բայց իր դեմ դրված արտագրելի թղթի պատճառով կարծես թե չէր տեսնում ինձ. սակայն ավելի լավ դիտելուց հետո տհաճությամբ նշմարեցի, որ նրա բորբոքուն աչքերը երկու կարմիր աստղերի նման երբեմն-երբեմն թղթի տակից դուրս են նայում և անքթիթ վրաս պշնում առնվազն մի րոպեի չափ, մինչ նրա գրիչը շարունակում էր առաջվա պես արագ սահել։ Մի քանի անգամ փորձեցի, մերթ քարտեզը դիտելով, մերթ Կենտի լրագրի մեջ սուզվելով խույս տալ անհաճո հայացքից, բայց աչքերը շարունակ քաշում էին ինձ, և հենց որ ես այդ վառ աստղերի կողմն էի նայում, վստահ էի, որ կամ վրաս սևեռած և կամ թե նույն վայրկյանին մայր մտած կգտնեմ նրանց։

Մի ժամից հետո տատս ու մր. Ուիկֆիլդը վերջապես վերադարձան, և ես թեթևություն զգացի։ Նրանց հարցուփորձերը իմ փափագած հաջողությունը չէին գտել. թեև դպրոցը տատիս լիովին գոհացրել էր, բայց ինձ համար տեսնված բնակարաններից և ոչ մեկը նրան դուր չէր եկել։

– Այս ինչ անախորժ բան է, Տրոտ,– ասաց նա։– Չգիտեմ, ի՞նչ անեմ։

– Իրավ, որ անախորժ,– կրկնեց մր. Ուիկֆիլդը։– Սակայն գիտե՞ք ինչ կարելի է անել, միս Տրոտուդ։

– Ի՞նչ,– հարցրեց տատս։

– Առժամանակ ինձ մոտ թողեք ձեր թոռնիկին։ Հանդարտ տղա է երևում և հուսամ, որ ինձ չի խանգարի։ Այս տունը կարծես իրոք ուսման համար է շինված, մենաստանի պես հանգիստ է և բավական ընդարձակ։ Թողեք այստեղ։

Այս առաջարկն ակներև դուր եկավ տատիս, ինչպես և ինձ, բայց նա քաշվում էր ընդունել։

– Դե, ի՞նչ կասեք, միս Տրոտուդ,– շարունակեց մր. Ուիկֆիլդը։– Դժվարության առաջն առնելու ուրիշ հնար չկա։ Հասկանալի է, որ այս կարգադրությունը մի ժամանակավոր բան կլինի։ Եթե տեսնենք, որ լավ չենք արել և կամ ստուգենք, որ մեր արածը բոլորիս հանգստությանը ձեռնտու չէ, ձեր տղայի համար մի ուրիշ տեղ կճարենք և ժամանակ կունենանք ավելի լավ տեղ ճարելու։ Իսկ առայժմ լավ կլինի, որ այստեղ մնա։ Վճռեցինք։

– Շատ շնորհակալ եմ,– ասաց տատս։– Թոռս էլ, ինչպես տեսնում եք, շնորհակալ է, բայց. . .

– Էհ, հասկանում եմ ձեր միտքը,– գոչեց մր. Ուիկֆիլդը։– Միամիտ եղեք, միս Տրոտուդ, և մի՛ քաշվեք, իբր թե մի շնորհ ընդունելով ինձնից։ Եթե կամենաք, կարող եք վճարել տղայի համար։ Պայմանների մասին անտարակույս չենք վիճի. վճարեցեք, եթե կամենաք։

– Ա՛յդ պայմանով, որ սակայն ձեր երախտյաց արժեքը ամենևին չի նվազեցնում իմ աչքում,– ասաց տատս,– շատ ուրախ եմ թողնել Տրոտին։

– Ուրեմն այժմ գնանք իմ փոքրիկ տնտեսուհուն տեսնելու,– ասաց մր. Ուիկֆիլդը։

Բարձրացանք մի հին սանդուխքով, որի բազիրքն այնքան լայն էր, որ կարելի էր նրա վրայով էլ հանգիստ քայլել, և մտանք մի հինավուրց դահլիճ։ Դա լուսավորված էր երեք-չորս զարդարուն պատուհաններով, որոնք դեռ փողոցից ուշադրությունս գրավել էին. նրանց խորշերում կանգնած էին հին աթոռներ, որոնք կարծես միևնույն կաղնուց շինված լինեին, ինչպես պսպղուն հատակն ու առաստաղը։ Դահլիճը վայելչապես զարդարված էր մի դաշնամուրով, մի քանի զվարթ կարմիր ու կանաչ կարասիներով, մի քանի թարմ ծաղիկներով։ Ամենուրեք երևում էին անկյուններ ու խորշիկներ և յուրաքանչյուրի մեջ մի սիրուն սեղան, մի դարակ, մի գրադարան, մի բազմոց և կամ մի ուրիշ այդպիսի բան։ Ո՛ր խորշիկը կամ անկյունն էլ զննեի, ասում էր, թե դա է ամենից գեղեցիկը, այնինչ հետո մեկ ուրիշն էր հանդիպում, որ նույնչափ սիրուն էր, եթե ոչ ավելի գրավիչ։ Ամեն մի առարկայի վրա անդորրության և մաքրության կնիք կար, որ շենքի ամբողջ երևույթին հատուկ էր։

Մր. Ուիկֆիլդը մի դրվագավոր դռնակ բախեց և նույն րոպեին համարյա իմ հասակի մի աղջիկ դուրս վազեց ու նրան համբուրեց։ Ես իսկույն նկատեցի նրա երեսի վրա միևնույն քաղցր ու զվարթ արտահայտությունը, որով ինձ գրավել էր ներքևի սենյակի տիկնոջ պատկերը, կարծես այն պատկերը մեծանալով կին էր դարձել, իսկ նախատիպը մանուկ մնացել։ Աղջկա դեմքը երջանիկ ու զվարթ էր, թեև ամբողջ տեսքը մի բարեհամբյուր հեզություն, անվրդով հանգստություն և սրտի ազնվություն էր ցույց տալիս, որ ես երբեք չեմ մոռացել, հավիտյան էլ չպիտի մոռանամ։

– Ահա փոքրիկ տնտեսուհիս, իմ դստրիկ Ագնեսը,– ասաց մր. Ուիկֆիլդը։

Հենց որ լսեցի, թե նա այդ խոսքերն ինչպես ասաց և տեսա, թե աղջկա ձեռքից ինչպես բռնեց, հասկացա, թե կյանքի միակ շարժառիթը և հոգսերի առարկան ով է։

Աղջկա գոտուց մի փոքրիկ հյուսկեն տոպրակ էր կախված՝ լի զանազան բանալիներով, և ինքը նման էր մի ուշիմ ու զգաստ տանտիկնոջ, որ լիովին պատշաճում էր այդ հին տանը։ Նա ժպտուն դեմքով ականջ դրեց, թե հայրն իմ մասին ինչ ասած, և հետո իմ տատից թույլտվություն խնդրեց, որ ինքն ու ես վերև գնանք իմ սենյակը տեսնելու։ Բոլորս միասին նրա հետևից գնացինք։ Նա ցույց տվեց մեզ մի հին սենյակ, որ մյուսների նման հոյակապ էր։

Չեմ հիշում, թե ո՞ր եկեղեցում և հատկապես ե՞րբ էի տեսել մի նկարեն պատուհան. չեմ էլ հիշում, թե ի՞նչ էր պատկերում պատուհանի նկարը։ Բայց երբ փոքրիկ տնտեսուհին սանդուղքով բարձրացավ և դրա լույսի մեջ շուռ եկավ, որ մեզ սպասի, ես ակամա այն նկարեն պատուհանը հիշեցի, որի մեղմիկ ու ջինջ փայլն այնուհետև Ագնես Ուիկֆիլդի հետ միացած մնաց մտքիս մեջ։

Տատս և ես շատ գոհ մնացինք իմ մասին եղած որոշումով, և բոլորս միասին ուրախ սրտով դահլիճն իջանք։ Տատս ամենևին չուզեց ճաշին մնալ, ասելով թե շտապում է մինչև երեկո

տուն հասնել, մր. Ուիկֆիլդն էլ, որ նրա համառ բնավորությունը լավ էր ճանաչում, ավելորդ համարեց թախանձել նրան: Ուստի տատիս համար մի թեթև նախաճաշիկ պատրաստեցին: Ագնեսը իր վարժուհու մոտ գնաց, իսկ մր. Ուիկֆիլդը՝ իր սենյակը: Մեզ մենակ թողին, որ ազատ հրաժեշտ առնենք միմյանցից:

Տատս ասաց, թե մր. Ուիկֆիլդն ամեն բան կհոգա ինձ համար, և ես ոչ մի բանի կարոտություն չեմ զգա: Այնուհետև գորովալիր խոսքեր ասաց և պատվական խրատներ տվեց:

– Տրոտ,– ասաց ի վերջո,– պատիվ բեր քեզ, ինձ, մր. Դիկին, և թող աստծու աչքը քաղցր լինի քեզ վրա:

Ես հոգով սրտով հուզվեցի և ջերմ շնորհակալությունից և մր. Դիկին իմ ողջույնը հայտնելու խնդրից զատ՝ ուրիշ ոչինչ չկարողացա արտասանել:

– Երբեք և ոչ մի բանում չստորանաս, չկեղծես, անսիրտ չլինես,– ասաց տատս:– Զգուշացիր, Տրո՛տ, այս երեք ախտից, և ես միշտ լավ հույսեր կունենամ քո վերաբերմամբ:

Ինչքան որ լեզուս ներեց խոստացա ոչ մի ժամանակ նրա հավատը ի դերև չհանել և խրատները չմոռանալ:

– Պոնին արդեն դռան առջև է,– ասաց տատս:– Ես գնում եմ: Դու կմնաս:

Այս ասելիս նա ինձ շտապ-շտապ համբուրեց և դուրս գնալով դուռը ծածկեց:

Սկզբում նրա հապճեպ մնաս բարովը շփոթեցրեց ինձ, և սիրտս կասկած ընկավ, թե արդյոք որևէ բանով չե՞մ վշտացրել նրան, սակայն երբ պատուհանից դուրս նայելիս նշմարեցի, թե որքան տխուր է կառք նստում, տատիս սիրտը լավ հասկացա և զգացի, որ երկյուղս անհիմն է:

Ժամը հինգին, որ մր. Ուիկֆիլդի ճաշելու ժամն էր, արդեն ուշքս-միտս հավաքել էի և ներքև իջել ամենալավ ախորժակով: Սեղանի վրա միայն երկու հոգու սպասք կար – մր. Ուիկֆիլդի և ինձ համար, սակայն Ագնեսը, որ դահլիճում սպասում էր հորը, նրա հետ միասին ճաշարան մտավ և նրա հանդեպ սեղան նստեց: Ես իմացա, որ հայրը չէր կարող առանց աղջկա ներկայության ճաշել:

Ճաշից հետո նորից վերևի զարդարուն դահլիճը գնացինք: Դրա հանգիստ անկյուններից մեկում, մի կլոր սեղանի վրա Ագնեսը մի բաժակ և մի շիշ պորտվեյն դրեց հոր համար: Ես հասկացա, որ գինին համ չէր տա հոր քիմքին, եթե մեկ ուրիշի ձեռքով նրա առջև դրված լիներ:

Եվ հայրը նստեց և սկսեց գինին անուշ անել. այս տևեց մոտ երկու ժամ, մինչ դաշնամուրի առջև նստած Ագնեսը մեկ նվագում էր, մեկ գործում, մեկ հոր հետ և մեկ ինձ հետ խոսում: Մր. Ուիկֆիլդը մեզ հետ առհասարակ ուրախ ու զվարթ էր, սակայն երբեմն ակնապիշ մտիկ էր անում աղջկան և լուռ մնում, մտքերի մեջ խորասուզված: Աղջիկն իսկույն նկատում էր այդ և շտապում որևէ բառով կամ զգվանքով նրա թախիծը փարատել: Այն ժամանակ հայրը սթափվում էր և նորից բաժակը լցնում:

Ագնեսը թեյ պատրաստեց. թեյից հետո էլ փոքր-ինչ նստեցինք, և վերջապես նա վերկացավ իր ննջարանը գնալու: Հայրը համբուրեց նրան և երբ աղջիկը հեռացավ, հրամայեց մոմեր վառել իր գրասենյակում: Այնուհետև ե՛ս էլ գնացի պառկելու:

Սակայն դեռ անկողին չմտած փողոց ելա. ուզում էի զբոսնել տան առջև, Կենտրբերիի հին տաճարին ու շենքերին նայել և հարցնել ինձ, թե փախուստիս ժամանակ ինչպե՞ս էի անցել այն տան մոտով, որի մեջ այժմ պիտի ապրեի: Ետ գալիս տեսա, Ուրիաս Հիպը գրասենյակի դուռը փակում է: Կամենալով ամեն մարդու հետ հաշտ լինել, մոտեցա նրան, մի քանի խոսք ասացի և բաժանվելիս աջս տվի: Բայց ինչպես սառն, ինչպես խոնավ ու գարշելի էր նրա

ձեռքը: Հետո ես երկար ժամանակ իմ աջը տրորում էի, որ տաքացնեմ և նրա ձեռքի շփման հետքերից մաքրեմ:

Այդ ձեռքն այն աստիճան խժգալի էր, որ նրա պաղությունն ու գիջությունը դեռ սենյակումս էլ զգում էի: Եվ մինչ պատուհանին հենվելով դուրս էի նայում, կարծես թե առաստաղի գերանների ծայրին քանդակված գլուխներից մեկը շիլ-շիլ ինձ մտիկ տվեց: Ասես թե Ուրիահաս Հիպն էր գլուխը դուրս տնկել. ես սոսկացի և նույն րոպեին պատուհանը փակեցի:

ԺԶ. ԳԼՈՒԽ
Շատ կողմերով նոր տղա եմ

Հետևյալ օրը ես դպրոցական կյանք սկսեցի: Մր. Ուիկֆիլդը ապագա ուսմանս ասպարեզը տարավ ինձ – դա մի ծանր շինություն էր ընդարձակ բակով և գիտական տեսքով, որից դիմացի գետնի վրա լուրջ զբոսնող ագռավներն ու որորներն անգամ կարծես թե պատկառում էին: Առաջնորդս ինձ իմ նոր տեսչին՝ դոկտոր Ստրոնգին ներկայացրեց:

Դոկտոր Ստրոնգն ինձ նույնքան ժանգոտ երևաց, որքան և բակի երկաթապատ ցանկապատն ու դուռը, և նույնպես ծանր ու հաստաբեստ, ինչպես շրջապատի սյուների գլխին հավասար շարքով հաստատված ահագին քարե սափորները, որոնք ժամանակի հարվածներից արդեն գլորվելու մոտ էին: Նա նստած էր իր գրադարանում: Ո՛չ նրա շորերն էին մաքուր սրբված, ո՛չ մազերն էին կարգին սանրված, ոչ ծնկների կապն էր պինդ քաշված, ո՛չ էլ սև զանգապանները լավ կոճկված. իսկ մուճակները բերանբաց հորանջելով՝ գորգի վրա էին գլորվել: Նրա անփայլ աչքերը ինձ այն պառավ ու կույր ձին հիշեցրին, որ մի ժամանակ Բլենդրոտընի գերեզմանատան քարերի շուրջն էր ման գալիս: Դոկտոր Ստրոնգը վրաս նայեց և ասաց, թե ուրախ է տեսնել ինձ և հետո աջը մեկնեց, որի հետ չգիտեի ի՞նչ անեմ, որովհետև անշարժ էր:

Սակայն դոկտորի մոտ, սեղանի առջև գործելով նստած էր մի շատ գեղեցիկ նորատի կին, որին նա մի քանի անգամ Աննի անվանեց և որին ես նրա աղջկա տեղ դրի: Այդ տիկինը նեղ դրությունից ազատեց ինձ. նա վեր կացավ և դոկտորի դիմացը չոքելով, ժիր-ժիր հագցրեց նրա մուճակները և զանգապանները կոճկեց: Այս գործը վերջացնելուն պես նա հեռացավ, իսկ մենք դեպի դասարանը գնացինք: Ես շատ զարմացա, երբ մր. Ուիկֆիլդը հեռացող տիկնոջը մնաս բարով ասելիս նրան «միստրիս Ստրոնգ» անվանեց, և վարանած մնացի, չիմանալով, թե լեդին դոկտոր Ստրոնգի որդո՞ւ կինն է, թե՞ նույն ինքը դոկտոր Ստրոնգի ամուսինը: Դոկտոր Ստրոնգը անգիտակցաբար տարակույս փարատեց:

– Ի դեպ, Ուիկֆիլդ,– ասաց նա, ձեռքն ուսիս դրած, կանգ առնելով նրբանցքում,– մի հարմար պաշտոն դեռ չե՞ք գտել իմ կնոջ քեռորդու համար:

– Ո՛չ,– ասաց մր. Ուիկֆիլդը:– Ո՛չ, դեռ չեմ գտել:

– Ափսոս, Ուիկֆիլդ,– նկատեց դոկտոր Ստրոնգը:– Ես կցանկանայի, որ այդ գործը շուտ վերջանար, որովհետև Ջոն Մելդրընը չքավոր և անգործ է. և դուք գիտեք, որ այս երկու վատ բաներից շատ անգամ շատ ավելի վատ բաներ են առաջ գալիս: Դոկտոր Ուատսը զուր չի ասել,– հարեց նա, վրաս նայելով ու գլուխը շարժելով,– թե «Պարապ ձեռքերի համար սատանան միշտ մի անելիք կգտնի»:

– Էհ, դոկտոր,– պատասխանեց մր. Ուիկֆիլդը,– եթե դոկտոր Ուաթսն ավելի մոտիկ ճանաչեր մարդկանց, նույն իրավմամբ կասեր, թե «Աշխատող ձեռքերի համար սատանան միշտ մի անելիք կգտնի»: Հավաստի եղեք, որ աշխարհումս կատարվող չարիքների մեջ աշխատող մարդիկ էլ մեծ մաս ունեն: Ի՞նչ արին այս վերջին երկու տարում իշխանության ու փողի հետամուտ ճարպիկ ու աշխատող մարդիկ: Մի՞թե մեզ սակավ չարիք հասցրին:

– Չեմ կարծում, որ Ջոն Մելդրընը շատ հետամուտ լինի իշխանության կամ փողի,– ասաց դոկտոր Ստրոնգը, կզակը շփելով։

– Գուցե,– ասաց մր. Ուիկֆիլդը։– Սակայն վերադառնանք մեր հարցին, որից շեղվելու համար հուսամ, թե ինձ կներեք։ Ո՛չ դոկտոր, Ջոն Մելդրընի համար ես դեռ ոչինչ չեմ արել։ Կարծում եմ... – ավելացրեց նա փոքր-ինչ վարանելով,– թե ձեր շարժառիթը հասկացել եմ, և հատկապես այս է իմ գործը դժվարացնում։

– Շարժառիթս է,– պատասխանեց դոկտորը,– մի վայելուչ պաշտոն գտնել իմ կնոջ քեռորդու և մանկության ընկերոջ համար։

– Գիտեմ, գիտեմ, պաշտոն գտնել Անգլիայում և կամ թե սահմանից դուրս,– ասաց մր. Ուիկֆիլդը, վերջին խոսքերն առանձնապես շեշտելով։

– Այո,– պատասխանեց դոկտորը, ակներև զարմանալով այդ շեշտից։– Անգլիայում և կամ թե սահմաններից դուրս։

– Այդ ձեր հատուկ խոսքերն են,– ասաց մր. Ուիկֆիլդը։– Դուք ինքներդ ասել էիք՝ «և կամ թե սահմաններից դուրս»։

– Անտարակույս,– հաստատեց դոկտորը։– Անտարակույս։ Այստեղ կամ դուրսը։

– Ձեզ համար միևնո՞ւյն է, թե որտեղ,– հարցրեց մր. Ուիկֆիլդը։

– Միևնույն։

– Միևնո՞ւյն։

– Անշուշտ։

– Եվ դուք ամենևին առիթ չունե՞ք կամենալու,– ասաց մր. Ուիկֆիլդը,– որ նա արտասահմանում պաշտոն գտնի, այլ ոչ թե այստեղ։

– Ամենևին,– պատասխանեց դոկտորը։

– Ուրեմն պատրաստ եմ հավատալ ձեզ և հավատում եմ,– ասաց մր. Ուիկֆիլդը։– Եթե ես այդ ավելի առաջ գիտենայի, անելիքս շատ կհեշտանար։ Սակայն ուղիղն ասած, ես ուրիշ կարծիք ունեի։

Դոկտոր Ստրոնգը շփոթություն և կասկած արտահայտող աչքով նայեց նրա վրա, բայց և իսկույն սկսեց ժպտալ, և այս ժպիտը մեծապես ինձ քաջալերեց, դրա մեջ այնքան հեզություն կար և նրա միտքը գիտնականի սառը կեղևը դեն նետելուց հետո այնպես բարի թվաց ինձ, որ չէր կարող քաջալերիչ հույսեր չներշնչել ինձ նման փոքրիկ աշակերտին։ «Միևնույն, անշուշտ, ամենևին» կրկնելով, դոկտոր Ստրոնգը երերաքայլ առաջ գնաց, մենք էլ նրան հետևեցինք։ Մր. Ուիկֆիլդը շատ մտահույզ էր. մի քանի անգամ գլուխը թոթվեց առանց իմանալու, որ ես նրան տեսնում եմ։

Դասարանը տան հետևի մասում գտնվող մի ընդարձակ դահլիճ էր. պատուհաններից երևում էին վեց-յոթ հատ մեծ-մեծ քարե սափորներ և դոկտոր Ստրոնգի հին պարտեզի մի մասը, որի արևադեմ պատի տակ դեղձենիներ էին կանգնած՝ հասուն պտուղներով, իսկ մեջտեղը՝ կանաչապատ տակառներում՝ երկու փշոտ ու լայնատերև հալվեներ, որոնք այն օրից ի վեր ինձ համար, մտքերի բնական զուգորդությամբ, լռիկ անդորրության և մենության նշանակ դարձան։ Երբ ներս մտանք, մոտ քսանհինգ աշակերտ նստած կարդում էին. նրանք իսկույն վերկացան դոկտորին ողջունելու և տեսնելով մր. Ուիկֆիլդին ու ինձ, կանգնած մնացին։

– Ահա ձեզ մի նոր ընկեր, մանուկ ջենտլմեններ,– ասաց դոկտորը,– Տրոտուդ Կոպպերֆիլդ։

Նույն րոպեին Էդեմս ավագ աշակերտը տեղից դուրս ելավ և բարի գալուստ մաղթեց ինձ։ Սպիտակ փողպատին նայելով՝ նա անգլիական պաստորի էր նման, թեև մի կայտառ և սիրելի

տղա էր։ Նա ինձ իմ նստելու տեղը ցույց տվեց և ուսուցիչներին ներկայացրեց մի այնպիսի վայելուչ եղանակով, որ անշուշտ վստահություն կներշնչեր ինձ, եթե միայն կարելի լիներ։

Սակայն ես այնքան ժամանակ այդպիսի տղաների շրջանից զուրկ էի մնացել, և բացի Միկ Ուոկրից և Ալյուրոտ փաթաթեսից, ուրիշ ընկերներ չէի ունեցել, որ այժմ սաստիկ քաշվում էի։ Պարզ զգում էի, որ ես այն տեսակ բաներ եմ տեսել կյանքիս մեջ, և չնայած հասակիս, դեմքիս և վիճակիս, այնպիսի փորձառություն ձեռք բերել, որի մասին նոր ընկերներս գաղափար անգամ չունեին. ինձ թվում էր, թե ես գրեթե խաբեություն եմ անում, իբրև մի սովորական նորեկ մանուկ նրանց շարքը մտնելով։ Մեռրդստոնի ու Գրինբիի մառանում այնքան էի մոռացել մանկական խաղերն ու զբոսանքները, որ զգում էի, թե բոլորովին անշնորհք կերևամ այդ բաներում։ Այն ուսման փոքրիկ պաշարն էլ, որ ստացել էի մի ժամանակ, այնպես էր ջնջվել իմ մտքից՝ մի կտոր հաց ճարելու համար օր ու գիշեր գծուծ հոգսեր քաշելուցս, որ այժմ, երբ սկսեցին ինձ քննել, պարզվեց, որ ոչինչ չգիտեմ, և ամենացածր բաժանմունքը նստեցրին ինձ։ Սակայն խաղերին անվարժ և նոր ընկերներիս մեջ ուսումով հետինը լինելս ինձ համար այնքան դառը չէր, որքան դառն էր այն հանգամանքը, որ ես ոչ թե իմ չգիտեցած, այլ գիտեցած բաներով եմ զանազանվում նրանցից։ Մտածում էի. նրանք ի՞նչ կասեն, եթե իմանան, որ ես արդեն քաջ ծանոթ եմ պարտապանների բանտի հետ։ Արդյոք վրաս որևէ հետք չի՞ մնացել, որ կամքիս հակառակ մատներ իմ ծանոթությունը Միկաբրի ընտանիքի հետ. իրեր գրավ դնելս, վաճառելս, ընթրիքներ վայելելս։ Հապա եթե աշակերտներից մեկը տեսած լինի պատառոտված շորերով ու ջարդված անցնելս Կենտրբերիի փողոցներով և այժմ ճանաչի՛։ Ի՞նչ կասեն այս մանուկները, որոնք դեռ փողի արժեքը չգիտեն, երբ լսեն, թե ինչպես եմ պենսերով հաշվել իմ գումարը՝ օրական սնունդս հոգալիս, փոքր-ինչ պուդինգ ու գարեջուր և կամ հաց ու երշիկ գնելիս։ Որքա՛ն կզարմանան Լոնդոնի կյանքին ու Լոնդոնի փողոցներին բնավ անտեղյակ այս համբակները, երբ իմանան, որ արդեն մեր ոստանի ամենավատթար կողմերի հետ ծանոթ եմ, թեև ամաչում եմ, որ ծանոթ եմ։ Այս մտքերն այնպես էին պաշարել ինձ դոկտոր Ստրոնգի վարժարանը մտնելուս օրը, որ չէի համարձակվում աչք բարձրացնել կամ թե շարժվել և նոր ընկերներիցս մեկի կամ մյուսի մոտենալուց սոսկում էի։ Հենց որ դասերը վերջացան, շտապով տուն փախա, որպեսզի նրանց միամիտ հարցումներին պատասխանելիս որևէ կերպ չխայտառակեմ ինքս ինձ։

Սակայն մր. Ուիկֆիլդի հին տունն այնպես ամոքիչ էր, որ դասագրքերը թևիս տակ բռնած նրա դուռը բախելուս պես սրտիս աղմուկն սկսեց քիչ-քիչ հանդարտվել։ Եվ երբ սենյակս բարձրացա, սանդուղքի բազիրքի ստվերը կարծես թե իմ կասկածներն ու երկյուղը փարատեց և ամբողջ անցյալս մի անթափանց մշուշով ծածկեց։ Ես մինչև ժամը հինգը նստեցի, եռանդով սկսեցի դասերս սովորել (դպրոցից տուն էինք գալիս երեքին), հետո ներքև իջա լի հույսով, թե մի օր գոնե միջակ աշակերտ կդառնամ։

Ագնեսը դահլիճում նստած սպասում էր հորը, որ դեռ գրասենյակից դուրս չէր եկել։ Նա սիրալիր ժպիտով ողջունեց ինձ և հարցրեց, թե պանսիոնն ինչպե՞ս դուր եկավ ինձ։ Պատասխանեցի, թե շուտով անշուշտ դուր կգա, միայն թե սկզբում փոքր-ինչ օտար է երևում ինձ։

– Իսկ դուք երբեք պանսիոնում չե՞ք սովորել,– հարցրի ես։

– Ինչպես չէ։ Ամեն օր էլ սովորում եմ։

– Գիտեմ, որ սովորում եք, բայց տանը, և ոչ թե պանսիոնում։

– Այո՛, տանը։ Հայրիկս չի կարող բաժանվել ինձնից,– ավելացրեց նա ժպտալով։– Գիտե՞ք, նրա տնարարը միշտ պարտավոր է տանը լինել։

– Հավատացած եմ, որ նա ձեզ շատ է սիրում,– ասացի ես։

Ագնեսը «այո» ասաց և դռանը մոտեցավ՝ ականջ դնելու՝ հայրը գալի՞ս է, թե ոչ, որովհետև միշտ սովոր էր բարևել նրան սանդուղքի վրա։ Սակայն տեսնելով, որ չի գալիս, վերադարձավ դեպի ինձ։

– Մայրիկս վախճանվել է իմ աշխարհ գալու րոպեին,– ասաց նա մեղմ ձայնով։– Ես միայն այն պատճառով եմ ճանաչում նրան, որ կախված է ներքևի սրահում։ Նկատեցի, որ դուք երեկ դիտում էիք նրան։ Արդյոք գուշակեցի՞ք, թե ո՞ւմ պատկերն է։

Պատասխանեցի, թե այո, որովհետև պատկերը իրեն շատ էր նման։

– Հայրիկս էլ այդպես է ասում,– ասաց Ագնեսը գոհ ժպիտով։– Սուս։ Ահա գալիս է։

Աղջկա պարկեշտ դեմքը զվարթացավ, երբ նա հորը դիմավորելու վազեց, և նրանք ձեռք-ձեռքի տված ներս մտան։ Հայրը սիրով ողջունեց ինձ և ասաց, թե ես անշուշտ բախտավոր կլինեմ դոկտոր Ստրոնգի խնամքի տակ, որովհետև նա վերին աստիճանի ազնիվ մարդ է։

– Չգիտեմ, գուցե ոմանք նրա բարությունը դեպի չարը գործ դնեն,– ասաց մր. Ուիկֆիլդը։– Բայց դուք, Տրոտուդ, այդպիսիների օրինակին մի՛ հետևեք, նրանց նման մի՛ վարվեք։ Դոկտոր Ստրոնգի պես դյուրահավատ մարդ սակավ գտնվի աշխարհում։ Չեմ ասում, թե այս հատկությունը արժանիք է կամ թուլություն, բայց համենայն դեպս դոկտոր Ստրոնգի հետ գործ ունենալիս, անհրաժեշտ է, այս հանգամանքն ի նկատի առնել։

Մր. Ուիկֆիլդը կարծես մի տեսակ դժգոհության կամ ձանձրույթի եղանակով արտասանեց իր խոսքերը, բայց ես այդ մասին մտածելու ժամանակ չունեցա. ճաշն արդեն պատրաստ էր. մենք ներքև իջանք և առաջվա տեղերս բռնեցինք։

Հենց որ նստեցինք, Ուրիաս Հիպի շեկ գլուխն ու վտիտ ձեռքերը երևացին դռան մեջ և նա ասաց.

– Մր. Մելդրնը կամենում է մի երկու խոսք ասել ձեզ, սըր։

– Չէ՞ որ այս րոպեիս ազատվեցի մր. Մելդրնից,– ասաց մր. Ուիկֆիլդը։

– Այո՛, սըր,– պատասխանեց Ուրիասը,– բայց մր. Մելդրնը ետ է եկել և ուզում է դարձյալ մի երկու խոսք ասել ձեզ։

Դուռը կիսաբաց բռնելիս Ուրիասը նայում էր ինձ, նայում էր Ագնեսին, նայում էր կերակուրներին, նայում էր պնակներին, նայում էր ամեն բանի, ինչ որ կար սենյակում, բայց այնպես, որ կարծես ոչ մի բանի չէր նայում, այլ միայն պատկառանքով տիրոջն է դիտում իր կարմիր աչքերով։

– Խնդրեմ, ներեցեք,– ասաց մեկը, Ուրիասի գլուխը մի կողմ հրելով և նրա տեղը իրենն առաջ տնկելով։– Խնդրեմ ներեցեք, որ նեղություն եմ տալիս... Բայց որովհետև ոչ մի ուրիշ ելք չկա, ուրեմն քանի վաղ գնամ արտասահման, այնքան լավ։ Սակայն այս մասին խոսելիս Աննին հայտնեց, թե ավելի կուզենար հայրենիքում մնացած տեսնել իր մտերիմներին, քան աքսորված, և ծեր դոկտորը...

– Դոկտոր Ստրոնգը, ուզում եք ասել,– ընդհատեց նրան մր. Ուիկֆիլդը ծանրությամբ։

– Թող այդպես լինի,– ասաց մյուսը։– Ես նրան սովորաբար ծեր դոկտոր եմ անվանում, և դուք գիտեք, որ այս միևնույն է։

– Ես այդ չգիտեմ,– պատասխանեց մր. Ուիկֆիլդը։

– Դե լավ, դոկտոր Ստրոնգն էլ բոլորովին համամիտ է Աննիին։ Սակայն իմացա, որ ձեր շնորհիվ միտքը փոխել է։ Եթե այդպես է, էլ ասելու բան չունեմ. ինձ պետք է հեռանալ, և որքան շուտ, այնքան լավ։ Այդ պատճառով եկել եմ հայտնելու, թե քանի վաղ գնամ, այնքան լավ։ Եթե անհրաժեշտ է ջուրն ընկնել, էլ ավելորդ է կամրջի վրա մտմտալով սպասել։

– Իրավ, որ մտմտալու կարիք չկա, մր. Մելդրըն,– ասաց մր. Ուիկֆիլդը։– Որքան շուտ, այնքան լավ։

– Շնորհակալ եմ,– ասաց մյուսը։– Մեծ շնորհ եք անում ինձ։ Ընծայված ձիու ատամներին չեն նայում, անվայել է. եթե ոչ՝ ես կասեի, թե Աննին կարող էր մի ուրիշ ընթացք տալ գործին։ Ըստ իս բավական է, որ Աննին մի խոսք ասի ձեր դոկտորին, որպեսզի...

– Ուզում եք ասել՝ բավական է, որ մրս. Ստրոնգը մի խոսք ասի իր ամուսնուն... չէ՞,– նկատեց մր. Ուիկֆիլդը։

– Իսկ և իսկ,– պատասխանեց մր. Մելդրընը։– Բավական է, որ Աննին իր մարդուն ասի, թե կամենում եմ, որ այսինչ բանն այսպես լինի, և հավատացած եղեք, որ միշտ այնպես էլ կլինի։

– Եվ ինչո՞ւ եք կարծում, թե ճիշտ այնպես կլինի, մր. Մելդոն,– հարցրեց մր. Ուիկֆիլդը, ճաշը հանգիստ շարունակելով։

– Է՛հ, որովհետև Աննին սիրուն ջահել կին է, իսկ ծեր դոկտորը... այսինքն՝ դոկտոր Ստրոնգը, այլևս սիրուն երիտասարդ չէ,– ասաց մր. Մելդրընը ծիծաղելով։– Չեմ ուզում ոչ ոքի վիրավորել, մր. Ուիկֆիլդ, այլ միայն կարծում եմ, թե այս տեսակ ամուսնությունների մեջ արդարությունը կպահանջի, որ մի կողմը հատուցում ստանա։

– Հատուցում ստանա կի՞նը,– հարցրեց մր. Ուիկֆիլդը։

– Հարկավ կինը, սըր,– պատասխանեց մր. Մելդրընը։ Սակայն տեսնելով, որ մր. Ուիկֆիլդը դարձյալ հանգիստ շարունակում է ճաշ ուտել և մտադիր չի գրգռվել, շարունակեց.

– Այժմ, սըր, իմ միտքը ձեզ հայտնի է, և ես վերստին ներողություն եմ խնդրում ձեզնից։ Ես անշուշտ ձեր հրահանգին կհետևեմ և հուսով եմ, որ այս գործը բացառապես ձեր և իմ մեջ կվերջանա՝ առանց դոկտորին որևէ բան հայտնելու։

– Դուք ճաշե՞լ եք,– ասաց մր. Ուիկֆիլդը, հրավերի նշան անելով։

– Շատ շնորհակալ եմ,– ասաց մր. Մելդրընը։– Այսօր ես Աննիի հետ պիտի ճաշեմ։ Մնաք բարով։

Մր. Ուիկֆիլդը առանց վերկենալու մտախոհ նայեց հեռացողի հետևից։ Ջոն Մելդրընը թեև մի գեղեցկադեմ, բայց դատարկ տղա թվաց ինձ. նա լեզվանի էր, համարձակ ու պնդերես։ Առաջին անգամ էի տեսնում նրան։ Երբ առավոտյան դոկտոր Ստրոնգը մր. Ջոն Մելդրընի մասին էր խոսում, մտքովս էլ չէր անցել, թե հենց նույն օրը կտեսնեմ նրան։

Ճաշից հետո գնացինք վերևի դահլիճը, ուր նույնությամբ կրկնվեց, ինչ-որ եղել էր մի օր առաջ։ Ագնեսը դարձյալ մի շիշ գինի ու բաժակ դրեց միևնույն անկյունի սեղանի վրա, մեկ նստում էր նրա կողքին, մեկ խոսում էր ու գործում և մեկ ինձ հետ դոմինո խաղում։ Որոշված ժամին նա թեյ պատրաստեց և հետո, երբ ես գրքերս ներքև դրի, բոլորն էլ աչքի անցրեց և ցույց տվեց, թե այդ գրքերից ի՞նչ գիտի (տեսա, որ իր ասածից շատ ավելի բան գիտի), և դաս սովորելու ամենալավ եղանակը բացատրեց։ Այս տողերը գրելիս տեսնում եմ նրա շնորհալի, համեստ ու հեզիկ ձևերը և լսում գողտրիկ ձայնը։ Արդեն գուշակում եմ այն բարերար ազդեցությունը, որ պիտի անի հոգուս վրա։ Ես սիրում եմ փոքրիկ Էմլիին և չեմ սիրում Ագնեսին... ոչ. ուրիշ տեսակ է սրտիս հակումը դեպի նա... սակայն զգում եմ, որ ուր որ Ագնեսն է, այնտեղ էլ բարություն, խաղաղություն, ճշմարտություն կա, և որ մի ժամանակ իմ տեսած եկեղեցու նկարեն պատուհանի քաղցրիկ լույսը միշտ շողում է նրա վրա, ինչպես և իմ վրա, երբ նրա հետ միասին եմ լինում, և բոլոր շրջակա իրերի վրա։

Քնելու ժամը հասած լինելով, նա հորը համբուրեց ու հեռացավ. ես էլ արդեն աջս էի մեկնել մր. Ուիկֆիլդին բարի գիշեր ասելու, բայց նա ինձ ետ պահեց և հարցրեց.

– Կուզե՞ք, Տրոտուդ, մեզ մոտ մնալ, թե՞ մի ուրիշի տանն ապրել։

– Ձեզ մոտ մնալ,– պատասխանեցի ես իսկույն։

– Իրա՞վ։

– Եթե միայն թույլ տաք։ Եթե ձեզ հաճելի թվա։

– Սակայն, սիրելիս, գուցե մեր վարած կյանքը շատ ձանձրալի թվա քեզ։

– Հավատացեք, սըր, որ ինձ այս կյանքը ավելի ձանձրալի չի երևա, քան Ագնեսին։

– Քան Ագնեսին,– կրկնեց նա, հանդարտ մոտենալով վառարանին ու նրան հենվելով։– Քան Ագնեսի՛ն։

Այդ երեկո մր. Ուիկֆիլդը այնքան շատ էր գինի խմել (գոնե ինձ այդպես թվաց), որ աչքերն արյունով էին լցվել։ Այս ես փոքր-ինչ առաջ էի նկատել, իսկ այժմ չէի տեսնում, որովհետև նա աչքերը խոնարհել էր ու ձեռքով ծածկել։

– Կուզեի իմանալ,– մրմնջաց նա,– մի՞թե Ագնեսին ձանձրալի է ինձ հետ ապրել։ Օ՛հ, իսկ ես երբեք չեմ ձանձրանում նրանից։ Բայց իմ բանն ուրիշ է, բոլորովին ուրիշ։

Նա ինքն իրեն էր մտմտում՝ առանց ինձ դիմելու, ուստի ես լուռ մնացի։

– Այո՛, մի հինավուրց տխուր տուն է իմ տունը և մեր կյանքը՝ միակերպ,– ասաց նա,– բայց և այնպես Ագնեսն իմ մոտ պիտի մնա, և ոչ ուրիշ տեղ։ Ես չեմ կարող առանց նրան ապրել։ Իսկ եթե մեռնե՞մ և նա որբանա, և կամ նա մեռնի և ես որբանա՞մ. . . Օ՛հ, այս միտքը մի սոսկալի ճիվաղի պես կյանքիս ամենաերջանիկ րոպեները վրդովում է, և ես չեմ կարող մի ուրիշ բանով հալածել նրան, բացի միայն. . .

Նա չավարտեց խոսքը, այլ ծանրաքայլ մոտենալով սեղանին, դատարկ շշից մեքենայաբար գինի ածելու շարժում արեց, շիշը նորից տեղը դրեց և սկսեց սենյակում ման գալ։

– Եթե ես չեմ կարող այս մտքին դիմանալ, մինչ Ագնեսը դեռ այստեղ է,– ասաց նա,– ուրեմն ի՞նչ կլինի վիճակս, երբ նա ինձնից հեռանա։ Ո՛չ, ո՛չ, ո՛չ։ Երբեք չեմ հոժարի այդ բանին։

Նա նորից վառարանին հենվեց և մտքերի մեջ սուզվեց։

Չգիտեի արդյոք գնա՞մ, թե՞ լուռ սպասեմ, մինչև որ սթափվի։ Վերջապես նա ուշքի եկավ և աչքերը չորս կողմը պտտեցնելիս ինձ նկատեց։

– Ուրեմն մեզ մոտ կմնաս, չէ՞, Տրոտուդ,– ասաց նա սովորական եղանակով, կարծես թե որևէ հարցիս անմիջապես պատասխան տալով։– Մնա, մնա, շատ ուրախ եմ։ Դու մեզ երկուսիս էլ ընկերակից կլինես։ Այդ ինձ համար օգտակար կլինի, Ագնեսի համար էլ օգտակար, բոլորիս համար էլ օգտակար։

– Եվ մանավանդ ինձ համար, սըր,– ասացի ես։– Ես երջանիկ եմ, որ այստեղ եմ։

– Լավ տղա ես,– ասաց մր. Ուիկֆիլդը։– Եթե գոհ ես իմ և Ագնեսի ընկերությունից, կա՛ց մեզ մոտ, ինչքան որ սիրտդ կամենա։

Այս ասելով ձեռք մեկնեց ինձ և ուսս թոթվեց։ Եվ ի վերջո ավելացրեց.

– Ագնեսին բարի գիշեր ասելուց հետո, ես գնում եմ գրասենյակս։ Եթե կամենաս, դու էլ կարող ես միշտ այնտեղ գալ, պարապել, կարդալ և կամ նստել. դրանով ինձ ամենևին չես խանգարի։

Շնորհակալ եղա և գրքերս առնելով նրա հետևից ներքև իջա մի կես ժամ կարդալու համար. դեռ քունս չէր տանում։

Սակայն աշտարակի կլոր սենյակում լույս տեսնելով և անմիջապես Ուրիաս Հիպի մերձավորությունը զգալով, որ մի թովչական ուժով քաշում էր ինձ, ես քայլերս ակամա դեպի այն կողմ ուղղեցի։ Ուրիասը ուշի-ուշով մի ահագին գիրք էր կարդում և կարդալիս իր վտիտ ցուցամատը մի տողից դեպի մյուսը մանածում և թերթերի վրա մածուցիկ հետքեր թողնում (գոնե ինձ այդպես թվաց), կարծես թե նրա մատը մի լորդու լիներ։

– Դեռ պարապո՞ւմ եք այս ուշ ժամին, Ուրիաս,– ասացի ես։

– Այո՛, մաստր Կոպպերֆիլդ,– պատասխանեց Ուրիասը։

Ավելի հարմար խոսելու համար, նրա դիմացի աթոռին նստեցի և նկատեցի, որ նրա երեսը բնավ ժպտալու շնորհ չունի. ժպիտի փոխարեն, երբ շուրթերը բաց էր անում, միայն երկու խոր խաչքեր էին առաջ գալիս այտերի վրա։

– Այժմ զբաղմունքիս առարկան գրասենյակի գործ չէ։

– Հապա ի՞նչ է։

– Աշխատում եմ օրենքների գիտությունը ձեռք բերել և այժմ Տիդդի «Գործնական հրահանգներն» եմ ուսումնասիրում։ Օ՜հ, ի՛նչ սքանչելի հեղինակ է այս Տիդդը, մաստր Կոպպերֆիլդ։

Այս ջերմ բացականչությունից հետո, Ուրիասը շարունակեց կարդալ, առաջվա պես ցուցամատը մանածելով։ Ես նրան իմ աթոռից դիտում էի և նկատեցի, որ նրա բարակ ու շարժուն ռունգերը սաստիկ բացվելու և սեղմվելու ունակություն ունեին, և նա ռունգերն է թարթում՝ փոխանակ աչքերը, որոնք գրեթե անքթիթ էին։

– Դուք երևի շատ հմուտ իրավաբան եք, մր. Հիպ,– ասացի ես, նրան երկար դիտելուց հետո։

– Ե՞ս, մաստր Կոպպերֆիլդ։ Օ՜հ, ոչ. ես մի չնչին արարած եմ։

Արդեն ասել եմ, թե ինչ զզվելի տպավորություն էր թողնում վրաս նրա ձեռքի շոշափումը։ Այժմ տեսա, որ նա իր թաթերը շարունակ իրար է շփում, կարծես թե կամենալով տաքացնել ու չորացնել, և թաքուն սրբում է թաշկինակով։

– Ես լավ գիտեմ, որ մի խոնարհ, չնչին մարդ եմ,– ասաց Ուրիասը համեստաբար։– Թող ուրիշները որքան ուզեն բարձրանան. ես այդպիսի ձգտում չունեմ։ Իմ մայրն էլ մի շատ խոնարհ պառավ է։ Մենք ապրում ենք մի շատ անշուք տնակում, բայց սրտով գոհ ենք, մաստր Կոպպերֆիլդ, և գիտենք շնորհակալ լինել։ Հայրս էլ մի համեստ արհեստավոր էր՝ դիաթաղ։

– Իսկ այժմ ի՞նչ է։

– Այժմ հայրս Աբրահամի գոգումն է, մաստր Կոպպերֆիլդ։ Այո՛, գիտենք շնորհակալ լինել, և փառք աստծու, որ մր. Ուիկֆիլդի մոտ ծառայելու բախտ ունեմ։

– Վաղո՞ւց է, որ նրա մոտ եք, մր. Հիպ։

– Ահա արդեն չորս տարի է, որ նրա մոտ եմ, մաստր Կոպպերֆիլդ,– ասաց նա, կարդացած տեղի վրա նշան դնելով ու գիրքը ծածկելով։– Հորս մահից ճիշտ մի տարի հետո էր, որ մր. Ուիկֆիլդը իր գրասենյակն ընդունեց ինձ։ Օ՜հ, որքան երախտապարտ եմ բարերարիս, որքա՛ն շնորհակալ, որ նա հնարավորություն է տալիս մեր օրենքներն ուսանելու։ Առանց մր. Ուիկֆիլդի մարդասիրական օգնության՝ ես չէի կարող այս օրենքներն ուսանել մորս ու իմ շատ չափավոր միջոցներով։

– Ուրեմն այդ օրենքներն ուսանելուց հետո փաստաբան կդառնաք, անշուշտ,– ասացի ես։

– Աստծու ողորմությամբ, մաստր Կոպպերֆիլդ,– պատասխանեց Ուրիասը։– Եթե տերը կամենա։

– Եվ գուցե մի օր մր. Ուիկֆիլդին ընկերանաք,– շարունակեցի ես, կամենալով մի հաճելի բան ասել նրան։– Եվ այն ժամանակ ցուցանակի վրա «Ուիկֆիլդ և Հիպ» կգրվի և կամ թե «Հիպ, Ուիկֆիլդի հաջորդը»։

– Օ՜հ, ո՛չ, մաստր Կոպպերֆիլդ,– պատասխանեց Ուրիասը։– Ես ո՛ւր, մր. Ուիկֆիլդն ուր։ Ես մի շատ չնչին մարդ եմ։

Այս ասելիս նա գլուխը շարժեց և ճակատի տակից խոնարհաբար ինձ նայեց, լայն բերանի երկու կողմի խորշոմները ցույց տալով։

– Մր. Ուիկֆիլդը պատվական մարդ է, մաստեր Կոպպերֆիլդ,– ասաց Ուրիասը։– Եթե վաղուց եք ճանաչում նրան, ուրեմն գիտեք, թե ինչ մարդ է։

Պատասխանեցի, թե հավաստի եմ, որ մր. Ուիկֆիլդը լավ մարդ է, և թեպետ նոր եմ ճանաչում նրան, սակայն տատս նրա վաղեմի բարեկամն է։

– Օ՜հ, իրա՞վ եք ասում, մաստր Կոպպերֆիլդ,– գոչեց Ուրիասը։– Ձեր տատը մի շատ հարգելի տիկին է, մաստր Կոպպերֆիլդ։

Ուրիաս Հիպը մի պժգալի սովորություն ուներ գալարվելու ու կծկվելու ոգևորության ժամանակ։ Այս անգամ ես ուշք չդարձրի նրա վզի օձապտույտ շարժումներին, ուստի և չլսեցի, թե ի՞նչ գովազդ ընծայեց տատիս։

– Շատ պատվելի ու մեծարգո տիկին է,– շարունակեց Ուրիասը։– Եվ կարծեմ շատ է սիրում Ագնեսին։ Չէ՞, մաստր Կոպպերֆիլդ։

– Անշուշտ,– ասացի ես համարձակ, թեև, ուղիղն ասեմ, այդ մասին ոչինչ չգիտեի։

– Հարկավ դուք էլ, մաստր Կոպպերֆիլդ, պաշտում եք նրան։ Ես հավաստի եմ, որ այդպես է։

– Ո՞վ կարող է չպաշտել նրան,– ասացի ես։

– Օ՜հ, շնորհակալ եմ, մաստր Կոպպերֆիլդ, շնորհակալ եմ այդ խոսքերի համար։ Ես թեպետ մի չնչին էակ եմ, բայց հասկանում եմ, որ ձեր ասածը ճշմարիտ է։ Իրավ, ո՞վ կարող է չպաշտել նրան։ Շատ շնորհակալ եմ, մաստր Կոպպերֆիլդ։

Եռանդի սաստկությունից կարկամելով ու ծամածռվելով, Ուրիաս Հիպը բարձր աթոռից արագությամբ ներքև սողաց և սկսեց տուն գնալու պատրաստվել։

– Մայրս անշուշտ սպասում է ինձ,– ասաց նա իր անփայլ ժամացույցին նայելով,– և գուցե արդեն անհանգիստ է։ Մայրս և ես թեև չնչին ու փանաքի մարդիկ ենք, մաստր Կոպպերֆիլդ, սակայն շատ սիրով ենք իրար հետ։ Եթե մի երեկո շնորհ անեիք մեր համեստ խրճիթը տեսնելու և մեզ մոտ մի բաժակ թեյ ընդունելու, ձեր այցելությունը մեծ պատիվ կբերեր մորս, ինչպես և ինձ, մաստր Կոպպերֆիլդ։

Պատասխանեցի, թե ուրախությամբ կայցելեմ։

– Ա՜հ, անչափ շնորհակալ եմ, մաստր Կոպպերֆիլդ,– ասաց Ուրիասը, գիրքը դարակի վրա դնելով։– Դուք դեռ մի քանի ժամանակ այստեղ կմնաք, չէ՞, մաստր Կոպպերֆիլդ։

Ասացի, թե այնքան կմնամ, ինչքան որ ուսանելու լինեմ պանսիոնում։

– Այդպես է հա՞,– գոչեց Ուրիասը։– Ուրեմն շատ հավանական է, մաստր Կոպպերֆիլդ, որ վերջ ի վերջո դուք դառնաք մր. Ուիկֆիլդի ընկերը։

Աշխատեցի հավատացնել, թե մտքովս անգամ այդպիսի բան չի անցել, ոչ ոք էլ ապագայիս վերաբերմամբ այդպիսի բան չի մտածել, բայց Ուրիասը միշտ իրենն էր պնդում քծնելով։

– Այո՛, այո՛, մաստր Կոպպերֆիլդ, այս հաստատ է։ Անպատճառ այդպես կլինի. արևս վկա, այդպես կլինի։

Ամեն բան հավաքելուց հետո նա վերջապես հարցրեց.

– Կարո՞ղ եմ մոմը հանգցնել, մաստր Կոպպերֆիլդ։

– Հարկավ։

Ուրիաս Հիպը մոմը մարեց և մնաս բարով ասելով ձեռքս սեղմեց։ Այս վայրկյանին (մթության մեջ) կարծեցի թե ձուկ եմ շոշափում։ Այնուհետև նա դուռը բաց արեց և դուրս սահեց, իսկ ես, խավարի մեջ մենակ խարխափելիս, նրա աթոռը շուռ տվի և հազիվ կարողացա իմ սենյակը բարձրանալ։ Գուցե այս էր պատճառը, որ մինչև գիշերվա կեսը երազիս մեջ տեսնում էի Հիպին, որ իբրև մի ծովահեն հափշտակել է մր. Պեգգոտիի նավատունը, մի սև դրոշակ կապել

կայմին «Տիդդի հրահանգները» վերնագրով և այդ դիվային նշանի տակ ինձ ու Էմլիին փախցրել՝ երկուսիս էլ սպանիական ծովում խեղդելու համար։

Երբ հետևյալ առավոտյան ուսումնարան գնացի, տագնապս արդեն նվազել էր. մի օրից հետո՝ ավելի սիրտ առա, երրորդ օրն՝ ավելի, իսկ երկու շաբաթ անցնելուց հետո՝ բոլորովին ընտելացա ընկերներիս և երջանիկ էի նրանց շրջանում։ Ճշմարիտ է, որ խաղերի մեջ դեռ բավական ճարպիկ չէի և ուսման մեջ շատ ետ էի, սակայն հույս ունեի, թե առաջին թերությունս վարժությամբ կուղղեմ, իսկ երկրորդը՝ հարատև ջանքով։ Եվ այսպես՝ սկսեցի անդուլ փութով աշխատել, որ թե՛ զբոսանքների, թե՛ ուսման մեջ առաջ գնամ, և շատ չանցած ամենքի հավանության արժանացա։ Փոքր-ինչ հետո՝ Մեորդստոնի ու Գրիմբիի մոտ վարած կյանքս արդեն երազի պես օտարոտի էր թվում ինձ, մինչ ներկայիս կյանքն այն աստիճան ընտանի էր, որ կարծես վաղուց եմ այսպես ապրում։

Դոկտոր Ստրոնգի պանսիոնը մի պատվական դպրոց էր և այնքան տարբեր մր. Կրիկլի պանսիոնից, ինչքան որ բարին չարից։ Դոկտոր Ստրոնգի պանսիոնը կառավարվում էր մի բարեկարգ, իմաստուն ու վայելուչ սիստեմով։ Տեսուչը ամեն բանում հավատ էր ընծայում աշակերտների ազնվության, պատվազգացության և դրա վրա հիմնում իր վստահությունը։ Տղաներն էլ հետամուտ էին անարժան չհանդիսանալ վեհանձն տեսչի հավատարմության, և այս եղանակը հրաշք էր գործում։ Բոլորս զգում էինք, որ մասն ունենք դպրոցի ներքին վարչության մեջ, և մեր կողմից ճիգ թափում բարձր պահելու նրա լավ համբավն ու վարկը։ Այս պատճառով մենք սրտանց սիրում էինք նրան, պարծենում էինք նրանով (գոնե ես այդպես էի անում և կարող եմ վկայել՝ տղա չկար, որ նույնը չաներ) և ձգտում հոժար կամքով ուսանել, որպեսզի պատիվ բերենք նրա անվան։ Մեր բոլոր խաղերը թե՛ դպրոցում, թե՛ դրսում միանգամայն ազատ էին, բայց և այնպես քաղաքի մեջ բարի համբավ ունեինք, և երբեք չէր պատահում, որ մեզնից գեթ մեկը իր ընթացքով կամ վարքով դոկտոր Ստրոնգին ամաչելու տեղիք տար։

Ավագ աշակերտներից մի քանիսը գիշերօթիկ էին դոկտորի տանը, և ահա նրանք էին, որ մտերմաբար մի քանի տեղեկություն հաղորդեցին ինձ նրա մասնավոր կյանքի մասին։ Դոկտորն ամուսնացել էր իմ գալուց մի տարի առաջ այն գեղեցիկ ջահել կնոջ հետ, որին տեսել էի գրասենյակում, և ամուսնացել սիրելով, որովհետև կինը մի պենսի անգամ չէր ունեցել, մինչդեռ ունի չքավոր ազգականների մի ամբողջ երամ, որոնք պատրաստ են ասպատակել դոկտորին և նրան տանից դուրս քշել։ Դոկտորի մտածկոտ տրամադրության պատճառը, ասացին ինձ, նրա որոնած հունական արմատներն են։ Ես միամտաբար կարծեցի, թե խոսքը դոկտոր Ստրոնգի բուսաբանական զբաղմունքների մասին է, որովհետև նա զբոսնելիս սովոր էր միշտ վար նայել. հետո միայն իմացա, որ արմատ ասելով պետք է բառերի արմատները հասկանալ, որ հավաքում էր մի նոր բառարան կազմելու համար։ Մեր դասարանի առաջին աշակերտ, քաջ թվաբան Էդեմսը մինչև անգամ հաշվել էր, թե այս երկը իսկապես ե՞րբ պատրաստ կլինի։ Նրա ասելով բառարանը պիտի վերջանար հազար վեց հարյուր քառասուն ինը տարուց հետո, հաշվը սկսելով դոկտորի ծննդյան վաթսուն և երկրորդ տարեդարձից, որ դեռ նոր էր լրացել։

Ինչևէ, դոկտորը ամբողջ դպրոցի պաշտելին էր, նա մարմնացյալ բարություն էր և այն աստիճանի վստահելի ու պարզամիտ, որ այս հատկությամբ կարող էր անգամ պարսպի վրա գտնվող սափորների քարե սրտերը շարժել։ Երբ նա իր պարտեզում ետ ու առաջ էր ման գալիս,– մինչ ցանկապատի վրա նստոտած խորամանկ ագռավներն ու կաչաղակները գլուխները մի կողմ ծռած նայում էին նրան, կարծես ցույց տալու, թե նրանից ավելի տեղյակ են այս աշխարհի բաներին,– յուրաքանչյուր շրջմոլիկ կարող էր համարձակ մոտենալ նրան և մի հնարովի սրտաշարժ բան պատմելով առնվազն երկու օրվա սնունդի փող ճանկել նրանից։ Այս բանը այնքան հայտնի էր դպրոցում, որ վարժապետները և ավագ աշակերտները անդադար հետամուտ էին անկյուններից, պատուհանների և բակի մոտերքից հեռու քշելու այն խաբեբա էակներին, և շատ անգամ այս արշավանքը գրեթե դոկտորի քթի տակ էր

կատարվում, և նա ոչինչ չէր նկատում։ Մի անգամ իր սահմանից անցնելուն և անպաշտպան մնալուն պես՝ նա մի ոչխարի նման էր, որի բուրդը հենց առաջին փուչ կենդանին կարող էր խուզել։ Նա պատրաստ էր իր զանգվածներն անգամ հանել և ուրիշին տալ։ Եվ իրոք, մեր շրջանում պատմում էին, արդյոք ո՞ր ժամանակից և կամ ի՞նչ հեղինակության վրա հիմնվելով, չգիտեմ, սակայն այսօր էլ պատմությունն ինձ ճշմարիտ է թվում,– թե դոկտորը մի ձմռան օր իր զանգվածները մի մուրացկան կնոջ է տալիս։ Մուրացիկն էլ այս պարգևի մեջ փաթաթելով իր մանկանը, սկսում է շրջել տնե տուն և ամբողջ թաղը զարմացնում, որովհետև դակտոր Ստրոնգի զանգվածներն ամենքին էլ նույնքան ծանոթ էին, որքան և մայր տաճարը։ Ավանդությունն ասում է, թե մի մարդ միայն չի կարողացել ճանաչել դրանք, և այդ մարդը հենց ինքը դոկտորն էր, որ մի քանի օր անցնելուց հետո նույն զանգվածները մի հասարակ կրպակի առջև տեսնելով, ուր այդպիսի իրերը մի բաժակ օղու հետ են փոխանակում, երկար ժամանակ դիտել է դրանք, հավանել է, և իր զանգվածներից ավելի սիրուն գտել։

Գորովալի էր տեսնելն դոկտորի վարմունքն իր կնոջ հետ։ Այս վարմունքի մեջ մի այնպիսի հայրական սեր ու գութ կար, որ դրանով արդեն կարելի էր նրա սրտի ազնվությունը ճանաչել։ Ես շատ անգամ տեսնում էի նրանց՝ պարտեզում միասին զբոսնելիս. երբեմն էլ առիթ ունենում ավելի մոտիկից դիտել նրանց՝ գրասենյակում կամ դահլիճում։ Կինը կարծես շատ ուշադիր ու սիրալիր էր դեպի մարդը, սակայն չէր երևում, որ բառարանին մի վառ հետաքրքրություն ընծայեր, թեև դոկտորի գրպաններն ու գլխարկի աստառը միշտ լիքն էին այդ մեծ երկի հատվածներով, որոնց իմաստն աշխատում էր կնոջը մեկնել զբոսնելիս։

Ես հիմք ունեի միս Ստրոնգից գոհ լինելու՝ մեկ այն պատճառով, որ հենց առաջին տեսնելուց, նա սիրել էր ինձ և միշտ ուշադիր ու բարի էր դեպի ինձ. երկրորդ, որ շատ սիրում էր Ագնեսին և շուտ-շուտ գալիս նրան տեսնելու։ Սակայն նրա ու մր. Ուիկֆիլդի հարաբերության մեջ մի տարօրինակ պաղություն կար, տիկինը կարծես վախենում ու քաշվում էր նրանից։ Երեկոները, մեր տանից հեռանալու ժամանակ, միշտ խորշում էր իմ տանտիրոջ ուղեկցությունն ընդունելուց և ինձ հետ էր դուրս փախչում։ Եվ շատ անգամ, մինչ զվարթ-զվարթ շտապում էինք տեղ հասնել, աշխատելով, որ մեզ ոչ ոք չհանդիպի, հանկարծ որևէ անկյունից մր. Մելդրընն էր դուրս բուսնում և զարմանում մեզ տեսնելիս։

Մրս. Ստրոնգի մայրիկը մի շատ զվարճալի տիկին էր։ Նրա անունը մրս. Մարկիլեմ էր, բայց մեր աշակերտները սովոր էին Հին Զինվոր անվանել նրան ի հարգանս այն պատերազմական հանճարի, որով դոկտորի դեմ էր մղում իր ազգականների ստվար գունդը։ Նա մի կարճահասակ կին էր թափանցող աչքերով. պճնվելիս միշտ միևնույն գլխանոցն էր հագնում, որ արհեստական ծաղիկներով էր զարդարված, ինչպես և դրանց շուրջը թռչկոտող երկու հատ արհեստական թիթեռներով։ Մեր մեջ զրույց կար, թե այս գլխանոցի հայրենիքը Ֆրանսիան է և թե նա անպատճառ ֆրանսիական ճարտար ազգի հնարագիտության արգասիքը կլինի, այլ ոչ թե անգլիացոց. սակայն ինձ այս էր միայն ստույգ հայտնի, որ գլխանոցը միշտ այն երեկույթներումն էր հանդես գալիս, ուր մրս. Մարկիլեմը ներկա էր. որ նա միշտ մի հնդկական կողովի մեջ փաթաթված էր բերում, և որ թիթեռներն ընդունակ են ժրաջան մեղուների պես արագ-արագ թրթռալ՝ մանավանդ այն րոպեներին, երբ տիկինը հետամտում էր մի բան որսալ դոկտորից։

Մի երեկո առիթ ունեցա լավ դիտելու Հին Զինվորին – թող այս անունը քամահրանքով չհիշվի,– և մի երեկո, որ ինձ համար անմոռանալի է մի միջադեպի պատճառով, որ և իսկույն պատմելու եմ։ Այդ երեկո դոկտորի տանը հրավերք կար և ի պատիվ մր. Ջոն Մելդրընի, որ Հնդկաստան պիտի մեկներ, կարծեմ զինվորի պաշտոնով։ Վերջ ի վերջո նա և մր. Ուիկֆիլդը բանն այդպես էին կարգագրել։ Հենց այդ օրն էլ դոկտորի ծննդյան տարեդարձն էր։ Տոնի պատճառով դպրոցում դասեր չկային։ Առավոտյան մենք ընծաներ մատուցեցինք նրան. Էդեմսը բոլորիս կողմից մի հանդիսավոր ճառ կարդաց, և մենք այնքան կեցցե գոռացինք, որ

ձայներս խանձվեցին, իսկ դոկտորն արտասվեց։ Երեկոյան մր. Ուիկֆիլդը, Ագնեսն ու ես թեյի գնացինք նրա մոտ, իբրև մտերիմ բարեկամներ։

Մր. Ջոն Մելդրնը արդեն այնտեղ էր. մեր ներս մտնելու րոպեին մրս. Ստրոնգը կարմիր ժապավեններով զարդարուն մի ձյունափայլ զգեստ հագած՝ դաշնամուր էր նվագում, իսկ մր. Մելդրնը նրա աթոռի մեջքին հենված՝ նոտաները շուռ տալու վրա էր։ Այս անգամ տիկնոջ դեմքի վարդագույն փայլը սովորականի պես պայծառ չէր. այնուամենայնիվ նա գեղեցիկ էր, հիանալու չափ գեղեցիկ։

– Ա՛հ, դոկտոր,– ասաց մրս. Ստրոնգի մայրիկը, երբ նստեցինք։– Մոռացել էի, որ այսօր ձեր տարեդարձն է։ Խնդրեմ ընդունեցեք իմ սրտագին շնորհավորանքը։ Հավաստի եմ, որ խոսքերս մի հասարակ կոմպլիմենտ չեք համարի։ Ես սրտանց մաղթում եմ, որ շատ տարիներ երջանկությամբ արժանանաք այս օրվան։

– Շնորհակալ եմ, տիկին,– պատասխանեց դոկտորը։

– Այո՛, շատ տարիներ, շատ և շատ,– կրկնեց Զինվորը։– Ապրեք երկար տարիներ ոչ միայն ձեր, այլև Աննիի և Ջոն Մելդրնի և ուրիշ շատերի բարեբախտության համար։ Օ՛հ, աստված իմ, կարծես դեռ երեկ էր, Ջոն, որ դու մաստր Կոպպերֆիլդից էլ փոքր էիր և արդեն սեր էիր խոստովանում Աննիին, նրա հետ միասին թփերի տակ խաղալիս։

– Ա՛խ, մայրիկ, էլ մի հիշեք այդ բանը,– ասաց մրս. Ստրոնգը։

– Ինչո՞ւ չհիշեմ, սիրելի Աննի,– գոչեց մայրը։– Դու երեխա չես, արդեն մի պառավ արամբի կին ես։ Եթե այժմ էլ այս լսելուց ամաչես, էլ ե՞րբ չպիտի ամաչես։

– Պառա՞վ,– բացականչեց մր. Ջոն Մելդրնը։– Աննին պառա՞վ։

– Այո՛, Ջոն,– պատասխանեց Զինվորը։– Մի պառավ արամբի կին։ Չեմ ասում, թե տարիքով է պառավ, այնքան ապուշ չեմ, որ քսան տարեկան աղջկան պառավ համարեմ, բայց քո մորաքրոջ աղջիկը դոկտոր Ստրոնգի ամուսինն է, և այս մտքով արժանի պառավ կոչվելու պատվին։ Եվ քեզ համար մեծ բախտ է, Ջոն, որ մորաքրոջդ աղջիկը դոկտորի կինն է։ Դոկտորը քեզ համար մի ազդեցիկ ու մտերիմ բարեկամ է, որ անշուշտ այսուհետև էլ չի դադարի քեզ թևարկու լինելուց, եթե միայն գիտենաս նրա սերը հարգել։ Ես սովոր չեմ զուր պարծենալ և առանց ամաչելու պարզ կասեմ, թե մեր գերդաստանի անդամներից շատերը պաշտպանի կարոտ են։ Կարոտներից մեկն էլ ահա դու էիր, քանի դեռ մորաքրոջ աղջկա շնորհիվ չէիր գտել այս հզոր պաշտպանին։

Դոկտոր Ստրոնգը սրտի բարությունից ձեռքը շարժեց վերջ տալու համար այս խոսակցությունը, որ արդեն ձանձրացնում էր մր. Ջոն Մելդրնին։ Բայց մրս. Մակլիեմն իր աթոռը ավելի մոտեցրեց դոկտորին և հովհարի ծայրը նրա թևին դնելով, շարունակեց.

– Ո՛չ, ո՛չ, սիրելի դոկտոր. մի արգելեք սրտիս զգացումն ազատորեն արտահայտել։ Ես չեմ կարող չարտահայտել այն բուռն զգացումը, որ արդեն մոլության է հասել։ Դուք մեզ համար մի երկնային օրհնություն եք։ Դուք մեր իսկական բարերարն եք։

– Ավելորդ խոսքեր են, ավելորդ,– ասաց դոկտորը։

– Ո՛չ, ավելորդ չեն, կներեք,– շարունակեց Հին Զինվորը։– Ես չեմ լռի, երբ այստեղ, բացի մեր պատվական մր. Ուիկֆիլդից ոչ մի օտար մարդ չկա, որ բերանս փակի։ Ընդհակառակը, ես պատրաստ եմ զոքանչի իրավունք բանեցնելով, դեռ մի լավ հանդիմանություն անել ձեզ, եթե ասածներս չընդունեք։ Ես սրտաբաց և շիտակ կին եմ։ Եվ պիտի ասեմ, ինչ որ արդեն ասել եմ ձեզ մի անգամ. . . Հիշո՞ւմ եք. . . այն օրը, երբ զարմացրիք ինձ, իմ աղջկան ուզելով։ Հիշո՞ւմ եք, թե ո՞ր աստիճան զարմացա, ապշեցի ես այդ առաջարկը լսելիս։ Զարմանալին առաջարկը չէր. դա մի շատ բնական բան է, և ծիծաղելի կլիներ, եթե ուրիշ կերպ մտածեի,– այլ այն հանգամանքը, որ դուք Աննիի խեղճ հայրիկին դեռ այն օրից էիք ճանաչել, երբ Աննին վեցամսյա մանուկ էր։ Կարո՞ղ էի արդյոք երևակայել, թե մի օր նրա աղջկա ամուսինը

կդառնաք և կամ... մի ուրիշի ամուսինը, եթե կուզեք իմանալ: Ահա այս էր զարմանալուս պատճառը:

– Էհ, բավական է, բավական,– ասաց դոկտորը զվարթ սրտով:– Էլ չհիշենք:

– Ո՛չ, ո՛չ, պիտի հիշեմ,– ասաց Զինվորը, հովհարը նրա շրթունքին դնելով:– Այս բոլորը հիշում եմ և ամենքի առջև կրկնում, որպեսզի հերքեն ինձ, եթե ասածս սուտ է: Այսպես ուրեմն, հենց որ առաջարկություն արիք, ես Աննիին կանչեցի և ամեն բան պատմեցի: «Սիրելի Աննի,– ասացի,– դոկտոր Ստրոնգը այստեղ էր և առաջարկություն արեց, այսինքն՝ հանդիսավոր կերպով քեզ կնության ուզեց»: Արդ հարցնում եմ – խոսքերիս մեջ մի դրևէ ճնշում կա՞ր: Չկա՛ր: Հետո ասացի. «Պարզ ասա, սիրելի Աննի, արդյոք սիրտդ ազա՞տ է»:– «Մայրիկ,– գոչեց նա լալով,– ես դեռ այնքան երեխա եմ – և այս լիովին ճշմարիտ էր – որ չեմ իմանում, թե սիրտ ունեմ»:– «Եթե այդպես է, հոգյակ իմ,– ասացի ես,– կարող եմ վստահ լինել, որ սիրտդ ազատ է: Համենայն դեպս, սիրելիս,– ավելացրի ես,– դոկտոր Ստրոնգը այն աստիճան վառված է, որ անհրաժեշտ է մի պատասխան տալ նրան: Չի կարելի այս տագնապի մեջ թողնել նրան»:– «Մայրիկ,– պատասխանեց Աննին, շարունակելով արտասվել,– մի՞թե դոկտորն անբախտ կլինի առանց ինձ: Եթե անբախտ պիտի լինի, ուրեմն հայտնեցեք, թե ես նրան այնքան հարգում ու պատվում եմ, որ պատրաստ եմ նրան մարդու գնալ»:– Այսպես էլ բանը վերջացավ: Եվ ահա այն ժամանակն էր, և ոչ թե առաջ, որ ասացի Աննիին. «Աննի, դստրիկ իմ, դոկտոր Ստրոնգը ո՛չ միայն ամուսինդ կլինի, այլև հանգուցյալ հորդ փոխանորդը: Նա կլինի մեր տան մեծը. նա կլինի մեր տոհմի իմաստության, կարող եմ ասել՝ և նյութական կարողության ամուր սյունը, ապավենը, մի խոսքով՝ մեր բոլորիս բարերարը»: Այո՛, այս էր այն ժամանակ ասած խոսքս, որ այսօր էլ կրկնում եմ: Ես մի հաստատամիտ կինարմատ եմ և իմ խոսքը ետ չեմ առնի:

Այս ճառի միջոցին աղջիկը հատակին նայելով լուռ նստած էր, իսկ մր. Ջոն Մելդրնը կանգնած էր կողքին, նմանապես ցած նայելով: Ճառից հետո մրս. Ստրոնգը դողդոջ ձայնով արտասանեց.

– Վերջացրի՞ր, մայրիկ:

– Ո՛չ սիրելիս, չեմ վերջացրել,– պատասխանեց Զինվորը:– Եվ որովհետև հարցնում ես, ես էլ կասեմ, հոգյակ իմ, դու փոքր-ինչ անտարբեր էս բարեկամներիդ վերաբերմամբ, և որովհետև այս գանգատը քեզ հայտնելուց բան դուրս չի գա, շիտակ դիմում եմ ամուսնուդ: Արդ, սիրելի դոկտոր Ստրոնգ, մի՛ մտիկ արեք ձեր հիմար կնկանը:

Երբ դոկոտորն իր ազնիվ ու միամիտ ժպիտով դեպի կինը շուռ եկավ, կինը գլուխն ավելի կախեց: Ես նկատեցի, որ մր. Ուիլֆիլդն ուշի-ուշով նրան է դիտում:

– Անցյալ օրը, երբ պատահմամբ այս խենթին ասացի,– շարունակեց մայրը, գլուխը շարժելով ու հովհարի ծայրը աղջկա կողմը դարձնելով,– թե մի ընտանեկան գործ ունեմ, որ նա կարող էր, և, ըստ իս, պարտավոր էր մինչև անգամ ձեզ հայտնել, գիտե՞ք, ինչ պատասխանեց: Պատասխանեց, թե չի հայտնի, խնդրածի պես կլինի, իսկ խնդրել չի ուզում, որովհետև դուք շատ բարի եք, և ինչ էլ խնդրի՝ կկատարեք: Եվ այս անմիտ պատրվակով, ոչ մի բան չհայտնեց ձեզ:

– Արածդ լավ բան չի, սիրելի Աննի,– ասաց դոկտորը:– Դու գիտես, որ ինձ համար ցանկությունդ կատարելը մի զվարճություն է:

– Ես էլ ճիշտ այդպես ասացի,– վրա բերեց մայրը:– Եթե մյուս անգամ էլ քաշվի հայտնել քեզ, այն ժամանակ ես ինքս անձամբ ձեզ կդիմեմ, սիրելի դոկտոր:

– Շատ լավ կանեք,– ասաց դոկտորը:

– Իրա՞վ:

– Անտարակույս:

– Ուրեմն անպատճառ ձեզ կդիմեմ,– գոչեց Զինվորը։– Շնորհակալ եմ. այս բանն արդեն պրծած է։

Կարծեմ իր նպատակին հասած լինելով, Զինվորը իր հովհարի ծայրը համբուրեց և դրանով մի քանի անգամ դոկտորի թևին խփելուց հետո՝ հանդիսավոր գնաց իր առաջվա տեղը նստեց։

Այդ միջոցին ուրիշ հյուրեր ներս մտան. նրանց հետ եկան նաև երկու վարժապետներ և Էդեմսը։ Խոսակցությունն ընդհանուր դարձավ։ Դրա նյութերն էին մր. Ջոն Մելդրընը, նրա ուղևորությունը, նրա գնալու երկիրը, նրա զանազան դիտավորությունները և հույսերը։ Հենց նույն գիշեր, ընթրիքից հետո, նա պիտի կառքով մեկներ Գրեյվսենգ, ուր սպասում էր օվկիանոսային շոգենավը, և այդ նավով գնար Հեռավոր Արևելք ու շատ տարիներ այնտեղ մնար, եթե միայն արձակուրդի կամ հիվանդության պատճառով չստիպվեր վերադառնալ հայրենիք։ Որքան հիշում եմ, բոլորն էլ միաձայն վկայում էին, թե Հնդկաստանը կարծվածի չափ վատ երկիր չէ, և թե այնտեղ բացի երկու-երեք վագրերից ու թեթև տոթից, այն էլ միայն կեսօրին, ոչ մի վտանգավոր բան չկա։ Ինձ մր. Ջոն Մելդրընը մի նոր Սինդբադ[24] էր թվում, և ես արդեն երևակայում էի, թե ինչպես նա արևելյան ռաջաների հետ մտերմանալով, ամպհովանու մեջ բազմած՝ նրանց հետ միասին ոսկեզօծ նարգիլե է վայելում։

Մրս. Ստրոնգը շատ լավ երգչուհի էր. շատ անգամ լսել եմ նրա մենակ երգելը, սակայն այն երեկո՝ գուցե հասարակությունից քաշվելուց և կամ ձայնը տեղը չլինելուց՝ ամենևին բան չերգեց։ Մի անգամ փորձեց դուետ երգել իր մորաքրոջ որդու հետ, բայց բանը սկզբից դենը չգնաց. իսկ հետո, երբ սկսեց մենակ երգել, սկզբում թեև քաղցր էր, սակայն հանկարծ կտրվեց, և տագնապած երգչուհին գլուխը դաշնամուրի ստեղների վրա խոնարհեց։ Բարի դոկտորն ասա, թե Աննիի ջղերը գրգռված են, և առաջարկեց, որ բոլորն էլ նրան զբաղեցնելու համար թուղթ խաղան, թեև ինքը այս բանին այնքան էր հմուտ, որքան ավագափող հնչեցնելուն։ Ես նկատեցի, որ Հին Զինվորը նրան անմիջապես իր պաշտպանության տակ դրեց, իբրև խաղակից, և դոկտորի ամբողջ արծաթը շատ չանցած քաջ զոքանչի գրպանը մտավ։

Խաղը շատ զվարճալի էր, մանավանդ դոկտորի կատարած սխալների պատճառով, որոնք, թիթեռների արթուն հսկողության հակառակ՝ անդադար կրկնվում էին։ Մրս. Ստրոնգն իր թուլությունը պատճառ բռնելով խաղից հրաժարվեց, հրաժարվեց և մր. Մելդրընը, որովհետև պիտի գնար ճամփու համար մի քանի բան կապելու։ Կապելու բաները երևի շատ չէին, որ իսկույն վերադարձավ և մորաքրոջ աղջկա մոտ բազմոցի վրա նստելով, սկսեց նրա հետ կիսաձայն խոսել։ Տիկինը երբեմն վեր էր կենում և դոկտորին մոտենում՝ ցույց տալու նրան, թե ինչպես պետք է խաղալ։ Տիկինը շատ գունատ էր և կարտերը մատով ցույց տալիս կարծես դողում էր, բայց դոկտորը նրա ցույց տված ուշադրությամբ միանգամայն երջանիկ էր և ոչ մի բան չէր նկատում։

Ընթրիքի ժամանակ ընդհանուր զվարճությունն արդեն հատել էր։ Ամեն մարդ զգում էր, թե որքան անախորժ է այս տեսակ բաժանումը, և քանի հրաժեշտի րոպեն մոտենում էր, այնքան էլ հյուրերի տխրությունը սաստկանում էր։ Մր. Մելդրընը փորձեց խոսակցությունը վառ պահել, բայց հաջողություն չունեցավ, և այնպես փչացրեց գործը, որ Հին Զինվորն էլ չկարողացավ ուղղել իր անվերջ զրույցներով՝ մր. Ջոնի պատանեկության օրերից։

Դոկտորը սակայն համոզված էր, որ իր ներկայությամբ երջանկացնում է ամենքին։ Նա շատ գոհ էր, կարծելով, թե մենք էլ գոհ ու զվարթ ենք։

– Աննի, հոգյակ իմ,– ասաց նա ժամացույցին նայելով և իր բաժակը լցնելով,– ահա և Ջոնի մեկնելու ժամը հասել է, և մենք նրան չենք բռնի, որովհետև ժամանակն ու ծովի խաղացքը ոչ ոքի չեն սպասում։ Մր. Ջոն Մելդրըն, ձեր առջև մի երկար ճանապարհ կա և մի հեռավոր օտար երկիր, սակայն շատերն են այդպիսի ճանապարհ կտրել և պիտի կտրեն մինչև աշխարհի

[24] Սինդբադը մի ծովագնաց է «Հազար ու մի գիշերներից»։

վախճանը։ Այն հողմերը, որոնց հետ մաքառելու եք, բախտի են հասցրել բյուրավոր մարդկանց և բյուրերին երջանիկ վերադարձրել դեպի տուն։

– Սակայն ո՛ր կետից էլ բանի վրա նայենք,– ասաց մրս. Մարկլիեմը,– չի կարելի չհուզվել, երբ մի պատվական երիտասարդ, որին մանկությունից ճանաչել ենք, հանկարծ աշխարհի մյուս ծայրն է գնում, թողնելով ամենքին, որոնց սիրել է, անտեղյակ այն բոլորին, ինչ-որ գտնելու է օտար աշխարհում։ Մի այսպիսի զոհաբերություն անող երիտասարդն արդարև պաշտպանության և օգնության արժանի է,– հարեց նա, շեշտակի դոկտորին նայելով։

– Ժամանակն արդարև է, մր. Մելդրըն,– շարունակեց դոկտորը,– և իրերի բնական ընթացքին նայելով՝ մեզնից ոմանք հազիվ թե արժանանան կրկին ձեր տեսությանը։ Սակայն լավ է հուսով ապրել, և ես հուսով եմ, որ ձեր վերադարձը կտեսնեմ։ Չեմ ուզում խրատներով հոգնեցնել ձեզ։ Դուք վաղուց ունեցել եք աչքի առջև մի պատվական օրինակ. այդ Աննին է, ձեր ազգականը։ Ջանացեք որքան կարելի է, նրա նման առաքինի լինել։

Մրս. Մարկլիեմը գլուխը շարժելով հովհարում էր իր երեսը։

– Գնաք բարով, մր. Ջոն,– ասաց դոկտորը վերկենալով. մենք էլ իսկույն վեր կացանք։– Մաղթում եմ ձեզ թեթև ճանապարհ, գործերիդ հաջողություն և երջանիկ վերադարձ։

Մենք բոլորս այս կենաց բաժակը պարպեցինք և բոլորս մր. Ջոն Մելդրընի աջը սեղմեցինք. նա իսկույն հրաժեշտ առավ տիկնանցից և արագ-արագ դուրս վազեց։ Դռան առջև շարված աշակերտները, հենց որ նա կառք նստեց որոտագին կեցցե՛ հնչեցրին։ Աշակերտների խումբն ստվարացնելու համար ես էլ նրանց միացա և փոշու միջով կառքի հետևից վազ տալիս տեսա, որ մր. Ջոն Մելդրընը շատ հուզված էր և ձեռքին մի վարդագույն բան ուներ բռնած։

Նորից մի եռյակ հուռա ի պատիվ դոկտորի և մի եռյակ հուռա ի պատիվ դոկտորի կնոջ գոռալուց հետո, աշակերտները ցրվեցին, իսկ ես նորից ներս մտա, ուր բոլոր հյուրերին դոկտորի շուրջը կանգնած գտա։ Նրանք պատմում էին, թե մր. Ջոն Մելդրընը ինչպես բաժանվեց, ինչպես արիություն ցույց տվեց, ինչեր զգաց, և այլն և այլն։ Այս զրույցների միջոցին մրս. Մարկլիեմը հանկարծ գոչեց.

– Որտե՞ղ է Աննին։

Աննին չկար։ Սկսեցին կանչել։ Աննին պատասխան չէր տալիս։ Բայց երբ բոլորս միասին դահլիճից դուրս վազեցինք տեսնելու, թե լեդին ի՞նչ եղավ, նրան նախասենյակի հատակի վրա փռված գտանք։ Սոսկալի աղմուկ բարձրացավ։ Շուտով տեսան, որ դեռ շնչում է, և սկսեցին ուշքի բերել։ Այն ժամանակ դոկտորը, կնոջ գլուխը ծնկի վրա դնելով, նրա մազերն արձակեց և ասաց.

– Խեղճ Աննի։ Որքան զգայուն, որքան քնքուշ ու հավատարիմ է սրա սիրտը։ Չի կարողացել բաժանվել իր մանկության ընկերոջից, իր մտերիմ բարեկամից, իր մորաքրոջ տղայից։ Ա՛խ, այս ի՛նչ ցավալի բան է։

Երբ տիկինն աչքերը բացեց ու նկատեց, թե որտեղ է և ովքեր են իր շուրջը, դոկտորի թեթև օգնությամբ ոտքի կանգնեց և գլուխը շուռ տվեց, դոկտորի ուսին դնելով կամ ծածկելով – չգիտեմ ո՞րը։ Մենք դահլիճ վերադարձանք, թողնելով նրան դոկտորի և մոր հետ, սակայն նա հայտնեց, թե արդեն իրեն լավ է զգում և կցանկանար մեզ հետ լինել, նրան ներս բերին ու բազմոցի վրա նստեցրին։ Նա սաստիկ գունաթափ էր և դեռ շատ թույլ։

– Հոգյակ իմ, Աննի,– ասաց մայրը, նրա զգեստի չգիտեմ ո՛ր մասն ուղղելով։– Կարծեմ ժապավենդ կորցրել ես... Պարոններ, ո՞վ կգտնի Աննիի վարդագույն ժապավենը։

Այդ այն ժապավենն էր, որ մրս. Ստրոնգը կպցրել էր իր կրծքին։ Փնտրեցին, ես էլ փնտրեցի, բայց ոչ ոք չգտավ։

– Չե՞ս հիշում, Աննի, թե փոքր-ինչ առաջ ժապավենդ որտե՞ղ էր,– հարցրեց մայրը։

Ես զարմացա, թե ինչպես մրս. Ստրոնգը, որ մինչ այդ այնքան գունատ էր, հանկարծ կրակի նման կարմրեց, երբ ասաց, թե փոքր-ինչ առաջ ժապավենն իր վրա էր, բայց չարժի որոնել։

Այնուամենայնիվ շարունակեցինք պրպտել, սակայն դարձյալ անհաջող։ Նա աղաչում էր, որ այլևս չպտրտենք, բայց մենք նորից մի քանի անգամ դեսուդեն ընկանք, թեև իզուր։ Վերջապես լեդին լրիվ ուղղվեց, և հյուրերը հրաժեշտ առան նրանից։

Մր. Ուիկֆիլդը, Ագնեսը և ես հանդարտ քայլերով վերադառնում էինք դեպի տուն։ Ագնեսն ու ես հիանում էինք պայծառ լուսնով, իսկ մր. Ուիկֆիլդն աչքերը ներքև ուղղած էր առաջ գնում։ Տուն որ հասանք, Ագնեսը հիշեց, որ իր ձեռագործի պայուսակը մոռացել է դոկտորի մոտ։ Ես իսկույն ետ վազեցի, ուրախանալով, որ կարող եմ փոքրիկ ծառայություն անել նրան։

Մտա սեղանատուն, ուր պայուսակը թողնված էր։ Այնտեղ մութն էր և մարդ չկար. բայց դոկտորի գրասենյակի դուռը դեռ բաց էր և միջից լույս էր երևում։ Այնտեղ մտա ասելու, թե ինչո՞ւ եմ եկել և մի մոմ խնդրեցի։

Դոկտորը բազկաթոռում վառարանի մոտ նստած էր, իսկ նրա ոտքերի տակ մի ցածր աթոռակի վրա կինն էր նստած։ Դոկտորը հաճության ժպիտով մի ձեռագիր էր կարդում նրան՝ երևի անվերջ արմատների մասին. կինը շարունակ նայում էր նրան, բայց այնպիսի արտահայտությամբ, որի նմանը ես դեռ երբեք չէի տեսել։ Արդյոք ի՞նչ էին մտադիր ասել նրա դեմքի սքանչելի դիմագծերը, նրա սփրթնաց երեսը, նրա մերթ տրտում, մերթ մոլոր, մերթ ահաբեկ հայացքը – չգիտեմ։ Նրա աչքերը պշնված էին, իսկ սև-սև գանգուրներն սպիտակ զգեստի վրա փռված, որ վարդագույն ժապավենից արդեն զուրկ էր։ Ճշտությամբ մտաբերում եմ այդ հայացքը, բայց չնայած արդեն հասուն դատողությանս, այսօր անգամ անզոր եմ ասել՝ արդյոք ի՞նչ էր արտահայտում։ Զղջում, ամոթ, գոռոզություն, սեր, հավատ, վստահություն – այս բոլորն էլ կար, բայց կար և ահաբեկ զարհուրանքը՝ արդյոք ինչի՞ց – չգիտեմ։

Իմ ներս մտնելը և բան հարցնելը սթափեցրեց նրան, սակայն կարծեմ դոկտորին էլ փոքր-ինչ շփոթեցրեց։ Երբ ետ եկա, վերցրած մոմս սեղանի վրա դնելու, դոկտորն արդեն չէր կարդում, այլ հայրական զգվանքով շոյում էր կնկանը և ասում, թե ինքը մի անգութ ինքնասեր է, որ չարչարում է նրան այդպիսի բաներ կարդալով, փոխանակ խնդրելու, որ նա գնա հանգստանա։

Սակայն կինը արագ ու ստիպողաբար մարդուն խնդրեց, որ թույլ տա իրեն նստած մնալ։ Թույլ տա իրեն (ինչպես որ իմացա նրա կցկտուր մրմունջից) այս երեկո էլ վստահ լինել, թե վայելում է նրա հավատարմությունը։ Դուրս գալուս րոպեին նա իմ վրա մի թռուցիկ ակնարկ նետեց և ձեռքերը դոկտորի ծնկին դեմ տալով, նորից սկսեց առաջվա պես մտիկ տալ նրան, սակայն այս անգամ ավելի մեղմ հայացքով, իսկ դոկտորը ձեռագրի ընթերցումը շարունակեց։

Այս պատկերը մի շատ ազդու տպավորություն արեց վրաս և երկար ժամանակ անցնելուց հետո ես հիշեցի նրան մի առթիվ, որի մասին պատմելու եմ իր տեղում։

ԺԷ. ԳԼՈՒԽ
Մեկը նորից լույս է ընկնում

Իմ փախուստից ի վեր Պեգգոտիի մասին խոսելու առիթ չէի ունեցել, բայց ինքն իրեն հասկանալի է, որ Դուվր հասնելուս պես նրան մի նամակ գրեցի. մի նամակ էլ գրեցի, որի մեջ մանրամասն պատմում էի այն բոլորը, ինչ-որ տատիս տանը վիճակվեց ինձ։ Իսկ երրորդը գրեցի դոկտոր Ստրոնգի վարժարանը մտնելուց հետո. դա մի երկար նամակ էր՝ երջանիկ կացությունս և հույսերս նկարագրող։ Դժվար թե մր. Դիկի ընծայած դրամը ծախսելուցս այնքան զվարճություն զգացած լինեի, որքան զգացի երրորդ գրությանս հետ Պեգգոտիին կես գինե ուղարկելով առած պարտքիս փոխարեն, և ահա այդ նամակումն է, և ոչ թե առաջ, որ նրան իշատեր սայլապանի գողության դեպքը պատմեցի։

Պեգգոտին իմ բոլոր նամակներիս այնպես շուտ էր պատասխանում, ինչպես մի առևտրական գործակատար, թեև ոչ շատ համառոտ։ Իր ամբողջ մատենագրական հանճարը սպառելով, նա բացատրում էր, թե ինչ անհանգստություն էր պատճառել նրան իմ ուղևորությունը։ Զայնարկության անթիվ նշաններով և անկապ դարձվածներով առատ ու զեղուն չորս երեսներ, ուր կետերի տեղ միայն թանաքի խոշոր բծեր էին երևում, չէին բավել այդ տագնապը փարատելու։ Սակայն նամակի բծերն ամենաճարտար շարադրությունից ազդու էին, որովհետև ցույց էին տալիս, որ Պեգգոտին իր գրությունը ծայրեծայր արտասուքով է հեղեղել, մի՞թե կարելի էր դրանից ավելի բան պահանջել։

Պարզ տեսնում էի, որ Պեգգոտին դեռ շարունակում է ծուռ աչքով նայել տատիս, և ակներև էր, որ դժվարանում է մի նպաստավոր կարծիք կազմել նրա մասին։ «Զարմանք բան է,– գրում էր նա,– որ մինչև այժմ այդ միս Բեթսիի մասին ոչ մի լավ բան չէինք լսել և հանկարծ դուրս է գալիս, որ նա այն չէ, ինչ-որ միշտ կարծում էր, այ քեզ հրաշք»։ Երևում էր, որ Պեգգոտին դեռ միս Բեթսիից վախենում է, որովհետև մեծ զգուշությամբ էր բարևում նրան։ Իսկ իմ մասին կարծում էր, թե Դուվրից էլ փախուստ կտամ։ Այս կարելի էր հետևեցնել նրա բազմաթիվ ակնարկներից, թե Յարմաութ հասնելը շատ հեշտ բան է, բավական է միայն, որ ես նրանից հանրակառքի փող ուզեմ։

Նրա հաղորդած մեկ լուրը վերին աստիճանի վշտացրեց ինձ։ Գրում էր, թե մեր վաղեմի տան կահ-կարասին աճուրդով վաճառվել է. թե մր. Մեռրդստոնն ու նրա քույրը քաշվել գնացել են մի ուրիշ տեղ, և թե տունը փակված է՝ վաճառվելու կամ վարձվելու նպատակով։ Աստծուն հայտնի է, որ նրանց օրով ես մաս չունեի այդ տան մեջ, բայց և այնպես ցավում էի, որ մեր սիրելի հայրենի տունը, մեր այդ հին օթևանն այժմ թողնված է, պարտեզը մոլախոտով բուսած և բոլոր շավիղները տերևներով ծածկված։ Երևակայում էի, թե ինչպես ձմեռվա սառը քամին ոռնում է տան շուրջը, ինչպես անձրևը ծեծում է պատուհանների ապակին, և ինչպես լուսինը ուրվականների ստվերներ նկարում սենյակների մեջ, ամբողջ գիշեր ամայության վրա հսկելով։ Հիշում էի և հանգստարանը, ծառի տակի երկու լռիկ գերեզմանները, և ինձ թվում էր, թե մեր տունն էլ այժմ մեռել է և նրա հետ միասին ամեն բան, ինչ որ դեռ մի կապ ուներ հայրիկիս ու մայրիկիս հետ անհետացել, չքացել է։

Ուրիշ նորություններ չկային Պեգգոտիի նամակներում։ Մր. Բարկիսը, գրում էր նա, մի պատվական ամուսին է, չնայած փոքր-ինչ ագահ է. «բայց բոլորս էլ պակասություններ ունենք, մանավանդ ես», ավելացնում էր Պեգգոտին (թեև դրանք մինչև այսօր էլ ինձ անհայտ են)։ Նա բարևում էր ինձ մր. Բարկիսի կողմից և ասում, թե իմ փոքրիկ ննջարանը միշտ ինձ համար պատրաստ է։ Մր. Պեգգոտին առողջ է, Հեմն էլ առողջ է, մրս. Գըմիջն էլ առաջվա պես ոչ լավ է, ոչ վատ, իսկ փոքրիկ Էմլին չի կամենում ողջունել ինձ, այլ ասում է, որ Պեգգոտին նրա փոխարեն բարևի, եթե ուզենա։

Այս բոլորը հարկ համարեցի ճշտությամբ իմացնել տատիս, լռության տալով միայն Էմլիի անունը, դեպի որը նա, իմ կարծիքով չէր կարող մի առանձին սեր տածել։

Դոկտոր Ստրոնգի վարժարանը մտնելուս առաջին ամիսները միս Բեթսին շուտ-շուտ էր Կենտրբերի գալիս ինձ տեսնելու, և միշտ այնպիսի ժամանակ, երբ չէի սպասում նրան։ Հավանական է, որ ուզում էր հանկարծակի վրա հասնել։ Սակայն միշտ տեսնելով ու լսելով, որ ես զբաղված եմ, որ ինձ լավ եմ պահում, ուսման մեջ էլ առաջադեմ եմ, այս անակնկալ արշավանքներին վերջ տվեց։ Այնուհետև շաբաթ օրերն էի տեսնում նրան՝ ամիսը մի և կամ շատ-շատ՝ երկու անգամ, երբ Դուվր էի գնում՝ կիրակին նրա մոտ անցնելու։ Իսկ մր. Դիկը ինձ մոտ գալիս էր հանրակառքով երկու շաբաթը մի անգամ չորեքշաբթի օրերը, և հետևյալ օրը վերադառնում։

Մր. Դիկն ամեն անգամ մի կաշվե պայուսակ էր բերում իր հետ՝ որի մեջ գրելու զանազան պարագաներ և հիշատակարանի թերթերն էին պահված։ Այս հիշատակարանի մասին ասում էր, թե արդեն շտապելու և շուտով վերջացնելու ժամանակն է։

Մր. Դիկը շատ էր սիրում չամչով կտապ, և նրա այցելություններն ավելի գրավիչ անելու մտքով տատս ինձ պատվիրել էր նրա համար հաշիվ բանալ մի հացթուխի կրպակում, բայց միայն այն պայմանով, որ կրպակը օրական մի շիլինգի գաթա տա, և ոչ ավելի։ Այս խիստ պայմանը և այն հանգամանքը, որ մր. Դիկի իջևանած հյուրանոցի բոլոր հաշիվները վճարելուց առաջ նախ տատիս պիտի ուղարկեին, առիթ էր տալիս ինձ կարծելու, թե մր. Դիկը իր փողերը միայն գրպանի մեջ հնչեցնելու իրավունք ունի, բայց ոչ թե ծախսելու։ Հետո իմացա, որ ենթադրությունս ճշմարիտ է. մր. Դիկի ու տատիս միջև համաձայնություն էր կայացել, որի զորությամբ առաջինը պարտավոր էր իր բոլոր ծախսերի մասին միշտ հաշիվ տալ երկրորդին։ Եվ որովհետև մր. Դիկի մտքով անգամ չէր անցել տատիս խաբել և կամ նրան անհաճո մի բան անել, ուստի միշտ զգուշացնում էր ամեն ավելորդ ծախսերից։ Այս և ուրիշ շատ կետերի վերաբերմամբ մր. Դիկը համոզված էր, որ աշխարհիս երեսին իմ տատից խելոք կին չկա, և այս բանը կրկնում էր ինձ հարյուր անգամ, բայց միշտ ականջիս փսփսալով, իբրև գաղտնիք։

Մի չորեքշաբթի մր. Դիկը դարձյալ տատիս մասին խոստովանություն անելուց հետո, խորհրդավոր կերպով հարցրեց.

– Չգիտե՞ս, Տրոտուդ, ո՞վ է այն մարդը, որ միշտ մեր տան մոտերքում ման է գալիս և նրան վախեցնում։

– Ում վախեցնում, տատի՞ս։

Մր. Դիկը ցածր խոսելու նշան արեց։

– Բանն էլ այդ է,– ասաց մր. Դիկը։– Ես ինքս առաջ կարծում էի, թե աշխարհումս ոչ մի բան չի կարող միս Բեթսիին վախեցնել, որովհետև նա... (մր. Դիկը ձայնն իջեցրեց) խնդրեմ այս մասին դու ոչ ոքի չասես... որովհետև նրանից խելոք ու զարմանալի կին չկա։

Այս ասելուն պես նա մի երկու քայլ ետ քաշվեց դիտելու, թե տատիս նկարագիրն ի՞նչ տպավորություն գործեց վրաս։

– Առաջին անգամ նա երևաց... – շարունակեց մր. Դիկը,– սպասիր, հիշեմ... հազար վեց հարյուր քառասունինը թվին էր, որ Կարլոս թագավորին գլխատեցին։ Դու էլ կարծեմ ասացիր, որ հազար վեց հարյուր քառասուներինին էր, չէ՞։

– Այո, սըր։

– Չեմ հասկանում,– ասաց մր. Դիկը շփոթվելով ու գլուխը վշտագին շարժելով։– Մի՞թե ես այդքան ծերացել եմ։

– Ա՞յդ թվականին երևաց մարդը,– հարցրի ես։

– Հարկավ,– ասաց մր. Դիկը։– Սակայն չեմ կարող, Տրոտուդ, ըմբռնել, թե ինչպե՞ս կարող էր այդ թվականին երևալ։ Իսկ դու այդ թվականը որտեղի՞ց գիտես։ Պատմությունի՞ց։

– Այո՛, սըր։

– Պատմությունը հո ոչ մի ժամանակ չի՞ խաբի,– ասաց մր. Դիկը, և նրա երեսի վրա մի հուսո նշույլ երևաց։

– Ոչ երբեք, սըր,– պատասխանեցի ես հաստատ կերպով։

Ես դեռ շատ միամիտ էի ու վստահ, թե ասածս իրոք ճշմարիտ է։

– Բանը սաստիկ խառնվում է,– ասաց մր. Դիկը մտմտալով։– Մի սխալմունք սպրդած կլինի որևէ տեղ։ Ինչևիցե՝ այն մարդը իսկ և իսկ այն միջոցին երևաց, երբ Կարլոս առաջինի գլխում եղած շփոթության մի մասը իմ գլխի մեջ ածեցին։ Ես և միս Տրոտուդը նոր էինք թեյից հետո զբոսնելու գնացել, և արդեն սկսել էր մթնել, երբ ճիշտ մեր տան մոտերքում այն մարդը բուսավ։

– Գուցե նա էլ զբոսնում էր,– ասացի ես։

– Զբոսնո՞ւմ,– կրկնեց մր. Դիկը։– Հապա մի լավ մտաբերեմ։ Ո՛չ... ո՛չ, ո՛չ։ Չէր զբոսնում։

Բանի էությունն իմանալու համար հարցրի, թե ուրեմն ի՞նչ էր անում այդ մարդը։

– Ինչպես թե ի՞նչ,– կրկնեց մր. Դիկը։– Բայց նա բնավ այնտեղ էլ չէր. միայն փոքր-ինչ հետո մոտեցավ միս Բեթսիին և ինչ-որ բան շշնջաց նրան։ Տատդ շուռ եկավ և ուշաթափ վայր ընկավ։ Ես հանգիստ մտիկ տվի մարդուն, և նա գնաց։ Ո՞ւր գնաց, գետի՞ն անցավ, թե՞ մի ուրիշ տեղ, չգիտեմ։ Ահա այս է զարմանալին։ Բայց անպատճառ մի տեղ գնաց թաքնվելու։

– Եվ այն օրից մինչև այժմ թաքնվա՞ծ է,– հարցրի ես։

– Անպատճառ,– պատասխանեց մր. Դիկը, գլուխը լրջորեն շարժելով։– Թաքնված էր, և միայն երեկ գիշեր նորից երևաց։ Երեկ գիշեր, մինչ մենք զբոսնում էինք, նա դարձյալ մոտեցավ միս Բեթսիի հետևից, և ես նրան իսկույն ճանաչեցի։

– Եվ նորի՞ց տատիս վախեցրեց։

– Տատդ սարսռաց,– ասաց մր. Դիկը, տատիս ցնցումը պատկերացնելով և ատամները կրճտելով։– Ցանկապատին հենվեց, լաց եղավ։ Սակայն, Տրոտուդ, հապա այստեղ եկ,– ավելացրեց մր. Դիկը, ինձ իր մոտ քաշելով, որ ավելի լավ կարողանար ականջիս մեջ փսփսալ։– Ինչո՞ւ նա փող տվեց մարդուն այն լուսընկա գիշերը, ա՛յ տղա։

– Երևի թե մարդը մուրացկան էր։

Մր. Դիկը գլուխը թոթվեց, այս ենթադրությունս միանգամայն մերժելու համար, և նույն շարժումը մի քանի անգամ սաստկությամբ կատարելուց հետո ասաց.

– Ո՛չ, ո՛չ, ի՞նչ մուրացկան։ Մուրացկան չէ՛ր։

Հետո պատմեց, թե իր պատուհանից տեսել է, ինչպես տատս հենց նույն գիշերը լուսնի լույսի տակ, ցանկապատի մոտ, փող տվեց մարդուն, մարդն էլ անհետացավ, երևի թե գետինն անցավ, և մյուս անգամ չերևաց. իսկ տատս շտապով ու թաքուն տուն մտավ, և առավոտյան մի ուրիշ տեսակ էր, էլ այնպես չէր, ինչպես որ միշտ։ Այս բոլորը սաստիկ զարմացրել էր մր. Դիկին։

Այդ պատմության սկզբին ես տարակույս անգամ չունեի, որ անծանոթը մր. Դիկի երևակայության արդյունք է՝ այն թշվառ թագավորի նման, որ նրան այնքան մտատանջություն էր պատճառում. սակայն փոքր-ինչ հետո սկսեցի ինքս ինձ հարցնել – արդյոք որևէ փորձ կամ սպառնալիք չէ՞ին արել՝ տատիս ձեռքից մր. Դիկին կորզելու համար, և տատս, որի մարդասեր խնամքը նրա մասին ինձ հայտնի էր, մի գումար չէ՞ր տվել, որ իր մտերմին հանգստիտ թողնեն և նրա խաղաղությունը չվրդովեն։ Բնական է, որ ես ինքս մր. Դիկին շատ սրտակից և նրա բարօրության նախանձախնդիր լինելով, նրան կորցնելու երկյուղից մի այսպիսի ենթադրություն անեի։ Այս պատճառով երկար ժամանակ, հենց որ նրա գալու չորեքշաբթին հասնում էր, ասում էի ինձ, արդյոք դարձյալ ժպիտն երեսին կտեսնե՞մ նրան դիլիժանսում։ Սակայն նա առաջվա պես ժպիտն երեսին, միշտ գոհ ու զվարթ գալիս էր, բայց այն մարդու մասին, որ տատիս վախեցնելու քաջություն էր ունեցել, էլ բնավ չէր ասում։

Այս չորեքշաբթիները մր. Դիկի ու ինձ համար ամենաերջանիկ օրերն էին։ Շուտով նա բոլոր ընկերներիս հետ ծանոթացավ, և թեպետ բացի ֆռռան թողնելուց, ուրիշ խաղի չէր մասնակցում, բայց սաստիկ հետաքրքրվում էր մեր մյուս զբոսանքներով։ Քանի անգամ տեսել եմ, թե ինչպես էր ակնապիշ դիտում գնդակի կամ շոնչանի շարժումները և գրեթե շունչը բռնում խաղի տագնապիչ րոպեներին։ Քանի անգամ տեսել եմ նրան բլրակի վրա կանգնած գլխարկը ճոճելով ցնծության ձայն հանելիս, երբ աշակերտներն սկսում էին «նապաստակ ու շուն» խաղալ. այսպիսի րոպեներին նա մոռանում էր և թշվառ Կարլոսին, և դրա բոլոր

արկածները, և իր հիշատակարանը և ամեն բան։ Ինչքա՜ն երջանիկ ժամեր անցրեց իմ ալևոր բարեկամը մեզ հետ միասին ամառը դաշտում պտտելիս։ Որքա՜ն ժամեր ձմռան ցրտից քիթն ու բերանը կարմրած՝ լճի ափին սպասեց, մինչև մենք սառցի վրա չմուշկներով սահում էինք, իսկ նա զվարթ ծափ տալիս սրտի անչափ հրճվանքից։

Բոլոր աշակերտները մր. Դիկին սիրեցին, և նրա հնարագիտությունը փոքրիկ բաներում ընդհանուր հիացման առարկա դարձավ։ Նա գիտեր այնպիսի ձևեր կտրել նարնջի կճեպից, որ մեր մտքով անգամ չէր անցնի. գիտեր ինչ բանից ասես նավակ շինել. կարող էր ամենահասարակ ոսկոռի կտորից ճատրակի քարեր պատրաստել. հին խաղաթղթերից հռոմեական երկանիվ կառքեր ստեղծել. թել փաթաթելու կոճից անիվ տաշել և հին լարերից թռչունի վանդակ հյուսել։ Սակայն գոցե ոչ մի բանում նրա հանճարը այնքան չէր փայլում, որքան հարդից ու շվանից շինվող բաների մեջ. մենք բոլորս համոզված էինք, որ այս նյութերից մր. Դիկն ընդունակ է շինել ամեն բան, ինչ-որ միայն կարելի էր շինել մարդկային ձեռքով։

Մի քանի ժամանակներից հետո մր. Դիկի ճարտարության հռչակը նաև դոկտոր Ստրոնգին հասավ։ Մի չորեքշաբթի դոկտորն անձամբ մի քանի բան հարցրեց ինձնից նրա մասին. ես էլ ինչ որ իմ տատից գիտեի, պատմեցի։ Պատմությունս վերին աստիճանի հետաքրքրեց դոկտորին, և նա կամեցավ, որ մր. Դիկի հետևյալ այցելության ժամանակ ես նրանց իրար հետ ծանոթացնեմ։ Ծանոթությունը տեղի ունեցավ, և հենց նույն օրը դոկտորը խնդրեց մր. Դիկին, որ նա երբեք դիլիժանսների կայարանում կանգ չառնի, այլ ժամանելուն պես՝ առանց ինձ սպասելու, անմիջապես դպրոց գա և մինչև առավոտյան դասերի վերջանալը հանգստանա։ Այնուհետև մր. Դիկը սովորություն արեց ուղղակի վարժարան գալ, և,– եթե մեր դասերը երկարեին, ինչպես որ հաճախ պատահում էր չորեքշաբթի օրերը,– զբոսնել բակում, իմ դուրս գալուն սպասելով։ Ահա այստեղ նա ծանոթացավ դոկտորի ջահել ամուսնու հետ, որ վերջերս սովորականից ավելի գունատ էր, ավելի տխուր և շատ սակավ էր երևում մեզ, թեև առաջվա պես սիրուն էր։ Այն օրից սկսած մր. Դիկը համարձակություն առավ ոչ միայն բակում, այլև դասարանում անգամ սպասելու ինձ։ Դասարան մտնելիս նա նստում էր անկյունում միշտ միևնույն աթոռի վրա, որը և այս պատճառով «Դիկ» էր կոչվել։ Աթոռի վրա հանդարտ նստած, գլուխը առաջ հակելով, ալևորը մեծ ուշադրությամբ ականջ էր դնում դասերին և ակնածում մանավանդ այն առարկաներից, որ ինքը երբեք չէր սովորել։

Այս ակնածության մի մասը նա ընծայում էր դոկտորին, որի նման գերիմաստ ու նրբամիտ փիլիսոփա, իր կարծիքով, դեռ ոչ մի դար չէր տեսել։ Ամիսներ անցան, մինչև որ մր. Դիկը վստահաբար գլխարկը չհանած խոսեց նրա հետ։ Մինչև անգամ այն ժամանակ, երբ նրանք արդեն մտերմացել էին և ժամերով միասին ման էին գալիս բակի այն մասում, որ «Դոկտորի ճեմելիք» էր կոչվում, մր. Դիկը, մերթընդմերթ դոկտորի անհուն իմաստությունն ու գիտությունը արժանապես հարգելու համար, իր գլուխը մերկացնում էր։ Արդյոք ի՞նչ դիպվածով, այս զբոսանքների ժամանակ դոկտոր Ստրոնգն առաջին անգամ առիթ գտավ բարձր ձայնով քաղվածքներ կարդալ իր հռչակավոր բառարանից,– չկարողացա երբեք իմանալ. երևի կարծեց, թե ձայնով կարդալն ու լռիկ կարդալն միևնույն է։ Ինչևիցե, այս բանը սովորություն դարձավ, և մր. Դիկը, որ լսում էր նրան զվարթագին դեմքով, պարծանքով ու բերկրանքով համոզվեց, որ դոկտորի բառարանից սքանչելի գիրք աշխարհումս ոչ եղել է, ոչ էլ կա։

Երբ հիշում եմ, թե ինչպես էին նրանք մեր դասարանի պատուհանների տակ զբոսնում – հիշում եմ մերթ ժպտալով, մերթ գլուխը շարժելով ձեռագիրը կարդացող դոկտորին և հիացմամբ նրան ականջ դնող, բայց և խրթին բառերի թևի վրա աստված գիտե մտքերով ո՞ւր սավառնող մր. Դիկին,– չեմ կարող չասել, որ այդպիսի ակնապարար ու հաճելի պատկեր ես կյանքումս չեմ տեսել։ Ինձ թվում է, որ եթե նրանք կարողանային հավիտյան այնպես հանդարտ ու հեզիկ ճեմել, աշխարհս ավելի հանգիստ կլիներ և նրանց զբոսանքից բոլորիս համար ավելի օգուտ կծագեր, քան հազար ու հազար մեծաշառաչ դեպքերից։

Ագնեսն էլ շուտով մր. Դիկի մտերիմներից մեկը դարձավ: Մր. Դիկը հաճախ մեր տունը գալով, Ուրիասի հետ էլ ծանոթացավ: Մր. Դիկի և իմ բարեկամությունն օրըստօրե սերտանում էր, բայց մեր հարաբերությունները տարօրինակ էին: Ի պաշտոնե նա իմ վերակացուն էր և հատկապես ինձ տեսնելու համար էր գալիս, սակայն իրոք ես էի նրա խորհրդատուն, որովհետև ամեն մանր բաների մեջ մի դժվարություն ծագելուն պես՝ նա իմ կարծիքն էր հարցնում և անպատճառ դրա համեմատ գործ բռնում: Շատ մեծ էր նրա ակնածությունն իմ բնական ուշիմությունից, որի մի մասը նրա համոզումով, տատիցս ժառանգած կլինեի:

Մի հինգշաբթի առավոտ, մինչ մր. Դիկին դեպի դիլիժանսների կայարանն էի ուղեկցում, ճամփի վրա Ուրիաս Հիպը հանդիպեսց մեզ: Նա ինձ իմ խոստումը հիշեցրեց՝ մի օր թեյ ընդունելու իր մոր տանը, և գալարվելով հարեց.

– Թեև ճշմարիտն ասած, մաստր Կոպպերֆիլդ, ես հույս չունեմ, որ այս խոստումը կկատարեք . չէ՞ որ մենք չնչին մարդիկ ենք:

Մինչև այդ օրը չէի պարզել, թե արդյոք Ուրիաս Հիպին ես սիրում եմ թե ատում. այս մասին դեռ երկմիտ էի՝ մինչև անգամ, երբ ես փողոցում կանգնած նայում էի նրա երեսին: Սակայն հպարտ համարվելուց ամաչելով, ասացի նրան, թե միայն իր հրավերքին էի սպասում:

– Օ՛հ, եթե միայն այդ էր ձեզ արգելում մեզ մոտ գալ, մաստր Կոպպերֆիլդ,– գոչեց Ուրիասը,– այլ ոչ թե մեր թշվառ կացությունը, ուրեմն արդյոք չէ՞իք հաճի հենց այս երեկո շնորհ բերել: Սակայն, եթե մեր թշվառ կացությունն էր ձեր չգալու պատճառը, հույս ունիմ, որ առանց քաշվելու պարզ կասեք, մաստր Կոպպերֆիլդ, որովհետև մեր խոնարհ վիճակը լավ հայտնի է մեզ:

Պատասխանեցի, թե կխոսեմ մր. Ուիկֆիլդի հետ և եթե նա հավանություն տա, որ վստահ եմ թե կտա, ուրախությամբ կգամ: Եվ այսպես՝ նույն երեկոյան ժամը վեցին, երբ գրասենյակի պարապմունքը վերջացավ, ես հայտնեցի Ուրիասին, թե պատրաստ եմ:

– Ձեր այցելությամբ մայրս անշուշտ կհապարտանա,– ասաց Ուրիասը, երբ միասին դուրս ելանք:– Կամ լավ է ասել՝ կհպարտանար, մաստր Կոպպերֆիլդ, եթե հպարտանալը մեղք չլիներ:

– Եվ, սակայն, այս առավոտ դուք այդպես չէիք մտածում, երբ ինձ հպարտ համարեցիք,– ասացի ես:

– Օ՛հ, մաստր Կոպպերֆիլդ,– պատասխանեց Ուրիասը:– Ամենևին ոչ: Երդվում եմ, որ այդպիսի բան մտքովս անգամ չի անցել: Ես ձեզ հպարտ երբեք չեմ համարի, եթե դուք մեզ նման չնչին էակներից խորշելու լինեիք: Մեզ լավ հայտնի է, որ մենք իրոք փոքր մարդիկ ենք:

– Վերջերս, կարծեմ, շատ էիք նվիրված օրենքների ուսման,– հարցրի ես խոսակցության նյութը փոխելու համար:

– Օ՛հ, մաստր Կոպպերֆիլդ,– ասաց նա խոնարհությամբ,– մի՞թե իմ ընթերցանությունը կարելի է ուսում անվանել: Հազիվհազ կարողանում եմ երեկոները, այն էլ ոչ միշտ, մր. Տիգին մի երկու ժամ նվիրել:

– Դա մի խրթին հեղինակ է, չէ՞:

– Այո՛, երբեմն խրթին է ինձ համար,– ասաց Ուրիասը:– Սակայն մի ընդունակ մարդու ինչպե՞ս կթվա՝ այդ չգիտեմ:

Յուր աջ ձեռքի երկու ոսկրոտ մատներով կզակի վրա զարկելուց հետո նա ասաց.

– Գիտե՞ք, մաստր Կոպպերֆիլդ, մր. Տիգի գրքում այնպիսի բառեր և ասացվածքներ կան, նույնիսկ լատիներեն, որ իրոք դժվարամարս են ինձ նման թերուս ու թուլամիտ ընթերցողի համար:

– Կցանկանայի՞ք լատիներեն սովորել,– հարցրի ես եռանդով։– Ես ինքս ուսանում եմ այդ լեզուն և սիրով դաս կտայի ձեզ։

– Օ՛հ, շնորհակալ եմ, մաստր Կոպպերֆիլդ,– ասաց Ուրիասը գլուխը թոթվելով։– Հավաստի եմ, որ այդ առաջարկը սիրով եք անում, բայց ես չեմ կարող ընդունել։

– Եվ ինչո՞ւ։

– Որովհետև շատ և շատ չնչին մարդ եմ, մաստր Կոպպերֆիլդ։

– Է՛հ, այդ ինչ դատարկ խոսքեր են, Ուրիաս։

– Ո՛չ, խնդրեմ ներեցեք, մաստր Կոպպերֆիլդ։ Անչափ շնորհակալ եմ, մաստր Կոպպերֆիլդ և երդում եմ անում, որ իրոք կցանկանայի սովորել, բայց ես անչափ խոնարհ էակ եմ։ Առանց այն էլ շատերը պատրաստ են ինձ ոտնատակ անել նվաստ դրությանս պատճառով, նրանց զայրույթը որքան կսաստկանա, եթե հանդգնեմ նրանց զգացումը վիրավորել ուսման հետևից ընկնելով։ Ո՛չ, ուսումն ու գիտությունը ինձ համար չեն։ Ինձ նման էակներին ներելի չէ այդպիսի վսեմ բաների ձգտել։ Ինձ պետք է խոնարհությամբ, ծառայաբար առաջ գնալ այս աշխարհում, մաստր Կոպպպերֆիլդ։

Երբեք նրա բերանը այնքան բացված և երեսի ոսկորներն այնքան խորացած չէի տեսել, ինչպես այժմ, երբ նա իր սկզբունքներն էր բացատրում ինձ, շարունակ գլուխը շարժելով ու մարմինը կծկելով։

– Կարծեմ սխալվում եք, Ուրիաս,– ասացի ես։– Հավաստի եմ, որ կարող եմ մի քանի բան սովորեցնել ձեզ, եթե միայն կամենայիք սովորել։

– Այդ մասին ամենևին չեմ կասկածում, մաստր Կոպպերֆիլդ, ամենևին։

– Ուրեմն ինչո՞ւմն է արգելքը։

– Հենց այն բանում, որ այնչափ չնչին մարդ եմ։ Դուք ինձնից այնքան բարձր եք, որ չեք էլ կարող իմ գոյությունը հասկանալ։ Շատ շնորհակալ եմ. չեմ ուզում գիտություն ստանալով, ուրիշներին վիրավորել։ Ես իմ չափը լավ գիտեմ... Ահա մեր խոնարհ տնակը, մաստր Կոպպերֆիլդ։

Մտանք հին ձևով կահավորված մի ցած սենյակ և այնտեղ գտանք մրս. Հիպին, որ որդուն լիովին նման էր, միայն ավելի կարճահասակ։ Նա դիմավորեց ինձ ամենամեծ խոնարհությամբ և ներողություն խնդրեց, որ համբուրում է իր որդուն։

– Ախ, մաստր Կոպպերֆիլդ,– ասաց նա. – թեև մենք շատ չնչին, նկուն մարդիկ ենք, բայց և այնպես սիրում ենք միմյանց, և այս սերը ոչ ոքի կարծեմ չի վիրավորի։

Սենյակը շատ մաքուր էր, սակայն մասամբ դահլիճի էր նմանվում, մասամբ խոհանոցի, և համենայն դեպս դուրեկան չէր։ Սեղանի վրա շարված էին թեյի սպասներ և վառարանի կասկարայի վրա կաթսայով ջուր էր եռ գալիս։ Պատի մոտ դուրս քաշվող գրքակալով մի պահարան կար, որի դիմաց Ուրիասը սովոր էր գիշերները կարդալ կամ գրել։ Այդտեղ էր և նրա կապույտ պայուսակը՝ մինչև բերանը թղթերով լցված։ Դարակի վրա մի քանի գրքեր էին երևում, որոնց մեջ աչքի էր ընկնում մր. Տիգի «Հրահանգը»։ Անկյունում դրված էր մի պահարան տեսակ-տեսակ անոթներով։ Ընդհանրապես կահկարասին անպակաս էր, և չեմ հիշում, որ ջոկ-ջոկ վերցված նրանք անշուք, անշնորհ և կամ գծուծ լինեին. այնուամենայնիվ բոլորը միասին վայելչության ու ճաշակի տպավորություն չէր գործում։

Անշուշտ մրս. Հիպի խոնարհության նշան էր, որ նա դեռ սգի հագուստ ուներ հագին, թեև մարդն արդեն վաղուց էր վախճանվել։ Բացի գունավոր գլխանոցից, տիկնոջ հանդերձի բոլոր մասերն այնպես սև էին մնացել, ինչպես որ էին ննջենցյալի թաղման օրը։

– Այո՛, սիրելի Ուրիաս,– ասաց մրս. Հիպը թեյ ածելով,– մենք միշտ կհիշենք այս օրը, որովհետև մաստր Կոպպերֆիլդն այսօր հաճեցավ շնորհ բերել մեզ մոտ։

– Ես գիտեի, որ այդպես կասես, մայրիկ իմ,– պատասխանեց Ուրիասը։

– Երանի թե, որդյակ իմ,– գոչեց մրս. Հիպը,– հայրդ էլ կենդանի լիներ, որ մեզ հետ միասին կարենար պատվել մեր հյուրին։

Այս բոլոր շողոմներից ես բավական շփոթվեցի, թեև մասամբ գոհ էի, որ ինձ մի մեծարգո հյուրի պես են ընդունում։ Մրս. Հիպը հաճելի տիկին երևաց ինձ։

– Իմ Ուրիասը վաղուց էր սպասում այս պատվին,– ասաց մրս. Հիպը։– Նա վախենում էր, թե մեր խոնարհ կացությունը ձեր այցելության արգելք կլինի։ Ես էլ այդ երկյուղն ունեի, որովհետև մենք խոնարհ էինք, միշտ էլ խոնարհ կմնանք։

– Սակայն, տիկին,– ասացի ես,– ինձ թվում է, թե այդքան խոնարհ լինելու տեղիք չունեք, եթե միայն չկամենաք այդպես երևալ։

– Շնորհակալ եմ, սըր,– պատասխանեց մրս. Հիպը։– Մենք մեր վիճակն ու չափը լավ գիտենք, գիտենք և գոհ լինել։

Ես նկատեցի, որ մրս. Հիպը հետզհետե մոտենում է ինձ, իսկ Ուրիասը քիչ-քիչ ձգտում է ճիշտ իմ դիմացը տեղ ընտրել։ Երկուսն էլ մրցում էին սեղանի ամենալավ ուտելիքներով մեծարել ինձ։ Սեղանի վրա թեև ընտիր բան չկար, բայց մոր և որդու ուշադրությունն ինձ համար թանկ էր։ Նախ և առաջ նրանք սկսեցին տատերից խոսել, ես էլ իմ տատի մասին մի քանի բան պատմեցի, հետո հերթը մայրերին ու հայրերին հասավ, ես էլ իմ ծնողների մասին մի քանի բան ասացի. այնուհետև մրս. Հիպը խորթ հայրերին առաջ քաշեց, ես էլ սկսեցի իմի մասին բան պատմել, բայց իսկույն էլ ձայնս կտրեցի, որովհետև տատս պատվիրել էր լռություն պահել նրա մասին։ Բայց մի փափուկ խցան միթե կարո՞ղ է երկու խցանահանի միաբան ջանքերին դիմանալ, կամ թե մի տկար ատամ՝ մի զորեղ աքցանի ամուր քաշելուն դիմադրել և կամ մի փոքրիկ գնդակ՝ երկու գնդահարի հարվածներին հակառակել։ Մրս. Հիպը և Ուրիասը ինչ-որ կամեցան՝ արին ինձ, և քիչ-քիչ իմ բերանից այնպիսի բաներ դուրս քաշեցին, որ ամենևին մտադիր չէի պատմելու։ Այսօր անգամ ամաչելով պիտի ասեմ, որ նրանց հաջողության պատճառը իմ մանկական հիմարությունն էր. ես հպարտանում էի մեր մտերմական խոսակցությամբ ու կարծում, թե իրոք երկու արգո հյուրնկալների պատրոնն եմ։

Մայրն ու որդին իրար հետ շատ սիրով էին, և այս սերը իբրև մի բնական ու սրտաշարժ երևույթ ազդեց վրաս. սակայն ոչ նվազ ազդեց և այն արվեստական վարպետությունը, որով նրանք իրար միտքն իսկույն ևեթ ըմբռնում էին։ Բավական է, որ մեկը միայն մի բառ ասեր, որպեսզի մյուսն անմիջապես բանի էությունը հասկանար և ըստ այնմ շարունակեր։ Երբ այլևս անձիս մասին իմ միջից դուրս որսալու բան չմնաց (Մեորդստոնի ու Գրինբիի մոտ վարած կյանքիս ու վերջին արկածներիս պատմությունը թաքցրել էի), մայրն ու որդին մր. Ուիկֆիլդին ու Ագնեսին անցան։ Ուրիասն առաջինը գնդակ գցեց մրս. Հիպին, մրս. Հիպը գնդակը բռնեց և ետ նետեց Ուրիասին, Ուրիասը մի քանի վայրկյան պահեց նրան և նորից մոր կողմը շպրտեց. և այս խաղը նրանք այնպես արագ շարունակեցին, որ ես բոլորովին շփոթվեցի և էլ ոչինչ չէի հասկանում։ Գնդակն անդադար փոխվում էր, հազար ու մի ձև ստանալով։ Մերթ նա մր. Ուիկֆիլդն էր, մերթ Ագնեսը, մերթ մր. Ուիկֆիլդի արժանիքը, մերթ իմ զգացումը դեպի Ագնեսը, մերթ մր. Ուիկֆիլդի զգացմունքն ու եկամուտը, մերթ մեր տնային կյանքը, մերթ մր. Ուիկֆիլդի խմած գինին, խմելու պատճառը և ափսոսանքը, թե ինչու է խմում, մերթ մի բան, մերթ ուրիշ բան և վերջապես միանվագ ամեն բան։ Եվ թեպետ այդ միջոցին ես տրամադիր չէի ուրիշ բան անել, միայն քիչ մասնակցել մոր և որդու խոսակցությանը,– որպեսզի լռությունս զոռոզություն չհամարվի և իմ պատվաբեր ներկայությամբ նրանց խոնարհության զգացմունքը չվիրավորվի,– բայց հետզհետե մեկ մի բան, մեկ ուրիշ բան դուրս տալով, այնքան բաներ ասացի, որ ամենևին չպիտի ասեի, և տեսա, որ Ուրիասի շարժուն պինչերը զվարթությունից շուտ-շուտ փակվում են ու բացվում։

Վերջապես վրաս նեղություն եկավ և արդեն ուզում էի հեռանալ, երբ փողոցով անցնող մի պարոն կիսաբաց դռան մոտով անցնելիս արագ սահեց, ետ եկավ, կանգնեց, ներս նայեց ու սենյակը մտավ գոչելով.

– Կոպպերֆի՞լդ: Այս ի՞նչ հրաշք է:

Դա մր. Միկաբրն էր: Նույն ինքը Միկաբրը իր միապակի ակնոցով, իր ձեռնափայտով, իր կանգուն օձիքով, իր վայելուչ շարժումներով և խոսելու սիրալիր եղանակով գլխովին նա էր:

– Սիրելիդ իմ Կոպպերֆիլդ,– ասաց մր. Միկաբրը, աչք տալով ինձ,– ահա մի հանդիպում, որ կարծես մի գիտությամբ է առաջ գալիս բացահայտ կերպով ցույց տալու, թե աշխարհումս ամեն բան անհաստատ է և անստույգ... միով բանիվ՝ սա մի շատ տարօրինակ հանդիպում է: Ման էի գալիս փողոցում, մտածելով, թե գուցե ինձ բախտ ժպտա, որ տակավին հավանական է թվում ինձ, և ահա գտնում եմ մի նորատի, բայց թանկագին բարեկամ, որի հիշատակը կյանքիս ամենախորհրդավոր րոպեի հետ սերտ կապված է, կարող եմ ասել այն րոպեի, որ գոյությանս դարձակետն էր: Կոպպերֆի՛լդ, սիրելի բարեկամ, ինչպե՞ս եք:

Չեմ կարող ասել, իրավ չեմ կարող ասել, թե շատ ուրախացա՝ Հիպի տանը հանդիպելով մր. Միկաբրին, բայց և այնպես գոհ էի, որ նրան տեսա: Ես ամուր սեղմեցի նրա աջը և հարցրի՝ արդյոք առո՞ղջ է մրս. Միկաբրը:

– Շնորհակալ եմ,– ասաց մր. Միկաբրը առաջվա պես ձեռքը ճոճելով ու շապկի օձիքը կզակի տակ շտկելով:– Գրեթե լիովին առողջ է: Երկվորյակներն այլևս բնության աղբյուրներից չեն ծծում իրենց սնուդը... միով բանիվ՝ արդեն կաթից կտրված են... և մրս. Միկաբրը այժմ ինձ ուղեկից է: Նա սիրով պատրաստ կլինի, Կոպպերֆիլդ, նորոգել իր ծանոթությունը մի ազնիվ պատանու հետ, որ ամեն բանում ապացուցել էր, թե բարեկամության սուրբ սեղանին արժանավոր պաշտոնյա է:

Ասացի, թե ուրախ կլինեմ անձամբ հայտնել մր. Միկաբրին իմ ողջույնը:

– Շատ բարի եք,– ասաց մր. Միկաբրը:

Այնուհետև նա ժպտաց, օձիքը նորից դրստեց ու շուրջը նայեց:

– Ահա գտա իմ բարեկամ Կոպպերֆիլդին,– ասաց նա ջենտլմենի եղանակով և առանց որոշակի մեզնից մեկին դիմելու,– և գտա ոչ թե մենության մեջ, այլ իբրև սեղանակից մի այրի տիկնոջ և մի անձի, որ թերևս տիկնոջ շառավիղն է... միով բանիվ՝ նրա որդին (վերջին խոսքերը ջերմ եռանդով ասվեցին), հետևաբար պատիվ կհամարեի ծանոթանալ նրանց հետ:

Ստիպվեցի ներկայացնել նրան Ուրիաս Հիպին և մորը: Մինչ նրանք խոնարհաբար կոտրտվում էին ու գլուխ տալիս, մր. Միկաբրը աթոռի վրա նստեց և ամենավայելուչ շարժում արեց իր ձեռքով:

– Իմ բարեկամ Կոպպերֆիլդի յուրաքանչյուր բարեկամը իրավունք ունի և իմ բարեկամը կոչվելու:

– Ես ու որդիս շատ խոնարհ էակներ ենք, սըր,– ասաց մրս. Հիպը,– և մր. Կոպպերֆիլդի բարեկամությանը անարժան: Նա այնքան բարի է, որ հաճեց մեր տանը թեյ ընդունել, և մենք անչափ շնորհակալ ենք նրանից: Ձեր բարեսեր ուշադրության համար էլ շնորհակալ ենք, սըր:

– Տիկին,– պատասխանեց մր. Միկաբրը գլուխ տալով,– շատ բարի եք: Իսկ դուք ի՞նչ եք անում, Կոպպերֆիլդ, դարձյալ մառանո՞ւմ եք ծառայում:

Չգիտեի ինչպես գլխիցս ցանեմ, շուտով հեռացնեմ մր. Միկաբրին: Գլխարկս վերցրի և, անկասկած, սաստիկ կարմրած երեսիս առջև բռնելով, պատասխան տվի, թե այժմ աշակերտ եմ դոկտոր Ստրոնգի դպրոցում:

– Աշակե՞րտ,– գոչեց մր. Միկաբրը:– Անչափ ուրախ եմ, որ այդպիսի բան եմ լսում: Թեև իմ բարեկամ Կոպպերֆիլդի միտքը մեծաջան մշակության կարոտ չէ,– շարունակեց նա, դիմելով

Որիասին և մրս. Հիպին,– մշակության, որ անհրաժեշտ կհամարվեր, եթե նա արդեն մարդկային բնությանը և աշխարհի որպիսությանը ծանոթ չլիներ, բայց և այնպես նրա խելքն այնքան ճոխ ու արգավանդ երկիր է, որ... միով բանիվ,– նա ընդունակ է կլասիկ գիտության ամենաբարձր գագաթին հասնել։

Ուրիասը իր երկար ձեռքերն իրար շփելով և դեպի վեր նայելով, նշան արեց, թե լիովին համամիտ է այդ կարծիքին։

– Արդյոք չգնա՞նք մրս. Միկաբրին տեսնելու, սըր,– ասացի ես մր. Միկաբրին հեռացնելու համար։

– Սիրով պատրաստ եմ, Կոպպերֆիլդ, եթե կցանկանաք այդպիսի պատիվ ընծայել նրան,– ասաց մր. Միկաբրը վեր կենալով։– Ես չեմ ամաչի ասել այստեղ, մեր բարեկամների ներկայությամբ, որ տարիներից ի վեր ամենասաստիկ կռիվ եմ մղել դրամական տագնապների ճնշման դեմ։

Արդեն գուշակում էի, որ նա մի այդպիսի բան կասի. նա միշտ սիրում էր իր դրամական տագնապներով պարծենալ։

– Եղել է ժամանակ, որ ես եմ հաղթել տագնապներին, եղել է ժամանակ, որ... նրանք են ինձ տապալել։ Շատ անգամ է պատահել, որ սոսկալի ապտակ եմ տվել նրանց երեսին, բայց պատահել է և այնպես, որ նրանց թվական առավելությունից ընկճվել եմ և ասել մրս. Միկաբրին Կատոնի լեզվով. «Ո՛վ Պլատոն, լավ ես դատում։ Ամեն բան վերջացած է։ Ես չեմ կարող այլևս կռվել»։ Սակայն կյանքիս ոչ մի շրջանում այնպիսի մեծ երջանկություն չեմ զգացել, ինչպես այն րոպեներին, երբ ես՝ անգութ պարտատերերի պահանջներով ու դատական վճիռներով շրջապատված՝ կարողացել եմ վշտերս իմ բարեկամ Կոպպերֆիլդի գիրկը թափել, եթե կարելի է վիշտ անվանել նրանց պատճառած նեղությունը։

Այս փառավոր վկայությունը տալուց հետո, մր. Միկոբրն ասաց. «Մր. Հիպ։ Բարի գիշեր։ Ձեր խոնարհ ծառան եմ, մրս. Հիպ» և սիգաճեմ դուրս ելավ ինձ հետ և իսկույն սկսեց ինչ-որ երգ հնչեցնել։

Մր. Միկաբրի իջած պանդոկը մի փոքրիկ տուն էր, իսկ սենյակը հյուրերի դահլիճից մի բարակ պատով բաժանված խցիկ, ուր կարելի էր թութունի հոտից խեղդվել։ Ներքևում անշուշտ խոհանոցն էր, որովհետև հատակի ճեղքերից ճարպի գոլորշի էր բարձրանում և որմերը կարծես քրտնած էին։ Հեռու չէր անշուշտ և բուֆետը, ինչպես կարելի էր օղու հոտից ու բաժակների շրխկոցից գուշակել։ Ահա այս սենյակում մի սրարշավ ձի պատկերացնող նկարի տակ, մի փոքրիկ բազմոցի վրա, գլուխը վառարանին դեմ տված, իսկ ոտքերը՝ սենյակի հակառակ ծայրի կլոր սեղանին, որի վրա երևում էր մանանեխի անոթը, ձգված էր մրս. Միկաբրը։ Մր. Միկաբրը առաջինը ներս մտնելով ասաց նրան.

– Հոգյակ իմ, խնդրեմ ընդունիր դոկտոր Ստրոնգի աշակերտին։

Ի դեպ կասեմ, որ թեև մր. Միկաբրն առհասարակ սովոր էր իմ հասակն ու վիճակը շփոթել, այս անգամ չմոռացավ, որ ես դոկտոր Ստրոնգի աշակերտն եմ, և աշակերտ բառն իբրև մի պատվանուն շեշտեց։

Մրս. Միկաբրը շվարեց, բայց և ուրախացավ ինձ տեսնելով։ Ես էլ շատ ուրախ էի, որ տեսա նրան, և փոխադարձ ողջույններից հետո, նստեցի փոքրիկ բազմոցի վրա նրա կողքին։

– Հոգիս,– ասաց մր. Միկաբրն ամուսնուն,– եթե ուզենաս պատմել Կոպպերֆիլդին մեր արդի կացությունը, որ նա հարկավ կփափագի իմանալ, ես դահլիճ կերթամ լրագիրներ կարդալու. շատ կարելի է, ծանուցումների մեջ որևէ ձեռնտու բան գտնեմ։

– Կարծում էի, տիկին, թե դուք Պլիմութումն եք,– ասացի ես, երբ պարոնը դուրս գնաց։

– Այո, սիրելի մաստր Կոպպերֆիլդ, այնտեղ էինք գնացել։

– Որպեսզի այնտե՞ղ հաստատվեք։

– Ճիշտ այդպես,– պատասխանեց մրս. Միկաբրը։– Սակայն մարդկային հաշիվները երբեմն սխալ են դուրս գալիս։ Մաքսատան մեջ ոչ մի տաղանդ չի պահանջվում, և մինչև անգամ ազգականներիս միջնորդությունը չկարողացավ այդ վարչության մեջ մի պատշաճավոր պաշտոն գտնել մր. Միկաբրի նման ձիրքերով օժտված մարդու համար։ Վարչության կառավարիչները վախեցան, թե մր. Միկաբրի ձիրքերի առջև իրենց ոչնչությունը ավելի աչքի կընկնի։ Բացի այս, սիրելի Կոպպերֆիլդ, չեմ ուզում ձեզնից թաքցնել, որ մեր գերդաստանի Պլիմութում բնակված ճյուղը, իմանալով որ մր. Միկաբրին ուղեկից ենք ես, փոքրիկ Ուիլկինսը, սրա քույրը և երկվորյակները, այն ջերմությամբ չընդունեց նրան, որով սպասելի էր թե կընդունեն գերությունից նոր ազատված ազգականին։ Մեր մեջ մնա,– հարեց տիկինը, ձայնը փոքր-ինչ մեղմացնելով,– մեզ բավական սառը ընդունեցին։

– Զարմանալի բան,– ասացի ես։

– Այո՛,– գոչեց մրս. Միկաբրը։– Թեև դառն է այս կողմից պատկերացնել մարդկությունը, բայց պիտի կրկնեմ, որ մեզ իրոք մեծ սառնությամբ ընդունեցին։ Այլևս տարակույս չկա այս մասին։ Իմ գերդաստանի Պլիմութի ճյուղն այնքան կոպիտ գտնվեց, որ մեր ժամանումից հազիվ մի շաբաթ անց, արդեն անձնական զրկանք հասցրեց մր. Միկաբրին։

– Այդ նրանց պատիվ չի բերում,– նկատեցի ես։

– Պարզ բան է, սակայն այդպես վարվեցին,– շարունակեց մրս. Միկաբրը։– Ի՞նչ կմնար անել այդ դիպվածում մր. Միկաբրի նման հպարտ անձին։ Որիշ ոչինչ, եթե ոչ մի գումար փոխ առնել գերդաստանիս այդ ճյուղից և իսկույն Լոնդոն վերադառալ, ինչ էլ նստեր մեզ այս զոհաբերությունը։

– Այդպես էլ արի՞ք, տիկին։

– Հենց այդպես, և բոլորս Լոնդոն վերադարձանք։ Այնուհետև ես խորհուրդ հարցրի գերդաստանիս մյուս ճյուղի անդամներից, թե մր. Միկաբրը ի՞նչ ասպարեզ ընտրի, որովհետև, մաստր Կոպպերֆիլդ, անհրաժեշտ էր, որ նա ընտրի մի նոր ասպարեզ,– շեշտեց մրս. Միկաբրը, կարծես թե ես հակառակ լինեի այդ մտքին։– Չէ՞ որ վեց անդամից բաղկացած մի ընտանիք, առանց հաշվելու աղախնուն, օդով ապրել չի կարող։

– Հարկավ չի կարող,– ասացի ես։

– Արդ, գերդաստանիս մյուս ճյուղի անդամները միաբերան վճռեցին, որ մր. Միկաբրը իր ուշադրությունն անմիջապես քարածխի վրա դարձնի։

– Ի՞նչ բանի վրա, տիկին։

– Քարածխի վրա, մաստր Կոպպերֆիլդ, այսինքն՝ քարածխի առևտուր սկսի։ Մր. Միկաբրը հարցուփորձ արեց և տեսավ, որ իր ձիրքերի պես մարդու համար կարող է մի ձեռնտու ասպարեզ բացվել Միդուեի հանքերում։ Այնուհետև բնականաբար հարկ եղավ անձամբ տեսնել Միդուեն, և մենք այնտեղ գնացինք։ Ասում եմ **մենք**, մաստր Կոպպերֆիլդ,– ավելացրեց մրս. Միկաբրը հուզվելով,– որովհետև ես ոչ մի ժամանակ ամուսնուս մենակ չեմ թողնի։

Ես հիացում ու հավանություն հայտնեցի։

– Գնացինք,– կրկնեց մրս. Միկաբրը,– և տեսանք Միդուեն։ Ըստ իս՝ այդ գետի քարածխի առևտրում քանքարը գուցե հարկավոր բան է, բայց դրամագլուխն անհրաժեշտ է։ Քանքար ունի մր. Միկաբրը, բայց դրամագլուխ՝ ոչ։ Աչքի անցրինք Միդուենի գրեթե բոլոր ընթացքը, և իմ կարծիքն արդարացավ։ Այն ժամանակ մր. Միկաբրը, հաշվելով, որ շատ ենք մոտեցել Կենտրբերիին, վճռեց, թե հիմարություն կլիներ աչքի չանցնել այս քաղաքն ու սրա անվանի մայր տաճարը չտեսնել։ Եվ եկանք, որովհետև տաճարն իրավ տեսնելու արժանի շինություն

է, որ մենք երբեք չէինք տեսել, և երկրորդ՝ շատ հավանական կարծեցինք, թե եպիսկոպոսանիստ քաղաքում բախտը մեզ կժպտա։ Ահա երեք օր է՝ այստեղ ենք, բայց դեռ ժպիտ չենք տեսել, և դուք, սիրելի մաստր Կոպպերֆիլդ, հարկավ այնքան չեք զարմանա, որքան կզարմանար մի ուրիշ մարդ, եթե ասեմ, որ այժմ մենք փող ենք սպասում Լոնդոնից, որպեսզի կարողանանք մեր պարտքը վճարել այս պանդոկին։ Մինչ սպասված գումարի գալը,– ասաց մրս. Միկաբրը մեծ հուզումով,– ստիպված եմ հեռու մնալ իմ տանից (ուզում եմ ասել մեր Պենտընվիլի բնակարանից), և կարոտ որդուս, դստրիկիս և երկվորյակներիս տեսության։

Ամենաջերմ կարեկցություն զգացի դեպի նեղն ընկած ընտանիքը և ցավ հայտնեցի ներս մտնող մր. Միկաբրին, որ նրանց պետքերին բավելու չափ արաթ չունեմ։ Մր. Միկաբրի պատասխանը նրա սրտի ալեկոծման ամենապարզ ապացույցն էր։ Նա աջս սեղմեց և ասաց.

– Կոպպերֆի՛լդ, դուք մեր ճշմարիտ բարեկամն եք։ Թշվառության հետին ծայրին հասած մարդն էլ միշտ մի ընկեր կգտնի, որ պատրաստ կլինի առաջարկել նրան... գոնե մի հատ ածելի։

Այս սոսկալի ակնարկությունը լսելուն պես մրս. Միկաբրը մարդու պարանոցին փարվեց և աղաչեց նրան, որ հանդարտվի։ Մր. Միկաբրը լաց եղավ, բայց և իսկույն ինքն իրեն այնքան տիրեց, որ զանգակը հնչեցնելով սպասավորին կանչեց և հետևյալ օրվա ճաշի համար լյարդի պուդինգ պատվիրեց և մի ափսե կարիտոս։

Երբ ուզում էի հեռանալ, ամուսինները շատ խնդրեցին ինձ, որ հետևյալ օրը, իրենց մեկնելուց առաջ, իրենց հետ ճաշեմ. չէր կարելի խնդիրը մերժել։ Բայց որովհետև այդ օրը ես շատ զբաղմունք պիտի ունենայի և դժվարանայի ճաշին հասնել, մր. Միկաբրը որոշեց անձամբ առավոտյան դոկտոր Ստրոնգի պանսիոնը գալ (նա վստահ էր, որ մինչև այն ժամանակ փողն արդեն եկած կլինի) և խնդրել ինձ, որ գոնե երկրորդ օրը շնորհ անեմ նրանց սեղանին։ Եվ այսպես առավոտյան ինձ դասարանից դուրս կանչեցին և հյուրասենյակում ես մր. Միկաբրին գտա, որը ինձ հայտնեց, թե ճաշը վաղվա օրը տեղի կունենա, և նա ինձ կսպասի։ Երբ հարցրի նրան, թե արդյոք սպասած դրամն ստացե՞լ է, ոչ մի բան չպատասխանեց, այլ միայն աջս սեղմեց ու հեռացավ։

Նույն օրվա երեկոյան դեմ, մինչ պատուհանից դուրս էի նայում, շվարելով տեսա, որ մր. Միկաբրը և Ուրիաս Հիպը թև-թևի տված անցում են. Ուրիասը խոնարհաբար շնորհակալ, որ իրեն այդպիսի պատիվ են անում, իսկ մր. Միկաբրը երջանիկ, որ կարող է հովանավոր հանդիսանալ Ուրիասին։ Սակայն իմ զարմանքը ավելի մեծ եղավ, երբ հաջորդ օրը ժամը չորսին ճաշելու համար պանդոկ գնալիս նույն իսկ Միկաբրից իմացա, որ նա նախորդ երեկոյան Ուրիասի մոտ է եղել և մրս. Հիպից հարգվել։

– Պիտի ասեմ ձեզ, սիրելի Կոպպերֆիլդ,– ասաց մր. Միկաբրը,– որ ձեր բարեկամ Ուրիաս Հիպը մի այնպիսի երիտասարդ է, որ մի օր կարող է ատենական փաստաբան դառնալ։ Եթե ես դրամական ճգնաժամիս ժամանակ ճանաչած լինեի այդ պարոնին, հավաստի եմ, որ պարտատերերիս գործն ավելի լավ կվերջանար։

Չհասկացա, թե ինչպե՞ս ավելի լավ կվերջանար, քանի որ մր. Միկաբրը իր պարտատերերից և ոչ մեկին մի պենսի անգամ չէր վճարել, սակայն ավելորդ համարեցի բան հարցնել։ Զգուշացա նաև հարցնել, թե ի՞նչ է խոսել Ուրիասի հետ, և իմանալ, թե հատկապես ի՞նչ է ասել իմ մասին։ Զգուշացա, որովհետև վախենում էի, թե այսպիսի հարցումներով մր. Միկաբրի և մանավանդ մրս. Միկաբրի զգայուն սիրտը կվշտացնեմ. այնինչ ես շատ անհանգիստ էի և հետո էլ շատ էի մտածում մր. Միկաբրի և Ուրիասի տեսակցության մասին։

Ճաշը փառավոր էր։ Մեզ տվին լավ պատրաստված ձկնեղեն, խորոված հորթի միս և երիկամունք, տապակած թարմ երշիկ, կաքավ և պուդինգ։ Էյլն ու գինին առատ էին։ Ճաշից հետո մր. Միկաբրը մի-մի թաս պունշ առաջարկեց մեզ։

Մր. Միկաբրը վերին աստիճանի զվարթ էր. ոչ մի ժամանակ այդքան ուրախ չէի տեսել նրան։ Պունշից երեսը կարմրել ու պսպղում էր, կարծես ջնարակով ծածկված լիներ։ Նա հիացած էր մեր քաղաքով և մի սրտագին բաժակ առաջարկեց Կենտրբերիի բարգավաճության համար, ասելով թե այդտեղ ինքն էլ, մրս. Միկաբրն էլ ամեն դրություն ու հարմարություն վայելեցին, ուստի և մեր քաղաքում անցկացրած զվարճալի ժամերը երբեք չպիտի մոռանան։ Հետո առաջարկեց իմ արևշատության բաժակը, և այս առիթով նա, մրս. Միկաբրն ու ես մեր բարեկամության հին օրերը հիշեցինք և այն բոլոր իրերը, որ մի առ մի վաճառված կամ գրավ էին դրված իմ ձեռքով։ Այնուհետև ես ոտքի ելա և դիմելով մրս. Միկաբրին, հետևյալն ասացի համեստաբար.

– Եթե թույլ տաք, արգո տիկին, այժմ կցանկանայի հատկապես ձեր կենաց բաժակը պարպել։

Այս առթիվ մր. Միկաբրը մի պերճախոս ներբող նվիրեց մրս. Միկաբրին, անվանելով նրան հավատարիմ ընկեր, իմաստուն խորհրդակից, փիլիսոփա, և խորհուրդ տվեց ինձ, երբ ես էլ պսակվելու հասակ առնեմ, մի այնպիսի հարսնացու ընտրեմ, որ ամեն բանով մրս. Միկաբրին նման լինի, թեև դժվար է նմանը ճարել։

Քանի պունշը պակասում էր, այնքան մր. Միկաբրի սիրտը բացվում ու ցնծում էր։ Վերջապես մրս. Միկաբրն էլ բորբոքվեց, և բոլորս միասին սկսեցինք Լենգ Սայն նավորդի երգը երգել, և երբ հասանք այն քառյակին ուր ասված է. «Աջդ տուր ինձ, ազնիվ ընկեր», իրար աջ մեկնեցինք, իսկ երբ հասանք «Քաջ համարձակ առաջ գնա» խոսքերին, արդեն մեր ոգևորությունը չափ չուներ։

Կարճ ասած, ես օրումս մի ուրիշ մարդ չէի տեսել, որ այնպես սրտանց ուրախ լիներ, ինչպես որ մր. Միկաբրը մինչև ճաշի վերջին րոպեն, երբ ես մտերմաբար հրաժեշտ առա նրանից ու նրա սիրարժան տիկնոջից։ Ուստի բնական է, որ չէի պատրաստված հաջորդ առավոտյան ժամը յոթին հետևյալ նամակն ստանալու, որ երեկոյան իննուկեսին էր գրված, այսինքն՝ իմ մեկնելուց քառորդ ժամ հետո։

«Իմ սիրելի թանկագին բարեկամ.

Վիճակը ձգված է, ամեն բան վերջացած։ Օրհասական վշտերս կեղծ բերկրության դիմակի տակ ծածկելով, այս երեկո չհայտնեցի ձեզ, թե այլևս Լոնդոնից փող ստանալու ամենևին հույս չկա։ Այս պարագաների մեջ, որոնց մասին մտածելն անգամ մարդու համար նվաստություն է, ուր մնաց կրելը կամ գրելը, ես ստիպվեցի մի մուրհակ տալ հյուրանոցին, պարտավորվելով երկու շաբաթ անցնելուց հետո պարտքս վճարել։ Պենտընվիլ կայարանում, Լոնդոն։ Երբ այդ մուրհակը ներկայացվի, հատուցող չի լինի։ Հետևանքը կործանումն է։ Շանթի հարվածը մոտալուտ է, և ծառը պիտի տապալվի։

Թող այս տողերի թշվառ հեղինակի օրինակը, սիրելիդ իմ Կոպպերֆիլդ, մի զգուշարար փարոս լինի ձեզ համար։ Այս է նրա միակ փափագը և հույսը, որ հայտնում է ձեզ ներկա գրով։ Եթե նա ձեզ սույն գրությամբ որևէ օգուտ տված լինի, այն ժամանակ նրա կյանքի խավարամած բանտի մեջ գուցե լույսի մի նշույլ թափանցի, թեև այդ կյանքի երկարությունը (առնվազն ասելով) վերին աստիճանի անստույգ է թվում նրան։

Այս վերջին գիրն է, իմ սիրելի Կոպպերֆիլդ, որ ստանում եք։

Ձեր

չարաբախտ

և

թշվառ

Ուիլկինս Միկաբրից»։

Այս աղեկեզ նամակի բովանդակությունից սարսափած՝ ես շտապ պանդոկ վազեցի, որպեսզի գեթ մի սփոփանքի խոսք ասեմ մր. Միկաբրին։ Սակայն կես ճանապարհին դիմացս ելավ Լոնդոն գնացող մի դիլիժանս, որի վերևի նստարանի վրա բարեկամներիս բազմած տեսա։ Մր. Միկաբրը կարծես լիովին երջանիկ էր. նա մրս. Միկաբրի պատմությանը ականջ դնելով, զվարթ-զվարթ կաղին էր կրծում ու ժպտում, իսկ վերարկուի գրպանից մի շշի վիզ էր նշմարվում։ Տեսնելով, որ նրաք չեն նկատում ինձ, լավ համարեցի չերևալ նրանց։ Սրտիս վրայից կարծես մի բեռ վայր ընկավ, թեթևություն զգացի, և շուռ եկա դոկտոր Ստրոնգի վարժարանը գնալու։ Ես գոհ էի, որ բարեկամներս մեկնեցին, թեև շատ էի սիրում նրանց։

ԺԸ. ԳԼՈՒԽ
Մի հայացք անցյալի վրա

Դպրոցական օրեր։ Աննկատելի, անզգալի հոսանքով լռիկ անցաք պատանեկության տարիներ, ո՞ւր գնացիք, անհետացաք... Ուզում եմ մի հայացք գցել այդ ջրառատ գետի վրա, որ այժմ դարձել է չոր տերևներով ծածկված մի դաշտ, և տեսնել, թե ի՞նչ հետքեր կգտնեմ, որոնք կարողանային նրա անցյալ ընթացքը հիշեցնել ինձ։

Ահա տեսնում եմ ինձ Կենտրբերիի մայր տաճարում, ուր ամեն կիրակի խմբով գնում ենք վարժարանից։ Տաճարում տիրող հողի հոտը, անարև օդը, աշխարհիս հոգսերից բոլորովին զատված լինելուս խորհրդավոր զգացումը, սև ու սպիտակ կամարների ներքև ու սյուների միջև ընթացող երգեհոնի թնդյունը,– ահա այն թևերը, որոնք ինձ դեպի ետ են թռցնում և թույլ տալիս անցյալիս վրա սավառնել մի կիսարթուն ու կիսաթմբիր դրության մեջ։

Ես աշակերտներից վերջինը չեմ դոկտոր Ստրոնգի վարժարանում։ Մի քանի ամսում արդեն շատերից առաջ եմ անցել։ Սակայն առաջին աշակերտը դեռ այնպես հզոր, այնպես վեհ էակ է, որ նրա բռնած բարձր դիրքին մոտենալը անգամ գլխիս պտույտ է պատճառում։ Ագնեսն ասում է, թե մի օր ես էլ, որ դեռ մի թույլ սկսնակ եմ, այդ բարձրունքին կհասնեմ. իսկ ես շարունակ պնդում եմ, որ նա չգիտի՝ թե ինչ անհուն գանձ է դիզել, ինչ գիտություն է ամբարել այն հրաշալի էակը։ Էդեմսն իմ մտերիմ ընկերն է, բայց հանրաճանաչ պաշտպանը չէ, ինչպես Ստիրֆորթն էր. այնուամենայնիվ հարգում եմ նրան և նրա ձիրքերով հիանում։ Շատ անգամ հարցնում եմ ինձ. ի՞նչ կդառնա Էդեմսը դոկտոր Ստրոնգի մոտ իր ուսումն ավարտելուց հետո, և արդյոք աշխարհիս երեսին գեթ մի պաշտոն կգտնվի՞, որ նա չկարողանա ձեռք բերել։

Սակայն այս ո՞ւմ պատկերն է երևան գալիս աչքիս առջև։ Դա իմ սիրած միս Շեփըրդի պատկերն է։

Միս Շեփըրդը աշակերտուհի է միս Նետտինգելի պանսիոնում։ Ես պաշտում եմ միս Շեփըրդին։ Նա դեռ փոքր է և սպենսրով[25] է ման գալիս. նա կլորիկ դեմք ունի և վշագույն գանգուրներ։ Միս Նետտինգելի աշակերտուհիները նույնպես գալիս են եկեղեցի։ Ես չեմ կարողանում աղոթագրքիս նայել. աչքերս հառած են միս Շեփըրդին։ Խմբերգի ժամանակ միայն նրա ձայնն է ականջիս հնչում։ Աղոթք անելիս միս Շեփըրդի անունն եմ հիշում և թաքուն մտցնում արքայի տան հիշատակության մեջ։ Տուն եմ գալիս և սենյակիս մեջ հափշտակությամբ հառաչում. «Օ՜, միս Շեփըրդ, միս Շեփըրդ»։

Մի քանի ժամանակ միս Շեփըրդի զգացումների մասին շատ երկմիտ եմ. բայց վերջապես կասկածներս փարատվում են. մենք իրար հանդիպում ենք պարի դպրոցում։ Ես պարում եմ միս Շեփըրդի հետ. շոշափում եմ միս Շեփըրդի ձեռնոցը և մի տեսակ սարսուռ զգում, որ աջ թևիս միջով սահում անցնում է մինչև գլխիս մազերի ծայրը։ Ոչ մի քնքուշ ու քաղցր խոսք չեմ

[25] Կարճ հագուստ։

ասում միս Շեփըրդին, բայց մենք իրար հասկանում ենք։ Միս Շեփըրդն ու ես իրար համար ենք ստեղծված և նրա համար ենք միայն ապրում, որ ժամանակին միանանք...

Կուզենայի, սակայն, իմանալ, թե ինչո՞ւ գաղտուկ տասներկու հատ բրազիլական կաղին եմ տալիս միս Շեփըրդին։ Դրանք սիրո թարգման հանդիսանալու բաներ չեն. դժվար են փաթաթվում ծրարի մեջ. այնքան էլ կարծր են, որ մինչև անգամ դռների արանքում հազիվ են ջարդվում. շատ էլ ձիթոտ են. բայց սիրտս վկայում է, թե նրանք միս Շեփըրդին վայել պարգև են։ Թարմ-թարմ բիսկվիտներ, անթիվ անհամար նարինջներ էլ տանում եմ ես միս Շեփըրդին։ Մի օր ես նրբանցքի մեջ համբյուր եմ տալիս միս Շեփըրդին։ Օ՜հ, ինչ բերկրանք։ Բայց և ի՜նչ հուսահատություն, ինչ զայրույթ հետևյալ օրը, երբ շշուկ է տարածվում թե միս Նետտինգելը հրամայել է միս Շեփըրդին անկյունում կանգնել այն պատճառով, որ նա կադրիլի չգիտեմ որ մասում ծուռ էր բռնել ոտքը։

Քանի որ միս Շեփըրդը երազներիս ու մտքերիս միակ առարկան է, ինչպե՞ս է լինում, որ նրա հետ գժտվում եմ։ Չեմ հասկանում։ Սառնությունը սաստկանում է մեր միջև։ Լուր են բերում ինձ, թե միս Շեփըրդն ասել է, թե ուրախ կլինի, եթե ես միշտ ակնապիշ չնայեմ իրեն. հետո լուր ստացա, թե նա ավելի Ջոնսին է սիրում, քան թե ինձ – Ջոնսին, որ մի անշնորհք տղա է։ Այս արդեն անտանելի է։ Միս Շեփըրդի և իմ միջև անդունդ է բացվում։ Վերջապես մի օր զբոսանքի ժամանակ պատահում եմ միս Նետտինգելի ամբողջ պանսիոնին։ Միս Շեփըրդը մոտովս անցնելիս քիթն ու բերանը ծռմռում է ու ծիծաղում, ընկերուհուն նայելով։ Վերջացավ։ Ես պատրաստ էի ամբողջ կյանքս զոհել նրան, և հանկարծ... Այլևս միս Շեփըրդն աղոթքներիս մեջ չի հիշվում, և արքայի տոհմը նրա հետ այլևս կապ չունի։

Հոգուս խաղաղությունը այլևս ոչ ոք չի վրդովում, և ես արագ առաջ եմ գնում ուսման մեջ։ Միս Նետտինգելի աշակերտուհիների վրա արդեն բնավ ուշադրություն չեմ դարձնում։ Թող նրանք թվով երեք անգամ ավելի լինեն և ամեն մեկը միս Շեփըրդից քսան անգամ ավելի սիրուն. ինձ ի՞նչ փույթ։ Անտանելի է ինձ այդ պարի դպրոցը, և ես զարմանում եմ, թե ինչո՞ւ այդ փոքրիկ աղջիկները չեն կարողանում իրար հետ պար գալ և բոլորովին մեզ հանգիստ թողնել։ Ես արդեն լավ լատիներեն ոտանավորներ եմ շարադրում և կոշիկներիս փայլի մասին միանգամայն անհոգ եմ։ Դոկտոր Ստրոնգը հրապարակավ վկայում է, թե լավ հույսեր տվող պատանի եմ։ Մր. Դիկը հրճվանքից գրեթե գժվում է, և տատս մի ոսկի է ուղարկում ինձ հետևյալ փոստով։

Ահա Մակբեթի սաղավարտավոր ուրվականի պես իմ առջև մի երիտասարդ մսագործի գլուխ է բարձրանում։ Ո՞վ է այդ երիտասարդ մսագործը։ Դա Կենտրբերիի բոլոր տղաների ահ ու սարսափն է։ Առասպել կա, թե մազերին քսված եզան ճարպից նա մի գերբնական ուժ է ստանում և կարող է մինչև անգամ ըմբիշների հետ մենամարտել։ Նա մի լայներես, կարմրադեմ, թիկնավետ, ցլավիզ մսագործ է՝ նենգամիտ ու չարալեզու։ Այդ լեզվի գլխավոր գործն է այպանել ու անարգել դոկտոր Ստրոնգի աշակերտներին։ Նա հրապարակավ ասում է, թե պատրաստ է եթե կամենանք, ամենքիս դմփել։ Մեզնից շատերի, ինչպես և իմ անունը տալով, նա լրբաբար ասում է, թե ամեն մեկիս մի ձեռքով կարող է ջարդել, անգամ եթե իր մյուս ձեռքը մեջքին ամուր կապած լինի։ Նա մեր փոքրիկ ընկերներին դարան մտած սպասում է, որ բռնի նրանց ու մազերը քաշքշի։ Արդեն մի քանի անգամ ինձ հենց փողոցի մեջտեղում կռվի է կանչել։ Ահա այս բոլոր պատճառներով ես վճռել եմ կռվի դուրս գալ մսագործի դեմ։

Ամառվա երեկո է. մենամարտի ասպարեզը մի կանաչ փոս է, պատի տակ։ Այնտեղ եմ գտնում մսագործին։ Ինձ ուղեկցում է աշակերտներից մի ընտիր խումբ. մսագործի ընկերներն են՝ երկու որիշ մսագործ, մի սրճարանի սպասավոր և մի ծխանի մաքրիչ։

Կռվի պայմանները որոշելուն պես՝ ես ու մսագործը գալիս կանգնում ենք իրար դեմ։ Մի ակնթարթում մսագործը տասը հազար կայծ է թափեցնում իմ ձախ աչքից։ Մի վայրկյան ևս, և ես չգիտեմ, թե պատը որտե՞ղ է, ես ինքս որտե՞ղ եմ, ընկերներս ո՞ւր են կորել։ Չեմ էլ կարող

մինչև անգամ զանազանել թե մեզնից ո՞րն է մսագործը և ո՞րն եմ ես։ Կանաչ արոտը ոտնակոխ անելով իրար հետ բռնվել ենք, և տուր, թե կտաս։ Մերթ տեսնում եմ մսագործին՝ արյունաթաթավ, բայց դեռ քաջ, մերթ ամեն բան մթնում է, և ես հևալով ընկած եմ ընկերոջս ծնկին։ Հանկարծ նորից կատաղաբար հարձակվում եմ ոսոխիս վրա, սակայն նա դեռ ժայռի նման անշարժ է։ Վերջապես ուշքի եմ գալիս. գլուխս ծանր է ու շշմած, ասես մի տագնապալից քնից հետո։ Ահա տեսնում եմ, որ մսագործը, վերարկուն հագնելով և ընկերներից շնորհավորանք ընդունելով, հեռանալու վրա է։ Այդ անսխալ ապացույց է, որ հաղթանակը նա է տարել։

Ես տուն եմ տարվում ողորմելի դրության մեջ. աչքերիս վրա հում միս են դնում, մարմնիս քացախով օղի են քսում. վերին շուրթս այլանդակ կերպով ուռչում է։ Երեք-չորս օր տանն եմ նստում, աչքերիս տակ կապտել է, ամբողջ դեմքս ահռելի է։ Ես սաստիկ կձանձրանայի, եթե ինձ համար Ագնեսը քույր չլիներ. նա ինձ խնամում է, վշտակցում և զանազան բաներ կարդում. նրա շնորհիվ ժամանակն արագ անցնում է, և ես երջանիկ եմ։ Ագնեսի առջև գաղտնիք չունեմ. պատմում եմ նրան մսագործի անիրավությունը և մեր ընդհարումը։ Ագնեսի կարծիքն էլ այն է, որ ես չէի կարող ուրիշ կերպ վարվել, բայց միայն մենամարտել մսագործի հետ, թեև դողում ու սոսկում է խիզախությանս վրա մտածելիս։

Աննկատելի կերպով սահել-անցել են ամիսներ և տարիներ, և այժմ վարժարանի առաջին աշակերտը Էդեմսը չէ։ Նա վաղուց արդեն ուսումն ավարտել է, և երբ երբեմն այցելություն է անում դոկտոր Ստրոնգին, ինձնից զատ շատ քչերն են ճանաչում նրան։ Էդեմսը շուտով փաստաբան կդառնա և կեղծամ կհագնի դատարանում։ Զարմանալի է թվում ինձ, որ նա համեստ է և բնավ ազդեցիկ ու վեհական ձևեր չունի։ Նա դեռ չի դղրդացրել աշխարհը, որովհետև (որքան գիտեմ) աշխարհը իր կարգով է գնում և կարծես չի էլ լսել, թե ով է մր. Էդեմսը։

Ահա մի դատարկ տեղ, ուր անհամար գնդերով անցնում են պատմության ու բանաստեղծության սպարազեն ախոյաններ,– իսկ հետո՞։ Ես եմ առաջին աշակերտը դոկտոր Ստրոնգի դպրոցում։ Որքան մանր ու ցածր դասարանի մանուկները։ Սակայն ես հպարտ չեմ և գլուխս պտույտ չի գալիս այն բարձունքի վրա, որ երբեմն ինձ անմատչելի էր թվում։ Ի սրտե կարեկից եմ փոքրերին և ամեն մի նորեկ աշակերտ հիշեցնում է ինձ, որ ես էլ դպրոց մտնելիս մի այդպիսի տղա էի։ Օ՜հ, որքան հեռու է այն ժամանակը... փոքրիկ Կոպպերֆիլդը կարծես ուրիշ էակ էր. հիշում եմ, որ ես նրան ետ եմ թողել կյանքի լայն ճամփի վրա, միայն անցել եմ նրա մոտով, և նա ինձ օտար է։

Իսկ ո՞ւր է այն փոքրիկ աղջիկը, որին տեսել էի մր. Ուիկֆիլդի տունը մտնելուս առաջին օրը։ Նա էլ չկա։ Նրա տեղ ամբողջ տունը կառավարում է մի էակ, որ դահլիճում կախված կենդանագրին միանգամայն նման է, բայց և այլևս մանուկ չէ։ Ագնեսը, սիրելի քույրս, ինչպես որ անվանում եմ նրան մտքիս մեջ,– իմ խորհրդակիցը, իմ ընկերը, ամեն մարդու իր հեզիկ, առաքինի, անշահասեր ազդեցությանը ենթարկող բարի հրեշտակը,– այժմ արդեն մի օրիորդ է։

Ես էլ արդեն հասակ եմ առել, դեմքիս գծերը որոշվել են, գլխիս մեջ գիտության ճոխ պաշար եմ ամբարել։ Բացի այս՝ ոսկե շղթայով ժամացույց եմ կրում, ճկույթիս վրա մատանի, ֆրակ հագած եմ ման գալիս և սաստիկ շատ պոմադ քսում մազերիս,– մի սովորություն, որ մատանու հետ միասին առած բարեգուշակ նշան չէ։ Մի՞թե նորից սիրահար եմ։ Այո՛։ Ես պաշտում եմ ավագ միս Լարկինսին։

Ավագ միս Լարկինսը փոքրիկ աղջիկ չէ։ Նա մի բարձրահասակ, թխադեմ, սևաչյա ազնիվ օրիորդ է։ Երեխա անվանել չի կարելի ավագ միս Լարկինսին, որովհետև փոքր միս Լարկինսն անգամ այդ հասակից անցել է, իսկ մեծը նրանից երեք-չորս տարով մեծ կլինի։ Ավագ միս Լարկինսը գուցե կլինի մոտ երեսուն տարեկան։ Իմ սերը դեպի նա անսահման է։

Ավագ միս Լարկինսը սպաների հետ է ծանոթ։ Այս մի սարսափելի, անտանելի հանգամանք է։ Տեսնում եմ, որ նրանք շատ անգամ փողոցում օրիորդի հետ խոսում են։ Տեսնում եմ, որ նրանք օրիորդի պայծառ գլխարկը նշմարելուն պես, որ քրոջ գլխարկին շատ նման է, հեռվից արդեն շտապում են դիմավորել նրան։ Նա ծիծաղում է, խոսակցում և կարծես հաճույք ստանում այդ բանից։ Ազատ ժամանակի մեծ մասը ես զբոսանքի եմ նվիրում, որ կարողանամ հանդիպել նրան մի որևէ տեղ։ Ամբողջ օրով երջանիկ եմ, եթե գեթ մի անգամ ողջունեմ նրան (ողջունելու իրավունք ունեմ, որովհետև ծանոթ եմ հոր հետ)։ Երբեմն էլ նա է ինձ իր ողջյունին արժանացնում։ Ահա ավագ միս Լարկինսը սպաների հետ պար է գալիս նրանց ակումբի հանդեսում. ո՞վ կարող է նկարագրել այն գիշեր կրած տանջանքս, և աշխարհիս երեսին արդյոք կա՞ արդարություն, որ վարձատրեր ինձ դրա փոխարեն։

Սերը ախորժակս փախցնում է և ստիպում ինձ միշտ մետաքսե ու միշտ նոր փողկապներ կրել։ Ես հանգիստ չեմ, մինչև որ հագուստներից ամենալավը չհագնեմ և կոշիկներս հարյուր անգամ մաքրել չտամ։ Այն ժամանակ ինձ թվում է, թե ավելի եմ արժանի դառնում միս Լարկինսին մոտենալու։ Ամեն բան, ինչ որ պատկանում է օրիորդին և կամ նրա հետ կապ ունի, ինձ համար թանկագին է։ Նրա ծեր հայրը, մր. Լարկինսը, որ մի խոժոռադեմ ջենտլմեն է կրկնակի կզակով, և երկու աչքից միայն մեկը կարող է շարժել,– հայտնապես բարեհաճ է դեպի ինձ։ Եթե չեմ հաջողում օրիորդին պատահել, աշխատում եմ գոնե հորը հանդիպել։ Եվ երբ ասում եմ նրան «Բարով ձեզ, մր. Լարկինս։ Ինչպե՞ս են ձեր օրիորդներն ու ընտանիքը», ձայնս այնպես է դուրս գալիս, որ երեսս ակամա կարմրում է։

Անդադար մտածում եմ հասակիս մասին։ Դեռ տասնյոթ տարեկան եմ։ Այս հասակը գուցե փոքր թվա ավագ միս Լարկինսին, սակայն ի՞նչ փույթ։ Չէ՞ որ շուտով քսանմեկն էլ կլրացնեմ։ Երեկոները միշտ ման եմ գալիս մր. Լարկինսի տան առջև, թեպետ սիրտս կեղեքվում է, երբ տեսնում եմ սպաների ներս մտնելը և դահլիճում խոսելը, ուր ավագ միս Լարկինսը քնար է ածում այդ միջոցին։ Ֆյուրերն արդեն ցրված են, մոմերը մարած. իսկ ես դեռ տխուր-տխուր ման եմ գալիս տան շուրջը, փափագելով իմանալ՝ արդյոք ո՞րն է միս Լարկինսի ննջարանը։ Ես ուզում եմ, որ հանկարծ տունը հրդեհվի, ամեն կողմից խուճապած մարդիկ հավաքվեն։ Այն ժամանակ ես, ահաբեկ բազմությունը ճեղքելով, սիրեկանիս պատուհանին սանդուղք կդնեմ, ներս կնետվեմ, կփրկեմ նրան գրկիս մեջ, նորից կբարձրանամ նրա իրեղեններից որևէ բան ազատելու, և հերոսական մահ կգտնեմ բոցերում։ Սերս տակավին շահամոլ չէ. ես գոհ կլինեի, եթե միս Լարկինսը, գեթ մի հայացք ձգեր վրա, տեսներ ինձ, և ապա մեռնեի։

Սակայն զգացումներս միշտ այդքան անշահասեր ու մռայլ չեն. երբեմն տեսնում եմ և անձնական երջանկության երազներ։ Ահա շուտով Լարկինսենց տանը մի շքեղ պարահանդես կլինի, և արդեն երեք շաբաթ է, որ դրան եմ սպասում։ Հայելու առջև զուգվելիս, որ միշտ երկու ժամ է տևում, ինձ թովչական ցնորքներ են հրապուրում։ Երևակայում եմ, թե հանկարծ վրաս քաջություն է գալիս միս Լարկինսին սերս հայտնելու։ Նա գլուխն ուսիս վրա խոնարհելով ասում է. «Օ՜հ, մր. Կոպպերֆի՛լդ, արդյոք հավատա՞մ ականջներիս»։ Առավոտյան ինձ մոտ է գալիս մր. Լարկինսը և ասում. «Մր. Կոպպերֆի՛լդ, աղջիկս ամեն բան խոստովանեց։ Ձեր հասակն ամենևին չի արգելում։ Հոժար եմ ձեր ամուսնությանը։ Ահա ձեզ քսան հազար ֆունտ ստեռլինգ։ Երջանիկ եղեք»։ Տատս գորովելով օրհնում է մեզ, մր. Դիկը և դոկտոր Ստրոնգը ներկա են մեր պսակի հանդեսին։ Ես մի համեստ և կարծեմ խոհեմ պատանի եմ,– գոնե թվում եմ ինձ, թե էի,– բայց և դարձյալ այսպիսի բաներ են մտքովս անցնում։

Գնում եմ դյութական տունը, որ լույսով, քրքիջով, ծաղիկներով, երաժշտությամբ, և, ափսո՛ս, ապաներով լիքն է, և հոյակապ դահլիճի մեջ տեսնում եմ ավագ Լարկինսին, որ շողշողուն գեղեցկությամբ նսեմացնում է ամեն բան։ Նա կապույտ զգեստով է և մազերի մեջ անմոռուկներ է ցցել։ Ի՞նչ կարիք ունի միս Լարկինսը անմոռուկներ կրելու. ո՞վ կարող է գեթ մի անգամ տեսնել նրան և մոռանալ։

Կյանքումս առաջին անգամն է, որ հրավիրված եմ ներկա լինել հասակավորների երեկույթին։ Ես քաշվում եմ, որովհետև ոչ մի խմբի չեմ պատկանում, ոչ ոք էլ կարծես ուշադրություն չի

դարձնում վրաս։ Միայն մր. Լարկինսն է, որ մոտենալով հարցնում է ինձ, թե փոքրիկ ընկերներն ինչպե՞ս են. մի հարցմունք, որ կարող էր և չանել։ Մի՞թե եկել եմ վիրավորանք լսելու...

Մի որոշ ժամանակ դռան մոտերքում կանգնած եմ մնում, պաշտած դիցուհուս դիտելով, և ահա, վերջապես, նա ինքն է մոտենում ինձ... ինքն ավագ միս Լարկինսը, և թովչական ձայնով հարցնում.

– Պարո՞ւմ եք, մր. Կոպպերֆիլդ։

– Ձեզ հետ՝ այո, միս Լարկինս,– թոթվում եմ գլուխ տալով։

– Միայն ինձ հե՞տ։

– Ձեզնից զատ՝ ուրիշ մեկի հետ չէի ուզի պարել։

Միս Լարկինսը ժպտում ու կարմրում է (գոնե կարծում եմ, թե կարմրում է) և ասում.

– Ուրեմն հետևյալ պարին, եթե կամենաք։ Այս անգամ ես հրավիրված եմ։

Րոպեն գալիս է։ Մոտենում եմ միս Լարկինսին։

– Կարծեմ վալս է,– հարցնում է ինձ վարանելով միս Լարկինսը։– Վալս պարո՞ւմ եք, եթե ոչ՝ գնդապետ Բեյլին...

Սակայն ես պարում եմ վալս մինչև անգամ բավական լավ, և տանում եմ միս Լարկինսին։ Ես նրան գնդապետ Բեյլիի կողքից հպարտ-հպարտ հեռացնում եմ։ Գիտեմ, գնդապետը տանջվում է, բայց ինձ ինչ։ Մի՞թե ես քիչ եմ տանջվել։ Բռնում եմ ավագ միս Լարկինսի ճապուկ իրանից ու նրա հետ միասին պտույտ գալիս... չգիտեմ որտե՞ղ, որո՞նց միջև, մինչև ե՞րբ։ Գիտեմ միայն, որ մի կապույտ հրեշտակի հետ տարածության մեջ ծածանվում եմ, երջանկությամբ բորբոքված, հմայված, զմայլված, սքանչացած, մինչև որ նա և ես նստում ենք մի բազմոցի վրա։ Մենք մենակ ենք մի փոքրիկ սենյակում։ Նա հիանում է ֆրակիս լամբակի ծաղկով (դա մի կարմիր ճապոնական քամելիա է, գինն է երեք շիլինգ)։ Ամենայն սիրով տալիս եմ նրան այդ ծաղիկը և ասում.

– Բայց սրա փոխարեն, միս Լարկինս, կցանկանայի մի անգին բան պահանջել։

– Իրա՞վ, և ի՞նչ,– հարցնում է միս Լարկինսը։

– Մի հատ ծաղիկ ձեր փնջից։ Ես նրան այնպես կպահեմ, ինչպես որ ագահն՝ իր ոսկին։

– Շատ համարձակ տղա եք,– ասում է միս Լարկինսը։– Ահա ստացեք։

Նա, կարծեմ հաճությամբ, շնորհում է ինձ մի ծաղիկ։ Ծաղիկը դնում եմ շրթունքիս, հետո սրտիս վրա թաքցնում։ Միս Լարկինսը ծիծաղելով իր թևն է տալիս ինձ և ասում.

– Այժմ ինձ գնդապետ Բեյլիի մոտ տարեք։

Դեռ չեմ սթափվել այդ վալսի և հոգեզմայլ դեմառդեմի հրճվանքից, և ահա միս Լարկինսը նորից գալիս է ինձ մոտ մի հասակավոր ջենտլմենի հետ թևանցուկ, որ ամբողջ երեկո վիստ էր խաղացել, և ասում.

– Ահա համարձակ բարեկամս։ Մր. Չեստլը կամենում է ծանոթանալ ձեզ հետ, մր. Կոպպերֆիլդ։

Գուշակում եմ, որ ջենտլմենը օրիորդի տան բարեկամն է, և շատ գոհ եմ։

– Շատ գովում եմ, սըր, ձեր ճաշակը,– ասում է ինձ մր. Չեստլը։– Դա ձեզ անշուշտ պատիվ է բերում։ Եթե այդքան ծաղկասեր եք, խնդրեմ մի օր շնորհ արեք իմ կալվածքը գալ, որ Էշֆորդի մոտերքն է։ Այնտեղ շատ ծաղիկներ կան և մանավանդ գայլուկի բույս, որ ես սիրով մշակում եմ։

Սրտանց շնորհակալություն եմ հայտնում մր. Չեստլին և նրա աջն ամուր սեղմում: Այս բոլորը մի երանական անուրջ է թվում ինձ: Դարձյալ մի անգամ վալս եմ պարում ավագ միս Լարկինսի հետ: Նա ասում է, թե ես լավ եմ վալս պարում: Վերադառնում եմ դեպի տուն մի անասելի երջանկությամբ թևավորված և ամբողջ գիշեր երազիս մեջ պարում եմ, սիրելի դիցուհուս կապույտ իրանին փաթաթված: Մի քանի օր շարունակ ցնորվածի պես եմ. սակայն ոչ մի տեղ չեմ հանդիպում միս Լարկինսին, ո՛չ փողոցում, ո՛չ էլ տանը: Սկսում եմ նորից մաշվել, նորից տանջվել, և կիսաթառամ անմոռուկը՝ այս սրբազան գրավականը, շատ քիչ է սփոփում ինձ:

– Տրոտուդ,– ասում է մի օր ճաշից հետո, Ագնեսը:– Գիտե՞ք , ով է վաղը մարդու գնում:

– Չգիտեմ, բայց կուզեի իմանալ:

– Մեկը, որին պաշտում եք:

– Այդ ո՞վ է, Ագնես: Դո՞ւք հո չեք:

– Ե՞ս,– ասում է Ագնեսը ժպտալով:– Լսո՞ւմ ես, հայրիկ, ի՞նչ է ասում Տրոտուդը... Ո՛չ, ես չեմ, այլ միս Լարկինսը, ավագը:

– Եվ գնում է... Բե՞յլի գնդապետին,– հարցնում եմ համարյա թե շնչասպառ:

– Ո՛չ, գնդապետին չէ, այլ մր. Չեստլին, որ գայլուկ մշակող կալվածատեր է Էշվորդում:

Ես երկու շաբաթ շարունակ չարաչար ընկճված ու վհատված եմ: Այլևս ճկույթիս վրա մատանի չկա, նոր շորերս պահված են, էլ մազերս արջի ճարպով չեն օծվում, և ես շուտ-շուտ հառաչում եմ միս Լարկինսի ծաղկի վրա, որ արդեն թառամել է: Վերջապես այսպիսի կյանքից ձանձրանում եմ և մսագործ տղայից մենամարտի նոր հրավեր ստացած լինելով, ծաղիկը դեն եմ շպրտում, ուղիղ թշնամուս դեմ եմ գնում և այս անգամ առոք-փառոք ջարդում նրան:

Նորից սկսում եմ մատանի հագնել և նորից արջի ճարպը հանդես է գալիս, թեև չափավոր քանակությամբ. ահա սրանք են վերջին հիշատակներս իմ տասնվեցամյա հասակից, որոնք դեռ մնացել են մտքիս մեջ:

ԺԹ. ԳԼՈՒԽ
Շուրջս նայելով մի գյուտ եմ անում

Հաստատ չգիտեմ, ուրա՞խ էի, թե՞ տրտում, երբ աշակերտությանս վերջին օրերը մոտեցան և դոկտոր Ստրոնգից բաժանվելուս վկայականը հասավ: Ես շատ երջանիկ էի նրա տանը, շատ էի սիրում դոկտորին և վերջապես մի հայտնի, նշանավոր անձ էի մեր փոքրիկ դպրոցական աշխարհում: Այս պատճառով ցավում էի, որ պիտի հեռանամ վարժարանից. բայց կային և այնպիսի պատճառներ, որոնք թեև անհիմն էին, բայց ինձ գոհ լինելու առիթ էին տալիս: Ես հրապուրվել էի այն ոգևորիչ գաղափարով, թե արդեն մի անձնիշխան էակ եմ, տոգորված էի յուրաքանչյուր ընթերցավարտ երիտասարդի մեծամտությամբ և հույսերով, թե ահա ես իբրև մի զարմանահրաշ արարած, երևելի բաներ պիտի գործեմ և իմ սքանչելի ազդեցությամբ ամբողջ ազգս հիացնեմ: Այս ցնորքների թովչությունը պատանեկան մտքիս վրա այն աստիճան զորեղ էր, որ ես վարժարանից բաժանվելիս այնքան տխրություն զգացի, ինչքան որ բնականաբար պիտի զգայի իմ այսօրվա համոզմամբ: Այս հրաժեշտը մյուսների նման վրաս չազդեց: Զուր եմ ճգնում մտաբերել, թե ի՞նչ էի զգում այդ միջոցին և մեկնելս ինչպե՞ս տեղի ունեցավ. սակայն ոչ մի հիշատակելու արժանի բան չեմ գտնում: Ենթադրում եմ, թե առջևս բացվող հեռապատկերը միանգամայն մտքերս շփոթել էր: Գիտեմ, որ անցյալ մանկությանս

փորձերը բնավ բանի տեղ չէի դնում, և կյանքը մի դյութական հրաշավեպ էր թվում ինձ, որ նոր պիտի սկսեի կարդալ,– ուրիշ ոչինչ։

Տատս ու ես երկար խորհրդակցություններ ունեցանք, թե ինչպիսի ասպարեզ ընտրեմ։ Մի տարուց ավելի է, որ ջանում էի մի բավարար պատասխան տալ նրա հաճախ կրկնած հարցին, թե «Ի՞նչ կոչում պիտի ընտրես»։ սակայն մի որոշ կոչման համար սրտիս մեջ ոչ մի հակում չէի գտնում։ Երբեմն մտածում էի՝ վատ չէր լինի, եթե մի գերբնական ներշնչումով նավարկության արվեստին հմտանայի և իբրև մի սրընթաց նավի նավապետ աշխարհի շուրջը պտտվեի, փառավոր գյուտեր անելով։ բայց որովհետև մի այդպիսի գերահրաշ ներշնչում չունեի, ստիպված էի մի ուրիշ ասպարեզով բավականանալ, որ իմ տատից դրամական մեծ զոհաբերություն չպահանջեր, և պարտքս այդ ասպարեզում կատարել, ինչ էլ լիներ այդ պարտքը։

Մր։ Դիկը մեր խորհուրդներին միշտ ներկա էր ամենազգոն լրջամտությամբ։ Նա միայն մի անգամ համարձակվեց կարծիք հայտնել, և (չգիտեմ թե ի՞նչ էր անցել մտքով) հանկարծ առաջարկեց, որ ես կաթսայագործ դառնամ։ Այդ առաջարկից տատս այնպես դժգոհ մնաց, որ մր։ Դիկը այլևս սիրտ չարեց երկրորդ անգամ որևէ կարծիք հայտնել, այլ գրպանի արծաթները հնչեցնելով, լուռ սպասում էր, թե տատիկս ի՞նչ կասի։

– Գիտե՞ս՝ ինչ կա, սիրելի Տրոտ,– ասաց տատս մի առավոտ, ծննդյան տոների միջոցին,– որովհետև այս դժվար խնդիրը դեռ չենք լուծել և պետք է զգուշանալ, որ սխալ չանենք, ուրեմն շտապելու փոխարեն՝ լավ կլինի փոքր-ինչ սպասենք ու շունչ քաշենք։ Այս միջոցին դու կաշխատես խնդիրը մի նոր տեսակետից աչքի անցնել, բայց լրջորեն, և ոչ իբրև աշակերտ։

– Կաշխատեմ, տատի։

– Միտքս մի բան է ընկել, սիրելի Տրոտ,– շարունակեց տատս։– Ինձ թվում է, թե քեզ համար լավ կլինի՝ գնալ փոքր-ինչ աշխարհ տեսնել, փորձվել, կյանքի հետ ծանոթանալ։ այսպիսով մտքերդ կպարզվեն, դիտողությունդ կհասունանա։ Ի՞նչ ես կարծում։

– Միանգամայն համաձայն եմ, տատի՛կ ջան։

– Օրինակի համար, լավ չէ՞ր լինի, եթե այն հին տեղերը տեսնելու գնաս... տեսնելու թեկուզ այն տարօրինակ կնոջը, որ... մեղա աստծու... հեթանոսական անուն ունի,– ասաց տատս, քթի ծայրը տրորելով, որովհետև մինչ այժմ չէր հաշտվել Պեգգոտիի անվան հետ։

– Դրանից ավելի ցանկալի բան չէիք կարող հնարել, սիրելի տատի,– գոչեցի ես։

– Շատ ուրախ եմ, եթե այդպես է,– ասաց նա։– Բնական ու գովելի է, որ դու ուզում ես տեսնել նրան։ Հավաստի եմ, Տրոտ, որ ինչ էլ անես, արածդ բնական ու գովելի կլինի։

– Հուսով եմ, տատի։

– Քույրդ՝ Բեթսի Տրոտուդը, աշխարհիս ամենաբնական ու գովելի աղջիկը կլիներ։ Ուզո՞ւմ ես նրան արժանավոր հանդիսանալ։

– Հույս ունեմ ձեզ արժանավոր հանդիսանալ, տատի։ այս ինձ համար բավական է։

– Լավ է, որ խեղճ մայրդ, այն կատարյալ մանուկը, կենդանի չէ,– ասաց տատս հաճությամբ վրաս նայելով,– եթե ոչ՝ այժմ այնքան իր զավակով կհապարտանար, որ ունեցած խելքն էլ կկորցներ։

Տատս սովոր էր արդարացնել իր անչափ գորովը դեպի ինձ, միշտ մայրիկիս վերագրելով այդ թուլությունը։

– Այ Տրոտ,– գոչեց տատս,– չես կարող երևակայել, թե որքան ես մորդ հիշեցնում։ Քեզ նայելիս իսկույն նա է միտքս գալիս։

– Հուսամ թե հաճելի կերպով, սիրելի՛ տատի։

– Այնքան իր մորը նման է, Դիկ,– շարունակեց տատս ազդու ձայնով,– որ կարծես ահա տեսնում եմ նրան ճիշտ այնպես, ինչպես որ էր երկունքի գիշերը։ Աստված իմ, սաստիկ նման է։

– Մի՞թե նման է,– ասաց մր. Դիկը։

– Դավթին էլ շատ նման է,– ասաց տատս վճռաբար։

– Դավթին էլ շատ նման է,– կրկնեց մր. Դիկը։

– Սակայն գիտե՞ս, Տրոտ,– ասաց տատս,– ես կուզեմ, որ դու ո՛չ միայն ֆիզիկապես... ֆիզիկապես դու շատ սիրուն տղա ես... այլև բարոյապես մի օրինակելի մարդ դառնաս, մի հաստատակամ, ձեռներեց մարդ,– ավելացրեց տատս, գլխանոցը տատանելով և բռունցքը սեղմելով,– մի զորեղ բնավորության տեր, առնացի ու վճռական մարդ, որ առանց հիմնավոր պատճառի ոչ ոքի և ոչ մի բանի ազդեցության չենթարկվեր։ Կցանկանայի, Տրոտ, որ այնպիսի մարդ դառնայիր,– հաստատակամ, ինքնագլուխ, հասկացա՞ր։ Երանի թե մայրիկդ ու հայրիկդ այդպես եղած լինեին. այն ժամանակ որքա՞ն ավելի երջանիկ կլինեին։

Պատասխանեցի նրան, թե հույս ունեմ, բնավորությունս այնպես կրթել, ինչպես ինքն է կամենում։

– Եվ որպեսզի սկսես, գոնե փոքր չափով, ինքնակամ շարժվել, սեփական ուժերիդ ապավինել, որոշել եմ, Տրոտ, որ դու մենակ ճանապարհ ընկնես։ Առաջ ուզում էի, որ մր. Դիկն էլ ուղեկցի քեզ, բայց հետո միտքս փոխեցի. թող նա մնա և ինձ խնամի։

Մր. Դիկը մի վայրկյան տխրեց, բայց երբ լսեց, թե իրեն է վիճակվում աշխարհիս ամենահրաշալի տիկնոջ մասին խնամք տանելու պատիվը, դեմքն իսկույն գոհության ժպիտով զվարթացավ։

– Մանավանդ որ,– ասաց տատս,– նրան հարկավոր է հիշատակարանը վերջացնել։

– Այո՛, այո՛,– շտապով հաստատեց մր. Դիկը։– Ես վճռել եմ, Տրոտուդ, իսկույն ևեթ վերջացնել։ Արդեն ժամանակն է։ Եվ երբ վերջանա... բոլորովին վերջանա ու տպարան գնա... – ասաց մր. Դիկը մի վայրկյան լռելուց հետո,– այն ժամանակ... մի փառավոր ձուկ կխաշենք։

Շատ չանցած՝ տատս ինձ դրամով լի մի քսակ տվեց և օրհնությամբ ճանապարհ ձգեց։ Մեկնելուս րոպեին բազմաթիվ համբույրների հետ մի քանի խորհուրդներ էլ ստացա նրանից։ Նա կրկնեց, թե որովհետև ուղևորությանս նպատակն է աշխարհ տեսնել ու փորձվել, ուստի լավ կլինի, եթե Սուֆֆոլկ գնալիս կամ այնտեղից ետ գալիս մի քանի օր Լոնդոնում մնամ։ Նրա ասելով՝ ճանապարհս կարող էր երեք շաբաթ կամ մի ամիս տևել։ Գատարյալ ազատություն էր տրվում ինձ՝ անելու ինչ որ կամենամ, միայն պայմանով, որ չորս կողմս նայելուց ու մտածելուց զատ՝ ամեն բանի մասին շաբաթը երեք անգամ լիակատար տեղեկություն գրեմ իրեն։

Ես գնացի նախ Կենտրբերի՝ Ագնեսին ու մր. Ուիկֆիլդին, ինչպես և բարի դոկտորին մնաս բարով ասելու համար։ Ագնեսը շատ ուրախացավ ինձ տեսնելով և ասաց, թե իմ հեռանալուց հետո նրանց տունը այլևս ինքն իրեն չի նմանում։

– Ես էլ ձեզնից բաժանվելուս օրից ի վեր ինքս ինձ չեմ նմանում,– ասացի ես։– Ձեզնից հեռանալով, կարծես աջ ձեռքս կորցրել եմ, Ագնես։ Ավելին կասեմ. առանց ձեր ներկայության՝ սիրտս էլ, խելքս էլ վտանգված են։ Ամեն մարդ, որ ճանաչում է ձեզ, Ագնես, ձեզ լսում է և ձեր խորհրդին հետևում։

– Իսկ ինձ թվում է, թե բոլորն էլ ինձ երես են տալիս – ասաց Ագնեսը ժպտալով։

– Ո՛չ, Ագնես։ Երես չեն տալիս այլ գովում են, որովհետև դուք ամենից լավն եք։ Դուք բարեսիրտ եք, հեզաբարո, միշտ մարդասեր և արդար։

– Է՛հ,– ասաց Ագնեսը քրքջալով ու ձեռագործը շարունակելով,– այնպես եք խոսում, կարծես թե ես միս Լարկինսը լինեի։

– Այդ ի՞նչ հանաք է, Ագնես։ Ինչո՞ւ եք մտերմությունս այդպես հեգնում,– ասացի ես կարմրելով իմ կապույտ գերչին հիշելուց։– Սակայն, Ագնես, ես դարձյալ առաջվա նման սրտաբաց կլինեմ ձեր առջև. այս բանում միշտ անփոփոխ կմնամ։ Թե վշտանամ, թե սիրահարվեմ, եթե իսկապես էլ սիրահարվեմ, ձեզ կհայտնեմ, եթե միայն թույլ տաք։

– Բայց չէ՞որ միշտ էլ իսկապես եք սիրահարվել,– ասաց Ագնեսը նորից ծիծաղելով։

– Օ՛, այն բոլորը երեխայություն էր, աշակերտի հիմարություն,– ասացի ես, նմանապես ծիծաղելով, թեև փոքր-ինչ շփոթված։– Բայց այժմ ես աշակերտ չեմ, ժամանակը փոխվել է, և գիտեմ մի օր կգա, երբ այս կիրքն առանց կատակի սոսկալի կերպով կտիրանա իմ հոգուն։ Զարմանում եմ, Ագնես, որ ձեզ համար այդ օրը դեռ չի հասել։

Ագնեսը նորից ծիծաղեց ու գլուխը թոթվեց։

– Այո, գիտեմ, չի հասել,– շարունակեցի ես – եթե ոչ պարզ կասեիր ինձ, և կամ թե,– ավելացրի, նրա շիկնելը տեսնելով,– գուշակել կտայիք, թե հասել է։ Սակայն, Ագնես, ես չեմ ճանաչում և ոչ մի մարդ, որ ձեր սիրուն արժանի լիներ։ Անհրաժեշտ է, որ այնպիսի մեկը հանդես գա, որ իր ազնիվ բնավորությամբ ու ձիրքով իմ բոլոր ծանոթներից գերազանց լինի. եթե ոչ՝ հավանություն չեմ տա նրան։ Այսուհետև ես սուր աչքով պիտի դիտեմ ձեր երկրպագուներին, և հավաստի եղեք, որ ով էլ ձեր ուշադրությունը գրավի, իմ խիստ քննությանը կենթարկվի։

Այսպես իրար հետ մտերմաբար խոսում էինք մեկ լուրջ, մեկ զվարթ եղանակով, ինչպես սովոր էինք անել մեր մանկության օրերին։ Սակայն Ագնեսը հանկարծ վրաս նայելով խոսելու ձևը փոխեց և ասաց.

– Տրոտուդ, մի բան պիտի հարցնեմ, որի մասին գուցե շուտով ձեզ հետ խոսելու համար առիթ չունենամ,– մի բան, որի մասին միայն ձեզ կարող եմ հարցնել։ Արդյոք մի քանի ժամանակից ի վեր հորս մեջ փոփոխություն նկատե՞լ եք։

– Ուրեմն ասացեք՝ ի՞նչ է այդ բանը,– ասաց նա կիսաձայն։

– Թույլ կտաք հարկավ, որ համարձակ խոսեմ։ Գիտեք հո, Ագնես, թե որքան եմ սիրում նրան։

– Այո՛, գիտեմ։

– Ինձ թվում է, Ագնես, թե նրա վրա վատ է ազդում այն սովորությունը, որ կարծես սաստկացել էր՝ ձեր տունը մտնելուցս ի վեր։ Նա շատ ջղային է դարձել... գոնե այդպես եմ նկատում։

– Եվ չեք սխալվում,– ասաց Ագնեսը, գլուխը շարժելով։

– Նրա ձեռքերը դողում են, գլուխը պարզ չէ, իսկ աչքերը ահարկու են։ Ես նկատել եմ, որ հատկապես այն ժամանակ են գործի համար նրա մոտ գալիս, երբ նա տկար է և գործ տեսնելու անձեռնհաս։

– Եվ եկողն Ուրիասն է,– ասաց Ագնեսը։

– Այո՛։ Զգալով, որ այդպիսի ժամանակ որևէ գործ լավ քննել և կամ իր վիճակն ուրիշների աչքից թաքցնել անհնարին է, բնականաբար տանջվում է. հետևյալ օրն այդ տանջանքը սաստկանում է, երրորդ օրը ավելի, և այսպես է առաջ գալիս նրա լքումն ու թախիծը։ Մի՛ վրդովվեք, Ագնես, սակայն դեռ անցյալ երեկո էր, որ ես նրան այդ դրության մեջ գտա։ Գլուխը սեղանին դեմ տված՝ երեխայի պես լաց էր լինում։

Դեռ խոսքս չէի ավարտել, երբ Ագնեսն իր մատը շրթունքին դրեց և նույն րոպեին վերկենալով վազեց հորը դիմավորելու։ Դահլիճի դռան մոտ նրանք իրար համբուրեցին և երկուսն էլ վրաս

նայեցին։ Ագնեսի հայացքը շատ սրտաշարժ էր։ Նրա աչքերը ջերմ երախտագիտություն ու գորով էին արտահայտում դեպի որդեսեր, հոգատար հայրը և մի աղերս դեպի ինձ՝ հոր նկատմամբ ներողամիտ լինելու և չկշտամբելու նրան ո՛չ խոսքով, ո՛չ էլ մտքով։ Նա պարծենում էր իր հորով, պաշտում նրան և միևնույն ժամանակ մորմոքվելով կարեկցում նրա ցավին։ Ոչ մի լեզու չէր կարող ավելի լավ հասկացնել ինձ այդ զգացմունքները և օրիորդի վստահությունը իմ համակրության վրա, քան նրա մնջիկ հայացքը։

Այդ օրը մենք դոկտորի մոտ էինք կանչված։ Գնացինք երեկոյան թեյի ժամին և նրան գրասենյակում, վառարանի առջև նստած գտանք. այնտեղ էին և նրա նորատի կինն ու զոքանչը։ Իմ փոքրիկ ուղևորությունը Չինաստան գնալու պես բան երևաց դոկտորին։ Նա ինձ մի արգո հյուրի նման ընդունեց և սպասավորին ասաց, որ նոր փայտ գցի կրակի մեջ. ուզում էր պարզ տեսնել իր նախկին աշակերտի երեսը։

– Այլևս շատ նոր դեմքեր տեսնելու չեմ մեր հեռացող Տրոտուդի տեղ, սիրելի Ուիկֆիլդ,– ասաց դոկտորը, ձեռքերը տաքացնելով։– Արդեն սկսել եմ ծուլանալ և հանգստության կարոտ եմ։ Հետևյալ կիսամյակին մտադիր եմ ուրիշ մարդու հանձնել աշակերտներիս և ավելի խաղաղ կյանք վարել։

– Այո՛, դոկտոր, արդեն տասը տարի է, որ կրկնում եք միևնույնը,– նկատեց մր. Ուիկֆիլդը։

– Այո՛, կրկնել եմ, բայց այս անգամ անպատճառ ասածս պիտի կատարեմ,– ավելացրեց դոկտորը։– Վարժարանիս ավագ ուսուցիչը կհաջորդի ինձ... արդեն վերջացած բան համարեցեք այս։ Ձեզ կմնա մեր պայմանները մի օրինական դաշնագրով վավերացնել և մեզ իրար հետ այնպես կապել, ինչպես կապում են կասկածելի անձերին։

– Եվ հոգալ,– ասաց մր. Ուիկֆիլդը,– որ դուք ծուղակի մեջ չընկնեք։ Այսպես էլ անշուշտ կլինի, եթե պայմանագիրը միայն ինքներդ շարադրեք։ Լավ ուրեմն, ես կպատրաստեմ։ Երանի թե պաշտոնիս մեջ դրանից վատ գործ չունենայի։

– Այնուհետև ինձ ուրիշ բան չի մնա անել,– ասաց դոկտորը ժպտալով,– քան միայն բառարանը շարունակել... և դարձյալ մի պարտք կատարել, որ բառարանից էլ կարևոր է... չէ՞, Աննի։

– Մրս. Ստրոնգը թեյի սեղանի առջև էր նստած Ագնեսի հետ։ Երբ մր. Ուիկֆիլդը նրա վրա նայեց, նա շփոթվելով ու վարանելով խույս տվեց ծերունու զննող հայացքից և այսպիսով նրա ուշադրությունը ավելի գրավեց։

– Կարծեմ այս օրերս Հնդկաստանից մի նամակաբեր նավ է եկել,– ասաց մր. Ուիկֆիլդը կարճատև լռությունից հետո։

– Այո՛, այո, և նամակներ կան միստր Ջոն Մելդրնից,– ասաց դոկտորը։

– Իրա՞վ։

– Խեղճ Ջոն,– մեջ բերեց մրս. Մարկլիեմը, գլուխը շարժելով։– Օ՜հ, ինչ սարսափելի կլիմա է։ Ասում են, թե մարդիկ այնտեղ հրեղեն ավազի վրա են ապրում և գրեթե կիզիչ հայելու տակ։ Ջոնը թեև պնդակազմ էր երևում, բայց իրոք այդպես չէր։ Այս զոհաբերությունը հանձն առնելիս, սիրելի դոկտոր, նա ավելի իր հոգեկան զորությանն էր ապավինել, քան թե մարմնի ամրությանը։ Ահա Աննին էլ կհաստատի, որ մորեղբորորդին բնավ ուժեղ չէր,– ասաց մրս. Մարկլիեմը տաքանալով և մի առ մի աչքի անցնելով բոլորիս։– Դու հո լավ գիտես, հոգյակ իմ Աննի, որ Ջոնը մանկության ժամանակ էլ ուժեղ չէր, երբ դուք միասին թև-թևի տված ամբողջ օրերով զբոսնում էիք կամ խաղում։

Աննին պատասխան չտվեց այդ խոսքերին։

– Ուրեմն, տիկին, ձեր ասածից պետք է հետևեցնել, թե մր. Մելդրնը հիվանդ է, չէ՞,– հարցրեց մր. Ուիկֆիլդը։

– Հիվա՞նդ,– գոչեց Հին Զինվորը։– Ո՛չ, սըր, միայն մի բառով չի կարելի նրա վիճակը բացատրել։

– Հիվանդ չէ, բայց առողջ էլ չէ,– ասաց մր. Ուիկֆիլդը։

– Այո՛, առողջ էլ չէ,– կրկնեց Հին Զինվորը։– Մեզ հայտնի է, որ նա շատ անգամ արևահար է եղել, երկու-երեք անգամ ճահճային ջերմ ստացել և սարսափելի ցավեր քաշել այն վտանգավոր աշխարհում։ Իսկ գալով լյարդին, արդեն ճանապարհ ընկնելիս նա իր լյարդը քայքայել էր։

– Այդ բոլորը նա՞ է գրել ձեզ,– հարցրեց մր. Ուիկֆիլդը։

– Նա՞։ Ո՛չ, սըր,– գոչեց մր. Մարկլիեմը։– Դուք երևի շատ սակավ եք ճանաչում նրան, որ այդպիսի բան եք հարցնում։ Ջոն Մելդրնը նամակ գրի՞։ Ո՛չ, սըր։ Չորս կատաղի ձիու պոչից էլ որ կապեն նրան ու քաշ տան, դարձյալ նամակ չի գրի։

– Մայրիկ,– ասաց մրս. Ստրոնգը։

– Սիրելի Աննի,– նկատեց մայրը,– եթե չես կամենում իմ խոսքերը հաստատել, մեկ ընդ միշտ խնդրում եմ՝ գոնե մի ընդհատիր ինձ։ Դու ինքդ լավ գիտես, որ Ջոնը ավելի հոժար կլինի գետնաքարշ ձգվել տարվել չորս ամեհի ձիերից... բայց ինչո՞ւ եմ միայն չորս ասում, ոչ թե ութ, տասնվեց, երեսուներկու, անթիվ անհամար ձիերից, քան մի այնպիսի բան անել, որ դոկտորի կամքին հակառակ լիներ։

– Այսինքն՝ Ուիկֆիլդի կամքին,– ասաց դոկտորը, երեսը շոյելով և բարեկամի վրա ներողամիտ հայացք ձգելով։– Կամ՝ երկուսիս կամքին ու դիտումներին։ Ես միշտ ասում էի՝ «Անգլիայում կամ դուրսը»։

– Իսկ ես ասում էի՝ «դուրսը»,– հարեց մր. Ուիկֆիլդը լրջությամբ։– Ես էի խորհուրդ տալիս, որ նա հայրենիքից հեռացվի, և ես եմ պատասխանատու այս բանի համար։

– Ահ, ո՞վ է պատասխանատվության մասին բան ասում,– ասաց Հին Զինվորը։– Տարակույս չկա, սիրելի մր. Ուիկֆիլդ, որ ամեն բան լավ էր արված, ազնիվ և բարի մտքով արված։ Բայց եթե խեղճ երիտասարդը չի կարող այնտեղ ապրել, ասել է, թե նրան չի կարելի այնտեղ ապրել։ Եվ եթե չի կարելի այնտեղ ապրել, նա լավ կհամարի այնտեղ մեռնել, քան դոկտոր Ստրոնգի դիմումներին հակառակ գնալ։ Ես լավ եմ ճանաչում Ջոն Մելդրնին,– շարունակեց Հին Զինվորը, մարգարեական ոգևորությամբ հովիարը շարժելով,– և հավաստի եմ, որ նա հազարապատիկ լավ կհամարի այնտեղ մեռնել, քան դոկտորի դիմումները հեղաշրջել։

– Լավ է, լավ, տիկին,– ասաց դոկտորը զվարթությամբ։– Ես այնքան մոլեռանդ չեմ, որ չկարողանամ դիտավորությունս փոխել և մի ուրիշ բան մտածել։ Եթե մր. Ջոն Մելդրնը տկարության պատճառով վերադառնա, թույլ չենք տա նրան նորից հեռանա Հնդկաստան և կաշխատենք, որ այս երկրում նրա համար մի լավ պաշտոն գտնվի։

Այս ազնիվ և հարկավ անսպասելի ճառի իմաստից մրս. Մարկլիեմը այն աստիճան հուզվեց, որ ուրիշ բան չգտավ անել, քան միայն վկայել, թե դոկտորն իրոք վեհանձն մարդ է, և մի քանի անգամ հովիարը համբուրել ու ապա ծայրով նրա ձեռքը շոշափել։ Այնուհետև նա Աննին թեթև հանդիմանեց, թե ինչո՞ւ նա անտարբեր է, մինչ դոկտորը այնքան առատ բարիք է զեղում նրա մանկության ընկերի վրա։ Այս էլ որ վերջացավ, մրս. Մարկլիեմը հիշատակեց իր գերդաստանի մյուս արժանավոր անդամներին, որոնց միայն փոքր ի շատե օգնել պետք էր, որպեսզի բոլորն էլ երևելի մարդիկ դառնային։

Մրս. Ստրոնգը ոչ միայն ոչինչ չասաց այս բոլորի դեմ, այլ աչքերն անգամ չբարձացրեց։ Մր. Ուիկֆիլդը նրան անդադար դիտում էր մտքերի մեջ, որ կարծես չէր էլ մտածում, թե իրեն էլ դիտող կա։ Վերջ ի վերջո հարցրեց, թե հատկապես ո՞ւմ և ի՞նչ է գրել Ջոն Մելդրնը իր մասին։

– Ահա, տեսեք,– ասաց մրս. Մարկլիեմը, մի նամակ վերցնելով վառարանի դարակից, որի ներքև դոկտորն էր նստած,– խեղճը շիտակ գրում է դոկտորին, թե... որտե՞ղ է այդ... ահա գտա։ Գրում է. «Ցավոք սրտի պիտի հայտնեմ, թե առողջությունս սաստիկ վտանգված է և որ գուցե ստիպված լինեմ առժամանակ վերադառնալ Անգլիա, որովհետև, բժիշկների ասելով, այս է միայն ապաքինվելու միջոցը»։ Խեղճ երիտասարդ։ Ապաքինվելու միակ միջոցը, միակ հուսը հայրենիքն է։ Կարծեմ այս բավական պարզ է։ Սակայն Աննիին գրած նամակը ավելի պարզ է։ Հապա նամակը ցույց տուր, Աննի։

– Ո՛չ այժմ, մայրիկ,– ասաց մրս. Ստրոնգը թույլ ձայնով։

– Ինչո՞ւ ոչ այժմ,– հարցրեց մրս. Մարկլիեմը։– Մի քանի պարագաներում դու շատ խենթ ես, սիրելիս, և վերին աստիճանի անտարբեր ազգականներիդ շահերին։ Այդ ինչի՞ նման է։ Կարծեմ նամակի գոյությունն անգամ չէինք իմանա, եթե ես ինքս չհարցնեի։ Քո կարծիքով, հոգյակ իմ, մի՞թե այդ նշանակում է հավատարիմ լինել դոկտոր Ստրոնգին։ Զարմանում եմ։ Սակայն դու գիտես։

Մրս. Ստրոնգն ակամա նամակը հանեց, և երբ ես նամակն առի նրա մորը տալու համար, նկատեցի, որ տվող ձեռքը դողում է։

– Ահա այժմ կտեսնենք, թե ի՞նչ է գրում,– ասաց մր. Մարկլիեմը, ակնոցը աչքին դնելով։– «Հին օրերի հիշատակը, սիրելի Աննի»... և այլն։ Չէ, այս չէ։ «Պետք է ասել, որ ծեր ու բարեսիրտ պրոկտորը»... ո՞վ է այս պրոկտորը։ Ա՜հ, Աննի, ինչպես վատ է գրում քո մր. Մելդրնը և որքան հիմար եմ ես... պրոկտոր չէ «դոկտոր»։ Իրավ որ բարեսիրտ դոկտորը։ Հարկավ բարեսիրտ։

Այստեղ մրս. Մարկլիեմը փոքր-ինչ կանգ առավ, նորից հովհարը համբուրեց, ծայրը դոկտորի կողմը ճոճելով, որ այդ միջոցին գոհ ժպիտով մեզ վրա էր նայում։

– Ահա գտա, ինչ որ պետք է։ Լսեցեք։ «Դու, իհարկե, չես զարմա, սիրելի Աննի... իհարկե չի զարմանա, քանի որ գիտե, որ Ջոնը երբեք մի քաջառողջ մարդ չի եղել... «չես զարմանա, եթե իմանաս, որ այս երկրում անթիվ չարչարանք կրելուցս հետո՝ վճռել եմ, համենայն դեպս հիվանդության պատճառով արձակուրդ առնել, եթե տան, իսկ եթե չտան՝ բոլորովին պաշտոնս թողնել։ Անտանելի է, ինչ որ կրել եմ և դեռ կրում եմ այս հեռավոր աշխարհում։ Եվ եթե այս պատվական մարդը չլիներ,– ավելացրեց մրս. Մարկլիեմը, իր հեռագրական նշանները դոկտորի հասցեին կրկնելով ու նամակը ծալելով,– ես կվերադառնայի այդ բոլորի մասին մտածելուց։

Մր. Ուիկֆիլդը ոչ մի բառ չարտասանեց, և թեպետ պառավ տիկինը նրան նայելով սպասում էր թե նամակի մասին ի՞նչ կասի, նա լուռ նստած էր, աչքերը ներքև սևեռած։ Վաղուց արդեն սկսել էին ուրիշ նյութերի մասին խոսել, բայց նա նույն մտածկոտ դրության մեջ էր մնում, միայն մեկ-մեկ խոժոռ նայելով դոկտորի կամ նրա կնոջ վրա և կամ երկուսին էլ միասին։

Դոկտորը երաժշտություն սիրող էր։ Ագնեսը նստեց դաշնամուրի մոտ և մի քանի բան երգեց ջերմ զգացումով. հետո երգեց մրս. Ստրոնգը։ Հետո սկսեցին միասին երգել ու նվագել, և մենք մի փոքրիկ համերգ վայելեցինք։ Այդ միջոցին ես երկու բան նկատեցի. նախ այն, որ թեև Աննին ինքն իրեն շուտով տիրեց և առաջվա պես զվարթացավ, բայց թե նրա ու մր. Ուիկֆիլդի միջև անդունդ կա, որ բոլորովին նրանց բաժանում է, երկրորդ՝ որ մր. Ուիկֆիլդը կարծես դժգոհ է Ագնեսի մտերմությունից Աննիի հետ և անհանգստությամբ է նայում այդ բանի վրա։ Պիտի ասեմ, որ մր. Ջոնի մեկնելու երեկույթին իմ նկատած բաները հիշելով, նրանք իմ աչքում հանկարծ մի այնպիսի իմաստ ստացան, որպիսին մինչև այժմ մտքովս էլ չէր անցել։ Աննիի անմեղ գեղեցկությունը այլևս անմեղ չէր թվում ինձ, ինչպես առաջ, և նայելով նրա կողքին նստած իրոք անմեղ, պարզ ու մաքուր Ագնեսին, ասում էի ինձ, թե դրանք երկուսն իրար հարմար ընկեր չեն։

Սակայն երկուսն էլ այնքան զվարթ էին, որ նրանց շնորհիվ երեկոն մի րոպեի պես անցավ։ Միայն վերջը մի փոքրիկ դեպք պատահեց, որ երբեք չպիտի մոռանամ։ Երբ որ նորատի կանայք իրարից հրաժեշտ էին առնում և Ագնեսը վերկենալով ուզում էր մրս. Ստրոնգին համբուրել, մր. Ուիկֆիլդը իբր թե անգիտաբար գնաց երկուսի միջև կանգնեց ու արագ հեռացրեց աղջկան։ Այդ րոպեին կարծես նորից մրս. Ստրոնգի երեսի վրա այն խորհրդավոր արտահայտությունը նշմարեցի, որ տեսել էի նրա ազգական երիտասարդի ճանապարհ ընկնելու գիշերը։ Այժմ էլ նա միևնույն հայացքով էր նայում դոկտոր Ստրոնգին։

Չեմ կարող ասել, թե այդ հայացքը ի՞նչ տպավորություն գործեց վրաս, ոչ էլ մեկնել, թե ինչո՞ւ հետո մրս. Ստրոնգին հիշելիս չէի կարողանում այդ հայացաքը մոռանալ և նրա դեմքն նախկին անմեղ սիրալիրությամբ պատկերացնել։ Անհանգիստ սրտով վերադարձա իմ սենյակը։ Այն հայացքի հիշատակը հալածում էր ինձ։ Ինձ թվում էր, թե մի սևաթույր ամպ է կախված դոկտոր Ստրոնգի տան վրա։ Հարգելով և սիրելով նրա ալիքը, ցավում էի, որ նրա ազնիվ սիրտը հավատ է ընծայում դավաճաններին, և սաստիկ զայրանում նրա խարդախ մերձավորների վրա։ Գուշակում էի, իհարկե, դեռ անորոշ կերպով, որ շատ չանցած մի ահագին վիշտ, մի անարգանք պիտի հասնի այն հանգիստ տան, ուր ես աշխատել ու խաղացել էի, իբրև մանուկ, և անջնջելի արատ դնի նրա վրա։ Այլևս ինձ համար զվաճություն չէր մտաբերել լայնատերև հալվեները, որոնք հարյուր տարում մի անգամ են ծաղիկ տալիս, ոչ էլ կանաչ ու հարթ գետինը, ոչ էլ քարե սափորները, ոչ էլ դոկտորի ճեմելիքը, ոչ էլ մայր եկեղեցու զանգակների դաշնակավոր հնչյունը, որ տարածվում էր բոլորի վրա։ Ասես թե մանկությանս անդորր սրբարանը պղծվել էր և նրա խաղաղությունն ու պատիվը քամիներին մատնվել։

Առավոտյան պիտի բաժանվեի այն հին տանից, որ ինձ համար Ագնեսի բարի ազդեցությամբ լի էր, և բոլոր մտքերս այդ հրաժեշտին էին նվիրված։ Անշուշտ նորից կվերադառնամ, և գուցե շուտով. գուցե դարձյալ ննջարանիս մեջ կգիշերեմ, բայց և այնպես երջանկությանս օրերն անցել են և այլևս ես այդ սիրելի տան բնակիչը չեմ։ Սիրտս տրտում էր, մինչ դարսում էի մնացած գրքերս ու շորերս, որ պետք էր Դուվր ուղարկել, և աշխատում էի վիշտս ծածկել Ուիլրաս Հիպից. նա մեծ եռանդով օգնում էր ինձ. կարծես ուրախ էր, որ մեկնում եմ։

Ագնեսից ու նրա հորից բաժանվելիս շատ էի ուզում արիասիրտ երևալ, բայց ջանքերս զուր եղան։ Ես նստեցի Լոնդոն գնացող դիլիժանսի վերևի մասում։ Հրաժեշտի վշտից սիրտս այնքան էր փափկացել, որ պատրաստ էի, քաղաքովն անցնելիս, գլուխ տալ անգամ իմ ոխերիմ թշնամուն՝ մսագործին, և հինգ շիլինգ գինու փող շպրտել նրան։ Բայց նա այնպես դաժան երևաց ինձ ահագին դանակով խանութի կոճղը քերելիս և դեմքն այնպես այլանդակված առջևի մեկ ատամը կորցնելուց (որը ես էի կռվում փշրել), որ լավ համարեցի ոչ մի հաշտության քայլ չանել,– և հինգ շիլինգը գրպանումս մնաց։

Երբ քաղացից դուրս գալով մեծ ճամփու վրա ոտք դրինք, ամենից առաջ կամեցա կառավարին ցույց տալ, որ ես արդեն տղամարդ եմ, և բամբ ձայնով սկսեցի խոսել նրա հետ։ Վերջին փորձը շատ դժվար էր, բայց աշխատում էի թավ ձայն հանել, կարծելով, թե չափահաս ջենտլմենին ուրիշ կերպ խոսել անվայել է։

– Դուք ուղղակի Լոնդո՞ն եք գնում, սըր,– հարցրեց կառապանը։

– Այո, Ուիլյամ,– ասացի ես զիջողաբար (նա ինձ փոքր-ինչ ծանոթ էր)։– Գնում եմ Լոնդոն, այնտեղից էլ Սուֆոլկ կգնամ։

– Երևի թե որսորդություն անելու, սըր,– ասաց կառապանը։

Անտարակույս նա լավ գիտեր, որ տարվա այդ եղանակին որսի գնալը միևնույն էր թե կետ բռնելու գնայի, բայց նրա հարցնելը դուր եկավ ինձ, և ես իբր թե անորոշ եղանակով ասացի.

– Դեռ չգիտեմ, գուցե մի երկու հրացան պարպեմ։

– Ասում են, թռչունները երկչոտ են դարձել,– ասաց Ուիլյամը։

– Ես էլ եմ այդպես լսել։

– Դուք սուֆոլկի՞ց եք, սըր։

– Այո՛, սուֆոլկցի,– ասացի ես ծանրությամբ։– Սուֆոլկը իմ ծննդավայրն է։

– Լսածիս նայելով՝ այնտեղի **դըմպլինները**[26] շատ համեղ են,– ասաց Ուիլյամը։

Այդ մասին ոչ մի բան չգիտեի, բայց անհրաժեշտ համարելով բարձր պահել իմ նահանգի հռչակը և ցույց տալ, թե լավ եմ ծանոթ նրա հետ, ասացի.

– Չեք սխալվում։

– Իսկ պընչերը[27],– հարցրեց Ուիլյամը։– Ա՛յ հրաշալի ձիեր։ Սուֆոլկի մեկ պընչը իր ծանրության չափ ոսկի արժի։ Դուք ինքներդ, սըր, պընչի ձիեր չե՞ք պահել։

– Ո՛չ, առիթ չեմ ունեցել։

– Ահա հետևդ նստած է մի ջենտլմեն,– շարունակեց Ուիլյամը,– որ այդպիսի ձիեր հարյուրներով է պահում։

Ջենտլմենը մի շիլ, անդուրեկան, սրադունչ պարոն էր, գորշագույն բարձր ու նեղեզր գլխարկով և սաստիկ նեղ տաբատով։ Նրա կզակը Ուիլյամի ուսին էր հենված և ինձ այնպես մոտիկ էր, որ շունչը ծոծրակիս էր դիպչում, և երբ ես գլուխս շուռ տվի, նա շիլ աչքը խփեց և մյուսովը ձիերին նայեց մի բանիմաց մարդու նման։

– Այնպես չէ՞,– ասաց Ուիլյամը։

– Ի՞նչն այնպես չէ,– հարցրեց հետևի ջենտլմենը։

– Որ դուք հարյուրավոր պընչեր եք պահում Սուֆոլկում։

– Հարկավ,– ասաց մյուսը։– Ձիու ու շան տեսակ չկա, որ ես չպահեմ ու չմարզեմ։ Կան մարդիկ, որոնց համար ձիերն ու շները միայն զվարճություն են։ Իսկ ինձ համար հաց ու ջուր են, բնակարան, կին, ընտանիք, զավակներ, ուսում, թվաբանություն ու հաշիվ, քթախոտ ու ծխախոտ, վերջապես քուն։

– Ա՛յ քեզ մարդ։ Չէ՞որ այսպիսի մարդուն վայել չէ մեր հետևը նստել,– քչփչաց Ուիլյամը ականջիս և երասանը շարժեց։

Այդ նկատողությունից իմացա, որ նա կցանկանար իր կողքին նստած տեսնել պարոնին, և կարմրելով առաջարկեցի իմ տեղը։

– Եթե միայն ձեզ անախորժ չի թվա, սըր, այդպես ավելի լավ կլինի,– ասաց Ուիլյամը։

Այս դեպքը ես միշտ համարել եմ իմ առաջին անկումը կյանքի ասպարեզում։ Փոստի գրասենյակում դիլիժանսի տեղ վերցնելիս՝ ես հստակ գրել էի տվել գրքի մեջ անվանս ներքև՝ «առաջին բարձր տեղը» (Box Seat), և վճարել կես ոսկի։ Ես հագել էի նոր վերարկու, հետս առել մի նոր պլեդ, որպեսզի այդ վեհավայր նստարանին պատիվ բերեմ. ես պարծենում էի նրանով։ Եվ հանկարծ, հենց ճանապարհի սկզբին, ինձ խաբում է մի շիլկանի գոեհիկ մարդ, որի արժանիքը վրայից փչող ախոռի հոտն էր։

Ինձ հատուկ էր մի տեսակ անվստահություն դեպի իմ անձը, մի տեսակ կասկած, որ ինձ շատ էր վնասել կյանքիս մանր դիպվածներում։ Կենտրբրիի դիլիժանսի դեպքը հարկավ չէր կարող նվազեցնել բնությանս այդ հատկությունը։ Ջուր էի հնչյունս սաստկացնում, զուր էի աշխատում կրծքիս խորքից բամբ ձայն հանել. այս բոլորը պետք չեկավ։ Ես զգում էի, որ չարաչար հաղթված եմ և դեռ անչափ տհաս եմ։

---

[26] Կարկանդակի տեսակ։

[27] Փոքրիկ, գունդ ու կլոր ձիեր։

Այնուամենայնիվ, հետաքրքիր ու հաճելի էր ինձ՝ լավ հագնված, լավ կրթված, լիաքսակ երիտասարդիս, քառաձի դիլիժանսի վերևը նստել և շուրջս նայելով այն տեղերը մտաբերել, ուր մի ժամանակ քնել էի տառապալից ուղևորությանս միջոցին: Մտքերս բավական սնունդ էին գտնում ճանապարհի յուրաքանչյուր մղոնի վրա, և անցվոր շրջմոլիկներին նայելիս միտքս էին գալիս կասկածելի հայացքները և ես նորից զգում էի պղնձագործի սև բռունցքը, որ ուզում էր շապիկս պատռել: Չետեմի նեղ փողոցներով անցնելիս աչքիս դիպավ ժակետս գնող հրեշի որջը, և ես գլուխս տնկեցի այն անկյունը տեսնելու, ուր փողիս սպասելով ամբողջ ժամեր նստել էի մերթ արևի տակ, մերթ ստվերի մեջ: Իսկ երբ Լոնդոնին մոտեցանք և հասանք Սալեմ Հոուսին, ուր հեծում էի մր. Կրիկլի անագորյուն բազկի տակ, ես պատրաստ էի ներքև ցատկել և ամեն բան տալ, միայն թե կարենայի այդ չար մարդուն մի լավ ծեծել, ազատել նրա բոլոր աշակերտներին՝ վանդակափակ թռչնիկներին:

Իջանք Չերինգ կրոսում, **Ոսկի Խաչի** պանդոկը: Սպասավորն ինձ հասարակաց դահլիճը տարավ, իսկ սպասուհին ցույց տվեց ախոռի հոտով տոգորված մի փոքրիկ ննջարան, որ գերեզմանի պես խեղդուկ ու փակ էր: Այնտեղ էլ, ինչպես դիլիժանսում, ցավալի էր ինձ տեսնել, որ մատաղ հասակիս պատճառով ոչ ոք վրաս ուշադրություն չի դարձնում. սպասուհին պատվերներս բնավ բանի տեղ չէր դնում, իսկ սպասավորն այնքան լիրբ էր, որ խորհուրդներ էր տալիս ինձ անփորձությանս օգնելու համար:

– Այժմ տեսնենք, ինչ կպատվիրեք ճաշի համար,– ասաց սպասավորը համարձակ:– Ջահել տղայք սովորաբար հավեղեն շատ են սիրում. մի տապակած վառեկ չէիք հրամայի:

Հպարտ-հպարտ պատասխանեցի, թե տապակած վառեկ տեսնել անգամ չեմ ուզում:

– Իրա՞վ,– ասաց սպասավորը:– Գիտեմ, որ երիտասարդ ջենտլմենները ձանձրացել են ոչխարի կամ կովի մսից: Իսկ հորթի կոտլետին ի՞նչ կասեք:

Մի ուրիշ բան չկարողանալով մտաբերել, այդ առաջարկն ընդունեցի:

– Կարտոֆիլ սիրո՞ւմ եք,– ասաց սպասավորը խորամանկ ժպիտով և գլուխը մի կողմ թեքեց:– Պատանի ջենտլմենները արդեն զզված են կարտոֆիլից:

Ամենաբամբ ձայն հանելով, հրամայեցի նրան գնալ բերել հորթի կոտլետ, կարտոֆիլ, ամեն մի բան, ինչ-որ պետք է, և հարցնել գրասենյակում, արդյոք նամակներ չկա՞ն Տրոտուդ Կոպպերֆիլդ իսքուայրի[28] անունով: Լավ գիտեի, որ նամակներ չկան և չեն կարող լինել, բայց չէ՞ որ նամակների սպասելը հասակավոր մարդ լինելու նշան է:

Սպասավորն իսկույն պատասխան բերեց, թե նամակներ չկան (ես, իհարկե, շատ զարմացա), և սկսեց սեղանը ծածկել: Այս անելիս հարցրեց ինձ, թե սովորաբար ինչ գինի եմ գործածում, և լսելով «կես շիշ խերես», հարմար դատեց, կարծում եմ, զանազան շշերում մնացած հեղուկներից հավաքել այդ քանակը: Այսպես եմ կարծում, որովհետև լրագիր կարդալիս տեսա, որ մի ցած միջնորմի մյուս կողմում, որ նրա առանձին խցիկն էր, նա զանազան շշերից բովանդակությունը մեկի մեջ էր լցնում, ինչպես որ անում են դեղագործները դեղատոմսի համեմատ: Գինին մի անպիտան քացխած բան էր, թեև սպասավորը երդում էր անում, թե տարաշխարհի առաջնակարգ գինի է: Նրա վկայությամբ քաջալերված, ես բոլորը պարպեցի առանց մի բան ասելու:

Այնուհետև բավական զվարթ տրամադրության մեջ լինելով (որից կարելի է հետևություն անել, թե քացխած գինին էլ օգտակար է երբեմն), որոշեցի թատրոն գնալ: Ընտրեցի Կովենտ Գարդնի թատրոնը և այնտեղ մի օթյակի խորքից «Հուլիոս Կեսարի» ներկայացումը և մի նոր պանտոմիմ տեսա: Չեմ կարող գրով բացատրել, թե ինչ հրաշալի և նոր հրճվանք զգացի, երբ պանծալի հռոմեացիկ, որոնք մինչև այժմ միայն լատիներեն չոր դասերի նյութ էին եղել դպրոցում, հանկարծ հոգի առնելով սկսեցին շարժվել բեմի վրա՝ ինձ զվարճություն տալու

[28] Esquire — ազատականների պատվանուն է. նշանակում է՝ զինակիր:

համար։ Ամբողջ հանդեսի միախառն իրականությունն ու կեղծիքը, Շեքսպիրի թովիչ լեզվի ազդեցությունը, դահլիճի պայծառ լույսը, երաժշտության հրապույրը, շքեղ հասարակությունը, սքանչելի կերպով ու հեշտությամբ իրար հաջորդող հոյակապ ու շողշողուն տեսարանները,– այս բոլորը այն աստիճան շլացրին ինձ և իմ առջև այնպիսի անհուն վայելքների հորիզոն բացեցին, որ երբ կես-գիշերին փողոց դուրս գալով հորդ անձրևի հանդիպեցի, ինձ այնպես թվաց, թե ամպերի վրայից, ուր կարծես մի ամբողջ դար վիպական կյանք էի վարել, գահավեժ ընկել եմ այս աղմկածուփ, թշվառ աշխարհը – աղոտ լապտերներով, իրար հրող անձրևանոցներով, իրար ընդհարվող կոշիկներով լի աշխարհը։

Թատրոնից ելա ոչ թե մտած դռնովս, այլ մի ուրիշով, և մի քանի վայրկյան կանգնած մնացի փողոցի մեջ. ասես թե իրոք այս աշխարհում մի օտարական լինեի. սակայն աջ ու ձախից մշտող ու հրող բազմությունը ուշքի բերեց ինձ, և ես քայլերս դեպի **Ռսկի Խաչի** պանդոկն ուղղեցի, ուր մի քանի ոստրե ու պորտր վայելելուց հետո՝ երկար ժամանակ սեղանատան կրակարանի առջև նստած մնացի, նորոգելով մտքիս մեջ այն փառահեղ երազը, որ տեսել էի թատրոնում։

Արդեն գիշերվա ժամը մեկից անց էր. ես դեռ այնքան հափշտակված էի ներկայացման պատկերներով և անցյալիս հիշատակներով – թատրոնը կարծես մի թափանցիկ վարագույր էր, որի միջից իմ բոլոր նախկին կյանքը ցոլանում էր,– որ չեմ էլ հիշում, թե ինչպե՞ս մի գեղեցիկ երիտասարդ ներս մտավ, որի վայելուչ, բայց անփույթ կերպով հագած հագուստը ինձ անծանոթ չպիտի լիներ։ Սակայն ուշադրություն չդարձրի նրա վրա և շարունակում էի մտամոլոր նստած մնալ կրակի առջև։

Վերջապես վերկացա իմ սենյակը գնալու ի մեծ բավականություն քնատ սպասավորի, որ սաստիկ անհամբերությունից արդեն սկսել էլ ոտքերը տեղափոխել, իրար վրա դնել, դեսուդեն ձգել ու ծռել։ Նորեկ պարնի մոտովն անցնելիս որոշակի նրա դեմքը տեսա։ Նույն րոպեին մի երկու քայլ ետ քաշվեցի և նորից նրան մտիկ արի։ Նա ինձ չճանաչեց, ես նրան իսկույն ճանաչեցի։

Մի ուրիշ ժամանակ շատ կարելի է վստահություն չունենայի անմիջապես դիմելու նրան և կամ հաջորդ օրվան թողնեի խոսակցելու առիթը, հետևաբար և կորցնեի նրան։ Բայց թատրոնի ազդեցությամբ բորբոքված՝ ես այնպիսի երախտագիտության հակում զգացի դեպի իմ նախկին պաշտպանը և իմ հին սերը դեպի նա հոգուս մեջ այնպես բռնկվեց, որ իսկույն մոտեցա նրան և սրտատրոփ ասացի.

– Ստիրֆորթ, չե՞ս ճանաչում ինձ։

Նա մտիկ տվեց ինձ ճիշտ առաջվա հայացքով, բայց չէր կարողանում ճանաչել։

– Մի՞թե մոռացել ես ինձ, Ստիրֆորթ։

– Աստված իմ,– գոչեց նա հանկարծ։– Մի՞թե սա այն փոքրիկ Կոպպերֆիլդն է։

Բռնեցի նրա երկու ձեռքը և չէի ուզում բաց թողնել։ Եթե չամաչեի ու չվախենայի նրան անհաճո երևալուց, նրա վզովը կփարվեի ու կարտասվեի։

– Օ՜հ, երբե՛ք, երբե՛ք, երբե՛ք այսքան ուրախ չեմ եղել, սիրելի Ստիրֆորթ։ Որքան գոհ եմ, որ տեսնում եմ քեզ։

– Ես էլ շատ գոհ եմ, որ տեսնում եմ քեզ,– ասաց նա, սրտանց ձեռքս սեղմելով։– Դե, սիրելի Կոպպերֆիլդ, բավական է այդքան հուզվես։

Կարծում եմ, սակայն, որ դժգոհ չէր, որ ես այնքան հուզված նրան նորից տեսնելով։ Ես իսկույն արտասուքս սրբեցի, որ չնայելով բոլոր ջանքերիս չէի հաջողում զսպել, և փորձեցի ծիծաղել, հետո նստեցինք իրար մոտ։

– Ասա, ո՞ր քամին է քեզ Լոնդոն բերել,– ասաց Ստիրֆորդը, ուսիս խփելով։

– Այսօր եմ եկել Կենտրբրիի դիլիժանսով։ Այդ գավառում բնակվող տատս որդեգրեց ինձ, և ես նոր եմ ուսումս ավարտել։ Իսկ դու ինչպե՞ս ես այստեղ ընկել, Ստիրֆորթ։

– Այժմ, ինչպես ասում են, ես Օքսֆորդի ուսանող եմ, այսինքն պարտավոր եմ տարին մի քանի անգամ մահու չափ այնտեղ ձանձրանալ. հիմա գնում եմ մորս տեսնելու։ Այս ի՛նչ սիրուն տղամարդ ես դու, ա՛յ Կոպպերֆիլդ։ Բայց երեսիդ նայելով, դարձյալ նույնն ես, ամենևին չես փոխվել։

– Ես քեզ իսկույն ճանաչեցի,– ասացի ես։– Եվ ո՞վ կարող է քեզ մոռանալ։

Ստիրֆորթը ծիծաղեց և շոյեց գլխի թավ մազերը։

– Այո,– ասաց նա զվարթ սրտով։– Տեսնում ես ինձ որդիական պարտքիս շավղի վրա, որ տանում է դեպի մայրս։ Նա Լոնդոնի մոտերքումն է բնակվում, սակայն ճանապարհներն այնքան զզվելի են և մեր տան կյանքը այն աստիճան տաղտկալի, որ լավ համարեցի տուն շտապելու փոխարեն՝ քաղաքում մնալ այս գիշեր։ Արդեն վեց ժամ կլինի, որ այստեղ եմ, այդ ժամանակն էլ թատրոնում անցկացրի մրափելով։

– Ես էլ թատրոն էի գնացել, Կովընտ Գարդն։ Օ՛հ, ինչ հրաշալի ներկայացում էր, Ստիրֆորթ։

Ստիրհորթը սրտանց քրքջաց։

– Ա՛խ դու, իմ սիրելի մանուկ Դեվիս,– ասաց նա, նորից ուսիս խփելով։– Մի կատարյալ դեյզի[29] ես։ Դաշտի ծաղիկն էլ արշալույսին քեզնից թարմ, քեզնից քնքույշ չի լինի։ Ես էլ Կովընտ Գարդնում էի, և կարող եմ ասել, որ օրումս ավելի թշվառ ներկայացում չէի տեսել։ Ձեզ եմ ասում, է՛յ պարոն։

Այս խոսքերն ուղղված էին սպասավորին, որ հեռվից մեծ ուշադրությամբ դիտում էր մեզ, և այժմ խորին հարգանքով մոտեցավ մեզ։

– Ո՞ր սենյակն եք տվել իմ ընկեր մր. Կոպպերֆիլդին,– հարցրեց Ստիրֆորթը։

– Հասկանում եմ, սըր,– ասաց սպասավորը շփոթվելով։– Մր. Կոպպերֆիլդն առայժմ քառասունչորսերորդ համարումն է, սըր։

– Ո՞ր սատանան է թելադրել ձեզ գոմի վրայի սենյակը տալ մր. Կոպպերֆիլդին։

– Ներեցեք, սըր, չգիտեինք... մր. Կոպպերֆիլդին ճանաչելու պատիվ չունեինք,– պատասխանեց սպասավորը կմկմալով։– Կարելի է, սըր, յոթանասուներկուերորդ համարն առաջարկել մր. Կոպպերֆիլդին, եթե բարեհաճի հավանել։ Այդ համարը ձերին կից է, սըր։

– Տարակույս չկա, որ այդ համարն ավելի լավ է,– ասաց Սթիրֆորթը։– Դե, գնացեք, կարգի բերեք, և իսկույն։

Սպասավորը նույն րոպեին անհետացավ՝ լսած հրամանը կատարելու։ Ստիրֆորթը շատ ծիծաղեց, որ կամեցել էին ինձ քառասունչորսերորդ համարում փակել, որ ես սիրով ու պարծանքով ընդունեցի։ Արդեն ուշ էր։ Մենք վերցրինք մի-մի մոմ ու բարձրացանք դեպի վեր, ուր նրա դռան առջև մենք սրտանց բարի գիշեր մաղթեցինք իրար։ Իմ նոր սենյակն առաջվանից շատ լավ էր. նրա նման մգլոտ ու խոնավ չէր։ Մեջտեղում կանգնած էր մի ահագին, քառասյուն, բերդանման մահճակալը։ Դրա փափուկ բարձերի մեջ, որոնք վեց հոգու էլ կբավեին, երջանիկ քնով քնեցի։ Ամբողջ գիշեր նախկին Հռոմը, հռոմեական դյուցազները և Ստիտֆորթն էին երազներիս առարկան, իսկ լուսադեմին, երբ կառքերը սկսեցին դղրդյուն հանել, օլիմպիական աստվածները և նույնիսկ ամպրոպային Արամազդը երազումս երևացին։

[29] Մարգարտածաղիկ։

Ի. ԳԼՈՒԽ

Ստիրֆորթի տունը

Առավոտյան ժամը ութին սպասուհին սենյակիս դուռը բախեց և հայտնեց, թե ածիլվելու տաք ջուր է բերել ինձ համար: Այս խոսքերն ինքնասիրությանս փափուկ լարը շոշափեցին, և ես ամոթից, որ դեռ անմորուս եմ և ածիլվելու կարիք չունեմ, կարմրեցի անկողնուս մեջ: Կասկածելով, թե սպասուհին ծաղրելու համար առաջարկեց տաք ջուրը, ես վերկենալիս ու լվացվելիս շատ դժգոհ էի: Հավանական է, որ նա իմ շփոթվելն ու ամաչելը նկատեց, երբ ներքև էի իջնում դահլիճ գնալու: Ես այնքան գրգռված էի դեռ անչափահաս լինելուս վրա, որ մինչև անգամ չհամարձակվեցի նրա մոտովն անցնել, երբ նա ավելը ձեռքին նրբանցքը մաքրելու վրա էր, և պատուհանի առջև կանգ առա իբրև թե Կառլոս թագավորի ձիավոր արձանը դիտելու, որ, սակայն, ամենևին չէր երևում անձրևային ու միգապատ օդի մեջ: Այս նեղ դրությանս վերջ տվեց սպասավորը, որ եկել էր ասելու, թե մր. Ստիրֆորթն ինձ սպասում է:

Սակայն Ստիրֆորթը սեղանատան սրահում չէր, այլ կարմիր վարագույրներով ու պարսկական գորգերով զարդարուն մի շատ շքեղ սենյակի մեջ, ուր վառարանի պայծառ բոցը ջերմ լույս էր տարածում և ձյունափայլ սեղանի վրա մի ընտիր նախաճաշ էր պատրաստված: Ե՛վ կրակը, և՛ նախաճաշը, և՛ Ստիրֆորթը, և սիրուն սենյակի բոլոր կարասիքը զվարթ-զվարթ ցոլանում էին պատի կլոր հայելու մեջ: Սկզբում ես քաշվում էի: Ստիրֆորթն այնպես գեղեցիկ էր, այն աստիճան ինքնավստահ և ամեն բանով (նույնիսկ հասակով) այնքան ինձնից գերազանց, որ եթե նրա շնորհալի ձևերի քաջալերիչ ազդեցությունը չլիներ, վարանումս շուտով չէր անցնի: Չէի կարող չզարմանալ, այն հանկարծական փոփոխության վրա, որ նա մտցրել էր **Ոսկե Խաչում**. ի՛նչ համեմատություն իմ երեկվա անշուք վիճակիս և այս առավոտյան փարթամ սեղանի և ինձ շրջապատող պերճության միջև: Երեկվա համարձակ սպասավորը այժմ ոտքի ծայրովն էր ման գալիս և «ի քուրձ և ի մոխիր ապաշխարող» ճգնավորի խոնարհությամբ ծառայում:

– Դե՛, սիրելի Կոպպերֆիլդ,– ասաց Ստիրֆորթը, երբ որ մենակ մնացինք,– շատ կցանկանայի իմանալ, թե ի՞նչ ես անում, ի՞նչ գործի ես, ո՞ւր ես գնում. իմանալ քեզ վերաբերող ամեն բան, իբր թե դու իմ սեփականությունը լինեիր:

Ուրախացա, որ հին ընկերս այս անգամ էլ հետաքրքրվում է իմ վիճակով և պատմեցի, թե տատս ինչո՞ւ է այս ուղևորությունն ինձ անել տալիս:

– Հետևաբար, դու շտապելու կարիք չունես,– ասաց Ստիրֆորթը: Մենք միասին Հայգեթ կգնանք. այնտեղ մի երկու օր մեզ մոտ կմնաս: Մայրս քեզ դուր կգա: Նա շատ է սիրում իմ մասին խոսել և ինձանով պարծենալ, բայց վստահ եմ, որ եթե փոքր-ինչ ներողամիտ լինես դեպի նա, դու էլ նրան դուր կգաս:

– Երանի թե արժանանամ այդ բախտին,– ասացի ես ժպտալով:

–Ով որ փոքր-ինչ ինձ սիրում է,– ասաց Ստիրֆորթը,– արդեն դրանով իրավունք է ստանում մորս հաճելի լինելու:

– Ուրեմն ես անպատճառ շնորհ կգտնեմ նրա առջև:

– Շատ լավ,– ասաց Ստիրֆորթը:– Եկ և ասածս արդարացրու: Առայժմ Լոնդոնին մի երկու ժամ նվիրենք, արժի, Կոպպերֆիլդ, որ այս քաղաքի գեթ մի քանի հրաշալիքը քեզ նման թարմ պատանուն ցույց տրվի: Այնուհետև Հայգեթ կգնանք դիլիժանսով:

Նախաճաշից հետո տատիս գրեցի, թե ինչպես հանդիպեցի իմ պաշտած ընկերոջը և ինչպես ընդունեցի նրա հրավերը. այնուհետև Ստիրֆորթն ու ես կառք նստեցինք և գնացինք մի պտույտ անելու Լոնդոնում: Տեսանք մի պանորամա և մի քանի ուրիշ տեղեր. աչքի անցրինք հռչակավոր թանգարանը (Museum), և ես զարմացած մնացի Ստիրֆորթի վրա, որ այնքան

բազմակողմանի ծանոթություն ունի ամենատարբեր իրերի մասին, թեև ինքը ոչ մի արժեք չէր տալիս դրան։

– Ստիրֆորթ, դու Օքսվորդում ամենաբարձր գիտական աստիճաններ ձեռք կբերես, եթե արդեն ձեռք չես բերել,– ասացի ես։– Բնական է, որ մայրդ այնքան պարծենում է իր որդով։

– Ես գիտակա՛ն աստիճաններ ձեռք բերեմ,– գոչեց Ստիրֆորթը։– Ո՛չ, այդ բաներն ինձ համար չեն, սիրելի Դեյվի. . . հո չե՞ս բարկանում, որ Դեյվի եմ անվանում քեզ։

– Ամենևին։

– Դու լավ տղա ես, Դեյվի,– ասաց Ստիտֆորթը ծիծաղելով։– Ոչ, Դեյվի, գիտական աստիճաններ ձեռք բերելու փափագ չունեմ։ Գիտեցածս էլ պետքերիս համար հերիք է և գուցե մի ավելորդ բեռ է։

– Իսկ փա՞ռքը. . .

– Ա՛յ դու ռոմանտիկ Դեյվի,– ասաց Ստիրֆորթը, ավելի ծիծաղելով։– Ինձ ի՛նչ, եթե հաստագլուխ իմաստակների ամբոխը բերանաբաց վրաս սքանչանա և բազկատարած հիանա։ Թող ուրիշներն այդ փառքին ձգտեն. ես նրանց նախանձողը չեմ։

Ես ամաչեցի իմ կոպիտ սխալից և կցանկանայի, որ խոսակցության նյութը փոխվեր։ Եվ փոխելը դժվար չէր, քանի որ Ստիրֆորթը միշտ պատրաստ էր հազվագյուտ անհոգությամբ ու հեշտությամբ մի առարկայից մյուսին անցնել։

Մեր պտույտը վերջանալուց հետո երկրորդ նախաճաշը վայելեցինք, և ձմեռվա կարճ օրն արդեն անցել էր և երեկոյան մութն իջել, երբ մեր կառքը Հայգեթի բլրի վրա գտնվող մի քարաշեն հին տան առաջ կանգ առավ։ Մեզ դիմավորեց մի գեղեցկադեմ ու վայելչաձև տարեց կին, որ, սակայան, դեռ պառավ չէր, և Ստիրֆորթին «Սիրելի Ջեյմս» անվանելով իր գրկում սեղմեց։ Ստիրֆորթը ներկայացրեց ինձ այդ տիկնոջը, որ նրա մայրն էր, և տիկինը մեծ շուքով ողջունեց ինձ։

Տունը մի հին, բայց հոյակապ ու բարեկարգ շինություն էր։ Իմ սենյակի պատուհաններից տեսնում էի մշուշապատ Լոնդոնը, որ հեռվից մի ահագին գոլորշի էր թվում՝ տեղ-տեղ պսպղացող լույսերով։ Միայն հագնվելիս, ժամանակ գտա վայրիվերու աչքի անցնելու սենյակիս կահ-կարասին՝ զանազան հյուսվածքներով զարդարված (որը մրս. Ստիրֆորթը, անշուշտ, երիտասարդ ժամանակ գործած կլիներ), և մինչ դիտում էի մի քանի նկարներ,– որոնք փոշեգույն մազեր ունեցող և կարծես թե վառարանի կրակի շողքից շարժվող ազնվական տիկիններ էին պատկերացնում,– ինձ ճաշի հրավիրեցին։

Ճաշասենյակում, մրս. Ստիրֆորթից զատ՝ մի ուրիշ նուրբ ու թխադեմ լեդի կար, որ թեև վայելուչ տեսք ուներ, բայց դուրեկան չէր։ Անծանոթ օրիորդն ուշադրությունս իսկույն գրավեց, գուցե նրա համար, որ չէի սպասում տեսնել նրան կամ թերևս նրա համար, որ շիտակ նրա դեմ էի նստած, և կամ գուցե այն պատճառով, որ նրա պատկերն իրոք ազդող էր։ Սև սաթի պես մազեր ուներ և վառվռուն սև աչքեր, մարմինը փոքր էր, նիհար ու վտիտ։ Նրա վերևի շուրթի վրա մի թեթև սպի նշմարեցի. վերքը մի ժամանակ մինչև կզակը հասած կլիներ, բայց վաղուց բուժված լինելով մի կարմրորակ հետք էր թողել շուրթի վրա, որի ձևն այլայլված էր։ Օրիորդին լավ դիտելով մոտ երեսնամյա երևաց ինձ, ուրեմն և մարդու գնալու տենչացող։ Նա մի շենքի նման էր, որ երկար ժամանակ անբնակ մնալուց թեև փոքր-ինչ վնասված է, բայց դեռ վայելուչ տեսք ունի։ Նրա նիհարությունը կարծես հետևանք էր մի ներքին ավերիչ կրակի, որ միայն աչքերից էր դուրս ցայտում։

Նա ներկայացվեց ինձ միս Դարտլ անունով, սակայն Ստիրֆորթը և իր մայրը միս Ռոզա կամ լոկ Ռոզա էին կոչում նրան։ Իմացա, որ նա վաղուց այդ տանն է ապրում, իբրև միս Ստիրֆորթի ընկերակից։ Նկատեցի, որ իր միտքը երբեք պարզ չի հայտնում, այլ միայն ակնարկներով ու հարցումներով։ Օրինակի համար, երբ մրս. Ստիրֆորթը կարծիք հայտնեց,

ավելի հանաքով, քան լրջությամբ, թե իր որդին գուցե զբոսասեր կյանք է վարում Օքսֆորդում, միս Դարտլը իսկույն ևեթ մեջ բերեց.

– Մի՞թե։ Գիտեք, ես այդ բաներին անտեղյակ եմ։ Սակայն միթե բոլորն էլ այդպիսի կյանք չե՞ն վարում։ Երիտասարդ ուսանողներն ի՞նչ ունեն Օքսֆորդում անելու, եթե ոչ. . .

– Պատրաստվել ու կրթվել ամենակարևոր պատշտոնների համար, եթե ուզում եք իմանալ, Ռոզա,– ասաց մրս. Ստիրֆորթը մի տեսակ սառնությամբ։

– Օ՛, հարկավ։ Այդ լիովին ճշմարիտ է,– հաստատեց միս Դարտլը։– Սակայն ինչի՞ց է, որ չնայելով այդ բոլորին. . . Ես գոհ կլինեմ, եթե սխալս ուղղեք. . . բայց չէ՞ որ միշտ այդպես է եղել։

– Այսինքն՝ ինչպե՞ս,– ասաց մրս. Ստիրֆորթը։

– Օ՛, ուզում եք ասել, թե այդպես չէ՞,– հարցրեց միս Դարտլը։– Շատ ուրախ եմ այդ լսել։ Այնուհետև, երբ իմ առջև ուսանողների դատարկ ու շռայլ կյանքի մասին խոսք բանան, ես կիմանամ, որ այդ սուտ է, և թույլ չեմ տա զրպարտել նրանց։

– Եվ լավ կանեք,– ասաց մրս. Ստիրֆորթը։– Որդուս դաստիարակը մի բարեխիղճ ջենտլմեն է, եթե ես որդուս վրա լիովին վստահ չլինեի, գոնե դաստիարակին կհավատայի։

– Իրա՞վ,– ասաց միս Դարտլը։– Մտքովս էլ չէր անցել այդ։ Ուրեմն նա մի բարեխի՞ղճ ջենտլմեն է, և դուք հավատացա՞ծ եք, որ այդպես է։

– Այո՛, ես այդ մասին համոզված եմ,– ասաց մրս. Ստիրֆորթը։

– Օ՛հ, այդ ինչ լավ բան է,– գոչեց միս Դարտլը։– Որքա՞ն մխիթարություն ձեզ համար։ Իրո՞ք բարեխիղճ։ Ուրեմն նա այնպես չէ՞, ինչպես որ. . . հարկավ չէ, եթե իրոք մի բարեխիղճ ջենտլմեն է։ Երջանիկ եմ, որ այսուհետև նրա մասին լավ կարծիք պիտի ունենամ։ Չեք կարող երևակայել, թե որքան իմ աչքում նրա վարքը բարձրացավ։ Այժմ գիտեմ, որ նա ազնիվ ու բարեխիղճ ջենտլմեն է։

Միս Դարտլն ահա այս կերպով էր արտահայտում իր մտքերն այն ամեն խնդիրներում, որոնց մասին ինքը հակառակ կարծիք ուներ։ Պիտի ասեմ, որ երբեմն մինչև անգամ Ստիրֆորթին հաջողությամբ էր հակառակում։ Մի այսպիսի դեպք տեղի ունեցավ դեռ ճաշը չվերջացած։ Մրս. Ստիրֆորթը հարցրեց ինձ, թե ինչո՞ւ եմ Սուֆոլկ գնում։ Պատասխանեցի, թե գնում եմ պառավ դայակիս և մր. Պեգգոտիի ընտանիքը տեսնելու։

– Որքա՛ն ուրախ կլինեի, եթե Ստիրֆորթն էլ հետս գար,– ավելացրի ես։– Հիշում ես, Ստիրֆորդ, այն նավավարին, որ եկել էր մեր պանսիոնը։

– Այն կտրիճ տղամարդո՞ւն,– ասաց Ստիրֆորթը։– Կարծես որդուն էլ հետն էր բերել։

– Այն տղան նրա որդին չէր, այլ որդեգրած եղբորորդին։ Նա ունի և մի շատ սիրուն աներոջ թոռնիկ, որին նույնպես որդեգրել է։ Մի խոսքով նրա տունը (կամ լավ է ասել՝ նրա նավը, որովհետև նավի մեջ է ապրում) լի է իր բարությանն ու վեհանձնությանը ապավինած էակներով։ Հավաստի եմ, որ կհիանաս այդ գերդաստանի նիստուկացից։

– Իրավ որ, կցանկանայի տեսնել,– ասաց Ստիրֆորթը։– Բացի քեզ ուղեկցելու զվարճությունից, սիրելի Դեյվի, արժի տեսնել, թե ինչպե՞ս են ապրում այդպիսի մարդիկ։

Սիրտս թնդաց ուրախությունից, բայց միս Դարտլը, որ սուր աչքով մեզ էր դիտում, առիթ բռնեց Ստիրֆորթի այդպիսի մարդիկ խոսքերը և մեջ մտավ։

– Այդպիսի՞ մարդիկ,– գոչեց նա։– Ասացեք խնդրեմ, մի՞թե նրանք. . .

– Ի՞նչ են նրանք, և ի՞նչ եք ուզում իմանալ,– հարցրեց Ստիրֆորթը։

– Թե ի՞նչ են այդպիսի մարդիկ։ Արդյոք անբան անասուննե՞ր, թե վայրենիներ, թե՞ մի ուրիշ տեսակ արարածներ։ Իրավ որ շատ կուզենայի իմանալ։

– Նրանք բավական տարբեր են մեզնից,– ասաց Ստիրֆորթը սառնությամբ։– Նրանք մեզ չափ զգայուն չեն, նրանց սիրտը մերի չափ դյուրագրգիռ ու կասկածկոտ չէ։ Վերին աստիճանի առաքինի են, գոնե ոմանց ասելով, և ես դրա դեմ առարկելու բան չունեմ։ Սակայն շատ նուրբ և քնքուշ բնավորություն չունեն և կարող են երջանիկ համարվել, որ իրենց հոգին դժվար է խոցվում, ինչպես և կոշտ մարմինն ու կաշին։

– Իրա՞վ,– ասաց միս Դարտլը։– Ինչպես գոհ եմ, որ այդ բոլորը մեկնեցիք։ Որքա՜ն քաղցր է իմանալ, որ նրանք ցավ չեն զգում չարչարվելիս։ Երբեմն խղճացել եմ այդպիսի մարդկանց, բայց այսուհետև չեմ էլ մտածի նրանց մասին։ Մարդ ամեն օր մի նոր բան է իմանում։ Մինչև այժմ, ուղիղն ասեմ, ես զանազան տարակույսներ ունեի, բայց ձեր շնորհիվ, մր. Ստիրֆորթ, կասկածներս փարատված են։ Դուք իմ մտքին լույս տվիք, ինչ որ առաջ չգիտեի, այժմ գիտեմ։ Ուրեմն պարզ է, որ հարցումներ անելն օգտակար բան է... այնպես չէ՞։

Կարծում էի, թե Ստիրֆորթը միս Դարտլին խոսեցնելու համար կատակ է անում նրա հետ և սպասում էի, թե մոր ու օրիորդի հեռանալուց հետո, երբ վառարանի մոտ մենակ մնացինք, նա ինձ կասի, թե իր ասածն իրավ կատակ էր։ Բայց չասաց, այլ միայն հարցրեց, թե ի՞նչ կարծիք ունեմ օրիորդի մասին։

– Շատ նրբամիտ օրիորդ է, չէ՞,– ասացի ես։

– Նրբամի՞տ։ Նա սովոր է ամեն բան խծրծել և հեսանի վրա սրել,– ասաց Ստիրֆորթը։– Եվ տարիներից ի վեր ամեն բան սրելով, իր մարմինն ու դեմքն էլ բոլորովին սրել մաշել է. այժմ նա մի սրի բերան է դարձել։

– Ինչ տարօրինակ սպի ունի շուրթի վրա,– ասացի ես։

Ստիրֆորթը հոնքերը պռստեց և մի վայրկյան լուռ մնաց։

– Այդ սպին ես եմ պատճառել,– ասաց նա։

– Պատահմա՞մբ։

– Ո՛չ։ Մի օր, տղայությանս ժամանակ, նա ինձ զայրացրել էր և ես մի մուրճ շպրտեցի նրա գլխին։ Քո ընկերը մի բարի պտուղ հրեշտակ է եղել, չէ՞, Կոպպերֆիլդ։

Ես շատ փոշմանեցի, որ այդքան ցավալի նյութ շոշափեցի, բայց արդեն ուշ էր։

– Այն օրից ի վեր նա կրում է այդ նշանը,– ասաց Ստիրֆորթը,– և մինչև գերեզման մտնելը կրելու է, եթե միայն վիճակված է նրան գերեզմանոցում հանգիստ գտնել։ Իմ կարծիքով այդ արարածը ոչ մի տեղ չի հանգստանա։ Նա իմ հոր մի հեռավոր ազգականի աղջիկն է։ Ծնողների մեռնելուց հետո որբ է մնացել։ Այրի մայրս նրան մեր տունն ընդունեց և ընկեր արեց։ Նա ունի հորից ժառանգած երկու հազար ֆունտ ստեռլինգ. այս գումարը բանկ է դրել և տոկոսներով աճեցնում է։ Ահա քեզ Ռոզա Դարտլի պատմությունը։

– Եվ անշուշտ, նա քեզ եղբայր է համարում։

– Հը՛մ,– ասաց Ստիրֆորթը, աչքերը կրակին դարձնելով։– Կան եղբայրներ, որոնք շատ չեն սիրվում քույրերից, և կան, որոնք... Սակայն, Կոպպերֆիլդ, խմենք քո կենացը՝ դաշտային ծաղիկների կենացը, ապրի անհոգ, անգործ երիտասարդների, ուրեմն և իմ հիշատակը... քանի որ ամոթ է ասել պատիվը։

Նրա երեսի հեգնական ժպիտը անհետացավ, սակայն նա իսկույն ինքն իրեն տիրեց և առաջվա պես զվարթացավ։

Թեյի ժամանակ ցավագին հետաքրքրությամբ մտիկ էի անում միս Դարտլի սպիին։ Ես նկատեցի, որ այդ սպին նրա դեմքի ամենազգայուն մասնիկն է։ Հենց որ նա գունատվում էր,

սպիի գույնն էլ անմիջապես փոխվում էր, մի կապարանման շերտի ձև ստանալով, որ իր ամբողջ երկարությամբ իսկույն ևեթ աչքի էր ընկնում, իբրև կրակին մոտեցված ծածուկ թանաք։ Թեյից հետո մինչ Ստիրֆորթն ու միս Դարտլը նարդի էին խաղում, նրանք մի վայրկյան վիճեցին, օրիորդը շատ բարկացավ և նույն րոպեին երեսի շերտը երևան եկավ այն խորհրդավոր բառերի նման, որոնք երևացել էին որմի վրա Բաղդասար թագավորի խնջույքին[30]։

Ես չէի զարմանում, որ մրս. Ստիրֆորթը լիովին նվիրված էր իր որդուն։ Նրա ամբողջ խոսակցության ու մտածմունքի առարկան կարծես միայն որդին էր։ Նա ցույց տվեց ինձ մի ապարանջան որդու մանկական պատկերով ու գանգուրների փնջիկով։ Հետո որդու մի ուրիշ պատկերը ցույց տվեց, որ մեր բարեկամության սկզբին էր հանված. վերջապես ասաց, թե իր կրծքի վրայի երրորդ պատկերն էլ որդու այժմյան մանրանկար պատկերն է։ Որդուց ստացած բոլոր նամակները մի առանձին պահարանի մեջ էր պահում, որ իր թիկնաթոռի մոտ էր դրված. նա սիրով կկարդար ինձ մի քանի նամակ, ես էլ սիրով կլսեի, եթե որդին փաղաքշանքով չընդդիմանար մեր փափագին։

– Որդուս ասելով՝ դուք մր. Կրիկլի պանսիոնում եք ծանոթացել իրար հետ,– ասաց ինձ մրս. Ստիրֆորդը, մինչ որդին ու Ռոզան խաղով էին ղբաղված մի ուրիշ սեղանի առաջ։– Ես հիշում եմ, որ այն ժամանակ նա շատ էր խոսում մի իրենից փոքր աշակերտի մասին, որին սաստիկ սիրել էր։ Այդ հարկավ դուք էիք, բայց ես ձեր անունը մոռացել էի։

– Այն ժամանակ նա շատ վեհանձն ու բարի էր դեպի ինձ, և հավատացնում եմ ձեզ, տիկին, որ ես նրա ընկերության կարոտ էի. առանց նրան ես կկորչեի պանսիոնում։

– Նա միշտ վեհանձն ու բարի էր,– ասաց մրս. Ստիրֆորդը հպարտությամբ։

Ես լիովին համոզված էի այդ մասին, և մրս. Ստիրոֆորթը հավատաց, որ զգացումս անկեղծ է։ Այս պատճառով նա հետս խոսելիս մեղմացրեց իր վեհական ձևերը, որոնք, սակայն, կրկնվում էին՝ հենց որ սկսում էր գովասանք շռայլել իր որդուն. այդ միջոցին նա դարձյալ խրոխտ ու սեգ էր երևում։

– Այն պանսիոնը հարկավ որդուս արժանի չէր,– ասաց մրս. Ստիրֆորթը,– սակայն կային հանգամանքներ, որ ստիպեցին ինձ հատկապես այդ դպրոցն ընտրել։ Որդուս հպարտ բնավորությունն անհրաժեշտ էր դարձնում մի այնպիսի մարդու հանձնել նրան, որ նրա գերազանցությունը լիովին զգար և նրա առջև խոնարհվեր։ Եվ մենք գտանք մր. Կրիկլին։

Ես լավ էի ճանաչում մր. Կրիկլին, ես ատում էի նրան, բայց և այնպես ներելի գտնում, որ նա Ստիրֆորթի ամենահաղթ հմայքի առջև անզոր էր։

– Որդուս շքեղ ձիրքերն այդ վարժարանում զարգացան մի հոժարակամ մրցության, մի բնական հպարտության շնորհիվ,– շարունակեց տիկինը։– Նա կընդդիմանար որևէ ստիպման, բայց այնտեղ նա մի ինքնիշխան վեհապետ էր, և իմացավ արժանի հանդիսանալ իր ձիրքին։ Նա հավատարիմ մնաց ինքն իրեն։

Ես ամենայն հոժարությամբ վավերացրի տիկնոջ կարծիքը։

– Այնուհետև որդիս ազատ կամքով, այլ ոչ թե ուրիշի թելադրությամբ, իր այժմյան ասպարեզն ընտրեց և մտավ համալսարան, ուր անշուշտ բոլոր ընկերներից առաջ կանցնի, եթե միայն կամենա,– շարունակեց տիկինը։– Ջեյմսն ասում է, Կոպպերֆիլդ, որ դուք նրա մտերիմ բարեկամն եք, և որ երեկ նրան հանդիպելով խնդությունից լաց եք եղել։ Ես սուտ դյուրազգայնություն ցույց տված կլինեմ, եթե զարմանամ, որ որդիս այդքան գրավել է ձեզ, սակայն չեմ էլ կարող անտարբեր մնալ դեպի մեկը, որ այդքան գնահատում է նրա արժանիքը։ Շատ ուրախ եմ, Կոպպերֆիլդ, որ մեր տանն եմ տեսնում ձեզ և կարող եմ հավատացնել, թե նա էլ ձեզ անկեղծ սրտով սիրում է. դուք կարող եք նրա հովանավորությանն ապավինել։

---

[30] Այդ բառերն էին՝ մանե, թեկել, փարես — չափեցի, կշռեցի, բաժանեցի։

Միս Դարտլը շարունակում էր նարդի խաղալ նույն եռանդով, ինչ եռանդով սովոր էր անել ամեն բան։ Եթե ես նրան առաջին անգամ այդ խաղի վրա տեսնեի, կկարծեի, անշուշտ, թե նա այն պատճառով է նիհարել, որ իր ամբողջ ուշքն ու միտքը, ամբողջ կյանքը այդ զբաղմունքին է նվիրել, այլ ոչ թե մի ուրիշ բանի։ Այնուամենայնիվ հավաստի եմ, որ նա մեր խոսակցությունից մի բառ անգամ չփախցրեց և իմ բոլոր շարժումները լավ դիտեց, մինչ ես Ջեյմսի մորն էի ականջ դնում՝ այդ արգո տիկնոջ պատվաբեր մտերմությամբ հպարտացած։ Ես շատ ավելի չափահաս էի զգում ինձ այժմ, քան Կենտրբըրիից մեկնելիս։

Երեկույթի վերջում, երբ սեղանի վրա փոքրիկ շշեր ու բաժակներ դրվեցին, Ստիրֆորթը խոստացավ մի լավ կշռել հետս գնալու կամ չգնալու խնդիրը։– Բայց շտապելու հարկ չկա,– ասաց նա, կարող ենք դեռ մի շաբաթ մնալ Հայգեթում։– Հյուրասեր մայրն էլ նույնը կրկնեց։ Մեր խոսակցության միջոցին Ստիրֆորթը սովորականից ավելի էր Դեյվի անունս գործածում, այս առիթ տվեց միս Դարտլին նորից հարցումներ տեղալու։

– Ա՛հ, մր. Կոպպերֆիլդ,– ասաց նա,– մի՞թե այդ է իրոք ձեր մականունը։ Եվ ինչո՞ւ են այդ մականունը ձեզ տվել։ Արդյո՞ք այն մտքով ... որ դեռ շատ պատանի և անմեղ են համարում ձեզ։ Չեմ կարող խելք հասցնել այդ բանին։

Կարմրելով պատասխան տվի, թե նրա կարծիքը հավանական եմ գտնում։

– Եթե այդպես է, շատ ուրախ եմ,– ասաց միս Դարտլը։– Հարցնում եմ միայն բան սովորելու համար, և շատ գոհ եմ, որ գեթ այս անգամ չեմ սխալվել։ Նա ձեզ պատանի և անմեղ է համարում, և դուք նրա ընկերն եք։ Օ՛հ, ինչ հիանալի բան։

Այս ասելով միս Դարտլը իր ննջարանը քաշվեց. նույնպես և մրս. Ստիրֆորթը։ Իսկ Ստիրֆորթն ու ես դարձյալ մի կես ժամ վառարանի մոտ նստած մնացինք, հիշելով Տրեդլսին և Սալեմ Հոուսի մյուս ընկերներին։ Այնուհետև մենք էլ վերև բարձրացանք։ Ստիրֆորթի սենյակն իմին կից էր, և ես ուզեցի նրան աչքի անցնել։ Դա մի շքեղ սենյակ էր՝ փափուկ թիկնաթոռներով, բարձերով, աթոռակներով կահավորված, և բոլորի վրա հոգատար մոր ձեռագործն էր երևում. նա ոչ մի բան անտես չէր թողել որդու սենյակը հանգիստ ու հաճելի դարձնելու համար։ Ի լրումն այդ ամենի՝ մրս. Ստիրֆորթի գեղեցիկ կենդանագիրը որմի վրայից սիրով նայում էր պաշտելի որդուն՝ ասես թե ուրախություն զգալով, որ կարող է գեթ իր պատկերի շրջանակից նրա քնի վրա հսկել։

Իմ սենյակում կրակը դեռ պայծառ բորբոքվում էր։ Մահճակալի ու պատուհանների շիկագույն վարագույրները ցած էին թողնված։ Ես մի ահագին թիկնաթոռի վրա նստեցի և սկսեցի երջանկությանս մասին մտածել։ Մինչ այսպես, մտքերիս մեջ խորասուզված նստած էի, հանկարծ վառարանի վրա միս Դարտլի պատկերը նշմարեցի, որ հրացայտ աչքերով դիտում էր ինձ։

Նմանությունը սաստիկ էր և աչքերի արտահայտությունը՝ ազդող։ Պատկերահանը չէր նկարել միայն սպին, բայց ես այդ էլ մտքովս լրացրի։ Ես սպին մերթ վերին շուրթի վրա վրա էի տեսնում, ինչպես որ առաջին անգամ ճաշարանում էի նկատել, մերթ նա աչքիս առջև մուրճի հետքի երկար շերտովն էր տարածվում, ինչպես որ նշմարել էի օրիորդի գրգռված վայրկյանին։

Հարցնում էի ինձ, թե այս պատկերն ինչո՞ւ է իմ սենյակի մեջ կախված. մի՞թե չէր կարելի մի ուրիշ տեղ կախել։ Դրանից ազատվելու համար իսկույն շորերս հանեցի, մոմը հանգցրի ու պառկեցի քնելու։ Սակայն վերմակի տակ ննջելիս էլ՝ չէի կարողանում մոռանալ, որ նա սուր-սուր դիտում է ինձ, կարծես թե հարցնելով. «Մի՞թե... միթե իրա՞վ այդպես է»։ Կես-գիշերին, երազիս մեջ, անդադար հարցնում էի անցվորներին. «Արդյոք իրա՞վ այդպես է, թե՞ ոչ», թեպետ ինքս էլ չգիտեի, թե ի՞նչ եմ ուզում իմանալ։

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

Ա. ԳԼՈՒԽ
Փոքրիկ Էմլին

Ստիրֆորթի տանը մի սպասավոր կար, որ ինչպես իմացա, միշտ ընկերոջս ուղեկցել էր և համալսարանում նրան ծառայել: Այդ մարդը մի ակնածալի անձ էր: Չեմ կարծում, որ երբևէ մի սպասավոր ավելի պատկառելի տեսք ունենար: Նա լռիկ էր, հանդարտաքայլ, ուշադիր, հնազանդ, միշտ ներկա, երբ որ պետք էր, և հեռու, երբ որ պետք չէր. սակայն նրա գլխավոր արժանիքը պատկառելի տեսքն էր: Նա քծնելով կուչ չէր գալիս մարդու առջև. ընդհակառակը՝ բարձր էր պահում իր կարճ խուզած կլոր գլուխը: Միշտ մեղմիկ ձայնով էր խոսում և սովոր էր այնպես սուր արտասանել U տառը, ինչպես ոչ մի ուրիշ մարդ. սակայն ինչ էլ ասեր կամ աներ, միշտ մնում էր պատկառելի: Կարծում եմ, որ եթե բնությունից քթի փոխարեն նա մի կնճիթ ստացած լիներ, դարձյալ կարող էր պատկառելի և հարգարժան երևալ: Ամեն բան պատկառելի էր նրա վրա ու շուրջը, և նա վստահ էր ման գալիս: Անկարելի էր մի վատ բան սպասել նրանից: Ոչ ոքի մտքով չէր անցնի սպասավորի լիվռե հագցնել նրան, այն աստիճան պատկառանք էր ներշնչում: Նրան մի անպատվաբեր գործ հանձնելը կնշանակեր նրա մեծարգության զգացումը չարաչար վիրավորել: Տան բոլոր սպասուհիներն այդ գիտեին, ուստի ամեն չնչին, մանր-մունր բաները նրանք էին հոգում, մինչ նա իր սենյակի կրակի առջև լրագիրներ կարդալով էր զբաղվում:

Մի այդպիսի զգուշամիտ մարդ, ոչ մի ժամանակ չէի տեսել: Սակայն այս հատկությունը ավելի պատկառելի էր դարձնում նրան: Մինչև անգամ նրա մկրտության անվան անհայտ լինելը նրա մեծարգությանը չէր վնասում, այլ նպաստում էր: Նրա Լիտտիմեր մականվան դեմ, որով հայտնի էր ամենքին, ոչ մի բան չէր կարելի առարկել: Մարկոս անունը կարող էր մի կախվածի պատկանել, Կիրակոս անունը մի գողի, իսկ Լիտտիմեր կարող էր կոչվել միայն արգո Լիտտիմերը:

Երևի նրա պատկառելի տեսքն էր պատճառը, որ ես ինձ առանձնապես ջահել էի զգում նրա առջև: Արդյոք ինքն ի՞նչ հասակի էր, չէի կարող գուշակել – մի հանգամանք որ դարձյալ նրա վարկը բարձրացնում էր իմ աչքում, որովհետև իր դեմքի ակնածալի անդորրության նայելով, կարելի էր նրան և՛ հիսուն, և երեսուն տարեկան համարել:

Առավոտյան, դեռ աչքերս չէի բացել, Լիտտիմերն արդեն սենյակումս էր, ածիլելու ջուր էր բերել (անտանելի հիշատակ) և շորերս մաքրելու էր տանում: Երբ վարագույրը ետ քաշեցի, վերստին տեսա նրան իր անվրդով հանգստությամբ, որը ո՛չ հունվարի հողմից, ո՛չ էլ ցրտից կայլալվեր: Նա կոշիկներս աջ ու ձախ դրեց՝ իսկ և իսկ պարի առաջին դիրք տալով երկուսին. հետո վերարկուիս վրայից փոշին խնամքով թափ տվեց, ծալեց և այնպիսի զգուշությամբ թիկնաթոռի վրա դրեց, որ կարծես վերարկուն մի նիրհած մանուկ լիներ:

Ես բարի լույս ասացի նրան ու հարցրի, թե ժամը քանիսն է: Նա գրպանից մի շատ հարգի որսորդական ժամացույց հանեց, կափարիչը ձախ ձեռքի բթով բռնեց, որ շատ բարձր չթռչի, տուփի երեսին այնպես նայեց, կարծես թե մի պատգամախոս ոստրերի հետ է բանակցում, նորից փակեց ու վերջապես ասաց, թե ճիշտ ութ անց կես է:

– Մր. Ստիրֆորթին հաճելի կլիներ իմանալ, սըր, թե արդյոք հանգի՞ստ քուն վայելեցիք այս գիշեր:

– Շնորհակալ եմ, շատ հանգիստ,– ասացի ես:– Ինչպե՞ս է մր. Ստիրֆորթի առողջությունը:

– Շնորհակալ եմ, սըր: Մր. Ստիրֆորթը բավական առողջ է:

Լիտտիմերի մի ուրիշ հատկությունն էլ այն էր, որ ճշգրիտ ու չափավոր մնալու համար՝ երբեք գերադրական ածականներ չէր օգտագործում:

– Էլ ի՞նչ կա, սըր, որ պատիվ ունենայի ձեզ համար անել: Ազդարար զանգակը ճիշտ ժամը իննին կհնչի, նախաճաշը ինն անց կես կլինի:

– Ոչինչ, շնորհակալ եմ:

– Շնորհակալ եմ սըր: Ձեր խոնարհ ծառան եմ:

Այս ասելով Լիտտիմերը թեթևակի գլուխ տվեց և անշշուկ դուրս գնաց՝ դուռը այնպես կամաց փակելով, ասես թե հենց նոր մի քաղցր քուն մտած լինեի, որից ամբողջ կյանքս էր կախված:

Ամեն առավոտ ճիշտ նույն խոսակցությունն էինք կրկնում – ո՛չ ավելի, ո՛չ պակաս, բայց որքան էլ ես ինձ օրստօրե մեծացած զգայի, որքան էլ հասունացած՝ Ստիրֆորթի ընկերության կամ թե միս Դարտլի իմաստալի հարցումների շնորհիվ, դարձյալ տեսնում էի, որ գերամեծար Լիտտիմերի առջև ուրիշ բան չեմ, եթե ոչ մանուկ:

Նա մեզ համար ձիեր էր բերում, և ամեն բանի վարժ Ստիրֆորթը ինձ ձիավարության արվեստն էր սովորեցնում: Սրեր էր ճարում, և Ստիրֆորթն ինձ սուսերամարտի դասեր էր տալիս: Ձեռնոցներ էր գտնում, և ես սկսում էի բռնցքամարտի դասեր առնել Ստիրֆորթից: Փույթ չէր ինձ, որ Ստիրֆորթի համեմատությամբ ես այս բոլոր մարզանքներում անվարժ էի, բայց պատկառելի Լիտտիմերի առջև խամ երևալն ինձ համար անտանելի էր: Ես ամենևին հիմք չունեի ենթադրելու, թե ինքը Լիտտիմերը այս բաներին հմուտ է. նա մի թեթև շարժումով անգամ առիթ չէր տվել իր մասին այդպիսի կարծիք կազմելու, բայց և այնպես հենց որ գալիս էր մեր փորձերին ներկա լինելու, զգում էի, որ աշխարհիս երեսին ինձնից անճար, ինձնից անշնորհք էակ չկա:

Դիտմամբ եմ այդ մարդու մասին մանրամասն խոսում, նախ այն պատճառով, որ հենց սկզբից նա մի առանձին տպավորություն թողեց իմ վրա, և երկրորդ՝ որ հետո էլ աննշան դեր չպիտի խաղա կյանքիս մեջ:

Շատ զվարճալի կերպով և երազի պես արագ անցավ ինձ համար այդ շաբաթը: Ես առիթ ունեցա ավելի լավ ճանաչելու Ստիրֆորթին, ասել է թե՝ ավելի շատ զարմանալու նրա բազմակողմանի ձիրքերի վրա: Շաբաթվա վերջում ինձ թվում էր, թե մի ամբողջ տարի եմ ապրել նրա հետ: Ամենից ավելի ախորժելի էր նրա կայտառ վարմունքն ինձ հետ, իբրև մի խաղալիքի հետ: Այս հիշեցնում էր ինձ մեր բարեկամության վաղեմությունը և ապացույց էր, որ Ստիրֆորթը չէր փոխվել: Նրա այժմյան վարմունքը նախկինի բնական հետևանքն էր: Այս պատճառով չէի ամաչում իմ ու նրա արժանիքների ահագին տարբերություններից և մտքովս չէր անցնում պահանջել, որ նա ինձ իրեն հավասար ճանաչի: Համենայն դեպս, Ստիրֆորթը միայն ինձ հետ էր այդպես անկեղծ, պարզ ու սրտագին կերպով վարվում: Ես համոզված էի, որ ինչպես պանսիոնում նա ինձ բոլոր մյուս ընկերներից առանձնացնում էր, այնպես էլ այժմ՝ ուրիշ կերպ է վարվում ինձ հետ, քան թե իր մյուս բարեկամների. ինձ թվում էր, թե սրտով նա ինձ ավելի մոտ է, քան ուրիշներին, և իմ սիրտն էլ ամենաջերմ սեր էր զգում դեպի նա:

Նա վճռել էր ինձ հետ միասին Սուֆոլկ գնալ, և մեր մեկնելու օրը հասավ: Սկզբում մտադիր էր Լիտտիմերին իր հետ առնել, բայց հետո լավ համարեց տանը թողնել: Պատկառելի սպասավորը, որ միշտ գոհ էր, ինչ էլ իրեն վիճակվեր, մեր իրերն այնպես ամուր տեղավորեց Լոնդոն տանող կառքի մեջ, որ նայողը կկարծեր, թե մենք մի հավիտենական ուղևորություն ենք ձեռնարկում. իմ համեստ դրամական նվերը նա կատարյալ հանգստությամբ ընդունեց:

Հրաժեշտ տվինք միս Դարտլին ու մրս. Ստիրֆորթին, և ես տանտիկնոջը ջերմ շնորհակալություն հայտնեցի իր վեհանձն հյուրասիրության համար: Վերջին բանը, որ նկատեցի՝ Լիտտիմերի անխոով դեմքն էր, որ կարծես իր թաքուն համոզումն էր արտահայտում, թե ես դեռ շատ տհաս եմ:

Լոնդոն հասնելուց հետո դիլիժանս նստեցինք և Յարմաութ գնացինք: Չեմ վստահում նկարագրել, թե ինչեր զգացի իմ սիրելի հին տեղերը նորից տեսնելով: Յարմաութի հիշատակները այնքան էին ինձ հուզել, որ չնկատեցի մինչև անգամ, թե ինչպես անցանք այդ

քաղաքի ծուռ ու նեղ, մութ ու խոնավ փողոցներով։ Մենք գիշերեցինք հենց այն պանդոկում, որի դռան վրա նկարված դելֆինը մի ժամանակ գրավել էր ուշադրությունս։ Առավոտյան բավական ուշ նախաճաշ արինք։ Ստիրֆորթը, որ շատ զվարթ էր տրամադրված, դեռ իմ վերկենալուց առաջ պտույտ էր արել ծովեզերքում։ Նա ինձ ասաց, թե արդեն ծանոթացել է Յարմաութի գրեթե բոլոր ձկնորսների հետ։

– Եթե չեմ սխալվում,– ասաց Ստիրֆորթը,– ես տեսա և մր. Պեգգոտիի նավատունը. համենայն դեպս, ծովափի մոտ, տնակի նման մի նավակ նշմարեցի, որի ահագին ծխնելույզը մխում էր։ Մտադիր էի մինչև անգամ ներս մտնել և ասել, թե ես եմ Կոպպերֆիլդը։ Թող կարծեն, թե փոքրիկ Դեվին այնքան է մեծացել, որ ճանաչել անգամ չի կարելի։

– Ինչ լավ կանեիր,– ասացի ես ժպտալով։

– Սակայն, Դեյզի, ե՞րբ ես մտադիր բարեկամներիդ ներկայացնել ինձ,– հարցրեց Ստիրֆորթը։– Մնում եմ հրամանիդ։ Քանի շուտ, այնքան լավ։

– Կարծեմ հարմար կլինի, Ստիրֆորթ, այս երեկո նրանց մոտ գնալ։ Այդ ժամանակ ամբողջ ընտանիքը վառարանի առջև նստած կլինի։ Կցանկանայի, որ առաջին անգամ այդպես միասին հավաքված տեսնեիր նրանց։

– Թող այդպես լինի,– ասաց Ստիրֆորթը։

– Ես իմաց չեմ տա, որ այստեղ ենք,– ասացի ես հրճվանքով։– Պետք է հանկարծակի բերել նրանց։

– Անշուշտ պետք է այդպես անել,– պատասխանեց Ստիրֆորթը,– թե չէ մեր այցելության ամբողջ հրապույրը կկորչի։ Բնիկներին լավ է տեսնել իրենց բնական վիճակում։

– Դու, կարծեմ, մի ուրիշ տեսակ արարած ես համարում նրանց,– նկատեցի ես։

– Հը, Ռոզայի հետ ունեցած վեճս ես մտաբերում, հա՞,– գոչեց Ստիրֆորթն եռանդով։– Գետինն անցնի այդ աղջիկը։ Ես գրեթե վախենում եմ նրանից։ Նա ինձ համար մի ճիվաղ է։ Թողնենք նրան։ Ո՞ւր ես գնում այժմ։ Չէ՞որ ուզում էիր դայակիդ տեսնել։

– Անպատճառ,– ասացի ես։– Ամենից առաջ Պեգգոտիի մոտ պիտի գնամ։

– Լավ կանես,– ասաց Ստիրֆորթն՝ իր ժամացույցին նայելով։– Երկու ժամ եմ տալիս քեզ. այդքան կարծեմ բավական է, որ իրար համբուրելով ու միասին արտասվելով կշտանաք։

Ծիծաղելով պատասխանեցի, թե այդ բոլորն երկու ժամում կվերջացնենք, բայց լավ կլինի, որ նա էլ գա դայակիս մոտ։

– Այնտեղ քեզ փառքով-պատվով կընդունեն, Ստիրֆորթ։ Պեգգոտին արդեն գիտի, որ դու մի նշանավոր մեծ մարդ ես։

– Ուր ուզենաս, կգնամ, ինչ ասես, կանեմ,– ասաց Ստիրֆորթը։– Դու ինձ միայն ճիշտ հասցեն տուր, և ես երկու ժամից պատրաստ կլինեմ ներկայանալ նրան, ինչ դերի մեջ էլ կամենաս՝ սիրալիր կամ ծաղրական։

Մանրամասն տեղեկացրի նրան, թե ինչպես պետք է կառապան մր. Բարկիսի բնակարանը գտնել, և մենակ դուրս ելա պանդոկից։

Օդը ցրտաշունչ էր, գետինը սառնամանիքից պնդացած. վճիտ ծովը թեթև ծփում էր. պայծառ արևը լիառատ լույս էր սփռում, բայց ո՛չ ջերմություն, և ամեն ինչ զվարթ էր ու կենդանի։ Ես ինքս էլ նորից Յարմաութում գտնվելով, այնպես աշխույժ, առույգ էի, որ պատրաստ էի յուրաքանչյուր հանդիպողին կանգնեցնել ու մտերմաբար աջը սեղմել։

Փողոցները շատ անձուկ ու փոքր թվացին ինձ. միշտ այդպես են երևում նրանք, երբ մանկության ժամանակ ճանաչելուց հետո՝ երկար ժամանակ չես տեսնում և նորից գալիս ու տեսնում ես։ Սակայն ոչ մի բան չէի մոռացել. ոչ մի բան էլ չէր փոխվել այստեղ։ Փոխվել էր

միայն, այն էլ շատ քիչ, մր. Օմրի կրպակը: Նրա ցուցանակի մակագրությունը, որ առաջ միայն «Օմր» էր, այժմ «Օմր ու Ջորեմ» էր դարձել, իսկ մյուս խոսքերը՝ «պաստառագործ, դերձակ, մանրավաճառ, հուղարկավորություն ու սգո դեպքերի հայթայթիչ» և այլն, միևնույն էին մնացել:

Փողոցի հակառակ կողմից այդ մակագրությունը կարդալուն պես, ոտքերս մեքենաբար այդ դռանը մոտեցան: Պատուհանից ներս նայեցի. կրպակում մի սիրուն, ջահել կին էր նստած, որը մի փոքրիկ երեխա էր գուրգուրում, մինչ մյուսը նրա գոգնոցին էր փարվել: Իսկույն իմացա, որ Միննին է իր մանուկներով: Հյուրասենյակի ապակե դուռը փակված էր. բակում գտնվող արհեստանոցից դարձյալ մուրճի շառաչյուն էր լսվում, որ կարծես հավիտյան չպիտի լռեր:

– Մր. Օմրն արդյոք տա՞նն է,– հարցրի ես՝ ներս մտնելով:– Կցանկանայի տեսնել նրան մի րոպե:

– Այո, սըր, տանն է,– ասաց Միննին:– Հազը նրան արգելում է դուրս գալ այսպիսի եղանակին: Ջո՛յ, գնա կանչիր պապիդ:

Գոգնոցը բռնող մանուկը այնպես ամուր ճիչով կանչեց իր պապին, որ ինքն իր ձայնից վախեցավ ու երեսը մոր փեշերում թաքցրեց: Նույն րոպեին մի ծանր հևք լսեցի, և մր. Օմրը երևաց: Նրա շնչառությունը ավելի ընդհատ էր դարձել, իսկ ալևոր պատկերը գրեթե նույնն էր, ինչ որ առաջ:

– Ձեր խոնարհ ծառան եմ, սըր,– ասաց նա:– Արդյոք ի՞նչ կհրամայեք:

– Կհրամայեմ, որ ձեռքս սեղմեք, մր. Օմր,– ասացի ես, աջս մեկնելով:– Մի ժամանակ շատ բարի էիք դեպի ինձ, թեև որքան հիշում եմ, չկարողացա ձեր բարությունը գնահատել:

– Իրա՞վ,– ասաց ծերունին:– Շատ ուրախ եմ, բայց ամենևին չեմ կարող մտաբերել, թե ե՞րբ էր այդ: Արդյոք չե՞ք սխալվում, սըր:

– Բնավ:

– Երևի թե հիշողությունս էլ շնչառությանս պես կարճացել է,– ասաց մր. Օմրը, գլուխը շարժելով ու երեսիս նայելով:– Չեմ հիշում ձեզ:

– Չե՞ք հիշում, թե ինչպես մի առավոտ դիլիժանսների կայանում դիմավորեցիք ինձ, նախաճաշ տվիք ու հետո կառքով Բլենդրոտըն հասցրիք: Կառքում նստած էին մրս. Ջորեմն ու մր. Ջորեմը, որ դեռ նրա ամուսինը չէր:

– Աստված իմ,– գոչեց մր. Օմրը, սկսելով հազալ անասելի զարմանքից:– Մի՞թե դուք եք այն տղան, սըր: Միննի, հիշո՞ւմ ես, սիրելիս: Այն ժամանակ մենք գնում էինք մի լեդիի հուղարկավորության, եթե չեմ սխալվում:

– Մորս հուղարկավորելու,– ասացի ես:

– Այո՛, այո՛... այժմ հիշում եմ,– ասաց մր. Օմրը, մատի ծայրը բաճկոնիս դնելով,– մի երեխայի համար էլ պատվեր կար: Այո՛... այո՛: Մայրն ու երեխան մի դագաղի մեջ դրեցին: Այդ եղավ Բլենդրոտընում, ճիշտ այդպես: Իսկ դուք ինչպե՞ս եք այն օրից ի վեր:

– Շնորհակալ եմ, շատ լավ եմ: Իսկ դուք ինչպե՞ս եք, մր. Օմր:

– Փառք աստծո, ապրում եմ, գանգատվելու տեղ չունեմ: Միայն շնչառությունս է տանջում ինձ, բայց ի՞նչ արած. քանի մարդը ծերանում է, այնքան էլ շնչառությունը դժվարանում է. սա մի սովորական ցավ է, ուզես չուզես, պիտի համբերես: Ես էլ ահա համբերում եմ, կարծեմ վատ չեմ անում, չէ՞, պարոն:

Մր. Օմրը ծիծաղեց ու նորից հազաց, և այս անգամ այնպես սաստիկ, որ երեխային թախտի վրա խաղացնող մրս. Ջորեմը հարկ համարեց օգնության հասնել ծերունուն:

– Այո՛, այո՛, երկու մարմին մի դագաղում,– ասաց մր. Օմրը։– Բայց կհավատա՞ք, սըր, Միննիի ու Ջորեմի հարսանիքի օրը միասին կառքով գնալիս որոշեցինք։ «Որոշի՛ր», կպավ ինձ Ջորեմը։ «Այո՛, հայրիկ, որոշիր», կրկնեց Միննին։ Ես էլ որոշեցի։ Այժմ Ջորեմն իմ ընկերակիցն է, իսկ սա, տեսեք, ամենափոքր թոռնիկս է։

Միննին ծիծաղեց և մինչ իր մազերն էր ուղղում, ալևորն իր հաստ մատներից մեկը երեխային մեկնեց, որին մայրը մի րոպե առաջ խաղացնում էր թախտի վրա։

– Միանգամից երկու մարմին,– ասաց մր. Օմրը, հին-հին բաներ հիշելով։– Ճիշտ այդպես։ Այս րոպեիս Ջորեմը զբաղված է։ Պատվեր է ստացել մի փոքրիկ դագաղ շինելու՝ արծաթե մեխերով ու թավշապատ։ Սրա չափ անգամ չի լինի,– ավելացրեց ալևորը, ակնարկելով նորից թռչկոտող թոռնիկին։– Մի որևէ բան անուշ կանե՞ք, սըր։

Շնորհակալություն հայտնեցի և հյուրասիրությունից հրաժարվեցի։

– Ահա միտքս բան ընկավ,– ասաց մր. Օմրը։– Այն ժամանակ կառապան Բարկիսի կինը ձեր տանը չէ՞ր ապրում... Պեգգոտի ձկնորսի քույրը։ Նա, կարծեմ, ձեր տան աղախինն էր, չէ՞։

Դրական պատասխանս մր. Օմրին մեծ հաճույք պատճառեց։

– Այո՛, այո՛, հիշողությունս նորոգվում է, ուրեմն հույս կա, որ շնչառությունս էլ շուտով թեթևանա,– ասաց նա։– Շատ լավ, սըր։ Այժմ մեր արհեստանոցում աշխատում է այդ կնոջ ազգական մի ջահել աղջիկ, որ հիանալի բաներ կարել գիտի։ Անգլիայի ամենաշքեղ դքսուհիները անգամ կարող էին նրա ճաշակին նախանձել։

– Ձեր խոսքը փոքրի Էմլիի՞ մասին է,– հարցրի ես ակամա։

– Այո, սըր, նրա անունն Էմլի է,– ասաց մր. Օմրը,– և նա իրավ փոքրիկ է։ Բայց պստիկ ու ճստիկ, և այնպիսի դեմք ունի, որ գրեթե մեր բոլոր կանայք կատաղած են նրա դեմ։

– Հերիք է, հայրիկ,– գոչեց Միննին։

– Բոլոր կանայք որ ասում եմ, հո դու էլ նրանց թվումը չես, սիրելիս,– նկատեց մր. Օմրը, ինձ աչքով անելով։– Բայց ճշմարիտ մեր Յարմաութի կանանց կեսը, և ինչքան որ կանայք կան երեսուն վերստի շրջանում, ատելով ատում են այդ աղջկան։

– Եթե այդպես է,– ասաց Միննին,– թող իր չափն ու դիրքը գիտենա և ինքն իրեն այնպես պահի, որ իր մասին շատ խոսելու առիթ չտա։

– Առիթ չտա,– գոչեց մր. Օմրը։– Ուրեմն կյանք ասածդ այդքան ես ճանաչում, սիրելիս։ Ո՞վ կարող է կանանց լեզուն կապել և հարկադրել, որ ուրիշին չբամբասեն, երբ մանավանդ այդ ուրիշը մի գեղեցիկ աղջիկ է։

Այս խորամանկ կատակից հետո, մր. Օմրը այնպես հազաց, որ քիչ էր մնում խեղդվի։ Նրա կուրծքը արագ բարձրանում ու իջնում էր և չնայելով ճիգերին՝ նա չէր կարողանում շունչ քաշել։ Կարծում էի, թե ծերունին այդ կտտանքի մեջ վայր կընկնի և հոգին կավանդի։ Սակայն վերջ ի վերջո հանգստացավ, թեև դարձյալ ծանր էր շնչում, և սաստիկ թուլությունից գնաց նստեց աթոռի վրա։

– Տեսնո՞ւմ եք,– ասաց նա, ճակատի պաղ քրտինքը սրբելով։– Էմլին մեր շրջանում շատ բարեկամներ չունի և տղաներից ոչ մեկը նրա սիրտը դեռ չի գրավել։ Այս պատճառով չար լեզուները լուր են տարածում, թե նա ուզում է մի ազնվական տիկին դառնալ։ Իմ կարծիքով այդ լուրը գլխավորապես նրա համար է ծագել, որ Էմլին մի երկու անգամ դպրոցում ասել է, որ եթե մի օր տիկին դառնա, իր հորեղբոր համար այս և այն կանի... տեսնո՞ւմ եք... այս և այն բանը կընծայի նրան։

– Հավատացնում եմ ձեզ, մր. Օմր,– ասացի ես,– ինձ էլ Էմլին միևնույնն է ասել, երբ որ մենք դեռ մանուկ էինք։

Մր. Օմրը գլուխը կախեց ու կզակը շփեց։

– Հարկավ ասած կլինի,– շարունակեց նա։– Էմլին իրոք ազնվական տիկնոջ նման է, գոնե այն իմաստով, որ ոչ ոք չգիտե նրա պես ճաշակով հագնվել։ Մի չնչին կտոր էլ նրան որ տաք, այդ կտորից մի այնպիսի սիրուն բան կձևի, որ մյուսները մոդայի խանութն էլ որ դատարկեն, այդպես ձևել ու հարմարեցնել չեն կարող։ Եվ հենց այս է, որ մյուսներին դուր չի գալիս։ Է՛հ, ինչ թաքցնեմ։ Նա, ճշմարիտ, փոքր-ինչ կամակոր է... այսինքն՝ փոքրությունից նրան երես են տվել, և նա անձնահաճ դառնալով, երբեմն ինքն էլ չգիտի՝ ինչ է ուզում։ Հո սրանից ավելի բան չի՞ կարելի ասել այդ աղջկա դեմ, Միննի։

– Ոչ, հայրիկ,– հաստատեց մրս. Ջորեմը։– Ուրիշ բան ասել չի կարելի նրա դեմ։

– Եվ ահա, սըր,– շարունակեց մր. Օմրը,– երբ մի նեղսիրտ ու պառավ լեդիի մոտ ընկերուհու տեղ էին գտել նրա համար, նա չկարողացավ պառավին տանել և նրա մոտ մնալ։ Այնուհետև երեք տարով մեզ մոտ մտավ կար ու ձև սովորելու։ Արդեն երկու տարին անցել է, և պիտի ասեմ, որ նրանից ավելի աշխատասեր աղջիկ չի ճարվի։ Էմլին վեց աղջիկ արժի։ Չէ՞, Միննի, որ նա մենակ վեց հոգուց ավելի բան կանի։

– Այո, հայրիկ,– հաստատեց Միննին։– Ես երբեք նրա արժանիքը չեմ ուրացել։

– Եվ լավ ես արել,– ասաց մր. Օմրը։– Էլ չխոսենք այս մասին։ Ինձ նման դժվարաշունչ մարդու համար այսքանն էլ շատ է, երիտասարդ ջենտլմեն,– վերջացրեց մր. Օմրը, նորից կզակը շփելով։

Էմլիի վերաբերյալ խոսակցության կիսաձայն ու զգուշավոր եղանակից եզրակացրի, որ նա հեռու չպիտի լինի։ Այս մասին արած հարցումիս մր. Օմրը գլխի շարժումով «այո» ասաց ու դեպի կից սենյակն ակնարկեց։ Իսկ երբ ես շտապով հարցրի, թե կարո՞ղ եմ արդյոք ներս նայել, նա հաստատական նշան արավ։ Ես դռան ապակուն մոտեցա և տեսա Էմլիին, որ նստած աշխատում էր։ Նա իրոք գեղեցիկ էր։ Այն կապուտակ ջինջ աչքերով, որոնք երբեմն թափանցել էին իմ մանկական սրտի խորքը, նա ժպտուն նայում էր Միննիի մյուս երեխային, որն այնտեղ խաղում էր։ Նրա պայծառ դեմքի վրա նշմարելի հասունությունը կարծես թե հաստատում էր՝ ինչ որ ասվել էր նրա մասին, և թեպետ հայացքի մեջ դեռ փայլում էր հին քմահաճության նշույլը, բայց ժպտուն երեսն անմեղության ապացույց էր և ապագա երջանկության ու առաքինության գրավական։

Մինչդեռ դրսից դարձյալ հնչում էր կռանի շաչյունը, որ, ավա՛ղ, հավիտյան չպիտի դադարի։

– Գուցե կամենաք ներս մտնել ու հետը խոսել,– ասաց մր. Օմրը։– Մտեք, սըր։ Համարեցեք, թե ձեր տանն եք։

Սակայն ես քաշվեցի այդ հրավերին հետևել... ինքս էլ չգիտեմ թե ինչո՞ւ... գուցե երկյուղից, թե աղջկան կամաչեցնեմ, ինքս էլ նրա առաջ կամաչեմ։ Հարցրի միայն, թե Էմլին երեկոյան ո՞ր ժամին է տուն վերադառնում, որ մենք էլ հենց այն ժամին այցելություն անենք նավատուն, այնուհետև հրաժեշտ տվի մր. Օմրին, նրա սիրուն աղջկան ու թոռնիկներին, և գնացի Պեգգոտիին տեսնելու։

Ահա իմ սիրելի, իմ պատվական դայակը ճաշ էր եփում խոհանոցում։ Դուռը բախելուս պես՝ նա բաց արեց ու հարցրեց, թե ի՞նչ եմ ուզում։ Ես ժպտացի, նա լուրջ էր։ Ես չէի դադարել նրան նամակներ գրելուց, բայց արդեն յոթը տարի է, որ իրար երես չէինք տեսել։

– Մր. Բարկիսը տա՞նն է, տիկին,– հարցրի ես, աշխատելով կոշտ ձայն հանել։

– Տանն է, սըր, միայն թե այժմ հոդացավ ունի, պառկած է,– պատասխանեց Պեգգոտին։

– Էլ Բլենդրոտըն գնալ-գալ չունի՞։

– Առողջ ժամանակ գնում է, սըր։

– Իսկ դուք, տիկին, չե՞ք լինում այնտեղ։

Պեգգոտին ավելի մեծ ուշադրությամբ երեսիս նայեց, և ես նկատեցի, որ նրա ձեռքերը թեթև դողդողացին։

– Կցանկանայի այնտեղի մի տան մասին հարցնել, որ մի ժամանակ, կարծեմ... Րուկրի էր կոչվում։

Պեգգոտին մի քայլ ետ քաշվեց ու ձեռքերը դողալով մեկնեց։

– Պեգգոտի,– գոչեցի ես։

– Իմ հոգյակ, Դեվիս,– կանչեց նա, և, երկուսս էլ միասին լաց լինելով, իրար փարվեցինք։

Թե Պեգգոտին որքան ծայրահեղ բաներ արեց այդ միջոցին, որքան արտասվեց, որքան խնդաց, որքան հպարտություն ցույց տվեց և որքան վիշտ, որ մայրս անգամ, որ ինձանով ամենից շատ պիտի հրճվեր ու պարծենար, չէր կարող այդքան ողջագուրել իր միակ որդուն – այս բոլորն արտահայտել անզոր եմ։ Ես ի սրտե մասնակից եղա նրա հոգեկան հուզումներին՝ առանց բնավ վախենալու, թե երեխա կերևամ նրա աչքին։ Կարող եմ ասել, թե ամբողջ կյանքումս, մինչև անգամ Պեգգոտիի առջև, այնքան ազատ չէի խնդացել ու լացել, ինչքան այդ առավոտ։

– Բարկիսը այնպե՛ս կուրախանա,– ասաց Պեգգոտին, գոգնոցով աչքերը սրբելով,– այս բանը նրան մի դույլ դեղից ավելի կօգնե։ Ասե՞մ նրան, որ այստեղ ես, թե ինքդ, սիրելիս կուզենաս վերև գնալ նրան տեսնելու։

Մի՞թե կարելի էր, որ չուզենայի։ Սակայն Պեգգոտին այպես հեշտությամբ դուրս չգնաց սենյակից, ինչպես որ մտադիր էր, որովհետև շեմքին մոտենալուն պես՝ շուռ էր գալիս ու նորից սկսում, գլուխը ուսիս դրած, ծիծաղել ու լալ։ Գործը հեշտացնելու համար վերջ ի վերջո ես ինքս նրա հետ բարձրացա և մի րոպե դռան մոտ սպասելուց հետո, մինչև որ նա նախապատրաստեր իր ամուսնուն, ներկայացա հիվանդին։

Մր. Բարկիսը կատարյալ ցնծությամբ բարևեց ինձ, բայց չկարողանալով աջը մեկնել, խնդրեց քաշել իր թասակի ծոպից, որ և սիրով կատարեցի։ Նա ասաց, թե իր համար անասելի թեթևություն է երևակայել, իբր թե նորից Բլենդրոտըն է տանում ինձ։ Նա պառկած էր երեսն ի վեր և այնպես փաթաթված, որ կարծես թե, քերովբեների սովորական պատկերի նման, երեսից զատ ուրիշ բան չունի, և այս դիրքով մի տարօրինակ պատկեր էր ներկայացնում։

– Այն ի՞նչ անուն էր, մր. Դավիթ, որ առաջին անգամ կառքիս վրա գրեցի,– ասաց մր. Բարկիսը ցավագին ժպիտով։

– Էհ, մր. Բարկիս, այդ մասին մենք իրար հետ շատ լուրջ խորհրդակցել էինք։

– Չէ՞ որ ես նրան վաղուց էի ուզել։

– Շատ վաղուց, մր. Բարկիս։

– Չեմ էլ ափսոսում, որ ուզել էի,– ասաց մր. Բարկիսը։– Հիշում եք, սըր, ինչե՛ր էիք պատմում նրա մասին։ Ասում էիք, թե ձեր բոլոր կարկանդակներն ու ճաշը նա է պատրաստում։

– Ինչպե՛ս չհիշեմ։ Լավ եմ հիշում։

– Եվ այդ բոլորը ժամացույցիս պես ուղիղ էր,– ասաց մր. Բարկիսը, թասակի ծոպը թոթվելով, որը իր խոսքերին զորություն տալու միակ միջոցն էր,– և այնպես ճիշտ, ինչպես որ մաքսերի չափը։ Իսկ դրանից ճիշտ էլ ի՞նչ կա։

Մր. Բարկիսը հարցական հայացքով երեսիս նայեց, սպասելով, որ հավանություն տամ իր մտքին, որ հղացել էր անկողնում, և ես կատարյալ հավանություն տվի։

– Դրանից ավելի հաստատ ու ճիշտ բան չկա,– կրկնեց մր. Բարկիսը։– Ինձ նման չքավորը հեշտ է համոզվում հիվանդության անկողնում, որ այս բոլորը ճշմարիտ է։ Ես շատ չքավոր մարդ եմ, սըր։

– Շատ ցավում եմ, եթե այդպես է, մր. Բարկիս։

– Այո, իրոք շատ աղքատ եմ, մր. Դավիթ։

Այս ասելուն պես նա իր ձեռքը կամաց-կամաց վերմակի տակից դուրս հանեց ու դողալով բռնեց մի գավազան, որը թոկով կապված էր մահճակալից։ Գավազանի ծայրը դժվարությամբ դեսուդեն շարժելիս նա իր դեմքը մի քանի անգամ այլայլեց։ Վերջապես գավազանը մի սնդուկի դիպավ, որի մի ամկյունը վաղուց արդեն տեսել էի։ Այնուհետև հիվանդի դեմքը նորից փոքր-ինչ զվարթացավ։

– Այստեղ իմ հնոտիներն են պահված, մր. Դավիթ։

– Է՛, է՛։

– Երանի թե մեջը փող լիներ, սըր։

– Ճշմարիտ որ լավ կլիներ,– ասացի ես։

– Բայց ցավն էլ այդ է, որ չկա,– ասաց մր. Բարկիսը, աչքերը լայն-լայն բանալով։

Ես հայտնեցի, թե նրա ասածին հավատում եմ։ Այն ժամանակ մր. Բարկիսն ավելի հանգիստ նայեց իր կնկան ու ասաց.

– Կլարա Պեգգոտի Բարկիսից ավելի օգտակար ու աշխատասեր կին արար-աշխարհում չի ճարվի։ Որքան էլ գովես, արժանի է Կլարա Պեգգոտի Բարկիսը։ Հոգյակ իմ, այսօր դու մեր հյուրերի համար մի լավ ճաշ կպատրաստես, լավ ճաշ եմ ասում, իմացա՞ր։ Գինին էլ չմոռանաս։

Ուզում էի բողոքել այդ ավելորդ մեծարանքի դեմ, բայց անկողնու մյուս կողմում կանգնած Պեգգոտին այնպես արգելական շարժումներ արեց իմ հասցեին, որ ակամա լռեցի։

– Մոտս մի քիչ փող ունեմ, այ կնիկ,– ասաց մր. Բարկիսը,– բայց չեմ հիշում որտե՞ղ է։ Այժմ սաստիկ հոգնած եմ։ Դու Դավթի հետ ներքև գնա։ Ես մի քիչ կմրափեմ, գուցե հետո փողը գտնեմ ու քեզ տամ։

Մենք հեռացանք սենյակից։ Դռնից որ ելանք, Պեգգոտին հայտնեց, թե մր. Բարկիսը վերջերս ավելի ժլատացել է և սովորություն արել՝ սնդուկից որևէ շիլինգ հանելուց առաջ այդպիսի խորամանկություն բանեցնել, թեև սաստիկ չարչարվում է անկողնուց մենակ վերկենալիս և անհրաժեշտ գումարը թշվառ սնդուկից հանելիս։ Եվ իրոք շատ չանցած նա սկսեց խուլ հեծեծանքի ու տնքոցի ձայներ հանել, ասես թե իր մարմնի բոլոր հոդերը կտրտելիս լինեին։ Պեգգոտիի աչքերը կարեկցության արտասուքով լցվեցին, բայց նա ասաց, թե այդ վեհանձն ճիգերը հիվանդի համար օգտակար են, և ցանկալի է, որ շուտ-շուտ կրկնվեն։ Եվ այսպես մր. Բարկիսը շարունակեց հառաչել ու տնքալ, անշուշտ տաժանելի ցավեր կրելով, մինչև որ նորից անկողին մտավ. այն ժամանակ նա մեզ կանչեց ու ասաց.

– Տեսա՞ք, ինչպես քունս կարճ տևեց։ Ուժերս ետ եկան և ես իսկույն հիշեցի, որ բարձիս տակ մի գինե կար։ Ահա՛։

Մենք հարկավ այնպես ձևացանք, որ իբր թե իր ասածին հավատում ենք։ Նա զվարթացավ, կարծելով թե իր սնդուկի գաղտնիքը ծածուկ է մնացել մեզ համար, և այս ենթադրությունը բավական վարձատրեց նրան իր բոլոր տանջանքների փոխարեն։

Իմաց տվի Պեգգոտիին Ստիրֆորթի գալու մասին, և մենք նրան երկար չսպասեցինք։ Վստահ էի, որ դայակս իմ ընկերոջը նույն սիրով կընդունի, ինչպես որ կընդուներ իր անձնական բարերարին, և համենայն դեպս, սրտագին մտերմությունը, զվարթ սիրտը, թեթև ձևերը, սիրուն դեմքը, ամեն մեկին հարմարվելու շնորհքը, յուրաքանչյուրի զգայուն լարն իր ուզածին պես շարժելու ձիրքը հինգ րոպեում հրապուրեցին Պեգգոտիին։ Ստիրֆորթի սրտագին վարմունքն ինձ հետ՝ բավական էր, որ դայակս գրավվեր նրանով։ Ես լիովին համոզված եմ, որ մեր հեռանալու ժամանակ Պեգգոտին արդեն պաշտում էր նրան։

Ստիրֆորթը սիրով խոսք տվեց ինձ՝ հետս միասին ճաշելու։ Նա լույս ու օդ էր մր. Բարկիսի սենյակում. նրա ներկայությունը մի կազդուրիչ ու զորավոր բալասան եղավ հիվանդի համար։ Նրա շարժմունքի ու խոսվածքի մեջ ո՛չ շռինդ կար, ո՛չ ջանք ու ճիգ, ո՛չ սեթևեթանք. ի՛նչ էլ աներ, ի՛նչ էլ ասեր, այնպես պարզ էր, այնպես բնական, շնորհալի ու սփոփիչ, որ այսօր անգամ այդ բոլորը հիշելիս ես չեմ կարող չհիանալ։

Շատ զվարթ էինք Պեգգոտիի փոքրիկ ճաշարանում։ Մարտիրոսների հին գիրքը, որի թերթերին իմ հեռանալուցս ի վեր ոչ մի ձեռք չէր դիպել, դարձյալ մնում էր գրակալի վրա։ Ես նորից սկսեցի աչքի անցկացնել նրա սոսկալի պատկերները, որոնք երբեմն այնքան սարսափ էին պատճառել ինձ, բայց այս անգամ այդպիսի բան չզգացի։ Երբ Պեգգոտին իմ սենյակի մասին խոսք բաց արեց ու ասաց, թե նա միշտ ինձ համար պատրաստ է, և հույս հայտնեց, թե կուզենամ այդ սենյակում գիշերել, ես վարանելով Ստիրֆորթի դեմքին նայեցի։ Ստիրֆորթն իսկույն միտքս հասկացավ ու գոչեց.

– Հարկավ։ Քանի որ մենք Յարմաութում ենք, դու այստեղ կքնես, ես՝ պանդոկում։

– Սակայն, Ստիրֆորթ,– ասացի ես,– քեզ այսքան հեռու տեղ բերել և հետո քեզնից բաժանվել, այս, կարծեմ, ընկերական վարմունք չէ։

– Չէ՞ որ դու ի բնե այդ տանն ես պատկանում,– ասաց նա։– Այս հանգամանքի առջև ի՞նչ նշանակություն ունի քո «կարծեմը»։

Խնդիրն արդեն վճռված էր։

Ստիրֆորթն իր հաղթական դերը մինչև վերջին վայրկյանը պահպանեց, և ժամը ութին մենք ճանապարհ ընկանք դեպի մր. Պեգգոտիի նավատունը։ Քանի ժամերն անցնում էին, այնքան էլ նրա շքեղ ձիրքերի փայլն աճում էր։ Այն ժամանակ, ինչպես և այսօր, ինձ թվում էր, թե հաճոյանալու կարիքը, հաղթանակից սնունդ առնելով, է՛լ ավելի նորություն էր տալիս նրա մտքին և ուժեղացնում էր նրա ի բնե ազդու հրապույրը։ Եթե այն երեկո մեկն ինձ ասեր, թե իմ շնորհալի ընկերը միայն խաղում է իր հոյակապ ձիրքերով՝ լոկ իր գերազանցությունը ցույց տալու և իր պարզամիտ ունկնդիրներին մի վայրկյան դյութելու համար, որպեսզի հետևյալ վայրկյանին նույն հեշտությամբ նրանց մոռանա,– ես չգիտեմ, թե այդ լիրբ զրպարտությունը ինչ զայրույթ կշարժեր իմ մեջ։

Դա անշուշտ ավելի կսաստկացներ, եթե միայն կարելի էր սաստկացնել, իմ սիրավառ անձնվիրության ու ջերմ բարեկամության զգացումը, որով լցված՝ նրա հետ միասին առաջ էի գնում՝ մթապատ ծովեզերքի երկարությամբ դեպի հին նավատունը. մինչդեռ սառը քամին տխուր հեծում էր և ավելի ողբալի ձայներ հանում, քան այն գիշեր, երբ ես առաջին անգամ ոտք էի դրել մր. Պեգգոտիի շեմքի վրա։

– Բավական ամայի և վայրի տեղ է, չէ՞, Ստիրֆորթ,– ասացի ես։

– Այո, շատ զվարթ չի թվում ինձ, մանավանդ մթնով,– պատասխանեց նա։– Ծովն էլ սոված գազանի նման ոռնում է, կարծես սպառնալով լափել մեզ։ Բայց ահա այնտեղ՝ նավի վրա լույս եմ տեսնում։

– Նավատունն էլ հենց այդ է,– ասացի ես։

– Ճիշտ դրա մոտովն էր, որ այս առավոտ զբոսնելիս անցա,– հարեց Ստիրֆորթը։– Կարծես թե բնազդով լիներ։

Լուռ շարունակեցինք լույսի ուղղությամբ առաջ գնալ և կամաց մոտեցանք նավի դռանը։ Ես շշնջացի Ստիրֆորթին, որ իմ հետևից գա, ու դուռը բանալով ներս մտա։

Դեռ դրսից լսել էինք խառը ձայներ. ներս որ մտանք, ծափի հարվածներ թնդացին, և ես զարմանալով տեսա, որ ծափ տվողը միշտ տխուր մրս. Գրմիջն է։ Սակայն այս անսովոր զվարթությամբ ոգևորվողը միայն նա չէր։ Մր. Պեգգոտին էլ ուրախ ծիծաղում էր և իր կոշտ

թևերը մեկնած՝ ուզում էր գրկել Էմլիին։ Հեմը, որի երեսին թե՛ խնդություն, թե՛ հիացմունք և թե՛ երկյուղ էր երևում, Էմլիի ձեռքից բռնել էր և կարծես վճռել մոտեցնել նրան մր. Պեգգոտիին։ Իսկ ինքը՝ փոքրիկ Էմլին, շառագունած և շփոթված, բայց և հրճված մր. Պեգգոտիի ցնծության վրա, Հեմի ձեռքից դուրս պրծնելով, արդեն պատրաստ էր մր. Պեգգոտիի գիրկն ընկնել, երբ ամենից առաջ մեզ նկատեց ու կանգ առավ։ Այս էր ընդհանուր տեսարանը, որ բացվեց մեր առջև, երբ գիշերվա ցրտից ու խավարից, հանկարծ նավավարի տաք սենյակը ոտք դրեցինք։ Մրս. Գրմիջը գժի նման ծափ էր տալիս սենյակի խորքում։

Այդ տեսարանը մեր մտնելուն պես փոխվեց։ Մինչդեռ ես արդեն կանգնած էի ապշած խմբի մեջտեղում՝ մր. Պեգգոտիի հանդեպ ու սիրով նրա աջն էի սեղմում, Հեմը գոռաց.

– Մաստր Դեվի՛ն, մաստր Դեվի՛ն։

Իսկույն ևեթ բոլորս սկսեցինք միասին իրար ողջունել, միասին խոսել ու փոխադարձ ուրախություն հայտնել։ Մր. Պեգգոտին մեզ տեսնելուց այնպես գոհ էր, այնպես ուրախ, որ չգիտեր, թե ինչ ասի կամ անի։ Մերթ իմ աջն էր սեղմում, մերթ Ստիրֆորթի, մերթ նորից իմը, մերթ նորից շփելով դեսուդեն ընկնում, և լիաթոք զվարճությունից քրքջում։ Ախորժելի էր այդ միջոցին տեսնել նրան։

– Աստվա՛ծ իմ,– գոչեց մր. Պեգգոտին։– Այսպիսի բան ո՞վ էր սպասում։ Երկու ջենտլմեն... երկու երիտասարդ ջենտլմեն... իմ խոնարհ հարկի տակ, այն էլ այս գիշեր։ Գիտե՞ք՝ այս ի՞նչ գիշեր է։ Ես կյանքումս այսպիսի գիշեր չեմ վայելել... Էմլի, հոգյակս, մոտեցիր, մոտս եկ, չարաճճի դիցուհիս։ Սա, սիրելիս, մեր Դեվիի ընկերն է, գիտե՞ս։ Սա այն պարոնն է, որի մասին արդեն լսել ես, Էմլիկ իմ։ Եկել է քեզ այցելելու Դեվիի հետ միասին, այն էլ մի այնպիսի ուրախ գիշեր, որի նմանը հորեղբայրդ չէր տեսել, չի էլ տեսնի այսուհետև։ Ապրեն մեր ջենտլմենները։ Հուռռա՛։

Մր. Պեգգոտին այս ճառն անսահման ոգևորությամբ և շնչով արտասանելուց հետո՝ թոռնիկի գլուխը բռնեց, մի տասն անգամ ջերմ համբուրեց, հուժկու գրկում սեղմեց և նրա գլուխը սկսեց շոյել, բայց այնպես կամաց շփելով, ինչպես որ մի տիկնոջ ձեռք կշփեր։ Հետո թողեց, որ գնա, և երբ Էմլին վազեց-փախավ այն սենյակը, որ մի ժամանակ իմ ննջարանն էր, մր. Պեգգոտին, անսովոր հրճվանքից համարյա թե շնչասպառ, մեզ նայեց և ասաց.

– Եթե ձեզ նման երկու ջենտլմեն... երկու հասակավոր ու քաջազարմ տոհմիկներ...

– Ի՛նչ լավ ասաց,– գոչեց Հեմը։– Լավ ասաց, չէ՞, մաստր Դեվի։ Իրոք որ երկու հասակավոր ու քաջազարմ տոհմիկներ։ Այո՛, այո՛։

– Եթե դուք, երկու հասակավոր ու քաջազարմ ջենտլմեններ,– շարունակեց մր. Պեգգոտին,– կներեք ինձ, երբ որ իմանաք, թե ինչո՞ւ եմ այսպես գժված, այն ժամանակ ներողություն կխնդրեմ ձեզնից։ Էմլի, հոգյակ իմ, ա՛յ Էմլի... Նա գիտե, թե ինչ եմ ուզում իրեն ասել և դրա համար փախավ։ Հա՛, հա՛, հա՛։ Էյ, պառավ, գնա տես՝ ուր փախավ։

Մրս. Գրմիջը գլուխը շարժեց ու գնաց։

– Եթե այս գիշերն իմ կյանքի ամենաերջանիկ գիշերը չլիներ,– ասաց մր. Պեգգոտին, մեզ հետ միասին կրակի առջև նստելով,– թող ես մի խեցգետին դառնամ, այն էլ խաշած խեցգետին, էլ ինչ ասեմ... Այդ փոքրիկ Էմլին, սըր,– կիսաձայն շարունակեց մր. Պեգգոտին, Ստիրֆորթի կողմը հակվելով,– այդ աղջիկը, որ իսկույն կարմրեց ու փախավ...

Ստիրֆորթը միայն գլխով մի հաստատական նշան արեց, բայց այդ միակ շարժման մեջ այնքան ջերմ ուշադրություն ու համակրություն ցույց տվեց մր. Պեգգոտիի հրճվանքին, որ սա մի որոշ բան լսածի պես պատասխանեց.

– Այո, ճիշտ այդպես է։ Շնորհակալ եմ, սըր, որ նրան լավ եք ճանաչել։

Հեմը մի քանի անգամ ակնարկեց ինձ, հասկացնելու համար, թե ինքն է պատրաստ նույնը կրկնել։

– Այդ փոքրիկ Էմլին,– շարունակեց մր. Պեգգոտին,– մեր տան... ինչպե՞ս ասեմ... ես մի տգետ, աշնորհք մարդ եմ... մեր տան զվարթուն հրեշտակն է։ Նա իմ զավակը չէ, ես երբեք զավակ չեմ ունեցել, բայց եթե ունեցած էլ լինեի, Էմլիից ավելի չէի սիրի։ Արևս վկա, հարազատ զավակիս անգամ ավելի շատ չէի սիրի, քան Էմլիին։ Հասկանո՞ւմ եք։

– Լիովին,– ասաց Ստիրֆորթը։

– Գիտեի, որ կհասկանաք,– վրա բերեց մր. Պեգգոտին,– և նորից շնորհակալ եմ։ Մաստր Դեվին լավ է հիշում, թե մի ժամանակ Էմլին ի՛նչ աղջիկ էր, իսկ թե այժմ ինչպե՞ս է, այդ ինքներդ կարող եք դատել։ Բայց ո՛չ դուք, սըր, ո՛չ էլ մաստր Դեվին չեք կարող իմանալ, թե այդ աղջիկն ի՞նչ էր, ի՞նչ է և ի՞նչ պիտի լինի սրտիս համար, որ նրան այնքան սիրում է։ Ես մի ծովային ոզնու նման բիրտ մարդ եմ, սըր, բայց կասեմ, որ մի կնոջից բացի, ոչ ոք չգիտի և չի կարող իմանալ, թե ինչ է ինձ համար փոքրիկ Էմլին։ Մեր մեջ մնա,– ասաց նա, դարձյալ ձայնն իջեցնելով,– չկարծեք թե միստրիս Գրմիջն է այդ կինը, թեև դա էլ հազար գովասանքի արժանի կին է։

Մր. Պեգգոտին գլխի մազերը սաստիկ խառնեց, որ նշան էր, թե մտադիր է ճառը շարունակել, և ձեռքերը ծնկներին դեմ տալով, ասաց.

– Մի մարդ էլ կա, որ Էմլիին այդ օրից է ճանաչում, երբ նրա հայրը ջրասույզ եղավ։ Այդ մեկն այնուհետև միշտ նրա հետ էր։ Նրա հետ էր, երբ Էմլին դեռ երեխա էր, նրա հետ էր, երբ ջահել աղջիկ էր, նրա հետ էր, երբ վերջապես, մի չափահաս օրիորդ դարձավ։ Թեև այդ մեկը շատ գրավիչ դեմք չունի – նա էլ ինձ նման կոշտ ու կոպիտ մի բան է,– բայց ազնիվ ու քաջասիրտ տղա է։

Ոչ մի ժամանակ չէի տեսել Հեմին այն աստիճան ուրախ ժպտալիս, ինչպես որ ժպտաց այդ րոպեին։

– Ի՞նչ եք կարծում,– ասաց մր. Պեգգոտին ամենամեծ հիացմունքով,– այդ անտաշ ձկնորսը Էմլիին է տալիս իր սիրտը։ Սկսում է նրա հետևից ման գալ, գերու պես ծառայում է նրան, գիշեր-ցերեկ մաշվում է ու, վերջապես, իր ցավի պատճառն ինձ հայտնում... Դե, պարոններ, ես էլ էի ուզում, որ մեր Էմլին ամուսնանա, մի այնպիսի ազնիվ մարդու հետ, որ նրան պաշտպաներ։ Ես չգիտեմ, դեռ որքա՞ն պիտի ապրեմ – գուցե մահս մոտեցել է, բայց այս միայն գիտեմ, որ եթե մի գիշեր հանկարծ կատաղի քամին նավակս շուռ տա և ես լեռնանման կոհակների վրայից վերջին անգամ մեր Յարմաութի լույսերը տեսնեմ, հանգիստ սրտով անդնդասույզ կլինեմ, ասելով ինձ. «Ահա այնտեղ՝ ափի վրա մի տղամարդ կա, որ երկաթի ամրությամբ հավատարիմ է Էմլիին։ Եվ քանի որ այդ մարդը ողջ է, ո՛չ մի չարիք, ո՛չ մի վտանգ չի հասնի իմ Էմլիին։ Թող երկուսին էլ աստված օրհնե»։

Մր. Պեգգոտին այս ճառից բորբոքված, իր աջը մեկնեց, կարծես թե ալիքների խորքից Յարմաութի լապտերներին վերջին ողջույն առաքելով, և հետո Հեմին ակնարկելով, որ անքթիթ նրան էր նայում, շարունակեց.

– Ես էլ այն մեկին ասացի, որ գնա խոսի Էմլիի հետ։ Թեև նա մի ահագին տղա է, բայց երեխայի պես ամաչկոտ է և չի ուզում խոսել։ Այն ժամանակ ես խոսեցի։ «Ի՞նչ, նրա՞ն,– ասաց Էմլին։– Նրան, որի հետ գրեթե մեծացել եմ և որին եղբորս պես սիրել եմ։ Ո՛չ, ապեր, ես նրան չեմ գնա։ Նա այնքան բարի է»։ Ես համբուրեցի Էմլիին ու ասացի. «Սիրելիս, լավ ես անում, որ միտքդ պարզ ես հայտնում. ուրեմն ինքդ ընտրիր ում որ կուզես, չէ՞ որ թռչնիկի նման ազատ ես»։ Այնուհետև տղայի մոտ գնացի ու ասացի. «Այ տղա, շատ էի ուզում, որ բանը գլուխ գա, բայց չեղավ։ Է՛հ, ինչ արած։ Երկուսդ էլ այնպես մնացեք, ինչպես որ էիք մինչև այժմ, և իմ խորհուրդն այս կլինի, որ դու նրա հետ ազնիվ լինես, ու համբերես»։ «Լավ – ասաց տղան,–

շնորհակալ եմ», և ձեռքս սեղմեց։ Եվ ահա նա տված խոսքը երկու տարի ազնվաբար պահում էր, և մենք հանգիստ ապրում էինք միասին։

Մր. Պեգգոտիի դեմքը, որ իր պատմության այլևայլ իմաստների համեմատ փոփոխվում էր, նորից մի հաղթական զվարթության փայլ ստացավ։ Նա իր ձեռքերն ամուր շփեց (ասելիքն ավելի ազդու անելու համար), մեկը դրեց իր ծնկի վրա, մյուսը՝ Ստիրֆորթի, և հետևյալ ճառը երկուսիս միջև բաժանեց։

– Հանկարծ, մի երեկո, և հատկապես այս երեկո, փոքրիկ Էմլին ինձ մոտ է գալիս, հետն էլ ահա այս տղան... Այդտեղ զարմանալու ի՞նչ բան կա, կասեք դուք։ Զարմանալու բան, իհարկե չկա, որովհետև տղան սովոր է եղբոր պես ուղեկցել նրան թե՛ ցերեկը, թե՛ գիշերը և թե՛ ամեն ժամանակ։ Եվ այս կպրոտ ձկնորսը Էմլիի ձեռքից բռնում է և ուրախ-ուրախ գոչում ինձ. «Տես, քեռի, ահա իմ կինը»։ Էմլին էլ կես-համարձակ, կես-երկչոտ, ժպտալով ու լալով, ասում է. «Այո, ապեր, եթե թույլ տաք»։ Եթե թույլ տամ,– աղաղակեց մր. Պեգգոտին՝ աչքերը վառված։– Տեր ողորմյա. մի՞թե կարող էի թույլ չտալ, մի՞թե սրտիս փափագն էլ հենց այդ չէր։ «Եթե թույլ տաք,– ասում է,– այժմ ես ավելի խելոք եմ դարձել, ամեն բան մտածել եմ ու կաշխատեմ լավ կին լինել, որովհետև նա էլ բարի, լավ տղա է»։ Այդ րոպեին մրս. Գլմիջը սկսեց ծափ տալ, ինչպես անում են թատրոնում, և հանկարծ դուք ներս մտաք։ Ո՛ւֆ, պրծա,– գոչեց մր. Պեգգոտին։– Դուք ներս մտաք. այս բոլորը կատարվեց ճիշտ այստեղ և այս ժամին։ Եվ ահա այդ տղան է, որ առնելու է Էմլիին։

Քիչ մնաց, որ Հեմը գլորվեր այն հարվածից, որ տվեց նրան հրճված մր. Պեգգոտին ի նշան իր մտերմության ու սիրո, և հետո զգալով, որ ինքն էլ պարտավոր է մի բան ասել, հետևյալն ասաց ամենամեծ դժվարությամբ.

– Էմլին ձեզ նման պստիկ էր, մաստր Դեվի... Երբ դուք առաջին անգամ մեզ մոտ եկաք... Բայց դեռ այն ժամանակ ես գիտեի, որ կմեծանա։ Եվ տեսա, պարոններ, որ մեծացավ և... ծաղկի նման բացվեց։ Օ՛հ, մաստր Դեվի, կյանքս կտամ նրա համար. ամենամեծ ուրախությամբ, սիրով կտամ։ Նա ինձ համար ավելի թանկ է, պարոններ, քան... քան ամեն բան, ինչ որ միայն կարող եմ ցանկանալ, և ավելի, քան... ինչ որ կարող եմ լեզվով ասել։ Ես... ես նրան սրտանց սիրում եմ։ Ջենտլմեն չկա երկրի վրա... ոչ էլ որևէ ծովի վրա, որ իր օրիորդին այնպես սիրեր, ինչպես ես եմ նրան սիրում... թեև ինձ նման շատերը կան, որ իրենց միտքն ավելի լավ կարտահայտեն։

Ես հուզված էի տեսնելով, թե ինչպես Հեմի նման մի վիթխարի, հուժկու տղա դողդողում է մի սիրունիկ էակի համար զգացած սիրուց, որ վառել էր իր սիրտը։ Ավելի գովելի էր այն անկեղծ վստահությունը տեսնել, որ մեզ Հեմն ու մր. Պեգգոտին ընծայեցին։ Միով բանիվ՝ այս բոլոր պատմությունը վերին աստիճանի սիրտս շարժեց ու հուզեց։ Արդյոք մանկությանս հիշատակները որքա՞ն ազդեցին վրաս – չեմ կարող ասել. ո՛չ էլ կարող եմ պնդել, թե արդյոք սրտիս մեջ Էմլին նորից սիրելու մի անորոշ հույս չէ՞ր շարժվում, երբ որ նրանց տնակը մտա։ Գիտեմ միայն, որ տեսածս ու լսածս հոգուս բերկրանք պատճառեց, բայց այնպիսի մի բերկրանք, որ հեշտ կարող էր դառն վշտին տեղի տալ։

Հետևաբար, եթե ընդհանուր լռությունը լուծելու պարտքն ինձ մնար, ես անշուշտ կշփոթվեի, բայց բարեբախտաբար Ստիրֆորթն այդ պարտքը կատարեց, և այնպես հաջող, որ մի քանի վայրկյանից հետո բոլորս էլ նորից զվարթացանք։

– Մր. Պեգգոտի,– ասաց նա,– դուք մի բարեսիրտ, ազնիվ մարդ եք և մինչև ձեր վերջին շունչը այդպես երջանիկ մնալու արժանի, ինչպես որ եք այս գիշեր։ Ձեր ա՛ջը, Հեմ, ձե՛րն էլ։ Մաղթում եմ ձեզ լիակատար երջանկություն։ Դեվի, այդ կրակը մի լավ խառնիր, որ ինչքան կարելի է պայծառ վառվի։ Իսկ դուք, մր. Պեգգոտի, եթե չհրամայեք ձեր նազելի թոռնիկին այս անկյունը գալ նստել, որ ես ահա նրան եմ տալիս – իսկույն ևեթ կհեռանամ։ Ինչ գանձ էլ որ տան ինձ, չեմ ուզենա ձեր կրակի առջև պարապ տեղ տեսնել, այն էլ մի այսպիսի գիշեր։

Մր. Պեգգոտին իմ նախկին սենյակը գնաց Էմլիին բերելու, և որովհետև աղջիկը չէր գալիս, Հեմն էլ հորդորելու գնաց: Վերջապես բերին նրան ու կրակի մոտ նստեցրին: Էմլին սկզբում շատ խրտնած ու վարանած էր, բայց Ստիրֆորթի անբռնազբոս, պարզ վարմունքից նրա երկյուղը փարատվեց: Ամեն բանից, ինչ որ կարող էր շփոթել աղջկան, Ստիրֆորթը զգուշությամբ խորշում էր: Նա մր. Պեգգոտիին դիմելով, սկսեց նավերի, նավակների, ծովերի, ձկների մասին խոսել, հետո, ինձ դիմելով, այն ժամանակը հիշեց, երբ մր. Պեգգոտին մր. Կրիկլի պանսիոնն էր եկել. հետո ասաց, թե ուրախ է այն բոլոր իրերից, որ տեսնում է նավատան մեջ, և իր զվարթ աշխուժով այն աստիճան մեզ դյութեց, որ մենք էլ սկսեցինք ազատ խոսել:

Սակայն Էմլին այդ գիշեր շատ չխոսեց. նա միայն լռիկ ականջ էր դնում ու դիտում. նրա երեսը վառվում էր, ինքն էլ շատ գրավիչ էր: Ստիրֆորթը մր. Պեգգոտիի հետ խոսելիս, մի զարհուրելի նավաբեկության դեպք պատմեց և այնպես ազդու կերպով նկարագրեց, որ հենց իմանաս այդ դեպքը իր առջևն էր կատարվում, իսկ Էմլին անքթիթ նրան էր նայում, կարծես թե արկածի ամբողջ արհավիրքը իր դեմհանդիման տեսնելով: Այնուհետև Ստիրֆորթը պատմեց, որպես հակապատկեր, իր հետ պատահած մի ծաղրալի անցք: Այս կայտառ ու զվարճալի պատմությունից Էմլին անգամ ծիծաղեց և իր արծաթյա հնչուն ձայնով ամբողջ նավատունը թնդացրեց: Նրա սրտառուչ ծիծաղով հմայած՝ մենք էլ, նույնիսկ Ստիրֆորթը, անզուսպ քրքիջ բարձրացրինք: Ստիրֆորթը ստիպեց մր. Պեգգոտիին նավաստիների երգը երգել կամ մռնչալ՝ «Երբ որ քամին փչի, գոչի ու գոռա». ինքն էլ հետո մի ուրիշ ծովային երգ երգեց այնպես շնորհքով ու եռանդով, որ ինձ թվում էր, թե կատաղի հողմը իսկապես ոռնում է ծովի վրա ու հեծելով ներս խուժում՝ մեզ հետ միասին լսելու նրան:

Գալով մրս. Գըմիջին, Ստիրֆորթը նրան էլ անվերջ թախծի ճիրաններից հափշտակեց – մի բան, որ նրա ծերուկի մեռնելուց ի վեր դեռ ոչ մի մարդու չէր հաջողվել գլուխ բերել (այս ինձ մր. Պեգգոտին հայտնեց): Պառավ կինն ընկերոջս զվարթությամբ վարակված, իր թշվառության վրա փնթփնթալու ժամանակ անգամ չգտավ և հետևյալ առավոտյան խոստովանեց, թե Ստիրֆորթն անշուշտ նրան կախարդած կլիներ:

Պետք չէ, սակայն, ենթադրել, թե Ստիրֆորթը միայն իրեն էր վերապահում խոսելու մենաշնորհը: Երբ Էմլին քիչ-քիչ սիրտ առավ և սկսեց իր և իմ հին զբոսանքները մտաբերել, երբ մենք ծովափի վրա խեցիներ ու կոպիճներ էինք հավաքում, և ես հարցրի՝ արդյոք հիշո՞ւմ է թե որքա՛ն էի իրեն նվիրված, և երկուսս էլ կարմրեցինք ու ժպտացինք, այդ անդառնալի անցյալի մասին մտածելով – Ստիրֆորթը լռիկ-մնջիկ մտիկ էր անում թե՛ նրան, թե՛ ինձ: Այդ միջոցին ու մինչև վերջը Էմլին նստած էր հին սնդուկի վրա, վառարանի անկյունում: Հեմը նստած էր նրա կողքին՝ ճիշտ այնպես, ինչպես որ ես էի նստում մի ժամանակ: Չիմացա ի՞նչ էր պատճառը – արդյոք մի կուսական չարաճճի քմահաճո՞ւյք, թե մեզնից քաշվելը – որ Էմլին ամբողջ երեկո պատին կպած դիրք բռնեց և ոչ մի անգամ իր նշանածին չդիպավ:

Կարծեմ արդեն կես-գիշեր էր, որ մնաս բարով ասացինք: Ընթրիքի ժամանակ նավաստիական պաքսիմատով ու տապակած ձկով պատվեցին մեզ: Ստիրֆորթն իր գրպանից մի շիշ հոլանդական գինի հանեց, որ մենք տղամարդիկս (այժմ առանց ամաչելու կարող եմ ինձ էլ տղամարդ կոչել), մինչև վերջին կաթիլը քամեցինք: Մեր հրաժեշտը սրտագին էր: Ամբողջ գերդաստանը հավաքվել էր՝ մեզ լույս տալու դռան մոտ: Էմլին Հեմի հետևից կապույտ աչքերով նայում էր մեզ և քնքուշ ձայնով զգուշացնում, որ ճանապարհը չկորցնենք:

– Շատ սիրուն աղջիկ է,– ասաց Ստիրֆորթը ձեռքս բռնելով:– Իրավ որ մի զվարճալի անկյուն է այս անկյունը, միջի մարդիկ էլ՝ տարօրինակ: Դժգոհ չեմ, որ նրանց տեսա: Այդպիսիներին հանդիպելիս՝ նոր տպավորություններ եմ ստանում:

– Եվ ինչպես լավ էր,– ասացի ես,– որ նրանց ուրախ ժամին վրա հասանք: Այդպիսի երջանիկ մարդիկ ես օրումս չեմ տեսել: Անչափ գոհ եմ, որ նրանց մաքուր խնդությանը մենք էլ մասնակից եղանք:

– Ինձ թվում է, սակայն,– ասաց Ստիրֆորթը,– թե այդ դդմագլուխ ապուշը շատ հարմար չէ աղջկան: Չէ՞, Դեվի:

Ստիֆորթը այնքան համակրություն էր ցույց տվել թե՛ Հեմին և թե՛ բոլորին, որ այս անակնկալ սառը հարցումից ես շվարած մնացի: Սակայն երբ արագ շուռ գալով, նրա երեսին ժպիտ տեսա, հանգստացա ու ասացի.

– Ա՛հ, Ստիրֆորթ, որքան էլ այդ համեստ մարդկանց վրա ծիծաղես, որքան էլ միս Դարտլին գրգռես, որքան էլ իսկական զգացումներդ կատակներով քողարկես, ինձ փույթ չէ. ես քեզ լավ եմ ճանաչում: Մի՞թե չտեսա, թե ինչպես լավ ես հասկանում այդ հասարակ մարդկանց սիրտը, որքան լավ ես համակերպվում այդ բարի ձկնորսի երջանկությանը, որքան գիտես նույնիսկ դայակիս սերը գրավել: Հավատացած եմ, որ այդ պարզ մարդկանց յուրաքանչյուր խնդությունը կամ վիշտը, զվարթ կամ տրտում զգացումը համակրության արձագանք կտա քո սրտում: Եվ հատկապես դրա համար ես քսան անգամ ավելի եմ սիրում ու հարգում քեզ, Ստիրֆորթ:

Նա կանգ առավ, երեսիս նայեց և ասաց.

– Դեյզի, տեսնում եմ, անկեղծ ես խոսում. դու բարի տղա ես: Երանի թե բոլորս քեզ նման լինեինք:

Եվ հետևյալ վայրկյանին նա զվարթ սրտով մր. Պեգգոտիի ծովային երգը հնչեցրեց, և մենք շտապեցինք Յարմաութ հասնել:

Բ. ԳԼՈՒԽ
Հին բեմի վրա նոր անձինք

Ստիրֆորթն ու ես երկու շաբաթից ավելի Յարմաութում մնացինք: Ավելորդ է ասել, որ գրեթե միշտ միասին էինք: Պատահում էր, սակայն, որ երբեմն իրարից մի քանի ժամով բաժանվում էինք: Նա վարժ նավաստի էր, իսկ ես՝ ոչ, և երբ նա ու մր. Պեգգոտին ձկնորսության էին գնում, ես սովորաբար ցամաքի վրա էի մնում: Ես, որպես դայակիս հյուրը, փոքր-ինչ կաշկանդված էի, այնինչ Ստիրֆորթն ազատ էր: Ես տեսնում էի, որ պառավ Պեգգոտին ամբողջ օրը հիվանդ մարդուն է խնամում, և նրան ավելորդ նեղություն չտալու համար աշխատում էի գիշերները շուտ տուն գալ, մինչդեռ պանդոկում եղած Ստիրֆորթը լիովին ազատ էր իր հակումներին հետևելու: Այսպես ահա ականջիս հասավ, թե մի գիշեր իմ անկողին մտնելուց հետո, նա ձկնորսներին պատիվ է տվել «Զվարթ ընկեր» գինետանը, ուր երբեմն հաճախում էր և մր. Պեգգոտին. հետո իմացա, թե մի լուսնկա գիշեր, նավաստու շորեր հագած, ծովի վրա է մնացել և միայն լուսադեմին տուն եկել: Սակայն ես նրա այդ արարքների վրա չէի զարմանում, որովհետև ինձ հայտնի էր, որ նրա աշխույժ բնավորությունը, անվեհեր ու բուռն ոգին ֆիզիկական հոգնության մեջ հաճույք են գտնում և ամեն տեսակ նոր ու զորեղ գրգիռներից բավականություն ստանում:

Երբեմն մենք իրարից բաժանվում էինք և այն պատճառով, որ ես մեկ-մեկ Բլենդրոտըն էի գնում՝ իմ մանկության ծանոթ վայրերը տեսնելու համար. այնինչ Ստիրֆորթը, մի անգամ այնտեղ ինձ հետ միասին լինելուց հետո, բնական է, որ նորից գնալու մի առաձին փափագ չէր զգում: Եվ այսպես, որքան հիշում եմ, չորս անգամ պատահեց, որ առավոտյան նախաճաշից հետո, այլևայլ պատճառներով, մենք իրարից բաժանվում էինք և միայն երեկոյան ուշ ճաշին,

նորից իրար հանդիպում: Ես ամենևին տեղյակ չէի, թե ընկերս ինչպես է անցկացնում այս միջանկյալ ժամերը. միայն երբեմն լսում էի, թե նա մի հանրածանոթ մարդ է դարձել Յարմաութում և կարող է հազար տեսակ զվարճություն գտնել, ուր ուրիշը մեկն էլ չէր գտնի:

Միայնակ պտույտներիս ժամանակ սիրելի էր ինձ հին ճանապարհին ամեն մի կանդունը մտաբերել և առանց հոգնելու այն տեղերը նայել, որոնք լի էին մանկությանս հիշատակներով: Ես անդադար պտույտ էի գալիս այդ վայրերում, ինչպես հաճախ արել էի մտքիս մեջ, և սիրով կանգ առնում այդտեղ, ինչպես մտքով էլ արել էի, երբ մարմնով հեռու էի Բլենդրոտընից: Ահա հանգստարանը և ծնողներիս գերեզմանը՝ ճյուղատարած ծառի տակ, ուր շատ անգամ մի տարօրինակ վշտակցությամբ կանգնել եմ, երբ գերեզմանը միայն հորս մարմինն էր ամփոփում, և ուր այնքան հուսահատ արտասվել եմ, երբ մայրիկս էլ իր մանկան հետ նրա գոգն իջավ – մի գերեզման, որ հավատարիմ Պեգգոտիի ջանքերով, մինչև այժմ մաքուր էր պահվել, ու մի գեղեցիկ բուրաստան դարձել: Գերեզմանը հանգստարանի մի անկյունումն էր գտնվում, ճանապարհի եզերքին: Ետ ու առաջ ճեմելիս ես ժամերով կանգնում էի շիրիմի մոտ և վրայի անունները կարդում: Այդ միջոցին ինձ անթիվ մտքեր էին պաշարում. մտածում էի, թե ինչպիսի դեր պիտի խաղամ ապագայում և ինչ երևելի գործեր կատարեմ: Հանգստարանի եկեղեցու ժամացույցը ժամանակ առ ժամանակ հնչում էր, և ես կարծես գերեզմանից լսում էի մորս ձայնը, որ ինձ օրհնում էր ու խրատում՝ ազնիվ շավղով առաջ գնալ կյանքի մեջ:

Մեր հին տունը շատ էր փոխվել: Որորների թողած կիսավեր բույներն արդեն բոլորովին անհետացել էին. ծառերն էլ այնպես խուզվել էին, որ այլևս չէր կարելի ճանաչել: Պարտեզը միանգամայն խոպանացել էր և տան պատուհանները կիսով չափ փակ էին: Տան այժմյան բնակիչը մի թշվառ խելագար էր: Պատուհանիս առջև նստած նա շարունակ նայում էր հանգստարանին: Արդյոք ի՞նչ էր մտածում: Մի՞թե նրա թափառիկ մտքերն էլ հուզված են այն ցնորքներով, որոնք մի ժամանակ ինձ հիացնում էին, երբ ես արշալույսին նույն պատուհանի առջև կիսամերկ նստած՝ սիրում էի արեգնափայլ մարգագետնի վրա հանգիստ արածող գառներին նայել:

Մեր առաջվա հարևանները՝ մր. Գրայպըրը և իր կինը, Հարավային Ամերիկա էին գնացել, և անձրևը նրանց ամայի տան կտուրից ներս կաթելով, ամբողջ հատակն ու որմերը փչացրել էր: Մր. Չիլիպն ամուսնացել էր երկրորդ անգամ. նրա հիմիկվա կինը մի երկայնաքիթ, բարձրահասակ, չոր տիկին էր: Նրանց վտիտ ու նիհար որդին հազիվ էր իր ահագին գլուխը վզի վրա բռնում և անզոր աչքերով կարծես հարցնում էր, թե ինչո՞ւ է աշխարհ եկել:

Այսպես տրտմախառն զվարճությամբ ման էի գալիս ծննդավայրիս շրջակայքում, մինչև որ ձմռան արևի մայր մտնելը հիշեցներ ինձ, թե արդեն քաղաք վերադառնալու ժամանակն է: Եվ այնտեղ, պանդոկի կրակի դիմաց, Ստիրֆորթի հետ ընթրելիս, զվարճանում էի իմ ցերեկվա զբոսանքները հիշելով: Նույն զգացումը, թեև ավելի նվազ չափով, տիրում էր սրտիս, երբ գիշերվա ժամին մտնում էի իմ սենյակը, ուր «Կոկորդիլոսներ» երևելի գիրքը միշտ դրված էր սեղանի վրա: Այս գիրքը թերթոտելիս՝ ես աստծուն փառք էի տալիս, որ նա ինձ Ստիրֆորթի նման ընկեր է պարգևել, Պեգգոտիի նման մի ընկերուհի և տատիս նման մի պատվական ու վեհանձն խնամակալ, որ փոխարինում էր լուսահոգի ծնողներիս:

Զբոսանքներից դեպի Յարմաութ ետ գալիս, ճանապարհս կարճելու համար, նստում էի մի լաստանավ, որ ինձ քաղաքի ու ծովափի միջև տարածվող տափարակն էր հասցնում և ազատում էր մեծ ճանապարհով երկար շրջան անելուց: Մր. Պեգգոտիի տնակն այդտեղից հեռու չէր, վերադարձիս միշտ մտնում էի նրա մոտ: Ստիրֆորթը սովորաբար սպասում էր ինձ նրա հարկի տակ, և այնտեղից, արդեն միասին, երեկոյան մթնշաղին մոտենում էինք քաղաքին, որի լապտերները հեռվից մեզ շող էին տալիս:

Երկու շաբաթն արդեն անցել էր: Ես գնացի վերջին անգամ մնաս բարով ասելու իմ տենչալի վայրերին և երեկոյան ետ գալիս մր. Պեգգոտիի տնակը մտա: Այնտեղ Ստիրֆորթը կրակի առջև մենակ նստած էր և այնպես խորասուզված մտքերի մեջ, որ տնակին մոտենալս չլսեց:

Կարող էր իրավ չլսել, որովհետև ավազոտ տափարակի վրա քայլերս ձայն չէին հանում։ Սակայն ներս մտնելս էլ նրա մտքի թելը չընդհատեց։ Ես մոտեցա և երեսին մտիկ տվեցի. նա դարձյալ հոնքերը կիտած խոկում էր։

Ձեռքս երբ նրա ուսին դրեցի, նա այնպես ցնցվեց, որ ես էլ սարսուռ զգացի։

– Որտեղի՞ց ուրվականի պես վրաս եկար,– ասաց նա գրեթե հանդիմանական եղանակով։

– Ստիպված էի մի կերպ զարթեցնել քեզ, սիրելիս,– պատասխանեցի ես։– Գահավեժ ընկար աստղերից, հա՞։

– Ո՛չ,– ասաց նա։– Ո՛չ։

– Ուրեմն որտեղի՞ց,– հարցրի ես, նրա մոտ նստելով։

– Կրակի սիրուն ձևերին էի նայում,– ասաց Ստիրֆորթը։

– Բայց ինչո՞ւ ես այդ ձևերը քանդում,– նկատեցի ես, երբ նա մի խանձող սաստիկ շարժեց, և բոցերի հազարավոր կայծեր ճարճատելով վերև թռան։

– Դու ոչինչ չէիր տեսնի,– ասաց նա։– Ատում եմ այս ժամանակը, որը ո՛չ ցերեկ է, ո՛չ գիշեր։ Ինչո՞ւ ուշացար։ Որտե՞ղ էիր։

– Գնացել էի հրաժեշտ առնելու Բլենդրոտընից։

– Իսկ ես նստած մտածում էի,– ասաց Ստիրֆորթը, շուրջը նայելով,– թե այս դատարկ տան բնակիչները, որոնք մեր գալու րոպեին այնքան երջանիկ էին, այժմ որտե՞ղ են ցրվել կամ կորել, և կամ ի՞նչ փորձանքի են հանդիպել։ Դավիթ, որքան ցավում եմ, որ այս վերջին քսան տարին ես մի խելացի հայր չեմ ունեցել։

– Ի՞նչ է պատահել քեզ, սիրելի Ստիրֆորթ։

– Ոհ, ինչպես սրտանց ափսոսում եմ, ինչպես սիրտս կտրտվում է, որ ինձ վատ են դաստիարակել,– գոչեց նա։– Ախ, երանի թե կարենայի ավելի լավ կառավարել ինքս ինձ։

Նրա վշտագին վիճաբանությունը միանգամայն շփոթեց ինձ։ Չէի սպասում այդպես տեսնել Ստիրֆորթին։ Նա վեր կացավ ու վառարանին հենվելով, դառնությամբ նայեց կրակին։

– Ավելի լավ կհամարեի,– շարունակեց նա,– մի համարձակ ձկնորս, խեղճ Պեգգոտիին հավասար մի բան և կամ նրա անտաշ Հեմի նման մի տղա լինել, քան ինչ որ եմ այս րոպեիս՝ իմ ավելի մեծ ուսումով ու պերճանքով, քան տանջվել, ինչպես որ ահա կես ժամից ի վեր տանջվում եմ այս դժոխային նավի մեջ։

Ես սարսափած մնացի, երբ որ նրա դեմքի փոփոխությունը նկատեցի, մինչ նա անքթիթ նայում էր կրակին։ Հետո անձկությամբ աղաչեցի նրան հայտնել ինձ, թե ինչ է պատահել, որ նա այդպես այլայլված է։ Մտադիր էի գեթ կարեկցությամբ, եթե ոչ խորհրդով, սփոփել ընկերոջս։ Բայց դեռ խոսքս չէի ավարտել, երբ Ստիրֆորթը նախ զայրացած, հետո՝ սրտանց ծիծաղեց։

– Բան չկա, Դեյզի, բան չկա,– ասաց նա։– Կարծեմ մի անգամ Լոնդոնում քեզ ասել եմ, թե երբեմն ես ինքս ինձ համար մի բեռ եմ դառնում... Վրաս մի տեսակ ահ էր եկել։ Ջանձրույթի րոպեներին երբեմն դայակիս հեքիաթներն են մտքիս գալիս, որոնք հանկարծ ճիվաղի պես պաշարում են ինձ։ Դայակս ասում էր, թե չար տղային առյուծը կուտե։ Լավ է առյուծը, քան թե շունը։ Ահա այս ահռելի հիշատակներից քստմնելով, ես ակամա զարհուրում եմ։

– Ուրեմն վախիդ պատճառը դատարկ բան էր,– ասացի ես։

– Շատ կարելի է, բայց գուցե և դատարկ բան չէր,– պատասխանեց Ստիրֆորթը։– Համենայն դեպս, անցավ գնաց, մյուս անգամ, Դեյզի, դու ինձ այսպես չես տեսնի։ Սակայն կրկնում եմ,

սիրելիս, որ ինձ համար, գուցե և ուրիշների համար, լավ կլիներ, եթե մի հաստատակամ ու խելացի հայր ունենայի։

Նրա ազդու դեմքը ոչ մի ժամանակ մի այնպիսի մռայլ վիշտ չէր արտահայտել, ինչպես որ այն վայրկյանին, երբ նա ասաց.

– Է՛լ չխոսենք այն բանի մասին,– և կարծես մի շյուղ, մի հարդ և կամ մի փետուր շպրտելով օդի մեջ՝ ավելացրեց. – «Why so,– being gone, I am a man again», ինչպես ասում է Մակբեթը[31]։ Գնանք այժմ ճաշ ուտենք, որպեսզի ես էլ, Դեյզի, Մակբեթի նման մի զարմանալի անկարգությամբ հացկերույթը չխանգարեմ։

– Սակայն որտե՞ղ են այս տան մարդիկ,– ասացի ես։

– Աստված գիտե,– պատասխանեց Ստիրֆորթը։– Լաստի մոտ քեզ սպասելուց հետո՝ այստեղ եկա, բայց տունը դատարկ էր։ Այս բանի մասին էի մտածում, երբ դու եկար։

Այդ միջոցին մրս. Գըմիջը, զամբյուղը ձեռքին, ներս մտավ և պարզվեց, թե ինչու տանը մարդ չկա։ Նա գնացել էր ուտելու բան գնելու, մինչև մր. Պեգգոտին ծովից վերադառնա, և դուռը բաց է թողել, որպեսզի Էմլին ու Հեմը երեկոյան ետ գալիս դուրսը չմնան։ Ստիրֆորթը կատակներով ու ծաղրական համբյուրներով մրս. Գըմիջի տրտմությունը մեղմացրեց, հետո ձեռքը տվեց ինձ. և միասին դուրս ելանք։

Մրս. Գըմիջի թախծությունը փարատելիս՝ Ստիրֆորթը ինքն էլ իր սովորական զվարթությունը ստացավ և ամբողջ ճանապարհին ծիծաղում էր ու հանաքներ անում։

– Ուրեմն հեռանում ենք այս ծովահենների որջից,– ասաց նա ուրախ ձայնով։

– Ինչպես որոշել էինք, այնպես էլ կանենք,– պատասխանեցի ես։– Չէ՞ որ դիլիժանսի տոմսակներն արդեն առնված են մեզ համար։

– Եթե այդպես է, պետք է մեկնել,– ասաց Ստիրֆորթը։– Այստեղ մնալով՝ ես բոլորովին մոռացել էի, որ բացի նավակով ծովի վրա ճոճվելուց, ուրիշ անելու բաներ էլ կան աշխարհում։ Բայց երանի թե չլինեին։

– Կարծեմ ամեն բան հրապուրում է քեզ, քանի դեռ նոր է,– նկատեցի ես ծիծաղելով։

– Շատ կարելի է, թեև մի այդպիսի հեգնական նկատողություն չէի սպասում իմ անմեղ բարեկամից։ Այո՛, Դեյզի, ես մի քմահաճ տղա եմ։ Ինքս էլ գիտեմ, որ այդպես եմ, բայց այս էլ կասեմ, որ քաջ գիտեմ երկաթը կոփել, քանի որ տաք է։ Հավաստի եմ, որ այստեղ մնալս զուր չեղավ։ Թող քննեն ինձ, և կտեսնես, որ կարող եմ հմուտ նավավարի պաշտոն կատարել Յարմաութի ջրերում։

– Արդեն մր. Պեգգոտին վկայում է, որ դու հրաշք ես։

– Ծովային հրաշք, չէ՞,– ծիծաղեց Ստիրֆորթը։

– Նա իրոք ասաց, որ դու հրաշք ես, և այդ սուտ չէ, քանի որ այնպես եռանդով ես նվիրվում սիրած բանիդ և հեշտությամբ գլուխ բերում։ Սակայն, Ստիրֆորթ, ես միշտ զարմացել եմ, որ դու ընդունակ ես հաճույք զգալ փայլուն կրքերդ այդպես անզուսպ վատնելուց։

– Հաճո՞ւյք,– պատասխանեց նա խնդալով։– Ես ոչ մի բանից հաճույք չեմ զգում և գոհ չեմ, բացի քո պարզամտությունից, սիրելի Դեյզիս։ Գալով կրքերիս գործադրության, ես երբեք չեմ

[31] «Այդ անցավ, և ես նորից տղամարդ եմ։— Խնջույքի ժամանակ Բանկոյի ուրվականի հանկարծական երևումով զարհուրած՝ Մակբեթը այդ խոսքերն ասում է ստվերի անհետանալուց հետո։ Բանկոյին սպանել տվողը Մակբեթն էր։ (Մակբեթ, III արարված, չորրորդ տեսիլ)։

սովորել այն անվին կապել ինձ, որի վրա անդադար պտույտ են գալիս մեր ժամանակի Իքսիոնները[32]։ Սակայն գիտե՞ս, որ ես այստեղ մի նավ եմ գնել։

– Ինչ տարօրինակ տղա ես դու, Ստիրֆորթ,– գոչեցի ես՝ կանգ առնելով, որովհետև նոր էի լսում այդ բանը։– Նավ գնել, մինչդեռ գուցե մյուս անգամ ոտք էլ չդնես այս անկյունը։

– Ո՞վ գիտի, գուցե և դնեմ։ Այս անկյունն ինձ դուր է գալիս։ Համենայն դեպս,– ասաց Ստիրֆորթը, շարունակելով իր խոսքը,– ես գնեցի մի սրընթաց նավ, մի **կլիպպըր**, ինչպես որ ասում է մր. Պեգգոտին։ Իմ բացակայության ժամանակ նա կվարի այդ նավը։

– Այժմ միտքդ հասկանում եմ, Ստիրֆորթ,– գոչեցի ես ցնծությամբ։– Իրր թե քեզ համար էս նավդ գնել, բայց իրոք մտադիր էր մի վայելուչ ընծա անել մր. Պեգգոտիին։ Ճանաչելով քեզ, այդ ես սկզբից պիտի գուշակեի։ Հարկ կա՞ արդյոք, սիրելի Ստիրֆորթ, քեզ ասելու, թե որքան եմ գնահատում այդ գեղեցիկ վեհանձնությունդ։

– Սուս,– ասաց նա կարմրելով։– Քանի այդ մասին քիչ խոսես, այնքան լավ։

– Մի՞թե չէի ասում,– գոչեցի ես,– չէ՞ի ասում, որ քո սիրտը միշտ այդ ազնիվ էակների ուրախությանն ուրախակից է և վշտերին՝ վշտակից։

– Այո՛, այո՛, այդ բոլորն ասել ես, և բավական է։ Էլ չխոսենք այդ մասին։

Ես լռեցի։ Չէի ուզում վշտացնել նրան մի նյութի մասին խոսելով, որին նա ամենևին կարևորություն չէր տալիս, և մենք շարունակեցինք մեր խոսակցությունը։

– Պետք կլինի նորից սարքել այն նավը,– ասաց Ստիրֆորթը,– Լիտտիմերին կհանձնարարեմ, որ այս գործը նա լիովին գլուխ բերի։ Ի դեպ, չե՞մ ասել քեզ, որ Լիտտիմերն այստեղ է։

– Ո՛չ։

– Այո, եկել է, և նամակ բերել իմ մորից։

Մեր աչքերն իրար հանդիպեցին։ Ստիրֆորթի ամբողջ դեմքը և նույնիսկ շուրթերը գունատվել էին, բայց նա անվրդով նայում էր ինձ։ Ես կարծեցի, թե մի անախորժ բան պատահած կլինի նրա և մոր միջև, և թե այդ էր պատճառը, որ նա այնքան տխուր էր ձկնորսի սենյակում, և մի թեթև ակնարկ արի այդ մասին։

– Օհ, ո՛չ,– ասաց նա, գլուխը շարժելով ու փոքր-ինչ ժպտալով։– Բնավ այդպիսի բան չկա։ Այս մարդը եկել է, իբրև իմ սպասավորը։

– Եվ դարձյալ նույնն է, ինչ-որ առաջ էր։

– Միշտ նույնն է, և միշտ հյուսիսային բևեռի պես հաստատ ու սառը։ Նա գնած նավիս նորոգությամբ պիտի զբաղվի։ Նավի անունը «Մրրիկ ճայ» է, բայց ի՞նչ գործ ունի ճայերի հետ մր. Պեգգոտին։ Ես մի ուրիշ անուն կտամ այդ նավին։

– Եվ ի՞նչ անուն։

– **Փոքրիկ Էմլի։**

Ստիրֆորթը դարձյալ անքթիթ երեսիս նայեց, կարծես թե հիշեցնելով, որ այդ գեղեցիկ դիտավորության համար իրեն չգովեմ։ Ես կարճ կտրեցի, բայց դեմքիս ժպիտը ցույց տվեց, թե ի՞նչ եմ զգում։ Նա էլ ժպտաց ու զվարթացավ։

– Սակայն տես,– ասաց նա, առաջ նայելով,– ահա ինքը՝ փոքրիկ Էմլին գալիս է, հետն էլ այն տղան։ Այ դրան կասեմ բուն ասպետ։ Ոչ մի րոպե իր օրիորդից չի բաժանվում։

---

[32] Իքսիոնը մի առասպելական թեսալացի թագավոր է, որ աստվածների սեղանակից լինելու պատիվ ստանալով, սիրահարվել էր Հերայի վրա։ Այդ պատճառով Արամազդը գահավեժ ձգել էր նրան Տարտարոս, և օձերով կապել մի անվի, որը անդադար պտույտ էր գալիս բքաշունչ հողմից։

Այժմ Հեմը նավ շինող էր և, այս արհեստը սիրելով, մի ճարտար բանվորի համբավ էր ստացել: Նա բավական կոպիտ էր երևում իր առօրյա հագուստով, բայց այրական դեմքը ցույց էր տալիս, որ գիտի իր նորատի ուղեկցին պաշտպանել: Այդ ազնիվ ու համարձակ դեմքի վրա պարզ գծված էր, որ նա աղջկան սիրում է ու նրանով պարծենում: Նրանց միասին տեսնելով ես մտածեցի, թե Էմլին ու Հեմը իրար համար են ստեղծված:

Երբ մենք կանգ առանք նրանց հետ խոսելու, Էմլին իր թևը նշանածի թևից կամաց արձակեց և կարմրելով՝ Ստիրֆորթին և ինձ մեկնեց իր ձեռքը: Երբ նրանք մեզ հետ մի քանի խոսք փոխանակելուց հետո, առաջ գնացին, Էմլին այլևս Հեմի հետ թևանցուկ չարեց, այլ, ասես թե ամաչած ու շփոթված, մենակ հեռացավ: Այս բոլորն ինձ շատ սիրուն ու գրավիչ թվաց, ինչպես կարծեմ և Ստիրֆորթին, մինչ մենք նայում էինք նորածին լուսնի շողքերում անհետացող զույգի հետևից:

Հանկարծ մեր մոտով շտապ անցավ մի ջահել կին, որի մոտենալը չէինք նկատել: Անշուշտ նա հետևում էր այդ երկուսին. նրա նիհար երեսը՝ փոքր-ինչ ծանոթ թվաց ինձ: Կինը թեթև էր հագնված, համարձակ, վայրենի հայացք ուներ, թշվառ ու հպարտ տեսք: Նա կարծես ինքն իրեն մոռանալով՝ շտապում էր հեռացողների հետևից հասնել: Մի քանի վայրկյանից թե՛ մեր երկու բարեկամները և թե՛ այդ կինը անհետացավ տափարակի ու ծովի վրա տարածվող մթության մեջ:

– Այդ խավարաղեմ ուրվականը կարծես թե հետապնդում է Էմլիին,– ասաց Ստիրֆորթը, որ դեռ անշարժ կանգնած էր:– Այդ ի՞նչ է նշանակում:

Ստիրֆորթի դողդոջ ձայնի շեշտերը տարօրինակ էին:

– Երևի ուզում էր մի բան մուրալ նրանցից,– ասացի ես:

– Մուրացիկներ շատ կան այստեղ,– ասաց Ստիրֆորթը,– բայց գիշերով մուրացող կինը զարմացնում է ինձ:

– Ինչո՞ւ,– հարցրի ես:

– Որովհետև... – փոքր-ինչ լռելուց հետո՝ պատասխանեց Ստիրֆորթը,– ճիշտ մի այդպիսի բանի մասին էի մտածում, երբ որ նա երևաց: Որտեղի՞ց բերեց նրան սատանան:

– Կարծեմ այս շենքի ստվերից դուրս ելավ,– ասացի ես, երբ մոտեցանք այն պատին, որի մոտով անցնում էինք:

– Գնաց-կորավ վերջապես,– գոչեց Ստիրֆորթը ետ նայելով:– Թող չարն էլ հետը խափանվի: Այժմ շտապենք ճաշելու:

Սակայն նա դարձյալ մի քանի անգամ շուռ եկավ, նայելով ծովի սպիտակ շերտին, որը նշմարվում էր հեռվում: Ամբողջ ճանապարհին նա կցկտուր խոսքերով զարմանք էր հայտնում անսպասելի հանդիպումի առթիվ, և դժգոհ էր. միայն այն ժամանակ հանգստացավ, երբ արդեն նստած էինք սեղանի առջև՝ վառարանի ու մոմերի լույսով լուսավորված հյուրանոցի տաք սենյակում:

Լիտտիմերը մեզ սպասում էր. նա դարձյալ իր սովորական տպավորությունը թողեց վրաս: Երբ որ հարցրի, թե արդյոք մրս. Ստիրֆորթն ու միս Դարտլը առո՞ղջ են, նա ակնածու (հարկավ և հարգալի) եղանակով շնորհակալություն հայտնեց ու ասաց, թե առողջ են և երկուսն էլ ինձ ողջունում են: Այս էր բոլորը, ինչ որ լսեցի, բայց և այնպես ակնհայտ երևում էր, որ սպասավորն ուզում է ասել. «Դուք դեռ շատ ջահել եք, սըր, շատ ջահել»:

Ճաշը գրեթե վերջացել էր, երբ Լիտտիմերը, որ անկյունում կանգնած էր, մեզ երկուսիս և կամ միայն ինձ դիտելով, մի քանի քայլ առաջ եկավ ու ասաց իր տիրոջը.

– Ներեցեք, սըր: Միս Մաուչրն այստեղ է:

– Ո՞վ,– զարմանալով հարցրեց Ստիրֆորթը:

– Միս Մաուչրը, սըր։

– Ի՞նչ,– գոչեց Ստիրֆորթը։– Նրա ոտքը կոտրվի։ Ի՞նչ բան ունի նա այստեղ։

– Նա կարծեմ այս գավառից է, սըր։ Ասում է, թե ամեն տարի Յարմաութ է գալիս՝ իր արհեստը գործ դնելու։ Հանդիպեցի նրան փողոցում, և նա խնդրեց իմանալ, թե արդյոք կհաճի՞ք, սըր, ընդունել նրան այս երեկո։

– Ճանաչո՞ւմ ես, Դեյզի, այդ հսկային,– հարցրեց Ստիրֆորթը։

Ստիպված էի պատասխանել, ամաչելով Լիտտիմերից, որ միս Մաուչրն ու ես բոլորովին անծանոթ ենք։

– Փույթ չէ, իսկույն կծանոթանաս,– ասաց Ստիրֆորթը։– Այդ կինը աշխարհիս յոթ հրաշալիքներից մեկն է։ Ընդունել միս Մաուչրին՝ հենց որ գա։

Հետաքրքրությունս շատ շարժված էր, բայց Ստիրֆորթը՝ հարցումներիս պատասխան տալու փոխարեն, միայն ծիծաղում էր։ Այսպես անցավ մի կես ժամ. սեղանի սփռոցը հավաքեցին։ Մենք կրակի առջև նստած էինք, գինու շիշը դիմացներս դրած, երբ դուռը բացվեց և Լիտտիմերն իր անվրդով հանգստությամբ հայտնեց.

– Միս Մաուչրը։

Նայեցի դռան կողմը. բան չտեսա։ Եվ մինչ շարունակ նայում էի, մտածելով, թե ինչո՞ւ է ուշանում միս Մաուչրը, հանկարծ բազմոցի հետևից, որ դրված էր իմ ու դռան միջև, ի մեծ զարմանս իմ՝ մոտ քառասուն կամ քառասունհինգ տարեկան մի գաճաճ դուրս եկավ՝ ահագին գլխով ու դեմքով, խորամանկ գորշ աչքերով և այնպես կարճ ձեռքերով, որ երբ նա՝ Ստիրֆորթին նշմարելուն պես չար-չար ժպտաց և ուզեց իր ցուցամատը քթին դնել, ստիպված էր գլուխը կախել և քիթը ցուցամատին դնել։ Նրա ծալ-ծալ կզակը այնքան գեր էր, որ գլխարկի ժապավեններն ու կապերը ծալքերի մեջ բոլորովին կորչում էին։ Միս Մաուչրը, վիզ չուներ, մեջք չուներ, սրունք չուներ, ոտքեր էլ չուներ... Կամ ճիշտն ասած՝ այդ բոլոր անդամներն այնքան փոքր էին, որ հիշելու անգամ արժանի չէին։ Հասարակ աթոռը նրա համար սեղանի չափ բարձր էր, և նա պիտի թաթիկները բարձրացներ, որ կարողանար աթոռի վրա դնել իր պայուսակը։ Այդ բավական անփույթ հագնված տիկինը, վերոհիշյալ դժվարությամբ մի քանի անգամ մատն ու քիթը իրար կպցնելուց հետո, գլուխը թեթև մի կողմ թեքեց, մի աչքը չար-չար փակեց, մյուսով Ստիրֆորթին երկար դիտեց և հետո խոսել սկսեց, բառերը հեղեղի պես դուրս տալով։

– Ահ, իմ սիրուն վարդիկս,– սկսեց նա, ահագին գլուխը շարժելով։– Դու այստե՞ղ ես, իրա՞վ այստեղ։ Ամոթ չէ՞ քեզ, չար մանուկ, որ տանից այսպես հեռացել ես։ Ի՞նչ գործ ունես այս կողմերում։ Գրավ կբռնեմ, որ միտքդ ծուռ է։ Օ՛, դու չարաճճի տղա ես, Ստիրֆորթ, բայց ես էլ հիմարներից չեմ, չէ՞։ Հա՛, հա՛, հա՛։ Դու անշուշտ պատրաստ կլինեիր հինգ ոսկու դեմ հարյուր ոսկու գրավ բռնել, որ ինձ այստեղ չես տեսնի, չէ՞։ Բայց տեսա՞ր, ես մեկ այստեղ եմ, մեկ՝ այնտեղ, աճպարարի ոսկու նման, որ հանկարծ ազնիվ կնոջ թաշկինակից է դուրս գալիս։ Թաշկինակ և տիկիններ... Ի դեպ, հոգիս, ո՞վ գիտե, որքան տիկին Ստիրֆորթը՝ քո մայրիկը, երջանիկ է, որ քեզ նման որդի ունի։

Միս Մաուչրն այս վերջին խոսքերն ասելիս իր գլխարկի կապերը բաց արեց ու հևալով նստեց ցածլիկ աթոռակի վրա, կրակի առջև, ճաշի սեղանի ոտքերի մոտ, ինչպես մի հովանոցի տակ։

– Ո՛ֆ,– շարունակեց նա, թաթիկները ծնկներին դեմ տալով և իմ վրա սուր-սուր նայելով,– ինչ վնաս բան է, որ այսպես գեր եմ, Ստիրֆորթ։ Սանդուղք բարձրանալիս շունչս այնպես է կտրվում, որ ասես թե հորից մի քսան դույլ ջուր քաշած լինեմ։ Ո՞վ գիտի՝ ինչ սիրուն տիկին կերևայի քեզ, Ստիրֆորթ, եթե մայթի վրա տեսնեիր ինձ վերջին հարկի պատուհանից։

– Միշտ և ամեն տեղ դու ինձ սիրուն ես երևացել,– ասաց Ստիրֆորթը։

– Սո՛ւս, սո՛ւս, անամոթ,– գոչեց գաճաճն ու սպառնաց Ստիրֆորթին թաշկինակով, որով սրբել էր իր երեսը։– Բավական է, զգաստացիր. . . Բայց, գիտե՞ս ում մոտ էի ես անցյալ շաբաթ։ Պատիվս վկա, լեդի Միթերսի մոտ։ Ա՛հ, ի՛նչ տիկին է այդ լեդի Միթերսը։ Ինչպես լավ է պահպանվել։ Լորդ Միթերսը ինքն անձամբ ողջունեց ինձ այն սենյակում, ուր սպասում էի իր ամուսնուն։ Ա՛յ քեզ մարդ։ Միշտ առույգ ու զվարթ։ Կեղծամն էլ տասը տարի է, որ հագնում է ու չի մաշում։ Կողքիս նստեց և սկսեց այնպես սիլի-բիլի անել, որ քիչ էր մնում ծառաներին կանչեի։ Շատ անպիտանն է այդ լորդը, հա՛, հա՛, հա՛։ Ափսոս միայն, որ սկզբունք չունի։

– Ի՞նչ էիր անում լեդի Միթերսի մոտ,– հարցրեց Ստիրֆորթը։

– Ի՛նչ հետաքրքիր տղա ես, հոգիս,– ասաց միս Մաուչրը, մատը քթին դնելով ու դևուկի նման խորամանկ աչքերը քթթելով։– Ես ուրիշի տան գաղտնիքն ու զիբիլը դուրս տանողը չեմ։ Կուզենայիր, իհարկե, իմանալ, թե լեդի Միթերսի մազերին ի՞նչ էի քսում, որ չթափվեն, կամ թե ինչո՞վ եմ ներկում նրա հոնքերն ու թշերը, չէ՞։ Այո, սիրելիս, կիմանաս, երբ որ ասեմ։ Բայց գիտես պապիս անունն ի՞նչ էր։

– Ոչ,– ասաց Ստիրֆորթը։

– Ուտկր[33] էր, գառնուկ իմ։ Նա ծագում էր Ուտկրների երկար սերնդից, և ես նրանից ժառանգեցի Հուկեյի[34] ամբողջ կալվածքը։

Ես չգիտեի, թե ինչի՞ց ավելի շատ զարմանամ – միս Մաուչրի նայվածքներից, թե՞ նրա տարօրինակ վստահությունից։ Այդ կինն ամեն ինչով զարմացնում էր ինձ և՛ նրանով, թե ինչպես է ականջ դնում իրեն ասված խոսքերին, և՛ նրանով, թե ինչպես էր իրեն տրվելիք պատասխանին սպասում, և՛ նրանով, թե ինչպես էր լուռ մնալիս կաչաղակի նման գլուխը թեքում ու մի աչքով դեպի վեր նայում։ Կարճ ասած՝ ես շվարած էի և հակառակ քաղաքավարության ամեն մի կանոնի՝ ակնապիշ նայում էի նրա դեմքին։

Նա աթոռը մոտ քաշեց և սկսեց զանազան իրեր հանել պայուսակից, ամեն անգամ իր կարճ բազուկը մինչև ուսը մեջը մխելով, հանեց անթիվ մանր սրվակներ, սպունգեր, սանրներ, խոզանակներ, վրձիններ, բրդի կտորներ, մազեր խոպոպելու գանգրոցներ և ուրիշ գործիքներ, և շարեց աթոռի վրա։ Այս գործն ավարտելուց հետո հանկարծ Ստիրֆորթին դիմեց և ինձ սաստիկ շփոթելով, հարցրեց.

– Ինչպե՞ս է բարեկամիդ անունը։

– Մր. Կոպպերֆիլդ,– ասաց Ստիրֆորթը։– Նա ուզում է ծանոթանալ քեզ հետ։

– Շատ լավ, թող ծանոթանա, վաղուց եմ տեսնում, որ ուզում է,– ասաց միս Մաուչրը, պայուսակը ձեռքին դեպի ինձ գալով։– Թշերը մի-մի դեղձի՛կ են։ (Գաճաճը իր ոտքերի ծայրի վրա կանգնեց, որ կարողանա այտիս հասնել)։ Մարդ ակամա կհրապուրվի։ Ես դեղձիկ շատ եմ սիրում։ Ուրախ եմ ծանոթանալ ձեզ հետ, մր. Կոպպերֆիլդ, հավատացեք։

Պատասխանեցի, թե ես էլ ուրախ եմ իր ծանոթությանը արժանանալու համար։

– Օ՛հ, աստված իմ, որքան քաղաքավարի ենք,– գոչեց միս Մաուչրը, զուր փորձելով իր լայն երեսը ձեռքերով ծածկել։– Առաջին անգամն է, որ միմյանց տեսնում ենք և արդեն սիրաբանում ենք իրար հետ։ Ասել է թե այս սուտ աշխարհը լավ ենք ճանաչում։

Վերջին բառերը մտերմաբար ուղղված էին մեզ երկուսիս, մինչդեռ նրա թաթիկը դեմքից իջնելով, դարձյալ մինչև ուսը պայուսակի մեջ անհետացավ։

---

[33] Walker — շրջիկ։

[34] Hook — հուկ, ճանկ, կեռ, նմանապես՝ խաբեբա և խարդախ մարդ։ Հուկեյի ամբողջ կալվածքը ժառանգեցի ասելով, գաճաճը ուզում էր հասկացնել, թե պապի բոլոր չարահնար նենգությունը ժառանգել է։ Առհասարակ միս Մաուչրի լեզուն ճիշտ թարգմանելը շատ դժվար է կամ ավելի ճիշտ՝՝ անհնարին։

– Ի՞նչ եք ուզում հասկացնել մեզ, միս Մաուչր,– ասաց Ստիրֆորթը։

– Ոչինչ, սիրելիս։ Ասելս այն է, որ բոլորս էլ լավ օյինբազներ ենք, ամեն մեկս իր հանգի, հա՛, հա՛, հա՛,– ծիծաղեց փոքրիկ կինը, շարունակելով պայուսակում բան որոնել, գլուխը թեքած և մի աչքը վեր բարձրացրած։– Հապա տեսեք, սրանք ինչ են։

– Ի՞նչ են դրանք,– ասաց Ստիրֆորթը։

– Մի ռուս բոյարի եղունգների կտորները։ Նրա անունը «գլխիվայր այբուբեն» է, որովհետև միջի բոլոր տառերը տակն ու վրա են խառնված։

– Այդ բոյարը ձեր հաճախորդներից մե՞կն է,– հարցրեց Ստիրֆորթը։

– Հարկավ, սիրելիս,– պատասխանեց միս Մաուչրը։– Շաբաթը երկու անգամ նրա եղունգները կտրում եմ՝ հա՛մ ձեռքի, հա՛մ ոտքի։

– Եվ լա՞վ է վճարում,– ասաց Ստիֆորթը։

– Քթով է խոսում, բայց ձեռքն առատ է,– ասաց միս Մաուչրը։– Ձեզ նման երեխա չէ. դրա ապացույցը իր ահագին բեղերն են, որոնք կարմիր են ի բնե և սևագույն՝ իմ շնորհիվ։

– Այսինքն՝ քո արվեստի՞ շնորհիվ,– հարցրեց Ստիրֆորթը։

Միս Մաուչրը նրա ասածն աչքով հաստատեց ու ասաց.

– Բոյարը ստիպված էր իմ հետևից մարդ ուղարկել և չէր կարող այդպես չանել։ Մեր կլիման վատ էր ազդել նրա բեղերի վրա, և այստեղ նրանք երկաթի պես ժանգոտել են։

– Գուցե նրա՞ն էր, որ օյինբազ անվանեցիր այս լոպեիս,– հարցրեց Ստիրֆորթը։

– Ի՛նչ խելոք տղա ես դու,– գոչեց միս Մաուչրը, գլուխն արագ շարժելով։– Ես ասացի, թե մենք բոլորս էլ առհասարակ խաբեբա ենք, և ասածս հաստատելու համար՝ ռուս իշխանի եղունգները ցույց տվի ձեզ։ Ճշմարիտն ասեմ, այս եղունգներն իմ բոլոր ձիրքերից ավելի ազդու են. նրանց շնորհիվ է, որ ես ամեն տեղ մուտք ունեմ։ Եթե միս Մաուչրը մի իշխանի եղունգներ է կտրում, ասել է թե վարպետ է։ Ես մի-մի կտոր մեր նորատի լեդիներին եմ տալիս, և նրանք, կարծեմ, կտորները ալբոմների մեջ են դնում... Հա՛, հա՛, հա՛։ Եվ միթե չգիտե՞ք, որ մեր ամբողջ հասարակության շինվածքը, ինչպես ասում են պառլամենտում, իշխանների եղունգի վրա է հաստատված,– վերջացրեց գաճաճը թաթիկները կրծքին դնելով և ահագին գլուխը տատանելով։

Ստիրֆորթը ծիծաղեց. ես էլ նույնպես։ Միս Մաուչրը շարունակում էր մի կողմ թեքած գլուխը շարժել, մի աչքը վեր բարձրացնելով, իսկ մյուսը՝ քթթելով։ Վերջապես իր ծնկներին խփեց ու ոտքի ելավ։

– Է՛հ, բավական է,– ասաց նա։– Այժմ է՛կ, Ստիրֆորթ, քո գլխի բևեռային կողմերը հետազոտեմ և ինչ-որ պետք է, անենք-պրծնենք։

Այս ասելով նա իր իրերից երկու-երեք գործիք ջոկեց, մի հատ էլ սրվակ և հարցրեց՝ արդյոք սեղանն ամո՞ւր է։ Այն ժամանակ գաճաճը սեղանի մոտ մի աթոռ դրեց և իմ ձեռքից բռնելով, իսկույն աթոռի վրա ցատկեց, աթոռից էլ՝ սեղանի վրա։

– Եթե ձեզնից մեկը սրունքս տեսավ,– ասաց նա, այդ բարձրունքի վրա կանգնելուցս հետո,– թող իսկույն ասի. ես տուն կգնամ և կկախվեմ։

– Ես չտեսա,– ասաց Ստիրֆորթը։

– Ես էլ չտեսա,– ասացի ես։

– Եթե այդպես է,– գոչեց միս Մաուչրը,– պատրաստ եմ ապրել։ Դե՛, ճուտիկ իմ, ծի՛պ, ծի՛պ, ծի՛պ։ Ե՛կ քեզ մորթեմ։

Այս հրավերը Ստիրֆորթին էր ուղղված, որը ծիծաղելով սեղանի մոտ նստեց, մեջքը գաճաճին, իսկ երեսը դեպի ինձ դարձած։ Հավատացած էի, որ նա հանաքի համար է իր գլուխը միս Մաուչրի հետազոտությանը ենթարկում։ Շատ զվարճալի տեսարան էր, երբ այդ թզուկը Ստիրֆորթի գլխին կանգնած, գրպանից մի մեծ խոշորացույց հանեց և սկսեց նրա թուխ մազերը զննել։

– Շատ սիրուն ես, ա՛յ տղա,– ասաց միս Մաուչրը, Ստիրֆորթի թավ մազերը մի քանի վայրկյան դիտելուց հետո։– Բայց իմացած եղիր, որ եթե ես չլինեի, դու մի տարում չինական մանդարինի պես մի ճաղատ բան կդառնայիր։ Մի կես րոպե էլ սպասիր, հոգիս, և մազերիդ այնպիսի փայլ տամ, որ տասը տարի պսպղան։

Նա սրվակից ֆլանելի վրա մի ինչ-որ հեղուկ ցանեց, մի փոքրիկ խոզանակ նրա մեջ թրջեց և սկսեց դրանով Ստիրֆորթի գագաթը արագ-արագ շփել, մի վայրկյան դադարելով խոսելուց։

– Հա՛, ինչ էի ուզում հարցնել։ Ճանաչո՞ւմ ես Չարլի Պայգրևին, դքսի որդուն,– ասաց միս Մաուչրը, Ստիրֆորթի գլխի հետևից նրա երեսին նայելով։

– Փոքր-ինչ,– պատասխանեց ընկերս։

– Ի՛նչ փառավոր մարդ է։ Ի՛նչ սքանչելի բեղեր ունի այդ Չարլին։ Ափսո՛ս միայն, որ ոտքերն իրար հավասար չեն։ Եվ այդ դքսիկը կամենում էր առանց իմ օգնության առաջ գնալ թիկնապահների գնդում, կհավատա՞ս։

– Հիմա՛րը,– ասաց Ստիրֆորթը։

– Իրավ որ հիմարի նման է,– շարունակեց միս Մաուչրը։– Սակայն հիմար թե խելոք, բայց ուզում էր առանց իմ միջնորդության գործ տեսնել։ Եվ տե՛ս, թե ինչ է անում։ Էսի՛ր։ Գնում է մի պարֆյումեռի մոտ և մի շիշ Մադագասկարի ջուր պահանջում։

– Չարլին,– գոչեց Ստիրֆորթը։

– Այո՛, Չարլին։ Բայց խանութում Մադագասկարի ջուր չկար։

– Այդ ի՞նչ ջուր է։ Խմելու բա՞ն է,– հարցրեց Ստիրֆորթը։

– Խմելո՞ւ,– կրկնեց միս Մաուչերն ու կանգ առավ, ասես թե նրան մի թեթև ապտակ տվեցին։– Ի՞նչ խմել։ Այդ ջրով իր բեղերն էր ուզում թրջել։ Դու այդ բանը հո լավ գիտես։ Խանությում Կերբերի նման մի տարեց կին կար, որ երբեք չէր լսել, թե Մադագասկարի ջուր ասածդ ի՞նչ բան է։ «Ներեցեք, սըր,– ասում է կինը Չարլիին,– ձեզ, երևի, ոչ թե այդ ջուրն է հարկավոր, այլ. . . սնգույր»։ «Սնգո՞ւյր,– գոչում է Չարլին Կերբերին։– Ինչո՞ւ եք կարծում, թե ինձ սնգույր է հարկավոր»։ «Մի՛ նեղանաք, սըր,– ասում է Կերբերը» – Այդ նյութից մեզ մոտ այնքա՛ն են հարցնում, որ կարծեցի, թե ձեր խնդրածն էլ սնգույր կլինի։ Ահա՛, սիրելիս,– շարունակեց միս Մաուչրը, առաջվա պես Ստիրֆորթի գլուխն արագ շփելով,– ահա դարձյալ այն գեղեցիկ շառլատանության մի նմուշ, որի մասին խոսել էի։ Ես ինքս էլ եմ այդ բանին մասնակցում՝ երբեմն շատ, երբեմն՝ քիչ։ Սակայն խոսքը մեր մեջ մնա, իմացա՞ր։

– Ինչե՛ր ես ասում։ Մի՞թե դու էլ սնգույր ես ծախում,– հարցրեց Ստիրֆորթը։

– Փոքր ի շատե, ամեն բան, իմ սիրելի աշակերտ,– պատասխանեց միս Մաուչրը, մատիկը քթին դնելով։– Ամեն նյութ իրար հետ խառնիր, բայց այնպես որ մարդ չիմանա, և գործդ կհաջողվի. այս ընդհանուր կանոն է։ Այս արվեստին ես էլ փոքր-ինչ մասնակից եմ։ Այրի կոմսուհիներից մեկը մի քիչ շրթունքի օծանելիք է խնդրում ինձնից, մյուսը՝ մի զույգ ձեռնոց, երրորդը՝ մի կտոր շղարշ, չորրորդը՝ մի հովիար, մինչդեռ նրանց ուզածը ո՛չ շրթունքի օծանելիք է, ո՛չ ձեռնոց, ո՛չ շղարշ, ո՛չ էլ հովիար, այլ՝ սնգույր։ Ես էլ նրանց սնգույր եմ տալիս, բայց իրար այնպես ազնվաբար խառնելով, որ նրանք պատրաստ են հրապարակավ կարմիր ներկվել, քան թե ինձ խոստովանել, թե սնգույր են քսում դեմքերին։ Եվ երբ որ ես նրանց մոտ եմ գնում, նրանցից որևէ մեկը մատի հաստությամբ կարմիր շպարած երեսով հարցնում է ինձ

. «Ինչպես եք գտնում ինձ, միս Մաուչր, չէ՞ որ դեմքս այսօր գունատ է»: Հա՛, հա՛, հա՛: Շառլատանություն չէ, հապա ի՞նչ է այս բոլորը: Ի՞նչ կասես, սիրելիս:

Կյանքումս չէի տեսել միս Մաուչրի նման մի էակ, երբ նա սեղանի վրա ուղիղ կանգնած՝ քրքջում էր իր կատակի վրա և փութաջան շարունակում Ստիրֆորթի մազերը շփել, աչքերը դեպի ինձ հառելով:

– Ա՛հ,– ասաց նա:– Այսպիսի ապրանք այս կողմերում ամենևին չեն հարցնում: Զարմանալի բան: Եվ որքան այստեղ եմ, ոչ մի գեղեցիկ կին չեմ տեսել:

– Մի՞թե,– ասաց Ստիրֆորթը:

– Գեղեցիկի ստվերն անգամ չեմ տեսել,– հաստատեց միս Մաուչրը:

– Ոչ միայն ստվերը, այլ կարծեմ մարմինն էլ կարելի է սրան ցույց տալ,– ասաց Ստիրֆորթը, նայելով վրաս:– Չէ՞, Դեվի:

– Անտարկույս,– վկայեցի ես:

– Հա՛,– գոչեց գաճաճը, սուր-սուր նայելով մեր երեսին:– Այդպես, հա՞:

Առաջին բացականչությունը կարծես մեզ երկուսիս էր ուղղված, իսկ երկրորդը՝ միայն Ստիրֆորթին: Մեզնից պատասխան չստանալով, միս Մաուչրը շարունակեց շփել և գլուխը մի կողմ հակեց, իսկ աչքերը դեպի վեր ուղղեց, իբր թե օդում որոնելով իր սպասած բացատրությունը:

– Ձեր քույրը չլինի՞, մր. Կոպպերֆիլդ,– գոչեց գաճաճը, լռությունը խզելով և առաջվա պես առաստաղին նայելով:– Երևի ձեր քույրն է, չէ՞:

– Ո՛չ,– ասաց ինձնից առաջ Ստիրֆորթը:– Բնավ ո՛չ: Ընդհակառակը, մր. Կոպպերֆիլդը, եթե չեմ սխալվում, ինքն էլ մի ժամանակ հափշտակված էր նրանով:

– Մի ժամանակ, իսկ այժմ ո՞չ,– աղաղակեց միս Մաուչրը:– Երևի ընկերդ փոփոխամիտ է: Ֆո՛ւյ, ամոթ իրեն... Գուցե սիրում է մի ծաղկից դեպի մյուսը թռչել: Մի օր մեկին է սիրում, իսկ այսօր ուրիշին: Պոլլի չէ՞ այն սիրունի անունը:

Չարաճճի թզուկի անակնկալ հարցումից ու խորամանկ ակնարկից շփոթված, ես մի վայրկյան լուռ մնացի և ապա ասացի.

– Ո՛չ, միս Մաուչր: Նրա անունն Էմլի է:

– Իրա՞վ,– գոչեց նա առաջվա շեշտով:– Հը՛մ: Այս ինչքա՞ն եմ խոսում: Ես շատ լեզվանի եմ, չէ՞, մր. Կոպպերֆիլդ:

Նրա հայացքի ու ձայնի մեջ մի անախորժ բան կար, որը իմ կարծիքով, շոշափված նյութի համար շատ անվայել էր: Ուստի լուրջ եղանակով պատասխանեցի նրան.

– Այն աղջիկը որքան գեղեցիկ է, այնքան էլ առաքինի: Նա նշանված է մի շատ արժանավոր ու պատվական մարդու հետ: Ինչքան որ ես նրա զգաստությունն եմ հարգում, այնքան էլ գեղեցկության վրա եմ զարմանում:

– Լա՛վ ասաց,– գոչեց Ստիրֆորթը:– Լսեցե՛ք, լսեցե՛ք, լսեցե՛ք: Այժմ, Դեյզի, ես այս ֆաթիմեի հետաքրքրության վրա միանգամից սառը ջուր կածեմ, որպեսզի այլևս հարցնելու բան չունենա: Այն աղջիկը, միս Մաուչր, այժմ Օմրի ու Ջորեմի մոտ է սովորում, որոնք նորույթի, արդուզարդի և ուրիշ բաների կրպակ ունեն այս քաղաքում: Ինչպես որ ընկերս ասած՝ նա իրոք նշանված է իր հորեղբոր որդու հետ. փեսայի անունը Հեմ է, ազգանունը Պեգգոտի. արհեստով նավ շինող է, ծագմամբ՝ Յարմաութցի: Աղջիկն իր ազգականի մոտ է ապրում. նրա մկրտության անունը հայտնի չէ, իսկ մականունը Պեգգոտի է և արհեստը ձկնորսություն: Այդ աղջկա չափ սիրունիկ ու հրապուրիչ արարած աշխարհիս երեսին չկա: Ես էլ, ընկերոջս պես, նրան սաստիկ հավանում եմ: Եթե չվախենայի աղջկա նշանածին անարգել, որ, հարկավ,

ընկերոջս համար շատ անախորժ կթվար, պարզ կասեի, թե Էմլին, Հեմին գնալով, ինքն իրեն ստորացնում է: Նա կարող էր մի ավելի լավ մարդ գտնել և պատիվս վկա՝ մի ազնվական տիկին դառնալ:

Այս ձևով արտահայտված որոշ խոսքերը միս Մաուչրն առաջվա պես գլխահակ և աչքն առաստաղին բևեռած էր ականջ դնում: Հենց որ Ստիրֆորթն ավարտեց, գաճաճը հանկարծ աշխուժացավ ու սկսեց նորից զարմանալի արագությամբ բարբաջել.

– Էհ, ա՞յդ է բոլոր պատմությունը, միայն ա՞յդ,– գոչեց նա, շարժելով իր փայլուն մկրատը, որ Ստիրֆորթի մորուքի ու գլխի շուրջն էր թռչկոտում:– Շատ լավ, շա՛տ լավ: Գրեթե մի ամբողջ ռոման, որ կարող է այսպես վերջանալ՝ «միացան և երջանիկ կյանք վարեցին», չէ՞: Հիշո՞ւմ ես, մի խաղ կա, ուր ասում են, օրինակի համար, ես սիրում եմ սիրեկանիս Է[35] տառի համար, որովհետև նա երկնային է. ատում եմ նրան Է տառի համար, որովհետև երդվել է ուրիշի չգնալ. մի երեկո ես նրան առևանգեցի և Արևելք փախցրի: Հապա իմացեք, ո՞վ է նա: Էմլին է: Հա՛, հա՛, հա՛: Ես սաստիկ լեզվագար եմ, մի իսկական քամու աղաց, չէ՞, մր. Կոպպերֆիլդ:

Նա իր նենգավոր հայացքը իմ կողմը նետեց և չսպասելով պատասխանիս՝ առանց շունչ քաշելու շարունակեց.

–Եթե եղել է աշխարհիս երեսին մի լավ սանրված ու լավ կոկված խորամանկ մարդ, այդ դու ես, Ստիրֆորթ: Եվ եթե կա աշխարհումս մի գլուխ, որ ես լավ եմ ճանաչում, այդ քոնն է: Լսում ես ինձ, սիրելիս: Ես քեզ լավ եմ հասկանում,– ասաց միս Մաուչրը, նայելով Ստիրֆորթի երեսին:– Այժմ, սըր, դուք կարող եք հեռանալ, ինչպես ասում են դատարանում, և եթե մր. Կոպպերֆիլդը բարեհաճի ձեր տեղը բռնել, նրա գլուխն էլ կարգի կբերեմ:

– Ի՞նչ կասես, Դեյզի,– հարցրեց Ստիրֆորթը՝ ծիծաղելով և աթոռից վեր կենալով:– Կցանկանա՞ս, որ քեզ էլ կոկի:

– Ո՛չ, միս Մաուչր, շնորհակալ եմ: Այս երեկո չէի ցանկանա:

– Չէ մի՛ ասեք,– ասաց գաճաճը և բանիմաց մարդու աչքով վրաս նայեց:– Ավելորդ չէր լինի փոքր-ինչ գույն տալ ձեր հոնքերին:

– Շնորհակալ եմ: Մի ուրիշ անգամ:

– Փոքր-ինչ մոտեցնել քունքերին: Լավ չէ՞ր լինի: Ի՞նչ կասեք: Այս բանը կարելի կլիներ երկու շաբաթում վերջացնել:

– Ո՛չ, շատ շնորհակալ եմ: Թող այս անգամ չլինի:

– Եկեք նստեք գեթ մի րոպե,– շարունակեց գաճաճը:– Ձեր մազերը փոքր-ինչ գանգրացնեմ, շրթունքի վրա բեղեր շինեմ: Շո՛ւտ արեք, շո՛ւտ:

Այս առաջարկը մերժելիս ես զգացի, որ կարմրեցի, որովհետև միս Մաուչրը շատ թույլ կողմս շոշափեց: Բայց և այնպես դիմադրեցի նրա շողշողուն սրվակին, որով ուզում էր հրապուրել ինձ, և նա տեսնելով որ մտադիր չեմ իր արվեստի ազդեցությանը ենթարկվել, ասաց թե մի ուրիշ օր ինձ հետ կզբաղվի: Այնուհետև խնդրեց, որ օգնեմ իրեն ներքև իջնել: Օգնեցի: Նա աջս բռնելով արագ ցատկեց սեղանից և իսկույն սկսեց գլխարկի կապերը կզակի տակ հարդարել:

– Իսկ պա՞րտքս,– հարցրեց Ստիրֆորթը:

– Միայն հինգ շիլինգ, մի չնչին բան, հոգյակ իմ,– ասաց միս Մաուչրը:– Չե՞ք կարծում, որ ես մի թեթևսոլիկ էակ եմ, մր. Կոպպերֆիլդ:

Պատասխանեցի, թե «բնավ ո՛չ», թեև նա իրոք մի թեթևսոլիկ արարածի նման էր, երբ Ստիրֆորթի տված ոսկին աճպարարի պես վեր-վեր ձգեց, հետո գրպանը սլացրեց ու ձեռքով

[35] Բնագրի այս նախադասության գրեթե բոլոր բառերը Է տառով են սկսում, որ անկարելի է թարգմանության մեջ ընդօրինակել:

էլ վրայից խփեց։— Այս իմ գանձանակն է,— ասաց միս Մաուչրը, նորից աթոռի մոտ կանգնելով, և պայուսակի մեջ դնելով այն մանր իրերը, որ հանել էր մի ժամ առաջ։— Արդյոք բոլոր ծուղակներս այստե՞ղ են։ Կարծեմ այստեղ են։ Չէի ուզենա երկայնավիզ Նեդ Բրեդվուդին նմանվել, որ պսակվելու համար եկեղեցի գնալիս՝ իր հարսին հետը տանել մոռացել էր։ Հա՛, հա՛, հա՛։ Փուչ կենդանի է այդ Բրեդը, թեև շատ հանաքի։ Դե, այժմ դուք, գիտեք, պիտի արտասվեք ու ողբաք, բայց ի՞նչ անեմ, ես ստիպված եմ թողնել ձեզ։ Արիացեք, համբերատար եղեք ձեր վշտի մեջ։ Բարով մնաք, մր. Կոպպերֆիլդ։ Զգույշ եղիր, Նորֆոլկի Ջոկի[36]։ Ա՛հ, որքան ժամանակ կորցրի, ձեզ հետ շաղակրատելով։ Բայց հանցանքը ձերն է, անպիտաններ։ Վեհանձնաբար ներում եմ ձեզ։ Bob swore[37],— ինչպես ասում է ֆրանսերեն նոր սովորող անգլիացին, որ այդ լեզուն անգլերենին շատ նման էր գտել։ Bob swore, ձագուկներս։

Միս Մաուչրը պայուսակը թևին գցեց և շարունակելով բարբաջել, արագ սահեց դեպի դուռը, բայց դեռ դուռը չբացած՝ կանգ առավ ու ասաց մեզ.

– Չէի՞ք կամենա, պարոններ, հիշատակի համար իմ մազերից մի-մի փնջիկ ընդունել։ Հա՛, հա՛, հա՛։ Ի՛նչ թեթևսոլիկ արարած եմ։

Եվ մատիկը քթին դնելով, անհետացավ։

Ստիրֆորթն այնպես ծիծաղեց, որ ես էլ նրա օրինակին հետևեցի, թեև տրամադիր չէի ծիծաղել։ Բավական երկար քրքջալուց հետո, նա ասաց ինձ, թե միս Մաուչրը բազմաթիվ ծանոթներ ունի և հազար տեսակ ծառայություն է անում զանազան մարդկանց։

– Շատերը նրան խենթուլիկ են համարում և միայն ծաղրի առարկա,— ասաց Ստիրֆորթը,— բայց նա շատ նրբամիտ է ու դիտող. ինչքան որ նրա քիթը կարճ է, այնքան էլ հոտառությունը սուր է։

Ստիրֆորթը հաստատեց միս Մաուչրի ասածը, թե նա մե՛կ այստեղ է, մե՛կ այնտեղ, ամեն տեղ և ոչ մի տեղ, որովհետև գավառից գավառ է թափառում և անկյուն չկա, ուր ամենքի հետ ծանոթ չլինի և հաճախորդներ չունենա։ Հարցրի ընկերոջս, թե միս Մաուչրը ի՞նչ էակ է, արդյոք գլխովին չա՞ր է, թե՞ բարություն էլ ունի սրտի մեջ։ Իմ կրկնած հարցերին Ստիրֆորթն ուշք չդարձրեց և փոխանակ պատասխանելու՝ սկսեց նրա ձիրքերը, նրա դրամական շահերը գովել. այն էլ ասաց, թե գաճաճը գիտի վարպետ կերպով սրվակ (արյան) դնել, և թե ես էլ կարող եմ, եթե պետք լինի, միս Մաուչրի այս վիրաբուժական հմտությունից օգուտ քաղել։

Այսպես գրեթե ամբողջ երեկո միս Մաուչրն էր մեր խոսակցության առարկան։ Եվ երբ ես Ստիրֆորթին բարի գիշեր ասացի ու սանդուղքից ներքև իջա, նա բազիրքից վայր կոանալով գոչեց ինձ.

– Bob swore, Դեյզի։ Bob swore։

Ես շատ զարմացա, երբ Բարկիսի տնակին մոտենալիս Հեմին տեսա, որ ետ ու առաջ էր քայլում փողոցում. ավելի զարմացա, երբ նա հայտնեց, թե Էմլին ներսումն է։

– Իսկ դուք ինչո՞ւ ներս չեք մտնում,— հարցրի նրան։

– Չեմ մտնում, որովհետև մաստր Դեվի,— ասաց Հեմը վարանելով,— Էմլին մեկի հետ խոսելիք ունի։

– Ուրեմն Հեմ, ավելի հարկավոր է ձեզ ներսում լինել,— նկատեցի ես ժպտալով։

– Այո, այդպես է, մաստր Դեվի,— ասաց Հեմը,— բայց գիտե՞ք,— շարունակեց նա ձայնն իջեցնելով ու ջանալով իր խոսքերին մի խորհրդավոր իմաստ տալ,— Էմլին մի ջահել կնոջ

---

[36] Jockey — ձիավաճառ, խաբեբա, նենգավոր։

[37] Bob swore — անգլերեն նշանակում է Բոբն երդվեց։ Միս Մաուչրը այս խոսքերը գործ է ածում ֆրանսերեն bonsoir-ի տեղ, որ նշանակում է բարի երեկո։

հետ է բանակցում... Այո՛, մի կնոջ, որի հետ մի ժամանակ ծանոթ էր, իսկ այժմ երանի թե նրան ամենևին չտեսներ։

– Նա մի ողորմելի կին է, մաստր Դեվի, մի թշվառ արարած, որին մեր ամբողջ քաղաքը ոտքի տակ կոխկռտում է։ Նա չի կարող ո՛չ փողոցում երևալ, ո՛չ եկեղեցում... Ամենքը նրանից գարշում են։

– Այդ այն կինը չէ՞, որին ես տափարակի վրա տեսա, ծովափի մոտ, երեկոյան դեմ, մեր հանդիպումից մի քիչ հետո։

– Որ գալիս էր մեր հետևի՞ց,– ասաց Հեմը։– Այո՛, մաստր Դեվի, գուցե նա լինի ձեր տեսածը։ Ճանապարհին մենք չգիտեինք, որ նա է, և իմացանք, երբ որ արդեն տուն էինք մտել։ Այն ժամանակ նա թաքուն Էմլիի պատուհանին մոտեցավ, որտեղից լույս էր երևում, և կամացուկ ասաց. «Էմլի, Էմլի, աստծու սիրուն, աղաչում եմ՝ գթա ինձ։ Ես էլ մի օր քեզ նման էի՛»։ Ահ, ինչ հանդիսավոր խոսքեր էին դրանք, մաստր Դեվի։

– Իրավ որ, Հեմ։ Սակայն Էմլին ի՞նչ ասաց։

– Էմլին ասաց. «Դո՞ւ ես, Մարթա։ Միթե դո՞ւ ես»։ Գիտե՞ք, մի ժամանակ նրանք միասին էին աշխատել մր. Օմրի խանութում։

– Այո, այո, հիշում եմ նրան,– գոչեցի ես, մտաբերելով այն երկու աղջիկներից մեկին, որին տեսել էի մր. Օմրի մոտ՝ առաջին անգամը նրա կրպակը ոտք դնելիս։– Շատ լավ եմ հիշում։

– Նրա անունը Մարթա Էնդրլ է,– ասաց Հեմը։– Երկու կամ երեք տարով Էմլիից մեծ է, բայց Էմլին ու նա միասին են սովորել դպրոցում։

– Անունը երբեք չէի լսել,– ասացի ես։– Շարունակեցեք, Հեմ։

– Շարունակելու բան չկա, մաստր Դեվի։ «Էմլի, Էմլի, աստծու սիրուն, աղաչում եմ՝ գթա ինձ։ Ես էլ մի օր քեզ նման էի»։ Այս խոսքերով արդեն ամեն բան ասված է։ Նա ուզում էր Էմլիին տեսնել, բայց Էմլին անկարող էր ներս կանչել նրան, որովհետև ապերը տանն էր... Այո՛, տանն էր։ Իսկ ապերը, մաստր Դեվի, չէր հոժարի... երբեք,– ասաց Հեմը ջերմությամբ։– Ապերը շատ բարի մարդ է, շատ գթասիրտ, բայց ծովի տակ սուզված բոլոր գանձերն էլ նրան որ տան, թույլ չի տա, որ Էմլին այն աղջկա հետ միասին գտնվի։

Ես զգում էի, որ այդ բոլորը ճշմարիտ է, և ես այս բանը նույնքան հավատում էի, որքան և ինքը Հեմը։

– Այս պատճառով էլ Էմլին մի բան գրեց թերթիկի վրա,– շարունակեց Հեմը,– և պատուհանից տվեց նրան։ «Այս տոմսակը տար հորաքրոջս տուր, մրս. Բարկիսին,– ասաց նա,– հորաքույրս գոնե իմ սիրուն, մի անկյուն կշնորհի քեզ իր կրակի մոտ, և երբ ապերը տանից հեռանա, ես կգամ քեզ տեսնելու։ Հետո Էմլին ամեն բան կարգով պատմեց ինձ, ինչ որ ես էլ ձեզ պատմեցի, մաստր Դեվի, և խնդրեց որ իրեն այստեղ բերեմ։ Ի՞նչ անեի։ Իհարկե, պետք չէր, որ նա մի այդպիսի կնոջ հետ ծանոթ լինի, բայց նրա խնդիրքը ինչպե՞ս մերժեի, քանի որ արտասվում էր խնդրելիս։

Հեմը իր ծոցագրպանից մի սիրուն քսակ հանեց։

– Եթե արտասուքը բանի տեղ էլ չդնեի,– շարունակեց նա, շոյելով քսակը կոշտ ափում,– միթե կարելի՞ էր, մաստր Դեվի, դիմադրել նրան, երբ ինձ պատվիրեց այս փոքրիկ բանն այստեղ բերել։ Ես հո քար չեմ, մաստր Դեվի։ Ես հո գիտեի, թե ո՞ւմ համար է սա,– ասաց Հեմը, լուրջ նայելով քսակին։– Ինչպե՛ս քիչ է միջի փողը, ա՛հ, Էմլի ջան։

Սրտանց սեղմեցի Հեմի աջը, երբ նա դարձյալ քսակը գրպանը դրեց, որովհետև խոսքերով չէի կարող զգացմունքներս ավելի լավ արտահայտել, և մենք սկսեցինք լռիկ ման գալ տան առջև։ Մի քիչ հետո դուռը բացվեց և Պեգգոտին Հեմին ներս մտնելու նշան արեց։ Ես ուզում էի հեռանալ, բայց նա ինձ էլ ներս հրավիրեց։ Ներս մտա՝ ուղղակի իմ ննջարանը քաշվելու

մտքով, բայց այնտեղ գնալու համար պետք էր խոհանոցի մաքուր սենյակից անցնել, ուր նրանք բոլորը հավաքված էին. այնպես, որ դեռ ուշքի չեկած՝ ես արդեն նրանց շրջանի մեջ էի։

Այն աղջիկը, որին ես ծովեզերքի ավազոտ տափարակի վրա էի տեսել, այժմ վառարանի մոտ էր։ Նա նստած էր հատակի վրա՝ գլուխն ու ձեռքը աթոռին հենած։ Իսկույն իմացա, որ Էմլին նոր էր աթոռից վեր կացել և որ այն խոնարհ գլուխը նրա ծնկների վրա էր հանգչել։ Մարթայի դեմքը ծածկված էր առատ մազերով, որոնք կարծես դիտավորյալ էին արձակված, այնուամենայնիվ երևում էր, որ նա դեռ ջահել և շատ սիրուն է։ Պեգգոտին լաց էր եղել։ Լաց էր եղել և Էմլին։ Մեր մտնելուց հետո մի քանի ժամանակ ոչ մի բառ չասվեց, և այս ընդհանուր լռության մեջ հոլանդական ժամացույցի թիկ-թակը կրկնապատիկ սուր էր հնչում։

Էմլին առաջինը սկսեց խոսել։

– Մարթան ուզում է Լոնդոն գնալ,– ասաց նա Հեմին։

– Ինչո՞ւ Լոնդոն,– հարցրեց Հեմը։

Հեմը կանգնած էր երկուսի մեջ ու անորոշ զգացումով նայում էր կուչ եկած աղջկան. և՛ կարեկցում էր նրան, և՛ դժգոհ էր, որ իր սիրական Էմլիի մոտ էր տեսնում նրան։ Միշտ հիշում եմ երիտասարդի այդ հայացքը։ Հեմն ու Էմլին շշնջալով էին խոսակցում, կարծես հիվանդի պես, բայց այնքան պարզ, որ ամեն մի բառ լսելի էր։

– Լավ է այնտեղ լինեմ, քան այստեղ,– հնչեց հանկարծ մի երրորդ ձայն։ (Այս ասողը Մարթան էր, որ դեռ անշարժ նստած էր։) – Այնտեղ ինձ ճանաչող մարդ չկա։ Այստեղ ամենքը ճանաչում են։

– Ի՞նչ պիտի անի այնտեղ,– հացրեց Հեմը։

Մարթան գլուխը փոք-ինչ բարձրացրեց, մռայլ նայեց Հեմին, հետո նորից կուչ եկավ, աջ ձեռքը ծոծրակին դրեց, և մահառիթ վերք ստացողի պես մի սրտակեզ հառաչ հանեց։

– Նա կաշխատի իրեն ուղղել,– ասաց Էմլին։– Դու չգիտես, թե ինչ բաներ ասաց մեզ։ Չէ՞, հորաքույր... սա... սրանք չեն էլ կարող գիտենալ։

Պեգգոտին կարեկցաբար գլուխը շարժեց։

– Այո, ես կջանամ ուղղել ինձ, եթե օգնեք ինձ հեռանալ,– ասաց Մարթան։– Ինչ էլ անեմ, ավելի վատ չի լինի, քան ինչ որ արել եմ այստեղ։ Լոնդոնում ես կաշխատեմ ավելի լավ պահել ինձ։ Օ՛հ,– ասաց նա սարսռալով,– հեռացրեք ինձ այս քաղաքից, ուր ամեն մարդ ճանաչում է ինձ փոքր հասակից։

Էմլին իր աջը Հեմին մեկնեց, և ես տեսա, որ Հեմը մի կտավե քսակ դրեց նրա ափի մեջ։ Էմլին առավ կարծելով թե իր քսակն է, և մի երկու քայլ առաջ գնաց, սակայն սխալը նկատելով, դիմեց Հեմին, որ ետ էր քաշվել դեպի ինձ, և ասաց նրան.

– Դու սխալվել ես, սիրելիս, այս քսակը իմը չէ։

– Ոչ քոնն է, Էմլի,– պատասխանեց Հեմը։– Աշխարհումս ես բան չունեմ, որ քոնը չլիներ, անգին իմ։

Էմլիի աչքերը դարձյալ արցունքով լցվեցին, բայց նա շուռ եկավ և Մարթային մոտեցավ։ Ի՞նչ տվեց նրան, չգիտեմ։ Տեսա միայն, որ կռանալով փող դրեց նրա ծոցը։ Հետո մի քանի խոսք շշնջաց նրան ու հարցրեց, թե հերի՞ք է։ «Պետքից ավելի», ասաց մյուսն ու նրա ձեռքը համբուրեց։

Հետո Մարթան վեր կացավ, շալը գլխին փաթաթեց, երեսը ծածկեց և բարձրաձայն հեկեկալով՝ համրաքայլ մոտեցավ դռանը։ Դուրս գնալուց առաջ մի վայրկյան շեմքի վրա կանգ առավ, կարծես թե կամենում էր մի բան ասել, սակայն շրթունքից ոչ մի բառ դուրս չեկավ։ Միայն մի դառնակսկիծ հառաչ արձակեց ու գնաց։

Դուռը փակելուն պես փոքրիկ Էմլին ահով նայեց բոլորիս և դեմքը ձեռքերի մեջ թաքցնելով հեկեկաց։

– Բավական է, Էմլի,– ասաց Հեմը, նրա ուսը շոշափելով։– Մի՛ լար, սիրելիս, հերիք է։

– Օ՜հ, Հեմ,– գոչեց Էմլին, աղիողորմ լաց լինելով,– ես այնքան բարի աղջիկ չեմ, ինչքան որ պետք էր... Այո՛, երբեմն շատ ապերախտ եմ։

– Ինչեր ես ասում,– գոչեց Հեմը։ Ես լավ գիտեմ, որ դու ազնվասիրտ աղջիկ ես։

– Ո՛չ, ո՛չ, ո՛չ,– գոչեց Էմլին հեծելով։– Ես բնավ այնքան բարի չեմ, ինչքան որ պետք էր ինձ լինել։ Ինձ դեռ շատ բան պակաս է, շատ ու շա՛տ բան։

Եվ նա շարունակեց կոտրված սրտով լալ ու կոծել։

– Ես անչափ շատ եմ փորձում քո սերը,– ասաց նա։– Շատ եմ գրգռում ու տանջում քեզ իմ հեղհեղուկ վարմունքով, թեթևամիտ ընթացքով, այն ինչ պետք չէր, որ ես այդպես անեի։ Իսկ դու միշտ վեհանձն ես, միշտ բարի ես դեպի ինձ։ Օ՜հ, ինչո՞ւ եմ քեզ հետ այդպես վարվում, մինչդեռ մտքերիս միակ նպատակը այն պիտի լիներ, որ ես քեզնից շնորհակալ լինեմ և քեզ երջանիկ դարձնեմ։

– Քեզ հետ ես միշտ երջանիկ եմ, անգին Էմլի,– ասաց Հեմը։– Երջանիկ եմ քեզ տեսնելիս, երջանիկ եմ օր ու գիշեր միայն քո մասին մտածելիս։

– Ա՜հ, այդ բավական չէ,– լալով գոչեց Էմլին։– Դրա պատճառը քո բարությունն է, ոչ թե իմը։ Օ՜հ, դու շատ ավելի բախտավոր կլինեիր, Հե՛մ, եթե մեկ ուրիշին սիրեիր, մեկ ուրիշին... որ ավելի հաստատամիտ լիներ և ավելի քեզ արժանի... Բոլորովին քեզ նվիրված, այլ ոչ թե ինձ նման ունայնամիտ ու փոփոխական։

– Խեղճ աղջիկ,– ասաց Հեմը մեղմ ձայնով։– Մարթան սրա սիրտը սաստիկ հուզել է։

– Հորաքույր, աղաչում եմ մոտեցիր ինձ,– հեկեկաց Էմլին։– Թույլ տուր գլուխս ուսիդ դնեմ։ Օհ, ես շատ թշվառ եմ այս երեկո, հորաքույր։ Ես բնավ այնքան լավ աղջիկ չեմ, ինչքան որ կարծում եք։ Գիտեմ, գիտեմ։

Պեգգոտին շտապեց վառարանի մոտ նստել։ Էմլին նրա վզին փարվելով՝ առջևը չոքեց ու լրջությամբ նայեց երեսին։

– Աղաչում եմ, հորքուրիկ, օգնիր ինձ,– ասաց նա։– Սիրելի Հեմ, օգնիր ինձ։ Մր. Դավիթ, պաղատում եմ ձեզ՝ մեր մանկության սիրուն, «օգնեցեք» ինձ։ Ես ուզում եմ հարյուր անգամ ավելի երախտագետ լինել, քան որ եմ։ Ուզում եմ ավելի լավ աղջիկ լինեմ։ Փափագում եմ լիովին զգալ, թե ինչ երջանկություն է մի պատվական մարդու կին դառնալ, խաղաղ ապրել նրա հետ միասին։ Օհ, աստված իմ, օհ սի՛րտս, սի՛րտս։

Էմլին մի սուր ճիչ արձակելով դայակիս կրծքի վրա ընկավ և շարունակեց հանդարտ լաց լինել, մինչ պառավն աշխատում էր փայփայել նրան, ինչպես մի երեխայի։ Էմլին, իր սրտաճմլիկ ցավն ու վիշտն արտասվալից աղերսանքով հայտնելիս, բոլորովին նման էր թե՛ կնոջ, թե՛ երեխայի, որով ավելի էր աչքի ընկնում նրա իսկական բնավորությունն ու գեղեցկությունը։

Նրա հուզմունքը քիչ-քիչ մեղմացավ, և մենք սկսեցինք նրան մեկ խրախուսելով, մեկ հանաքներ անելով սիրտ տալ։ Նա կամացուկ բարձրացրեց գլուխը ու սկսեց խոսել։ Մի քիչ հետո փորձեց ժպտալ, ապա ծիծաղեց, վերջապես վերկացավ և նստեց մեր կողքին։ Պեգգոտին նրա գզգզված մազերը կարգի բերեց, աչքերը սրբեց, երեսը մաքրեց, որպեսզի հորեղբայրը տուն մտնելիս չհարցնի, թե ինչո՞ւ է լաց եղել իր սիրելի թոռնիկը։

Առաջին անգամն էր, որ Էմլին իմ ներկայությամբ այդ գիշեր մի անմեղ համբույր տվեց իր նշանածին և հենվեց նրան, ասես թե կամենալով նրա մեջ գտնել իր լավագույն նեցուկը։ Երբ

նրանք հեռանում էին լուսնի լույսով, ես նայում էի, համեմատելով նրանց մեկնելը Մարթայի մեկնելու հետ, տեսա որ Էմլին երկու ձեռքով Հեմի թևը բռնել և ամուր ու սեղմ կպել է նրան։

Գ. ԳԼՈՒԽ
Հաստատում եմ մր. Դիկի կարծիքը և ընտրում եմ մի նոր ասպարեզ

Առավոտյան զարթնելիս երկար ժամանակ մտածում էի փոքրիկ Էմլիի մասին և հիշում այն հուզմունքը, որ վրդովել էր նրան Մարթայի մեկնելուց հետո։ Ինձ թվում էր, թե այն բոլորը, ինչ որ պատահմամբ երեկ իմացա ընտանեկան, մի սրբազան խոստովանանք է, որի մասին ես Ստիրֆորթին անգամ պատմելու իրավունք չունեմ։ Ոչ մի արարած իմ սրտի վրա այնպես քնքուշ չէր ազդել, ինչպես փոքրիկ Էմլին, մանկությանս այդ ընկերը, որին,– հավատացած եմ մինչև հետին շունչս հավատացած կմնամ,– նվիրված էի շատ ջերմ և շատ մաքուր զգացմունքով։ Ասել որևէ մեկին, անգամ Ստիրֆորթին, այն բոլորը, ինչ որ Էմլին, չկարողանալով իր վիշտը ծածկել, հայտնել էր ինձ մի անակնկալ դեպքի առթիվ, կարծում էի թե մի տմարդի գործ կլինի և անարժան թե՛ ինձ, և թե՛ մեր սուրբ մանկության ճաճանչին, որ միշտ տեսել էի նրա գլխի շուրջը շողալիս։ Այդ պատճառով որոշեցի, նրա գաղտնիքը թաքուն պահել սրտիս խորքում, կարծես թե այդ գաղտնիքը նրա պատկերին մի նոր փայլ էր շնորհում։

Նախաճաշի միջոցին տատիս վերջին նամակը հասավ ինձ։ Դրա մեջ մի այնպիսի նյութ կար, որի մասին իմ կարծիքով ոչ ոք չէր կարող ավելի լավ խորհուրդ տալ ինձ, քան Ստիրֆորթը, ուստի և մտքումս դրի բովանդակությունը ճանապարհին հայտնել նրան։ Այժմ առանց այդ էլ շատ բան ունենք անելու։ Մեզ պետք էր հրաժեշտ տալ մեր բոլոր բարեկամներին։ Դրանց թվում վերջինը չէր մր. Բարկիսը, որ ցավ հայտնեց մեր մեկնելու պատճառով. անտարակույս նա իր սնդուկը նորից կբանար ու դարձյալ մի հատ ոսկի կզոհեր, եթե միայն կարենար էլի մի երկու օր Յարմաութում պահել մեզ։ Մր. Պեգգոտին և իր բոլոր գերդաստանը վերին աստիճանի տխրեցին։ Օմրի ու Ջորեմի ամբողջ տունը դուրս եկավ մեզ բարի ճանապարհ մաղթելու, և Ստիրֆորթի կողքը այնքան ձկնորսներ հավաքվեցին՝ մեր հակերը մինչև դիլիժանսը կրելու համար, որ եթե մենք մի զորագնդի իրեղեններ էլ ունենայինք, այդ ամենը միանգամից կտարվեր։ Կարճ ասած՝ մենք մեկնեցինք բոլոր բարեկամներին կսկիծ պատճառելով, և շատերին տրտմած թողինք մեր հետևից։

– Դուք այստեղ երկա՞ր կմնաք, Լիտտիմեր,– հարցրի ես, մինչ նա կանգնած էր՝ դիլիժանսի շարժվելուն սպասելով։

– Ոչ, սըր,– պատասխանեց նա։– Հավանական է, որ շատ երկար չմնամ։

– Ինքն էլ չգիտի՝ մինչև երբ,– նկատեց Ստիրֆորթը մի անտարբեր եղանակով։– Նա միայն այն գիտի, ինչ որ պարտավոր է այստեղ անել, և կանի։

– Իհարկե կանի,– ասացի ես։

Լավ կարծիքիս փոխարեն շնորհակալություն հայտնելու համար, Լիտտիմերը իր աջը գլխարկին դրեց, և ես զգացի, որ միայն ու միայն ութ տարեկան եմ։ Կառքը տեղից շարժվելուն պես՝ նա կրկին իր գլխարկը շոշափեց, բարի ճանապարհ մաղթելով մեզ, և մայթի վրա կանգնած մնաց՝ եգիպտական բուրգի նման խորհրդավոր ու պատկառելի։

Մի քանի ժամանակ ընկերս ու ես լուռ էինք։ Ստիրֆորթը խոսելու տրամադիր չէր, իսկ ես մտածում էի, թե ե՞րբ նորից այդ բոլոր վայրերը կտեսնեմ և բացակայությանս միջոցին ի՞նչ փոփոխություններ կլինեն նրանց կամ իմ մեջ։ Հանկարծ Ստիրֆորթը զվարթացավ, ինչպես ընդունակ էր զվարթանալ և կամ տխրել իր ուզած րոպեին, և հրեց ինձ, ասելով.

– Դե, ինչո՞ւ ես լուռ, ա՛յ Դավիթ։ Այն ի՞նչ նամակ էր, որի մասին խոսում էիր այսօր։

– Հա,– ասացի ես, նամակը գրպանիցս հանելով։– Տատիս նամակն է։

– Եվ ինչ է գրում, որ ուշադրության արժանի լինի։

– Հիշեցնում է ինձ, թե ուղևորությանս նպատակն էր աշխարհ տեսնել ու խորհել։

– Եվ հարկավ հասե՞լ ես նպատակիդ։

– Ոչ լիովին։ Ուղիղն ասեմ՝ գրեթե մոռացել էի այդ նպատակը։

– Դե, գոնե այժմ չորս կողմդ նայիր և շտապիր ուղղել անհոգությունդ,– ասաց Ստիրֆորթը։– Նայիր դեպի աջ, և մի տափարակ ճախճախուտ երկիր կտեսնես. նայիր դեպի ձախ, և նույն պատկերը կտեսնես։ Առաջ նայիր, և զանազանություն չես գտնի. հետևդ էլ միևնույն է։

Ես ծիծաղեցի և ասացի, որ իրավ մի հարմար պաշտոն չեմ գտնի այդ ամբողջ շրջակայքում, և պատճառը թերևս դրա միակերպ հարթությունը լինի։

– Ի՞նչ է գրում տատդ այդ մասին,– հարցրեց Ստիրֆորթը, ձեռքիս նամակին նայելով։– Մի որևէ ակնարկություն չի՞ անում քեզ։

– Ինչպես չէ,– ասացի ես։– Հարցնում է՝ արդյոք կցանկանայի՞ պրոկտր լինել։ Ի՞նչ կասես այս մասին։

– Իրավ չգիտեմ,– պատասխանեց անփույթ կերպով Ստիրֆորթը։– Սակայն կարծում եմ, թե դու նույնքան այդ պաշտոնին հարմար ես, որքան և ուրիշ պաշտոնի։

Ես նորից ծիծաղեցի, տեսնելով որ նա բոլոր պաշտոններն ու կոչումները հավասար է դասում։

– Պրոկտր ասածդ ի՞նչ բան է, Ստիրֆորթ։

– Պրոկտրը մի տեսակ վանական գործակալ է,– պատասխանեց Ստիրֆորթը։– Նա նստում է Դոկտորների Համայնքում[38] և այդ հնացած հաստատության մեջ նույն դերն ունի, ինչ որ միջնորդը կամ փաստաբանը աշխարհիկ դատարանում։ Նա մի պաշտոնատար է, որի գոյությունը, իրերի բնական ընթացքին նայելով, իսկապես երկու դար առաջ դադարած պիտի լիներ։ Նրա ինչ լինելն ավելի լավ կհասկանաս, եթե ասեմ, թե ի՞նչ է իրոք Դոկտորների Համայնքը։ Դա մի առանձնացած, ետ ընկած անկյուն է, ուր գործադրում են եկեղեցական կոչված օրենքը և ինչ տեսակ խաղեր ասես խաղում է պառլամենտի հին ու անպետք հրովարտակների հետ, որոնց գոյության մասին տասը մարդուց հինգը գաղափար չունեն, իսկ մյուս հինգի կարծիքով նրանք արդեն Էդուարդների[39] ժամանակից բրածո դարձած բաներ են։ Դոկտորների ատյանը հնուց արտոնություն ունի քննելու և վճռելու կտակների ու պսակների վերաբերյալ գործերը, ինչպես և նավերի ու նավակների միջև ծագած վեճերը։

– Ինչ անհեթեթ բաներ, Ստիրֆորթ,– գոչեցի ես։– Ի՞նչ առնչություն կամ հարաբերություն կա եկեղեցական և նավային գործերի միջև։

– Չեմ ասում, սիրելիս, թե կա,– պատասխանեց Ստիրֆորթը,– այլ ասում եմ միայն, թե այս բոլոր գործերը քննում ու դատում են նույն Դոկտորների Համայնքում նստած անձինք։ Եթե մի օր այնտեղ գնաս, կտեսնես, թե ինչպե՞ս են այդ արգո պարոնները խելք մաշում Իվնգի ծովային բառարանի վրա՝ պարզելու համար, թե ի՞նչ կերպով էր **Նանսի** նավը **Սարա Ջենին** ընկղմել կամ թե ինչպես էր մի ալեկոծության ժամանակ մր. Պեգգոտին Յարմաութցի

---

[38] Դոկտորների համայնք է (Doctors commoms) կոչվում միջնադարյան հոգևորական ատյանների այն մասը, որ քաղաքային ու կանոնական օրենքների դոկտոր Հերվեյն էր հիմնել1768 թվականին։ Այս մասում քննվում էին թե՛ բուն եկեղեցական և թե՛ աշխարհիկ, նույնիսկ ծովային վարչության վերաբերյալ գործերը։ Դոկտորները բնակվում էին և միասին ճաշում Հերվեյի գնած ահագին շինության մեջ (ս. Պողոս եկեղեցու մոտերքում)։ Համայնքի ավագ անդամն անպատճառ իրավաբանության դոկտոր պիտի լիներ, իսկ պրոկտրը կարող էր և չունենալ գիտնականի աստիճան։ Ինքը՝ Դիքենսը մի ժամանակ ծառայել էր Դոկտորների Համայնքում։

[39] Էդուարդ անունով անգլիական թագավորներից վերջինը Էդուարդ Զ-ն էր (1537-1553)։

նավաստիների հետ խարիսխ ու պարան հասցրել վտանգված **Նելսըն** նավին, որը նոր էր եկել Հնդկաստանից։ Մի ուրիշ օր էլ կգտնես նրանց՝ որևէ անկարգ քահանայի գործի առթիվ թեր ու դեմ ճառելիս, և կտեսնես, որ միևնույն դոկտորը մի անգամ ծովային գործի դատավոր է, մյուս անգամ քահանայական դատի փաստաբան, և ընդհակառակը։ Այդ մարդիկ դերասանների նման են. մի օր մեկը դատավոր է, մի ուրիշ օր դատավոր չէ. դերերը շարունակ փոխվում են, բայց որքան էլ փոխվեն՝ ներկայացումը շատ զվարճալի ու շահաբեր է և շատ ընտիր հասարակության առջև է կատարվում։

– Սակայն չէ՞ որ փաստաբաններն ու պրոկտրները տարբեր անձինք են։ Խնդրեմ այս կետը բացատրես ինձ։

– Սիրով,– ասաց Ստիրֆորթը։– Փաստաբանները քաղաքային պաշտոնյաներ են՝ համալսարանում դոկտորի աստիճան ստացած և այս է պատճառը, որ փոքր-ինչ ծանոթ եմ նրանց հետ։ Պրոկտրները գործի են դնում փաստաբաններին։ Թե՛ սրանք, թե՛ նրանք լավ են վաստակում և շատ հանգիստ կյանք վայելում։ Միով բանիվ՝ խորհուրդ կտամ քեզ, Դավիթ, չարհամարհել Դոկտորների Համայնքը։ Այս էլ կասեմ՝ եթե ուզում ես իմանալ, որ նրանք պարծենում են իրենց ազնվականությամբ։

Չնայելով Ստիրֆորթի թեթև վերաբերմունքին դեպի այդ նյութը՝ ես պատկառանք զգացի ս. Պողոսի գավթին մոտիկ հնադարյան անկյունից և հակվեցի տատիս առաջարկն ընդունելու, որ նա հղացել էր Դոկտորների Համայնքում, ուր նորերս իր պրոկտրին տեսնելու և իր կտակը հօգուտ ինձ հաստատելու էր գնացել։

– Համենայն դեպս տատիդ արածը գովելի բան է,– ասաց Ստիրֆորթը, երբ ես նրան այս ամբողջ եղելությունը պատմեցի։– Դեյզի, ես քեզ խորհուրդ եմ տալիս չարհամարհել Դոկտորների Համայնքը։

Արդեն որոշել էի այդպես անել։ Այնուհետև պատմեցի Ստիրֆորթին, որ տատս սպասում է ինձ Լոնդոնում, ուր մի շաբաթով բնակարան է վարձել Լինկոլնս – Ինն – Ֆիլդս թաղի հյուրանոցում, և որ բնակարանը քարե սանդուղք և դեպի կտուրը տանող մի առանձին դուռ ունի։ Տատս հաստատ համոզված էր, չգիտեմ ինչո՞ւ, թե Լոնդոնի ամեն մի տուն յուրաքանչյուր գիշեր այրվելու վտանգի է ենթակա։

Ճանապարհի մնացած մասը բավական զվարթ անցկացրինք, զրուցելով Դոկտորների Համայնքի մասին և գուշակելով այն ապագան, երբ ես այդ ատյանում պրոկտր կլինեմ։ Ստիրֆորթն այնպես ծաղրական գույներով էր պատկերացնում իմ պաշտոնը, որ երկուսս էլ ծիծաղից թուլանում էինք։ Երբ Լոնդոն հասանք, նա դեպի տուն գնաց խոսք տալով հետևյալ օրը տեսնել ինձ, իսկ ես գնացի Լինկոլնս–Ինն–Ֆիլդսի հյուրանոցը, ուր տատս դեռ արթուն էր և ընթրիքի էր սպասում ինձ։

Եթե մեր բաժանվելուց ի վեր ես աշխարհի շուրջը պտտած լինեի, դարձյալ մեր տեսակցությունն ավելի քաղցր չէր լինի։ Տատս լաց եղավ ինձ համբուրելիս և կեղծ ժպիտով ասաց, որ մայրիկս, այդ խեղճ մանուկը, անշուշտ կարտասվեր, եթե այժմ ինձ տեսներ։

– Ուրեմն, տատիկ, տա՞նն եք թողել մր. Դիկին,– ասացի ես։– Շատ ափսոս։ Բարով Ջենետ, ինչպե՞ս եք։

Մինչ Ջենետն ինձ կնիքս էր անում և իր կողմից առողջությունս հարցնում, նկատեցի որ տատս քիթն ու պռունկը կախեց։

– Ես էլ շատ եմ ափսոսում,– ասաց նա, քթի ծայրը տրորելով։– Եկած օրիցս դեռ ոչ մի րոպե հանգստություն չեմ գտել, Տրոտ։

Ու մինչ կհարցնեի, թե ինչո՞ւ էր անհանգիստ, տատս տխրագին հաստատակամությամբ իր ձեռքը սեղանին դեմ տվեց և շարունակեց.

– Հավատացած եմ, որ մր. Դիկը այնքան կամքի ուժ չունի, որ կարողանա մեր մարգից հալածել էշերին: Գիտեմ, նրա կամքը թույլ է: Նրա փոխարեն Ջենետին պետք էր տանը թողնել. այն ժամանակ սիրտս հանգիստ կլիներ: Հաստատ համոզված եմ,– ասաց տատս ազդու ձայնով,– որ այսօր ուղիղ ժամը չորսին մի էշ անցավ մարգի միջով: Ճիշտ այդ ժամին ես ամբողջ մարմնով սարսուռ զգացի. այս մի անսխալ նշան է, որ անցավ:

Ես փորձեցի սփոփել տատիս, սակայն նա ոչ մի սփոփանք չընդունեց:

– Գիտեմ,– ասաց նա,– մի էշ անցավ, և հատկապես այն կամակոր հաստ էշը, որի վրա նստած մեզ մոտ էր եկել մարդասպանի քույրը:

Մարդասպանը (murderer) մր. Մեորդստոնն էր. տատս ուրիշ անուն չէր տալիս նրան:

– Ամբողջ Դուվրում մի էշ չկա,– իր խոսքն ավարտեց տատս, սեղանին խփելով,– որի լրբությունը այսքան ինձ բարկացներ:

Ջենետը համարձակ նկատեց, թե տատս զուր է վրդովվում, որովհետև այն էշը նույն օրը վարձված էր ծովափից ավազ կրելու, ուրեմն ամենևին չէր կարող մարգի վրայով անցկենալու ոճիր գործել: Սակայն տատս ոչինչ չէր ուզում լսել:

Ընթրիքը շատ լավն էր ու տաք-տաք բերված, չնայած խոհանոցը տատիս վարձած սենյակներից բավական հեռու էր: Թե նա ինչո՞ւ հատկապես վերևի հարկումն էր բնակարան վարձել – արդյոք նրա՞ համար, որ իր վճարած փողի փոխարեն ավելի շատ քարե աստիճաններ ունենա, թե կտրի դռան ավելի մոտիկ գտնվի – չգիտեմ: Մեզ բերին տապակած վառեկ, խորոված միս և կանաչի: Ես ախորժակով բոլորից էլ կերա, բոլորն էլ պատվական էր: Բայց տատս Լոնդոնի մթերքի մասին իր առանձին կարծիքն ուներ, և քիչ էր ուտում:

– Գրավ եմ բռնում,– ասաց նա,– որ այս վառեկը մի որևէ մառանումն է աշխարհ եկել ու աճել և ոչ մի ժամանակ մաքուր օդ չի շնչել, բացի միայն շուկա հանելիս: Խորոված գուցե տավարի մսից է, բայց վստահ չեմ: Այստեղ ոչ մի բան բնական չէ, բացի կեղտից:

– Սակայն, տատի, միթե չի կարելի ենթադրել, թե մի գյուղից բերված լինի այս հավը,– ասացի ես:

– Ամենևին ոչ,– պատասխանեց նա:– Լոնդոնի վաճառականներին մի անխարդախ բան ծախելը ձեռք չի տա:

Չուզեցի հերքել այդ կարծիքը, բայց լավ ախորժակով ընթրեցի, որ մեծապես գոհացրեց տատիս: Երբ սեղանը հավաքեցին, Ջենետը տատիս մազերը հարդարեց և օգնեց գիշերվա գլխանոցը հագնել, որ սովորականից ավելի դիմացկուն նյութից էր պատրաստված, «ի դեպս հրդեհի», ինչպես որ տատս ասաց, և ապա նրա զգեստի փեշերը ծնկների վրա դրեց, որպեսզի նա, սովորության համեմատ, քնելուց առաջ իր ոտքերը տաքացնի: Այնուհետև ես, հաստատված կարգին հետևելով, որից երբեք չէր կարելի մազի չափ շեղվել, նրան մատուցեցի մի բաժակ ջրախառն ու գաղջ սպիտակ գինի և մի քանի նուրբ ու բարակ հացի շերտեր, որ պետք էր նախ կրակի վրա խորովել: Այս բոլորից հետո տատս ու ես մենակ մնացինք դեմ առ դեմ, նա հացի շերտիկները գինու մեջ մեկ-մեկ թաթախելով վայելում էր և գորովով նայում վրաս իր գլխանոցի եզրերի տակից:

– Այժմ, Տրոտ,– սկսեց նա,– գնանք պրոկտրի պաշտոնին: Գուցե դեռ չես էլ մտածել այդ մասին:

– Շատ եմ մտածել, սիրելի տատիկ, և այդ մասին շատ եմ խոսել Ստիրֆորթի հետ: Ձեր գաղափարը վերին աստիճանի դուր է գալիս ինձ:

– Շատ գոհ եմ, որ այդպես է,– ասաց տատաս:

– Միայն թե մի դժվարություն կա, սիրելի տատ:

– Ի՞նչ դժվարություն, Տրոտ:

– Այն որ լսածներիս նայելով, պրոկտրի պաշտոն ստանալը հեշտ բան չէ, և գուցե դուք ստիպված լինեք ահագին ծախքեր անել՝ ինձ այդ պաշտոնի մեջ մտցնելու համար։

– Պետք կլինի մի հազար ստեռլինգ տալ,– ասաց Տատս։

– Ահա այս հանգամանքն է վրդովում ինձ, սիրելի տատ,– ասացի ես, աթոռս նրան մոտեցնելով։– Դա մի խոշոր գումար է։ Առանց այդ էլ դուք շատ եք ծախսել կրթությանս համար և ամեն բանում առատաձեռն եղել դեպի ինձ։ Ձեր վեհանձնությունն անչափ է։ Սակայն մի՞թե կարելի չէ մի ուրիշ պաշտոն ձեռք բերել, որ այդքան թանկ չնստեր. ես վստահ եմ, որ իմ անձնական եռանդով ու աշխատասիրությամբ կկարողանամ առաջ գնալ կյանքի մեջ։ Միթե հավաստի չե՞ք, որ այդպես անելն ավելի լավ կլիներ։ Կամ թե իրոք համոզված եք, որ ձեռնահաս եք մի մեծաքանակ գումար ծախսել և որ անհրաժեշտ է այդ ծախսը անել։ Ես միայն աղաչում եմ, իմ սիրելի երկրորդ մայրիկ, որ այս խնդիրը լավ կշռեք։

Տատս վերջացրեց պաքսիմատները, որ շարունակ վրաս նայելով ուտում էր, հետո բաժակը վառարանի քիվի վրա դրեց, ձեռքերը ծնկներին ծալեց և հետևյալ պատասխանը տվեց.

– Տրոտ, որդյակ իմ, ես միայն մի բաղձանք ունեմ այս աշխարհում, այն է, որ դու մի բարի, ազնիվ և երջանիկ մարդ դառնաս։ Այս է իմ միակ փափագը... նմանպես և Դիկի։ Շատ կցանկանայի, որ բոլորը լսեին կարծիքն այս մասին։ Այդ մարդու մտքի կորովն արդարև զարմանալի է։ Սակայն ինձնից բացի, ոչ ոք չկար, որ նրա խելքի տարօրինակ զորությունը ճանաչեր։

Տատս մի վայրկյան կանգ առավ ու ձեռքս բռնելով, շարունակեց.

– Ավելորդ է, Տրոտ, մտաբերել անցյալը, քանի որ նա չի կարող օգուտ բերել ներկային։ Գուցե ինձ պետք էր հորդ հետ ավելի մտերմիկ լինել, շատ ավելի սեր ընծայել խեղճ միամիտ մայրիկիդ, թեև քույրդ՝ Բեթսի Տրոտուդը, հույսերս ի չիք դարձրեց։ Երբ որ դու իմ մոտ եկար ինչպես մի փախստական, պատառոտած, ջարդված, փոշոտ մանուկ, այս բոլորը մտքովս անցավ։ Այն օրից մինչև այժմ իմ պարծանքը ու սփոփանքը դու ես, Տրոտ։ Քեզնից բացի, ոչ մի մարդ ունեցվածքիս վրա իրավունք չունի, գոնե...

Այստեղ տատս զարմացնելով ինձ՝ կակազեց ու շփոթվեց։

– Այո՛, ուրիշ ոչ ոքի իրավունք չունեմ իմ ունեցվածքը ժառանգելու, և դու իմ որդեգիրն ես։ Միայն թե տատիդ սիրող որդի եղիր, և քմահաճույքներս տար։ Իմ ծաղիկ հասակն այնքան երջանիկ չէր, ինչքան որ կարող էր լինել։ Սիրելով ինձ, դու պառավ տատիդ ավելի մեծ լավություն կանես, քան ինչ որ ես եմ արել քեզ համար։

Այս առաջին անգամն էր, որ տատս իր անցյալի վրա էր ակնարկում իմ մոտ։ Այս հանգիստ ու թռուցիկ ակնարկության եղանակի մեջ նա այնքան վեհանձնություն ցույց տվեց, որ հենց դրա համար ես ավելի կսիրեի ու կպաշտեի նրան, եթե միայն հնար լիներ է՛լ ավելի սիրել ու պաշտել նրան։

– Այժմ, Տրոտ, մեր առջև ամեն բան պարզեցված ու վերացված է,– ասաց տատս։– Էլ այս մասին չխոսենք։ Համբուրիր ինձ, և առավոտյան նախաճաշից հետո միասին կերթանք Դոկտորների Համայնքը։

Վառարանի առջև մենք դեռ երկար նստած մնացինք, իրար հետ զրույց անելով։ Ես քնեցի տատիս սենյակին կից համարում։ Կես-գիշերին, կառքի դղրդյուն լսելուն պես, տատս անկողնուց թռչում էր ու դուռս բախում՝ հարցնելու ինձ, թե արդյոք անցնողները հրշեջներ չե՞ն։ Սակայն լուսադեմին հանգստացավ, թողնելով որ ես էլ հանգիստ քնեմ։

Առավոտյան ժամը տասնմեկին գնացինք մր-մր. Սպընլոյի ու Ջորկինսի գրասենյակը, որ Դոկտորների Համայնքումն էր գտնվում։ Տատս, որ առհասարակ այն կարծիքն ուներ Լոնդոնի մասին, թե այնտեղ ամեն մարդ գրպանահատ է, իր քսակը, որի մեջ տասը գինե և մի քանի արծաթ կար, ինձ պահելու տվեց։

Կանգ առանք Ֆիլտ-ստրիտում, խաղալիքների կրպակի առջև՝ լսելու, թե սուրբ Դունստանի հսկայական ժամացույցը ինչպես կխփի։ Գիտությամբ էինք մեր քայլերը հարմարեցնում, որպեսզի ճիշտ ժամը տասներկուսին տեղ հասնենք։ Արդեն մոտենում էինք ս. Պողոսին, երբ ես նկատեցի, որ տատս հանկարծ իր քայլերը արագացրեց և զարհուրած երևաց։ Միևնույն ժամանակ աչքիս ընկավ մի վատ հագնված մռայլադեմ մարդ, որ փոքր-ինչ առաջ մեզ էր դիտում, իսկ այժմ այնպես էր մոտեցել, որ գրեթե դիպչում էր տատիս։

– Տրոտ։ Սիրելի Տրոտ,– սոսկալով շշնջաց տատս ու թևս ամուր հուպ տվեց։– Չգիտեմ՝ ի՞նչ անեմ։

– Հանգիստ կացեք, բան չկա, տատի,– ասացի ես։– Մտեք ահա այս խանութը, ես մի վայրկյանում կազատեմ ձեզ այդ պարոնից։

– Ո՛չ, ո՛չ, որդի,– վրա բերեց տատս։– Աստծու սիրուն, հետը չխոսես։ Աղաչում եմ, հրամայում եմ քեզ՝ չխոսես։

– Բայց ինչո՞ւ։ Չէ՞ որ դա մի լիրբ մուրացկան է։

– Դու չգիտես, թե ով է,– պատասխանեց տատս։– Նրա ով լինելը չգիտես և չես իմանում, թե ինչ ես ասում։

Կանգ առանք մի կառանցիկ դռան տակ. մարդն էլ կանգնեց։

– Մի՛ նայիր նրան,– ասաց տատս, երբ ես բարկանալով նրա կողմը շուռ եկա։– Գնա, սիրելիս, մի կառք վարձիր և սպասիր ինձ սուրբ Պողոսի գավթում։

– Ձեզ սպասե՞լ,– կրկնեցի ես։

– Այո՛, այո՛։ Ես կերթամ... նրա հետ կերթամ։

– Նրա՞ հետ, տատի։ Ա՞յդ մարդու հետ։

– Խելքս վրաս է,– պատասխանեց տատս։– Ինձ պետք է նրա հետ գնալ։ Մի կառք բեր ինձ համար։

Զարմանքս մեծ էր, բայց իրավունք չունեի հակառակելու այդ վճռական հրամանին։ Շտապով մի քանի քայլ հեռացա և մի ազատ կառք կանչեցի։ Դեռ կառքի աստիճանը չէր իջեցրել, որ տատս, չգիտեմ ինչպես, ներս թռավ, մարդն էլ հետևից։ Տատս իր քսակը ետ պահանջեց և նշան արեց, որ հեռանամ։ Շուռ եկա թե չէ՝ նա պատվիրեց կառապանին.

– Քշի՛ր։

– Դեպի ո՞ւր։

– Դեպի ուր կուզես։

Եվ կառքն իսկույն իմ մոտովն անցավ։

Հիշեցի, որ մր. Դիկը մի օր ինձ մի բան էր պատմել, որը ես նրա ցավագար երևակայության արգասիք էի համարել։ Այժմ չէի կասկածում, որ այսօրվա անծանոթը մր. Դիկի խորհրդավոր ասած մարդն է, թեև չէի կարող ըմբռնել, թե նա ի՞նչ տեսակ ազդեցություն ուներ տատիս վրա։ Եկեղեցու գավթում կես ժամի չափ սպասեցի, հետո միայն կառքը ետ եկավ և գավթի առջև կանգ առավ. տատս մենակ էր։

Նա դեռ այնքան չէր հանգստացել հուզմունքից, որ կարողանար այցելություն անել պաշտոնական անձանց։ Նրա խնդրանքով ես էլ կառք նստեցի և կառապանին պատվիրեցի հանդարտ քայլով պտույտներ անել։ Այնուհետև տատս ասաց.

– Սիրելի որդյակ, երբեք չհարցնես, թե այս օրվա դեպքն ինչ էր։ Ես կամենում եմ, որ այդ մասին ակնարկություն անգամ չանես։

Տատս այլևս ոչինչ չավելացրեց։ Արդեն ինքն իրեն բավական տիրած լինելով, նա ուզեց կառքից իջնել և քսակը ետ տվեց ինձ, որ կառապանի վարձը վճարեմ։ Ոսկիները քսակից անհետացել էին և միայն մանր դրամն էր մնացել։

Դոկտորների Համայնքը մտնելու համար պետք էր մի կամարակապ ցածր դռնով անցնել։ Մի քանի քայլ արած-չարած՝ զգացինք, որ քաղաքի աղմուկը հանկարծ լռեց՝ ասես թե մի դյութական զորությամբ։ Անցանք մի քանի մութ բակերով, անձուկ ու նեղ ճամփաներով և վերջապես հասանք մր-մր. Սպընլոյի ու Ջորկինսի գրասենյակը, որ առաստաղից էր լույս ստանում։ Այս սրբավայրի գավթում, ուր կարելի էր առանց հնչակը շարժելու ոտք դնել, երեք-չորս գրագիր հանգիստ նստած բան էին գրում։ Նրանցից մեկը՝ առանձին նստած մի նիհար մարդ, զենջեֆիլի գույնի կեղծամով, վերկացավ տատիս դիմավորելու և մեզ մր. Սպընլոյի սենյակը տարավ։

– Մր. Սպընլոն ատյանումն է, տիկին,– ասաց նիհարը։– Այսօր նիստ կա կամարների տակ[40]։ Կամարները շատ հեռու չեն, ես նրան իսկույն կանչել կտամ։

Մինչ կկանչեին մր. Սպընլոյին, տատս և ես սկսեցինք դիտել նրա սենյակը։ Սենյակի կահ-կարասին հնաձև ու փոշոտ էր։ Սեղանի կանաչ մահուդը մի խորշոմած պառավի նման արդեն գույնը գցել էր։ Վրան անթիվ թղթի ծրարներ էին դիզված՝ ինձ անհասկանալի վերնագրերով՝ «Ցուցումներ», «Ամբաստանություններ». Կոնսիստորի Ատյանին վերաբերող ծրարներ, Կամարների Ատյանին, մի քանիսը Արտոնյալ Ատյանին, մի քանիսը Ծովակալության Ատյանին, մի քանիսն էլ Համագումար Ատյանին։ «Այս ինչքան ատյաններ կան Դոկտորների Համայնքում,– մտածում էի ես ապշությամբ. – և որքան ժամանակ է հարկավոր, որ հնար լինի այդ բոլոր գործերի հետ ծանոթանալ»։ Կային և ահագին հատորներ «Երդմամբ հաստատված վկայություններ» մակագրությամբ, ամրակազմ ստվար գրքեր, յուրաքանչյուր դատի համար առանձին, որոնցից ոմանք տասը կամ տասներկու հատոր պատմությունն էին ամփոփում։ Մտածելով, թե այդ բոլորը որքան ծախս կպահանջի, ես պրոկտրի պաշտոնի մասին մի հաճելի գաղափար կազմեցի։ Եվ մինչ շարունակում էի հետզհետե աճող զվարճությամբ այդ և ուրիշ իրերի նայել, կողքի սենյակից շտապ քայլերի ձայն լսեցի, և ահա արագ ներս մտավ, սպիտակ մորթով եզերված սև պարեգոտը հագին, մր. Սպընլոն, որը իսկույն գլխարկը հանեց։

Մր. Սպընլոն մի փոքրիկ խարտիշահեր ջենտլմեն էր՝ պսպղուն կոշիկներով, օսլայած սպիտակ փողպատով ու կանգուն օձիքով։ Նրա զգեստը վերից վար պինդ կոճկված էր և իրանին լավ կպած, իսկ գանգուր **հուիսքրները** (կիսամորուք) ցույց էին տալիս, որ վայելուչ ձև ստանալու համար շատ ժամանակ են պահանջել։ Ժամացույցի ոսկե շղթան այնքան հաստ էր, որ ակամա մտածեցի, թե դա գրպանից հանողի ձեռքն էլ այնպես ջլուտ ոսկե ձեռք պիտի լինի, ինչպիսին կախված է լինում ոսկերիչների կրպակի վրա։ Մր. Սպընլոն այն աստիճան պինդ էր պրկված ու սեղմված, որ մեջքը հազիվ էր թեքում, և նստելուց հետո սեղանի թղթերը զննելիս ստիտված էր Պընչի (Punch)[41] նման ամբողջ մարմնով կըռանալ։

---

[40] Արդեն վերը նկատել ենք, որ Դոկտորների Համայնքը մի քանի առանձին ատյաններից է կազմված, որոնք են՝ ա) Court of Arches, բառացի թարգմանությամբ՝ Կամարների Ատյան. դա լոկ հոգև գործերով է զբաղվում. բ) Prerogative Court՝ Արտոնյալ Ատյան, որ կտակների առթիվ ծագող դատերն է քննում. գ) Consistory Court՝ Կոնսիստորի Ատյան, որը իսկապես Լոնդոնի արքեպիսկիպոսի դիվանն է և մյուս թեմական կոնսիստորներից ոչ մի բանով չի տարբերվում. դ) Court of Admiralti՝ Ծովակալության Ատյան, ծովային գործերը քննելու համար։ Այս դատարաններից յուրաքանչյուրն իր որոշ զբաղմունքն ունի, իր առանձին կանոններն ու կարգերը, սակայն որոշ օրերում Դոկտորների Համայնքի ավագ անդամներն ունենում են ընդհանուր ժողովներ՝ Common Hall of College. զանազան ատյաններից անցած ամենակարևոր դատական գործերը լուծելու համար։ Նիստը սովորաբար ընդհանուր կերուխումով է վերջանում, որին բոլոր անդամները մասնակցում են։

[41] Ֆրանսերեն՝ պոլիշինել, իտալերեն՝ պոլչինելլո. դա մի այպնակատակ դերասան է, միմոս, խեղկատակ կամ փայտեղեն խամաճիկ, որ դուրս է գալիս պաճուճապատանքի խաղերում։ Հ. Քաջունու

Տատս արդեն ներկայացրել էր ինձ մր. Սպընլոյին, որ սիրով ողջունել էր ինձ: Այժմ նա ասաց.

– Ուրեմն, մր. Կոպպերֆիլդ, դուք մտադիր եք մեր կոչմա՞նը նվիրվել: Ես պատահմամբ հաղորդեցի միս Տրոտուդին, երբ պատիվ ունեցա տեսնել նրան անցյալ օրը (վերստին մարմնի խոնարհում... դարձյալ Պընչ), թե մենք մի ազատ տեղ ունենք: Այն ժամանակ միս Տրոտուդը բարեհաճեց հայտնել ինձ, թե նա ունի մի որդեգրած եղբորորդի, որին առանձին խնամք է ընծայում և որին կցանկանար մի վայելուչ գործի դնել: Արդ կարծեմ այդ որդեգրի հետ պատիվ ունիմ խոսելու (դարձյալ Պընչ):

Ես գլուխ տվի ու ասացի, թե արդեն լսել եմ այդ ազատ տեղի մասին և հուսով եմ, որ դա ինձ դուր կգա: Ավելացրի, թե հակամետ եմ հավատալու, որ այդ պաշտոնը կսիրեմ, ուստի և տատիս առաջարկն անմիջապես ընդունել եմ, բայց չեմ կարող հաստատ ասել, թե սերս ո՞ր աստիճանի կհասնի, մինչև որ ավելի սերտ չծանոթանամ պաշտոնիս հետ, և թե ուրեմն մի վերջնական խոսք տալուց առաջ կցանկանայի փորձով ստուգել, արդյոք որքա՞ն այդ պաշտոնն իմ ուժերին ու ճաշակին հարմար կգա:

– Հարկավ, հարկավ,– ասաց մր. Սպընլոն:– Մենք սովորաբար մի ամիս ժամանակ ենք տալիս փորձի համար. որը սկզբնական կամ ընծայության ամիս է կոչվում Դոկտորների Համայնքի մեջ: Ես երջանիկ կլինեի երկու ամիս առաջարկել ձեզ... երեք ամիս... նույնիսկ անթիվ ամիսներ, սակայն ունեմ մի ընկեր, մր. Ջորկինսը:

– Իսկ ապահովագինը որքա՞ն է, սըր, կարծեմ հազար ֆունտ:

– Ապահովագինը կնիքի ու դրոշմի ծախսն էլ հաշված, հազար ֆունտ է,– պատասխանեց մր. Սպընլոն:– Ինչպես որ ասել եմ միս Տրոտուդին, ես շահասիրական հաշիվներով չեմ զբաղվում. այս տեսակետից ինձ նման մի ուրիշ մարդ հազիվ թե գտնեք, սակայն այս հարցի մասին մր. Ջորկինսն իր առանձին կարծիքն ունի, և ես ստիպված եմ մր. Ջորկինսի կարծիքը հարգել: Նրա ասելով՝ հազար ստեռլինգը մեծ բան չէ:

– Ինձ թվում է, սըր,– ասացի ես, շարունակ փափագելով ավելորդ ծախսից ազատել տատիս,– թե ձեր Համայնքում սովոր են՝ հենց որ մի ընդունված դիպիր[42] շատ օգտակար հանդիսանա ու պաշտոնին լիովին հմտանա (ես կարմրեցի, զգալով, որ գրեթե ինքս ինձ գովում եմ), սովոր են տալ նրան մի որոշ...

Մր. Սպընլոն ահագին ճիգ թափելով, իր գլուխը փողպատի միջից այնքան դուրս հանեց, որ կարողանա շարժել և առանց սպասելու «ռոճիկ» բառին, պատասխանեց.

– Ո՛չ: Չեմ կարող ասել, մր. Կոպպերֆիլդ, թե այդ խնդիրը ես ինքս ինչպես կվճռեի, եթե ազատ լինեի, բայց մր. Ջորկինսն անողոք է:

Արդեն սկսել էի սարսափել այդ ահարկու Ջորկինսից: Հետո, սակայն, համոզվեցի, որ նա մի հեզ ու բարի, լռակյաց մարդ է: Նրա պաշտոնն էր՝ ամենևին գրասենյակում չերևալ, այլ միայն թույլ տալ, որ իր անունը միշտ հիշեն, իբրև մի անզգա, շատ անողորմ ու քարասիրտ անձի անուն: Եթե գրագիրներից մեկն իր թոշակն ավելացնելու խնդիր հայտներ, նրան պատասխան կտային, թե այդպիսի բան լսել անգամ չի կամենա մր. Ջորկինսը: Եթե կլիենտներից մեկն իր պարտքը հապաղեր վճարել դատարանին, մր. Ջորկինսը կհրամայեր, որ իսկույն վճարի, և որքան էլ դյուրազգաց մր. Սպընլոյին այդ վճիռները դառն թվային, մր. Ջորկինսը

ճիշտ նկարագրությամբ՝ «անձն որ ի կատակերգութիւնս իտալականս ի ծաղր շարժէ զտեսողս, և լինի սապատողն և մեծորովայն, մեծաքիթ, ողնաբեկ, ագանելով հողաթափս մեծամեծս և հանդերձս գունագոյնս իբրև զհապիտս (arlequin): Այլ քան զայս առաւել զարմանալի է ի նմա այս, զիս հանէ ձայն նուրբ և կառաչող, փոքրիկ գործեաւ իւիք զոր ունի ի բերանի»- «Punch» է կոչվում և մի երևելի անգլերեն երգիծական լրագիր:

[42] Articbol Clerk. այդպես են կոչվում անգլիական դատարաններում թոշակավոր պաշտոնի համար ընդունված մարդիկ: Ծառայության մտնելիս նրանք վճարում են միանվագ պայմանավորված՝ Premium, որը մենք ապահովագիր թարգմանեցինք:

կիրամայեր, որ պարտապանը բանտարկվի։ Հրեշտականման մր. Սպընլոյի ձեռքն ու սիրտը միշտ բաց կլինեն, եթե այդ դիվային մր. Ջորկինսը չարգելեր։ Երբ ես հասակավոր մարդ դարձա, ուրիշ շատ տներ էլ տեսա, որոնք ճիշտ Սպընլոյի ու Ջորկինսի առևտրական սկզբունքներին էին հետևում։

Որոշեց, որ երբ կամենամ՝ այն օրն էլ սկսեմ փորձնական ամիսը, և եթե հարկ չկա, որ տատս մինչ այդ ամսի վերջը Լոնդոնում մնա, որովհետև պաշտոնի մեջ հաստատվելուս պայմանները կարելի կլինի և Դուվր ուղարկել՝ նրա ստորագրության համար։ Այսքան բան որոշելուց հետո մր. Սպընլոն համաձայնեց դատարանի զանազան մասերը ցույց տալ ինձ, որպեսզի ապագա ծառայությանս ասպարեզի հետ ծանոթանամ։ Ուրախությամբ ընդունեցի այդ հրավերը, և մենք դուրս ելանք, գրասենյակում թողնելով տատիս, որ չէր համարձակվում մեզ հետ գալ։ Եթե չեմ սխալվում, այս բոլոր պաշտոնական ատյանները, նրա կարծիքով, ուրիշ բան չէին, եթե ոչ ամեն մի րոպե պայթելու պատրաստ վառոդանոց։

Մր. Սպընլոն ինձ մի սալահատակ բակ տարավ, որ շրջապատված էր ահագին աղյուսաշեն տներով։ Դռների վրա գրված դոկտորների անուններից հետևություն արեցի, որ Ստրիֆորթի հիշած գիտնական փաստաբանների գրասենյակներն այստեղ կլինեն։ Բակից անցնելով ձախակողմյան մեծ ու մութ դահլիճը մտանք, որ նման էր մատուռի։ Դրա դիմացի մասն պայտաձև բեմի երկու կողմը, հին ու հանգիստ թիկնաթոռների վրա բազմաթիվ կարմրազգեստ ու կեղծամակիր պարոններ էին նստած. ահա դրանք էին վերոհիշյալ օրենսգետ դոկտորները։ Պայտաձև բեմի մեջտեղում, գրակալի սեղանի առջև, մի ալևոր ջենտելմեն էր բազմած, որին անշուշտ մի բուի տեղ կընդունեի, եթե թռչնանոցում տեսնեի։ Նա նախագահ դատավորն էր։ Պայտաձև կիսաշրջանի ներքևի մասում բեմից ներքև, բայց դահլիճի հատակից վեր, մի մեծ ու կանաչ սեղանի առջև նստած էին մր. Սըպնլոյին աստիճանակից պարոնները՝ նրա նման սպիտակ մորթով եզերված սևագույն պարեգոտ հագած։ Բոլորի օձիքն ընդհանարպես օսլայված էր և բոլորն էլ շատ հպարտ թվացին ինձ։ Բայց փոքր-ինչ հետո իմացա, որ սխալվել եմ, որովհետև երբ նրանցից երկուսը կամ երեքը վերկացան նախագահի հարցերին պատասխանելու, նրանց դեմքը ոչխարային հեզություն էր ցույց տալիս։ Հասարակության ներկայացուցիչները միայն երկու հոգի էին, այն է՝ վզին բրդե շալ փաթաթած մի տղա և հնոտի հագած մի պարոն, որ գրպանից թաքուն հաց հանելով ուտում էր. երկուսն էլ վառարանի մոտ տաքանում էին։ Ատյանի թմրեցուցիչ լռությունը միայն կրակի ճարճատյունով էր ընդհատվում և դոկտորներից մեկի ձայնով, որ հանդարտ ման էր գալիս օրենքների գրադարանում և իր գիտնական ուղևորության միջոցին մերթընդմերթ կանգ էր առնում, որ նյութ քաղի իմաստության անսպառ շտեմարանից։ Կարճ ասած՝ օրումս չէի տեսել մի այդքան հանգիստ, քնաբեր, զառամյալ հնադարյան ու ծանրամրափ ընկերություն, և զգում էի, որ դրա հետ գործ ունենալը միևնույն է, թե քնադեղ ընդունել։

Այս ապաստանի նիրհալից մթնոլորտը լիուլի վայելելուց հետո՝ մր. Սպընլոյին հայտնեցի, թե այս անգամ տեսածս բավական է, և մենք տատիս մոտ վերադարձանք, որը իսկույն տուն տարավ ինձ։ Ա՛հ, որքան մանուկ զգացի ինձ, երբ մր-մր. Սպընլոյի ու Ջորկինսի գրասենյակից դուրս գալիս նկատեցի, թե գրագիրներն ինչպես են իրար մշտում ու գրչածայրով ինձ ցույց տալիս։

Հասանք Լինկոլնս-Ինն-Ֆիլդ առանց մի նոր արկածի, եթե չհիշեմ մեր հանդիպումը մի մրգավաճառի սայլակ քաշող էշի հետ, որը դառն մտքեր հարուցեց տատիս մեջ։ Հյուրանոց հասնելուց հետո դարձյալ ապագայիս վերաբերյալ ծրագիրների մասին երկար խոսեցինք։ Եվ որովհետև ինձ հայտնի էր, որ տատս, Լոնդոնի հրդեհներից, գողերից ու սնունդից վախենալով, մի ժամ անգամ այդ քաղաքում հանգիստ մնալ չի կարող, խնդրեցի նրան իմ մասին անհոգ լինել և թողնել, որ գործերս մենակ կարգավորեմ։

– Այո, սիրելիս, արդեն մի շաբաթ է, որ Լոնդոնում եմ,– ասաց նա,– և Դուվր վերադառնալու ժամանակն է: Սակայն այստեղ մի փոքրիկ կահավորված բնակարան է վարձու տրվում, որ քեզ անշուշտ հարմար կգա:

Այս ասելով, տատս գրպանից հանեց լրագրից կտրված մի հայտարարություն, ուր ասված էր, թե Բուկինգեմ փողոցի Ադելֆիում մի կահավորված, դեպի գետը նայող պատուհաններով, զվարթ ու կոկիկ սենյակ է տրվում, որ կարող է շատ վայելուչ բնակարան լինել հատկապես դատարաններում ծառայող երիտասարդ ջենտլմենի համար: Գինը չափավոր է. կարելի է ամսով վարձել:

– Իմ ուզածն էլ հենց մի այդպիսի սենյակ է, տատի,– ասացի ես, ուրախանալով, որ ջենտլմենի պես պիտի առանձին բնակվեմ:

– Ուրեմն գնանք,– պատասխանեց տատս, անմիջապես գլխարկը դնելով, որը նոր էր հանել:– Գնանք տեսնենք:

Եվ գնացինք: Ծանուցման մեջ խնդրում էին մրս. Կրոպպին դիմել, և մենք մուտքի դռան հնչակը քաշեցինք: Անհրաժեշտ եղավ երեք-չորս անգամ հնչակը քաշել, մինչև որ մրս. Կրոպպին տեսնելու պատիվն ունեցանք: Նա մի հաստլիկ կին էր՝ կտավե շղարշազարդ հանդերձով և բրդե շրջազգեստով:

– Կարելի՞ է նայել վարձու տրվող սենյակները,– ասաց տատս:

– Ջենտլմենի համա՞ր,– հարցրեց մրս. Կրոպպն ու սկսեց բանալիներ որոնել գրպանում:

– Այո՛, թոռիս համար:

– Ես ցույց կտամ ձեզ, տիկին, ճիշտ մի այդպիսի ջենտլմենին հարմար բնակարան:

Վերև բարձրացանք:

Բնակարանն ամենավերին հարկումն էր. տատիս կարծիքով մի շատ կարևոր հանգամանք, որովհետև մոտիկ էր հրդեհից փախչելու դռանը և բաղկացած էր մի փոքրիկ կիսամութ նախասենյակից, ուր հազիվ կարելի էր բան տեսնել, մի դահլիճից ու մի ննջարանից: Կահ-կարասին արդեն մաշված ու գունաթափ էր, բայց ինձ համար դեռ բավական լավ. պատուհանի տակով իրոք անցնում էր գետը:

Ես անչափ գոհ էի, և մինչ մրս. Կրոպպն ու տատս մութ խցիկը քաշելով պայմանների մասին էին խորհրդակցում, ես մնացի դահլիճում բազմոցի վրա նստած, զվարճանալով ու փքվելով, որ այսպիսի ազնիվ բնակարանում պիտի ապրեմ: Մի դռնփակ վեճից հետո նրանք ետ եկան, և մրս. Կրոպպի ու տատիս կերպարանքից հաճությամբ տեսա, որ գործը հաջող է վերջացել:

– Այս կահ-կարասին վերջին վարձվորի՞ց է մնացել,– հարցրեց տատս:

– Այո՛, տիկին,– ասաց մրս. Կրոպպը:

– Ի՞նչ եղավ այդ վարձվորը:

Մրս. Կրոպպի հազը բռնեց, և նա հազիվ կարողացավ արտասանել.

– Հիվանդացավ, տիկին... ըհը՛, ըհը՛, ըհը՛, և մեռավ...

– Ի՛նչ: Ինչի՞ց մեռավ:

– Խմելուց, տիկին, և ծխից,– մտերմաբար հայտնեց մրս. Կրոպպը:

– Ծխի՞ց: Ի՞նչ ծուխ. վառարանի ծխի՞ց:

– Ո՛չ, տիրուհի. չիբուխի և սիգարի ծխից:

– Կարծեմ դա մի վարակիչ բան չէ, սիրելի Տրոտ,– նկատեց տատս ինձ դիմելով:

– Հարկավ ոչ,– ասացի ես:

Տատս տեսավ, որ շատ գոհ եմ բնակարանից և մեկ ամսով վարձեց, սակայն այն պայմանով, որ եթե կամենամ, ամբողջ տարին կարող եմ մնալ։ Մրս. Կրոպպը հանձն էր առնում լվացքս հոգալ և կերակուր եփել. մյուս պետքերս հոգացված էին, և մրս. Կրոպպը ջերմ սրտով խոստանում էր իր հարազատ զավակի պես պահել ինձ։ Ես հետևյալ օրը պիտի գայի, և մրս. Կրոպպն աստծուց գոհացավ, որ վերջապես գտնում է մեկին, ում կարող է իր բոլոր խնամքն ու հոգատարությունը ընծայել։

Վերադարձին տատս հաստատ հույս հայտնեց, թե նոր կյանք վարելիս ես կաշխատեմ մի ուժեղ կամք և ինքնավստահ բնավորություն ձեռք բերել – միակ բանը, որ դեռ իմ մոտ պակասում էր։ Միևնույն հույսը կրկնելով, կրկնեց և հետևյալ օրը, երբ խորհուրդ էինք անում մր. Ուիկֆիլդի մոտ մնացածս գրքերս ու շորերս բերելու մասին։ Այս առթիվ ես Ագնեսին մի երկար նամակ գրեցի, ուր պատմեցի նաև արձակուրդիս դեպքերը, և տատս, որ մյուս օրը Լոնդոնից մեկնելու էր, խոսք տվեց նամակս անձամբ նրան հասցնել։ Չերկարացնելու համար այսքան միայն կավելացնեմ, որ ամեն բան, ինչ որ ինձ պետք էր փորձիս ամսվա ընթացքում, տատս լիությամբ հոգաց։ Ստիրֆորթը, մեր հույսերին հակառակ, մինչև տատիս մեկնելու օրը ոչ մի անգամ չերևաց։ Վերջապես տատս ու Ջենետը միասին Դուվր գնացող դիլիժանսը նստեցին, հրճվելով իրենց մտքում այն ջարդի վրա, որ տալու էին թափառական էշերին։ Երբ որ կառքն անհետացավ, ես քայլերս դեպի Ադելֆիի թատրոնն ուղղեցի։ Հիշեցի այն օրերը, երբ շրջում էի դրա ստորերկրյա կամարների տակ։ Որքա՜ն փոփոխություն դրանից հետո, և երջանիկ փոփոխություն կյանքիս մեջ։

Դ. ԳԼՈՒԽ
Իմ առաջին գեղծումները

Ի՜նչ սքանչելի բան է սեփական դղյակ ունենալը. առջին անգամ բնակարանիս դուռը իմ հետևից փակելիս ես նույնը զգացի, ինչ որ զգացել էր Ռոբինզոն Կրուզոն, երբ նա իր բերդը մտավ և սանդուղքը վերև քաշեց։ Որքա՜ն հիանալի է՝ դռան բանալին գրպանդ դրած ազատ շրջել քաղաքում և գիտենալ, որ կարող ես ում կամենաս տուն հրավիրել և դրանով ոչ ոքի նեղություն չես տա, եթե ոչ քեզ։ Որքա՜ն ցանկալի է՝ առանց որևէ մեկին բան ասելու՝ տանից դուրս գնալ երբ ուզենաս ու վերադառնալ և զանգակի մեկ հարվածով գետնի խորքից դուրս կանչել մրս. Կրոպպին, որ շնչասպառ վերև է գալիս, երբ քեզ հարկավոր է... և կամ երբ ինքը բարեհաճի երևալ։ Այս բոլորն անտարակույս շատ լավ էր, բայց երբեմն տխուր ժամեր էլ էին լինում։

Առավոտները ես ուրախ էի, մանավանդ պայծառ եղանակին։ Արեգակի ճառագայթներն առույգ ու թարմ կյանք էին սփռում բնության մեջ, որը կեսօրին է՛լ ավելի էր խայտում, սակայն իրիկնադեմին կյանքը կարծես հրապույրը կորցնում էր։ Ճրագի լույսի տակ զվարթությունս կորչում էր. փափագում էի մի խոսակից ունենալ։ Կարոտում էի Ագնեսին, և նրա սրտակից մտերմության փոխարեն՝ մի ահռելի ամայություն գտնում իմ շուրջը։ Մրս. Կրոպպը մղոններով հեռու էր ինձնից։ Մտածում էի նախորդիս մասին, որը մեռել էր հարբելուց ու ծխելուց. լավ է ապրեր, քան իր մահով շփոթեր ինձ։

Երկու օր, երկու գիշեր անցնելուց հետո ինձ թվում էր, թե արդեն մի տարի եմ ապրել մենարանիս մեջ, և սակայն չարաչար զգում էի, որ մի ժամով անգամ չեմ ծերացել ու դարձյալ նույն երեխան եմ։

Ստիրֆորթը դեռ չէր երևում։ Գուցե հիվանդ էր։ Այսպես կարծելով, երրորդ օրը վաղ դուրս եկա Դոկտորների Համայնքից և որոշեցի Հայգեթ գնալ։ Մրս. Ստիրֆորթը շատ ուրախացավ ինձ տեսնելով և ասաց, թե իր որդին մի օքսվորդցի ընկերոջ հետ գնացել է մի ուրիշ ընկերոջ

այցելելու, որ Սենտ Էլբենսի թաղում է բնակվում, և հետևյալ օրը կգա։ Ստիրֆորթին այնքան էի սիրում, որ նախանձի նման բան զգացի դեպի նրա օքսֆորդցի ընկերը։

Տիկինը հրավիրեց ինձ ճաշի մնալ։ Մնացի, և որքան հիշում եմ՝ մեր ամբողջ օրվա խոսակցության առարկան միայն իր որդին էր։ Ես պատմեցի, թե Յարմաութում որքա՜ն նրան սիրեցին և որքա՜ն ես շնորհակալ եմ, որ նա ինձ ուղեկցում էր։ Միս Դարտլն ուշադիր ականջ էր դնում և իր խորհրդավոր ակնարկներով ու հարցումներով անդադար մեզ խանգարում էր։ Նա իր «Մի՞թե... իրա՞վ... իրա՞վ եք ասում» խոսքերը այնքան կրկնեց, որ ամեն բան, ինչ ուզում էր իմանալ, դուրս քաշեց ինձնից։ Նրա կերպարանքն ու ձևերը նույն էին մնացել, ինչպես էին առաջին անգամ նրան տեսնելիս, սակայն երկու կանանց ընկերությունը ինձ այնքան ախորժելի էր, որ ես գրեթե սիրո նման մի բան զգացի դեպի օրիորդը։ Երեկոյան, և մանավանդ երբ տուն էի գնում, մի քանի անգամ ինքս ինձ ասացի, թե չէի ձանձրանա Բուկինգեմի փողոցում, եթե նա հետս լիներ։

Առավոտյան, երբ Համայնքը գնալուցս առաջ սուրճ էի խմում (կարծեմ ժամանակ է զարմանալով հիշելու այստեղ, թե մրս. Կրոպպն իմ հաշվին որքա՜ն սուրճ էր առնում մի ջրալի ու անհամ խմիչք տալու համար), հանկարծ, ի մեծ ուրախություն իմ, Ստիրֆորթը ներս մտավ։

– Սիրելի Ստիրֆորթ,– գոչեցի ես։– Ո՞ւր էիր կորել։ Կարծում էի, թե էլ երբեք քեզ չեմ տեսնի։

– Հենց տուն վերադառնալուս երկրորդ օրը գրեթե բռնի առան տարան ինձ,– ասաց Ստիրֆորթը։– Սակայն, Դեյզի, այս ինչ ամուրիի կարգ ու սարք եմ տեսնում այստեղ։

Ես բնակարանս էլ, շտեմարանիս մութ խցիկն էլ պարծենալով ցույց տվի նրան, և նա շատ հավանեց։

– Սակայն գիտե՞ս, ա՛յ ծեր տղա,– ասաց նա։– Ես կցանկանայի միշտ այստեղ իջնել՝ Լոնդոն գալիս, մինչև որ ինձ դուրս չանես։

Այդ լսելով՝ ես հրճվեցի ու ասացի, թե նրան հավիտյան պետք կլինի սպասել, մինչև ես նրան դուրս անեմ։

– Բայց եկ մի փոքր նախաճաշ անենք,– ավելացրի ես, ձեռքս հնչակին մեկնելով։– Մրս. Կրոպպը սուրճ կպատրաստի, իսկ ես մի քանի շերտ ճարպ կտապակեմ հոլանդական վառարանի վրա։

– Ո՛չ, ո՛չ,– ասաց Ստիրֆորթը,– ձեռք մի՛ տուր հնչակին։ Ես խոստացել եմ նախաճաշել իմ բարեկամի հետ, որ սպասում է ինձ Կովընտ Գարդնի Piazza Hotel-ում։

– Ուրեմն գոնե ճաշի եկ։

– Հավատա, այդ էլ չեմ կարող։ Սիրով կգայի, բայց անկարելի է։ Պարտավոր եմ մնալ այն երկու ընկերներիս մոտ, վաղն առավոտ երեքս միասին մեկնելու ենք։

– Ուրեմն նրանց էլ ճաշին այստեղ բեր։ Գուցե նրանք չուզենա՞ն գալ։

– Ամենայն ուրախությամբ կուզենան,– պատասխանեց Ստիրֆորթը,– միայն թե քեզ զուր նեղություն տված կլինենք։ Լավ է, Դեյզի, դո՛ւ եկ մեզ հետ ճաշելու։

Լսել անգամ չուզեցի. ես մտադիր էի մի լավ տոնել նոր բնակարան վարձելս, որի համար գեղեցիկ առիթ էր ներկայանում։ Մենյակներիս մասին Ստիրֆորթի արած գովասանքից հետո փափագում էի սեղանիս լիությունն էլ ցույց տալ նրան. այս պատճառով դրական խոսք առա նրանից, որ երեկոյան ժամը վեցին նա իր երկու բարեկամների հետ ինձ մոտ կգա ճաշելու։

Ստիրֆորթի հեռանալուն պես՝ մրս. Կրոպպին կանչեցի և նրան համարձակ դիտավորությունս հայտնեցի։ Մրս. Կրոպպն ասաց. նախ՝ ինքը հայտնի բան է, անկարող կլինի մեր սեղանին սպասավորել, բայց ճանաչում է մի ճարպիկ երիտասարդի, որ գուցե կհամաձայնի հինգ շիլինգ վարձատրությամբ ու մի փոքրիկ պարգևով ծառայել։

Պատասխանեցի, թե անհրաժեշտ է կանչել նրան։ Երկրորդ՝ մրս. Կրոպպը ասաց, թե պարզ է, որ ինքը չի կարող միանգամից երկու տեղ գտնվել (այս էլ բնական թվաց ինձ), և թե ուրեմն պետք է մառանը լուսավորել և այնտեղ մի աղջիկ կանգնեցնել, որ ամանները լվանա։ Հարցրի, թե որքա՞ն է պետք այդ աղջկան վճարելու համար։ Մրս. Կրոպպի ասելով՝ տասնութ պենս վճարելուց քսակս հարկավ չի դատարկվի։ Իհարկե՝ ոչ. հետևաբար այս խնդիրն էլ լուծվեց։ Այնուհետև մրս. Կրոպպմ ասաց.

– Այժմ բուն ճաշին գանք։

Մրս. Կրոպպի խոհանոցի փուռը շինող վարպետը չափազանց անհեռատես մարդ է եղել, որովհետև այդ փռում ուրիշ ոչինչ չէր կարելի տապակել, բացի կոտլետից ու կարտոֆիլից։

– Իսկ ձուկ խաշելու պղնձին գալով,– ասաց մրս. Կրոպպը,– ինքներդ եկեք տեսեք՝ կա՞ թե չկա։

Քանի որ խոհանոցի գործերից ոչ մի հասկացողություն չունեի, ներքև իջնելս էլ ավելորդ էր. ես ի՞նչ կարող էի տեսնել։ Ուստի և ասացի.

– Դե ուրեմն ձուկը թողնենք։

– Բայց ինչո՞ւ ձկան տեղ ոստրե չլինի,– ասաց մրս. Կրոպպը, և որոշեցինք ոստրեներ գնել։

Ապա մրս. Կրոպպն առաջարկեց ճաշը հետևյալ տեսակներից կազմել. մի զույգ տապակած հավ՝ պատրաստի կերակուրներ վաճառող կրպակից. մի պնակ բիֆստեկ ու կանաչի՝ նույն կրպակից. գիրացրած խոճկորի պես մի թեթև բան ու մի պնակ երիկամունք՝ նույն կրպակից. մի կարկանդակ, և եթե կամենամ՝ մի բանդակ... դարձյալ միևնույն կրպակից։

– Դա ինձ հնարավորություն կտա,– ասաց մրս. Կրոպպը,– ամբողջ ուշադրությունս կարտոֆիլի վրա դարձնել, իսկ պանիրն ու թթուն ես ինքս կհոգամ։

Մրս. Կրոպպի առաջարկության համաձայն՝ ես ինքս կրպակում պատվերներ տվի։ Այնուհետև Ստրենդով անցնելիս՝ մսագործի խանութում մարմարի նման մի երկար ու կոշտ զանգված նշմարեցի «Կեղծ կրիա» մակագրով։ Ներս մտա և այդ զանգվածից մի կտոր գնեցի, որ ինչպես հետո առիթ ունեցա ստուգելու՝ տասնհինգ մարդու կբավականացներ։ Մրս. Կրոպպը երկար-բարակ նազերով հանձն առավ կրիան եփել, բայց երբ որ դա սեղանի վրա դրեց, Ստիրֆորթն ասաց, որ չորս հոգու էլ չի բավի։

Այս բոլորը հաջողությամբ հոգալուց հետո մրգեղեն գնեցի Կովընտ Գարդնի շուկայում և բավական շատ գինի պատվիրեցի գինեվաճառին։ Երեկոյան դեմ մառանիս հատակի վրա արդեն այնքան շշեր կային, որ (թեև երկու շիշ պակասում էր ի մեծ զայրույթ մրս. Կրոպպի) վրաս մի տեսակ սարսափ եկավ նրանց նայելիս։

Ստիրֆորթի ընկերներից մեկի անունը Գրենջր էր, մյուսինը՝ Մարկհըմ։ Երկուսն էլ կայտառ ու զվարթ տղաներ էին։ Գրեջրը Ստիրֆորթից մի քիչ մեծ էր. Մարկհըմն ավելի ջահել էր երևում և հազիվ քսան տարեկան կլիներ։ Նկատեցի, որ իր մասին խոսելիս՝ նա փոխանակ եզակիի առաջին դեմքը գործածելու, միշտ անորոշ մարդ դերանունն էր օգտագործում։

– Այստեղ մարդ կարող էր լավ ապրել, մր. Կոպպերֆիլդ,– ասաց Մալկհըմը, իր մասին ակնարկելով։

– Այո, դիրքը վատ չէ,– պատասխանեցի ես,– սենյակներն էլ հարմար են։

– Հուսամ, որ ախորժակներդ տանը չեք մոռացել,– ասաց Ստիրֆորթն ընկերներին։

– Իրավ՝ որ Լոնդոնը մարդուս ախորժակը գրգռում է,– ասաց Մարկհըմը։– Ամբողջ օրը մարդ սոված է և միշտ պատրաստ է ուտելու։

Երբ որ ճաշը մատուցեցին, ես տեսնելով որ հյուրերիս առջև ջահել եմ, և սեղանապետ լինել չեմ կարող, Ստիրֆորթին խնդրեցի, որ առաջին տեղը նա բռնի, իսկ ինքս նրա դեմ նստեցի։

Ամեն բան շատ լավ էր. գինին առատ, և Ստիրֆորթը այնպես զվարթ էր, որ մեր ճաշը հենց սկզբից մի խնջույքի բնույթ ստացավ: Բայց ես այնքան հյուրամեծար տանտեր չէի, ինչքան որ կցանկանայի լինել: Իմ աթոռը դռան հանդեպ էր, և ճարպիկ սպասավորն ուշադրությունս շեղում էր. նա անդադար հեռանում էր սենյակից, և հեռանալուն պես՝ նախասենյակի պատի վրա նրա ստվերն էր աչքիս ընկնում՝ բերանին դրած գինու շշով: Աղջիկն էլ ինձ հանգստություն չէր տալիս, ոչ թե նրա համար, որ ամանները վատ էր լվանում, այլ որովհետև չարաչար կոտրտում էր: Իբրև անչափ հետաքրքրասեր և մառանում մնալու համբերություն չունեցող աղջիկ, թեև նրան հրամայված էր այնտեղ մնալ, նա շարունակ ներս էր նայում և ամեն անգամ կարծելով, թե մենք իրեն նշմարեցինք, ետ էր ցատկում ու ցատկելիս հատակի վրայի ամանները ջարթոտում: Երևակայեցեք, թե այդ հապճեպ ցատկումներից ինչքան վնաս էր գալիս:

Սակայն այդ վնասները ես մոռացա, երբ սփոռոցը հավաքեցին ու մրգեղեն դրին սեղանի վրա: Այն ժամանակ հայտնի դարձավ, որ ճարպիկ սպասավորի լեզուն բոլորովին բռնվել է: Ես նրան ծածուկ հրամայեցի մրս. Կրոպպին ընկերանալ, աղջկան էլ՝ տան ստորին սահմանները տանել. դրանից հետո միայն կարելի եղավ մեր քեֆն անարգել վայելել:

Մի տարօրինակ զվարթություն տիրեց սրտիս. մտքիս մեջ անթիվ դեպքեր ու հիշատակներ արթնացան, և ես սկսեցի անչափ արագ բարբաջել: Մե՛կ ուրիշների և իմ կատակների վրա էի ծիծաղում, մե՛կ Ստիրֆորթին գինի լցնել հրամայում, մե՛կ խոստանում Օքսվորդ գնալ, մե՛կ խոսք տալիս ամեն շաբաթ ճիշտ այսպիսի խնջույք սարքել: Ի վերջո, Գրենջրի տուփից մի այնպիսի պտղունձ քթախոտ քաշեցի, որ ստիպված եղա մառան գնալ ազատ փռշտալու համար. փռշտոցն առնվազն տասը րոպե տևեց:

Այնուհետև սկսեցի շտապ-շտապ գինի լցնել և նոր-նոր շշեր ներս բերել, առաջ՝ քան սեղանի վրա եղածները դատարկեին: Ես Ստիրֆորթի կենացն առաջարկեցի: Ասացի, թե նա իմ ամենամոտ բարեկամն է, մանկությանս հովանավորը, երիտասարդությանս ընկերը: Ասացի, թե երջանիկ եմ, որ կարող եմ նրա կենաց բաժակը դատարկել: Ասացի, թե ես նրան մինչև կայնքիս վերջին շունչը երախտապարտ պիտի մնամ և անզոր եմ արտահայտել իմ հիացմունքը դեպի նա: Եվ խոսքս վերջացրեցի գոչելով.

– Կեցցե՛ Ստիրֆորթը: Աստված նրան երկար պահի: Հուռռա՛:

Երեք անգամ եռյակ ուռռա գոռացինք, հետո դարձյալ մի անգամ, էլի՛ մի անգամ, էլի՛ մի անգամ: Հետո ոտքի կանգնելով իմ բաժակը փշրեցի, նրա աջը սեղմեցի և ասացի (երկու բառով).

– Ստիրֆորթ, դու իմ կյանքի առաջնորդ աստղն ես:

Այս որ ասացի, հանկարծ ականջիս մի երգ հնչեց: Երգողը Մարկիզմն էր. նա երգում էր.

«Երբ մեր սիրտը տրտմալից
Ազատվում է վշտերից...»:

Ավարտելուց հետո, նա առաջարկեց մի բաժակ էլ «կնոջ» կենացը դատարկել: Ես ընդդիմացա և չուզեցի այդ առաջարկն ընդունել: Դա անպարկեշտ, անվայել ձև է, ասացի ես: Եթե կամենում եք իմ տանը իգական սեռի կենացը խմել, թույլ կտամ միայն «տիկինների» կենացը խմել: Ես սաստիկ տաքացա մանավանդ այն պատճառով, որ Ստիրֆորթն ու Գրենջրը կարծես իմ վրա ծիծաղում էին... կամ նրա վրա... թե երկուսիս վրա, չգիտեմ: Մարկիզմն ասաց, թե ոչ ոք մարդուս հրամայելու իրավունք չունի: Իսկ ես պնդում էի, թե ունի: Նա նկատեց, թե պետք չի մարդու վիրավորել, ես պատասխանեցի, թե համաձայն եմ և չեմ կամենա, որ իմ նվիրական հարկի տակ, ուր հյուրասիրության օրենքն է տիրում, մի մարդ մյուսին վիրավորի: Նա ասաց, թե մարդուս պատիվը չի ընկնի, եթե խոստովանի, որ ես մի լավ տղա եմ: Եվ ես իսկույն նրա կենացը առաջարկեցի:

Հյուրերից մեկն սկսեց ծխել: Բոլորն էլ սկսեցին ծխել: Ես էլ, սարսուռս զսպելով ծխեցի: Ստիրֆորթն ի պատիվ ինձ, մի ճառ արտասանեց: Սիրտս հուզվեց, և աչքերս արցունքոտվեցին: Ես շնորհակալ եղա և հույս հայտնեցի, թե ներկա ընկերությունը վաղն էլ ինձ մոտ ճաշելու շնորհ կանի, մյուս օրն էլ, ամեն օր էլ... ժամը հինգին, որպեսզի երեկոները միասին անցկացնենք ընկերաբար: Հանկարծ զգացի, որ անհրաժեշտ է մի առանձին բաժակ առաջարկել, և գոչեցի. «Տատիս կենացը, միս Բեթսի Տրոտուդի, որ աշխարհիս կանանց զարդն ու փայլն է»:

Մեզնից մեկն իր հրատապ ճակատը զովացնելու ու մաքուր օդ շնչելու համար ննջարանիս սառը պատուհանին հենվեց: Այդ ես էի: Եվ ես ասում էի ինքս ինձ. – «Ինչո՞ւ ծխեցիր, Կոպպերֆիլդ. միթե չգիտեի՞ր, որ ծխելը վնասակար է»: Մեկն անհանգիստ քայլեր անելով գնաց կանգնեց հայելու առջև: Այդ էլ ես էի: Հայելու մեջ դեմքս գունատ էր, աչքերս շաղված ու պղտոր, իսկ մազերս – միայն մազերս, ուրիշ բան չասեմ – բավական էին ցույց տալու, որ ես... հարբած եմ:

Մեկն ինձ ասաց. «Եկ, թատրոն գնանք, Կոպպերֆիլդ»: Ննջարանս կորել էր, հայելին անհետացել. դրանց փոխարեն մնացել էին մի երերուն սեղան, հնչող բաժակներ և մի լամպ, աջ կողմս՝ Գրենջրը, ձախ կողմս՝ Մարկհըմն և դիմացս՝ Ստիրֆորթը – բոլորն էլ մեգի մեջ էին նստած... բավական հեռու:

– Թատրո՞ն. ինչո՞ւ չէ: Գնանք թատրոն: Բայց կներեք, ես պիտի վերջինը դուրս գնամ,– և այս ասելով լամպը հանգցրի... որպեսզի հրդեհ չպատահի:

Մթությունից առաջ եկած շփոթության մեջ դուռը կորավ: Ես փնտրում էի նրան պատուհանիս վարագույրի ծալքերում: Ստիրֆորթը ծիծաղելով ձեռքիցս բռնեց ու դուրս տարավ ինձ: Սկսեցինք իջնել իրար հետևից: Սանդուղքի ստորին աստիճանների վրա մեկն ընկավ ու ներքև գլորվեց: Չգիտեմ ով ասաց, թե ընկնողը Դավիթ Կոպպերֆիլդն է: Այս բամբասանքի վրա սաստիկ զայրացա և պատրաստ էի հատուցում պահանջել ստախոսից, եթե չզգայի, որ իրոք փռված եմ շեմքի մոտ: Ուրեմն վերոհիշյալ նկատողությունն անհիմն չէր:

Այդ գիշեր Լոնդոնն անչափ միգապատ էր, և լապտերների շուրջը ահագին շրջանակներ էին երևում: Ասացին, թե անձրև է գալիս. իսկ ես զգում էի, որ ցրտում է: Մի լապտերի տակ Ստիրֆորթը վերարկուս թափ տվեց և գլխարկս հագցրեց, որ չգիտեմ որտեղի՞ց և ո՞վ բերեց, որովհետև լավ էի հիշում, որ նա առաջ գլխիս չէր: Այնուհետև Ստիրֆորթն ասաց.

– Ինչպե՞ս ես այժմ, Կոպպերֆիլդ. ամեն բան կարգին է, չէ՞:

Եվ ես պատասխանեցի.

– Կը-կ-կ-կ-արգին:

Մշուշապատ վանդակում նստած մի պարոն ինչ-որ մեկից փողը վերցրեց և խորշի անցքից վրաս նայելով, հարցրեց՝ մի՞թե ինձ համար էլ վճարված է: Նա կարծես վարանում էր (որքան կարողանում եմ մտաբերել այդ թռուցիկ վայրկյանը), ինձ էլ արդյոք տոմսակ տա՞ թե չտա: Շատ չանցած արդեն թատրոնի խեղդուկ վերնատանն ենք. բարձրունքից ծխաշունչ վիհին նայելով, ուր մի անորոշ բազմություն էր խռնված: Դիմացս մի լայն բեմ էր՝ փողոցից ավելի հարթ ու կոկ. ման են գալիս զանազան մարդիկ, մի ինչ-որ բան խոսելով, բայց ոչ շատ պարզ: Լույսը պայծառ է, մոմերն՝ անթիվ, երաժշտությունը՝ որոտաձայն: Տիկնայք էլ կան և էլ չգիտեմ ովքեր, ինչեր: Ամբողջ շինությունը երերում է ու լողում, մանավանդ երբ ճգնում եմ տարօրինակ ճոճումներն ըմբռնել:

Մեկի առաջարկությամբ որոշեցինք դահլիճի առաջին հարկն իջնել, ուր տիկնայք էին հավաքվում: Մի լավ հագնված ջենտլմեն՝ սղոցը ձեռքին, բազմոցի վրա թեք ընկած երևաց ինձ հայելու մեջ, ուր ես իմ ամբողջ պատկերն էլ նշմարեցի: Հետո ինձ մի օթյակ տարան, ուր նստելով սկսեցի խոսել մեկի հետ: Չորս կողմ մարդիկ «Լռություն» գոչեցին՝ չգիտեմ, թե ո՞ւմ. տիկնայք վրաս ծուռ-ծուռ նայեցին, և... ի՞նչ, ի՞նչ եմ տեսնում – միևնույն օթյակի մեջ առջևս

Ագնեսն է նստած, հետն էլ մի անծանոթ տիկին և մի պարոն։ Տեսնում եմ նրա դեմքը, այժմ հարկավ ավելի լավ, քան թե այն րոպեին. նա անասելի վշտակցությամբ և ապշությամբ է նայում ինձ։

– Ագնե՛ս,– ասացի ես կակազելով։– Երկնային հրեշտակ, Ագնե՛ս։

– Սուս, աղաչում եմ՝ լռեցեք,– պատասխանեց նա, բայց ինչո՞ւ, չհասկացա։– Դուք խանգարում եք մեր հարևաններին։ Լավ է՝ բեմին նայեք։

Նրա պատվերին համեմատ աչքերս ուշի-ուշով բեմին հառեցի որևէ բան հասկանալու համար, բայց իզուր։ Հետո նորից նայեցի Ագնեսին. նա օթյակի խորքն էր քաշվել ու ճակատը ձեռքով ծածկել։

– Ագնես,– ասացի ես,– հիվանդ հո չե՞ք։

– Այո՛, այո՛, Տրոտուդ, ուշք մի՛ դարձրեք վրաս,– պատասխանեց նա։– Շուտո՞վ տուն կերթաք։

– Շուտով տուն կերթամ,– կրկնեցի ես։

– Այո՛։

Հիմարաբար ուզում էի ասել, թե մտադիր եմ նրան սպասել և տուն տանել։ Կարծեմ մի այդպիսի բան դուրս տվի, որովհետև Ագնեսը երեսիս նայելուն պես միտքս հասկացավ ու կամացուկ ասաց.

– Գիտեմ, Տրոտուդ, որ ինձ կլսեք։ Լուրջ բան եմ ասում ձեզ։ Այս րոպեիս հեռացեք, գեթ իմ սիրուն, և ընկերներիդ խնդրեցեք, որ ձեզ իսկույն տուն տանեն։

Նրա ներկայությունն արդեն այնքան էր ազդել վրաս, որ չնայելով բարկությանս, ես սաստիկ ամաչեցի, վերկացա, գլուխ տվի նրան ու ասացի.

– Բարի՛ շր։

Այսինքն՝ բարի գիշեր։ Հետո օթյակից ելա և մի ակնթարթում ինձ ննջարանի մեջ գտա։ Ինչպե՞ս եղավ այդ, հայտնի չէ։ Ստիրֆորթն ինձ օգնում էր հանվել, իսկ ես նրան ասում էի, թե Ագնեսը քույրս է, և միևնույն ժամանակ աղաչում խցանահանը բերել մի նոր շիշ բանալու համար։

Մեկը պառկած է անկողնումս և ամբողջ գիշեր մի տենդային երազի մեջ միևնույն բաները շարունակ կրկնում ու բարբաջում է, մի ալեծուփ ծովի նման տատանվելով, որը բնավ չէր ուզում խաղաղվել։ Այս մեկը քիչ-քիչ ուշքի է գալիս, և այն ժամանակ ես զգում եմ, որ ներսս այրվում է, որ կոկորդս ցամաքել է, կաշիս տախտակի պես չորացել, լեզուս հրաշեկ երկաթի նման կարմրել և ափերս տաքացած թիթեղ դարձել, որ սառցով անգամ չէր կարելի զովացնել։

Օ՜հ, ի՛նչ տագնապ, ի՛նչ ամոթ և ի՛նչ կսկիծ զգացի ես առավոտյան զարթնելիս։ Սարսափելով մտածում էի, թե ո՞վ գիտի՝ երեկ ինչ հիմարություններ արած կլինեմ, որ ո՛չ մտաբերել կարող էի, ո՛չ էլ քավել։ Հապա Ագնեսի անջնջելի հայա՛ցքը։ Ի՞նչ կմտածեր նա իմ մասին։ Չէր կարելի մինչև անգամ տեսնել նրան և ներում խնդրել, որովհետև – օ՜հ, անասնական տխմարություն – չէի էլ իմանում, թե ինչո՞ւ էր Լոնդոն եկել և հատկապես որտեղ իջել։ Այս բոլորը չարաչար տանջում էր ինձ։ Զզվում էի իմ սենյակից, ուր տեղ էր գտել շվայտությունը։ Ծխի հոտը, շշերի տեսքը, փշրված բաժակների պատկերը – ի՛նչ գարշելի բան էր։ Գլուխս ցավից պայթում էր և չէի կարողանում ո՛չ վերկենալ, ո՛չ դուրս գնալ՝ օդ շնչել։

Զարհուրելի էր այդ օրվա երեկոն։ Մտքովս անցավ, թե ե՛ս էլ սենյակիս նախկին բնակչի շավիղով եմ գնում, ե՛ս էլ նրա պես թշվառ վախճան պիտի գտնեմ։ Պատրաստ էի Դուվր թռչել և ամեն բան տատիս պատմել։ Եվ երբ մրս. Կրոպպը ներս մտավ, մի պնակ երիկամունք ու թթու վարունգ բերելով, և հայտնեց, թե երեկվա քեֆից միայն այդ է մնացել, ուզում էի նրա վզովը փարվել ու գոչել. «Օ՜հ, մրս. Կրոպպ, մրս. Կրոպպ, ձեր վարունգն ու երիկամունքը ինչի՞ս են պետք։ Ինչո՞ւ եք հիշեցնում ինձ մեր երեկվա շվայտության մնացորդը։ Օ՜հ, ես

անչափ թշվառ եմ»: Սակայն չնայելով հուսահատական վիճակիս, ես նույն րոպեին զսպեցի ինձ, որովհետև մրս. Կրոպպը այնպիսի կին չէր, որի հետ կարելի լիներ սրտաբաց խոսել. ուստի ճառս էլ չասված մնաց:

Ե. ԳԼՈՒԽ
Բարի և չար հրեշտակներ

Մի ամբողջ օր գլխացավ, ստրջանք ու նողկանք զգալուց հետո, նույնիսկ առանց մտաբերելու ողբալի ճաշկերույթի ամսաթիվը, որ կարծես թե հսկայական տիտանների մի ահագին լծակով դեպի հեռավոր անցյալն էր տարվել, հետևյալ առավոտյան, մինչ ուզում էի դուրս գնալ, մի մարդ տեսա, որ ձեռքին մի տոմսակ բռնած՝ աստիճաններով բարձրանում էր: Նա ամենևին չէր շտապում, սակայն հենց որ նշմարեց, թե ես նայում եմ իրեն սանդուղքի գլխից, քայլերը արագացրեց և շնչասպառ մոտեցավ ինձ, իբր թե վազելով եկած լիներ:

– S. Կոպպերֆիլդ, Էսքուայր[43],– ասաց գրաբերը, ձեռքը գլխարկին տանելով:

Ես չվստահացա ինձ վերագրել այդ պատվանունը. այն աստիճան շփոթվել էի, ենթադրելով, թե նամակն Ագնեսից է: Բայց և այնպես մարդուն ասացի, թե S. Կոպպերֆիլդ Էսքուայրը ես եմ. նա նամակն իսկույն ինձ տվեց և ասաց, թե խնդրել են պատասխանել: Ես նրան սանդուղքի վրա թողի՝ պատասխանին սպասելու, և ներս մտա: Սիրտս այնպես արագ էր խփում, որ նամակի ծրարը դեռ չբացած՝ սեղանիս վրա դրի, որ փոքր-ինչ հանգստանամ, հասցեի հետ ծանոթանամ. դրանից հետո միայն կնիքը կոտրեցի:

Դա մի հիանալի մտերմական նամակ էր, որի մեջ թեթև ակնարկ էլ չկար այն մասին, թե ինչպես էի վարվել թատրոնում: Ահա ամբողջ բովանդակությունը. «Սիրելի Տրոտուդ: Ես հորս գործակալ մր. Ուատր-բրուկի տանն եմ իջել՝ Էլիի հրապարակ, Հոլբորն: Չէ՞իք կամենա ինձ տեսնել: Երբ էլ ժամադրեք, կսպասեմ ձեզ: Միշտ ձեզ անձնվեր՝ Ագնես»:

Մի վայելուչ պատասխան գրելու համար, այնքան ժամանակ գործ դրի, որ չգիտեմ նամակաբերն ի՞նչ մտածեց. ո՞վ գիտի կարծեց, թե ես նոր եմ գրել սովորում: Առնվազն հինգ-վեց թերթ մրոտեցի մեկը մյուսի հետևից: Մեկն այսպես էր սկսվում. «Սիրելի Ագնես, արդյոք հուսա՞մ, որ կհաջողվի ինձ ձեր մտքից ջնջել այն զզվանքը...» Այս սկիզբը դուր չեկավ ինձ, և թերթիկը պատռեցի: Նորը սկսեցի. «Արդեն Շեքսպիրն ասել է, սիրելի Ագնես, թե մարդու առաջին թշնամին իր լեզուն է...» Այս մարդը Մարկհըմին հիշեցրեց ինձ, և գրիչս առաջ չգնաց: Հետո փորձեցի ոտանավոր գրել: Առաջին տողը այսպես էր.

«Օ՜հ, սպասում եմ անհամբեր...»:

Սակայն երկրորդ տողը միշտ վերջանում էր՝ նոյեմբեր կամ դեկտեմբեր, որը անճոռնի էր դուրս գալիս... և երկար ջանքերից հետո՝ վերջապես հետևյալը գրեցի արձակ ոճով. «Սիրելի Ագնես: Ձեր տոմսակը ձեր հոգու պատկերն է: Սրանից ավել ի՞նչ գավասանք տամ նրան: Կլինեմ ձեզ մոտ ժամը չորսին: Ձեզ անձնվեր, վշտագին S. Կ.»:

Գրաբերը հեռացավ այս նամակով, որին պատրաստ էի քսան անգամ հետ կանչել մեկ ուրիշը գրելու համար, բայց արդեն ուշ էր:

Եթե Դոկտորների համայնքի օրենսգետ անդամներից մեկը գեթ կիսով չափ այն հոգեկան տագնապը կրեր, որը ես այդ սոսկալի օրը կրեցի, անշուշտ նա իր մեղքերից շատը կքավեր:

---

[43] Esquire — զինակիր, պարոն, տեր: Այս պատվանունը տալիս են ասպետների, կոմսերի, բարոնների որդիներին, բարձրաստիճան պաշտոնյաներին, դատավորներին, անվանի գիտնականներին, կալվածատերերին և այլն:

Թեև ես երեքուկեսին դատարանից հեռացա և հինգ րոպեից հետո գտնվում էի մր. Ուատրբրուկի տան մոտ, բայց որոշված ժամից արդեն մի քառորդ անցել էր, երբ համարձակվեցի դռան զանգը հնչեցնել։

Մր. Ուատրբրուկի հաստատության ընթացիկ գործերը տան ներքնի հարկում էին կատարվում, իսկ նուրբ գործերը, վերևում։ Ինձ հրավիրեցին մի կոկիկ, բայց անձուկ դահլիճ։ Ագնեսը այնտեղ էր նստած և մի քսակ էր հյուսում։

Այդ բարեսիրտ ու հեզ էակին տեսնելուն պես՝ Կենտրբըրիում անցկացրած աշակերտությանս անմեղ օրերը հիշեցի, հիշեցի և թատրոնում լկտիություն անող հարբած ու տխմար երիտասարդին, և այնպիսի ամոթ, այնպիսի զղջում ու ստրջանք զգացի, որ սկսեցի երեխայական բաներ անել։ Չեմ ուրանում, լաց էլ եղա։ Արդյոք լա՞վ էր, որ այդպես արի, թե դա մի ծիծաղելի բան էր՝ մինչև այսօր էլ չգիտեմ։

– Եթե, Ագնես, այն դրության մեջ ինձ տեսնողը դո՛ւք չլինեիք, այլ մի ուրիշ մարդ,– ասացի ես, դեմքս շուռ տալով,– այսքան չէի մորմոքվի։ Բայց որովհետև հատկապես դո՛ւք տեսաք, լավ էր որ իսկույն մեռնեի։

Նա իր աջը թևիս դրեց... այդ հպումի մեջ մի բարերար զորություն կար. վիշտս փարատվեց, սիրտս զվարթացավ, և ես նրա աջը ջերմ շնորհակալությամբ համբուրեցի։

– Նստեցեք, Տրոտուդ,– ասաց Ագնեսը մտերմաբար,– և մի՛ տրտմեք։ Եթե ինձ հավատարմություն չընծայեք, էլ ո՞ւմ պիտի հավատաք և ո՞ւմ առջև ձեր սիրտը բանաք։

– Ա՛հ, Ագնես,– գոչեցի ես։– Դուք իմ բարի հրեշտակն եք։

Նա գլուխը շարժեց և կարծեմ տխրությամբ ժպտաց։

– Այո՛, Ագնես, իմ բարի՛ Ագնես։ Դուք միշտ իմ պահապան հրեշտակն եք եղել։

– Այդպե՞ս է, Տրոտուդ, թե այդպես չէ,– պատասխանեց նա,– բայց կցանկանայի մի բանից զգուշացնել ձեզ...

Ես նայեցի նրա երեսին և գրեթե հասկացա, թե ինչ է ուզում ասել։

– Զգուշացնել ձեզ չար դևից,– ասաց Ագնեսը, աչքերիս նայելով։

– Սիրելի Ագնես, միթե Ստիրֆորթի՞ն եք ակնարկում...

– Այո՛, Տրոտուդ։

– Ուրեմն, Ագնես, դուք շատ անարդար եք դեպի նա։ Նա՞ է չար դևը, որ միշտ իմ բարի պահապանն է, իմ առաջնորդը, իմ ընկերը։ Ո՛չ սիրելի Ագնես, ձեր ազնիվ սրտին վայել չէ այդպես խիստ դատապարտել նրան լոկ թատրոնի գիշերվա արարքիս համար։

– Միայն դրա համար չէ, որ դատապարտում եմ նրան,– հանգիստ ձայնով պատասխանեց Ագնեսը։

– Հապա ի՞նչ բանի համար եք դատապարտում նրան։

– Շատ բաների, որոնք ինքնըստինքյան չնչին են, բայց միասին վերցրած՝ չնչին չեն։ Դատապարտում եմ մասամբ հիմք ընդունելով ձեր պատմածները նրա մասին, մասամբ էլ այն ազդեցությունը, որ նա ունի ձեր վրա։

Ագնեսի քաղցրիկ ձայնը միշտ շոշափել էր սրտիս մի լարը, որ միայն նրա հնչմանն էր արձագանք տալիս։ Այժմ այդ ձայնը հուզմունքից դողալով՝ սրտիս խորքն էր թափանցում և նվաճում ինձ։ Ագնեսը լռեց և աչքերը ձեռագործին հառեց. բայց ես ակնապիշ նայում էի, կարծես թե շարունակելով լսել նրան, և Ստիրֆորթի պատկերը հակառակ սիրույս դեպի նա, հետզհետե նսեմանում էր մտքիս մեջ։

– Իմ վարմունքն այս դեպքում անշուշտ համարձակ է,– ասաց Ագնեսը, նորից աչքերը բարձրացնելով։– Ես մի մեկուսացած կյանք եմ վարում և աշխարհի հետ այն աստիճան ծանոթ չեմ, որ իրավունք ունենամ վստահորեն ձեզ խորհուրդ տալ կամ էլ խստիվ դատապարտել ձեր ընկերոջը։ Սակայն, Տրոտուդ, ես գիտեմ, թե վստահությանս պատճառն ի՞նչ է։ Դա մեր մանկության հիշատակն է. մեր հին մտերմությունը, որը թույլ չի տալիս ինձ չհետաքրքրվել այն բոլորով, ինչ որ ձեզ է վերաբերում։ Ահա այստեղից է առաջ գալիս իմ համարձակ վստահությունը։ Ես հավատացած եմ, որ ասածս ճշմարիտ է, և աներկբա եմ այս մասին։ Մի ներքին ձայն ինձ ասում է, որ դուք մի վտանգավոր ընկեր եք ճարել։

Դարձյալ նայում էի Ագնեսին, դարձյալ ականջ դնում նրա ձայնին, թեև նա լուռ էր, և նորից Ստիրֆորթի պատկերը, թեև դեռ սրտումս կենդանի, մի սևաթույր ամպով էր ծածկվում։

– Ես այնքան անմիտ չեմ,– ասաց Ագնեսը, վերստին իր խոսելու սովորական եղանակն ընդունելով,– որ ձեզնից պահանջեմ իսկույն փոխել մի զգացում, որ արդեն համոզում է դարձել ձեզ համար, նամանավանդ մի զգացում, որ արմատացած է ձեր դյուրահավատ սրտի մեջ։ Բնավ չեմ ուզում, Տրոտուդ, եթե մի օր ինձ հիշելու լինեք... այսինքն,– այստեղ նա ժպտաց, որովհետև ես ուզում էի իր խոսքը կտրել, և նա հասկացավ, թե ինչո՞ւ – ամեն անգամ ինձ հիշելիս՝ հիշեցեք և այն, ինչ որ ասացի։ Կներե՞ք ինձ։

– Կներեմ, Ագնես, հենց որ սկսեք արդարադատ լինել Ստիրֆորթի նկատմամբ և նրան այնպես սիրեք, ինչպես որ ես եմ սիրում։

– Եվ ոչ առա՞ջ,– հարցրեց Ագնեսը։

Ստիֆորթի անունը տալուն պես նկատեցի, որ Ագնեսի երեսի վրայով մի թեթև ստվեր անցավ. սակայն նա իսկույն ժպիտով փոխարինեց իմ ժպիտը, և մենք շարունակեցինք առաջվա մտերմությամբ զրուցել։

– Իսկ դուք, Ագնես, ե՞րբ կներեք իմ թատրոնի վարմունքը։

– Երբ որ նրան մտաբերեմ,– պատասխանեց Ագնեսը։

Նա ուզում էր խուսափել այդ մասին խոսելուց, բայց ես չհանգստացա, մինչև որ չպատմեցի խայտառակ երեկոյի դեպքերը, որոնց շղթայի մեջ թատրոն գնալս միայն վերջին օղակն էր, և այս խոստովանությունը մեծ թեթևություն տվեց ինձ։ Ես ուրախ էի մանավանդ այն բանի համար, որ առիթ ունեցա շնորհակալությամբ հիշելու Ստիրֆորթի խնամքն իմ մասին, որը վայելել էի մի այնպիսի ժամանակ, երբ ես ինքս չէի կարող հոգալ իմ մասին։

– Տեսեք հա, Տրոտուդ,– ասաց Ագնեսը, խոսակցության նյութը փոխելով,– չմոռանաք, որ խոսք եք տվել ոչ միայն ձեր վշտերն ու ցավերը պատմել ինձ, այլև սիրային հանդիպումները։ Պարզ ասացեք, ո՞վ է հաջորդել ձեր սրտում ավագ միս Լարկինսին։

– Ոչ ոք, Ագնես։

– Մի՞թե,– ասաց Ագնեսը, ժպտաց ու մատով սպառնաց ինձ։

– Ոչ ոք, Ագնես, ազնիվ խոսք։ Իրավ է՝ կա մի օրիորդ մրս. Ստիրֆորթի տանը, մի շատ խելացի օրիորդ... միս Դարտլը... որի հետ սիրում եմ զրուցել, բայց ամենևին չեմ պաշտում նրան։

Ագնեսը դարձյալ ծիծաղեց իր նրբամտության վրա և ասաց, որ եթե ես միշտ նրա առջև սրտաբաց լինեմ, նա մի բուռն սիրահարությունների մի փոքրիկ ցուցակ կպահի, յուրաքանչյուրի ծագումը, տևողությունն ու վախճանը նշանակելով, թագավորների ու թագուհիների այն ցանկի նման, որը դրվում է Անգլիայի պատմության մեջ։ Հետո հարցրեց, արդյոք Ուրիասին չե՞մ տեսել։

– Ուրիաս Հիպի՞ն,– ասացի ես։– Ոչ։ Մի՞թե նա Լոնդոնումն է։

– Այո, և ամեն օր ներքևի հարկի գրասենյակն է գալիս,– հաստատեց Ագնեսը։– Նա ինձնից մի շաբաթ առաջ է Լոնդոն եկել, և կարծեմ, Տրոտուդ, մի անախորժ գործով։

– Որը, ինչպես տեսնում եմ, անախորժություն է տալիս ձեզ,– նկատեցի ես։– Ի՞նչ գործ է արդյոք։

Ագնեսը ձեռքերը ծալեց և իր խոհուն, սիրուն աչքերը հառելով ինձ, ասաց.

– Նա կարծեմ մտադիր է ընկերանալ հայրիկիս։

– Ի՞նչ, Ուրիա՞սը, այն քծնող ու գարշելի արարա՞ծը,– գոչեցի ես սրտմտությամբ։– Նա այդպիսի հավակնություն ունի, և դուք նրան չե՞ք դիմադրել, չե՞ք մտածել, թե ինչ հետևանք կարող է ծագել, այդ բանից։ Դուք, Ագնես, պետք է հայրիկի հետ խորհրդակցեք և զգուշացնեք նրան չարիքից։ Եվ որքան շուտ, այնքան լավ։

Ագնեսը, շարունակ ինձ նայելով, հուզմունքիս վրա ժպտաց և պատասխանեց.

– Հիշո՞ւմ եք մեր վերջին խոսակցությունը հայրիկիս մասին։ Փոքր-ինչ հետո... և կարծեմ երկու կամ երեք օր չանցած... նա ինքն առաջին անգամ ինձ հայտնեց, ինչ որ հաղորդում եմ ձեզ այս րոպեիս։ Ցավալի էր տեսնել, թե ինչպես էր տանջվում, մինչ աշխատում էր ցույց տալ ինձ, թե իր ազատ կամքովն է գործ տեսնում, այլ ոչ թե մեկ ուրիշի ստիպումով։

– Բայց ո՞վ կարող է ստիպել նրան։

– Ուրիասը հաջողացրել է,– ասաց Ագնեսը փոքր վարանելուց հետո,– մի անհրաժեշտ մարդ երևալ հորս։ Նա խորամանկ է և աչալուրջ։ Նա տեսնում է հորս թուլությունը, և իր օգտին ծառայեցնում։ Վերջապես, եթե ուզում եք ամեն բան իմանալ, իմացե՛ք, Տրոտուդ, որ հայրիկս նրանից վախենում է։

Պարզ տեսա, որ Ագնեսը կարող է շատ բան ասել, շատ բան գիտի և կամ թե գուշակում է, սակայն հորը խնայելով, չի ուզում հայտնել։ Ավելորդ համարեցի հարցերով հուզել նրան։ Զգում էի, որ նենգությունն արդեն վաղուց էր պատրաստված. հավատացած էի, որ գործը վաղ թե ուշ մի այդպիսի ելք պիտի ստանար։ Բայց լուռ մնացի։

– Ուրիասի ազդեցությունը հորս վրա ահագին է,– ասաց Ագնեսը։– Նա մեծ խոնարհություն ու երախտագիտություն է ցույց տալիս... և գուցե անկեղծորեն. բայց և այնպես նա մի զորեղ ազդեցություն ունի, որը վախենում եմ, թե շատ է ի չարը գործ դնում։

– Ուրիասը շուն է,– գոչեցի ես և առժամանակ սիրտս մի քիչ հովացրի։

– Հորս խոստովանությունից փոքր առաջ,– շարունակեց Ագնեսը,– Ուրիասն ասել էր նրան, թե մտադիր է հեռանալ, թեև շատ ցավում է, բայց ստիպված է հեռանալ, որովհետև ավելի շահավետ գործերով է զբաղված։ Նա ուրիշ ելք չգտավ, բացի Ուրիասին ընկերակից անելուց, թեև գարշում, ամաչում էր այդ քայլից։

– Իսկ դուք, Ագնես, ի՞նչ արիք։

– Այն արի, Տրոտուդ, ինչ որ արդար համարեցի,– պատասխանեց Ագնեսը։– Զգալով, որ հորս հանգստության համար այդ զոհաբերությունն անհրաժեշտ է, համաձայնեցի։ Ես ասացի, թե այդ քայլով նա իր բեռների գեթ մի մասից կազատվի... Երանի՛ թե հույսս արդարանա... և ես ավելի առիթ կունենամ նրա հետ միասին լինելու։ Օ՛հ, Տրոտուդ,– գոչեց Ագնեսը, արտասուքը թաքցնելու համար իր երեսը ծածկելով,– ինձ թվում է, թե փոխանակ մի գորովալի դստեր նման հորս սփոփելու՝ թշնամու պես եմ վարվում նրա հետ։ Ես գիտեմ, թե նա որչա՛փ է փոխվել ինձ սիրելու պատճառով. գիտեմ թե որչափ սահմանափակել է իր բարեկամների ու գործերի շրջանը, որպեսզի միայն իմ վրա կենտրոնացնի իր ամբողջ սիրտն ու հոգին։ Գիտեմ, թե որքան զրկանք ու նեղություն է կրել իմ սիրուն։ Միայն ի՛մ մասին մտածելով, նա իր կյանքը մաշել է, ուժերը սպառել, իր հանգիստը կորցրել։ Օ՛հ, երանի թե

կարողանայի ուղղել այս բոլորը, փրկել նրան այն անկումից, որին ես եմ անգիտաբար մատնել նրան։

Մինչև հիմա Ագնեսի լաց լինելը չէի տեսել։ Տեսել էի, այո՛, նրա արտասուքը, երբ վերադառնում էի ուսումնարանից, մի որևէ մրցանակ բերելով. տեսել էի նրա աչքերում արտասուքի կաթիլներ, երբ վերջին անգամ խոսում էինք իր հոր մասին, նկատել էի նմանապես, որ մեկնելուս օրը ինձնից հրաժեշտ տալիս նա շուռ էր տվել իր քաղցրիկ դեմքը՝ արտասուքը թաքցնելու համար։ Բայց դեռ ոչ մի ժամանակ այսպես դառը հեկեկալիս չէի տեսել։ Բոլորովին այլալվելով, ես չկարողացա ուրիշ բան ասել, քան այս անշնորհք խոսքերը. «Լաց մի՛ լինի, Ագնես։ Լաց մի՛ լինի սիրելի քույրիկս»։

Սակայն Ագնեսը բնավորությամբ ու կամքով ինձնից ավելի ուժեղ էր (այժմ ես այդ լավ գիտեմ, թեև գուցե այն ժամանակ չգիտեի), և թախանձանքիս կարոտ չէր։ Նրա երեսի չքնաղ ու պայծառ անդորրությունը, որի նմանը ոչ մի կնոջ դեմքի վրա չեմ տեսել, վերադարձավ։ Թեթևասահ ամպն այդպես է անցնում, որպեսզի կապույտ երկինքն ավելի ջինջ երևա։

– Հավանական է, որ երկար միասին չմնանք,– ասաց Ագնեսը։– Այս պատճառով շտապում եմ խնդրել ձեզ, Տրոտուդ, հաշտվեցեք Ուրիասի հետ։ Մի՛ մերժեք նրան։ Որքան էլ ձեզ ատելի լինի (այդ տեսնում եմ ձեր աչքերից), տհաճություն ցույց մի՛ տվեք։ Նա գուցե արժանի չէ, որ իր հետ այդպես վարվեք. չէ՞ որ նրա վատության մասին ոչ մի հաստատ բան չգիտենք։ Համենայն դեպս՝ նախ հայրիկիս և իմ մասին մտածեցեք։

Ագնեսը դեռ իր ասելիքը չէր ավարտել, երբ սենյակի դուռը բացվեց և առագաստանավի նման մրս. Ուատրբրուկը ներս սուրաց. նա մի հա՞ստ տիկին էր... թե՞ շատ լայն զգեստ էր հագել, ճիշտը՝ չգիտեմ, որովհետև անկարելի էր իմանալ, թե ո՞րն էր զգեստ, ո՞րը՝ տիկին։ Աղոտ կերպով հիշեցի, որ տեսել եմ նրան թատրոնում, ասես թե մի մոգական լապտերի դժգույն լույսով. իսկ նա կարծեմ իսկույն նեթ ճանաչեց ինձ և գուցե կասկածում էր, արդյոք այժմ էլ հարբած չե՞մ։

Հետզհետե ստուգելով, որ զգաստ եմ, ուշքս վրաս է և մի համեստ ջենտլմեն եմ, մրս. Ուատրբրուկը ներողամիտ նայեց ինձ և հարցրեց նախ՝ հաճա՞խ եմ զբոսնում պարտեզներում, և երկրորդ՝ շուտ-շուտ եմ լինում հասարակության մեջ։ Երկու հարցին էլ բացասական պատասխան տալուս համար՝ կարծես նորից նրա աչքում վարկս կորցրի. բայց այս հանգամանքը նա վայելչաբար թաքցրեց և հրավիրեց ինձ ճաշի գալ իր մոտ հետևյալ օրը։ Շնորհակալությամբ ընդունեցի նրա հրավերը և հրաժեշտ տվեցի կանանց։ Դուրս գալիս մտա գրասենյակը Ուրիասին տեսնելու։ Նա այնտեղ չէր. ես մի այցետոմս թողի։

Հաջորդ օրը, ճաշի ժամին, մր. Ուատրբրուկի տան դուռն արդեն բաց էր։ Ներս մտնելուս պես, տապակած գառան գոլորշու մեջ սուզվեցի, որից հետևեցի, թե հրավեր ստացողը միայն ես չեմ։ Սանդուղքի ներքևում որպես բարապան կանգնած էր այն տղան, որը երեկ նամակ էր բերել Ագնեսից։ Այժմ նրա պաշտոնը հյուրերի անունը ներսի սպասավորին հայտնելն էր։ Չնայած այժմ նա լիվրեյով էր ու փոխված, ես նրան իսկույն ճանաչեցի։ Իմ անունն էլ քաղաքավարի հարցրեց, իբր թե չգիտեր, թե ով եմ ես. ես էլ ասացի, ցույց տալով, իբր թե նա էլ ինձ բոլորովին անծանոթ է...

Մր. Ուատրբրուկը մի միջահասակ ջենտլմեն էր՝ կարճ վզով ու լայն օձիքով. միայն սև քիթն էր պակասում նրան կապիկաշան նմանվելու համար։ Նա հայտնեց ինձ, թե երջանիկ է, որ պատիվ ունի աջս սեղմելու, երբ ես մրս. Ուատրբրուկին խոնարհ ողջույն մատուցեցի, ջենտլմենը հանդիսավոր կերպով ինձ ծանոթացրեց մի սոսկալի տիկնոջ հետ, որը իր սև թավշե զգեստով ու ահագին սև թավշե գլխարկով Համլետի մոտ ազգականի, օրինակի համար, նրա մորաքրոջ նման թվաց ինձ։

Այդ տիկնոջ անունը մրս. Հենրի Սպայքր էր. ամուսինն էլ ներկա էր – մի այնպիսի պաղ պարոն, որի գլուխը փոխանակ սևահեր երևալու՝ կարծես թե սառ եղյամով ծածկված լիներ։

Ամենքն էլ անչափ ակնածում էին այդ զույգից. պատճառը, Ագնեսի ասելով, այն էր, որ մր. Հենրի Սպայքրը, էլ չեմ հիշում ո՞ր տեղի կամ ո՞ւմ խորհրդականը լինելով, հեռավոր կապեր ուներ արքունի գանձարանի հետ։

Հյուրերի թվում էր և Ուրիաս Հիպը՝ սևազգեստ ու շատ խոնարհ մի մարդ։ Ես աջս մեկնեցի նրան, և նա ասաց, թե անչափ պարծենում է իմ ուշադրությամբ դեպի ինքը և զիջողության համար երախտապարտ է։ Լավ է այդքան երախտապարտ չլինել, որովհետև ամբողջ երեկո հալածում էր ինձ՝ շնորհակալություն շռայլելով, և հենց որ մոտենում էի Ագնեսին՝ նրան մի երկու խոսք ասելու, արդեն հավատացած էի, որ մեռելագույն Ուրիասն իր անթերթերունք աչքերով՝ ուրվականի պես դիտում է մեզ մի որևէ անկյունից։

Կային և ուրիշ հյուրեր՝ բոլորն էլ սեղանի վրա դրված շամպայնի նման սառն ու պաղ։ Սակայն մեկը՝ դեռ ներս չմտած ուշադրությունս գրավեց. սպասավորը մր. Տրեդլս անվանեց նրան։ Նույն րոպեին ես Սալեմ Հոուսը հիշեցի։ «Մի՞թե Թոմին է, կմախք նկարող ընկերս», նույն րոպեին անցավ իմ մտքով։

Անսովոր հետաքրքրությամբ սպասեցի նրան։ Ներս մտավ մի պատկառելի ու համեստ երիտասարդ՝ տարօրինակ մազերով ու դուրս ընկած աչքերով, և այնպես արագ մի անկյուն քաշվեց, որ նրա դեմքը լավ դիտելու ժամանակ էլ չունեցա։ Բայց վերջապես տեսա. եթե աչքերս չէին խաբում, նա իմ թշվաչ Թոմին էր։

Մոտեցա մր. Ուատրբրուկին և ասացի, թե կարծեմ իմ հին ընկերոջը նրա տանը տեսնելու բախտ ունեմ։

– Մի՞թե,– ասաց մր. Ուատրբրուկը զարմանալով։– Ձեր հասակին նայելով դժվար է ենթադրել, որ մր. Հենրի Սպայքի դասընկերը եղած լինեք դպրոցում։

– Նրա մասին չէ իմ խոսքը,– նկատեցի ես,– այլ Տրեդլս անունով ջենտլմենի։

– Ա՜, այո՜, այո՜, իրա՞վ,– ասաց տանտերը շատ նվազած հետաքրքրությամբ։– Հավանական է։

– Եթե այդ պարոնն իրոք նա՜ է,– ասացի ես, նորից դիտելով Տրեդլսին,– ուրեմն մենք միասին ենք աշակերտել Սալեմ Հոուսում. նա մի ազնիվ ընկեր էր։

– Այո՜, Տրեդլսը լավ տղա է,– նկատեց տանտերը զիջողական եղանակով։– Տրեդլսը լավ տղա է։

– Իրոք որ մի անակնկալ հանդիպում,– ասացի ես։

– Իրոք անակնկալ,– պատասխանեց տանտերը,– մանավանդ եթե նկատի առնենք, որ Տրեդլսը միայն այս առավոտ է հրավիրված, որովհետև մրս. Ապայքրի եղբոր հիվանդության պատճառով սեղանի վրա մի տեղ ազատ էր մնում։ Ա՜հ, մրս. Հենրի Սպայքրի եղբայրը մի իսկական ջենտլմեն է, մր. Կոպպերֆիլդ։

Փնթփնթալով հավանություն տվի, թեև բնավ չէի ճանաչում այդ պարոնին և հարցրի, թե ի՞նչ գործի է այժմ Տրեդլսը։

– Տրեդլսը,– պատասխանեց մր. Ուատրբրուկը,– փաստաբանության է պատրաստվում։ Այո՜։ Լավ տղա է. ոչ ոքի վնաս չի տա... եթե ոչ իրեն։

– Ինչպե՞ս թե իրեն։

– Այնպես,– ասաց մր. Ուատրբրուկը իր շուրթերը պրկելով ու ժամացույցի շղթայի հետ հանգիստ ու գոհ խաղալով։– Չեմ կարծում որ նա մի նշանավոր մարդ դառնա։ Այո՜, գրավ եմ բռնում, օրինակի համար, որ նա երբեք տարեկան հինգ հարյուր ստեռլինգ չի ստանա։ Տրեդլսի հետ ինձ ծանոթացրեց իմ ընկերներից մեկը։ Այո՜։ Հարկավ նա զուրկ չէ որևէ նամակ շարադրելու և բանի էությունը պարզ գրելու քանքարից։ Ժամանակով ես կարող եմ նրան մի գործ տալ... անշուշտ այդպիսի մարդուն հարմար գործ։ Այո՜։

Սաստիկ տպավորություն արավ վրաս մր. Ուատրբրուկի այն ինքնագոհ, ինքնավստահ եղանակը, որով անդադար գործ է ածում իր փոքրիկ «այո»-ները: Նրա շեշտադրությամբ այդ այո-ները մի զարմանալի իմաստ էին ստանում. շեշտերը ցույց էին տալիս, որ նա ոչ թե շապիկով էր աշխարհ եկել, այլ սանդուղքով, և այդ սանդուղքն էլ օգնել էր նրան աստիճան առ աստիճան վեր մագլցել դեպի կյանքի բարձրունքը, որտեղից, ինչպես մի ապահով բերդի աշտարակից, փիլիսոփայի, հովանավորի աչքով այժմ նայում էր ներքևի փոսում տառապող բազմության վրա:

Ես դեռ այս մտքի մեջ էի խորասուզված, երբ սպասավորը հայտնեց, թե ճաշը պատրաստ է: Մր. Ուատրբրուկը Համլետի մորաքրոջ հետ ներքև իջավ. մր. Հենրի Սպայքրը մրս. Ուատրբրուկին տվեց իր թևը: Ես ուզում էի Ագնեսին ընտրել, բայց նրան ապուշի պես ժպտացող մի թույլոտն պարոն հրավիրեց: Ուրիասը, Տրեդլսն ու ես, որպես հասարակության ամենակրտսեր անդամներ, բոլորից հետո առանց այլևայլության ներքև իջանք: Ես ժամանակ չունեցա ափսոսալու, որ զրկվում եմ Ագնեսի թևից, որովհետև սանդուղքի վրա առիթ գտա խոսակցելու Տրեդլսի հետ, որ ցնծությամբ ողջունեց ինձ. մինչդեռ Ուրիասն այնպես էր մեր շուրջը քծնում ու գալարվում, որ ես պատրաստ էի բազրիքից ցած գլորել նրան:

Սեղան նստելիս ես ու Տրեդլսը հակառակ անկյուններում տեղ ստացանք – նա մի կարմրազգեստ օրիորդի շողքերի մեջ, իսկ ես Համլետի մորաքրոջ մթագին ստվերում: Ճաշն անչափ երկար տևեց. խոսակցության միակ նյութը ազնվական ծագումը կամ տոհմիկությունն էր... արյունը: Մրս. Ուատրբրուկը շարունակ կրկնում էր, թե ոչ մի բան այնքան չի սիրում, որքան արյունը:

Արյո՛ւն, արյո՛ւն... Ասես թե սեղանակիցները մարդակեր հրեշներ լինեին՝ այն աստիճան արյունռուշտ էր նրանց հոգին:

– Ես էլ մրս. Ուատրբրուկին համամիտ եմ,– ասաց մր. Ուատրբրուկը, բաժակն աչքերին մոտեցնելով:– Աշխարհիս երեսին լավ բաներ շատ կան, բայց ըստ իս ամենից պատվականը արյունն է:

– Օ՛հ, ինչ բան կարող է արյան հետ հավասարվել,– նկատեց Համլետի մորաքույրը:– Առհասարակ, ամեն բանի իդեալը արյունն է: Կան անշուշտ ստրկամիտ էակներ, հարկավ ոչ շատ, բայց կան, որոնք պատրաստ են երկրպագել ձիրք, հանճար, երախտիք ասված կուռքերին: Սակայն դրանք անտեսանելի բաներ են: Ուրիշ բան է արյունը: Արյունը երևում է մարդուս քթից, և նրան իսկույն ճանաչում ենք: Երևում է կզակից, և իսկույն ասում ենք. «Ահա արյուն, մաքուր արյուն»: Դա մի դրական, իրական բան է: Արյունը կարելի է շոշափել, և նա ոչ մի կասկածի տեղի չի տա:

Ապուշ-ապուշ ժպտացող թույլոտն պարոնը, որ թև էր մատուցել Ագնեսին, ավելի ևս պարզեց խնդիրը:

– Բոլորդ էլ գիտեք,– ասաց նա, շուրջը մի անմիտ հայացք գցելով,– գիտեք, որ չի կարելի արյունն արհամարել: Արյունը, գիտեք, անհրաժեշտ բան է: Մի քանի երիտասարդներ, գիտեք, կարող են դաստիարակությամբ ու վարքով իրենց աստիճանից փոքր-ինչ ետ մնալ և երբեմն հիմար-հիմար բաներ անել, թե իրենց և թե ուրիշներին նեղություն տալ, բայց և այնպես, գիտեք, ո՞վ չի հիանում, երբ լսում է, թե նրանք բոլորն էլ արյուն ունեն: Գալով ինձ, ես լավ կհամարեմ, որ գետնով տա ինձ արյուն ունեցողը, քան թե չունեցողը բարձրացնի:

Այս դավանանքը, որ ընդհանուր խնդրի ամփոփումն էր, ամենից ավելի հավանություն գտավ և մինչև կանանց հեռանալու րոպեն բոլոր ջենտլմենների ուշադրությունը գրավեց: Այն ժամանակ ես նկատեցի, որ մր. Գուլպիջն և մր. Հենրի Սպայքրը, որոնք մինչև այժմ բավական զատված էին իրարից, մի տեսակ պաշտպանական դաշինք կնքեցին մեզ նման աննշան էակների դեմ, և սկսեցին սեղանի հակառակ կողմերից մի խորհրդավոր զրույց անել, որպեսզի լիովին հարվածեն մեզ ու ջախջախեն:

– Սակայն այն առաջին մուրհակի գործը, որի գումարը չորս հազար հինգ հարյուր ստեռլինգ էր, մի ցանկալի ընթացք չստացավ, Գուլպիջ,– ասաց մր. Հենրի Սպայքրը։

– Այսինքն՝ Ա-բնակ Դ-իի գործը,– ասաց մր. Սպայքրը։

– Բ-նակ Գ-ի գործը,– պատասխանեց մր. Գուլպիջը։

Մր. Սպայքրը հոնքերը կիտեց ու շատ հուզված երևաց։

– Երբ գործը լորդ... ին ներկայացրին, ավելորդ է նրա անունը տալ,– ասաց մր. Գուլպիջը, կանգ առնելով։

– Գիտեմ, գիտեմ,– ասաց մր. Սպայքրը։– Լորդ Ս...ին։

Մր. Գուլպիջը խորհրդավոր նշան արեց ու շարունակեց.

– Երբ խնդիրը լորդին ներկայացրին, նա պատասխանեց. «Կամ վճարում, կամ բա՞նտ»։

– Տեր ողորմյա,– գոչեց մր. Սպայքրը։

– Վճարումն կամ բանտ,– կրկնեց շեշտով մր. Գուլպիջը,– մերձավոր ժառանգը... որին հարկավ ճանաչում եք...

– Գ-ն,– ասաց մր. Սպայքրը չարագուշակ հայացքով։

– Գ-ն ստորագրելուց միանգամայն հրաժարվեց։ Նրան համոզելու համար հատուկ Նյումարկետ գնացին, բայց նա ամենևին չուզեց ստորագրել։

Մր. Սպայքրը զարմանքից քար կտրեց, այն աստիճան հետաքրքրված էր այդ գործով։

– Եվ ահա գործը ճիշտ այս դրության մեջ է մնացել,– ասաց մր. Գուլպիջը, ետ ընկնելով աթոռի վրա։– Մեր բարեկամ մր. Ուատրբրուկը կների ինձ, որ ավելի պարզ չեմ խոսում. գործի ահագին կարևորությունը ստիպում է ինձ զգույշ լինել։

Մր. Ուատրբրուկն ակներև շատ երջանիկ էր, որ իր սեղանի վրա, թեկուզ ծածկված կերպով, այսպիսի գործեր և այսպիսի անուններ են հիշատակում։ Նա իր դեմքին մի խորիմաստ արտահայտություն տվեց (թեև հավատացած եմ, որ խոսակիցների ասածից ինքն էլ ոչինչ չէր հասկանում), և նրանց խորհրդապահ զգուշությունը լիովին գովեց։ Մր. Սպայքրն իր ընկերոջ կողմից այդպիսի մտերմություն գտնելուց հետո՝ ինքն էլ բնականաբար նրան մի գաղտնիք հայտնելու փափագ զգաց։ Այս պատճառով վերոհիշյալ խոսակցությանը ուրիշ զրույց հաջորդեց, որի ընթացքում զարմանք հայտնողն արդեն մր. Գուլպիջն էր. և ապա դարձյալ մեկ ուրիշ զրույց, որի մեջ զարմանալու հերթը նորից մր. Սպայքրին հասավ, և այսպես նրանք շարունակում էին մեկը մյուսին զարմացնել։ Իսկ մենք, տգետներս, սարսափելի գաղտնիքների ծանրության տակ ընկճված, ափիբերան նստած էինք, մինչ տանտերը մեզ նայելով պարծանք էր զգում, որ այս փրկարար ակնածության ու սքանչացման զոհն ենք դարձել։

Հեշտ է երևակայել, թե ինչքան ուրախացա, երբ սեղանից հետո վերևի դահլիճը գնացի և այնտեղ իրար հետ ծանոթացրի Ագնեսին ու Տրեդլսին, որ չնայելով շատ ամոթխած լինելուն, միշտ հաճելի ու սիրելի ընկեր էր։ Ես չկարողացա նրա հետ այնքան խոսել, ինչքան ցանկանում էի, որովհետև հետևյալ օրը նա մի ամսով մեկնելու էր Չգիտեմ ուր։ Սակայն մենք մեր հասցեները փոխանակեցինք և խոսք տվինք որ երբ նա Լոնդոն վերադառնա, նորից իրար հանդիպենք։ Նա շատ ուրախացավ, որ ես դարձյալ ընկերացել եմ Ստիրֆորթի հետ, և այնքան համակրելի բաներ ասաց նրա մասին, որ ես ստիպեցի նրան իր կարծիքն Ագնեսին կրկնել։ Բայց Ագնեսը միայն վրաս նայեց ու թեթևակի գլուխը շարժեց, և այնպես, որ այդ շարժումը միայն ե՛ս նկատեմ։

Տրեդլսի հեռանալուց հետո Ագնեսն ու ես միասին մնացինք, և նա հայտնեց, թե շուտով վերադառնալու է Կենտրբըրի։ Այս լուրը մասամբ ուրախացրեց ինձ, որովհետև Լոնդոնում

Ագնեսը մի այնպիսի շրջանի մեջ էր, որը նա չէր կարող համակրել. մասամբ էլ տրտմեցրեց, որովհետև շուտով բաժանվելու էի նրանից: Այս պատճառով որոշեցի մինչև հյուրերի ցրվելը նրա հետ մնալ: Ագնեսի հետ զրուցելը ու նրա երգը ունկնդրելը նշանակում էր ցնծությամբ մտաբերել կյանքիս երջանիկ օրերը, որ վայելել էի նրա շնորհիվ կենդանացած հին տան մեջ, և ես պատրաստ էի մինչև կես-գիշեր հետը նստել. սակայն երբ մր. Ուատրբրուկի հասարակության բոլոր աստղերը մեկ-մեկ հանգան, ես էլ ստիպված ծանր սրտով հրաժեշտ տվեցի: Ահա այդ րոպեին էր, որ ավելի քան երբևէ, զգացի, թե Ագնեսն իրավ իմ հրեշտակն է, և եթե այնուհետև նրա քաղցրիկ դեմքն ու հեզիկ ժպիտը հիշելիս՝ ես միշտ մտածել եմ, թե նա վերևից վրաս հսկող մի զվարթուն հրեշտակ է, կարծեմ վատ բան չեմ արել:

Ասացի, թե հասարակությունն արդեն ցրվել էր, սակայն ճիշտ կլիներ ասել՝ բացի Ուրիասից, որին ես չէի դասում այդ խմբի մեջ, և որը ոչ մի վայրկյան չէր դադարում մոտիկից մեզ լրտեսելուց:

Նա հետևում էր ինձ, երբ իջնում էի սանդուղքից, փողոցումն էլ քայլ առ քայլ հետևում էր, իր ոսկրոտ մատներն ահագին ձեռնոցների մեջ անցկացնելով:

Ամենևին տրամադիր չէի ընկերություն անել Ուրիասի հետ, սակայն Ագնեսի աղաչանքը հիշելով, առաջարկեցի նրան իմ մոտ գալ և մի բաժակ սուրճ խմել:

– Օ՜հ, ճշմարիտ, մաստր Կոպպերֆիլդ... – ասաց նա,– ներեցեք, պիտի ասեի միստր Կոպպերֆիլդ, բայց հին սովորությունս հաղթեց... չէի ցանկանա, որ նեղություն կրեք ձեր բնակարանը հրավիրելու ինձ նման մի խոնարհ մարդու:

– Ամենևին նեղություն չեմ կրում,– պատասխանեցի ես:– Ուզո՞ւմ եք գալ:

– Շատ կցանկանայի, շատ և շատ,– ասաց Ուրիասը կծկվելով:

– Ուրեմն եկեք:

Ես ակամա էի կոպիտ խոսում, բայց նա կարծեմ չէր նկատում այդ: Առանց երկար զրուցելու ամենակարճ ճանապարհով առաջ գնացինք և այդ բոլոր միջոցին նա շարունակ իր ահագին ձեռնոցները մատների վրա էր քաշում. արդեն տուն հասանք, բայց նա դեռ քաշում էր:

Մութ սանդուղքով բարձրանալիս, ես նրա ձեռքից բռնեցի, որ նա գլուխը պատին չխփի, բայց նրա ձեռքը գորտի նման սառն էր ու լպրծուն, և ես պատրաստ էի դեն հրել նրան ու փախչել: Ագնեսն ու հյուրասիրության պարտքը արգելեցին ինձ այդպես անել. պետք եղավ մինչև վառարանը առաջնորդել Ուրիասին: Երբ մոմերը վառեցի, նա հիացավ իր առջև լուսավորված սենյակից, իսկ երբ սկսեցի սուրճ եփել մի հասարակ անագե ամանում, որի մեջ եփում էր և մրս. Կրապպը (թեև այս անոթը իբրև ածիլվելու տաք ջրի աման, չպիտի սուրճ եփելու նպատակին ծառայեր, քանի որ իսկական թանկագին սրճամանը պահարանում ժանգոտում էր), Ուրիասը այն աստիճան սքանչացավ, որ քիչ էր մնում սառը ջուրը նրա գլխին ածեի:

– Օ՜հ, մր. Տրոտուդ... ներեցեք, ուզում էի ասել մր. Կոպպերֆիլդ,– սկսեց Ուրիասը,– ես երևակայել անգամ չէի կարող, որ այսպես փառավոր կընդունեք ինձ: Սակայն այս խոնարհ ու չնչին վիճակիս մեջ գլխիս վրա այնքան անակնկալ բարիքներ են թափվում, որ ինձ մնում է փառք տալ աստծուն: Արդյոք լսած եք, մաստր... այսինքն՝ միստր Կոպպերֆիլդ, որ դրությունս փոխվելու է:

Նա նստել էր բազմոցիս վրա, սուրճի բաժակը նիհար ծնկների վրա բռնած, գդալը հանդարտ շարժելով, մինչ գլխարկն ու ձեռնոցները հատակի վրա էին, իր կողքին: Նրա մերկ կոպերով կարմիր աչքերը որոնց արտևանունքները կարծես կրակից խանձվել էին, նրա դեպի ինձ ուղղած, բայց իբր թե վրաս չնայող անթարթ հայացքը, նրա ռունգերի ուռելն ու սեղմվելը, նրա մարմնի ոտքից մինչև գլուխ օձանման գալարվելը տեսնելիս՝ զգում էի, որ ատելով ատում եմ նրան: Զզվելի էր ինձ այդ մարդը: Բայց ես դեռ այնքան ջահել էի, որ սովոր չէի զգացմունքներս թաքցնել:

– Գուցե արդեն լսել եք, մաստր Կոպպերֆիլդ... Ներեցեք, միստր Կոպպերֆիլդ, որ վիճակս փոխվելու վրա է,– նկատեց Ուրիասը։

– Այո՛, լսել եմ մի այդպիսի բան,– ասացի ես։

– Ա՛հ, ես գիտեի, որ այս բանը միս Ագնեսին հայտնի է,– հանգիստ կերպով ասաց Ուրիասը։– Շատ ուրախ եմ, որ հայտնի է միս Ագնեսին։ Օ՛հ, շնորհակալ են ձեզնից, մաստր... կուզեի ասել միստր Կոպպերֆիլդ։

Կցանկանայի նրա գլխին խփել կոշկահանս (որը ընկած էր գորգի վրա)։ – ես շատ զայրացա, որ նա Ագնեսի վերաբերյալ բան որսաց իմ բերնից, թեև այդ բանը չնչին էր, բայց ինքս ինձ զսպեցի և շարունակեցի սուրճս խմել։

– Ինչ լավ մարգարե եք եղել, միստր Կոպպերֆիլդ,– շարունակեց Ուրիասը։– Աստված իմ, ի՞նչ կանխագուշակ մարգարե։ Հիշո՞ւմ եք ձեր խոսքերը, թե գուցե մի օր ես մր. Ուիկֆիլդի ընկերակիցը կդառնամ, և մեր գրասենյակը այն ժամանակ «Ուիկֆիլդ ու Հիպ» կկոչվի։ Հավանական է, որ մոռացած լինեք, բայց ինձ նման խոնարհ մարդիկ սովոր են դա գանձի պես մտքում պահել, մաստր Կոպպերֆիլդ։

– Այո, հիշում եմ մի այդպիսի բան, թեև ճիշտն ասած՝ չէի կարծում, թե գուշակությունս կկատարվի։

– Օ՛հ, ո՞վ կարող էր կարծել, թե կկատարվի, միստր Կոպպերֆիլդ,– գոչեց Ուրիասը եռանդով։– Գոնե իմ մտքով այդպիսի բան չէր անցել։ Լավ եմ հիշում, որ ես ինքս այն ժամանակ ձեզ ասացի, թե ես շատ խոնարհ ու չնչին մարդ եմ. և հավատացեք, ինչ որ ասացի, այն էլ իրոք կարծում էի։

Ուրիասն իր դեմքը չար հոգնությամբ կնճռոտելով կրակին էր նայում, իսկ ես՝ իրեն։

– Սակայն, մաստր Կոպպերֆիլդ,– սկսեց նա վերստին,– երբեմն ամենահետին մարդն անգամ կարող է մի բարի բանի գործիք լինել։ Ես գոհ եմ, որ բարության գործիք եմ եղել մր. Ուիկֆիլդի համար, եղել եմ և դեռ կլինեմ։ Օ՛հ, ինչ պատվական անձ է նա, միստր Կոպպերֆիլդ, բայց և որքա՛ն անխոհեմ էր։

– Ափսոս,– ասացի ես և նույն րոպեին շեշտելով ավելացրի,– ամեն ինչի նկատմամբ անխոհեմ։

– Ճիշտ այդպես, միստր Կոպպերֆիլդ,– վրա բերեց Ուրիասը։– Ամեն ինչի նկատմամբ և մանավանդ Ագնեսի՛ նկատմամբ։ Դուք գուցե մոռացած լինեք, մաստր Կոպպերֆիլդ, ձեր ճարտար խոսքերը, բայց ես հիշում եմ ինչպես մի օր ասացիք, թե ամեն մարդ պարտավոր է միս Ագնեսին պաշտել, և որքա՛ն ես շնորհակալ էի այդ գեղեցիկ խոսքերի համար։ Անտարակույս մոռացած կլինեք այս բոլորը, մաստր Կոպպերֆիլդ։

– Ո՛չ,– ասացի ես չոր-չոր։

– Ի՛նչ ուրախ եմ, որ չեք մոռացել,– բացականչեց Ուրիասը։– Որքան քաղցր է մտածել, որ իմ նվաստ կրծքի մեջ առաջին անգամ պատվասիրության կայծ վառողը դուք եղաք, և որ այս բանը մինչև այսօր չեք մոռացել։ Օ՛հ, թույլ կտա՞ք արդյոք դարձյալ մի թաս սուրճ խնդրել։

Այդ կայծի վերաբերյալ բառերը նա այնպիսի շեշտով արտասանեց և արտասանելիս մի այնպիսի հրացայտ աչքով վրաս նայեց, որ ես ակամա սարսուռ զգացի զայրույթից։ Բայց սուրճ խնդրելը, որ բոլորովին ուրիշ եղանակով էր հայտնված, մեղմացրեց ինձ, և ես մի բաժակ էլ տվի նրան։ Տեսնում էի, որ այդ մարդու հետ մաքառելու անզոր եմ, և տագնապով սպասում էի թե ի՞նչ բաներ դեռ կլսեմ նրանից։ Դժվար թե սրտիս հուզումը նրա աչքից ծածուկ մնար։

Ուրիասը լուռ նստած էր, մեկ՝ բաժակը խառնելով, մեկ՝ կրակին նայելով, մեկ՝ աչքերը շուրջը պտտեցնելով, մեկ՝ ոլորելով ու ստրկաբար քծնելով և մեկ՝ նորից սուրճը խառնելով ու ընպելով. պարզ էր, որ նա ինձ է թողել՝ վերսկսել խոսակցությունը։

– Ուրեմն,– ասացի ես վերջապես,– մր. Ուիկֆիլդը, որ հինգ հարյուր անգամ ավելի արժի, քան թե դուք... և կամ ես (խոստովանում եմ, որ այս ես-ը շատ ակամա մեջ բերի), նորերս անխոհե՞մ է վարվել։ Իրա՞վ անխոհեմ, մր. Հիպ։

– Օ՜հ, շատ անխոհեմ, մաստր Կոպպերֆիլդ,– պատասխանեց Ուրիասը մի թեթև հառաչելով։– Այո՛, շատ անխոհեմ, սակայն կցանկանայի, որ դուք ինձ պարզապես Ուրիաս անվանեիք, առաջվա պես։

– Ուրեմն, Ուրիաս,– ասացի ես, տհաճությամբ արտասանելով այս անունը։

– Շնորհակա՜լ եմ,– գոչեց Ուրիասը եռանդով։– Շնորհակալ եմ, մաստր Կոպպերֆիլդ։ Երբ դուք ինձ Ուրիաս եք անվանում, ասես թե մի անուշ զեփյուռ է փչում ականջիս կամ թե հնչում հին զանգակների ձայնը։ Խնդրեմ, ներեցեք։ Սակայն ինչ էր ասելիքս...

– Ձեր խոսքը մր. Ուիկֆիլդի մասին էր։

– Այո՛։ Ճիշտ այդպես։ Ա՜հ, նրա վարմունքը շատ անխոհեմ էր, մաստր Կոպպերֆիլդ։ Չէի կամենա այդ մասին ձեզնից բացի, մեկ ուրիշի առջև բան ասել, և ինչ որ կասեմ, միայն մի թեթև ակնարկ կլինի, ոչ ավելի։ Եթե վերջին տարիները իմ տեղը մեկ ուրիշը լիներ, այժմ իր բռունցքի մեջ կպահեր մր. Ուիկֆիլդին (ի՜նչ պատվական անձ է, սակայն, այդ մարդը)։ Իր բռ...ռ...ռունցքի մեջ,– ասաց Ուրիասը, այս բառը երկարացնելով ու ձեռքը սեղանին դեմ տալով։

Նրա բռան ճնշումից սեղանը դողաց, սենյակն էլ հետը։ Եթե այդ միջոցին մր. Ուիկֆիլդի գլուխն Ուրիասի ծուռ ոտքի տակ տեսնեի, ես ավելի չէի ատի Ուրիասին։

– Այո՛, մաստր Կոպպերֆիլդ,– շարունակեց նա մեղմ ձայնով, որ սաստիկ հակասում էր նրա ոսկրոտ բռունցքի զորությանը,– այս մասին կասկածել անգամ չի կարելի։ Եթե ես չլինեի, նա ոչ միայն իր կայքը կկորցներ, այլև վարկը և պատիվը... էլ չասենք ուրիշ շատ բաներ։ Մր. Ուիկֆիլդն էլ այս լավ գիտի։ Ես միշտ նրա խոնարհ ու հլու ծառան էի, նրա ձեռքի չնչին գործիքը. և ահա նա ինձ մի այնպիսի բարձր դիրք է տալիս, որին երազումս անգամ չէի տեսել։ Օ՜հ, որքան շնորհապարտ են նրան։

Այս ասելիս նա իր դեմքն իմ կողմը շուռ տալով, սակայն առանց վրաս նայելու, բռունցը սեղանից վերցրեց և սկսեց իր նիհար կզակը հանդարտ շփել, ինչպես որ անում են ածիլվելու ժամանակ։

Չեմ մոռացել, թե ինչպես սիրտս բարկությամբ թնդաց, երբ նայեցի նրա չար դեմքին, մինչ նա կրակի շողքով լուսավորված՝ պատրաստվում էր մի ուրիշ բան հայտնել ինձ։

– Մաստր Կոպպերֆիլդ... – սկսեց նա,– սակայն կարծեմ արդեն ուշ է։

– Ո՜չ, ո՜չ։ Ես սովորաբար վաղ չեմ պառկում։

– Շնորհակալ եմ, մաստր Կոպպերֆիլդ։ Այն օրից ի վեր, որ դուք առաջին անգամ հետս խոսելու շնորհ արիք, ես ճիշտն ասած մի քանի աստիճան բարձրացել եմ իմ խոնարհ ու նվաստ վիճակից, բայց դարձյալ խոնարհ եմ, դարձյալ չնչին։ Չեմ էլ կարող ուրիշ կերպ լինել։ Դուք հարկավ խոնարհությունս թյուր կերպով չեք մեկնաբանի, մաստր Կոպպերֆիլդ, եթե մի փոքրիկ գաղտնիք հայտնեմ։ Թյուր չե՞ք մեկնաբանի։

– Ամենևին,– ասացի ես, բռնադատելով ինքս ինձ։

– Շնորհակալ եմ։

Նա իր թաշկինակը հանեց ու սկսեց ափերը սրբել։

– Միս Ագնեսը, մաստր Կոպպերֆիլդ։

– Հետո՞, Ուրիաս։

– Օ՜հ, որքա՜ն քաղցր է լսել ձեզնից Ուրիաս անունը,– գոչեց նա ու ափ նետված ձկան նման ցնցվեց։– Այս երեկո նա շատ գեղեցիկ էր, չէ՞, մաստր Կոպպերֆիլդ։

– Ինչպես և միշտ,– ասացի ես։– Նա իրեն շրջապատողներից ամեն բանով գերազանց է։

– Շատ շնորհակալ եմ, ձեր ասածը լիովին ճշմարիտ է,– գոչեց Ուրիասը։– Օ՜հ, հազար անգամ շնորհակալ եմ։

– Ավելորդ է,– պատասխանեցի ես գոռոզաբար։– Շնորհակալ լինելու առիթ չկա։

– Ինչպե՞ս թե չկա, մաստր Կոպպերֆիլդ, քանի որ հենց դրա համար եմ համարձակվում գաղտնիքս հայտնել,– ասաց Ուրիասն ու մերթ մատներին, մերթ կրակին նայելով, նորից սրբեց ափերը։– Որքան էլ փոքր, աննշան ու չնչին լինեմ ես, որքան էլ խոնարհ լինի մայրիկս, որքան էլ անշուք մեր հասարակ, սակայն ազնիվ ընտանիքը, բայց և այնպես միս Ագնեսի պատկերը (չեմ քաշվում սրտիս գաղտնիքը հայտնել մեզ, մաստր Կոպպերֆիլդ, որովհետև առաջին անգամ ձեզ Տիլբրիի մեջ տեսնելուցս ի վեր մի անզուսպ հակում եմ զգացել դեպի ձեզ) միշտ ապրել է սրտումս։ Օ՜հ, մաստր Կոպպերֆիլդ, եթե գիտենայիք, ի՜նչ մաքուր, սուրբ սիրով եմ պաշտում նրան, իմ Ագնեսին, որի ոտքերի փոշին անգամ կփափագեի համբուրել։

Մտքովս անցավ վառարանից վերցնել կարմրած ունելին և Ուրիասի կուրծքը մխել։ Սակայն այս միտքը հրացանի գնդակի պես իսկույն գլխիցս դուրս թռավ. իմ առջև պատկերացավ գարշելի հրեշի լեզվով անարգված Ագնեսը և ցասումս զսպեց։ Իսկ Ուրիասը, իր սառը հոգու շարժումներից կծկվելով, նստած էր, և ինձ թվում էր թե նրա մարմինն աչքիս առջև աճում է, ուռչում, և սենյակս՝ նրա ձայնին արձագանք տալով, որոտում։ Եվ հանկարծ, չգիտեմ ինչպես, մի տարօրինակ բան զգացի. կարծես թե այս բոլորը վաղուց էր եղել, շա՜տ վաղուց, և ես նրա ասելիքն արդեն գիտեմ։

Նրա դեմքին նայելով, ես տեսա, որքան նա իր զորությունը գիտակցում է, և այս հանգամանքը ավելի նպաստեց ինձ լավ մտաբերել Ագնեսի զգուշացումն ու թախանձանքը։ Մի շինծու հանգստությաբ, որ մի րոպե առաջ չէի կարծում թե կարող եմ ձևացնել, հարցրի նրան, թե իր զգացումներն արդյոք հայտնե՞լ է Ագնեսին։

– Օ՜հ, ո՜չ, մաստր Կոպպերֆիլդ,– պատասխանեց նա,– ո՜չ, ո՜չ ամենևին։ Ես միայն ձեզ եմ հայտնում։ Տեսնում եք, որ նոր եմ սկսել իմ ոչնչությունից բարձրանալ։ Հիմք ունեմ հուսալու, որ Ագնեսը իր հորը մատուցած օգնության արժեքը կզգա (վստահ եմ, մաստր Կոպպերֆիլդ, որ ես իրոք շատ օգտակար եմ այդ մարդուն) և կտեսնի, թե որքան եմ հարթում նրա ճանապարհն ու ուժ տալիս նրան։ Նա իր հորն այնքա՜ն է սիրում, մաստր Կոպպերֆիլդ (օ՜հ, ինչպես ազնիվ է այս զգացումը մի դստեր կողմից), որ հույս ունեմ, հոր սիրուն ի՜մ վրա էլ քաղցր աչքով կնայի։

Այդ սրիկայի չար մտքերի բոլոր խորությունը չափեցի և հասկացա, թե ինչո՞ւ է երևան հանում դրանք։

– Եթե ցանկանաք գաղտնիքս ծածուկ պահել, մաստր Կոպպերֆիլդ,– շարունակեց նա,– և դիտավորությանս չընդիմանաք, դուք մի առանձին շնորհ կանեք ինձ։ Գիտեմ, չեք կամենա վնասել ինձ։ Գիտեմ, թե ինչ աստիճան բարեսիրտ եք. չէ՞ որ դուք այնպիսի ժամանակ եք ճանաչել ինձ, երբ ես մի անարգ և սինլքոր էակ էի (այսինքն՝ հետին, ինչպես և այսօր եմ), ուստի կարող է պատահել, որ անգիտաբար վնասեք ինձ Ագնեսիս մոտ։ Տեսնո՞ւմ եք, մաստր Կոպպերֆիլդ, ես ասում եմ Ագնեսիս։ Մի երգ կա, ուր ասված է.

«Չեմ ուզում ոչ գահ, ոչ թագ.
Այլ ուզում եմ նրան մենակ»։

Ես հույս ունեմ, որ շուտով նա իմը կլինի։

Սիրելի՛ Ագնես։ Դու, որի ազնիվ ու բարի սրտին ոչ մի տղամարդ արժանի չէ, մի՞թե նրա համար ես աշխարհ եկել, որ այս գարշելի արարածի կինը դառնաս։

– Գիտեք, որ դեռ շտապելու հարկ չկա, մաստր Կոպպերֆիլդ,– շարունակեց Ուրիասը քծնելով, մինչ ես մտամոլոր նայում էի նրան։– Իմ Ագնեսը դեռ նորատի է, և ես ու մայրս, մի վճռական քայլ անելուց առաջ, դեռ հոգալու շատ բան ունենք։ Այժմ պետք է հետզհետե հույսերիս հետ ընտելացնել նրան։ Օ՛հ, որքան շնորհապարտ եմ ձեզ, որ թույլ տվիք սիրտս բանալ։ Չեք կարող երևակայել, թե ինչ թեթևություն է ինձ համար հավատալ, թե դուք մեր դրությունը հասկանում եք և չեք ուզում դժվարություններ պատճառել ինձ, նպատակիս դիմադրել։

Նա ձեռքս բռնեց, որ ես չվստահեցի ետ քաշել, և թաց թաթով սեղմելուց հետո՝ իր անփայլ ժամացույցին նայեց։

– Ա՛հ, աստված իմ,– ասաց նա,– մեկից անց է։ Ինչպես շուտ են ժամերը թռչում հին բարեկամների մտերմական խոսակցության մեջ, մաստր Կոպպերֆիլդ։ Արդեն մեկ անց կես է։

– Կարծում էի, թե ավելի ուշ է,– ասացի ես։

Եվ ասացի, ոչ թե նրա համար, որ իրոք կարծում էի թե ուշ է, այլ որովհետև զրուցելիս համբերությունս հատել էր։

– Ա՛յ անախորժ բան,– ասաց Ուրիասը մտախոհ։– Իմ իջած պանդոկում, որը գտնվում է Նյու-Րիվըրի մոտերքը, արդեն երկու ժամից ի վեր ամենքը քնած կլինեն։

– Շատ ցավում եմ,– ասացի ես,– որ միայն մի անկողին ունեմ, ուրեմն և. . .

– Էհ, ինչացո՞ւ է անկողինը, մաստր Կոպպերֆիլդ,– գոչեց Ուրիասը ցնծությամբ, մի ոտքը բարձրացնելով։– Հո նեղություն չեմ տա ձեզ, եթե կրակի դիմաց՝ հատակի վրա պառկեմ։

– Եթե այդպես է,– ասացի ես,– լավ է՝ դուք իմ անկողնում քնեցեք, իսկ ես այստեղ կպառկեմ։

Ուրիասն իր անսահման խոնարհության ու շնորհակալության զգացումները հայտնելով հանդերձ, առաջարկս մի այնպիսի ճիչով մերժեց, որ նրա ձայնը միստրիս Կրոպպին էլ հասավ։ Այդ ժամին նա անշուշտ քնած էր ներքևի հարկում, օրորվելով իր անճիշտ ժամացույցի տիկ-տակից, որ միշտ վկա էր բռնում, երբ մեր մեջ ճշտության մասին վեճ ծագեր։ Այդ ժամացույցը սովոր էր ամեն օր քառասուն րոպե ետ մնալ, թեև ամեն օր էլ ուղղում էր ամենաստույգ հեղինակությունների համեմատ։ Իմ տագնապալի դրության մեջ ոչ մի բանով չկարողացա Ուրիասի անչափ համեստությունն ընկճել և նրան համոզել, որ ննջարանումս գիշերի, և անճարացած՝ ստիպված եղա կրակի առջև տեղ պատրաստել նրա համար։ Մի բազմոցի մինդար (որ շատ կարճ էր գալիս նրա լեշին), մի քանի հատ բազմոցի բարձ, մի վերմակ, մի սեղանի ծածկույթ, մի մաքուր սփռոց և մի հին վերարկու պետք եղավ նրա անկողինը սարքելու համար, և Ուրիասն անչափ գոհ մնաց։ Ես նրան գիշերային գլխանոց տվեցի. նա գլխանոցը իսկույն գլխին քաշեց և դրանով այնպես զարհուրելի կերպարանք ստացավ, որ ես որոշեցի էլ երբեք գլխանոց չհագնել։

Այդ գիշերը ես երբեք չեմ մոռանա։ Չեմ մոռանա, թե որքան էի պտույտ գալիս անկողնուս մեջ, Ագնեսի և այդ հրեշի մասին մտածելով, թե ինչպես էի չարչարվում հարցնելով ինձ, թե ի՞նչ կարող եմ ու պարտավոր եմ անել Ագնեսի հանգստությունն ապահովելու համար, և ուրիշ ելք չէի գտնում, բացի ոչինչ չանելուց ու լսածս թաքցնելուց։ Եթե մի վայրկյան էլ նիրհեի, Ագնեսի ուշիմ աչքերն ու նրան սիրով ու ակնառուց դիտող հոր դեմքն էին պատկերանում իմ առջև, ասես թե ինձից օգնություն խնդրելով, և մարմինս սարսռում էր։ Սթափվելուս պես միտքս էր գալիս, որ Ուրիասն է պառկած կից սենյակում, և այս միտքը կապարի ծանրությամբ ճնշում էր ինձ, և ես զարհուրում էի, ասես թե գիշերվա հյուրս մի չարանենգ դև լիներ։

Ունելին էլ անդադար քունս վրդովում էր և մտքիցս չէր դուրս գալիս։ Կես-քուն, կես-արթուն դրության մեջ տեսա կաս-կարմիր ունելին և Ուրիասի մարմնի մեջ մխեցի։ Դա մի ցնորք էր, և զգում էի, որ ցնորք է, բայց և այնպես տագնապած վեր կացա Ուրիասին նայելու։ Նա մեջքի վրա փռված էր՝ ոտքերը պատին դեմ տված և գազանային երախի նման բաց բերանով խռմփում էր։ Նրա պատկերը իսկապես ավելի ահռելի էր, քան իմ տենդային զառանցանքում. այնուամենայնիվ, գարշանքիս հակառակ, ամեն կես ժամ վեր էի կենում նորից նրան նայելու համար։ Բայց գիշերը դարձյալ անվերջ էր, դարձյալ ծանր ու խռովիչ, և խավար երկինքը հենց իմանաս բնավ չէր ուզում լուսանալ։

Երբ Ուրիասն առավոտյան հեռացավ (փառք աստծու՝ չուզեց նախաճաշել), ինձ թվաց թե գիշերն էլ նրա հետ միասին անհետացավ։ Դոկտորների Համայնքը գնալիս, ես պատվիրեցի մրս. Կրոպպին բոլոր պատուհանները բանալ, որպեսզի Ուրիասի շնչով ապականված սենյակիս օդը բոլորովին մաքրվի։

Զ. ԳԼՈՒԽ
Գերի եմ ընկնում

Մինչև Ագնեսի մեկնելու օրը չէի տեսել Ուրիաս Հիպին։ Երբ Ագնեսին հրաժեշտ տալու համար, դիլիժանսների կայանը գնացի, Ուրիասն էլ այնտեղ էր. նա նույն կառքով Կենտրբըրի պիտի վերադառնար։ Ինձ համար մի թեթև սփոփանք էր, որ նա իր հին ու կարճ թիկնոցով և վրանի նման հովանոցով բարձրացավ կառքի ետնամասի վրա, մինչ Ագնեսը բնականաբար ներսումն էր նստած, և ես անշուշտ այդ սփոփանքին արժանի էի այն ջանքերիս փոխարեն, որ անում էի նրա հետ քաղաքավարի լինելու համար՝ գոնե Ագնեսի ներկայությամբ։ Ինչպես որ մր. Ուատրբրուկի ճաշի ժամանակ, այնպես էլ այժմ Ուրիասը իբրև մի գիշատիչ անգղ կառքի վրա թառած՝ մեզ էր դիտում, Ագնեսի ու իմ փոխանակած ամեն մի բառը որսալով։

Այն վրդովեցուցիչ ազդեցության ներքո, որ արել էր վրաս Ուրիասի խոստովանությունը վառարանի մոտ, հաճախ հիշում էի Ագնեսի խոսքերն ընկերակցության մասին, թե՛ «Ես այն արի, ինչ որ արդար համարեցի։ Զգալով, որ հորս հանգստության համար այս զոհաբերությունն անհրաժեշտ է, հավանություն տվի նրան»։ Այն օրից ի վեր ինձ տանջում էր մի դժնադակ նախազգացում, թե Ագնեսը, միևնույն զգացման տեղի տալով, մի ուրիշ զոհաբերություն էլ հանձն կառնի հոր համար։ Ես գիտեի, թե որքան է սիրում նրան. գիտեի, թե ինչ անձնվիրության ընդունակ է նրա սիրտը։ Իր խոսքերից գիտեի, որ նա իր հոր սխալների համար՝ ինքն իրեն մեղադրելով, փափագում է պարտահարույց լինել նրան։ Ինձ համար մխիթարանք չէր, որ նա այնքան տարբերվում էր թթագույն թիկնոց հագաց գարշելի էակից. չէ՞ որ հենց այդ տարբերության մեջ էր վտանգը. մեկի մաքուր, բոլորանվեր անձնազոհության և մյուսի զազիր ստորության մեջ։ Ուրիասը հարկավ այս բոլորը լավ գիտեր և անտես չէր թողել իր նենգամիտ հաշիվների մեջ։

Բայց և այնպես ես այնքան հավատացած էի, որ զոհաբերության հետևանքի մասին ակնարկելն անգամ Ագնեսի բախտը կթունավորի, և այնքա՛ն վստահ, որ նա դեռ ոչ մի բանից կասկած չունի և վտանգը չէ կռահում, որ անշուշտ նրան կվիրավորեի, եթե փորձեի զգուշացնել նրան իրեն սպառնացող չարիքից։ Այս էր պատճառը, որ մենք իրար հետ բաժանվեցինք առանց որևէ բացատրության. նա ձեռքը շարժելով ժպտում էր ինձ կառքի միջից. իսկ նրա չար դևը գալարվում էր կառքի վերևի նստարանում, կարծես հրճվելով, որ արդեն իր հաղթական ճանկերի մեջ է բռնել նրան։

Երկար ժամանակ չէի կարողանում այս հրաժեշտի տեսարանը մոռանալ։ Երբ Ագնեսից նամակ ստացա, թե նա հաջող տուն է հասել, դարձյալ ես նույն ողբալի դրության մեջ էի,

ինչպես և նրա մեկնելու րոպեին: Հենց որ սկսում էի մտմտալ Ագնեսի վիճակն էր միտքս գալիս, և թախիծս սաստկանում էր: Գիշեր չկար, որ նրա դրությունը քնիս հանգիստը չվրդովեր: Այս բանը կյանքիս մի մասն էր դարձել, նույնպես անբաժան իմ հոգուց, ինչպես որ գլուխս մարմնից:

Եվ ես վշտերս փարատող մարդ չունեի: Ստիրֆորթն, իր նամակի ասելով, Օքսվորդումն էր, և ես Դոկտորների Համայնքից դուրս, գրեթե միշտ մենակ էի: Կարծեմ այս միջոցին էր, որ սրտիս մեջ մի տեսակ կասկած ընկավ Ստիրֆորթի վերաբերմամբ: Ես նրան մի մտերմական պատասխան գրեցի, թեև ճիշտն ասած, գոհ էի, որ նա Լոնդոնից բացակա է: Երևի թե գոհ լինելուս պատճառն այն էր, որ Ագնեսի ազդեցությունն իմ վրա, Ստիրֆորթի ներկայությունից հակակշիռ չընդունելով, ամեն օր զորանում էր, և դարձյալ նա էր բոլոր մտքերիս ու հոգսերիս առարկան:

Սակայն օրերն ու շաբաթները սահում էին: Ես արդեն մի հաստատուն պաշտոն էի ստացել Սպընլոյի ու Ջորկինսի մոտ: Տատս նշանակել էր տարեկան իննսուն ստեռլինգ (բացի բնակարանիս վարձը ու մի քանի ուրիշ պետքերս հոգալուց): Սենյակներս արդեն մեկ տարով վարձված էին, և թեպետ երեկոները նրաք բավական տխուր էին, բայց ես վերջ ի վերջո սովորել էի զվարճություն գտնել սուրճի մեջ, որ կյանքիս այդ միջոցին ոչ միայն գավաթներով, այլ կարծեմ և լիտրերով էի սպառում: Մոտավորապես այդ ժամանակին են վերաբերում և իմ արած երեք գյուտերը, նախ որ մրս Կրոպպն իր ասելով ենթակա է «spazzums» (spasme, պրկումն) կոչված տարօրինակ հիվանդության, որին միշտ քթի բորբոքումներ էր հաջորդում, և որ չէր կարելի որևէ բանով բժշկել, բացի պեպրմինտից[44]. երկրորդ, որ շտեմարանիս օդը մի ուրույն հատկություն ունի, որի շնորհիվ օղիով շշերիս խցաններն անդադար դուրս են թռչում . երրորդ, որ այս աշխարհում ես մենակ եմ և շատ տրամադիր՝ անգլիական քերթվածներով արձանագրել կացությունս:

Պաշտոնի մեջ հաստատվելուս օրը ոչ մի հրավերք չեղավ, ես բավական համարեցի միայն սենդուիչ ու խերես առաջարկել գրագիրներին պաշտոնատան սենյակում և թատրոն գնալ երեկոյան: Բեմադրում էին «Օտարական» ողբերգությունը, որ ահ ու սարսափ ազդեց վրաս, և երբ տուն վերադարձա, հազիվ էի կարողանում հայելու մեջ ինքս ինձ ճանաչել: Նույն իսկ օրը, մր. Սպընլոն գրասենյակը փակելիս ասել էր ինձ, թե շատ ուրախ կլինի տեսնել ինձ իր տանը՝ Նորվուդում, մեր բարեկամությունը տոնելու համար. բայց թե դժբախտաբար տունը դեռ չէր կարգավորված, որովհետև իր աղջիկը, որ նոր էր Փարիզում իր ուսումն ավարտել, տակավին բացակա է: Հենց որ նա վերադառնա և տնտեսության զեկն իր ձեռքն առնի, մր. Սպընլոն պատիվ կունենա ինձ իր մոտ հրավիրելու: Ես գիտեի, որ մր. Սպընլոն այրի է և միայն մի դուստր ունի, և շնորհակալ եղա հրավերի համար:

Մր. Սպընլոն խոսքը պահեց: Մի երկու շաբաթ անցնելուց հետո, նա հիշեց իր խոստումն ու ասաց, թե անչափ երջանիկ կլինի, եթե շնորհ բերեմ իր մոտ առաջիկա շաբաթ օրը ու մինչև երկուշաբթի իր տանը մնամ: Հասկանալի է, որ լիակատար հոժարություն հայտնեցի. նա առաջարկեց իր կառքով տանել ինձ ու ետ բերել:

Պայմանավորված օրը որ հասավ, ձեռքիս պայուսակն անգամ մի հարգելի առարկա դարձավ ստորադրյալ գրագիրների աչքում, որոնց համար Նորվուդի տունը մի խորհրդավոր սրբավայր էր: Նրանցից մեկը հաղորդեց ինձ, թե իր լսածին նայելով՝ մր. Սպընլոյի սեղանի սպասքը բացառապես արծաթից են ու ճենապակուց. մյուսն ակնարկեց, թե նրա ճաշին, շամպայնից բացի, ուրիշ գինի չեն վայելում: Մր. Տիֆը անունով ծեր գրագիրը իր ծառայության երկար տարիների ընթացքում շատ անգամ էր մր. Սպընլոյի ապարանքը տեսել և մինչև անգամ նրա ճաշասենյակը ոտք դրել: Մր. Տիֆըի նկարագրությամբ այդ տունը մի

[44] Peppermint — օշինդր, անանուխ:

շքեղ ու հոյակապ պալատ է, ուր ինքը պատիվ է ունեցել հյուրասիրվելու Հնդկաստանի թուխ **շերիով**[45], որի հրաշալի համը տեսնելուդ պես աչքերդ ակամա քթթում են։

Այդ օրը մի հետաձգված գործ էր քննվում Կոնսիստորի Ատյանում՝ մի հացթուխ հրաժարվել էր թաղական խորհրդին մայթի հարկ վճարելուց, և որովհետև այս հին գործը, իմ կարծիքով, նույնիսկ Ռոբինզոն Կրուզոյից երկու անգամ երկար էր, հետևաբար վճիռը փոքր-ինչ ուշ կայացավ։ Բայց և այնպես հացթուխը ծխականների համայնքից վեց ամսով արտաքսելու և դատական ծախքերը վճարելու պատիժ ստացավ. այնուհետև ատյանի դատախազը, դատավորներն ու հացթուխի փաստաբանները (բոլորն էլ իրար հետ խնամի) միասին գյուղ գնացին, իսկ ես ու մր. Սպընլոն իր կառքով հեռացանք։

Դա մի հիանալի կառք էր։ Ձիերը սիգալով վզերը ծռում էին ու ժիր-ժիր ոտքերը դոփում. անշուշտ զգում էին, որ Դոկտորների Համայնքին են պատկանում։ Համայնքի անդամների մեջ պերճության խնդրում մի ահագին մրցում կար, և շատերը կարող էին իրենց կառքի շքեղությամբ պարծենալ։ Սակայն ճշմարիտ մնալու համար, ես միշտ ասել եմ և կասեմ, թե իմ օրով մրցակցության ամենամեծ առարկան օսլան էր։ Համարձակ կարելի է պնդել, որ յուրաքանչյուր դատավոր ու փաստաբան այնքան շատ օսլա էր կրում, ինչքան որ մարդկային ուժը կտաներ։

Շատ ուրախ առաջ էինք սլանում, և մր. Սպընլոն մի քանի կարևոր ակնարկներ արեց պաշտոնիս մասին։ Նա ասաց, թե աշխարհիս երեսին դրանից ազնիվ պաշտոն չկա և թե դա պետք չէ փաստաբանի կոչման հետ շփոթել. թե մերը անհամեմատ գերազանց է, ավելի որոշ է, ավելի պարզ և գլխավորը՝ շատ ավելի շահաբեր։ Մենք ամեն բան թեթև ենք քննում Համայնքում, և դրա շնորհիվ հասարակության մեջ մի արտոնյալ ու բացառիկ դասակարգ ենք։

– Հարկավ չի կարելի այն ցավալի հանգամանքը թաքցնել,– ասաց նա,– որ շատ անգամ մեզ աշխարհական փաստաբանի տեղ են դնում. բայց և այնպես մի բան հաստատ է, որ աշխարհական փաստաբանները ընդհանուր առմամբ սառը մարդիկ են, և Դոկտորների Համայնքի յուրաքանչյուր պարտաճանաչ պրոկտր կամ գործակալ իրավունք ունի բարձրից նայելու նրանց վրա։

Հարցրի մր. Սըպնլոյին, թե ո՞րն է ամենից ընտիր գործը Դոկտորների Համայնքում։ Պատասխանեց, թե անշուշտ ամենից լավը կտակների առթիվ ծագող դատերն են, ուր, օրինակի համար, երեսուն կամ քառասուն հազար ատեռլինգ արժող մի փոքր կալվածքի խնդիր կա։ Այսպիսի դեպքերում դատավարության ամեն մի քայլը շահաբեր է. յուրաքանչյուր հարցուփորձին թեր ու դեմ ցուցումները և փաստերը դիզվում են և թղթերից ամբողջ լեռներ են գոյանում, գործը մեկ ատյանից մյուսն է անցնում, երբեմն նույնիսկ Համայնքների ու Լորդերի Պալատը, և որովհետև վիճող կողմերը հավատացած են, թե գործը կտանեն, ուստի և բոլոր ծախքերը սիրով ու եռանդով վճարում են։ Այնուհետև մր. Սպընլոն մի ընդհանուր ներբող նվիրեց Դոկտորների Դատարանին։

– Ամենից ավելի զարմանալին Դոկտորների Դատարանում,– ասաց նա,– նրա միաձուլությունն է, նրա միության ու համերաշխության ոգին է։ Դոկտորների Համայնքի պես կանոնավոր դատարան հազիվ թե գտնվի աշխարհում։ Նրա մեջ հանգստության ու դյուրության գաղափարն է մարմնացած։ Օրինակի համար, դուք մի ապահարզանի գործ ունեք Կոնսիստորում։ Շատ լավ։ Գործը հանդարտ կերպով ծանր ու բարակ, ընտանեբար քննվում է Կոնսիստորի Ատյանում։ Դիցուք թե գոհ չեք Կոնսիստորից. ի՞նչ կանեք այդ դեպքում։ Հարկավ Կամարների Ատյանին կդիմեք։ Շատ լավ։ Սակայն Կամարների Ատյանն ի՞նչ է։ Միևնույն դատարանը, միևնույն դահլիճում, միևնույն անջրպետով, միևնույն փաստաբաններով, միայն թե մի ուրիշ դատավորով, որովհետև Կոնսիստորի դատավորը

[45] Խերես։

կարող է արդեն փաստաբան հանդիսանալ Կամարների Ատյանում: Այնտեղ էլ սկսվում է նույն ընտանեկան խաղը, նույն կարգով: Բայց դուք դարձյալ դժգոհ եք: Շատ լավ: Ի՞նչ կմնա ձեզ անել: Դիմել անշուշտ եկեղեցական փոխանորդներին: Սակայն այդ փոխանորդները ովքե՞ր են: Պարապ, անգործ փաստաբաններ, որոնք արդեն տեսել են, թե առաջին երկու ատյաններում թղթերն ինչպե՞ս են կտրվել, բաժանվել ու խաղացվել, և որոնք բոլոր մասնակիցների հետ հանգիստ խոսել են խաղի մասին: Այժմ նրանք են առաջ գալիս, իբրև թարմ ու նոր դատավորներ, որպեսզի ամենքի համար գոհացուցիչ վճիռ դնեն: Անպատկառ լեզուները կարող են ասել, թե Համայնքը կաշառակեր է, թե Համայնքը գաղտնապահ է, թե անհրաժեշտ է հիմնիվեր վերանորոգել Համայնքը: Սակայն,– հանդիսավոր ձևով վերջացրեց մր. Սպընլոն,– երբ ցորենի գինը սոսկալի բարձրացել էր, ո՞վ ամենից շատ այդ խնդրի քննությամբ զբաղվեց, եթե ոչ Դոկտորների Համայնքը: Ձեռքս կրծքիս դնելով, ամբողջ աշխարհի առջև համարձակ կասեմ. «Դիպեք միայն Համայնքին, և Անգլիան կորած է»:

Ուշի-ուշով ականջ էի դնում այդ բոլորին և թեպետ լավ չէի հասկանում, թե իսկապես ո՞ր երախտյաց համար է Անգլիան շնորհապարտ Դոկտորների Համայնքին, այնուամենայնիվ, մր. Սպընլոյի կարծիքն ակնածությամբ ընդունեցի: Իսկ գալով ցորենի գնին, համեստաբար զգում էի, որ այս զորավոր փաստը իմ տկար խելքի հասկանալու բանը չէ: Տարիների ընթացքում շատ անգամ եմ առիթ ունեցել ուսումնասիրելու ցորենի վաճառման տնտեսական օրենքները, սակայն պիտի խոստովանեմ, որ ինձ համար մինչև հիմա մի անլուծելի գաղտնիք է, թե ցորենի գնի բարձրանալու կամ իջնելու մեջ ի՞նչ մաս ուներ հատկապես Դոկտորների Համայնքը:

Սա մի փոքրիկ շեղում է: Ես հարկավ չէի կամենա Համայնքի պատիվը շոշափել և Անգլիայի կործանման պատճառ դառնալ: Տարիքով ու փորձով ինձնից ավագ մեծավորիս կարծիքներին ես լուռ հնազանդությամբ հավանություն տվի. այնուհետև մեր խոսակցության նյութը դարձավ իմ տեսած «Օտարականը», առհասարակ ողբերգությունը, կառքին լծած ձիերի զույգը, և այսպես եկանք հասանք մր. Սպընլոյի դարբասին:

Մր. Սպընլոյի տան առաջ մի սիրուն պարտեզ էր տարածվում. չնայած տարվա եղանակին, նա դեռ այնպես լավ էր պահված, որ հիացրեց ինձ: Պարտեզում կային սիրուն մարգեր, ծառերի թավուտ խմբեր, ոլորապտույտ ու ստվերաշատ շավիղներ՝ ցանցապատ կամարներով, որոնց վրա գարնանը անշուշտ պատատուկներ ու ծաղիկներ էին բուսնում: «Երևի միս Սպընլոն սովորաբար այդտեղ է զբոսնում,– անցավ մտքովս:– Օ՜հ, աստված իմ»:

Ներս մտանք. տունը պայծառ լուսավորված էր. և նախասենյակում ես տեսա ամեն տեսակ գլխարկներ, վերարկուներ, թիկնոցներ, պլեդներ, ձեռնոցներ, մտրակներ ու գավազաններ: «Որտե՞ղ է միս Դորան»,– հարցրեց սպասավորին մր. Սպընլոն: «Դորա,– մտածեցի ես:– Ի՜նչ սիրունիկ անուն է»:

Ոտք դրինք մերձակա սենյակը (երևի թե այն իսկ սենյակը, որ ծեր գրագրի վայելած Հնդկաստանի թուխ շերիով էր անվանի), և ականջիս մի ձայն հասավ, որ ասում էր. «Մր. Կոպպերֆիլդ, ահա իմ դուստր Դորան, ահա և Դորային ընկերուհին»: Անշուշտ մր. Սպընլոյի ձայնն էր այն, սակայն չիմացա թե ո՞ւմն էր. ումն էլ լիներ, ինձ ի՞նչ փույթ: Բանս արդեն պրծած էր, ճակատագիրս նույն վայրկյանին որոշված: Ես գերված էի, ստրուկ էի, ուշք ու միտքս թոցնելու չափ սիրահարված միս Դորա Սպընլոյին:

Նա մարդկային արարած չէր, ո՜չ: Մի հավերժահարս էր, մի ոգի էր, մի փերի – էլ չգիտեմ՝ մի այնպիսի բան, որ ոչ ոք երբեք չի տեսել, բայց որին միշտ կարոտ է ամեն մարդ: Մի ակնթարթում ես վառ սիրո անդունդի մեջ գահավիժեցի: Ո՜չ ժամանակ կար դրա եզերքին կանգնելու, ո՜չ էլ առաջ և կամ ետ նայելու. դեռ օրիորդին մի խոսք չասած՝ ես այդ վիհը գլորվեցի:

– Ես առաջ էլ տեսել եմ մր. Կոպպերֆիլդին,– ասաց մի ծանոթ ձայն, մինչ գլուխ էի տալիս չգիտեմ թե ինչ մրմնջալով:

Այդ ասողը Դորան չէր։ Ո՛չ. այլ նրա մտերիմ ընկերուհին՝ միս Մեորդստոնը։

Սակայն այս անակնկալ հանդիպումից ես կարծեմ չշփոթվեցի։ Որքան հիշում եմ իմ մեջ այլևս շփոթվելու կամ ապշելու կարողություն չէր մնացել։ Այս նյութական աշխարհում Դորայից զատ բան չկար, որ ապշության կամ զարմանքի արժանի լիներ։

– Ինչպե՞ս եք, միս Մեորդստոն, ողջ առո՞ղջ։

– Լիովին առողջ,– պատասխանեց նա։

– Իսկ մր. Մեորդստոնը ինչպե՞ս է։

– Շնորհակալ եմ, եղբայրս էլ քաջառողջ է։

Ապա թե մր. Սպընլոն, որ կարծեմ շվարած էր մեր իրար ճանաչելը տեսնելով, ասաց.

– Ուրախ եմ, մր. Կոպպերֆիլդ, որ դուք ու միս Մեորդստոնը իրար հետ արդեն ծանոթ եք։

– Մր. Կոպպերֆիլդն ու ես իրար փոքր ինչ մոտիկ ենք,– ասաց միս Մեորդստոնը խիստ ձայնով։– Մի ժամանակ լավ ծոնթ էինք։ Այդ նրա մանկության օրերումն էր։ Այնուհետև հանգամանքները մեզ բաժանեցին։ Ես կդժվարանայի ճանաչել նրան։

Իսկ ես ասացի, թե միշտ և ամեն տեղ կճանաչեի նրան, և այս լիովին ճշմարիտ էր։

– Միս Մեորդստոնը,– ասաց մր. Սպընլոն, ինձ դիմելով,– բարություն ունի, եթե ներվի այսպես ասել, ընկերուհու պաշտոն վարելու իմ դստեր մոտ։ Դորաս դժբախտաբար որբ է մորից, և այժմ միս Մեորդստոնն է նրա ընկերն ու պաշտպանը։

Մտքովս անցավ, որ միս Մեորդստոնը կենսապահ (life-preserver) ասված գործիքի նման շատ ավելի մեկի վրա հարձակվելու պիտանի էր, քան թե ումևիցե պաշտպանելու։ Սակայն Դորային նայելուս պես այս գաղափարը մի խուսափուկ ստվերի նման չքացավ։ Դորայից բացի, ոչ մի բան չէր կարող երկար գրավել իմ միտքը։ Նրա փոքր-ինչ կայտառ ու քմահաճ շարժումներն առիթ էին տալիս կարծելու, թե նա շատ գոհ չպիտի լիներ իր ընկերակցից կամ պաշտպանից։ Այդ րոպեին զանգակը հնչեց, որը, մր. Սպընլոյի ասելով, ճաշի առաջին հրավերն էր, և մենք գնացինք մեր հանդերձը փոխելու։

Գնա ու հանդերձ փոխիր և կամ մի ուրիշ բան արա, երբ վառված ես անհուն սիրո բոցերով։ Ես կարող էի միայն նստել և պայուսակիս բանալին ատամներիս մեջ բռնած՝ հրապուրիչ, հրաչյա, կուսական, չնաշխարհիկ Դորայի մասին մտածել։ Օ՜հ, ի՜նչ իրան, ինչպիսի՜ դեմք, ի՜նչ հրաշագեղ, ի՜նչ շնորհալի ու դյութական շարժումներ։

Զանգակը երկրորդ անգամ հնչեց և այնպես շուտ, որ ես կարողացա միայն հապճեպ շորերս հագնել՝ փոխանակ ուշի-ուշով հարդարելու, ինչպես որ այն պարագայում պետք էր անել, և ներքև իջա։ Ճաշարանում հավաքված էին մի քանի մարդիկ։ Դորան խոսում էր մի ալևոր պարոնի հետ։ Չնայելով ալևորի հասակին ու թոռներին (նա ինքն էր ասում, թե պապ է), ես մոլեգին խանդ զգացի դեպի նա։

Ինչպե՞ս նկարագրեմ հոգուս վիճակը։ Ես ամենքին նախանձում էի։ Չէի կարող մարսել, թե կան մարդիկ, որոնք ինձնից ավելի են մր. Սպընլոյին ճանաչում։ Բարկությունս գալիս էր, երբ նրանք այնպիսի բաներ էին խոսում, որոնց հետ ես առնչություն չունեի։ Երբ մի հերաթափ, ճաղատ պարոն սեղանի հակառակ կողմից սիրալիր հարցրեց ինձ, թե արդյոք այս առաջին անգա՞մն է, որ տեսնում եմ մր. Սպընլոյի պարտեզը, ամեհի կատաղությունից չգիտեի թե ի՞նչ անեմ նրան։

Չեմ հիշում, թե էլի ովքեր կային այնտեղ, բացի Դորայից։ Չեմ մտաբերում, թե ի՞նչ կերակուրներ մատուցեցին մեզ՝ Դորայից բացի։ Ինձ թվում էր, թե միայն Դորային եմ ճանաչում, նրանով միայն կշտանում. գոնե հինգ-վեց պնակ առանց դիպչելու անցկացրի։ Ես նստած էի նրա կողքին։ Խոսում էի միայն նրա հետ։ Դորան ամենազվարթ ձայնիկն ուներ,

վարակիչ ժպիտ, գրավիչ ձևեր։ Մի՞թե կարելի էր ինձ նման երիտասարդին՝ նրա գերին, նրա ստրուկը չդառնալ։

Երբ նա միս Մեորդստոնի հետ ճաշարանից հեռացավ (ուրիշ տիկնայք չկային այնտեղ), ես զմայլական ցնորքների մեջ ընկա, որոնք միայն այն դառն կասկածով էին պղտորվում, թե միս Մեորդստոնը Դորայի մոտ վարկս կկոտրի։ Բարի դեմքով ճաղատ պարոնը ինձ մի երկար բան պատմեց, որ կարծեմ պարտիզպանության էր վերաբերվում։ Գոնե հիշում եմ, որ մի քանի անգամ «իմ պարտիզպանը» խոսքերը կրկնեց։ Ցույց էի տալիս, թե ամենախոր ուշադրությամբ լսում եմ նրան, բայց մտքերս Դորայի հետ զբոսնում էին եդեմական պարտեզում։

Իմ պաշտած էակի առջև զրպարտվելուս կասկածը է՛լ ավելի սաստկացավ, երբ դահլիճ մտանք, ուր նստած էր ահարկու միս Մեորդստոնը։ Սակայն մի անակնկալ դիպվածով այս երկյուղս փարատվեց։

– Դավիթ Կոպպերֆիլդ,– ասաց միս Մեորդստոնը,– հարկ չկա երկար խոսելու մեր ընտանեկան դեպքերի մասին։ Դրանք շատ գրավիչ նյութեր չեն։

– Ամենևին,– ասացի ես։

– Այո, բնավ գրավիչ չեն,– կրկնեց միս Մեորդստոնը։– Չեմ կամենում հին կռիվների, անցած-գնացած թշնամանքների հիշատակը նորոգել։ Ես վիրավորանք կրեցի մի անձից. . . որ դժբախտաբար իմ սեռին է պատկանում և որի մասին չեմ կարող առանց բարկության խոսել. ուստի լավ է նրա անունը չհիշենք։

Տատիս պատվին դիպչող ակնարկը լսելուս պես՝ պատրաստ էի բորբոքվել, բայց խոհեմություն ունեցա այս միայն ասելու, թե միս Մեորդստոնը լավ կանի, եթե բնավ չհիշատակի այն անձին, որովհետև ես չեմ հանդուրժի, որ անպատկառ լեզվով խոսեն նրա մասին։

Միս Մեորդստոնը աչքերը փակեց և գոռոզաբար գլուխը հակեց. հետո աչքերը հանդարտ բանալով, շարունակեց.

– Դավիթ Կոպպերֆիլդ, չեմ ուզում թաքցնել, որ ես ձեր մասին աննպաստ կարծիք ունեի այն ժամանակ, երբ դուք մանուկ էիք։ Գուցե սխալվում էի և կամ գուցե դադարել եք արդարացնել կարծիքս։ Համենայն դեպս, հին դարմանը քամուն չտանք։ Այս մասին այժմ ոչ մի խոսք թող չլինի մեր միջև։ Ես անդամ եմ մի այնպիսի գերդաստանի, որ կարծեմ իր հոգու հաստատությամբ հայտնի է, և ես այն էակը չեմ, որ մի չնչին դեպքի պատճառով փոխվեի։ Ես կարող եմ ձեր վերաբերմամբ իմ կարծիքն ունենալ, դուք էլ ձերը՝ իմ վերաբերմամբ։

Այժմ ես հակեցի գլուխս։

– Սակայն,– հարեց միս Մեորդստոնը,– պետք չէ, որ մեր կարծիքներն այստեղ իրար ընդհարվեն։ Ներկա պարագաներում լավ կլինի, եթե նրանք չընդհարվեն։ Քանի որ մենք կյանքի բերումով նորից իրար պատահեցինք, և գուցե դարձյալ այսպիսի բան կրկնվի, լավ կանենք, եթե իրար հետ իբրև հասարակ ծանոթներ վարվենք։ Հոժա՞ր եք։

– Միս Մեորդստոն,– ասացի ես,– դուք և ձեր եղբայրը շատ անգութ էիք վարվում ինձ հետ, շատ էիք տանջում մայրիկիս։ Այս կարծիքը մինչև կյանքիս վերջին շունչը չպիտի փոխեմ։ Բայց և այնպես ձեր առաջարկն ընդունում եմ։

Միս Մեորդստոնը աչքերը վերստին փակեց ու գլուխը թեքեց։ Հետո իր կոշտ ու սառն մատի ծայրով ձեռքիս դիպավ և հեռացավ, իր դաստակի ու վզի մանր շղթաները շտկելով, որոնք իսկ և իսկ այն դիրքն ունեին, ինչպես և մեր նախորդ հանդիպման միջոցին։ Նրանք հիշեցրին ինձ բանտի դռան վրա դրսից կախվող շղթաներն ու կապանքները, որոնք անցվորին իմաց են տալիս, թե ի՞նչ կարող է նա ներսը գտնել։

Երեկույթի մյուս հիշատակներից մտքիս մեջ այս է մնացել հատկապես, որ սրտիս թագուհին կիթառի նման մի սիրուն գործիքի դաշնակցությամբ հիանալի ֆրանսերեն երգեր էր երգում, որոնց ընդհանուր իմաստն այն էր, թե ինչ էլ աշխարհումս պատահի, մեր պարտքն է միշտ պարել- տրա-լա-լա, տրա-լա-լա։ Ես լողում էի երանության զառանցանքի ալիքներում։ Օշարակի ու մրգերի վրա նայելն անգամ ատելի էր ինձ, իսկ պունչը՝ զզվելի։ Երբ միս Մեորդստոնը դիցուհուս տանելու եկավ, սա ժպտաց և իր վարդագույն թաթիկը ինձ մեկնեց։ Հայելու մեջ դեմքս ապուշ ու տխմար էր երևում։ Վերջապես իմ սենյակը քաշվեցի և խելացնոր դրության մեջ անկողին մտա, լուսադեմին դեռ մտքերս մոլորված էին։

Սքանչելի էր առավոտը. ես ուզեցի մի պտույտ անել պարտեզում և նազելի կույսի մասին մտածելով հոգիս պալարել։ Գավթից անցնելիս տեսա նրա շնիկին՝ Ջիպին, նվազանունը Ջիպսի[46]։ Փաղաքշելով մոտեցա նրան, որովհետև նա էլ ինձ սիրելի էր, բայց շնիկը ատամները կրճտեց, մռմռաց և նստարանի տակ մտավ. բնավ չուզեց փաղաքշանքներս ընդունել։

Այգին զով ու լռիկ էր։ Շրջում էի այն երջանկությունը երազելով, որ պիտի զգայի, եթե ես բախտի բերմամբ մր. Սպընլոյի գերահարաշ դստեր հետ նշանվեի։ Գալով ամուսնության, օժտին, իմ ու հարսի կարողության և ուրիշ նյութական հաշիվներին, ես նույնչափ անմեղ էի, որչափ և մանուկ Էմիլին սիրած օրերին։ Պարզ անվանել նրան «Դորա», նամակներ գրել նրան, սիրել, պաշտել, վստահ լինել, թե նա ուիշների շրջանում անգամ ինձ կհիշի՝ այս է ըստ իս մարդկային երջանկության կատարը։ Ես այդ միջոցին մի անմիտ, դյուրագորով տղա էի. բայց զգացումներս այն աստիճան սուրբ էին, որ ինչքան էլ այժմ ծիծաղելի երևան, մտքովս անգամ չի անցնում նրանց հիշատակն արհամարհել։

Մինչ այդպես զբոսնում էի, հանկարծ նրան հանդիպեցի մի ծառի տակ։ Այսօր էլ դեռ այդ հանդիպումը հիշելիս սարսուռ եմ զգում և գրիչը մատներիս մեջ դողում է։

– Ի՜նչ վաղ եք... վեր կացել... միս Սպըփնթոնըն,– ասացի ես։

– Էհ, սենյակի օդն այնպես ծանր է,– ասաց նա,– և միս Մեորդստոնը այնպես բթամիտ։ Նրա հիմար փնթփնթոցին նայելով, մինչև որ եղանակը չպարզվի, տանից դուրս գալ չի կարելի։ Չի կաելի։– Այս ասելիս նա քրքրջաց ամենահնչուն ձայնիկով։– Կիրակի առավոտ ես դաշմամուր չեմ նվագում. ուրեմն մի բան անել պե՞տք է, թե չէ։ Եվ ահա զբոսնում եմ։ Հայրիկիս էլ երեկոյան ասացի, թե պիտի զբոսնեմ։ Օրվա այս զվարթ ժամին որ ման չգաս, էլ ե՞րբ։ Ի՞նչ եք կարծում։

Վրաս քաջություն եկավ ասելու և ասացի (թեպետ և կակազելով), թե եղանակը շատ պայծառ է, թեև մի րոպե առաջ շատ միգապատ էր թվում ինձ։

– Այդ ի՞նչ է,– հարցրեց Դորան,– կոմպլիմենտ եք ուզում անել, թե եղանակն իրոք փոխվել է։

Եվս ավելի կակազելով պատասխան տվի, թե ասածս կոմպլիմենտ չէ, այլ զուտ ճշմարտություն, թեև օդի մեջ ոչ մի փոփոխություն չէի նկատել։– Իմ խոսքը զգացումներիս մասին է,– ավելացրի ես պարկեշտորեն՝ բացատրությանս վերջ տալու համար։

Այդպիսի գանգուրներ, որ նա թոթվեց իր շիկնելը ծածկելու համար, ես օրումս չէի տեսել, և մի՞թե կարելի էր տեսնել, քանի որ նրանց նման գանգուրներ ոչ եղել էին, ոչ էլ կային աշխարհում։ Իսկ գալով նրանց պսակող ծղոտե գլխարկին ու կապույտ ժապավեններին, օ՜հ, եթե հնար գտնեի այդ բոլորը սենյակումս կախելու Բուկինգեմի փողոցում, ի՜նչ անգին զարդ կլիներ։

– Դուք նո՞ր եք վերադարձել Փարիզից,– ասացի ես։

– Այո՛,– ասաց նա։– Իսկ դուք Փարիզում եղե՞լ եք։

---

[46] Gipsy — գնչու, բոշա, ցիգան։

– Ո՛չ։

– Ափսոս։ Հուսով եմ, որ շուտով կերթաք։ Փարիզը շատ-շատ դուր կգա ձեզ։

Երեսի վրա խոր վշտի նշաններ երևացին։ Որտեղի՞ց էր այդ հույսը, նա ինչպե՞ս կարողացավ ենթադրել, մտքով անգամ անցկացնել, թե ես Փարիզ գնալու ընդունակ եմ։ Ա՛յ անտանելի գաղափար։ Ատեցի Փարիզը, ատեցի ամբողջ Ֆրանսիան։ Ասացի, թե ներկա հանգամանքներում, աշխարհիս բոլոր գանձերն էլ որ ինձ տան, չեմ հեռանա Անգլիայից։ Ոչ մի բան չի ստիպի ինձ այդ քայլն անել։ Կարճ ասած՝ նա նորից գանգուրներով սքողելու վրա էր, երբ շնիկը վազելով հասավ ու նեղ վիճակից ազատեց ինձ։

Այդ շնիկը չարաչար նախանձում էր ինձ և վրաս հաչելուց չէր դադարում։ Դորան իր գիրկն առավ նրան... ո՛վ երկինք... և շոյեց, բայց կենդանին դարձյալ հաչում էր։ Նա թույլ չտվեց, որ ես էլ իրեն մի քիչ շոյեմ. այն ժամանակ օրիորդը ծեծեց նրան։ Վշտերս կրկնապատիկ սաստկացան, երբ Դորան շնիկին պատժելու համար իր սիրուն մատիկներով նրա բութ դնչին թեթև խփեց, մինչ շնիկը աչքերը քթթելով տիրուհու ձեռքը լիզում էր ու ինքն իրեն մռմռում։ Վերջապես նա հանգստացավ (և ինչպես չհանգստանար, երբ Դորան իր թշիկը նրա գլխին դրավ), և մենք գնացինք ջերմանոցը տեսնելու։

– Դուք կարծեմ միս Մեորդստոնի հետ շատ մտերիմ չեք, այնպես չէ՞,– ասաց Դորան։– Սիրունիկս։

(Այս վերջին բառը շանն էր ուղղված։ Երանի թե ինձ ուղղված լիներ։)

– Ո՛չ,– պատասխանեցի ես։– Ամենևին մտերիմ չեմ։

– Շատ ձանձրալի արարած է,– ասաց Դորան, շրթունքներն ուռցնելով։– Չեմ հասկանում, թե ինչո՞ւ հայրիկս մի այդպիսի փնթփնթող պառավ է ընտրել ինձ համար, իբրև ընկերուհի։ Ո՞ւմ է հարկավոր այդ պաշտպանը։ Իհարկե ոչ ինձ։ Այդ Մեորդստոնից ավելի լավ կպաշտպանե ինձ Ջիպը, չէ՞ Ջիպ։

Ջիպն իր աչքերը ծույլ-ծույլ քթթեց, երբ Դորան նրա կլոր գլուխը համբուրեց։

– Հայրիկս իմ մտերիմ ընկերուհին է անվանում նրան, բայց մի՞թե միս Մեորդստոնը մի մտերիմ ընկերուհի է, ասա Ջիպ։ Ջիպն ու ես ամենևին կարոտ չենք մի այդպիսի մրթմրթան ընկերուհու։ Մենք ում ուզենանք, նրա հետ մտերիմ կլինենք, և ինքներս բարեկամներ կգտնենք՝ փոխանակ ուրիշը գտնի մեզ համար. այդպես չէ՞, Ջիպ։

Պատասխանի տեղ՝ Ջիպը կաթսայում եռացող ջրի ձայն հանեց։ Իսկ ինձ գալով, Դորայի ամեն մի բառը մի նոր շղթա էր, որ ավելի ու ավելի էր կապում ինձ։

– Շատ ցավալի է, որ մի սիրելի մայրիկ չունենք, և ստիպված ենք մայր ճանաչել միս Մեորդստոնի նման մի կռվասեր, անշնորհք պառավի, որ միշտ մեր հետևից լրտեսի պես ման է գալիս. չէ՞, Ջիպ։ Բայց փույթ չէ, Ջիպ։ Մենք նրա հետ մտերիմ չենք լինի և առանց նրան՝ բախտավոր կլինենք։ Թող որքան ուզենա զայրանա, մենք նրան հակառակ կգնանք, այնպես չէ՞, Ջիպ։

Եթե այս ճառը ևս մի րոպե տևեր, ես անպատճառ Դորայի առջև ավազի վրա կչոքեի ծունկերս քերծելու վտանգով, և ինձ անշուշտ դուրս կանեին։ Բայց ջերմոցը բարեբախտաբար հեռու չէր, և հենց որ Դորան լռեց, մենք միասին ներս մտանք։

Ջերմոցը բազմազան խորդենիներով (geranium) լիքն էր։ Սկսեցինք ման գալ նրանց առջև։ Այս կամ այն ծաղկի վրա հիանալու համար՝ Դորան հաճախ կանգնում էր. ես էլ հետևում էի նրան։ Երբեմն ծիծաղելով վերցնում էր շնիկին ու ստիպում, որ ծաղիկները հոտոտի, և եթե մենք երեքս էլ դրախտում չէինք, գոնե ես այնտեղ էի։ Խորդենու տերևի բուրմունքը դեռ այսօր էլ թե՛ ծիծաղելի և թե՛ լուրջ ազդեցություն է գործում իմ վրա, մի վայրկյանում մտքերիս ընթացքը շրջելով. ես իսկույն մի հարդե գլխարկ, կապտագույն ժապավեններ, ճոխ

գանգուրներ, մի սև շնիկ և սրան գույնզգույն ծաղիկների թմբի դեմ բռնած մի զույգ քնքուշ ձեռքեր եմ մտաբերում։

Միս Մեորդստոնը փնտրում էր մեզ։ Նա մեզ ջերմոցում գտավ և իր տգեղ այտը, որի խորշոմները փոշով լավ լցված էին, Դորայի շուրթերին մոտեցրեց, և Դորան ակամա համբուրեց նրան։ Հետո նա թևանցուկ արեց Դորային և այնպես հանդիսաբար դեպի ճաշարան առաջնորդեց, որ կասեիր թե մի զինվորի հուղարկավորության են մասնակցում։

Թեյ պատրաստողը Դորան էր. ուրեմն մի հարցնեք, թե քանի բաժակ խմեցի։ Հիշում եմ միայն, որ պարպած բաժակներիս քանակից քիչ էր մնում ջղերս բոլորովին խանգարվեին։ Փոքր-ինչ հետո եկեղեցի գնացինք։ Միս Մեորդստոնը Դորայի ու իմ միջև տեղ բռնեց. սակայն ես Դորայի երգելը լսեցի և ամեն բան մոռացա։ Մի քարոզ էլ խոսվեց... անշուշտ Դորայի մասին... և, ցավալի բան՝ այս է միայն մտքումս մնացել նույն օրվա ամբողջ ժամերգությունից։

Օրը շատ հանդարտ անցավ։ Հյուրեր չեկան. ելանք փոքր-ինչ զբոսնելու, հետո չորսս միասին ճաշեցինք, հետո սկսեցինք գրքեր ու նկարներ թերթոտել։ Միս Մեորդստոնը՝ քարոզագիրքն առջևը բռնած, մի արթուն պահակի պես հսկում էր։ Ահ, մր. Սպընլոն, ճաշից հետո թաշկինակով երեսը ծածկած, իմ հանդեպ նստած էր, երազել անգամ չէի կարող, թե ինչպես ես երևակայությանս մեջ ջերմ-ջերմ համբուրում էի նրան, իբրև նրա փեսան։ Նրա մտքովն էլ չանցավ, երբ երեկոյան հրաժեշտ էր տալիս, թե նա արդեն համաձայնել է իմ ու Դորայի նշանվելուն. և թե ես օրհնելով օրհնում եմ նրա հայրական գլուխը։

Հետևյալ առավոտյան վաղ պիտի մեկնեինք, որովհետև մի վթարված նավի փրկության գործը պիտի քննվեր Ծովակալության Ատյանում։ Քննության համար անհրաժեշտ էր քաջ գիտենալ նավարկության արվեստը, որից փոքր ի շատե բան հասկացող դժվար էր գտնել Համայնքի մեջ, այս պատճառով նախագահը վճռել էր երկու ծեր Երրորդության վարպետներ[47] հրավիրել, որպեսզի գոնե նրանք ի սեր մարդկության գան իրեն օգնելու։ Չնայելով վաղ ժամին, Դորան արդեն թեյ էր պատրաստում։ Կառք նստելիս ես մի տխուր հաճույք ունեցա նրան մնաս բարով ասելու, մինչ նա՝ Ջիպին գրկած նայում էր մեզ շեմքի վրայից։

Թե այդ օրն ի՛նչ քաշեցի Ծովակալության Ատյանում, թե դատը որքա՛ն խառը, որքան շփոթ թվաց ինձ, թե ինչպե՛ս էի **Դորա** կարդում այն արծաթե թիի երեսին, որ դրված էր դատավորի սեղանի վրա՝ իբրև մի բարձր իրավասության նշանակ. թե ի՛նչ զգացի, երբ մր. Սպընլոն, ինձ թողնելով տուն գնաց (հիմարաբար սպասել էի, թե ինձ էլ հետը կտանի). թե ինչպե՛ս մի նավաստի կարծեցի ինձ, որի նավը հեռացել է և ինքը մի ամայի կղզու վրա մենակ մնացել՝ այս բոլորը նկարագրելու զուր փորձեր չեմ անի։ Եթե հին ատյանը գեթ մի վայրկյան իր թմրությունից սթափվեր և ակներև պատկերացներ, թե ես ինչեր եմ երազում արթուն ժամանակ նույն ատյանի հարկի տակ, նա հարկավ ճշմարտությունը կիմանար։

Եվ այսպիսի երազներով պաշարված էի ոչ թե միայն նույն օրը, այլև հետո շատ օրեր, շաբաթներ ու ամիսներ։ Ես գնում էի դատարան ոչ թե մի գործ անելու համար, այլ միմիայն Դորայի մասին մտածելու։ Եթե երբեմն ուշք էլ դարձնեի քննվող դատերին, դարձնում էի միայն նրա համար, այն էլ հատկապես ամուսնական դատերի ժամանակ, որ զարմանալով հարցնեմ ինձ՝ մի՞թե կարելի է, որ ամուսնացած մարդիկ միշտ երջանիկ չլինեն (ես ու Դորան հարկավ երջանիկ կլինենք). իսկ ահագին ժառանգության դեպքերում այն էր միայն զբաղեցնում ինձ, թե ամենից առաջ ինչեր կառնեի Դորայի համար, եթե կտակված գումարներն ինձ հասնեին։ Կրքիս բորբոքման առաջին շաբաթը ես չորս հատ շքեղ բաճկոն գնեցի, իհարկե, ոչ ինձ համար, ես այսպիսի բաներով չէի շփանում, այլ Դորային դուր գալու համար, և սկսեցի հարդագույն ձեռնոցներ հագնել. հենց այդ ժամանակ էլ ոտքերիս

---

[47] Friniti Masters — այսպես են կոչվում դեռ 1515 թ. հաստատված ընկերության անդամները, որոնց նպատակն է նավարկության արվեստը զարգացնել և մանավանդ փարոսները, խարիսխները և ուրիշ ծովային զգուշության միջոցները շատացնել։

կոշտուկներ առաջացան։ Եթե հնար լիներ այն ժամանակվա կոշիկներս ձեռք բերել ու համեմատել ոտքերիս բնական չափի հետ, նրանք հուզիչ կերպով ցույց կտային, թե ինչ էր սրտիս վիճակը։

Սակայն չնայելով որ այդքան հաշմեցնում էի ինձ Դորայի համար, օր չէր լինում, որ մղոններ չանցնեի նրան տեսնելու քաղցր հույսով։ Մի քանի օրից հետո, ես ոչ միայն Նորվուդի ճանապարհի վրա մի թղթատարի պես հանրաճանոթ մարդ դարձա, այլ Լոնդոնի փողոցներն էլ չափեցի։ Թափառում էի մանավանդ կանանց նորելքի խանութների առջև, ուրվականի նման հածում էի շուկայում, քարշ էի գալիս Հայդ Պարկում, մինչև ոտքերս ջարդվեին։ Երբեմն-երբեմն, այն էլ երկար ընդմիջումներից հետո, տեսնում էի նրան։ Երբեմն կարծես ձեռնոցը շարժելով, ողջունում էր ինձ կառքի պատուհանից. հաճախ էլ հանդիպում էի նրան մայթի վրա՝ միս Մեորդստոի հետ միասին և հետը փոքր-ինչ խոսակցում։ Այդպիսի դեպքից հետո, ես չարաչար տանջվում էի մտածելով, թե ինչո՞ւ նրան չասացի, ինչ որ պիտի ասեի, թե նա գուցե չի էլ իմանում զգացումներիս ջերմությունը և կամ գուցե բոլորովին մոռացել է ինձ։ Չեզ եմ թողնում երևակայել, թե ինչ սրտով էի սպասում մր. Սպընլոյի նոր հրավերին։ Սակայն, ափսոս, ոչ մի հրավեր չկար։

Մրս. Կրոպպը երևի մի շատ նրբանկատ էակ էր, այս սերս նոր էր սկսել արծարծվել և ես Ագնեսին անգամ չէի վստահացել ավելի բացահայտ բան գրել, բացի այն բանից, թե եղել եմ մր. Սպընլոյի մոտ, «որի գերդաստանը բաղկացած է միայն մի դստրից», մրս. Կրոպպը, ասում եմ, մի շատ խորաթափանց կին պիտի լիներ, որ հենց սկզբից կարողացավ սրտիս գաղտնիքն իմանալ։ Մի երեկո, երբ տխուր նստած էի, նա եկավ ինձ մոտ ու հարցրեց (իր հայտնի ցավը նորոգվել էր) չե՞մ կարող արդյոք տալ իրեն փոքր-ինչ կարդամոնի ու խավարծիլի երփնաջուր՝ յոթ կաթիլ մեխակի հյութով անուշացրած, որը իր հիվանդության ամենալավ դեղն է. իսկ եթե այս բանը չունենամ, չէ՞ր կարելի փոքր-ինչ օղի տալ նրան, որ խավարծիլից հետո ամենալավ դեղն է։ Դա այնքան ախորժելի չէ, ասաց նա, բայց և առաջինից հետո լավագույնն է։ Առաջինի անունն օրումս լսած չլինելով, իսկ երկրորդից միշտ մի շիշ ունենալով պահարանիս մեջ, առաջարկեցի մրս. Կրոպպին երկրորդ դեղից մի բաժակ, որ նա սկսեց իմ ներկայությամբ խմել (ցույց տալու համար, թե վատ նպատակով չէր խնդրել)։

– Զվարթացեք, սըր,– ասաց մրս. Կրոպպը։– Ես չեմ կարող ձեզ տրտում տեսնել։ Ես էլ մայր եմ։

Չհասկացա, թե ինչ կապ կար այդ «մայր» բառի ու իմ միջև, բայց և այնպես հնար եղածին չափ սիրալիր ժպտացի մրս. Կրոպպին։

– Լավ է, լավ, սըր,– շարունկեց նա։– Ներեցեք։ Գիտեմ, բանն ինչումն է։ Օրիորդի մատ կա գործի մեջ։

– Մրս. Կրո՞պպ,– պատասխանեցի ես կարմրելով։

– Ապրեք, սըր, ամենևին մի վհատվեք,– գոչեց մրս. Կրոպպը քաջալերիչ եղանակով։– Սիրտ առեք, սըր։ Եթե այն մեկը չի ուզում ձեզ ժպիտ շնորհել, ուրիշ շատերը կգտնվեն, որ կշնորհեն։ Դուք այնպիսի ջենտլմեն չեք, մր. Կոպպերֆուլ[48], որին կարելի լինի չսիրել. միայն թե ինքներդ ձեր արժեքը գիտցեք։

Մրս. Կրոպպը միշտ Կոպպերֆուլ էր անվանում ինձ, որովհետև նախ՝ դա իմ ազգանունը չէր, և երկրորդ, երևի թե նրա համար, որ դա իր լվացքի օրն էր հիշեցնում իրեն։

– Ինչի՞ց եք հետևեցնում, մրս. Կրոպպ, թե մի օրիորդի մատ կա գործի մեջ,– ասացի ես։

– Մր. Կոպպերֆուլ,– ասաց մրս. Կրոպպը ջերմ զգացումով,– ե՛ս էլ մայր եմ։

[48] Copperfull — ջրով լի կաթսա։

Մի քանի րոպե մրս. Կրոպպն ոչինչ չէր կարողանում անել, բացի ձեռքը կրծքին դնելուց ու դեղի մի քանի կաթիլ կուլ տալուց, ցավի կրկնության առաջն առնելով: Վերջապես ասաց.

– Երբ ձեր պատվական տատն այս բնակարանը վարձեց, մր. Կոպպերրֆուլ, ես իսկույն ասացի ինձ. վերջապես գտա մեկին, որի մասին կարող եմ հոգ տանել: Փա՛ռք աստծու, վերջապես մեկին գտա, որին կարող եմ խնամել: Այս էր ասածս... բայց դուք, սըր, շատ քիչ եք ուտում, քիչ եք խմում:

– Ուրեմն դրանի՞ց է գալիս ձեր կասկածը, մրս. Կրոպպ:

– Սըր,– ասաց մրս. Կրոպպը կշտամբանքի մոտեցող ձայնով,– միայն ձեզ չէ, որ խնամել եմ ես: Ուրիշ շատ երիտասարդներ էլ իմ հոգածությունը վայելել են: Ամեն մի երիտասարդ կարող է կամ չափից ավելի իր տեսքի մասին հոգ տանել, կամ չափից պակաս: Կարող է կամ ճաշակով մազերը սանրել, կամ անճաշակ: Կարող է կամ շատ լայն կոշիկներ հագնել և կամ շատ նեղ: Այս բոլորը կախված է երիտասարդի բնավորությունից: Սակայն ինչ ծայրահեղության մեջ էլ ընկնի երիտասարդ ջենտլմենը, իմացեք, սըր, գործի մեջ միշտ մի օրիորդ խառն կլինի:

Մրս. Կրոպպը այնպես գլուխը շարժեց, որ ես ակամա զինաթափ եղա:

– Ահա ձեզնից առաջ այստեղ մեռնող ջենտլմենն էլ,– ասաց մրս. Կրոպպը,– մի օր հանկարծ մի պանդոկի աղախնու վրա սիրահարվեց, և իր բոլոր բաճկոնները նեղացնել տվեց, թեև շատ խմելուց ուռել էր:

– Մրս. Կրոպպ,– ասացի ես,– խնդրեմ հաճեցեք չշփոթել իմ օրիորդին որևէ պանդոկի աղախնու կամ դրա նման մեկի հետ:

– Մր. Կոպպերֆուլ,– պատասխանեց մրս. Կրոպպը,– մի՞թե կարող եմ շփոթել, քանի որ ինքս էլ մայր եմ: Ներեցեք անզգուշությանս: Ես սովոր չեմ ուրիշների գործին խառնվել, ուր ինձ չեն հրավիրում: Բայց դուք մի երիտասարդ ջենտլմեն եք, մր. Կոպպերֆուլ, և ես ձեզ խորհուրդ կտամ չվհատվել, զվարթ լինել և ձեր արժեքը լավ ճանաչել: Եթե ուզենայիք մի որևէ բանի, օրինակի համար՝ սկիթբլչի[49] վրա սեր գցել, դա ձեզ շատ կզարդարեր, ձեր թախիծը կփարատեր և օգտակար կլիներ:

Այս ասաց մրս. Կրոպպը և զգուշանալով, որ օղիի շիշը շուռ չտա (որ սակայն բոլորովին դատարկ էր), հանդիսաբար ռևերանս արեց ու գնաց: Նրա խորհուրդը փոքր-ինչ հանդուգն երևաց ինձ, բայց և այնպես ես գոհ մնացի. դա ինձ համար մի դաս էր՝ ապագայում գաղտնապահ լինելու համար:

Է. ԳԼՈՒԽ
Թոմի Տրեդլս

Գուցե մրս. Կրոպպի տված խրատը և կամ գուցե սկիթբլչ ու Տրեդլս բառերի հնչման նմանությունն էր պատճառը, որ հետևյալ օրը մտածեցի գնալ իմ հին ընկերոջը՝ Տրեդլսին տեսնելու: Նրա Լոնդոն վերադառնալու ժամանակն արդեն անցել էր, և նա բնակվում էր Կենդն-Տաունի Անասնաբուժական ուսումնարանի մոտերքում, որի շուրջը ապրող ուսանողները, մեր գրագիրներից մեկի ասելով, սովոր էին կենդանի էշեր գնել և այս չորքոտանիների վրա փորձեր անել իրենց մասնավոր սենյակներում: Միևնույն գրագրից այդ ճեմարանական փեթակի հասցեն իմանալուց հետո՝ նույն երեկոյան գնացի այցելություն անելու հին ընկերոջս:

---

[49] Skittles — կոնախաղ, կեգլի:

Փողոցն այնքան դուր չեկավ ինձ, ինչքան որ կցանկանայի ի սեր նույնիսկ Տրեդլսի։ Բնակիչները կարծես հակում ունեին ամեն բան, ինչ որ իրենց անպետք էր, ճամփու վրա շպրտել, որով նա ոչ միայն գարշահոտ ու կեղտոտ էր դառնում, այլև լպրծուն՝ կաղամբի անթիվ թփերից։ Սակայն դուրս թափված իրերը միայն բուսական նյութեր չէին. ընկերոջս բնակարանը փնտրելիս ես տեսա, ի միջի այլոց, մի հին կոշիկ, մի անտակ պտուկ, մի սև գլխանոց ու մի հատ հովանոց. բոլորն էլ փտելու զանազան աստիճաններին հասած։

Տեղի ընդհանուր տեսարանը սաստիկ հիշեցրեց ինձ մր. և մրս. Միկաբրների մոտ անցկացրած օրերս։ Տրեդլսի բնակած տունը տարբերվում էր մյուս միակերպ շենքերից. նա ուներ մի հնացած ու ընկած վայելչության աննկարագրելի մի տեսք, որով ինձ ավելի էր հիշեցնում իմ նախկին բարեկամներին։ Տան դռանը մոտենալուս րոպեին՝ դուռը բացվեց մի կաթնավաճառի առջև. այս հանգամանքը դարձյալ բարեկամներիս հիշեցրեց ինձ։

– Ուզում եմ իմանալ, թե հաշիվս ե՞րբ պիտի մաքրեք,– ասաց կաթնավաճառը դուռը բաց անող ջահել աղախնին։

– Պարոնն ասում է, այս օրերս կվճարի,– պատասխանեց աղջիկը։

– Որովհետև... – շարունակեց կաթնավաճառը, կարծես թե ոչ մի պատասխան ստացած չլիներ, և իր սպառնական ձայն ու հայացքը ավելի շուտ ներսի մարդուն ուղղելով, քան նորատի սպասուհուն,– որովհետև կասկածում եմ, չլինի՞ թե հաշիվս այսքան ժամանակ չմաքրելուց հետո, մի ուրիշ տեղ փախչի ու կորչի։ Բայց ես չեմ թողնի, որ փախչի, իմացա՞ք,– գոչեց կաթնավաճառը, դարձյալ իր ձայնը տան շեմքից դեպի ներս հնչեցնելով ու դեպի նրբանցքը մտիկ տալով։

Ոչ մի բան չէր կարող այնքան հակասել նրա խաղաղ պաշտոնին, ինչքան այս վարմունքը։ Նրա կոպիտ ձայնից ու շարժումներից անգամ մսագործը կամ օղեվաճառը կամաչեր։

Փոքրիկ սպասուհու ձայնը շատ թուլացավ, սակայն շուրթերին նայելով կարելի էր հետևություն անել, որ նրա ասածը դարձյալ այն էր՝ թե հաշվի բանը շուտով կվերջանա։

– Լսիր, այ աղջիկ,– ասաց կաթնավաճառը, առաջին անգամ ուղիղ սպասուհուն նայելով ու նրա կզակից բռնելով,– կաթ սիրո՞ւմ ես։

– Սիրում եմ։

– Շատ լավ,– ասաց կաթնավաճառը։– Իմացած եղիր, որ վաղը ոչ մի կաթիլ կաթ չեք ստանա։ Լսո՞ւմ ես։ Վաղը ոչ մի կաթիլ կաթ չեք տեսնի։

Սպասուհին կարծես գոհ մնաց, որ գոնե այսօր տանը կաթ կլինի։ Կաթնավաճառը գլուխը չարաչար շարժելուց հետո նրա կզակը բաց թողեց և բարկությամբ կժի բերանը բանալով, կաթը չափեց, փարչի մեջ լցրեց։ Այնուհետև մռմռալով հեռացավ և մոլեգնաբար սկսեց գոռալ.

– Կա՛թ, կա՛թ։

– Այստե՞ղ է բնակվում մր. Տրեդլսը,– հարցրի ես։

Մի խորհրդավոր ձայն նրբանցքի խորքից պատասխանեց «Այո». որից հետո սպասուհին էլ կրկնեց.

– Այո՛։

– Արդյոք տա՞նն է,– ասացի ես։

Դարձյալ միևնույն խորհրդավոր ձայնը հաստատական պատասխան տվեց, և սպասուհին նույնը կրկնեց։ Ես ներս մտա և սպասուհու ցուցամատի ուղղությամբ վերև բարձրացա, և ինձ այնպես թվաց, թե մի խորհրդավոր աչք, որ անշուշտ խորհրդավոր ձայնին էր պատկանում, մի հեռավոր դռան հետևից ինձ դիտում է։

Երբ տան երկրորդ ու վերջին հարկը բարձրացա, Տրեդլսն արդեն սպասում էր ինձ սանդուղքի գլխին: Նա ջերմ սիրով ողջունեց ինձ և իր սենյակը հրավիրեց: Դա պատուհաններով դեպի փողոցը նայող մի փոքրիկ ու հասարակ, բայց շատ մաքուր սենյակ էր: Ակներև էր, որ Տրեդլսի ամբողջ բնակարանը դա էր միայն, որովհետև քնելու բազմոցն այնտեղ էր, այնտեղ էին նաև կոշիկ մաքրելու խոզանակներն ու սև ներկը, միայն թե պահարանի վերին դարակի վրա՝ մի բառագրքի հետևը թաքնված: Սեղանը ծածկված էր թղթերով, և Տրեդլսը մի հին վերարկու հագած, նոր էր ընդհատել իր փութաջան աշխատանքը: Ոչ մի բան առանձնակի չէի դիտում, բայց և այնպես ամեն բան տեսա, տեսա մինչև անգամ ճենապակու թանաքամանի վրա նկարված եկեղեցին – տեսողության սրությունը իմ մեջ զարգացել էր դեռ միկաբրյան ժամանակից: Պահարանի տեսքը սքողելու և ածիլելու պարագաները, կոշիկները և ուրիշ բաներ վայելչաբար դասավորելու համար գործ դրված մանր-մունր հնարքները հայտնապես ցույց էին տալիս դարձյալ նույն Տրեդլսին, որ մի ժամանակ գազանի ահագին որջեր էր շինում գրելու թղթից՝ մեջը ճանճեր պահելու համար և իր վշտերը հրաշակերտ գործերով փարատում, որոնց մասին արդեն քանիցս խոսել եմ:

Սենյակի անկյունում մի բան կար, որ զգուշությամբ ծածկված էր լայն ու սպիտակ սավանով, բայց թե ի՞նչ էր չիմացա:

– Տրեդլս,– ասացի ես, նստելուցս հետո նրա աջը նորից սեղմելով,– որքան ուրախ եմ, որ տեսնում եմ քեզ:

– Ո՞վ է ուրախ, Կոպպերֆիլդ, դո՞ւ թե ես,– գոչեց նա:– Մր. Ուատրբրունկի մոտ քեզ՝ հանդիպելու զվարճությունից խելքս այնքան թռցրել էի, որ այս հասցես տվեցի քեզ՝ փոխանակ պաշտոնական գրասենյակիս հասցեն տալու:

– Ա՛, պաշտոնական գրասենյակ էլ ունես:

– Այսինքն՝ մի գրասենյակի և մի նրբանցքի չորրորդ մասը,– պատասխանեց նա:– Մենք չորս ընկեր միասին ենք վարձել այն գրասենյակը՝ ցույց տալու համար, թե շատ գործ ունենք. չորսս էլ միայն մի գրագիր ենք բանեցնում: Բոլորի գինը շաբաթական կես կրոն[50] է:

Բացատրություն տալիս Տրեդլսը ժպտաց, և այս ժպիտի մեջ դարձյալ տեսա նրա բնավորության պարզությունը, սովորական բարությունը, բայց կարծեմ և չար բախտը, որ չէր դադարել նրան հալածելուց:

– Դու հո գիտես, ես հպարտ չեմ, Կոպպերֆիլդ,– ասաց Տրեդլսը:– Բայց սովորաբար այս բնակարանիս հասցեն չեմ տալիս, որովհետև շատերին անախորժ է ինձ այստեղ այցելելը: Ինձ գալով... ես ուրիշ բան չեմ մտածում, բայց թե աշխարհիս բոլոր արգելքների դեմ մաքառելը ծիծաղելի կլիներ, եթե մի ուրիշ հավակնություն ունենայի:

– Լսել եմ, որ պատրաստվում ես փաստաբան դառնալ: Ճի՞շտ է:

– Այո՛, այո՛, փաստաբան,– ասաց Տրեդլսը, ձեռքերն իրար շփելով:– Պատրաստվում եմ, բայց պաշտոնական ցուցակի մեջ գրվելու համար, այն էլ երկար ժամանակից հետո, պետք եղավ հարյուր ստեռլինգ վճարել, հարյո՛ւր ստեռլինգ: Հեշտ բան չէր դա, ո՛ւֆ,– գոչեց նա, երեսն այնպես ծամածռեց, կարծես ատամը հանեցին:

– Գիտե՞ս, Տրեդլս, ինչ եմ հիշում քեզ նայելիս:

– Չգիտեմ:

– Հիշում եմ այն երկնագույն հագուստը, որ կրում էիր պանսիոնում:

– Ա՛յ հիշելու արժանի բան,– գոչեց Տրեդլսը ծիծաղելով:– Թերևս վարտիքս կա՛րճ: Աստված իմ . չէ՞ որ երջանիկ էին այն օրերը, Կոպպերֆիլդ:

---

[50] Crown – հավասար է հինգ շիլինգի կամ մոտավորապես երեք ռուբլի:

– Բայց կարծեմ ավելի երջանիկ կլինեինք, եթե մեր դաստիարակը փոքր-ինչ պակաս տանջեր մեզ,– ասացի ես։

– Շատ կարելի է,– հաստատեց Տրեդլսը։– Բայց այնուամենայնիվ ի՛նչ լավ էինք զվարճանում։ Հիշո՞ւմ ես ննջարանի գիշերները, մեր փառավոր ընթրիքներն ու քո պատմած առակները։ Հա՛, հա՛, հա՛։ Եվ միտդ է՝ ինչպես սաստիկ ծեծ կերա ես՝ մր. Մելին ցավակցելով լալուս համար։ Քավթա՛ռ Կրիկլ։ Երանի մեկ տեսնեի նրան։

– Տեսնել դահճի՞դ, որ այնպես գազանաբար էր վարվում քեզ հետ,– բարկացա ես, այն ծեծի դեպքը հիշելով, որ կարծես երեկ էր պատահել։

– Մի՞թե իրոք գազանաբար,– հարցրեց Տրեդլսը։– Շատ կարելի է, չեմ վիճի։ Բայց այդ բոլորը վաղուց արդեն անցել-գնացել է։ Ա՛յ ծեր Կրիկլ։

– Կարծեմ այն ժամանակ քեզ խնամողը քեռի՞դ էր, այնպես չէ՞,– հարցրի ես։

– Այո, քեռիս, միակ քեռիս, որին միշտ պատրաստվում էի նամակ գրել ու չէի գրում, հա՛, հա՛, հա՛։ Այո՛, մի քեռի ունեի, բայց պանսիոնից ելա թե չէ, հանկարծ մեռավ։

– Իրա՞վ։

– Այո։ Նա մի... ինչպե՞ս ասեմ... հարուստ դերձակ էր, և ինձ էր իրեն ժառանգորդ կարգել։ Բայց երբ որ մեծացա, ատեց ինձ ու միտքը փոխեց։

– Միտքը փոխե՞ց,– կրկնեցի ես, զարմանալով, որ ընկերս այդ բանը այդպես հանգիստ է հիշում։

– Այո, փոխեց, Կոպպերֆիլդ։ Այս մի դժբախտություն էր, բայց նա բնավ չէր սիրում ինձ։ Նա ասաց, թե ես այնպիսի մարդ դուրս չեկա, ինչպիսին որ նա էր ցանկանում, և իր աղախնու հետ ամուսնացավ։

– Իսկ դու ի՞նչ արիր։

– Ոչինչ։ Մի քանի ժամանակ նրանց մոտ մնացի, հուսալով թե ինձ մի գործի կդնեն, բայց դժբախտաբար քեռիս մի օր կաթված ստացավ ու մեռավ. կինը նորից մարդու գնաց, իսկ ես ձեռնունայն մնացի։

– Մի՞թե ոչինչ չստացար։

– Ինչպես չէ,– ասաց Տրեդլսը։– Ես ստացա հիսուն ստեռլինգ։ Բայց ինձ մի որոշ պաշտոնի համար չէին պատրաստել, և ես սկզբում ամենևին չէի իմանում, թե ի՞նչ սկսեմ, ի՞նչ անեմ։ Վերջապես մի փաստաբանի որդու օգնությամբ, որ մեր ընկերն էր Սալեմ Հոուսում... հիշո՞ւմ ես ծուռքիթ Եոլրին...

– Ոչ։ Իմ ժամանակ Սալեմ Հոուսում բոլորն էլ ուղիղ քթով էին։

– Դե, փույթ չէ,– ասաց Տրեդլսը։– Ահա այդ Եորլի օգնությամբ ես սկսեցի զանազան պաշտոնական թղթեր արտագրել։ Տեսնելով որ այս բանից օգուտ չկա, սկսեցի ինքս փաստաբանների համար թղթեր շարադրել, քաղվածքներ անել և այլն։ Դու հո գիտես, Կոպպերֆիլդ, որ ես եզի նման աշխատելու ընդունակ եմ։ Այդ բաներին վարժվելը ինձ համար շատ դժվար չէր։ Լավ։ Մի օր էլ մտքիս դրի իրավաբանության ուսանող դառնալ, և հիսուն ստեռլինգիս բոլոր մնացորդն այդ նպատակին զոհեցի։ Եոլրը ինձ մի երկու նոտարի, նույնպես և մր. Ուոտրբրուկի անունով հանձնարարական տվեց, և բախտս բանեց։ Հետո մի գրավաճառի հետ ծանոթացա, որը մի հանրագիտարան բառագիրք է հրատարակում. նա էլ ինձ գործ առաջարկեց։ Այս ձեռագրերը տեսնո՞ւմ ես,– շարունակեց Տրեդլսը, գրասեղանը ցույց տալով,– դրանք բառագրքի համար են, նոր եմ գրում։ Ճշմարիտն ասած՝ ես վատ

հավաքող չեմ[51], Կոպպերֆիլդ. բայց շարադրելու, ստեղծելու շնորհք որ ասես, դրա նշույլն անգամ չունեմ: Աշխարհիս երեսին գուցե մարդ չկա, որ ինձնից պակաս ինքնատիպ լինի:

Տրեդլսը կանգ առավ, սպասելով որ ես անշուշտ այդ կարծիքին համամիտ կլինեմ, և երբ մի հաստատական նշան արի, նա զվարթ համբերությամբ շարունակեց.

– Ահա այսպես կոպեկ-կոպեկի վրա դիզելով, շատ չափավոր կյանք վարելով, պետք եղած հարյուր ստեռլինգը լրացրի և վերջապես, փառք աստծու, վճարեցի... թեև ո՛ւֆ (այստեղ ընկերոջս ատամնեից դարձյալ մեկը հանեցին), շատ դժվար էր: Գործերս այժմ այս դրության մեջ են, բայց շուտով սկսելու եմ լրագրի համար էլ հոդվածներ գրել: Տես թե ինչպես կհարստանամ այն ժամանակ: Իսկ դու, Կոպպերֆիլդ, միևնույնն ես, ինչ որ էիր պանսիոնում՝ նույն բարեսիրտ, նույն կայտառ Կոպպերֆիլդը. քեզ հետ խոսելիս մարդ ուզում է բոլորովին սրտաբաց լինել: Ուրեմն իմացիր՝ ես նշանված եմ:

Նշանված: Օ՛հ Դորա:

– Նշանածս Դևոնշիրի պաստորի աղջիկն է, տասն աղջիկներից մեկը,– ասաց Տրեդլսը:– Այո,– հարեց նա, նկատելով որ ակամա նայեցի նրա թանաքամանի նկարին,– այս նրանց եկեղեցու պատկերն է: Ահա այս վանդակապատ դռնով բակը կմտնես ու դեպի ձախ կգնաս (նա գրչի ծայրը թանաքամանի շուրջը պտտեցրեց), և ահա այստեղ, եկեղեցու դեմ, նրանց տունն է: Հասկացա՞ր:

Հետո միայն ըմբռնեցի այն հաճույքը, որով այս բոլոր հանգամանքները բացատրվեցին. մտքերս նույն րոպեին ուրիշ տեղ էին հածում՝ մր. Սպընլոյի տան շուրջը:

– Շատ բարի աղջիկ է,– շարունակեց Տրեդլսը:– Տարիքով ինձնից մի քիչ մեծ է, բայց հիանալի աղջիկ է: Անցյալ անգամ ասել էի քեզ, թե Լոնդոնից մեկնելու եմ, հիշո՞ւմ ես: Պիտի գնայի նրան տեսնելու, և ոտքով գնացի, ոտքով էլ վերադարձա: Ի՛նչ սքանչելի ոգևորություն էր: Հարսանիքը գուցե փոքր-ինչ ուշ կատարվի, բայց հոգ չէ. մեր նշանաբանն է՝ «համբերիր ու հուսա»: Այսպես էլ անում ենք, միշտ կրկնելով՝ «համբերիր և հուսա»: Եվ նա պատրաստ է, Կոպպերֆիլդ, դարձյալ մի քառասուն տարի սպասել ինձ, եթե կամենաս՝ ավելի էլ:

Տրեդլսը տեղից վեր կացավ ու հաղթական ժպիտով ձեռքն այն սավանին դրեց, որ նկատել էի փոքր-ինչ առաջ:

– Սակայն,– ասաց նա,– չկարծես թե չենք սկսել տնտեսության համար պատրաստվել: Ո՛չ, ո՛չ, արդեն սկսել ենք: Ահա տե՛ս,– ասաց նա ու սավանը հպարտությամբ ետ քաշեց,– սկզբի համար երկու բան: Մեկը մի ծաղկաման է կամ թաղար, ի՛նքն է գնել: Մեջը մի որևէ բույս կդնես,– հարեց Տրեդլսը, մի քանի քայլ ետ քաշվելով, երևակայած բույսն ավելի լավ դիտելու համար,– հետո կվերցնես ու դահլիճի պատուհանի վրա կդնես և... փա՛հ, ի՛նչ փառավոր բան կլինի: Իսկ այս մարմարե կլոր սեղանը (շրջանակը երկու ոտնաչափ է ու տասը բթաչափ) ե՛ս եմ գնել: Ուզում ես, օրինակի համար, վրան գիրք դնել և կամ դիցուք, քեզ մոտ և կամ թե կնոջդ մոտ մի հյուր է գալիս և ուզում է թեյի բաժակը դնելու տեղ գտնել՝ ահա՛ պատրաստ է, համեցե՛ք: Մի երևելի վարպետի գործ է այս սեղանը, և ժայռի պես ամուր:

Ես երկու առարկան էլ ըստ արժանավույն գովեցի, և Տրեդլսը նորից զգույշ կերպով ծածկեց դրանք:

– Դեռ շատ բան պակաս է, հարկավ,– ասաց նա,– բայց, այնուամենայնիվ, սկիզբն արդեն դրված է: Ամենից ավելի ինձ հուսահատություն պատճառողը, Կոպպերֆիլդ, սփռոցներն են, անձեռոցները, բարձի երեսները: Գլուխս պտույտ է գալիս, երբ մտածում եմ մանավանդ խոհանոցի ամանների, պղինձների, կասկարաների, թարեքների և ուրիշ այս տեսակ իրերի մասին, որովհետև շատ թանկ են: Բայց ասված է՝ «Համբերիր և հուսա»: Եվ հավատա, նրանից էլ պատվական աղջիկ չկա՛:

---

[51] Compiler – ֆրանսերեն՝ Compliateur.

– Հավատում եմ,– ասացի ես։

– Էլ կարծեմ ավելացնելու բան չմնաց,– ասաց Տրեդլսը, նորից աթոռի վրա նստելով։– Առժամանակ, ինչպես տեսնում ես, բավական չարքաշ կյանք եմ վարում։ Արդյունքս մեծ չէ, բայց ծախսերս էլ մեծ չեն։ Ճաշում եմ սովորաբար այս տան գետնահարկում, մի բարեկամ ընտանիքի հետ, շատ սիրելի մարդիկ են։ Մր. Միկաբրն ու միս Միկաբրը շատ բան են տեսել այս աշխարհում, և երկուսն էլ հիանալի ընկերներ են։

– Տրե՛դլս,– գոչեցի ես,– ինչե՛ր ես ասում։

Տրեդլսն ապշությամբ երեսիս նայեց, իմանալու թե հանկարծ ինձ ինչ պատահեց։

– Մր. Միկաբրն ու նրա կինը,– գոչեցի ես երկրորդ անգամ։– Ես հո շատ լավ եմ ճանաչում նրանց։

Նույն վայրկյանին դրսի դռանը երկու անգամ հարված տվին՝ ճիշտ այնպես, ինչպես որ արդեն հնուց գիտեի՝ միայն մր. Միկաբրը կարող էր տալ։ Հարվածներն իսկույն ենթադրությունս ներքնի հարկի բնակիչների մասին հաստատեցին, և ես Տրեդլսին խնդրեցի, որ իր տան տիրոջը վերև հրավիրի։ Տրեդլսը սանդուղքի բազիրքից վայր կռանալով, կանչեց նրան, որ բարձրանա, և ահա իր առաջվա նեղ տաբատը հագին, իր օսլայած օձիքներով, իր նախկին ձեռնափայտով, ճիշտ միևնույն ակնոցով, միշտ անփոփոխ, երիտասարդ ու վայելուչ մր. Միկաբրը ներս մտավ։

– Ներեցեք, մր. Տրեդլս,– ասաց մր. Միկաբրը ձայնի նախկին ելևէջով, որ դադարեց մի ինչ-որ երգ մրմնջալուց։– Չգիտեի, որ ձեր սուրբ հարկի տակ մի նորեկ անձ կտեսնեմ։

– Մր. Միկաբրը թեթև կերպով գլուխ տվեց ինձ և իր շապկի օձիքն ուղղեց։

– Ինչպե՞ս է ձեր առողջությունը, մր. Միկաբր,– հարցրի ես։

– Սըր,– ասաց մր. Միկաբրը,– վերին աստիճանի մարդասեր եք։ Ես in statu quo[52] եմ։

– Իսկ մրս. Միկաբրը՞։

– Փառք աստծո, սըր, նա էլ in statu quo է։

– Իսկ երեխանե՞րը, մր. Միկաբր։

– Սըր, գոհությամբ կարող եմ հայտնել, որ նրանք էլ լիովին առողջ են։

Մինչև այդ րոպեն մր. Միկաբրը դեռ չէր կարողացել ճանաչել ինձ, թեև դեմուդեմ էինք կանգնած։ Բայց հանկարծ ժպիտս նկատելով, ավելի ուշադիր զննեց ինձ, մի քանի քայլ ետ քաշվեց ու գոչեց.

– Այս ի՛նչ հրաշք է։ Մի՞թե երջանկություն ունեմ նորից տեսնելու Կոպպերֆիլդին։

Եվ այս ասելով նա սկսեց ձեռքերս սաստիկ թոթվել։

– Արարի՛չ աստված, մր. Տրեդլս,– աղաղակեց մր. Միկաբրը,– ո՞ւմ մտքով կանցներ, որ դուք իմ երիտասարդության բարեկամիս, անցած օրերի ընկերոջս հետ ծանոթ եք։ Հոգյակ իմ։ (Այս բացականչությունը նա ուղղեց բազիրքի վրայից դեպի մրս. Միկաբրը, մինչ Տրեդլսը իրոք ապշած էր ինձ ընծայած տիտղոսները լսելով)։ Հոգյա՛կ իմ, մր. Տրեդլսի սենյակում մի ջենտլմեն կա, որին կցանկանայի քեզ ներկայացնել, սիրելիս։

Ապա իսկույն ետ գալով, նորից սկսեց ձեռքերս սեղմել։

– Եվ ինչպե՞ս է մեր ազնիվ բարեկամ դոկտոր Ստրոնգը, Կոպպերֆիլդ,– ասաց մր. Միկաբրը։– Ինչպե՞ս են մեր մյուս Կենտրբրիի ծանոթները։

– Որքան գիտեմ, բոլորն էլ առողջ են։

---

[52] Լատիներեն է. նշանակում է՝ նախկին վիճակում։

– Անչափ երջանիկ եմ, այդպիսի լուր լսելով,– գոչեց մր. Միկաբրը։– Կենտրբրիումն էր, որ վերջին անգամ տեսնվեցինք։ Թող ներվի ինձ ասել, այն Չասրի[53] երգերով անմահացած հոյակապ սրբավայրի հովանու տակ, որ երբեմն ամեն կողմերից հավաքվող հին ուխտավորների հավաքման տեղն էր... Կարճ ասած՝ մայր տաճարի անմիջական մոտերքում։

Պատասխանեցի, թե այդպես է, իսկ մր. Միկաբրը, շարունակեց շատախոսել, միևնույն ժամանակ ականջ դնելով մոտիկ սենյակից հասնող ձայներին, որոնք նշան էին, թե մրս. Միկաբրը ձեռքերը լվանում է և պահարանի դժվարաշարժ դարակները շտապ-շտապ բացում ու փակում։

– Այժմ, Կոպպերֆիլդ,– ասաց մր. Միկաբրը, աչքի պոչով նայելով Տրեդլսին,– դուք մեզ գտնում եք մի համեստ և կարելի է ասել՝ ոչ մեծաշուք վիճակի մեջ. սակայն գիտե՞ք, որ կյանքիս մեջ ես շատ խոզերի եմ հանդիպել ու շատ արգելքներ տապալել։ Անհայտ չէ ձեզ և այն իրողությունը, որ կյանքիս մեջ ժամանակ է եղել, երբ ինձ հարկ է եղել կանգ առնել, մինչև որ հանգամանքները մի հաջող ընթացք ստանան, երբ պետք է եղել նահանջել, նահանջել եմ որպեսզի կարողանամ, այսպես ասած, մի ուժգին ցատկում անել։ Այսօր ես մարդկային կյանքի այդ խորհրդավոր վիճակումն եմ։ Առժամանակ ետ եմ քաշվել՝ ավելի լավ ցատկելու համար, և հիմք ունեմ հավատալու, որ շուտով մի զորավոր թռիչք կանեմ։

Մինչ ես ուրախություն հայտնելու վրա էի, մրս. Միկաբրը ներս մտավ։ Նրա զգեստն առաջվանից փոքր-ինչ ավելի կեղտոտ էր. գոնե ինձ այսպես թվաց, թեև նա զարդարվել էր ու մթագույն ձեռնոցներ հագել։

– Սիրելիս,– ասաց մր. Միկաբրը, նրան դեպի ինձ առաջնորդելով,– ահա Կոպպերֆիլդ ազգանունով մի ջենտլմեն, որ կամենում է իր ծանոթությունը քեզ հետ նորոգել։

Մր. Միկաբրը լավ կաներ, ինչպես հետևանքից երևաց, չշտապեր մեր տեսակցությունը փութացնել, որովհետև մրս. Միկաբրը թույլ առողջական վիճակ ունենալով, մեր անակնկալ հանդիպումից այն աստիճան դալկացավ, որ մր. Միկաբրը խուճապով դուրս վազեց մի աման ջուր բերելու, որ կնոջ երեսին սրսկի։ Բարեբախտաբար տիկինն իսկույն ուշքի եկավ և սրտագին հաճույք հայտնեց ինձ տեսնելու համար։ Մի կես ժամի չափ բոլորս միասին խոսեցինք, և ես տիկնոջից իմացա, որ նրա երկվորյակներն արդեն «ահագին էակներ են», իսկ մյուս զավակները «իսկական հսկաներ», թեև այս անգամ ոչ մեկին դուրս չբերին, որ տեսնեի։

Մր. Միկաբրը թախանձանքով համոզում էր ինձ ճաշի մնալ, և ես անշուշտ կմնայի, եթե մրս. Միկաբրի վարանած աչքերում չկարդայի, որ նրանց սեղանի պաշարը չպիտի բավեր բոլորիս։ Հետևաբար ասացի, թե ուրիշ տեղ եմ հրավիրված, և նույն րոպեին մրս. Միկաբրի զվարթանալը տեսնելով, ես ավելի ընդդիմացա նրա մարդու հորդորներին։

Սակայն ես Տրեդլսին, մր. Միկաբրին ու տիկնոջն ասացի, որ բարեհաճեն ժամադիր լինել, թե ե՞րբ կարող են այցելել ինձ ու շնորհ բերել իմ սեղանին։ Տրեդլսի ընթացիկ գործերը ստիպում էին մի հեռավոր պայմանաժամ նշանակել, բայց և այնպես բոլորիս միաբան հավանությամբ մի օր ընտրեցինք, և ես հրաժեշտ տվի նրան։

Մր. Միկաբրը, պատճառաբանելով թե կամենում է մի կարճ ճանապարհ ցույց տալ ինձ, հետս դուրս ելավ, և երբ փողոցի անկյունին հասանք, բացատրեց, թե փափագում է մի քիչ էլ զրուցել իր վաղեմի մտերիմի հետ։

– Սիրելի Կոպպերֆիլդ,– սկսեց մր. Միկաբրը,– ավելորդ է ասել ձեզ, թե ո՞ր աստիճան մխիթարական է մեզ համար, հատկապես ներկա պայմաններում, որ մեր հարկի տակ... եթե ներվի այսպես ասել... մի հոգի է շողշողում, ձեր բարեկամ Տրեդլսի հոգու նման մի հոգի։ Եթե ավելացնեմ, որ մեր տան կից շաքարեղեն վաճառող մի լվացարար կին է բնակվում, իսկ դեմուդեմ՝ մի քաղաքապահ զինվորական, արդեն կարող եք երևակայել, որ ձեր բարեկամի

[53] Անգլիական բանաստեղծ 1340—1400 թթ.։

ընկերությունը մի անսպառ սփոփանքի աղբյուր է թե՛ ինձ համար, թե՛ կնոջս համար։ Այժմ ես, սիրելի Կոպպերֆիլդ, արմտիք վաճառող հանձնակատար եմ։ Այս պաշտոնը չի կարելի շատ շահաբեր անվանել... ուրիշ խոսքով՝ ոչ մի օգուտ չի տալիս... և դրամական տագնապից զատ ուրիշ հետևանք չունի։ Բայց և այնպես գոհությամբ սրտի պիտի ասեմ, թե այժմ ակնակառույց սպասում եմ, թեև անզոր եմ ճիշտ ասել, թե՞ որ կողմից մի մոտավոր դիպվածի, որ անտարակույս կբարվոքի, այն էլ ընդմիշտ, ոչ միայն իմ դրությունը, որին ի սրտե կարեկից եմ։ Թերևս արդեն նկատել եք մրս Միկաբրի քնքուշ վիճակը, որից հավանական է ենթադրել, թե մեր սիրո գրավականների թիվը վերջ ի վերջո... կարճ ասած՝ մեր մանկական խմբակի վրա ևս մի նոր անդամ կավելանա։ Մրս. Միկաբրի գերդաստանը հաճեցավ դժգոհություն ու տրտունջ հայտնել այս առթիվ։ Ինձ մնում է միայն ասել, թե ամենևին չեմ հասկանում՝ ո՞վ իրավունք ունի խառնվելու մի այսպիսի գործի մեջ, և զայրույթով մերժել նրանց անտեղի զգացումը։

Մր. Միկաբրն այս ասելով՝ աջս սեղմեց ու հեռացավ։

Ը. ԳԼՈՒԽ
Մր. Միկաբրի ասպետական ձեռնոցը

Մինչև նոր բարեկամներիս հյուրասիրելու օրը՝ ես ապրում էի միայն Դորայով և սուրճով։ Սիրաբորբոք դրությանս մեջ ախորժակս կորել էր, և գոհ էի, որ կորել է. ճաշի մասին մտածելը նենգություն կլիներ Դորայի դեմ։ Ես դարձյալ անվերջ զբոսնում էի, բայց զբոսանքներս ոչ մի օգուտ չէին տալիս, որովհետև թարմ օդի ազդեցությունը չքանում էր հույսերս ի դերև ելնելուց։ Դրանից բացի, կյանքիս այդ շրջանի դառն փորձով պիտի ասեմ, արդյոք կենդանական սնունդը կարո՞ղ է ազատ մարսվել մի բանական էակի մեջ, որ հանապաղ չարչարվում է նեղ ու ամուր կոշիկներից։ Իմ կարծիքով անհրաժեշտ է, որ մարմնի ծայրերը լիակատար հանգստություն վայելեն, որպեսզի ստամոքսն իր պաշտոնը լավ կատարի։

Այս փոքրիկ ընտանեկան հացկերույթի համար ես առաջվա նման մեծ պատրաստություն չտեսա։ Միայն մի զույգ լեզվաձուկ, մի գառան զիստ և մի աղավնու կարկանդակ պատվիրեցի։ Մրս. Կրոպպը շատ զայրացավ, երբ համեստ կերպով ակնարկեցի, թե լավ կլիներ ձկները խաշել, իսկ զիստը տապակել։

– Ո՛չ, ո՛չ, սըր,– գոչեց նա։– Դուք ինձ կարծեմ այնքան լավ եք ճանաչում, որ կարող եք չենթադրել, թե ընդունակ եմ մի այդպիսի գործ կատարել, մի գործ, որ բոլորովին հակառակ է իմ բնավորությանը։

Սակայն վերջ ի վերջո հաշտվեցինք, և մրս. Կրոպպն հանձն առավ կերակուրները պատրաստել, միայն թե այն պայմանով, որ ես հետո առնավազն երկու շաբաթ տանից դուրս ճաշ ուտեմ։

Ի դեպ, պետք է ասել, թե մրս. Կրոպպի բռնությունն իմ վրա սոսկալի էր։ Ես ոչ ոքից այնքան չէի վախենում, որքան նրանից։ Ոչ մի բան մեր մեջ առանց վեճի չէր անցնում, բայց զիջողը միշտ ես էի։ Եթե ես դիմադրեի, նա իսկույն ևեթ այն ցավի հարձակմանը կենթարկվեր, որ նրա մարմնի չգիտեմ ո՛ր անկյունում դարանած, միշտ պատրաստ էր նրա կյանքը վտանգի ենթարկել։ Եթե պետք լիներ կանչել նրան, քսան անգամ պիտի քաշեի զանգակը, որ նա գա, այն էլ ոչ միշտ և փնթփնթալով ու շնչասպառ գալիս էր թե չէ՝ դռան մոտի բազմոցի վրա էր տարածվում, ձեռքը նանկինի կրծքին դնում և այն աստիճան դալկանում, որ շտապում էի ամբողջ օղիս նրան տալ, միայն թե շուտով հեռանար։ Մրս. Կրոպպը սովոր էր երեկոյան ժամը հինգին անկողինս հավաքել (մի բան, որ այսօր էլ ինձ դուր չի գալիս), և եթե այս մասին

մի թեթև ակնարկ անեի, արդեն նրա ձեռքի մի թեթև շարժումը (դեպի կրծքի դյուրագրգիռ սահմանը) բավական էր, որ ես իսկույն ներողություն խնդրեմ։ Մի խոսքով՝ պատրաստ էի ամեն տեսակ զիջումներ անել, միայն թե նա չվաշտանա, և այսպես մրս. Կրոպպն իմ կյանքի սարսափն էր։

Առաջիկա ճաշի համար ավելորդ համարեցի այն ճարպիկ տղային վարձել, որ սպասավորել էր անցած ճաշկերույթին։ Նրա նկատմամբ ես մի տեսակ նախապաշարում ունեի այն օրից ի վեր, երբ նրան տեսա Ստրենդի վրա՝ մի այնպիսի բաճկոն հագած, որը շատ նման էր իմ իսկ և իսկ խնջույքից հետո անհետացած բաճկոնին։ Իսկ ջահել աղջիկը նորից կանչվեց, բայց այն պայմանով, որ մի կերակուր ներս բերելուն պես՝ իսկույն սեղանատնից հեռանա ու սրահակում կանգնի, որով հյուրերս կազատվեին նրա քթի ֆսֆսոցը լսելուց, իսկ պնակներս՝ նրա ոտքերի տակ փշրվելու վտանգից։

Ես գնեցի պունչի անհրաժեշտ նյութերը, որոնք հանձնվելու էին մր. Միկաբրին, գնեցի մի շիշ հուսամի (լավանդի) ջուր, երկու մեղրամոմ, մի տուփ գնդասեղ, մի բարձիկ. այս բոլորը մրս. Միկաբրի դյուրության համար ննջարանիս հայելու առջև շարեցի. նրա համար էլ ննջարանիս վառարանը վառել տվի. հետո անձամբ սեղանիս սփռոցը ծածկեցի ու սկսեցի հանգիստ սպասել հետևանքին։

Որոշված ժամին երեք հյուրերս էլ միասին եկան։ Մր. Միկաբրը սովորականից մեծ օձիքներով էր ու ակնոցի նոր շղթայով. մրս. Միկաբրը մի գորշ թերթի մեջ փաթաթված գլխանոցով, որ բերում էր Տրեդլսը, միևնույն ժամանակ օգնելով նրան բարձրանալ։ Բնակարանս բոլորին հիացրեց։ Երբ ես տիկնոջը հայելուս առջև կանգնեցրի, նա իր համար պատրաստած իրերը տեսնելով այն աստիճան սքանչացավ, որ ամուսնուն էլ կանչեց, որ նայի ու զմայլվի։

– Սիրելիդ իմ, Կոպպերֆիլդ,– ասաց մր. Միկաբրը,– այս բոլորը պերճություն ու շռայլություն է, և երիտասարդ օրերս է հիշեցնում ինձ, երբ մրս. Միկաբրը տակավին չէր հրավիրված ամուսնության սուրբ խորանը պաշտելու։

– Ուզում է ասել, թե իր կողմից չէր հրավիրված,– նկատեց մրս. Միկաբրը խորամանկ ժպտալով։– Ուրիշների մասին չի կարող երաշխավոր լինել։

– Հոգյակ իմ, ասաց մր. Միկաբրը մի անսպասելի լրջությամբ,– ես պարտավոր չեմ ուրիշների տեղ պատասխան տալ։ Քաջ գիտեմ, որ երբ դու ճակատագրիս անքննելի որոշումով իմ կինը դարձար, մի այնպիսի մարդու կին դարձար, որին վիճակված էր երկարատև մաքառումներից հետո՝ անվերջ դրամական տագնապների զոհ դառնալ։ Ակնարկդ հասկանում եմ, սիրելիս։ Կարող եմ միայն ցավ հայտնել, բայց ոչ տրտունջ։

– Միկա՛բր,– գոչեց մրս. Միկաբրն արտասվելով։– Ինչո՞ւ ես այդպես կշտամբում ինձ, կնոջդ, որ քեզ երբեք չի թողել, հավիտյան էլ չի թողնելու։

– Հոգիս,– ասաց մր. Միկաբրը շատ հուզված,– կներես ինձ, մեր հին բարեկամ Կոպպերֆիլդն էլ անշուշտ կների խոցված սրտիս րոպեական զայրույթը, որի պատճառն իշխանության արբանյակի հետ նոր ունեցած ընդհարումս էր... ուրիշ խոսքով՝ այն թշվառ Թռնըկոկի հետ, որ ջրմուղի վարչության սպասավորն է... և չեք դատապարտի բարկությանս սաստկությունը։

Մր. Միկաբրն գորովանքով համբուրեց ամուսնուն ու ձեռքը սեղմեց։ Այս բոլորից ես գուշակեցի, որ մի ժամ առաջ նրա տան ջուրը կտրել էին ջրի մաքսը քաղաքային վարչությանը չվաճերու պատճառով։

Մր. Միկաբրի հուզմունքը փարատելու համար հայտնեցի նրան, թե պունչ պատրաստելու պաշտոնը իրեն եմ հանձնում, և մոտեցրի նրան սեղանին, ուր բոլոր նյութերը՝ ռոմ, շաքար, կոկոս, կիտրոններ, արդեն առաջուց դրված էին։ Նրա սրտի դառնությունը, եթե չասենք վհատությունը, մի վայրկյանում անհետացավ։ Դեռ ոչ ոք աշխարհիս երեսին նրա նման չէր

հրճվել կիտրոնը շերտ-շերտ կտրելուց, ռոմի բուրմունքը հոտոտելուց, եռացող ջրի գոլորշին շնչելուց։ Զվարճալի էր նրա զվարթ դեմքին նայել, երբ նա թեժ կրակի կապույտ շողքով լուսավորված՝ հեղուկը խառնում էր, ճաշակում, կարծես թե պատրաստածը ոչ թե պունչ, այլ մի անսպառ հարստություն լիներ, որ սերնդից սերունդ բավելու էր իր տոհմին։ Գալով մրս. Միկաբրին՝ չգիտեմ, արդյոք գլխանոցի՞, հուսամի ջրի՞, գնդասեղների, կրակի՞, մոմերի՞, թե մի ուրիշ պատճառով նա իմ ննջարանից դուրս գալիս համեմատաբար շատ ավելի գեղեցիկ էր և արտուտիկի պես կայտառ։

Ենթադրում եմ, հարցուփորձ չեմ արել, այլ միայն ենթադրում եմ, թե մրս. Կրոպպը, ձկները խաշելուց հետո, հիվանդացած կլիներ, որովհետև ձկներից հետո մեր ճաշը կանգ առավ։ Գառան զիստը դրսից անչափ գունատ էր, մեջը կարմիր ու շատ հում, և վրայի գորշ բծերին նայելով՝ կարելի էր կարծել, թե մոխրի մեջ է թավալվել։ Բանի էությունը գուցե պարզվեր մսաջրից, եթե ջահել աղջիկը սանդուղքի վրա գայթելով, այդ հեղուկը թափած չլիներ, որի հետքերը ամենացածր աստիճանների վրա անգամ դեռ երկար ժամանակ երևում էին։ Աղավնու կարկանդակը մի բավարար, սակայն խաբուսիկ տեսք ուներ, վրայի կեղևը գանգաբանների պես խոսելով, մի հուսահատական գլխի նման էր՝ լի զանազան այտումներով ու փոսերով, որոնց տակը ոչ մի էական նյութ չկար։ Կարճ ասած՝ ճաշս այնպես էր փչացել, որ ես անբախտ կլինեի... ուզում եմ ասել դրա պատճառով, էլ չասենք Դորայի... եթե հյուրերիս զվարթությունն ու մր. Միկաբրի հանճարեղ միտքն ինձ չսփոփեր։

– Սիրելիդ իմ Կոպպերֆիլդ,– ասաց մր. Միկաբրը,– այսպիսի դեպքեր պատահում են մինչև անգամ շատ բարեկարգ տներում, իսկ այն տներում, ուր բացակա է ամեն բան կառավարող ու տնտեսող... այսինքն՝ ժրաջան ու աչալուրջ կնոջ գերիշխող ազդեցությունը, դրանք կարող են ամեն րոպե պատահել. սակայն պետք է ստոիկյան հաստատակամությամբ համբերել դրանց։ Վստահում եմ ասել, թե խորովածից համեղ ուտելիք չկա, և եթե մենք աշխատանքը բաժանելով, գործին միաբան ձեռք զարնենք, ամեն բան նորից կուղղվի և մի փառավոր ճաշ կունենանք։ Միայն թե պատվիրեցեք ձեր նորատի սպասուհուն մի կասկարա բերել ինձ։

Կասկարան ճարվեց, և մենք իսկույն փութացինք իրագործել մր. Միկաբրի գաղափարը։ Նրա առաջարկած աշխատանքի բաժանումը հետևյալ կերպ կատարվեց. Տրեդլսը գառան միսն էր շերտ-շերտ կտրում, մր. Միկաբրը, որ այս տեսակ գործերի մեջ հանճար էր, շերտերի վրա մանանեխ, պղպեղ, ու աղ էր ցանում. ես դրանք պատառաքաղով կասկարայի վրա էի դարսում, շուռ տալիս և մեկ-մեկ հանում՝ մր. Միկաբրի հսկողությամբ. իսկ մրս. Միկաբրը մի փոքրիկ կաթսայի մեջ սունկի սոուս էր տաքացնում։ Հենց որ շերտերը տապակվում էին, մենք սոթտած թևերով վրա էինք ընկնում ուտելու, և մեր ուշքը դեռ անպատրաստ ու պատրաստ շերտերի մեջ բաժանում։

Խոհարարության այս նորագյուտ եղանակը – դրա առավելությունը, շուտ-շուտ վերկենալու, կասկարային նայելու, շերտերը տապակվելուն պես նորից նստելու և տաք-տաք ուտելու մեջ էր, վերջապես թեժ կրակի ազդեցությամբ մեր բորբորքված եռանդը այն աստիճան զվարճացնում էր բոլորիս, որ մենք ծիծաղի, հանաքների ու որկրամոլության աշխույժի մեջ չտեսանք էլ, թե ինչպես գառան զիստից միայն ոսկորը մնաց։ Ախորժակս հրաշալի կերպով բացվել էր։ Ամոթ է ասել, բայց պետք է ասել, որ այդ միջոցին Դորայիս անգամ կարծես մի վայրկյան, այո՛ մի վայրկյան մոռացա։ Հավատացած եմ, որ եթե մր. Միկաբրն ու նրա կինը իրենց վերջին անկողինն էլ վաճառեին մի փարթամ ճաշ վայելելու համար, ավելի հաճույք չէին զգա, քան որ զգացին իմ ճաշից։ Տրեդլսը սկզբից մինչև վերջ հավասար ոգևորությամբ և՛ գործում էր, և՛ ծիծաղում, և՛ ուտում։ Բոլորս էլ այդպես էինք անում անխտիր։ Կարելի է հաստատ ասել, թե այսպիսի հաջողություն տեսնված բան չէր։

Արդեն հասել էինք ուրախության գագաթնակետին և մեզնից յուրաքանչյուրը ջանաղիր էր ոչխարի մսի վերջին շերտերը կատարելության հասցնել, որպեսզի մեր խնջույքն արժանապես վերջանա, երբ հանկարծ սենյակումս մի նորեկ մարդ նշմարեցի և աչքերս Լիտտիմերի աչքերին դիպան, որ գլխարկը ձեռքին լուրջ կանգնած էր իմ առջև։

– Ի՞նչ է պատահել,– հարցրի ես ակամա։

– Խնդրեմ ներեցեք, սըր։ Ինձ ասացին, որ ներս մտնեմ, ես էլ մտա։ Արդյոք իմ տերն այստեղ չէ՞, սըր։

– Ոչ։

– Չե՞ք տեսել նրան, սըր։

– Ոչ. մի՞թե նրա կողմից չեք գալիս։

– Իսկապես ոչ, սըր։

– Ուրեմն նա ձեզ ասած կլինի, թե իրեն այստեղ կգտնեք։

– Ոչ լիովին այդպես, սըր։ Սակայն կարծում եմ, որ եթե այսօր այստեղ չէ, ուրեմն վաղը կլինի։

– Անշուշտ Օքսովորդից գալո՞ւց հետո։

– Ներեցեք, սըր,– ասաց Լիտտիմերը հարգանքով։– Խնդրեմ հաճեցեք նստել և թույլ տվեք, որ այդ բանը ես անեմ։

Եվ այս ասելով նա իմ ձեռքից առավ պատառաքաղը, որ չէի կարող չտալ, և կասկարայի վրա կռացավ, որի վրա կարծես և իր բոլոր ուշքն ու միտքը ամփոփեց։

Նույնիսկ Ստիրֆորթի երևալը մեզ այնքան չէր շփոթի, ինչքան որ նրա մեծարգո սպասավորը մեզ շփոթեց, այլայլեց ու փոքրացրեց։ Մր. Միկաբրն սկսեց մի ինչ-որ երգ մրմնջալ անտարբեր ձևանալու համար, սակայն շտապ-շտապ նստելիս այն աստիճան վատ թաքցրեց պատառաքաղն իր ծոցում, որ դուրս տնկված կոթին նայելով կարելի էր կարծել, թե իր փորն էր մխել ինքն իրեն սպանելու համար։ Մրս. Միկաբրը շտապեց իր մթագույն ձեռնոցները հագնել և մի շնորհալի հոգնություն ցույց տալ։ Տրեդլսը ճարպոտ մատներով իր գլխի մազերը հիմն ի վեր քրքրեց, որոնք ավելի դիզվեցին, և շվարած սկսեց նայել սփռոցին։ Իսկ ես մի խոնարհ մանուկ էի դարձել, նստած իմ սեփական սեղանի գլխին, և հազիվ հանդգնում էի մի երկչոտ ակնարկ նետել պատկառելի կերպանանքի վրա, որ ո՞վ գիտե որտեղից էր եկել կարգի բերելու իմ տունը։

Այնինչ նա մսի կտորներն զգուշությամբ կասկարայի վրայից հանեց և ամեն մեկիս խոնարհաբար առաջարկեց։ Վերցրինք մի-մի պատառ, բայց միայն ձևի համար, որովհետև մեր ախորժակն արդեն կորել էր։ Նա տեսնելով, որ մեր պնակները մի քանի անգամ մի կողմ հրեցինք, հանդարտ կերպով հավաքեց դրանք ու պանիր դրեց սեղանի վրա։ Հետո պանիրն էլ վերցրեց, սեղանը մաքրեց, մեր առջև մի-մի հատ գինու բաժակ դրեց և առանց իմ հրամանի, բոլոր ամաններն ու սպասքները պահարանի մեջ դրեց։ Այս բոլորը նա լավից լավ արեց և այնպես խորասուզված մտքերի մեջ, որ վրաս նայելու ժամանակ էլ չէր գտնում։ Այնինչ, երբ նա մեջքը դեպի ինձ դարձրեց, նրա արմունկներն անգամ բարձրաձայն հայտնեցին նրա հաստատ համոզումը, թե ես դեռ շատ միամիտ երեխա եմ։

– Էլ ի՞նչ կհրամայեք, որ անեմ, սըր։

Շնորհակալություն հայտնելով ասացի, թե ոչինչ հարկավոր չէ, և առաջարկեցի, որ ինքն էլ ճաշի։

– Ոչ, սըր, մեծապես շնորհակալ եմ։

– Մր. Ստիրֆորթն Օքսվորդի՞ց է գալիս։

– Երևի, սըր, վաղն այստեղ կլինի։ Հույս ունեի, սըր, այսօր ձեզ մոտ գտնել նրան։ Բայց տեսնում եմ, որ սխալված եմ, սըր, ներեցեք։

– Եթե ինձնից առաջ նրան տեսնեք... – ասացի ես։

– Կներեք, սըր, չեմ կարծում, որ ձեզնից առաջ տեսնեմ նրան։

– Բայց և այնպես, եթե տեսնեք, ասացեք նրան, թե շատ ցավում եմ, որ նա այսօր մեզ հետ չէր, այստեղ նա մի հին դասընկեր կգտներ։

– Իրա՞վ, սըր,– ասաց Լիտտիմերը և խոնարհաբար ողջույն տալով ինձ ու Տրեդլսին՝ մի թեթև ակնարկ նետեց նրա վրա։

Արդեն մր. Լիտտիմերը ծանրաքայլ մոտենում էր դռանը, երբ ես, զայրանալով, որ մինչև այժմ գեթ մի կարևոր բան չէի հարցրել նրանից... թեև կցանկանայի... գոչեցի.

– Է՛յ, Լիտտիմեր։

– Հրամայեցեք, սըր։

– Այս անգամ երկա՞ր մնացիք Յարմաութում։

– Շատ երկար չմնացի, սըր։

– Նավակի նորոգությունը ձե՞ր մոտ վերջացրին։

– Այո, սըր։ Հատկապես դրա համար էր, որ այնտեղ մնացի։

– Գիտեմ։

Նա ակնածությամբ վրաս նայեց։

– Մր. Ստիրֆորթը գուցե դեռ տեսած էլ չլինի այդ նավը,– ասացի ես։

– Ստույգն ասել չեմ կարող, սըր։ Բարի գիշեր եմ մաղթում ձեզ, սըր։

Այս ասելով նա ակնածու խոնարհությամբ մի ընդհանուր ողջույն տվեց բոլորիս ու գնաց։ Նրա հեռանալուն պես հյուրերս ավելի ազատ շունչ քաշեցին, իսկ ես մի մեծ թեթևություն զգացի, որովհետև բացի այդ հոգեկան ճնշումից, որ ամեն ժամանակ պատճառում էր ինձ այդ մարդու ներկայությունը, խիղճս վկայում էր, թե ես նրա տիրոջ նկատմամբ մի թեթև կասկած ցույց տվի, և վախենում էի, թե այս կասկածը Լիտտիմերի սուր աչքից ծածուկ չմնա։ Չնայած որ ես համարյա թե թաքցնելու բան չունեի, այնուամենայնիվ, չգիտեմ ինչո՞ւ, միշտ վախենում էի, թե այդ մարդը սրտիս խորքը տեսնում է։

Մր. Միկաբրը վերջ տվեց մտմտուքիս, անթիվ գովասանք շռայլելով բացակա Լիտտիմերին, որը նրա ասածի համաձայն՝ մի պատվական տղամարդ էր ու հիանալի սպասավոր։ Պետք է ասել, որ մր. Միկաբրը Լիտտիմերի ընդհանուր ողջույնի մեծագույն մասը հատկապես իր անձին էր վերագրել և անսահման զիջողությամբ փոխարենը հաստատեց։

– Սակայն պունչը, սիրելիդ իմ, Կոպպերֆիլդ,– ասաց մր. Միկաբրը, խմիչքի համը տեսնելով,– ժամանակի ու ծովի ընթացքի պես՝ ոչ մի մարդու չի սպասում։ Ահ, բուրմունքն ու համը այս րոպեիս կատարյալ են։ Հոգյակ իմ, հապա մի տես ու կարծիքդ ասա։

Մրս. Միկաբրը հայտարարեց, թե պունչը իրոք սքանչելի է։

– Ուրեմն խմենք,– ասաց մր. Միկաբրը,– եթե իմ բարեկամ Կոպպերֆիլդը բարեհաճի թույլ տալ, ի հիշատակ այն օրերի, երբ իմ բարեկամ Կոպպերֆիլդն ու ես ավելի երիտասարդ էինք քան այսօր, ձեռք-ձեռքի տված կռիվ էինք մղում կյանքի դառն աղետների դեմ։ Կարող եմ կրկնել Կոպպերֆիլդի վերաբերմամբ միևնույն երգի խոսքերը, որ հաճախ երգել ենք ես ու նա։

«Մենք միասին դաշտ ու հովիտ չափեցինք,
Եվ միասին թարմ գավեններ[54] քաղեցինք»...

Հարկավ սա այլաբանորեն է ասված, վասն զի ինքս էլ չգիտեմ, թե գավեն բառն ի՞նչ է նշանակում,– շարունակեց մր. Միկաբրը, ձայնին տալով նախկին գեղգեղանքը ու վայելուչ

[54] Gowan – շոտլանդական բառ է, և նշանակում է մարգարիտ։

ելևէջներ փնտրելով,– բայց և այնպես վստահ եմ, որ Կոպպերֆիլդն ու ես շատ գավեններ կքաղեինք, եթե միայն հնար լիներ։

Մր. Միկաբրը բաժակը պարպեց. մենք էլ նույնն արինք, թեև Տրեդլսը շվարած էր թվում՝ մտածելով, թե ե՞րբ ենք ես ու մր. Միկաբրը ընկերովի կռիվ մղել կյանքի դառն աղետների դեմ։

– Հըմ,– ասաց մր. Միկաբրը, իր կոկորդը մաքրելով և վառարանի կրակից ու պունչից տաքանալով։– Հոգյակ իմ, կուզե՞ս էլի մի բաժակ։

Մրս. Միկաբրը պատասխանեց, թե միայն մի կաթիլ կցանկանա, սակայն մենք բողոքեցինք միայն մի կաթիլի դեմ, և բաժակը լիքը լցվեց։

– Որովհետև այստեղ բոլորս մտերիմներ ենք,– ասաց մրս. Միկաբրը՝ պետք է ումպ-ումպ խմելով,– և մր. Տրեդլսը մեր մարդն է, ուստի կցանկանայի, մր. Կոպպերֆիլդ, ամենիդ կարծիքը մր. Միկաբրի պլանների մասին իմանալ։ Վասն զի ցորենի առևտուրը,– ասաց մրս Միկաբրը դրական կերպով,– ինչպես որ հաճախ նույնիսկ մր. Միկաբրին կրկնել եմ, թեև ջենտլմենի հարմար գործ է, բայց ամենևին շահաբեր չէ։ Ասացեք խնդրեմ, մի՞թե կարելի է, որքան էլ մեր պահանջները սահմանափակ լինեին, շահավետ անվանել մի կոմիսիոն, որի արդյունքը տասնչորս օրում երկու շիլինգ և ինը պենս է։

Բոլորս էլ հաստատեցինք, թե չի կարելի։

– Ուրեմն,– ասաց մրս. Միկաբրը, որ պարծենում էր թե իր դրական մտքով ու կանացի խելքով շատ անգամ մարդուն մի թյուր ճանապարհ բռնելու վտանգից ազատել է,– ուրեմն անհրաժեշտ է, որ ինքս ինձ հարցնեմ՝ եթե ցորենի գործն ապահով չէ, հապա ո՞րն է ապահովը։ Արդյոք քարածո՞ւխը։ Ամենևին։ Ընտանիքիս խորհրդով արդեն մի անգամ փորձել էինք այդ ճյուղի վրա ուշադրություն դարձնել, բայց վնասից բացի՝ բնավ ուրիշ բան չտեսանք։

Մր. Միկաբրը, մեջքն աթոռին դեմ տված ու ձեռքը գրպանը խոթած, մեզ բոլորիս աչքով ունքով նշան էր անում, թե չէր կարելի դրանից ավելի պարզ բացատրել խնդիրը։

– Ածուխն ու ցորենը հաշվից հանելով,– շարունակեց մրս. Միկաբրը է՛լ ավելի վստահորեն,– ինձ կմնա, մր. Կոպպերֆիլդ, շուրջս նայել ու հարցնել՝ ո՞րն է ուրեմն այն գործը, որի մեջ մր. Միկաբրի ձիրքերով օժտված մի մարդ կարող էր հաջողություն ունենալ։ Կոմիսիոնով գործ տեսնելու գաղափարին ես հակառակ եմ. կոմիսիոնը խախուտ բան է։ Մր. Միկաբրի բնավորության տեր մարդուն, իմ համոզումով. մի վստահելի ու հաստատ գործ է հարկավոր։

Տրեդլսն ու ես ջերմ շշունջով հայտնեցինք, թե այդ կարծիքը հիմնավոր է մր. Միկաբրի նկատմամբ և մեծ պատիվ է բերում նրան։

– Չեմ ուզում ձեզնից թաքցնել, մր, Կոպպերֆիլդ,– ասաց մրս. Միկաբրը,– որ իմ վաղուցվա կարծիքով գարեջրի գործը ամենից ավելի հարմար կգա մր. Միկաբրի հակումներին։ Տեսեք Բերկլին ու Պերկինսը ինչպես առաջ գնացին։ Տեսեք՝ որքան հարստացան Տրումանը, Բիքստընը և Հենրիվրին։ Ահա այս լայն ասպարեզի վրա է, որ իմ սրտի վկայությամբ կարող էր պայծառ լույսով շողշողալ մր. Միկաբրի հանճարը. իսկ օգուտները, ասածներին նայելով ահ-ահագին են։ Սակայն քանի որ մր. Միկաբրը չի կարողանում այդ ֆիրմաները մուտք գործել... և նույնիսկ իր գրավոր առաջարկներին՝ ծառայելու մինչև անգամ մի հասարակ պաշտոնով, ոչ մի պատասխան չեն տալիս. ի՞նչ կարիք կա այս նյութի վրա կանգ առնելու։ Եվ ոչ մի։ Գալով մի սեփական բանկ հիմնելու խնդրին, քաջ գիտեմ, որ իմ ազգատոհմ անդամներից շատերը կարող էին այդպիսի տուն հաստատել, եթե միայն բարվոք դատեին մր. Միկաբրի խնամքին հանձնել իրենց դրամը։ Սակայն քանի որ նրանք չեն ուզում իրենց դրամը մր. Միկաբրին հանձնել... և երբեք չպիտի ուզենան, էլ ինչու երկարաբանենք այս մասին։ Այսպես, ուրեմն, ես պնդում եմ, որ մենք դարձյալ այն կետի վրա ենք կանգնած, որ առաջ էլ կանգնած էինք, և մի քայլ առաջ չենք անցել։

Ես գլուխս շարժեցի և ասացի. «Եվ ոչ մի քայլ»: Տրեդլսն էլ գլուխը շարժեց և ասաց. «Եվ ոչ մի քայլ»:

– Այդ ի՞նչ կմնա այս բոլորից հետևեցնել,– ասաց մրս. Միկաբրը, խնդիրն է՛լ ավելի լուսաբանելու եռանդով:– Ո՞րն է այն եզրափակությունը, որ ստիպված են անել, հնազանդվելով փաստերի հաղթող զորությանը: Մի՞թե սխալված կլինեմ, սիրելի մր. Կոպպերիլդ, եթե ավելացնեմ, թե մեզ անշուշտ ապրել, ապրե՛լ է պետք:

«Բնավ ոչ», պատասխանեցի ես: Տրեդլսն էլ կրկնեց՝ «Բնավ ոչ». հետո ես փիլիսոփայորեն ավելացրի, թե մարդս պիտի կամ ապրի, կամ մեռնի:

– Ճիշտ այդպես է,– հաստատեց մրս. Միկաբրը:– Իսկ և իսկ այդպես: Եվ բանն այս է, սիրելի մր. Կոպպերֆիլդ, որ մենք չենք կարող ապրել, եթե մեր արդի պայմանները հիմնական փոփոխության չենթարկվեն: Ես կասկած ունեմ, և վերջերս մր. Միկաբրին էլ հաճախ ասել եմ, թե փոփոխությունը ինքն իրեն չի կատարվի: Մասամբ մեզ էլ անհրաժեշտ է այդ փոփոխությանը նպաստել: Թերևս սխալվեմ, սակայն այս է իմ կարծիքը:

Տրեդլսն ու ես բարձրաձայն հավանություն տվեցինք:

– Շատ բարի,– ասաց մրս. Միկաբրը:– Արդ իմ խորհրուրդն ի՞նչ է: Ահա մր. Միկաբրն իր բազմազան ձիրքերով... մեծ տաղանդով...

– Աչքի՛ս լույս,– ասաց մր. Միկաբրը:

– Թույլ տուր, հոգյակ, ավարտեմ: Ահա մր. Միկաբրն իր բազմակողմանի ձիրքերով, մեծ տաղանդով... կարող եմ ասել հանճարով, եթե միայն խոսքս կնոջ կողմնակալության չվերագրեք...

Տրեդլսն ու ես մրմնջացինք՝ «Ամեննին»:

– Այսուամենայնիվ, մր. Միկաբրն անգործ է, մի կարգին պաշտոն չունի: Եվ այս բոլորի պատճառն ո՞վ է: Անտարակույս՝ հասարակությունը: Հետևաբար ես կցանկանայի այս թշվառ հանգամանքը հրապարակ հանել ու համարձակ հրավեր կարդալ հասարակության, որ նա իր հանցանքն ուղղի: Իմ կարծիքով, սիրելի մր. Կոպպերֆիլդ,– ասաց մրս. Միկաբրը բարձր ձայնով,– մր. Միկաբրին ուրիշ բան չի մնում անել, բայց եթե ձեռնոց նետել[55] հասարակությանը ու քաջորեն ասել. «Տեսնենք ո՞վ կվերցնի այս ձեռնոցը. թո՛ղ նա իջնի ասպարեզ»:

Հանդգնեցի հարցնել մրս. Միկաբրին, թե ինչպե՞ս է արվում այդ:

– Ինչպե՛ս: Հայտարարելով բոլոր լրագրերում,– ասաց մրս. Միկաբրը:– Բացահայտ է, որ մր. Միկաբրը պարտավոր է, եթե կամենա արդար լինել դեպի իր անձը, արդար դեպի իր ընտանիքը և արդար նույնիսկ դեպի հասարակությունը, որ մինչև այժմ նրան անտես է թողել, հայտարարություն տալ բոլոր թերթերին, ճիշտ նկարագրել իր անձը ու ձիրքերը և ի վերջո ավելացնել. Արդ՝ ձեզ կմնա առաջարկել ինձ որևէ գործ՝ պատշաճ ռոճիկով: Դիմել Ուիլ Մ-ին, poste-restante Կեման Տաուն»:

Մր. Միկաբրն իր օձիքի անկյուններն իրար մոտեցրեց, կզակը շփեց ու շեղակի վրաս նայելով ասաց.

– Ահա սիրելիդ իմ Կոպպերֆիլդ, մրս. Միկաբրի այդ գաղափարն է իսկապես այն ցատկումը, որի մասին ակնարկել էի ձեզ մեր վերջին տեսակցության ժամանակ:

– Լրագրական հայտարարություններ կարծեմ բավական թանկ արժեն,– կմկմացի ես:

– Իրա՛վ է,– ասաց մրս. Միկաբրը դարձյալ նույն տրամաբանական եղանակով:– Ձեր ասածը շատ ճշմարիտ է, սիրելի մր. Կոպպերֆիլդ: Ես էլ եմ մր. Միկաբրին ճիշտ մի այդպիսի

[55] Մենամարտի հրավիրելիս կամ ասպարեզ կանչելիս ասպետները ձեռնոց են նետում ոսոխին:

նկատողություն արել։ Եվ ըստ իս՝ այդ իսկ պատճառով մր. Միկաբրը պարտավոր է, եթե կամենա, ինչպես որ արդեն ասել եմ, արդար լինել դեպի իր անձը, արդար լինել դեպի իր ընտանիքը և արդար դեպի հասարակությունը, պարտավոր է մի գումար ճարել... մուրհակով։

Մր. Միկաբրը, մեջքն աթոռին դեմ տված և իր սղոցի հետ խաղալով, մեկ առաստաղին էր նայում, և մեկ կրակի մոտ նստած Տրեդլսին։

– Եթե իմ ընտանիքի անդամներից,– ասաց մրս. Միակրրը,– ոչ մեկը այնքան զգացում չունենա, որ այդ մուրհակը շահագործի... կարծում եմ մի ավելի գործնական բառ կա ասելիքս հայտնելու համար...

– Ջեղչել,– թելադրեց մր. Միկաբրը, աչքերը առաստաղին բևեռելով։

– Այո, մուրհակը զեղչել,– ասաց մրս. Միկաբրը,– այն ժամանակ մր. Միկաբրը լավ կանի, եթե Սիտի գնա, իր մուրհակը բորսա տանի ու ինչ գնով էլ որ լինի գործի մարդկանց վաճառի։ Եթե բորսայի մարդիկ մր. Միկաբրին հարկադրեն շատ զգալի զոհբերություն անել, թող այդ բանը նրանց խղճի վրա ծանրանա։ Իմ կարծիքով, համենայն դեպս, դա մի հաջող շահագործություն կլինի, ուստի և, սիրելի մր. Կոպպերֆիլդ, ես քաջալերում եմ մր. Միկաբրին, որ նա էլ իմ աչքով նայի, այսինքն՝ շահավետ համարի այն, որքան էլ զոհերը մեծ լինեն։

Չգիտեմ ինչո՞ւ ինձ այնպես թվաց, թե այս խորհուրդը մրս. Միկաբրի անշահասիրության ապացույց է և ամուսնու նկատմամբ անձնվիրության օրինակ, և ես այդ իմաստով մի քանի խոսք շշնջացի. ինձ հետևելով, նույնն արեց և Տրեդլսը, որ շարունակում էր կրակին նայել։

– Չեմ երկարացնի,– ասաց մրս. Միկաբրը, իր պունչը վերջացնելով ու շալն ուսին քաշելով՝ իմ ննջարանը գնալու համար,– չեմ երկարացնի խոսքերս մր. Միկաբրի դրամական գործերի մասին։ Այստեղ, ձեր տանիքի տակ, սիրելի մր. Կոպպերֆիլդ, և մր. Տրեդլսի ներկայությամբ, որ թեև հին ընկեր չէ, բայց մեր շրջանին է պատկանում, ես չէի կարող զսպել ինձ ու չպարզել ձեզ, թե ի՞նչ պիտի լինի, իմ կարծիքով, մր. Միկաբրի անելիքը։ Զգում եմ, արդեն հասել է ժամանակը, երբ մր. Միկաբրը պետք է ամեն ճիգ ու ջանք թափի իր իրավունքը պաշտպանելու համար։ Միջոցն արդեն ցույց տվի։ Քաջ գիտեմ, ես ոչ այլ ինչ եմ, եթե ոչ մի կին, գիտեմ նաև, որ այս տեսակ գործերի մեջ տղամարդու դատողությանը ավելի մեծ կշիռ է տրվում, սակայն անկարող եմ մոռանալ, որ երբ հայրիկիս ու մայրիկիս մոտ էի ապրում, նրանք հաճախ կրկնում էին. «Մեր Էմման մի թույլ աղջիկ է, բայց առողջ ու սուր միտք ունի, և բանի էությունը ոչ ոքից վատ չի ըմբռնում»։ Համաձայն եմ, որ այս բանում հայրիկս կողմնապատ էր, բայց որ նա, գոնե մասամբ, մարդկային բնավորություն ճանաչող մարդ էր՝ այս մասին կասկածել ո՛չ իմ պատիվը կների, ո՛չ էլ խելքը։

Այս խոսքերն ասելուն պես մրս. Միկաբրն վերկացավ, և չնայելով մեր աղաչանքներին, որ պունչի վերջին բաժակը վայելի, գնաց իմ ննջարանը։ Եվ ես ինքս ինձ մտածեցի, թե նա մի ազնիվ կին է՝ հռոմեական մատրոնների տեսակից, որ հասարակության շփոթների ժամանակ ինչ դյուցազնական գործ էլ ասես ընդունակ է կատարել։

Այս ջերմ տպավորության ներքո ես մր. Միկաբրին երանի տվի, որ մի այդպիսի գանձ ունի. Տրեդլսն էլ նույնն արեց։ Մր. Միկաբրը երկուսիս աջն էլ հերթով սեղմեց և հետո իր երեսը թաշկինակով ծածկեց, որի վրա, հարկավ իր կարծացից ավելի բծեր կային։ Այնուհետև ամենամեծ զվարթությամբ նորից իր պունչին դարձավ։

Եվ նրա ճարտար լեզուն բացվեց։ Նա շտապեց հասկացնել, թե մարդս նորից է ապրում զավակների մեջ, և թե նրանց թվի աճելը դրամական տագնապների միջոցին կրկնապատիկ ընդունելի ու հաճելի է։ Նա ասաց, թե նորերս մրս. Միկաբրը այս մասին մի քանի տարակույսներ է ունեցել, բայց թե իրեն՝ մր. Միկաբրին, հաջողվել է փարատել դրանք ու վերստին սրտապնդել ամուսնուն։ Գալով ամուսնու ազգականներին, նրանք անարժան

մարդիկ են, և ինքը նրանց կարծիքն արհամարհում է և սրտանց կցանկանա, որ… մր. Միկաբրի հատուկ բառերը կրկնելով… բոլորին էլ գրողը տաներ։

Այնուհետև մր. Միկաբրը մի ջերմեռանդ գովեստ նվիրեց Տրեդլսին։ Տրեդլսի հաստատ առաքինություններին նա (մր. Միկաբրը) թեև չի կարող պաշտպանել, բայց փառք է տալիս աստծուն, որ գոնե ընդունակ է հիանալով գնահատել դրանք։ Նա մի գորովալի ակնարկ արեց այն անծանոթ կույսի մասին, որին Տրեդլսը իր սիրով մեծացրել է և որ փոխադարձ սիրով պատվել ու երջանկացրել է… Տրեդլսին։ Մր. Միկաբրը կենաց բաժակ նվիրեց կույսին։ Ես էլ նույնը կրկնեցի։ Տրեդլսը երկուսիս էլ շնորհակալություն հայտնեց և մի գրավիչ պարզությամբ ասաց. «Հատուկ շնորհակալ եմ, պարոններ։ Մեկ տեսնեիք, ի՞նչ պատվական աղջիկ է»։

Այս բաժակից հետո մր. Միկաբրը մի զարմանալի նրբանկատությամբ ու զգուշությամբ իմ սրտի վիճակի վրա էլ ակնարկեց։ Մինչև իր դեմ մի զորեղ փաստ չդնեն և իր ասածը չհերքեն, ասաց նա, ինքը չի հրաժարվի այն համոզումից, որ իր բարեկամ Կոպպերֆիլդը և՛ սիրում է, և՛ սիրված է։ Այս խոսքերը կրակ գցեցին սրտիս մեջ։ Երկար ժամանակ ամաչելով, կարմրելով, հուզվելով ու կմկմալով հերքելու փորձեր անելուց հետո, վերջապես բաժակը վերցրի ու գոչեցի. «Ուրեմն Դ-ի կենա՛ցը», և մր. Միկաբրը այն աստիճան ուրախացավ ու տաքացավ, որ պունչը ձեռքին ուղղակի իմ ննջարանը վազեց, որպեսզի մրս. Միկաբրն էլ Դ-ի կենացը խմի։ Տիկինը փութաց այդ անել և ներսից բարձր ձայնով ճվաց. «Բրավո՛, բրավո՛, սիրելի մր. Կոպպերֆիլդ։ Հիանալի՛ է, և ի նշան ցնծության՝ սկսեց բռնուցքով պատը ծեծել։

Դրանից հետո մեր խոսակցությունն ավելի պարզ ընթացք ստացավ։ Մր. Միկաբրը հայտնեց մեզ, թե Կեման Տաունի բնակարանից շատ դժգոհ է, և թե հենց որ իր լրագրական զեկուցումները հաջող ելք գտնեն, նա մի ուրիշ տեղ կբնակվի։ Նա հիշեց մի տուն, Օքսֆորդ Ստրիտի[56] արևմտյան ծայրում՝ Հայդ Պարկի դեմուդեմ գտնվող մի հոյակապ ապարանք, որ արդեն վաղուց ընտրել է, բայց հույս չուներ իսկույն այնտեղ քաշվելու, որովհետև մի այդպիսի տուն պահելն ահագին ծախս կպահանջեր։ Ուստի հավանական է, որ նա ստիպված լինի միառժամանակ վերնահարկի բնակարանով բավականանալ… օրինակի համար, Պիկադիլիի բանուկ կողմերում, որ անշուշտ մրս. Միկաբրին դուր կգար, և ուր Վենետիկի պատուհան շինելով կամ տանիքի վրա դարձյալ մի հարկ ավելացնելով կամ թե մի ուրիշ թեթև փոփոխություն անելով, թերևս կարող է մի քանի տարի հանգիստ ապրել։ Սակայն ինչ էլ պատահի, կամ որտեղ էլ նա բույն դնի, հարեց նա, իր մոտ միշտ Տրեդլսի համար գեթ մի սենյակ կճարվի, իսկ ինձ համար մի պատառաքաղ ու դանակ։ Մենք շնորհակալ եղանք, և նա խնդրեց ներել իրեն՝ այսպիսի գործնական մանրամասների մեջ մտնելու համար՝ արդարև մի ներելի հանգամանք այսօր կամ վաղը մի նոր կյանք սկսող անձի վերաբերմամբ։

Մրս. Միկաբրը մեր մտերմական խոսակցության այս մասն ընդհատեց նորից պատը ծեծելով՝ իմանալու թե արդյոք թեյը պատրա՞ստ է։ Նա ինքը սիրով հանձն առավ թեյը լցնել, և երբ ես մոտենում էի նրան, բաժակները բաժանելիս կամ թե պաքսիմաթը շրջեցնելիս, նա կամացուկ հարցնում էր – արդյոք Դ-ն թխահե՞ր է. թե՞ շիկահեր, և կամ բարձրահասա՞կ է, թե՞ կարճլիկ, և կամ՝ սևորա՞կ աչքեր ունի, թե՞ կապույտ, և ուրիշ այսպիսի բաներ, որոնք կարծեմ բնավ անախորժ չէին ինձ համար։ Թեյից հետո զանազան բաների մասին սկսեցինք զրուցել վառարանի առջև, և մրս. Միկաբրը շնորհ արեց ջախջախված և սուրբ ձայնիկով երգելու «Սպիտակ զինվորի» և «Փոքրիկ Տեֆլինի» երգերը։ Այս երկու երգերով մրս. Միակբրը հռչակված է եղել դեռ իր հայրիկի ու մայրիկի տանն ապրելիս։ Մր. Միկաբրը մեզ պատմեց, թե երգչուհու առաջին երգը, առաջին անգամ նրան հոր տանը լսելուն պես՝ հափշտակվել է դրանով, իսկ երբ բանը «Փոքրիկ Տեֆլինին» է հասել, նա իսկույն ևեթ երդվել է կամ տիրանալ երգչուհուն և կամ մեռնել այդ խիզախ ձեռնարկի մեջ։

Ժամը արդեն տասն անց կես էր, երբ մրս. Միկաբրը վերկացավ՝ իր գլխանոցը գորշ թղթի մեջ փաթաթելու և գլխարկը հագնելու համար։ Մր. Միկաբրը օգուտ քաղելով այն րոպեից, երբ

[56] Լոնդոնի նշանավոր փողոցներից մեկն էր։

Տրեդլսը իր վերարկուն էր որոնում, մի տոմսակ խոթեց ձեռքիս մեջ ու փսփսաց, որ հետո կարդամ։ Ես էլ իմ հերթին, երբ սանդուղքը մոմով լուսավորում էի, իսկ մր. Միկաբրը ներքև էր իջնում իր կնոջ հետ, մի վայրկյան Տրեդլսին բռնեցի և ասացի.

– Տրեդլս, մր. Միկաբրը չար մարդ չէ, բայց և այնպես, եթե ես քո տեղը լինեի, ոչ մի բան չէի տա նրան։

– Սիրելի Կոպպերֆիլդ,– պատասխանեց Տրեդլսը ժպտալով,– ի՞նչ ունեմ որ, ինչ տամ։

– Դու ունես մի լավ անուն, հասկանո՞ւմ ես։

– Բայց միթե անունը տալո՞ւ բան է,– ասաց Տրեդլսը, լուրջ նայելով երեսիս։

– Անտարակույս, և թանկագին բան։

– Կարելի է։ Շատ շնորհակալ եմ, Կոպպերֆիլդ... – շատ շնորհակալ, բայց ես... արդեն տվել եմ նրան այդ բանը։

– Այն մուրհակի համա՞ր, որ պիտի գրավ դրվի,– հարցրի ես։

– Ոչ,– ասաց Տրեդլսը,– դրա համար չէ. դրա մասին այսօր միայն լսեցի և նույն րոպեին մտքովս անցավ, որ տուն գնանք թե չէ՝ նա ինձ կխնդրի մուրհակը ստորագրել։ Իմ ստորագրածն ուրիշ է։

– Բայց երանի թե այդ ուիշը մի անվտանգ մուրհակ լինի և գլխիդ փորձանք չբերի,– ասացի ես։

– Չեմ կարծում,– պատասխանեց Տրեդլսը։– Չեմ կարծում, որովհետև նա դեռ անցյալ օր ինձ ասել էր, թե վճարումն արդեն ապահովված է։ Մր. Միկաբրն ինքն անձամբ ինձ ասաց, թե արդեն ապահովված է։

Մեր բանակցության հենց այդ վայրկյանին ես մր. Միկաբրի վերև նայելը նկատելով, հազիվ ժամանակ գտա ընկերոջս նորից զգուշացնելու։ Տրեդլսը շնորհակալություն հայտնեց ու ներքև իջավ։ Բայց երբ նա մրս. Միկաբրի ձեռքից գլխանոցն առավ ու նրան իր թևն առաջարկելու շտապեց, ես մի ակամա երկյուղ զգացի, թե նա ուղղակի ոտքով-գլխով բորսայի մարդկանց ճիրաններն ընկնելու է գնում։

Մտա սենյակս ու կրակի առաջ նստելով սկսեցի կես-զվարթ, կես-լուրջ տրամադրությամբ, մր. Միկաբրի բնավորության ու մեր հին կապերի մասին մտածել։ Հանկարծ սանդուղքի վրա արագ ոտնաձայներ լսվեցին։ Մի պահ կարծեցի, թե Տրեդլսն է գալիս մրս. Միկաբրի որևէ մոռացած իրը վերցնելու, սակայն երբ քայլերը մոտեցան, սիրտս թնդաց, արյունը երեսիս խփեց. եկվորը Ստիրֆորթն էր։

Ես երբեք չէի մոռացել Ագնեսին, և ոչ մի ժամանակ, եթե կարելի է այսպես ասել, նա իմ մտքերի սրբարանից չէր հեռացել։ Բայց երբ Ստիրֆորթը ներս մտավ ու բազկատարած առջևս կանգնեց, նրա վրա ընկած ստվերը իսկույն տեղի տվեց լույսին, և ես շփոթված, ամոթահար մնացի, որ գեթ մի վայրկյան կասկածել էի իմ սիրելի ընկերոջ վրա։ Ագնեսն էլ ոչ պակաս սիրելի էր ինձ. նա դարձյալ կյանքիս բարի հրեշտակն էր. կշտամբանքս ոչ թե նրան էր վերաբերում, այլ միայն ինձ, որ ընկերոջս առջև անարդար էի գտնվել։ Եվ պատրաստ էի հանցանքս քավել, եթե միայն գիտենայի՝ ինչպե՞ս քավել։

– Ինչո՞ւ ես լուռ, ա՛յ Դեյզի,– ասաց Ստիրֆորթը, ուրախ-ուրախ աջս սեղմելով։– Կարծեմ էլի մի լավ քեֆ ես վայելել, ա՛յ փափկասեր։ Ինձ թվում է թե Համայնքի պարոններդ շատ ուրախ կյանք եք վարում Լոնդոնում, իսկ մենք Օքսվորդի ուսանողներս հասարակ ճգնավորներ ենք ձեր առջև։

Նա կայտառ աչքով սենյակս զննեց ու նստելով բազմոցի վրա, ուր փոքր-ինչ առաջ մրս. Միկաբրն էր բազմած, վառարանի կրակը խառնեց։

– Այնքան զարմացած եմ, Ստիրֆորթ,– ասացի ես, սրտանց նրան բարի գալուստ մաղթելով,– որ հազիվ եմ քեզ ողջունելու համար շունչ գտնում։

– Դե լավ։ «Իմ պատկերը օգուտ է բերում հիվանդ աչքերին» սովոր են ասել շոտլանդացիք, սիրելի Դեյզի, ահա ես էլ վարդագույն դեմքիդ նայելով հրճվում եմ։ Ինչպե՞ս ես, իմ բաքոսապաշտ։

– Շատ լավ եմ, բայց Բաքոսին հարկ չեմ վճարել այս երեկո, թեև երեք հյուր ունեի։

– Երեքին էլ փողոցում տեսա. միաբերան գովում էին քեզ,– ասաց Ստիրֆորթը։– Սակայն ո՞վ է այն նեղ տաբատով բարեկամդ։

Մի քանի բառով նկարագրեցի մր. Միկաբրի ով լինելը։ Ստիրֆորթը սրտանց քրքրջաց ջենտլմենի նկարագիրը լսելիս ու ասաց, թե արժի ծանոթանալ այդ մարդու հետ, և անպատճառ կծանոթանա։

– Հապա իմացիր՝ ո՞վ է մյուս բարեկամս,– հարցրի ես իմ հերթին։

– Ինչ գիտեմ,– ասաց Ստիրֆորթը։– Համենայն դեպս փոքր-ինչ թթված էր երևում։

– Տրեդլսն էր,– գոչեցի ես հաղթական ձայնով։

– Այդ ո՞վ է,– հարցրեց Ստիրֆորթը իր անհոգ եղանակով։

– Մի՞թե չես հիշում Տրեդլսին։ Սալեմ Հոուսի Տրեդլսին։

– Ա, ա՞յն տղան,– ասաց Ստիրֆորթն և ունելիով խփեց ածխի կտորին։– Այժմ էլ առաջվա պես փափկասի՞րտ է։ Որտեղի՞ց նրան լույս աշխարհ հանեցիր։

Ես գովեցի Տրեդլսին, որովհետև Ստիրֆորթը կարծես նրան բանի տեղ չէր դնում։ Սակայն գովասանքս չազդեց Ստիրֆորթի վրա։ Նա ժպտալով գլուխը շարժեց և այս խոսակցությունը կարճ կապելու համար ասաց, թե որքան էլ այդ հին ընկերը խենթուլիկ լինի, ավելորդ չէր համարի տեսնել նրան. ի վերջո հարցրեց, թե չե՞մ կարող արդյոք որևէ ուտելու բան տալ իրեն։ Այս բոլորը շտապ-շտապ ասելիս, նա շարունակում էր ածուխը ջարդել։ Նա ակներև գրգռված էր. այդպես էլ մնաց, մինչև ես պահարանից հանում էի աղավնու կարկանդակի մնացորդը և ուրիշ ուտեստներ։

– Այդ ի՞նչ ես անում, ա՛յ Դեյզի։ Այդ հո իսկական արքայական ընթրիք է,– արագ ասաց Ստիրֆորթը, կարծես թե սթափվելով, և սեղանի մոտ նստեց։– Պատրաստ եմ ախորժակով ուտել, որովհետև նոր եմ գալիս Յարմաութից։

– Իրա՞վ, իսկ ես կարծում էի՝ Օքսվորդից։

– Ոչ,– ասաց Ստիրֆորթը։– Ես զբաղված էի նավավարությամբ, որ Օքսվորդի դասերից լավ է։

– Լիտտիմերն այսօր էլ այստեղ էր և քեզ էր հարցնում, նրա խոսքերից հետևեցի, թե դու Օքսվորդից պիտի գայիր, թեև, որքան հիշում եմ, նա ոչ մի որոշ բան չասաց։

– Եթե Լիտտիմերն ինձ գտնելու համար այստեղ էր եկել, ուրեմն նա իր կարծածից ավելի հիմար է,– ասաց Ստիրֆորթը, բաժակն ուրախ լցնելով ու կենացս խմելով։– Սակայան, Դեյզի, որ՞ սատանան նրա մտքերը կհասկանա։

– Իրավ որ,– ասացի ես, աթոռս սեղանին մոտեցնելով։– Ուրեմն, Ստիրֆորթ, Յարմաութի՞ց ես գալիս, հա՞,– հարցրի ես,– անհամբեր փափագելով նոր բան լսել այնտեղից։– Երկա՞ր մնացիր Յարմաությում։

– Ոչ,– պատասխանեց նա։– Միայն մի շաբաթով էի փախուստ տվել, ոչ ավելի։

– Ինչպե՞ս են մեր բարեկամները։ Փոքրիկ Էմլին դեռ չի՞ պսակվել։

– Դեռ ոչ, բայց այդ բանը կարծեմ մի քանի շաբաթից... կամ ամիսներից հետո կլինի, հաստատ չգիտեմ։ Ես սակավ էի տեսնում նրանց։ Ի դեպ, մի նամակ եմ բերել քեզ համար։

Այս ասելուն պես նա վայր դրեց դանակն ու պատառաքաղը, որ եռանդով բանեցնում էր, և սկսեց գրպանը խուզարկել։

– Ումի՞ց,– հարցրի ես։

– Իհարկե պառավ դայակիցդ,– ասաց նա, ծոցի գրպանից զանազան թղթեր հանելով։– «Ջեյմս Ստիրֆորթ, Էսքուայր, պարտք է «Զվարթարար հյուրանոցին»... չէ, սա չէ։ Համբերություն, իսկույն կգտնեմ։ Այն ծերուկը... ինչպե՞ս էր նրա անունը... արդեն ծանր հիվանդ է, և կարծեմ այդ մասին են գրում քեզ։

– Ուզում ես ասել Բարկի՞սը։

– Այո,– ասաց Ստիրֆորթը, շարունակելով գրպանները քրքրել ու թղթերն աչքի անցկացնել։– Կարծեմ խեղճ Բարկիսի բանն արդեն պրծած է։ Տեսա նրա մոտ մի ինչ-որ դեղագործ կամ վիրաբույժ... որ պատիվ է ունեցել ձերդ վսեմության աշխարհ գալուն նպաստելու... Գիտնական մարդ թվաց ինձ, սակայն նրա կարծիքի էությունն այն է, թե կառապանը շուտով վերջին անգամ ճանապարհ կընկնի... Խնդրեմ նայես վերարկուիս գրպանի մեջ, անշուշտ այնտեղ կլինի։

– Ահա գտա,– ասացի ես։

– Հենց այդ է։

Նամակը Պեգգոտիից էր, սովորականից դժվար ընթեռնելի և շատ կարճ։ Նա ինձ հաղորդում էր, որ ամուսինը անհույս վիճակի մեջ է, և ակնարկում, թե հիվանդը «փոքր-ինչ ավելի ժլատ է դարձել, ուստի և այժմ ավելի դժվար է հանգստացնել նրան, քան թե առաջ։ Դայակս իր անքուն գիշերների, իր ցավերի, վշտերի մասին ոչինչ չէր գրում, այլ գովում էր միայն հիվանդ ամուսնուն։ Նամակի ամեն մի խոսքը սրտառուչ էր, պարզ ու բնական, և նա վերջանում էր այս բառելով. «Խոնարհ հարգանք իմ սիրելի որդյակին», այսինքն՝ ինձ։

Մինչ գրությունը կարդում էի, Ստիրֆորթը շարունակում էր ուտել ու խմել։

– Լավ լուր չէ,– ասաց նա, երբ ընթերցումը վերջացրի,– սակայն ի՞նչ արած։ Արեգակն ամեն երեկո մայր է մտնում, մարդիկ ամեն րոպե մեռնում են, և մեզ պետք չէ վախենալ այդ ընդհանուր վիճակից։ Եթե մեր ոտքը ասպանդակ դնելուց հրաժարվենք միայն նրա համար, որ մահն ամեն րոպե մեկի և կամ մյուսի դուռը բախում է, ամեն բան այս աշխարհում կկորցնենք և ամեն բան փախուստ կտա մեր ձեռքից։ Սակայն առաջ, միշտ առա՛ջ – մերթ սրարշավ, մերթ հանդարտ, բայց միշտ առաջ, տապալելով ամեն տեսակ խութ ու խոչ, և հաղթանակ կտանենք։

– Ո՞ր հաղթանակը,– հարցրի ես։

– Այն հաղթանակը, որին ձգտում ենք,– ասաց Ստիրֆորթը։– Օ՛ն անդր առաջ։

Նա կանգ առավ, բաժակը լցրեց և իր սիրուն գլուխը ետ տանելով վրաս նայեց։ Նրա՝ ծովի օդից փոքր-ինչ կարմրած թարմ դեմքի վրա առաջին անգամ նոր-նոր հետքեր նշմարեցի. պարզ էր, որ նա իրեն հատուկ բուռն եռանդով, անզուսպ կրքով որևէ խիզախ գործի է անձնատուր եղել։ Չէ՞ որ նա սովոր էր անվեհեր վստահությամբ դիմավորել վտանգներին – ալիքների հետ մաքառել, փոթորկի դեմ կռվել... Մինչ ուզում էի զգուշացնել նրան այս բաներից, մեր խոսակցության բուն նյութը միտքս ընկավ, և ասացի.

– Լսիր, Ստիրֆորթ, եթե միայն վեր սլացող ոգիդ հոժարի իջնել ինձ լսելու...

– Վեր սլացող ոգիս զորեղ ոգի է ու միշտ պատրաստ ամեն բան անել քեզ համար,– ասաց նա, նորից նստելով կրակի առջև։

– Ուրեմն գիտե՞ս, Ստիրֆորթ, թե ինչ կասեմ։ Ես կցանկանայի գնալ տեսնել դայակիս։ Գնալովս հարկավ ես նրան որևէ բարիք և կամ օգուտ չեմ անի, բայց նա ինձ այնքան է սիրում, որ այցելությունս անշուշտ նրան կսփոփի։ Եվ ինձ համար դժվար չէ սփոփանք հասցնել այդ

բարեսիրտ պառավին, որ միշտ ինձ նվիրված էր։ Եթե դու իմ տեղը լինեիր, չէի՞ր ուզենա մի օր մնալ նրա մոտ։

Ստիրֆորթը մտախոհ էր. նա փոքր-ինչ մտածեց և ապա պատասխանեց մեղմ ձայնով.

– Գնա։ Վնաս չունի։

– Դու նոր ես գալիս այնտեղից,– ասացի ես,– և զուր կլիներ խնդրել, որ ուղեկցես ինձ։

– Այո, հարկավ,– պատասխանեց նա։– Այս գիշեր ես Հայգեթ եմ գնում։ Վաղուց մորս չեմ տեսել, և խիղճս հանգիստ չէ. չէ՞ որ մի բան արժի այնքան ջերմ սիրելը, ինչքան որ նա է սիրում անառակ որդուն։ Ա՛հ, հիմար բաներ։ Դու կարծեմ վաղը կերթաս,– ասաց նա, ձեռքն ուսիս դնելով։

– Կարծեմ վաղը։

– Ուրեմն սպասիր՝ գոնե մինչև մյուս օրը։ Ես մտադիր էի մի քանի օրով մեր տուն հրավիրել քեզ։ Գալուս նպատակն էլ հենց այդ էր. իսկ դու ուզում ես Յարմաութ փախչել։

– Փախչողը դու ես, Ստիրֆորթ, որ վայրենու նման շաբաթներով կորչում ես՝ ո՞վ գիտե ինչ արկածների հետևից ընկած։

Նա մի վայրկյան լուռ ու մունջ նայեց երեսիս և հետո ասաց, վերստին ձեռքն ուսիս դնելով.

– Այո, մի օր մեզ մոտ կմնաս։ Ո՞վ գիտի, մյուս անգամ երբ կտեսնվենք։ Հասկացա՞ր. վաղը մեզ մոտ, հետո Յարմաութ։ Կամենում եմ, որ դու Ռոզայի և իմ միջև մի պատվար լինես ու մեզ իրարից բաժան պահես։

– Վախենում ես, թե իրար անչափ կսիրե՞ք, եթե ձեր տանը չգտնվեմ։

– Այո, կամ թե անչափ իրար կատենք,– ասաց Ստիրֆորթը ծիծաղելով։– Բոլորը մեկ է։ Բայց դու վաղը մեզ մոտ կգա՞ս։ Անպատճառ։

Խոսք տվի, և Ստիրֆորթը վերարկուն հագավ, մի սիգար վառեց և ուզում էր տուն գնալ։ Այդ նկատելով ես էլ վերարկուս հագա, բայց սիգար չվառեցի (մի անգամ արդեն խրատված էի), և մենք միասին դուրս եկանք։ Ես հասցրի նրան մինչև մեծ ճանապարհը, որ տխուր ու մութն էր այդ ժամին։ Ամբողջ ժամանակ Ստիրֆորթը զվարթ էր, և երբ մենք բաժանվեցինք, նրա առույգ ու թեթև քայլերը, նրա խոսքերը հիշեցրին ինձ, թե «Սրարշավ առաջ, տապալելով ամեն տեսակ խութ ու խոչ, և հաղթանակ կտանենք»։ Այս հիշելիս առաջին անգամ մաղթեցի, որ նրա փափագած հաղթանակը արդեն ազնիվ մարդու արժանավոր բան լինի։

Տուն գալուն պես սկսեցի հանվել, և իմ գրպանից մր. Միկաբրի նամակն ընկավ և լավ արեց որ ընկավ, որովհետև արդեն մոռացել էի այն։ Կնիքը կոտրեցի ու կարդացի։ Նամակը մեր ճաշից իսկ ու իսկ ժամ ու կես առաջ էր գրվել։ Չեմ մտաբերում՝ արդյոք ասե՞լ եմ, որ մր. Միկաբրը մի անհույս տագնապի մեջ ընկնելուն պես սովոր էր իրավաբանական լեզու բանեցնել, երևի իր գործերն ավելի լավ շտկելու համար։ Ահա գրությունը.

«Սըր... վասն զի չեմ հանդգնում ասել՝ սիրելիդ իմ Կոպպերֆիլդ։ Անհրաժեշտ է ձեզ այդ հաշիվն առնել, թե ստորագրյալ անձը խորտակված ու ջարդված է։ Թերևս այսօր նրա մեջ մի փոքր ջանք նկատեք՝ այդ ողբալի եղելության տարաժամ հայտնությունը ծածկելու, բայց և այնպես հորիզոնի վրա հուսո նշույլ չի մնացել, և ստորադրյալը խորտակված է։

Այս զեկուցումը գրված է ի ներկայության մի անհատի (և ոչ թե հասարակության), մի վաշխառուի մոտ ծառայող գրեթե հարբած անհատի։ Այս անհատն եկել է, օրինական ճանապարհով, բնակարանիս բոլոր կահկարասիքը գրավելու և տանելու ի հատուցումն տան վարձագնի, որը տակավին չի վճարված։ Նրա ցանկի մեջ մտցված են ոչ միայն ստորադրյալի, այսինքն՝ տարով վարձողի ամեն շարժուն իրերն ու գույքը, հապա և սրա մոտ բնակվող ու Տեմպլի ատյանում ծառայող մեծարգո մր. Թոմաս պաշտոնյայի բոլոր կարասիքն ու կայքը։

Եթե ստորագրյալի շրթունքին մատուցած դառնության բաժակը լիապարար անելու համար (ինչպես ասում է մի անմահ բանաստեղծ) դեռ մի կաթիլ պակաս էր,– այդ կաթիլն էլ ահա պատրաստ է այն չարագետ փաստի մեջ, որ վերոհիշյալ մր. Թոմաս Տրեդլսի ձեռքով ստորագրվելու համար երաշխավորված 23 ստեռլինգ, 4 շիլինգ և 9 ու կես պենս գումարի մուրհակը վճարելու ժամն արդեն հատել է, բայց վճարումը դեռ ապահովված չի: Բաժակի դառնությունը սաստկանալու է ստորագրյալի համար նաև մի նոր անպարտ զոհի գալստյամբ, որի անդեպ ժամանակը տեղի կունենա, ըստ օրինաց բնության, կլոր թվով վեց լուսնական ամիսներից հետո, եթե այսօրվանից հաշվելու լինենք:

Այս բոլորը հայտնելուց հետո ավելորդ է, հարկավ, ասել, թե, այսուհետև, հավիտյան մոխիր ու փոշի կցանվի

թշվառ

և

բազմաչարչար

գլխի

վրա

Ուիլկինս Միկաբրի»:

Խեղճ Տրեդլս: Արդեն մոտիկ ճանաչելով մր. Միկաբրին, ես լավ գիտեի, որ նա այսպես կամ այնպես կրժշկվի իրեն հասած հարվածից: Բայց դու ի՞նչ կանես խեղճ Տրեդլս: Ամբողջ գիշեր մտածում էի նրա մասին, ինչպես և Դևոնշիրցի քահանայի դստեր մասին, որը տասը քույրերից մեկն էր: Ափսոս քեզ, բարի աղջիկ, որ Տրեդլսի ասելով (օ՜հ, չար գուշակություն), պատրաստ էր վաթսուն տարի սպասել նրան, մինչև անգամ ավելի, եթե հարկ լիներ:

Թ. ԳԼՈՒԽ
Դարձյալ այցելում եմ Ստիրֆորթին՝ իր տանը

Առավոտյան մր. Սպընլոյին հայտնեցի, թե ինձ պետք է մի կարճ ժամանակով Լոնդոնից հեռանալ, և խնդիրս իսկույն կատարվեց, որովհետև ես անոռճիկ պաշտոնյա էի, ուրեմն դաժան մր. Ջորկինսից վախենալն ավելորդ էր: Այս առթիվ համարձակություն առա մր. Սպընլոյին հարցնելու և շունչս բռնած ակնկոր հարցրի, թե միս Դորայի առողջությունն ինչպե՞ս է: Նա շնորհակալ եղավ և ասաց, թե շատ առողջ է, առանց բնավ հուզվելու և այնպիսի սառն եղանակով, որ ասես թե մի հասարակ մահկանացուի մասին խոսելիս լիներ:

Մենք՝ ընդունված դպիրներս, իբրև պրոկտրության թեկնածու ազնվական դասակարգ, մի արտոնյալ դիրք ունեինք Դոկտորների Համայնքում, և ես ազատ էի համարյա թե իմ ուզածի պես գործ դնելու ժամանակս: Այս անգամ Հայգեթ շտապելու հարկ չկար. ցերեկվա ժամը մեկին կհասնեի թե երկուսին, միևնույն էր և որովհետև այդ օրը ատյանում մի հետաքրքիր գործ պիտի քննվեր, ուր Տիպկինս անունով մեկը բողոք էր տվել Բիլոկ անունով մի մարդու դեմ, պահանջելով որ սա «մի հոգեշահ պատիժ» ստանա. ես այնտեղ մի երկու դուրեկան ժամ անցկացրի Սպընլոյի հետ: Գործը ծագել էր երկու ժամկոչների կռվից. մեկը գանգատվել էր, թե մյուսը ջրհանի դեմ է հրել նրան, և որովհետև ջրհանի կոթը մի դպրոցի շինության մեջ էր ամրացված, իսկ դպրոցը մի եկեղեցու գավթի մեջ էր գտնվում, այս պատճառով երկուսի վեճից մի եկեղեցական դատ էր ծագել: Զվարճալի բան էր այդ դատը, և ես դիլիժանս նստած Հայգեթ գնալիս, շարունակ Դոկտորների Համայնքի մասին էի մտածում և մր. Սպընլոյի խոսքերը մտաբերում, թե «Դիպեք միայն Համայնքին, և Անգլիան կորա՜ծ է»:

Մրս. Ստիրֆորթը գոհ մնաց ինձ տեսնելով, գոհ էր նաև Ռոզա Դարտլը։ Ես մի հաճելի զարմանք զգացի իմանալով, որ Լիտտիմերն այնտեղ չի. նրա փոխարեն մեզ ծառայում էր կապույտ ժապավեններով գլխանոց հագած մի համեստ սպասուհի, որի աչքին երբեմն նայելը շատ ավելի դուրեկան էր, քան թե ակնածելի Լիտտիմերի շփոթեցնող հայացքին հանդիպելը։ Սակայն այդ տունը ոտք դնելուցս դեռ կես ժամ չանցած՝ ամենից առաջ նկատեցի այն հանգամանքը, որ միս Դարտլը համառությամբ դիտում է ինձ և մեկ իմ դեմքն է ուշի-ուշով համեմատում Ստիրֆորթի երեսի հետ, մեկ նրանը՝ իմինի հետ, կարծես սպասելով, թե մեր միջև մի որևէ բան կծագի։ Հենց որ ես էլ ակամա նրա կողմն էի նայում, նրա լրտեսող նիհար դեմքն ու բոցավառ սև աչքերն էի տեսնում, աչքերը, որոնք անքթիթ նայում էին ինձ և կամ նույն վայրկյանին Ստիրֆորթի վրա սևեռվում, և կամ թե երկուսիս էլ միաժամանակ մեկ ակնարկով ըմբռնում։ Եվ նա ոչ թե չէր շփոթվում, երբ տեսնում էր, որ իրոք զննող սուր հայացքը ինձնից թաքուն չի մնացել, այլ ավելի խորաթափանց հայացք էր նետում իմ վրա։ Որչափ էլ սիրտս մաքուր լիներ, որչափ էլ ազատ՝ միս Դարտլին որևէ կասկածի տեղիք տալու միտումից, բայց դարձյալ քաշվում էի նրա տարօրինակ աչքերից։

Այդ օրը նա ամբողջ տան մեջ մի անտեսանելի էակի պես ներկա էր։ Թե՛ Ստիրֆորթի հետ իր սենյակում միասին նստած խոսակցեցինք, անպատճառ կողքի սենյակից միս Դարտլի շրշյունը կլսվեր. թե՛ մենք զբոսնելու համար տան հետևի փոքրիկ մարգագետինն իջնեինք, իսկույն միս Դարտլը սկսում էր կրակի պես մեկ պատուհանից դեպի մյուսը ոստոտել, լավ դիտել մեզ։ Երբ մենք ճաշից հետո չորսս միասին ման գալու ելանք, նա իմ թևը իր վտիտ ձեռքով զսպանակի պես ամուր բռնեց, ինձ հետ քաշեց և սպասելով, որ Ստիրֆորթն ու իր մայրը մեզնից բավական առաջ անցնեին, սկսեց խոսել։

– Վաղուց այստեղ չեք եղել,– ասաց նա։– Մի՞թե ձեր պաշտոնն այնքան գրավիչ ու հրապուրիչ է, որ մարդուս բոլոր ուշքն ու միտքը հափշտակի։ Հարցնում եմ, որովհետև սիրում եմ իմանալ, ինչ որ չգիտեմ։ Մի՞թե իրոք այդպես է։

Պատասխանեցի, թե պաշտոնս իրոք սիրում եմ, բայց այնքան էլ նրան նվիրված չեմ։

– Իրա՞վ։ Ուրախ եմ լսել այդ, որովհետև, գիտեք, շատ եմ սիրում, որ ինձ ուղղեն, երբ սխալվում եմ,– ասաց Ռոզան։– Ձեր պաշտոնը գուցե փոքր-ինչ ձանձրալի՞ է։

– Այո, գուցե առաջ այդպես էր,– ասացի ես։

– Ա՛, ուրեմն ա՞յդ է պատճառը, որ կարոտ եք հանգստության, փոփոխության... զգացումների և այլն,– ասաց նա։– Եվ շատ բնական է։ Սակայն արդյոք այդ բոլորը նրա համար փոքր-ինչ... հը... ուզում եմ ասել՝ նրա համար, և ոչ թե ձեզ։

Միս Դարտլի թռուցիկ հայացքը դեպի այն կողմը, ուր Ստիրֆորթը իր մոր հետ թևանցուկ զբոսնում էր, պարզեց ինձ, թե ո՞ւմն է ակնարկում. այնուամենայնիվ, ես ոչ մի բան չհասկացա։ Նա վարանած նկատեց.

– Չեմ պնդում... բնավ ոչ, այլ միայն ուզում եմ իմանալ, թե այդ բոլորը չափազանց չէ՞ նրա համար։ Արդյո՞ք այդ չէ պատճառը, որ նա վերջերս փոքր-ինչ անհոգ է իրեն կուրորեն սիրող մորն այցելելու... Հը՞։

Եվ նա դարձյալ արագ այն կողմը նայեց և նույն վայրկյանին մի այնպիսի ակնարկ նետեց, որ կարծես ուզում էր սրտիս խորքը թափանցել։

– Միս Դարտլ,– ասացի ես,– խնդրեմ չկասկածեք...

– Ամենևին,– վրա բերեց նա։– Աղաչում եմ, չենթադրեք, թե ես որևէ կասկած ունեմ։ Ես սովոր չեմ կասկածել։ Այլ հարցնում եմ միայն, ուրիշ ոչինչ։ Ես ոչ մի հաստատ կարծիք չունեմ, և միայն փափագում եմ, ձեր ասածի վրա հիմնվելով, մի որոշ գաղափար կազմել։ Ուրեմն այդպես չէ՞։ Շատ ուրախ եմ։

– Իհարկե չէ,– պատասխանեցի ես փոքր-ինչ շփոթված։– Ես մեղավոր չեմ և չգիտեի, որ Ստիրֆորթը վերջերս ավելի հաճախ է բացակա լինում մոր տանից, քան թե առաջ, և այս բանը ես նոր եմ լսում ձեզնից։ Ես ինքս վաղուց չէի տեսել նրան, և միայն երեկ երեկո էր որ տեսա։

– Մի՞թե։

– Այո, միս Դարտլ։

Եվ մինչ միս Դարտլը շեշտակի նայում էր աչքերիս, հանկարծ նրա երեսի գույնը թռավ և հին վերքի սպին վերևի շուրթից մինչև կզակը կարմրեց։ Նրա դեմքն իրավ սոսկալի էր, երբ նա աչքերը վրաս հառելով հարցրեց.

– Ուրեմն որտե՞ղ էր, ի՞նչ էր անում։

Ես այնքան շփոթվեցի, որ ակամա միևնույն խոսքերն ինքս ինձ կրկնեցի։

– Ի՞նչ էր անում,– ասաց նա ամենաբուռն եռանդով, որ կրակի պես լափում էր նրան։– Ի՞նչ բանի մեջ է օգնում նրան այս մարդը, որ մինչև անգամ չի կարող աննենգ աչքով ուղիղ նայել երեսիս։ Եթե դուք հավատարիմ ու ազնիվ եք, ես չեմ խնդրի, որ ձեր ընկերոջը դավաճանեք. այլ միայն կցանկանամ իմանալ, թե նրան դրդողն ի՞նչ բան է արդյոք. զայրո՞ւյթ, ատելությո՞ւն, գոռոզությո՞ւն, կամ թե սե՞ր, թե մի ուրի՞շ կիրք։

– Միս Դարտլ,– ասացի ես,– ինչպե՞ս հավատացնեմ ձեզ, թե իմ աչքում Ստիրֆորթը միևնույն մարդն է, ինչ որ էր, երբ ես առաջին անգամ այստեղ եկա։ Ես ոչ մի փոփոխություն չեմ նկատում նրա մեջ։ Ոչ մի կասկած չունեմ նրանից։ Լիովին հավատացած եմ, որ կասկածելու բան էլ չկա։ Մինչև անգամ չեմ էլ հասկանում, թե ի՞նչ եք ուզում ակնարկել։

Մինչ նա անքթիթ նայում էր ինձ, ես մի ցնցում կամ մի կծկում նշմարեցի նրա սոսկալի սպիի վրա, որ տանջանքի նշան էր։ Նրա շուրթերի անկյունը բարձրացավ, ասես թե մի արհամարհանք կամ կարեկցություն ցույց տալով դեպի իր ասած առարկան։ Նա սպին իսկույն ձեռքով ծածկեց, այն վտիտ ու քնքուշ ձեռքով, որ ես միշտ համեմատել էի մի թափանցիկ ապակու հետ, երբ նա դեմքը կրակից պաշտպանելու համար իր առջևն էր բռնում դրանք, և ապա ասաց արագ, կրքոտ և ամեհի ձայնով.

– Խոսք եմ տալիս գաղտնիք պահել այդ։

Էլ ոչինչ։

Մրս. Ստիրֆորթը մի առանձին երջանկություն էր զգում իր որդու ներկայությունից. Ստիրֆորթն էլ այս անգամ ավելի ուշադրությամբ ու հարգանքով էր վերաբերվում դեպի մայրը։ Ինձ համար շատ հետաքրքիր էր միասին տեսնել երկուսին՝ ոչ միայն նրանց փոխադարձ գորովանքի, այլև զարմանալի նմանության պատճառով. տարբերությունը միայն այն էր, որ որդու վստահ հպարտությունը կամ կրքի սաստկությունը մի շնորհալի ծանրախոհություն էր տեղի տվել տիկնեջ մեջ՝ հասակի ու սեռի ազդեցությունից։ Նայելով մորն ու որդուն շատ անգամ երկուսին էլ երանի էի տալիս, որ նրանց միջև ոչ մի գժտություն չի պատահել, որովհետև երկու այդպիսի բնավորություն, կամ լավ է ասել՝ միևնույն բնության այդ երկու եռանդներն իրար հետ հաշտեցնելը ավելի դժվար կլիներ, քան թե աշխարհիս ամենահակառակ ու հակադիր ծայրերը։ Սակայն պիտի խոստովանեմ, որ այս գաղափարն իմ մտքի ծնունդը չէր, այլ միայն Ռոզա Դարտլի խոսակցության հետևանքը։

Ճաշի ժամանակ նա սկսեց այսպես խոսել.

– Օ՜հ, ամբողջ օրն աշխատել եմ իմանալ, և ինչպես կուզենայի, որ ձեզնից մեկն ինձ ասեր...

– Ի՞նչ ասեր, հարցրեց մրս. Ստիրֆորթը։– Խնդրեմ, Ռոզա, այդքան ծածկամիտ մի լինի։

– Ծածկամի՞տ,– գոչեց Ռոզան։– Մի՞թե կարծում եք, որ ես իրավ ծածկամիտ եմ։

– Մի՞թե ամեն օր չեմ խնդրում քեզ, որ պարզ խոսես, բնական լինես,– ասաց մրս. Ստիրֆորթը։

– Ուրեմն իմ խոսելու եղանակը բնական չէ, հա՞,– պատասխանեց Ռոզան։– Ի՞նչ արած։ Խնդրեմ ներեցեք։ Ես հարցնում եմ, որովհետև ուզում եմ բան իմանալ։ Երբեք մարդն չի կարող ինքն իրեն լավ ճանաչել։

– Այդ ծածկամտությունը քո մեջ երկրորդ բնավորություն է դարձել,– ասաց մրս. Ստիրֆորթը առանց որևէ դժգոհության,– սակայն հիշում եմ... կարծեմ դու էլ, Ռոզա, կհիշես, որ մի ժամանակ այդպես չէիր։ Մի ժամանակ շատ ավելի սրտաբաց էիր, և ոչ այդքան զգուշամիտ։

– Ճշմարիտ է,– նկատեց միս Ռոզան,– և շատ ցավալի է, որ վատ սովորությունները գնալով արմատանում են մարդուս մեջ։ Ուրեմն առաջ ես շատ ավելի սրտաբա՞ց էի, և ո՞չ այնքան զգուշամիտ։ Զարմանում եմ, թե ինչո՞ւ եմ աննկատելի կերպով այդպես փոխվել։ Այ տարօրինակ բան։ Կաշխատեմ վերստին նույնը դառնալ, ինչ որ էի մի ժամանակ։

– Սրտանց ուզում եմ, որ աշխատես,– ասաց մրս. Ստիրֆորթը ժպտալով։

– Եվ հավատացեք՝ կաշխատեմ,– պատասխանեց միս Ռոզան։– Ես կսկսեմ անկեղծության օրինակ վերցնել... ումի՞ց արդյոք... հենց Ջեյմսից։

Ռոզա Դարտլի ամեն մի խոսքում մի տեսակ հեգնանք կար, թեև նա աշխատում էր միշտ միամիտ ձևանալ. ուստի և մրս. Ստիրֆորթը սաստկությամբ վրա բերեց.

– Եվ շատ լավ կանես։ Նրանից ավելի ընտիր օրինակ չես էլ գտնի։

– Լիովին վստահ եմ,– ասաց միս Դարտլը մի անսովոր եռանդով։– Եթե ես ունեմ մի որևէ վստահություն, դուք էլ գիտեք, որ վստահ եմ միայն այդ բանում։

Մրս. Ստիրֆորթը կարծես թե զղջաց, որ փոքր-ինչ գրգռվել էր, որովհետև այժմ մեղմիկ ասաց .

– Շատ լավ, սիրելի Ռոզա։ Բայց և այնպես չասացիր մեզ, թե ի՞նչ էիր ուզում իմանալ։

– Թե ինչ էի ուզում իմանալ,– կրկնեց միս Դարտլը մի գրգռիչ սառնությամբ։– Օ՜հ, ես կցանկանայի իմանալ, թե արդյոք ճշմարի՞տ է, որ եթե բարոյական կազմությամբ մեկը մյուսին նման անձինք... կարելի՞ է, այսպես ասել։

– Այդպես թե այնպես՝ բոլորը մեկ է,– նկատեց Ստիրֆորթը։

– Շնորհակալ եմ... Եթե բարոյական կազմությամբ մեկը մյուսին նման անձինք իրար հետ մի լուրջ պատճառով գժտվեն, արդյոք ճշմարի՞տ է, որ նրանք ավելի դառն, ավելի խոր թշնամությամբ իրարից կբաժանվեն, քան թե մեկը մյուսից տարբեր անձինք։

– Անտարակույս,– ասաց Ստիրֆորթը։

– Իրա՞վ,– գոչեց միս Դարտլը։– Ասացեք խնդրեմ։ Ուրեմն, եթե ենթադրենք, օրինակի համար... չէ՞որ կարելի է ամեն տեսակ բան ենթադրել... որ դուք ու ձեր մայրը ծանր կռիվ ունենաք...

– Սիրելի Ռոզա,– մեջ մտավ մրս. Ստիրֆորթը, ի սրտե ծիծաղելով,– լավ է մի ուրիշ օրինակ բերես։ Ջեյմսն ու ես, փառք աստծու, լա՜վ ենք ճանաչում մեր փոխադարձ պարտականությունները։

– Օ՜,– ասաց միս Դարտլը, գլուխը լրջորեն շարժելով։– Հարկավ։ Այդ արդեն բավական է, որ մի կռիվ չպատահի։ Այժմ տեսնում եմ՝ որքան հիմար եմ, որ մի այդպիսի բան ենթադրեցի։ Փոխադարձ պարտականությունները լավ ճանաչող անձինք հարկավ երբեք չեն գժտվի։ Շատ ուրախ ու շնորհակալ եմ, որ այս բանն իմացա։

Չեմ կարող չհիշատակել միս Դարտլին վերաբերող և մի ուրիշ փոքրիկ դեպք։ Շատ անգամ եմ առիթ ունեցել մտաբերելու այդ վերջերս, երբ անդարձ անցյալի հանգամանքներն արդեն լիովին պարզված էին։ Օրվա մնացած մասը, և հատկապես երեկոյան ժամերը, Ստիրֆորթը գործ դրեց իրեն հատուկ ճարտարությամբ զվարճացնելու և դուր գալու այդ տարօրինակ օրիորդին։ Նրա հաջողությունը չզարմացրեց ինձ. չզարմացա և միս Դարտլի համառության վրա, որով դիմադրում էր նրա հրապուրիչ ազդեցությանը, որովհետև գիտեի, թե որքան ըմբոստ ու մաղձոտ է այդ աղջիկը։ Տեսա, թե ինչպե՞ս են միս Դարտլի ձևերն ու շարժումները փոփոխվում, տեսա, թե ի՛նչ հիացումով է Ստիրֆորթի երեսին նայում, նկատեցի, թե որքա՛ն է ճգնում, թեև քիչ-քիչ թուլացող, բայց միշտ զայրացկոտ եռանդով՝ դիմադրել նրա անվանելի թովչությանը, որի առջև կարծես իրեն անզոր էր զգում. վերջ ի վերջո տեսա, թե ինչպես մեղմացավ նրա դառն հայացքը ու ժպիտ փայլեց նրա դեմքին։ Միս Դարտլը արդեն ընկճված ու հաղթված էր, և այլևս ինձ այն սարսափը չէր ազդում, որ ազդել էր ամբողջ օրը։ Մենք վառարանի առջև նստեցինք և սկսեցինք երեխաների պես անբռնազբոս զրուցել ու ծիծաղել։

Չգիտեմ ի՞նչն էր պատճառը – արդյոք մեր երկար նստե՞լը, թե՞ այն հանգամանքը, որ Ստիրֆորթը չէր ուզում իր հաղթանակը ձեռքից բաց թողնել, միայն թե միս Դարտլի մեկնելուց հետո, մենք էլ հինգ րոպեից ավելի չմնացինք ճաշասենյակում։

– Էսիր,– ասաց Ստիրֆորթը, կամացուկ մոտենալով դահլիճի դռանը,– Ռոզան քնար էր ածում։ Կարծեմ երեք տարի կլինի, որ մորիցս զատ, ոչ ոք նրա նվագելը չի լսել։

Ստիրֆորթը այս ասաց մի ինքնափոփ ժպիտով, որ սակայն իսկույն անհետացավ։ Դահլիճ մտանք. միս Դարտլը մենակ էր։

– Մի վերկենաք, սիրելի Ռոզա,– ասաց Ստիրֆորթը օրիորդին, որ արդեն վեր էր կացել։– Գոնե մի անգամ բարի եղեք և մի իռլանդական երգ երգեցեք։

– Իբր թե շա՞տ եք սիրում իռլանդական երգ լսել,– պատասխանեց միս Դարտլը։

– Իհարկե, շատ և ավելի քան մի ուրիշ երգ։ Ահա Դեվին էլ երաժշտության սիրահար է։ Երգեցեք մեզ մի իռլանդական երգ, Ռոզա. ես էլ կնստեմ ու կլսեմ, ինչպես որ անում էի մի ժամանակ։

Ստիրֆորթը չկպավ ո՛չ միս Դարտլին, ո՛չ էլ աթոռին, որից նա նոր էր վեր կացել, այլ գնաց ու նստեց քնարի մոտ։ Օրիորդը մի քանի վայրկյան կանգնած մնաց քնարի կողքին՝ աջ ձեռքի մատները լարերի վրա ետ ու առաջ տանելով, սակայն առանց շարժելու դրանք։ Վերջապես նստեց, մի արագ ցնցումով քնարն իր մոտ քաշեց, լարերին խփեց ու սկսեց երգել։

Արդյոք նվագելու եղանակի՞ց էր, թե՞ ձայնից, չգիտեմ, բայց ինձ թվում էր, թե դրա նման մի գերբնական երգ ես օրումս չեմ լսել։ Մի սոսկալի բան կար նրա անկեղծ արտահայտության մեջ։ Կարծես երգը ո՛չ գրված էր, ո՛չ էլ բնավ ձայնագրված, այլ անմիջապես դուրս էր թռչում երգչուհու սիրտն ալեկոծող կրքերից, որոնք նրա ձայնի մեջ արձագանք գտնելուց հետո՝ ձայնի լռելուն պես իրենք էլ իսկույն թաքնվում էին։ Ես անբարբառ կանգնած էի, երբ միս Դարտլը նորից քնարին հենվեց և առանց լարերը հնչեցնելու՝ միայն շոշափում էր այն իր աջ ձեռքի մատներով։

Ինձ հիացումից սթափեցրեց Ստիրֆորթը, որը իր տեղից վեր թռավ և միս Դարտլին մոտենալով, նրա մեջքը գրկեց ու ժպտալով ասաց.

– Է՛հ, Ռոզա, այսուհետև մենք շատ կսիրենք մեկմեկու։

Նույն վայրկյանին օրիորդը նրան խփեց և վայրենի կատվի կատաղությամբ ետ հրելով, դուրս փախավ սենյակից։

– Ի՞նչ է պատահել Ռոզային,– հարցրեց ներս մտնող մրս. Ստիրֆորթը։

– Մի րոպե առաջ նա հրեշտակի պես բարի էր, մայրիկ,– ասաց Ստիրֆորթը,– բայց հետո հանկարծ հակառակ ծայրահեղության մեջ ընկավ։

– Ջեյմս, պետք էր նրան գրգռելուց զգուշանալ։ Գիտես որ նրա բնավորությունը դառնացած է, և համենայն դեպս, պետք չէ նրան զայրացնել։

Ռոզան ետ չեկավ, և նրա մասին այլևս խոսք չեղավ մինչ այն րոպեն, երբ ես Ստիրֆորթի սենյակը մտա՝ բարի գիշեր ասելու։ Այն ժամանակ Ստիրֆորթը սկսեց օրիորդի վրա ծիծաղել և հարցնել ինձ, թե երբևէ տեսա՞ծ եմ մի այդպիսի անըմբռնելի, ամեհի արարած։

Որքան կարող էի զարմանքս հայտնել, հայտնեցի, և հարցրի, թե ինչո՞ւ Ռոզան հանկարծ այդպես չարացավ։

– Աստված գիտի, թե ինչու,– ասաց Ստիրֆորթը։– Գուցե մի որևէ պատճառ ուներ, գուցե և չուներ։ Մի անգամ քեզ ասել եմ, թե նա սիրում է ամեն բան, և նույնիսկ իր անձը հեսանով սրել։ Եվ այսպես սրվելով նա մի սրածայր դանակ է դարձել, որի հետ պետք է զգուշությամբ վարվել։ Բարի գիշեր։

– Բարի գիշեր, սիրելի Ստիրֆորթ,– ասացի ես։– Առավոտյան զարթնելուցդ առաջ կմեկնեմ, բարի գիշեր։

Նա չէր ուզում թողնել ինձ և կանգնել էր իմ դիմաց՝ ձեռքերն ուսիս դրած, ինչպես որ արել էր իմ սենյակում։

– Դեյզի,– ասաց նա ժպտալով,– թեև իսկական անունդ Դեյզի չէ, բայց սիրում եմ քեզ այդպես կոչել... և կցանկանայի, այո, շատ և շատ կցանկանայի, որ դու էլ կարողանայիր ինձ Դեյզի անվանել։

– Եթե ուզենամ կանվանեմ, ո՞վ կարող է ինձ արգելել։

– Դեյզի, եթե որևէ պատճառով մենք իրարից բաժանվենք, հիշիր ինձ այնպես, ինչպես որ էի կյանքիս երջանիկ օրերում։ Խոսք տուր ինձ՝ այդպես անել, սիրելի ընկեր։ Ներող մտքով հիշիր ինձ, եթե հանգամանքները մեզ իրարից բաժանեն։

– Ներող մտքո՞վ,– ասացի ես։ Ես միշտ սիրել ու հարգել եմ քեզ, Ստիրֆորթ, և ոչ մի արատ չեմ տեսել վրադ, որ ներողամտությանս կարոտ լիներ։

Եվ այնպես զղջացի, որ նրա մասին նույնիսկ թեթև կասկածներ էի ունեցել, որ իսկույն պատրաստ էի մեղա գալ, և մինչ վարանում էի, թե ինչպե՞ս ասեմ, որ այս նյութը շոշափելով Ագնեսի առջև դավաճան չլինեմ, Ստիրֆորթն ասաց.

– Տերը քեզ հետ, Դեյզի, և բարի գիշեր։

Վարանումս փրկեց ինձ. ես նրա աջը սեղմեցի ու հեռացա։

Վերկացա արշալույսին և շորերս շուտ-շուտ հագնելով, ընկերոջս սենյակի դուռը բաց արի, որ ներս նայեմ։ Նա խոր քնով քնած էր՝ գլուխը թևին դեմ տված, ինչպես շատ անգամ տեսել էի նրան մր. Կրիկլի վարժարանում։

Ժամանակը հասավ, և շատ շուտ հասավ, երբ զարմանալով հարցնում էի ինձ, թե ինչպես ոչ մի բան նրա հանգիստը չվրդովեց, մինչ նայում էի նրա երեսին։ Բայց նա անխռով քնած էր... ինչպես քնում էր դպրոցում... և ես նրան այդ դրության մեջ թողի առավոտյան այդ խաղաղ ժամին... Որպեսզի երբեք, օ՜հ, թող աստված ների քեզ, Ստիրֆորթ... այլևս երբեք մտերմությամբ ու սիրով քո ձեռքը չշոշափեմ։ Երբե՛ք, երբե՛ք, երբե՛ք։

Լ. ԳԼՈՒԽ

Մի կորուստ

Երեկոյան դեմ հասա Յարմաութ և պանդոկ իջա։ Գիտեի, որ Պեզգոտիի առանձին սենյակը՝ իմ սենյակը, շուտով հարկավոր կլինի, եթե այն մեծ Այցելուն, որի առջև ամեն շնչավոր պարտավոր է տեղի տալ, արդեն այն տունը չի մտել։ Այսպես, ուրեմն, պանդոկ իջնելով, ընթրեցի ու պատվիրեցի, որ ինձ մի առանձին սենյակ տան։

Ժամը տասին դուրս ելա։ Խանութներից շատերը փակված էին, և քաղաքը անժպիտ էր։ Օմրի ու Ջորեմի կրպակի փեղկերը փակ էին, բայց դուռը դեռ բաց էր։ Տեսնելով, որ մր. Օմրը կրպակի խորքում նստած ծխում է, ներս մտա ու հարցրի, թե նրա առողջությունն ինչպե՞ս է։

– Տե՛ր ողորմյա, այս դո՞ւք եք, սըր,– ասաց մր. Օմրը։– Իսկ դուք ինչպե՞ս եք։ Խնդրեմ նստեցեք։ Արդյոք ծուխը ձեզ չի՞ նեղի։

– Ամենևին։ Դա ինձ դուր է գալիս... երբ ծխողը ուրիշն է։

– Եվ ոչ թե ինքներդ, հա՞,– ասաց մր. Օմրը ծիծաղելով։– Եվ շատ լավ է, որ այդպես է։ Ծխելը երիտասարդին վնաս է։ Խնդրեմ համեցեք, նստեցեք։ Ես ծխում եմ միայն հազիս առաջն առնելու համար։

Մր. Օմրը տեղ տվեց ինձ և մի աթոռ առաջարկեց։ Այնուհետև, նորից նստեց, և ծուխն ագահությամբ ներս քաշեց, ասես թե դրա մեջ մի այնպիսի նյութ գտնելով, որից կախված էր իր կյանքը։

– Ցավում եմ, որ մր. Բարկիսի մասին վատ լուր եմ լսել,– ասացի ես։

Մր. Օմրն անշփոթ հանգստությամբ վրաս նայեց ու գլուխը շարժեց։

– Արդյոք չգիտե՞ք, մր. Օմր, թե ինչպե՞ս է նա այս երեկո։

– Ես ինքս էլ այդ էի ուզում հարցնել ձեզ, սըր,– պատասխանեց մր. Օմրը,– բայց քաշվեցի։ Մեր արհեստի չարիքներից մեկն էլ այս է։ Երբ որ մեկը հիվանդ է, մենք չենք կարող հարցնել նրա մասին։

Այս հանգամանքը ես չէի նախատեսել։– Ներս մտնելիս վախենում էի, թե նորից մուրճի հին երգը կլսեմ։ Մր. Օմրի զգուշությունը դուր եկավ ինձ, և ես ասացի, թե նրա ասածը ճիշտ է։

– Այո՛, այո՛, դուք ինձ լավ եք հասկանում,– նկատեց մր. Օմրը։– Մենք չենք կարող հարցնել։ Հավատացեք, հիվանդներից շատերի համար մի մահացու հարված կլիներ, եթե մեկը նրանց ասեր. «Օմրն ու Ջորեմը բարևում են ձեզ ու հարցնում, թե ինչպե՞ս եք այս առավոտ... կամ այս երեկո...»՝ ժամանակին նայելով։

Մր. Օմրն ու ես իրար գլխով նշան արինք, և այնուհետև նա իր չիբուխը նորից քաշեց։

– Մեր արհեստի վատ կողմն այս է, որ դրա պատճառով արգելվում ենք ուշադրություն ցույց տալ մեկին, որքան էլ ուզենանք,– շարունակեց մր. Օմրը։– Օրինակի համար. մի տարի չէ, քառասուն տարի է, որ ճանաչում եմ Բարկիսին, և այդ ժամանակ շաբաթ չի անցել, որ նրա անց կենալը չտեսնեմ, բայց, այնուամենայնիվ, ես չեմ կարող գնալ ու հարցնել, թե նա ինչպես է։

Զգում էի, որ դա իրավ դժվար բան է մր. Օմրի համար. այսպես էլ իրեն ասացի։

– Կարծեմ ես մյուսներից շահասեր չեմ,– ասաց մր. Օմրը։– Ահա տեսեք, ամեն րոպե շունչս բռնվում է, և մի մարդ շահասեր լինի, երբ այդ մարդը մի պատռված տիկի դրության մեջ է։ Հարցնում եմ, մի՞թե հավանական բան է, որ մի մարդ շահասեր լինի, երբ այդ մարդը մի պատռված տիկի պես իր շունչն այսօր կամ վաղը պիտի փչի, մանավանդ եթե նա ինձ նման մի ծեր պապիկ է։

– Ամենևին,– ասացի ես։

– Բայց և այնպես չկարծեք, թե իմ արհեստից գանգատավոր եմ,– շարունակեց մր. Օմրը։– Բնավ ոչ։ Ամեն վիճակ լավ կողմ էլ ունի, վատ կողմ էլ. այս հայտնի է։ Կցանկանայի միայն, որ մարդիկ այնպես դաստիարակվեն, որ այդքան թուլասիրտ չլինեն։

Մր. Օմրը շատ ուրախ ու գոհ դեմքով մի քանի վայրկյան ծուխ ներս քաշեց և ապա ասաց, դարձյալ գալով առաջվա կետին։

– Ուրեմն, սըր, Բարկիսի որպիսությունն իմանալու համար մեզ կմնար Էմլիին դիմել։ Նա լավ գիտի մեր իսկական դիտավորությունը. նա հավատացած է, որ այս բանում մենք գառների պես միամիտ ու անմեղ ենք։ Աշխատանքից հետո սովորաբար տուն է գնում հորաքրոջը օգնելու։ Դեռ կես ժամ չկա, որ Միննին ու Ջորեմն էլ տուն գնացին՝ իմանալու, թե հիվանդն ինչպե՞ս է, և թե կամենաք մի քիչ սպասել, նրանք ամեն բան կպատմեն ձեզ։ Չէի՞ք կամենա որևէ բան անուշ անել։ Օրինակի համար՝ մի բաժակ **շըրբ**[57]։ Ես ինքս սովոր եմ շըրբ ընդունել ծխելիս,– ասաց մր. Օմրը, իր բաժակը վերցնելով,– որովհետև սա, ասում են, շնչիս անցքերը մաքրում է։ Սակայն, օրինյալ է աստված, անցքերն ամենևին մեղավոր չեն,– հարեց մր. Օմրը հազալով։– Ես միշտ ասել եմ իմ աղջկան՝ Միննին. «Դու ինձ միայն շունչ տուր, աղջիկ, իսկ անցքերը ես ինքս կգտնեմ»։

Եվ իրավ, ծերուկի շունչը համարյա թե կտրվել էր, երբ սկսեց ծիծաղել։ Ես հրաժարվեցի նրա առաջարկած զավացուցիչ դեղից, որովհետև նոր էի ճաշել, և ցանկություն հայտնելով սպասել նրա դստեր ու փեսայի վերադարձին, հարցրի, թե ինչպե՞ս են փոքրիկ Էմլիի գործերը։

– Վատ չեն, սըր,– ասաց մր. Օմրը, չիբուխը բերանից հանելով ու կզակը շփելով,– բայց անկեղծ կասեմ, որ լավ կլիներ, եթե նա շուտով մարդու գնար։

– Եվ ինչո՞ւ եք այդպես կարծում։

– Որովհետև նա դեռ մի անորոշ դրության մեջ է,– ասաց մր. Օմրը։– Չեմ ասում, թե առաջվա պես սիրուն չէ... Ընդհակառակը՝ այժմ ավելի գեղեցկացել է, շատ ավելի։ Գործի մեջ էլ հաջողակ է, ինչպես միշտ։ Առաջ վեց մարդու գործ էր անում, այժմ էլ վեցի գործ կանի։ Բայց էլ առաջվա եռանդը չունի։ Հասկանո՞ւմ եք,– ասաց մր. Օմրը, վերստին կզակը շփելով ու փոքր-ինչ ծխելով,– թե միտքս ինչ է, երբ ասում եմ բանվորներիս. «Էլի մի անգամ թի քաշեցեք, սիրելիներս. լավ զոռ տվեք, և միասին հուռռա»։ Ահա այս է, ինչ-որ պակասում է Էմլիին, հասկացա՞ք։

Մր. Օմրի շարժումներն այն աստիճան ազդու էին, որ առանց խղճահարության, նշան արի, թե իր միտքը հասկանում եմ։ Արագամտությունս կարծես դուր եկավ, և նա շարունակեց.

– Իմ կարծիքով պատճառը նրա դրությունն է։ Լավ կլիներ՝ շուտով պսակվեին. բանն իսկույն կվերջանար։ Դրա մասին շատ եմ խոսել թե՛ նրա ապոր հետ, թե՛ նշանածի հետ, և կարծում եմ, թե գլխավոր պատճառը հենց այդ անորոշ դրությունն է։ Ինչքան շուտ պսակվեն, այնքան լավ։ Ինքներդ գիտեք, մր. Կոպպերֆիլդ, թե այդ Էմլին որքան սիրելի աղջիկ է։ Առածն ասում է, թե «խոզի ականջից մետաքսե քսակ չի շինվի». իսկ ես կարծում եմ՝ կշինվի, եթե միայն փոքր-ինչ առաջ գործը սկսես։ Գիտե՞ք, նրա շնորքով այն հին նավը մի այնպիսի տուն է դարձել, որ քարաշեն կամ մարմարյա պալատից էլ թանկ արժի։

– Հավատում եմ,– ասացի ես։

– Տեսնելու բան է իրավ,– շարունակեց մր. Օմրը,– թե այդ փոքրիկ աղջիկն ինչպես օրեցօր ավելի ամուր, ավելի սերտ է կապվում նրա հետ։ Ուրեմն տեսնո՞ւմ եք, գործի մեջ զգացումների ընդհարում կա։ Ինչի՞ է պետք զուր տեղը երկարաձգել այդ կռիվը։

Ուշի-ուշով ականջ էի դնում բարի ծերունուն ու սրտանց հավանություն տալիս նրա ասածին։

---

[57] Մի տեսակ շարբաթ է՝ լիմոնի, շաքարի և օղիի խառնուրդ։

– Հատկապես այդ պատճառով էլ ասացի նրանց,– վրա բերեց մր. Օմրը,– պարզ ու որոշ ասացի. «Մի կարծեք, թե Էմլիի պայմանագիրն իմ մոտ ծառայելու ժամանակի մասին՝ արգելք կլինի գործին: Ամենևին: Ժամանակը ինչպես կուզեք փոխեցեք, այդ ձեր բանն է: Նրա աշխատանքը սպասվածից ավելի օգուտ բերեց մեր գործին. նա ավելի շուտ հմտացավ իր արհեստին, քան ուրիշները: Ուրեմն պայմանագիրն ի՞նչ կնաշանակի: Օմրն ու Ջորեմն պատրաստ են այդ գիրը գրչի մի հարվածով ոչնչացնել, և Էմլին, երբ կամենար՝ այն րոպեին էլ կազատվի: Եթե նա հետո էլ ուզենա մեկ-մեկ էլ մեզ մոտ աշխատել, շատ լավ կանի, իսկ եթե չուզենա, այդ էլ լավ: Մենք ոչինչ չենք կորցնի: Տեսնում եք, սըր,– ասաց մր. Օմրը, դիպչելով ինձ չիբուխի ծայրով,– տեսնում եք, ես մի հիվանդ ծերուկ եմ, և բացի դրանից՝ թոռների տեր. ուրեմն մի՞թե կարելի է սպասել, որ կամենամ Էմլիի նման կապտաչյա սիրուն ծաղկին հակառակել:

– Իհարկե չեք կամենա,– հաստատեցի ես:

– Եվ չե՛մ կամենա: Ձեր ասածը շատ ուղիղ է,– ասաց մր. Օմրը:– Ձեզ հայտնի է, սըր, որ Էմլին նշանված է Հեմի հետ... հո ճանաչո՞ւմ եք այդ Հեմին:

– Շատ լավ:

– Այդպես էլ կարծում էի, սըր: Նրա նման ընտիր բանվոր մոմով փնտրես, չես գտնի: Այժմ նա լավ գործի տեր է և ունևոր: Նա ինձ սրտանց շնորհակալություն հայտնեց (պետք է ասեմ, որ իր վարմունքն այս գործում շատ գովելի էր) և իսկույն գնաց մի տուն վարձեց. այնպիսի սիրուն, կոկիկ տուն, որին նայելուց մարդու աչքը չի կշտանում: Այժմ այդ տունը տիկնիկի դահլիճի պես է զարդարված, և եթե խեղճ Բարկիսի հիվանդությունը չծանրանար, Հեմն ու Էմլին արդեն մարդ ու կին կդառնային: Բայց ի՞նչ արած, պիտի սպասեն:

– Իսկ Էմլին այժմ ավելի՞ հանգիստ է, մր. Օմր,– հարցրի ես:

– Դրա մասին ինքս էլ չգիտեմ՝ ինչ ասեմ,– պատասխանեց մր. Օմրը, նորից կզակը շփելով:– Այս բոլոր փոփոխությունները կարծես փոքր-ինչ շփոթել են նրան, և բնական է: Հորեղբոր տանից բաժանվելու րոպեն հա՛մ մոտեցել է, հա՛մ հեռացել, և դա մի հանգստացնող հանգամանք չի: Բարկիսի մահը շատ չի հետաձգի հարսանիքը, բայց եթե մահն ուշանա... Մի խոսքով, տեսնում եք, սըր, գործը դեռ կարգին չի և իրերի վիճակն անորոշ է:

– Այո, տեսնում եմ:

– Այս պատճառով,– շարունակեց մր. Օմրը,– Էմլին փոքր-ինչ հուզված է և գուցե առաջվանից ավելի վհատված: Նրա ջերմ սերը դեպի ապերը կարծես օրեցօր աճում է և մեզանից բաժանվելու վիշտը քանի գնում սաստկանում: Բավական է, որ մի անուշիկ խոսք ասեմ նրան, և նա իսկույն կարտասվի. իսկ եթե նրան իմ Միննիի փոքրիկ աղջկա հետ տեսնեք, էլ երբեք այդ պատկերը չեք մոռանա: Ա՛հ, աստված իմ, որքան է սիրում այդ մանկան,– կնքեց մր. Օմրը մտախոհ:

Օգուտ քաղելով Միննիի ու Ջորեմի ուշանալուց, հարցրի մր. Օմրին, թե ի՞նչ գիտի Մարթայի մասին:

– Ա՛հ,– ասաց նա, գլուխը տրտում շարժելով: Լավ բան չգիտեմ: Որ կողմից էլ նայես, սըր, նրա պատմությունը մի տխուր բան է: Ո՞ւմ մտքով վատ բան կանցներ այդ աղջկա մասին: Ես երբեք չեմ վատաբանում նրան իմ Միննիի առջև... Միննին անպատճառ կվշտանա: Իմ մտքով ոչ մի վատ բան չէր անցնի, և մեզնից ոչ ոքի մտքով չէր անցել:

Մր. Օմրն իր աղջկա ոտքերի ձայնը լսելուն պես չիբուխով հրեց ինձ և աչքով արեց, որ զգուշանամ: Նույն րոպեին Միննին ու Ջորեմը ներս մտան:

Նրանք լուր բերին, թե Բարկիսի բանը «պրծած է», թե արդեն ուշքը կորցրել է, թե մր. Չիլիպը խոհանոցում տխուր ասել է, որ մինչև անգամ եթե ամբողջ Անգլիայի բժիշկները, վիրաբույժներն ու դեղագործները միասին խորհրդի հավաքվեն, դարձյալ ոչինչ չի դուրս գա,

թե բժիշկներն ու վիրաբույժները, մր. Չիլիպի ասելով, է՛լ չեն օգնի հիվանդին, իսկ դեղագործները կարող են միայն թունավորել։

Այս լսելով ու իմանալով, որ մր. Պեգգոտին իր քրոջ տանն է, ես որոշեցի իսկույն այնտեղ գնալ։ Բարի գիշեր ասացի մր. Օմրին, նրա աղջկան ու փեսային և դուրս ելա հիվանդի մոտ գնալու մի այնպիսի հանդիսավոր զգացումով, որ կարծես թե մր. Բարկիսն ինձ համար մի նոր և ուրիշ մարդ դարձած լիներ։

Դուռը հանդարտ բախեցի. մր. Պեգգոտին բաց արեց։ Հակառակ սպասածիս՝ ինձ տեսնելով նա շատ չզարմացավ։ Նույն բանը Պեգգոտիի մոտ էլ նկատեցի, երբ նա դեպի մեզ ներքև իջավ։ Այնուհետև շատ անգամ եմ առիթ ունեցել ստուգելու, որ մահվան պես զարհուրելի պատահարին սպասելիս՝ մյուս բոլոր զգացումները մարդուս մեջ չքանում են։

Մր. Պեգգոտիի աջը սեղմելուց հետո՝ խոհանոց մտա, մինչ նա դրսի դուռն էր փակում։ Փոքրիկ Էմլին կրակի առջև լուռ նստած էր՝ երեսը ձեռքերով ծածկած։ Հեմը կանգնած էր նրա կողքին։

Խոսում էին շշուկով և վերևից եկող ամեն մի ձայնի ուշադիր։ Այժմ ինձ տարօրինակ էր թվում, որ մր. Բարկիսը խոհանոցից բացակա էր, թեև վերջին այցելությանս ժամանակ բնավ չէի մտածել այդ մասին։

– Ձեր գալը, մաստր Դեվի, ձեր սրտին պատիվ է բերում,– ասաց մր. Պեգգոտին։

– Մեծ պատիվ,– ավելացրեց Հեմը։

– Էմլի, հոգյակս,– գոչեց մր. Պեգգոտին։– Տես՝ մաստր Դեվին է եկել։ Դե, սիրելիս, զվարթացիր։ Այդ ի՞նչ է։ Մաստր Դեվիին մի խոսք էլ չե՞ս ասի։

Էմլին ամբողջ մարմնով սարսռաց. դեռ այսօր էլ այդ սարսուռը տեսնում եմ։ Դեռ այսօր էլ զգում եմ, թե որքան սառն էր նրա աջը, որ նա ձեռքիս շոշափումը զգալուն պես ետ քաշեց։ Այնուհետև նա աթոռից վայր սահեց և կամաց մոտենալով հորեղբորը, նրա կրծքի վրա ընկավ՝ դարձյալ լուռ ու դողդոջուն։

– Սրա սիրտն այնքան զգայուն է,– ասաց մր. Պեգգոտին, իր կոշտ ձեռքով Էմլիի ճոխ մազերը շփելով,– որ չի կարող այս վշտին դիմանալ։ Բնական բան է, մաստր Դեվի, ջահելներն այս տեսակ փորձանքների սովոր չեն, և ահա թռչնակի պես երկչոտ են... շա՛տ բնական է։

Էմլին ավելի սեղմվեց նրա կրծքին, սակայն ոչ երեսը ցույց տվեց, ոչ էլ մի բառ արտասանեց։

– Արդեն ուշ է, հոգյակ իմ,– ասաց մր. Պեգգոտին։– Հեմն էլ ահա սպասում է. ուզում է քեզ տուն տանել։ Միասին գնացեք։ Հը՞... ի՞նչ ասացիր, սիրունիկս։

Աղջկա թույլ ձայնը չհասավ ինձ։ Մր. Պեգգոտին գլուխը խոնարհեց, ասես թե նրան ականջ դնելով, և հետո ասաց.

– Հը՞, դու ուզում ես ինձ հե՞տ մնալ։ Այդ ի՞նչ բան է։ Հանաք ես անում, ճնճղուկս։ Ինչի՞ նման է քավթառ ապորդ մոտ մնալը, քանի որ կտրիճ փեսադ եկել է, որ անձամբ քեզ տուն տանի։ Ի՞նչ կասեք,– գոչեց մր. Պեգգոտին՝ անհուն հպարտությամբ ինձ ու Հեմին նայելով։– Ո՞վ կկարծեր, որ ինձ նման մի բիրտ ու կոպիտ նավաստի այսքան սիրված է։ Բայց ծովն էլ այնքան աղ չունի, ինքան որ սա դեպի դեպի իր ծերուկ ապերը սեր ունի։ Այ դու խենթուլիկ Էմլի։

– Էմլին լավ է անում, մաստր Դեվի,– ասաց Հեմը։– Տեսեք ուզում է այստեղ մնալ։ Չէ՞ որ մի քիչ երկչոտ է։ Դե, մինչև առավոտ թող մնա։ Ես էլ կմնամ։

– Չէ, չէ,– ասաց մր. Պեգգոտին։– Դու պսակված մարդ ես, կամ գրեթե պսակված. քեզ պետք չէ գործիդ օրը կորցնել։ Հո չի՞ կարելի հա՛մ գիշերն արթուն մնալ, հա՛մ ցերեկն աշխատել։ Այդպիսի բան չի լինի։ Տուն գնա, քնիր։ Կարծում ես թե Էմլիին առանց քեզ չե՞նք պահպանի։

Հեմը տեղի տվեց այդ փաստերին ու գլխարկը վերցնելով պատրաստվեց գնալու։ Բայց մինչև անգամ այն րոպեին, երբ նա նշանաձին համբուրեց, և վստահ եմ՝ ջերմ սրտով, Էմլին ավելի ամուր փարվեց ապորը, կարծես թե խուսափելով փեսացուից։ Հեմի հեռանալուց հետո, ես զգուշությամբ դրսի դուռը փակեցի և երբ ետ եկա, մր. Պեգգոտին դեռ խոսում էր Էմլիի հետ։

– Այժմ վեր բարձրանամ,– ասաց նա,– հայտնելու տատիդ, որ մաստր Դեվին այստեղ է. այս լսելով նա գոնե մի քիչ կուրախանա։ Իսկ դու կրակի առջև նստիր ու սառը ձեռքերդ տաքացրու։ Բավական է, հոգիս, այդքան մաշվես ու վախենաս։ Ի՞նչ։ Ուզում ես հետս գալ։ Դե լավ, գնանք։ Եթե ինձ տանից վռնդեն ու ստիպեն մի ցեխոտ փոսում ապրել, մաստր Դեվի,– ասաց առաջվա հպարտությամբ մր. Պեգգոտին,– այն ժամանակ էլ, հաստատ գիտեմ, այս աղջիկը չի բաժանվի ապորից։ Բայց իմ տեղը քո սրտում շուտով ուրիշը կբռնի, չէ՞, Էմլի, մեկ ուրիշը, և շուտով։

Փոքր-ինչ հետո, երբ ես էլ վերև բարձրացա, իմ մութ սենյակիս դռան մոտով անցնելիս կարծես թե Էմլիին հատակի վրա փռված տեսա։ Բայց տեսածս արդյոք նա՞ էր, թե ստվերների խաղից առաջացած մի երևույթ, մինչև այսօր չգիտեմ։

Խոհանոցի կրակի առջև մենակ նստած՝ սկսեցի մտածել այն սարսափի մասին, որ սիրուն Էմլին զգում էր մահվանից, և այս հանգամանքը մր. Օմրի պատմածի հետ կապելով, կարծեցի, թե այդ կլինի նրա փոփոխության պատճառը։ Եվ մինչև Պեգգոտիի ներքև իջնելն այսպես մենակ մտածելիս, ես ավելի ներող մտքով սկսեցի նայել Էմլիի թուլության վրա։ Ժամացույցի ճոճանակը շարունակ չխկչխկում էր և ամբողջ տան խորհրդավոր լռությունը քիչ-քիչ սկսել էր սրտիս վրա ազդել։ Վերջապես Պեգգոտին եկավ, գրկեց ինձ, օրհնեց ու հազար անգամ շնորհակալ եղավ, որ իրեն «իր այս դառն վշտերի մեջ սփոփելու եմ եկել»։ Այնուհետև խնդրեց ինձ իր հետ վերև բարձրանալ ու հեկեկալով հաղորդեց, թե Բարկիսն ինձ շատ է սիրել ու միշտ վրաս հիացել. թե այժմ նա խելքը կորցրել է, բայց առաջ անդադար հիշել է ինձ, և հիմա էլ աչքը որ բանա ու ինձ տեսնի, անպատճառ կզվարթանա, եթե միայն մի որևէ երկրային բան կարող է նրան զվարթացնել։

Սակայն ամենևին հավանական չէր, որ Բարկիսն աչքը բանա ու ինձ տեսնի։ Երբ որ հիվանդի մոտ մտանք, նա անհարմար դիրքով էր պառկած՝ ուսերն ու գլուխը անկողնուց դուրս, գրեթե սնդուկի վրա կախված, որ այնքան հոգս, այնքան վիշտ էր պատճառել նրան։ Ինձ պատմեցին, թե այն րոպեին, երբ Բարկիսը այլևս հնար չէր գտել անկողնուց դուրս սողալու, որպեսզի սնդուկը անձամբ բանա կամ դրա ներկայությունն այն մոգական գավազանով ստուգի, որ ինքս մի անգամ տեսել էի, նա հրամայել էր սնդուկն անկողնու մոտ՝ աթոռի վրա դնել ու գիշեր-ցերեկ դա բռնել է իր գրկում։ Այժմ էլ նրա բազուկները սնդուկի վրա էին։ Ժամանակն ու աշխարհը փախչում էին նրանից, բայց սնդուկը դեռ ներկա էր և հիվանդի վերջին խոսքն այս է եղել, թե «Հնոտիք են, միայն հնոտիք»։

– Բարկիս, սիրելիս,– ասաց դայակս համարյա թե ուրախ ձայնով ու դեպի անկողնու սնարը թեքվեց, մինչ նրա եղբայրն ու ես ոտքերի մոտ կանգնեցինք։– Ահա իմ սիրասուն որդյակը, մեր անգին մաստր Դեվին եկել է... հիշո՞ւմ ես, Բարկիս, այն Դեվին, որ մեր պսակը գլուխ բերավ... որի ձեռքով դու ինձ լուր էիր ուղարկում, հիշո՞ւմ ես։ Մի՞թե չես ուզում մի-երկու խոսք ասել մաստր Դեվիին։

Բարկիսը լուռ էր և անզգա, ինչպես իր սնդուկը, որ տակավին բռնած էր։

– Ծովի ջրերի իջնելուն հետ սա էլ կգնա,– ասաց մր. Պեգգոտին՝ ձեռքը բերանին դնելով։

Աչքերս արդեն տամկացել էին. մր. Պեգոտիի աչքերումն էլ արտասուք էր փայլում, բայց և այնպես շշնջալով հարցրի նրան.

– Ինչպե՞ս թե ջրերի իջնելու հետ։

– Այո,– ասաց մր. Պեգգոտին։– Ծովեզերքի մարդիկ մեռնում են միայն ջրի իջնելու ժամանակ. ջրի աճելու սկզբին ծնվում են և ջրի հորդության ժամանակ արդեն լիովին աշխարհ գալիս։

Բարկիսն էլ իջնելու հետ կմեռնի։ Դեռ ջուրն աճելու վրա է, պետք է մինչև երեք անց կեսը սպասել։ Ժամը չորսին կսկսի տեղի տալ։ Եթե այդ միջոցին հոգին չտա, նշանակում է մինչև հետևյալ տեղատվությունը դեռ կապրի։

Մենք մնացինք հիվանդի մոտ, երկար ժամեր հսկելով... երկար ժամեր։ Արդյոք հիվանդի վրա իմ ներկայությունը որևէ խորհրդավոր ազդեցությո՞ւն ունեցավ, չգիտե՛մ. բայց երբ վերջապես նա սկսեց զառանցել, նրա անկապ ու թույլ մրմունջից իմացանք, որ ինձ վարժարան տանելն է մտաբերում։

– Ուշքի է գալիս,– ասաց Պեգգոտին։

Մր. Պեգգոտին հրեց ինձ և եկյուղած շշուկով արտասանեց.

– Ահա ջուրն իջնում է, և նա հոգին ավանդում։

– Բարկիս, հոգիս,– ասաց դայակս։

– Կլարա Պեգգոտի Բարկիս... – թոթովեց մեռնողը։– Քեզնից լավ կին չկա աշխարհիս երեսին։

Նա աչքերը բաց էր արել։ Ուզում էի հարցնել, թե ճանաչո՞ւմ է ինձ։ Այդ րոպեին նա փորձեց աջը մեկնել, թեթև ժպտաց և որոշակի ասաց ինձ.

– Բարկիսը հոժա՛ր է։

Եվ որովհետև ջուրն արդեն իջնում էր, Բարկիսն էլ այս աշխարհից հեռացավ։

ԺԱ. ԳԼՈՒԽ
Մի ավելի մեծ կորուստ

Դժվար չէր ինձ համար Պեգգոտիի խնդրանքով իր մոտ մնալ, մինչև խեղճ կառապանի մարմինը վերջին անգամ Բլենդրոտըն ուղևորվեր։ Դայակս իր խնայած գումարով արդեն վաղուց մեծ հանգստարանում մի կտոր հող էր գնել՝ իր անմոռաց գերեզմանին կից, ինչպես որ անվանում էր մայրիկիս, և ահա այնտեղ պիտի ամփոփվեր նրա ամուսնու աճյունը։ Ես շատ գոհ էի, որ Պեգգոտիի մոտ մնալով առիթ էի գտնում փոքր ի շատե օգնելու նրան և երախտագիտության պարտքս վճարելու։ Սակայն պիտի խոստովանեմ, որ ինչքան էլ այս պարտքի վճարումը քաղցր լիներ, ես ավելի անձնական ու պաշտոնական բավարարվածություն զգացի, երբ ինձ վիճակվեց մր. Բարկիսի կտակը քննել և դրա բովանդակությունը ճշտել։

Ամենից առաջ ես պատիվ ունեցա այն միտքը հայտնելու, թե կտակն անշուշտ սնդուկում է գտնվում։ Եվ իրոք, մի քիչ փնտրելուց հետո, կտակը արկղի մեջ գտանք՝ ձիու տոպրակի հատակում, ուր (բացի վարսակից ու խոտից) այն հաստ շղթայով ու կնիքով հին ոսկե ժամացույցն էլ երևան եկավ, որ մր. Բարկիսն իր հարսանիքի օրը կախած ուներ, և որը սակայն հայտնի չէ, թե ո՞ւր էր կորել դրանից հետո։ Հետազոտության շարունակությունը ցույց տվեց, որ հանգուցյալն իրավունք ուներ իր «հնոտիների» վրա դողալու։ Սնդուկից մեկ-մեկ դուրս ելան մի ոտնաման, արծաթե ցից՝ թամբաքու լցնելու համար. մի արհեստական լիմոն՝ մեջը մանրիկ թեյի բաժակներով ու պնակներով – անշուշտ երեխայությանս ժամանակ ինձ համար գնված մի պարգև, որ սակայն մր. Բարկիսը լավ էր համարել պահել. ութսունյոթ ու կես գինե՝ ոսկե դրամով. երկու հարյուր տասը ստեռլինգ՝ բանկի նոր տոմսերով, Անգլիական Բանկի ընկալագիր, մի հին պայտ, մի ժանգոտ շիլինգ, մի կտոր քափուր և մի հատ ոստրեի խեցի։ Այս վերջին առարկայի շատ հղված ու ներքուստ ծիածանի պես գունզգույն լինելու

համար, պետք էր կարծել, թե մր. Բարկիսը նրա մեջ մարգարիտ գտնելու հույս ունեցած լիներ։

Տարիներից ի վեր ամեն օր մր. Բարկիսն իր մշտական ուղևորությունների ժամանակ այդ սնդուկը ման էր ածել։ Եվ որպեսզի դա կասկածներ տեղի չտա՝ խորամանկությամբ հնարել էր, թե «Այս սնդուկը մր. Բլեկբոյին է պատկանում և մնալու է Բարկիսի մոտ՝ ցպահանջ», մի առասպել, որ գրել էր խուփի երեսին խոշոր, բայց արդեն մաշված տառերով, որոնք այժմ շատ դժվար էին կարդացվում։

Տեսա, որ մր. Բարկիսը իր գանձերը զուր չէր դիզել ու մթերել այնքա՛ն տարի։ Նրա դրամական ստացվածքը մոտ երեք հազար ֆունտ ստեռլինգ էր։ Այս գումարից հազարի տոկոսը նա կտակել էր մր. Պեգգոտիին՝ ցկյանս. նրա մահից հետո դրամը հավասար բաժանելու էր Պեգգոտիի, Էմլիի և իմ միջև, կամ պիտի հասներ մեզնից կենդանի մնացողին։ Իսկ բոլոր մնացած դրամագլուխն ու իրերը հատկացնում էր Պեգգոտիին, կարգելով նրան ընդհանուր ժառանգ և իր վերջին կամքի ու կտակի միակ կատարիչ։

Ես գրեթե մի կատարյալ պրոկտր էի համարում ինձ, այդ կտակը բարձրաձայն, հանդիսաբար կարդալիս ու դրա յուրաքանչյուր հոդվածի իմաստը ժառանգորդներին մեկնաբանելիս։ Այդ ժամանակ էր, որ առաջին անգամ զգացի, թե Դոկտորների ԸՆկերության անդամ լինելը հանաք բան չի։ Ես կտակն ուշի-ուշով հետազոտեցի և իմ գիտության ունկնդիրներիս՝ հայտնեցի, թե թուղթն ամեն տեսակետից կանոնավոր է հորինված, և վերջապես լուսանցքների վրա մատիտով մի երկու նշան դնելուց հետո՝ ինքս էլ սաստիկ զարմացա, որ այդքան բան գիտեմ։

Թաղման հանդեսի նախորդ շաբաթն այս մանրակրկիտ զբաղմունքներով անցկացրի։ Ես Պեգգոտիին հասանելիք բոլոր գույքերի ցուցակը կազմեցի, նրա ամեն գործերն օրենքի համեմատ կարգի բերի և ի մեծ հաճություն երկուսիս, ամեն մի կետում նրա խորհրդականն ու փաստաբանը հանդիսացա։ Այդ օրերում ոչ մի անգամ Էմլիին չտեսա. միայն լսեցի, թե մի երկու շաբաթից հետո պսակվելու է։

Հուղարկավորության ժամանակ ես ձևականություն չարեցի. ուզում եմ ասել՝ սև կրկնոց ու սև շղարշ չհագա թռչուններին վախեցնելու համար. առավոտյան վաղ վերկենալով ոտքով գնացի Բլենդրոտըն և արդեն մտել էի հանգստարան, երբ դագաղն էլ այնտեղ հասավ՝ միայն Պեգգոտիի ու նրա եղբոր ուղեկցությամբ։ Խելագար ջենտլմենը նայում էր իմ պատուհանից. մր. Չիլիպի մանուկն իր ծանր գլուխը շարժելով, աչքերը չռած դիտում էր քահանային՝ իր դայակի ուսերի հետևից. մր. Օմրը հևում էր սենյակի խորքում. ուրիշ մարդիկ չկային, և հանգստարանը վերին աստիճանի խաղաղ էր։ Ամեն բան վերջացնելուց հետո, մենք այնտեղ մի ժամի չափ ման եկանք ու մի քանի թարմ ոստեր քաղեցինք մորս գերեզմանը հովանավորող ուռենուց։

Հանկարծ այստեղ մի սարսափ տիրեց սրտիս։ Հեռավոր քաղաքի վրա, դեպի ուր գնում եմ մենակ, մի սևաթույր ամպ է իջնում։ Վախենում եմ մոտենալ քաղաքին։ Այդ չարաշուք գիշերվա պատահարն ու դրան հաջորդող անցքերը հիշելուց անգամ սարսռում եմ։

Սակայն չարիքը չի վատանա, եթե պատահարը նկարագրեմ, չի էլ ուղղվի, եթե դողդոջ գրիչս վայր դնեմ։ Ինչ որ եղել է, եղել է. ոչ մի մարդկային ուժ չի կարող այլևս ջնջել նրան կամ փոխել։

Դայակս ու ես հետևյալ օրը Լոնդոն պիտի գնայինք՝ կտակը վավերացնելու համար։ Փոքրիկ Էմլին մր. Օմրի տանն էր մնացել։ Պայման էինք դրել, որ թաղումից հետո, երեկոյան, բոլորս միասին հին նավատանը կհավաքվենք։ Հեմը Էմլիի հետ սովորական ժամին պիտի գար։ Մր. Պեգգոտին և իր քույրը սպասելու էին մեզ վառարանի դիմաց։

Ես նրանցից հանգստարանի դռնակի մոտ բաժանվեցի և փոխանակ ետ դառնալու՝ Լոուստֆոտի ճամփան դուրս եկա և միայն հետո քայլերս դեպի Յարմաութ ուղղեցի։ Ճաշելու

համար կանգ առա այն պանդոկում, որ գտնվում էր երկու մղոն լաստից այս կողմ, և արդեն երեկոյան հասա լաստին։ Սկսվեց հորդ անձրև գալ, սաստիկ քամի բարձրացավ. սակայն լուսինը երբեմն փայլում էր ամպերի միջից ու գիշերը խավար չէր։

Շուտով մր. Պեգգոտիի տնակն ու նրա պատուհանում շողացող ճրագը նշմարեցի։ Խոնավ ավազի վրայով մի քանի քայլ անելուց հետո՝ արդեն դռան մոտ էի և ներս մտա։

Շատ դուրեկան էր այդ տան ներսի տեսարանը։ Մր. Պեգգոտին հանգիստ նստած ծխում էր. երևում էր, որ ընթրիք է պատրաստվում։ Կրակը վառ էր։ Սնդուկը, որի վրա միշտ նստում էր Էմլին, սպասում էր նրան։ Պեգգոտին իր նախկին տեղում նստած էր և եթե այրիի սև զգեստ հագած չլիներ, ոչ ոք մի փոփոխություն չէր նկատի նրա կյանքի մեջ։ Իր հին տուփը՝ ս. Պողոս եկեղեցու պատկերով, մետրաչափը, մոմի կտորն ու թելը արդեն իր մոտ էր դրել – այս բոլորն անպակաս էր, ինչպես և միշտ։ Մրս. Գըմիջը կարծես դժգոհ էր. նշանակում է նա էլ իր սովորական դրության մեջ էր։

– Ամենից առաջ դուք եք գալիս, մաստր Դեվի,– ասաց մր. Պեգգոտին զվարթ դեմքով։– Իսկույն հանեցեք ձեր թրջված վերարկուն, սըր։

– Շնորհակալ եմ, մր. Պեգգոտի,– ասացի ես, վերարկուս նրան տալով, որ կախի։– Արդեն գրեթե չորացել է։

– Տեսնում եմ,– ասաց նա, շոշափելով ուսերս։– Տաշեղի պես չոր է։ Նստեցեք, սըր։ Հարկ չկա «բարով եկաք» ասելու. ես միշտ ուրախ եմ ձեր գալու համար, սրտանց ուրախ։

– Շնորհակալ եմ, մր. Պեգգոտի. դրանում հավատացած եմ։ Բարով, Պեգգոտի,– ասացի ես, համբուրելով դայակիս։– Ինչպե՞ս ես։

– Հե՛, հե՛, հե՛,– ծիծաղեց մր. Պեգգոտին, մեր կողքին նստելով ու ձեռքերը շփելով, ասես թե իր նոր վիշտը փարատելու համար։– Սրա նման կին աշխարհում չի ճարվի, սըր... իրեն էլ քանի անգամ ասել եմ։ Ո՞ր կինը սրա նման մաքուր խիղճ կունենա։ Իր պարտքը դեպի լուսահոգին ազնվաբար կատարեց. լուսահոգին այդ գիտեր։ Դրա պատճառով լուսահոգին էլ իր պարտքը դեպի սա արդարությամբ կատարեց. սա էլ դեպի լուսահոգին իր... մեկ խոսքով... ամեն բան լավ վերջացավ...

Մրս. Գըմիջը հոգոց հանեց։

– Բավական է, ախ քաշես, սիրունիկ իմ,– ասաց մր. Պեգգոտին։ (Բայց դեպի մեր կողմն աչքով արեց ցույց տալու համար, որ վերջին դեպքերն իրոք կարող էին ծերի հիշատակը պառավի հոգում նորոգել)։– Սիրտդ փոքր-ինչ ամուր պահիր, զվարթացիր։ Աստուծով, դեռ լավ օրեր էլ կտեսնես։

– Ահ, Դանիել,– համառեց մրս. Գըմիջը։– Էլ մի ասա։ Լավ օրերն ինձ նման անտուն-անտերի համար չեն։

– Դե, դե,– ասաց մր. Պեգգոտին, աշխատելով սփոփել նրան։

– Այո, այո, Դանիել,– փնթփնթաց մրս. Գըմիջը։– Ինչ լավ օրեր կարող եմ տեսնել գանձեր ժառանգող մարդկանց հետ։ Այդ բոլորը ինձ հակառակ է կատարվում։ Լավ է թաղեք, գնամ կորչեմ։

– Գնաս, ո՞ւր գնաս,– ասաց մր. Պեգգոտին։– Հապա ես ո՞ւմ հետ պիտի ծախսեմ այդ գանձերը, եթե ոչ քեզ հետ։ Ի՞նչ բաներ ես դուրս տալիս։ Չե՞ս իմանում, որ այժմ դու ինձ ավելի ես հարկավոր, քան թե առաջ։

– Լավ գիտեմ, որ առաջ ոչ մեկին հարկավոր չէի,– գոչեց մրս. Գըմիջը,– հիմա էլ ուղիղ երեսիս են ասում այդ։ Ո՞ւմ է հարկավոր ինձ նման չոր գլուխ, անտուն-անտեր թշվառը։

Մր. Պեգգոտին շատ զարմացավ, որ այդպիսի մեկնություն տվին իր ճառին, և ուզում էր տաք-տաք պատասխանել. բայց քույրը թևից քաշելով արգելեց նրան։ Մի քանի ժամանակ

տագնապով մրս. Գըմիջին նայելուց հետո՝ նա նայեց հոլանդական ժամացույցին, վերկացավ, ճրագը վառեց ու պատուհանի մեջ դրեց։

– Հիմի ամեն բան կարգին է,– ասաց մր. Պեգգոտին ուրախ ձայնով։– Տես, ամեն բան պատրաստ է, մրս. Գըմիջ։

Մրս. Գըմիջը տնքաց։

– Ճրագը վառված է ու պատուհանին է դրված,– շարունակեց մր. Պեգգոտին։– Դուք զարմանում եք, սըր, թե ի՞նչ է նշանակում այս բանը։ Հըմ, մեր Էմլիի համար է վառված։ Գիտեք, որ ճանապարհը հարթ չէ, մթնով գալն էլ հեշտ բան չէ. ահա ես էլ, երբ որ տանն եմ նրա գալու ժամանակ, պատուհանի վրա ճրագ եմ դնում։ Եվ գիտեք,– ասաց նա, մեծ խնդությամբ դեպի ինձ հակվելով,– այդ ունի երկու նպատակ։ Մեկ, որ Էմլին կասի. «Ահա ապոր տնակը». երկրորդ՝ կասի. «Ապերը տանն է», որովհետև ես որ տանը չլինեմ, հո ճրագն էլ չի վառվի։

– Իսկ և իսկ երեխա ես,– ասաց Պեգգոտին, որ սակայն շատ գոհ էր եղբոր սիրուց դեպի Էմլին։

– Մի՞թե,– ասաց մր. Պեգգոտին, ոտքերը լայն-լայն դնելով, ձեռքերն ուրախ իրար շփելով ու մեկ ճրագին նայելով, մեկ էլ մեզ։– Չգիտեմ։ Կարծես թե գոնե մարմնով երեխայի նման չեմ։

– Այո՛, փոքր-ինչ զանազանվում ես երեխայից,– նկատեց դայակս։

– Հասակովս՝ անտարակույս,– ծիծաղեց մր. Պեգգոտին,– իսկ ուրիշ կողմից որ նայենք... Է՛հ, հոգ չէ, քո ասածը թող լինի։ Բայց տեսեք, թե բանն ինչումն է։ Մեր Էմլիի այս տնակը նայելիս խելքս թռչում է,– գոչեց հանկարծ մր. Պեգգոտին ցնծությամբ,– էլ ուրիշ բան չեմ կարող ասել... ինձ թվում է, թե ամենափոքրիկ իրերն անգամ Էմլիի մասերն են։ Վերցնում եմ, ամեն մի բան տեղն եմ դնում, զգույշ-զգույշ շոշափելով, կարծես թե Էմլիին եմ գուրգուրում։ Այսպես եմ վարվում և նրա փոքրիկ գլխարկների և ուրիշ իրերի հետ։ Վա՛յ նրան, ով որ կհամարձակվի Էմլիին պատկանող որևէ առարկայի կոպիտ դիպչել։ Տեսա՞ր, այս տեսակ երեխա եմ ես, միայն թե ծովային ոզնու տեսքով,– հարեց մր. Պեգգոտին ու փառ-փառ ծիծաղեց։

Պեգգոտին ու ես ծիծաղեցինք, բայց ոչ այդքան բարձրաձայն։

– Ահա այս է իմ կարծիքը, եթե ուզում եք իմանալ,– շարունակեց մր. Պեգգոտին զվարթերես, նորից ծունկերը շփելով։– Եվ պատճառը գիտե՞ք ինչ է։ Այն է, որ ես ու Էմլին շատ ենք միասին խաղացել, երբ նա դեռ իմ թզի չափ էր, և ինչ ասես չէինք ներկայացրել՝ թուրք, ֆրանսիացի, շնաձուկ և ամեն տեսակ օտարազգի, այո՛, այո՛... և՛ առյուծ, և՛ կետ, և՛ աշխարհիս որ գազանը ցանկանաք, երբ նա դեռ ծնկներիս էլ չէր հասնում։ Ահա այդպես էինք իրար հետ։ Տեսեք հիմա այդ ճրագը,– ասաց մր. Պեգգոտին, ձեռքը հիացմամբ դեպի ճրագը մեկնելով։– Հավատացած եմ, որ Էմլին մարդու էլ որ գնա, ճրագը դարձյալ այդտեղ կդնեմ, ճիշտ այդպես։ Հաստատ գիտեմ, որ երբ ես գիշերները տանը լինեմ (և ասացեք աստծու սիրուն՝ որքան էլ հարստանամ, ուրիշ որտե՞ղ պիտի ապրեմ) և նա այստեղ չլինի, կամ ես նրա մոտ չլինեմ, դարձյալ ճրագը պատուհանի վրա կդնեմ ու կրակի առջև կնստեմ, կարծես թե նրան սպասելով, ինչպես որ հիմա սպասում եմ։ Ահա այդպիսի երեխա եմ ես,– նորից քրքջալով գոչեց մր. Պեգգոտին, միայն թե ծովի ոզնու նման։ Հիմի էլ այդ ճրագին նայելիս ինքս ինձ ասում եմ. «Էմլին լույսը տեսնում է, նա գալի՛ս է»։ Ահա այսպիսի ոզնիակերպ երեխա եմ։ Եվ ասածս ճիշտ է,– ասաց մր. Պեգգոտին, ծիծաղելուց դադարելով ու ծափ տալով,– որովհետև ահա եկա՛վ։

Բայց եկողը միայն Հեմն էր։ Երևի իմ գալուց հետո, գիշերվա անձրևը սաստկացել էր, որովհետև Հեմի լայնեզր գլխարկը բոլորովին թրջվել էր և կախ ընկել նրա դեմքի վրա։

– Էմլին ո՞ւ ր է,– հարցրեց մր. Պեգգոտին։

Հեմը գլխով նշան արավ, թե դռան հետևն է: Մր. Պեգգոտին ճրագը պատուհանից վերցրեց, դրեց սեղանի վրա ու շտապեց վառարանի կրակն արծարծել: Հեմը, որ դեռ անշարժ կանգնած էր, ինձ դիմելով ասաց.

– Մաստր Դեվի, խնդրեմ մի րոպի միասին դուրս գանք, կտեսնեք, թե ի՞նչ ենք բերել ես ու Էմլին՝ ձեզ ցույց տալու համար:

Դուրս ելանք: Միայն շեմքի վրա զարհուրելով նկատեցի, որ Հեմը մեռելի պես սփրթնած է: Նա արագ դուրս հրեց ինձ և իսկույն մեր հետևից դուռը փակեց: Էմլին չկար:

– Հեմ, ի՞նչ է պատահել:

– Մաստր Դե՛վի...

Եվ նա սկսեց հուսակտուր լաց լինել:

Ես քարացած մնացի՝ նրա վիշտը տեսնելով: Չգիտեմ՝ այդ րոպե ի՞նչ անցավ իմ մտքով կամ ինչի՞ց վախեցա, միայն թե շվարած նայում էի նրան:

– Հեմ, սիրելի Հե՛մ: Ցավդ տանեմ, ասա՝ ի՞նչ է պատահել:

– Ախ, իմ Էմլին, սիրերլի Էմլիս, մաստր Դեվի... կյանքիս պարծանքն ու հույսը... նա, ում համար պատրաստ էի գլուխս մահու տալ... հիմի էլ կտամ... էլ չկա:

– Էլ չկա՞:

– Փախել է: Օ՛հ, մաստր Դեվի, և ինչպե՛ս... Ես որ նրան հոգով սրտով պաշտում եմ... միայն այս եմ խնդրում իմ բարեգութ աստծուց, որ շանթահար անի նրան, քան թե թույլ տա խայտառակվել ու կորչել:

Երիտասարդի դեպի մռայլ երկինք գցած հայացքը, նրա ձեռքերի պրկումը, ծնկների դողը, տագնապած դեմքի այլայլումը մինչև հիմա հիշողությանս մեջ կենդանի են այն դատարկ անապատի տեսարանի հետ միասին, ուր կատարված ողբերգության միակ անձը ինքն էր, իսկ վկան՝ միայն խավար գիշերը:

– Դուք գիտնական մարդ եք, մաստր Դեվի,– ասաց նա շտապով:– Դուք կիմանաք թե ի՞նչ անեմ, ներսի մարկանց ի՞նչ ասեմ, բանի էությունը ինչպե՞ս հայտնեմ ծերունուն:

Այդ րոպեին դուռը շարժվեց... ես բնազդով փութացի մղլակը դրսից բռնել, որպեսզի գեթ մի վայրկյան ժամանակ շահենք. բայց ուշ էր: Մր. Պեգգոտին գլուխը դուրս հանեց, և ես երբեք չեմ մոռանա, նույնիսկ եթե հինգ հարյուր տարի ապրելու լինեմ, այն սոսկալի փոփոխությունը, որ նրա երեսին նշմարեցի:

Հանկարծ մի լացուկոծ բարձրացավ. կանայք նրա վրա թափվեցին: Մենք արդեն սենյակումն ենք՝ բոլորս էլ ոտքի վրա. ես ձեռքիս մի թուղթ բռնած, որ տվել էր ինձ Հեմը. մր. Պեգգոտին բաց բաճկոնով, խառնիփնթոր մազերով, դժգույն դեմքով ու սպիտակած շուրթերով, աչքերն անքթիթ, մինչ կրծքից վայր շիթ-շիթ արյուն էր կաթկթում, որ անշուշտ բերնից էր հոսել:

– Կարդացեք, սըր,– ասաց նա դողդոջ ձայնով:– Բայց խնդրեմ փոքր-ինչ դանդաղ կարդացեք: Չգիտեմ, արդյոք կհասկանա՞մ:

Եվ ես սենյակի մեռելային լռության մեջ արտասվաթոր նամակի հետևյալ խոսքերը կարդացի
.

«Երբ որ դուք,– դուք, որ շատ ավելի եք սիրում ինձ, թե արժանի էի նույնիսկ սրտիս անմեղության ժամանակ,– այս նամակն ընդունեք, ես արդեն հեռու կլինեմ»:

– Արդեն հեռու կլինեմ,– կրկնեց մր. Պեգգոտին մեղմ ձայնով:– Սպասեցեք: Էմլին հեռու կլինի: Հետո՛:

«Հեռանում եմ առավոտյան իմ սիրելի ընտանիքից... իմ սիրելի, սուրբ ընտանիքից... այն պայմանով»...

Նամակը մի գիշեր առաջ էր գրված։

»...որ էլ երբեք չվերադառնամ, մինչև որ նա ինձ՝ ինչպես իր հարազատ կնոջ, ետ չբերի։ Նամակս մեկնելուց շատ հետո կիասնի ձեզ, երեկոյան այն ժամին, երբ ինձ սպասելիս կլինեք։ Օ՜հ, եթե գիտենայիք, թե ինչքա՜ն է սիրտս կտրտվում։ Ես ձեր առաջ շատ հանցավոր եմ, ձեր ներողամտությանը անարժան. բայց եթե գիտենայիք, թե ինչ ցավ եմ քաշում։ Սակայն ես այնքան մեղապարտ եմ, որ իմ մասին չարժի խոսել։ Մխիթարվեցեք այն համոզումով, որ ես մի վատ աղջիկ եմ։ Աղաչում եմ, աստծու սիրուն, ապորն ասացեք, որ ես ոչ մի ժամանակ այնքան իրեն չեմ սիրել, ինչպես որ այժմ եմ սիրում։ Մի հիշեք այն ջերմ սերը, այն գութն ու խնամքը, որ բոլորդ էլ ընծայել եք ինձ... օ՜հ, մի հիշեք, թե մենք պիտի պսակվեինք... այլ աշխատեցեք մտածել, թե ես դեռ մանկական հասակումս մեռած էի և որևէ տեղ թաղված։ Թող մարդասեր աստված սիրելի ապորս հովանի լինի։ Ասացեք նրան, որ ես նրան առաջ կիսով չափ այնպես չեմ սիրել, ինչպես որ հիմա եմ սիրում։ Սփոփեցեք նրան։ Սիրեցեք մի ուրիշ լավ աղջկա, ինչպես որ մի ժամանակ ես էի, որ ապոր մոտ իմ տեղը բռնի, ձեզ լիովին արժանի լինի, և ձեզնից ամաչելու պատճառ չունենա ինձ նման։ Աստված օրհնե՜ ամենքիդ։ Միշտ ծնկաչոք պիտի աղոթեմ դրա համար։ Եթե ես իբրև ամուսին չվերադառնամ և անկարող լինեմ ինքս ինձ համար աղոթել, գեթ ձեր բոլորիդ համար չեմ դադարի աղոթելուց։ Վերջին բարևս ապորը։ Վերջին շնորհակալությունս ու վերջին արտասուքս մեր անգի՜ն ապորը»։

Այս էր բոլորը։

Ավարտեցի, բայց դեռ երկար ժամանակ մր. Պեգգոտին լուռ կանգնած էր, նայելով վրաս։ Վերջապես վստահեցի նրա ձեռքը բռնել և որքան կարող էի խնդրել, որ մի քիչ տիրապետի ինքն իրեն։

– Շնորհակա՜լ եմ, շնորհակա՜լ եմ, սըր,– ասաց նա, առանց շարժվելու իր տեղից։

Այնուհետև Հեմը փորձեց նրա հետ խոսել։ Նրա կարեկցության նշաններից մր. Պեգգոտին այնքան քնքշացավ, որ իսկույն նրա աջն ամուր սեղմեց, բայց շարունակեց անշարժ մնալ, և ոչ ոք մեզնից չհամարձակվեց նրա լռությունն ընդհատել։

Վերջ ի վերջո, կարծես երազից սթափվելով, նա հանդարտ իր շուրջը նայեց. հետո թույլ ձայնով ասաց.

– Ո՞վ է այն մարդը։ Ուզում եմ անունն իմանալ։

Հեմը երեսիս նայեց, և ես հանկարծ մի հարված ստացողի պես ետ-ետ գնացի։

– Գործի մեջ մի մարդ է խառնված,– շարունակեց մր. Պեգգոտին,– ո՞վ է նա։

– Մաստր Դեվի,– ասաց Հեմը աղերսելով։– Մի րոպե այստեղից հեռացեք և թույլ տվեք, որ մի քանի խոսք ասեմ նրան։ Կարիք չկա, սըր, որ ասելիքս դուք լսեք։

Նորից մի հարված զգացի և աթոռի վրա ընկա։ Փորձեցի մի քանի բառ ասել, բայց լեզուս բռնվել էր, աչքերս մութ կոխել։

– Ուզում եմ անունն իմանալ,– լսեցի ես նորից։

– Մի քանի ժամանակ առաջ,– թոթովեց Հեմը,– այստեղ մի սպասավոր էր քարշ գալիս։ Մի ջենտլմեն էլ եկել էր։ Երկուսն էլ իրար գիտեին։

Մր. Պեգգոտին առաջվա պես անշարժ էր, միայն այժմ Հեմին էր նայում։

– Անցյալ գիշեր,– շարունակեց Հեմը,– այդ սպասավորին տեսել են մեր... մեր խեղճ աղջկա հետ միասին։ Սպասավորը մի շաբաթ ի վեր թաքնված է եղել շրջակայքում։ Կարծում էի, թե գնացել է, բայց չէ. թաքնված է եղել։ Մի՜ մնացեք այստեղ, մաստր Դեվի, մի՜ մնացեք։

Մր. Պեգգոտին թևը վզիս փարելով ուզում էր հեռացնել ինձ. բայց ես անզոր էի վեր կենալ, եթե անգամ ամբողջ տունը գլխիս վրա փուլ գալու լիներ։

– Այս առավոտ դեռ արևը ծագելուց առաջ,– շարունակեց Հեմը,– դրսում, Նորվիչի ճամփու վրա, մի անծանոթ կառք են տեսել ձիերով։ Սպասավորը մի քանի անգամ մոտեցել է կառքին ու ետ է եկել։ Վերջին անգամ գնալիս՝ Էմլին էլ հետն է եղել։ Կառքի մեջ մի ջենտլմեն էր նստած։ Քո հարցրած մարդն էլ հենց նա է։

– Տեր իմ աստված,– գոչեց մր. Պեգգոտին ու բազկատարած մի-երկու քայլ ետ գնաց, ասես թե մի ահռելի բանից խույս տալով։– Չլինի թե այդ մարդու անունը Ստիրֆորթ է։

– Մաստր Դեվի,– աղաղակեց Հեմը բեկ-բեկ ձայնով,– ձեր մեղքը չի... Աստված չանի, որ ձեզ մեղադրեմ... բայց նրա անունը Ստիրֆորթ է, և նա մի անզգամ արարած է։

Մր. Պեգգոտին ո՛չ ձայն հանեց, ո՛չ արտասվեց, ո՛չ երերաց, այլ մի քանի ժամանակ անշարժ մնաց, և հետո ասես թե հանկարծ ուշքի գալով, անկյունում խփված մեխի վրայից արագ վերցրեց իր հաստ վերարկուն։

– Է՛յ, օգնեցեք,– գոչեց նա անհամբեր։– Թևերս կաշկանդվել են, չեմ կարողանում հագնել։ Դե՛, շուտ արեք։

Մեկն օգնեց նրան վերարկուն հագնել։

– Այսպե՛ս։ Հիմի գլխարկս տվեք։

Հեմը հարցրեց նրան, թե ո՞ւր է գնում։

– Գնում եմ եղբորս աղջկան որոնելու։ Գնում եմ Էմլիին գտնելու։ Բայց ուզում եմ ամենից առաջ այն նզոված նավը ջախջախել ու հենց այնտեղ ջրասույզ անել, ու հետն էլ այն սրիկային. ա՛խ, եթե միայն օր առաջ իմանայի, թե ի՛նչ դև կար նրա սրտում։ Երբ նա իմ դեմ նստած էր,– մոլեգնաբար գոչեց մր. Պեգգոտին, սեղմած բռունցքը թափ տալով,– երբ այն նավում նստած էր երես առ երես իմ դիմաց, շանթահար լինեմ, եթե նրան չընկղմեի, և արածս անշուշտ լավ բան կլիներ։ Գնամ գտնեմ եղբորս աղջկան։

– Ո՞ւր ես գնում,– գոչեց Հեմը, նրա առաջը կտրելով։

– Ուր էլ լինի։ Գնում եմ եղբորս աղջկան որոնելու՝ թեկուզ աշխարհի մյուս ծայրումն էլ լինի։ Գնում եմ գտնելու և տուն բերելու իմ թշվառ Էմլիին։ Մի՛ բռնեք ինձ։ Չե՞ք լսում, ես գնում եմ Էմլիին գտնելու։

– Ո՛չ, ո՛չ,– կոծեց մրս. Գրմիջը, երկուսի մեջտեղը կանգնելով։– Ո՛չ, Դանիել, դեռ մի շտապի՛ր։ Թող առաջ սիրտդ հանգստանա, հետո գնա փնտրելու, իմ սիրելի, իմ որբացած Դանիել։ Այժմ ես քեզ չեմ թողնի։ Եկ նստիր, և ներիր, որ այդքան քեզ զզվեցրել եմ իմ դատարկ գանգատներով... Ի՞նչ են, Դանիել, իմ վշտերն այս ճշմարիտ աղետի առջև... Եկեք հիշենք այն օրերը, երբ Էմլին որբացավ, Հեմն էլ որբացավ, երբ ես էլ՝ թշվառս, այրի դարձա, և դու բոլորիս հավաքեցիր, քեզ մոտ բերիր, թևարկեցիր։ Այս բոլորը որ հիշենք, սիրտդ փոքր-ինչ կթեթևանա, սիրելի Դեն,– ասաց պառավը, ձեռքը ձկնորսի ուսին դնելով,– և ավելի հեշտ կդիմանաս ցավերիդ։ Չէ՞ որ գրված է. «Որովհետև արարեք միում եղբարցս այսոցիկ փոքրկանց՝ ինր արարիք», և աստված քեզ իր օրհնությունից չի զրկի, ոչ էլ այս տունը, որ այսքա՛ն տարի մեր բոլորիս ապավենն էր։ Մի՛ հուսահատվի, մեր մարդասեր ու բարերար Դեն։

Այժմ մր. Պեգգոտին հանդարտվել էր. գոնե այդպես էր երևում։ Ես ուզում էի նրա ոտքերն ընկնել, հազար ու հազար ներողություն խնդրել իմ պատճառով իրեն հասած վշտի համար և անիծել Ստիրֆորթին, բայց երբ նա հանկարծ երեխայի նման հեկեկաց, իմ սրտին մի ավելի ազնիվ զգացում տիրեց։ Անասելի հուզումից ես էլ նրա պես լաց եղա, և բարի ձկնորսի տնակը մեր ամենիս ողբով լցվեց։

ԺԲ. ԳԼՈՒԽ
Մի երկար ուղևորության սկիզբը

Իմ կարծիքով՝ ինչ որ իմ մեջ բնական է, շատերի համար էլ բնական է. ուստի համարձակ կասեմ, թե երբեք այնպես ջերմ սիրով չէի սիրել Ստիրֆորթին, ինչպես որ մեզ միավորող սերտ կապերի կտրվելու ժամանակ: Նրա վատ արարքի հայտնի դառնալու դառնակսկիծ րոպեին ես ավելի շատ նրա փայլուն կողմերն էի հիշում, ավելի շատ նրա լավ հատկությունները գնահատում, ավելի շատ նրա այն ձիրքերը հարգում, որոնց շնորհիվ նա կարող էր մի ազնիվ ու մեծանուն մարդ դառնալ, քան թե առաջ, երբ բոլորովին նվիրված էի նրան: Սիրտս սաստիկ մորմոքվում էր, երբ մտածում էի, որ անգիտաբար մասնակցել եմ այն ոճրին, որով նա մի ազնիվ ու մաքուր տուն պղծեց, սակայն, եթե մեզ երես առ երես կանգնեցնեին, ես չէի կարողանա մի հանդիմանիչ խոսք ասել նրան: Ես դարձյալ կսիրեի նրան, թեև նա արդեն դադարել էր ինձ դյութելուց. դարձյալ անշեջ կպահեի իմ նախկին մտերմության գորովալից հիշատակը, գուցե և մի դյուրահաշտ երեխայի նման կթուլանայի նրա առջև, բայց չէի մտածի կրկին նրա հետ մտերմանալու մասին: Այսպիսի բան մտքովս անգամ չէր անցնի: Ինչպես ես, այնպես էլ նա, զգում էինք, որ մեր միջև ամեն ինչ վերջացած է, թեև բնավ չիմացա, թե ինչպե՞ս էր նրա հիշատակն իմ մասին... երևի թե վաղանցուկ ու թեթև էր. սակայն ես նրան միշտ հիշել եմ իմ սիրելի, բայց արդեն մեռած ընկերոջ պես:

Այո, Ստիրֆորթ, դու հեռացար այս տրտմագին պատմությանս ասպարեզից: Գուցե ահեղ դատարանի աթոռի առջև իմ վիշտը մի ակամա վկայություն տա քո դեմ. բայց բարկություն կամ կշտամբանք – ո՛չ երբեք:

Պատահարի գույժն իսկույն քաղաքում տարածվել էր, այնպես որ առավոտյան փողոցներից անցնելիս լսում էի, որ մարդիկ, դռների առջև նստոտած, միայն դրա մասին են խոսում: Մի քանիսը չարաչար մեղադրում էին աղջկան, մյուսները՝ տղային. բայց աղջկա երկրորդ հոր ու նշանածի նկատմամբ բոլորի կարծիքը նույն էր: Ամենքն էլ սրտանց ցավակցում էին նրանց վշտին: Երբ առավոտյան վաղ այդ երկուսը ծանրաքայլ ման էին գալիս ծովափում, ձկնորսներն ակնածությամբ ճանապարհ էին տալիս նրանց և խումբ-խումբ բաժանվելով կարեկցություն հայտնում իրար:

Ես նրանց հենց ծովեզրի մոտ հանդիպեցի: Առանց Պեգգոտիի ասելու էլ հեշտ էր նկատել, որ նրանք ամբողջ գիշեր չեն քնել և մինչև լույս նստած են մնացել այն իսկ տեղում, ուր թողել էի նրանց կես-գիշերին: Երկուսն էլ հոգնած էին երևում, և մր. Պեգգոտին այդ մի գիշերվա մեջ կարծես ավելի էր ծերացել, քան մեր ամբողջ ծանոթության տարիների ընթացքում: Երկուսն էլ լուռ ու հանգիստ էին, այն ծովի նման, որ անծուփ տարածված էր մթագույն երկնքի տակ, միայն երբեմն բարձրանում էր մակընթացությունը, ասես քնի մեջ շունչ էր քաշում, մինչդեռ ծագող արեգակի արծաթափայլ լույսի շերտը արդեն շողում էր հորիզոնի վրա:

Երեքս միասին լուռ գնում-գալիս էինք ծովի ափին: Վերջապես մր. Պեգգոտին ինձ ասաց.

– Ես ու Հեմը, սըր, արդեն բավական խոսեցինք, թե մեզ ի՞նչ պետք է անել և ի՞նչ չանել: Այժմ գիտենք, ինչից պետք է սկսել:

Աչքս պատահմամբ Հեմի վրա ընկավ, որ այդ րոպեին ծովի հեռավոր ցոլքին էր նայում, և ես հանկարծ մի սոսկալի բան զգացի: Նրա դեմքը զայրացած չէր և մի հաստատ ու խիստ կամքից բացի, ուրիշ ոչինչ չէր արտահայտում. բայց և այնպես մի ներքին ձայն ինձ ասաց, թե նա Ստիրֆորթին կսպանի, ուր էլ նրան հանդիպի:

– Անելիքս որոշված է, սըր,– ասաց մր. Պեգգոտին։– Ես գնում եմ փնտրելու իմ... – այստեղ նա կանգ առավ և հետո ամուր ձայնով վերջացրեց,– գնում եմ նրան փնտրելու։ Այս է կյանքիս մշտական պարտքը։

Հարցրի նրան, թե ո՞րտեղ է ուզում որոնել. նա գլուխը շարժեց ու հարցրեց, թե ե՞րբ եմ մտադրի Լոնդոն գնալ։ Պատասխանեցի, թե մտադիր էի հենց այն օրը գնալ, բայց մնացել եմ, մտածելով, թե գուցե կարողանամ որևէ բանով օգնել նրան։

– Սակայն, եթե ուզենաք,– ավելացրի,– պատրաստ եմ իսկույն գնալ։

– Ուրեմն ես էլ ձեզ հետ կգամ,– ասաց մր. Պեգգոտին։– Միայն թե վաղը։

Դարձյալ մի քանի ժամանակ առանց խոսելու ման եկանք։

– Հեմն առաջվա պես իր գործին կհետևի,– սկսեց նորից մր. Պեգգոտին,– և կերթա քրոջս մոտ կապրի։ Իսկ այն հին նավատունը...

– Մի՞թե կթողնեք նավատունը, մր. Պեգգոտի,– հարցրի ես կամացուկ։

– Այսուհետև, մաստր Դեվի, այդ նավատունն իմ օթևանը չի լինի։ Դեռ ոչ մի նավ՝ այն օրից սկսած, երբ «խավար էր ի վերա անդնդոց», այդ նավի պես չէր խորտակվել։ Բայց ոչ, սըր, ո՛չ. չեմ ուզում թողնել նրան։ Ամենևին։

Դարձյալ մի քիչ ման եկանք, և նա միտքը բացատրեց.

– Փափագս այս է, մաստր Դեվի, որ այդ նավը գիշեր-ցերեկ, ամառ-ձմեռ այնպես մնա, ինչպես որ առաջին օրից ճանաչել է նրան Էմլին։ Ես ուզում եմ, որ եթե մի օր այդ դժբախտը վերադառնա, հին տնակը նրա աչքին խորթ չթվա, նրան չմերժի, այլ իր մոտ քաշի։ Ո՞վ գիտե. գուցե մի անձրևային, հողմաշունչ գիշեր այս կողմերում թափառելիս՝ նա պատուհանին մոտենա և կամացուկ ներս նայի և իր առաջվա անկյունը տեսնի վառարանի մոտ։ Այն ժամանակ, մաստր Դեվի, ո՞վ գիտի, նկատելով, որ մրս. Գըմիջից բացի, ուրիշ մարդ չկա սենյակում, գուցե վստահանա դողդոջ քայլերով ներս մտնել, գնալ իր անկողնում պառկել և հոգնած գլուխը բարձին դնել, որի վրա մի ժամանակ այնպես անուշ քնում էր։

Չնայելով ջանքերիս, ոչ մի պատասխան չտվի. հուզմունքից ես համրացել էի։

– Ամեն գիշեր,– շարունակեց մր. Պեգգոտին,– հենց որ արևը մայր մտնի, ճրագը պատուհանի վրա կվառվի, և երբ էլ նա այս կողմը գա, ճրագը նրան ցույց կտա. «Եկ, որդյակս, տուն դարձիր»։ Եվ եթե, Հեմ, դու մի գիշեր դրսի դռան չխկոցը լսես, մի թույլ չխկոց, ինքդ դուրս չգաս։ Թող տատիկը իմ կորած աղջկան ներս բերի... և ոչ դու։

Մր. Պեգգոտին մի քանի քայլ առաջ անցավ ու մենակ մնաց։ Այդ միջոցին ես նորից Հեմին նայեցի և, նկատելով, որ նա առաջվա պես շարունակում է հեռավոր լույսով փայլուն շերտին ակնապիշ նայել, թևից քաշեցի։ Նա չշարժվեց։

Երկու անգամ անունը տվի, կանչեցի, ասես թե քնած մարդու. կարծես ոչինչ չլսեց։ Երբ վերջապես հարցրի, թե ի՞նչ բանի մասին է այդպես համառ մտածում, պատասխանեց.

– Այն բանի մասին, մաստր Դեվի, ինչ որ ահա առջևս է, ա՛յ դենը։

– Ուզում ես ասել ապագայի՞դ մասին։

Նա մտամոլոր դեպի ծովը մատնանշեց։

– Այո, մաստր Դեվի։ Ինքս էլ չգիտեմ՝ ինչի՞ց է, բայց կարծեմ վերջն այնտեղ կլինի... ա՛յ, այնտեղ։

– Այդ ասելիս նա կարծես սթափվեց, սակայն դեմքը դարձյալ նույն վճռական արտահայտությունն ուներ։

– Ո՞ր բանի վերջը,– հարցրի ես, նորից սոսկում զգալով։

– Չգիտեմ,– ասաց նա մտախոհ։– Հիշեցի, որ ամեն բան այնտեղ է սկսվել. . . այնտեղ էլ կվերջանա։ Բայց սա մի ցնորք էր. անցավ գնաց, մաստր Դեվի,– հարեց նա, և երևի աչքերիս մեջ տագնապի նշան տեսնելով ասաց. – Մի վախեցեք. մտքերս փոքր-ինչ խառնված են. ինքս էլ չգիտեմ՝ ինչ եմ ասում։ Միամիտ կացեք, բան չկա։

Մր. Պեգգոտին կանգ առավ, սպասելով, որ իրեն հասնենք։ Հասանք և էլ ոչ մի բառ չփոխանակեցինք իրար հետ։ Բայց առաջին երկյուղիս հիշատակը շարունակում էր հալածել ինձ, մինչև որ անողոք **վերջը** վրա հասավ։

Հանդարտ մոտեցանք հին տնակին ու ներս մտանք։ Մրս. Գըմիջը՝ փոխանակ առաջվա պես իր քնջում փնթփնթալու, ժիր զբաղված էր նախաճաշիկ պատրաստելով։ Նա մր. Պեգգոտիի գլխարկը ձեռքից առավ, աթոռ տվեց և սկսեց այնպես հանգիստ ու սիրով խոսել, որ էլ անկարելի էր ճանաչել նրան։

– Դանիել, իմ քաջ տղաս,– ասաց նա,– այժմ քեզ պետք է կուշտ ուտել ու խմել, որ ուժ հավաքես, եթե ոչ՝ ձեռքիցդ ոչինչ չի գա։ Կե՛ր, սիրելիս, և եթե իմ կռկռոցը (ուզում էր ասել շատ խոսելը) քեզ դուր չի գա, ասա, իսկույն ձայնս կկտրեմ։

Մրս. Գըմիջը բոլորիս կերակուրը սեղանի վրա դնելուց հետո՝ գնաց նստեց պատուհանի մոտ ու սկսեց մր. Պեգգոտիի շապիկներից մի քանիսը կարկատել։ Այս գործն էլ ավարտելուց հետո՝ փոխնորդները տեղավորեց մոմաշորից շինված պայուսակի մեջ, որ նավաստիները սովոր են կրել։

– Ամեն ժամանակ, ամառ-ձմեռ ես պիտի այստեղ լինեմ, Դանիել,– ասաց մրս. Գըմիջը,– և ամեն բան ճիշտ ուզածիդ պես պիտի անեմ։ Գրել-կարդալ շատ չգիտեմ, բայց էլի երբեմն քեզ կգրեմ, երբ հեռու լինես։ Նամակներս մաստր Դեվին կհանձնի քեզ։ Գուցե դու էլ, Դանիել, մեկ-մեկ գրես ու պատմես, թե ի՞նչ ես զգում ոլոր-մոլոր թափառումներիդ միջոցին։

– Բայց դու այստեղ մեն-մենակ չե՞ս տխրի,– հարցրեց մր. Պեգգոտին։

– Ո՛չ, ո՛չ, Դանիել,– պատասխանեց մրս. Գըմիջը։– Անհոգ եղիր այդ մասին։ Տխրելու ժամանակ չեմ ունենա։ Չէ՞ որ պետք է տունը պահեմ, որ երբ ետ գաս, ամեն բան կարգին գտնես։ Գուցե մեկ ուրիշն էլ գա, ո՞վ գիտե։ Քեզ կամ ուրիշին սպասելով, ես դռան առջև կնստեմ, ինչպես միշտ։ Եթե մեկը գալու լինի, արդեն հեռվից կտեսնի, որ պառավը ձեզ հավատարիմ է, հավատարիմ էլ կմնա։

Որքան փոփոխություն մրս. Գըմիջի մեջ։ Մեկ գիշերվա ընթացքում նա մի ուրիշ կին էր դարձել։ Այժմ այնպե՛ս անձնվեր էր, այնպե՛ս շուտ էր ըմբռնում, թե ի՞նչ բան պետք է ասել և ի՞նչ բան չասած թողնել. այն աստիճան իր անձը մոռանում էր, այն աստիճան ուրիշների ցավին վշտակցում, որ ես սկսեցի նրան սրտանց հարգել։ Եվ որքան բան գլուխ բերեց այն օրը։ Պետք էր ծովափից ամբար տեղափոխել թիեր, ցանցեր, առագաստներ, պարաններ, ձողեր, կայմեր, խեցգետին պահելու տաշտեր, ավազի տոպրակներ և ուրիշ այսպիսի առարկաներ. և թեպետ օգնող ձեռքեր չէին պակասում և ծովեզրի վրա ձկնորս չկար, որ չուզենար սիրով աշխատել մր. Պեգգոտիին հաճելի լինելու համար, բայց և այնպես մրս. Գըմիջը մինչև երեկո շարունակում էր իր ուժից վեր բեռներ կրել և դեսուդեն վազել, հազար տեսակ ավելորդ բաներ հոգալով։ Ո՞ւր կորան նրա տրտունջներն իր բախտից. նա կարծես մոռացել էր, թե երբևէ որևէ վիշտ է ունեցել։ Եվ չնայած իր վշտին, նա ամբողջ օրը զվարթ մնաց, մի բան, որ ամենից ավելի զարմանալի էր նրա կրած փոփոխության մեջ։ Առաջվա դժգոհության ու փնթփնթոցի հետքն անգամ չէր մնացել։ Առավոտից մինչև երեկո ես չնկատեցի, որ գեթ մի անգամ նրա ձայնը դողար և կամ աչքից գոնե մի կաթիլ արտասուք ընկներ. միայն գիշերվա դեմ, երբ նա, ես ու մր. Պեգգոտին մենակ մնացինք, և ծերունին շատ հոգնելուց քնեց, պառավն սկսեց արտասվել, մեղմիկ ձայնով հեկեկալ և դեպի դուռը տանելով ինձ, ասաց. «Աստված օրհնե ձեզ, մաստր Դեվի։ Կարեկից եք այդ խեղճ մարդուն»։ Հետո իսկույն դուրս վազեց և երեսը լվաց. այնուհետև մի ձեռագործ վերցնելով՝ եկավ նստեց մր. Պեգգոտիի աթոռի մոտ, որպեսզի երբ նա զարթներ,

հանգիստ աշխատելիս տեսնի իրեն։ Կարճ ասաց մրս. Գըմիջին բարի գիշեր մաղթելուց հետո՝ ես այն համոզումով հեռացա, որ նա վշտաչարչար ձկնորսի գավազանն ու նեցուկն է։ Ինչպիսի՜ դաս մարդկային սիրտն ուսումնասիրող հոգեբանի համար։ Այո՛, այդ օրը ես շատ բան սովորեցի նրանից։

Արդեն ժամը իննուկեսն էր, երբ քաղաքի միջով մտամոլոր անցնելիս՝ մր. Օմրի դռան առջև կանգ առա։ Նրա աղջկա ասելով՝ ցավալի դեպքն այնպես էր ազդել ծերունու վրա, որ նա ամբողջ օրը տրտմել էր և մինչև անգամ չիբուխը չքաշած՝ անկողին մտել։

– Այ խորամանկ, չար աղջիկ,– ասաց մրս. Ջորեմը։– Նա միշտ անպիտան էր, անպիտան։

– Ինչո՞ւ եք այդպես ասում,– նկատեցի ես։– Դուք հո այդպես չե՞ք մտածում։

– Ո՛չ, ո՛չ, ճիշտ այդպես եմ մտածում,– գոչեց մրս. Ջորեմը զայրույթով։

– Անկարելի է։ Չե՛մ հավատում,– ասացի ես։

Մրս Ջորեմը թոթովեց, ջանալով դաժան ու խիստ ձևանալ, սակայն չկարողացավ քնքուշ սրտի հուզումը հաղթել ու լաց եղավ։ Ես դեռ իրոք ջահել էի, բայց նրա գթասրտությունը տեսնելով, լավ կարծիք կազմեցի նրա մասին և ասացի ինքս ինձ, թե իրավ շատ պատշաճ է առաքինի կնոջն ու բարի մորը մի այդպիսի զգացում ունենալ։

– Ի՞նչ կդառնա այժմ նա,– հեկեկաց Միննին։– Ո՞ւր կերթա, ի՞նչ կանի։ Օ՜հ, ինչպես անգութ վարվեցի թե իր հետ, թե նրա հետ։

Ես հիշեցի այն ժամանակը, երբ Միննին մի նորատի սիրուն աղջիկ էր, և գոհ եղա, որ ինքն էլ այժմ միևնույն գորովանքով մտաբերեց։

– Փոքրիկ Միննիս,– ասաց մրս. Ջորեմը,– դեռ նոր գնաց պառկելու։ Քնելիս անգամ լաց էր լինում, Էմլիին հիշելով։ Ամբողջ օրն արտասվելով հարցնում էր՝ մի՞թե Էմլին չար աղջիկ է։ Ի՞նչ ասեի, քանի որ Էմլին դեռ անցած իրիկուն մի ժապավեն էր ընծայել նրան իր վզից և մինչև նրա քնելը սպասել էր, գլուխը նրա բարձին դրած։ Դեռ այս րոպեիս էլ ժապավենը Միննիս վզին է։ Պետք էր հանել, բայց ինչպե՞ս հանեի։ Դիցուկ Էմլին վատ աղջիկ է. բայց որ նրանք այնքան իրար սիրում են։ Երեխան էլ դեռ ոչինչ չգիտի։

Մրս. Ջորեմն այն աստիճան այլայլված էր, որ նրա ամուսինը հարկ համարեց սփոփել նրան։ Ես թողի նրանց ու Պեգգոտիի մոտ գնացի՝ ավելի տխուր, քան թե առաջ։

Այդ բարեսիրտ էակը, ուզում եմ ասել Պեգգոտին, չնայած իր հոգնության, նոր վշտերին, այնքա՜ն անքուն գիշերներին, իր եղբոր մոտ էր գնացել՝ մինչև առավոտ հսկելու համար։ Այժմ նրա տանը բացի ինձնից, մի պառավ աղախին կար, որ երկու-երեք շաբաթ ի վեր կանչվել էր տնտեսությունը վարելու համար, քանի որ Պեգգոտին սաստիկ զբաղված լինելով, չէր կարող ամեն բան անձամբ հոգալ։ Ես ասացի պառավին, որ գնա քնի. նա էլ կարծես հրամանիս էր սպասում։ Երբ նա հեռացավ, ես նստեցի խոհանոցի կրակի առջև, որպեսզի այս բոլոր դեպքերի մասին մի քիչ մտածեմ։

Մինչ մտքերս Բարկիսի մահվան շուրջն էին պտտում և ծովի այն կետի վրա թափառում, ուր Հեմը մի այնպիսի խորհրդավոր հայացք էր նետել, հանկարծ դրսի դռան թեթև թակոցն ինձ սթափեցրեց։ Սակայն լսածս դռան հնչակի ձայնը չէր, այլ մի ձեռքի փափուկ բախյուն, ասես թե եկվորը մի մանուկ լիներ, որ ձեռքը չէր հասնում հնչակին։

Ցնցվելով, վազեցի դուռը բանալու, ինչպես մի մեծատուն մարդու սպասավորի առջև։ Դուռը բացեցի և զարմանքով մի ահագին հովանոց տեսա, որ կարծես թե ինքն իրեն էր շարժում, սակայն փոքր-ինչ հետո նրա տակից միս Մաուչրը դուրս եկավ։

Գուցե ես բարի գալուստ չմաղթեի այդ գաճաճին, եթե նրա երեսի վրա,– երբ իր հովանոցը հազիվ ծալեց, այն էլ միայն իմ օգնությամբ,– այն «թեթևամիտ» արտահայտությունը նկատեի, որ այնքան վրաս ազդել էր մեր առաջին տեսակցության ժամանակ։ Բայց դեպի վեր ուղղված

երեսն այս անգամ այնքան լուրջ էր, և երբ ես նրան հովանոցից ազատեցի, նա իր փոքրիկ թաթիկները մի այնպիսի վշտով ինձ մեկնեց, որ ես ակամա հուզվեցի։

– Միս Մաո՛ւչր,– ասացի ես, նայելով դատարկ փողոցը, ուր ինքս էլ չգիտեի, թե ի՞նչ եմ ուզում նշմարել,– ինչպե՞ս եք այստեղ եկել։ Ի՞նչ եք ուզում։

Նա աջ թաթիկով նշան արեց, որ հովանոցը վերցնեմ, և արագ առաջ անցնելով, խոհանոց մտավ։ Երբ ես դուռը փակեցի ու հովանոցը ձեռքիս բռնած ներս մտա, գաճաճն արդեն նստած էր վառարանի ստորոտի վրա, ուր դրվում էին ափսեներն ու բաժակները, և մի ցավագար մարդու նման ետ ու առաջ ճոճվելով, ծնկներն էր շփում։

Մի այսպիսի անկոչ հյուր, գիշերվա ժամին ուրիշի տանը մեն-մենակ ընդունելուց և հյուրի տարօրինակ շարժումներից շփոթված, կրկին գոչեցի.

– Ասացեք, խնդրեմ, ի՞նչ է պատահել, միս Մաուչր։ Հիվանդ հո չե՞ք։

– Ա՛խ, որդյակ,– ասաց միս Մաուչրը, ձեռքերը կրծքին սեղմելով։– Ահա ցավս այստեղ է, հենց այստեղ։ Օ՛հ, սիրտս կեղեքվում է, երբ մտածում եմ, որ ես կարող էի այդ չար դեպքը գուշակել և գուցե առաջն առնել, եթե այսպես հիմար, այպես ապուշ չլինեի։

Եվ նրա ահագին գլխարկը, որ այնքան անհամաչափ էր իր դեմքին, դարձյալ սկսեց փոքրիկ մարմնի հետ այս ու այն կողմ տատանվել, հսկայական ստվեր գցելով պատի վրա։

– Զարմացած եմ,– ասացի ես,– այդպես լուրջ ու վշտահար տեսնելով ձեզ... – Բայց նա իսկույն խոսքս կտրեց։

– Այո, այդպես է,– գոչեց նա։– Մի՞թե կարող են չինարի պես սիրուն աճած, անհոգ, անվիշտ պատանիները չզարմանալ՝ ինձ նման մի թզուկի մեջ բնական զգացում տեսնելիս։ Դուք սովոր եք տիկնիկ համարել ինձ, հետս խաղալ, ձանձրանալուց հետո դեն ձգել և ապա զարմանալ, որ ես ավելի զգայուն եմ, քան փայտե ձին կամ կապարե զինվորը։ Այո, սըր, աշխարհիս բանը միշտ այդպես է։

– Գուցե ուրիշներն այդպես անեն, բայց ոչ ես, միս Մաուչր։ Թերևս ինձ անվայել էր զարմանք հայտնել ձեր սրտի հուզման վրա, ես ձեզ քիչ եմ ճանաչում։ Բայց հավատացեք՝ խոսքերս ծուռ միտք չունեն։

– Ուրեմն ի՞նչ կհրամայեք, որ անեմ,– պատասխանեց փոքրիկ կինը, վերկենալով ու ձեռքերը պարզելով՝ իր փոքրությունը ցույց տալու համար։– Տեսեք, հայրս էլ ճիշտ այդպես էր, եղբայրս էլ այդպես է, քույրս էլ այդպես։ Այսքան տարի աշխատել եմ եղբորս ու քրոջս համար... չարաչար աշխատել եմ, մր. Կոպպերֆիլդ... և ամեն օր։ Ի՞նչ արած, աշխարհ եմ եկել և պիտի ապրեմ։ Բայց ոչ ոքի վնաս չեմ տվել ու չեմ էլ տալիս։ Իսկ եթե անմիտ և կամ թե անսիրտ մարդիկ մի խաղալիք են դարձրել ինձ, ինչ կմնա ինձ անել, եթե ոչ այն, որ ես էլ ծաղրեմ թե ինձ, թե նրանց, թե ամեն բան։ Ասացեք, ո՞վ է այստեղ հանցավորը։ Մի՞թե ես։

Ոչ։ Պարզ էր, որ հանցավորը միս Մաուչրը չէ։

– Եթե ես մի զգայուն գաճաճ երևայի ձեր խարդախ բարեկամին,– շարունակեց փոքրիկ կինը, վրաս մի հանդիմանիչ ակնարկ գցելով,– ի՞նչ եք կարծում, ի՞նչ օգնություն կամ թե շնորհ ցույց կտար ինձ։ Եթե թզուկ Մաուչրը կարիքից ստիպված, նրան կամ մի ուրիշ նրա նման ջենտլմենի դիմեր, կարծում եք թե իր թույլ ձայնը մի որևէ ունկնդրություն կգտնե՞ր։ Ինչպես չէ։ Թող Մաուչրը թզուկների հետինը լինի և ամենից թշվառը. նա չպիտի ապրի։ Ո՛չ։ Թող նա տանջվի, չարչարվի, մի կտոր հաց մուրալով, մինչև որ սովից հոգին փչի։

Միս Մաուչրը նորից նստեց վառարանի պատվանդանի վրա ու թաշկինակը հանելով, աչքերը սրբեց։

– Եթե ձեր սիրտը բարի է և վստահ եմ, որ բարի է,– ասաց նա,– լավ է զարմանք, որ ես այս թշվառությանը դիմանում եմ և դեռ կարող եմ զվարթ ձևանալ։ Համենայն դեպս, ես գոհ եմ, որ

կարող եմ գոնե մի չնչին ապրուստ ճարել և ոչ ոքի պարտական չլինել, որ կարող եմ խենթ ու խելառ հանաքներով զվարճացնել սնապարծ հիմարներին այն փշրանքի փոխարեն, որ շպրտում են ինձ սեղանից։ Գոհ եմ, որ գլխիս վայ չեմ տալիս, և կարծեմ ոչ մի մարդու չեմ վնասում դրանով։ Իսկ եթե դուք՝ հսկաներդ մի խաղալիք եք համարում ինձ, գոնե շնորհ արեք փոքր-ինչ սիրով վարվել ինձ հետ։

Միս Մաուչրը թաշկինակը գրպանը դրեց ու խեթ-խեթ վրաս նայելով, շարունակեց.

– Ես նոր տեսա ձեզ փողոցում։ Հասկանալի է, որ իմ ոտիկներովս ու կարճ շնչովս չէի կարող ձեր հետևից հասնել, բայց նկատելով, թե ուր մտաք, ես էլ մտա։ Արդեն մի անգամ այսօր եկել էի, բայց բարի կինը տանը չէր։

– Մի՞թե ճանաչում եք նրան։

– Շատ եմ լսել նրա մասին Օմրից ու Ջերոմից։ Առավոտյան ժամը յոթին նրանց մոտ էի։ Հիշո՞ւմ եք, թե ինչ ասաց ինձ Ստիրֆորթն այն դժբախտ աղջկա մասին, երբ ես ձեզ հանդիպեցի պանդոկում։

Միս Մաուչրի ահագին գլխարկն ու գլխարկի էլ ավելի ահագին ստվերը պատի վրա նորից սկսեցին տատանվել, երբ նա այդ հարցումն արեց։

Շատ լավ էի մտաբերում Ստիրֆորթի այն օրվա խոսքերը. ինքս էլ շատ անգամ մտածել էի նրանց մասին դեռ մի քանի ժամ առաջ։ Այդպես էլ ասացի միս Մաուչրին։

– Անիծվի նա,– գոչեց փոքրիկ արարածը, իր ցուցամատը հրացայտ աչքերին մոտեցնելով։ Եվ հազար անեծք մանավանդ նրա անզգամ ծառայի գլխին։ Բայց ես կարծում էի, թե դուք եք այն աղջկան սիրել դեռ մանուկ հասակից։

– Ե՞ս։

– Ա՛յ, մանո՛ւկ, մանո՛ւկ,– աղաղակեց միս Մաուչրը ձեռքերն անհամբեր տրորելով ու նստած տեղում երերալով։– Ինչո՞ւ էիք աղջկան այդքա՛ն գովում, և՛ կարմրում, և՛ շփոթվում։

Չէի կարող ուրանալ, որ նրա ասածը ճշմարիտ է, թեև նա բոլորովին թյուր էր մեկնում թե գովելուս, թե շփոթվելուս պատճառը։

– Ես ինչպե՞ս հասկանայի այդ բոլորը,– ասաց միս Մաուչրը, թաշկինակը նորից հանելով և աչքերը սրբելիս հոգոց հանեց։– Տեսնում էի. նա ձեզ հա՛մ տանջում էր, հա՛մ շոյում, և դուք նրա ձեռքում մոմի նման մի բան էիք, այդ էլ լավ տեսնում էի։ Հենց որ սենյակից դուրս ելա, նրա սպասավորն ինձ ասաց, թե «անմեղ գառնուկը» (ձեզ էր գառնուկ անվանում. դուք էլ միշտ կարող եք նրան սրիկա անվանել) գժի պես սիրահարված է աղջկան, աղջիկն էլ «զարնված է» գառնուկին, բայց թե իր տերը չկամենալով, որ այդ բանից մի հիմար հետևանք առաջանա, հատուկ Յարմաութ է եկել, որ ձեզ վտանգից ազատի։ Ինչպե՞ս չհավատայի այդ բանին։ Տեսնում էի, որ ձեզ դուր էր գալիս, երբ Ստիրֆորթը, ձեզ զգվելով՝ այն աղջկան գովում էր։ Դուք էիք, որ առաջինը աղջկա անունը հիշեցիք և ասացիք, թե վաղուց արդեն հիացած եք նրա վրա։ Դուք էիք, որ երբ ես էլ նրա մասին բան ասացի, սկսեցիք կարմրել ու սփրթնել, սառչել ու տաքանալ։ Մի՞թե կարող էի կարծել, թե դուք մի ցոփ տղա եք, բայց դեռ անփորձ, որին սակայն արդեն փորձված ընկերը դեպի բարին կառաջնորդի։ Օ՜հ, օ՜հ, օ՜հ։ Նրանք վախեցան, թե ես բանի էությունը կհասկանամ,– գոչեց միս Մաուչրը, պատվանդանից վերկենալով և հուսահատ ետ ու առաջ վազվզելով խոհանոցում,– որովհետև ես չարաճճի էակ եմ... և փառավոր կերպով խաբեցին ինձ։ Նրանք ինձ մի նամակ տվին այն թշվառ աղջկան հասցնելու, և ես տարա, և այժմ, օհ, աստված իմ, պարզ տեսնում եմ, որ այդ նամակից սկսվեց աղջկա առաջին խոսակցությունը Լիտտիմերի հետ, որին հատուկ դրա համար էր այստեղ թողել Ստիրֆորթը։

Այս բոլոր նենգությունների մերկացումը լսելով, ես շվարած մնացի, մինչ միս Մաուչրը շնչասպառ ման էր գալիս խոհանոցում. վերջապես նա դարձյալ պատվանդանի վրա նստեց, թաշկինակով աչքերը սրբեց և երկար ժամանակ լուռ մնաց։

– Թափառումներիս միջոցին, մր. Կոպպերֆիլդ,– ասաց նա հետո,– մի երկու օր առաջ Նորուիչ էի գնացել։ Այնտեղ լսեցի, թե պարոնը ու սպասավորը մի քանի անգամ թաքուն եկել գնացել են առանց ձեզ, և այդ հանգամանքը կասկած առաջացրեց իմ մեջ։ Երեկ երեկոյան Նորուիչից Լոնդոն եկող կառքը նստեցի և այս առավոտ Յարմաութ հասա, բայց օ՜հ, օ՜հ, օ՜հ, արդեն ուշ էր։

Խեղճ թզուկը, այս բոլոր տագնապալի հուզումից սարսուռ զգալով, դեպի կրակը շուռ եկավ իր խոնավ ոտիկները չորացնելու համար և մի մեծ տիկնիկի պես անշարժ մնաց, անքթիթ նայելով կրակին։ Ես նստած էի վառարանի մյուս կողմից աթոռի վրա՝ նույնպես դառը մտքերով տարված և մերթ կրակին, մերթ հյուրիս էի նայում։

– Արդեն գնալու ժամանակն է,– ասաց նա ու վերկացավ։– Դուք հո ինձ չե՞ք կասկածում։

Նրա սուր հայացքից ու կարճ հարցումից շփոթվելով, ես միայն մի անվստահ «ոչ» ասացի։

Նա դարձյալ մի խորաթափանց ակնարկ նետեց աչքերիս ու իր թաթիկն ինձ մեկնելով, որ օգնեմ իրեն վերկենալու ասաց.

– Գիտեմ, դուք ինձ չէիք կասկածի, եթե ես սովորական հասակի կին լինեի։

Այդ խոսքերի մեջ շատ ճշմարտություն կար, և ես ինքս ինձնից ամաչեցի։

– Դեռ ջահել եք, սըր,– ասաց նա։– Ականջ դրեք խորհրդիս, երեք ոտնաչափ չնչին թզուկիս խորհրդին։ Սիրելիս, մարդուս մարմնի թերությունները հոգեկան թերությունների հետ մի շփոթեք, մինչև որ մի զորավոր հիմք չունենաք։

Կասկածներս փարատվեցին։ Ես ասացի միս Մաուչրին, թե հավատում եմ իր զգացումների անկեղծությանը, և թե երկուսս էլ անմեղ ու կույր գործիք ենք եղել խորամանկ ու չար մարդկանց ձեռքում։ Նա շնորհակալություն հայտնեց և ասաց, թե ես լավ տղա եմ։

– Էլի մի խոսք,– ասաց նա։– Ականջիս հասած զրույցներին նայելով... գիտեք որ լսողությունս շատ սուր է... հիմք ունեմ ենթադրելու, որ օտար երկիր են գնացել նրանք։ Սակայն երբ էլ վերադառնան, կամ երբ էլ նրանցից մեկն իմ կենդանության ժամանակ վերադառնա, ես ամենից առաջ կիմանամ, որովհետև շրջմոլիկ եմ։ Եվ ինչ էլ իմանամ, ձեզ կհայտնեմ։ Եվ ինչ էլ իմ ձեռքից գա այդ հրապուրված թշվառ աղջկան օգնելու համար, աստծով կանեմ։ Իսկ Լիտտիմերին գալով, որսի շունը նրան այնպես չի հալածի, ինչպես որ կհալածի փոքրիկ միս Մաուչրը։

Տեսնելով միս Մաուչրի ազդեցիկ հայացքը, որով այդ խոսքերին ուժ էր տալիս, ես նրա ասածին լիովին հավատացի։

– Գոնե այնքան հավատացեք ինձ, ինչքան որ կհավատայիք մի սովորական հասակով կնոջ, ոչ ավելի, ոչ պակաս,– ասաց փոքրիկ էակը, աղաչանքով ձեռքիս դիպչելով։– Եթե մի օր կրկին ինձ այնպես տեսնեք, ինչպես որ պանդոկումն էր, և ոչ թե այսօրվա պես, ուշք դարձրեք, թե ի՞նչ ընկերության մեջ կլինեմ։ Հիշեցեք, որ ես մի թշվառ, անօգնական արարած եմ։ Թռեք մտքով միս Մաուչրի տնակը, ուր նա գալիս է իր օրվա գործը պրծնելուց հետո, և տեսեք նրան իր նման փոքր քույրիկի ու իր նման փոքրիկ եղբոր շրջանում։ Այն ժամանակ գուցե փոքր-ինչ ավելի արդար լինեք դեպի ինձ ու չզարմանաք, որ ես էլ ընդունակ եմ լուրջ լինելու և տրտմելու։ Բարի գիշեր։

Այն կարծիքը, որ այժմ ունեի միս Մաուչրի մասին նրա թաթիկը սեղմելիս, է՛լ նման չէր առաջվանին։ Ես օգնեցի նրան դուրս գնալ։ Հեշտ բան չէր այնպես բանալ նրա ահագին հովանոցն ու նրա ձեռքի մեջ հաստատել, որ հավասարակշիռ դիրք ունենա. սակայն այդ ինձ

հաջողվեց և երերալով, հովանոցը բռնած, նա առաջ գնաց անձրևահար։ Ոչ ոք չէր նկատի, թե հովանոցի տակ մարդ կա, եթե ջրհորդաններից թափվող ջուրը մեկ այս կողմ ու մեկ այն կողմ չթեքեր նրան։ Այն ժամանակ էր միայն նշմարվում հովանոցի հետ մաքառելով առաջ գնացող միս Մաուչրը։ Ես մի երկու անգամ դուրս վազեցի նրան օգնելու, բայց հովանոցը փոքր-ինչ հեռանալուն պես՝ նորից սկսում էր գիշատիչ թռչնի նման ոստոստել։ Բոլոր ջանքերս զուր եղան, և ես ետ գալով անկողին մտա ու մինչև առավոտ քնեցի։

Առավոտյան մր. Պեգգոտին ու պառավ դայակս ինձ մոտ եկան, և մենք դիլիժանսների կայարան գնացինք, ուր մրս. Գըմիջն ու Հեմը սպասում էին՝ բարի ճանապարհ մաղթելու մեզ։

– Մաստր Դեվի,– շշնջաց Հեմը, ինձ մի կողմ քաշելով, մինչև մր. Պեգգոտին իր պայուսակն էր տեղավորում հակերի մեջ,– դրա կյանքն արդեն կորած է։ Չի իմանում ո՞ւր է գնում և ի՞նչ է գալու իր գլխին։ Այժմ մի այնպիսի ճամփա է ընկնում, որը ոլոր-մոլոր ձգվելով՝ կարող է մինչև նրա կյանքի վերջը շարունակվել... Հավատացեք, մինչև որ նա իր փնտրածը գտնի։ Հավատացած եմ, մաստր Դեվի, որ դուք նրա հավատարիմ բարեկամը կմնաք։

– Միամիտ եղեք այդ մասին, Հեմ,– ասացի ես, նրա աջը սրտանց սեղմելով։

– Շնորհակալ եմ ձեզնից, շատ շնորհակալ։ Բայց էլի մի բան։ Այժմ ես լավ աշխատանքի մեջ եմ, մաստր Դեվի, և չգիտեմ վաստակածս ինչպե՞ս ծախսեմ։ Այժմ ինձ միայն ապրուստի փող է հարկավոր, մնացածը ավելորդ է։ Եթե դուք, սըր, բարի լինեք առնել ինձնից այս ավելորդն ու նրա համար գործադրել, ես ավելի սիրով կաշխատեմ։ Բայց չկարծեք, սըր, թե հակառակ դեպքում ծուլության կտամ ինքս ինձ։ Ո՛չ։ Ես ամեն ժամանակ կաշխատեմ, ինչպես որ պետք է մի տղամարդու աշխատել, և ձեռքիցս եկածը կանեմ։

Ասացի նրան, թե լիովին համոզված եմ այդ մասին, և ակնարկեցի, թե անշուշտ կգա մի օր, երբ նա այլևս մենավոր կյանք չի վարի, որին այժմ բնականաբար դատապարտված է համարում իրեն։

– Ոչ, սըր,– ասաց Հեմը, գլուխը շարժելով։– Այդպիսի օր էլ չի գա ինձ համար. արդեն անցավ։ Էլ ո՛չ ոք դատարկված տեղը չի բռնի։ Բայց աղաչում եմ փողի բանը չմոռանաք. ես միշտ պատրաստ կունենամ։

Խոստացա չմոռանալ, թեև ավելացրի, թե մր. Պեգգոտին իր քեռայրից մի չափավոր ժառանգություն ստանալով, հազիվ թե դրամի կարիք ունենա։ Այնուհետև հրաժեշտ տվինք իրար։ Ես չեմ կարող, նույնիսկ այստեղ, բաժանվել նրանից առանց նրա համեստ վճռականությունն ու մեծ վիշտը կարեկցությամբ հիշելու։

Իսկ գալով մրս. Գըմիջին, բավական դժվար գործ կլիներ, եթե փորձեի նկարագրել, թե ինչպես նա, իր արտասուքը զուր զսպելով, դիլիժանսի կողքից վազում էր՝ առանց ուրիշ բան տեսնելու, բացի վերևում նստած մր. Պեգգոտիից, և շարունակ բախվում էր իրեն հանդիպող մարդկանց հետ։ Ուստի, լավ է թողնեմ նրան մի հացագործի դռան առջև, ուր շնչասպառ նստեց իր գլխարկով, որի նախկին ձևից էլ ոչ մի հետք չէր մնացել, և ոտքից թռած մի մուճակով, որ ընկել էր մայթի վրա բավական հեռու։

Լոնդոն որ հասանք, մեր առաջին գործը եղավ Պեգգոտիի համար մի փոքրիկ սենյակ վարձել, որ իր եղբայրն էլ մի ջոկ անկյուն ունենար։ Եվ այդպիսի սենյակ, մաքուր ու էժան, շուտով գտանք մի նպարավաճառ մարդու տան վերնահարկում, որ իմ բնակարանից հեռու չէր։ Սենյակը վարձելուց հետո ես մի քանի սառն ուտելիք գնեցի և ուղեկիցներիս ինձ մոտ թեյի հրավիրեցի։ Ցավում եմ, որ հրավերս մրս. Կրոպպին շատ դուր չեկավ։ Նրա տրամադրությունը բացատրելու համար պիտի ասեմ, որ նա դժգոհ էր հատկապես Պեգգոտիից, որ գրեթե ներս մտնելուն պես, իր սև զգեստի փեշերը հավաքելով արդեն սկսել էր ննջարանիս փոշին մաքրել։ Մրս. Կրոպպի ասելով՝ այդ վարմունքը ազատության նշան էր, իսկ ազատություն ասած բանին նա հանդուրժել չէր կարող։

Դեռ Լոնդոն չհասած մր. Պեգգոտին մի բան էր հաղորդել ինձ, որ անսպասելի չէր ինձ համար . նա ուզում էր նախ և առաջ մրս. Ստիրֆորթին տեսնել: Ես պարտք համարեցի իբրև միջնորդ օգնել նրան այս գործում և կամենալով ըստ կարելվույն տիկնոջ մայրական զգացումը խնայել, հենց նույն երեկո մի զգույշ նամակ գրեցի նրան: Բացատրեցի նրան, հնար եղածին չափ մեղմ լեզվով, թե ի՞նչ զրկանք է հասել ձկնորսին, և թե ինքս էլ ո՞ր չափով եմ մասնակից եղել անիրավ գործին: Գրեցի թե նա մի հասարակ մարդ է, բայց ուղղամիտ և ազնիվ, և թե հուսով եմ, որ տիկինը չի զլանա իր մոտ ընդունել այդ բազմավիշտ այցելուին: Վերջապես հայտնում էի, թե գալու ենք նրա մոտ ցերեկվա ժամը երկուսին: Այս տոմսակն ուղարկեցի առավոտյան փոստով:

Որոշված ժամին կանգնած էինք դռան մոտ. . . այն տան առջև, ուր ես դեռ մի քանի օր առաջ այն աստիճան երջանիկ էի: Այդ տունն այժմ հավիտյան ինձ համար փակված էր, մի ամայի անապատ էր, ավերակ:

Լիտտիմերը չէր երևում: Մեզ ընդունեց ու ներս տարավ մի նորատի հաճոյադեմ սպասուհի, որ փոխարինել էր նրան իմ վերջին այցելության ժամանակ: Մրս. Ստիրֆորթը դահլիճումն էր: Մեր մտնելուն պես, սենյակի հակառակ կողմից սահելով առաջ եկավ Ռոզա Դարտլը և նրա բազկաթոռի հետևը կանգնեց:

Մոր երեսից անմիջապես նկատեցի, որ որդին իր արածը նրան հայտնել է: Այդ երեսը շատ գունատ էր և խոր հուզման հետքեր էր կրում, որ դժվար թե կարելի լիներ նամակիս ազդեցության վերագրել, քանի որ մայրական սերն անշուշտ իրեն թելադրած կլիներ գրածներս զգուշությամբ ընդունել: Այժմ նա ինձ շատ ավելի որդուն նման երևաց, քան թե առաջ. և այս նմանությունը իմ ուղեկիցն էլ նկատեց՝ կարծեմ սրտիս, քան աչքիս վկայությամբ:

Տիկինը նստած էր բազկաթոռում վեհական, անշարժ ու անվրդով հանգստությամբ, որ կարծես ոչ մի բանով չէր կարելի խախտել: Նա համարձակ նայեց մր. Պեգգոտիի երեսին, երբ սա կանգնեց նրա առջև. ձկնորսն էլ նախ համարձակությամբ նրան նայեց: Ռոզա Դարտլի սուր աչքերն ընդգրկում էին բոլորիս: Մի քանի վայրկյան ոչ ոք ոչ մի խոսք չասաց: Տիկինը ձեռքով նշան արեց, որ մր. Պեգգոտին նստի: Սա մեղմ ձայնով պատասխանեց.

– Անվայել է ինձ, տիկին, նստել այս տանը: Լավ է ոտքի վրա մնամ:

Դարձյալ մի կարճ լռություն, որ տիկինն այսպես ընդհատեց.

– Խորին տրտմությամբ իմացա ձեր գալու պատճառը: Ի՞նչ եք ոզում ինձանից: Ի՞նչ եք պահանջում, որ անեմ:

Մր. Պեգգոտին իր գլխարկը թևի տակ դրեց և գրպանից Էմլիի նամակը հանելով, բաց արեց ու հանձնեց մրս. Ստիրֆորթին:

– Համեցեք, կարդալ, տիրուհի: Եղբորս աղջկա գործն է:

Տիկինը նամակը կարդաց նույն անխռով ու մեծաշուք սառնությամբ, և կարծես ամենևին տպավորություն չստացավ: Նա ետ տվեց նամակը ձկնորսին:

– «Մինչ որ նա ինձ որպես իր օրինական կինը ետ չբերե»,– ասաց մր. Պեգգոտին, մատը նամակի այդ տողի վրա դնելով:– Եկել եմ, տիկին, իմանալու, թե ձեր որդին իր տված խոսքը կկատարի՞:

– Ո՛չ:

– Ինչո՞ւ ոչ:

– Անկարելի է: Նա կնվաստանար այդ անելով: Ձեզ անհայտ չէ, որ աղջիկը շատ ցածր ծագում ունի:

– Ուրեմն բարձրացրեք նրան:

– Նա անկիրթ է, անուսում։

– Գուցե այո, գուցե ոչ։ Չեմ կարծում, որ այդպես լինի, բայց ես այդ բանի դատավորը չեմ։ Դուք ինքներդ կրթեցեք նրան։

– Քանի որ ստիպում եք, որ ես ավելի պարզ խոսեմ, որ ինձ բնավ ցանկալի չէ, ահա կասեմ. աղջկա ցածր ծագումն անկարելի է դարձնում այդ բանը, անգամ եթե ուրիշ արգելք չլիներ։

– Եթե այդպես է, տիրուհի, լսեցեք ինձ,– պատասխանեց մր. Պեզգոտին լուրջ և հանդարտ եղանակով։– Դուք գիտեք, թե ի՞նչ ասել է զավակ սիրելը։ Ես էլ գիտեմ։ Եթե այդ աղջիկը հարյուր անգամ էլ իմ հարազատ զավակը լիներ, ավելի շատ չէի սիրի նրան։ Դուք չգիտեք՝ թե ի՞նչ ասել է զավակ կորցնելը։ Ես գիտեմ։ Աշխարհիս բոլոր գանձերն էլ իմս լինեին, կտայի, միայն թե նրան ետ ստանայի։ Փրկեցեք նրան այս նախատինքից, և ես երդվում եմ, որ նա երբեք առիթ չի ունենա ամաչելու մեզանից։ Ոչ ոք մեզնից, որոնց շրջանում նա աճել է ու սնվել է, որոնց հետ այսքան տարի ապրել է, որոնք սիրել են նրան իրենց հոգու պես, էլ չի նայի նրա գեղեցիկ երեսին։ Մենք չենք երևա նրա աչքին, և գոհ կլինենք լսելով, թե նա կա, գոհ կլինենք մտածելով, թե ապրում է մի ուրիշ տեղ, մի հեռավոր երկնքի տակ։ Կմխիթարվենք այն հույսով, թե երջանիկ ամուսին է, սիրասուն մայր է... և կսպասենք նրա տեսությանը մինչև այն օրը, երբ բոլորս էլ հավասար կլինենք աստծու առջև։

Մր. Պեզգոտիի անսեթևեթ ճարտասանությունն անազդեցիկ մնաց։ Տիկինը դարձյալ խրոխտ ու գոռոզ էր երևում, բայց ձայնի մեջ մի տեսակ փափկություն կար, երբ որ ասաց.

– Ես ոչ մի բան չեմ արդարացնում, ոչ մի մեղադրանք չեմ անում, միայն թե ցավելով կկրկնեմ, որ դա անհնարին բան է։ Մի այդպիսի ամուսնություն կարող է ընդմիշտ որդուս ասպարեզը փչացնել, նրա ապագան ոչնչացնել։ Այդպիսի բան չի կարող լինել, և հաստատ կասեմ՝ բնավ երբեք չի լինի։ Եթե ուրեմն մի ուրիշ հատուցում կամենաք...

– Ձեր դեմքին նայելիս,– վրա բերեց մր. Պեզգոտին, հրացայտ աչքերը տիկնոջ երեսին բևեռելով,– ես հիշում եմ մի ուրիշ դեմք, որ նայում էր ինձ իմ տանը, իմ վառարանի դիմաց, իմ նավի մեջ և ամեն տեղ... բայց միշտ ժպտուն ու բարեհամբույր, մինչ այնքան սև դավաճանության մտքեր էր թաքցնում, որ նրա մասին մտածելիս քիչ է մնում կատաղեմ։ Եթե այդ դեմքին նմանվող դեմքը չի ամաչում, ամոթից չի կարմրում, երբ ուզում է փող տալ ինձ միակ զավակիս կործանման ու կորստյան փոխարեն, ուրեմն այդ դեմքն էլ վատթար է, և գուցե ավելի վատթար, որովհետև կնոջ դեմք է։

Տիկինը հանկարծ փոխվեց։ Նրա երեսի բոլոր գծերը ցասման բոցով վառվեցին, և նա զայրույթից աթոռի բազուկներն ամուր բռնելով ասաց.

– Իսկ դուք ի՞նչ հատուցում կտաք ինձ այն անդունդի փոխարեն, որ բացել եք որդուս և իմ միջև։ Ի՞նչ է ձեր սերն իմ առջև։ Ի՞նչ կարժե ձեր անջատվելը մերի համեմատությամբ։

Միս Դարտլը նրա ուսին թեթև դիպավ և մի ինչ-որ բան շշնջաց նրան. սակայն տիկինը չուզեց լսել։

– Ոչ, Ռոզա, էլ ոչ մի խոսք։ Թող այդ մարդը մինչև վերջ լսի ինձ։ Իմ որդին կյանքիս միակ նպատակն էր. բոլոր մտքերս միայն նրան էին նվիրված. նրա փափագներից և ոչ մեկը չի մերժվել. իր ծնվելու օրից ես առանց նրա չեմ ապրել և այդ որդին հանկարծ կապվում է մի թշվառական աղջկա հետ և փախչում ինձնից։ Նրա սիրուն շարունակ խաբել է ինձ և նրա պատճառով՝ թողել է ինձ։ Այդ անարգ կրքին նա զոհում է իր մոր հարգանքը, սերը, մեծարանքը, երախտագիտությունը, այս սրբազան պարտքերը, որոնք օրեցօր և ժամ առ ժամ ամրանալով, պիտի ամեն մի գայթակղության դիմադրեին։ Մի՞թե այս բոլորը նախատինք չէ։

Դարձյալ Ռոզա Դարտլը փորձեց նրան մեղմացնել, և դարձյալ իզուր։

– Կրկնում եմ, Ռոզա, էլ ոչ մի խոսք։ Եթե նա ընդունակ է այս բոլորն ուրանալ մի քմահաճ բերմունքով, ես էլ իմ պարտքը կուրանամ մի ավելի զորեղ դրդումով։ Ուր ուզում է թո գնա,

սիրուս շնորհիվ ձեռք բերած միջոցներով։ Մի՞թե կարծում է, թե կընկճի ինձ իր երկարատև բացակայությամբ։ Եթե այդպես է, ասել է թե նա իր մորը շատ քիչ է ճանաչում։ Թող իսկույն այդ գարշ կրքից հրաժարվի, և իմ դռները իր առջև նորից կբացվեն։ Իսկույն ևեթ թող հրաժարվի, այլապես՝ թող մյուս անգամ չերևա ինձ, ո՛չ կենդանի, ո՛չ մեռած։ Այս ձեռքս միշտ ուժ կունենա նրան մերժելու, մինչև որ նա բոլորովին դեն ձգե այդ աղջկան և խոնարհաբար ինձ մոտ չգա ներողություն խնդրելու։ Այս է իմ իրավունքը։ Այս է իմ պահանջած պայմանը։ Այլ կերպ ես չեմ հաշտվի նրա հետ։ Ահա մեր մեջ ընկած անջատումը։ Եվ մի՞թե սա նախատինք չէ,– կրկնեց նա, նորից մի ամբարտավան հայացք նետելով իր հյուրի վրա։

Բարկացած մոր այս խոսքերը լսելիս՝ ինձ թվում էր, թե լսում ու տեսնում եմ որդուն՝ նրա դեմ հայացքով սպառնալիս։ Այն ըմբոստ ու համառ ոգին, որ հատուկ էր որդուն, պարզ երևում էր և մոր մեջ։ Որդու զորեղ, բայց խեղաթյուրված բնավորությունը ճանաչելով, մոր բնավորությունն է՛լ ավելի լավ ճանաչեցի ու տեսա, որ երկուսն էլ հավասար չափով ամեհի են։

Այժմ նա ինձ դիմեց և առաջվա սառն հպարտությամբ բարձրաձայն ասաց, թե ապարդյուն է համարում այլևս մի խոսք ասել կամ լսել, և կցանկանար այս տեսակցությանը վերջ դնել։ Նա հանդիսաբար վերկացավ, որ սենյակից հեռանա։ Պեգգոտին ասաց, թե հեռանալն ավելորդ է։

– Մի կարծեք, տիկին, թե ես ձեզ նեղություն կտամ,– ասաց նա, դեպի դուռը ետ քաշվելով։– Ուրիշ ասելիք էլ չունեմ։ Անհույս էի այստեղ եկել, անհույս էլ կերթամ։ Ես այն արի, ինչ որ պետք է անեի, բայց իմ գալուց ոչ մի բարիք չէի սպասել։ Այս տունը ինձ և իմ բոլոր գերդաստանին այնքան չարիք է հասցրել, որ հիմարություն կլիներ մի որևէ բան որոնել սրա մեջ։

Ասաց, և մենք դուրս ելանք, թողնելով տիկնոջը բազկաթոռի մոտ կանգնած, ինչպես ազնվաշուք ու գեղադեմ մի արձան։

Մեզ պետք էր անցնել մի սալահատակ սրահից, որի ապակյա պատերն ու հարկը պատուտակներով էին պատված։ Արեգակի ճառագայթները դեռ կանաչ տերևների վրա ցոլում էին և պարտեզ տանող զույգ դռները բաց էին։ Ռոզա Դարտլը շեմքի մոտ կամաց մոտեցավ մեզ և ասաց, դառնալով ինձ.

– Ի՛նչ լավ արիք, որ այստեղ բերիք այդ մարդուն։

Մի այդպիսի ատելություն ու կատաղություն, որ նրա ամբողջ դեմքը մթագնելով դուրս էր ցայտում սև սաթի պես աչքերից, չէի կարծի թե կարող է արտահայտվել անգամ Դորայի երեսի վրա։ Մուրճի հարվածից առաջացած սպին, որ սովորաբար նրա գրգռելու միջոցին էր երևան գալիս, այժմ պարզորոշ կերպով աչքի էր ընկնում։ Երբ իր սրտի զայրույթը սպիի վրա էլ բորբոքվեց, նա շտապեց շուրթերն ու կզակը ձեռքով ծածկել, որ ես այդ սպին չտեսնեմ։

– Լավ ասպետ եք գտել կռվի համար, չէ՞։ Իրավ որ շատ հավատարիմ ընկեր եք։

– Միս Դարտլ,– ասացի ես,– անշուշտ անիրավ չեք լինի, որ ինձ դատապարտեք։

– Ինչո՞ւ եք զժտություն ձգում այն երկու խելագար արարածների միջև,– գոչեց նա։– Մի՞թե չգիտեք, որ եկուսն էլ գժված են իրենց համառ ու գոռոզ ոգուց։

– Ես ինչով եմ մեղավոր,– պատասխանեցի։

– Եթե դուք չեք, հապա ո՞վ,– վրա բերեց Ռոզան։– Ինչո՞ւ համար այստեղ բերիք այդ մարդուն։

– Դա սաստիկ վիրավորված մի մարդ է, միս Դարտլ։ Այդ բանը գուցե չգիտեք։

– Գիտեմ, որ Ջեյմս Ստիրֆորթը,– ասաց նա, ձեռքը կրծքին դնելով, ասես դրա մեջ ալեկոծվող փոթորիկը զսպելու համար,– մի խարդախ, ապականված սիրտ ունի։ Գիտեմ որ նա դավաճան է։ Սակայն ինչի՞ս է պետք այդ մարդն ու դրա ռամիկ եղբոր աղջկան ճանաչելը։

– Դուք սաստկացնում եք, միս Դարտլ, դրան հասած նախատինքը, որ արդեն ինքնին շատ դառն է։ Ի վերջո միայն այն կասեմ, որ նրա դեմ սաստիկ մեղանչում եք։

– Մեղանչո՞ւմ,– պատասխանեց միս Դարտլը։– Դրանք վատթար, անարգ էակներ են։ Օ՜հ, ինչպես կուզենայի մտրակով ծեծել այդ աղջկան։

Մր. Պեգգոտին առանց մի խոսք ասելու անցավ մեր մոտից ու դուրս գնաց։

– Ամոթ ձեզ, ամոթ, միս Դարտլ,– ասացի ես զայրանալով։– Ձեր սիրտը մի՞թե քար է, որ վստահանում եք ոտնակոխ անել այդ անմեղ մարդու տառապանքը, սուրբ վիշտը։

– Երանի թե կարողանայի բոլորին էլ տրորել, ճմլել ոտքիս տակ,– պատասխանեց միս Դարտլը։– Կուզենայի հիմնահատակ անել դրա տունը, երկաթով խարանել այն աղջկա դեմքը, ցնցոտիք հագցնել նրան ու դուրս քշել, որ սոված սատկի փողոցում։ Եթե ես դատելու իրավունք ունենայի, կվճռեի, որ այդպես անեն։ Անե՞ն, ոչ։ Ես ինքս անձամբ կանեի։ Ատում եմ նրան, գարշում եմ նրանից։ Պատրաստ եմ նույնիսկ մինչև աշխարհի ծայրը գնալ, միայն թե կարենայի նրա վատթար ընթացքը խայտառակել։ Պատրաստ եմ, եթե հնար լինի, մինչև գերեզմանը հալածել նրան։ Եթե հոգևարքի րոպեին մի որևէ խոսքով կարելի լինի սփոփել նրան, և միայն ես այդ խոսքը գիտենամ, սպանեն էլ՝ չեմ ասի։

Այս լուտանքների սաստկությունը միայն մի թույլ արտահայտություն էր այն կրքի, որ եռ էր գալիս նրա սրտում և ամբողջ մարմինը կտտում, թեև ձայնը փոխանակ բարձրանալու՝ իջել էր։ Այնպես նկարագրել այդ էակի մոլեգնությունը, ինչպես որ նա կենդանի է մտքիս մեջ, անզոր եմ։ Մարդկային կրքերի շարժման ձևեր շատ եմ տեսել, բայց այդպիսին՝ ոչ երբեք։

Մր. Պեգգոտին ծանրաքայլ ու մտախոհ ներքև էր իջնում սանդուղքով։ Ես հասա նրան, և նա ինձ ասաց, թե իր անելիքը Լոնդոնում արդեն ավարտած լինելով, մտադիր է հենց նույն գիշերը ճանապարհ ընկնել։

– Բայց դեպի ո՞ւր,– հարցրի ես։

– Գնում եմ եղբորս աղջկան փնտրելու,– ասաց նա և ուրիշ պատասխան չտվեց։

Վերադարձանք նպարավաճառի վերևի սենյակը։ Այնտեղ ես առիթ գտա Պեգգոտիին հայտնելու, ինչ որ լսել էի եղբորից։ Նա էլ չգիտեր, թե եղբայրը ո՞ւր է գնալու, բայց համոզված էր, թե անպատճառ մի բան մտածած կլինի։

Այսպիսի հանգամանքներում ինձ դժվար էր մր. Պեգգոտիից բաժանվել, և մենք միասին վայելեցինք այն մսով կարկանդակը, Պեգգոտիի հանճարին պատիվ բերող երևելի խորտիկը, որի համը, ինչպես հիշում եմ, ավելի ախորժ էր դարձել ներքևի կրպակից դեպի վեր բուրող թեյի, սուրճի, կարագի, պանրի, թարմ հացի, սունկի սոուսի խառն հոտերի շնորհիվ։ Ճաշից հետո մի ժամի չափ նստած մնացինք պատուհանի մոտ առանց երկար խոսելու, հետո մր. Պեգգոտին վերկացավ և իր մոմլաթե պայուսակն ու հաստ գավազանը բերելով, երկուսն էլ սեղանի վրա դրեց։

Քրոջ պատրաստի փողերից նա ի հաշիվ տոկոսների մի փոքրիկ գումար վերցրեց, որ իմ կարծիքով իր մեկ ամսվա ծախսերին կբավականացներ։ Նա խոստացավ՝ ինչ էլ պատահի գրել ինձ. հետո պայուսակը գցեց ուսին, գլխարկն ու գավազանը առավ և մեզ ասաց. «Բարով մնաք»։

– Աստված քեզ անփորձ պահի, ա՛յ բարի կին,– ասաց նա, համբուրելով քրոջը։– Նույնպես և ձեզ, մաստր Դեվի։ (Նա իմ աջն ամուր սեղմեց։) Աստծու օրհնությունը ձեր վրա լինի։ Գնում եմ նրան որոնելու՝ հեռու, հեռու այստեղից։ Եթե նա իմ թափառման միջոցին ետ գա... բայց ա՛խ, դժվար թե դա... կամ թե ես նրան ետ բերեմ, այնուհետև նա ու ես միասին կապրենք ու միասին կմեռնենք մի այնպիսի տեղ, ուր ոչ ոք չկարողանա կշտամբել նրան։ Եթե գլխիս մի որևէ փորձանք գա, իմացեք, որ վերջին խոսքերս կլինեն. «Անփոփոխ սեր եմ թողնում իմ սիրասուն զավակին և ներում եմ նրան»։

Այդ խոսքերը նա ասաց հանդիսաբար, գլխաբաց, հետո գլխարկը հագավ ու սանդուղքով ներքև իջավ։ Մենք նրան մինչև դրսի դուռը հետևեցինք։ Տաք ու փոշոտ երեկո էր։ Կառքերի ու հետիոտն անցորդների անվերջ անցուցարձը փոքր-ինչ դադարել էր այդ միջոցին, և երկինքը մայր մտնող արեգակի շառագույն լույսով շողշողում էր։ Մր. Պեգգոտին մեն-մենակ մինչև մեր մթին փողոցի անկյունը գնաց և լույսի հոսանքի մեջ մտնելով, անհետացավ մեր աչքից։

Երբ էլ դրանից հետո այդ երեկոյան ժամը հասնում էր, գիշերվա որ ժամին էլ զարթնում էի, երբ է՛լ լուսնին կամ աստղերին էի նայում, և կամ երբ էլ անձրևի ու հողմի շառաչման ականջ էի դնում՝ միտքս էր գալիս այդ միայնակ խեղճ պանդուխտի պատկերն ու խոսքերը.

«Գնում եմ նրան որոնելու՝ հեռու, հեռու այստեղից։ Եթե գլխիս մի որևէ փորձանք գա, իմացեք, որ վերջին խոսքերս կլինեն՝ անփոփոխ սեր եմ թողնում իմ սիրասուն զավակին և ներում եմ նրան»։

ԺԳ. ԳԼՈՒԽ
Երջանիկ

Այդ ժամանակ իմ սերը դեպի Դորան ավելի ու ավելի աճում էր։ Նրա մասին մտածելը մի մխիթարություն էր վշտերիս մեջ և նույնիսկ ամոքիչ դարման ընկերոջս կորստյան ցավի դեմ։ Ինչքան շատ էի ինձ և կամ ուրիշներին ափսոսում, այնքան ավելի էր ինձ սփոփում Դորայի սիրուն պատկերը։ Ինչքան շատ էին կուտակվում աշխարհիս պատրանքերն ու տագնապները, այնքան ավելի ջինջ էր փայլում Դորայի աստղը աշխարհիս վրա։ Չեմ կարծում, որ մի որոշ պատկերացում ունենայի, թե որտեղի՞ց էր Դորան ծնունդ առել, և կամ ո՞ր աստիճան ազգակից էր գերբնական էակներին. գիտեմ միայն, որ եթե մեկն ինձ ասեր, թե նա լոկ մի մարդկային արարած է, ինչպես և ամեն մի օրիորդ, այդ գաղափարը ես բարկությամբ կմերժեի։

Ես ընկղմված էի Դորայի մեջ, եթե կարելի է այսպես ասել։ Բավական չէ, որ նրա սիրո մեջ ես ոտքով գլխով լողում էի, այլև բոլորովին տոգորված էի այդ սիրով։ Այլաբանորեն ասած, եթե իմ միջից սեր քամեին, կարելի կլիներ, այնքան քամել, որ ով էլ ասես մեջը խեղդվեր, և դեռ իմ ներսում և իմ շուրջը այնքան սեր կմնար, որ դրանով ամբողջ գոյությունս կսքողվեր։

Վերադառնալուս պես իմ առաջին գործը այն եղավ, որ գիշերային զբոսանքի ելա դեպի Նորվուդ, ու Դորայի մասին մտածելով, սկսեցի մանկական օրերս հանելուկի ասածի նման՝ «տան շուրջը պտույտ գալ՝ առանց տանը դիպչելու»։ Կարծում եմ, որ այդ խրթին հանելուկի լուծումը լուսինն էր։ Ինչ էլ որ լիներ, ես Դորայի լուսնոտ գերին էի՝ շրջափակի ճեղքերից ներս նայելով, դրա կատարի սուր մեխերից ահագին դժվարությամբ կզակս վեր բարձրացնելով, պատուհանների լույսին ջերմ համբույրներ առաքելով երկու ժամի չափ նրա պարտեզի ու տան շուրջը ման եկա և գիշերային եթերին ասպետորեն աղերսեցի պաշտպանել Դորային. . . ինքս էլ չգիտեմ թե ինչի՞ց,– գո՞ւցե կրակից, բայց գուցե և մկներից, որոնցից սաստիկ վախենում էր։

Իմ մտքերի վրա սերն այնպես էր տիրացել, և Պեգգոտիի առջև սիրտս բանալու կարիքը այնքան բնական էր, որ մի երեկո, երբ նա իր կարի սովորական պարագաներով սպառազինված՝ իմ շորերն էր մեկ-մեկ աչքի անցկացնում, ես մի անորոշ առաջաբանից հետո՝ գաղտնիքս հայտնեցի նրան։ Պեգգոտին սաստիկ հետաքրքրվեց. սակայն ես չկարողացա այնպես անել, որ նա էլ բանի էությունն իմ աչքով դիտեր։ Նա բոլորովին նախապաշարված էր իմ օգտին և ընդունակ չէր ըմբռնելու, թե ինչո՞ւ եմ վհատվում կամ կասկածում։ «Բանը պարզ է,– ասաց Պեգգոտին։– Օրիորդը երջանիկ է, որ քեզ նման սիրուն պաշտող է գտել։ Իսկ հորը գալով, ասացեք խնդրեմ, էլ ի՞նչ է ուզում այդ ջենտլմենը»։

Ես նկատեցի, սակայն, որ մր. Սըպնլոյի պրոկտրական պարեգոտն ու քարի պես կարծր օձիքը Պեգգոտիին մի թեթև վարանք են պատճառում և մի տեսակ հարգանք ազդում դեպի նրա անձը, իսկ իմ աչքում այդ մարդը օրեցօր մի վեհ էակ էր դառնում, և երբ ես նրան տեսնում էի ատյանում, նա կարծես թե մի փոքրիկ փարոսի պես լուսաճաճանչ շողք էր սփռում իր շուրջը, թղթերի, ծրարների, գրիչների ու թանաքի համատարած ծովի մեջ։ Հիշում եմ նաև, որ երբ ես էլ նստած էի լինում գերագույն դատավորների խմբի մեջ, զարմանքս գալիս էր, թե ինչո՞ւ նրանք անտարբեր են դեպի Դորան, ինչո՞ւ ոչ ոք չէր բորբոքվում նրա հետ ամուսնանալու փափագով, ինչո՞ւ ոչ ոք չի հափշտակվում նրա թովչական կիթառով, նրա դյութական նվագով, մինչդեռ ես համարյա թե գժված էի։ Օ՜վ անզգա, թմրած մարդիկ։

Ատեցի նրանց, բոլորին էլ ատեցի։ Սրտի ծաղկոցում սառած այդ պառավ պարտիզպանները զզվելի դարձան ինձ համար։ Դատարանն իմ աչքում մի անմիտ, հիմար բան դարձավ, մինչև անգամ նախագահի աթոռն իր բանաստեղծական հրապույրը կորցրեց և մի պանդոկի նստարանի պես ստորացավ։

Պեգգոտիի գործերի տեսչության պարտքն անձամբ հոգալով (ոչ առանց հպարտության), ես նրա մարդու կտակը վավերացնել և արձանագրել տվի հրիտակների դիվանում, ինքս անձամբ բանկ տարա այն և ամեն բան կարգի բերի։

Այդ պաշտոնական զբաղմունքներից թեթևանալու համար մի անգամ գնացինք մոմե պատկերների սրահը տեսնելու, ուր նրանք այժմ հալված կլինեն. մյուս անգամ մտանք միս Լինվուդի կար ու ձևի ցուցահանդեսը, որ ապաշխարհության ու զղջման մավսոլիոնի պես բան էր. մի օր էլ Լոնդոնի երևելի Տաուրը[58] և վերջապես ս. Պողոսի գմբեթը բարձրացանք։ Այս բոլոր հրաշալիքները բավական զվարճացրին վշտահար դայակիս, բայց նրա ասելով՝ ս. Պողոսի գմբեթը թեև կարող էր մրցել գեղարվեստի տեսակետից, իր ձեռագործի վրա փայլող նկարի հետ, սակայն դրանից փոքր-ինչ ետ կմնար։

Պեգգոտիի ժառանգության գործերը, որոնք Դոկտորների Համայնքում «հասարակ ու ձևական» էին կոչվում (բայց և այնպես շատ շահավետ), վերջացնելուց հետո՝ մի առավոտ ես նրան մր. Սպընլոյի գրասենյակը տարա, ուր պետք է դիվանական մաքսը վճարեր։ Մր. Սպընլոն այնտեղ չէր։ Թիֆըն ասաց, թե գնացել է ամուսնության իրավունք տալու մի ջենտլմենի։ Ես գիտեի, որ շուտով կվերադառնա, և խնդրեցի Պեգգոտիին, որ սպասի։

Մենք՝ համայնքում ծառայողներս որևէ կտակ հաստատելիս մի քիչ նման էինք մեռել թաղող բանվորների, որովհետև մեզ համար կանոն էինք գրել, թե պետք է տխրադեմ երևալ, երբ մեր ատյանը սգավորներ են գալիս, և ընդհակառակը՝ զվարթադեմ, երբ եկողներն ամուսնության թեկնածուներ են[59]։ Այս պատճառով ես դայակիս ակնարկեցի, թե նա մր. Սպընլոյի երեսին այլևս չի տեսնի այն տրտմության կնիքը, որ նա ընդունել էր մր. Բարկիսի մահվան գույժն առնելիս. և իրոք, մր. Սպրլոն փեսայի պես զվարթ ներս մտավ։

Սակայն ո՛չ Պեգգոտին ժամանակ գտավ նրա երեսը դիտելու, ո՛չ էլ ես, երբ տեսանք, որ նրա հետ միասին մր. Մեորդստոնը ներս մտավ։ Այդ պարոնը շատ քիչ էր փոխվել։ Մազերն առաջվա պես խիտ ու սև էին, հայացքն էլ այնքան կասկածելի, որքան և անցյալում։

– Ա՛հ, Կոպպերֆիլդ,– ասաց մր. Սպընլոն։– Կարծեմ ճանաչո՞ւմ եք այս ջենտլմենին։

---

[58] Tower — աշտարակ։ Այդպես է կոչվում Ուիլյամ Աշխարհակալի 1078 թվին կառուցված բանտը, որ այժմ պետական զինանոց է, գանձարան և թանգարան։

[59] Եթե ծնողները ամուսնությանը հակառակ լինեն, փեսան պարտավոր է իրավունք խնդրել Դոկտորների Համայնքից, ուր նա պիտի երդվի, թե հարսը չափահաս է, թե նրա ու հարսի մեջ մոտավոր ազգակցություն չկա, թե նա մի ուրիշ կին չունի, և այլն։ Մյուս դեպքում այդպիսի թույլտվություն հարկավոր չէ։

Ես սառը կերպով գլուխ տվի նրան, իսկ Պեգգոտին իբր թե բնավ չճանաչեց։ Մր. Մեորդստոնը մեզ միասին տեսնելուն պես ինքն էլ փոքր-ինչ շփոթվեց, բայց իսկույն ինքն իրեն տիրեց ու մոտենալով ինձ ասաց.

– Ինչպե՞ս եք, առո՞ղջ եք։

– Հազիվ թե այդ բանը ձեզ համար հետաքրքիր լինի,– պատասխանեցի ես։– Սակայն եթե կամենում եք իմանալ, այո, առողջ եմ։

Մենք իրար նայեցինք, հետո նա Պեգգոտիին դիմեց։

– Իսկ դուք ինչպե՞ս եք,– ասաց նա։– Շատ ցավում եմ, որ ձեր ամուսնուց զրկվել եք։

– Դա առաջին կորուստը չէ, որ կրում եմ կյանքումս, մր. Մեորդստոն,– պատասխանեց Պեգգոտին, ամբողջ մարմնով դողալով։– Սակայն գոհ եմ, որ այս նոր կորուստիս համար ոչ ոքի մեղադրելու պատճառ չունեմ... որ այս բանում ոչ ոք հանցավոր չէ։

– Ա՛հ,– ասաց մր. Մեորդստոնը։– Այդ մեծ սփոփանք է։ Ասել է, թե ձեր պարտքը կատարե՞լ եք։

– Այո, ես ոչ ոքի կյանք չեմ թունավորել, փառք աստծու,– ասաց Պեգգոտին։– Ո՛չ, մր. Մեորդստոն, ես ոչ մի բարեհոգի արարած չեմ չարչարել, չեմ լլկել ու գերեզման իջեցրել։

Մր. Մեորդստոնը նրա վրա մի մռայլ հայացք գցեց, որի մեջ կարծեմ խղճահարություն էր երևում, և հետո ինձ դառնալով, փոխանակ երեսիս՝ ոտքերիս նայելով ասաց.

– Հավանական է, որ մենք շուտով իրար չհանդիպենք... և անշուշտ երկուսիս համար էլ այդ լավ կլինի, որովհետև այսպիսի հանդիպումներն ախորժելի բաներ չեն։ Դուք միշտ ըմբոստ էիք իմ իրավունքի իշխանության դեմ, որը ես միայն ձեր օգտի համար էի գործ դնում. ուրեմն հույս չունեմ, որ այժմ բարեկամություն ցույց տաք ինձ։ Մեր միջև մի այնպիսի հակակրություն կա...

– Եվ կարծեմ շատ հին,– մեջ բերի ես։

Նա ժպտաց ու վրաս մի չար ակնարկ նետեց, որ հատուկ էր միայն իր սև աչքերին։

– Արդեն ձեր մանկական սրտում այդ կիրքը եռում էր,– ասաց նա։– Դա էր, որ ձեր խեղճ մոր կյանքը թունավորեց։ Հուսով եմ, սակայն, որ դեռ կուղղվեք։

Այսպես վերջացավ մեր կիսաձայն խոսակցությունը մր. Սպընլոյի գրասենյակի առաջին մասի մի անկյունում. հետո մր. Մեորդստոնը մյուս մասը մտավ ու բարձր ու ողոքիչ ձայնով ասաց.

– Ձեր կոչման մարդիկ, մր. Սպընլո, սովոր են ընտանեկան վեճեր լսել և գիտեն, թե որքան դրանք խառն ու կնճռոտ բաներ են։

Այս ասելով նա իր խնդրած թույլտվության արժեքը վճարեց և գեղեցիկ ծալված արտոնագիրը մր. Սպընլոյից ստանալով, դուրս գնաց։ Պրոկտրը նրան ճանապարհ դնելիս, աջը սեղմեց և ամեն տեսակ բարիք մաղթեց թե՛ նրան և թե՛ նրա նշանածին։

Դժվար կլիներ ինձ պատասխան չտալ մր. Մեորդստոնի վերջին խոսքերին, եթե հարկը չստիպեր ինձ համոզել դայակիս (որ միայն իմ պատճառով էր զայրացել), թե մր. Սպընլոյի գրասենյակը կռիվ անելու հարմար տեղ չէ, և աղաչել, որ հանգիստ մնա։ Բայց կինն այն աստիճան գրգռված էր մեր կրած հին զրկանքները հիշելով, որ իր սիրտը թեթևացնելու համար մր. Սպընլոյի ու գրագիրների ներկայությամբ սկսեց ինձ համբուրել։

Մր. Սպընլոն կարծեմ ոչինչ չգիտեր մր. Մեորդստոնի և իմ հարաբերությունների մասին, և ես գոհ էի այդ բանից, որովհետև ինձ համար հեշտ չէր ազգական համարել այդ մարդուն, ինչպես որ ստիպված էի անել խեղճ մորս պատմությունը գրելիս։ Մր. Սպընլոն երևի մտածեր. եթե միայն որևէ բան մտածեց, թե տատս մի պետական կուսակցության պարագլուխ է մեր

տանը՝ հակառակ մյուս կուսակցության, որի ըմբոստ առաջնորդը մի ուրիշ մարդ կլինի։ Գոնե այդպես հետևեցրեցի նրա խոսքերից, մինչ մր. Թիֆըն դատական ծախքերի հաշիվն էր գրում Պեգգոտիի համար։

– Միս Տրոտուդը մի հաստատակամ տիկին է,– ասաց նա,– և իհարկե հակադիր կուսակցությանը տեղի չի տա։ Ես հիացած եմ նրա բնավորության վրա և շնորհավորում եմ ձեզ, մր. Կոպպերֆիլդ, որ դուք օրինավոր կողմն եք կանգնած։ Ընտանեկան գժտությունները, որքան էլ դրանք ցավալի լինեն, ամենօրյա երևույթներ են, և այդպիսի դեպքերում գլխավոր բանը արդարության կողմը բռնելն է։

Եթե չեմ սխալվում, ուզում էր ասել՝ հարստության կողմը բռնել։

– Ջենտլմենը մի լավ կին է առնում,– ասաց մր. Սպընլոն։

Պատասխանեցի, թե այդ մասին ոչինչ չգիտեմ։

– Իրա՞վ,– ասաց նա։– Դատելով մր. Մեորդստոնի խոսքերից... որ մարդիկ հեշտ են փախցնում բերանից այպիսի պարագաների մեջ... և ի նկատի առնելով միս Մեորդստոնի ասածները, պետք է կարծել, թե շատ ձեռնտու պսակ է։

– Ուզում եք ասել, թե բանի մեջ դրամական շա՞հ կա։

– Այո,– ասաց մր. Սպընլոն,– նախ և առաջ դրամական։ Բացի այդ՝ հարսն էլ, ասում են, գեղեցիկ է։

– Մի՞թե։ Գուցե և ջահե՞լ։

– Դեռ նոր է չափահաս դարձել, և կարծեմ հենց այդ բանին էին սպասում։

– Աստված գթա ու փրկե նրան,– գոչեց Պեգգոտին։

Եվ այնպես սրտանց ու հանկարծ գոչեց, որ բոլորս էլ շվարած մնացինք։

Վերջապես Թիֆըն հաշիվը բերեց ու մր. Սպընլոյին հանձնեց։ Մր. Սպընլոն կզակը հանդարտ շփելով, թվանշանները սկսեց կարդալ և խոժոռ դեմք ընդունելով հոգոց հանեց – կարծես թե շատ դժգոհ էր ագահ Ջորկինսի նշանակած գներից։ Նա Թիֆըին ետ տվեց հաշիվն ու ասաց.

– Այո, ամեն բան ճիշտ է, կանոնավոր է։ Ես շատ կցանկանայի, Կոպպերֆիլդ, մի քիչ գները իջեցնել, բայց ի՞նչ անեմ... պաշտոնիս դառնությունն էլ հենց այս է, որ սրտիս ուզածը չեմ կարող անել։ Գիտեք, որ ընկեր ունեմ, և նրան մր. Ջորկինս են ասում։

Այս բոլորը մր. Սպընլոն մի այնպիսի ցավով ասաց, որ իր վեհանձնության մասին կասկածել անգամ չէր կարելի։ Ես Պեգգոտիի կողմից շնորհակալություն հայտնեցի նրան և փողը Թիֆըին տվեցի։ Այնուհետև Պեգգոտին տուն գնաց, իսկ մր. Սպընլոն ու ես ատյան մտանք։

Այդ օրը ատյանում մի պսակալուծության գործ պիտի քննվեր իմաստուն օրենքի հիման վրա, որ այժմ գուցե ջնջված լինի, բայց որի զորությամբ իմ օրով շատ ու շատ պսակներ են լուծվել։ Ահա՛ թե ինչումն էր այդ օրենքի արժանիքը։ Թոմաս Բենջեմինը իրավունք էր ստացել պսակվելու լոկ Թոմաս անունով. նա լավ էր համարել պաշտոնական թղթում Բենջեմինը բաց թողնել, թերևս կարծելով, թե ամուսնական վիճակը իր սպասած հաճույքները չի բերի։ Եվ իրոք՝ ողորմելին ակնկալած հաճույքները չի գտնում. մի երկու տարի ապրելուց հետո, իր կնոջից ձանձրանում է և դատարան գալով ասում է, թե իր անունը Թոմաս Բենջամին է, հետևաբար ինքը երբեք ամուսնացած չի եղել։ Եվ ատյանը հաստատում է, որ այդպես է, և մարդն անչափ գոհ է մնում։

Պիտի ասեմ, որ այդ վճռի արդարությունը կասկածելի երևաց, բայց մր. Սպընլոյի կարծիքն ուրիշ էր։

– Տեսեք, բարեկամ,– ասաց նա։– Աշխարհումս չարն ու բարին իրարից անբաժան են. մեր եկեղեցական օրենքումն էլ նրանք իրար հետ լծակից։ Սա մի ընթհանուր դրության հետևանք է։ Շատ լավ։ Էլ ի՞նչ եք ուզում։

Համարձակություն չունեցա Դորայի հորը ասելու, որ գուցե կարելի լիներ գեթ փոքր-ինչ բարեփոխել աշխարհը, եթե առավոտներն ավելի վաղ վերկենայինք ու թևերը տոթցած՝ աշխատանքի ձեռք զարնեինք, բայց և այնպես հայտնեցի, թե կարող էինք շատ բան փոխել Դոկտորների Համայնքում։ Մր. Սպընլոն խորհուրդ տվեց այդ գաղափարը մտքիցս հանել, որովհետև ինձ նման ջենտլմենին անվայել էր։

– Այնուամենայնիվ, կցանկանայի իմանալ,– ասաց նա,– թե ինչ տեսակ բարվոքումներ կարելի էր մտցնել Դոկտորների Համայնքում։

Բենջեմինի ամուսնությունն արդեն լուծված էր, և մենք ատյանից դուրս գալով մոտեցել էինք Արտոնությանց դիվանին, որ կտակները պահելու տեղիք էր։ Ի պատասխան մր. Սպընլոյի հարցման՝ հարմար գտա ակնածությամբ (ոչ այնքան նրա փորձառությունից, ինչքան որ Դորայի հայրը լինելուց) ասելու, թե, օրինակի համար այդ Արտոնությանց դիվանը մի անմիտ բան է։ Ահա երեք դար է, որ դրա մեջ պահվում են Կենտրբըրիի ահագին թեմում կալվածք ունեցող բոլոր անձանց կտակները։ Այնինչ Դիվանի տունը մի պատահական, հին ու անպետք շինություն է և արձանագրող պաշտոնյաների բնակարան է դարձել։ Հրդեհից անգամ ապահովված չի, և մի թեթև անզգուշություն բավական է, որ նրա մեջ հիմքից մինչև առաստաղն անկարգ դիզված կարևոր թղթերն իսպառ այրվեն ու կորչեն։ Շահասեր արձանագրողների միակ հոգսը ոչ այլ ինչ է, եթե ոչ ահագին փողեր պոկել ժողովրդից և դեսուդեն խցկել կտակները, որ շուտով աչքից հեռացնեն։

– Արդյոք չի՞ կարելի,– ասացի ես,– որ այդ արձանագրողները, որոնցից յուրաքանչյուրը տարեկան ութ-ինը հազար ստեռլինգ է ստանում, առանց հաշվելու օգնականների ու գրագիրների եկամուտը, մի որոշ գումար հատկացնեին մի առանձին ապահով տուն շինելու այդ թանկագին թղթերի համար, որ յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է նրանց հանձնել։ Արդյոք անիրավություն չէ՞, որ հաստատության բոլոր բարձր պաշտոնները փառավոր ռոճիկ տվող, բայց աշխատանք չպահանջող պաշտոններ են, մինչդեռ վերին հարկի սառն ու մութ սենյակներում չարաչար մաշվող գրագիրներն ամենաչնչին ռոճիկ են ստանում և ահագին գործ հոգալով հանդերձ՝ գրեթե անհայտ են Լոնդոնին։ Արդյոք մի անվայել բան չէ՞, որ առաջին արձանագրողը, որի բուն պարտքն է թեթևացնել ատյան դիմող բազմության դրությունը, իր վիթխարի թոշակը քիչ համարելով, դեռ ձգտում է ուրիշ մեծահասույթ եկեղեցական պաշտոններ էլ ձեռք բերել, մինչդեռ ժողովուրդն ամեն օր անասելի տանջանք է կրում դիվանական սենյակներում։ Մի խոսքով,– վերջացրի ես,– Կենտրբըրիի թեմի Արտոնությանց դիվանը մի այնպիսի ժանգոտած, վնասակար ու խայտառակ հաստատություն է, որ վաղուց նրան հիմնահատակ կանեին, եթե նա ս. Պողոսի գերեզմանատան մի խուլ անկյունում թաքնված չլիներ։

Մր. Սպընլոն ծիծաղեց, երբ ես այս մտքերս արծարծելիս տաքացա, և հետո սկսեց այդ խնդիրն էլ մյուսի պես լուսաբանել։

– Ի՞նչ է հետևում այդ բոլորից,– ասաց նա։– Դա զգացման հարց է։ Եթե հասարակությունն զգում է, որ իր կտակներն ապահով են ու դիվանը լավ է խնամված, ո՞ւմ վնաս կլինի։ Հարկավ ոչ ոքի։ Ո՞վ կշահի։ Բոլոր ձրիակեր պաշտոնյաները։ Շա՛տ լավ։ Ուրեմն օգուտն ավելի է, քան վնասը։ Գուցե դրությունը կամ սիստեմը կատարյալ չէ. կատարյալ բան աշխարհում չկա։ Բայց ես երբեք թույլ չէի տա, որ տապար դնեն նրա արմատին։ Արտոնությանց դիվանը մեր երկրի պարծանքն է։ Խախտեցեք այն, և Անգլիան իր փառքից կզրկվի։

Մր. Սպընլոյի կարծիքով յուրաքանչյուր ջենտլմենի պարտքն էր ամեն բան այնպես ընդունել, ինչպես որ կա, և նա մի վայրկյան չէր կասկածում, թե Արտոնությանց դիվանն էլ մեր օրով նույնը կմնա, ինչպես որ է։ Ես համաձայնեցի նրա կարծիքին, թեև մեծ երկբայությամբ։ Վերջ ի

վերջո նրա ասածը ճշմարիտ դուրս եկավ, որովհետև Արտոնությանց դիվանը դեռ մնում է, չնայած տասնութ տարի առաջ Պառլամենտին մատուցած տեղեկագրին, ուր մի առ մի հիշված էին իմ զորավոր փաստերը և ապացուցված, որ մի երկու տարուց հետո էլ հնար չի լինի մի որևէ կտակ դնել թղթերով խճողված դիվանում: Արդյոք այնուհետև ի՞նչ արին, գրված կտակների հետ և ու՞ր դրին. դե՞ն գցեցին, թե երշիկ վաճառող կրպակներին վաճառեցին, չգիտեմ: Համենայն դեպս, ես գոհ եմ, որ իմ կտակն այնտեղ չի լինի:

Այս շեղումը ներկա երջանիկ գլխում դրի, և կարծեմ իր բնական տեղում դրի: Մր. Սպընլոն ու ես ետ ու առաջ ման գալով այս նյութի մասին երկար խոսեցինք, մինչև որ անցանք ավելի ընդհանուր առարկաներին: Վերջապես նա ինձ ասաց, թե մի շաբաթից հետո Դորայի ծննդյան տարեդարձն է, և թե շատ ուրախ կլինի, եթե ես էլ գամ իրենց պիկնիկին[60] մասնակցելու: Անմիջապես խելքս թռավ, իսկ հետևյալ օրը, երբ մի սիրուն տոմսակ ստացա, թե «Հայրիկիս հաճությամբ, հիշեցնում եմ»,– խելագարությունս ավելի սաստկացավ, և մնացած օրերը զառանցանքի մեջ անցկացրի:

Կարծեմ էլ անհեթեթ բան չմնաց, որ չանեի այդ երջանիկ տոնի համար պատրաստվելիս: Դեռ այսօր էլ կարմրում եմ, զնած փողպատս հիշելով: Կոշիկներս համարձակ կարելի էր տանջանքի գործիքների ո՛ր թանգարանը կամենար դնել: Տոնի նախօրեին մի փոքրիկ զամբյուղ ճարեցի, որ արդեն ինքնըստինքյան սիրո հայտարարության հավասար էր, և Նորվուդի կառքով ուղարկեցի: Մեջը կային թխվածքներ ու քաղցրավենիք՝ այնպիսի քնքուշ նշանաբաններով, որոնց նմանը դժվար թե գտնվեր Լոնդոնում: Արդեն առավոտյան ժամը վեցին Կովընտ Գարդնի շուկայումն էի՝ մի ծաղկեփունջ ջոկելու Դորայի համար: Ժամը տասին արդեն սլանում էի դեպի Նորվուդ՝ մի պատվական գորշ ձի հեծած, որը հատկապես վարձել էի այդ դեպքի առիթով և սլանում էի՝ փունջը գլխարկիս կապած, որպեսզի դեռ չթառամած՝ հասցնեմ Դորային:

Երբ ես Դորային պարտեզում տեսա ու չտեսնել ձևացնելով, տան արջևով արշավեցի, իբր թե տունը որոնելով, երկու փոքրիկ հիմարություն արեցի, որ կարծեմ կաներ և ամեն մի ուրիշ երիտասարդ, եթե իմ տեղը լիներ,– այնքա՛ն դրանք բնական էին: Բայց երբ վերջապես տունը գտա, պարտեզի դռնակի մոտ ձիուց իջա, հոգեհան կոշիկներովս մարգից անցա ու Դորային մոտեցա, որ մի եղրևանի ծառի տակ նստած էր, օ՛հ, նա որքա՛ն սիրուն էր այն պայծառ առավոտյան՝ թիթեռնիկների մեջտեղում, իր սպիտակ գլխարկով ու երկնագույն զգեստով:

Նրա մոտ մի ջահել տիկին էր նստած՝ որ մոտ քսան տարեկան կլիներ: Անունն էր միս Միլս, իսկ Դորան նրան Ջուլիա էր անվանում: Նա Դորայի մտերիմն էր: Երջանի՛կ միս Միլս:

Ջիպն էլ այնտեղ էր և Ջիպը դարձյալ վրաս հաչեց: Ջիպը նախանձից ատամները կրճտացրեց, երբ որ փունջս մատուցեցի: Ո՞ւր կհասներ նրա զայրույթը, եթե գիտենար՝ որքան եմ պաշտում իր տիրուհուն:

– Օ՛հ, շնորհակալ եմ, մր. Կոպպերֆիլդ: Ինչ հիանալի ծաղիկներ են,– ասաց Դորան:

Մտադիր էի ասել (և ասելիքս արդեն երեք ժամ առաջ անգիր էի արել), թե ես էլ փունջը հիանալի էի գտնում, քանի որ չէի տեսել այն իր ձեռքին, բայց լեզուս կապվեց: Դորան անչափ հրապուրիչ էր: Տեսնել նրան փնջիկն իր կարմրիկ այտին մոտեցնելիս և սքանչացումից ուշք ու միտք և որևէ բան ասելու ձիրք չկորցնել – անհնարին էր: Զարմանում եմ, թե ինչպե՞ս չգոչեցի. «Սպանեցե՛ք ինձ, ով միս Միլս, եթե միայն գութ ունեք: Թողեք մեռնեմ հենց այստեղ»:

Հետո Դորան ծաղիկներս Ջիպին տվեց հոտոտելու: Ջիպը մռմռաց ու չուզեց հոտ քաշել: Դորան փունջը շան դնչին սեղմեց, որ հոտոտի: Այն ժամանակ Ջիպն ատամներով մի կոնկենու ճյուղ թրցրեց ու բզկտեց, ասես թե բռնածը մի կատու լիներ: Հետո Դորան Ջիպին խփեց ու սաստ. «Ափսո՛ս իմ սիրուն ծաղիկներ», բայց այնպես գթոտ ասաց, որ կարծես շնիկն ինձ կծած լիներ: Երանի թե այդպես լիներ:

---

[60] Pic-nic – դաշտային հրավերք, հացկերույթ:

– Ուրախացեք, մր. Կոպպերֆիլդ,– գոչեց Դորան։– Այն ձանձրալի միս Մեորդստոնն այստեղ չէ։ Գնացել է իր եղբոր հարսանիքին և գոնե երեք շաբաթ մեզնից հեռու կմնա։ Ա՛յ սքանչելի բան։

Ասացի, թե իհարկե նրա համար այդ սքանչելի է, և ինչ որ նրա համար սքանչելի է, անշուշտ ինձ համար էլ սքանչելի է։ Միս Միլսը երկուսիս էլ մի գերազանց իմաստության ու հաճության ժպիտ շնորհեց։

– Չեք կարող երևակայել՝ ինչ զզվելի արարած է այն կինը,– ասաց Դորան։– Չես հավատա, Ջուլիա, թե ո՛ր աստիճան չար ու դաժան է։

– Ինչո՞ւ ես կարծում, թե չեմ հավատա,– ասաց Ջուլիան։– Շատ էլ լավ կհավատամ։

– Այո, դու իհարկե կհավատաս,– ասաց Դորան, աջը նրա ուսին դնելով։– Ներիր սիրելիս, որ քեզ հաշվից դուրս չհանեցի։

Այդ խոսքերից հետևեցրեցի, թե միս Միլսն իր բազմածուփ կյանքի ընթացքում արդեն բավական փորձված կլինի, և այդ հանգամանքին վերագրեցի նրա բարեմիտ զգոնությունը։ Եվ հենց նույն օրը ստուգեցի, որ ենթադրությունս հիմնավոր է. միս Միլսը դժբախտություն էր ունեցել անհույս սիրո զոհ դառնալու, և թեպետ այդ դառն ու դժվար փորձի պատճառով աշխարհից հրաժարվել էր, բայց երիտասարդների վառ սիրուն համակրելուց չէր դադարել։

Ահա մր. Սպընլոն տանից դուրս եկավ։ Դորան վազելով դիմավորեց նրան և ասաց.

– Տե՛ս, հայրիկ, ինչ հրաշալի ծաղիկներ են։

Եվ միս Միլսը մտախոհ ժպտաց, կարծես թե ուզելով ասել. «Օ՛հ, գարնան սիրուն ծաղիկներ, վայելեցեք ձեր վաղանցուկ գոյությունը կյանքի պայծառ արշալույսին»։ Եվ բոլորս միասին մարգը թողնելով կառքին մոտեցանք, որ արդեն պատրաստ էր։

Այդպիսի զբոսանք դեռ չէի արել, հետո էլ երբեք չեմ արել։ Կառքում նստած էին միայն նրանք երեքով. մեջն էր նաև նրանց զամբյուղը, իմ զամբյուղն ու Դորայի կիթառը, իսկ կառքը հարկավ բաց էր, և ես ձիս քշում էի հետևից և կառքի առաջում նստած Դորան ինձ էր նայում։ Փունջս դրված էր նրա աջ կողմը՝ բարձիկի վրա, և նա Ջիպին թույլ չէր տալիս այդ կողմում նստել, որպեսզի ծաղիկները չտրորի։ Դորան շուտ-շուտ վերցնում էր փունջն ու հոտ քաշում։ Եվ այդ միջոցին մեր աչքերը գրեթե միշտ իրար էին հանդիպում, և ես բնավ չեմ հասկանում, թե ինչպե՞ս եղավ, որ ես ոչ մի անգամ գորշ ձիուս գլխի վրայով կառքի մեջ չնետվեցի։

Ճանապարհը կարծեմ փոշոտ էր և կարծեմ շա՛տ փոշոտ։ Թույլ կերպով հիշում եմ միայն, որ մր. Սպընլոն ինձ խորհուրդ էր տալիս կառքի փոշուց մի քիչ հեռու պահել ձիուս, բայց ես փոշի չէի տեսնում։ Տեսնում էի միայն սիրո ու գեղեցկության մշուշով պատած Դորային, ուրիշ ոչինչ։ Մր. Սպընլոն երբեմն տեղից վեր էր կենում հարցնելու համար, թե ինչպես եմ գտնում տեսարանը։ Տեսարանը հրաշագեղ էր, ասում էի ես, և գուցե այդպես էր, բայց իմ աչքին Դորայից բացի ոչ մի բան չէր երևում։ Արեգակի շողը Դորա էր, թռչունների երգն էլ՝ Դորա։ Զեփյուռը Դորա էր շշնջում, դաշտի բոլոր ծաղիկներն էլ՝ կոկոններով միասին, ոչ այլ ինչ էին, եթե ոչ Դորա։ Մեծ սփոփանք էր սրտիս համար, որ միս Միլսը լիովին ինձ հասկանում է։ Միայն միս Միլսն էր զգացումներիս խարքը թափանցելու ընդունակ։

Չգիտեմ, մեր արշավը որքա՞ն տևեց, այսօր էլ չգիտեմ՝ մեր արշավի տեղը ո՞րն էր։ Գուցե Գիլֆորդի շրջակայքը։ Գուցե արաբական հեքիաթներից վերցված այդ կախարդական տեղը միայն մեկ օրորով էր բացվել ու մեր վերադառնալուց հետո ընդմիշտ ծածկվել։ Դա մի կանաչ ու զառիվեր մարգագետին էր՝ շուրջանակի խիտ ծառերով ու թփերով զարդարուն. մի հոյակա՛պ դաշտանկար։

Դժնդա՛կ բան էր մեզ սպասող մարդիկ գտնել այդ տեղում. կանայք անգամ իմ նախանձը շարժում էին, և այս նախանձն անսահման էր։ Իսկ իմ սեռի էակները, և հատկապես այն

հանդուգն խաբեբան, որ փոքր-ինչ ինձնից տարիքով էր և շարունակ իր շիկագույն մորուքով էր պարծենում, մահու չափ թշնամի երևացին ինձ։

Բոլորս էլ մեր զամբյուղները բաց արինք ու սկսեցինք սփռոցը փռել։ Շիկամորուքը պարծենալով ասաց (և իհարկե սուտ ասաց), թե լավ աղցան շինել գիտի, և դրանով ամենքի ուշադրությունը գրավեց։ Օրիորդներից ոմանք նրա համար հազար[61] լվացին և նրա ցուցումով կտրատեցին։ Դորան էլ նրանց թվում էր։ Զգացի, որ ճակատագիրը այդ մարդուն իմ դեմ ախոյան է դարձրել, և մեզնից մեկը պիտի ընկնի։

Շիկամորուքի սալաթը պատրաս էր… Չեմ հասկանում ինչպե՞ս կարելի էր ուտել այն։ Ես դիպչել անգամ չէի ուզում։ Այնուհետև, նա ինքն իրեն ընդհանուր մատռվակ հռչակեց, և անպիտանն այնքան հնարագետ էր, որ ամբողջ գինին մի հին ծառի խոռոչում, ինչպես մի մառանում պահեց։ Փոքր-ինչ հետո խեցգետնի մեծագույն մասն իր պնակի մեջ դրեց և սկսեց ուտել նույնիսկ Դորայի ոտքի տակ։

Ի՞նչ պատահեց այդ անախորժ տեսարանից հետո, լավ չեմ հիշում։ Գիտեմ միայն, որ զվարթ էի, սակայն զվարճությունս շինծու էր։ Ես ջոկել էի կարմրազգեստ, փոքր աչքերով մի օրիորդի և սաստիկ աշխատում էի նրա սիրտը գրավել։ Նա սիրով էր պատասխանում ջանքերիս, բայց թե արդյոք ի՞նձ դուր գալու, թե Շիկամորուքին գրգռելու համար, չգիտեմ։ Դորայի կենացն առաջարկեցին։ Այդ բաժակը դատարկելիս ես կեղծեցի, թե միայն դրա համար եմ խոսակցությունս ընդհատում, և իսկույն սկսեցի նորից խոսել։ Դորային արևշատություն մաղթելիս՝ նրա հայացքն աղերսական երևաց աչքիս, բայց նա Շիկամորուքի գլխի վրայով նայեց դեպի ինձ, և ես ժայռի պես անողոք մնացի։

Կարմրազգեստ օրիորդը կանաչազգեստ մայր ուներ, և այդ մայրը բաժանեց մեզ՝ ո՞վ գիտե՝ ինչ խորամանկ դիտավորությամբ։ Սակայն այդ իսկ րոպեին բոլորն էլ սկսեցին վերկենալ ու ճաշի մնացորդը հավաքել։ Ես զայրացած ու հուսահատ՝ ծառերի տակ թափառելու գնացի, և մինչ մտածում էի – արդյոք հիվա՞նդ ձևանամ և գորշ ձիս նստեմ ու փախչեմ… ինքս էլ չգիտեմ՝ դեպի ո՞ւր… Դորան ու միս Միլսը մոտեցան ինձ։

– Մր. Կոպպերֆիլդ,– ասաց միս Միլսը,– տխո՞ւր եք։

– Ամենևին, ներեցեք։

– Իսկ դո՞ւ, Դորա,– ասաց միս Միլսը,– դու հո տխո՞ւր ես։

– Բնավ ոչ։ Չեմ էլ մտածել տխրելու։

– Մր. Կոպպերֆիլդ և Դորա,– ասաց միս Միլսը գրեթե հանդիսավոր եղանակով։– Բավական է։ Մի չնչին թյուրիմացության պատճառով թույլ մի տվեք, որ թառամեն այդ գարնան ծաղիկները, որոնք մի անգամ թոշնելուց հետո էլ չեն բացվի։ Ես անցյալիս փորձից եմ խոսում, անդառնալի անցյալիս… Լույս աշխարհ դուրս ցայտող կենդանի ջրի աղբերակը ներելի չէ լոկ անձնական քմահաճույքով փակել. ներելի չէ Սահարայի զովացուցիչ օազիսն անհոգությամբ ավերել։

Ի՞նչ եղավ ինձ չգիտեմ։ Ամբողջ մարմինս կրակ ընկավ, խելքս թռավ, սակայն ես Դորայի թաթիկը բռնեցի ու համբուրեցի և նա թույլ տվեց։ Հետո միս Միլսի աջը համբուրեցի, և կարծեմ բոլորս միասին ուղղակի յոթերորդ երկինքը բարձրացանք։

Եվ էլ չիջանք այնտեղից։ Մնացինք այնտեղ մինչև երեկո, զբոսնելով այնտեղ ծառերի տակ, ես ու Դորան թև-թևի տված, և որքան էլ հիմար թվա այս բոլորը, ո՞վ գիտե – գուցե գերերջանիկ դառնայինք, եթե հանկարծ այս ամիտ զգացումներով անմահանայինք և հավիտյա՛ն ծառերի մեջ ման գայինք։

---

[61] Լատիներեն՝ lactuca։

Բայց, ավա՛ղ, մեր ականջին շատ շուտով ծիծաղի ձայներ հասան, և մենք լսեցինք. «Դորա, ո՞ւր է Դորան»: Հարկ եղավ վերադառնալ, և հասարակությունը փափագ հայտնեց, որ Դորան երգի: Շիկամորուքն արդեն պատրաստ էր կիթառը կառքից բերել. բայց Դորան ասաց, թե կիթառի տեղը միայն ես գիտեմ: Այս անգամ Շիկամորուքն ամոթով մնաց, և կիթառը ե՛ս բերի, ե՛ս տուփից հանեցի, ե՛ս հանձնեցի Դորային, ե՛ս նստեցի նրա կողքին, ե՛ս բռնեցի նրա թաշկինակն ու ձեռնոցները, և ե՛ս էի, որ հարբեցի նրա ձայնի քաղցրիկ ելևեջներով, և ե՛ս էի այն սիրելին, որի համար նա երգեց: Թող ուրիշները որքա՛ն ուզեին ծափ տային, ուրիշներն ի՞նչ կապ ունեին այդ երգի հետ:

Ես ուրախությունից գինովցել էի: Այս բոլորն ինձ մի թովչական երազ էր թվում: Ես վախենում էի, թե այս երազը շուտով կհալածվի Բուկինգեմի փողոցում մրս. Կրոպպի բաժակների չխչխկոցից, որ նա հանելու էր ինձ համար ընթրիք բերելիս: Սակայն Դորան երգում էր, մյուսներն էլ երգեցին, միս Միլսն էլ երգեց «Հիշատակի քարայրում նիրհող արձագանքի» մեղեդին, հենց իմանաս մի հարյուրամյա պառավ լիներ. երեկոն վրա հասավ, և մենք սկսեցինք թեյ խմել, գնչուների պես ջուր եփելով ծառի տակ, և ես լիովին երջանիկ էի:

Ես ավելի ևս երջանիկ էի, երբ ամենքս վեր կացանք և մյուսները սկսեցին ցրվել պարտված Շիկամորուքի հետ միասին: Մենք մեր ճամփով վերադարձանք: Մի անդորր երեկո էր: Օդը լի էր մայր մտնող արեգակի ոսկեփայլ շողերով ու ծաղիկների անուշ բուրմունքով: Մր. Սպընլոն շամպայնից փոքր-ինչ թմրած, նիրհել էր կառքի անկյունում: Օրհնվի այն հողը, ուր բուսնում է որթատունկը, օրհնվի նրա խաղողը, օրհնվի նրան հասունացնող արևը, օրհնվի նրա ողկույզների հյութը քամող մշակը և օրհնվի այդ հյութը խարդախող գինեվաճառը: Մր. Սպընլոն նիրհել էր, և ես կառքի մոտով արշավում էի և Դորայի հետ զրուցում: Նա հիանում էր ձիուս վրա և իր քնքուշ մատիկներով նրա վիզը շոյում (օ՛հ, երջանիկ չորքոտանի): Երբեմն էլ Դորայի շալը չէր կամենում նրա ուսի վրա հանգիստ մնալ և պետք էր լինում, որ ես անձամբ իմ ձեռքով ուղղեմ այն: Կարծեմ Ջիպն էլ վերջ ի վերջո հասկացել էր, թե ի՞նչ է կատարվում, և որոշել էր կամա թե ակամա հաշտվել ինձ հետ:

Եվ որքա՛ն բարի էր այն իմաստուն միս Միլսը, այն սիրելի ու սրտագետ ճգնավորը, որ արդեն քսանամյա հասակում աշխարհից հրաժարվել էր և ոչ մի պատճառով չէր ուզում «Հիշատակի քարայրում նիրհող արձագանքը» զարթնեցնել:

– Մր. Կոպպերֆիլդ,– ասաց միս Միլսը,– խնդրեմ մի րոպե այս կողմ անցեք... եթե կարող եք շնորհել ինձ մի րոպե: Ձեզ ասելու բան ունեմ:

Թե տեսնեիք՝ ինչպե՛ս շուռ տվի ձիու գլուխը և միս Միլսի կողմն անցնելով, ձեռքս ոնց կառքի դռնակին դրի:

– Դորան մտադիր է, մր. Կոպպերֆիլդ, հյուր գալ ինձ մոտ վաղը չէ մյուս օր: Եթե դուք էլ շնորհ բերեք, հայրիկս շատ ուրախ կլինի՝ ձեզ տեսնելու համար:

Ի՞նչ կարող էի անել, եթե ոչ լռիկ մաղթել, որ երկնքի օրհնությունը միս Միլսի գլխին իջնի, և նրա հասցեն հիշողությանս ամենաածածուկ անկյունում փակել: Ի՞նչ կարող էի անել, եթե ոչ միայն ամենաջերմ խոսքերով ասել, թե անչափ շնորհապարտ եմ իր բարեսեր ծառայության համար և մեծապես գնահատում եմ նրա ազնիվ մտերմությունը:

Այնուհետև միս Միլսը քաղցր ժպիտով արձակեց ինձ ու ասաց.

– Այժմ Դորայի կողմը գնացեք:

Եվ գնացի: Ու Դորան կառքից դուրս թեքվեց հետս խոսելու, և մենք ամբողջ ճանապարհին զրուցում էինք, և ես իմ ձին կառքի անիվին այնքան մոտիկ էի քշում, որ նրա առջևի մի ոտքի կաշին քերծվեց, և մյուս առավոտյան տերն ասաց, թե ձիու ոտքից «երեք ստեռլինգ ու յոթ շիլինգի կաշի է քերթվել»,– որը և իսկույն վճարեցի, մտածելով որ դա մի չնչին գին է այնքան մեծ ուրախության փոխարեն: Այդ միջոցին միս Միլսը լուսնին էր նայում, ոտանավորներ մրմնջում երևի այն հին օրերը հիշելով, երբ նա ու երկիրը դեռ իրարից չէին բաժանվել:

Նորվուդը շատ շուտ մոտեցավ մեզ, և մենք շատ շուտ հասանք նրան. բայց մր. Սպընլոն ավելի վաղ սթափվեց և ասաց. «դուք ներս կգաք, Կոպպերֆիլդ, և կհանգստանաք»: Ես էլ մտա, և մենք սենդուիչ, գինի ու ջուր վայելեցինք: Վարդագույն Դորան լուսավոր սենյակում այնպես էր փայլում, որ չէր կարելի պոկ գալ նրանից, և ես ակնապիշ նրան նայելով նստած էի, և նստած էլ կմնայի, եթե մր. Սպընլոյի հազը բավական պարզ չհիշեցներ, թե արդեն մեկնելու ժամամանակն է: Հրաժեշտ տվի ու հեռացա, և դեպի Լոնդոն արշավելիս ձեռքիս մեջ զգում էի Դորայի աջի սեղմումն ու հազար անգամ մտաբերում նրա ասած ամեն մի բառը: Եվ վերջապես, երբ անկողին մտա, ես նման էի մի հափշտակված պատանու, որ սիրո տենդից բոլոր հինգ զգայարաններն էլ կորցրել է ու խենթացել:

Երբ առավոտյան վեր կացա, որոշեցի սերս Դորային հայտնել և ճակատագիրս իմանալ: Երջանիկ լինել կամ թշվառ – այս էր այժմ խնդիրը: Դրանից զատ մի ուրիշ խնդիր ինձ համար չկար աշխարհումս, և պատասխանը միայն Դորան կարող էր տալ: Երեք օր, երեք գիշեր սարսափելի տանջանքի մեջ անցկացրի և ինքս ինձ չարչարեցի, հազար տեսակ վհատական մեկնություն տալով այն բոլորին, ինչ որ պատահել էր մեր միջև: Վերջապես այդ առիթով վայելուչ կերպով պճնվելու համար ահագին ծախս անելուց հետո՝ միս Միլսի մոտ գնացի:

Ավելորդ է պատմել, թե քանի՜ անգամ վեր ու վար անցա փողոցով և հրապարկի շուրջը պտույտ եկա, մինչև որ սիրտ արի ձեռքս միս Միլսի դռան հնչակին դնելու: Եվ երբ վերջ ի վերջո քաշեցի, մի վայրկյան մտքովս անցավ (խեղճ Բարկիսին հետևելով) հարցնել – արդյոք սա չէ՞ մր. Բլեկրոյի բնակարանը, ներողություն խնդրել ու կորչել: Բայց այդ հիմարությունը չարի:

Մր. Միլսը տանը չէր: Չէր էլ սպասվում, թե կլինի: Եվ ո՞ւմն էր նա հարկավոր: Բավական էր, որ տանն է միս Միլսը:

Ինձ վերևի դահլիճը առաջնորդեցին, ուր նստած էին միս Միլսն ու Դորան: Ջիպն էլ այնտեղ էր: Միս Միլսը նոտաներ էր արտագրում (դա «Սիրո համերգ» անունով մի նոր ռոմանս էր). Դորան ծաղիկներ էր նկարում, և այն իսկ ծաղիկները, որ գնել էի Կովընտ Գարդնի շուկայում: Չեմ կարող ասել, թե նմանությունը շատ մեծ էր և կամ թե այդպիսի ծաղիկներ երբևէ տեսած լինեի, բայց փաթեթի թուղթը շատ ճիշտ էր ընդօրինակված:

Միս Միլսը շատ ուրախացավ ինձ տեսնելով ու շատ ափսոսաց, որ իր հայրը տանը չէ, թեև կարծեմ բոլորս էլ կարող էինք այդ բացակայությանը բավական արիությամբ դիմնալ: Միս Միլսը մի քանի րոպե մեր խոսակցությանը մասնակցեց և հետո իր գրիչը «Սիրո համերգի» վրա դնելով, վեր կացավ ու դուրս գնաց:

Սկսեցի մտմտալ, թե արդյոք ասելիքս վաղվան չթողնե՞մ:

– Անցյալ երեկո ձեր ձին կարծեմ շատ հոգնեց,– ասաց Դորան, սիրուն աչքերը բարձրացնելով:– Ճանապարհը շատ երկար էր նրա համար:

Սկսեցի մտածել, թե լավ կլիներ ասելիքս իսկույն ասել:

– Այո, նրա համար շատ երկար էր,– ասացի ես,– որովհետև ճանապարհին նա կազդուրիչ սփոփանք չուներ:

– Մի՞թե խեղճին ուտելու բան չէին տվել,– գոչեց Դորան:

Մտքովս անցավ, թե լավ կլինի հետաձգել մյուս օրը:

– Ինչպես չէ. . . շատ էլ կուշտ էր,– ասացի ես:– Ոգում էի միայն ակնարկել, թե նա զուրկ էր այն անասելի երջանկությունից, որ ես էի զգում ձեր կողքին արշավելիս:

Դորան գլուխը նկարին մոտեցրեց և մի կարճատև լռությունից հետո (որի ժամանակ ես տենդով այրվում էի և ոտքերս քարացել էին) ասաց.

– Կարծեմ դուք էլ օրվա մի մասում այդ երջակություն շատ չէիք զգում. . .

Տեսա, որ ճգնաժամը հասել է և իսկույն պետք է ճակատագիրս որոշել։

– Ամենևին չէր երևում, որ դուք այդ երջանկության մասին շատ էիք մտածում. . . երբ միս Կիտտի մոտ էիք նստած,– ասաց Դորան, հոնքերը թեթև կիտելով ու գլուխը շարժելով։

Պետք է ասել, որ միս Կիտտը կանաչազգեստ մայրիկի կարմրազգերստ դստրիկն էր։

– Թեև չգիտեմ, չեմ էլ ուզում իմանալ, թե ինչո՞ւ եք երջանկություն անվանում այդ,– ասաց Դորան։– Ինքներդ էլ երևի չգիտեք, թե ի՞նչ եք ասում։ Սակայն թե ի՛նչ էլ ասեք, ի՛նչ էլ անեք, ինձ համար բոլորը մեկ է։ Ջի՛պ, անպիտան տղա, աստեղ եկ։

Չգիտեմ, թե ինչպե՞ս արի, բայց ամեն բան մի վայրկյանում վերջացավ։ Ես Ջիպի ճանապարհը կտրեցի։ Ես Դորայի վզով փարվեցի։ Ես ճարտասանության շնորհ ստացա։ Բառերն իմ շրթունքից հոսում էին։ Ես ասացի Դորային, թե սիրում եմ նրան։ Ես ասացի, թե կմեռնեմ առանց նրա։ Ես ասացի, թե պաշտում եմ նրան։ Ջիպն անդադար կտրտվելով հաչում էր։

Երբ Դորան գլուխը կախեց ու դողալով լաց եղավ, իմ լեզուն ավելի բացվեց։ Ասացի նրան, եթե ուզում է որ մեռնեմ, բավական է՝ մի խոսք ասի, և ես իսկույն կմեռնեմ։ Կյանքն առանց Դորայի սիրո ինձ համար արժեք չունի։ Այդպիսի կյանք ո՛չ կտանեմ, ո՛չ էլ կուզեմ։ Նրան տեսնելու րոպեից սկսած ես նրան սիրել եմ ամեն ժամ, ամեն վայրկյան, օր ու գիշեր հանապազ։ Այժմ էլ մոլեգին սիրով եմ սիրում և ամեն վայրկյան մոլեգնաբար սիրելու եմ։ Առաջ էլ եղել են սիրահարներ, հետո էլ կլինեն, բայց ոչ մի ժամանակ սիրահարը այնպես չի սիրել, չի կարող սիրել, չի սիրում, չպիտի սիրի, ընդունակ էլ չի սիրելու, ինչպես որ ես եմ սիրում Դորային։ Եվ որքան ես զառանցում էի, Ջիպն էլ այնքան հաչում էր։ Երկուսս էլ զանազան կերպով ճգնում էինք ցույց տալ, թե ո՞վ է մեզնից ավելի գժված։

Այդպես։ Վերջ ի վերջո ես հոգնեցի, և ահա Դորան ու ես բազմոցի վրա հանգիստ նստած էինք։ Ջիպն էլ նրա գոգում պառկած՝ աչքերը հանդարտ վրաս էր քթթում։ Հոգուս բեռն ընկել էր։ Ես լիովին երջանիկ էի։ Դորան ու ես արդեն երդումով իրար հետ կապված էինք։

Երկուսս էլ կարծես աղոտ կերպով զգում էինք, թե այս բոլորը հարսանիքով կվերջանա։ Զգում էինք, թե առանց Դորայի հոր հոժարության մեզ անկարելի կլինի ամուսնանալ։ Սակայն չեմ պնդի, թե մեր պատանեկան հրճվանքի մեջ շատ ընդունակ լինեինք ետ ու առաջ նայելու. մենք գոհ էինք ներկայով։ Մենք վճռեցինք մեր գաղտնիքը մր. Սպընլոյից ծածուկ պահել, թեև հավատացած եմ, որ այն ժամանակ մտքովս անգամ չէր անցել, թե մեր արարքի մեջ կարելի լիներ գեթ որևէ անազնիվ բան նշմարել։

Միս Միլսը սովորականից ավելի մտախոհ էր, երբ Դորան նրան գտնելու գնաց և ետ բերեց։ Պետք է ենթադրել, թե հիշողության քարայրի նիրհած արձագանքը սթափված կլիներ նոր դեպքից։ Բայց և այնպես միս Միլսը մեր սերն օրհնեց, մեզ հավիտենական բարեկամություն ուխտեց և առհասարակ մի այնպիսի ձայնով խոսեց, որ ասես թե ձայնը վանքի խորքից հնչելիս լիներ։

Ի՛նչ ցնորական ժամանակ։ Որքա՛ն ունայն, անիրական և երջանիկ ժամանակ։

Ի՛նչ կարող էր հավասարվել իմ զգացած երանության հետ, երբ Դորայի մատի չափն առա, որսկերչի մոտ գնացի մի մատանի պատվիրելու **Չմոռանաս ինձ** փորագրով։ Ոսկերիչը միտքս իսկույն գուշակեց ու սիրով ժպտաց։ Մատանին պիտի անմոռուկի կապույտ ակներով ընդելուզեր։ Նրա հիշատակը մտքիս մեջ այն աստիճան միացած էր Դորայի հետ, որ դեռ երեկ, երբ պատահմամբ իմ հարազատ աղջկա մատին իսկ և իսկ մի այդպիսի մատանի տեսա, սիրտս մի վայրկենական ցավով թնդաց։

Ինձնից ավելի երջանիկ մարդ կա՞ր արդյոք, երբ սրտիս գաղտնիքով փքված ու Դորայի սիրով վերացած՝ ասես թե օդի մեջ էի սավառնում և կարեկից աչքով նայում գետնի երեսին սողացող թշվառ մարդկանց։

Իսկ մեր հանդիպումնե՛րը քաղաքային պարտեզում։ Մեր երես առ երես տեսակցությունները ստվերապատ ու փոշոտ տաղավարում, ուր այնքա՛ն երջանիկ էի, որ Լոնդոնի հասարակ ճնճղուկներն անգամ դրախտահավ էին թվում աչքիս, որովհետև մեր ցնորքների միակ վկան նրա՛նք էին։

Մեր առաջին գժտումը նշանտուքից ճիշտ մի շաբաթ անց եղավ, և Դորան մատանին ինձ ետ ուղարկեց մի եռանկյունի տոմսակով, ուր այս սոսկալի խոսքերն էին գրված, թե «Մեր սերը հիմարությամբ սկսվեց և խելագարությամբ վերջացավ»,– զարհուրելի խոսքեր, որոնք ստիպեցին ինձ լաց լինել ու մազերս փետել գոչելով՝ «Պրծա՛վ... Օ՛հ, որքա՛ն կյանք, որքա՛ն հուզմունք, որքա՛ն հրապույր այդ բոլորի մեջ»։

Ամբողջ օրը լաց լինելուց հետո՝ երեկոյան վազելով գնացի միս Միլսի մոտ ու նրա հետ մի թաքուն տեսակցություն ունեցա խոհանոցի մութ անկյունում, լվացքի տաշտի հետևը։ Այստեղ ես աղաչեցի նրան հաշտահար միջնորդ լինել մեր միջև և փրկել ինձ մահվանից։

Միս Միլսը այդ պաշտոնը հանձն առավ, գնաց Դորային կանչեց և իր բազմավիշտ երիտասարդության ամբիոնից երկուսիս էլ հորդոր կարդաց՝ փոխադարձ զիջումներ անել և փախչե՛լ Սահարայի անապատից։

Օ՛հ, ինչքան լաց եղանք, հեկեկացինք, և երբ լիովին հաշտվեցինք, խոհանոցը իր տաշտով ու բոլոր անոթներով նույնիսկ սիրո տաճար դարձավ։ Այնտեղ էր, որ մի ծածուկ թղթակցության մասին պայման դրինք, թղթակցության, որ միս Միլսի միջնորդությամբ պիտի կատարվեր։ Պայմանն էր – երկու կողմից առնվազն ամեն օր մի նամակ գրել։

Ի՛նչ ցնորական ժամանակ։ Որքա՛ն ունայն, անիրական և երջանիկ ժամանակ։ Կյանքիս բոլոր տարիները մեկ-մեկ վերհիշելիս՝ ոչ մեկը չեմ տեսնում, որի հիշատակը այդքա՛ն իմ ժպիտը շարժեր և սիրտս հուզեր, որքան այդ օրերը։

ԺԴ. ԳԼՈՒԽ
Տատս ապշեցնում է ինձ

Դորայի և իմ նշանտուքի մասին ես իսկույն նամակով հայտնեցի Ագնեսին։ Գրեցի նրան մի երկար նամակ, որի մեջ աշխատում էի հասկացնել, թե որքա՛ն երջանիկ եմ և ի՛նչ հոգյակ է Դորան։ Աղաչում էի Ագնեսին այս սերս մի սնոտի կիրք չհամարել, որ կարող էր մի ուրիշ կրքի տեղի տալ և կամ այն երևակայական քմահաճույքներին նմանվել, որոնց վրա ծիծաղում էինք։ Պնդում էի, թե սիրուս խորությունն անհատակ է, և վստահություն հայտնում, թե այսպիսի բան ոչ մի ժամանակ տեսնված չէ։

Մի գեղեցիկ երեկո, մինչ պատուհանիս մոտ նստած, մտքիս մեջ նրա վճիտ, հեզիկ աչքերն ու քաղցրիկ դեմքը պատկերացնելով, նամակ էի գրում Ագնեսին, հանկարծ նրա տեսքը այնպես ամոքիչ ազդեցություն արեց այն տենդագին հույզերիս վրա, որոնք վերջերս ինձ ալեկոծել էին,– որ ես սկսեցի լաց լինել։ Հիշում եմ, որ նոր էի հասել նամակի կեսին, երբ գլուխս ձեռքիս դեմ տալով սկսեցի երևակայել, թե Ագնեսն իմ ընտանեկան հարկի անհրաժեշտ տարրերից մեկն է, թե այդ լռիկ հարկի տակ, որ նրա ներկայությամբ սրբագործված կլինի, ես ու Դորան ավելի երջանիկ կյանք կվարենք, քան մի ուրիշ տեղ։ Ինձ թվում էր, թե ինչ զգացում էլ սրտիս տիրի՝ սեր, խնդություն, վիշտ, հույս, հիասթափում,– սիրտս միշտ այդ հարկին կձգտի և նրա մեջ իր լավագույն ապաստանն ու ընկերը կգտնի։

Ստիրֆորթի մասին ոչ մի բան չգրեցի։ Ակնարկեցի միայն, թե Էմլիի փախուստի պատճառով Յարմաութում սաստիկ տխրել են և թե ես էլ այդ դեպքի հարակից հանգամանքների

պատճառով կրկնակի ցավ եմ զգում։ Հավատացած էի, որ Ագնեսն իր նուրբ մտքով ճշմարտությունը կգուշակի և երբեք առաջինը խոսք չի բանա Ստիրֆորթի մասին։

Նամակիս պատասխանը հետևյալ փոստատարով ստացա։ Կարդալով այն կարծես լսում էի Ագնեսի անուշիկ ձայնը, նրա սփոփիչ խոսքերը։ Էլ ի՞նչ ասեմ ավելի։

Իմ վերջին բացակայության ժամանակ Տրեդլսը երկու-երեք անգամ եկած է եղել իձն տեսնելու։ Նա բնակարանումս գտել է Պեգգոտիին, և Պեգգոտին պատմել է նրան (ինչպես որ պատրաստ էր ամենքին պատմել, եթե միայն լսող լիներ), թե ինքն իմ դայակն է, և Տրեդլսը այդ լսելով, շտապել է ծանոթանալ նրա հետ և փոքր-ինչ նստել՝ իմ մասին խոսելու համար։ Այդպես ասաց Պեգգոտին. հիմք ունեմ սակայն կարծելու, թե այդ միջոցին խոսողը միայն Պեգգոտին կլիներ, այն էլ ասելիքը շատ երկարացնելով, որովհետև նա – աստված հոգին լուսավորի – չէր կարող կարճ կտրել, երբ իմ մասին խոսք էր լինում։

Տրեդլսի անունը հիշեցրեց ինձ, թե պարտավոր եմ սպասել նրան իմ նշանակված երեկոյին, որը արդեն հասել էր և թե մրս. Կրոպպը մի քանի ժամանակից ի վեր բոլորովին դադարել էր իր պաշտոնը կատարելուց (բացի ամսականը ստանալուց). նա ուզում էր, որ Պեգգոտին չքվի իմ բնակարանից։ Մրս. Կրոպպը մի քանի անգամ սանդուղքի տակ այդ նյութի մասին շատ բարձրաձայն խոսելուց հետո,– երևի թե մի ուրվականի հետ էր խոսում, քանի որ խոսելուց մենակ էր, վերջապես, ինձ մի գրություն ուղարկեց, որի մեջ իր միտքն էր բացատրում։ Նամակը մի ընդհանուր առաջաբանով էր սկսվում, որ սովոր էր իր կյանքի ամեն դեպքերում գործ դնել, այսինքն՝ թե ինքն էլ մայր է, և հետո գալիս էր ասելու, թե իր կյանքում շատ բան է կրել, բայց միշտ ատելով ատել է չտեսներին, բանսարկուներին, բամբասողներին, մանավանդ երբ դրանք մի այրի կնոջ սգազգեստ են հագած եղել (այս խոսքերն ընդգծված էին)։ Եթե այդ լրտեսներին, բանսարկուներին, բամբասողներին մի ջենտլմեն է զոհ դառնում (դարձյալ ոչ մի անուն) այդ նրա գիտենալու բանն է, ինչ ուզում է թող անի։ Բայց եթե ինքը, մրս. Կրոպպը, ուրիշ ոչինչ չի ուզում, միայն թե հեռու լինել այդպիսինների հետ «որևէ հարաբերություն» ունենալուց։ Այս պատճառով նա կխնդրեր՝ երկրորդ հարկում ծառայելու պարտքից ազատել իրեն, մինչև որ իրերի նախկին վիճակը վերահաստատվի, որ շատ ու շատ ցանկալի է։ Ի վերջո հարում էր, թե իր փոքրիկ հաշվեզիրն ամեն շաբաթ առավոտ նախաճաշի սեղանի վրա կգտնվի, և ես բարի կլինեմ հաշիվներն իսկույն մաքրելու, որպեսզի ապագայում կողմերի մեջ ոչ մի անհանգստություն չծագի, և որ մի անպատեհ թյուրիմացություն առաջ չգա։

Այդ վճռական քայլից հետո մրս. Կրոպպը բավական համարեց զանազան որոգայթներ դնել սանդուղքի վրա, գլխավորապես կճուճներից ու կժերից, Պեգգոտիի ոտքը կոտրելու համար։

Ինձ էլ վտանգ էր սպառնում այս պաշարման վիճակը, բայց վախենալով մրս. Կրոպպից, ստիպված էի համբերել։

– Սիրելի Կոպպերֆիլդ,– գոչեց Տրեդլսը, որ այդ բոլոր արգելքներին չնայելով, հնար էր գտել որոշված ժամին իմ սենյակը մտնելու,– ինչպե՞ս ես։

– Շատ ուրախ եմ, սիրելի Տրեդլս, որ վերջապես տեսնում եմ քեզ։ Ցավում եմ, որ անցյալ անգամ տանը չէի. շատ էի զբաղված...

– Այո, այո, գիտեմ,– վրա բերեց ընկերս։– Քոնը կարծեմ Լոնդոնում է ապրում։

– Ի՞նչ։ Այդ ո՞վ է։

– Ներիր խնդրեմ... Կարծեմ միս Դ-ն է Լոնդոնում ապրում,– ասաց Տրեդլսը կարմրելով։

– Այո, Լոնդոնի մոտերքում։

– Իսկ իմը, գուցե հիշես... այն տասը քույրերից մեկը... Դևոնշիրումն է բնակվում։ Ուրեմն այդ տեսակետից՝ ես քո չափ եմ զբաղված։

– Զարմանում եմ, թե ինչպե՞ս ես կարողանում այդքան ուշ-ուշ տեսնել նրան։

– Ա՛հ,– ասաց Տրեդլսը մտախոհ,– ես ինքս էլ եմ զարմանում։ Բայց երևի պատճառն այն է, Կոպպերֆիլդ, որ ուրիշ ճար չկա – շատ հեռու է։

– Գուցե այդ լինի,– պատասխանեցի ժպտալով ու կարմրելով։ Բայց ևս ավելի քո հաստատամտությունն ու համբերությունը կլինի։

– Մի՞թե,– հարցրեց Տրեդլսը, խոսքերիս վրա մտածելով։– Մի՞թե կարծում ես, Կոպպերֆիլդ, թե ես իրոք հաստատամիտ ու համբերող եմ։ Ամենևին չէի իմանում։ Բայց նա մի այնպիսի չնաշխարհիկ աղջիկ է, որ գուցե ինձ էլ իր առաքինությունների մի մասը հաղորդած լինի։ Չես կարող երևակայել, Կոպպերֆիլդ, թե ինչ պատվական աղջիկ է։ Նա միշտ իրեն մոռանում է և միայն մյուս իննի հոգսն է քաշում։

– Ավագը նա՞ է,– հարցրի ես։

– Ոչ, ոչ, ավագը մի կատարյալ գեղեցկուհի է։

Տրեդլսը կարծեմ նկատեց, որ ես այդ պարզամիտ պատասխանը լսելով ակամա ժպտացի, ուստի ինքն էլ ժպտալով ասաց.

– Այդ չի նշանակում, թե Սոֆին էլ... սիրուն անուն է չէ՞, Կոպպերֆիլդ։

– Շատ սիրուն։

– Այդ չի նշանակում, թե Սոֆին էլ իմ աչքում գեղեցիկ չէ... ում աչքին ասես նա հրաշալի աղջիկ կերևա. ես վստահ եմ այդ մասին։ Բայց երբ ասում եմ, թե անդրանիկը մի գեղեցկուհի է, պիտի իմանաս (և Տրեդլսը սկսեց երկու ձեռքով ամպեր նկարել իր շուրջը), որ նա իրոք... մի փառավոր բան է,– շեշտելով վերջացրեց Տրեդլսը։

– Իրա՞վ։

– Ճիշտ եմ ասում, մի աննման գեղեցկուհի,– ասաց Տրեդլսը։– Նա ստեղծված է ամենաշքեղ հասարակության մեջ փայլելու և ամենքին շլացնելու համար, բայց նյութական կարիքներից ճնշված մարդամեջ է մտել... գիտե՞ս, փոքր-ինչ պահանջկոտ է։ Սոֆին է միայն նրա սիրտը շահում։

– Սոֆին ամենից կրտսե՞րն է,– հարցրի ես։

– Ոչ, ինչպես կարելի է,– ասաց Տրեդլսը, իր կզակը շփելով։– Երկու կրտսերները դեռ ինը-տասը տարեկան երեխաներ են։ Սոֆին նրանց դաստիարակն է։

– Ուրեմն Սոֆին երկրո՞րդն է։

– Ոչ,– ասաց Տրեդլսը։– Երկրորդը Սառան է։ Խեղճի ողնաշարը վնասված է։ Բժիշկների ասելով՝ հիվանդությունը կանցնի, բայց մինչև որ անցնի, խեղճը դեռ տասներկու ամիս անկողնում ընկած պիտի մնա։ Սոֆին է խնամում նրան։ Սոֆին չորրորդն է։

– Մայրը կենդանի՞ է։

– Այո, կենդանի է։ Եվ մի պատվական խելացի կին է, բայց չի կարողանում խոնավ օդին դիմանալ և բոլորովին անդամալույծ է։

– Խեղճ կին,– գոչեցի ես։

– Իրավ որ խեղճ,– կրկնեց Տրեդլսը։– Բայց այնուամենայնիվ, տան գործերն այնքան էլ վատ չեն, ինչքան որ կարելի էր կարծել, որովհետև Սոֆին նրան փոխարինում է։ Սոֆին նույնքան մայր է իր մոր համար, որքան և մյուս իննի համար։

Ես հիացած մնացի այդ երիտասարդ օրիորդի բազմաթիվ առաքինություններից և մի անկեղծ փափագ զգացի զգուշացնել ընկերոջս, որ նա իր բարությամբ մի քանի անձերից ի վնաս իր ապագայի չխաբվի. հարցրի թե ինչպե՞ս է մր. Միկաբրը։

– Շատ առողջ,– ասաց Տրեդլսը։– Այժմ ես նրա մոտ չեմ բնակվում։

– Ո՞չ։

– Ո՛չ։ Բանն այս է,– շարունակեց Տրեդլսը կամացուկ,– որ նա գործերի ժամանակավոր խանգարման պատճառով իր անունը փոխել է և այժմ կոչվում է Մորտիմեր։ Միայն երեկոներն է դուրս գալիս, այն էլ քթին ակնոց դրած։ Նորերս մեր տան գույքերը գրավեցին տան վարձագնի փոխարեն։ Մրս. Միկաբրը այնպես հուսահատ դրության մեջ էր, որ ես անկարող էի այն երկրորդ մուրհակը չստորագրել, որի մասին խոսել էինք։ Բայց թե իմանայիր, Կոպպերֆիլդ, ի՞նչ ուրախություն զգացի, երբ գործը այդ մուրհակով վերջացավ և մրս. Միկաբրը նորից լիովին սիրտ առավ։

– Հը՛մ։

– Ափսո՛ս միայն, որ նրա երջանկությունը կարճ տևեց,– շարունակեց Տրեդլսը,– որովհետև յոթ օր չանցած՝ մի երկրորդ գրավ տեղի ունեցավ։ Դա նրանց տնտեսությունը բոլորովին քանդեց։ Այն օրից ի վեր ես առանձին եմ բնակվում մի կահավորված սենյակում, իսկ Մորտիմերի գերդաստանը քաշվել է մի ծածուկ տեղ։ Հուսամ անձնասեր չես անվանի ինձ, Կոպպերֆիլդ, եթե ասեմ, որ մակլերը, իրեղենները գրավելիս, իմ մարմարե կլոր սեղանն էլ Սոֆիի ծաղկամանի հետ առավ տարավ։

– Ի՛նչ անգթություն,– գոչեցի ես բարկանալով։

– Այո... փոքր-ինչ անգութ վարմունք էր,– ասաց Տրեդլսը շուրթերը թեթև ծռելով։– Սակայն նրան մեղադրելու մտքով չեմ ասում այդ։ Բանն այս է, Կոպպերֆիլդ, որ գրավի ժամանակ ես չկարողացա իրերս փրկել, որովհետև նախ՝ մակլերը, տեսնելով որ նշանակություն եմ տալիս իրերին, մի սարսափելի գին ուզեց, երկրորդ, որ փողերս արդեն վերջացել էին։ Բայց այն օրից ի վեր աչքս մակլերի կրպակի վրա է,– ասաց Տրեդլսը հրճվելով այդ գաղտնիքից։– Կրպակը Տոտընհեմի Արքունի փողոցումն է գտնվում, և ես այսօր իմացա, որ իրերս արդեն վաճառքի են հանել։ Այդ ես փողոցի հակառակ կողմից թաքուն դիտեցի, որովհետև, գիտես, եթե մակլերը ինձ նկատի, ով գիտի ի՞նչ ահագին գին կուզենա... Տես թե այժմ երբ փող ունեմ, ինչ երևելի բան եմ մտածել, Կոպպերֆիլդ, որ անպատճառ գլուխ կգա, եթե դու չընդհմանաս։ Խնդրիր դայակիդ, միասին գնանք... Ես փողոցի անկյունից կրպակը նրան ցույց կտամ... նա մենակ ներս կմտնի՝ իբր թե իր համար իմ իրերը գնելու, և էժան գնով կառնի։

Ամենաթարմ հիշատակներիս շարքից են Տրեդլսի այն բերկրանքը, որով բացատրում էր իր գյուտը, և այն զվարճությունը, որ զգում էր իր խորամանկությունը ցույց տալիս։

Ասացի նրան, թե դայակս ուրախությամբ հանձն կառնի օգնել նրան և թե մենք երեքս էլ միասին գործի կկպչենք, միայն թե մեկ պայմանով։ Պայմանն այս էր, որ նա մի հանդիսավոր երդում տա, թե այլևս ոչ մի բան մր. Միկաբրին փոխ չի տա՝ ոչ իր անունը, ոչ էլ դրամը։

– Արդեն երդվել եմ, սիրելի Կոպպերֆիլդ,– ասաց Տրեդլսը,– որովհետև զգացել եմ, որ ոչ միայն անզգույշ էի, այլև ուղղակի Սոֆիի առջև հանցավոր։ Այդ մասին միամիտ եղիր. ինչպես որ ես ինձ եմ երդվել, այնպես էլ քեզ եմ երդվում ամենայն սիրով։ Առաջին թշվառ մուրհակն արդեն վճարել եմ։ Տարակույս չկա, որ մր. Միկաբրը ինքն էլ կվճարեր, եթե միայն փող ունենար, բայց չուներ։ Պիտի ասեմ քեզ, Կոպպերֆիլդ, որ նրա բնավորության մեջ մի շատ դուրեկան բան եմ տեսնում։ Երկրորդ մուրհակի վճարման ժամկետը դեռ չի հասել։ Բայց նա չի ասում ինձ, թե **հոգացե՞լ է** այդ մասին, թե՞ անպատճառ **պիտի հոգա**։ Իրավ, որ դա մի ազնիվ ու պարզ վարմունք է, չէ՞։

Չկամեցա ազնիվ բարեկամիս հավատը խախտել և հավանություն ցույց տվի նրան։ Դարձյալ փոքր ինչ զրուցելուց հետո միասին գնացինք նպարավաճառի խանութը՝ մեր դավադրությանը մասնակից անելու դայակիս։ Տրեդլսը չուզեց երեկոն ինձ մոտ անցկացնել. առաջինը՝ վախենում էր, թե իր գույքն իր գնելուց առաջ մեկ ուրիշի ձեռքը կընկնի, երկրորդ՝ երեկոն նրան հարկավոր էր, որովհետև նա սովոր էր միշտ այդ ժամանակ նամակ գրել աշխարհիս ամենալավ օրիորդին։

Երբեք չեմ մոռանա, թե ինչպես էր նա նայում Տոտտնհեմի Արքունի փողոցի անկյունից, մինչ Պեգգոտին գին էր դնում իրերին, և ինչպես սոսկաց, երբ Պեգգոտին կրպակից ծանրաքայլ ելավ՝ առանց իրերը բերելու, և դալալի կանչելով, հետո նորից ներս մտավ: Վերջ ի վերջո Պեգգոտին մի չափավոր գնով իրերը գնեց, և Տրեղլսի ցնծությունն անչափ էր:

– Անչափ շնորհակալ եմ ձեզնից,– ասաց Տրեղլսը, լսելով թե իրերը հենց այդ իրիկուն իր բնակարանը պիտի ուղարկեն:– Բայց մի ուրիշ բան էլ կուզեի խնդրել, և հուսով եմ, Կոպպերֆիլդ, որ խնդիրքս քեզ անմիտ չի թվա:

– Հարկավ ոչ,– ասացի ես:

– Ուրեմն,– շարունակեց Տրեղլսը, Պեգգոտիին դիմելով, որ ծաղկամանը հենց այս րոպեիս դուրս բերի: Ես ինքս այն տուն կտանեմ (չէ՞ որ, Կոպպերֆիլդ, Սոֆիիս է պատկանում):

Պեգգոտին այդ խնդիրն էլ սիրով կատարեց: Տրեղլսը հազար շնորհակալություն հայտնեց նրան և ծաղկամանը սրտին սեղմած՝ անասելի բերկրությամբ ու հրճվանքով անհետացավ Տոտտնհեմի փողոցից:

Իսկ Պեգգոտին ու ես դեպի իմ բնակարանը ճանապարհ ընկանք: Սակայն մեր վերադարձը երկար տևեց, որովհետև խանութները չափազանց հրապուրում էին դայակիս. նա ամեն մի քայլին կանգ էր առնում ցուցափեղկերում շարված բաները դիտելու և իր հիացումը հայտնելու համար: Հետևաբար արդեն ուշ էր, երբ որ Ադելֆի հասանք:

Սանդուղքով բարձրանալիս երկուսս էլ զարմանքով նկատեցինք, որ մրս. Կրապպի որոգայթներն ու թակարդները հանկարծակի կորել են, և բացի այդ՝ աստիճանների վրա մարդկային քայլի նոր հետքեր են նշմարվում: Մեր զարմանքը ավելի սաստիկ եղավ, երբ վեր բարձրանալով՝ սենյակիս դուռը, որ դուրս գալիս փակել էի, բաց գտանք և ներսից զանազան ձայներ լսեցինք:

Մենք ապշած շվարած իրար նայեցինք, լուռ հարցնելով, թե ի՞նչ է այդ, ու ներս մտանք: Որքան զարմացա ես, երբ այնտեղ, ուր ամենևին չէի սպասում մարդ տեսնելու,– հանկարծ տատիս ու մր. Դիկին տեսա: Տատս բազմաթիվ կապոցների մեջտեղն էր նստած, որպես մի իգական Ռոբինզոն, և թեյ էր անուշ անում. թռչունների վանդակը դիմացն էր, իսկ իր կատուն՝ ծնկների վրա: Մր. Դիկը ավելի շատ հակերով շրջապատված՝ մտախոհ զննում էր մի ահագին ֆոռան, որի նմանը նա ու ես շատ անգամ էինք բաց թողել:

– Տատիկս,– գոչեցի ես:– Ա՛յ անակնկալ ուրախություն:

Ջերմ-ջերմ համբուրվեցինք. մր. Դիկն ու ես ամուր սեղմեցինք միմյանց ձեռքերը և մրս. Կրոպպը, որ թեյ էր լցնում ու շատ ուշադրիր էր դեպի մեզ, եռանդով ասաց, թե նախապես գիտեր, թե մր. Կոպպերֆիլդն ուրախությունից կերջանկանա՝ ազգականներին տեսնելով:

– Հե՛յ, գոչեց տատս Պեգգոտիին, որ սարսռում էր նրա ահեղ ներկայությունից:– Դուք ինչպե՞ս եք:

– Հիշո՞ւմ ես տատիս, Պեգգոտի,– ասացի ես:

– Աստծու սիրուն, որդյակ իմ,– աղաղակեց տատս,– այդպիսի հեթանոսական անուն մի տար այդ կնոջը: Քանի որ մարդի գնալով իր անունը փոխել է և շատ լավ է արել, էլ ինչո՞ւ եք առաջվա պես անվանում նրան: Ինչպե՞ս է ձեր այժմյան ազգանունը... Պ,– ասաց տատս, այդ կրճատումը գործ դնելով իր ասած անվան տեղ:

– Բարկիս, տիրուհի,– պատասխանեց Պեգգոտին ու գլուխ տվեց:

– Լավ, այդ գոնե մի մարդկային անուն է և միսիոների կարոտ չէ, որ փոխվի մկրտությամբ: Ուրեմն բարով ձեզ, Բարկիս: Ինչպե՞ս եք, լա՞վ եք:

Այդ շնորհալի խոսքերով ու տատիս մեկնած ձեռքից քաջալերված՝ Պեգգոտին մի երկու քայլ առաջ անցավ աջն առնելու և վերստին գլուխ տվեց:

– Տեսնում եմ, որ երկուսս էլ պառավել ենք,– ասաց Տատս։– Կարծեմ հիշում եք, որ արդեն մի անգամ իրար տեսել ենք։ Ինչ երևելի բանով էինք զբաղված այն ժամանակ։ Սիրելի Տրոտ, էլի մի բաժակ։

Տատս սովորականի պես փայտի նման ուղիղ նստած էր առանց թեքվելու։ Բաժակը մատուցելիս ես հարկ համարեցի նկատել, թե սնդուկի վրա այդպես նստելն անհանգիստ է։

– Թույլ տվեք, տատի, որ մի բազկաթոռ և կամ բազմոցը մոտեցնեմ ձեզ,– ասացի ես։– Սնդուկի վրա հանգիստ չէ։

– Շնորհակալ եմ, Տրոտ,– ասաց տատս։– Ավելի լավ է իմ սեփական գույքի վրա նստած մնամ։

Այդ ասելիս տատս մի խոժոռ հայացք նետեց մրս. Կրոպպի վրա ու ասաց.

– Էլ այստեղ սպասելու պետք չունեք, տիկին։

– Արդյոք էլի փոքր-ինչ թեյ չավելացնե՞մ թեյամանի մեջ, հարգելի տիկին,– հարցրեց մրս. Կրոպպը։

– Ոչ, շնորհակալ եմ, տիկին։

– Արդյոք էլի մի քիչ կարագ չբերե՞մ, տիկին,– ասաց մրս. Կրոպպը,– և կամ չէի՞ք կամենա մի թարմ ձու անուշ անել... և կամ թե մի շերտ երշիկ։ Էլ ինչո՞վ հարգենք ձեր պատվական տատին, մր. Կոպպերֆիլդ։

– Ոչ մի բան հարկավոր չէ, տիկին Կրոպպ,– պատասխանեց տատս։– Ինչ որ պետք է, ես ինքս կհոգամ։ Շնորհակալ եմ։

Մրս. Կրոպպը, որ իր հեզությունը ցույց տալու համար անդադար ժպտում էր, և իր թուլությունը ցույց տալու համար շարունակ գլուխը մի կողմ հակում և ցույց տալու համար, թե պատրաստ է ամենքին ծառայել, անդադար ձեռքերը տրորում էր, վերջ ի վերջո հարկ համարեց գլուխը թեքած հեռանալ, ժպտալով ու ձեռքերը տրորելով։

– Դիկ,– ասաց տատս։– Մտաբերո՞ւմ եք, թե ի՞նչ էի ասել ձեզ մարդահաճ շողոքորթների ու պնակալեզ կեղծավորների մասին։

Մր. Դիկը փոքր-ինչ վեհերոտ եղանակով, ասես թե իր ասելիքը մոռացած լիներ, մի հաստատական պատասխան տվեց։

– Ահա, մրս. Կրոպպն էլ նրանցից մեկն է,– ասաց տատս։– Բարկիս, խնդրեմ դուք շնորհ արեք ինձ համար մի բաժակ թեյ լցնել. չէի կամենում այդ խարդախի ձեռքից ընդունել։

Լավ ճանաչելով տատիս զգում էի, որ մի կարևոր բան պիտի ասի ինձ և իր գալուստը անհիմն չէ։ Նկատեցի մինչև անգամ, թե հենց որ ես մի ուրիշ բանով էի զբաղված թվում, նա ինձ իսկույն մտիկ է տալիս։ Նա ներքուստ շփոթված ու հուզված էր, թեև դրսից հանգիստ ու սառն էր։ Սակայն մտածեցի՝ չլինի՞ թե մի բանի համար նեղացած լինի իմ վրա, և խիղճս թաքուն հիշեցրեց ինձ, որ մինչև այժմ Դորայի մասին նրան ոչ մի բան չեմ ասել։ Արդյոք այդ չէ՞ր պատճառը։

Գիտեի, որ տատս միայն այն ժամանակ բերանը կբանա, երբ այդ իրեն հաճո կլինի, ուստի և կողքին նստելով սկսեցի նրա թռչունների հետ խոսել, նրա կատվի հետ խաղ անել և լիովին անհոգ ձևանալ։ Սակայն ես բնավ անհոգ չէի, և տագնապս չէր կարող չսաստկանալ, նույնիսկ եթե տատիս հետևից ֆռռանին հենված մր. Դիկը անդադար գլուխը շարժելով չարագուշակ նշաններ չաներ ու տատիս վրա չակնարկեր։

– Տրոտ... – ասաց տատս վերջապես, թեյն ավարտելով բերանը սրբելուց ու զգեստի ծալքերը հարթելուց հետո,– դուք կարող եք չհեռանալ, Բարկիս... Տրոտ, արդեն վարժվա՞ծ ես անձնավստահ ու հաստատուն լինել։

– Կարծեմ, տատի։

– Հավատացա՞ծ ես այդ մասին։

– Կարծեմ հավատացած եմ, տատի։

– Ուրեմն, որդյակ,– ասաց տատս, խորհրդաբար մտիկ անելով երեսիս,– գիտե՞ս, թե ինչու եմ այս երեկո իմ սեփական գույքի վրա նստած։

– Ո՛չ, տատի։

– Որովհետև,– ասաց տատս,– բոլոր ստացվածքս միայն այս է։ Ես սննկացել եմ, սիրելիս։

Եթե ամբողջ տունը հանկարծ փուլ գար ու մեզ հետ միասին գետն ընկներ, դժվար թե ես մի ավելի սաստիկ հարված ստանայի։

– Դիկն այդ գիտի,– շարունակեց տատս, ձեռքը մեղմիկ ուսիս դնելով։– Սննկացած եմ, հոգյակ իմ։ Ինչ որ ունեմ աշխարհումս՝ ահա այս սենյակումն է, բացի Դուվրի տնակից, որ Ջեննետին եմ հանձնել վարձու տալու։ Բարկիս, այս ջենտլմենին գիշերվա համար մի անկողին է հարկավոր։ Ես էլ այստեղ կգիշերեմ, որ ավելորդ ծախսեր չանենք։ Միայն այս գիշեր։ Առավոտյան այս մասին ավելի երկար կխոսենք։

Ես սթափվեցի շփոթմունքից և այն վշտից, որ զգում էի տատիս ցավակցելով, անտարակույս միայն նրան, երբ նա վզիս փարվեց ու լալագին ասաց, թե ցավում է միայն ինձ համար։ Հետևյալ րոպեից նա իրեն զսպեց և ավելի հաղթական, քան վհատած եղանակով ասաց.

– Մեզ պետք է, որդյակ իմ, քաջ դիմադրել պատահարներին ու չընկճվել նրանցից։ Մարդուս պարտքն է մինչև վերջն անվտանգ մնալ կյանքի կռվում։ Եվ մենք, Տրոտ, մինչև վերջը մարտ կմղենք թշվառության դեմ։

ԺԵ. ԳԼՈՒԽ
Լքում

Տատիս սնանկանալու առաջին խորտակիչ ազդեցությունից սթափվելուս պես՝ ես մր. Դիկին առաջարկեցի ինձ հետ նպարավաճառի կրպակը գնալ և այն մահիճը վերցնել, որ թողել էր մր. Պեգգոտին։ Կրպակը գտնվում էր Հընդրֆորդի շուկայում, որ այն ժամանակ բոլորովին ուրիշ տեսք ուներ, և նրա դռան առջև մի փայտաշեն կամարակապ ցած սրահ կար, որ սաստիկ դուր եկավ մր. Դիկին։ Այդ հրաշակերտ շենքի վերևի հարկում բնակվելու գաղափարով հափշտակված՝ նա կարծեմ դրա մի քանի անհարմարությունները չնկատեց։ Սակայն, ճիշտն ասած, արդեն հիշված բազմազան դեպքերից ու փոքրությունից բացի, իմ առաջարկած սենյակն ուրիշ աչքի ընկնող թերություններ չուներ էլ։ Սակավապետ մր. Դիկը լիովին գոհ մնաց։ Մրս. Կրոպպը նրան բարկությամբ ասել էր, թե այդ բնակարանում մինչև անգամ մի կատու օրորելու տեղ չկա, բայց մր. Դիկն անկողնու վրա նստելուց և իր սրունքը շփելուց հետո ուղղակի ասաց. «Տրոտուդ, դու հո գիտես, որ ես կատու օրորելու կարիք չունեմ, կյանքումս էլ չեմ օրորել, ուրեմն ի՞նչ փույթ ինձ, որ այս սենյակում կատու օրորելու տեղ չկա։

Ուզում էի ստուգել՝ արդյոք տատիս գործերի անակնկալ ու մեծ փոփոխության պատճառները մր. Դիկին հայտնի՞ են։ Իմացա որ նա այդ մասին համարյա թե բան չգիտի։ Իմ հարցուփորձից միայն այսքանը պարզվեց, որ անցյալ օրը տատս նրան ասել է. «Դիկ, հապա մի տեսնեմ, արդյոք դուք իրա՞վ մի իսկական փիլիսոփա եք, ինչպես որ միշտ համարել եմ ձեզ»։ Եվ երբ մր. Դիկը պատասխանել է. «Այո, կարծեմ», տատս ասել է. «Դի՛կ, ես սնանկացել եմ»։ Դիկն էլ ասել է. «Է՛, իրա՞վ»։ Եվ այն ժամանակ տատս նրան սաստիկ գովել է, և մր. Դիկը շատ է ուրախացել։ Այնուհետև նրանք որոշել են ինձ մոտ գալ և ճանապարհին սենդուիչ են կերել ու պորտըր խմել։

Մր. Դիկն այդ բոլորը պատմեց անկողնու վրա գոհ նստած, սրունքը շփելով ու ժպիտը երեսին։ Դրանից կարելի էր եզրակացնել, թե նա գործերի իսկական դրությանը տեղյակ չէ, և ես շտապեցի բացատրել նրան, թե սնանկությունից չքավորություն, տառապանք, քաղց ու մահ է առաջ գալիս։ Սակայն իսկույն էլ փոշմանեցի այդպես անզգույշ վարվելուս համար, որովհետև հանկարծ նրա երեսը սփրթնեց, աչքերից ջերմ արտասուք թափվեց, և նա իմ վրա այնպես հուսահատ հայացք նետեց, որ մարդու սիրտը քար էլ լիներ, կճաքեր։ Խեղճին նորից զվարթացնելը շատ ավելի դժվար էր, քան վհատություն պատճառելը, և ես շուտով հասկացա (ինչ որ սկզբից պարտավոր էի գուշակել), որ եթե նա մի քիչ առաջ միամիտ ու հանգիստ էր, դրա միակ պատճառն այն էր, որ նա տատիս հրաշալի իմաստության վրա կատարյալ վստահություն ուներ, իսկ դեպի իմ մտավոր ձիրքերը՝ անսահման հավատ։ Նա կարծեմ համոզված էր, որ ես կարող եմ աշխարհիս բոլոր չարիքների դեմ մենակ կռվել և հաղթել։

– Ի՞նչ անենք, Տրոտուդ,– ասաց մր. Դիկը։– Արդյոք հիշատակարանս պետք կգա՞։

– Անտարակույս,– պատասխանեցի։– Բայց ամենից առաջ, մր. Դիկ, պետք է աշխատենք հանգիստ ու զվարթ երևալ, որ տատս չկարծի, թե իր գործերի մասին ենք մտածում։ Այժմ եկեք, նրա մոտ գնանք։

Մր. Դիկն ասածս իսկույն ամենալուրջ եղանակով ընդունեց և միայն խնդրեց, որ ամեն անգամ, երբ ինքը ուղիղ ճանապարհից շեղվելու լինի, զգուշացնեմ իրեն այն գերազանց հնարներով, որոնք միշտ պատրաստ են ձեռքիս տակ։ Սակայն, ափսո՛ս, նա հենց սկզբից այնպես սաստիկ վախեցել էր, որ ինչքան էլ կամենար, չէր կարող իր երկյուղը ծածկել։ Ամբողջ երեկո նրա աչքերն այնպես տագնապալից հայացքով էին հածում տատիս վրա, որ կարծես ահա տատս կնիհարի ու կհալվի։ Նա իր տագնապն զգում էր, ուստի և ամեն կերպ ճիգ թափում իր գլուխը շիտակ բռնելու, սակայն գլուխն աշխույժ բռնելն ու կուռքի պես նստած աչքերը դեսուդեն շրջելը բնավ գործին չէին օգնում։ Ընթրիքի ժամանակ (որ այս անգամ շատ պարզ էր) նա այնպես էր նայում փոքրիկ հացին, որ հենց իմանաս մեր ու սովամահության միջև էլ ոչ մի անջրպետ չի մնացել, բայց միայն այդ չէր. ես նկատեցի, որ երբ տատս նրան խնդրեց հանգիստ սրտով բան ուտել, նա սկսեց հաց ու պանրի կտորները շուտ-շուտ իր գրպանը լցնել։ Անշուշտ նրա նպատակն էր՝ այդ փշրանքով մեր կյանքը փրկել, երբ որ սովից մեռնելու վտանգը վրա հասներ։

Տատս, ընդհակառակը, հանգիստ ու հանդարտ էր, որով կարող էր բոլորիս համար օրինակ հանդիսանալ և մանավանդ ինձ։ Նա վերին աստիճանի քաղցր էր վարվում Պեգգոտիի հետ, բացի միայն այն դեպքերից, երբ ես անզգուշաբար այդ անունն էի տալիս նրան. և չնայած զզվում էր Լոնդոնից, այնպես էր իրեն զգում, ինչպես իր տանը։ Նա քնելու էր իմ ննջարանում, իսկ ես պիտի հյուրասենյակում պառկեի՝ պահպանություն անելու համար։ Նա շատ գոհ էր, որ բնակարանս գետափի վրա է, և ես վստահ եմ, որ նա իրոք այդ պատճառով էր ինքն իրեն ապահով զգում հրդեհից։

– Ոչ, Տրոտ, հարկավոր չէ,– ասաց Տատս, երբ տեսավ, որ իր համար ըմպելիք եմ պատրաստում։

– Գինին ավելորդ է, սիրելիս։ Միայն էյլ[62] տուր։

– Բայց ես, տատիկ, գինի էլ ունեմ։ Չէ՞ որ սովոր եք գինի ընդունել։

– Գինին պահիր հիվանդության դեպքերի համար,– ասաց տատս։– Պետք չէ, Տրոտ, վատնել գինին։ Դու ինձ էյլ տուր, միայն կես շիշ։

Քիչ էր մնում, որ մր. Դիկն ուշաթափ ընկնի։ Տատս իր պահանջը կրկնեց, և ես գնացի էյլ գնելու։ Պեգգոտին ու մր. Դիկը նմանապես դուրս ելան, նպարավաճառի բնակարանը քաշվելու համար։ Փողոցի անկյունում բարի գիշեր ասացի ողորմելի մր. Դիկին, որ ահագին

[62] Ale – գարեջրի տեսակ։

ֆոռանը շալակած՝ վշտահար հեռանում էր, որպես մարդկային թշվառության մի կատարյալ մարմնացում։

Երբ ետ եկա, իր գիշերվա գլխանոցի շղարշներն ուղղելով տատս ետ ու առաջ էր գնում սենյակիս մեջ։ Ես էլը տաքացրի և հացի շերտերը սովորական եղանակով խորովեցի, իսկ տատս գլխանոցը հագած ու զգեստի փեշերը հավաքած՝ արդեն նստել էր վառարանի մոտ։

– Այս խմիչքը գինուց լավ է, որդյակ իմ,– ասաց տատս, հեղուկի համը տեսնելով։– Այնքան էլ դառը չէ։

Երևի թե երեսիս վրա երկբայության նշան տեսնելով, նա հարեց.

– Հոգ չէ, հոգ չէ, սիրելիս։ Երանի թե էլ խմելուց բացի, ուրիշ թշվառության չհանդիպեինք։

– Ես էլ այդպես կասեի, տատիկ, եթե միայն...

– Եթե միայն ի՞նչ...

– Եթե չարիքը միայն ինձ հանդիպեր։ Բայց չէ՞ որ դուք ու ես միևնույն չենք։

– Այդ ի՞նչ դատարկ խոսքեր են, Տրոտ։

Տատս շարունակեց իր էյլն ու պաքսիմատը ախորժալով վայելել։

– Տրոտ,– ասաց նա,– գիտես, որ ես օտար դեմքեր չեմ սիրում, բայց Բարկլիսդ ինձ դուր է գալիս։

– Ախ, տատիկ, այդ խոսքերն ինձ համար հարյուր ոսկուց էլ թանկ են։

– Այս աշխարհը մի տարօրինակ բան է,– ասաց տատս՝ իր քթի ծայրը տրորելով։– Չեմ հասկանում, թե որտեղի՞ց է մի այդպիսի կռապաշտական անուն գտել այդ կինը։ Ասա, խնդրեմ, մի՞թե ավելի լավ չէր լինի, եթե նա իբրև մի Ջոկսըն կամ Րոբերտսըն և կամ մի ուրիշ այդպիսի բան աշխարհ գար։

– Գուցե ինքն էլ, տատի, այդպես է մտածում, բայց հանցավորն ինքը չէ։

– Շատ կարելի է,– ասաց տատս, ակամա տեղի տալով, որ ասածս ճշմարիտ է։– Բայց և այնպես անախորժ բան է։ Ինչևիցե, այժմ նա Բարկլիս է, և դրանով կարելի է մխիթարվել։ Բարկլիսը քեզ շատ է սիրում, Տրոտ։

– Աշխարհիս երեսին բան չկա, որ նա չաներ՝ իր սերը ապացուցելու համար։

– Իրավ որ բան չկա,– հաստատեց տատս։– Երևակայիր, այդ հիմարն աղաչում պաղատում էր, որ ես իր փողերի մի մասն ընդունեմ... որովհետև ինքը խիստ շատ ունի։ Ա՛յ ապուշ։

Եվ տատիս հաշտության արտասուքի կաթիլներն ուղիղ տաք էյլի մեջ թափվեցին։

– Այդպիսի ծիծաղելի էակ դեռ չեմ տեսել,– ասաց տատս։– Հենց այն առաջին րոպեին, երբ նստած էի խեղճ մայրիկիդ սենյակում, գուշակել էի, որ շատ ծիծաղելի արարած է։ Բայց լավ կողմեր էլ ունի։

Շինծու ծիծաղն առիթ տվեց տատիս իր արտասուքը ձեռքով սրբելու։ Այդ անելուց հետո նա վերստին մի ումպ անուշ արեց իր էյլից ու շարունակեց.

– Օ՛հ, ողորմած աստված,– հառաչեց նա։– Ես ամեն բան գիտեմ, Տրոտ։ Քո ու Դիկի դուրս գնալուց հետո, Բարկլիսն ու ես բավական փսփսացինք իրար հետ։ Գիտեմ, ինչեր են պատահել։ Միայն չեմ հասկանում, ո՞ր սատանան է այդ թշվառ աղջիկների խելքն ու միտքը թոցրել։ Լավ չէ՞ր լինի, որ իրենց գլուխը բռնեին և... և վառարանի պատին տալով պատռեին,– ասաց տատս, երևի թե իմ վառարանի պատին նայելուց այդ գաղափարն հղնալով։

– Խեղճ Էմլի,– գոչեցի ես։

– Խնդրեմ նրան այդպես չանվանես,– ասաց տատս։– Թող այսքան աղետ պատճառելուց առաջ, այդ մասին մտածեր։ Եկ համբուրիր ինձ, Տրոտ։ Ես ցավում եմ, որ արդեն վշտեր ես կրում այդ հասակում։

Երբ որ կռացա նրան համբուրելու համար, նա իր բաժակը ծնկիս վրա դրեց, որ չհեռանամ և ասաց.

– Օ՜հ, Տրոտ, Տրոտ։ Եվ կարծում ես, թե արդեն սիրով վառվա՞ծ ես։ Այդպե՞ս է, թե չէ։

– Ինչպե՞ս թե կարծել, տատիկ ջան,– գոչեցի ես բոլորովին կարմրելով։– Ես նրան հոգով սրտով պաշտում եմ։

– Դորայի՞ն, հա՞,– վրա բերեց տատս։– Եվ իհարկե կուզենայիր ասել, թե նա մի հրապուրիչ աղջիկ է, չէ՞։

– Սիրելի տատիկ, երևակայել անգամ չեք կարող, թե ինչ հրաշալի աղջիկ է։

– Ա՜հ։ Խենթուլիկ, չէ՞,– ասաց տատս։

– Խենթուլի՜կ։ Այդ ի՞նչ եք ասում, տատի ջան։– Մտքովս անգամ չէր անցել հարցնել ինձ՝ խենթուլի՞կ էր Դորան, թե՞ խելոք։ Այդ գաղափարը ես, իհարկե, զայրացած մերժեցի, բայց և այնպես դա իր նորությամբ ինձ ապշեցրեց։

– Ոչ էլ թեթևսոլի՞կ,– հարցրեց տատս։

– Թեթևսոլի՜կ։

Ես կարողացա միայն կրկնել այդ հանդուգն խոսքը միևնույն զգացումով, ինչպես և առաջինը։

– Դե լավ, դե լավ,– ասաց տատս։– Միայն հարցնում եմ։ Վատ բան չեմ ասում նրա մասին։ Խեղճ մանուկներ։ Ուրեմն իրավ կարծո՞ւմ եք, թե մեկմեկու համար եք ստեղծված, և վստա՞հ, թե ձեր կյանքը մեղր ու շաքար կլինի։ Այդպես չէ՞, Տրոտ։

Այդ խոսքերը նա այնպիսի բարությամբ ասաց, այնպես կիսազվարթ, կիսատրտում եղանակով, որ ես բոլորովին հուզվեցի։

– Մենք դեռ հարկավ ջահել ենք, տատի, դեռ անփորձ,– ասացի ես,– և հավանական է, որ ուրեմն հիմար-հիմար բաներ անենք կամ մտածենք։ Բայց և այնպես սերտ սիրով ենք սիրում իրար – ես վստահ եմ այդ մասին։ Եթե ես գեթ մի վայրկյան մտածեի, թե Դորան կարող է ուրիշին սիրել և կամ թե ինձ սիրելուց դադարել, կամ թե ես կարող եմ ուրիշին սիրել և նրան սիրելուց դադարել. . . Էլ չգիտեմ ի՞նչ կպատահի ինձ հետ – խելքս կցնդեր, տատի ջան։

– Ախ, Տրոտ,– ասաց տատս, գլուխը շարժելով ու ժպտալով։– Կո՜ւյր, կո՜ւյր, կո՜ւյր։ Ես ճանաչում եմ մեկին սիրելի Տրոտ,– շարունակեց նա մի կարճատև լռությունից հետո,– որ թեև դյուրաթեք է, բայց իր մոր պես հաստատուն է սիրո մեջ։ Այդ մեկին, Տրոտ, մի այնպիսի լուրջ ընկերուհի է հարկավոր, որ նրան պահպաներ և ուղղեր։ Մի լուրջ, անձնվեր, զգաստ ու հաստատ ընկերուհի։

– Օ՜հ, տատիկ, եթե իմանայիր, թե որքան լուրջ է իմ Դորան։

– Կույր ես, կո՜ւյր, որդյակ իմ։

Ինքս էլ չգիտեմ, թե ինչո՞ւ այդ րոպեին մի տխուր զգացում ամպի նման սիրտս պատեց, և ես կարծես մի բան կորցրի։

– Բայց և այնպես,– ասաց տատս,– ես մտադիր չեմ վիատեցնել և կամ թե անբախտացնել երկու սիրահար արարածների – ամենևին։ Գիտեմ, այդ սերը մի թռուցիկ բան է, մի փոքրիկ տղայի ու աղջկա թեթև կիրք, որ շատ անգամ ոչնչով չի վերջանում. . . լսիր, ասում եմ՝ շատ անգամ, այլ ոչ թե միշտ. . . այնուամենայնիվ, մենք այդ մասին կմտածենք և հուսով եմ, որ այս օրերս գործը հաջողակ ելք կստանա։ Ժամանակը դեռ չի անցել։

Թեև դրանք շատ էլ սփոփիչ խոսքեր չէին մի հափշտակված սիրահարի համար, սակայն ես դարձյալ գոհ էի, որ սրտիս գաղտնիքը հայտնի է տատիս: Արդեն քնելու ժամանակ էր: Մտածելով, որ նա հոգնած կլինի, շնորհակալ եղա իր ճշմարիտ կարեկցության ու սիրո համար: Մենք սրտանց իրար բարի գիշեր մաղթեցինք, և նա իր գլխանոցն առնելով ննջարանը գնաց:

Որքան թշվառ էի անկողնուս մեջ այդ գիշեր: Շարունակ մտածում էի, թե չքավորությանս մասին մր. Սպընլոն ի՞նչ կասի, քանի որ այժմ ես այն չեմ, ինչ որ էի Դորային առաջարկություն անելիս. տեսնում էի, որ պետք է իմ նյութական վիճակն ասպետաբար, շիտակ հայտնել Դորային և ազատել նրան իր խոստումից, եթե միայն համաձայնվի ետ առնել. մտածում էի, թե ինչպե՞ս պիտի ապրուստ ճարեմ, մինչ որ սկսեմ ռոճիկ ստանալ, հարցնում էի ինձ – ինչո՞վ պիտի օգնեմ տատիս, և պատասխան չէի գտնում: Որքան դառն էր մտածել, թե շուտով գրպանումս ոչ մի շիլինգ չեմ ունենա և ստիպված կլինեմ մաշված ու հին շորեր հագնել, Դորային փոքրիկ ընծաներ անելուց հրաժարվել ու վերջապես մնաս բարով ասել գորշ ձիուս, որ այնպես սիրուն թռչկոտում էր նրա առջև: Զգում էի, որ անձնական վշտով շատ մաշվելը եսասիրություն է, ազնիվ մարդու վայել բան չէ, և թեպետ շատ էի կշտամբում ինձ, բայց ես Դորային այնքան էի նվիրված, որ նրան հիշելիս չէի կարող իմ վիճակի դառնությունը մտքիցս հանել: Այո, գիտեի որ ստորություն է իմ մասին ավելի մտածել, քան տատիս, սակայն եսասիրությունս անբաժան շաղկապված էր Դորայի հետ, և ես անզոր էի մի ուրիշ մահկանացու էակի հետ փոխարինել Դորային: Օ՜հ, որքան թշվառ էի այն գիշեր:

Քունս չքավորության հազար տեսակ պատկերներով խճողված էր: Երազիս մեջ տեսնում էի, թե ահա ցնցոտի հագած գնում եմ Դորային լուցկիներ վաճառելու՝ վեց տուփը վեց պենսով. կամ թե գիշերվա խալաթով ու պատռտած մուճակներով մտնում եմ մր. Սպընլոյի գրասենյակը, և նա ինձ դուրս է քշում. կամ թե ագահությամբ հավաքում եմ ճիշտ կեսօրին նախաճաշող ծեր Տիֆըյի փշրանքները. կամ թե մոլեգնաբար պահանջում, որ ինձ Դորայի հետ պսակվելու իրավունք տան, և ուրիշ բան չեմ գտնում արտոնագիր դրոշմագիրը վճարելու համար, բացի Ուրիաս Հիպի ձեռնոցներից, որոնք ամբողջ ատյանից միաբերան մերժվում են: Վերջապես փոքր ի շատե հասկանում եմ, որ անկողնուս մեջ եմ պառկած, և ալեկոծ նավի նման անդադար մի կողմից դեպի մյուսն եմ շուռ գալիս սավանների օվկիսանոսում:

Տատս էլ կարծեմ հանգիստ չէր, որովհետև շուտ-շուտ լսում էի, թե ինչպես ետ ու առաջ էր գնում: Կես-գիշերին նա, մի երկար ասվե վերմակի մեջ փաթաթված, որի մեջ վեց ոտնաչափ բարձր էր թվում, երկու-երեք անգամ մի շրջիկ ոգու նման սենյակս մտավ ու բազմոցիս մոտեցավ, որի վրա պառկած էի: Առաջին անգամին ես լեղապատառ վեր թռա ու նրանից լսեցի, թե երկնքում երևացող տարօրինակ փայլին նայելով, Ուեստմինստրի վանքը հրդեհված կլինի. նա ուզում էր իմանալ, թե արդյոք կրակը մինչը Բուկինգեմի փողոցը չի՞ հասնի, եթե հանկարծ քամին փոխվի: Այնուհետև, երբ նա էլ, ես էլ միամտացանք, նա իմ կողքին նստեց ու շշնջաց. «խեղճ մանուկ»: Այդ որ լսեցի, սրտիս վիշտը քսան աստիճան սաստկացավ, որովհետև տեսա, թե որքան է մաշվում իմ պատճառով, մինչ ես կոպիտ անձնասիրությամբ միայն իմ մասին էի մտածում:

Դժվար էր հավատալ, որ ինձ համար այդքան երկար գիշերը կարող էր մեկ ուրիշի համար կարճ լինել: Այդ բանի մասին մտածելով սկսեցի մի պարահանդես երևակայել, ուր հյուրերը պարում էին առանց ժամերը հաշվելու, և ահա ինքս էլ այնտեղ ընկա: Երաժիշտներն անդադար միևնույն եղանակն էին նվագում: Դորան անվերջ պար էր գալիս, բնավ չմտածելով իմ մասին: Քնար ածող երաժիշտը զուր ճգնում էր իր գործիքը մի հասարակ գլխանոցով փաթաթել, երբ ես հանկարծ արթնացա, կամ լավ է ասել՝ հրաժարվեցի քուն մտնելու զուր ջանքերից, և տեսա, որ արեգակը վերջ ի վերջո ներս է շողում պատուհանից:

Այդ ժամանակ մի հռոմեական բաղնիք կար Ստրենդից սկսվող փողոցներից մեկի ծայրում (գուցե այսօր էլ կա), ուր սովոր էի սառը ջրի մեջ լողանալ: Ես շուտ-շուտ հագնվեցի ու Պեգգոտիին հանձնարարելով տատիս խնամել, շտապեցի ջուրը սուզվել. այնուհետև

Հեմստեդ գնացի զբոսնելու։ Վստահ էի, որ սառը ջուրը մտքերիս աշխուժություն կտա. այդպես էլ եղավ, որովհետև շատ չանցած որոշեցի, թե ամենից առաջ պետք է Սպընլոյի ու Ջորկինսի հետ կապված պայմանս ջնջել և գրավ դրած գումարս ետ ստանալ։ Մի հյուրանոցում նախաճաշիկ արեցի և հետո քայլերս դեպի Դոկտորների Համայնքն ուղղեցի։ Ճանապարհս նոր ջրված փողոցներով էր անցնում, և օդը այգիների բուրմունքով էր լի։ Գնում էի մեր նյութական թշվառությանը դիմադրելու. իմ առաջին փորձն այդ էր։

Դեռ վաղ էր, երբ մեր գրասենյակը հասա. ինձ պետք եղավ մի կես ժամ Համայնքի բակում ման գալ, մինչև որ ծեր Թիֆըն գար, որ և ամենից առաջ երևաց, իր հետ բերելով բանալիները։ Դուռը բացվելուց հետո, ես իմ ստվերավոր անկյունում նստեցի և սկսեցի արևափայլ տանիքներին նայել և Դորայի մասին մտածել։ Ահա առույգ ու թարմ մր. Սպընլոն ներս մտավ։

– Բարով, Կոպպերֆիլդ,– ասաց նա։– Ի՜նչ գեղեցիկ առավոտ է։

– Այո, հիանալի առավոտ է, սըր։ Կարո՞ղ եմ արդյոք մի երկու խոսք ասել ձեզ։

– Անշուշտ։ Եկեք իմ սենյակը։

Իր սենյակը մտանք, և մր. Սպընլոն պաշտոնազգեստը հագնելով՝ իր դեմքը սկսեց դիտել հայելու մեջ։

– Ցավելով պիտի հայտնեմ, սըր,– սկսեցի ես,– որ վատ լուր եմ ստացել իմ տատից։

– Մի՞թե,– ասաց մր. Սպընլոն։– Ա՜յ ցավալի բան։ Անդամալույծ հո չի՞ եղել։

– Ոչ, սըր. նոր լուրը նրա առողջության հետ կապ չունի։ Տատս մի մեծ դրամական կորուստ է կրել և գրեթե սնանկացել է։

– Ապ-շեցնում եք ինձ, Կոպպերֆիլդ,– բացականչեց մր. Սպընլոն։

Ես գլուխս շարժեցի։

– Այո, սըր, տատիս դրությունը այն աստիճան փոխվել է, որ կցանկանայի հարցնել ձեզ՝ արդյոք չէ՞ր կարելի... ծառայությանս պայմանագիրը... ոչնչացնել։

Եվ տեսնելով մր. Սպընլոյի դեմքի խոժոռվելն, ավելացրի.

– Ջոհ բերելով իմ կողմից գրավականիս մի մասը (թեև ամենևին չէի կամենա մի այդպիսի զոհաբերություն անել)։

Ոչ ոք չի կարող երևակայել, թե ինձ համար որքան ծանր էր այդ բանն առաջարկել մեծավորիս։ Դա միևնույնն էր, թե խնդրեի, իբրև ողորմություն, աքսորել ինձ և բաժանվել Դորայից։

– Ոչնչացնել պայմանագի՞րը, Կոպպերֆիլդ։ Ոչնչացնե՞լ։

Հաստատ կերպով բացատրեցի, թե նեղության մեջ եմ և ստիպված եմ, որ ինքս անձամբ ապրուստ ճարեմ։ Ապագայից վախենալու տեղի չունեմ, ասացի ես (այդ խոսքերը շեշտելով, որպեսզի մր. Սպընլոն իմանա, թե կարող եմ դեռ մի ձեռնտու փեսա լինել). բայց ներկայումս ստիպված եմ սեփական աշխատանքով ապրուստի միջոց վաստակել։

– Ցավալի է այդ բոլորը լսել, Կոպպերֆիլդ,– պատասխանեց մր. Սպընլոն։– Այո, անչափ ցավալի։ Բայց այդպիսի պատճառով պայմանագիր ջնջելը սովորական բան չէ մեր ատյանում։ Այդպես վարվել չի կարելի պաշտոնական ասպարեզում։ Դա վատ օրինակ կլինի։ Բայց և այնպես...

– Շատ բարի եք,– մրմնջացի ես, կարծելով թե մի զիջողություն պիտի անի։

– Բնավ ոչ. խնդիրը բնավ դրանում չէ,– շարունակեց մր. Սպընլոն։– Կամենում էի միայն ասել, որ եթե ձեռքերս ազատ լինեին... եթե մր. Ջորկինսի ընկերությամբ ձեռքերս կապված չլինեին...

Հույսերս իսկույն չիք դարձան, բայց ես դարձյալ մի փորձ արի։

– Ի՞նչ կասեք, սըր,– հարցրի ես,– եթե ուղղակի մր. Ջորկինսին դիմեմ։

Մր. Սպընլոն վհատ կերպով գլուխը թոթվեց։

– Տեր մի արասցե, Կոպպերֆիլդ,– գոչեց նա,– որ անիրավ եմ մեկի դեմ, այն էլ մր. Ջորկինսի դեմ։ Սակայն, Կոպպերֆիլդ, ես լավ եմ ճանաչում ընկերոջս։ Մր. Ջորկինսը այն մարդը չէ, որ մի այդպիսի անսովոր ու նոր առաջարկություն ընդունի։ Մր. Ջորկինսը սովոր չի մի անգամ բռնած ճանապարհից շեղվել։ Դուք հո գիտե՞ք, թե ինչ մարդ է։

Բայց ամենևին չգիտեի, թե մր. Ջորկինսն ինչ ի՛նչ մարդ է։ Այսքանը միայն հայտնի էր ինձ, թե առաջ նա մենակ ինքն է գրասենյակի գործերը հոգացել, իսկ այժմ առանձին է ապրում մի հին տան մեջ Մոնտեգի-Սկուեյրի կողմերում. թե ուշ-ուշ է գալիս գրասենյակն ու շատ վաղ է հեռանում. թե ոչ ոք չի տեսել, որ երբևէ նրանից խորհուրդ հարցնեն. թե նա վերևի հարկում մի առանձին մութ անկյուն ունի, ուր երբեք մի գործ չի կատարում և թե նրա սեղանի վրա փռված թուղթը թեև քսան տարվա հնությունից արդեն բոլորովին դեղնել է, բայց դեռ ոչ մի թանաքի բիծ չի տեսել։

– Դուք ոչինչ չե՞ք առարկի, սըր, եթե ուզենամ նրա հետ խոսել,– հարցրի ես։

– Ամենևին,– պատասխանեց մր. Սպընլոն։– Սակայն, Կոպպերֆիլդ, բավական մոտիկ ճանաչելով մր. Ջորկինսի բնավորությունը, չեմ կարծում, որ հեշտ զիջի ձեր խնդրին։ Եթե այդպես լիներ, ես ինքս սիրով կօգնեի ձեզ։ Այնուամենայնիվ, Կոպպերֆիլդ, ձեր ու նրա տեսակցության դեմ ասելիք չունեմ։ Եթե կարծում եք, թե արժի տեսնել այդ մարդուն, կարող եք տեսնել։

Պետք էր օգուտ քաղել մր. Սպընլոյի այդ թույլտվությունից, որ նա ինձ շնորհեց, աջս ամուր սեղմելով։ Ես որոշեցի մր. Ջորկինսին սպասել և մինչ նստած մտածում էի Դորայի մասին ու արևափայլ կտուրներին էի նայում, ահա մր. Ջորկինսն եկավ։ Ես նրա սենյակը բարձրացա։ Նա շատ զարմացավ, մի այցելու տեսնելով իր մոտ։

– Համեցեք, մր. Կոպպերֆիլդ,– ասաց մր. Ջորկինսը։– Ներս մտեք։

Մտա, նստեցի և նրան էլ գործս բացատրեցի, ինչպես որ բացատրել էի մր. Սպընլոյին։ Մր. Ջորկինսը բնավ այնքան ահարկու չէր, ինչքան որ կարծում էի։ Նա մի վաթսունամյա հաստ մարդ էր՝ հեզ ու բարի դեմքով, և այնքան շատ քթախոտ էր քաշում, որ Համայնքի գրագիրներն ասում էին, թե որովհետև միայն այդ դեղով է կերակրվում, ուստի իր մարմնի մեջ մի ուրիշ նյութ ընդունելու տեղ չի մնացել։

Մր. Ջորկինսը մինչև վերջը լսեց ինձ և անհանգիստ ձայնով հարցրեց.

– Հարկավ արդեն խոսած կլինեք մր. Սպընլոյի հետ։

– Այո, սըր, և նա էր, որ ձեզ դիմելու խորհուրդ տվեց ինձ։

– Եվ ասաց, թե ես կմերժե՞մ,– հարցրեց մր. Ջորկինսը։

Ստիպված էի խոստովանել, թե մր. Սպընլոն գրեթե մի այդպիսի կարծիք հայտնեց։

– Ուրեմն կներեք, մր. Կոպպերֆիլդ,– ասաց մր. Ջորկինսը շփոթվելով։– Շատ ցավում եմ, որ չեմ կարող օգնել ձեզ... Բանն այս է, որ... սակայն ինձ անհրաժեշտ է բանկ գնալ... Խնդրեմ ներեցեք։

Այս ասելուն պես մր. Ջորկինսը վերկացավ և ուզում էր շտապով դուրս գնալ. սակայն ես համարձակություն առա հարցնելու նրան.

– Ասել է թե գործիս օգնելու հնար չկա՞։

– Եվ ոչ մի հնար,– ասաց մր. Ջորկինսը, կանգ առնելով դռան մոտ։– Ո՛չ մի հնար։ Արդեն գիտեք որ մերժելու եմ,– ասաց շտապով ու դուրս գնաց։– Իմացած եղեք, մր. Կոպպերֆիլդ,– հարեց նա, դռան հետևից ներս նայելով,– որ եթե մր. Սպընլոն առարկում է. . .

– Բայց նա իր կողմից առարկություն չի անում, սըր,– ասացի ես։

– Օ՛, իր կողմից,– կրկնեց մր. Ջորկինսն անհամբեր։– Հավատացեք, մր. Կոպպերֆիլդ, որ արգելքներ կան, անհաղթելի արգելքներ։ Ձեր խնդիրը չի կարելի կատարել. . . Ներեցեք, ժամադրություն ունեմ բանկում։

Ասաց ու վազելով փախավ։ Այդ դեպքից հետո, ինչպես որ իմացա, նա երեք օր իր սենյակը ոտք չդրեց։

Որոշած լինելով ամեն միջոց գործ դնել, մինչև մր. Սպընլոյի վերադարձը սպասեցի և իր ընկերոջ հետ ունեցած իմ տեսակցությունը պատմեցի նրան, ակնարկելով թե անհույս չեմ, որ նա կարող լինի մր. Ջորկինսի քարե սիրտն ամոքել, եթե միայն հանձն առնի միջնորդել։

– Կոպպերֆիլդ,– ասաց մր. Սպընլոն շնորհալի ժպիտով,– դուք այնքան լավ չեք ճանաչում մր. Ջորկինսին, որքան ես։ Ես նրան վաղուց եմ ճանաչում։ Անիրավություն կլիներ ենթադրել, թե մր. Ջորկինսը կարող է գեթ մի վայրկյան խորամանկություն բանեցնել։ Սակայն մր. Ջորկինսը գիտի այնպիսի ձևով զանազան արգելքներ առաջ բերել, որ շատերին խաբում է։ Ո՛չ, Կոպպերֆիլդ, ապահով եղեք, մր. Ջորկինսին ոչ մի բանով չի կարելի շարժել։

Ես բոլորովին մոլորված էի մր. Սպընլոյի ու մր. Ջորկինսի միջև և խելքս չէր հասնում, թե արգելքներ մեջ բերողն այդ երկու ընկերներից իսկապես ո՞րն է, բայց բավական պարզ տեսնում էի, որ գրասենյակի մեջ մի անողոք խստություն կա և որ տատիս հազար ստեռլինգը չի կարելի ետ ստանալ։ Եվ ասպես գրասենյակից բավական հուսահատ տրամադրությամբ հեռացա, որի պատճառը, ինչպես այսօր էլ ամաչելով հիշում եմ, առավել իմ անձի (ուրեմն և Դորայի) հետ կապ ուներ, քան տատիս, և դեպի տուն գնացի։

Անհրաժեշտ էր ավելի հիմնավոր միջոց գտնել՝ մեր ապագան ապահովելու համար։ Մինչ այս բանի մասին մտածելով առաջ էի գնում, իմ հետևից մի կառք հասավ. ես կառքին նայեցի։ Կառքի պատուհանից մի սպիտակ աջ դեպի մի կողմ մեկնվեց, և ես մի ժպտուն դեմք տեսա, այն իսկ դեմքը, որ միշտ հանգիստ ու երջանկություն էր շնորհել ինձ այն օրից ի վեր, երբ առաջին անգամ տեսել էի նրան հինավուրց տան կաղնիաշեն, լայնաբազիրք սանդուղքի վրա։

– Ագնե՛ս,– գոչեցի ես ցնծությամբ։– Որքան ուրախ եմ, որ հատկապես ձեզ եմ տեսնում այս րոպեին։

– Իրա՞վ,– ասաց նա սրտագին ձայնով։

– Այնքա՛ն բան ունեմ ձեզ ասելու. . . Ձեզ վրա նայելն անգամ սփոփանք է ինձ։ Եթե ես մի դյութական գավազան ունենայի, ամենից առաջ նրանով ձեզ կկանչեի։

– Մի՞թե,– ասաց Ագնեսը։

– Գուցե առաջ Դորային,– ուղղեցի ես ամոթահար։

– Հարկավ առաջ Դորային,– կրկնեց Ագնեսն ու ծիծաղեց։

– Իսկ հետո ձեզ,– հարեցի ես։– Այս ո՞ւր եք գնում։

Նա գնում էր իմ բնակարանը՝ տատիս տեսնելու։ Եղանակն այնքան գեղեցիկ էր, որ Ագնեսն ուզեց կառքից իջնել։ Ես կառապանին արձակեցի, և Ագնեսն ու ես թև-թևի տված առաջ գնացինք։ Նա իմ վրա մարմնացյալ հուսո ազդեցություն գործեց. նրան տեսնելով ես բոլոր վշտերս մոռացա։

Տատս մի երկտող է գրած եղել Ագնեսին՝ այն համառոտ երկտողներից մեկը, որոնք բանկի տոմսերից մեծ չեն (նրա նամակագրական եռանդն այդ չափով էր բավարարվում), որով

հայտնել է, թե գործերի ձախորդության պատճառով վճռել է ընդմիշտ Դուվրից հեռանալ, թե ինքը լիովին ողջ ու զվարթ է, և խնդրում է, որ իր մասին ոչ ոք չանհանգստանա։ Այդ նամակը ստանալուն պես, Ագնեսն էլ եկել էր Լոնդոն՝ տատիս անձամբ տեսնելու, որի հետ վաղուց կապված է եղել սերտ սիրով, և հատկապես այն օրից, երբ ես առաջին անգամ ոտք էի դրել մր. Ուիկֆիլդի հին տունը։ Սակայն մենակ չի եկել, այլ իր հոր հետ և. . . Ուրիաս Հիպի։

– Այժմ նրանք գործակցո՞ւմ են,– հարցրի ես։– Այ անիծվի՛ այդ Հիպը։

– Այո,– ասաց Ագնեսը։– Նրանք այստեղ գործեր ունեն. ես էլ նրանց հետ միասին եկա։ Սակայն չկարծեք, Տրոտուդ, թե միայն այցելություն անելու եմ եկել։ Գուցե երկյուղս անհիմն է . . . բայց ես չեմ սիրում այդ մարդու հետ մենակ թողնել հայրիկիս։

– Մի՞թե, Ագնես, նա դարձյալ շարունակում է մր. Ուիկֆիլդի վրա ազդել։

Ագնեսը տրտմությամբ գլուխը շարժեց։

– Մեր հին տունն այնքան է փոխվել, որ չեք էլ ճանաչի,– ասաց նա։– Այժմ նրանք մեզ մոտ են բնակվում։

– Ո՞վքեր,– հարցրի ես։

– Մր. Հիպն ու իր մայրը։ Նա մնում է ձեր առաջվա ննջարանում,– ասաց Ագնեսը, նայելով դեմքիս։

– Ափսոս, որ ես չեմ նրան երազներ ազդողը,– նկատեցի ես։– Եթե ոչ՝ Հիպն այնտեղ երկար չէր քնի։

– Իսկ ես մնում եմ փոքրիկ սենյակում, ուր սովոր էի դասեր պատրաստել,– շարունակեց Ագնեսը։– Ա՛խ, ինչպես է անցնում ժամանակը։ Դուք հո հիշո՞ւմ եք այդ դրվագած սենյակը, որ կից էր դահլիճին։

– Կարո՞ղ եմ միթե չհիշել, Ագնես։ Այդ սենյակի դռնից չէ՞ր, որ առաջին անգամ երևացիք ինձ. այն ժամանակ բանալիների մի սիրուն քսակ էր կախված ձեր գոտուց։

– Այո՛, այո՛,– ասաց Ագնեսը ժպտալով։– Շատ ուրախ եմ, որ չեք մոռացել այդ բոլորը։ Որքա՞ն երջանիկ էինք այն ժամանակ։

– Իրավ որ երջանիկ,– կրկնեցի ես։

– Դարձյալ մնում եմ նույն սենյակում,– ասաց Ագնեսը,– բայց չեմ կարող մենակ թողնել մրս. Հիպին։ Շատ անգամ պետք եմ համարում նրա հետ լինել, մինչ կուզենայի առանձին մնալ սենյակիս մեջ։ Սակայն նրանից գանգատվելու բան չունեմ։ Թեև երբեմն հոգնեցնում է, որդուն անչափ գովելով, բայց փույթ չէ. չէ՞ որ մայր է։ Ուրիասը լավ որդի է մոր համար։

Այդ խոսքերի ժամանակ ես նայեցի Ագնեսին, բայց նրա դեմքի վրա ոչ մի նշան չտեսա, որ ցույց տար, թե նա Ուրիասի չար դիտավորություններից կասկածում էր։

– Նրանց մեր տանը գտնվելու ամենամեծ անհարմարությունը,– ասաց Ագնեսը,– այն է, որ արգելում է ինձ այնքան հաճախ հորս հետ լինել, ինչքան որ ես կուզեմ, որովհետև Ուրիաս Հիպը միշտ տնկվում է մեր միջև։ Ես հնար չունեմ առաջվա պես հորս վրա արթուն հսկելու։ Սակայն եթե նրա դեմ որևէ չարիք կամ դավադրություն նյութելու լինեն, հուսով եմ, որ հավատարիմ սերս վերջ ի վերջո ամեն նենգություն կհաղթի։ Ես վստահ եմ, Տրոտուդ, որ անձնվեր սերն ու ճշմարտությունը աշխարհիս բոլոր չարիքներից զորեղ են։

Արդեն մոտեցել էինք մեր փողոցին, երբ Ագնեսի քաղցրիկ ժպիտն անհետացավ երեսից, և նա հարցրեց, թե ինչի՞ց են տատիս գործերը խանգարվել։ Երբ ասացի, թե չգիտեմ, նա ավելի մտախոհ դարձավ, և զգացի, որ նրա ձեռքը հանկարծ դողաց բազկիս վրա։

Եկանք տուն։ Տատս մենակ էր ու գրգռված։ Նրա ու մրս. Կրոպպի միջև մի վերացական վեճ էր ծագել, թե որքա՞ն հարմար է գեղեցիկ սեռին մի ջահել տղամարդու բնակարանում

հաստատվել, և տատս առանց ուշք դարձնելու մրս. Կրոպպի **սպազմներին**՝ կարճ ասել էր նրան, թե նրա վրայից իմ օղու հոտն է փչում, և հետևաբար, լավ կանի, որ իսկույն սենյակից կորչի: Այս խոսքերից մրս. Կրոպպը վիրավորվել էր ու հայտնել, թե կերթա «Բրիտանական դատարանին» բողոքելու, որովհետև իր պատիվը վտանգված է:

Տատս Ագնեսին տեսնելուն պես իր հյուրին սիրով ընդունեց և իր հաղթանակը ցույց տալու համար, արդեն հովացած սրտով, վերոհիշյալ վեճը պատմեց մեզ: Պեգգոտին տանը չէր. նա ու մր. Դիկը հրապարակ էին գնացել թիկնապահ հեծելազորի մարզանքները տեսնելու ու թմբուկները լսելու: Երբ Ագնեսն իր գլխարկը սեղանի վրա դրեց և տատիս մոտ նստեց, ես նրա բարի աչքերին ու պայծառ ճակատին նայելով, ակամա ինքս ինձ ասացի. որքա՜ն լավ կլիներ, եթե միշտ այդտեղ մնար. տատս որքան ջերմ հավատարմություն է ընծայում նրան, չնայած որ նա այդպես ջահել ու անփորձ է. իրոք որքա՜ն զորեղ է նա իր պարզ սիրով ու ճշմարտության հավատով:

Տատիս կրած կորուստների մասին սկսեցին խոսել, և ես պատմեցի, թե առավոտյան ի՞նչ փորձեր էի արել:

– Անմիտ փորձեր,– ասաց տատս,– բայց ոչ անազնիվ: Դու վեհանձն տղա ես, Տրոտ, կամ թե այժմ լավ է երիտասարդ անվանել քեզ, և ես քեզնով պարծենում եմ: Շատ լավ: Բայց, Տրոտ և Ագնես, այժմ միս Բեթսի Տրոտուդի գործերին տեսնենք, թե ինչպե՞ս են:

Ագնեսի երեսը գունատվեց, և նա աչքերը տատիս վրա ուղղեց. տատս էլ, կատվին շոյելով, ուշադրությամբ նայեց Ագնեսին:

– Բեթսի Տրոտուդը,– ասաց տատս,– խոսքս քրոջդ մասին չէ, այլ իմ մասին, Տրոտ,– իր սեփական ժառանգությունն ուներ: Փույթ չէ, թե որքան ուներ. ինչ որ ուներ, իր ապրուստին բավական էր, մինչև անգամ ավելի քան բավական, որովհետև խնայողություն անելով մայր գումարը ավելացրել էր: Այդ գումարը Բեթսին նախ բանկ էր դրել, բայց հետո մի գործնական մարդու խորհրդով մի ուրիշ տեղ շահով տվեց՝ անշարժ գրավի փոխարեն: Գործը հաջող էր և եկամուտը ձեռնտու էր, բայց շատ չանցած՝ գրավից ազատվեցին, և Բեթսին գումարը ետ ստացավ: Ես Բեթսիի մասին այնպես եմ խոսում, որ կարծես թե զինվոր է: Շա՛տ լավ: Այնուհետև Բեթսին ուզեց իր կայքը մի ուրիշ կերպ շահեցնել: Նա երևակայեց, թե ինքն այժմ ավելի խելոք է, քան գործնական մարդը, որ այլևս առաջվա պես ճարպիկ չէր... խոսքս ձեր հոր մասին է, Ագնես... և վճռեց առանց նրան բան ասելու՝ իր գործն անձամբ հոգալ: Եվ ինչպես ասում են՝ փիս խրվեց: Նախ և առաջ մի հանքային գործում վնաս քաշեց. հետո մի ծովային գործում վնաս կրեց... ուր ծովի հատակից կորած գանձեր ու չգիտեմ էլ ինչ հիմար բաներ պիտի որսային... – ասաց տատս, քիթը տրորելով,– հետո նորից հանքերի մեջ վնասվեց և վերջապես ամեն բան միանգամից ուղղելու համար՝ բանկային գործում կոտր ընկավ: Մի որոշ ժամանակ ես չգիտեի, թե այդ բանկի տոմսերը որքա՞ն արժեն... Կարծեմ ամեն մեկին հարյուր տոկոս էր խոստացված... չեմ էլ իմանում, թե բանկն աշխարհիս ո՞ր ծայրումն էր. միայն գիտեմ, որ նա մի օր հօդս ցնդեց և իր տոմսերի փոխարեն վեց պենս անգամ չվճարեց՝ այնինչ Բեթսիի բոլոր փողերն այդ տոմսերի մեջ էին, և ահա այդպես վերջացան: Է՛լ չխոսենք այդ մասին:

Այս փիլիսոփայական վերջաբանը տատս կնքեց, մի հաղթական հայացք գցելով Ագնեսի վրա, որի դեմքն արդեն սկսել էր զվարթանալ:

– Եվ ա՞յդ է բոլոր պատմությունը, սիրելի միս Տրոտուդ,– հարցրեց Ագնեսը:

– Կարծեմ այդ էլ բավական է, որդյակ իմ,– ասաց տատս:– Եթե Բեթսին դարձյալ կորցնելու փող ունենար, գուցե էլի մի պատմելու բան գտներ, որովհետև այդ մնացորդն էլ կորածների հետևից կուղարկեր և պատմության վրա մի նոր գլուխ կավելացներ: Բայց փող որ չկա, պատմելու բան էլ չկա:

Ագնեսը սկզբում շունչը պահած էր ականջ դնում: Այժմ էլ նրա դեմքը մերթ սփրթնում էր, մեկ կարմրում, բայց շունչն ավելի ազատ էր, և ես կարծեմ հասկանում էի, թե ինչո՞ւ: Անշուշտ նա վախենում էր, թե իր անբախտ հայրիկը որևէ դեր կունենա տատիս նյութական վնասների մեջ: Տատս բռնեց նրա երկու ձեռքն ու ծիծաղելով ասաց.

– Եվ դուք հարցնում եք, թե ա՞յս է բոլոր պատմությունը: Այո՛, այս է: Կմնա միայն վերջաբանն ավելացնել, թե «այն օրից նա բախտավոր ու երջանիկ էր»: Գուցե այդ էլ շուտով ավելացնեմ միս Բեթսիի պատմության վրա: Իսկ այժմ գիտե՞ս ինչ կասեմ. սիրելի Ագնես, դու լավ գլուխ ունես: Դու էլ, Տրոտ, բավական խելոք ես, թեև ոչ միշտ,– հարեց տատս, գլուխը սաստիկ թոթովելով:– Մեր անելիքն այժմ ի՞նչ է: Իմ Դուվրի տունը կարող է տարեկան յոթանասուն ստեռլինգ եկամուտ տալ միջին հաշվով: Շատ լավ... բայց եղած-չեղածը միայն այդ է: Է՛լ ուրիշ բան չկա,– ասաց տատս ու դադարեց... Իսկ և իսկ այն ձիերի նման, որոնք հանկարծ կանգ են առնում արշավելու միջոցին:

– Եթե կամենաք,– ասաց տատս մի քիչ լռելուց հետո,– Դիկն էլ կա: Նա էլ ունի տարեկան մի հարյուր ստեռլինգի արդյունք, բայց այդ գումարը միայն իր անձնական պետքերի վրա պիտի ծախսվի: Ես ավելի լավ կհամարեմ վռնդել նրան, թեև ես եմ նրան գնահատող միակ անձը, քան թե այդ գումարից գեթ մի պենս վատնել: Մեր միջոցներով Տրոտն ու ես ինչպե՞ս պիտի կառավարվենք: Ի՞նչ կասեք, Ագնես:

– Ես որոշել եմ մի բան անել,– ասացի ես Ագնեսից առաջ:

– Եվ ի՞նչ բան,– ընդհատեց տատս:– Օրինակի համար զինվո՞ր կդառնաս կամ նավաստի՞: Լսել անգամ չեմ ուզում: Ներեցեք, սըր, չեմ ուզում այդպիսի գժեր տեսնել իմ շուրջը: Դու պրոկտոր կդառնաս:

Ուզում էի բացատրել, թե ես ամենևին մտադիր չեմ մեր տան մեջ մի զինվորական կամ ծովային տարր մտցնել, բայց Ագնեսն առաջս կտրեց հարցնելով, թե բնակարանիս ժամանակը ե՞րբ է վերջանում:

– Բուն խնդիրն էլ հենց այդ է, որդյակ,– գոչեց տատս:– Մենք առնվազն վեց ամսով կապված ենք, եթե ինքներս մեկ ուրիշին վարձու չտանք, որ հեշտ բան չէ: Վերջին վարձողն այստեղ է մեռել, և վեց վարձողից անշուշտ հինգը կմեռնի այն նանկինի շապկով ու ֆլանելի ֆիստոնով կնոջ ձեռքից: Գրպանումս դեռ մի քանի ոսկի կա, և կարծում եմ լավ կլինի մինչև պայմանաժամի չքանալն այստեղ մնալ, իսկ Դիկի համար մոտերքում մի ննջարան վարձել:

Պարտք համարեցի նկատել տատիս, թե նրա համար ձանձրալի կլինի միշտ պատերազմ մղել մրս. Կրոպպի հետ, բայց տատս կտրուկ կերպով պատասխանեց, թե թշնամության նշան տեսնելուն պես, մի այնպիսի օյին կբերի այդ կնոջ գլխին, որ նա մինչև մահվան օրն ահ ու դողից չազատվի:

– Կարծում էի, Տրոտուդ,– ասաց Ագնեսը քաշվելով,– որ եթե ժամանակ ունենայիք...

– Ես ազատ ժամանակ շատ ունեմ, Ագնես: Ժամը չորսից կամ հինգից հետո միշտ ազատ եմ. վաղ առավոտյան նույնպես ազատ եմ: Համենայն դեպս, պարապ ժամեր միշտ կգտնեմ,– հարեցի ես ու կարմրեցի, հիշելով այն բազմաթիվ ժամերը, որ վատնել էի Նորվուդի ճանապարհի վրա քարշ գալիս:

– Վստահ չեմ արդյոք կուզենայի՞ք քարտուղարի պաշտոն վարել,– կամացուկ ասաց Ագնեսը մի այնպիսի քաղցրությամբ, որ այսօր էլ հիշում եմ:

– Եվ ինչո՞ւ եք անվստահ, սիրելի Ագնես:

– Բանն այս է,– շարունակեց Ագնեսը,– որ դոկտոր Ստրոնգն ըստ իր վաղեմի ցանկության արդեն եկել և հաստատվել է Լոնդոնում: Եվ ես գիտեմ, նա հորս խնդրել է մի քարտուղար գտնել իր համար: Ի՞նչ եք կարծում, նա չէ՞ր ուզենա իր սիրած նախկին աշակերտին հրավիրել, քան ուրիշին:

– Օ՛հ, Ագնես,– ասացի ես։– Ի՞նչ կլինեի առանց ձեզ։ Դուք իմ բարի հրեշտակն եք։ Ես այդ միշտ կրկնել եմ։ Ես չեմ կարող մի ուրիշ կերպ պատկերացնել ձեզ մտքիս մեջ։

Ագնեսը հեզիկ ժպտալով պատասխանեց, թե մեկ հրեշտակն էլ ինձ հերիք է (ակնարկում էր Դորային), իսկ երկուսն ունենալը արդեն շատ է։ Հետո ասաց, թե դոկտորը սովոր է միայն առավոտյան ու երեկոյան ժամերին պարապել, և թե ուրեմն իմ ազատ ժամերը շատ կարող էին նրա պետքերին հարմար գալ։ Անձնական ջանքով հաց վաստակելու ակնկալությունը գուցե ինձ այնքան չուրախացրեց, որքան այն հույսը, թե այդ հացը մեծարգո վարժապետիս մոտ աշխատելով պիտի վաստակեմ։ Ուստի Ագնեսի խորհրդի համաձայն իսկույն նստեցի ու գրեցի դոկտորին, թե պատիվ կունենամ հետևյալ առավոտյան ժամը տասին ներկայանալ նրան։ Նամակս պետք էր Հայգեթ ուղարկել, որովհետև դոկտոր Ստրոնգը այդ ինձ համար արժանահիշատակ կենտրոնումն էր բնակվել։ Առանց ժամանակ կորցնելու՝ նամակը ես ինքս փոստ տարա։

Որտեղ էլ լիներ Ագնեսը, նրա անշշուկ ներկայության հաճելի հետքն այնտեղից անբաժան էր։ Երբ որ փոստից ետ եկա, տատիս թոչնի վանդակն արդեն կախված էր պատուհանում. թիկնաթոռս պատուհանի մոտ էր դրված այն դիրքով, ինչ դիրք որ տատիս շքեղ բազկաթոռն ուներ. մինչև անգամ այն կանաչ լուսարգելը, որ տատս բերել էր իր հետ, այժմ իրեն պատշաճավոր տեղն էր գտել պատուհանի վրա։ Իսկույն իմացա, թե ո՞վ է արել այդ բոլորը, և եթե Ագնեսը հազար մղոն հեռու լիներ, դարձյալ ես մի ակնարկով կիմանայի, թե ո՞վ է գրքերս դարակի վրա այնպես շարել, ինչպես որ ես էի շարում աշակերտությանս ժամանակ։ Սակայն Ագնեսը ներկա էր, և ես տեսնում էի, թե ինչպե՞ս ժպտալով շարունակում է կարգի բերել ամեն բան։

Տատս շատ գոհ էր Թեմզայից (որ իրոք փառահեղ էր արևի տակ, թեև ոչ այն ծովի պես, որ փռված էր Դուվրի տան դեմուդեմը), և շատ դժգոհ Լոնդոնի ծխից, որ իր ասելով ամեն բան «պղպեղում էր»։ Այդ պղպեղի դեմ Պեգգոտին մի սոսկալի կռիվ էր սկսել բնակարանիս բոլոր անկյուններում, և ես ապշած դիտում էի, որ նույնիսկ Պեգգոտին, չնայած իր հանած աղմուկին, Ագնեսից պակաս է բան շինում, թեև սրա ձայնն անգամ չէիր լսում։ Շատ չանցած դրսի դուռը բախեցին։

– Երևի թե հայրիկս է,– ասաց Ագնեսը սփրթնելով։– Նա ասել էր, թե գալու է։

Ես դուռը բաց արի ու ներս թողի ոչ միայն մր. Ուիկֆիլդին, այլև Ուրիաս Հիպին։ Վաղուց չէի տեսել մր. Ուիկֆիլդին, և թեպետ Ագնեսի պատմածից գիտեի, որ շատ փոխված կլինի, բայց և այնպես շվարած մնացի նրան տեսնելով։

Չի կարելի ասել, թե նա շատ ծերացել էր, թե երեսի կարմրությունը պակասել էր, թե ձեռքերն ավելի էին դողում և կամ աչքերն ավելի էին արյունով լցված, թե նրա հագուստն առաջվա պես վայելուչ չէր, թե ձևերը նախկին շնորհքը չունեին։ Ո՛չ։ Շվարելուս պատճառն այն էր, որ մր. Ուիկֆիլդը, չնայած իր բնական ազնվության, որ տակավին պահպանել էր, այն մարմնացյալ ստորություն, այն գետնաքարշ արարածին՝ Ուրիաս Հիպին էր ենթարկվում։ Անկարելի էր պատկերացնել մի ավելի ողորմելի տեսարան, քան այդ երկու բնավորությունների հիմն ի վեր հեղաշրջումն իրենց փոխադարձ դիրքի մեջ՝ Ուրիասի իշխանությունը և մր. Ուիկֆիլդի հպատակությունը։ Եթե ես ադամորդուն հրաման տվող կապիկ տեսնեի, չեմ կարծում, որ այդ պատկերն ինձ ավելի խայտառակ երևար, քան այդ։

Մր. Ուիկֆիլդն, ըստ երևույթին, ինքն էլ իր վիճակի նվաստությունը զգում էր։ Ներս մտնելուն պես նա գլխիկոր կանգ առավ, կարծես ամաչելով ինքն իրենից։ Այդ միայն մի վայրկյան տևեց։ Ագնեսը հեզաբար մոտեցավ նրան ու ասաց. «Հայրիկ, ահա միս Տրոտուդը... և մր. Կոպպերֆիլդը, որին վաղուց չես տեսել։ Այն ժամանակ ծերունին մի քանի քայլ առաջ անցավ, վարանելով աջը տվեց տատիս և իմ ձեռքը ամուր սեղմեց։ Այդ միջոցին Ուրիաս Հիպի շուրթերի վրա մի չարախինդ ժպիտ տեսա։ Կարծեմ Ագնեսն էլ նույնը նկատեց, որովհետև անմիջապես նրանից հետ քաշվեց։

Արդյոք տատս էլ այդ նկատե՞ց, թե՞ չնկատեց, չգիտեմ, և հավատացած եմ, որ ոչ մի դիմագետ էլ չէր իմանա՝ առանց նրա հատուկ հոժարության։ Աշխարհիս երեսին մարդ չկար, որ կարողանար ուզած րոպեին ավելի անվրդով և անքննելի երևալ, քան տատս։ Ինչպես որ անշարժ պատից, նույնպես էլ տատիս դեմքից չէր կարելի նրա զգացումը գուշակել, եթե նա հանկարծ իրեն հատուկ սաստկությամբ իր լռությունը չընդհատեր։

– Դե՛, Ուիկֆիլդ,– ասաց տատս, և մր. Ուիկֆիլդն առաջին անգամ նրա երեսին նայեց։– Ես պատմում էի ձեր աղջկան, թե ինչպես լավ եմ իմ փողերը գործադրել առանց դիմելու ձեր խորհրդին, որովհետև այսպիսի գործերում դուք արդեն բոլորովին անպետք եք։ Ամեն բան միասին քննելով, մենք գտանք, որ գործերի ընթացքը շատ հաջող է։ Իմ կարծիքով՝ Ագնեսը մենակ, ձեր ամբողջ ֆիրմայից ավելի արժի։

– Եթե կներվի ինձ մի խոնարհ կարծիք հայտնել,– ասաց Ուրիաս Հիպն՝ օձի նման գալարվելով,– ես լիովին համամիտ եմ միս Բեթսի Տրոտուդի հետ, և երջանիկ կլինեի, եթե միս Ագնեսը մեր ընկերությանը մասնակցեր։

– Դուք հո արդեն մասնակի՞ց եք,– նկատեց տատս,– և այդ արդեն բավական է։ Ինչպե՞ս եք, պարոն։

Հիպը այդ չոր հարցումը լսելուն պես, թևի տակ բռնած կապույտ թղթապանակը շոշափեց և անհանգիստ գլուխ տալով տատիս, պատասխանեց, թե առողջ է։ Այնուհետև հույս հայտնեց, թե տատս էլ երևի քաջառողջ է։

– Իսկ դո՞ւք, մաստր... ներեցեք, ուզում էի ասել՝ միստր Կոպպերֆիլդ,– ասաց Ուրիասը,– անտարակույս դուք էլ առողջ եք։ Ուրախ եմ, որ տեսնում եմ ձեզ, միստր Կոպպերֆիլդ, նույնիսկ ներկա հանգամանքներում։

Պարզ է, որ իմ ներկա հանգամանքները նրան շատ հաճելի էին։

– Ձեր բարեկամներն անշուշտ կուզենային ուրիշ հանգամանքների մեջ տեսնել ձեզ,– շարունակեց Ուրիասը,– սակայն մարդուս մարդ շինողը փողը չէ, այլ... ներեցեք, ես անզոր եմ թույլ ուժերովս բացատրել, թե ինչն է,– հարեց նա նվաստաբար քծնելով,– միայն գիտեմ, որ փողը չէ։ Ո՛չ։

Եվ նա սկսեց աջս թոթվել, բայց ոչ թե սովորական եղանակով, այլ հեռվից, և վերցնելով ու ցած թողնելով, ինչպես մի ջրհանի կոթ, որից կարծես վախենում էր։

– Իսկ մեր առողջությունը ինչպե՞ս եք գտնում, մաստր... կուզեի ասել՝ միստր Կոպպերֆիլդ,– հարցրեց Ուրիասը կծկվելով։– Իրավ չէ՞, սըր, որ մր. Ուիկֆիլդը քաջառողջ է։ Տարիները մեր ֆիրմայի վրա շատ են ազդում, մաստր Կոպպերֆիլդ։ Տարիները միայն բարձրացնում են խոնարհներին, այսինքն՝ համեստ մորն ու որդուն... և միս Ագնեսի գեղեցկությունն ու շնորհքը զարգացնում։

Այս կոմպլիմենտից հետո, Ուրիասը այնպես զզվելի կերպով կուչ եկավ, որ տատս համբերությունը կորցրեց։

– Սատանան տանի դրան,– գոչեց տատս։– Ի՞նչ է պատահել այդ մարդուն։ Հերիք է, պարոն, քանի՛ ծռմռվեք։

– Ներեցեք, միս Տրոտուդ,– պատասխանեց Ուրիասը,– գիտեմ, որ մի քիչ ջղային եք։

– Խնդրեմ կորեք, սըր,– գոչեց տատս բարկությամբ։– Չհամարձակվեք մի այդպիսի բան ասել։ Ես ամենևին ջղային չեմ։ Եթե դուք օձաձուկ եք, այդ ձկան պես էլ վարվեցեք. իսկ եթե մարդ եք, ձեր անդամների շարժումը զեպեցեք։ Տե՛ր ողորմյա,– ասաց տատս, ավելի զայրանալով,– ես թույլ չեմ տա, որ դուք գլուխս ման բերեք, շոնչանի կամ հոլի պես պտույտ գալով։

Ուրիասն այս բռնկումից փոքր-ինչ շփոթվեց, մանավանդ երբ որ տատս աթոռը հրեց ու գլուխն այնպես թափահարեց, որ կարծես ուզում էր նրա վրա նետվել։ Ուրիասը շուռ եկավ ու մեղմ ձայնով ասաց ինձ.

– Գիտեմ, մաստր Կոպպերֆիլդ, որ միս Տրոտուդն իր բոլոր արժանիքներով հանդերձ մի քիչ ներվային տիկին է։ Ես պատիվ ունեմ ճանաչելու նրան, երբ դեռ մի հասարակ գրագիր էի։ Բնական է, որ ներկա հանգամանքներում նրա դյուրագրգռությունը ավելի սաստկացած լինի։ Կզարմանայի, եթե այդպես չլիներ։ Ես եկել եմ միայն հայտնելու, որ եթե ներկա պարագաներում մայրս ու ես, կամ մր. Ուիկֆիլդն ու Հիպը, կարողանանք մի որևէ բանով ձեզ օգնել, անչափ ուրախ կլինենք։ Կարծեմ առաջարկս մեր շահերին չի վնասի,– ասաց Հիպը և մի չար ժպիտով մր. Ուիկֆիլդին նայեց։

– Ուրիաս Հիպը շատ արթուն է գործի մեջ, Տրոտուդ,– ասաց մր. Ուիկֆիլդը մի բռնազբոսիկ ու միակերպ ձայնով։– Ես լիովին ընդունում եմ նրա ասածը։ Գիտեք, որ ես միշտ համակրել եմ ձեզ. բացի այդ՝ ինչ որ Ուրիաս Հիպն ասի, նույնը ես կկրկնեմ։

– Ա՛հ, որպիսի վարձատրություն... որքան երջանիկ եմ այդ անսահման հավատարմությամբ,– ճվաց Ուրիասը, ոտքը առաջ տնկելով ու վիզը մի կողմ թեքելով, որի համար տատս պատրաստ էր երկրորդ անգամ սաստել նրան։– Սակայն, մաստր Կոպպերֆիլդ, իրա՞վ է, որ ես փոքր-ինչ թեթևացնում եմ նրա պաշտոնի ծանր բեռը։

– Ուրիաս Հիպը գործս շատ է հեշտացնում,– ասաց մր. Ուիկֆիլդը միևնույն ընկճված ձայնով։– Նրա ընկերությունը բեռիս կեսից ազատում է ինձ, Տրոտուդ։

Այդ բոլորը ասում էր ստոր աղերսի թելադրությամբ, որի նպատակն ինձ հայտնի էր։ Ուրիասն ուզում էր նրա բերանով արդարացնել այն բոլորը, ինչ որ ասել էր ինձ սենյակիս օդը թունավորելու գիշերը։ Ես նորից տեսա նրա չար ժպիտը, մինչ նա ուշի-ուշով դիտում էր ինձ։

– Հայրիկ, մի՞թե արդեն գնում եք,– ասաց Ագնեսն անձկությամբ։– Եթե կամենաք, Տրոտուդն ու ես կուղեկցենք ձեզ։

Մր. Ուիկֆիլդը պատասխանելուց առաջ, անշուշտ Ուրիասին կնայեր, եթե այս արժանավոր անձը նրա առաջը չառներ։

– Ես մեկին մի կարևոր գործի համար ժամադիր եմ եղել,– ասաց Ուրիասը, եթե ոչ՝ ուրախությամբ բարեկամներիս շրջանում կմնայի։ Սակայն իմ փոխարեն ընկերն այստեղ կմնա։ Ձեր խոնարհ ծառան եմ, միս Ագնես։ Բարի գիշեր, մաստր Կոպպերֆիլդ, խնդրեմ մատուցեք խորին հարգանքս միս Բեթսի Տրոտուդին։

Ասաց ու գնաց, իր կոպիտ աջով օդային համբույրներ ուղարկելով մեզ և դիվային հայացք գցելով մեր վրա։

Մյուսներս դարձյալ մի երկու ժամ միասին նստեցինք, խոսելով այն երջանիկ օրերի մասին, որ վայելել էինք Կենտրբըրիում։ Մր. Ուիկֆիլդը Ագնեսի հետ մնալով, նորից մի քիչ աշխուժացավ, թեև թախիծը երեսից անբաժան էր, և վերջ ի վերջո հաճությամբ սկսեց ականջ դնել մեր անցյալի մանր-մունր հիշատակներին, որ ինքն էլ դեռ չէր մոռացել։ Նա ասաց, թե Ագնեսի ու ինձ հետ այն հին օրերը հիշելիս, կարծես վերապրում է անցյալը, և կցանկանար որ նրանք միշտ անփոփոխ մնային։ Ակներև էր, որ Ագնեսի հեզիկ նայվածքը հոր վրա և նույնիսկ նրա ուսի թեթև շոշափումը անասելի սփոփանք էր պատճառում խեղճ մարդուն։

Տատս, որ այդ միջոցին մյուս սենյակում Պեգգոտիի հետ զբաղված էր, չուզեց հյուրերին ուղեկցել, երբ նրանք հեռանալու վրա էին, այլ խնդրեց, որ ես գնամ նրանց հետ։ Ես էլ գնացի։ Մենք միասին ճաշեցինք։ Ճաշից հետո Ագնեսը հոր մոտ նստելով, ինչպես մի ժամանակ, սկսեց նրա համար գինի լցնել։ Հայրն էլ երեխայի նման վերցնում էր, ինչ որ աղջիկը տալիս էր՝ ոչ ավելի։ Եվ այսպես մինչև երեկոյան մութը երեքս միասին մնացինք։ Մթնելուց հետո մր. Ուիկֆիլդը բազմոցի վրա թեք ընկավ. Ագնեսը մի բարձ դրեց նրա գլխի տակ և մի քանի րոպե

նրա սնարի մոտ մնաց։ Երբ նա նորից պատուհանին մոտեցավ, այնքան մութ չէր, որ ես նրա աչքերում փայլող արտասուքը չնկատեի։

Աղաչում եմ աստծուն՝ շնորհ տալ ինձ չմոռանալու այդ պատվական աղջկա հավատարիմ, ճշմարիտ սերը, որով նրան ներշնչված տեսա կյանքիս այդ դժվարին միջոցին։ Եթե մոռանամ, այդ նշան կլինի, թե կյանքիս վախճանն արդեն հասել է, և այն ժամանակ ավելի կփափագեմ հիշել նրան։ Նա այնքան բարի մտքեր զարթեցրեց սրտիս մեջ, այնքան իր կենդանի օրինակով իմ թույլ կամքը զորացրեց և թեպետ շատ համեստ ու սակավախոս էր, բայց իմ թռուցիկ եռանդին ու երերուն ձգտումներին այնպես հաստատ ուղղություն տվեց, որ եթե ես կյանքիս մեջ գեթ մի բարիք եմ արել կամ գեթ մի չարիք խափանել – հանդիսաբար վկայում եմ – այդ միայն նրան եմ պարտական։

Եվ ինչպե՜ս էր խոսում Դորայի մասին, ինչպե՜ս էր գովասանքներիս ականջ դնում, ինքն էլ իր կողմից նրան գովում էր, իր ջինջ լույսից փայլ սփռելով այդ դյութական էակի վրա, որ այժմ ավելի սիրարժան և անմեղ էր երևում ինձ։ Օ՜հ, Ագնես, իմ երիտասարդության ազնիվ քույրիկ, եթե գիտենայի այդ միջոցին, ինչ որ հետագայում իմացա. . .

Ագնեսի սենյակից իջնելիս ես փողոցում մի մուրացկան տեսա և այն րոպեին, երբ դեպի ընկերուհուս պատուհանը նայեցի, նրա հրեշտակային աչքերի մասին մտածելով, հանկարծ մի սարսուռ զգացի աղքատի ձայնից, որ մրմնջում էր.

«Կո՜ւյր, կո՜ւյր, կո՜ւյր»։

ԺԶ. ԳԼՈՒԽ
Ոգևորություն

Հետևյալ օրը հռոմեական բաղնիքը մտա և հետո Հայգեթ գնացի։ Առաջվա վիճատությունս արդեն անցել էր։ Ես չէի վախենում աղքատ հագուստից. ոչ էլ ափսոսում էի, որ այլևս իմ գորշ ձին չպիտի հեծնեմ։ Բոլոր մտքերս մեզ հասած աղետի մասին միանգամայն փոխվել էին։ Այժմ պետք էր – այդ էր հաստատ որոշումս – տատիս ցույց տալ, որ նրա անցյալ բարությունները մի անզգա, մի ապերախտ էակի վրա չեն վատնված։ Այժմ պետք էր օգուտ քաղել մանուկ հասակիս տաժանելի փորձերից և անվեհեր, հաստատուն կամքով ձեռնամուխ լինել աշխատության։ Պետք էր քաջորեն փայտահատի կացինը ձեռքն առնել և արգելքների անտառի միջով ճանապարհ բանալ, ծառերն աջ ու ձախ տապալելով, մինչև որ հասնեմ Դորային։ Եվ ես գնում էի մեծ-մեծ քայլեր անելով, կարծես թե այդ լիներ նպատակիս շուտ հասնելու միջոցը։

Երբ Հայգեթ քաջածանոթ ճամփու վրա ոտք դրի այդպիսի որոշումով, ոչ թե միայն զվարճանալու ու զբոսնելու հաճույքով, ինչպես որ առաջ էի անում, այն ժամանակ իրոք զգացի, որ կյանքիս մեջ մի հիմնական փոփոխություն է կատարվել, սակայն չվհատվեցի այդ բանից։ Նոր կյանքի հետ նոր հույսեր, նոր ձգտումներ առաջ եկան։ Աշխատանքս մեծ պիտի լիներ, բայց վարձս էլ՝ մեծ։ Վարձս էր Դորան, և պետք էր շահել, տիրել Դորային։

Հափշտակությունս այն աստիճան սաստկացել էր, որ ափսոսում էի, թե ինչո՞ւ շորերս մի քիչ մաշված չեն։ Փափագում էի իսկույն արգելքների անտառից մի քանի ծառ կտրել ու տապալել, որ զորությունս հայտնի անեմ։ Տեսնելով ճանապարհին մի ծերուկի, որ ցանցկեն ակնոց հագած քար էր ջարդում, ուզում էի նրա մուրճը խնդրել և որձաքարի մեջ շավիղ բանալ մինչև Դորան։ Ես եռանդից այնքան տաքացել, քրտնել էի և շունչս այնպես բռնվել էր, որ կարծես մի ահագին գործ էի կատարել ու չգիտեմ՝ որքան գումար վաստակել։ Այս բորբոքված վիճակիս մեջ վարձու տրվող մի **կռտտեջ** (տնակ) նկատեցի և ուշի-ուշով զննեցի այն, որովհետև զգում էի, որ պետք է ես մի գործնական մարդ դառնամ։ Տնակը Դորայի ու իմ համար էր. դիմացը մի

փոքրիկ պարտեզ ուներ, ուր Ջիպը կարող էր ազատ վազել ու վանդակորմի հետևից փերեզակների վրա հաչել: Տատիս համար էլ վերնահարկում մի ընդարձակ սենյակ կար: Տնակը լավ նայելուց հետո ավելի մեծ փութով դեպի Հայգեթ շտապեցի և մի ժամ առաջ այնտեղ հասա: Բայց եթե այդպես վաղ էլ չհասնեի, ինձ պետք կլիներ հովանալու համար մի քիչ զբոսնել, որ կարենայի շենք ու շնորհքով ներկայանալ:

Այդ անհրաժեշտ գործից հետո, դոկտորի տունը սկսեցի որոնել: Դա Հայգեթի այն մասում չէր, ուր բնակվում էր մրս. Ստիրֆորթը, այլ փոքրիկ քաղաքի բոլորովին հակառակ ծայրում: Այդ գյուտից հետո, մի հրապույրի հետևելով, որին անկարող էի դիմադրել, ես մրս. Ստիրֆորթի բակի մոտով անցա և այգու պատի վրայից դեպի ներս նայեցի: Որդու պատուհանները փակված էին: Ծաղկոցի դռները բաց էին, և Ռոզա Դարտլը շտապ-շտապ ու գլխաբաց ման էր գալիս մարգի ավազոտ ճեմելիքում: Նա ինձ մի կապված վայրագ գազան հիշեցրեց, որ միևնույն տեղում իր շղթան վեր ու վար էր քարշ տալիս, զայրույթից ինքն իր սիրտը լափելով:

Հանդարտ հեռացա իմ դիտարանից և այդ շրջանը թողնելով, որին մոտենալս անգամ ափսոսում էի, մինչև ժամը տասը թափառեցի: Այժմ բլրի վրա բարձրացող սրածայր աշտարակով եկեղեցին այն ժամանակ դեռ չէր շինված. դրա տեղ մի աղյուսաշեն կարմիր տուն էր կանգնած, մի հինավուրց հոյակապ տուն, որը թաղի դպրոցն էր: Ո՞վ գիտի՝ նրա աշակերտներն ինչպես լավ էին սովորում:

Երբ մոտեցա դոկտոր Ստրոնգի կոտտեջին – դա էլ մի հին տուն էր, որի նոր զարդերի վրա նա բավական փող ծախսած կլիներ – դոկտորը պարտեզում ճեմում էր՝ դարձյալ նույն մուճակներն ու նույն զգեստը հագած, ասես թե իմ աշակերտության օրերից ի վեր ճեմելուց չէր դադարել: Դարձյալ նրան նույն ընկերներն էին շրջապատում, որովհետև այդտեղ էլ հին ծառեր կային և արոտի վրա երեք-չորս ագռավ, որոնք հանգիստ դիտում էին նրան, կարծես Կենտըրբրիի ագռավներից մի գրավոր պատվեր ստացած լինեին մենակ չթողնելու դոկտորին:

Արդեն քաջ գիտենալով, որ գիտնական դոկտորի ուշադրությունը հեռվից գրավելն անկարելի է, ես պարտեզի դուռը համարձակ բացեցի և նրա հետևից գնացի, որպեսզի նա շուռ գալուն պես ինձ տեսնի: Նա շուռ եկավ, մի քանի վայրկյան մտախոհ վրաս նայեց՝ հարկավ առանց ճանաչելու. հանկարծ նրա բարի դեմքի վրա մի հաճության ժպիտ փայլեց. և նա երկու ձեռքս բռնեց:

– Ա՛ա, սիրելիդ իմ Կոպպերֆիլդ,– ասաց դոկտորը:– Արդեն օրինավո՞ր մարդ եք: Ինչպե՞ս եք: Շատ ուրախ եմ, որ տեսնում եմ ձեզ: Եվ որքա՛ն գեղեցկացել եք, սիրելիդ իմ Կոպպերֆիլդ: Այո՛, լիովին չափահաս տղամարդ... զարմանալի՛ բան:

Իր առողջությունը հարցրի, հույս հայտնելով թե մրս. Ստրոնգն էլ առողջ կլինի:

– Շատ շնորհակալ եմ,– ասաց դոկտորը:– Աննին էլ լիովին առողջ է և հարկավ ձեզ տեսնելով շատ կուրախանա: Դուք միշտ նրա սիրելին էիք: Նա դեռ երեկ այդպես ասաց, երբ ձեր նամակն իրեն ցույց տվի: Եվ... այո, հարկավ... դուք հո հիշո՞ւմ եք մր. Ջոն Մելդընին, Կոպպերֆիլդ:

– Շատ լավ, սըր:

– Անշուշտ, կհիշեք,– ասաց դոկտորը:– Նա էլ լիովին ողջ-առողջ է:

– Մի՞թե արդեն վերադարձել է, սըր:

– Հնդկաստանի՞ց: Այո: Մր. Ջոն Մելդընը չէր կարող այնտեղի օդին դիմանալ, սիրելիդ իմ: Մրս. Մարկլիեմը... հո չե՞ք մոռացել մրս. Մարկլիեմին:

Մոռանալ Հին Զինվորի՞ն: Եվ այդպես կարճ ժամանակամիջոցո՛ւմ:

– Մրս. Մարկլհեմը, այդ խեղճ կինը նրա մասին շատ անհանգիստ էր,– ասաց դոկտորը։– Այդ պատճառով, սիրելի Կոպպերֆիլդ, մենք նրան ետ կանչեցինք ու նրա համար մի լավ պաշտոն ճարեցինք, որ շատ ավելի հարմար է գալիս իր ճաշակին։

Լավ ճանաչելով մր. Ջոն Մելդընին, կարող էի արդեն գուշակել, որ այդ պաշտոնը նրանից շատ աշխատանք չէր պահանջի և բավական թանկ նստած կլիներ դոկտորին։ Դոկտորը և ես ետ ու առաջ էինք քայլում պարտեզի մեջ։ Աջն ուսիս ու քաղցրությամբ երեսիս նայելով նա ասաց.

– Գանք այժմ ձեր առաջարկին, սիրելիդ իմ Կոպպերֆիլդ։ Ինձ համար դա, համենայն դեպս, շատ հաճելի ու ցանկալի է. սակայն վստա՞հ եք արդյոք, մի՞թե ավելի օգտակար գործ չեք գտնի։ Դուք մեզ մոտ առաջադեմ աշակերտ էիք և ամեն տեսակ ազնիվ բանի ընդունակ։ Ձեր կրթության հիմքն այնքան մաքուր է, որ դրա վրա ինչ շենք ասես կարելի է հաստատել. և մի՞թե ափսոս չէ, որ կամենում եք ձեր կյանքի գարունն իմ առաջարկած չնչին բանին նվիրել։

Ես նորից վառվեցի և ճարտասանական պերճ ոճերով խնդիրս երկրորդեցի, հիշեցնելով դոկտորին, թե արդեն մի պաշտոն ունեմ Դոկտորների Համայնքում։

– Այո՛, այո՛, ճշմարիտ է,– ասաց դոկտորը։– Գործի դրությունը հարկավ ուրիշ է, եթե ունեք մի որոշ պաշտոն և կարող եք ձեր իրավաբանական ուսումը շարունակել։ Բայց և այնպես, երիտասարդ բարեկամ, ի՞նչ նշանակություն ունի իմ որոշած տարեկան յոթանասուն ստեռլինգը. դա մի չնչին գումար է։

– Դրանով մեր եկամուտը կկրկնապատկվի, դոկտոր Ստրոնգ,– ասացի ես։

– Իրա՞վ եք ասում,– գոչեց դոկտորը։– Ում մտքով կանցներ մի այդպիսի բան։ Սակայն չկարծեք թե միայն յոթանասուն ստեռլինգ կլինի իմ վճարելիք գումարը, որովհետև ես մտադիր եմ նաև տարեկան պարգև անել այն երիտասարդին, որ իմ մոտ կպաշտոնավարի։ Այո, անշուշտ,– կրկնեց դոկտորը, շարունակելով աջն ուսիս վրա բռնել։– Ես միշտ հաշվիս մեջ մտցրել եմ մի որոշ տարեկան նվեր։

– Իմ մեծարգո վարժապետ,– ասացի ես (և այս անգամ առանց ուռուցիկ ոճերի),– դուք ինձ այնքա՛ն բարիք եք արել և ես այնքա՛ն պարտական եմ ձեզ, որ. . .

– Ո՛չ, ո՛չ,– ընդհատեց ինձ դոկտորը։– Ներեցեք։

– Եթե հարմար համարեք իմ առավոտյան ու երեկոյան աշխատանքն ընդունել և ինձ յոթանասուն ստեռլինգի վարձատրության արժանի գտնեք, մի այնպիսի շնորհ արած կլինեք, որ լեզվով հայտնել չեմ էլ կարող։

– Ճշմարի՞տ,– ասաց դոկտորն անկեղծաբար։– Ո՞վ կերևակայեր, թե իմ չնչին առաջարկն այդքան մեծ արժեք կունենա։ Դե լավ։ Միայն թե մի պայման. երբ էլ ձեզ համար մի շահավետ գործ բացվի, դուք ինձ իսկույն կհայտնեք։ Խոսք տալի՞ս եք,– ասաց դոկտորը, կրկնելով այն հարցումը, որ սովոր էր ուղղել իր աշակերտների պատվազգացությանը։

– Ազնիվ խոսք, սըր,– պատասխանեցի ես, ինչպես որ անում էինք մի ժամանակ դպրոցում։

– Ուրեմն բանը վերջացած է,– ասաց դոկտորը, ուսիս զարնելով։

Շարունակեցինք ման գալ, բայց նա իր աջը դեռ ուսիս վրա դրած էր պահում։

– Եվ ես քսան անգամ ավելի երջանիկ կլինեմ, սըր,– ասացի ես մի փոքրիկ. . . և հուսամ թե անմեղ շողոքորթությամբ,– եթե ձեր բառարանի վրա աշխատեցնեք ինձ։

Դոկտորը կանգ առավ, վերստին ժպտալով ուսիս խփեց ու հիացմունքով գոչեց, ասես թե իր առջև մարդկային սրտի ամենախոր անդունդները թափանցող մի մարդ լիներ տեսնելիս։

– Գուշակեցի՛ք, սիրելիս։ Այո՛, գլխավոր բանը Բառարանն է։

Եվ մի՞թե կարելի էր, որ գլխավորը մի ուրիշ բան լիներ։ Դոկտոր Ստրոնգի բոլոր գրպանները, ինչպես և գլուխը, միայն դրանով էին խճողված։ Բառարանը դուրս էր նայում նրա մարմնի բոլոր ծակոտիներից։ Նա ինձ ասաց, թե դպրոցական պաշտոնը թողնելուց հետո, իր երկը շատ արագ է առաջ տանում. թե իմ նշանակած առավոտյան ու երեկոյան ժամերը շատ հարմար են իր համար, որովհետև նա սովոր է մնացած ժամերը մտածելուն ու զբոսանքին նվիրել. թե առժամանակ իր թղթերը մի քիչ անկարգ դրության մեջ են մր. Ջոն Մելդրնի պատճառով, որ վերջերս նրա քարտուղարն էր և այդ պաշտոնին չէր վարժվել, բայց թե մենք այդ բոլորը շուտով կարգի կբերենք, և գործն արագ-արագ առաջ կգնա։ Հետո, երբ լիովին այդ գործի մեջ խորասուզվեցինք, ես տեսա, որ Ջոն Մելդրնի աշխատակցության հետքերը շատ ավելի են հոգնեցնում ինձ, քան սպասելի էր, որովհետև նա ոչ միայն չէր գոհացել դոկտոր Ստրոնգի ձեռագրի մեջ անթիվ վրիպակներ մտցնելով, այլև յուրաքանչյուր երեսի վրա այնքան զինվորներ ու կանացի գլխարկներ էր նկարել, որ ես շատ անգամ մոլորված էի մնում այդ լաբիրինթոսում։

Դոկտորը ուրախ էր, որ իր երևելի գործի վրա միասին պիտի աշխատենք, և որոշեցինք հետևյալ իսկ առավոտյան ժամը յոթին մեր պարապմունքը սկսել։ Առավոտյան պիտի պարապեինք երկու ժամ, իսկ երեկոյան՝ երկու կամ երեք ժամ, բացի շաբաթ իրիկուններից, երբ ես ազատ պիտի լինեի։ Ազատ պիտի լինեի բնականաբար և կիրակի օրերը, ուրեմն պայմանները դժվար չէին։

Փոխադարձ հավանությամբ մեր ծրագիրն այսպես կարգավորելուց հետո՝ դոկտորը ներս տարավ ինձ մրս. Ստրոնգին ներկայացնելու, որին դոկտորի նոր գրասենյակում գտանք. նա զբաղված էր գրքերի փոշին մաքրելով – մի արտոնություն, որ բացառապես միայն նրան էր վերապահված, որովհետև ուրիշ ոչ ոք իրավունք չուներ այդ նվիրական առարկաներին դիպչելու։

Նախաճաշն իմ պատճառով ուշացվել էր, և մենք միասին սեղան նստեցինք։ Հենց որ նստեցինք, մրս. Ստրոնգի դեմքին նայելով՝ գուշակեցի, որ նա մեկին սպասում է. և իրոք, մի քիչ հետո դրսի դռան մոտ մի ջենտլմեն իջավ ձիուց, որպես տանու մարդ՝ սանձից բռնելով հետևի բակը տարավ նրան, մարագում կապեց և մտրակը ձեռքին՝ ճաշասենյակ մտավ։ Դա մր. Ջոն Մելդրնն էր, և ինձ այնպես թվաց, թե մր. Ջոն Մելդրնը բնավ չի փոխվել Հնդկաստանում ապրելուց։ Սակայն ես դեռ շատ խիստ էի դեպի այն բոլոր երիտասարդները, որոնք ծառեր չէին տապալում դժվարության անտառի մեջ, հետևաբար տպավորությունս կարող էր և թյուր լինել։

Մր. Ջոնն աջը մեկնեց ինձ, բայց կարծես թե ակամա, և մի այնպիսի հովանավոր եղանակով, որ ինձ սաստիկ վրդովեց։ Սակայն այդ բանը ցույց էր տալիս և իր բոլոր շարժումներում, բացի այն վայրկյաններից, երբ իր ազգական Աննիին էր դիմում։

– Արդեն նախաճաշե՞լ եք, մր. Ջոն,– ասաց դոկտորը։

– Ես գրեթե երբեք նախաճաշիկ չեմ անում, սըր,– պատասխանեց երիտասարդը, գլուխը թիկնաթոռին դնելով։– Ես ձանձրանում եմ այդ բանից։

– Ի՞նչ նորություն կա արդյոք,– հարցրեց դոկտորը։

– Ոչ մի նորություն, սըր,– պատասխանեց մր. Մելդրնը։– Գրում են, թե հյուսիսային գավառներում սաստիկ սով է և մարդիկ դժգոհ են. բայց դրանք սովորական բաներ են։ Որտե՞ղ չկան դժգոհ մարդիկ և կամ սով։

Դոկտորը խիստ հայացքով նայեց նրան և կարծես թե խոսակցության նյութը փոխելու համար, ասաց.

– Նոր լուր չկա՞ ուրեմն։ Էհ, քանի քիչ լինեն, այնքան լավ։

– Լրագիրը մի սպանության երկար պատմություն է անում, սըր,– նկատեց մր. Մելդրընը։– Բայց այդ էլ հո մի արտակարգ դիպված չէ՞։ Ես այդպիսի բաներ չեմ էլ կարդում։

Այդ օրերին մարդկության աղետներին ու գործերին անտարբեր նայելը կրթության նշան չէր համարվում, ինչպես որ հետո եղավ։ Հայտնի է, որ այդ սովորությունը հետզհետե մոդայի պես մեծ հաջողությամբ ընդհանրացավ։ Ես ինքս հետո շատ ու շատ ջենտլմեններ ու շքեղ լեդիներ եմ տեսել, որոնք մարդկային գործերով նույնքան էին հետաքրքրվում, որքան և թրթուրները։ Սակայն մր. Ջոն Մելդրընից առաջ այդպիսի մարդ չէի տեսել, և գուցե պատճառը այդ էր, որ նա մի աննպաստ տպավորություն գործեց իմ վրա. ո՛չ հավատարմություն ներշնչեց նա ինձ, ո՛չ էլ հարգանք։

– Ես եկել եմ իմանալու, արդյոք Աննին չի՞ կամենա այս երեկո օպերա գնալ,– ասաց մր. Մելդրընը, դիմելով տիկնոջը։– Այս երեկո ներկա թատերաշրջանի վերջին ընտիր օպերան են տալիս. դրան մասնակցելու է մի երգչուհի, որին իրոք արժի լսել։ Հրաշալի ձայն ունի, և բացի այդ՝ հրեշի նման տգեղ է,– ասաց մր. Ջոն Մելդրընը։

Դոկտոր Ստրոնգը, որ միշտ պատրաստ էր զվարճանալու առիթներ տալ իր նորատի ամուսնուն, դարձավ նրան ու ասաց.

– Պիտի գնաս, Աննի, պիտի գնաս։

– Կցանկանայի տանը մնալ,– ասաց տիկինը դոկտորին։– Իրավ որ կցանկանայի տանը մնալ։

Եվ առանց նայելու ազգականին՝ նա դարձավ ինձ ու հարցրեց, թե ինչպե՞ս է Ագնեսը, արդյոք չի՞ կամենում իրեն տեսնել, արդյոք հենց այս երեկո իր մոտ չի՞ գա – և այս բոլորը ասաց մի այնպիսի հուզվված ձայնով, որ զարմացա, թե ինչպե՞ս դոկտորն անգամ, որ այդ միջոցին հացին կարագ քսելով էր զբաղված, այդ ակներև երևույթը չի նկատում։

Սակայն նա ոչինչ չէր տեսնում։ Նա բարեհամբույր ժպիտով ասաց ամուսնուն, թե նա դեռ երիտասարդ է և անհրաժեշտ է, որ միշտ զբոսնի ու զվարճանա, այլ ոչ թե իր ամուսնու նման ծերուկի հետ ձանձրանա։ Բացի այդ՝ դոկտորը կցանկանար կնոջից լսել այն նոր երգչուհու երգերը. սակայն ինչպե՞ս կլինի այդ, եթե կինն օպերա չգնա։ Եվ դոկտորը շարունակեց պնդել, որ գնա, իսկ մր. Ջոն Մելդրընը խոսք տվեց նորից ճաշին հանդիպել նրանց։ Այնուհետև նա վեր կացավ և հավանական է որ իր անգործ պաշտոնը հոգալու գնաց. սակայն ձիով գնաց, և բնավ առանց շտապելու։

Հետևյալ օրն ուզեցի իմանալ, թե արդյոք տիկինն օպերայում եղե՞լ է։ Չէր եղել. այլ նամակ էր գրել ազգականին, որ չգա, և գնացել էր Ագնեսի մոտ, դոկտորին էլ իր հետ տանելով։ Դոկտորն ասաց, թե երեկոն շատ գեղեցիկ էր և թե նրանք դաշտում զբոսնելով են տուն վերադարձել։ Այդ իմանալով ես հարցրի ինձ – արդյոք մրս. Ստրոնգը օպերա չէ՞ր գնա, եթե Ագնեսը քաղաքում չլիներ։ Մի՞թե Ագնեսը նրա վրա էլ այդքան բարի ազդեցություն ունի։

Մրս. Ստրոնգը շատ երջանիկ չպիտի լինի, մտածում էի ես. բայց դեմքին նայելով կասեիր, թե կամ շատ գոհ է կամ սաստիկ կեղծավոր։ Ես լավ գիտեի նրա դեմքը, որովհետև դոկտորի ու իմ աշխատակցության միջոցին նա պատուհանի մոտ էր նստած և անձամբ նախաճաշը պատրաստեց, որ մենք զբաղված լինելով վայրիվերո ճաշակեցինք։ Երբ ես ժամը իննին հեռանալու վրա էի, կինը չոքեց մարդու առջև՝ նրա մուճակներն ու հյուսված գուլպաները հագցնելու համար։ Բաց պատուհանի մոտ գտնվող ծառի տերևներից մի մեղմիկ ստվեր էր ընկել նրա դեմքի վրա, և ես Դոկտորների Համայնքը գնալիս անդադար հիշում էի այն երեկոն, երբ նա կարդալով զբաղված դոկտորին էր նայում։

Այժմ բավական գործ ունեի. առավոտյան ժամը հինգին էի վերկենում և երեկոյան ժամը իննին կամ տասին տուն գալիս։ Ես շատ գոհ էի այսպես զբաղված լինելուցս և երբեք դանդաղ չէի ման գալիս, այլ՝ արագ, կարծելով թե որքան ավելի ինձ հոգնեցնեմ, այնքան ավելի կարժանանամ Դորային։ Հանգամանքների փոփոխության մասին նա դեռ ոչինչ չգիտեր. մի քանի օրից նա գալու էր միս Միլսի մոտ, և ես ասելիքս մինչև այդ օրն էի հետաձգել, միայն

այսքանը հայտնելով նամակներիս մեջ, որոնք ծածուկ հասնում էին նրան միս Միլսի միջնորդությամբ,– թե շատ բան ունեմ ասելու իրեն։ Այդ ժամանակ ես արջի ճարպի գործածությունը չափավորել էի, իսկ անուշահոտ սապոնից ու լավանդի ջրից միանգամայն հրաժարվել և բաճկոններիցս երեքը անասելի էժան գնով վաճառել,– խստակյաց կյանքիս համար անչափ շքեղ բաներ էին դրանք։

Այդ էլ քիչ էր։ Է՛լ ավելի բան անելու եռանդով վառված, ես Տրեդլսի մոտ գնացի, որ այժմ Կեստլ Ստրիտում (Հոլբորն) գտնվող մի տան հետևի մասում էր բնակվում։ Հետո տարա և մր. Դիկին, որ արդեն երկու անգամ ինձ հետ միասին Հայգեթ էր գնացել և իր ծանոթությունը դոկտորի հետ նորոգել։

Մր. Դիկին հետս տարա, որովհետև նա տատիս հասած աղետին սրտանց ցավակցելով և անկեղծ հավատալով, թե ոչ մի կալանավոր, թիապարտ կամ ստրուկ այնքան շատ չի աշխատում, որքան ես – մինչդեռ ինքն անկարող էր որևէ գործով մեզ օգնել – սկսել էր մաշվել ու մաշվելուց թե՛ ախորժակը և թե՛ քունը կորցրել։ Այս դրության մեջ նա իրեն ավելի անձեռնահաս էր զգում իր հիշատակարանն ավարտելու, քան երբևիցե, և որքան շատ էր ճիգ թափում, այնքան էլ շատ էր Կառլոս Առաջինի թշվառ գլուխը ներս սպրդում։ Ես երկյուղ էի կրում, թե նրա հոգեկան հիվանդությունը կսաստկանա, եթե նրան մի անմեղ հնարով չխաբենք ու կարծել չտանք, թե նա օգտակար է, և կամ նրան իրոք օգտակար չդարձնենք (որ հարկավ ավելի լավ կլիներ), ուստի և որոշեցի խորհուրդ հարցնել Տրեդլսից։ Դեռ նրա մոտ չգնացած, ես նրան ամեն բան, ինչ որ պատահել է գրել էի, և նա պատասխանել էր մի կարեկցական ու սիրալիր նամակով։

Մենք գտանք նրան թղթերի մեջ ընկղմված։ Սիրուն թաղարն ու մարմարե կլոր սեղանը, որոնց տեսքով նա իր ոգին զորացնում էր, դրված էին փոքրիկ սենյակի անկյունում։ Նա մեզ սիրով ընդունեց և մի վայրկյանում մր. Դիկի հետ մտերմացավ։ Մր. Դիկն էլ ամենայն վստահությամբ փութաց հայտնել, թե արդեն մի անգամ տեսել է նրան, և մենք երկուսս ասացինք. «Շատ կարելի է»։

Տրեդլսի հետ քննելու առաջին խնդիրս այս էր։ Լսել էի, որ զանազան ասպարեզների վրա հռչակված շատ ու շատ մարդիկ իրենց ընթացքը նրանով են սկսել, որ պառլամենտի պայքարների լրատու են եղել։

Տրեդլիսց գիտեի, թե իր հույսերից մեկն էլ մի լրագրի աշխատակից լինելն էր։ Այս երկու փաստը միացնելով, հարցրել էի նրան նամակիս մեջ, թե ի՞նչ պետք է անել, որ կարենամ այդ պաշտոնի համար պատրաստվել։ Այժմ նա ինձ հաղորդեց, թե իր հավաքած տեղեկություններին նայելով՝ ավելի հեշտ է, բացի հազվագյուտ դեպքերից, վեց լեզու սովորել, քան թե սղագրության արվեստի լոկ մեքենայական վարժությունը, այսինքն՝ արագ սղագրելու և լավ կարդալու հմտություն ձեռք բերելը, և թե դրա համար առնվազն մի քանի տարվա հարատև ու տոկուն աշխատանք է հարկավոր։ Տրեդլսն իրավամբ կարծում էր, թե այդ մասին խոսելն անգամ ավելորդ է. սակայն նրա հիշած դժվարությունների մեջ ես ուրիշ բան չտեսա, բացի մի հաստատուն ծառից, որ պետք էր տապալել, և անմիջապես վճռեցի կացինս առած այդ թանձրախիտ անտառի միջով ճանապարհ բացել դեպի Դորան։

– Շատ շնորհակալ եմ քեզնից, սիրելի Տրեդլս,– ասացի ես։– Հենց վաղվանից կսկսեմ։

Տրեդլսը շվարած երեսիս նայեց. նա դեռ չգիտի, թե ինչ հափշտակություն է տիրել սրտիս։

– Սղագրության արվեստի մի լավ դասագիրք կգտնեմ,– ասացի ես։– Դա կսկեմ ուսումնասիրել Դոկտորների Համայնքում, ուր ժամանակիս գրեթե կեսը զուր է կորչում։ Վարժության համար կսկսեմ ատյանում ասվող ճառերն արձանագրել և անշուշտ մի օր նպատակիս կհասնեմ, իմ սիրելի՛ բարեկամ։

– Ա՛յ քեզ բան,– գոչեց Տրեդլսը, աչքերը լայն բանալով։– Չէի կարծում, որ դու այդքա՛ն վճռական ես, Կոպպերֆիլդ։

Եվ ինչպես կարող էր կարծել, քանի որ եռանդս ինձ համար էլ մի նոր բան էր։ Բարեկամիս նկատողությունը թողնելով, մր. Դիկին առաջ քաշեցի։

– Գիտե՞ք ինչ... մր. Տրեդլս,– ասաց մր. Դիկը ջերմությամբ։– Ես կուզենայի փորձել ինձ... արդյոք չե՞մ կարող թմբուկ խփել... կամ որևէ գործիք փչել։

Խե՛ղճ մարդ։ Ես տարակույս չունեի, որ նա մյուս բաներից ավելի, պատրաստ է հատկապես այդ զբաղմունքն ընտրել։ Տրեդլսը, սակայն, առանց ժպտալու պատասխանեց.

– Բայց եթե չեմ սխալվում, դուք մի պատվական ձեռագիր ունեք, սըր։ Այդպես չէ՞, Կոպպերֆիլդ։

– Հիանալի ձեռագիր,– ասացի ես։

Եվ իրոք մր. Դիկի ձեռագիրը շատ սիրուն էր։

– Ուրեմն չէ՞իք կամենա թղթեր արտագրել, եթե ձեզ համար արտագրելու բաներ ճարեմ,– հարցրեց Տրեդլսը։

Մր. Դիկը կասկածանքով երեսիս նայեց ու ասաց.

– Հը՞, Տրոտուդ։

Ես գլխով արի։ Մր. Դիկն էլ գլխով արեց ու խոր շունչ քաշեց։

– Խոսիր հետը հիշատակարանի մասին,– ասաց մր. Դիկը։

Բացատրեցի Տրեդլսին, թե ամենամեծ դժվարությունը մր. Դիկի ձեռագրերից Կառլոս Առաջինին հեռու պահելն է, և մինչ ես բացատրում էի, մր. Դիկը իր բթամատի ծայրը ծծելով, խորհրդավոր ակնածությամբ նայում էր Տրեդլսին։

– Սակայն իմ հիշած թղթերն արդեն սրբագրված ու պատրաստ են,– ասաց Տրեդլսը մի քիչ մտածելուց հետո,– այնպես որ մր. Դիկը շատ անելիք չի ունենա։ Չէ՞ որ այդ մի բավական զգալի տարբերություն է, Կոպպերֆիլդ։ Համենայն դեպս ավելորդ չէր լինի մի փորձ անել։

Այդ կարծիքը հուսադրեց մեզ։ Տրեդլսն ու ես առանձնացանք՝ խորհրդակցելու համար, իսկ մր. Դիկն անձկությամբ դիտում էր մեզ իր աթոռից։ Մենք որոշեցինք հենց հետևյալ օրը գործի նստեցնել մր. Դիկին, և այս որոշումն ամենայն հաջողությամբ գլուխ բերինք։

Բուկինհեմ փողոցի տան պատուհանի առջև, մի սեղանի վրա Տրեդլսի բերած ձեռագրերը դրեցինք. – դա մի իրավաբանական փաստաթուղթ էր, որից չգիտեմ քանի՞ պատճեն պիտի հանվեր – իսկ մյուս սեղանի վրա մեծ Հիշատակարանի դեռ անավարտ բնագիրը փռեցինք։ Մեր հրահանգների զորությամբ մր. Դիկը պարտավոր էր իր առջև դրված փաստաթուղթը բառ առ բառ արտագրել, անգամ մազի չափ չշեղվելով բնագրից. և հենց որ Կառլոս Առաջինի մեջ բերելու կարիք զգար, պարտավոր էր իսկույն ևեթ դեպի հիշատակարանի սեղանը ցատկել։ Հորդորեցինք նրան արիաբար ու հաստատ կերպով այդ կանոնին հետևել, և տատիս հանձնարարեցինք, որ նրա վրա հսկի։ Տատս հետո մեզ պատմեց, թե սկզբում մր. Դիկն երկու թմբուկ խփող մարդու նման իր ուշադրությունը շարունակ մերթ մեկ ու մերթ մյուս սեղանին էր դարձնում. բայց տեսնելով վերջ ի վերջո, որ այդ բանը իրեն շփոթում ու հոգնեցնում է, վճռել էր մի իսկական գրագրի պես միայն փաստաթղթին նվիրվել, իսկ հիշատակարանը մի ուրիշ հարմար ժամանակի թողնել։ Մի խոսքով, թեպետ մեծապես հոգ էինք տանում, որ մր. Դիկը պետք եղածից ավելի չաշխատի, և թեպետ նա իր գործը շաբաթվա սկզբից չէր սկսել, բայց և այնպես մինչև առաջին շաբաթ օրը վեց շիլինգ և ինը պենս վաստակեց։ Երբեք չեմ մոռանա, թե ինչպիսի բերկրությամբ նա խանութից խանութ վազեց իր այդ գանձը վեց պենսանոց դրամների մանրելու և ինչպե՛ս այդ բոլորը մի ափսեի վրա սրտի ձևով շարելուց հետո, բերկրության ու հպարտության արտասուքը աչքերին, տարավ տատիս ընծայեց։ Այս ձևով մի օգտավետ գործունեություն սկսելուց ի վեր նա կարծես թե մի բարերար թովչության ներքո էր. և եթե այդ շաբաթ իրիկունն աշխարհիս երեսին մի երջանիկ մարդ կար, հարկավ

դա այդ համեստ ու շնորհալի արարածն էր, որի աչքում երկրիս վրա ամենից սքանչելի կինն իմ տատն էր, իսկ ամենից սքանչելի երիտասարդը՝ խոնարհս։

– Էլ սովամահ լինելու վտանգ չկա, Տրոտուդ,– ասաց մր. Դիկը, մի անկյունում աջս սեղմելով։– Տատիդ պետքերը ես կհոգամ, սըր։

Եվ նա իր տասը մատները օդի մեջ շարժեց, կարծես նրանք մի-մի բանկ լինեին։

Չգիտեմ ո՞վ էր ավելի գոհ Տրե՞դլսը, թե ես։

– Վա՛հ,– գոչեց Տրեդլսը, մի նամակ հանկարծ հանելով գրպանից։– Քիչ մնաց մր. Միկաբրին մոռանայի։

Նամակը գրված էր իմ հասցեով (մր. Միկաբրը ոչ մի ժամանակ նամակ գրելու առիթը չէր փախցնում)՝ «բարեսեր միջնորդությամբ Թ. Տրեդլսի, Esquire», և բովանդակությունն էր հետևյալը.

«Սիրելիդ իմ Կոպպերֆիլդ։

Թերևս շատ չզարմանաք, եթե լսեք, որ վերջապես բախտս ժպտաց։ Արդեն մի ուրիշ առիթով ձեզ հայտնել եմ, թե այդ բանը սպասում էի։

Ահա գնում եմ հաստատվելու մեր երջանիկ կղզու գավառական քաղաքներից մեկի մեջ, որի հասարակությունը կարելի է երկրագործական ու եկեղեցական տարրերի մի հաջողակ խառնուրդ համարել։ Այնտեղ ես շատ գիտնական անձանց հետ ամենասերտ հարաբերություն կունենամ։ Ինձ կուղեկցեն մրս. Միկաբրն ու մեր սերունդը։ Հավանական է, որ մեր աճյուններն այն հանգստարանում ամփոփվեն, որի մեծանուն եկեղեցու շնորհիվ քաղաքի հռչակը, կարելի է ասել, Չինաստանից մինչև Պերու է տարածվել։

Արդի Բաբելոնին մնաս բարով ասելիս, ուր շատ ու շատ աղետներ կրեցինք, և կարծեմ արիաբար կրեցինք, մրս. Միկաբրն ու ես չենք կարող նկատի չառնել, թե գուցե տարիներով և կամ ընդմիշտ բաժանվում ենք մի մարդուց, որ վաղուց ի վեր շատ սերտ է կապված եղել մեր ընտանեկան հարկի հետ։ Եթե մեր մեկնելուց առաջ հաճեք մեր ընդհանուր բարեկամ մր. Թոմաս Տրեդլսի հետ մեր ընդհանուր բնակարանը հարգել և մեզ հետ դիպվածին պատշաճ բարեմաղթություններ փոխանակել, դրանով մեծապես շնորհ կանեք

մի

մարդու,

որը

է՝

և միշտ

կմնա

ձեզ անձնվեր

Ուիլկինս Միկաբր»։

Ի սրտե ուրախացա, որ մր. Միկաբրը վերջապես աղետների բեռից ազատվել է և իրոք բախտի ժպիտին արժանացել։ Տրեդլսից իմանալով, որ հրավերը ճիշտ այն օրվա երեկոյան համար է, որոշեցի անպատճառ ներկա լինել մնաս բարովի հանդեսին, և մենք գնացինք մինչև իսկ Գրեուիննն-Րոդի հեռավոր ծայրը, ուր ապրում էր մր. Միկաբրը մր. Մորտիմերի անունով։

Բնակարանն այն աստիճան անշուք ու փոքր էր, որ երկվորյակները, այժմ մոտավորապես ութ կամ ինը տարեկան, մի ծալովի բազմոցի վրա էին քնում՝ նույն այն հյուրասենյակում, ուր մր. Միկաբրը պատվում էր մեզ իր հռչակավոր ընպելիքով, որը պատրաստել էր մի կուժի մեջ։ Այս այցելությունն ինձ առիթ տվեց ծանոթությունս մաստր Միկաբրի հետ նորոգելու և

այժմ դա տասներեք տարեկան մի ժիր պատանի էր՝ սաստիկ շարժուն, որ անսովոր երևույթ չէ նրա հասակի երեխաների համար: Նրա քրոջն էլ տեսա՝ միս Միկաբրին, որի մեջ մր. Միկաբրի ասելով «մայրը մի փյունիքի պես իր երիտասարդությունը նորոգում էր»:

– Սիրելիդ իմ Կոպպերֆիլդ,– ասաց մր. Միկաբրը,– դուք ու Տրեդլսը իսկ և իսկ մեր գաղթելու պահին եք մեզ մոտ գալիս, ուստի հարկավ ներողամիտ կլինեք, եթե այս պատճառով պարտ ու պատշաճ հարմարավետություն չգտնեք մեր բնակարանում:

Մի հարմար պատասխան որոնելով, չորս կողմս նայեցի ու տեսա, որ գերդաստանի իրեղեններն արդեն կապված են և ամենևին ծանրակիր կամ բազմաթիվ չեն: Ես շնորհավորեցի մրս. Միկաբրին առաջիկա փոփոխության առթիվ:

– Սիրելի մր. Կոպպերֆիլդ,– ասաց մրս. Միկաբրը,– լավ գիտեմ, թե որքա՛ն մեր վիճակը ձեր սրտին մոտ է: Գերդաստանիս անդամները կարող են, եթե կամենան, մեր գաղթն աքսոր համարել, սակայն ես կին եմ ու զավակների մայր և ոչ մի ժամանակ մր. Միկաբրից չեմ բաժանվի:

Տրեդլսը ջերմությամբ հավանություն տվեց այդ որոշմանը, որովհետև տիկինը նրան էլ մի ակնարկ ուղղեց:

– Այդ է գոնե իմ հայացքը այն նվիրական պարտքի մասին, մր. Կոպպերֆիլդ և մր. Տրեդլս, որ ազատ կամքովս հանձն առա սուրբ սեղանի առջև ասելով «Ես՝ Էմմիս, հոժար եմ, Ուիլկինս, քո կինը լինելու»: Ես ինքս անձամբ հարսանիքից մի գիշեր առաջ պսակի խորհուրդը կարդացի, և ընթերցումից հանած վերջնական եզրակացությունս այն եղավ, թե երբեք չպիտի ամուսնուս թողնեմ: Այդ սուրբ կարգի իմաստը գուցե ես սխալ մեկնած լինեմ, այնուամենայնիվ, չե՛մ թողնի մր. Միկաբրին, ո՛չ երբեք:

– Ա՛խ, հոգիս,– ասաց մր. Միկաբրը, մի քիչ համբերությունից դուրս գալով,– ո՞վ է քեզ երբևիցե ասել, թե կթողնես:

– Գիտեմ, սիրելի Կոպպերֆիլդ,– շարունակեց մրս. Միկաբրը,– այժմ ես պիտի գնամ պանդուխտ դառնամ օտար, անծանոթ մարդկանց մեջ, այն էլ գիտեմ, որ երբ մր. Միկաբրն ամենաազդու ձևով այդ լուրը հաղորդեց գերդաստանիս անդամներին, նրանք մի պատասխան անգամ չտվին: Եթե կամենաք, սնապաշտ կին համարեցեք ինձ. սակայն մի ներքին ձայն ինձ վկայում է, թե մր. Միկաբրին վիճակված է իր անթիվ նամակների դեմ ոչ մի պատասխան չստանալ: Գերդաստանիս համառ լռությունը հիմք է տալիս կարծելու, թե նրանք իմ որոշմանը հակառակ են. բայց հավատացած եղեք, մր. Կոպպերֆիլդ, որ ոչ մի մարդու թույլ չեմ տա ինձ սրբազան պարտքի շավիղից շեղել, հայրիկիս ու մայրիկիս անգամ թույլ չէի տա, եթե տակավին ապրեին:

Ասացի, թե այդ ընթացքը միանգամայն համապատասխան է արդարության պահանջին:

– Կարող են ասել,– շարունակեց մրս. Միկաբրը,– թե իմ կողմից զոհաբերություն է գնալ-փակվել մի աթոռանիստ քաղաքի մեջ. սակայն, մր. Կոպպերֆիլդ, եթե այդ բանը զոհաբերություն է՝ մր. Միկաբրի պես բազմահանճար մարդու կողմից:

– Ի՛նչ եք ասում,– գոչեցի ես:– Ուրեմն մի աթոռանիստ քաղաք եք գնում:

Մր. Միկաբրը, որ արդեն սկսել էր իր կուժիվ մեզ մատրվակել, պատասխանեց.

– Եվ հատկապես Կենտրբրի: Բանն այն է, սիրելի Կոպպերֆիլդ, որ ես մեր բարեկամ Ուրիաս Հիպի հետ դաշն եմ կապել և մեր դաշինքի զորությամբ օգնելու եմ նրան որպես... որպես մտերիմ գրագրի:

Ես զարմանքով նայեցի մր. Միկաբրին, որը իմ զարմանալուց շատ զվարճացավ:

– Բանի էությունը բացատրելու համար պետք է ասեմ,– շարունակեց նա պաշտոնական եղանակով,– թե գլխավորապես մրս. Միկաբրի գործնական հակումների, նրա իմաստուն

խորհուրդների ազդեցությամբ է, որ վճռեցի այս քայլն անել: Արդյոք կհիշե՞ք, որ մեր վերջին տեսակցության ժամանակ էր, որ մրս. Միկաբրը կարծիք հայտնեց, թե անհրաժեշտ է հասարակությանը կռվի կանչել, ձեռնոց նետելով նրա երեսին: Ձեռնոցը նետվեց մի լրագրական հայտարարությամբ: Ուրիաս Հիպը այն վերցրեց, և մենք մի փոխադարձ համաձայնություն կայացրինք: Ուզում եմ լիակատար հարգանքով խոսել իմ բարեկամ Հիպի մասին, որ վերջին աստիճանի ճարպիկ մարդ է: Իմ բարեկամ Հիպը շատ մեծ ռոճիկ չի տա ինձ . բայց խոստացել է պարտքերիս բեռը մի քիչ թեթևացնել, իմ ապագա ծառայության վրա իրավացի հույսեր դնելով, և ես պատվովս երդվել եմ, որ նրան մեծ օգուտներ կհասցնեմ: Ամբողջ ճարտարությունս ու ձիրքերս, եթե կարելի է այսպես ասել, ավելացրեց մր. Միկաբրը կեղծ համեստությամբ և իր նախկին ազնվական եղանակով,– այսուհետև բացառապես իմ բարեկամ Ուրիաս Հիպին նվիրված կլինեմ: Արդեն շատ ու շատ քաղաքային դատեր վարած լինելով, իբրև անձիս փաստաբան, ես մեր օրենքներին բավական հմուտ եմ, և այժմ մտադիր եմ ամենայն ջանքով մի իրավական երևելի երկ ուսումնասիրել, որի հեղինակն Անգլիայի պարծանքն է: Կարծեմ այստեղ ավելորդ է հիշել, որ խոսքս դատավոր մր. Բլեկոտընի մասին է:

Այս դիտողությունը հաճախ ընդհատվում էր մրս. Միկաբրի կշտամբանքներով՝ պատանի Միկաբրի նկատմամբ, որ կամ կրունկների վրա էր նստում, կամ թե երկու ձեռքով գլուխը բռնում, որը կարծես թե ընկնելու էր ուսերից, կամ Տրեդլսին սեղանի տակից ոտքերով հրում, կամ մի ոտքը մյուսի վրա դնում, կամ թե երկուսն էլ մեկը մյուսից այնպիսի ձևով հեռացնում, որ բնության կանոնին հակառակ էր, կամ թե գլխի մազերը բաժակների վրա կախ գցում և կամ իր մշտաշարժ անդամներով մի այնպիսի աղմուկ հանում, որ բոլորովին անկարելի էր ընկերության շահերի հետ հաշտեցնել: Մինչդեռ ես լուռ նստած մտածում էի, թե ի՞նչ է արդյոք մր. Միկաբրի խոստովանության իմաստը, մրս. Միկաբրը նույն ճառի նյութին անցնելով, ուշադրությունս գրավեց:

– Իմ հատուկ պահանջը մր. Միկաբրից,– ասաց մրս. Միկաբրը,– այժմ սա է, որ նա իր անձը իրավաբանության այդ ստորին ճյուղին նվիրելով, վերջ ի վերջո չհրաժարվի մինչև ծառի նույնիսկ գագաթը բարձրանալու ձգտումից: Ես հավատացած եմ, որ մր. Միկաբրը, այդ պաշտոնն ընդունելով, որ իր հարուստ ձիրքերին ու մանավանդ հորդահոս լեզվին այն աստիճան հարմար է, անշուշտ մի օր երևելի մարդ կդառնա: Ի՞նչ եք կարծում մր. Տրեդլս, օրինակի համար, դատավոր և կամ քարտուղար դառնալու մասին: Մի՞թե որևէ մարդու այդ բարձր կոչումներին հասցնող դուռը իր առջև փակած կլինի, եթե մր. Միկաբրի այժմ ընդունած պաշտոնի պես մի բան ստանձնի:

– Հոգիս,– նկատեց մր. Միկաբրը, Տրեդլսի վրա հարցական հայացք նետելով,– այդ խնդիրները քննելու համար մեր առջև դեռ շատ ժամանակ կա:

– Ոչ, Միկաբր,– պատասխանեց մրս. Միկաբրը:– Քո գլխավոր թերությունն այն է, որ սովոր չես հեռու նայել: Քեզ անհրաժեշտ է – եթե կամենում ես արդար լինել դեպի ընտանիքդ, չասենք արդեն դեպի անձնական արժանիքդ,– մի ակնարկով ըմբռնել հորիզոնի ծայրագույն կետը, որին հանճարդ կարող է քեզ հասցնել:

Մր. Միկաբրը հազաց ու մեծ հաճույքով իր պունշը խմեց, նորից նայելով Տրեդլսին, ասես թե նրա կարծիքը լսելու համար:

– Գիտե՞ք ինչ կասեմ,– ասաց Տրեդլսը, ճշմարտությունը համեստաբար պարզելով,– ես կցանկանայի խնդիրն անսեթևեթ ու պարզ կերպով ներկայացնել. . .

– Իմ ուզածն էլ հենց այդ է, սիրելի մր. Տրեդլս,– ընդհատեց մրս. Միկաբրը:– Այսպիսի կարևոր խնդիր քննելիս, ես ինքս կցանկանայի որքան կարելի է անպաճույճ պատկերացնել նրան:

– Ասելիքս այս է,– շարունակեց Տրեդլսը,– որ մր. Միկաբրի ընտրած ճյուղը, եթե նա հմուտ էլ լիներ այդ ճյուղում...

– Ճիշտ այդպես է,– հաստատեց մրս. Միկաբրը,– Ուիլկինս, խեթ-խեթ մի նայի:

– ... Անգամ եթե հմուտ էլ լիներ այդ ճյուղում, ձեր հիշած կոչումների հետ ամենևին կապ չունի: Միայն պետական փաստաբանը կարող է դատավոր կամ քարտուղար ընտրվել. իսկ պետական փաստաբան դառնալու համար մր. Միկաբրին անհրաժեշտ է գոնե հինգ տարի իրավաբանական ճեմարանում սովորել:

– Եթե չեմ սխալվում,– նկատեց մրս. Միկաբրը քնքուշ ժպիտով,– ուզում եք ասել, թե այդ հինգ տարին լրանալուց հետո, մր. Միկաբրը կարո՞ղ է դատավորի կամ քարտուղարի պաշտոն ստանալ:

– Կարող է **թեկնածու** լինել,– պատասխանեց Տրեդլսը, շեշտելով թեկնածու բառը:

– Շնորհակալ եմ,– ասաց մրս. Միկաբրը:– Հենց այդ էի ուզում իմանալ: Եթե հանգամանքն այդպես է, և եթե մր. Միկաբրն այս պաշտոնն ստանձնելով ոչ մի բան չի կորցնում, արդեն ես գոհ եմ ու հանգիստ: Ես խոսում եմ անտարակույս իբր մի կին, սակայն միշտ համոզված եմ, որ մր. Միկաբրն օժտված է այն բանով, որ լուսահոգի հայրիկս ատենական ոգի էր անվանում, և վստահ եմ, որ այժմ մր. Միկաբրը մի այնպիսի ասպարեզի վրա է ոտք դնում, որ այդ ոտքն ավելի կզորանա ու ամենաբարձր ավագության կհասնի:

Ես հավատացած եմ, որ մր. Միկաբրը ինքն իրեն արդեն պատկերացնում էր բրդի պարկի[63] վրա բազմած: Նա իր ճաղատ գլուխը պարծանքով շփեց ու մի շինծու խոնարհությամբ ասաց.

– Սպասենք, հոգյակ ճակատագրի որոշումներին: Եթե ինձ վիճակված է դատավորի կեղծամ հագնել, ես պատեաստ եմ, գոնե արտաքուստ (ակնարկ էր ճաղատության վրա), այդ պատիվն ընդունել: Չեմ ափսոսում մազերս. ո՞վ գիտի, գուցե մի որոշ նպատակով եմ կորցրել դրանք: Սիրելիդ իմ Կոպպերֆիլդ, ես մտադիր եմ եկեղեցու համար կրթել որդուս. չեմ ուրանում, որ հատկապես նրա շահի համար կփափագեի մի բարձր դիրք ձեռք բերել:

– Եկեղեցո՞ւ համար,– հարցրի ես,– միևնույն ժամանակ Ուրիաս Հիպի մասին մտածելով:

– Այո՛,– ասաց մր. Միկաբրը:– Նա շատ զիլ ձայն ունի և մի օր կսկսի խմբում երգել: Մի անգամ Կենտրբրիում հաստատվելուց հետո հարկավ կփութանք մեր բարեկամների միջնորդությամբ հեշտացնել նրա մուտքը մայր եկեղեցու երգեցիկների դասի մեջ:

Այդ իսկ րոպեին պատանի Միկաբրը «Սրակտուց փայտփորիկ» երգը հնչեցրեց և գնաց քնելու: Նրա ձայնը միաբերան գովելուց հետո, առօրյա բաների մասին խոսեցինք և որովհետև ես շատ զբաղված էի իմ սեփական դրության փոփոխությամբ, հարկ համարեցի մր. Միկաբրին և նրա ամուսնուն վիճակիս հետ ծանոթացնել: Անկարելի է պատմել, թե նրանք որքան ուրախացան ու զվարթացան, տատիս հասած դրամական տագնապի լուրը լսելով:

Արդեն կուժը դատարկվելու վրա էր, երբ ես Տրեդլսին հիշեցրի, թե բարեկամներին վերջին հրաժեշտ տալիս մեզ կվայելեր առողջություն, հաջողություն և ամեն բարիք մաղթել նրանց իրենց նորընտիր ասպարեզի վրա: Խնդրեցի մր. Միկաբրին մեր բաժակները լցնել և մեկնողներին արևշատություն ցանկանալով, նրա աջն ամուր թոթվեցի և այս նշանավոր անցքի հիշատակը հավերժացնելու համար՝ մրս. Միկաբրին համբուրեցի: Տրեդլսը օրինակիս միայն առաջին մասին հետևեց, իսկ երկրորդին հետևելուց ձեռնպահ մնաց, որովհետև իր բարեկամությունը տիկնոջ հետ իմի չափ հին չէր:

---

[63] The Woolsack — այդպես է կոչվում Վերին Պալատի կարմիր բարձը, որի վրա լորդկանցլերն է նստում:

Մր. Միկաբրը ոտքի կանգնեց և մի բթամատն իր բաճկոնի մի գրպանը, իսկ մյուսը մյուս գրպանը դնելով, հետևյալն ասաց.

– Սիրելիդ իմ Կոպպերֆիլդ, երիտասարդ հասակիս ընկեր, եթե կարելի է այդպես ասել, և հարգելի բարեկամդ իմ Տրեդլս, եթե կներեք, որ ձեզ այդպես անվանեմ, թույլ տվեք ինձ այդ մաղթանքների փոխարեն մի սրտագին, մի ինքնաբեր շնորհակալություն հայտնել մրս. Միկաբրի, մեր սերնդի և իմ կողմից: Թերևս պատշաճ կհամարեք, որ այս գաղթման նախաժամին, որով մեր առաջ մի նոր կյանք է սկսվում (մր. Միկաբրն այնպես էր խոսում, որ հենց իմանաս հինգ հազար մղոն ճանապարհ է կտրելու), մի հրաժեշտի ճառ ասել առջևս նստած երկու ընտիր բարեկամներիս: Սակայն ասելիքս արդեն ասել եմ: Կմնա միայն ավելացնել, որ ինչ դիրք էլ ես ձեռք բերեմ այն գիտական կոչման մեջ, որին խոնարհաբար նվիրվելու եմ, պիտի ջանամ պարզերես մնալ և մրս. Միկաբրին արժանի հանդիսանալ: Ձեզ անհայտ չէ, որ դրամական տագնապի ճնշման ներքո ես մի քանի պարտք էի արել իսկույն վճարելու պայմանով: Զանազան պատճառների կուտակմամբ այդ պարտքերը վճարելու ճար չգտա և ստիպվեցի մի այնպիսի հագուստ հագնել, որ սովորությանս հակառակ է... ակնարկում եմ ակնոցիս վրա... և յուրացնել մի մականուն, որ ոչ մի օրինական իրավունք չունեմ կրելու: Սակայն, մթապատ հորիզոնից ամպերն արդեն անհետացան և ահա լեռների գագաթին նորից շողում է ակն արփենին: Եկող երկուշաբթի, երեկոյան ժամը չորսին, հենց որ կառքը Կենտրբըրրի ժամանի, ես վերստին բնագավառիս հողի վրա ոտք կդնեմ և անունս դարձյալ Միկա՛բր կլինի:

– Այլևս մի բան միայն ունեմ հրաժեշտի վերջին րոպեին հոգալու, և այդ բանը արդարության խնդիր է: Իմ ազնիվ բարեկամ մր. Թոմաս Տրեդլսը, երկու տարբեր դիպվածներում, իբրև երաշխավորող, «ձեռք է դրել», եթե անտեղի չէ այս գռեհիկ ոճը բանեցնել, իմ պարտամուրհակների տակ: Առաջին դեպքում մր. Թոմաս Տրեդլսը... թույլ տվեք պարզ ասեմ... ծուղակն ընկավ: Իսկ երկրորդ մուրհակի պայմանաժամը դեռ չի հասել: Առաջին պարտքիս գումարը (մր. Միկաբրը թղթեր հանեց գրպանից), կարծեմ քսաներեք, չորս, իննուկես է. երկրորդինը՝ տասնութ, վեց երկու: Այս բոլորը միացնելով գումարը կլինի, եթե հաշիվս սխալ չէ, քառասունմեկ, տասը, տասնմեկուկես[64]: Իմ բարեկամ Կոպպերֆիլդը մեծ շնորհ կանի, եթե բարեհաճի վերստուգել այս գումարը:

Ես ստուգեցի ու ճիշտ գտա:

– Եթե կամենայի մայրաքաղաքից և մր. Թոմաս Տրեդլսից հեռանալ,– շարունակեց մր. Միկաբրը,– առանց պարտքերս մարելու, սրտիս վրա մի անտանելի բեռ կմնար: Վասն որս իմ բարեկամ մր. Թոմաս Տրեդլսի համար պատրաստել եմ ահա մի փաստաթուղթ, որ լիովին համապատասխան է փափագիս: Խնդրում եմ մր. Թոմաս Տրեդլսին իմ հատուկ ստորագրությամբ վավերացված այս քառասունմեկ ստեռլինգ, տասը շիլինգ և տասնմեկուկես պենսի պարտատոմսն ընդունել: Երջանիկ եմ, որ այս ձևով բարոյական արժանիքս վերականգնում եմ և նորից կարող եմ ընկերներիս առջև պարզերես ման գալ:

Այս առաջաբանն ավարտելուց հետո, որ մեծ եռանդով ասվեց, մր. Միկաբրը տոմսակը Տրեդլսին տվեց և ամենայն բարիք մաղթեց նրան: Ես հավատացած եմ, որ մուրհակ տալը, որ ոչ միայն մր. Միկաբրի համար փողը վճարելուն էր հավասար, այլև Տրեդլսն անգամ տարբերությունն իսկույն նեթ չըմբռնեց, և հետո միայն դառն փորձով հասկացավ, որ մի թղթի կտոր տալը մեկ բան է, պարտք վճարեն ուրիշ բան:

Առաքինության այս սխրալի գործով զորբացած՝ մր. Միկաբրն այնպես «պարզերես» սկսեց ման գալ մոմը ձեռքին մեզ ճանապարհ գցելիս, որ նրա կուրծքն ավելի փքվեց: Շատ սրտագին հրաժեշտ տվինք իրար, և ես Տրեդլսին մինչև իր դուռը հասցնելուց հետո՝ մենակ տուն գնացի, մի քանի տարօրինակ ու հակասական բաների մասին մտածելով, ի միջի այլոց և այն բանի

[64] Այսինքն՝ 41 ստեռլինգ, 10 շիլինգ և 11½ պենսի:

մասին, թե գուցե իմ անտեր մանկության գորովալի հիշատակի պատճառով էր, որ մր. Միկաբրը հեղեղուկ բնավորության հակառակ, ոչ մի անգամ պարտք չէր ուզել ինձանից։ Ես հարկավ, արիություն չէի ունենա նրա խնդիրը մերժելու... նա էլ անշուշտ (գրում եմ այս ի պատիվ նրա) այդ լավ գիտեր։

ԺԷ. ԳԼՈՒԽ
Մի քիչ սառը ջուր

Արդեն մի շաբաթից ավելի կլիներ, որ նոր կյանքն սկսել էի՝ սպառազինված այն սոսկալի արիությամբ, որ անհրաժեշտ էր լինում ինձ՝ ներկա ծանր պայմաններում։ Ես դարձյալ շարունակում էի սաստիկ արագ, շտապ-շտապ ման գալ և այն հույսով տարվել, թե մոտենում եմ նպատակիս։ Կանոնս էր ինչ էլ անեի, հոգուս ամբողջ ճիգով անել։ Ես ինքս ինձ համարյա թե զոհ էի բերում և մինչև անգամ մտածում միայն բուսական սնունդով ապրել. ինձ թվում էր, թե մի խոտակեր անասուն դառնալով, Դորային մի նվեր մատուցած կլինեմ։

Եվ սակայն իմ եռանդուն ջանքերին չքնաղ Դորան միանգամայն անտեղյակ էր, որովհետև բացի մթին ակնարկներից՝ ուրիշ ոչինչ չէի գրում նրան այդ մասին։ Բայց ահա երկրորդ շաբաթը հասավ, և այդ շաբաթ երեկո Դորան պիտի միս Միլսի մոտ գտնվեր, և հենց որ մր. Միլսը ուխտ խաղալու համար կլուբ գնար, մի աներևույթ ձեռք թռչնի վանդակ պիտի դներ դահլիճի միջին պատուհանում, և նույն րոպեին ես պիտի ներս մտնեի միս Միլսի մոտ թեյ խմելու։

Մենք արդեն լիովին հաստատվել էինք Բուկինհեմի փողոցում, և մր. Դիկը շարունակում էր անասելի հրճվանքով իր թղթերն ընդօրինակել։ Տատս մի վերջնական հաղթություն էր տարել մրս. Կրոպպի դեմ, նրա հաշիվները վճարելով, սանդուղքի վրա թաքուն դրված կժերը պատուհանից դուրս շպրտելով և անձամբ վերահսկում էր մուտքն ու ելքը մի նոր աղախնու, որին վարձել էր իր համար։ Այս կտրուկ միջոցները այնպես վախեցրել էին մրս. Կրոպպին, որ նա իր սեփական խոհանոցն էր քաշվել այն համոզումով, թե տատս անշուշտ խելագարված կլինի։ Տատս, որին բնավ փույթ չէր, թե մրս. Կրոպպը և կամ մի ուրիշ որևէ մարդ ի՞նչ կարծիք ունի իր մասին, աշխատում էր այդ համոզումը վառ պահել, ուստի և մրս. Կրոպպը, որ փոքր-ինչ առաջ այնքան քաջ էր, այժմ այնպե՛ս վախկոտ էր դարձել, որ տատիս աչքին երևալ անգամ չէր համարձակվում և նրան հանդիպելու մի թեթև վտանգը տեսնելուն պես՝ շտապում էր իր հաստ մարմինը դռների հետև անհետացնել, բայց միշտ ժիպոնի փեշերը նշմարելի թողնելով, և կամ թե մի մութ անկյունում թաքնվել։ Այս բոլորից տատս այնքան էր զվարճանում, որ կարծեմ դիտավորյալ էր սանդուղքով շուտ-շուտ իջնում ու բարձրանում և դիտավորյալ իր գլխանոցին մի ահռելի դիրք տալիս, երբ սպասում էր, թե ճանապարհին մրս. Կրոպպին կհանդիպի։

Տատիս կարգասեր ու հնարագետ ոգու շնորհիվ մեր տան մեջ այնքան մանր բարվոքումներ մտցվեցին, որ տեսնողը կասեր, թե մենք ոչ թե սնանկացել ենք, այլ դեռ ավելի հարստացել։ Ի միջի այլոց՝ նա ինձ համար արդուզարդի սենյակ էր դարձրել մեր մառանի մութ խցիկը և ինձ համար մի սիրուն մահճակալ գնել, որ ցերեկով գրադարանի տեսք էր ստանում, ինչքան որ կարող էր այդ տեսքն ստանալ մի հահճակալ։ Ես միշտ նրա հոգածության առարկան էի, հարազատ մայրս անգամ ավելի սեր չէր շնորհի և ավելի խնամք չէր տանի ինձ երջանկացնելու։

Պեգգոտին անչափ գոհ էր, որ արտոնություն ունի այդ հոգսերին մասնակցելու, թեպետ իր հին սովորությամբ դարձյալ փոքր-ինչ ահով էր նայում տատիս վրա, բայց վերջերս այնքան սիրո ու մտերմության նշաններ էր ստացել նրանից, որ երկուսն էլ իրար հետ ամենասերտ

ընկեր էին դարձել։ Վերջապես հասավ այն շաբաթ օրը, երբ Պեգգոտին պիտի տուն վերադառնար Հեմի պետքերը հոգալու, իսկ ես միս Միլսի մոտ թեյ խմելու գնացի։

– Բարով գնաք, Բարկիս,– ասաց տատս։– Լավ պահպանեցեք ձեզ։ Երբեք չէի կարծի, թե ձեր հեռանալն այսքան կափսոսամ։

Ես Պեգգոտիի հետ մինչև դիլիժանսը գնացի և օգնեցի նրան կառք նստել։ Մեկնելիս նա լաց եղավ ու խնամքիս հանձնեց իր եղբորը, ինչպես Հեմն էլ արել էր։ Ծերունու հեռանալուց ի վեր ոչ մի բան նրա մասին չէինք լսել։

– Դե, սիրելի Դավիթ,– ասաց Պեգգոտին,– քանի որ դու մի անթոշակ պաշտոնյա ես, փողի կարիք կունենաս. հետո էլ, երբ պաշտոնիդ մեջ հաստատվես, գիտեմ, նոր-նոր ծախքեր առաջ կգան։ Էհ, ո՞վ ավելի իրավունք ունի այդ դեպքերում քեզ փող առաջարկելու, քան թե ես՝ պառավ դայակդ։

Ես իմ անկախության զգացումով այնքան մոլեգնած չէի, որ նրան չասեի, թե երբ էլ պարտք առնելու կարիք ունենամ, միայն նրան կդիմեմ։ Հավատացած եմ, որ խոստումս լսելով, Պեգգոտին նույնքան ուրախացավ, ինչքան որ կուրախանար, եթե իսկույն ևեթ մի մեծ գումար վերցնեի նրանից։

– Հետո, սիրելիս,– շշնջաց նա,– ասա սիրունիկ ընկերուհուդ, թե ես շատ կցանկանայի տեսնել նրան, տեսնել գոնե մի անգամ։ Ասա նույնպես, որ ձեր հարսանիքից առաջ անպատճառ կգամ, ձեր տունը մի լավ կհավաքեմ, որ դա ձեզ համար դուրեկան լինի, եթե միայն ինձ թույլ տաք։

Խոսք տվի, որ նրանից բացի, ոչ ոք մեր բնակարանին չի դիպչի, և Պեգգոտին վերին աստիճանի ուրախ սրտով ճանապարհ ընկավ։

Ամբողջ օրը Դոկտորների Համայնքում ձանձրացա և ժամանակը կարճելու համար անթիվ հնարներ բանեցնելուց հետո՝ երեկոյան, որոշված ժամին, մր. Միլսի տան փողոցը գնացի։ Մր. Միլսը, որ ճաշից հետո քնելու անշահ սովորություն ուներ, դեռ տանից չէր դուրս եկել, և միջին պատուհանի մեջ ոչ մի վանդակ չէր երևում։

Նա ինձ այնքան սպասել տվեց փողոցում, որ ես սրտանց կցանկանայի, եթե նրա ուշանալու համար կլուբը մի լավ տուգանք դներ նրա վրա։ Վերջապես ահա դուրս ելավ, և ահա Դորան պատուհանի մեջ մի վանդակ դրեց, պատշգամբից ներքև նայեց և ինձ տեսնելու պես ներս վազեց։ Ջիպը ետ մնաց, ներքևից անցնող մի ահագին գամփռի վրա սաստիկ հաչելով, որ կարող էր մի դեղահատի պես կուլ տալ նրան։

Դորան եկավ դիմավորելու ինձ դահլիճի դռան մոտ. Ջիպն էլ եկավ զայրացած, որ սխալվելով ավազակի տեղ էր ընդունել ինձ, և մենք երեքս միասին ներս մտանք՝ իրարից գոհ ու երջանիկ։ Սակայն ես ինքս ակամա այս ընդհանուր երջանկությունը բոլորովին խանգարեցի, հանկարծ Դորային հարցնելով, թե արդյոք նա կարո՞ղ է մի մուրացկանի սիրել։

Ա՜հ իմ սիրուն երկչոտ Դորաս։ Մուրացկան բառը լսելուն պես՝ նա երևակայեց գլուխը լաթով փաթաթած մի գունատ ու կնճռոտ ծերունի, մի զույգ անթացուպ, մի փայտե ոտք, բերնին մի պնակ բռնած մի նիհար շնիկ և կամ մի ուրիշ այսպիսի բան, ու չքնաղ ապշությամբ վրաս նայեց։

– Ինչպե՞ս եք համարձակվում այսպիսի հիմար բան հարցնել,– գոչեց Դորան, շրթունքը ծռելով։– Մուրացկան սիրել։

– Դորա, հոգյակս,– ասացի ես։– Ես եմ այդ մուրացկանը։

– Եվ հնարել այդպիսի անմիտ առասպելներ,– պատասխանեց Դորան, ձեռքիս զարնելով։– Իսկույն Ջիպին կհրամայեմ, որ ձեզ կծի։

Հրաշալի էր Դորայի մանկական վարմունքը, բայց և այնպես պետք էր բանի էությունը պարզել, և ես հանցիսաբար կրկնեցի.

– Դորա, հրեշտակս, աչքիս լույսը, քո Դավիթը սնանկացած է։

– Հավատացեք, այս րոպեիս Ջիպին կասեմ, որ ձեզ կծի, եթե այդ հիմար հանաքները շարունակեք,– ասաց Դորան, գանգուրները թոթվելով։

Սակայն դեմքս այնքան լուրջ էր, որ Դորան դադարեց գանգուրները թոթովել, հետո իր դողդոջ թաթիկն ուսիս դրեց, հուզված աչքով երեսիս նայեց ու սկսեց լաց լինել։ Սարսափելի տեսարան։ Ես բազմոցի առջև չոքեցի սիրեցյալիս գուրգուրելով, աղաչելով որ իմ սիրտը չկտրտի։ Բայց խեղճուկ Դորան շարունակում էր հեկեկալ. «Օ՜հ, աստված իմ, աստված իմ։ Սարսափում եմ։ Ո՞ւր է գնացել Ջուլիս Միլսը, տարեք ինձ Ջուլիայի մոտ։ Ահ, ոհ, խնդրում եմ, կորեք, հեռացեք»։

Ես մոլորված մնացի։

Վերջապես աղերսալից պաղատանքով հորդորեցի Դորային, որ գոնե մի անգամ վրաս նայի։ Նրա սարսափած դեմքը հետզհետե զվարթացավ, աչքերը գողտրիկ սիրով փայլեցին և նա իր քնքուշ, սիրուն թշիկն իմիս սեղմեց։ Այն ժամանակ ես նրա վզին փարվելով ասացի, թե հոգով սրտով սիրում եմ նրան, բայց և այնպես պարտք եմ համարում առաջարկել, որ նա ինձանից հրաժարվի, որովհետև ես սնանկացած եմ, թե նա կարող է ուրիշին ընտրել, բայց ես երբեք այդ հարվածին չեմ դիմանա ու կմեռնեմ. թե ես չքավորությունից չեմ վախենում, միայն թե նա էլ չվախենար, թե բազուկներս զորեղ են ու սիրտս վառ նրա սիրով. թե արդեն սկսել եմ մի այնպիսի եռանդով աշխատել, որ միայն սիրող մարդն ընդունակ է ըմբռնել, թե արդեն սկսել եմ գործնական լինել և ապագայիս մասին հոգալ. թե ճակատի քրտինքով վաստակած մի կտոր հացն ավելի համեղ է, քան ժառանգած փարթամ ճաշը, և շատ ու շատ այս տեսակ բաներ ասացի այնպիսի բուռն ճարտարությամբ, որ ինձ էլ զարմացրեց, թեև տատիս հայտնած անակնկալ գույժից ի վեր գիշեր-ցերեկ պատրաստել էի իմ ճառը։

– Արդյոք սիրտդ ա՞յժմ էլ ինձ է պատկանում, սիրելի Դորա,– ասացի ես, **այո** լսելու վստահությամբ հափշտակված, որովհետև նա ևս սկսել էր ավելի սեղմվել ինձ։

– Օ՜հ, այո,– գոչեց Դորան։– Այո՛, այո՛, միայն քեզ է պատկանում։ Բայց այդքան ահռելի մի երևար։

– Էլ երբեք չքավորության, աշխատանքի և այդպիսի բաների մասին չխոսես,– հրամայեց Դորան, ավելի ամուր փարվելով ինձ։– Երբեք, երբեք։

– Օ՜հ, հոգյակ իմ, չէ՞ որ ազնիվ քրտինքով ձեռք բերված մի պատառ հացը. . .

– Այո, այո, բայց չեմ ուզում այդ հացի պատառների կրկնությունը լսել,– ասաց Դորան։– Ջիպին ամեն օր, ժամը տասներկուսին, մի գառան կոտլետ է հարկավոր, եթե ոչ՝ հենց նույն օրը կմեռնի։

Այդ մանկական պատասխանի թովչությունը հիացրեց ինձ, և ես սիրով բացատրեցի, թե Ջիպն ամեն օր իր կոտլետը կստանա։ Այնուհետև մեր ապագա համեստ տնտեսությունը նկարագրեցի, ասելով, որ դա աշխատանքիս շնորհիվ անկախ կլինի, և մի թեթև գաղափար տվի Հայգեթում տեսած տնակիս մասին, ուր տատս էլ վերնահարկում մի առանձին սենյակ կունենա։

– Մի՞թե հիմա էլ ահռելի՞ եմ, Դորա,– ասացի ես քնքշաբար։

– Ոչ, ոչ,– գոչեց Դորան։– Բայց հուսով եմ, որ տատդ ճիշտ իր սենյակում կմնա, հուսով եմ նույնպես, որ նա մի փնթփնթան պառավ չի լինի։

Եթե հնար լիներ ավելի սիրել Դորային, կսիրեի, բայց զգում էի, որ նա գործնական կյանքին փոքր-ինչ անտեղյակ է։ Աշխատելու ջերմ եռանդս կարծես սառեց, երբ տեսա, թե որքան

դժվար է նույն եռանդը Դորային էլ հաղորդել: Սակայն դարձյալ մի փորձ արի: Հենց որ նա զգաստացավ ու Ջիպին իր գիրկն առնելով նրա ականջները սկսեց շփել, ես լրջությամբ ասացի.

– Սիրելիս, կցանկանայի մի բան ասել:

– Բայց աղաչում եմ, գործնական կյանքի մասին չխոսես,– ասաց Դորան ինձ փաղաքշելով:– Սարսափում եմ այդ բանից:

– Հոգյակ իմ, դրա մեջ ամենևին սարսափելի բան չկա: Ես կցանկանայի այդ կյանքը քեզ մի ուրիշ կերպ պատկերացնել, որպեսզի փոքր-ինչ արիանաս, սիրտ առնես:

– Սոսկալին էլ հենց այդ է,– գոչեց Դորան:

– Ո՛չ, ո՛չ, հոգյակս: Տոկուն կամքով և ուժեղ բնավորությամբ, ամեն դժվարություն կարելի է հաղթել:

– Բայց ես ամենևին ուժ չունեմ,– ասաց Դորան իր գանգուրների հետ խաղալով:– Ասա, Ջիպ, ուժ ունե՞մ, թե չէ: Հապա, Դեվի, մի համբույր տուր Ջիպին:

Անկարելի էր Ջիպին չհամբուրել, երբ Դորան մի օրինակ ցույց տալու համար իր իսկ վարդագույն, սիրուն շուրթերը համբույրի ձևով կլորեց և շնիկին այնպես երեսիս մոտ բռնեց, որ գործողությունը ճիշտ նրա դնչի կենտրոնի վրա կատարվի: Ես նրա ուզածն արի, հնազանդությանս փոխարենը ստանալով, և այս փոքրիկ միջանկյալ դեպքը լուրջ մտքերս առժամանակ փարատեց:

– Սակայն, Դորա,– ասացի ես, վերջ ի վերջո սթափվելով,– ես ուզում էի մի բան ասել:

Նույնիսկ Արտոնության Ատյանի նախագահը կսիրահարվեր Դորային, եթե տեսներ, թե ինչպես նա իր թաթիկները ծալեց, աղաչելով, որ ահռելի բաներ չասեմ:

– Երդում եմ անում, սիրելիս, որ ահռելի բան չեմ ասի,– կրկնեցի ես:– Սակայն, Դորա, եթե երբեմն փորձեիր մտածել... ոչ թե սիրտդ թուլացնելու, բնավ ոչ... այլ ուզենայիր մտածել՝ սիրտ առնելու այն հանգամանքից, որ... նշանածդ մի չքավոր մարդ է...

– Աստծու սիրուն, բավական է,– գոչեց Դորան:– Այդ ինչ սոսկալի բաներ են:

– Բնավ սոսկալի բաներ չեն, հոգիս,– ասացի ես քաջալերիչ եղանակով:– Եթե երբեմն ուզենայիր այդ մասին մտածել, երբեմն ուշք դարձնել հորդ տնտեսական գործերին և աշխատեիր ընտելանալ, օրինակի համար, մուտք ու ելքի հաշիվներին...

Խեղճ Դորան այդ որ լսեց, մի հառաչանքի և կամ ճչի նման ձայն հանեց:

– Այդ մեզ մի օր շատ պետք կգար,– շարունակեցի ես:– Եվ եթե խոստանայիր երբեմն աչքի անցնել... այն խոհարարության փոքրիկ գիրքը, որ մտադիր եմ ընծայել քեզ, որքան լավ կլիներ մեզ համար: Գիտցած եղիր, սիրելիս,– ասացի ես ոգևորվելով,– որ մեր կյանքի ճանապարհը փշոտ է, խորդուբորդ է, և մենք ինքներս պիտի հարթենք նրան: Մեր առջև դեռ շատ արգելքներ կան, և մեզ պետք է քաջ լինել, որ աներկյուղ դիմադրենք և տապալենք նրանց, միշտ առաջ դիմելով:

Բռունցքս սեղմած, դեմքս վառված, մտադիր էի ավելի առաջ նետվել, բայց այդպես անելու հարկ չկար: Ասածս էլ արդեն շատ էր: Ինձ արդեն հաջողվել էր նորից փչացնել ամեն բան... «Օ՜հ, ինչպես եմ սարսափած: Օ՜հ, միս Ջուլիա Միլսը որտե՞ղ է: Օ՜հ, նրա մոտ տարեք ինձ: Օ՜հ, խնդրեմ կորեք, հեռացեք»: Կարճ ասած՝ քիչ մնաց, որ խելքս թռցնեմ, և սկսեցի դեսուդեն վազել դահլիճում:

Կարծում էի, թե ահա Դորային սպանեցի: Սկսեցի ջուր սրսկել նրա երեսին: Ես նրա առջև չոքեցի: Գլխիս մազերը փետեցի, հիմար, անգութ, չար գազան անվանեցի ինքս ինձ: Աղաչեցի ներել ինձ: Պաղատեցի, որ գեթ մի անգամ աչքերը բանա: Տակնուվրա արի միս Միլսի

ձեռագործի զամբյուղը՝ մեջը ոգու սրվակ գտնելու համար, և շատ շփոթված դրությանս մեջ սրվակի տեղ՝ նրա փղոսկրե ասեղնատուփը հանեցի ու բոլոր ասեղները Դորայի գլխին թափեցի։ Զայրույթից բռունցքով զարկեցի անմեղ Ջիպին, որ ինձ նման կատաղել էր։ Էլ գժություն չմնաց, որ չանեմ, և բոլոր հնարներս արդեն վաղուց հատել էին, երբ միս Միլսը ներս մտավ։

– Ո՞վ արավ այս,– աղաղակեց միս Միլսը, ընկերուհուն օգնելով։

– Ես արի, ես։ Ահա ես եմ հանցավորը, մարդասպանը. . .

Եվ ուրիշ այսպիսի բաներ ասելով, ես բազմոցի վրա ընկա ու երեսս բարձին դեմ տվի։

Միս Միլսը նախ կարծեց, թե մենք իրար հետ կռվել ենք և Սահարայի անապատում մոլորվել, բայց շուտով բանի էությունը հասկացավ, որովհետև իմ պաշտելի սիրուն Դորան, նրա վզին փաթաթվելով, աղաղակեց, թե ես « մի խեղճ բանվոր» եմ, հետո սկսեց ինձ համբուրել, ինձ աղաչել, որ իր քսակի ամբողջ փողը վերցնեմ, և վերջապես նորից փարվելով միս Միլսին, այնպես սաստիկ հեկեկաց, որ կասեիր թե իր սրտիկը ճաքել է։

Միս Միլսն անշուշտ մեզ սփոփելու համար էր ստեղծված։ Իմ մի քանի խոսքերից նա ամեն ինչ ըմբռնեց ու քիչ-քիչ համոզեց Դորային, թե ես մի հասարակ բանվոր չեմ (Դորան կարծել էր թե բեռնակիր եմ կամ ձեռքի սայլակով ավազ կրող), և հաշտեցրեց մեզ իրար հետ։ Երբ խաղաղությունը հաստատվեց, և Դորան վերև գնաց աչքերը փոքր-ինչ վարդի ջրով լվանալու, միս Միլսը թեյ պատրաստելու նշան տվեց սպասուհուն։ Այդ միջոցին ես միս Միլսին հայտնեցի, թե նա իմ մշտական բարեկամն է և թե ես լավ կհամարեմ, որ սիրտս բաբախելուց դադարի, քան նրա սերն ու գութը մոռանամ։

Այնուհետև բացատրեցի նրան այն բոլորը, ինչ որ զուր ճգնել էի բացատրել Դորային։ Միս Միլսը ընդհանուր խոսքերով պատասխանեց, թե գոհության համեստ խրճիթը շքեղության սառ պալատից գերազանց է, և թե ուր որ սեր կա, ամեն բան կա։

Ասացի նրան, թե այդ խոսքերը միանգամայն ճշմարիտ են, և ո՞վ կարող էր այդ ավելի լավ գիտենալ, քան թե ես, որ Դորային մի այնպիսի սիրով եմ սիրում, որի նմանը և ոչ մի մահկանացու չի զգացել։ Սակայն երբ միս Միլսը հառաչելով նկատեց, թե մի քանի սրտեր թերևս երջանիկ կլինեին, եթե իմ չափ չսիրեին, ես շտապեցի սահմանավորել ասածս, հարելով, թե իմ խոսքերը միայն արական անձի մահկանացու էակներին են վերաբերում։

Այնուհետև առաջարկեցի միս Միլսին պարզ ասել՝ արդյոք լա՞վ է, թե լա՞վ չէ, գործնական տեսակետից, որ հանդգնել էի տնտեսական հաշիվների ու խոհարարության գրքի մասին խոսք բանալ։

Միս Միլսը մի քանի վայրկյան մտածելուց հետո այսպես պատասխանեց.

– Մր. Կոպպերֆիլդ, ասելիսքս պարզ կասեմ։ Մի քանի անձանց համար հոգեկան փորձերն ու վշտերը տարիների սնունդ են տալիս, և ես կցանկանամ մի վանամոր պես պարզ խոսել ձեզ հետ։ Ո՛չ, մր. Կոպպերֆիլդ։ Ձեր հարուցած խնդիրները չեն հարմարվում մեր Դորային։ Մեր Դորան բնության սիրասուն մանուկն է։ Նա լույսի, օդի և զվարթության էակ է։ Չեմ թաքցնի, լավ էր, եթե հնար լիներ հասկացնել նրան, որ. . . սակայն. . .

Եվ միս Միլսը գլուխը թոթվեց։

Միս Միլսի այդ ձևական հավանությամբ խրախուսված, հարցրի նրան՝ արդյոք չէ՞ր հաճի մի պատեհ առիթ գտնելուն պես, Դորայի ուշքն ու միտքը այդ լուրջ նյութերի վրա հրավիրել, որոնք այնքան կարևոր են կյանքի մեջ։ Միս Միլսը հոժարությամբ հաստատական պատասխան տվեց, և ես սիրտ արեցի խոհարարության գիրքն էլ մեջ բերել։

– Այդ գիրքը ես ինքս կգնեմ ու ձեզ կհանձնեմ, միս Միլս,– ասացի ես։– Եվ եթե կարենաք այնպես անել, որ Դորան այդ գիրքը առանց սարսափի ընդունի, մեծ լավություն կանեք մեզ։

Այդ խնդիրս էլ միս Միլսը ընդունեց, բայց ոչ այնքան հոժարակամ։

Եվ երբ Դորան վերադարձավ, նա այնքան սիրելի էր, որ ես ակամա կասկածեցի, թե արդյոք ներելի՞ է այդ գծուծ բաներով զբաղեցնել նրան։ Եվ նա ինձ այնքա՛ն սիրում էր, այնպես էլ հրապուրիչ էր (մանավանդ երբ Ջիպին հրամայեց հետևի ոտիկների վրա կանգնել իր ձեռքից մի տոստի[65] կտոր ընդունել, և հետո սպառնաց տաք թեյամանով նրա դնչիկն այրել, որովհետև չէր կամենում հնազանդվել), որ ես քերիի հովանոցը մտած մի հրեշ կարծեցի ինձ, երբ հիշեցի, թե ինչպե՞ս եմ վախեցրել նրան և արտասուք թափել տվել։

Թեյից հետո կիթառի նվագը վայելեցինք, և Դորան երգեց իր հին ֆրանսիական երգերն այն մասին, թե միանգամայն անհնարին է, որ մարդ դադարի տրա լա՛ լա՛, տրա լա՛ լա՛ պարելուց, և ես հրեշ լինելս այժմ ավելի զգացի, քան թե առաջ։

Մեր ուրախության վրա միայն մի թեթև ստվեր ընկավ, և այդ պատահեց իմ մեկնելուց փոքր-ինչ առաջ, երբ միս Միլսի մի պատահական ակնարկի առթիվ վաղվա մասին՝ ես դժբախտաբար ասացի, թե ստիպված լինելով աշխատել, այժմ սովոր եմ առավոտյան ժամը հինգին վեր կենալ։ Չգիտեմ Դորան ի՞նչ կարծեց – մի գիշերապահ դռնապա՞ն եմ, թե՞ մի ուրիշ այսպիսի բան – միայն թե խոսքերս նրա վրա շատ ազդեցին, և այնուհետև նա ո՛չ երգեց, ոչ՛ էլ նվագեց։

Նա դեռ մտածում էր այդ մասին, երբ ես նրան բարի գիշեր մաղթեցի։

– Տես հա, չարաճճի,– ասաց նա ինձ քնքուշ ձայնով, որով դիմում են տիկնիկին,– ժամը հինգին չվերկենաս։ Այդ ի՞նչ անմիտ, հիմար բան է։

– Շատ գործ ունեմ, հոգի ջան։ Պիտի աշխատեմ։

– Բնավ պետք չէ աշխատել,– ասաց Դորան։– Աշխատելն ինչացո՞ւ է։

Հնար չկար այլ ձևով պատասխանել նրա սիրունիկ, ապշած հայացքին, բացի զվարթ կատակից, թե աշխատել հարկավոր է ապրելու համար։

– Ֆի, ինչ ծիծաղելի բան է,– գոչեց Դորան։

– Հապա ինչպե՞ս կարելի է ապրել առանց դրա, սիրելի Դորա։

– Ինչպե՞ս։ Ինչպե՛ս էլ լինի,– ասաց Դորան։

Նա լիովին համոզված էր, որ խնդիրը լուծեց, և իր անմեղ սրտի բուն խորքից մի այնպիսի հաղթական համբույր շնորհեց ինձ, որ եթե աշխարհիս ամբողջ ոսկին էլ ինձ տային, չէի համաձայնի նրա սխալը փարատել։

Շա՛տ լավ։ Ես սիրում էի նրան ու շարունակեցի անհուն սիրով, հոգուս ամբողջ զորությամբ սիրել։ Շարունակեցի և՛ աշխատել, և՛ փութաջան, անդուլ, անխոնջ եռանդով երկաթներս կռել-կոփել։ Բայց և այնպես երբեմն-երբեմն, երեկոյան տատիս առջև լուռ նստած, հիշում էի Դորայի այն գիշերվա սոսկումը և մտածում, թե ինչպե՞ս պիտի կիթառը ձեռքիս ճանապարհ կտրեմ թանձրախիտ արգելքների անտառի միջով, և այս բանի վրա մտմտալիս ինձ թվում էր, թե մազերս սկսում են սպիտակել։

ԺԸ. ԳԼՈՒԽ
Ընկերության լուծվելը

[65] Toost – կենաց բաժակ. կրակի վրա խորոված հացի շերտ։

Ես չթողի, որ Պառլամենտի պայքարների վերաբերյալ որոշումս սառչի։ Դա էր այն երկաթը, որ ամենից առաջ սկսեցի ծեծել և ծեծել այնպիսի եռանդով, որ իրավամբ ինքս էլ կարող էի զարմանալ։ Ես գնեցի սղագրության ազնիվ արվեստի մի անվանի դասագիրք (վճարելով տասը շիլինգ ու վեց պենս) և սուզվեցի դրա խրթին կնճիռների ծովի մեջ, որի ալիքները խելագարության ափին հասցրին ինձ։ Կետերի պես-պես փոփոխությունը, որոնք մի կերպ գրվելով այսինչ բանն են նշանակում, ուրիշ կերպ գրվելով՝ մի ուրիշ և բոլորովին հակառակ բան, շրջանների ու պարույրների հազար տեսակ ձևերը, մի ճանճի թաթիկի չափ չնչին գծից առաջ եկող անսպասելի իմաստները, մի ծուռ քաշված ոլորակի սարսափելի հետևանքը, մի քիչ բութ կամ սուր շեշտի զարհուրելի ազդեցությունը՝ այդ բոլորը շփոթում էր, հալածում էր ինձ և ես ոչ միայն արթուն ժամանակ, այլև քնիս մեջ հոգուս հանգիստը վրդովում։ Երբ դեսուդեն խարխափելով այդ արգելքների խառնուրդի մեջ մի որևէ շավիղ էի կտրում ու փոքր ի շատե ընտելանում այբուբենին, որ արդեն ինքնըստինքյան մի եգիպտական մեհյան էր, նոր արհավիրքի թափոր էր բացվում իմ առջև՝ կամայական նշանների թափորը։ Այդ նշանների պես բռնակալ բան ես օրումս չէի տեսել. պահանջում էին, օրինակի համար, որ սարդի ոստյանի նմանություն ունեցող մի նուրբ ձև ակնկալեք նշանակի, և հռոմեական կերոնի նման նկարը՝ վնասակար բառի հոմանիշ լինի։ Հենց որ այդ դիվային նշանները դրոշմում էի մտքիս մեջ, տեսնում էի, որ դրանք գլխիս միջից դուրս են քշել արդեն առաջ սովորածներս, և երբ սկսում էի հները որոնել ու հավաքել, նորերն էի մոռանում, սիստեմի այսինչ մասնիկը գտնելիս՝ մյուսներն էի կորցնում, մի խոսքով՝ կարելի էր գժվել այս բոլորից։

Եվ անշուշտ կգժվեի, եթե Դորան չլիներ, Դորա՛ն, իմ նավակի միակ խարիսխն այս ալետանջ ծովի մեջ։ Սիտեմի յուրաքանչյուր փշիկը մի հաստաբուն կաղնի էր դժվարությունների անտառում, որ պետք էր տապալել, և ես մեկը մյուսի հետևից ջախջախեցի նրանց այնպիսի ուժով, որ արդեն երեք-չորս ամսից հետո կարողացա մեր Համայնքի մի ճարտար հռետորի վրա փորձ անել։ Արդյոք երբևիցե կմոռանա՞մ, թե ինչպես այդ ճարտասանը իր բերանը բանալուն պես նետի նման առաջ սլացավ, մինդեռ ես դեռ մի խազ անգամ չէի գծել, և մատիտս վերնոտի նման թղթի վրա ոստոստելով ետ մնաց. . .

Պարզ էր, որ բանս վատ է։ Շատ բարձր էի թռել. պետք էր փոքր-ինչ ցած իջնել։ Դիմեցի Տրեղլսի խորհրդին, և նա առաջարկեց կամաց-կամաց թելադրել ինձ ճառերը, ստեպ-ստեպ կանգ առնելով, ինչպես որ պահանջում էր իմ չիմանալը։ Այս սիրալիր օգնությունը շնորհակալությամբ ընդունեցի և այնուհետև երկար ժամանակ ու համարյա թե ամեն գիշեր. հենց որ դոկտոր Ստրոնգի գրասենյակից ետ էի գալիս՝ մի մասնավոր պառլամենտի նման բան էինք սարքում Բուկինհեմի փողոցում։

Կցանկանայի որևէ տեղ մի ուրիշ այդպիսի պառլամենտ տեսնել։ Տատս ու մր. Դիկը, հանգամանքներին նայելով, մերթ կառավարությունն էին ներկայացնում, մերթ ընդդիմադիր կուսակցությունը, իսկ Տրեղլսը, Էնֆիլդի «Ատենաբանով» կամ թե պառլամենտի պայքարների որևէ հատորով զինված՝ որոտալից պարսավ էր շանթում նրանց դեմ։ Սովորաբար Տրեղլսը՝ մի սեղանի մոտ կանգնած, ձախ ձեռքը գրքին դրած, որպեսզի էջը չկորցնի, և աջը գլխի առջև ճոճելով, ինչպես մի նորահայտ Պիտ, Ֆոքս, Շերիդան, Բեռրկ, լորդ Կեստլրի, կոմս Սիդմաութ և կամ Քեննինգ, մր. Դիկին ու տատիս չարաչար հարվածում էր անօրենության ու կաշառակերության ոճիրների համար, իսկ ես, նրա սեղանից փոքր-ինչ հեռու, հուշատետրն առջևս բռնած՝ ամբողջ ջանքովս ճիգ էի թափում ետ չմնալ նրանից։ Մտքերի անհաստատության ու թեթևության կողմից ոչ մի եվրոպական քաղաքագետ չէր կարող գերազանցել Տրեղլսին։ Մի շաբաթվա ընթացքում նա ամեն տեսակ իրար ընդդեմ քաղաքական ուղղություններ ընդունեց և ամեն գույնի դրոշակ պարզեց։ Տատս, մի կանցլերի պես անշարժ, նրան մեկ-մեկ ընդհատում էր. «Շա՛տ լավ, շա՛տ լավ» կամ թե «Ո՛չ, ո՛չ» և կամ թե «Օ՛հ, օհ» գոչյուններով, և մր. Դիկը, իբրև մի բուն գավառացի ջենտլմեն, անմիջապես միևնույնը կրկնում էր հրճվանքով։ Սակայն մր. Դիկն իր պառլամենտական ասպարեզի ընթացքում այնպիսի ահեղ ոճիրների մեջ ամբաստանվեց, այնպես խիստ մեղադրանքներ

լսեց, որ հետզհետե սկսեց դողալ ու կարծեմ վերջ ի վերջո հավատաց, թե ինքն իրոք Մեծ Բրիտանիայի սահմանադրության կործանում ու պետության քայքայում սպառնացող մի չար բան արած չլիներ։

Շատ անգամ այս պայքարները մինչև կես-գիշեր էինք շարունակում, մինչև իսկ ճրագների բոլորովին այրվելը։ Մեր ջանքերի հետևանքն այն եղավ, որ ես սկսեցի համարյա թե Տրեղլսի հետ հավասար ընթանալ, և հաղթանակս կատարյալ կլիներ, եթե միայն իմ խզմզած գծերի իմաստը գոնե փոքր-ինչ հասկանայի։ Սակայն դժբախտաբար, երբ փորձում էի կարդալ դրանք, այնքան բան էի հասկանում, ինչքան որ կհասկանայի թեյի տուփերի երեսին գծված չինական նշաններից և կամ այն ոսկեգիր տառերից, որ կարելի է տեսնել դեղարաններում շարված կարմիր ու կանաչ շշերի վրա։

Ուրիշ ոչինչ չէր մնում անել, եթե ոչ դառնալ և ամեն բան վերսկսել։ Տաժանելի գործ։ Բայց սիրտս ամրացնելով, ետ էի դառնում և քրտնաջան աշխատությամբ ու կրիայի քայլերով միևնույն ճանապարհը նորից անցնում, ամեն մի գիծ մանրամասն աչքի առնում և սոսկալի համառությամբ ճիգ թափում ըմբռնելու այդ չարանենգ նշանների իմաստը, ուր էլ դրանք հանդիպեին։ Միևնույն ժամանակ կանոնավոր հաճախում էի գրասենյակս Դոկտորների Համայնքում, ինչպես և դոկտոր Ստրոնգի գրասենյակը. կարճ ասած՝ աշխատում էի չարքաշ եզան պես։

Մի օր Համայնքը գնալիս՝ մուտքի մոտ մր. Սպընլոյին հանդիպեցի, որ անչափ լուրջ էր և մի ինչ-որ բան էր փնթփնթում։ Կարծեցի թե հիվանդ է. նա ստեպ գանգատվում էր գլխացավից – վիզը կարճ էր և կոշտ օսլայած փողպատի պատճառով գրեթե խեղդվում էր։ Սակայն ենթադրությունս սխալ եղավ։

Փոխանակ սովորական մտերմությամբ պատասխանելու «բարի լույս, սըր» ողջույնիս՝ նա մի հանդիմանական, սառն կերպով վրաս նայեց և հրամայեց հետևել իրեն մի սրճարան, որ Համայնքի հանդեպ էր՝ ս. Պողոսի գավթի կամարակապ նրբանցքում։ Հնազանդվեցի, և նույն րոպեին մարմնիս վրա տաք-տաք քրտինք զգացի և ասես թե բոլոր կասկածներս բողբոջների պես կաշուս միջից դուրս ցցվեցին։ Անցքը նեղ էր։ Մր. Սպընլոն առաջ գնաց. նրա գլխի խրոխտ բռնվածքից ոչ մի լավ բան չէր կարելի սպասել. սիրտս ասում էր, թե իմ ու Դորայի գաղտնիքը նա ինչ-որ ձևով որսացել է։

Ենթադրությունս չարաչար ճշմարտվեց, երբ նրա հետ միասին վերևի սենյակը մտնելուս պես միս Մեորդստոնին տեսա. նա կանգնած էր դարակին հենված, որի վրա մի քանի հատ՝ լիմոնով բաժակներ կային և զանազան անկյուններով ու խորշերով հիմա արդեն անգործածելի երկու տարօրինակ արկղիկներ, որոնց մեջ դանակներ ու պատառաքաղներ էին պահվում։

Միս Մեորդստոնը իր սառցային մագիլներն ինձ մեկնեց և խոժառադեմ նստեց։ Մր. Սպընլոն դուռը փակեց, նշան արեց, որ ես էլ նստեմ, և վառարանի առջև փռված գորգի վրա կանգնեց։

– Հաճեցեք ցույց տալ մր. Կոպպերֆիլդին,– ասաց մր. Սպընլոն,– ինչ որ ունիք ձեր ռեդիկուլում, միս Մեորդստոն։

Եթե չեմ սխալվում, դա նույն պայուսակն էր՝ պողպատե ճարմանդով ու երախի պես բացվող բերանով, որ տեսել էի մանկությանս օրերում։ Միս Մեորդստոնը ճարմանդի հետ միասին իր շուրթերն էլ սեղմեց, զսպանակը հուպ տվեց և պայուսակը բանալուն պես իր բերանն էլ բանալով, պայուսակի միջից իմ վերջին նամակը հանեց – քնքուշ սիրո զգացումներով թաթախուն վերջին նամակս առ Դորան։

– Կարծեմ ձերն է այս ձեռագիրը, մր. Կոպպերֆիլդ,– ասաց մր. Սպընլոն։

Ես բռնկվեցի, և իմս չէր այն ձայնը, որով պատասխանեցի.

– Այո՛, սըր։

Միս Մեորդստոնը կապտագույն ժապավենով կապված նամակների մի ծրար հանեց պայուսակից և մր. Սպընլոյին հանձնեց։

– Սրանք էլ, կարծեմ, ձեր գրչի արգասիքն են, մր. Կոպպերֆիլդ,– շարունակեց մր. Սպընլոն։

Ընկճված սրտով վերցրի նրանից այդ ծրարը, և հենց որ թերթերի ճակատին «Սիրելի Դորա, հոգյակս, հրեշտակս» բառերը նշմարեցի՝ երեսս բորբոքվեց ու գլուխս կախ ընկավ։

– Ո՛չ, շնորհակալ եմ,– ասաց մր. Սպընլոն սառնությամբ, երբ մեքենայաբար ետ էի տալիս ծրարը։– Չեմ ուզում ձեզ այդ գանձից զրկել։ Խնդրեմ շարունակեցեք, միս Մեորդստոն։

Այդ չնաշխարհիկ արարածը մի քանի վայրկյան մտածկոտ հայացքով գորգին նայելուց հետո՝ հետևյալը պատմեց ամենապաղ անդորրությամբ։

– Պիտի ասեմ, որ արդեն վաղուց կասկածելի էր երևացել ինձ, միս Սպընլոյի հարաբերությունը Դավիթ Կոպպերֆիլդի հետ։ Հենց առաջին հանդիպումից ես սկսեցի երկուսին էլ աչքաբաց դիտել, և տպավորությունս անախորժ էր։ Մարդկային սրտի ապականությունն այնտեղ է հասնում, որ...

– Խնդրեմ, տիկին, միայն փաստերով բավականացեք,– նկատեց մր. Սպընլոն։

Միս Մեորդստոնը աչքերը կախեց, գլուխը շարժեց, իբր թե բողոքելու այդ անպատշաճ ընդմիջման դեմ, և ապա շարունակեց վշտացած հպարտությամբ։

– Որովհետև միայն փաստեր են պահանջում ինձնից, ես էլ միայն չոր-չոր փաստեր առաջ կբերեմ։ Ասացի, սըր, թե վաղուց արդեն սրտիս մեջ կասկած էր ընկել միս Սպընլոյի ու Դավիթ Կոպպերֆիլդի նկատմամբ։ Շատ էի ուզում կասկածներս մի դրական փաստով հաստատել, բայց ջանքերս զուր էին անցնում։ Այս պատճառով զգուշանում էի միս Սպընլոյի հորը բան ասելուց (խիստ-խիստ նայելով նրան). ես գիտեմ, թե այսպիսի դիպվածներում մարդիկ որքա՜ն չեն հոժարում հավատ ընծայել իրենց պարտքը ճիշտ կատարող անձերին։

Մր. Սպընլոն կարծես ընկճվելով միս Մեորդստոնի այդ այրական խստությունից, իր ձեռքի մի հաշտաբար շարժումով շտապեց փոքր-ինչ ամոքել նրան։

– Երբ ես Նորվուդից ետ եկա, ուր գնացել էի եղբորս հարսանիքին ներկա լինելու,– շարունակեց միս Մեորդստոնը արհամարական եղանակով,– երբ միս Սպընլոն էլ միս Միլսի տանից վերադարձավ, ուր հյուր էր գնացել, տեսա, որ միս Սպընլոն ավելի կասկածելի ընթացք էր բռնել։ Հետևաբար ես էլ սկսեցի ավելի արթուն հսկել նրա վրա։

Իմ նազելի՜, խղճո՜ւկ Դորա, արդյոք կարո՞ղ էիր երևակայել, որ այդ վիշապի արթուն աչքերը ամեն քայլիդ հետևում է։

– Բայց և այնպես,– շարունակեց միս Մեորդստոնը,– չէի կամենում մի փաստ գտնել մինչև երեկ։ Ինձ թվում էր, թե միս Սպընլոն շատ հաճախ է նամակներ ստանում միս Միլսից. սակայն գիտենալով, որ այդ օրիորդի բարեկամությունը միս Սպընլոյի հետ վերջինիս հոր հաճությամբ է տեղի ունեցել (դարձյալ մր. Սպընլոյի վրա մի դաժան հայացք), հարկ չհամարեցի միջամտել։ Եթե իմ ակնարկը մարդկային սրտի ապականության վրա անպատշաճ գտան, թող գոնե ներվի ինձ անտեղի հավատարմության մասին բան ասել։

– Լավ կանեք,– մրմնջաց մր. Սպընլոն։

– Երեկ երեկոյան, թեյից հետո,– շարունակեց միս Մեորդստոնը,– նկատեցի, որ շնիկը մռմռալով, վազվզելով ու ցատկոտելով դահլիճում, մի ինչ-որ բան է զզզզում։ «Դորա, այդ ի՞նչ բան է շնիկի բերանում», ասացի ես միս Սպընլոյին։ Միս Սպընլոն անմիջապես գոտու մեջ տարավ իր ձեռքը, ճիչ հանեց ու իր շնիկի հետևինց վազեց։ Ես բռնեցի նրան ու ասացի. «Սիրելի Դորա, թույլ տվեք ես ինքս...»։

Օ՜հ, Ջիպ, դու անշահ սպանիական շուն. ուրեմն դո՞ւ ես մեր դավաճանը։

– Միս Սպընլոն փորձում էր,– ասաց միս Մեորդստոնը,– համբյուրներով, ձեռագործի տուփերով, զանազան մանր գոհարեղենով կաշառել ինձ... թողնենք այդ: Շնիկը բազմոցի տակ թաքնվեց, և ես շատ չարչարվեցի, մինչև որ ունելիով դուրս բերի նրան այնտեղից: Բայց դուրս գալուց հետո էլ թուղթը բերանում բռնած էր, և երբ ես, նույնիսկ կծոտվելու վտանգի ենթարկվելով, ուզում էի թուղթը թռցնել, նա շարունակեց այնպես համառ սեղմել նրան ատամներով, որ փաստաթղթի հետ օդում կախ մնաց: Վերջապես թուղթը խլեցի: Կարդալուց հետո, մեղադրեցի միս Սպընլոյին, թե անշուշտ ուրիշ այդպիսի նամակներ էլ կունենա, և ապա նրանից այդ ծրարն ստացա, որ ահա Դավիթ Կոպպերֆիլդի ձեռքին է:

Լռեց և շառաչյունով իր պայուսակը գոցելով ու բերանը փակելով, մի այնպիսի դիրք ընդունեց, որ կարծես ուզում էր ասել. «Դուք կարող եք ավելի շատ խորտակել ինձ, քան ընկճել»:

– Ահա, լսեցիք միս Մեորդստոնին,– ասաց մր. Սպընլոն, ինձ դառնալով:– Կցանկանայի իմանալ, մր. Կոպպերֆիլդ, թե ի՞նչ պատասխան կտաք մեզ:

Արժանապատվությանս չնչին մնացորդն էլ կորավ այն պատկերի հանդիման, որ կանգնած էր աչքիս առջև. տեսնում էի իմ լքյալ, իմ պաշտելի Դորային, որ մեն-մենակ, սարսափած ու թշվառ՝ ամբողջ գիշեր լաց էր եղել, զուր ջանալով ներում ստանալ այդ քարասիրտ կնոջից... և նրան համբույրներ, տուփեր, գոհարներ առաջարկել... և այժմ հուսահատ էր իմ պատճառով: Սրտիս վշտից ամբողջ մարմինս դողում էր, թեև աշխատում էի ծածկել այդ:

– Ասելիք չունեմ, սըր,– պատասխանեցի վերջապես:– Ամբողջ հանցանքն իմն է: Ես էի Դորային...

– Միս Սպընլոյին, կցանկանայիք ասել,– իշխանաբար ուղղեց հայրը:

– ... հաղորդել ու համոզել,– շարունակեցի ես՝ առանց այդ պաղ անունը կրկնելու,– համոզել, որ մեր գաղտնիքը ձեզնից թաքցնի, և այժմ սաստիկ զղջում եմ:

– Ամենախիստ հանդիմանության արժանի եք, սըր,– ասաց մր. Սպընլոն, գորգի վրա ետ ու առաջ ման գալով և մարմինը սաստիկ շարժելով, բացի գլխից, որ օձիքների ու ողնաշարի կարծրությունից ամենևին չէր կարող շարժել:– Ձեր արածը մի գողունի, անարգ բան է, մր. Կոպպերֆիլդ: Իմ տանը մի ջենտլմեն ընդունելիս, քանի տարեկան էլ որ լիներ՝ տասնինը, քսանինը թե իննսուն, ընդունում եմ լիակատար վստահությամբ: Եվ եթե նա վստահությունս խաբում է, ասել է թե ստոր է վարվում, մր. Կոպպերֆիլդ:

– Հավատացեք, սըր,– ասացի ես,– որ ինքս էլ այդ զգում եմ: Բայց դրա մասին մինչև հիմա չէի մտածել: Ազնվաբար, անկեղծ սրտով ասում եմ ձեզ, մր. Սպընլո, մինչև հիմա ոչ մի անգամ չէի մտածել դրա մասին: Ես այնպե՛ս եմ սիրում միս Սպընլոյին...

– Ֆի՛, ինչ հիմար բան է,– գոչեց կարմրելով մր. Սպընլոն:– Գուցե երեսիս չասեիք, թե իմ աղջկան սիրում եք:

– Եթե սերս չլիներ, էլ ինչո՞վ իմ արարքը կարդարացնեի, սըր,– պատասխանեցի ես համեստաբար:

– Համենայն դեպս, ո՛չ այդպիսի հիմար սիրով,– գոչեց հանկարծ մր. Սպընլոն ու գորգի վրա կանգ առավ:– Արդյոք հաշվե՞լ եք, մր. Կոպպերֆիլդ, ձեր տարիքն ու իմ աղջկա տարիքը: Արդյոք մտածե՞լ եք, թե ի՞նչ կնշանակի հոր ու դստեր հավատարմության հիմքը քանդել: Մտածե՞լ եք այն հասարակական դիրքի մասին, որ բռնում է իմ աղջիկը. այն հեռանկարների մասին, որ կազմել եմ նրա ապագայի վերաբերմամբ, այն կտակի մասին, որ մտադիր եմ անել նրա օգտին: Արդյոք այս բոլորից մի որևէ բանի մասին մտածե՞լ եք, մր. Կոպպերֆիլդ:

– Մտածել եմ, բայց շատ քիչ,– պատասխանեցի ակնառությամբ ու տրտմությամբ:– Սակայն դրա փոխարեն կարող եմ հավաստել, որ լավ եմ կշռել իմ հատուկ դրությունը այս կյանքում: Երբ ես այդ դիրքը ձեզ բացատրեցի, Դորան ու ես արդեն երդումով իրար հետ կապված էինք...

– Խնդրեմ չհամարձակվեք երդման ու կապերի մասին բան ասել ինձ,– գոչեց մր. Սպընլոն այնպես սաստիկ ծափ տալով, որ անգամ հուսահատ դրությանս մեջ անկարող էի չնկատել, որ այդ միջոցին նա լարով շարժող պընչի[66] նման էր։

Մինչև այդ անշարժ նստած միս Մերոդստոնը մի հեգնական ու մի վանկանի ծիծաղ հանեց։

– Երբ ես ձեզ իմ փոխված հանգամանքները հայտնեցի, սըր,– սկսեցի ես նորից, իրեն անախորժ ձևի փոխարեն մի ուրիշ ձև տալով խոսքերիս,– միս Սպընլոյի ու իմ միջև արդեն սկսվել էր այն գաղտնիքը, որի պատճառը դժբախտաբար ես էի։ Հանգամանքներիս փոխվելուց ի վեր ես ամեն ջանք գործ եմ դրել կյանքիս վիճակը բարվոքելու և հավատացած եմ, որ մի օր անշուշտ կբարվոքեմ։ Միայն հաճեցեք մի փոքր ժամանակ շնորհել ինձ։ Միթե չե՞ք շնորհի։ Չէ՞ որ մենք դեռ այնքա՜ն ջահել ենք, նա ու ես. . .

– Իրավ է,– ընդհատեց ինձ մր. Սպընլոն, մի քանի անգամ գլուխը շարժելով ու հոնքերը կիտելով։– Ճշմարիտ է, երկուսդ էլ շատ ջահել եք։ Այդ բոլորը խենթություն է, և քանի շուտ վերջանա, այնքան լավ։ Վերցրեք այս նամակները և կրակը նետեցեք։ Դուք էլ ինձ միս Սպընլոյի նամակները ետ տվեք, որ ես նրանց կրակը նետեմ։ Հասկանալի է, որ այսուհետև մեր ապագա հարաբերությունները, միայն Համայնքում տեղի կունենան, և այլևս անցյալի մասին չենք խոսի։ Դե, մր. Կոպպերֆիլդ, դուք անխելք չեք և կհասկանաք, որ սրանից լավ ելք չկա։

Ո՛չ։ Ես այդ բանին չէի կարող համաձայնել։ Շատ էի ցավում, բայց նկատողության արժանի մի բան կար, որ խելքի հաշիվներից շատ բարձր է։ Սերը ամեն բանից գերազանց է, և ես սիրում էի Դորային, պաշտում էի նրան, և Դորան ինձ էր սիրում։ Ասելիքս, հարկավ, ճիշտ այս խոսքերով չասացի ու բավական մեղմացրի. բայց և այնպես միտքս պարզ էր և որոշումս անդառնալի։ Արդյոք շա՞տ էի ծիծաղելի այդ միջոցին։ Չեմ կարծում. բայց որ ձայնիս ու դեմքիս արտահայտությունը վճռական էր – այդ քաջ գիտեմ։

– Շատ լավ, մր. Կոպպերֆիլդ,– ասաց մր. Սպընլոն,– ուրեմն ես աղջկաս վրա կփորձեմ ազդել։

Միս Մեորդստոնը արձակեց ոչ թե հառաչանքի կամ հեծության, այլ երկուսին էլ հավասար մի ձայն, հասկացնելով, թե մր. Սպընլոն վաղուց արդեն պարտավոր էր այդ փորձն անել։

– Եվ անպատճառ կփորձեմ աղջկաս վրա ազդել,– ասաց մր. Սպընլոն՝ այդ ակնարկությամբ քաջալերված։– Դուք հրաժարվո՞ւմ եք այս նամակները ետ տանել, մր. Կոպպերֆիլդ,– հարցրեց նա, տեսնելով որ ես ծրարը սեղանի վրա դրի։

– Այո՛։ Ես խնդրեցի մր. Սպընլոյին հանդգնություն չհամարել, որ անկարող եմ միս Մեորդստոնի ձեռքից ընդունել նամակները։

– Ոչ էլ ի՞մ ձեռքից,– հարցրեց մր. Սպընլոն։

– Ոչ էլ ձեր ձեռքից,– պատասխանեցի ամենախորին հարգանքով։

Մի երկար լռություն հաջորդեց, և ես վարանում էի, արդյոք հեռանա՞մ, թե՞ մնամ։ Վերջապես հանդարտ մոտեցա դռան և մտադիր էի ասել մր. Սպընլոյին, թե գուցե հեռանալովս ավելի լավ կհամակերպվեմ իր ցանկությանը, երբ նա ձեռքերը գրպանների մեջ խոթելով, որ նրա համար մի բավական դժվար բան էր, լուրջ ու շատ ջերմեռանդ ձայնով ասաց.

– Երևի թե անհայտ չէ ձեզ, մր. Կոպպերֆիլդ, որ ես աշխարհային բարիքներից իսպառ զուրկ չեմ, և որ աղջիկս իմ ամենասիրելի և ամենասերտ ազգականն է։

Տաք-տաք պատասխանելով մր. Սպընլոյին, ես հույս հայտնեցի, թե իմ կաթոգին սիրուց ծագած սխալ քայլը տեղի չի տա նրան կարծելու, թե մի շահասեր էակ եմ։

---

[66] Punch — խեղկատակ, փայտյա խամաճիկ։

– Ակնարկիս միտքը բնավ այդ չէր,– ասաց մր. Սպընլոն,– ձեզ համար, մր. Կոպպերֆիլդ, անշուշտ և բոլորիս համար ավելի լավ կլիներ, եթե իրոք շահասեր չլինեիք... այսինքն՝ ավելի խոհեմ և ոչ այդպես պատանեկան ցնորքներով մոլորված։ Ո՛չ։ Հարցիս միտքն ուրիշ է։ Երևի թե անհայտ չէ՞ ձեզ, որ ես իմ աղջկան կտակելու մի փոքրիկ գույք ունեմ։

Պատասխանեցի, թե հավանական եմ համարում։

– Եվ հարկավ չե՞ք կարծի,– ասաց մր. Սպընլոն,– քանի որ Համայնքում ծառայելով ամեն օր ականատես եք, թե մարդիկ իրենց գործերը կտակով կարգադրելու սուրբ պարտքը որչափ են երևում մարդկային թեթևամտության օրինակները... չեք կարծում, թե ես էլ այդ մասին ուրիշների պես անփույթ եմ։

Գլխովս նշան արեցի, թե չեմ կարծում։

– Ես թույլ չեմ տա,– շարունակեց մր. Սպընլոն, իր գլուխը կամաց շարժելով և մերթ ոտքի մատների, մերթ կրունկների վրա հենվելով՝ կարծես թե իր ջերմեռանդ նկատողությանը ավելի կշիռ տալու համար,– չեմ հանդուրժի, որ իմ լուրջ կարգադրությունը զավակիս օգտին գեթ մազի չափ փոխվի մի տղայական հիմարության պատճառով։ Ձեր արածը հիմարություն է, մի անմիտ բան – ուրիշ ոչինչ։ Այդ բոլորը փոքր-ինչ հետո փետրից թեթև բան կերևա։ Սակայն կարող է պատահել... եթե այս խենթությանը իսկույն ևեթ վերջ չտրվի, որ ես նեղն ընկնելով ստիպվեմ մի այնպիսի միջոց ընտրել, որ փրկեր իմ աղջկան ամուսնության հասնող հիմար քայլի հետևանքից։ Արդ հուսով եմ, մր. Կոպպերֆիլդ, որ չեք հարկադրի ինձ բաց անել՝ նույնիսկ մի քառորդ, կենաց գրքի այս փակ էջը և անգամ մի քառորդ ժամով այլայլել արդեն վաղուց կարգի դրված մեծակշիռ գործերը։

Մր. Սպընլոյի դեմքի վրա մի այնպիսի անդորրություն, հանդարտություն, պայծառություն էր երևում, որ ես նրան նայելով բոլորովին հուզվեցի։ Նա այն աստիճան անվրդով ու խաղաղ էր... իր գործերն այդպես ճշտիվ կարգի բերած ու սիստեմաբար կանոնավորած լինելուց... որ կարծեմ ինքն էլ դրա մասին մտածելիս գորովվում էր։ Եթե չեմ սխալվում, ես տեսա մինչև անգամ, որ այդ անձնական երջանկության զգացման խորքից նրա աչքերի մեջ մի քանի արտասուք բարձրացան ու ցոլացին։

Սակայն ես ի՞նչ անեի։ Մի՞թե Դորայիս ուրանայի և սրտիս դավաճանը լինեի։ Մի՞թե կարող էի չընդունել մր. Սպընլոյի առաջարկը՝ յոթ օր մտածելու իր ասած բաների վրա, թեև գիտեի, որ ոչ թե յոթ օր, այլ եթե հազար շաբաթ էլ մտածեմ, մի կաթիլ անգամ չի պակսի իմ սիրո պես ջերմ սիրուց։

– Մինչ այս, մինչ այն՝ խորհուրդ տեսեք միս Տրոտուդի և կամ մի ուրիշ կենսագետ ու փորձառու անձի հետ,– ասաց մր. Սպընլոն, իր օձիքն ուղղելով։– Մի շաբաթ ժամանակ ունեք, մր. Կոպպերֆիլդ։

Հնազանդվեցի և տխուր դեմքով հեռացա, բայց հեռացա անվհատ ու անվկանդ հուսահատությամբ։ Միս Մեորդստոնի ծանր հոնքերը մինչև դուռը հետևեցին ինձ – հոնքերն եմ ասում, և ոչ աչքերը, որովհետև նրանք շատ ավելի խորհրդավոր էին նրա դեմքի վրա. – և նա այնպես դաժան նայեց վրաս, ինչպես նայում էր Բլենդրոտընի դահլիճում, ուր ես ամեն առավոտ ճնշված սրտով դաս էի ասում նրա առջև։ Նույն ճնշումը կարծես այժմ էլ զգալով, ակամա հիշեցի այն ատելի այբբենարանը, որի ձվաձև նկարները ակնոցից ընկած ապակու նման մի բան էին թվում մանկական մտքիս։

Գրասենյակը մտնելուս պես, իմ հեռավոր անկյունում նստեցի և ձեռքերով երեսս ծածկեցի ծեր Տիֆընի ու մյուս գրագիրների հայացքից։ Սկսեցի մտածել հանկարծահաս երկրաշարժի մասին, դառնապես անիծեցի անշահ Ջիպին և վշտակցելով Դորային, այն տեսակ զառանցանքի մեջ ընկա, որ ինքս էլ չգիտեմ, թե ինչպե՞ս իսկույն ևեթ գլխարկս չառա ու գժի պես դեպի Նորվուդ չշարժվեցի։ Դորային տանջում են, և ես այնտեղ չեմ, որ նրան սփոփեմ... Այս մտքերի ազդեցության տակ գրիչս վերցրի և մր. Սպընլոյին մի վայրենի նամակ գրեցի,

աղաչելով չծանրացնել իր զավակի վրա իմ ահեղ ճակատագրի հետևանքները։ Պաղատեցի նաև՝ գթալ այդ քնքուշ ու դյուրաբեկ ծաղկին, և, որքան հիշում եմ, այնպիսի ոճեր բանեցրի, որ կարծես թե մր. Սպընլոն Դորայի հայրը չլիներ, այլ մի հրեշ, մի չար գազան, մի վիշապ։ Կնքեցի նամակն ու նրա սեղանի վրա դրի, և երբ նա եկավ, դռան միջով լավ տեսա, որ նամակս վերցրեց ու կարդաց։

Մր. Սպընլոն ամբողջ օրը չխոսեց, բայց երեկոյան դեմ, հեռանալուց առաջ, կանչեց ինձ և ասաց, թե զուր եմ մաշվում իր աղջկա վիճակի մասին։ Նա արդեն համոզել է աղջկան, որ այդ բոլորը խենթություն է, և այլևս նրան ասելու բան չունի։ «Կարծեմ ես ներողամիտ հայր եմ,– ասաց նա, (և իրոք այդպես էր),– և ուրեմն դուք ամենևին առիթ չունեք անհանգիստ լինելու այդ մասին»։

– Ձեր անմտության կամ համառության հետևանքը այն կլինի, մր. Կոպպերֆիլդ,– նկատեց մր. Սպընլոն,– որ ես կստիպվեմ աղջկանս դարձյալ մի քանի ամսով արտասահման ուղարկել. սակայն ձեր մասին ավելի լավ կարծիք ունեմ և հուսով եմ, որ մի քանի օրից կզգաստանաք։ Գալով միս Մեորդստոնին (դրա մասին էլ ակնարկություն կար նամակիս մեջ), ես այդ լեդիի աչալուրջ հսկողությունը հարգում եմ և շնորհապարտ եմ նրան. բայց և այնպես խիստ նրան հրամայել եմ, մր. Կոպպերֆիլդ, որ այս բոլորը շուտով մոռացվի։ Ձեզ էլ, մր. Կոպպերֆիլդ, ուրիշ բան չի մնում անել, բացի միայն մոռանալուց։

Միա՛յն։ Հեշտ է ասել։ Միևնույն օրը միս Միլսին գրված տոմսակի մեջ դառնությամբ հեգնեցի, թե ինձ ուրիշ բան չի մնում անել, քան **միայն** մոռանալ Դորային։ Միայն մոռանալ, ուրիշ ոչինչ։ Աղաչեցի միս Միլսին այդ երեկո տեսնել ինձ։ Եթե հնար չլիներ ինձ տեսնել մր. Միլսի ներկայության պատճառով, խնդրեցի ժամադրություն նշանակել խոհանոցին կից սենյակում, ուր լվացքի տաշտն էր պահված։ Հայտնեցի նրան, թե գլուխս իր հիմքի վրա տատանվում է և միայն միս Միլսը կարող է փրկել նրան ընկնելու վտանգից։ Նամակն արագ ստորագրեցի և երբ, մի տղայի ձեռքով ուղարկելուց առաջ, մի անգամ էլ աչքի անցրի, տեսա որ ոճս մր. Միկաբրի հայտնի ոճից ետ չի մնում։

Բայց և այնպես ուղարկեցի։ Երեկոյան դեմ միս Միլսի փողոցը գնացի և երկար ժամանակ նրա տան շուրջը պտույտ եկա, մինչև որ նրա սպասուհին ինձ նշմարեց և հետևի դռնով ներս տարավ։ Հետո միայն իմացա, որ կարելի էր և շքամուտքով ներս մտնել և կամ նույնիսկ հյուրասենյակում ընդունել, սակայն միս Միլսը սիրում էր ամեն մի խորհրդավոր ու ռոմանտիկ բան։

Խոհանոցն ընկնելուս պես, սկսեցի ինչպես որ պետք էր մոլեգնել. ուրիշ բան անել չէի էլ կարող, որովհետև գնալուս նպատակն էլ հենց այդ էր։ Միս Միլսը մի շտապ գրված տոմս էր ստացել Դորայից, թե ամեն բան հայտնվել է։ Տոմսի վերջաբանն էր. «Օ՜հ, Ջուլիա, եկ հասիր, օգնիր ինձ»։ Բայց միս Միլսը կասկած կրելով Դորայի տան մեծերից, չէր համարձակվել այնտեղ գնալ, և մենք բոլորս մոլորված էինք Սահարայի անապատում։

Միս Միլսը վերին աստիճանի ճարտարախոս էր և բառերի ազատ հոսանքից զմայլվող։ Չէի կարող չտեսնել, որ նա ինձ հետ լաց լինելիս մի կատարյալ վայելք էր զգում մեր վշտից։ Նա զգում էր այդ վիշտը՝ ասես թե ավելի ախորժելու համար դրանից։ Նրա ասելով՝ Դորայի ու իմ միջև մի ահագին վիհ էր բացվել, և միայն սերը կարող էր մի ծիածանի կամրջով կապել դրա հակառակ եզերքները։ Սիրո վիճակն է՝ համբերել և տանջվել այս աշխարհում, այդպես էր միշտ, միշտ էլ այդպես կլինի։ «Սակայն փույթ չէ», գոչեց միս Միլսը։ «Շղթայով կապված սիրող սրտերը մի օր անշուշտ կարձակվեն և այն ժամանակ սերն իր վրեժը կհանի»։

Մի շատ մխիթարական բան չէր դա. բայց միս Միլսը մտադիր չէր սուտ հույսերով սփոփել ինձ։ Նրա խոսքերից ես ավելի թշվառացա, քան առաջ, և ամենաջերմ շնորհակալությամբ հայտնեցի, թե նա իրոք մի ճշմարիտ ընկեր է։ Մենք որոշեցինք, որ հետևյալ օրը նա Դորայի մոտ կգնա և մի հնար կգտնի՝ լեզվով, գրչով և կամ աչքով իմացնելու նրան, թե ես անհույս

սիրուց մեռնում եմ: Անտանելի վշտից ընկճված բաժանվեցինք, և հավատացած եմ, որ միս Միլսը շատ գոհ էր:

Տուն հասնելուն պես ես ամեն բան տատիս հայտնեցի և չնայելով նրա ամոքիչ խոսքերին, վհատված սրտով անկողին մտա: Վհատ էր սիրտս և՛ առավոտյան զարթնելիս, վհատ էր և՛ դուրս գնալիս: Շաբաթ օր էր. գնացի ուղիղ Դոկտորների Համայնքը: Երբ որ հասա, շատ զարմացա, տեսնելով դռան առջև սպասավորների մի խումբ, որոնք իրար հետ խոսում էին, և մի քանի դատարկ մարդիկ, որոնք ապուշ-ապուշ նայում էին դեռ չբացված պատուհաններին: Ես քայլերս փութացրի, նրանց միջով արագ անցա ու ներս մտա:

Գրագիրներն արդեն գրասենյակումն էին, բայց դեռ ոչ ոք գործ չէր սկսել: Ծերունի Թիֆլն, մի ուրիշի աթոռն էր բռնել (կարծեմ առաջին անգամ իր կյանքում) և գլխարկը չէր կախել:

– Այս ինչ սարսափելի դժբախտություն է, մր. Կոպպերֆիլդ,– ասաց նա, ինձ տեսնելով:

– Ի՞նչ,– գոչեցի ես:– Ի՞նչ է պատահել:

– Մի՞թե չգիտեք,– կանչեց Տիֆլն, և ամենքն ինձ շրջապատելով միևնույնը կրկնեցին:

– Ոչինչ չգիտեմ,– ասացի ես, մեկ-մեկ նրանց նայելով:

– Մր. Սպրնլոն... – ասաց Թիֆլն:

– Ի՞նչ:

– Մեռել է:

Հենց իմանաս սենյակի պատերը գլխիս փուլ եկան. ես տատանվեցի. գրագիրներից մեկն ինձ բռնեց: Ինձ նստեցրեց, փողպատս բացին ու ջուր տվին: Որքա՜ն տևեց այդ բոլորը՝ չգիտեմ:

– Մեռե՞լ է,– կրկնեցի ես:

– Երեկ քաղաքում ճաշել է և հետո ինքն է կառքը դեպի տուն քշել, հրամայելով կառապանին օմնիբուս նստել, ինչպես որ անում էր շատ անգամ...

– Հետո՞:

Կառքը դատարկ է տուն հասել: Ձիերը կանգնել են ախոռի առջև: Ձիապանը լապտերը բռնած դուրս է եկել: Կառքում ոչ ոք չի եղել:

– Ձիերը երևի խրտնե՞լ են:

– Չեմ կարծում,– ասաց Տիֆլն, ակնոցը հագնելով:– Ախոռի առջև կանգնելիս սովորականից ավելի տաք չեն եղել: Երասանակները կտրված են եղել, երևի թե գետնով քարշ ածելուց: Ամբողջ տունը ոտքի է ելել. երեք հոգի շտապել են ճանապարհը խուզարկել: Մարդուն գտել են տանից մեկ մղոն հեռու ընկած:

– Մեկ մղոնից ավելի հեռու, Թիֆլը,– ընդհատեց մի երիտասարդ:

– Կարելի է... – հաստատեց Թիֆլն:– Այո, մեկ մղոնից էլ փոքր-ինչ հեռու, եկեղեցու մոտերքում... ճանապարհի եզերքին երեսն էլ վայր տարածված: Արդյոք կաթվածահա՞ր լինելուց է ընկել, թե ինքն է ներքև իջել տկարություն զգալով... կամ թե արդյոք մեռա՞ծ է եղել, երբ նրան գտել են, թեև արդեն անզգա՝ ոչ ոք չգիտի: Գուցե դեռ շունչը վրան է եղել, բայց ոչ մի բառ չի ասել: Իսկույն կանչված բժիշկների օգությունը զուր է անցել:

Թե ինչ զգացի այդ գույժը լսելով՝ անկարող եմ նկարագրել: Ամեն մարդ կհասկանա, թե ինչ տագնապ պիտի զգայի այն անակնկալ պատահարից, որի զոհի հետ դեռ փոքր-ինչ առաջ վիճել էի: Նրա սենյակի զարհուրելի ամայությունը, ուր աթոռն ու սեղանը կարծես դեռ իրեն էին սպասում. դեռ երեկ գրած տողերը, որոնք ուրվականի պես պշնում էին վրաս. նրան այդ տեղից բաժանելու անկարելիությունը. կարծես թե ահա դուռը հանկարծ կբացվի ու նա ինքը անձամբ ներս կմտնի. գրասենյակի տխուր ու խորը լռությունը, գրագիրների անհագուրդ

շնջյունն իրար հետ և մի նոր բան լսելու տենչով դրսի մարդկանց անդադար մուտքն ու ելքը... այս բոլորը հասկանալի է յուրաքանչյուր մարդու համար, որ դժբախտություն է ունեցել մերձավոր կորցնելու: Սակայն ինչ-որ անկարող եմ հասկանալ և ըմբռնել, այդ այն թաքուն նախանձն է, որ զգում էի սրտիս խորքում մինչև անգամ դեպի մահը: Զգում էի, իբր թե մահը Դորայի մտքից վռնդում է ինձ, և ես հոգիս տանջող նախանձ էի զգում դեպի Դորայի վիշտը: Զայրույթս բորբոքվում էր մտածելիս, թե Դորան ուրիշների առջև է լաց լինում, ուրիշներն են նրան սփոփում... Եսամոլ տենչս էր՝ ամենքին հեռացնել նրա մոտից, անջատել նրան աշխարհից, մենակ իշխել նրա սրտին և այդ չարագետ րոպեին ամեն բան միայն ինձնով փոխարինել:

Մտքերս այս ալեծուփ դրության մեջ (որի մեջ հուսամ թե շատերն էլ գտնված կլինեն ինձ նման) ես երեկոյան Նորվուդ գնացի և սպասավորից իմացա, որ միս Միլսն այնտեղ է: Տուն վերադառնալով նրան մի նամակ ուղարկեցի, որի հասցեն իմ խնդրանոք տատս գրեց: Նամակիս մեջ ի բոլոր սրտե ողբում էի մր. Սպընլոյի վաղահաս մահը և գրելիս արտասուք թափում: Աղաչում էի նրան Դորային ասել, եթե միայն Դորան ականջ դնելու ընդունակ է, թե մր. Սպընլոն միշտ բարությամբ ու գթությամբ էր ինձ հետ խոսել և թե իր աղջկան հիշելիս անհուն սիրով և առանց մի կշտամբական բառ ասելու նրա անունն արտասանել: Գիտեի, որ այսպես գրելը եսականություն է իմ կողմից – ես ուզում էի, որ անունս Դորայի առջև արտասանվի, բայց և աշխատում էի համոզել ինձ, թե արդարության պարտք եմ վճարում հանգուցյալի հիշատակին: Եվ գուցե իրոք համոզված էի:

Հետևյալ օրը տատս մի երկտող պատասխան ստացավ՝ արտաքուստ իրեն ուղղած, ներքուստ՝ ինձ: Դորան սաստիկ ընկճված է եղել, և երբ ընկերուհին նրան հարցրել է, թե արյոք իր կողմից էլ ողջունի՞ ինձ, նա միայն լալով գոչել է. «Օ՜հ, հայրիկ իմ, սիրելի հայրիկ»: Բայց չի ասել ո՛չ, և այդ արդեն ինձ համար մի ահագին սփոփանք էր:

Մր. Ջորկինսը, որ պատահարից ի վեր Նորվուդումն էր գտնվում, մի քանի օրից հետո Համայնք եկավ: Նա ու Թիֆըն մի քանի րոպե առանձին մնացին գրասենյակում. հետո Թիֆըն դռնից դուրս նայեց և ինձ ներս հրավիրեց:

– Օ՜,– ասաց մր. Ջորկինսը:– Ահա մր. Թիֆըն ու ես, մր. Կոպպերֆիլդ, հանգուցյալի գրասեղանը, գզրոցներն և ուրիշ պահարաններն ենք խուզարկում՝ նրա մասնավոր թղթերը կնքելու և կտակը գտնելու համար: Սակայն կտակի հետքն էլ չկա: Խնդրեմ դուք էլ օգնեցեք, մր. Կոպպերֆիլդ:

Աղետալի դեպքից ի վեր սաստիկ փափագում էի գեթ վայր ի վերո իմանալ, թե Դորայի վիճակն ի՞նչ պիտի լիներ, ո՞վ պիտի լիներ նրա խնամակալը և այլն, և մր. Ջորկինսի հրավերը շատ հաճելի էր ինձ համար: Իսկույն սկսեցինք հետազոտել: Մր Ջորկինսը գզրոցները բաց էր անում և մենք թղթերը դուրս հանելով, պաշտոնականները մի կողմ էինք դնում, մասնավորները՝ մյուս կողմ (վերջիններս շատ չէին): Շատ լուրջ էինք այս բոլորն անելիս, և երբ հանգուցյալին պատկանած որևէ կնիք, մատանի, մատիտ և կամ մի ուրիշ մանր բան պատահեր, շունջով էինք իրար հետ խոսում:

Արդեն շատ ծրարներ էինք կապել և մեր փոշոտ զբաղմունքն անշտապ առաջ էինք տանում, երբ մր. Ջորկինսն իր ընկերոջ մասին մի նկատողություն արեց իսկ և իսկ այն խոսքերով, ինչ խոսքեր որ հանգուցյալն էր բանեցնում նրա մասին ասելիս:

– Մր. Սպընլոն այնպիսի մարդ չէր, որ հեշտ շեղվեր արդեն իր ընտրած արահետից: Դուք հո գիտեք՝ ինչ մարդ էր: Ես հակամետ եմ կարծելու, թե ոչ մի կտակ չի թողել:

– Հաստատ գիտեմ, որ թողել է,– ասացի ես:

Երկուսն էլ կանգ առան ու աչքերը վրաս ուղղեցին:

– Հենց մեր վերջին տեսակցության օրը,– շարունակեցի ես,– մր. Սպընլոն ինձ հայտնեց, թե կտակն արդեն գրել է և վաղուց իր գործերը կարգադրել է:

Մր. Ջորկինսն ու ծերունի Թիֆըն գլուխները շարժեցին։

– Բարեգուշակ բան չէ դա,– ասաց Թիֆըն։

– Բարեգուշակ չէ բնավ,– ասաց մր. Ջորկինսը։

– Դուք հարկավ չեք կասկածում, որ... – սկսեցի նորից։

– Սիրելի մր. Կոպպերֆիլդ,– ասաց Թիֆըն և ձեռքն ուսիս դնելով, աչքերը գոցեց ու գլուխը թոթվեց։– Եթե դուք այնքան ծառայած լինեիք Դոկտորների Համայնքում, որքան ես եմ ծառայել, անթիվ փորձերով կիմանայիք, թե մարդիկ որ աստիճան թեթևամիտ են և անվստահելի այս տեսակ գործերում։

– Պատիվս վկա,– գոչեցի ես,– մր. Սպընլոն էլ իսկ և իսկ այդ էր ասում։

– Ուրեմն էլ խոսելու բան չկա,– նկատեց Թիֆըն։– Ես հավատացած եմ, որ ոչ մի կտակ էլ չի արել։

Այդ ինձ շատ զարմանալի երևաց, բայց փոքր-ինչ հետո իրոք տեսանք, որ մեջտեղը կտակ չկա։ Մր. Սպընլոն չէր էլ մտածել որևէ կտակ անելու. այդ պարզ երևում էր թերթերից, ուր այդպիսի դիտավորության մի ուրվագիծ, մի ակնարկ, մի հետք անգամ չէր նշմարվում։ Այն հանգամանքն էլ զարմանալի էր, որ նրա անձնական գործերը վերին աստիճանի անկարգ էին։ Անչափ դժվար էր, ասացին ինձ, վերստուգել, թե նրա պարտքը որքա՞ն էր, ո՞ր մասն էր վճարել և կամ որքա՞ն դրամ ուներ։ Հավանական էր, որ տարիներ ի վեր ինքն էլ այդ մասին մի պարզ գաղափար չէր կազմել։ Հետզհետե հայտնի եղավ, որ հանգուցյալ պրոկտորը կամենալով Դոկտորների ազնվական Համայնքում փայլել, իր պաշտոնական եկամուտից ավելի էր ծախս արել և իր մասնավոր կայքն անգամ, որ երբեք շատ մեծ չէր եղել, բոլորովին քայքայել։ Երբ որ սկսեցին Նորվուդում եղած շարժական գույքը վաճառել, մր. Թիֆըն առանց գուշակելու, թե ես որքա՞ն եմ հետաքրքրվում այդ բանով, հաղորդեց ինձ, որ եթե հանգուցյալի բոլոր պարտքերը վճարվեին ու նրա կողմից գրասենյակին հասանելի գումարները դուրս հանվեին,– այնքան չնչին բան կմնա, որ նա, այսինքն՝ Թիֆըն, մի հազար ֆունտ էլ չի տա։

Այս բոլորը մոտավորապես վեց շաբաթից հետո պարզվեց։ Այդ միջոցին ես չարաչար տանջվում էի և պատրաստ էի մինչև անգամ բռնի վերջ տալ օրերիս, երբ մանավանդ լուր էի ստանում միս Միլսից, թե իմ անունը Դորայի առջև հիշելուն պես՝ Դորան ուրիշ բան չի ասում, բացի «Հայրրի՛կ իմ, օ՛հ հայրիկ»։ Միևնույն աղբյուրից իմացա, որ Դորան երկու հորաքույրից բացի ոչ մի ուրիշ ազգական չունի, որ երկուսն էլ կույս են, երկուսն էլ Պուտնիում միասին են ապրում և երկար տարիներից ի վեր եղբոր հետ հարաբերություն չեն ունեցել։ «Չեմ ասի, թե թշնամի էին իրար հետ (գրում էր ինձ միս Միլսը), սակայն որովհետև Դորայի մկրտության օրը մր. Սպընլոն թեյի էր հրավիրել քույրերին, մինչդեռ նրանք սպասել էին, թե ճաշի հրավեր կստանան, ուստի նրանք դրանով հայտնում են եղբորը, թե «երկու կողմի շահերի համար լավ կհամարեն, տանը մնալ, և այն օրից քույրերն իրենց ճամփով են երկրի վրա ընթացել և եղբայրն էլ իր ճամփով։

Սակայն այժմ այդ երկու լեդիներն առանձնությունից դուրս էին եկել և Դորային առաջարկել, որ իրենց հետ Պուտնիում բնակվի։ Դորան էլ նրանց գիրկն էր ընկել ու գոչել. «Այո՛, սիրելի հորաքույրներ, միս Միլսին էլ Պուտնի տարեք, ինձ էլ տարեք, Ջիպի՛ն էլ»։ Եվ թաղումից հետո բոլորն էլ քաշվել են Պուտնի։

Չեմ հասկանում, թե ինչպե՞ս էի ժամանակ գտնում Պուտնի գնալու, իրողությունը սակայն սա է, որ ես գրեթե ամեն օր քարշ էի գալիս այն կողմերում։ Միս Միլսն իր բարեկամական պարտքն ավելի ճիշտ կատարելու համար մի հիշատակարան էր գրում ու երբեմն-երբեմն Համայնք գալով, ինձ կարդում և կամ թողնում, որ ես կարդամ, եթե ինքը ժամանակ չունենար։ Որքա՛ն թանկ էին ինձ համար այդ օրագրի հատվածները, որոնցից ահա մի օրինակ.

«Երկուշաբթի։– Սիրելի Դ. դարձյալ տխուր ու վշտահար։ Սարսափելի գլխացավ։– Ուշք դարձրեց Ջ-ի վրա, ասելով թե նրա մորթը փայլուն է։– Դ-ն շոյեց Ջ-ին։– Հիշատակներն արթնացան ու վշտերի սահանքը բացվեց։– Արտասուքի հեղեղ։ (Արտասուքը մեր սրտի ցողը չէ՞ արդյոք։ Ջ. Մ։)

Երեքշաբթի։– Դ-ն թույլ է ու գրգռված։– Թեև գունատ, բայց գեղեցիկ։ (Արդյոք նույնը լուսնի վրա էլ չե՞նք նկատում։ Ջ. Մ։) – Դ. Ջ. Մ. և Ջ. կառքով զբոսնելու գնացին։– Ջ. պատուհանից դուրս նայեց և սաստիկ հաչեց փողոցն ավլող բանվորի վրա։– Դ-ի երեսին մի թեթև ժպիտ երևաց։ (Այսպիսի չնչին օղակներից է կազմված կյանքի շղթան։ Ջ. Մ։)

Չորեքշաբթի։– Դ-ն համեմատաբար ավելի զվարթ է։– Երգեցի նրան սրտառուչ «Երեկոյան զանգակերը»։– Մի ամոքիչ ազդեցություն առաջ չեկավ, ընդհակառակն։– Դ-ն անչափ հուզված է։– Փոքր-ինչ հետո իր սենյակում արտասուքի մեջ ընկղմած։– Կարդացի նրան մի քանի ոտանավոր , ուր աղջիկը վիթի հետ է համեմատած։– Ազդեցությունը չնչին։– Հիշատակեցի նաև համբերության արձանը շիրմի վրա։ (Հարց. ինչո՞ւ հատկապես շիրմի վրա։ Ջ. Մ։)

Հինգշաբթի։– Դ-ն ակներև ուղղվում է։– Հանգիստ գիշեր։– Այտերի վրա վարդի գույն։– Որոշում եմ Կ-ի անունը հիշատակել Դ-ին։– Զգուշությամբ խոսք եմ բացում մեր զբոսանքի ժամանակ։– Նույն րոպեին Դ-ն հուզված ու շփոթված։– «Օ՜հ, սիրելի, իմ սիրելի՜ Ջուլիա։ Օ՜հ, ես մի վատ, մի անհնազանդ զավակ էի»։– Հանգստացնում եմ նրան զգվելով,– ներկայացնում եմ գերեզմանի շեմքին հասած Դ. Կ-ի իդեալական պատկերը։– Դ-ն դարձյալ շատ է հուզված։– «Օ՜հ, ի՞նչ անեմ, ի՞նչ անեմ ես։ Օ՜հ, տարեք ինձ մի տեղ»։– Սաստիկ տագնապ։– Դ-ն ուշաթափ։– Մի բաժակ ջուր պանդոկից։ (Բանաստեղծական համեմատություն։ Պանդոկի դռան նշանակը խայտաճամուկ, մարդկային կյանքն էլ խայտաճամուկ։ Ավա՜ղ։ Ջ. Մ։)

Ուրբաթ։– Արկածների օր։ Մի մարդ է գալիս խոհանոց, մի կապույտ պարկ շալակած, և ասում . «Տվեք տիկնոջ կարկատելու մուճակները»։ «Կարկատելու մուճակներ այստեղ չկան», պատասխանում է սպասուհին։ Մարդը կրկնում է իր պահանջը։ Սպասուհին գնում է բանի էությունը իմանալու, թողնելով Ջ-ին մարդու հետ։ Սպասուհին ետ է գալիս, մարդը դարձյալ իրենն է պնդում ու վերջապես հեռանում։ Ջ-ի կորուստը։– Դ-ն հուսահատ է։– Զեկուցում ոստիկանության։– Մարդու նշանները՝ ահագին քիթ, վիթխարի ոտքեր։– Ընդհանուր խուզարկություն։ Ջ-ն չկա։– Դ-ն սգավոր և անմխիթար։– Դարձյալ մի ակնարկ վիթի վրա՝ շատ ի դեպ, բայց ապարդյուն։– Երեկոյան դեմ մի անծանոթ պատանի ներս է կանչվում։– Քիթն ահագին, բայց ոտքերը ոչ վիթխարի։– Պահանջում է մի ֆունտ ստեռլինգ, ասելով թե շան տեղը գիտի։– Հազար պաղատանք՝ հայտնելու, թե շնիկը որտե՞ղ է, և ոչ մի պատասխան։– Դ-ն վճարում է ստեռլինգը, և տղան սպասուհուն մի խրճիթ է տանում, ուր Ջ-ն սեղանի ոտքին է կապված։– Դ-ի ցնծությունը։ Ջ-ի շուրջ թռչկոտելը, մինչդեռ Ջ-ն ընթրում է։– Այս բարեգուշակ փոփոխությունով քաջալերված, վստահանում եմ Դ. Կ-ի անունը տալ վերևի հարկում։– Դ-ի նոր լացն ու հեկեկանքը։ «Ախ, ո՛չ, ո՛չ։ Այժմ մեղք է մի ուրիշ բանի մասին մտածել, քան իմ թշվառ հայրիկիս»։– Համբուրում է Ջ-ին ու լալով պառկում է քնելու։ (Պետք չէ՞ արդյոք Դ. Կ-ին՝ ժամանակի լայն թևերի վրա դնել իր հույսը։ Ջ. Մ։)...

Միս Միլսը և իր օրագիրը իմ միակ սփոփանքն էին, այդ միջոցին։ Տեսնել նրան, որ նոր էր տեսել Դորային, գտնել այդ օրագրի յուրաքանչյուր երեսի վրա Դորայի անվան գլխատառը. . . և դրանով ավելի սրտիս վերքը մորմոքել՝ դա էր միակ հաճույքս։ Ինձ թվում էր, թե մինչև այժմ մի թղթաշեն ապարանքի մեջ եմ ապրել, որ շառաչմամբ կործանվել է, միայն ինձ, ու միս Միլսին ավերակների միջև թողնելով։ Թվում էր, թե մի անգութ, չար կախարդ մի դյութական շրջան է գծել սրտիս անմեղ թագուհու շուրջը, և թե ես իրոք անկարող եմ ուրիշ կերպ հասնել նրան, եթե ոչ ժամանակի հզոր թևերի օգնությամբ, որոնք հազար ու հազար մարդկանց հասցրել են իրենց տենչալի նպատակին։

ԺԹ. ԳԼՈՒԽ
Ուիկֆիլդ և Հիպ

Երկարատև վհատությունս վերջ ի վերջո վրդովեց տատիս, և նա բարվոք համարեց Դուվր ուղարկել ինձ՝ իբր թե աչքի անցնելու իր ծովափնյա կոտեջը[67] և ավելի երկարատև պայման կապելու վարձվորի հետ: Ջենետն այժմ մրս. Ստրոնգի մոտ էր ծառայում, ուր ես ամեն օր տեսնում էի նրան: Դուվրից հեռանալիս նա դեռ երկմիտ էր արդյոք ընդմի՞շտ թշնամի մնա արական սեռին, որին վաղուց սովորել էր ատել, թե՞ հաշտվի՝ ամուսնանալով մի նավաստու հետ: Սակայն վճռեց չամուսնանալ, և կարծեմ՝ ոչ թե սկզբունքին հավատարիմ մնալու համար, այլ որովհետև մի առանձին սեր չէր զգացել դեպի նավաստին:

Թեև միս Միլսից բաժանվելը դժվար էր, բայց ես սիրով ընդունեցի տատիս առաջարկը, որ ինձ առիթ էր տալիս մի քիչ հանգիստ վայելելու Ագնեսի մոտ: Ես դիմեցի բարի դոկտորին, խնդրելով միայն երեք օրվա արձակուրդ, և նա ինձ խորհուրդ տվեց ավելի երկար բացակա լինել: Սակայն գործելու եռանդս այնքան մեծ էր, որ երեք օրով բավականացա և գնալուս խնդիրն որոշվեց:

Համայնքում վարած պաշտոնիս հետ սերտ կապ չուներ այդ եռանդը: Ճշմարիտն ասեմ՝ մեր համբավը շատ գովելի չէր առաջնակարգ պրոկտորների շարքում, և մեր գրասենյակն արագ-արագ իր անկմանն էր մոտենում: Մր. Ջորկինսի օրով գործերի ընթացքը փայլուն չէր, և թեպետ դա մր. Սպընլոյի արթուն ու ժիր աջակցությամբ փոքր ի շատե շտկվել էր, բայց ոչ այնքան, որ այդ հմուտ առաջնորդի վաղահաս մահով չխախտվեր: Այժմ սկսեց զգալի կերպով վատանալ: Մր. Ջորկինսը, չնայած գրասենյակում վայելած հռչակին, մի անորոշ ու ծույլ մարդ էր, և մեր անձուկ շրջանից դուրս ոչ մի ազդեցիկ վարկ չուներ: Այժմ ես նրա ձեռքի տակ էի աշխատում և նրա սպառած քթախոտի քանակն ու նրա դանդաղ շարժումները տեսնելով, ավելի քան երբևէ տատիս վճարած հազար ոսկին ափսոսում:

Եվ ցավալին միայն այդ չէր, Համայնքը պաշարված էր լիրբ ու խարդախ միջնորդներով, որոնք առանց պրոկտոր լինելու՝ շատ գործեր էին ձեռք բերում և իսկական պրոկտորների հավանությամբ հաջողեցնում, իհարկե եկամտի մասը նրանց տալով: Մեր գրասենյակի խախուտ վիճակը մեզ էլ ստիպեց այդ քաջերի հետ ընկերանալ, որպեսզի նրանց օգնությամբ գործ գտնենք: Ամենից ավելի շահաբեր էին ամուսնության արտոնագիր ու կտակի վավերացման գործերը, և այդ ասպարեզում մրցակցությունը իրոք անչափ սաստիկ էր: Համայնքի յուրաքանչյուր մուտքի առջև մարդորսներ էին դրվում՝ մանրամասն հրահանգով, որ մի սև հագած մարդ կամ համեստ երիտասարդ գա թե չէ, իսկույն նեթ այս կամ այն պրոկտորի սենյակը քաշեն: Եվ հրահանգներն այնպես ճիշտ էին կատարվում, որ մի-երկու անգամ ինձ էլ սխալմամբ ճանկեցին ու հրելով տարան մեր գլխավոր հակառակորդի սենյակը: Դարանամուտ ասպետները հակառակ շահերի ընդհարումից երբեմն այնպես էին գրգռվում, որ սկսում էր բռնցքակռիվը. և նույնիսկ մեր առաջին մարդորսը (որ առաջ մի գինեվաճառ էր, իսկ հետո իրավաբան միջնորդների դասակից) մի օր այնպես ծեծ կերավ, որ ստիպված էր, ի խայտառակություն Համայնքի, ամբողջ շաբաթ ջարդված աչքով երևալ: Այս առաքինի հերոսների համար հեշտ բան էր՝ հենց որ կառքից մի սևազգեստ պառավ իջներ, վազելով նրա թևից բռնել, նրա հարցրած պրոկտրին իսկույն սպանել, ասելով թե իրենց պաշտոնն է նրանց հաջորդել, և դրա մոտ տանել այդ գույժից դեռ չսթափված պառավին: Այդպիսի գերիներ մեր մոտ էլ շատ էին բերվում: Գալով ամուսնության արտոնագրերին, մրցությունն այն աստիճան աճեղ էր, որ մի այդպիսի գիր ստանալու համար Համայնք եկող փոքր-ինչ երկչոտ ջենտլմենին ուրիշ բան չէր մնում անել, բացի հենց առաջին մարդադորսի ձեռքն ընկնելուց և կամ թե իր պատճառով ծագած ջարդը տեսնելուց հետո՝ իսկույն հաղթողի գերին դառնալ: Մեր կլերկներից մեկը սովոր էր գլխարկը ձեռքին նստած սպասել, որ տուր ու դմբոցը սաստկանա,

[67] Cottage – կոտեջ, տնակ:

և ընդհանուր իրարանցումից օգտվելով, զոհի վրա հարձակվել ու նրան մեր սենյակը փախցնել։ Մարդորսության այս եղանակը կարծեմ հիմի էլ շարունակվում է։ Երբ ես վերջին անգամ Համայնք էի գնացել, դռան հետևից սպիտակ գոգնոցով մի հուժկու տղա վրաս ընկավ և ականջիս «Ամուսնության թույլտվությո՞ւն» շշնջալով, ինձ գրկեց և արդեն տանում էր իր պրոկտորի մոտ. հազիվ պրծա նրա ձեռքից։

Այս շեղումից հետո անցնենք Դուվր։

Ամեն բան բարեկարգ գտա կոտեջում և փութացի տատիս գրել, թե վարձվորն էլ էշերին նրա նման թշնամի է և անդադար մարտ է մղում նրանց դեմ։ Ինձ պետք եղավ միայն մի գիշեր մնալ Դուվրում. Առավոտյան Կենտրբրի գնացի։ Արդեն ձմեռ էր. սառն օդից ու սուր հողմից հույսերս մի քիչ արթնացան։

Կենտրբրիի հին փողոցներում շրջելիս մի պարզ հաճույք զգացի, որ հոգուս աղմուկը փարատեց ու սիրտս կազդուրեց։ Աչքի ընկնող նորություններ չտեսա. ցուցանակները հին էին, կրպակների անունները հին, նրանց մեջ ծառայող մարդիկն էլ հին։ Զարմանում էի, որ քաղաքն այդպես քիչ է փոխվել։ Մի՞թե արդեն վաղուց չէր, որ աշակերտ էի այդ քաղաքում... Հետո միայն հիշեցի, որ ես ինքս էլ քիչ եմ փոխվել։ Տարօրինա՛կ բան. ինձ թվում էր, թե այն ամոքիչ ու հանգստացուցիչ ազդեցությունը, որ մտքիս մեջ անբաժան էր Ագնեսից, մինչև անգամ իր քաղաքի վրա է տարածվել։ Մայր եկեղեցու պատկառելի աշտարակները, նրանց խորհրդավոր լռությունը, որ ավելի զգալի էր դառնում ագռավների կառանչից, դարավոր դռները, երբեմնի կանգուն, իսկ այժմ փլված, ու բարեպաշտ ուխտավորների բազմության հետ փոշի դարձած անդրիները, ստվերամեծ խորշերը, մամռապատ կամարներն ու որմերը, ալևոր տները, դաշտային տեսարանները, այգիներն ու պարտեզները, այդ միևնույն խաղաղ, ամոքիչ ոգին։

Մր. Ուիկֆիլդի տան այն գետնահարկի փոքր սենյակը մտնելուս պես, ուր մի ժամանակ Ուրիաս Հիպն էր պարապում, գտա մր. Միկաբրին, որ ամենամեծ արագությամբ սահեցնում էր իր գրիչը։ Նա հագած էր պաշտոնական ֆրակի նման մի սև հանդերձ և իր հաղթ մարմնով բոլորովին լցնում էր փոքր սենյակը։

Մր. Միկաբրը վերին աստիճանի ուրախացավ ինձ տեսնելով, թեև փոքր-ինչ շվարեց։ Նա ուզում էր իսկույն Ուրիասի մոտ տանել ինձ, սակայն այդ պատվից ես հրաժարվեցի։

– Այս տունը ես վաղուց եմ ճանաչում,– ասացի ես,– ինքս էլ կգտնեմ վերև տանող ճանապարհը։ Դե, ասացեք, ձեր իրավաբանությունն ինչպե՞ս է գնում, մր. Միկաբր։

– Սիրելիդ իմ Կոպպերֆիլդ, ինձ նման վառ երևակայության տեր մարդու համար մի քանի անհարմար կողմեր ունի իրավաբանությունը. դա իր չոր ու ցամաք մանրամասներով մտքի թռիչքը կաշկանդում է։ Նույնիսկ մեր պաշտոնական թղթակցության մեջ,– նկատեց մր. Միկաբրը, իր պատրաստած նամակների վրա ակնարկելով,– մարդուս միտքը զբաղված է վսեմ ոճեր գտնելու համար ճախր անելու ազատությունից։ Բայցևայնպես, պիտի ասեմ, մե՛ծ գիտություն է, ահագի՛ն։

Այնուհետև իմացա, որ նա իր ընտանիքով Ուրիաս Հիպի հին տնակումն է բնակվում։

– Մրս. Միկաբրը շատ ուրախ կլինի իր սեփական հարկի տակ ընդունել ձեզ,– ասաց մր. Միկաբրը։– Այո, այդ հարկը իմ բարեկամ Հիպի ասելով խոնարհ է, բայց մի օր կարող է ավելի շքեղ տնտեսական հարդարումների պատվանդան հանդիսանալ։

Հարցրի նրան՝ արդյոք իր ընկեր Հիպից գո՞հ է։ Պատասխանելուց առաջ նա հարկ համարեց մի լավ ստուգել՝ դուռը փա՞կ է, թե՞ փակ չէ, և ապա ասաց մեղմ ձայնով.

– Սիրելիդ իմ Կոպպերֆիլդ, դրամական տագնապի ճնշման ներքո աշխատող մարդու դրությունը բավական ծանր է ընդհանրապես։ Այդ ծանրությունն ավելի սաստիկ է, երբ մանավանդ ստիպված ես ապագա աշխատանքիդ արդար վարձը առաջուց ստանալ՝ դրամի

ձևով։ Կարող եմ միայն այն ասել, թե իմ բարեկամ Ուրիաս Հիպը խնդիրներս այնպիսի եղանակով իրագործեց. . . այժմ ավելորդ է այդ հիշատակել. . . որ հավասարապես պատիվ է բերում թե՛ իր գլխին և թե՛ իր սրտին։

– Մի՞թե։ Չէի կարծում, թե նա շատ առատաձեռն է,– նկատեցի ես։

– Ներեցե՛ք,– ասաց մր. Միկաբրը բռնազբոսիկ եղանակով։– Անձնական փորձով եմ խոսում իմ բարեկամ Հիպի մասին։

– Ուրախ եմ, որ ձեր փորձն այդպես հաջող է։

– Շատ բարի եք, սիրելիդ իմ Կոպպերֆիլդ,– ասաց մր. Միկաբրն և մի ինչ-որ երգ մրմնջաց։

– Շուտ-շո՞ւտ եք տեսնում մր. Ուիկֆիլդին,– հարցրի ես խոսակցության նյութը փոխելու համար։

– Ոչ շատ հաճախ,– ասաց մր. Միկաբրը մտածկոտ։– Մր. Ուիկֆիլդը, կարող եմ ասել, շատ պատվական սրտով մարդ է, բայց. . . կարճ կտրենք. . . արդեն անպետք։

– Արդյոք իր ընկերը չէ՞, որ ցանկանում է նրան այդպես դարձնել։

– Սիրելի Կոպպերֆիլդ,– պատասխանեց մր. Միկաբրը իր աթոռի վրա անհանգիստ կերպով շարժվելուց հետո,– թույլ տվեք՝ մի նկատողություն անեմ։ Ես այստեղ մի խորհրդակից մարդ եմ։ Կան նյութեր, որ պաշտոնիս բնույթը նկատի առնելով, նույնիսկ մրս. Միկաբրի առջև անկարող եմ շոշափել (թեև քաջ գիտեք, որ նա կյանքիս ալեծածան բերմունքների ընկերն է և շատ պայծառ մտքի տեր կին)։ Հետևաբար համարձակություն կառնեմ ասելու, թե այսուհետև կցանկանայի մեր մտերմական հարաբերության մեջ. . . որ անշուշտ երբեք չպիտի խանգարվեն. . . մի գիծ քաշել։ Այդ գծի մի կողմը,– ասաց մր. Միկաբրը, մի գիծ քաշելով սեղանի վրա,– մարդկային մտքի օգուտները դասված կլինեն՝ մի թեթև բացառությամբ, մյուս կողմը՝ այդ բացառությունը, այսինքն՝ մր. Ուիկֆիլդի ու մր. Հիպի գործերն իրենց ամեն պարագաներով։ Վստահ եմ, որ երիտասարդությանս ընկերոջը չեմ վշտացնի, եթե մի այսպիսի բան առաջարկեմ նրա լուսամիտ դատողությանը։

Մր. Միկաբրի դեմքի կնճռոտվելն ապացույց էր, որ նա գոհ չէ իր պաշտոնից։ Ես պատասխանեցի, թե ամենևին չեմ վշտանում. նրա կասկածը փարատվեց և աջս սեղմեց։

– Սակայն հավատացեք, սիրելի Կոպպերֆիլդ,– ասաց մր. Միկաբրը,– ես հափշտակված եմ միս Ուիկֆիլդով։ Նա մի գերազանց օրիորդ է, շատ շնորհալի, առաքինի ու չափազանց սրտացավ։ Պատիվս վկա,– գոչեց մր. Միկաբրը, իր մատի ծայրը համբուրելով ու ջենտլմենի պես գլուխ տալով,– ամենախորին մեծարանքս միս Ուիկֆիլդին։ Այո՛։

– Շատ ուրախ եմ,– ասացի ես։

– Եթե այն ախորժելի երեկույթին, որ բախտ ունեցանք վայելելու ձեր Լոնդոնի բնակարանում, չասեիք մեզ, Կոպպերֆիլդ, թե Դ. է ձեր սիրեկան տառը, այժմ հաստատ կասեի, թե Դ. չէ, այլ Ա. է։

Յուրաքանչյուր մարդ զգացած կլինի, թե կան րոպեներ, երբ ամեն բան ինչ որ անում ենք և կամ լսում, կարծես արդեն վաղուց ենք արել կամ լսել, շատ վաղուց, կարծես նորից շրջապատված ենք նույն դեմքերով, նույն իրերով, նույն պայմաններով. կարծես արդեն շատ լավ գիտենք, թե ինչ կասվի հաջորդ րոպեին, իբր թե ամեն բան միանգամից մտաբերած լինենք։ Ոչ մի ժամանակ այս խորհրդավոր զգացումը այնպես ուժով չէր տիրել սրտիս, ինչպես որ մր. Միկաբրի վերոհիշյալ խոսքերը լսելուցս առաջ։

Թողի նրան մինչև նոր այցելություն ու խնդրեցի հայտնել ողջույններս իր բոլոր գերդաստանին։ Մր. Միկաբրը նորից նստեց սեղանի առջև ու գրիչն առնելով գլուխը թեքեց՝ ավելի հանգիստ գրելու համար։ Պարզ նկատելի էր, որ այդ նոր պաշտոնն ընդունելուց ի վեր

մի բան է անցել նրա և իմ միջև, որ մեզ արգելում էր առաջվա նման մտերիմ լինել և խճողում էր մեր նախկին հարաբերության նկարագիրը։

Հին դահլիճում մարդ չկար, բայց երևում էին մրս. Հիպի նոր ներկայության հետքերը։ Ես Ագնեսի սենյակի դուռը բաց արի. նա նստած էր վառարնի մոտ իր փոքրիկ սեղանի առջև և մի բան էր գրում։

Նա գլուխը բարձրացրեց՝ տեսնելու, թե ո՞վ է ներս մտել։ Ինչ ուրախություն էր ինձ համար, որ նա ինձ նկատելուն պես, դեմքի լուրջ արտահայտությունը փոխելով, հանկարծ ժպտաց ու ինձ սիրով բարևեց։

– Օ՜հ, Ագնես,– ասացի ես, երբ որ նստեցինք իրար մոտ,– այս օրերս ես ձեզ շատ էի կարոտել։

– Իրո՞ք,– պատասխանեց նա։– Նորի՞ց։ Եվ այսպես շո՞ւտ։

Ես գլուխս շարժեցի։

– Չգիտեմ ինչի՞ց է, Ագնես. ինձ թվում է, թե ես կարոտ եմ մի հատկության, որից զուրկ եմ։ Դուք սովոր էիք այն երջանիկ հին օրերում այնքա՜ն մտածել իմ փոխարեն, և ես այնքա՜ն սովոր էի ձեր խորհրդին և օգնությանը դիմել, որ կարծես իրոք այն հատկությունից զուրկ եմ մնացել։

– Ո՞ր հատկությունից,– հարցրեց Ագնեսը զվարթ ձայնով։

– Ինքս էլ չգիտեմ ինչ անուն տամ այդ հատկությանը։ Ես կարծեմ բավական հաստատամիտ ու լուրջ եմ։

– Անտարակույս,– ասաց Ագնեսը։

– Եվ համբերող, չէ՞, Ագնես,– հարցրի ես անվստահ։

– Այո՛,– ժպտալով պատասխանեց Ագնեսը։– Փոքր-ինչ էլ համբերող։

– Բայցևայնպես երբեմն այն աստիճան ողորմելի ու նեղսիրտ եմ, այ աստիճանի վարանոտ ու փոքրոգի, որ վստահություն ստանալու համար ինձ պետք է... ինչպե՞ս ասեմ... մի հենակետ, մի նեցուկ։

– Բոլորը մեկ է,– ասաց Ագնեսը։

– Եվ այդ նեցուկը դուք եք, Ագնես. միայն դուք եք իմ մտքերի ու գործերի հենարանը։ Գալիս եք Լոնդոն՝ և ես իսկույն սթափվելով պարզ տեսնում եմ նպատակս և ըստ այնմ գործում։ Հեռանում եք՝ և դարձյալ սրտիս լքումն է տիրում։ Բայց բավական է՝ ձեզ տեսնեմ, որ նույն րոպեին նոր մարդ դառնամ։ Հարկավ ինձ վշտացնող հանգամանքներն այս սենյակը մտնելուս պես չփոխվեցին. բայցևայնպես արդեն զգում եմ մի բարերար ազդեցություն, որ դեպի լավն է փոխում ինձ։ Ի՞նչ բան է դա։ Ինչո՞ւմն է ձեր գաղտնիքը, ո՜վ Ագնես։

Նա իր գլուխը կախել էր և աչքերը վառարանին հարել։

– Սա մի հին պատմություն է,– շարունակեցի ես։– Չծիծաղեք, եթե ասեմ, որ միևնույնը կյանքիս թե մանր և թե խոշոր բաներումն էլ կրկնվել է։ Հին ցավերս չնչին էին, մանկական, հիմիկվանը՝ շատ ծանր են. բայց ամեն անգամ, երբ թողել եմ քույրիկիս...

Ագնեսը վրաս նայեց, ինչ երկնային հայացք, և իր աջն ինձ մեկնեց, որը սրտանց համբուրեցի։

– Բայց, Ագնես, ամեն անգամ, երբ ձեր խորհրդից, առաջնորդող հրահանգներից զուրկ եմ մնացել, ես մոլորվել եմ ու հազար տեսակ փորձանքների մեջ ընկել. սակայն միշտ էլ՝ ձեզ տեսնելուս պես հոգիս իսկույն խաղաղվել է։ Ահա այժմ էլ ձեզ մոտ եմ գալիս, որպես մի հոգնած ուղևոր, և չեք կարող երևակայել, թե որքա՜ն քաղցր հանգիստ եմ գտնում։

Խոսքերս այնքա՜ն ջերմ էին, սրտիս հուզումն այնպե՜ս անկեղծ, որ ձայնս դողաց և ես երեսս ծածկեցի ու լաց եղա։ Գրածս զուտ ճշմարտություն է։ Ո՜չ անհետևողականությունն էր հոգս

պատճառում ինձ, ո՛չ էլ սրտիս հակասությունները, որոնք կարող են և ամեն մարդու սրտի մեջ լինել. ես չէի ասում ինձ, թե կարող էի ուրիշի պես վարվել և ավելի լավ, քան մինչև այժմ, ոչ էլ թե շատ բան եմ արել, որ խղճիս ձայնին միանգամայն հակառակ էր. բնա՛վ ոչ։ Միայն այս գիտեի, որ Ագնեսի մոտ, նրա կողքին ես հանգիստ եմ, հոգով սրտով երջանիկ։

Ագնեսի քույրական վարմունքը, նրա պայծառ աչքերը, գողտրիկ ձայնը և այն թովիչ հանդարտությունը, որի շնորհիվ նրա տունը մի սրբարան էր դարձել ինձ համար, սրտիս հույզերը մեղմեցին, և ինչ որ մեր վերջին տեսակցությունից հետո պատահել էր, բոլորը նրան պատմեցի։

– Այլևս ձեզ հաղորդելու բան չունեմ, Ագնես,– ասացի ես խոստովանությունս ավարտելով։– Բայց հույսերս այժմ ձեր վրա է։

– Ինչո՞ւ, Տրոտուդ, իմ վրա,– քաղցր ժպիտով ասաց Ագնեսը։– Դուք պետք է մեկ ուրիշի վրա հույս դնեք։

– Դորայի՞ վրա։

– Անշուշտ։

– Բանն էլ, Ագնես, հենց այդ է,– ասացի ես շփոթվելով,– որ Դորային վստահելը դժվար է, ոչ թե նրա համար, որ նա... Դորան անմեղության ու մաքրության տիպար է, այլ... ճշմարիտ, Ագնես, ինքս էլ չգիտեմ, ինչպե՞ս ասեմ։ Նա չափազանց երկչոտ է, ամեն բանից իսկույն ևեթ սարսափող։ Երբ ես մր. Սպրնլոյի մահվանից փոքր-ինչ առաջ պետք էի համարել ասել նրան, թե... սակայն եթե լսելու համբերություն ունենաք, ամեն բան մանրամասն կպատմեմ։

Եվ Ագնեսը լսեց, թե ի՞նչ էի ասել Դորային իմ չքավորության մասին, խոհարարության գրքի մասին, տնտեսական հաշիվների մասին և այլն։

– Օ՛հ, Տրոտուդ,– գոչեց Ագնեսը մեղմ ժպիտով։– Դարձյալ առաջվա անզգույշ տղան եք։ Շատ լավ է, որ վճռել եք անձնական ջանքով այս աշխարհում ճանապարհ բանալ, բայց ի՞նչ հարկ կար այդ ամենը շտապով հայտնել նրա պես երկչոտ, սիրելի ու դեռ անփորձ աղջկան։ Խե՛ղճ Դորա։

Ագնեսի ձայնով արտահայտված այդ բարեսիրտ զիջողության պես քնքուշ բան դեռ կյանքումս չէի լսել։ Ինձ թվաց, թե նա զգվելով, փայփայելով համբուրում է Դորային և նրան պաշտպանելիս, լռելյայն ինձ է կշտամբում, թե ինչո՞ւ ես շտապեցի այդ մանկան սիրտն աղմկել։ Ինձ թվաց, թե տեսնում եմ, ինչպես Դորան իր սրտագրավ պարզությամբ փաղաքշում է Ագնեսին, շնորհակալություն հայտնում նրան, հեզաբար իմ անձի դեմ բողոքում նրան և միևնույն ժամանակ սեր հայտնում ինձ՝ իր անմեղ սրտի ամբողջ ուժով։

Որքա՛ն էի շնորհակալ Ագնեսից, որքա՛ն էի հիանում նրանով։ Աչքս դեպի ապագան ուղղելիս՝ դրա պայծառ հեռանկարի մեջ Ագնեսն ու Դորան միացած էին երևում ինձ, իբրև սրտակից և իրար արժանի ընկերուհիներ։

– Ուրեմն ի՞նչ անեմ, Ագնես,– հարցրի ես մի քանի վայրկյան կրակին լուռ նայելուց հետո։– Ի՞նչ խորհուրդ կտաք։

– Իմ կարծիքով,– ասաց Ագնեսը,– ձեր ազնիվ անելիքը՝ այն երկու լեդիներին մի պարզ նամակ գրելն է։ Ի՞նչ կասեք, մի գաղտնի ճանապարհ բռնելը ստոր բան չէ՞։

– Այո, ստոր է, եթե այդ է ձեր կարծիքը։

– Այդպիսի բաներում ես մի թշվառ դատավոր եմ,– ասաց Ագնեսը, համեստաբար վարանելով,– սակայն սիրտս վկայում է... մի խոսքով՝ ես զգում եմ, որ թաքուն ու ծածուկ բան բռնելը ձեր բնավորությանը վայել չէ։

– Կարծեմ, Ագնես, դուք անչափ լավ գաղափար ունեք բնավորությանս մասին։

– Վայել չէ ձեր բնական անկեղծությանը,– պատասխանեց Ագնեսը։– Այս պատճառով, եթե ես ձեր տեղը լինեի, այն երկու լեդիներին կգրեի, ամեն բան կարևլվույն չափ պարզ կպատմեի և կխնդրեի, որ թույլ տան երբեմն նրանց տունն այցելել։ Եվ որովհետև դուք ջահել եք ու նոր եք ձգտում մի դիրք ստեղծել կյանքի մեջ, լավ կլիներ ասել նրանց, թե ինչ պայման էլ առաջարկեն, հոժար սրտով կընդունեք։ Համենայն դեպս կաղաչեի նրանց, որ Դորայի կամքը չիմացած՝ մի բացասական պատասխան չտան, այլ նախ նրա հետ խորհրդակցեն, երբ էլ այդ հարմար գտնեն։ Ես շատ կրակոտ չէի լինի,– ասաց Ագնեսը քաղցրությամբ,– ոչ էլ շատ մեծապահանջ։ Ես կապավինեի իմ սիրուն, իմ հաստատուն բնավորությանը և, մանավանդ Դորային։

– Իսկ եթե Դորան նորից սարսափի՞, երբ այդ մասին իր հետ խոսեն. եթե նորից լաց լինի՛ և չուզենա իմ մասին խոսել։

– Մի՞թե այդ հավանական է,– հարցրեց Ագնեսը շատ սրտագին համակրությամբ։

– Աստված իմ, չէ՞ որ նա մի թռչնիկի պես վախկոտ է։ Եվ եթե այն քույրերը չկամենան ասածներս ընդունել... չէ՞ որ պառավ օրիորդները երբեմն ուրույն քմահաճույք են ունենում։

– Չեմ կարծում, Տրոտուդ, որ պետք լինի երկար մտածել այս մասին,– ասաց Ագնեսը հեզահամբույր հայացքով։– Աշխատեցեք միայն լավ կշռել, որ ինչ քայլ էլ անելու լինեք, ազնիվ լինի, և երբ տեսնեք որ ազնիվ է, մի տատանվեք, իսկույն արեք։

Վարանումս անհետացավ։ Թեթևացած սրտով, անելու քայլիս ահագին խորհուրդը պարզ տեսնելով, նստեցի նամակը գրելու և ամբողջ երեկոն դրա շարադրությանը նվիրեցի. այդ նշանավոր գործի համար Ագնեսը իր գրասեղանն ինձ տվեց։ Բայց նախ ներքև իջա մր. Ուիկֆիլդին և Ուրիաս Հիպին տեսնելու։

Ուրիասին տեսա դեռ գաճի հոտ բուրող գրասենյակում, որ նոր էր շինված պարտեզի մեջ. անչափ ստոր ու գարշելի թվաց ինձ նրա դեմքը՝ թղթերի ու գրքերի դեզերում։ Նա ինձ իր քծնի շարժումներով ընդունեց և այնպես ձևացրեց, իբր թե գալուս մասին բան չի լսել մր. Միկաբրից. բայց ես հարկավ չհավատացի։ Մտանք մր. Ուիկֆիլդի սենյակը, որ նախկին սենյակի միայն ստվերն էր, որովհետև բոլոր ընտիր կահկարասին նոր ընկերոջ մոտ էր տարված։ Ուրիասը կրակի առջև կանգ առավ, իր մեջքը տաքացնելով ու կզակը շփելով, մինչ մր. Ուիկֆիլդն ու ես ողջունում էինք իրար։

– Դուք, իհարկե, մեզ մոտ կմնաք այս գիշեր,– ասաց մր. Ուիկֆիլդը, մի ակնարկ նետելով Ուրիասին՝ կարծես նրա հաճությունն իմանալու համար։

– Ինձ համար տեղ կունենա՞ք,– հարցրի ես։

– Անշուշտ, մաստր Կոպպերֆիլդ... ներեցեք՝ ուզում էի միստր ասել, բայց մաստրն այնպես մտերմական է,– ասաց Ուրիասը... Սիրով պատրաստ եմ ձեզ զիջել ձեր առաջվա սենյակը, եթե միայն կամենաք։

– Ո՛չ, ո՛չ,– ասաց մր. Ուիկֆիլդը։– Ձեզ ի՞նչ հարկավոր է նեղություն կրել։ Ուրիշ սենյակ էլ կճարվի։

– Սակայն գիտե՞ք,– ասաց Ուրիասը, ատամները ցույց տալով,– ես անչափ գոհ կլինեի...

Կարճ կտրելու համար ես ասացի, թե մյուս սենյակում կմնամ ու կամ հյուրանոց կերթամ և մինչև երեկո հրաժեշտ տալով ընկերներիս, դարձյալ վերև բարձրացա։

Հույս ունեի մենակ լինել Ագնեսի հետ, բայց անմիջապես մրս. Հիպն էլ այնտեղ եկավ իր հյուսվածքով ու նստեց կրակի մոտ, ասելով թե Ագնեսի սենյակն ավելի տաք է, քան դահլիճն ու ճաշարանը, ուր իբր թե քամի է փչում, ուր իր հողացավին վնասակար է։ Թեև ես առանց խղճահարվելու պատրաստ էի մատնել նրան մայր տաճարի ամենաբարձր աշտարակի

հողմերին, սակայն ստիպված լինելով առաքինության հարկ վճարել, քաղաքավարի կերպով բարևեցի։

– Խոնարհաբար շնորհակալ եմ, սըր,– ասաց մրս. Հիպն իր առողջությունը հարցնելուս փոխարեն։– Ինչպես էլ լինի՝ ապրում եմ, թեև չեմ կարող առողջությունովս պարծենալ։ Եվ ինչի՞ս է պետք առողջությունը։ Միայն թե Ուրիասիս մի տեղ հաստատված տեսնեի, այնուհետև մահս էլ որ գա, ինձ հոգ չէ։ Ինչպե՞ս գտաք Ուրիասիս, սըր։

Ես նրան առաջվա պես գարշելի էի գտել, և պատասխանեցի, թե ոչ մի փոփոխություն չեմ նկատել նրա վրա։

– Է, մի՞թե բնավ չի փոխվել,– ասաց մրս. Հիպը։– Խոնարհաբար թույլտվություն կխնդրեմ, սըր, մի ուրիշ կարծիք ունենալու այդ մասին։ Մի՞թե նրա վրա նիհարություն չնկատեցիք։

– Ոչ ավելի, քան առաջ,– ասացի ես։

– Մի՞թե,– գոչեց միս Հիպը։– Ուրեմն դուք նրան մայրական աչքով չեք նայել։

Մայրական աչքը, որ այժմ իմ վրա էր ուղղված, որքան էլ որդու համար խանդակաթ լիներ, շատ վատ աչք երևաց ինձ, և անտարակույս մայրն ու որդին լիովին իրար նվիրված էին։ Այդ աչքն ինձ թողնելով, Ագնեսին անցավ։

– Իսկ դուք, միս Ուիկֆիլդ, չե՞ք նկատում, որ որդիս հյուծվում ու մաշվում է,– հարցրեց մրս. Հիպը։

– Ոչ,– ասաց Ագնեսը, հանգիստ շարունակելով իր ձեռագործը։– Չափից դուրս եք անհանգիստ լինում նրա մասին։ Նա լիովին առողջ է։

Մրս. Հիպը ուժեղ փռշտաց ու սկսեց հյուսել։

Նա ոչ մի րոպե իր հյուսվածքը վայր չդրեց, ոչ էլ մեզնից հեռացավ։ Ես բավական վաղ էի եկել, և մինչև ճաշը թեև երեք-չորս ժամ կար. բայց նա շարունակ նստած էր, և նրա ճաղերի շարժումն այնպես միակերպ էր, ինչպես ավազի շարժումը մի ավազե ժամացույցում։ Նա նստած էր վառարանի մի կողմը, ես նստած էի սեղանի առջև, իսկ Ագնեսը վառարանի մյուս կողմը՝ փոքր-ինչ ինձանից հեռու։ Հենց որ ես նամակիս վրա լուռ մտածելով աչքերս վերցնում էի ու Ագնեսի խոհուն դեմքին հանդիպում, որ իր հրեշտակային արտահայտությամբ խրախույս էր ծորում սրտիս մեջ, նույն վայրկյանին զգում էի, որ պառավի չար աչքը վրաս էր նայում, ապա իսկույն Ագնեսի վրա էր անցնում, հետո նորից իմ վրա և հետո արագ իր հյուսվածքի վրա ընկնում։ Այդ հյուսվածն ի՞նչ էր, չգիտեմ, որովհետև անտեղյակ եմ այդ արհեստին. բայց նա ինձ մի ուռկան էր թվում, իսկ երկայն ճաղերը շարժելով կրակի մոտ նստած մրս. Հիպը՝ մի չար վհուկ, որ իսկույն պատրաստ էր որսը բռնել, եթե միայն չվախենար մոտակա բարի հրեշտակից։

Ճաշի ժամանակ էլ նա մեր վրա միևնույն անքթիթ աչքով էր հսկում։ Ճաշից հետո նրա տեղը որդին բռնեց, և երբ մր. Ուիկֆիլդն ու ես Ուրիասի հետ մենակ մնացինք, նա շարունակեց լրտեսել ինձ, գարշելի ցնցումներ անելով, որոնց հազիվ էի դիմանում։ Նույն բանը հյուրասենյակումն էլ կրկնվեց, ուր մայրն եկավ հյուսելու և դիտելու. երբ Ագնեսը նվագում կամ երգում էր, միս Հիպը շտապում էր դաշնամուրի մոտ նստել։ Մի անգամ նա խնդրեց, որ Ագնեսը մի հայտնի բալադ երգե, որից, իր ասելով, Ուրիասը միշտ զմայլված է մնում (Ուրիասն այդ միջոցին հորանջում էր բազկաթոռում). հետո որդուն նայեց և Ագնեսին ասաց, թե որդին հափշտակված էր։ Պարզ էր, որ նա իր վրա դրված որոշ պարտք էր կատարում։

Այսպես տևեց մինչև կես-գիշեր։ Մայրն ու որդին երկու ահռելի չղջիկների պես իրենց ներկայությամբ ամբողջ տունն ապականում էին և այն աստիճան ինձ գրգռում, որ ես գրեթե չկարողացա քնել։ Հյուսելն ու հսկելը առավոտյան նորից սկսվեց և ամբողջ օրը տևեց։

Գոնե մի տասը րոպե Ագնեսի հետ ազատ խոսելու ժամանակ չգտա և միայն նամակս հազիվ նրան ցույց տվի։ Երեկոյան խնդրեցի նրան, որ միասին զբոսնելու գնանք, սակայն մրս. Հիպն իսկույն սկսեց իր ցավերի սաստկանալը առաջ բերել, և Ագնեսը հիվանդին կարեկցելով՝ լավ համարեց նրա հետ մնալ։ Երեկոյան դեմ ես մենակ դուրս ելա մտածելու, թե ի՞նչ անեմ – արդյոք լա՞վ է, որ մինչև այժմ թաքցում եմ Ագնեսից, ինչ որ Ուրիաս Հիպն ասել էր ինձ Լոնդոնում։ Այդ հրեշի դիտավորությունը սկսել էր սաստիկ տանջել ինձ։

Դեռ նոր էի Բամսգեթի ճանապարհով քաղաքից դուրս եկել, երբ մի ձայն լսեցի, որ անունս էր տալիս իմ հետևից։ Շուռ եկա։ Կանչողի մաշված վերարկուն ու ճոճվող մարմինը նշմարելուս պես իմացա, թե ո՞վ է։ Կանգ առա Ուրիաս Հիպին սպասելու։

– Ի՞նչ եք ուզում,– ասացի ես։

– Ի՜նչ արագ եք քայլում,– ասաց Ուրիասը։– Ոտքերս բավական երկար են, բայց ո՞վ կհասնի ձեր հետևից։

– Ո՞ւր եք գնում։

– Կցանկանայի մի քիչ զբոսնել ձեզ հետ, մաստր Կոպպերֆիլդ, եթե միայն բարեհաճեք այդ պատիվը շնորհել ինձ, իբրև մի հին բարեկամի։

Այդ ասելուն պես նա մի արագ ոստյունով, որ կարող էր կամ ինձ հեգնելու և կամ դուր գալու նշան լինել, ինձ հետ հավասար քայլեց։

– Ուրիաս,– ասացի ես մի կարճատև լռությունից հետո՝ ըստ կարելվույն քաղաքավարի։

– Ի՞նչ կհրամայեք, մաստր Կոպպերֆիլդ։

– Ճշմարիտ ասած (խնդրեմ չվշտանաք), ես դուրս եմ եկել մենակ զբոսնելու, որովհետև շատ եմ հոգնած իմ ցերեկվա ընկերներից։

Ուրիասը խեթ-խեթ վրաս նայեց ու դեմքը սաստիկ ծռկտելով ասաց.

– Մորս մասին է ձեր խոսքը։

– Անտարակույս։

– Է՜հ։ Գիտեք, մաստր Կոպպերֆիլդ, որ մենք խոնարհ մարդիկ ենք։ Եվ մեր խոնարհությունը լավ ճանաչելով, աշխատում ենք ոտնակոխ չլինել նրանցից, որոնք մեզ պես խոնարհ չեն։ Սիրո մեջ ամեն խորամանկություն ներելի է, սըր։

Այս ասելուն պես նա ոսկրոտ ձեռքերով իր կզակը կամաց շփեց, կամաց էլ քրքջաց. այդ միջոցի նա մի չարասիրտ կապկի էր նման։

– Բանն այս է, մաստր Կոպպերֆիլդ,– ասաց նա, շարունակելով կզակը շոյել,– բանն այս է, որ դուք մի վտանգավոր ոսոխ եք, միշտ էլ եղել եք վտանգավոր։

– Ուրեմն ի՞մ պատճառով եք պահանորդ դնում միս Ուիկֆիլդի մոտ և նրա տունը բանտ դարձնում։

– Ա՜հ, մաստր Կոպպերֆիլդ, այդ ինչ ծանր խոսքեր են։

– Ինչ խոսքեր էլ գործածեմ, իմաստը նույնը կլինի։ Եվ այդ իմաստը ձեզ լիովին հայտնի է, Ուրիաս։

– Բնավ ոչ։ Ես կցանկանայի մի ավելի պարզ բան լսել։ Խնդրեմ մեկնեցեք ձեր ասածը։

– Մի՞թե կարծում եք,– ասացի ես, հարկադրելով ինձ չափավոր ու հանգիստ լինել,– թե ես միս Ուիկֆիլդի վրա ուրիշ կերպ եմ նայում, քան իմ սիրելի քրոջս վրա։

– Է՜հ, մաստր Կոպպերֆիլդ, ես այդ հարցին պատասխանել պարտավոր չեմ։ Կարող եք այդպես նայել և կամ ուրիշ կերպ։

Կյանքումս չէի տեսել այդ մարդու չարանենգ դեմքի, նրա անթերթերունք աչքերի նման վատթար բան։

– Դե, ուրեմն,– ասացի ես,– հարգելով Ագնեսին...

– Ի՛մ Ագնեսին,– գոչեց Ուրիասը, դեպի մի կողմ ծռվելով։– Խնդրեմ հաճեցեք, մաստր Կոպպերֆիլդ, պարզ Ագնե՛ս անվանել նրան։

– Հարգելով Ագնես Ուիկֆիլդին... Աստվա՛ծ նրան հովանի լինի...

– Շնորհակալ եմ այդ մաղթանքի համար, մաստր Կոպպերֆիլդ,– խոսքս կտրեց Ուրիասը։

– Ես ձեզ մի բան կասեմ, որ կուզենայի ասել... և Ջեկ Կեչին։

– Ո՞ւմ, սըր,– հարցրեց Ուրիասն, իր վիզը տնկելով և ձեռքն ականջին դնելով։

– Դահճին,– ասացի ես։– Այն հետին արարածին, որ կարող էր միտքս ընկնել (պիտի խոստովանեմ, որ իսկապես Ուրիասի դեմքն էր, որ հիշեցրեց ինձ դահճին)... Ես նշանված եմ մի ուրիշ օրիորդի հետ։ Հուսամ որ այսքանը ձեզ բավական է։

– Ազնի՞վ խոսք,– ասաց Ուրիասը։

Ուզում էի խոսքերս բարկանալով հաստատել, բայց նա ձեռքս ամուր բռնեց ու սեղմեց։

– Օ՛հ, մաստր Կոպպերֆիլդ,– ասաց նա։– Եթե շնորհ անեիք խոստովանել ինձ այդ գաղտնիքն այն գիշեր, երբ ես սրտիս վիճակը համարձակ մերկացնում էի ձեր առջև և ձեր հանգիստը խանգարում, ձեր ննջարանին կից պառկելով – ձեզ վրա բնավ չէի կասկածի։ Այժմ լիովին միամիտ եմ և կշտապեմ մորս հեռացնել, երջանիկ զգալով, որ կարող եմ մի այդպիսի վստահության նշան տալ ձեզ։ Հավատացած եմ, ներողամիտ կլինեք այն զգուշության միջոցների համար, որ գործի էի դրել, դրդվելով կրքից։ Ափսո՛ս, մաստր Կոպպերֆիլդ, որ իմ մտերմությունը մտերմությունով չէիք փոխարինում։ Ես շատ անգամ ձեզ այդպես անելու առիթ էի տալիս։ Բայց դուք երբեք այնքան չէիք բացվում իմ առջև, ինքան որ ցանկալի էր։ Գիտեմ, գիտեմ, դուք երբեք այնքան չեք սիրել ինձ, ինչքան որ ես եմ ձեզ սիրել։

Այդ ասելիս նա շարունակ սեղմում էր աջս իր գեշ ու պաղ մատներով, մինչ ես զուր աշխատում էի ազատվել նրանից։ Վերջապես նա իր ոսպագույն վերարկուի թևով կուռս ծածկեց, և ես ստիպվեցի այդպես գնալ նրա հետ միասին։

– Արդյոք չվերադառնա՞նք,– ասաց Ուրիասը, քաղաքի կողմը դարձնելով ինձ, ուր լուսինն արդեն արծաթափայլ լույս էր սփռում պատուհանների վրա։

– Այս խնդիրը թողնելուց առաջ,– ասացի ես, երկար լռությունը խզելով,– լավ իմացեք, Ուրիաս Հիպ, որ Ագնես Ուիկֆիլդը ձեզնից այնքա՛ն բարձր է և ձեր ամեն ձգտումներից այնքա՛ն վեր, որքան ահա այս լուսինը։

– Եվ այնպե՛ս հեզահամբյուր է, չէ՞,– ասաց Ուիրասը։– Սակայն խոստովանեցեք, մաստր Կոպպերֆիլդ, որ դուք այնքան չեք սիրել ինձ, ինչքան ես եմ ձեզ սիրել։ Դուք միշտ շատ խոնարհ եք համարել ինձ, այնպես չէ՞։

– Ես չեմ սիրում, երբ մարդ անդադար իր խոնարհության մասին է խոսում և կամ ուրիշ հատկության մասին։

– Էհ,– ասաց Ուրիասը, որի դեմքը ավելի կապարագույն երևաց ինձ լուսնի լույսով։– Այդ ինձ հայտնի էր։ Բայց դուք չգիտեք, մաստր Կոպպերֆիլդ, թե որքա՛ն վայելուչ է իրավացի խոնարհությունն իմ վիճակի տեր մարդու համար։ Հայրս ու ես աղքատաց դպրոցումն ենք կրթվել, իսկ մայրս՝ որբանոցում։ Առավոտից մինչև գիշերը խոնարհություն են մեզ սովորեցրել և ուրիշ կանոն չեն ավանդել։ Մեզ պատվիրել են խոնարհ լինել ամենքի առջև, մեզ ստիպել են այսինչ տեղ գլխարկ հանել, ուրիշ տեղ՝ գլուխ թեքել, միշտ մեր չափը ճանաչել, մեծերի առջև միշտ խոնարհվել։ Եվ որքան շատ էին այդ մեծերը։ Հայրս իր խոնարհության

համար մոնիտըրի[68] մեդալ ստացավ։ Ես էլ ստացա։ Այդ հատկության շնորհիվ է, որ հայրս լուսարարի պաշտոն էլ ընդունեց։ Ազնվականները հորս խոնարհությունն այնպես էին սիրում, որ միշտ պատրաստ էին առաջ քաշել նրան։ «Խոնարհի եղիր, Ուրիաս,– ասում էր հայրս,– և իմացիր որ առաջ կերթաս։ Դպրոցում շարունակ այդ են ինչեցրել իմ և քո ականջին, և դրանով միայն կարելի է հաջողություն գտնել։ Խոնարհ եղիր, որդի,– կրկնում էր հայրս,– որ դու էլ գտնես հաջողություն»։ Եվ իրա՛վ վատ չէ այդ կանոնը, մաստր Կոպպերֆիլդ։

Առաջին անգամ մտածեցի, որ այդ սուտ խոնարհության ատելի սովորությունը կարող էր դրսից մտած լինել Հիպի գերդաստանը։ Ես տեսել էի միայն հունձը, բայց սերմերի մասին չէի մտածել։

– Դեռ մանուկ հասակից,– ասաց Ուրիասը,– ես գիտեի խոնարհության արժեքը գնահատել ու դրանից օգուտ քաղել։ Խոնարհությամբ էի իմ հացն ուտում և ախորժակս միշտ լավ էր։ Չէի շտապում ուսման մեջ շատ առաջ գնալ, լավ իմանալով, որ գիտությունն առանց խոնարհության ոչինչ բան է։ Այս էր պատճառը, որ երբ դուք ուզում էիք լատիներեն սովորեցնել ինձ, ես համեստաբար հրաժարվեցի։ «Մարդիկ կսիրեն միշտ քեզնից բարձր լինել,– ասում էր հայրս,– դու էլ աշխատիր միշտ նրանցից ցածր լինել»։ Եվ ես ահա շատ ցածր եմ, շատ խոնարհ, մաստր Կոպպերֆիլդ, բայց և այնպես անազդեցիկ ու անզոր չեմ։

Այդ բոլորն ինձ պատմեց, որպեսզի իմանամ, թե նա այժմ վճռել է վարձատրել իրեն, իր ձեռք բերած իշխանությունը գործածելով։ Այդ նպատակը պարզ կարդում էի նրա դեմքի վրա լուսնի լույսի տակ։ Ես ոչ մի ժամանակ նրա ստորության, նենգության ու չարության մասին որևէ կասկած չէի ունեցել, բայց այժմ միայն առաջին անգամ պարզ տեսա, թե ինչ զետնաքարշ, ոխակալ ու անգութ ոգի պիտի զարգանար նրա մեջ այդ վաղ սկսված երկարատև ընկճումից։

Նրա պատմության միակ լավ հետևանքն այն եղավ, որ նա թևս բաց թողեց, որպեսզի նորից իր կզակը երկու ձեռքով շփի։ Մի անգամ նրանից զատվելով, որոշեցի զատ էլ մնալ, և այսպես բաժան ետ գնացինք, թեև քայլակից, բայց գրեթե լուռ։

Ուրիաս Հիպը զվարթացել էր, բայց թե արդյոք իմ հայտնած գաղտնիքի՞, թե իր հայտնած պատմության շնորհիվ, չգիտեմ։ Ընթրիքի ժամանակ սովորականից ավելի շատ խոսեց. մինչև անգամ հարցրեց մորը (որին զբոսանքից ետ գալուն պես արձակել էր լրտեսելու պաշտոնից), թե արդյոք ժամանակը չէ՞, որ նրա որդին պսկավի, և հետո մի այնպիսի ակնարկ նետեց Ագնեսի վրա, որ ինչ ասես կտայի, միայն թե նրա վիզը կոտրեի։

Երբ ընթրիքից հետո երեք տղամարդիկս միասին մնացինք, Ուրիասն ավելի աշխուժացավ։ Նա շատ գինի չէր խմել, հետևաբար այդ աշխուժանալու պատճառը ուրիշ բան չէր, եթե ոչ հանդուգն հաղթանակի զգացումը, որ ուզում էր ի ցույց հանել իմ առջև։

Երեկ Ուրիասն աշխատել էր մր. Ուիկֆիլդին հարբեցնել, բայց նպատակին չէր հասել։ Ճաշարանից հեռանալիս Ագնեսն ինձ աչքով էր արել. ես նրա միտքը հասկացել էի ու գրեթե իսկույն ընկերներիս առաջարկել՝ միայն մի բաժակով բավականանալ և հյուրասենյակում միանալ նրան։ Այժմ էլ մտադիր էի նույնն անել, սակայն Ուրիասն առաջս կտրեց։

– Շատ սակավ ենք տեսնում մեր այսօրվա հյուրին, սըր,– ասաց նա, մր. Ուիկֆիլդին դիմելով, որ սեղանի մյուս ծայրին էր նստած (ինչպիսի՛ հակապատկեր այդ երկուսի միջև),– և եթե չմերժեք, ես կցանկանայի մի երկրորդ բաժակ առաջարկել նրա կենացը։ Ձեր կենացը, մաստր Կոպպերֆիլդ։

Ստիպվեցի գեթ ձևի համար, նրա մեկնած աջը շոշափել. հետո բոլորովին ուրիշ զգացումով նրա խեղճ զոհի աջը սեղմեցի։

– Դե՛, ընկեր իմ,– գոչեց Ուրիասը,– այժմ ձեզ կմնա առաջարկել մի բաժակ, որ Կոպպերֆիլդին հաճելի լիներ։

---

[68] Monitor — ազդարար, խրատող։ Monitor-medal — մեդալ, որ տալիս են առաջադեմ աշակերտին։

Ակամա եմ հիշում մր. Ուիկֆիլդի առաջարկած բաժակներն ի պատիվ տատիս, մր. Դիկի, Դոկտորների Համայնքի, Ուրիասի: Մր. Ուիկֆիլդը զույգ-զույգ էր պարպում, թեև իր ախտն զգում էր և զուր ճգնում դիմադրել նրան: Խե՛ղճ մարդ. որքա՛ն էր ամաչում Ուրիասի վարմունքից և միևնույն ժամանակ՝ որքա՛ն աշխատում ծածկել նրանից այդ զգացումը: Այնինչ Ուրիասը կծկվում ու գալարվում էր ցնծությունից, տեսնելով որ խայտառակում է նրան իմ առջև: Այդ տեսարանը պժգալի էր, և գրիչս հրաժարվում է դա նկարագրելուց:

– Է՛յ, պատվական ընկեր,– գոչեց վերջապես Ուրիասը:– Ես եմ այժմ առաջարկում մի բաժակ, և խոնարհաբար կցանկանայի, որ բաժակները լիքը լցվեն, որովհետև աշխարհիս ամենաչքնա՛ղ օրիորդի կենացը պիտի խմենք:

Ագնեսի խեղճ հոր ձեռքին բաժակը դատարկ էր: Նա բաժակը վայր դրեց, աչքերը պատի պատկերին հառեց, իր ճակատը ձեռքով ծածկեց ու ետ ընկավ բազկաթոռի մեջ:

– Ես մի խոնարհ էակ եմ և արժանի չեմ նրա կենացն առաջարկել,– շարունակեց Ուրիասը,– բայց պաշտո՛ւմ եմ նրան... երկրպագո՛ւմ:

Կարծեմ ոչ մի ֆիզիկական ցավ չէր կարող Ագնեսի հոր ալևոր գլխին այնքան լլկել, ինչքան այն հոգեկան ներքին տանջանքը, որ այժմ նա ուզում էր ճնշել երկու ձեռքով:

– Ագնեսը,– ասաց Ուրիասն առանց մր. Ուիկֆիլդի վրա նայելու և կամ ուզենալու նրա վիճակը հասկանալ,– Ագնես Ուիկֆիլդը, համարձակ կասեմ, իգական սեռի զարդն ու պսակն է: Ընկերական շրջանում ազատ խոսելը ներելի է: Նրա հայր լինելը մեծ պարծանք է, իսկ նրա ամուսին լինելը...

Աստված չտա ինձ կյանքումս երկրորդ անգամ մի այնպիսի ճիչ լսել, ինչպիսին որ Ագնեսի հայրն արձակեց հանկարծ ոտքի կանգնելով:

– Ի՞նչ պատահեց,– գոչեց մեռելի պես սփրթնած Ուրիասը:– Հո չե՞ք գժվել, մր. Ուիկֆիլդ: Կարծեմ ես էլ իրավունք ունեմ ուրիշ մեկի պես ասելու, թե ձեր Ագնեսը մի օր իմ Ագնեսը կդառնա: Գուցե ավելի իրավունք ունեմ, քան մի ուրիշ մարդ:

Ես գրկեցի մր. Ուիկֆիլդին ու սկսեցի նրան ամեն բանով, մանավանդ իր սիրով դեպի Ագնեսը, աղաչել, որ մի քիչ հանգստանա: Ծերունին կարծես խելագարվել էր. իր մազերը փետում էր, ճակատին բռունցքներով խփում, ինձ իր մոտից դեն հրում և առանց մի բառ ասելու, նույնիսկ առանց իմանալու, թե ի՞նչ է ուզում իր հուսահատ դրության մեջ, աչքերն ապուշ-ապուշ այս կողմ, այն կողմ շրջելով, մոլեգնաբար կտրտվում... զարհուրելի տեսարան:

Անկապ, բայց և եռանդուն, ջերմ խոսքերով պաղատում էի նրան՝ այդպիսի վայրագ վիճատության անձնատուր չլինել, ականջ դնել ինձ: Աղերսում էի հիշել Ագնեսին, հիշել և ինձ, մտաբերել, թե ինչպես ենք Ագնեսն ու ես միասին աճել, ինչպես հարգել, ինչպես եմ սիրել Ագնեսին, որ նրա պարծանքն էր, նրա սփոփանքը: Ամեն կերպ աշխատում էի նրա ուշքը դստեր վրա դարձնել, մինչև անգամ կշտամբում նրան, որ արիություն չունի Ագնեսից թաքցնելու այս տեսարանը: Խոսքերս երևի թե ազդեցին, կամ թե նրա մոլեգնությունն ինքն իրեն իջավ, որովհետև նա քիչ-քիչ դադարեց ինքն իր հետ կռվելուց ու սկսեց մեղմանալ: Սկսեց մինչև անգամ վրաս նայել... նախ մտամոլոր, հետո գիտակից աչքերով ու վերջապես ասաց... «Գիտեմ, Տրոտուդ: Իմ սիրելի դստրիկն ու դուք... գիտեմ: Բայց տեսե՛ք դրան»:

Նա մատնացույց արեց Ուրիասին, որ գունատ դեմքով ու դողալով կծկվել էր մի անկյունում. Ուրիասն անշուշտ զգում էր, որ շատ է սխալվել իր հաշիվների մեջ:

– Տեսեք դահճիս,– շարունակեց մր. Ուիկֆիլդը:– Դրա շնորհիվ է, որ հետզհետե կորցրի իմ անունն ու համբավը, հոգուս հանգիստը, տունս-տեղս, ընտանի կյանքիս երջանկությունը:

– Ես պահպանել եմ ձեզ համար ձեր անունն ու համբավը, ձեր հանգիստը, տուն-տեղը, ընտանի կյանքի երջանկությունը,– շտապ-շտապ ասաց Ուրիասը մի գրգռված, դժգոհ, բայց և

զիջում խնդրող ձայնով։– Այդքան էլ մի վշտանաք, մր. Ուիկֆիլդ։ Եթե ձեր սպասածից փոքր-ինչ ավելի հեռու անցա, բնավ փույթ չէ. ես կարող եմ, կարծեմ և ետ դառնալ։ Մի վատ բան հո չեմ արել։

– Ես գիտեի, որ ամեն մարդ մի նպատակ ունի,– ասաց մր. Ուիկֆիլդը, և գոհ էի, որ այդ մարդը շահի հույսով է ինձ հետ կապվել։ Սակայն տեսեք, թե ի՞նչ է այդ մարդը... տեսեք ի՛նչ է։

– Լռեցրեք դրան, եթե կարող եք, Կոպպերֆիլդ,– գոչեց Ուրիասը, իր երկու ցուցամատը դեպի ինձ ուղղելով։– Լավ ուշք դրեք... դա իսկույն մի բան կասի և հետո կզղջա, որ ասաց, և դուք կափսոսաք, որ լսեցիք։

– Այո, անեն բան կասեմ,– գոչեց մր. Ուիկֆիլդը հուսահատ ձայնով։– Եվ ինչո՞ւ լռեմ։

– Զգուշացեք, ասում եմ ձեզ,– գոռաց Ուրիասը, շարունակելով ինձ դիմել։– Եթե դրա բերանը չփակեք, դուք այլևս դրա բարեկամը չեք։ Եվ ինչո՞ւ պիտի լռեք, մր. Ուիկֆիլդ։ Պիտի լռեք, որովհետև աղջկա հայր եք։ Դուք ու ես գիտենք, ինչ որ գիտենք։ Գիտե՞նք, թե ոչ։ Լավ է քնած շներին չզարթնեցնեք... ո՞ւմ է հարկավոր զարթնեցնել նրանց։ Մի՞թե չեք տեսնում, որ ես այնքան խոնարհ եմ, ինչքան որ կարելի է խոնարհ լինել։ Ասում եմ ձեզ, եթե անչափ հեռու գնացի, ինքս էլ ցավում եմ դրա համար։ Էլ ի՞նչ եք ուզում ինձնից, սըր։

– Օ՜հ, Տրոտուդ, Տրոտուդ,– բացականչեց մր. Ուիկֆիլդը, ձեռքերը գալարելով։– Մի՞թե ես այսպես էի, երբ դուք ինձ առաջին անգամ տեսաք։ Այն ժամանակ էլ իմ անկումը սկսվել էր, բայց որքա՜ն տխուր, ի՜նչ թշվառ ճանապարհ եմ անցել այնուհետև։ Թուլությունս եղավ իմ կորստյան պատճառը։ Հիշողությա՜ն թուլություն, մոռացությա՜ն թուլություն։ Միակ զավակիս մոր մահվան տխուր հիշատակն ինձ համար հիվանդություն դարձավ, զավակիս սերը, ամեն բան մոռացնելով, նմանապես հիվանդություն դարձավ։ Ինչ բանի որ կպա, իմ ցավով վարակեցի։ Թշվառացրի այն էակին, որին սիրում եմ ամենից շատ... և դուք գիտեք, թե ինչպե՜ս եմ սիրում։ Կարծեցի, թե այս աշխարհում կարելի է միայն մեկին սիրել և ուրիշ ոչինչ չսիրել. կարծեցի, թե կարելի է միայն մեկին ողբալ, միայն մի էակի, որ այս աշխարհից մեկնել է, և չլինել մյուս ամեն սգավորների ցավին ողբակից։ Եվ այսպես ահա բոլոր կյանքս մաշեցի։ Ես իմ հիվանդոտ, երկչոտ սիրտը գիշատեցի. նա էլ իր հերթին ինձ գիշատելով իր վրեժը լուծեց։ Ես ստոր եմ վշտիս մեջ, ես ստոր եմ սիրուս մեջ, ստոր նաև մարդկային վշտին ու սիրույն անտարբեր լինելուս համար։ Տեսեք, թե ինչ զազիր ավերակ եմ, և ատեցեք ինձ, փախեք ինձնից։

Նա ընկավ աթոռի վրա ու սկսեց հեկեկալ։ Ծայրահեղ հուզումն արդեն անցել էր։ Ուրիասն իր անկյունից դուրս ելավ։

– Ինքս էլ այն բոլորը չգիտեմ, ինչ որ հիմարաբար արել եմ,– ասաց մր. Ուիկֆիլդը, ձեռքերը մեկնելով, ասես թե աղաչելու, որ ես իրեն չդատապարտեմ։– Բայց դա գիտի, դա, որ միշտ իմ կողքին էր, միշտ էլ իմ չար թելադիրն ու սադրիչն էր։ Տեսնում էք, թե ինչպես է երկանաքարի ծանրությամբ իմ վզին նստել։ Տեսնում էք դրան իմ տանը, տեսնում էք բոլոր գործերիս տեր դարձած։ Մի րոպե առաջ լսեցիր դրան։ Էլ ի՞նչ կարող եմ ասել ձեզ։

– Այդքանն էլ շատ է, կարող էիք դրա կիսովն էլ բավականանալ և կամ բնավ ոչինչ չասել,– նկատեց Ուրիասը թե՛ սպառնական և թե՛ քծնի եղանակով։– Ձեր լեզուն հարկավ գինուց է բացվել, սակայն վաղն ուշքի կգաք, սըր։ Եթե ես էլ ավելի բան ասացի, ի՞նչ վնաս։ Չէ՞ որ ասածս ետ առա։

Դուռը բացվեց և Ագնեսը, որ բոլորովին գունատ էր, հանդարտ ներս մտնելով, խեղճ հոր վզին փարվեց ու արիաբար ասաց նրան.

– Հայրիկ, դու առողջ չես։ Եկ ինձ հետ։

Ծերունին, կարծես ամոթից բոլորովին ընկճվելով, գլուխը դստեր ուսին դրեց և նրա հետ միասին դուրս գնաց։ Ագնեսի աչքերը մի վայրկյան միայն իմ աչքերին հանդիպեցին, բայցևայնպես հասկացա, որ պատահած դեպքն իրեն հայտնի էր։

– Չէի կարծում, որ ծերունին դեռ այդքան բռնկվելու ընդունակ է, մաստր Կոպպերֆիլդ,– ասաց Ուրիասը։– Բայց ոչինչ։ Վաղը նորից կհաշտվենք։ Ինչ որ արել եմ, նրա օգտի համար եմ արել։ Ես միշտ խոնարհաբար նրա օգուտն եմ կամեցել։

Ես նրան պատասխան չտվի և այն կոկիկ սենյակը բարձրացա, ուր մի ժամանակ Ագնեսը հաճախ մոտս էր նստում՝ դասեր սերտելու միջոցին։ Մինչև ուշ գիշեր ոչ ոք ներս չմտավ։ Վերցրի մի գիրք ու փորձեցի կարդալ։ Ժամացույցը տասներկուսը խփեց. ես դեռ կարդում էի՝ առանց հասկանալու, թե ի՞նչ եմ կարդում, երբ Ագնեսը կամաց ուսիս դիպավ։

– Առավոտյան վաղ մեկնելու եք, Տրոտուդ։ Եկա մնաս բարով ասելու։

Նա լաց էր եղել, բայց երեսը հանգիստ էր, գեղեցիկ։

– Աստված ձեզ պահապան լինի, Տրոտուդ,– ասաց նա ձեռք տալով ինձ։

– Սիրելի Ագնես,– ասացի ես,– տեսնում եմ, չեք ուզում, որ այն դեպքի մասին խոսեմ... բայց մի՞թե չի կարելի մի բան անել։

– Մեր հույսն աստված է,– պատասխանեց Ագնեսը։

– Մի՞թե ես էլ չեմ կարող օգնել... ես, որ թշվառ վշտերս ձեզ հայտնելու համար եմ եկել։

– Եվ իմ վշտերը մեղմելու,– հարեց Ագնեսը։– Ո՛չ, սիրելի Տրոտուդ։

– Սիրելի Ագնես, իմ կողմից հանդգնություն կլիներ խորհուրդ տալ ձեզ, մինչ ես աղքատ եմ, այն բաներով, որով դուք այնքան հարուստ եք՝ բարությամբ, քաջությամբ, վեհանձնությամբ. սակայն գիտեք, թե որքա՛ն եմ ձեզ սիրում և որքա՛ն եմ ձեզ պարտական։ Ագնես, արդյոք դուք մի թյուր հասկացած պարտքի զգացման չե՞ք զոհել ձեզ։

Նա ձեռքս թողեց ու մի քայլ ետ քաշվեց։ Դեռ չէի տեսել նրան այդքա՛ն հուզված։

– Ասացեք, մի այդպիսի դիտավորություն հո չունե՞ք, սիրելի Ագնես։ Դուք, որ քրոջից էլ ավելի պաշտելի եք ինձ, մտածեցեք, թե ձեր սրտում ի՛նչ անգին գանձեր կան, ինչպիսի՛ սեր է ձեր սերը։

Շատ անգամ դրանից հետո մտքով տեսել եմ այդ դեմքն ու նրա վայրկենական հայացքը, որի մեջ ո՛չ զարմացում, ո՛չ կշտամբանք էր երևում։ Սակայն շատ չանցած ինչպես որ մտաբերել եմ, Ագնեսը սիրուն ժպտաց ու հանդարտ ձայնով ասաց, թե նա իր վրա վստահ է, թե ես կարող եմ միամիտ լինել իր մասին, և ինձ «Եղբայրս» անվանելով, հեռացավ։

Դեռ առավոտը չէր լուսացել, երբ ես դիլիժանսում տեղ բռնելու գնացի։ Մեկնելուս րոպեին, մինչ կառքումն էլ մտքով Ագնեսի հետ էի, հանկարծ տեսա Ուրիաս Հիպի գլուխը, որ մթության մեջ դեպի վերևի նստարանն էր բարձրանում։

– Կոպպերֆի՛լդ,– շշնջաց նա, կառքի կտուրից վայր կախվելով,– ձեզ կարծեմ ցանկալի կլինի հեռանալուց առաջ իմանալ, որ մենք արդեն հաշտվել ենք։ Ես նոր մտա նրա սենյակը, և նա գառնուկի պես մեղմացավ։ Ի՛նչ արած, հո գիտեք, որ թեև ես մի խոնարհ մարդ եմ, բայց օգտակար եմ նրա համար։ Նա էլ այդ շատ լավ գիտի, երբ հարբած չէ։ Համենայն դեպս ի՛նչ պատվական մարդ է նա, մաստր Կոպպերֆիլդ։

– Ուրեմն դուք ներողությո՞ւն խնդրեցիք նրանից։

– Անշո՛ւշտ,– ասաց Ուրիասը։– Մի՞թե ինձ նման խոնարհի համար ներողություն խնդրելը դժվար բան է։ Ոչի՛նչ բան է... Սակայն ի դեպ, մաստր Կոպպերֆիլդ,– ցնցվելով հարեց Ուրիասը,– արդյոք ձեզ պատահե՞լ է մի չհասած տանձ քաղել։

– Գուցե։

– Իսկ ես քաղել եմ, և հենց երեկ երեկոյան,– ասաց Ուրիասը։– Տանձը դեռ խակ է, բայց փույթ չէ. շուտով կհասնի։ Պետք է միայն փոքր-ինչ սպասել, և ես գիտե՛մ սպասել։

Եվ հենց որ կառապանը սանձերը շարժեց, Ուրիասը ցած իջավ, բարի ճանապարհ շռայլելով ինձ։ Որքան հիշում եմ, այդ րոպեին նա սկսեց մի բան ուտել առավոտյան խոնավ օդից պաշտպանվելու համար, բայց բերանն այնպես շարժեց, կարծես տանձն արդեն հասել է, և նա հաճույքից շրթունքն է լիզում։

Ի. ԳԼՈՒԽ
Թափառականը

Նույն օրը, երեկոյան, վերոհիշյալ ընտանեկան դեպքի մասին մի շատ լուրջ խոսակցություն եղավ Բուկինհեմի փողոցում։ Այդ նյութը վերին աստիճանի հուզեց տատիս, և նա ձեռքերը կրծքին դրած՝ սկսեց սենյակում ման գալ, և այդ տևեց մոտ երկու ժամ։ Որևէ գրգռում զգալուն պես նա սովոր էր այդպիսի հետևակ քաջագործություններ կատարել, և նրա գրգռման աստիճանը միշտ կարելի էր զբոսանքի տևումով չափել։ Այս անգամ ներքին գրգռումն այնքան մեծ էր, որ տատս հարկ համարեց ննջարանի դուռն էլ բանալ, որպեսզի ամբողջ բնակարանի մի պատից մինչև մյուսը ասպարեզ ունենա իր ընթացքի համար. և մինչ ես ու մր. Դիկը լուռ նստած էինք կրակի առջև, նա հավասար քայլերով ու ճոճանակի ճշտությամբ գնում-գալիս էր մեր մոտով։

Երբ մր. Դիկը մեզ թողեց ու քնելու գնաց, ես նստեցի նամակ գրելու երկու պառավ քույրերին։ Շատ ման գալուց երևի տատս հոգնել էր. նա կրակի մոտ նստեց ու փեշերը հավաքեց։ Սակայն բաժակը ծնկի վրա բռնելու փոխարեն, ինչպես միշտ սովոր էր անել, վառարանի քիվի վրա անշարժ թողեց և իր ձախ արմունկն աջ բազկին դեմ տալով, սկսեց մտախոհ վրաս նայել։ Հենց որ աչքերս թղթից բարձրացնում էի, նրա հայացքին էի հանդիպում։

– Ոչինչ, ոչինչ, սիրելիս,– կրկնում էր նա։– Ես միայն փոքր-ինչ նեղացած եմ, միայն հուզված։

Գրությամբ զբաղված լինելով, ես միայն տատիս հեռանալուց հետո նկատեցի, որ նա բաժակը լիքն է թողել քիվի վրա։ Երբ այդ գյուտս նրան հայտնելու համար ննջարանի դուռը բախեցի, նա բաց արեց ու մի անսովոր գորովով ասաց.

– Սիրտ չունեմ, Տրոտուդ, բան ընդունելու այս գիշեր։

Գլուխը շարժեց ու ետ գնաց։

Երկու պառավ լեդիներին գրած նամակս առավոտյան տատս կարդաց և հավանեց։ Ես ինքս նամակը փոստ տարա, և այնուհետև ուրիշ բան չէի անում, բացի համբերությամբ պատասխանին սպասելուց։ Արդեն մի շաբաթ անցած կլիներ, երբ մի ձյունաբեր գիշեր տուն էի գալիս դոկտորի մոտից։ Ամբողջ օրը շատ ցուրտ էր. փչում էր հյուսիս-արևելյան ցուրտ քամի։ Երեկոյան դեմ քամին դադարեց, խոշոր-խոշոր քուլաներով ձյուն եկավ ու փափուկ դեզերով գետնի երեսին փռվեց։ Ո՛չ կառքերի աղմուկ էր լսվում, ո՛չ էլ մարդկանց քայլերի ձայնը. ճանապարհները կարծես փետրով ծածկված լինեին։

Բուկինհեմի փողոցը հասնելու ամենակարճ ճանապարհը սուրբ Մարտինի մոտով էր անցնում։ Այդ եկեղեցին մի ժամանակ շենքերով էր շրջապատված. դիմացի նրբանցքը շատ նեղ էր ու իջնում էր դեպի Ստրենդը։ Գավթի մոտով անցնելիս մի կին տեսա անկյունում։ Նա նայեց ինձ ու նեղ ճանապարհի մյուս կողմն անցնելով անհետացավ։ Ճանաչեցի նրա դեմքը։ Տեսել էի նրան, բայց չէի հիշում, թե որտեղ։ Նրա պատկերը մի ինչ-որ բան հիշեցրեց ինձ, որ

ուղղակի սրտիս դիպավ. բայց որովհետև այդ րոպեին մտքերս զբաղված էին, չպարզեցի, թե ի՞նչ էր այն։

Եկեղեցու աստիճանների վրա մի մարդ տեսա, որ կռանալով մի հակ դրեց ձյունի վրա և ուղղվեց. նրա դեմքն ու կնոջ դեմքը միաժամանակ նշմարեցի։ Հազիվ էի զարմանքից ուշքի եկել, երբ նա գլուխը բարձրացրեց, ներքև իջավ և ինձ դիմեց։ Երես առ երես կանգնած էինք ես ու մր. Պեգգոտին։

Այն ժամանակ հիշեցի, թե կինն ով էր։ Մարթան էր, որին Էմլին մի գիշեր փող էր տվել խոհանոցում։ Մարթա Էնդլը... որի հետ, Հեմի ասելով, ծերունի մարդը մի վայրկյան էլ չէր ուզի տեսնել իր սիրելի թոռնիկին, եթե օվկիանում թաղած բոլոր գանձերն էլ իրեն տալու լինեին։

Ջերմ-ջերմ իրար ձեռք սեղմեցինք։ Մի քանի վայրկյան ոչ նա էր մի բառ արտասանում, ոչ էլ ես։

– Մաստր Դեվի,– ասաց մր. Պեգգոտին, աջս ամուր սեղմելով,– ուրախ եմ որ տեսնում եմ ձեզ։ Բարի լինի մեր հանդիպումը, բարի՛ լինի։

– Աստված տա, իմ սիրելի, իմ վաղեմի բարեկամ,– ասացի ես։

– Այս երեկո ուզում էի ձեզ փնտրել, սըր,– ասաց նա,– բայց Յարմաութի ճանապարհին լսած լինելով... այժմ գալիս եմ այն կողմերից... որ տատը ձեր հետ է ապրում, կարծեցի թե ուշ կլինի։ Վաղը, մեկնելուցս առաջ, անպատճառ կտեսնեի ձեզ, սըր։

– Մի՞թե նորից պիտի մեկնեք։

– Այո, սըր,– ասաց նա, գլուխը անդադար շարժելով։– Առավոտյան գնում եմ։

– Իսկ այժմ ո՞ւր էիք գնում։

– Է՛հ,– պատասխանեց ալևորը, իսկույն մազերից ձյունը թափ տալով,– գնում եմ պտույտ անելու՝ ինքս էլ չգիտեմ թե որտեղ։

Այն օրերին սուրբ Մարտինի շրջկայքում գտնվում էր «Ոսկե Խաչի» պանդոկը, որ մտքիս մեջ այնքան կապված է խեղճ բարեկամիս թշվառության հիշատակի հետ։ Ես տան ճանապարհը ցույց տվի, թևը մտա ու միասին առաջ գնացինք։ Պանդոկի սենյակներից երկու-երեքը բակի կողմն էին. մեկն աչքի անցրի ու տեսնելով որ մաքուր է, ընկերոջս էլ ներս կանչեցի։

Մոմի լույսով իմ բարեկամին լավ դիտելիս, տեսա, որ ոչ միայն նրա մազերը երկարել ու խառնվել են, այլ արևից երեսի գույնն էլ սևացել է։ Այժմ նա ավելի ալևոր էր, դեմքն ու ճակատը ավելի խոր ակոսված. ակներև էր, որ նա անխոնջ թափառել է ամեն տեսակ եղանակին, բայց դեռ շատ հուժկու էր և այնպիսի մարդու նման, որ իր նպատակով զորացած՝ ոչ մի բանից չի կարող հոգնել կամ ընկճվել։ Մինչ ես նրան դիտում էի՝ նա իր հագուստի ու գլխարկի վրայից ձյունը թափ տվեց և երեսը սրբեց. հետո մեջքը դռան կողմ դարձնելով նստեց սեղանի մոտ, ու նորից աջս ամուր սեղմեց։

– Կպատմեմ ձեզ, մաստր Դեվի,– ասաց նա,– թե որտե՞ղ եմ եղել և ինչե՛ր լսել։ Հեռու տեղեր ման եկա և քիչ բան իմացա. բայց ինչ որ իմացա կպատմեմ։

Զանգակը հնչեցրի խմիչք ապսպրելու համար։ Մր. Պեգգոտին էյլից բացի ուրիշ բան չուզեց ընդունել, և մինչև որ էյլը բերին ու վառարանի վրա տաքացրին, նա մտածկոտ նստած էր։ Նրա դեմքի վրա այնքան լուրջ վեհություն կար, որ չէի հանդգնում լռությունը խանգարել։ Երբ սպասավորը հեռացավ, մր. Պեգգոտին գլուխը շարժեց ու ասաց.

– Դեռ մանկությունից նա սիրում էր ծովի մասին պատմել և խոսել այն ափերից, ուր արևը շողշողում էր մութ-կապույտ ջրերի մեջ։ Ինձ թվում էր, թե որովհետև հայրը խեղդվել է, այդ պատճառով է աղջիկը միշտ ծովի մասին մտածում։ Չգիտեմ... գուցե կարծում է, ասում էի

ինքս ինձ, թե իր հայրը դեպի այն ափերը մղված կլինի, ուր ծաղիկներն անթառամ են, արեգակը միշտ պայծառ։

– Երևի մանկական ցնորքներ էին,– ասացի ես։

– Երբ աղջիկը... կորավ, մաստր Դեվի, կարծեցի, թե տղան դեպի այն ափերն է տարել նրան։ Ո՞վ գիտի՝ ինչ հրաշքներ պատմած կլիներ այն երկրների մասին. երևի կասեր, թե մի լեդի կդարձնի նրան այն կողմերում։ Երբ մենք տղայի մորը տեսնելու գնացինք, իսկույն հասկացա, որ բանը ճիշտ այդպես պատահած կլինի։ Եվ ես նեղուցն անցա ու ամպերից ընկածի պես՝ Ֆրանսիայի ափն իջա։

Այդ րոպեին նկատեցի, որ դուռը մի քիչ բացվեց ու ձյան քուլաները ներս ընկան։ Հետո մի քիչ ավելի բացվեց, մի ձեռք նրան կիսաբաց էր պահում։

– Ես գտա մի անգլիացի, մի պաշտոնյա ջենտլմեն,– շարունակեց մր. Պեգգոտին,– ասացի նրան, թե եկել եմ եղբորս աղջկան փնտրելու։ Նա ինձ մի քանի թղթեր տվեց... ինքս էլ չգիտեմ՝ ինչպե՞ս են կոչվում այդ թղթերը... որ կարողանամ ազատ ման գալ. փող էլ ուզեց տալ, բայց շնորհակալ եղա, չընդունեցի, ասելով թե կարոտ չեմ։ Լա՛վ մարդ էր, մաստր Դեվի։ «Ես ձեր մասին կգրեմ,– ասաց նա,– կպատմեմ շատերին, որոնք գնալու են ձեր ճամփով, այնպես որ՝ ուր էլ հասնեք, կիմանան, և դուք օտար երկրում մենակ չեք մնա»։ Ինչքան որ լեզուս բացվեց, շնորհակալություն հայտնեցի նրան ու սկսեցի չափչփել ֆրանսիական աշխարհը։

– Մենա՞կ ու ոտքով՞։

– Ավելի շատ ոտքով։ Երբեմն շուկա գնացող բարի մարդիկ առաջարկում էին իրենց սայլը նստել, երբեմն էլ այս կամ այն կոնդուկտորն էր ձրի տեղ տալիս դիլիժանսում։ Շատ անգամ էլ երկար մղոններ ոտքով էի անցնում մի զինվորի կամ մշակի հետ, որ իր ծնողներին տեսնելու էր գնում։ Ո՛չ ես էի կարողանում նրանց հետ խոսել, ո՛չ նրանք ինձ հետ, բայց ոչինչ։ Դա մեզ ամենևին չէր արգելում ընկեր լինել երկար ու փոշոտ ճամփու վրա։

– Մի՞թե կարելի է, որ մր. Պեգգոտիի նման մի բարի մարդ ամեն տեղ ընկեր չգտներ։

– Հենց որ գալիս էի մի քաղաք,– շարունակեց նա,– մի իջևանի բակ էի մտնում ու սպասում, մինչև մի անգլերեն իմացող մարդ գտնեմ. միշտ էլ գտնվում էր։ Այնուհետև պատմում էի նրան, թե եղբորս աղջկան փնտրելու եմ դուրս եկել. նա էլ ասում էր, թե ինչ նշանավոր մարդիկ են իջևանել հյուրանոցում։ Այնուհետև նայում էի, որ մտնող-ելնող հյուրերի մեջ մեր աղջկան նման մի աղջիկ տեսնեմ։ Երբ տեսնում էի, որ մեր Էմլին նրանց մեջ չի, հեռանում էի մի ուրիշ տեղ։ Իմ համբավը տարածվել էր խեղճ մարդկանց մեջ, այնպես որ՝ մի նոր գյուղ մտնելուս պես իմանում էի, որ իմ մասին արդեն լսել են։ Իսկույն հրավիրում էին, որ իրենց տնակի առջև նստեմ, աղ ու հացով հարգում էին ու քնելու տեղ տալիս։ Մայրեր կային՝ Էմլիին հասակով աղջկա տեր, որոնք սպասում էին ինձ, մաստր Դեվի, գյուղի տափում, մեր Փրկչի Խաչի մոտ, որ հյուրասիրություն շնորհեն ինձ։ Մայրեր էլ կային, որոնց աղջիկը մեռել էր։ Եվ միայն աստված գիտի, թե որքա՛ն այդ մայրերը բարեգութ էին դեպի ինձ։

Դռան մոտ կանգնածը Մարթան էր։ Ես պարզ նշմարեցի նրա գունատ դեմքը. նա ագահությամբ ականջ էր դնում։ Վախենում էի, որ մր. Պեգգոտին, մեջքը շուռ տալով, հանկարծ նրան կտեսնի։

– Եվ շատ անգամ իրենց մանուկներին ծնկներիս վրա էին նստեցնում... մանավանդ փոքրիկ աղջիկներին,– ասաց մր. Պեգգոտին,– շատ անգամ էլ իրիկունները, դռան առջև այդ երեխաների շրջանում նստած կտեսնեիք ինձ, ասես թե նրանք սիրելի Էմլիիս զավակները լինեն։ Օ՛հ, իմ Էմլիս։

Եվ հանկարծ վշտից բռնվելով մր. Պոգգոտին բարձր ձայնով հեկեկաց։ Ես դողդոջ ձեռքս նրա ձեռքի վրա դրի, որով երեսը ծածկել էր։

– Շնորհակալ եմ, սըր,– ասաց նա,– ուշք մի դարձրեք վրաս։

Մի վայրկյանից հետո նա իր աջը սրտին դրեց ու պատմությունը շարունակեց։

– Երբեմն էլ, լուսադեմին, մղոններով ուղեկցում էին ինձ, և երբ մնաս բարովի ժամանակ ասում էի. «Շատ շնորհակալ եմ ձեզնից. աստված ձեր տունը շե՛ն պահի», նրանք կարծես հասկանում էին ինձ ու սիրով պատասխան տալիս։ Վերջապես մինչև ծովը հասա։ Էլ ավելորդ է ասել, որ ինձ նման նավաստու համար Իտալիա անցնելը դժվար բան չէր։

Այդ երկիրն էլ մյուսի պես՝ սկսեցի մենակ ու ոտքով չափչփել։ Իտալացիք էլ լավ մարդիկ էին, և ես քաղաքից քաղաք թափառելով, գուցե մինչև Իտալիայի մյուս ծայրն անցնեի, եթե չլսեի, թե զվիցերական լեռներում աղջկան տեսել են։ Մի տղա, որ երիտասարդի սպասավորին ճանաչում էր, պատմեց ինձ, թե երեքին էլ միասին այնտեղ է տեսել. նա ինձ հայտնեց, թե ինչպե՞ս են ճամփորդում, և ասաց, թե որտե՞ղ կարելի է գտնել նրանց։ Ես դեպի այն սարերը դիմեցի, մաստր Դեվի, գիշեր-ցերեկ քայլելով։ Եվ որքան ես շատ էի գնում, այնքան էլ կարծես սարերն ինձնից փախչում էին։ Բայց վերջապես հասա նրանց ու անցա։ Եվ հենց որ այն տեղին մոտեցա, ուր լսածիս նայելով նրանք պիտի իջած լինեին, սկսեցի մտածել ինքս ինձ. «Ի՞նչ անեմ, երբ որ տեսնեմ Էմլիին։

Մեզ լրտեսող Մարթա Էնդլը, չնայելով սառ քամուն, դեռ շեմքի մոտ կանգնած էր ու ձեռքի շարժումով ինձ աղաչում էր, որ իրեն դուրս չանեմ։

– Ես երբեք չեմ կասկածել նրան,– ասաց մր. Պեգգոտին։– Երբե՛ք։ Ամենևի՛ն։ Միայն թե նա երեսս տեսներ... ձայնս լսեր... միայն թե հնար գտնեի հիշեցնելու նրան, այն տնակը, որտեղից որ փախել է, միտքը գցել իր մանկությունը... այն ժամանակ, ես գիտեմ, մի շքեղ լեդի էլ դարձած լիներ, իսկույն ևեթ ոտքերս կընկներ։ Այո՛, կընկներ, գիտեմ։ Շատ անգամ երազումս լսում էի նրա ճիչը՝ «Ապե՛ր, ապե՛ր» ու մեռելի պես առջևս ընկած տեսնում նրան։ Շատ անգամ երազիս մեջ վերցնում էի նրան ու շշնջում. «Էմլի, հոգյակ իմ, ես եկել եմ քեզ ներելու, քեզ մեր տո՛ւնը տանելու»։

Ծերունին կանգ առավ, գլուխը շարժեց ու հառաչելով շարունակեց.

– Այժմ ինձ համար տղան ոչինչ էր։ Էմլին էր ամեն բան։ Ես նրա համար գեղջկուհու շորեր գնեցի. գիտեի, որ մի անգամ նրան գտնեմ թե չէ՝ ուր էլ գնամ, նա էլ ինձ հետ միասին կերթա քարոտ ճամփով և էլ երբեք չի բաժանվի ինձնից։ Այժմ ես ուրիշ բան չէի ուզում, ուզում էի միայն այդ հասարակ շորերը հագցնել նրան, նրա շքեղ զարդերն ու զգեստը ոտնակոխ անել և թև-թևի տված տուն վերադառնալ... տեղ-տեղ կանգնելով, որ նրա ցաված ոտքերը բժշկեմ ու մանավանդ սրտի վերքը դարմանեմ։ Իսկ տղի վրա... նայել անգամ չէի ուզի։ Բայց, մաստր Դեվի, այդ երջանիկ րոպեն դեռ չէր հասել... Ես ուշացա. նրանք արդեն մեկնել էին՝ դեպի այս կողմը, մի քանիսը՝ դեպի այն կողմը։ Այս կողմն էլ ման եկա, այն կողմն էլ, բայց Էմլիից հետքը չգտա, ու ետ եկա հայրենիք։

– Արդեն վաղո՞ւց, մր. Պեգգոտի։

– Մի քանի օր կլինի, մաստր Դեվի։ Գիշերով մեր տնակին մոտենալիս պատուհանում ճրագ տեսա. հետո ավելի մոտեցա և ապակու միջից կամաց նայեցի։ Մրս Գըմիջը մենակ նստած էր վառարանի մոտ։ «Չվախենաս, ես եմ, Դանիե՛լը, ասացի ես ու ներս մտա։ Երբեք այդպես տարօրինակ չէր երևացել ինձ մեր հին նավը։

Մր. Պեգգոտին զգուշությամբ ծոցից հանեց մի փոքրիկ ծրար, որի մեջ երկու-երեք նամակներ կային, և սեղանի վրա դրեց։

– Ահա այս առաջին նամակը,– ասաց նա, մյուսներից մի նամակ ջոկելով,– իմ մեկնելուց մի շաբաթ հետո է եկել։ Մեջն էլ եղել է, մի թերթիկով փաթաթված, այս հիսուն ստեռլինգի տոմսակը. գիշերով են դրել մեր դռան տակ։ Էմլին աշխատել է իր ձեռագիրը կեղծել, բայց մի՞թե ես չէի ճանաչի։

Նա դրամատոմսը հանդարտ ծալեց, ճիշտ առաջվա ձևով, և մի կողմ դրեց։

– Իսկ այս նամակը, որ երկու կամ երեք ամիս առաջ է ստացվել, մրս. Գըմիջի հասցեով է,– ասաց նա, մի ուրիշ նամակ բաց անելով, և մի քանի վայրկյան զննելուց հետո՝ տվեց ինձ ու մեղմ ձայնով ավելացրեց։– Խնդրեմ կարդացեք, մաստր Դեվի։

Ես հետևյալը կարդացի.

«Օ՛հ, ի՛նչ պիտի զգաք, երբ որ այս նամակն ստանաք ու իմանաք, որ իմ հանցավոր ձեռքն է գրում այս տողերը։ Բայց փորձեցեք, փորձեցե՛ք... ոչ թե իմ սիրուս, այլ հորեղբորս սիրու համար, գեթ մի վայրկյան ներող սրտով հիշել ինձ։ Աղաչում եմ, գթացեք թշվառիս ու մի կտոր թղթի վրա գրեցեք – առո՞ղջ է նա, և ի՞նչ ասաց իմ մասին՝ առաջ քան թե հավիտյան դադարեիք ձեր շրջանում արտասանել իմ անունը... արդյոք սովո՞ր է, գիշերվա դեմ, իմ տուն գալու րոպեին, առաջվա պես դռան մոտ նստել ու սպասել՝ ում որ այնքան սիրում էր։ Օ՛հ, սիրտս կտրտվում է այդ բոլորը հիշելիս։ Ոտքներդ ընկնելով աղաչում եմ ու լալով, լալո՛վ պաղատում, խիստ միք լինի դեպի ինձ, ինչպես որ արժանի եմ, որ լինեք... այո, լիովին արժանի... այլ մարդասեր եղեք և գրեցեք ինձ «Դստրիկ» և մի՛ տաք ինձ այն անունը, որ անպատվել եմ, այլ կարեկցելով տագնապիս՝ գոնե մի երկու բառ գրեցեք հորեղբորս մասին, որին երբեք, այլևս երբեք իմ աչքերը տեսնելու չեն այս աշխարհում։

Բայց եթե ձեր սիրտը զայրացած է դեպի ինձ... և գիտեմ որ իրավամբ... այն ժամանակ աղաչում եմ, պատվական մրս. Գըմիջ, հարցնել նրան, որի առջև ամենից շատ եմ հանցավոր, որին խոսք էի տվել ամուսինը լինելու... արդյոք պե՞տք է իմ այս թշվառ խնդիրը մերժել։ Եթե նա այնքան կարեկից լինի, որ խորհուրդ տա մի քանի տող գրել ինձ... վստահ եմ՝ կտա, որովհետև միշտ վեհանձն ու ազնիվ է – այն ժամանակ, բայց ոչ առաջ, ասացեք նրան, որ ամեն անգամ, երբ ականջ եմ դնում գիշերվա հողմին, ինձ թվում է, թե նա հորեղբորս ու նրա կողմից է գալիս և հետո երկինք բարձրանում՝ իմ դեմ աստծու առջև բողոքելու։ Ասացեք նրան, որ եթե ինձ վիճակված լինի վաղը մեռնել (օ՛հ, ինչպես կցանկանայի մեռնել, միայն թե պատրաստ լինեի), իմ վերջին խոսքերովս նրան ու հորեղբորս պիտի օրհնեմ ու վերջին շնչովս նրա՛ն երջանիկ կյանք մաղթեմ։

Այդ նամակի մեջ էլ մի գումար կար՝ հինգ ստեռլինգ, որ նմանապես ամբողջ էր մնացել։ Մր. Պեգգոտին այդ դրամատոմսն էլ առաջվանի ձևով ծալեց։ Նամակին կցված էր մի մանրամասն հրահանգ պատասխանի համար, որ ձեռքից ձեռք պիտի անցներ նախքան նպատակին հասնելը։ Այդ հասցեին նայելով դժվար էր որոշել, թե աղջիկը որտեղ է թաքնված, բայց կարելի էր ենթադրել, թե այն տեղից է գրել ուր նրան տեսած կլինեին։

– Ի՞նչ պատասխան տվեց,– հարցրի ես մր. Պեգգոտիին։

– Մրս. Գըմիջը գրելու վարժ չէ, սըր,– ասաց նա։– Այս պատճառով պատասխանը Հեմն է շարադրել, իսկ պառավը միայն արտագրել է։ Գրել են Էմլիին, թե ես գնացել եմ նրան փնտրելու և հիշել, թե ի՞նչ էի ասել մեկնելիս։

– Այդ էլ նամակ է։

– Ոչ, սա փող է, սըր,– ասաց մր. Պեգգոտին, ծրարը բանալով։– Տեսնո՞ւմ եք, տասն ստեռլինգ։ Տակն էլ գրված՝ «Հավատարիմ բարեկամից», ինչպես և առաջինի մեջ։ Բայց առաջինը մեր դռան տակն էր դրված, իսկ սա փոստով է եկել, երեկ չէ մյուս օրը։ Գնում եմ փնտրելու նրան այս ծրարի դրոշմով։

Եվ նա ցույց տվեց ինձ այդ դրոշմը։ Դա վերին Հռենոսի վրա գտնվող մի քաղաք էր։ Մր. Պեգգոտին Յարմաութում գտել էր այդ երկիրը ճանաչող մի քանի օտարազգի վաճառականների. նրանք էլ գծել էին մի կոպիտ քարտեզ, որ նա շատ լավ հասկացել էր։ Նա քարտեզը սեղանի վրա փռեց ու մի ձեռքը կզակին դեմ տալով, մյուսովն սկսեց իր անցնելու ճանապարհը ցույց տալ։

– Ինչպե՞ս է Հեմը,– հարցրի ես, խոսակցության նյութը փոխելու համար։

– Աշխատում է, ինչքան որ կարելի է,– ասաց մր. Պեգգոտին և գլուխը շարժեց։– Ամեն տեղ լավ անուն ունի, ամենքն էլ նրան հարգում են։ Ով էլ ասես նրան օգնելու պատրաստ է, ինքն էլ պատրաստ է ամենքին օգնել։ Դեռ ոչ մի մարդ նրա բերնից գանգատ չի լսել, բայց, մեր մեջ մնա, քույրս ասում է, թե խեղճի սիրտը շատ կոտրված է։

– Հարկավ։ Եվ ինչպե՞ս կարող էր չկոտրվել։ Խե՛ղճ տղա։

– Էլ ո՛չ առողջությունն է բանի տեղ դնում, ո՛չ էլ կյանքը, մաստր Դեվի,– ասաց մր. Պեգգոտին մի հանդիսավոր շշունջով։– Որտեղ էլ պետք լինի մի ծանր բան կատարել փոթորկալից եղանակին, Հեմն այնտեղ է, որտեղ էլ միայն պարտք զգացվի օգնել մեկին, նույնիսկ կյանքը վտանգելով, ամենից առաջ նա է հասնում օգնելու։ Բայց էլի մի երեխայի պես հեզիկ է։ Յարմաութում մանուկ չկա, որ Հեմին չճանաչի։

Մր. Պեգգոտին նամակները շուտ հավաքեց, ծալեց, ծրարեց և զգուշությամբ ծոցը դրեց։ Դռան հետևից նայող դեմքը չէր երևում այլևս։ Ջյունը դեռ շարունակում էր ներս ընկնել. ուրիշ ոչինչ։

– Դե,– ասաց մր. Պեգգոտին, իր պայուսակին նայելով։– Շատ ուրախ եմ, մաստր Դեվի, որ ձեզ տեսա այս երեկո, սա մի բարի նշան է։ Վաղը, լուսանալուն պես, կմեկնեմ։ Դուք գիտեք, թե ինչ ունեմ այստեղ,– շարունակեց նա, աջը ծոցին դնելով։– Շատ եմ վախենում, որ գուցե մեռնեմ՝ այս փողերը ետ չտված։ Եթե մեռնեմ, կամ կորչեն, կամ թե գողանան, և այն տղան չիմանա, թե պահել էի... կարծեմ, գերեզմանն էլ չի կամենա ընդունել ինձ։ Ես այն աշխարհից ետ կգամ։

Նա վերկացավ, ես էլ վերկացա և մենք նորից ամուր իրար աջ սեղմեցինք։

– Հազար ու հազար մղոն կանցնեմ,– ասաց նա,– մինչև վերջին շունչս քարշ կգամ այս փողերը նրա երեսին խփելու համար։ Միայն թե այդպես անեի և Էմլիիս գտնեի, էլ ուրիշ բան չեմ ուզում։ Եթե չգտնեմ, գոնե մի օր կլսի, թե նրա ապերը, նրան սիրող ապերը մինչև իր կյանքի վերջը նրան փնտրելով՝ շունչը փչեց։ Եվ եթե լավ եմ ճանաչում նրան, այդ արդեն կստիպի նրան վերջ ի վերջո վերադառնալ դեպի տուն։

Երբ դուրս ելանք, նկատեցի, որ Մարթան շտապեց մթության մեջ թաքնվել։ Մինչև նրա անհետանալը ես մի քիչ ետ պահեցի ծերունուն։

Մր. Պեգգոտին ասաց, թե մտադիր է Դուվր տանող ճանապարհի իջևանում գիշերել, ուր հույս ունի մի մաքուր սենյակ ճարել։ Մինչև Ուեստմինստրի կամրջի մյուս կողմն անցա նրա հետ և այնտեղ մենք միմյանց հրաժեշտ տվեցինք։ Ինձ թվում էր, թե ամբողջ բնությունը լռել է, պատկառելով այդ ծերունուց, որ մենակ առաջ էր գնում թարմ ձյունի միջով։

Ես վերադարձա **Ոսկե Խաչի** պանդոկը, հույս ունեի նորից տեսնել Մարթային, որի դեմքն այնպես սաստիկ ազդել էր վրաս։ Նա այնտեղ չէր։ Ջյունը մեր քայլերի վերջին հետքը ծածկել էր. միայն իմ քայլերի նոր հետքն էր երևում, բայց դա էլ, երբ շուռ եկա նայելու, արդեն սկսել էր ձյունի նոր-նոր քուլաների տակ անհետանալ։

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

Ա. ԳԼՈՒԽ
Դռրայի հորաքույրները

Վերջապես պատասխան եկավ երկու պառավ լեդիներից։ Նրանք հարգանք էին մատուցում մր. Կոպպերֆիլդին ու հայտնում, թե շատ լուրջ ուշադրության են առել նրա նամակը, «երկու կողմի շահերն էլ լավ կշռելով»։ Այս դարձվածքը բավական տագնապիչ երևաց ինձ՝ ոչ թե նրա համար, որ քույրերն արդեն մի անգամ այդ գործ էին ածել մի հայտնի ընտանեկան գժտության մասին խոսելիս, այլ, որովհետև կյանքումս միշտ ստուգել ու ստուգում եմ, որ այդ սովորական ոճերը հրափամփշտի նման են – մի անգամ թողվելուց հետո այնպիսի գույներ ու ձևեր են ընդունում, որ սկզբնականից բոլորովին տարբեր են։ Քույրերն ավելացնում էին, թե անհարմար են դատում «գրով» հայտնել իրենց կարծիքը մր. Կոպպերֆիլդի առաջարկած խնդրի մասին, բայց եթե մր. Կոպպերֆիլդը հաճի մի օր իրենց մոտ գալ (մանավանդ մի հավատարիմ ընկերոջ հետ), նրանք սիրով այդ նյութի մասին կբանակցեն։

Մր. Կոպպերֆիլդը անմիջապես բարեհաճեց պատասխանել օրիորդ Սպընլոներին, իհարկե, խորին հարգանքով, թե պատիվ կունենա այսինչ օրն այցելել նրանց իր հավատարիմ բարեկամի հետ, որը է Տեմպլում ծառայող պաշտոնյա մր. Թոմաս Տրեդլսը։ Այս նամակն առաքելուն պես՝ մր. Կոպպերֆիլդը մի սաստիկ ջղային գրգիռ ստացավ, որ և մինչև սահմանված տեսության օրը շարունակվեց։

Հոգեկան տագնապիս զորանալուն նպաստում էր և այն հանգամանքը, որ այդ խորհրդավոր օրերում ես միս Միլսի անգին օգնությունից զրկված էի։ Մր. Միլսը, որ միշտ իմ երջանկության հակառակ էր (գոնե ինձ այդպես էր թվում) այժմ մի ծայրահեղ բան էր մտածել, այն է՝ գնալ Հնդկաստան։ Ասացեք, խնդրեմ՝ ինչո՞ւ պիտի Հնդկաստան գնար, եթե ոչ ինձ զայրացնելու համար։ Իրավ է, նա աշխարհիս ուրիշ մասերից և ոչ մեկի հետ որևէ գործով չէր կապված, բացի միայն Հնդկաստանից, ուր մի քանի առևտրական շահեր ուներ։ Ի՞նչ էին արդյոք այդ առևտրի նյութերը՝ ոսկեթել շալե՞ր, թե փղի ատամնե՞ր, չգիտեմ. հայտնի էր միայն, որ երիտասարդության ժամանակ Կալկաթա էր հանդիպել և այժմ ուզում էր նորից գնալ մի ընկերակից վաճառականի պաշտոնով։ Այդ բոլորն ինձ համար մի մազի չափ նշանակություն չուներ։ Բայց և այնպես նա գնում էր, հետն էլ միս Միլսին տանում, որն այժմ գավառ էր մեկնել՝ ազգականներին մնաս բարով ասելու։ Նրանց տան վրա արդեն անթիվ հայտարարիչ տոմսակներ էին կպցված, թե «այս տունը վարձու է տրվում, կարող է վաճառվել», և թե «կահ-կարասիքը (ուրեմն և լվացքի տաշտը) կարելի է աճուրդով գնել»։ Ահա մի երկրորդ երկրաշարժ ոտքերիս տակ, մինչ առաջինից էլ ես դեռ ուշքի չէի եկել։

Սաստիկ վարանել էի, թե այդ հանդիսավոր օրվա համար ինչպե՞ս հագնվեմ. մի կողմից ուզում էի շքեղ պճնվել, մյուս կողմից, վախենում, որ մի ավերող զարդարանքով անգործնական ու թեթևսոլիկ մարդ կերևամ քույրերին։ Վերջապես, միջին, ոսկի ճանապարհն ընտրեցի. տատս հավանեց ընտրությունս, և երբ Տրեդլսն ու ես ներքև էինք իջնում, մր. Դիկը մեր հետևից մի մուճակ շպրտեց, հաջողություն մաղթելով։

Պատվական տղա էր Տրեդլսը, շատ էլ սիրելի ընկերակից. բայց և այնպես այս հանդիսավոր դիպվածում չէի կարող չփափագել, որ նա մազերը դիզած պահելու սովորություն չունենար։ Այդ՝ ցախավելի նման ցից-ցից մազերը մի ահռելի տեսք էին տալիս նրան, որ ինձ համար սրտիս ներքին վկայությամբ աղետալի հետևանքեր պիտի ունենար։

Պուտնիի ճամփով առաջ գնալիս համարձակվեցի Տրեդլսին նկատելու, որ լավ կաներ, եթե մազերը փոքր-ինչ կոկեր։

– Հոժարությամբ կցանկանայի, սիրելի Կոպպերֆիլդ,– ասաց նա, գլխարկը հանելով ու մազերն ամեն կերպ շտկելով,– բայց չի լինում։

– Մի՞թե չի կարելի փոքր-ինչ տափակ դիրք տալ դրանց։

– Ամենևին։ Ոչ մի կերպ։ Անգամ եթե այստեղից մինչև Պուտնի հիսուն լիտրանոց կշիռ կրեմ գլխիս վրա, դարձյալ նրանք այդ բեռից ազատվելուն պես կդիզվեն։ Չես կարող երևակայել, Կոպպերֆիլդ, թե մազերս որքան համառ են։ Ես մի չարացած ոզնու նման եմ։

Ճար չկար, սիրտս փոքր-ինչ նեղացած էր, բայց ընկերոջս անկեղծությունը հիացրեց ինձ։ Ասացի նրան, թե նրա բարությունը հարգում եմ և նկատեցի, թե նրա մազերն իր բնավորության ամբողջ համառությունը խլած կլինեին, որովհետև դրա հետքն անգամ չէր երևում նրա հոգում։

– Է՛հ,– ասաց Տրեդլսը ծիծաղելով,– հավատացնում եմ քեզ, Կոպպերֆիլդ, արդեն վաղուց է, որ չարչարվում եմ այս տնաքանդ մազերից։ Հորեղբորս կինը տեսնել անգամ չէր կարող սրանց։ Ասում էր, թե նայելուց անգամ զայրանում է։ Գիտենայիք, Սոֆիին սիրահարվելուս միջոցին ինչեր եմ քաշել մազերիս պատճառով։

– Մի՞թե նրան էլ մազերդ չէին դուր գալիս։

– Ոչ թե նրան, այլ նրա ավագ քրոջը, գերդաստանի գեղեցկուհուն։ Նա շատ էր ծաղրում մազերս, բայց պիտի ասեմ, որ բոլոր քույրերն էլ ծիծաղում են սրանց վրա։

– Հաճելի բան,– ասացի ես։

– Այո,– պատասխանեց Տրեդլսը մի սիրելի անմեղությամբ։– Իմ մազերը բոլորիս համար կատակի առարկա են։ Քույրերն ասում են, թե մազերիս մի փունջը Սոֆին սեղանի արկղում պահել է և ստիպված է այդ փունջը մի ճարմանդավոր գրքի մեջ ճնշել, որ հարթվի։ Գնա ու մի ծիծաղիր։

– Ի դեպ, Տրեդլս,– ասացի ես,– փորձարկությունդ կարող էր ինձ էլ օգտակար լինել։ Երբ դու ուզում էիր իսկույն հիշած օրիորդիդ հետ նշանվել, ծնողներին մի կանոնավոր առաջարկ արի՞ր։ Կամ թե՝ մի այնպիսի բան կատարեցի՞ր... ինչ որ, օրինակի համար, մենք ենք մտադիր այսօր անել,– հարեցի ես դողալով։

Տրեդլսի ուշիմ դեմքի վրայով մի անհանգիստ ստվեր անցավ։

– Ճշմարիտն ասեմ, Կոպպերֆիլդ, իմ գործը սաստիկ դժվար էր։ Սոֆին այն աստիճան իր ընտանիքին հարկավոր անձն էր, որ ոչ ոքի մտքից չէր անցել, թե նա մի օր մարդու կգնա։ Գերդաստանի անդամները մինչև անգամ վճռել էին, թե նա միշտ տանը կմնա, և արդեն պառավ աղջիկ էին անվանում նրան։ Հետևաբար, երբ մի օր ես մեծ զգուշությամբ այդ մասին խոսք բաց արի մրս. Քրուլրի առջև...

– Նրա մո՞րը։

– Այո, օրիորդի մոր՝ արժանապատիվ Հորաս Քրուլրի կնոջ առջև... նա մի սաստիկ ճիչ հանեց և ուշաթափ եղավ։ Այնուհետև, ամիսներ անցան, մինչև որ հնար գտա այդ խնդիրը նորից շոշափելու։

– Բայց վերջապես հո գտա՞ր։

– Այո, բայց գտնողը ես չէի։

– Հապա ո՞վ։

– Ինքը գերագույն Հորաս Քրուլրը,– պատասխանեց Տրեդլսը։– Նա պատվական մարդ է, ամեն տեսակետից օրինակելի։ Նա էր, որ կնոջը համոզեց, թե կինը, որպես քրիստոնյա, պարտավոր է այդ անհրաժեշտ զոհաբերությունը հանձն առնել և անգութ չլինել դեպի ինձ։ Իսկ ինձ գալով, Կոպպերֆիլդ, երդում եմ անում, ինձ թվում էր, թե այդ ընտանիքի վրա հարձակված մի գիշատիչ թռչուն եմ։

– Սակայն քույրերն անշուշտ քո կողմն էին, չէ՞, Տրեդլս։

– Ո՛չ։ Չեմ կարող ասել, որ իմ կողմն էին։ Հազիվ-հազ մրս. Քրուլրին մեր կողմը քաշելուց հետո՝ պետք եղավ, որ բանի էությունը Սառային էլ հայտնենք։ Հիշո՞ւմ ես հո Սառային, այդ այն աղջիկն է, որի ողնաշարը կարգին չէ։

– Լավ եմ հիշում։

– Նա հուսահատ վրաս նայելով՝ սկսեց ձեռքերը կոտրտել, աչքերը գոցեց, կապարի պես կապտեց, փայտացավ և ամբողջ երկու օր ոչ մի սնունդ չընդունեց, բացի ջրից, այն էլ թեյի գդալով։

– Այդ ինչ անտանելի աղջիկ է,– նկատեցի ես։

– Կներես, Կոպպերֆիլդ,– ասաց Տրեդլսը։ Սառան հիանալի աղջիկ է, թեև անչափ դյուրազգաց։ Սակայն նրանք բոլորն էլ այդպես են։ Սոֆին հետո ինձ ասաց, թե ոչ մի լեզվով չի կարելի այն խղճահարությունը պատմել, որ զգացել էր հիվանդ Սառային խնամելիս։ Ես փորձովս կարող եմ դատել, թե ինչ պիտի զգացած լիներ, որովհետև մի ոճրագործ էի համարում ինձ։ Սառային փոքր-ինչ կազդուրելուց հետո պետք եղավ մյուս ութին էլ լուրը հայտնել. և դա ամեն մեկին սաստիկ հուզեց։ Երկու փոքրիկ քույրերը, որոնց դաստիարակը Սառան է, միայն նորերս դադարեցին ինձ ատելուց։

– Սակայն, անշուշտ, բոլորն էլ այժմ հետդ հաշտված կլինեն։

– Գուցե. . . – ասաց Տրեդլսը երկբայությամբ։– Միայն այսքանը ինձ հայտնի է, որ նրանք արդեն հպատակվել են ճակատագրին։ Սակայն մենք այդ նյութը շոշափելուց միշտ խորշում ենք, և նրանց սփոփանքը միայն այն է, որ գործերս փոքր-ինչ խառն են ու ապագաս՝ անորոշ։ Անտարակույս մեր ամուսնության օրը մի աղիողորմ տեսարան կբացվի, որ ավելի մի թաղման հանդեսի նման կլինի, քան հարսանիքի։ Եվ Սոֆիին հափշտակելուս համար նրանք բոլորն էլ կատեն ինձ։

Հիշում եմ Տրեդլսի ազնիվ դեմքի լուրջ ու ծաղրալի պարզությունը և նա այժմ շատ ավելի է հիացնում ինձ, քան այն րոպեին, որովհետև այն ժամանակ մտքերս այնպես մոլորված ու ալեծուփ էին, որ ընդունակ չէի մի որևէ բանի վրա կենտրոնանալ։ Քանի մոտենում էինք Սպընլո օրիորդների բնակարանին, ես այնքան վհատվում էի իմ արտաքին տեսքից ու ոգուս սթափությունից. այնպես որ Տրեդլսն ինձ առաջարկեց մի բաժակ էյլ ընդունել արիություն ստանալու համար։ Մոտիկ սրճարանում այդ կազդուրիչն ընդունելուց հետո՝ դողդոջ քայլով մոտեցա միս Սպընլոների դռանը։

Մի շփոթ զգացում ինձ ասաց, թե սպասուհին դուռը բաց արեց և մենք սրահ մտանք, ուր կախված էր մի ջերմաչափ և անցանք գետնահարկի սիրուն դահլիճը, որ դեպի այգին էր նայում։ Այդտեղ կարծեմ բազմոցի վրա նստեցինք, և հենց որ Տրեդլսը գլխարկը հանեց, նրա մազերը ցցվեցին ու պատկերը նմանվեց այն զսպանակավոր տուփի մեջ փակված փոքրիկ-փոքրիկ խրտվիլակներին, որոնք խուփը բանալուն պես դուրս են թռչում։ Կարծեմ լսում եմ հին ժամացույցի չխկչխկոցը և աշխատում սրտիս թնդյունը նրա չափին հարմարեցնել, բայց իզուր. . . Շուրջս նայելով, որոնում եմ գեթ մի բան, որ Դորային հիշեցներ, և չեմ գտնում. . . Ահա կարծես Ջիպը հեռվից հաչեց, և մի աներևույթ ուժ իսկույն ևեթ նրա ձայնը խեղդեց։ Վերջապես, կարծեմ, քիչ էր մնում, որ Տրեդլսին վառարանի մեջ հրեի, երբ ցատկելով ոտքի ելա՝ անասելի շփոթումով գլուխ տալու երկու կարճլիկ, սևազգեստիկ, տարեց ու նիհար լեդիներին, որոնք կարծես իսկ և իսկ հանգուցյալ մր. Սպընլոյի փոքրացած օրինակները լինեին։

– Խնդրեմ նստեցեք,– ասաց երկու փոքրիկ լեդիներից մեկը։

Տրեդլսին գլորվելուց բռնելով, ես մի ինչ-որ փափուկ բանի վրա ընկա, բայց ոչ կատվի, որի վրա սկզբում նստել էի, և ուշքի գալով նկատեցի, թե մր. Սպընլոն գերդաստանի կրտսեր անդամը պիտի լիներ։ Չնայած մի քրոջ հասակը վեց կամ յոթ տարով մյուսից տարբեր էր, բայց կարծես փոքրն էր կոչված մեր բանակցությունը ղեկավարելու, որովհետև իմ նամակը ձեռքին

(այնքան ծանոթ, բայց և այնքան սոսկալի), ակնոցով դիտում էր։ Երկու քույրն էլ միակերպ էին հագնված, բայց կրտսերի հագուստն ավելի զվարթ էր. դրա մեջ կար մի ինչ-որ բան, գուցե մի փոթավոր շոր, մի ջոկ շղարշ, մի ուրույն ծալք, մի գնդասեղ, ապարանջան, որ ավելի աշխույժ էր երևացնում նրան։ Երկուսն էլ ամուր պրկված էին, ձիգ սեղմված, մանրակրկիտ ու զգուշավոր։ Այն քույրը, որ նամակ չուներ, ձեռքերը կրծքին ծալած՝ կուռքի պես անշարժ նստած էր։

– Մր. Կոպպերֆի՞լդ, եթե չեմ սխալվում,– ասաց նամակս բռնող քույրը, Տրեդլսին դիմելով։

Դա մի չարագուշակ սկիզբ էր։ Տրեդլսը շտապեց բացատրել, թե ես եմ մր. Կոպպերֆիլդը, ես հայտնեցի, թե նա մր. Տրեդլսն է, և քույրերը ներողություն խնդրեցին, որ Տրեդլսին մր. Կոպպերֆիլդի տեղ դրին։ Շատ անախորժ դրություն։ Դրա վրա ավելացրեք Ջիպի երկու անգամ կարճ հաչելն ու ձայնի նորից խեղդվելը։

– Մր. Կոպպերֆիլդ,– ասաց նամակը ձեռքին քույրը։

Ես մի ինչ-որ շարժում արի... կարծեմ գլուխ տվի... և ականջներս սրեցի։ Մյուս քույրն ասաց.

– Իմ քույրը՝ Լավինյան, այս տեսակ գործերին հմուտ լինելով, իսկույն կասի, թե ի՞նչ բան է հարմար տեսանք երկու կողմերի շահերի համար։

Հետո իմացա, որ միս Լավինյան հեղինակություն է սրտի գործերում, որովհետև մի ժամանակ նրա սրտում մր. Պիջր անունով մի ջենտլմեն է ապրել, երևելի ուիստ խաղացող, որ իբր թե սիրահարված է եղել օրիորդին։ Դա մի անհիմն ենթադրություն էր ըստ իս, այն պատճառով, որ մր. Պիջրը ոչ մի ժամանակ սիրային զգացում չէր ունեցել և սիրո մասին ոք ոքի բան չէր հայտնել՝ ոչ բերնով, ոչ էլ գրչով։ Սակայն թե՛ միս Լավինյան և թե՛ միս Կլարիսան համոզված էին, որ իր սերը կհայտներ, եթե հանկարծ իր ծաղիկ հասակում (այն է՝ վաթսուն տարեկան) կաթվածահար չլիներ և հետո չմեռներ անչափ շատ հանքային ջուր խմելուց, որով հույս ուներ օղիից վնասված առողջությունը կազդուրել։ Քույրերի ներքին համոզումով այդ մահը ծածուկ սիրո հետևանք էր, թեև պիտի ասեմ, որ մր. Պիջրի դահլիճում կախված պատկերը՝ բոլորովին կարմիր քթով, ակներև ցույց էր տալիս, թե ի՞նչն էր մահվան բուն պատճառը։

– Սակայն ավելորդ է,– ասաց միս Լավինյան,– այս նյութի անցած պատմությունը հետազոտել։ Մեր խեղճ եղբոր՝ Ֆրենսիսի մահն այդ բոլորը ջնջեց։

– Մենք մեր եղբոր՝ Ֆրենսիսի հետ շատ սերտ հարաբերություններ չունեինք,– ասաց միս Կլարիսան,– ոչ թե նրա համար, որ գժտված էինք կամ կռված, այլ այնպես։ Նա իր ճամփովն էր գնում, մենք՝ մեր։ Մենք կարծում էինք, թե այդ ընթացքը երկու կողմին էլ շահավետ կլինի. այդպես էլ եղավ։

Երկու քույրն էլ խոսել սկսելիս փոքր-ինչ առաջ էին հակվում, իսկ վերջացնելիս՝ գլուխները թոթվում ու փայտի պես դրստվում։ Միս Կլարիսան ոչ մի անգամ թևերը չշարժեց, այլ երբեմն միայն մատներն էր սահեցնում նրանց վրա... երևի, թե զանազան պարեր և մարշեր ածելով... բայց թևերն անշարժ էին մնում։

– Մեր եղբոր աղջկա դրությունը,– ասաց միս Լավինյան,– մեր Ֆրենսիս եղբոր մահից հետո բավական փոխվել է. հետևաբար, մեր եղբոր կարծիքն էլ այդ դրության մասին արդեն փոխված պիտի համարվի։ Մենք հիմք չունենք չհավատալու, մր. Կոպպերֆիլդ, որ դուք մի ազնվաբարո ու լավանուն երիտասարդ եք, և սիրում եք.... կամ լիովին համոզված եք թե սիրում եք... մեր եղբոր աղջկան։

Պատասխանեցի (ինչպես որ արել եմ ամեն հարմար դեպքերում), թե ոչ մի մարդ այնպես չի սիրել մեկ ուրիշին, ինչպես որ ես եմ սիրում Դորային։ Տրեդլսը փութաց մի դրական մրմունջով վկայությունս հաստատել։

Միս Լավինյան մտադիր էր շարունակել, բայց միս Կլարիսան, որ հենց իմանաս իր եղբոր՝ Ֆրենսիսի մասին անդադար խոսելու տենդով հիվանդ էր, առաջն առավ ու ասաց.

– Եթե Դորայի մայրիկը մեր եղբոր՝ Ֆրենսիսի հետ ամուսնանալիս պարզ ասեր, թե իր սեղանի շուրջը ոչ մի տեղ չպիտի լինի գերդաստանի մյուս անդամների համար, այդ բանը երկու կողմի շահերին էլ նպաստավոր կլիներ։

– Ա՛հ, քույրիկ Կլարիսա,– ասաց միս Լավինյան,– լավ է այդ կետը չհիշենք։

– Քույրիկ Լավինյա, կներես,– ասաց միս Կլարիսան,– այդ կետը նյութի հետ սերտ կապված է։ Չեմ շոշափի նյութի այն ճյուղը, որը միայն քեզ է վերաբերում, բայց նյութի մյուս ճյուղի մեջ ես իմ ձայնն ու սեփական կարծիքն ունեմ։ Երկու կողմի երջանկությունն էլ նպաստավոր կլիներ, եթե Դորայի մայրիկը եղբորս հետ պսակվելիս որոշակի հայտներ, թե ի՞նչ է իսկապես իր դիտավորությունը։ Այն ժամանակ մենք էլ մեր անելիքը կիմանայինք և կասեինք. «Աղաչում ենք, մի՛ հրավիրեք մեզ, ո՛չ այսօր, ո՛չ վաղը, ո՛չ էլ երբեք»։ Եվ այսպես ամեն թյուրիմացություն կվերջանար։

Երբ միս Կլարիսան գլուխը թոթվեց, շտկվեց, միս Լավինյան կրկին իր նյութին դարձավ և ակնոցը նամակիս վրա ուղղեց։ Պետք է ասել, որ երկու քրոջ աչքերն էլ փոքր, կլոր, ցոլուն էին ու շարունակ թարթափուն։ Առհասարակ երկուսն էլ իրենց արագ ու շտապ, թեթև ու ցնցուն շարժումներով և շուտ-շուտ կոկվելու փութկոտ ջանքով նման էին դեղձանիկի։

Միս Լավինյան նորից սկսեց ու ասաց.

– Ուրեմն, մր. Կոպպերֆիլդ, դուք ինձնից և իմ քույր Կլարիսայից թույլտվություն եք խնդրում այցելելու մեզ, որպես մեր եղբոր աղջկա փեսացու։

– Եթե մեր Ֆրենսիս եղբայրը,– ասաց միս Կլարիսան, վերստին քրոջ խոսքի թելը կտրելով (եթե կարելի է այդպես անվանել նրա մեղմ ընդմիջումը),– բարվոք եք դատել Դոկտորների Համայնքի մթնոլորտով շրջապատվել, մենք ի՞նչ իրավունք ունենք և կամ թե հիմք կունենայինք հակառակելու նրա կամքին։ Եվ ոչ մի։ Մենք ոչ մի ժամանակ ուրիշի վրա բռնանալու հավակնություն չենք ունեցել։ Եվ ինչո՞ւ չասեմ, իմ եղբայր Ֆրենսիսն ու իր կինը ազատ էին իրենց շրջանն ունենալու, ես էլ քրոջս հետ՝ մեր շրջանը։ Չէ՞ որ մենք էլ մեր շրջանը կարող էինք ընտրել։

Կարծելով, թե այդ խոսքերը Տրեդլսին ու ինձ են ուղղված, երկուսս էլ հարկ համարեցինք մի որևէ պատասխան տալ։ Տրեդլսի ասածը չլսվեց, իսկ ես, կարծեմ, ասացի, թե «այդ ամենքին էլ շատ ձեռնտու է»։ Ամենևին չգիտեմ՝ ի՞նչ էի ուզում դրանով հայտնել։

– Քույրիկ Լավինյա,– ասաց միս Կլարիսան, արդեն իր սիրտը թեթևացրած լինելով,– այժմ կարող ես շարունակել։

Եվ միս Լավինյան շարունակեց։

– Մր. Կոպպերֆիլդ, իմ քույր Կլարիսան և ես ուշի-ուշով նամակը քննեցինք ու վերջ ի վերջո մեր եղբոր աղջկան էլ ցույց տվինք՝ նրա հետ միասին խորհրդակցելու համար։ Չենք կասկածում, որ դուք իրոք կարծում եք, թե նրան անչափ սիրում եք։

– Կարծո՛ւմ, տիկին,– գոչեցի ես ոգևորությամբ։– Օ՛հ, եթե...

Սակայն միս Կլարիսան աչքով արեց ինձ (ճիշտ դեղձանիկի պես), որ պատգամախոսին չընդհատեմ, և ես ներողություն խնդրեցի։

– Սերը,– ասաց միս Լավինյան, քրոջը նայելով, ասես թե նրա հավանությունը խնդրելու համար, որ և միս Կլարիսան գլխի թեթև հակումով ամեն մի պարբերությունից հետո նրան տալիս էր,– անկեղծ, մաքուր, ջերմ սերը, ճշմարիտ սերը հեշտությամբ չի արտահայտվում։ Նրա ձայնը թույլ է։ Նա համեստ է, երկչոտ է, քաշվող է, թաքչում է և պատրաստ է սպասել,

միշտ սպասել։ Ազնիվ պտուղն այդպես է։ Երբեմն կյանքն անցնում է, բայց նա դեռ հասունանում է ստվերի մեջ։

Հարկավ ես այն ժամանակ չհասկացա, որ այդ բոլորը մի ակնարկ է կաթվածահար մր. Պիջրի իբր թե ծածկված սիրո մասին, բայց միս Կլարիսայի գլխի լուրջ շարժումներից պարզ տեսա, որ այդ խոսքերը մեծիմաստ են։

– Երիտասարդ մարդկանց թռուցիկ հակումները... թռուցիկ եմ ասում համեմատելով այդ հաստատուն սիրո հետ... ջահել մարդկանց հակումները,– շարունակեց միս Լավինյան,– ոչ այլ ինչ են, քան ավազի հատիկներ՝ բաղդատությամբ մի ժայռի հետ։ Դժվար է իմանալ՝ այրդյոք այդ հակումները որևէ ամուր հիմք ունե՞ն և կարո՞ղ են հարատևել։ Սա էր պատճառը, որ իմ քույր Կլարիսան և ես ինքս երկար ժամանակ տարակույսի մեջ էինք, թե ի՞նչ ընթացք պետք է բռնել, մր. Կոպպերֆիլդ և մր...

– Տրեդլս,– ասաց ընկերս, տեսնելով, որ ես իրեն եմ նայում։

– Խնդրեմ ներեցեք։ Կարծեմ Տեմպլի պաշտոնյա եք, այնպես չէ՞,– ասաց միս Լավինյան, նորից նամակը դիտելով։

– Ճիշտ այդպես է,– պատասխանեց Տրեդլսն ու վարդի նման կարմրեց։

Ես դեռ ոչ մի որոշ քաջալերություն չէի ստացել, բայց ինձ թվում էր, թե երկու փոքրիկ քույրերը, և մանավանդ միս Լավինյան, վերին աստիճանի ախորժում են այս տնային շահեկանություն ունեցող նոր խնդրից և պատրաստ են երկար ժամանակ փայփայել, ճաշակել ու վայելել այն, և այդ հանգամանքի մեջ մի հույս էր փայլում ինձ համար։ Նկատում էի, որ միս Լավինյան բերկրանքով պիտի խնամակալի երկու ջահել սիրահարներին, ինչպես որ էինք ես ու Դորան, իսկ միս Կլարիսան նույն հաճույքով պիտի աջակցի այդ խնամակալության, երբեմն մասնակցելով դրա այն ճյուղին, որ իրեն էր վերապահված։ Այս բոլորը ինձ սիրտ տվեց ուժգին եռանդով հայտնելու, թե ես Դորային այնքան եմ սիրում, որ ասել անգամ, հավատալ անգամ չի կարելի. թե բոլոր բարեկամներս այդ գիտեն, տատս էլ գիտե, Ագնեսն էլ գիտե, Տրեդլսն էլ, և թե ովքեր որ ինձ ճանաչում են, միաբերան կհաստատեն, որ իմ սերն անսահման է, և որ ես այդ սերն զգալուցս ի վեր զգոնացել ու ծանրացել եմ։ Վկա կանչեցի Տրեդլսին, և Տրեդլսը կարծես թե պառլամենտի մի տաք վեճից բորբոքվելով, ազնավաբար ինձ օգնեց. նրա գործնական, պարզ ու զորեղ փաստերը նպաստավոր ազդեցություն առաջ բերին։

– Եթե ներվի ինձ ասել, ես իբր փորձված մարդ եմ այս բաների մասին խոսում,– ասաց Տրեդլսը,– որովհետև նշանված եմ մի նորատի լեդիի հետ... դեվոնշիրցի տասը քույրերից մեկի հետ, բայց ինքս էլ չգիտեմ, թե մեր հարսանիքը երբ կլինի։

– Ուրեմն, մր. Տրեդլս,– վրա բերեց միս Լավինյան, որ ականջն հետաքրքրվել էր իմ ընկերով,– դուք, անշուշտ կհաստատեք, որ ճշմարիտ սերը միշտ համեստ է, երկայնամիտ, համբերող։

– Լիովին, օրիորդ,– ասաց Տրեդլսը։

Միս Կլարիսան նայեց միս Լավինյային ու ծանրությամբ գլուխը շարժեց։ Միս Լավինյան գորովով նայեց միս Կլարիսային ու թեթև հառաչեց։

– Քույրիկ Լավինյա,– ասաց միս Կլարիսան,– փոքր-ինչ հոտ քաշիր այս սրվակից։

Սրվակի անուշ բույրը հոտոտելուց միս Լավինյան ուժ առավ... մինչ Տրեդլսն ու ես անհանգիստ դիտում էինք նրան, և նվաղ ձայնով շարունակեց։

– Քույրս ու ես մոլորված էինք ու չգիտենիք, մր. Տրեդլս, թե ի՞նչ աչքով պետք է նայել այն սիրային, կամ իբր թե սիրային հակումների վրա, որ ցույց են տալիս երկու դեռահաս, խակ էակներ, ինչպես են ձեր բարեկամ մր. Կոպպերֆիլդն ու մեր Դորան։

– Մեր Ֆրենսիս եղբոր աղջիկը,– ճշտեց միս Կլարիսան,– եթե մեր եղբոր Ֆրենսիսի կինը կարևոր դատեր իր կենդանության ժամանակ (թեև լիակատար իրավունք ուներ իր ուզածին պես վարվելու) ճաշի հրավիրել ազգականներին, այսօր ավելի մոտիկ կճանաչեինք մեր եղբոր հարազատ աղջկան։ Քույրիկ, Լավինյա, շարունակիր։

Միս Լավինյան նամակիս հասցեն շուռ տվեց ու սկսեց ակնոցով դիտել մի քանի ծանոթություն, որ, ինչպես տեսա, ինքն էր արել թղթի վրա։

– Խոհեմությունը պահանջում է, մր. Տրեդլս,– ասաց նա,– մեր անձնական փորձով վերստուգել այդ զգացումները։ Առայժմ դրանց մասին ոչինչ չգիտենք, չենք էլ կարող ճիշտ դատել, թե ո՞ր աստիճան իրական են։ Հետևաբար այսքան միայն հակամետ ենք զիջելու մր. Կոպպերֆիլդի առաջարկության, որ թույլ կտանք նրան երբեմն այցելել մեզ։

– Օ՜հ, երբեք չեմ մոռանա ձեր բարությունը, ով շնորհազարդ լեդիներ,– գոչեցի ես, մի ծանր բեռից թեթևացած զգալով ինձ։

– Սակայն, մր. Տրեդլս,– շարունակեց միս Լավինյան,– ցանկալի է, որ այդ այցելությունները, ինչպես այսօր, միայն մեզ արված համարվեն։ Մենք կզգուշանանք մր. Կոպպերֆիլդի ու մեր եղբոր աղջկա միջև որևէ դրական կապ հաստատելուց, մինչև որ մի պատեհություն չունենանք...

– Մինչև որ դու պատեհություն չունենաս, քույրիկ Լավինյա,– ասաց միս Կլարիսան։

– Շատ բարի,– հոժարություն տվեց միս Լավինյան՝ մի թեթև հոգոց հանելով,– մինչև որ ես առիթ չունենամ մի որոշ բան վճռելու։

– Կոպպերֆիլդ,– ասաց Տրեդլսը, ինձ դիմելով,– զգում ես, անշուշտ, որ չէր կարելի դրանից ավելի իմաստուն մտածել։

– Չէր կարելի,– գոչեցի ես,– և ես անչափ շնորհակալ եմ։

– Իրերի այս դրության մեջ,– ասաց միս Լավինյան, դարձյալ ծանոթություններին նայելով,– այսինքն, թույլ կտրվեն, իրավունք ունենք մր. Կոպպերֆիլդից պահանջելու, որ նա ազնիվ խոսք տա, թե ոչ մի հարաբերություն չի ունենա մեր եղբոր աղջկա հետ՝ առանց մեր հոժարության ու գիտության։ Ազնիվ խոսք տա, թե ոչ մի որոշում չի անի մեր եղբոր աղջկա վերաբերմամբ, մինչև որ մեզ հետ խորհուրդ չտեսնի։

– Քեզ հետ, քույրիկ Լավինյա,– մեջ բերեց միս Կլարիսան։

– Թող այդպես լինի, Կլարիսա,– պատասխանեց միս Լավինյան համեստաբար,– մինչև որ ինձ հետ խորհուրդ չտեսնի և... մեր հավանությունը չստանա։ Հիմիկվանից ենք դնում այս կարևոր պայմանն ու բացարձակ պահանջում, որ դա ոչ մի կերպ չխախտվի։ Հատուկ խնդրել էինք մր. Կոպպերֆիլդին մի հավատարիմ ընկերոջ հետ մեզ մոտ գալ,– շարունակեց միս Լավինյան, գլուխը Տրեդլսի կողմը հակելով, որ նմանապես գլուխ տվեց,– որպեսզի այս առարկայի մասին ոչ մի կասկած կամ թյուրիմացություն չծագի։ Եթե դուք, մր. Կոպպերֆիլդ, և կամ դուք, մր. Տրեդլս, գեթ փոքր-ինչ դժվարանաք այս րոպեիս մի այդպիսի խոստում տալ, կխնդրենք ձեզ՝ ազատ միջոցին կշռել հարցը։ Դեռ ժամանակ կունենաք։

Ես ամենաջերմ ոգևորությամբ գոչեցի, թե մի վայրկյան անգամ այդ հարցը կշռելու կարիք չկա։ Հանդիսավոր երդում արի, Տրեդլսին վկա կանչեցի, թե պահանջված պայմանը կկատարեմ, և ասացի թե աշխարհիս ամենավատթար մարդը կլինեմ, եթե գեթ մի մազի չափ խոսքիցս շեղվեմ։

– Կացեք,– ասաց միս Լավինյան, իր աջը բարձրացնելով։– Դեռ ձեզ ընդունելու պատվից առաջ, ջենտլմեններ, մենք որոշել էինք մի քառորդ ժամ մենակ թողնել երկուսիդ, որ ժամանակ ունենաք այս կետի մասին խորհելու։ Թույլ տվեք՝ հեռանանք։

Ջուր էի կրկնում, թե բնավ խորհելու պետք չկա։ Նրանք պնդեցին, թե անհրաժեշտ է մի քառորդ ժամով հեռանալ, և թռչնիկների պես թեթև-թեթև ոստոտելով հեռացան։ Տրեդլսը սկսեց շնորհավորել ինձ, իսկ ես երջանկության ամենաբարձր ոլորտներն էի բարձրացել. . . քառորդ ժամն անցավ թե չէ՝ լեդիները ետ եկան նույն թեթևությամբ, ինչպես գնացել էին։ Դուրս գալիս խշխշալով էին հեռացել, ասես թե նրանց զգեստն աշնան չոր տերևներից շինված լիներ. խշխշալով էլ ետ եկան։

Ես նորից խոսք տվի հավատարիմ մնալ պայմաններին։

– Քույրիկ Կլարիսա,– ասաց միս Լավինյան,– մնացածը քեզ է վերապահված։

Միս Կլարիսան առաջին անգամ իր թևերն արձակելով, իմ նամակը քրոջից առավ ու սկսեց աչքի անցկացնել։

– Շատ ուրախ կլինենք,– ասաց միս Կլարիսան,– ամեն կիրակի ճաշի ժամանակ մեզ մոտ տեսնել մր. Կոպպերֆիլդին, եթե նրան հաճելի լինի. մենք ճաշում ենք ժամը երեքին։

Ես գլուխ տվի։

– Շաբաթվա ընթացքում,– շարունակեց միս Կլարիսան,– ուրախ կլինեինք երեկոյան թեյի ժամին էլ ընդունել մր. Կոպպերֆիլդին։ Մեր թեյը վեցուկեսին է։

Դարձյալ գլուխ տվի։

– Մր. Կոպպերֆիլդի նամակում հիշված միս Տրոտուդն էլ գուցե կամենա այցելել մեզ,– ասաց միս Կլարիսան։– Եթե այցելություն անելը ձեռնտու լինի ամեն կողմի շահերին, մենք սիրով կընդունենք ու կփոխարինենք։ Իսկ եթե ամեն կողմի շահերը պահանջեն, որ ոչ մի այցելություն չլինի (ինչպես որ պատահել էր մեր եղբոր Ֆրենսիսի տան ու մեր միջև), այդ արդեն ուրիշ հարց է։

Ես ասացի, թե տատս երջանիկ կլինի ծանոթանալ նրանց հետ, թեև լիովին վստահ չէի, որ քույրերն ու նա շատ գոհ կմնան իրարից։ Պայմաններն արդեն որոշված էին։ Ես սրտանց շնորհակալություն հայտնեցի լեդիներին և նախ՝ միս Կլարիսային, ապա՝ միս Լավինյայի աջը համբուրեցի։

Այնուհետև միս Լավինյան վեր կացավ և խնդրելով Տրեդլսին մեզ մի րոպե սպասել, հրավիրեց ինձ, որ իրեն հետևեմ, ես դողալով հնազանդվեցի և նրա հետ մի ուրիշ սենյակ գնացի։ Այնտեղ գտա իմ պաշտելի Դորային՝ երեսը պատին դեմ տված։ Ջիպն՝ ափսեներ տաքացնելու դարակի վրա դրված և գլուխը սրբիչով փաթաթված։

Օ՜հ, որքան Դորան իր սև զգեստով սիրուն էր. որքա՜ն լաց եղավ, մինչև որ կարողացանք դռան հետևից դուրս քաշել նրան։ Որքա՜ն ուրախացանք իրար տեսնելով, և այն ի՜նչ ցնծություն էր, երբ Ջիպին դարակից հանեցինք և նա աչքերը բանալով սաստիկ փռշտաց, և երեքս էլ նորից միացանք։

– Անգին Դորաս։ Վերջապես դու իմն ես հավիտյան։

– Թող խնդրեմ, թող ինձ,– ասաց Դորան։

– Մի՞թե Դորա, դու հավիտյան իմը չես։

– Իհարկե քոնն եմ,– գոչեց Դորան,– բայց չե՞ս տեսնում, որ վախեցել եմ։

– Ինչի՞ց, հրեշտակս։

– Այո, այո, չեմ սիրում նրան,– ասաց Դորան։– Ինչո՞ւ է եկել։

– Ո՞վ, հոգյակ իմ։

– Բարեկամդ,– ասաց Դորան։– Ի՞նչ գործ ունի նա այստեղ։ Որքան հիմար է։

– Սիրելիդ իմ։ (Հրաշալի էր Դորան իր մանկական պարզությամբ)։ Բարեկամս մի պատվական արարած է։

– Ի՞նչ հարկավոր է մեզ մի պատվական արարած,– ասաց Դորան հոնքերը կիտելով։

– Դու նրան շուտով կճանաչես, հրեշտակ իմ, և շատ կսիրես։ Տատս էլ է գալու. գիտեմ, որ նրան էլ սրտանց կսիրես, երբ որ հետը մտերմանաս։

– Օ՛հ, աղաչում եմ, մի՛ բեր նրան,– ասաց Դորան, ինձ մի թռուցիկ համբույր տալով ու ձեռքերը իրար կցելով։– Մի բեր։ Ես հո գիտեմ. նա մի վնասակար չար պառավ է։ Մի՛ թույլ տա, Դոդի, որ նա գա։ (Այս Դոդին իմ Դավիթ անվան տարօրինակ նվազականն էր։)

Փաստաբանելն անօգուտ էր, և ես սկսեցի ծիծաղել, անսահման երջանիկ էի։ Դորան ցույց տվեց Ջիպի նոր սովորած հնարքը, որ էր՝ հետևի երկու թաթերի վրա անկյունում կանգնել, և նա իրոք կանգնում էր, բայց այնքան, ինչքան որ անում է փայլակը, և հետո իսկույն վայր ընկնում... Տրեդլսն արդեն մոռացել էր, և ես չգիտեմ, մինչև ե՞րբ կմնայի Դորայի ու Ջիպի հետ, եթե միս Լավինյան ինձ ետ կանչելու չգար։ Միս Լավինյան շատ էր սիրում Դորային (իր ասելով՝ մի ժամանակ ինքն էլ սաստիկ նման է եղել Դորային... Օ՛հ, որքան ուրեմն փոխված էր) և այնպես էր հետը վարվում, ինչպես մի խաղալիքի հետ։ Ուզում էի համոզել Դորային, որ գա Տրեդլսին տեսնի, բայց առաջարկս լսելուն պես իսկույն իր սենյակը փախավ ու դուռը փակեց։ Մենակ ետ եկա Տրեդլսի մոտ, և մենք միասին դուրս ելանք։

– Սրանից ավելի գոհացուցիչ բան ցանկանալ անգամ չէր կարելի,– ասաց Տրեդլսը։– Եվ ինչ սիրելի էակներ են այդ լեդիները։ Բնավ չեմ զարմանա, Կոպպերֆիլդ, եթե դու մի քանի տարով ինձնից առաջ ամուսնանաս։

– Սոֆիդ որևէ գործիք ածել գիտե՞,– հարցրի ես հպարտությամբ։

– Փոքր-ինչ դաշնամուր, և միշտ այնքան, ինչքան որ պետք է փոքր քույրերին դաս տալու համար,– պատասխանեց Տրեդլսը։

– Իսկ երգե՞լ։

– Այո, երբեմն բալլադներ է երգում քույրերին զվարճացնելու համար, երբ որ տխուր են։ Բայց նրանք բուն գեղարվեստական բաներ չեն։

– Իսկ կիթառ հնչեցնե՞լ։

– Օh, ոչ։

– Նկարե՞լ։

– Ամենևին,– ասաց Տրեդլսը։

Ես Տրեդլսին խոստացա, թե մի օր նրան առիթ կտամ Դորայի երգելը լսելու և նկարած ծաղիկները տեսնելու։ Տրեդլսն ասաց, թե շատ գոհ կլինի, և մենք թև-թևի տված ամենազվարթ տրամադրությամբ առաջ գնացինք։ Ճանապարհին դրդեցի նրան Սոֆիի մասին խոսել, և նա այնպես ջերմ հավատով էր խոսում, որ իրոք սիրտ էր շարժում։ Ես մտքով համեմատում էի իրար հետ Սոֆիին ու Դորային, և թեպետ առավելություն էի տալիս իմ պաշտածին, սակայն պատրաստ էի և խոստովանել, որ Սոֆին Տրեդլսի համար շատ լավ կին կլինի։

Տատս, իհարկե, իսկույն իմացավ բանակցության հաջող ելքը և ամեն բան, ինչ որ խոսված ու արված էր այդ օրը։ Նա սրտանց խնդակից եղավ երջանկությանս ու խոսք տվեց ըստ կարելվույն շուտով այցելություն անել Դորայի հորաքույրներին։ Բայց այդ երեկո, մինչ ես Ագնեսին նամակ էի գրում, նա սկսեց այնպես եռանդով մեր սենյակները չափչփել, որ կարծեցի, թե մինչ առավոտ չի դադարի ետ ու առաջ ման գալուց։

Այդ նամակի մեջ, որ անկեղծ շնորհակալության զգացումներով լիքն էր, մանրամասն պատմում էի Ագնեսին, թե նրա բարի խորհուրդներն ինչ հետևանք ունեցան։ Նա հետևյալ

փոստով պատասխանեց: Նրա նամակը հուսալից, լուրջ ու զվարթ էր: Այդ օրից Ագնեսը կարծես միշտ ուրախ էր:

Այժմ ես անչափ զբաղված էի: Ամեն օր Համայնքն էի գնում, հետո Հայգեթ՝ դոկտոր Ստրոնգի մոտ: Միս Լավինյայի նշանակած երեկոյան թեյի ժամերի Հայգեթից մինչև հեռավոր Պուտնին հասնելն անկարելի էր, թեև կցանկանայի միշտ հասնել, այս պատճառով խնդրեցի նրան թույլ տալ ինձ՝ շաբաթ երեկոներն իրենց մոտ գնալ, սակայն այնպես որ, կիրակնօրյա արտոնությունս չկորչի: Հետևաբար, յուրաքանչյուր շաբաթվա վերջին ես ունեի երկու երջանիկ, լավ օրեր, և դրանց սպասելով՝ մյուսները նվիրում էի անդուլ ու ջերմ աշխատանքի:

Սիրտս անչափ թեթևացավ, երբ տեսա, որ իմ տատն ու Դորայի ազգականներն իրար բավական մոտեցան, գոնե ավելի, քան սպասելի էր: Տատս այցելություն արեց ընտանեկան խորհրդից մի քանի օր հետո. մի քանի օր էլ անցնելուց հետո Դորայի հորաքույրներն այցելեցին նրան հանդիսաբար պարտ ու պատշաճ ձևերով: Այնուհետև ավելի պարզ երթևեկություններ տեղի ունեցան, մոտավորապես երեք շաբաթը մի անգամ: Գիտեմ, Դորայի ազգականներին տատս շատ էր վրդովում կամ իսպառ արհամարհանքով կառք նստելու սովորությունը, կամ այնպիսի ժամանակ Պուտնի գնալով, երբ բնավ իրեն չէին սպասում, այսինքն՝ անմիջապես նախաճաշից հետո և կամ ճիշտ թեյից առաջ, կամ թե գլխարկն այնպես հագնելով, ինչպես որ հարմար էր գալիս իր գլխին, այլ ոչ թե քաղաքակրթության պահանջներին: Սակայն Դորայի հորաքույրերը հետզհետե հաշտվեցին տատիս տարօրինակ սովորությունների հետ ու վճռեցին, որ նա մի ինքնուրույն արական կին է՝ կորովի մտքով. և թեպետ տատս այս կամ այն ծեսի մասին երբեմն հերետիկոսական կարծիք հայտնելով, քույրերի քնքուշ զգացումները շատ էր գրգռում, բայց շատ անգամ էլ իր մասնավոր հաճույքները ինձ սիրելուց՝ ընդհանուր ներդաշնակության զոհ դարձան:

Մեր ընկերության միակ անդամը, որ բացարձակ հրաժարվում էր պարագաներին հարմարվելուց Ջիպն էր: Անկարելի էր, որ նա իմ տատին տեսնի ու նույն վայրկյանին բոլոր ատամները ցույց չտա, աթոռի տակ չմտնի, անդադար չհաչի և երբեմն աղիողորմ ձայնով չոռնա: Շոյել, հանդիմանել, սաստել, ծեծել, կսմթել – ամեն միջոց գործ դրին, մի անգամ էլ նրան Բուկինհեմի փողոցը տարան (ուր նա հանկարծ երկու անմեղ կատուների վրա հարձակվեց, ահ ու սարսափ պատճառելով անցորդներին), բայց նրան տատիս հետ հաշտեցնելու հնար չեղավ: Երբեմն կարծես զգաստանում էր, սիրալիր ձևանում մի քանի րոպե, սակայն շատ շանցած նորից սկսում էր դունչը ծռել և այնպես ոռնալ, որ ուրիշ բան չէր մնում անել, քան թե գլխովին փաթաթել նրան սրբիչով ու ափսեների դարակում փակել: Վերջապես բանն այնտեղ հասավ, որ Դորան տատիս գալն իմանալուն պես, շտապում էր իսկույն թաքցնել Ջիպին:

Այսպես մեր շրջանի մեջ մի հաշտ ու քաղցր հարաբերություն հաստատելուց հետո մի բան մնաց, որ ինձ սաստիկ վրդովում էր և հատկապես այն, որ կարծես ամենքը միաբանվել են՝ մի սիրուն տիկնիկ և կամ խաղալիք համարել իմ սիրելի Դորային: Տատս, որի հետ Դորան հետզհետե մտերմացել էր, փոքրիկ ծաղիկ էր անվանում նրան, իսկ միս Լավինյայի հրճվանքն էր՝ փայփայել նրան, մազերը գանգրել, պաճուճել, հենց իմանաս մի սիրասուն մանկիկ լիներ: Ինչ որ միս Լավինյան էր անում, նույն անում էր սովորաբար և քույրը: Այդ ինձ շատ տարօրինակ էր թվում. բայց համարյա թե բոլորն էլ որոշ չափով այնպես էին վարվում Դորայի հետ, ինչպես որ Դորան՝ Ջիպի հետ:

Մտքիս դրի այդ մասին խոսել նրա հետ, և մի օր, երբ նա ու ես զբոսնելու էինք գնացել (մի քանի ժամանակից ի վեր միս Լավինյան թույլ էր տվել մեզ միասին զբոսնելու), ասացի, որ համոզի նրանց՝ մի ուրիշ կերպ վարվել իր հետ:

– Որովհետև, սիրելիս, դու այլևս երեխա չես,– նկատեցի ես:

– Այդ էր պակաս,– գոչեց Դորան:– Արդեն սկսել ես կոպի՞տ վարվել:

– Կոպի՞տ, հոգյակս։

– Ես գիտեմ, որ բոլորն էլ ինձ սիրում են,– ասաց Դորան,– և երջանիկ եմ։

– Շատ լավ, սիրելիս,– ասացի ես,– դու կարող ես երջանիկ լինել, բայց և պահանջել, որ փոքր-ինչ ուրիշ կերպ վարվեն քեզ հետ։

Դորան վրաս կշտամբական աչքով նայեց – օ՜հ, որքան սիրալիր աչքեր,– և լալով ասաց, թե ինչո՞ւ եմ ոգում նշանվել իր հետ, եթե իրեն չեմ սիրում, և թե լավ է հեռանամ, եթե նա ինձ ատելի է։

Ի՞նչ կարող էի անել, եթե ոչ համբույրով սրբել նրա արտասուքն ու երդվել, որ սիրով սիրում եմ նրան, պաշտում եմ։

– Ես էլ քեզ շատ եմ սիրում,– ասաց Դորան։– Ուրեմն, Դոդի, այդպես անգութ մի՛ լինի ինձ հետ։

– Անգո՞ւթ, հրեշտակ իմ։ Ինչպե՞ս կարող եմ անգութ լինել դեպի քեզ։

– Թերություններ մի՛ փնտրի իմ մեջ,– ասաց Դորան, իր շուրթերն իբրև վարդի կոկոն ամփոփելով։– Այն ժամանակ ես էլ խելոք կլինեմ։

Ես հիացած մնացի, երբ նա մի վայրկյան հետո, հոժար կամքով ինձ հարցրեց, թե ե՞րբ կբերեմ խոհարարության այն գիրքը, որի մասին մի անգամ իր հետ խոսել էի, և ցույց տամ իրեն, թե ինչպե՞ս պետք է հաշիվ պահել։ Հետևյալ այցիս բերի նրան այդ գիրքը – մի փառակազմ գիրք, որպեսզի գրավիչ երևա, իսկ հետո զբոսնելիս ցույց տվի նրան տատիս տնտեսության հին մատյանն և ընծայեցի նրան մի փոքրիկ հաշվետետր, մի սիրուն կապարակալ ու մի տուփ մատիտ՝ տնտեսական հաշիվների մեջ վարժվելու համար։

Բայց խոհարարության գիրքը Դորայի գլուխը ցավեցրեց, իսկ թվանշանները ջերմ արտասուք պատճառեցին։ «Ի՞նչ անեմ դրանք, որ ամենևին չեն ուզում գումարվել»,– ասաց Դորան։ Այս ասելով, բոլորն էլ ջնջեց հաշվետետրերում և սկսեց թվերի տեղ՝ փնջեր նկարել, Ջիպի պատկերն ու իմը։

Այնուհետև մի շաբաթ օրվա զբոսանքի ժամանակ փորձեցի տնարարությանս գործերի մեջ հրահանգել նրան. մի օր էլ մի մսագործի կրպակի մոտով անցնելիս՝ այսպես ասացի.

– Երևակայիր, սիրելիս, թե մենք արդեն պսակված ենք, և դու ճաշի համար միս գնելու ես գնացել. կարո՞ղ ես գնել։

Դորայի սիրուն երեսը ձգվեց ու շուրթերը վարդի կոկոնի նման սեղմվեցին, կարծես ուզում էին համբույրով բերանս փակել։

– Կարո՞ղ ես գնել, սիրելիս,– կրկնեցի ես, իբր թե շատ անողոք հաստատությամբ։

Դորան փոքր-ինչ մտածեց ու հաղթական ժպիտով ասաց.

– Մսագործը հո գիտե, թե ինչպես պետք է վաճառել. ինձ ի՞նչ հարկավոր է այդ գիտենալը։ Այ դու անմիտ երեխա։

Մի օր էլ, երբ աչքս խոհարարության գրքին հառած հարցրի Դորային, թե ինչ կասի նա, եթե ես պսակվելուց հետո ուզենամ, օրինակի համար, իռլանդական **ստիու**[69] ունենալ մեր ճաշին,– պատասխանեց. «Կասեմ խոհարարին, պատրաստեցեք մեզ համար ստիու» և այս ասելիս այնպես ուրախ ծափահարեց ու քրքջաց, որ ես զվարճությունից հիացած մնացի։

Հետևաբար խոհարարության գրքին ուրիշ բան չմնաց անել, քան անկյունում ընկած մնալ, իբրև մի պատվանդան Ջիպի համար, երբ նրան հրամայեին ուղիղ կանգնել երկու ոտքի վրա։

---

[69] Stew — բուղլամա։

Դորան այնքան գոհ էր, երբ կարողացավ այնպես անել, որ Ջիպը, մի մատիտ բերանում բռնած, անշարժ կանգնի գրքի վրա, և ես ամենևին չափսոսացի այդ գիրքը գնելու համար։

Եվ մենք նորից վերադարձանք կիթառին, նորից սկսեցինք ծաղիկներ նկարել, նորից երգել – Տրա-լա՛-լա՛, տրա-լա՛-լա՛-լա՛, և ամբողջ շաբաթ երջանիկ էինք։ Երբեմն մտքովս անցնում էր ակնարկել միս Լավինյային, թե նա արդեն չափից դուրս է խաղալիք համարում հոգյակիս, բայց տեսնում էի, որ ես էլ երբեմն, ընդհանուր հոսանքին հետևելով, նույնն եմ անում, բայց միայն երբեմն, և ոչ թե միշտ։

Բ. ԳԼՈՒԽ
Չարիք

Գիտեմ, որ ինձ վայել չէ նկարագրել (թեև այս ձեռագիրը երբեք հրապարակվելու չէ), թե որքան էի աշխատում հմտանալ սղագրության տաժանելի արվեստի մեջ և որքան ճգնում՝ ըստ կարելվույն տիրապետել այն, առաջնորդ ունենալով իմ պարտքը դեպի Դորան ու իր հորաքույները։ Աշխատելու եռանդը իրավ մեծ էր կյանքիս այդ միջոցին, երբ, ինչպես արդեն ասել եմ, հարատևությունն ու անսայթաք հաստատությունը արդեն սկսել էին բնավորությանս ամենաէական կողմերը կազմել։ Անցյալս հիշելով պիտի ասեմ, ես բոլոր հաջողություններիս աղբույրն այդ հարատևության, այդ հաստատության մեջ եմ գտել։ Ես շատ բախտավոր էի աշխարհիկ գործերում. շատ մարդիկ ինձնից ավելի են աշխատել և դարձյալ իմ հաջողության կեսն անգամ չեն գտել. սակայն ես երբեք գլուխ չէի բերի այն ամենը, ինչ որ արել եմ, եթե վարժված չլինեի կանոնավոր, տոկուն ու փութաջան աշխատանքի, և եթե, մանավանդ, սովորություն չունենայի՝ մի գործ սկսելիս՝ ամբողջ ուշքս միայն դրա վրա կենտրոնացնել, առանց մտածելու հետևյալի մասին, որի հերթը, թերևս, իսկույն պիտի գար։ Աստծուն հայտնի է, որ պարծենալու մտքով չեմ գրում։ Սուրբ կլիներ այն մարդը, որ իր կյանքը թերթ առ թերթ աչքի անցնելիս, ինչպես որ ես եմ անում, վստահաբար ասել, թե ոչ մի քանքար չի թաքցրել հողի մեջ, ոչ մի հարմար պատեհություն չի կորցրել, ոչ մի սխալ չի արել, մոլար կրքեր չի ունեցել, խղճի խայթ ու սրտի կսկիծ չի զգացել։ Ես չեմ ունեցել և ոչ մի բնական ձիրք, որ ի չարը գործ դրած լինեմ։ Ասելիքս միայն այս է, թե ինչ որ արել եմ, աշխատել եմ հնար եղածին չափ լավ անել. ինչ բանի որ նվիրվել եմ՝ լիովին եմ նվիրվել և անելիքս մեծ լիներ թե փոքր,– ձգտել եմ հավասար փութով ու ջանքով անել։ Երբեմն չեմ հավատացել, որ նույնիսկ փայլուն ձիրքերով մարդը հաջողություն կգտնի, եթե ձիրքերի հետ միասին տոկուն ջանասիրություն էլ չունենա։ Առանց այսպիսի ջանասիրության ոչ մի էական հաջողություն չի տեսնված աշխարհում։ Փայլուն քանքարն ու հաջող դեպքը սանդուղքի երկու բազիրքներն են, որով ոմանք բարձրանում են. բայց անհրաժեշտ է, որ այդ բազիրքներն ու ձողերը պատահարներին դիմադրելու ընդունակ ամուր նյութից շինված լինեն։ Ո՞րն է, սակայն, մարդուս համար այդ նյութը, եթե ոչ իր ազնիվ եռանդը, զորեղ կամքը, անընկճելի բնավորությունը, որ ոչ մի ուրիշ բանով չի կարելի փոխարինել։ Երբեք չկպչել մի գործի, որին չես կարող ամբողջ զորությամբ անձնատուր լինել, և երբեք չարհամարհել որևէ գործ, որքան էլ նրա արժեքը փոքր լինի,– այս է եղել կյանքիս կանոնը և ստուգել եմ, որ դա ոսկի կանոն է։

Չեմ ուզում կրկնել, թե որքան եմ պարտական Ագնեսին գործերի մեջ այդ կանոնին հետևելուս համար։ Պատմությունս այժմ նրան է անցնում երախտագետ սիրով։

Ագնեսը երկու շաբաթով հյուր եկավ դոկտոր Ստրոնգի մոտ։ Մր. Ուիկֆիլդը դոկտորի հին բարեկամն էր. դոկտորը կամենում էր տեսնել նրան և, եթե կարելի լինի, մի լավություն անել։ Ագնեսը դեռ վեջին անգամ Լոնդոն հանդիպելիս խոսել էր դոկտորի հետ իր հոր մասին, և նրա այժմյան գալուստը նույն խոսակցության հետևանքն էր։ Նա ու հայրը միասին եկան։ Ես ամենևին չզարմացա, երբ Ագնեսից լսեցի, թե նա հանձն է առել մի մերձավոր բնակարան

գտնել մրս. Հիպի համար, որովհետև պառավի հոդացավը օդափոխության կարոտ է, և նա շատ փափագում է դոկտոր Ստրոնգի ընկերության մեջ լինել: Չզարմացա և Ուրիաս Հիպին տեսնելով, որ իբրև մի բարի որդի՝ եկել էր այդ բնակարանում տեղավորելու իր արգո մորը:

– Տեսնում եք, մաստր Կոպպերֆիլդ,– ասաց նա առանց կանչվելու մոտենալով ինձ, մինչ ես զբոսնում էի դոկտորի այգում,– սիրահար մարդիկ միշտ փոքր-ինչ նախանձկոտ են... կամ գոնե փափագում են աչքաթող չանել իրենց սիրած էակին:

– Ո՞ւմ եք այժմ նախանձում,– ասացի ես:

– Ձեր շնորհիվ, մաստր Կոպպերֆիլդ,– պատասխանեց Ուրիասը,– ոչ ոքի չեմ նախանձում առայժմ... գոնե ոչ մի տղամարդու:

– Ուրեմն ուզում եք ասել, թե մի կնոջ եք նախանձում:

Ուրիասը իր կարմիր ու չար աչքերով ծուռ նայեց վրաս ու ծիծաղեց:

– Իրավ, մաստր Կոպպերֆիլդ... կներեք, ուզում էի միստր ասել, բայց արմատացած սովորությունս ստիպեցնում է,– ասաց նա,– իրավ դուք այնպես վարպետ եք, որ մի վայրկյանում սիրտս բաց եք անում, կարծես մի խցանահանով: Եվ պարզ կասեմ (այս ասելիս նա գորտի պես պաղ ձեռքով իմ աջը շոշափեց), չեմ թաքցնի, սըր, ես երբեք կանանց սիրելին չեմ եղել, և, մանավանդ, մրս. Ստրոնգի սիրելին:

Ուրիասի աչքերը, որոնք նենգությամբ դիտում էին ինձ, այժմ կանաչ գույն ստացան:

– Ի՞նչ եք ուզում ասել,– հարցրի ես:

– Հը՛մ,– ասաց Ուրիասը չոր ծիծաղով:– Թեև այժմ ես փաստաբան եմ, մաստր Կոպպերֆիլդ, բայց և այնպես այս րոպեիս այն եմ ասում, ինչ որ զգում ու մտածում եմ:

– Եվ ի՞նչ եք ասում ձեր հայացքով,– կրկնեցի ես:

– Իմ հայացքո՞վ: Շատ խորասույզ եք, Կոպպերֆիլդ: Ուզում եք իմանալ, թե ինչ եմ ասում իմ հայացքո՞վ:

– Այո՛:

Ուրիասն այնպես սրտանց քրքջաց, ինչպես միայն կարող էր: Որոշ ժամանակ աչքերը գետնին հառած կզակը շփելուց հետո, սկսեց խոսել շատ մեղմ ձայնով.

– Երբ ես դեռ մի խոնարհ գրագիր էի, այդ լեդին բարձրից էր նայում ինձ վրա: Նա շուտ-շուտ էր իր մոտ տանում Ագնեսին և մի առանձին մտերմություն ցույց տալիս ձեզ, մաստր Կոպպերֆիլդ. իսկ ես, ես այնքան ստոր էի, որ նրա ուշադրությանն արժանի չէի:

– Դիցուկ թե,– ասացի ես:

– Եվ այնքան ստոր նրա մարդուց... – շարունակեց Ուրիասը մի շատ պարզ, բայց մտածկոտ եղանակով և կզակը շարունակ շփելով:

– Մի՞թե կարծում եք,– ասացի ես,– թե դոկտորն ընդունակ է մտածել անգամ ձեր մասին, եթե աչքին չերևաք:

Ուրիասը դարձյալ հոնքերի տակից ինձ նայեց ու կզակը քորելով պատասխանեց.

– Օ՛, դոկտորի մասին չէ, բարեկամ: Խեղճ մարդ... Մր. Մելդրնի մասին է խոսքս:

Սիրտս հանկարծ ճմլվեց: Մի անգամից բոլոր կասկածներս արթնացան. հիշեցի դոկտորի միամտությունն ու զիջողությունը, որ անբացատրելի էր թվում ինձ, և պարզ տեսա, որ վատթար Ուրիասը պատրաստ է նրա երջանկությունն ու հանգիստը կործանել:

– Մեր գրասենյակը մտնելիս, նա սովոր էր միշտ հրամայաբար վարվել ինձ հետ,– ասաց Ուրիասը։ Չէ՞ որ ազնիվ ջենտլմեն էր, իսկ ես ի՞նչ. մի խոնարհ ու չնչին արարած, ինչպես որ եմ և այս րոպեիս։ Սակայն այդպիսի վարմունք ես չեմ սիրել. . . չեմ էլ սիրում։

Ուրիասը կզակը քորելուց դադարեց և առաջվա պես վրաս կողմնակի նայելով, այտերն այնքան ներս քաշեց, որ նրանք կարծեմ, բերանի մեջ իրար կպան։

– Այդ է ձեր շնորհալի տիկինը,– շարունակեց Ուրիասը, նորից իսկական ձև տալով երեսին,– և պարզ է, որ նա չէր զիջի ուշք դարձնել իմ վրա։ Այդ ես գիտեմ։ Նա իսկ և իսկ այն անձն է, որ մի ավելի նուրբ խաղի համար կարող է գործածել իմ Ագնեսին։ Ես, իհարկե, ձեր լեդիներին հաճելի տղաներից չեմ, մաստր Կոպպերֆիլդ, բայց և այնպես աչքեր ունեմ, և իմ աչքերը փակ չեն։ Մենք՝ խոնարհ մարդիկս, առհասարակ աչքաբաց ենք և սրատես։

Ես աշխատում էի անուշադիր և միամիտ ձևանալ, բայց Ուրիասի դեմքից երևում էր, որ նա վրդովումներս նկատել է։

– Ես չեմ ուզում ոտնակոխ լինել, Կապպերֆիլդ,– շարունակեց նա, չար խնդությամբ դեմքի այն մասը բարձրացնելով, ուր պիտի կարմիր հոնքեր գտնվեին, եթե միայն հոնքեր ունենար,– և պիտի ջանամ այդ բարեկամությանը վերջ դնել։ Դա ինձ բնավ դուր չէր գալիս։ Ավելորդ է ասել, որ ես փոքր-ինչ վայրագ եմ և թույլ չեմ տա, որ ճանապարհս կտրեն։ Ես նրանց բոլոր դավերը ի չիք կդարձնեմ։

– Դավ դնողը միշտ ինքներդ եք և կարծում եք, թե ամեն մարդ էլ ձեզ պես է անում,– ասացի ես։

– Շատ կարելի է, մր. Կոպպերֆիլդ. բայց ես մի շարժառիթ ունեմ, ինչպես որ ասում է ընկերս, և ոչ մի միջոց չեմ խնայի նպատակիս հասնելու համար։ Ճշմարիտ է, ես մի խոնարհ, ես մի չնչին արարած եմ, բայց չեմ համբերի, որ ուրիշները ճանապարհս փակեն։ Ոչ, մաստր Կոպպերֆիլդ. թող նրանք ճանապարհից հեռանան, եթե ոչ՝ ես ինքս նրանց հետ կքշեմ։

– Չեմ հասկանում ձեզ, Ուրիաս,– ասացի ես։

– Իրա՞վ։ Զարմացնում եք ինձ, մաստր Կոպպերֆիլդ,– գոչեց նա իր սովորական ցնցումով։– Դուք, որ այնքան նրբամիտ եք, դժվարանում եք ինձ հասկանալ։ Մյուս անգամ կաշխատեմ ավելի պարզ խոսել. . . Սակայն, ներեցեք, սըր։ Մր. Մելդրնը չէ՞ այն ձիավորը, որ դռան զանգակը հնչեցրեց։

– Կարծեմ նա է,– ասացի ես, ըստ կարելվույն անհոգ կերպով։

Ուրիասը հանկարծ կանգ առավ, ձեռքերը ծնկների միջև խոթեց ու ծիծաղից թուլանալով կքվեց։ Բայց այդ մի մունջ ծիծաղ էր. ոչ մի ձայն դուրս չթռավ Ուրիասի կրծքից։ Այն աստիճան այդ մարդը գարշելի էր ինձ և, մանավանդ, նրա վերջին արարքը, որ ես առանց այլևայլի շուռ եկա և հեռացա։ Նա կծկված ու երկու տակ եղած՝ պարտեզի մեջտեղը մնաց, իբրև մի թռչնահալած խրտվիլակ։

Այդ երեկո չէ, այլ մի երկու օր հետո էր, և, հատկապես, մի շաբաթ երեկո, որ ես Ագնեսին Դորայի մոտ տարա։

Ես ու միս Լավինյան այդ այցելությունն արդեն առաջուց սարքել էինք։ Ագնեսին սպասում էին թեյի։

Սիրտս բաբախում էր հպարտությունից ու տագնապից. միանգամայն հպարտ էի իմ սիրելի նշանածով, և անվստահ՝ արդյոք Ագնեսը կսիրի՞ նրան։ Պուտնի գնալիս՝ Ագնեսը հանրակառքում տեղ բռնեց, իսկ ես՝ վերը։ Ամբողջ ճանապարհին աշխատում էի աչքիս առջև այնպես սիրուն պատկերացնել Դորային, ինչպես որ շատ անգամ տեսել էի նրան. մեկ ուզում էի, որ նա այնպես երևա, ինչպես որ մի ուրիշ օր էր, և ամբողջ մարմնով դողում էի այդ մտքերից։

Համենայն դեպս վստահ էի, որ նա շատ սիրուն կլինի, բայց դուրս եկավ, որ նրան ոչ մի ժամանակ այքան սիրուն ու գեղեցիկ չէի տեսել, ինչքան որ այժմ: Նա հյուրասենյակում չէր, երբ ես նրա փոքրիկ հորաքույրերի հետ ծանոթացրի Ագնեսին, այլ երկյուղից փախել էր: Սակայն այժմ գիտեի, թե որտեղ կգտնեմ նրան, և գտա հին դռան հետևի անկյունում, ուր առաջվա պես թաքնվել էր, ականջները ձեռքերով ծածկած:

Սկզբում ամենևին չէր ուզում գալ. հետո հինգ րոպե ժամանակ խնդրեց իր ժամացույցով: Վերջ ի վերջո երբ թևս բռնեց, որ միասին հյուրասենյակ գնանք, նրա չքնաղ դեմքը շիկնեց: Ոչ մի ժամանակ այդպես սիրուն չէր եղել: Բայց երբ սենյակը մտանք, և նա հանկարծ գույնը նետեց, հազար անգամ ավելի սիրուն էր, քան առաջ:

Դորան Ագնեսից վախենում էր: Իր ասելով՝ Ագնեսը «շատ խելոք էր»: Բայց ընկերուհուս խոհուն ու բարի, լուրջ ու զվարթ դեմքը տեսնելուն պես նա ուրախության ճիչ հանեց և նույն րոպեին Ագնեսի վզին փարվեց՝ իր անմեղ այտը նրա երեսին դնելով:

Երբեք այնքան բախտավոր, այնպես երջանիկ չէի զգացել ինձ, ինչպես այդ երկուսին իրար մոտ նստած տեսնելիս: Ի՜նչ դժվարություն էր ինձ համար, երբ տեսնում էի սիրելիիս պարզ նայվածն Ագնեսի անկեղծ աչքերին և Ագնեսի հեզիկ հայացքը, որով դիտում էր Դորային:

Միս Լավինյան ու միս Կլարիսան իրենց եղանակով մասնակից էին իմ ուրախությանը: Այն օրվա թեյի սեղանի պես զվարճալի սեղան դեռ ոչ մի տեղ չէր տեսնված: Միս Կլարիսան նախագահում էր: Ես կտրում էի կարկանդակն ու բաժանում. քույրերը թռչնիկների պես կտցում էին կարկանդակի չամիչներն ու շաքարը. միս Լավինյան բարեհոժար հովանավորությամբ նայում էր, ասես թե մեր երջանիկ սերը միանգամայն իր գործը լիներ, և բոլորս շատ գոհ էինք թե՛ ինքներս մեզնից, թե՛ իրարից:

Ագնեսի անկեղծ պարզությունն ամենքի սիրտը գրավեց: Նրա լուրջ ուշադրությունը դեպի ամեն բան, ինչ որ սիրելի էր Դորային, նրա հեշտ ծանոթությունը Ջիպի հետ (որ իսկույն մտերմություն ցույց տվեց նրան). նրա զվարթ վարվեցողությունը Դորայի հետ, երբ որ սա ամաչում էր իմ կողքին նստել. նրա շնորհալի վարմունքը, որով մտերմության անթիվ նշաններ հափշտակեց վարդի պես կարմրող Դորայից,– այս բոլորը տեսնելիս, անշուշտ կասեիր, թե նա եկել է մեր փոքրիկ շրջանի երջանկությունը լրացնելու:

– Որքան ուրախ եմ, որ սիրում եք ինձ,– ասաց Դորան թեյից հետո:– Չէի կարծում, թե ինձ կսիրեք. այնինչ այժմ, երբ Ջուլիա Միլսը հեռացել է, ես ավելի սիրված լինելու կարոտ եմ:

Մոռացել եմ հիշատակել, այդ դեպքը: Միս Միլսը մեկնել էր, և ես ու Դորան գնացել էինք Գրեվզընդ՝ բարի ճանապարհ մաղթելու նրան մի հնդկական նավի վրա, ուր մեզ շաքարած զենճեֆիլով, գուավայով և ուրիշ արևելյան անուշներով հյուրասիրեցին: Մենք թողինք միս Միլսին նավի սրահում մի ծալովի աթոռի վրա նստած, արտասվալիր: Նա իր թևի տակ մի ահագին նոր հիշատակարան էր բռնել, ուր օրեցօր պիտի գրեր՝ օվկիանոսի տեսարաններից իր մեջ ծագած զգացումներն ու մտքերը:

Ագնեսն ասաց, թե հավանական է, որ ես մի աննպաստ նկարագիր արած լինեմ իր մասին, սակայն Դորան անմիջապես դրա հակառակը հաստատեց:

– Օ՜հ, ո՜չ,– գոչեց նա, իր գանգուրները դեպի ինձ թոթվելով:– Դողին երբեք ձեզ գովելուց չի կշտանում: Այն աստիճան գնահատում է ձեր կարծիքը, որ ես արդեն վախենում էի դրանից:

– Իմ բարի կարծիքը ոչ մի բան չի ավելացնի այն սիրո վրա, որով նա սիրում է մի քանի հոգու,– ասաց Ագնեսը ժպտալով:– Ուրեմն, չարժե էլ իմ կարծիքն իմանալ:

– Բայց ես կցանկանայի իմանալ,– ասաց Դորան փաղաքշական ձայնով:– Աղաչում եմ, ասացեք:

Դորայի միամիտ խոստովանությունը սիրված լինելու կարոտի մասին՝ առիթ տվեց մեզ զանազան կատակներ անելու, և այդ միջոցին նա ինձ սագ անվանեց ու ասաց, թե իմ սիրուն

ամեննին կարոտ չի։ Երեկոն անցավ այսպիսի ուրախ կատակներով։ Գնալու ժամանակը հասել էր. հանրակառքը շուտով մեկնելու էր։ Ես մենակ կանգնած էի վառարանի առջև։ Դորան կամաց ինձ մոտեցավ և իր անգին համբույրը ինձ շնորհեց, որ միշտ տալիս էր մնաս բարովի ժամանակ։

– Ի՞նչ ես կարծում, Դոդի,– ասաց նա, իր լուսափայլ աչքերը վրաս ուղղելով ու զգեստիս կոճակներից մեկի հետ անհոգ-անհոգ խաղալով,– մի՞թե ես ավելի խելոք չէի լինի, եթե վաղուց մի այդպիսի ընկերուհի ունենայի։

– Սիրելիդ իմ, այդ ինչ անմիտ խոսքեր են,– ասացի ես։

– Մի՞թե անմիտ,– հարցրեց Դորան, առանց վրաս նայելու։– Եվ վստա՞հ ես, որ այդպես է։

– Լիովին վստահ։

– Մոռացել եմ հարցնել, Դոդի,– ասաց Դորան, շարունակելով կոճակս դեսուդեն քաշել,– ինչպիսի՞ ազգական է քեզ գալիս Ագնեսը։ Այդ մասին կարծես, դու ինձ ոչինչ չես ասել, այ չար տղա։

– Նա ինձ ազգական չի գալիս,– ասացի ես,– բայց մենք միասին ենք դաստիարակվել, իբրև քույր ու եղբայր։

– Ուրեմն ինչե՞ս եղավ, որ դու ինձ սիրահարվեցիր,– ասաց Դորան, զգեստիս մյուս կոճակին անցնելով։

– Ես քեզ սիրեցի, որովհետև քեզ տեսնել ու չսիրել, չէր կարելի։

– Իսկ եթե տեսած չլինեի՞ր,– ասաց Դորան, երկրորդ կոճակին անցնելով։

– Իսկ եթե աշխարհ եկած չլինեինք, ո՛չ դու, ո՛չ ես,– ասացի ես խնդալով։

Արդյոք ի՞նչ է մտածում Դորաս, հարցնում էի ինքս ինձ ու լուռ դիտում կոճակներիս հետ խաղացող նրա քնքուշ մատները, կամ թե հիանում նրա ալեծածան մազերով, որոնք փռված էին կրծքիս վրա, նրա երկար թարթիչներով, որոնք ծածկում էին իր խոնարհած աչքերը։ Վերջապես նա ուղիղ երեսիս նայեց, ոտքերի ծայրի վրա կանգնեց ու սովորականից ավելի մտածկոտ կերպով մի, երկու, երեք համբույր տվեց ինձ, ապա հեռացավ սենյակից։

Հինգ րոպեից հետո բոլորը միասին ետ եկան։ Դորայի անսովոր լրջությունը կորել էր։ Հանրակառքի գալուց առաջ նա ուզեց Ջիպի բոլոր հնարքները ցույց տալ մեզ։ Դրա համար բավական ժամանակ պետք եղավ (ոչ հնարքների շատության, այլ Ջիպի կամակորության պատճառով), և երբ կառքը դռան մոտ կանգնեց, ներկայացումը դեռ չէր վերջացել։ Ագնեսն ու Դորան շուտ-շուտ, բայց սրտագին հրաժեշտ տվին միմյանց։ Դորան խոստացավ գրել Ագնեսին (պայմանով, որ իր նամակները նա շատ անմիտ չհամարի). Ագնեսն էլ խոստացավ գրել Դորային։ Կառքի դռնակի մոտ նրանք երկրորդ անգամ մնաս բարով, մնաս բարով ասացին. երկրորդ անգամ էլ նույն արին, երբ Դորան միս Լավինյայի ազդեցության հակառակ, կառքի լուսամուտի մոտ վազեց հիշեցնելու Ագնեսին, որ չմոռանա նամակ գրել, և մի վերջին ժպիտ շնորհեց ինձ, մինչ ես հիանալով նայում էի նրան կառքի վերևի նստարանից։

Հանրակառքն իջեցնելու էր մեզ Կովընտ Գարդընի մոտերքում, և այնտեղ մենք մի ուրիշ կառք պիտի նստեինք մինչև Հայգեթ գնալու համար։ Ես անհամբեր սպասում էի այդ միջանկյալ իջևանին, որ գոնե մի քանի րոպե ժամանակ գտնեմ Ագնեսի կարծիքը Դորայի մասին իմանալու։ Օ՛հ, որքան նա Դորային գովեց։ Ինչ սիրով ու ջերմությամբ պատվիրեց ինձ զգվել այդ նազելի էակին, այդ անարվեստ շնորհներով օժտված արարածին։ Ի՛նչ զգուշությամբ հիշեցրեց ինձ իմ սուրբ պարտքը դեպի այդ որբ մանկիկը, որ ապավինված էր իմ սիրուն։

Երբեք, երբեք չէի սիրել Դորային այնպիսի խոր ու ճշմարիտ սիրով, ինչպես որ այդ երեկո։ Երբ որ մենք Հայգեթ հասանք և կառքից իջնելով այն լռիկ ճանապարհի վրա ոտք դրինք, որ

տանում էր դեպի դակտոր Ստրոնգի տունը, երկինքն արդեն շողշողում էր աստղերով։ Ես ասացի Ագնեսին, թե իմ ամբողջ երջանկությունը հատկապես իրեն եմ պարտական։

– Եվ երբ նստած էինք Դորայի մոտ,– շարունակեցի ես,– ինձ թվում էր, թե դուք նրա համար էլ մի պահապան հրեշտակ եք, ինչ որ եք և ինձ համար։

– Մի խեղճ հրեշտակ, բայց հավատարիմ,– պատասխանեց Ագնեսը։

Նրա ձայնի պարզ հնչյունը սրտիս խորքը թափանցելով ստիպեց ինձ ասել.

– Կարծեմ այսօր նորից գտաք հոգու այն զվարթ տրամադրությունը, որ միայն ձեզ է հատուկ, սիրելի Ագնես։ Այդ տեսնելով, ուզում եմ հավատալ, որ այժմ ավելի բախտավոր եք ձեր տանը։

– Ավելի բախտավոր եմ ինքս իմ մեջ,– ասաց նա։– Սիրտս հանգիստ ու զվարթ է։

Մտիկ արի նրա դեմքին, որ աստղերի լույսով փայլում էր, և նա ինձ ավելի ազնիվ երևաց։

– Մեր տանը ոչ մի փոփոխություն չի պատահել,– ասաց Ագնեսը մի քանի վայրկյան լռելուց հետո։

– Եվ ոչ մի ակնարկ չի՞ եղել այն... ներեցեք, որ ձեզ վշտացնում եմ, Ագնես, սակայն չեմ կարող չհարցնել... այն բանի մասին, որի առթիվ խոսել էինք վերջին անգամ։

– Եվ ոչ մի,– ասաց Ագնեսը։

– Ես շատ եմ մտածում այդ մասին։

– Քանի քիչ մտածեք, այնքան լավ։ Չմոռանաք, Տրոտուդ, որ ես լիովին հավատում եմ պարզ սիրուն ու ճշմարտության։ Իմ մասին միամիտ եղեք,– հարեց Ագնեսը փոքր-ինչ հետո,– ես երբեք այն քայլը չեմ անի, որից այդքան վախենում եք։

Թեպետ սառը մտածության րոպեներին ես ամենևին վախ չէի ունեցել, բայց դարձյալ մի անասելի թեթևություն զգացի իր արդար բերնից այդ վստահությունը լսելով, և իսկույն հայտնեցի իրեն։

– Ահա դոկտորի մոտ ձեր այցելության ժամանակը լրանալու վրա է,– ասացի ես։– Այսուհետև դժվար թե կարողանանք ազատ-ազատ տեսնել իրար, սիրելի Ագնես։ Ե՞րբ նորից Լոնդոն կգաք։

– Հավանական է, որ շուտով չգամ։ Հորս հանգստությունը պահանջում է, որ տանը մնամ։ Երևի թե մի քանի ժամանակ իրար հաճախ չենք տեսնի, բայց ես սրտանց կթղթակցեմ Դորայի հետ, և այսպիսով լուր կունենանք իրար մասին։

Արդեն դոկտորի տան բակումն էինք։ Բավական ուշ էր։ Մրս. Ստրոնգի պատուհանին մի ճրագ էր երևում, և Ագնեսը մատնացույց անելով դրան՝ բարի գիշեր մաղթեց ինձ։

– Մեր հոգսերով ու վշտերով մի՛ մաշվեք,– ասաց նա, իր աջն ինձ մեկնելով։– Միայն ձեր բախտը կարող է ինձ երջանիկ անել։ Եթե ես օգնության կարոտ լինեմ, վստահ եղեք, որ միայն ձեր օգնությանը կդիմեմ։ Աստծու օրհնությունն անպակաս լինի ձեզնից։

Նրա պայծառ ժպիտի մեջ ու ձայնի վերջին զվարթ շեշտերում, կարծես, նորից տեսա ու լսեցի իմ անձկալի Դորային։ Աչքերս աստղերին հառած, երախտագետ ու սիրալիր սրտով մի քանի վայրկյան կանգ առա գավթի մոտ և հետո կամաց դիմեցի դեպի մոտակա պանդոկը, ուր մտադիր էի գիշերել։ Բակի դռնից դուրս գնալիս հակարծ տեսա, որ դոկտորի գրասենյակում դեռ լույս կա։ Նա գուցե մենակ բառարանի վրա է աշխատում առանց իմ օգնության, անցավ մտքովս։ Այս ենթադրությամբ շուռ եկա՝ գոնե բարի գիշեր ասելու նրան, և նրա դուռը բաց արի։

Լապտերի աղոտ լույսով աչքիս ընկնող առաջին մարդը Ուրիասն էր։ Շվարած մնացի։ Նա կանգնած էր լապտերի մոտ՝ իր ձեռքը բերանին դրած, մյուսը դոկտորի սեղանին հենած։

Դոկտորը նստած էր թիկնաթոռի վրա, երեսը ծածկած երկու ձեռքով։ Մր. Ուիկֆիլդը, որ անհանգիստ ու վշտահար էր երևում, փոքր-ինչ կռացած՝ անվստահ շոշափում էր դոկտորի թևը։

Դոկտորը հիվանդ երևաց ինձ։ Այդ տպավորության ներքո ես մի քայլ մոտեցա նրան. բայց Ուրիասի հայացքից իսկույն ևեթ բանի էությունն իմացա։ Արդեն ուզում էի հեռանալ, երբ դոկտորը ձեռքի շարժումով նշան արեց, որ մնամ, և մնացի։

– Համենայն դեպս ավելորդ չի լինի դուռը փակել,– ասաց Ուրիասն իր սովորական ցնցումով։– Հարկ չկա, որ այս բանը ամբողջ քաղաքն իմանա։

Այս ասելով նա կամացուկ մոտեցավ ու դռռը փակեց։ Հետո նա եկավ ու նորից նստեց իր տեղը։

Նրա ձայնի ու շարժումների մեջ մի կեղծ կարեկցություն էր երևում, որ անգամ հանդուգն լրբությունից պժգալի էր։

– Ես անհրաժեշտ համարեցի, մաստր Կոպպերֆիլդ,– ասաց նա,– մատնանիշ անել դոկտոր Ստրոնգին այն բանը, որի մասին արդեն խոսել ենք։ Սակայն, կարծեմ, այն ժամանակ դուք ինձ լավ չէիք հասկացել։

Պատասխանի տեղ՝ մի լուռ ակնարկ նետեցի վրան, մոտենալով իմ բարի վարժապետին, մի քանի սփոփիչ խոսք ասացի։ Նա իր աջն ուսիս դրեց, ինչպես որ սովոր էր անել, երբ դեռ փոքրիկ աշակերտ էի, բայց ալեհեր գլուխը չբարձրացրեց։

– Եվ, որովհետև, չէիք հասկացել, մաստր Կոպպերֆիլդ,– սկսեց Ուրիասը միևնույն պաշտոնական եղանակով,– համարձակություն կանեմ այստեղ, մտերիմներիս շրջանում խոնարհաբար ասելու, որ ես դոկտոր Ստրոնգին հրավիրում եմ ուշք դարձնել մրս. Ստրոնգի ընթացքի վրա։ Հավատացեք, Կոպպերֆիլդ, որ բնությանս հակառակ է այս անախորժ գործին խառնվել, սակայն բոլորս էլ առհասարակ խառն ենք լինում հենց այն գործին, որից կցանկանայինք հեռու մնալ։ Ահա սա էր, սը՛ր, ասելիքս, որ դուք դժվարացաք այն ժամանակ հասկանալ։

Հիշելով այժմ Ուրիասի լիրբ նայվածքը, չգիտեմ ինչու նույն րոպեին նրա կոկորդը հուպ չտվի ու խեղդամահ չարի նրան։

– Երևի թե միտքս պարզ չէի հայտնել, ոչ էլ դուք էիք պարզ խոսել,– շարունակեց նա։– Երկուսս էլ հարկավ խորշում էինք այդ նյութից։ Ինչևիցե՝ ես վճռեցի վերջ ի վերջո բացահայտ խոսել ու հայտնեցի դոկտոր Ստրոնգին... ի՞նչ ասացիք, սը՛ր։

Այդ ուղղված էր դոկտորին, որ սրտի խորքից հառաչել էր։ Ուրիասն ամենևին չհուզվեց այդ ձայնից ու շարունակեց։

– Հայտնեցի դոկտոր Ստրոնգին, թե ամեն մարդ կարող է տեսնել, որ մր. Մելդրընը և դոկտոր Ստրոնգի չքնաղ ամուսինը շատ քաղցր են վարվում իրար հետ։ Իրոք, ժամանակը հասել է դոկտոր Ստրոնգին հայտնելու, թե այդ հանգամանքը դեռ մր. Մելդրընի Հնդկաստան գնալուց առաջ ամենքին էլ արևի պես ակներև էր. թե այդ էր իսկապես մր. Մելդրընի շուտաթույթ վերադառնալու պատճառը, ինչպես և դոկտորի տանից միշտ անբաժան գտնվելու շարժառիթը։ Ձեր գալուց փոքր-ինչ առաջ, խնդրել էի, սը՛ր, ընկրոջս (դիմելով մր. Ուիկֆիլդին) դոկտոր Ստրոնգի ներկայությամբ ազնվաբար հաստատել,– մինչ բոլորս խառն ենք այս գործին,– թե արդյոք ինքն էլ վաղուց ի վեր միևնույն կարծիքը չի՞ ունեցել։ Դե, մր. Կոպպերֆիլդ, հաճեցեք խոսել։ Այո՞, թե ոչ։ Դե, ընկեր։

– Աստծու սիրուն, ազնիվ դոկտոր,– ասաց մր. Ուիկֆիլդը, նորից իր աջը զգուշությամբ դոկտորի թևին դնելով,– կարևորություն մի՛ տաք իմ կասկածներին։

– Ա՛,– գոչեց Ուրիասը, գլուխը սաստիկ շարժելով։– Ինչպիսի տխուր հաստատություն, այն էլ ումի՞ց, իմ վաղեմի ընկերոջից։ Ապրի նա։ Սակայն, Կոպպերֆիլդ, ես դեռ մի հասարակ գրագիր էի, երբ նա զայրանում էր մր. Մելդրնի միայն անունը լսելուց։ Եվ այդ զայրույթը ոչ թե մի անգամ, այլ քսան անգամ ես տեսել եմ։ Եվ ո՞վ կարող է դրա համար կշտամբել նրան. հարկավ ոչ ես։ Որպես հայր, ընկերս լիովին իրավունք ուներ երկյուղ կրելու և փափագելու, որ միս Ագնեսը այդ գործին խառը չլինի։

– Սիրելի իմ Ստրոնգ,– ասաց մր. Ուիկֆիլդը դողդոջ ձայնով,– ազնիվ բարեկամս, դուք գիտեք իմ թերությունը. ձեզ հայտնի է, որ ես սովոր եմ յուրաքանչյուր մարդու մեջ միայն մի տիրող շարժառիթ տեսնել և նրա բոլոր գործերը մի նեղ սկզբունքով դատել։ Անշուշտ այս թերությունս էր, որ ինձ դրդեց անհիմն կասկածներ ունենալ։

– Ուրեմն կասկածներ ունեի՞ք, Ուիկֆիլդ,– ասաց դոկտորն՝ առանց գլուխը բարձրացնելու։– Դուք է՞լ կասկածներ ունեք։

– Խոսեցեք, ընկեր,– ասաց Ուրիասը։

– Այո, մի ժամանակ ունեի,– պատասխանեց մր. Ուիկֆիլդը։– Բայց... թող աստված ինձ ների... դուք էլ, կարծեմ, ունեիք։

– Ո՛չ, ո՛չ, ո՛չ, երբեք,– գոչեց դոկտորն ամենաջերմ եռանդով։

– Մի ժամանակ կարծում էի,– ասաց մր. Ուիկֆիլդը,– թե դուք կամենում եք մի ցանկալի բաժանում առաջ բերելու նպատակով տարաշխարհ ուղարկել Մելդրնին։

– Ո՛չ, ո՛չ, ո՛չ,– կրկնեց դոկտորը։– Իմ միակ նպատակն էր՝ Աննիիս հաճոյանալ, նրա մանկության ընկերոջ համար մի լավ պաշտոն ճարելով։ Ուրիշ ոչինչ։

– Ինքս էլ հետո համոզվեցի, որ դա այդպես է,– ասաց մր. Ուիկֆիլդը։– Եվ չէի կարող չհամոզվել, քանի որ դուք ինքներդ ինձ այդպես ասացիք։ Սակայն... աղաչում եմ չմոռանաք՝ ամեն բան շատ նեղ տեսակետից դիտելու ախտս... մի ժամանակ կարծում էի, սիրելի դոկտոր, թե հասակների այդ մեծ տարբերության մեջ...

– Այդ կետից ահա պետք է նայել գործի վրա, չէ՞, մաստր Կոպպերֆիլդ,– նկատեց Ուրիասը մի վիրավորական ու քծնի կարեկցությամբ։

– ... Կարծում էի, թե հասակների այդ տարբերության մեջ մի այդպիսի մանկամարդ ու հրաշագեղ կին, որքան էլ ձեր անձը հարգեր, միայն աշխարհիկ հաշիվներով ամուսնացած կլիներ։ Ես նկատի չէի առել, թե ուրիշ անհամար զգացումներ ու պատճառներ էլ կան, որոնցով կարող էր նրա սիրտն առաջնորդվել։ Աղաչում եմ, չմոռանաք այս, սիրելի դոկտոր։

– Տեսեք, որքան զգույշ ու քնքուշ է,– ասաց Ուրիասը գլուխը շարժելով։

– Միայն մի տեսակետից նրան դիտելով... – ասաց մր. Ուիկֆիլդը,– աղաչում եմ, հին բարեկամ, հոգուս վիճակը լավ հասկացեք... ես կարող էի սխալված լինել. և այժմ ստիպված եմ խոստովնել, քանի որ ուրիշ ելք չկա։

– ... Խոստովանել,– շարունակեց մր. Ուիկֆիլդը, Ուրիասի վրա մի անհույս ակնարկ նետելով,– թե կասկածել եմ լեդիին ու կարծել, թե նա անփույթ է ձեր նկատմամբ ունեցած իր պարտքի մեջ, և այս պատճառով փափագել եմ, որ Ագնեսը տիկնոջ հետ շատ չմտերմանա և չտեսնի այդ բոլորը, ինչ որ տեսնում էի ես ինքս, կամ երևակայում, թե տեսնում եմ իմ կանխակալ մոլորումով։ Այս մասին ես ոչ ոքի բան չեմ ասել. չեմ էլ կամեցել, որ գեթ մեկը բան իմանա։ Եվ, թեպետ ձեզ դառն է լսել,– կրկնեց մր. Ուիկֆիլդը ընկճված սրտով,– այնուամենայնիվ ինձ կարեկից կլինեք, եթե իմանաք, թե որքան եմ տանջվում այս բոլորը պատմելիս։

Դոկտորն իրեն հատուկ բարությամբ աջը մեկնեց նրան։ Մր. Ուիկֆիլդը մի քանի վայրկյան այդ աջն իր ձեռքում բռնեց ու գլուխը խոնարհեց։

– Հարկավ այս նյութը բոլորիս համար էլ շատ անախորժ է,– ասաց Ուրիահը, ծանր լռությունը խզելով։– Բայց, որովհետև բանը բանից անցել է, թույլ տվեք ինձ ավելացնել, որ Կոպպերֆիլդն էլ այդ գիտեր։

Ես շուռ եկա դեպի նա ու հարցրի, թե ինչպես է համարձակվում վկա բերել ինձ։

– Օ՜հ, ձեր վարմունքը շատ գեղեցիկ է, Կոպպերֆիլդ,– պատասխանեց Ուրիահն, օձի նման գալարվելով,– և բոլորին հայտնի է, որ դուք մի սիրալիր մարդ եք. սակայն դուք բանի էությունն իսկույն իմացաք, երբ ես այդ մասին էի ձեզ հետ խոսում անցյալ երեկո, գոնե իմացաք, թե ինչ էր իմ ասելիքը։ Մի՛ ուրանաք, Կոպպերֆիլդ, որ ասելիքս իմացաք։ Դուք շատ բարի նպատակով եք ուրանում, բայց և այնպես մի՛ ուրանաք, Կոպպերֆիլդ։

Ալևոր դոկտորի ազնիվ հայացքը մի վայրկյան աչքիս դիպավ, և ես զգացի, որ իմ անցյալ կասկածների ու հիշատակների խոստովանությունը պարզ գրված է երեսիս վրա։ Ուրանալ կամ զայրանալ ավելորդ էր։ Ես չէի կարող բանն ուղղել։ Ինչ էլ ասեի, չէի կարող ինքս հերքել։

Դարձյալ բոլորս լուռ մնացինք։ Դոկտորը վեր կացավ և երկու-երեք անգամ սենյակի մի ծայրից դեպի մյուսն անցավ. հետո բազկաթոռի մոտ կանգնեց ու դրա թիկունքին հենվելով, իր աչքերը թաշկինակով սրբեց։ Նա իր վիշտը չթաքցրեց, այլ պարզորեն ցույց տվեց, որն ըստ իս նրա սրտի ազնվության ապացույցն էր, և ասաց.

– Ես իրավ մեղադրանքի արժանի եմ։ Հավատացած եմ, որ ես սաստիկ մեղավոր եմ և իրոք պարսավելի։ Ես փորձության ու զրպարտության ենթարկեցի մի անձ, որը սրտիս մեջ իշխում է... նրա մասին նույնիսկ մտքով կասկածելը ես զրպարտություն եմ անվանում... այնինչ նա երբեք զրպարտության նշավակ չէր դառնա եթե ես չլինեի։

Ուրիաս Հիպը քթով շնչեց, երևի թե համակրություն հայտնելու համար։

– Երբեք Աննիիս այդ փորձության և զրպարտության զոհ չէր դառնա,– ասաց դոկտորը,– եթե ես չլինեի։ Ես շատ ծեր եմ, պարոններ, այդ լավ գիտեք, և զգում եմ, այս երեկո մանավանդ, որ էլ երկար չպիտի ապրեմ։ Բայց կյանքովս... այս կյանքովս պատրաստ եմ երաշխավոր լինել այն կնոջ ազնվությանն ու պատվին, որ մեր խոսակցության առարկան էր։

Չեմ կարծում, որ մինչև անգամ ասպետների ամենալավ տիպարների մեջ և կամ նկարիչների պատկերած ամենավեհ դեմքերի շարքում մեկը գտնվեր, որ կարենար այդ խոսքերն ավելի ազդու և սրտաշարժ արժանավորությամբ արտասանել, քան ալևոր դոկտոր Ստրոնգը։

– Չեմ ուրանա,– շարունակեց դոկտորը,– որ գուցե ես ինքս անգիտաբար մի դժբախտ ամուսնության թակարդը ձգեցի այդ նորատի լեդիին։ Ես դիտելու սովոր մարդ չեմ, և հոժար եմ հավատալ, որ ուրիշների միատեսակ դիտողությունը, այն էլ երբ նրանք տարբեր դիրքի ու հասակի մարդիկ են, իմից լավ է։

Շատ անգամ էի հիացել, ինչպես ասել եմ մի ուրիշ տեղ, դոկտորի բարեսեր վարմունքից՝ իր նորատի կնոջ հետ, սակայն այն պատվագիր գորովանքը, որ այժմ ցույց էր տալիս նրա մասին արտասանած յուրաքանչյուր բառի մեջ, և այն ազնիվ վստահությունը, որով կասկածի նշույլն անգամ նրա մաքրության նկատմամբ վանում-քշում էր իր մտքից, ո՛չ միայն հիացման, այլև երկրպագության արժանի էին իմ աչքում։

– Ես ամուսնացա լեդիի հետ,– ասաց դոկտորը,– երբ նա դեռ շատ ջահել էր։ Ես առա նրան, երբ նրա բնավորությունը դեռ կազմված չէր։ Դրա կազմվելուն նպաստելը ինձ համար երջանկություն էր։ Լավ էի ճանաչում նրա հորը, իրեն էլ լավ էի ճանաչում։ Ինչ որ գիտեի, սովորեցրի նրան, և նրա փայլուն ձիրքերը ինձ միշտ զարմացնում էին։ Եթե անարդար վարվեցի թեև անգիտակցաբար, օգուտ քաղելով նրա երախտագիտության զգացումից, հոգով սրտով ներողություն եմ խնդրում լեդիից։

Նա մինչև սենյակի ծայրը գնաց ու նորից առաջվա տեղը ետ գալով՝ բազկաթոռի թիկունքը բռնեց։ Այժմ նրա ձայնն էլ ձեռքերի պես դողում էր։

– Ես կարծում էի, թե նրա ամուսինը դառնալով կյանքի բոլոր վտանգների դեմ կպաշտպանեմ նրան։ Սփոփում էի ինձ այն հույսով, թե որքան էլ մեր հասակը տարբեր լինի, նա ինձ հետ հանգիստ կապրի և իր կյանքից գոհ կլինի։ Այն էլ չէի մոռանում, որ ես մի օր գերեզման կիջնեմ, և նա ազատ կմնա՝ դեռ նորատի ու սիրուն, բայց ավելի հասուն խելքով մի նոր ընտրություն անելու համար... Այո՛, պարոններ, պատիվս վկա, այդ էլ ունեցել եմ աչքիս առջև։

Դոկտորի համեստ դեմքը փայլ առավ այդ հավատարիմ վեհանձնության զգացումից։ Նրա յուրաքանչյուր խոսքի մեջ մի այնպիսի զորություն կար, որին ոչ մի շնորհ չէր կարող հավասարվել։

– Ես շատ երջանիկ էի լեդիի հետ։ Մինչև այս երեկո ես միշտ օրհնել եմ այն օրը, երբ նրա հետ այդպես անիրավ վարվեցի։

Դոկտորի ձայնը, որ այդ խոսքերն ասելիս հետզհետե թուլանում էր, մի քանի վայրկյան կտրվեց։ Այնուհետև շարունակեց.

– Մի անգամ այդ երազից սթափվելով... ամբողջ կյանքումս ես մի թշվառ երազող եմ եղել... այժմ տեսնում եմ, թե նրա համար որքան բնական էր ցավակից լինել իր մանկության ընկերոջը, իր մտերիմ բարեկամին։ Շատ հավանական է, որ նա մի անմեղ ափսոսանքով մտածելիս լինի այն մասին, թե նա ի՞նչ կարող էր դառնալ, եթե ես իր ճանապարհի վրա չպատահեի։ Այս վերջին փորձությանս րոպեին, ինչ որ առաջ էլ տեսել էի, սակայն չէի հասկացել, բայց այսքանը ասելուց հետո հայտնում եմ ձեզ, պարոննե՛ր, որ այսուհետև կասկածանքի մի բառ անգամ չպիտի կապվի ազնիվ լեդիի անվան հետ։

Ալևորի աչքերը վառվել էին, ձայնը նորից ամրացել։ Փոքր-ինչ լուռ մնալուց հետո նա ասաց.

– Այսուհետև ինձ կմնա հլությամբ կրել իմ պատճառած դժնախտության գիտակցությունը։ Մեղադրելու իրավունքը տիկնոջն է, ոչ թե իմը։ Այժմ նվիրական պարտքս է՝ պաշտպանել նրան այն մոլար, այն անողոք կարծիքներից, որոնք մինչև անգամ իմ մտերիմ բարեկամներին վարակել են։ Եվ որքան աշխարհից հեռու ապրենք, այնքան ավելի հեշտ կլինի ինձ այս պարտքը կատարել։ Եվ երբ որ հասնի այն օրը,– և աստված տա՝ շուտ հասնի,– երբ մահս նրան արհեստական կապանքից ազատի, ես անհուն սիրով ու հավատով աչքերս կփակեմ նրա ազնիվ երեսի առջև և անտրտում կթողնեմ նրան ավելի երջանիկ ու զվարթ օրեր վայելել։

Ես այլևս չէի կարողանում դոկտորին նայել. նրա ազնիվ, պարզ, բարի, այրական վարմունքից աչքերս արտասուքով լցվել էին։ Նա արդեն մոտեցել էր դռանը, երբ հարեց.

– Պարոննե՛ր, ես ձեր առջև սիրտս բացեցի։ Հույս ունեմ, որ անկեղծությունս կհարգեք։ Ինչ որ այս գիշեր ասվեց, այլևս երբեք չպիտի կրկնվի։ Ուիկֆիլդ, հին բարեկամ, օգնեցեք ինձ վերև գնալ։

Մր. Ուիկֆիլդն իսկույն նրան մոտեցավ, և նրանք միասին լուռ դուրս եկան սենյակից։ Ուրիասն աչքերով հետևում էր նրանց։

– Հր՛մ, մաստր Կոպպերֆիլդ,– ասաց նա, խոնարհաբար ինձ դիմելով։– Գործն իսկապես այն կերպարանքն ընդունեց, որ սպասելի էր, որովհետև ծերունի գիտնականը ... ի՛նչ պատվական մարդ... խլուրդի պես կույր է, բայց և այնպես կարելի է այդ ընտանիքը մեջտեղից վերացված համարել։

Բավական էր ինձ նրա ձայնը միայն լսել, որ այնպես զայրանայի, ինչպես որ երբեք չեմ զայրացել ո՛չ առաջ, ո՛չ էլ հետո։

– Այ անզգա՛մ,– գոչեցի ես,– ի՞նչ մտքով ես ուզում չարանենգ որոգայթիդ մեջ գցել ինձ։ Ինչպե՞ս ես հանդգնում ստոր խաբեբա, այս րոպեիս ինձ դիմել, իբրև թե ես դավակից եմ քեզ։

Մենք կանգնած էինք դեմ առ դեմ։ Նրա խորամանկ երեսի վրա ցոլացող ներքին հաճույքից պարզ տեսա, ինչ որ արդեն գիտեի, այսինքն, որ նա հատուկ վշտացնելու չար մտքով էր դիմել ինձ և հենց դրա համար էր թակարդ դրել իմ առջև։ Էլ դիմանալու հնար չկար։ Նրա ամբողջ ձախ այտը քարշում էր, և ես այդ այտին այնպիսի շեշտակի ապտակ տվի, որ մատներս կսկծացին, ասես կրակի դիպչելով։

Նա ձեռքս բռնեց, և մենք իրար նայելով այնքան երկար կանգնած մնացինք, որ ես ժամանակ ունեցա տեսնելու, թե ինչպես իմ մատների սպիտակ հետքը նրա այտի վրա հետզհետե մի հրաշեկ գույն ստացավ։

– Կոպպերֆիլդ,– ասաց նա խեղդուկ ձայնով,– գժվե՞լ եք, ինչ է։

– Կորիր դու, շո՛ւն,– գոչեցի ես ու ձեռքս ետ քաշեցի։– Էլ չեմ ուզում ճանաչել քեզ։

– Մի՞թե,– ասաց նա, ցավող այտին դնելով ձեռքը։– Գուցե ստիպված լինեք ճանաչել ինձ։ Ինչո՞ւ եք այդքան ապերախտ։

– Արդեն շատ անգամ ցույց եմ տվել, որ արհամարում եմ քեզ, Ուրիաս Հիպ։ Այժմ ավելի պարզ ցույց տվի այդ։ Մինչև ե՞րբ թույլ տամ, որ ամենքին անպատիժ վնասես։ Արդեն բավական է, որքան չարիք սերմանեցիր։

Նա շատ լավ հասկացավ, թե ինչո՞ւ ես մինչև այժմ ստիպված էի զգուշությամբ վարվել իր հետ։ Գուցե այժմ էլ զգուշանայի թե՛ ապտակ տալուց և թե՛ այդ խոսքերն ասելուց, եթե այն իսկ երեկո, Ագնեսից հավաստիք չստանայի, թե նա երբեք Ուրիասի հետ չի միանա։ Սակայն ի՞նչ փույթ։

Դարձյալ մի երկար լռություն հաջորդեց։ Նրա աչքերն ինձ դիտելիս ավելի այլանդակ գույներով էին ներկվում։

– Կոպպերֆիլդ,– ասաց նա, իր ձեռքն այտից իջեցնելով,– գուցե միշտ հակառակ էիք ինձ։

– Ինչ ուզում ես կարծիր,– ասացի ես, դեռ բարկությամբ ալեկոծված։– Եթե այդ ճշմարիտ չէ, այժմ գոնե արժանի ես, որ ճշմարիտ լինի։

– Այնինչ ես ձեզ միշտ սիրել եմ, Կոպպերֆլիդ։

Ավելորդ համարեցի պատասխանել և ուզում էի գլխարկս վերցնել ու հեռանալ։ Ուրիասը կանգնեց իմ ու դռան միջև։

– Կոպպերֆիլդ,– ասաց նա,– յուրաքանչյուր կռվի մեջ երկու կողմ է հարկավոր։ Դուք մի կողմն եք. ես չեմ ուզում մյուսը լինել։

– Գրողը տանի քեզ։

– Ո՞ւր տանի։ Ո՛չ, սըր, այդպես մի՛ ասեք, որ հետո ինքներդ չփոշմանեք։ Այլ այն ասացեք, թե ինչպե՞ս եք կարողանում իմ առջև այնքան նվաստանալ, այդքա՛ն վրաս չարանալ։ Սակայն ես ձեզ ներում եմ։

– Դու ինձ ներո՛ւմ,– կրկնեցի ես արհամարհող եղանակով։

– Այո, ներում եմ, չեք կարող ինձ արգելել, որ ներեմ,– պատասխանեց Ուրիասը։– Ո՞ւմ մտքով կանցներ, թե կուզենաք վիրավորել ինձ, ինձ, որ միշտ ձեր բարեկամն էի՝ ձեր իսկ կամքին հակառակ։ Սակայն առանց երկու կողմի ոչ մի կռիվ չի լինի. ես կռվելու տրամադիր չեմ. ընդհակառակը, ձեր բարեկամը կմնամ, որքան էլ դուք ընդդիմանաք, որովհետև սիրում եմ ձեզ, Կոպպերֆիլդ։ Այժմ գիտե՞ք, թե ինչ կարող եք սպասել ինձնից։

Գիշերվա ժամին տան մարդկանց չվրդովելու համար ստիպված էինք մեր ձայնը զսպել, և որքան նա հանդարտ էր խոսում, այնքան ես բորբոքվում էի, թեև արդեն բարկությունս անցել էր։ Ես ասացի, թե ուրիշ բան չեմ սպասում նրանից, այլ միայն այն, ինչ միշտ սպասել եմ՝ առանց երբեք սխալվելու, և դուրս եկա, դուռն այնպես Ուրիասի դեմ փակելով, կարծես թե նա

մի ընկույզ լիներ, որ կցանկանայի դռան տակ ջարդել։ Բայց փոքր-ինչ հետո նա էլ դուրս եկավ և ուզում էր իր մոր մոտ գնալ։ Ես դեռ մի հարյուր քայլ չէի անցել, երբ նա իմ հետևից հասավ։

– Գիտեք, Կոպպերֆիլդ,– ասաց նա, իր շուրթերն ականջիս մոտեցնելով, որովհետև ես շուռ չէի գալիս,– դուք մի թյուր դրության մեջ եք գտնվում (զգում էի, որ դա ճշմարիտ է, ուստի և ավելի շատ զայրանում)։ Չեք կարող ասել, թե ձեր արածը մի ազնիվ բան է և ստիպված եք ներողություն ընդունել ինձանից։ Այդ մասին ես ոչ մորս բան կասեմ, ոչ էլ որևէ մարդու։ Ես որոշել եմ ներել ձեզ։ Սակայն չեմ կարող հասկանալ, թե ինչպես սիրտ արիք ձեռք բարձրացնել մեկի դեմ, որին ինքներդ միշտ մի խոնարհ ու չնչին մարդ եք համարել։

Զգում էի, որ ես գրեթե նրա չափ ստոր եմ։ Նա ավելի լավ էր ինձ ճամաչում, քան ես ինքս։ Եթե նա հայտնապես նախատեր ինձ և կամ համարձակ գրգռեր, դա մի տեսակ արդարացում ու թեթևություն կլիներ, բայց նա ավելի վարպետորեն վարվեց. նա ինձ մարմանդ կրակի վրա դրեց, որից ես մինչև առավոտ տանջվեցի։

Առավոտյան, երբ պանդոկից դուրս եկա, եկեղեցու զանգն արդեն հնչում էր, և Ուրիասը իր մոր հետ ման էր գալիս եկեղեցու գավթի մոտ։ Նա բարի լույս ասաց ինձ, հենց իմանաս ոչ մի բան պատահած չլիներ մեր միջև, և ես ստիպվեցի պատասխանել։ Նրա ատամը երևի ցավում էր իմ երեկվա ապտակից։ Այժմ երեսը մետքսե սև թաշկինակով կապված էր և գլխարկը գագաթին տնկված, որ հարկավ չէր կարող նրա պատկերը գեղեցկացնել։ Հետո իմացա, որ առավոտյան Ուրիասը Լոնդոն է գնացած եղել իր ատամը հանել տալու համար։ Պետք է կարծել, որ դա շնատամը կլիներ։

Դոկտորը պատվիրել էր ասել, թե ինքը տկար է, և քանի դեռ հյուրերը իր մոտ են եղել՝ համարյա թե դուրս չի եկել սենյակից։ Մր. Ուիկֆիլդի ու Ագնեսի մեկնելուց արդեն մի շաբաթ անց կլիներ, երբ դոկտորն ու ես մեր սովորական զբաղմունքը նորոգեցինք։ Դրանից մի օր առաջ դոկտորն ինձ մի անկնիք նամակ տվեց, որ կրում էր իր հասցեն։ Մի քանի ջերմ խոսքերով նա ինձ աղաչում էր ոչ մի ժամանակ ակնարկություն չանել այն գիշերվա դեպքի մասին։ Այդ դեպքը ես միայն տատիս էի հայտնել և ուրիշ ոչ ոքի։ Դա այնպիսի առարկա չէր, որի մասին կարելի լիներ Ագնեսի հետ էլ խոսել, այն գիշերվա անցքի մասին նա մի կասկած անգամ չուներ։

Համոզված եմ, որ մրս. Ստրոնգն էլ չէր կասկածում։ Շաբաթներ անցան, մինչև որ նրա դեմքի վրա մի թեթև փոփոխություն նշմարվեց։ Փոփոխությունը շատ դանդաղ էր առաջ գալիս, ինչպես մի ամպ անշփոթ եղանակին։ Սկզբում նա զարմանում էր դոկտորի քնքուշ կարեկցության վրա, որով սկսել էր խոսել իր հետ. այդ զարմանքը ավելի սաստկացավ, երբ դոկտորը փափագ հայտնեց իր տունը բերելու զոքանչին, որպեսզի Աննիի միակերպ կյանքը զվարթանա։ Մինչ դոկտորը ու ես աշխատում էինք, և լեդին սեղանի մոտ նստած էր լինում, ես շատ անգամ տեսնում էի, որ նա հիացումով ու անձկությամբ անքթիթ նայում էր իր մարդուն։ Երբեմն էլ աչքերն արտասուքով լցվում էին, և նա իսկույն հեռանում էր սենյակից։ Վշտի ստվերն օրեցօր նրա գեղեցիկ դեմքի վրա ծանրանալով՝ մթանում էր։ Այժմ մրս. Մարկլհեմը դոկտորի տան բնակիչ էր, բայց նա գիտեր միայն խոսել ու խոսել, և ոչ մի բան չէր նկատում։

Մինչ Աննին, որ մի ժամանակ դոկտորի տան զվարթարար արեգակն էր, քիչ-քիչ փոխվում էր, դոկտորն էլ մյուս կողմից ակներև ծերանում ու թոշնում էր, սակայն նրա բնածին բարությունը, հեզ վարմունքն ու գթասեր հոգատարությունը կնոջ նկատմամբ անդադար աճում էին։ Մի առավոտ, մրս. Ստրոնգի ծննդյան օրը, երբ նա եկել էր մեր գրասենյակի պատուհանի մոտ նստելու (ուր առաջ միշտ համարձակ քայլով էր գալիս, իսկ վերջերս մի տեսակ երկյուղով, որ ինձ շատ սրտաշարժ էր երևում), դոկտորը երկու ձեռքով նրա գլուխը բռնեց, համբուրեց և արագ դուրս վազեց իր հուզմունքը ծածկելու համար։ Կինը անդրիի պես անշարժ մնաց այն տեղում, ուր մարդը նրան թողել էր, հետո գլուխը կախեց, ձեռքերը կցեց ու աղիողորմ լաց եղավ։

Այնուհետև տիկինը, երբեմն ինձ հետ լինելիս, կարծես խոսելու փափագ էր զգում, սակայն երբեք չէր վստահանում գեթ մի բառ արտասանել։ Դոկտորը միշտ որևէ զբոսանք էր հնարում կնոջ համար և նրան խորհուրդ տալիս՝ զանազան զվարճության տեղեր գնալ մոր հետ միասին, և մրս. Մարկլհեմը, որ շատ զբոսասեր էր, կամ լավ է ասել՝ զբոսանքից զատ ոչ մի բանի սեր չունեցող, հոժարությամբ ձայնակցում էր դոկտորին և չէր հագենում նրա առաջարկները գովելուց։ Գալով Աննիին, ուր էլ տանեին գնում էր, բայց վշտահար, տրտում սրտով, կարծես առանց ախորժելու որևէ բանից։

Ես չգիտեի՝ ի՞նչ անեմ. տատս էլ չգիտեր, և հավաստի եմ, որ նա, այս անճարակ դրության մասին մտածելիս առնվազն մի հարյուր մղոն պտույտ արեց իր սենյակում։ Բայց ամենից ավելի զարմանալին այն էր, որ դոկտորի տնային դժբախտության մութ սահմանում գեթ փոքր ի շատե զգալի սփոփանք մտցնողը ուրիշ մարդ չեղավ, բացի մր. Դիկը։

Արդյոք այդ մասին ի՞նչ էր մտածում նա և կամ թե ի՞նչ էր դիտել, չէի կարող բացատրել, ինքն էլ անշուշտ, չէր բացատրի։ Սակայն, ինչպես արդեն ասել եմ ներկա պատմության ընթացքում, մր. Դիկի սերը դեպի դոկտորն անսահման էր և հայտնի է, որ ամեն ճշմարիտ հակումի մեջ դեպի մարդը, նույնիսկ մի ստորին անասունի կողմից, մի նուրբ զգայություն կա, որ ամենավսեմ խելքից ավելի սրատես է։ Մր. Դիկը, եթե կարելի է այսպես ասել, սրտի խելք ուներ, և դրանով էր ճշմարտության ճառագայթը նշմարվում։

Ազատ ժամերին մր. Դիկը նորից սկսեց հպարտ ման գալ դոկտորի հետ նրա փոքրիկ պարտեզի մեջ, ինչպես սովոր էր մի ժամանակ Կենտրբրիի ճեմելիքում անել, և շատ չանցած իր բոլոր ազատ ժամերն այդ զբոսանքին նվիրեց։ Եթե առաջ նա երջանիկ էր, երբ դոկտորը նրան մի բան կարդար երևելի բառարանից, այժմ բոլորովին դժբախտ էր, եթե դոկտորը գիրքը գրպանից չհաներ որևէ բան կարդալու համար։ Երբ դոկտորն ու ես զբաղված էինք լինում սենյակում, մր. Դիկը գալիս էր մրս. Ստրոնգի հետ զբոսնելու, նրա ծաղիկները ջրելու, ածուները մաքրելու։ Հավատացած եմ, որ նա մեկ ժամում տասը բառ էլ չէր ասի՝ բայց և այնպես նրա հանգիստ հոգատարությունն ու հոժարափույթ ուշադրությունը անմիջապես արձագանք էին գտնում կնոջ և մարդու սրտի մեջ. թե՛ մեկն ու թե՛ մյուսը զգում էին, որ սիրում են նրան ու նրանից սիրված են։ Այս կերպով էր, որ նա կարողացավ,– ինչ որ նրանից զատ դեռ ոչ ոքի չէր հաջողվել գլուխ բերել,– միության կապ հանդիսանալ երկուսի միջև։

Երբ մտածում եմ նրա մասին և մտաբերում նրա լուրջ երեսը, դոկտորի հետ ետ ու առաջ ման գալը, բառարանի ամեն մի խրթին բառից հրճվելը, երբ հիշում եմ, թե ինչպես էր իր ահագին ջրի ցնցուղն Աննիի հետևից տանում և անսպառ համբերությամբ բույսերը մաքրելու չոքում, իր ամեն մի արարքի մեջ լեդիին հաճոյանալու քնքուշ փափագ ցույց տալով,– և ոչ մի փիլիսոփայի չէր հաջողվի,– ցնցուղի ամեն մի ծակից համակրություն, հավատարմություն, անձնվեր գութ ծորելով, երբ միտքս է գալիս, որ նա, իր բարեկամների ներքին վշտով համակված, այլևս զգաստության ճանապարհից չէր շեղվում։ Թշվառ Կառլոս Առաջնին այլևս իր հետ չէր բերում, ծառայելու սուրբ պարտքից ոչ մի անգամ չէր թերանում, ոչ մի անգամ չէր մտածում, թե դոկտորի տանը մի թյուր բան կա, որ անհրաժեշտ է ուղղել,– այդ բոլորը հիշելիս ես իրավ ամաչում եմ, որ երբեմն մր. Դիկին հիվանդամիտ եմ համարել,– ես, որ նույնիսկ առողջ մտքովս տեղիք չունեի պարծենալու նրա առջև։

– Ինձնից զատ ոչ ոք չգիտի, թե այդ մարդն ի՞նչ արժի, Տրոտ,– հպարտությամբ ասում էր տատս, երբ խոսք էր բացվում նրա մասին։– Կտեսնես, թե նա ինչպես մի օր երևելի կդառնա։

Այս գլուխը կնքելուց առաջ հարկավոր է մի ուրիշ հանգամանք հիշատակել։ Քանի որ հյուրերը դեռ դոկտորի տանն էին, նկատել էի, որ թղթաբերն ամեն առավոտ երկու-երեք նամակ է բերում Ուրիաս Հիպին, որ արձակուրդից օգուտ քաղելով, նմանապես Հայգեթում էր մնում։ Նամակների հասցեն միշտ գրված էր մր. Միկաբրի հատուկ ձեռքով, որի գրությունն այս անգամ պաշտոնական բոլորակ ձև էր ընդունել։ Այդ թեթև նշաններից ես սկսել էի

ուրախությամբ եզրակացնել, թե մր. Միկաբրը քաջառողջ է ու նրա գործերը հաջող են. ուստի սաստիկ զարմացա, երբ նույն միջոցին ես հետևյալ նամակն ստացա նրա սիրելի ամուսնուց։

«Կենտրբրի երկուշաբթի երեկոյան։

Անշուշտ կզարմանաք, իմ սիրելի մր. Կոպպերֆիլդ, այս նամակը որ ստանաք։ Ավելի կզարմանաք, երբ բովանդակությունը իմանաք։ Դրանից էլ ավելի կզարմանաք, որ ստիպված ձեր առաջ պայման եմ դնում՝ խոր գաղտնիք պահելու այս բոլորը։ Կարիք եմ զգում, որպես մայր ու ամուսին, սրտիս վիշտը հայտնել և, որովհետև մտադիր չեմ օգնություն խնդրել գերդաստանիս անդամներից (որոնք արդեն մր. Միկաբրի զգացումները չեն ուզում հարգել). հետևաբար այժմ ո՞ւմ դիմեմ, եթե ոչ ձեզ, որ իմ նախկին բարեկամն եք և իմ հին վարձվորը։

Հարկավ, ձեզ անհայտ չի լինի, սիրելի մր. Կոպպերֆիլդ, որ իմ և մր. Միկաբրի միջև (որից հավիտյան բաժանվելու չեմ) միշտ փոխադարձ հավատարմության ոգի է տիրել։ Երբեմն, այո, պատահել է, որ նա, իմ խորհուրդը չհարցրած, ստորագրել է որևէ մուրհակ և կամ թե վճարման բուն պայմանաժամն ինձնից թաքցրել։ Այսպիսի մանր դեպքեր, չեմ ուրանում, պատահել են։ Սակայն, ընդհանրապես, մր. Միկաբրը ոչ մի գաղտնիք չի ունեցել ու չի ծածկել իր սիրո առարկայից... ուզում եմ ասել կնոջից... և մեր հանգստյան ժամերին ամբողջ օրվա դեպքերը մեկ առ մեկ ինձ պատմել է։

Կարող եք երևակայել, ով մր. Կոպպերֆիլդ, թե իմ սիրտը ինչ կսկիծ ու դառնություն պիտի զգա, եթե ասեմ, որ մր. Միկաբրը բոլորովին փոխվել է։ Այժմ նա զգուշամիտ է դարձել, գաղտնապահ է։ Նրա կյանքն այժմ մի անքննելի խորհուրդ է դարձել իր ուրախության ու վշտերին հաղորդակից ընկերոջ համար... մի սոսկալի խավարով է պատած այն բոլորը, ինչ որ անում է գրասենյակում առավոտյան ժամից սկսած մինչև արևի մայր մտնելը,– խնդրեմ ասածս մի առասպել չհամարեք։

Սակայն սա դեռ բոլորը չէ։ Այժմ մր. Միկաբրը անժպիտ է, խստասիրտ է, ցասկոտ է։ Նա խորշում է իր ավագ որդուց ու դստրից, չի պարծենում իր երկվորյակներով, սառն է նայում մինչև անգամ այն անմեղ եկվորին, որ նոր է մեր շրջանի անդամ դարձել։ Գալով մեր տան շատ չափավոր պիտույքները հոգալուն, մի չնչին **ֆարթինգ**[70] անգամ դժվարությամբ է ինձ տալիս, այն էլ սաստիկ սպառնալով, թե կգնա ջուրը կընկնի (սրանք իր խոսքերն են)։ Եվ այս բոլորից հետո դեռ համառությամբ հրաժարվում է բացատրել ինձ իր տարօրինակ ընթացքը։

Անտանելի է, ցավալի է այս ամենը, և զգում եմ, որ սիրտս կեղեքվում է, կտրատվում։ Եթե դուք ինձ մի փրկարար խորհուրդ տաք, մի նոր երախտիք կավելացնեք այն բոլորի վրա, որ արդեն արել եք ինձ շատ անգամ։ Իմ տկար ուժերը ձեզ հայտնի են, արդ ասացեք, ի՞նչ կերպ դրանց բանեցնեմ այս երկսայրի դրության մեջ։ Զավակներիս սերը և աշխարհիս չարիքներին դեռ անգիտակ նորեկիս անմեղ ժպիտն ուղարկելով Ձեզ, մնամ սիրելիդ իմ մր. Կոպպերֆիլդ,

Ձեզ անձնվեր, Վշտահար,

Էմմա Միկաբր։»

Դժվար թե իրավունք ունենայի մի ուրիշ խորհուրդ տալ մրս. Միկաբրի պես փորձված կնկան, միայն հորդորել նրան՝ համբերությամբ ու սիրով նորից գրավել մր. Միկաբրի շնորհը (որ վստահ էի թե կանի). բայց և այնպես նրա նամակը շատ մտմտուք պատճառեց ինձ։

Գ. ԳԼՈՒԽ

[70] Պենսի, գրեթե մեկ կոպեկ։

Դարձյալ մի հետադարձ հայացք

Թույլ տվեք ինձ դարձյալ կանգ առնել, կյանքիս մի արժանահիշատակ շրջանի վրա։ Թույլ տվեք մի կողմ քաշվել և անցած օրերի այն ուրվականները դիտել, որոնք ահա իմ ստվերի հետ անցնում են նսեմաշուք թափորով։

Անցնում, գնում են շաբաթներ, ամիսներ, տարիներ և ավելի երկար տարիներ չեն թվում ինձ, քան թե մի ամառվա օր և կամ մի ձմեռվա գիշեր։ Մերթ տեսնում եմ մի ծաղկաղարդ ու ոսկեփայլ մարգագետին, ուր զբոսնում եմ Դորայի հետ, մերթ կանգած ենք մի ամայի դաշտի մեջ, ուր բլուր ու թուփ սպիտակ ձյունով են ծածկված։ Ահա մի վճիտ գետակ։ Կիրակի օր է. ման ենք գալիս նրա ափին։ Գետակը, որ ամառվա արևի շողերի տակ կարկաչահոս խայտում էր, հանկարծակի ձմեռվա քամուց պղտորվելով, փքվում է, սառցով ծածկվում և որոտալից ոստումներով հորդում դեպի ծովը։

Ոչ մի փոփոխություն թռչնանման լեդիների տնակում։ Ճոճանակը վառարանի վրա միատեսակ շաչում է և ծանրաչափը հանգիստ կախված է դահլիճում։ Ոչ ճոճանակն է իր պաշտոնը միշտ կատարում, ոչ ծանրաչափը. բայց մենք անպայման հավատում ենք, թե՛ մեկի և թե՛ մյուսի ցուցմունքին։

Ահա արդեն չափահաս եմ օրենքով. քսանմեկ տարեկան եմ։ Ժամանակը, սակայն, ամենքին էլ այդ պատիվը պարգևում է։ Լավ է՝ տեսնեմ ի՞նչ եմ արել այդ միջոցին։

Լիովին նվաճել եմ սղագրության վայրենի արվեստը, և այժմ դա ինձ շոշափելի արդյունք է տալիս։ Դրա բոլոր ճյուղերի մեջ հռչակ եմ վայելում և մեկն եմ այն տասներկու սղագիրներից, որոնք Պառլամենտի պայքարներն արձանագրելով, լուր են տալիս առավոտյան թերթերին։ Ամեն երեկո գրի եմ առնում հազար տեսակ գուշակություններ, որոնք երբեք չեն կատարվում. դավանություններ, որոնց ոչ ոքի չի հավատում, մեկնություններ, որոնց նպատակն է միայն թոզ փչել մարդկանց աչքին։ Ես բառերի մեջ լողում եմ։ Բրիտանիան, այս թշվառ կույսը, միշտ աչքիս առջև է՝ խորովելու թռչնի նման երկաթե գրիչներով շամփրված և թևերն ու ոտիկները կարմիր լարելով կապված։ Քաղաքական Բեմի կուլիսներին այնքան մոտ եմ, որ քաղաքական կյանքի բուն արժեքը շատ լավ եմ ճանաչում։ Այդ բանում ես անհավատ եմ և երբեք դարձի չպիտի գամ։

Իմ հին բարեկամ Տրեդլսն էլ փորձել է այդ արվեստում իր ձեռքը վարժեցնել, բայց դա նրա գործը չէ։ Նա իր անհաջող ջանքերը զվարթ սրտով ծաղրում է և ասում, թե ինքը միշտ բթամիտ է եղել։ Նա էլ երբեմն լուրեր է տալիս մեր լրագրին, որոնք, սակայն, տպվելուց առաջ մշակվում են ու կոկվում մի ավելի հմուտ մարդու ձեռքով։ Նա արդեն փաստաբան է և իր տոկուն, իր անձնուրաց աշխատությամբ ձեռք է բերել մի երկրորդ հարյուր ստեռլինգ, որ վճարել է, իբրև գրավական, մի նշանավոր իրավաբանի գրասենյակին։ Պաշտոնապես այդ գրասենյակը մտնելու օրը նա մի փառավոր խնջույք տվեց, ուր Տեմպլի ծառայողները տաք պորտվեյնով հյուրասիրվեցին ու քեֆ արին։

Ես մի ուրիշ ասպարեզի վրա էլ եմ ոտք դրել։ Ահ ու դողով ձեռնարկել եմ մի բան հեղինակելուն։ Առաջին փորձս մի թաքուն գրված փոքրիկ բան էր, որ ուղարկել էի մի հանդեսի. դրա մեջ էլ լույս տեսավ։ Այնուհետև համարձակվեցի ուրիշ մանր բաներ էլ գրել։ Այժմ ինձ կանոնավոր փող են վճարում դրանց համար։ Առհասարակ գործերը հաջող են, և երբ սկսում եմ տարեկան եկամուտս ձախ ձեռքիս մատների վրա գումարել, արդեն երրորդից անցնում եմ ու չորրորդ մատիս երկրորդ հոդի վրա կանգ առնում. երեք հարյուր հիսուն ստեռլինգ. քիչ բան չէ։

Բուկինհեմի փողոցից մենք անցել ենք մի ուրիշ սիրուն տուն, ոչ հեռու այն տնակից, որ մի ժամանակ հիացրել էր մեզ։ Սակայն տատս (որ իր Դուվրի տունը ձեռնտու գնով վաճառել է)

չի ուզում ինձ մոտ մնալ ու մտադիր է մի ավելի համեստ տնակի մեջ հաստատվել՝ մեր բնակածի մոտերքում: Ի՞նչ է նշանակում այս բոլորը: Իմ ամուսնությո՞ւնը: Այո՛:

Այո՛: Ես պսակվելու եմ Դորայի հետ: Միս Լավինյան ու միս Կլարիսան վերջապես հոժարություն տվին, և արժի տեսնել, թե ինչպես են այս րոպեիս ոստոստում: Միս Լավինյան, անձամբ վերահսկելով նշանածիս օժիտի գործը, գորշ թղթից զանազան ձևեր է կտրտում և շարունակ վիճում մի բարետեսիլ երիտասարդի հետ, որ թևի տակ մի ահագին կապոց ու մետրաչափ բռնած՝ ամեն օր նրանց մոտ է գալիս: Մի կին դերձակ, որի կրծքին միշտ թելով ասեղ է ցցված և որ կարծես ուտելիս էլ, խմելիս էլ, քնելիս էլ մատնոցը մատից չի հանում, գիշեր ցերեկ տանն է: Նրանք Դորային մի կատարյալ տիկին են դարձրել. նրան անդադար կանչում են՝ վրան որևէ զգեստ փորձելու համար: Թույլ չեն տալիս, որ գոնե երեկոյան մի հինգ րոպե միասին մնանք. անպատճառ մի անկոչ կին գալիս է և դուռը բախելով ասում. «Միս Դորա, խնդրեմ վերև հրամեցեք»:

Միս Կլարիսան ու տատս ամբողջ Լոնդոնը չափչփում են խանութներում կահ-կարասիք տեսնելու և հետո ինձ էլ տանում Դորայի հետ, որ ընտրենք: Սակայն լավ կանեին, եթե արդեն սկզբից իրենք գնեին՝ առանց մեր հավանությանը դիմելու, որովհետև երբ մեզ առաջարկում են աչքի անցկացնել, օրինակի համար, մի խոհանոցի կրակարան և կամ կերակրի պահարան, Դորան Ջիպի համար մի չինական տնակ է գտնում՝ փոքրիկ զանգակներով, և այդ բանն ամենից ավելի նախամեծար համարում: Եվ որքան ժամանակ պետք եղավ, մինչև որ Ջիպն այդ նոր պալատին ընտելանար. հենց որ փորձում էր ներս մտնել և կամ դուրս գալ, զանգակներն սկսում էին հնչել, և ահից նրա սիրտը համարյա թե ճաքում էր:

Պեգգոտին էլ շտապով գալիս է օգնելու և անմիջապես գործել սկսում: Նրա մասնավոր պաշտոնն է ամեն բան մաքրել, և նա ամեն մի մաքրվելու ընդունակ իր այնքան է սրբում, մաքրում, մինչև որ նրանք անվերջ քերվելուց ու շփվելուց իր ազնիվ ճակատի պես պսպղան: Այդ միջոցին է, որ երբեմն աչքիս է ընկնում նրա միայնակ եղբայրը, որ գիշերվա մթին փողոցների մեջ շրջելով, ամեն մի անցնող կնոջ երեսին նայում է: Այդ ժամերին ես նրա հետ չեմ խոսում: Նրա վշտահար դեմքը տեսնելիս լավ գիտեմ, թե ի՞նչ է որոնում և ի՞նչ բանից վախենում:

Արդյոք ինչո՞ւ այնքան մտածկոտ է Տրեդլսը, որ գալիս է տեսնելու ինձ Դոկտորների Համայնքում, ուր ես դարձյալ շարունակում եմ երբեմն ձևի համար հաճախել, այն էլ ազատ ժամերիս: Երիտասարդական երազներս արդեն սկսել են իրագործվել. ես գնում եմ ամուսնության թույլտվությունն ստանալու:

Այդ փոքրիկ թուղթը երբեք իմ աչքին այնքան կարևորություն չի ունեցել, ինքան որ այժմ: Ահա սեղանիս վրա է դրված, և Տրեդլսը հիացումով ու երկյուղով դիտում է այն: Թղթի մեջ մի ուրույն հին ձևով շաղկապված են Դավիթ Կոպպերֆիլդ ու Դորա Սպլընլո անունները, և անկյունում, մեր միության վրա նայելով՝ դրված է կնիքը դրոշմատուրքի հայրախնամ վարչության, որ այնքան հետամուտ է մարդկային կյանքի բազմապատիկ գործերին: Ահա և Կենտրբրիի արքեպիսկոպոսի տպագրած օրհնությունը, որ նա մեզ անսպասելի էժան գնով շնորհում է:

Բայց և այնպես այդ բոլորը մի շփոթ, մի երջանիկ, մի թռուցիկ երազ է թվում: Հավատալս չի գալիս, որ այդ բոլորն իսկություն է. այնուամենայնիվ հավաստի եմ, որ փողոցում ինձ հանդիպող յուրաքանչյուր անցվոր արդեն գիտի, որ ես մի երկու օրից հետո պսակվելու եմ: Արքեպիսկոպոսի տեղակալը, որի մոտ գնում ենք երդվելու, արդեն գործին տեղյակ է և այնպես մտերմաբար է հետս վարվում, որ կարծես Մասոնական ընկերության անդամակից լինենք: Տրեդլսը բնավ հարկավոր չէ, բայց ներկա է, իբրև իմ վկան:

– Հուսով եմ, սիրելի ընկեր,– ասում եմ նրան,– որ հետևյալ անգամ դո՛ւ այստեղ կգաս երդում տալու, և աստուծով՝ այդ օրը շուտ կհասնի:

– Շնորհակալ եմ ցանկությանդ համար, սիրելի Կոպպերֆիլդ,– պատասխանում է Տրեդլսը։– Ես էլ հույսով եմ։ Ինձ համար մեծ սփոփանք է, որ նշանածս որքան ուզենաս պատրաստ է սպասել։ Ի՛նչ պատվական աղջիկ է...

– Ժամը քանիսի՞ն պիտի հանդիպես նրան իջևանում,– հարցնում եմ Տրեդլսին։

– Ժամը յոթին,– ասում է Տրեդլսը, իր հասարակ արծաթե ժամացույցին նայելով, որի միջից, դեռ մր. Կրիկլի վարժարանում, մի անիվը հանել էր փոքրիկ ջրաղաց շինելու համար։– Այդ ժամին միս Ուիկֆիլդն էլ գալու է։ Չէ՞։

–Փոքր-ինչ ուշ։ Նա ութուկեսին կհասնի։

– Որքան ուրախ եմ, սիրելիս,–ասում էր Տրեդլսը,– որ գործդ այսպես հաջողակ է վերջանում. կարծես թե պսակվողը ես ինքս եմ։ Եվ ես իրոք շնորհակալ եմ, որ Սոֆին միս Ուիկֆիլդի հետ հրավիրված է իբրև հարսնաքույր ներկա լինելու հարսանիքին։ Անչափ շնորհակալ եմ, Կոպպերֆիլդ։

Լսում եմ նրան, ամուր սեղմում եմ նրա աջը, հետո խոսում ենք, զբոսնում ենք ու միասին ճաշելու գնում։ Սակայն չեմ հավատում այդ բոլորին։ Մի՞թե այդ բոլորը երազ չէ։

Որոշված ժամին Սոֆին Դորայի հորաքույրերի տունն է գալիս։ Շատ գրավիչ դեմք ունի։ Չի կարելի ասել, թե գեղեցիկ է։ Նա վերին աստիճանի դուրեկան է, շատ հաճելի, անարվեստ, հրապուրիչ ու համարձակ։ Տրեդլսը պարծենալով ծանոթացնում է մեզ իրար հետ, և երբ ես, նրան մի անկյուն քաշելով, իր ընտրությունն եմ շնորհավորում, նա հրճվանքից իր ձեռքերը շարունակ տասը րոպե իրար է շփում, և նրա գլխի յուրաքանչյուր մազը ցցի նման տնկվում է։

Ես իջեցրի Ագնեսին Կենտրբրիից եկող կառքից ու տարա Պուտնի, ուր այժմ երկրորդ անգամ հիանում են նրա պայծառ, սիրուն դեմքով։ Ագնեսը շատ է հավանում Տրեդլսին, և զվարճալի է նրանց հանդիպումը տեսնել և դիտել, թե Տրեդլսը ինչ ցնծությամբ է ծանոթացնում նրան աշխարհիս ամենալավ աղջկա հետ։

Բայց դարձյալ չեմ հավատում այդ բանին։ Սքանչելի երեկո է, բոլորս լիովին երջանիկ ենք, այնուամենայնիվ, ոչ մի բանի չեմ հավատում։ Անկարող եմ ուշքի գալ, խելքս գլուխս հավաքել, ուրախությանս չափ դնել։ Շշմածի պես եմ. կարծես մի երկու շաբաթ առաջ առավոտյան վաղ զարթնած լինեի և այնուհետև անքուն մնացած։ Չեմ կարող որոշել, թե ե՞րբ է երեկը, և ինձ թվում է, թե ամիսներ կլինեն, որ գրպանումս ման եմ ածում ամուսնության արտոնագիրը։

Հետևյալ օրն էլ, երբ խմբով գնում ենք տունը տեսնելու... մեր տունը... Դորայի և իմ տունը տեսնելու, ամենևին չեմ կարենում դրա տերը համարել ինձ։ Ասես թե մեկ ուրիշի թույլտվությամբ եմ այնտեղ մտել։ Ահա իսկական տանտերը կգա ու կասի, թե ուրախ է տեսնել ինձ։ Եվ ի՛նչ սիրուն է այդ տնակը, ի՛նչ փայլուն են նրա միջի իրերը։ Գորգերի ծաղիկներն ասես թե նոր են բացվել, որմաթղթի կանաչ տերևները նոր արձակվել։ Մարմաշե վարագույրները ձյունի նման սպիտակ են, բազմոցի երեսը վարդագույն։ Ահա և Դորայի պարտեզի գլխարկը կապույտ ժապավենով, որ արդեն մեխից կախված է. մի՞թե կարող եմ երբևէ մոռանալ, որ ճիշտ այդպիսի գլխարկով եմ տեսել նրան առաջին անգամ։ Ահա նրա կիթառն էլ անկյունում ու Ջիպի մեհյանը, որի վրա ամենքը գայթում են, որովհետև մեր փոքրիկ տնակի մեջ անչափ շատ տեղ է բռնում։

Մի ուրիշ երջանիկ երեկո, և դարձյալ առերևույթ, ինչպես և որ բոլոր մյուսները։ Մեկնելուց առաջ կամաց մտնում եմ հայտնի սենյակը. Դորան այնտեղ չէ։ Որտե՞ղ է. մի՞թե նորից զգեստը չափելու է գնացել։ Միս Լավինյան մտիկ է անում դռան հետևից ու խորհրդավոր ձայնով հայտնում, թե Դորան շուտով կգա։ Բայց երկար ժամանակ չի գալիս։ Վերջապես լսում եմ մի խշխշոց. դուռը ծեծում են։

– Ներս մտեք,– ասում եմ ես։

Նորից դուռը ծեծում են: Վեր եմ կենում բանալու և տեսնում երկու վառվռուն հրացայտ աչքեր ու մի կարմրած չքնաղ դեմք: Դորան է, միս Լավինյան պաճնել է նրան վաղվան զգեստով ու զարդերով՝ միմիայն ինձ ցույց տալու համար: Սրտիս սեղմում եմ իմ սիրունիկ կնոջը. միս Լավինյան մի թեթև ճիչ է հանում, որովհետև ես զարդերը փոքր-ինչ ճմռթում եմ, և Դորան ծիծաղում է ու լալիս, ինձ հիացած տեսնելով: Այդ արդեն ամենևին հավատալու բան չէ:

– Ի՞նչ ես կարծում, Դոդի, այս բոլորը վայելո՞ւչ է,– ասում է Դորան:

– Վայելո՞ւչ: Ինչպես կարող է վայելուչ չլինել:

– Եվ վստա՞հ ես, Դոդի, որ դու ինձ շատ ես սիրում:

Այդ հարցման պատասխանը մի այնպիսի վտանգ է սպառնում զարդերին, որ միս Լավինյան հարկ է համարում կրկին մի ճիչ արձակել, խնդրելով ինձ հասկանալ, թե այժմ ներելի է միայն նայել Դորային, իսկ դիպչել՝ ոչ մի դեպքում: Եվ Դորան մի երկու րոպե իմ առջև կանգնած է մնում, իբրև մի հրաշալի երևույթ, և ես սքանչանում եմ նրանով: Հետո հանկարծ գլխարկը հանում է (ի՛նչ սիրուն է առանց դրան) ու փախչում, հետո իր հասարակ հագուստը հագած նորից գալիս թռչկոտելով ու հարցնում Ջիպին, թե Դոդիի կինը գեղեցի՞կ է, թե Ջիպը գո՞հ է, որ իր տիրուհին մարդու է գնում և չոքում է Ջիպի առջև (վերջին անգամ իր կուսության օրով) ու նրան ստիպում խոհարարության գրքի վրա ուղիղ կանգնել:

Հեռանում եմ իմ վարձովի բնակարանը ավելի թերահավատ, քան առաջ, և առավոտյան վաղ վերկենալով Հայգեթ գնում տատիս բերելու:

Ոչ մի ժամանակ այդքան մեծաշուք չեմ տեսել տատիս: Հուսամագույն մետաքսե շքեղ զգեստով և սպիտակ գլխարկով, մի խոսքով փառահեղ է: Նրան պաճնել է Ջենետը, և Ջենետը կանգնած նայում է ինձ: Պեգգոտին պատրաստ է եկեղեցի գնալ, ուր մտաղիր է վերնատնից ականատես լինել հանդեսին: Մր. Դիկը, որ հայրություն պիտի անի Դորային ու սեղանի առջև նրան ինձ տա, մազերը սիրուն գանգրացրել է: Տրեդլսը, որին ժամադիր էի եղել դիլիժանսների իջևանում, աչքս շլացնում է կարմիր ու կապույտ գույներով: Նրա ու մր. Դիկի ձեռնոցները մի-մի հրաշք են:

Անտարակույս այդ բոլորն այդպես է, որովհետև պարզ տեսնում եմ, բայց և այնպես ամեն բան ինձ ցնորք է թվում, և կարծես ոչինչ չեմ տեսնում: Այնուամենայնիվ, երբ բաց կառքով ճանապարհ ենք ընկնում, իմ դյութական հարսանիքն այն աստիճան իրական է հանդիսանում, որ սկսում եմ սրտանց ափսոսալ դրան չմասնակցող թշվառներին, որոնք այդ միջոցին կրպակ ավլելու և կամ թե իրենց առօրյա գործին հետևելու վրա են:

Տատս նստած է իմ կողքին և ձեռս բաց չի թողնում: Երբ դեռ եկեղեցուն չհասած փոքր-ինչ կանգ ենք առնում՝ Պեգգոտիին վայր իջեցնելու, որ կառքի դիմացն էր նստել, տատս ինձ համբուրում է:

– Աստծու օրհնությունը վրադ լինի, Տրոտ: Հարազատ որդուս էլ քեզնից ավելի չէի սիրի: Այս րոպեիս թշվառ մանկան՝ մայրիկիդ եմ հիշում, Տրոտ:

– Ես էլ եմ հիշում, սիրելի տատիկ: Այն բոլորն էլ հիշում եմ, ինչ որ քեզ եմ պարտական:

– Հերիք է, հերիք,– ասում է տատս ու սիրալիր գորովանքով աջը մեկնում Տրեդլսին, Տրեդլսը մր. Դիկին և սա՝ ինձ, ես Տրեդլսին և, ահա եկեղեցու դռանն ենք հասնում:

Եկեղեցին հարկավ շատ հանգիստ է. սակայն ինձ ոչ մի զորություն հանգստացնել չի կարող. իմ հուզումը անչափ է:

Դրանից զատ՝ մնացածը մի անկապ երազ է:

Կարծես երազ է Դորայի ներս բերելը, նրա և իմ սեղանի առջև տարվելը դռնապան կնոջ առաջնորդությամբ, և իմ հարցնելն ինքս ինձ, թե ինչո՞ւ այդքան անճոռնի են այդ դռնապան պառավները: Մի՞թե փոքր ի շատե վայելուչ դեմք, փոքր-ինչ զվարթ երես ունենալն այն

աստիճան վտանգավոր է կրոնական զգացման համար, որ անհրաժեշտ են դատում այդ քացախի անոթները դնել երկինք տանող ճամփու վրա։

Երազ՝ պաստորի երևալը դպիրի հետ. մի քանի նավավարների և ուրիշ մարդկանց ներս մտնելը. ամբողջ եկեղեցին ռոմի հոտով լցնող մի ծեր նավաստու իմ հետևից կանգնելը. ծիսակատարության հանդիսավոր կերպով սկսելն ու բոլորիս աղոթելը երկյուղած սրտով։

Երազ՝ հարսնամեր միս Լավինյայի հեկեկալն ու լալը (երևի թե մր. Պիջրին հիշելուց). միս Կլարիսայի մի սրվակ բռնելը նրա քթի տակ. Ագնեսի փայփայելը Դորային, տատիս անդրդվելի ձևանալու ջանքը, մինչ արտասուքն աչքերից կաթիլ-կաթիլ թափվում է. Դորայիս դողդողալն ու պատասխաններ թոթվելը թույլ ձայնով։

Երազ՝ մեր միասին իրար կողքի չոքելը. Դորայի դողի նվազելը, բայց և շարունակ Ագնեսի ձեռքն ամուր բռնելը. ծիսակատարության ծանր ու հանդարտ շարունակվելը. դրա վերջանալն ու մեր նայելն իրար երեսի արտասվաթոր ու ժպտուն աչքով, նորատի կնոջս հեծեծելը սպասարանում ու լալը՝ խեղճ հայրիկին, իր հայրիկին հիշելով։

Երազ՝ նրա իսկույն զվարթանալն ու բոլորիս ստորագրելը մետրիքական մատյանում. իմ վերև բարձրանալը՝ Պեգգոտիին կանչելու, որ նա էլ գա ստորագրի. նրա փարվելն իմ վզով մի անկյունում ու լալով պատմելը, թե ինչպես էր կատարվել սիրելի մորս պսակը. ամեն բանի վերջանալը և մեր դուրս գալը եկեղեցուց։

Երազ՝ նազելի կնոջս հետ թևանցուկ եկեղեցու դասից հպարտ-հպարտ իջնելս, բազմության, շիրիմների, նստարանների միջով, երգեհոնի և պատուհանների մոտով անցնելս, և այդ բոլորի հետ՝ հիշատակն այն տաճարի, ուր գնում էի մորս հետ իմ մանկության ժամանակ։ Օ՜հ, այդ ե՞րբ էր։

Երազ՝ նայողների շշնջյունը. «Տե՛ս, ինչ սիրուն ջահել զույգ է, ինչ չքնաղ նորահարս է». մեր վերադառնալը կառքով տուն, դեպի ցնծությունն ու բերկրանքը. Սոֆիի պատմությունը, թե որքան սարսափելի էր, երբ քահանան Տրեղլսից իմ ամուսնության արտոնագիրն է պահանջել, որ փոքր-ինչ առաջ նրան էի հանձնել. Սոֆիի կարծիքը, թե կամ Տրեղլսը կորցրած կլիներ այդ թուղթը և կամ գողերը նրա գրպանից թռցրած կլինեին. Ագնեսի զվարթ քրքիջն ու Դորայի սիրահարվելն Ագնեսին, որից չի ուզում բաժանվել և որի ձեռքերը դեռ շարունակ բռնած է։

Երազ՝ մեր հոյակապ նախաճաշը, որին ես էլ հաղորդ եմ՝ առանց բնավ որոշելու, թե ինչ եմ ուտում կամ խմում. իմ լիանալը միայն սիրով. կշտանալը միայն հարսանիքով. իսկ այդ համադամներն ու շշերը – միայն ցնորք, միայն երազ։

Երազ, և իմ ճառը, ինքս էլ չգիտեմ՝ ի՞նչ բանի մասին. բոլորիս երջանկությունն ու զվարճությունը. անգամ և Ջիպի, որ ուտում է հարսանիքի կարկանդակից, բայց հետո չի կարենում լավ մարսել։

Երազ՝ որ փոստի ձիերը պատրաստ են, որ Դորան հեռանում է իր զգեստը փոխելու. որ տատս ու միս Կլարիսան մեզ հետ են մնում. որ մենք զբոսնում ենք պարտեզում և որ տատս, որ սեղանի վրա մի առանձին ճառով գովաբանել էր Դորայի հորաքույրներին, այդ ճառից այժմ գոհ է և մինչև անգամ պարծենում է իր հռետորական հանճարով։

Երազ՝ որ Դորան արդեն պատրաստ է ու միս Լավինյան նրա շուրջն է թռչկոտում ափսոսալով, որ բաժանվելու է իրեն այնքան զվարճացնող տիկնիկից. որ Դորան հանկարծ հիշում է, թե շատ բաներ մոռացել է, և ամեքը վազում են այդ բաները բերելու։

Երազ՝ ասես ծաղիկների ածվի պես բոլորի շրջապատելը Դորային, երբ նա սկսում է մնաս բարով ասել ամեն մեկին. սիրունիկիս գրեթե խեղդվելն այդ ծաղիկների բույլի մեջ, նրա ծիծաղելով ու լալով դուրս պրծնելը և իմ նախանձոտ գիրկն ընկնելը։

Երազ՝ Ջիպի անպատճառ մեզ ուղեկցելու ցանկությունը. երազ՝ իմ առաջարկը ձեռքիս մեջ բռնելու նրան և Դորայի ընդդիմանալն ասելով, թե ինքը կբռնի, որպեսզի շնիկը չկարծի, թե իր

տիրուհին մարդի գնալով նրան սիրելուց դադարել է, և հուսահատ չլինի։ Երազ՝ մեր թև-թևի տված դուրս գալը, Դորայի կանգնելը, ետ նայելն ու լալով ասելը. «Եթե երբևիցե վշտացրել եմ ձեզնից մեկին, աղաչում եմ՝ ներեցեք»։

Երազ՝ նրա մնաս բարևի նշաններ անելը ձեռքով. նորից կանգնելը, ետ նայելը. շտապով Ագնեսի մոտ վազելն ու վերջին անգամ ջերմ համբուրելը Ագնեսին։

Մենք միասին մեկնում ենք, և ահա ես երազից սթափվում եմ։ Այժմ արդեն հավատում եմ, որ այդ ամենը երազ չէ, իսկություն է։ Այո, կողքիս նստածը իմ չքնաղ, իմ անձկալի սիրուն կինս է, որին այնքան սիրում եմ։

– Երջանի՞կ ես այժմ, այ չար տղա,– ասում է Դորան,– և վստա՞հ, որ չես փոշմանել։

Անցած օրերիս ստվերները երազի պես հերթով անցան իմ առջևից։ Այժմ գալիս եմ կյանքիս վեպը շարունակելու։

Դ. ԳԼՈՒԽ
Մեր տնտեսությունը

Տարօրինակ էր իմ դրությունը, երբ մեղրամիսն անցկացավ, հարսընկերները հեռացան, և ես իմ սեփական տնակում մնացի Դորայի հետ՝ արդեն զրկված, այսպես ասած, հարսնախոսելու հիանալի պաշտոնից։

Տարօրինակ էր թվում, որ Դորան միշտ ինձ հետ է, և անբացատրելի, որ նրան տեսնելու համար ստիպված չեմ տանից հեռանալ. որ այլևս նրա պատճառով չեմ տանջվելու, այլևս նրան նամակներ գրելու և նրա հետ միասին մնալու համար՝ հազար ու մի հնար չեմ մտածելու։ Երբեմն, երեկոները, գրիչս վար դնելով նրան հանգիստ նայելիս՝ սկսում էի մտածել. ինչ օտարոտի բան է, որ մենք դեմուդեմ նստած ենք, ասես թե դա շատ հասարակ բան լիներ ... որ ոչ մի մարդ այլևս մեր վիճակով չի հետաքրքրվում... որ մեր հարսնախոսության ռոմանն արդեն պրծել է և մեզ ուրիշ բան չի մնում անել, միայն իրար հաճոյանալ... միայն իրար... մինչև մեր կյանքի վերջը։

Պառլամենտի պայքարներից հետո երբեմն ուշ վերադառնալիս՝ խորթ էր թվում ինձ մտածել, թե Դորան մեր տանը սպասում է ինձ. ինչ զարմանալի բան – տեսնել իմ ընթրելու միջոցին նրա սուսիկ ներս մտնելը՝ հետս փոքր-ինչ խոսելու համար։ Ստուգել, որ նա իր մազերին թիթեռներ է հյուսում, այն էլ ամեն երեկո։ Կարելի՞ էր միթե այդ տեսնել և չհիանալ ու չապշել։

Հազիվ թե աշխարհիս երեսին մի զույգ թռչնիկ գտնվեր, որ տնտեսության արվեստից ավելի սակավ բան հասկանար, քան թե ես ու Դորան։ Հարկավ աղախին ունեինք. մեր տունը նա էր կառավարում։ Մինչև այսօր համոզված եմ, որ նա միս Կրոպպի մի ծպտած շառավիղն էր և գուցե նրա դուստը։ Օ՜հ, որքան ենք չարչարվել այդ Մեյրի Էնի պատճառով։

Նրա ազգանունն էր Պերեգեն[71]։ Երբ մենք նրան վարձեցինք, մեզ ասացին, թե նրա կատարելությունը դեռ շատ թույլ է արտահայտվում այդ անունով։ Նա մի հրովարտակի նման երկար ու մեծ վկայագիր ուներ, որի ասելով նա ամեն տնտեսական բան գիտեր, ամեն բան, ինչ որ կյանքումս լսել էի, և դեռ ուրիշ շատ բաներ, որ իմ օրում չէի լսել։ Նա մի առույգ կինարմատ էր՝ դաժան դեմքով ու վարդագույն բծերով (մանավանդ բազուկների վրա), որոնք միշտ եռ էին գալիս։ Ուներ, ինչպես որ պետք է, մի ազգական հուսար՝ այնպես երկար ոտքերով, որ կարելի էր մի ուրիշ մարդու երեկոյան ստվեր կարծել։ Հուսարի համազգեստը նրա համար այնքան նեղ էր, ինչքան որ մարմինը մեծ՝ մեր տան համար։ Նրա ահագին

[71] Կատարելության տիպար։

ներկայությունից մեր տնակն ավելի փոքր էր երևում. և բացի այդ՝ տան որմերը հաստ չէին, և երբ նա երեկոները մեզ մոտ էր մնում, արդեն սաստիկ դղրդոցից իմանում էինք, որ նա խոհանոցումն է: Ըստ վկայագրի՝ մեր գանձը մի ժուժկալ ու պարկեշտ էակ էր: Հետևաբար հակամետ եմ հավատալու, թե նա ջղերի հարված ստացած կլիներ, երբ մի օր նրան կաթսայի տակ ընկած գտանք, և թե այդ միջոցին անհետացած մեր թեյի գդալները աղբ մաքրող սպասավորը տարած կլիներ:

Սակայն Մեյրի Էնը չարաչար բռնանում էր մեր վրա: Զգում էինք մեր անփորձությունը և անճարակ էինք ինքներս մեզ օգնելու: Մենք նրա ձեռքի գերին էինք, և նա, իբրև մի անգութ կին, ամենևին չէր խնայում մեզ: Նա եղավ մեր առաջին թեթև գժտության պատճառը:

– Հոգյակ իմ,– ասացի ես մի օր Դորային,– ի՞նչ ես կարծում, արդյոք Մեյրի Էնը գաղափար ունի՞ ժամանակի մասին:

– Ի՞նչ կա որ, Դոդի,– հարցրեց Դորան, անմեղ աչքերն իր նկարից բարձրացնելով:

– Արդեն ժամը հինգն է, սիրելիս, այնինչ չորսին պիտի ճաշեինք:

Դորան շտապով ժամացույցին նայեց ու նկատեց, որ սաստիկ առաջ է գնում:

– Ընդհակառակը, մի քանի րոպե ետ է մնում, հոգի ջան,– ասացի ես, իմ ժամացույցին մտիկ տալով:

Չքնաղ կինս ինձ գգվելու համար եկավ ծնկներիս վրա նստեց և մատիտով մի գիծ քաշեց քթիս վրա: Գուցե դա մի սիրուն գիծ էր, բայց չէր կարող կշտացնել ինձ:

– Կարծեմ ավելորդ չէր լինի, սիրելի Դորա, եթե մի նկատողություն անեիր Մեյրի Էնին:

– Օ՜հ, ոչ, Դոդի, չեմ կարող:

– Եվ ինչո՞ւ:

– Էհ, որովհետև ես մի սագի ձագ եմ,– ասաց Դորան,– և նա գիտի, որ սագի ձագ եմ:

Այդ կարծիքը և Մեյրի Էնին մի հանդիմանություն անելու հարկը այնքան իրար հակառակ էին, որ ես հոնքերս կիտեցի:

– Այդ ի՞նչ անշնորհք կնճիռներն են ճակատիդ վրա, այ տղա,– գոչեց Դորան:

Նա ծնկներիս վրա նստեց ու սկսեց մատիտով կնճիռներս ստվերագրել, մատիտը նախ իր վարդագույն շուրթերին դնելով, որպեսզի ավելի սև գծի. և Դորան այս գոծով այնքան լուրջ էր զբաղված, որ ես ակամա ծիծաղեցի:

– Տես ինչպես սիրուն ես ծիծաղելիս,– ասաց նա:

– Սակայն, հոգիս...

– Ո՛չ, ո՛չ, աղաչում եմ,– գոչեց Դորան, համբույր տալով ճակատիս:– Այսպես դաժան մի լինի:

– Բայց, հրեշտակ իմ,– ասացի ես,– հո չի՞ կարելի միշտ ծիծաղել ու կատակել. երբեմն էլ պետք է լուրջ լինել: Եկ, այս աթոռի վրա, իմ կողքին նստիր: Ինձ տուր այդ մատիտը: Այդպես: Դե, այժմ փոքր-ինչ խելոք խոսենք,– շարունակեցի ես, նրա փոքրիկ աջից բռնելով (ի՛նչ փափուկ աջ ու ի՛նչ սիրուն մատանի): – Դու հո գիտես, սիրելիս, որ տանից անոթի հեռանալը ամենևին դուրեկան բան չի: Ի՞նչ ես կարծում, դուրեկա՞ն է:

– Ո՛-ո՛-չ,– ասաց Դորան, թույլ ձայնով:

– Ինչո՞ւ ես այդպես դողում, հոգյակ իմ:

– Որովհետև գիտեմ, Դոդի, դու պիտի կշտամբես ինձ,– գոչեց Դորան խղճալի ձայնով:

– Ես ուզում եմ միայն խորհուրդ տալ քեզ, սիրելիս:

– Օ՜հ, խորհուրդ. դա կշտամբանքներից էլ վատթար է,– աղաղակեց Դորան հուսահատ։– Միթե նրա՞ համար եմ կինդ դարձել, որ ինձ միշտ խորհուրդներ տաս։ Ինչո՞ւ առաջուց չասացիր, այ չար տղա, որ կնոջդ խորհուրդներ պիտի տաս։

Աշխատում էի հանգստացնել Դորային, բայց նա, երեսը դարձնում էր ու մազերը թոթովելով, շարունակ կրկնում. «Այ դու անգութ, չար տղա»։ Էլ չգիտեի՝ ի՞նչ անեմ։ Սկսեցի ման գալ սենյակում, հետո նորից մոտեցա նրան։

– Դորա, սիրելիս։

– Ոչ, ես սիրելիդ չեմ։ Դու արդեն փոշմանել ես, որ պսակվել ես, եթե ոչ խորհուրդներն չէիր տա ինձ։

Այդ հանդիմանությունը այնքան անհիմն երևաց ինձ, որ քաջություն ունեցա ասելու.

– Կատարյալ երեխա ես, Դորա, և ասածդ անմիտ բան է։ Չես մոռացել, որ երեկ ստիպված էի ճաշս չավարտած տանից դուրս գալ. անցյալ օրն էլ հիվանդացել էի հորթի միսը շտապ ուտելուց. իսկ այսօր բոլորովին անճաշ եմ... էլ չասենք՝ որքան սպասեցի նախաճաշին... բայց դարձյալ թեյի ջուրը չէր եփել։ Չեմ ուզում կշտամբել քեզ, սիրելիս, բայց չէ՞ որ այս բոլորը շատ ցանկալի բաներ չեն։

– Այ դու անգութ, չար տղա,– գոչեց Դորան։– Ուրեմն քո ասելով ես վա՞տ կնիկ եմ։

– Լավ գիտես, հոգյակ իմ, որ այդպիսի բան բնավ չեմ ասել։

– Ասացիր, թե ես շատ ցանկալի կին չեմ։

– Ասացի, թե մեր տնտեսության մեջ բաներ կան, որ ցանկալի չեն։

– Մի՞թե այդ միևնույնը չէ,– գոչեց Դորան։

Եվ նա անշուշտ համոզված էր, որ միևնույն է, որովհետև սկսեց սաստիկ լաց լինել։

Դարձյալ մի պտույտ արի սենյակում։ Սիրտս լի էր անհուն սիրով դեպի կինս, և դառնապես մեղադրելով ինքս ինձ, պատրաստ էի գլուխս պատին տալ։ Սակայն նորից նրա մոտ նստեցի ու ասացի.

– Չեմ կշտամբում քեզ, Դորա։ Երկուսս էլ դեռ շատ բան ունենք սովորելու։ Ես ուզում եմ, հոգյակ, միայն ցույց տալ, որ քեզ, անշուշտ, հարկավոր է... այո, անշուշտ (վճռել էի տեղի չտալ այս կետում), փոքր ինչ հսկել Մեյրի Էնի վրա ու փոքր-ինչ աշխատել մեր ընդհանուր օգտի համար։

– Զարմանում եմ այդ ապերախտ ճառերիդ վրա,– ասաց Դորան հեկեկալով։– Դու անցյալ օրը չէ՞ր, որ երբ ասացիր, թե ձուկ ես ուզում, ես ինքս շուկա գնացի՝ քեզ համար անձամբ ձուկ գնելու, որպեսզի քեզ սյուրպրիզ անեմ։

– Եվ շատ լավ արիր, սիրելիս, և ես այնքան շնորհակալ էի, որ մինչև անգամ չասացի, թե գնածդ սոմ ձուկ էր, շատ ահագին բան երկուսիս համար... գինն էլ մի ստեռլինգ ու վեց շիլինգ... շատ զգալի մեր գրպանին։

– Բայց չէ՞ որ կերակրից շատ գոհ մնացիր,– ասաց Դորան, շարունակ լալով,– և այնքան գոհ, որ ինձ մկնիկ անվանեցիր։

– Չեմ ուրանում, աչքիս լույս, և պատրաստեմ հազար անգամ նույնը կրկնել։

Սակայն Դորայիս քնքուշ սիրտը ցավել էր, և չէր կարելի նրան սփոփել։ Նրա լացն այնքան սրտառուչ ու մորմոքիչ էր, որ ես իրոք սկսեցի կարծել, թե նրան անչափ վշտացրել եմ։ Ես շտապեցի հեռանալ տանից և ամբողջ երեկո չարչարվեցի խղճիս խայթից։ Ինձ թվում էր, թե մի սրիկա եմ և ահռելի ոճրագործ։

Արդեն գիշերվա ժամը եկրուսն էր, երբ տուն եկա։ Մեր դահլիճում տատս նստած, ինձ էր սպասում։

– Ի՞նչ է պատահել, տատի ջան,– հարցրի ես տագնապած։

– Ոչինչ, Տրոտ,– պատասխանեց նա հանգիստ ձայնով։– Եկ նստիր։ Մեր ծաղիկն այս երեկո փոքր-ինչ տրտում էր, և ես մնացի, որ ընկերություն անեմ նրան։ Ավելի ոչինչ։

Ձեռքս գլխիս դեմ տվի և աչքերս կրակին հառելով՝ ասում էի ինձ. ո՞վ կկարծեր թե քաղցր հույսերս բավարարելուց դեռ հազիվ մի քանի օր անց՝ այպիսի լքում, այսպիսի վիշտ կտիրի սրտիս։ Տատս անքթիթ նայում էր վրաս։ Նրա դեմքն էլ տխրալի էր, բայց հետո փոքր-ինչ զվարթացավ։

– Հավատացնում եմ քեզ, տատի,– ասացի ես,– որ ամբողջ երեկո անսփոփ եմ եղել, Դորայի վշտին վշտակցելով։ Իմ դիտավորությունն ուրիշ բան չէր. միայն սիրով ու մտերմաբար մեր տնային գործերի մասին խոսել նրա հետ։

– Քեզ պետք է, Տրոտ, համբերող լինել,– ասաց տատս։

– Հարկավ։ Երկինքը վկա է, որ չեմ ոզում անզգույշ լինել, անխոհեմ լինել, սիրելի տատ։

– Ո՛չ, ո՛չ,– ասաց տատս։– Բայց գիտես, որ մեր Ծաղիկը մի շատ քնքուշ ծաղիկ է, և պետք է, որ քամին միայն մեղմ շոշափե նրան։

Ես սրտանց շնորհակալ էի, որ տատս այդքան սիրում է կնոջս, և հավաստի եմ, որ նա զգացումս գուշակեց։

– Ի՞նչ ես կարծում, տատի ջան,– ասացի ես, նորից կրակին նայելով,– լավ չէ՞ր լինի, եթե եբեմն դու Դորային խորհուրդներ տայիր մեր երկուսի օգտի համար։

– Տրոտ,– պատասխանեց տատս փոքր-ինչ հուզված։– Ո՛չ։ Այդպիսի բան չասես ինձ։

Նրա ձայնի լրջությունից ապշելով՝ ես երեսին մտիկ արի։

– Մտաբերում եմ կյանքիս անցած տարիները, որդյակ իմ,– ասաց տատս,– մտածում, որ լավ կլիներ, եթե ես ավելի հաշտ եղած լինեի այն մի քանի անձերի հետ, որոնք արդեն գերեզման են իջել։ Եթե ես խիստ եմ դատել ուրիշների սխալ քայլերն ամուսնական գործերում, պատճառն այն է, որ ինքս անձամբ այդ սխալների վատ հետևանքը փորձել եմ։ Թողնենք այդ։ Ես մի փնթփնթան, ինքնահավան, համառ ու դաժան կին էի երկար ու երկար տարիներ։ Հիմի էլ նույնն եմ, միշտ էլ նույնը կմնամ։ Բայց դու և ես, Տրոտ, իրար բավական լավություն ենք արել. . . գոնե դու ինձ շատ ես արել, սիրելիս, հետևաբար չէի ցանկանա, որ այժմ մեր միջև գժտություն ընկներ։

– Գժտություն մե՞ր միջև,– գոչեցի ես։

– Դեռ մանուկ ես, Տրոտ, այո՛, մանուկ, որդյակ իմ,– ասաց տատս իր զգեստը հարթելով։– Եվ ոչ ոք չի կարող գուշակել, թե ե՞րբ կծագի այդ դժվարությունը և կամ որքան կթշվառացնեմ մեր Ծաղկին, եթե ձեր տնային գործերին խառնվեմ։ Ես փափագում եմ, որ մեր սիրասուն էակն ինձ սիրի ու թիթեռնիկի պես զվարթ լինի։ Հիշիր քո հայրենի տունը մորդ երկրորդ ամուսնության միջոցին, և ոչ կնոջդ, ոչ էլ ինձ մի՛ հասցնի այն զրկանքը, որ մտադիր էիր հասցնել։

Այդ վայրկյանին ես իմացա, թե որքան տատս արդար է և որքան վեհանձն իմ անձկալի կնոջ վերաբերմամբ։

– Դեռ ժամանակդ նոր է սկսվել, սիրելի Տրոտ,– ասաց Տատս։– Հռոմը մի օրում չշինվեց, ոչ էլ մի տարում։ Դու ինքդ ազատ ընտրություն արիր (այստեղ կարծես մի ստվեր անցավ տատիս երեսի վրայով), և ընտրեցիր մի շատ սիրուն, մի շատ ազնիվ արարած, որ քեզ անչափ սիրում է։ Քո պարտքն է և անշուշտ քաղցր պարտքը՝ գնահատել ու հարգել նրան իր ունեցած, այլ ոչ

թե դեռ չունեցած լավ հատկությունների համար։ Ինքդ էլ, սակայն, այս բոլորը գիտես, և ես մտադիր չեմ գլխիդ քարոզներ կարդալ։ Նրան պակասող հատկությունները դու ինքդ պիտի զարգացնես։ Եվ, եթե չկարենաս, որդի (այստեղ տատս քիթը տրորեց), այն ժամանակ պիտի աշխատես առանց դրանց գոհ լինել։ Համենայն դեպս, չմոռանաս, սիրելիս, որ ձեր ապագան միանգամայն ձեզնից է կախված։ Ոչ ոք չի կարող օգնել ձեզ. ձեր կյանքի հորինողը դուք ինքներդ պիտի լինեք։ Ամուսնություն ասածդ դա է, որդյակ։ Եվ թող երկուսիդ էլ աստված օրհնի, երկուսիդ էլ, որ անտառում մոլորված մանկիկների նման եք։

Այս խոսքերը զվարթ-զվարթ ասելուց հետո տատս ինձ համբուրեց և դրանով իր օրհնությունը հաստատեց։

– Դե, Տրոտ, այժմ լապտերս վառիր ու այգու միջով մինչև խցիկս հասցրու ինձ։ (Մեր տնակներն այգու ճամփով միանում էին)։ Եվ երբ որ ետ գաս, համբույր տուր Ծաղկին Բեթսի Տրոտուդի կողմից։ Ինչ էլ պատահի, Տրոտ, մտքովդ անգամ թող չանցնի մի խրտվիլակ անել Բեթսիին, որովհետև առանց այդ էլ, նա բավական սոսկալի է, երբ տեսնում եմ նրան հայելու մեջ։

Այդ ասելիս տատս գլխին մի թաշկինակ կապեց, և ես նրան տուն հասցրի։ Երբ նա իր շեմքի առջև լապտերը վերցրեց ու կանգ առավ իմ վերադարձի ճամփան լուսավորելու, ես նկատեցի, որ վերստին մի անհանգիստ եղանակով է ինձ դիտում. սակայն ես խորասուզված էի իմ սեփական մտքերի մեջ և այդ բանին մի առանձին ուշք չդարձրի։ Մտածում էի այն բոլորի մասին, ինչ որ նա ասել էր, և կյանքումս առաջին անգամ իրոք սկսել էի հասկանալ ու պարզ տեսնել, որ Դորան ու ես պարտավոր ենք մեր ապագան ինքներս ստեղծել, և որ ոչ ոք մեզ չի օգնի, ոչ ոք էլ հոգ չի տանի այդ մասին։

Դորան իր փոքրիկ հողաթափներով կամաց ներքև իջավ ինձ դիմավորելու, երբ ես արդեն մենակ էի, լաց լինելով ուսիս վրա ընկավ ու ասաց, թե ես շատ անգութ էի, իսկ ինքը՝ սաստիկ չարասիրտ. ես էլ, կարծեմ, միևնույնը ասացի։ Դրանով բանը ուղղեցինք ու վճռեցինք, թե մեր առաջին փոքրիկ կռիվը նաև վերջինը կլինի, և թե այլևս երբեք չենք կռվի, անգամ եթե հարյուր տարի ապրելու լինենք։

Այնուհետև մեր պատուհասը սպասուհիներն էին։ Մեյրի Էնի ազգական հուսարը զորքից դասալիք եղավ և եկավ մեր ածխի ամբարում թաքնվելու. այնտեղից, ի զարմանս մեր, իր զինակից ընկերները դուրս հանեցին նրան և մեր պարտեզի միջով ձեռքից կապած անցկացրին... մի այդպիսի խայտառակ հանդես ոչ ոք չէր տեսել։ Այդ դեպքը սիրտ տվեց ինձ դուրս քշելու Մեյրի Էնին, որ ռոճիկն ստանալիս ու գնալիս իր հլությամբ ու հեզությամբ զարմացրեց ինձ. հետո միայն իմացա, թե մեր թեյի գդալներն ուր էին կորել. այն էլ իմացա, որ նա սովոր է եղել, առանց իմ գիտության, իմ անունով մանր զումարներ փոխ առնելու խանութներից։ Նրան մրս. Կիջըրբրին հաջորդեց՝ մի պառավ կին Կենտիշ Տաունից, որը պարտավոր էր ամեն օր մեր տունը գալ, բայց թուլության պատճառով չէր կարենում իր անելիքը կարգին վերջացնել։ Հետո մի ուրիշ գանձ գտանք – մի անչափ սիրելի կին, որ սակայն դժբախտություն ուներ՝ թեյի ափսեն ձեռքին բռնած ներքև իջնելիս՝ միշտ սանդուղքից գլորվելու, և կամ թեյը բերելիս այնպես գլխիվայր ներս վազելու, որ կասեիր թե լողարանի մեջ է նետվում։ Ու այդ թշվառի պատճառած ավերմունքը հարկադրեց մեզ արձակել նրան։ Նրա պաշտոնը հաջորդաբար ժառանգեցին (մրս. Կիջըրբրիի միջանկումներով) անթիվ ապուշ արարածներ, մինչև որ նրանց մի ջահել կայտառ աղջիկ փոխարինեց, որ մի օր Դորայի գլխարկը հագնելով՝ Գրիվինդի տոնավաճառը փախավ։ Հետո էլ այնքան այդպիսի ձախորդություններ կրեցինք, որ նրանց հիշատակն անգամ մտքիցս ընկել է։

Կարծես ամենքը դավադիր էին եղել մեզ խաբելու։ Ո՛ր կրպակն էլ մտնեինք, վաճառականն շտապում էր իր անպետք ապրանքը մեզ վրա սաղացնել։ Ինչ աստակոս էլ գնեինք, փորն անպատճառ ջրով լիքը կլիներ. մսի ո՛ր տեսակն էլ առնեինք, միշտ կարծր դուրս կգար. ինչ տեսակ հաց պատվիրեինք, մեզ հում խմոր կտային։ Ստույգ ու ճիշտ իմանալու համար, թե

ինչպես պետք է միսը խորովել, որ ոչ անչափ այրված լինի, ոչ էլ հում, ես ինքս խոհարարության արվեստի գրքին դիմեցի և այն կանոնն իմացա, թե միսը լավ խորովելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուր ֆունտը մի քառորդ ժամ կրակի վրա բռնել։ Սակայն այդ կանոնի գործադրությունը միշտ որևէ փորձանքի էր հանդիպում, և մեզ երբեք չէր հաջողվում արյունոտի ու մոխրագույնի միջին սահմանը գտնել։

Համոզված եմ, որ այս պարտությունները կրելով, շատ ավելի ծախս էինք անում, քան որ կանեինք, եթե հաղթությունների մի ամբողջ շարք տանեինք։ Նպարավաճառի հաշիվներն աչքի անցկացնելիս ինձ թվում էր, թե մեր տան գետնահարկի ամբողջ հատակը կարագով ենք օծում,– այնքան էր սպառվում այդ նյութից։ Չգիտեմ, թե այդ միջոցին պետության մաքսերի եկամուտը պղպեղի սպառման որևէ աճում ցույց տվե՞ց, միայն թե պետք է ենթադրել, որ եթե մեր տան պահանջը շուկայի վրա մի զգալի ազդեցություն չարավ, ասել է թե շատ ընտանիքներ այդ նյութը գործածելուց բոլորովին ձեռնպահ մնացին։ Եվ սա է ամենից զարմանալին, որ մենք մեր տանը երբեք պաշար չենք ունեցել։

Արդյոք լվացարար կինը քանի՞ անգամ մեր սպիտակեղենի կտորները գրավ դրեց ու հետո հարբած տուն եկավ՝ ներողություն խնդրելու, ավելորդ է ասել, որովհետև այդպիսի դեպքեր ամենքին էլ կարծեմ պատահում են։ Չեմ ուզում հիշատակել, թե քանի՞ անգամ վնաս կրեցինք ծխնելույզի բռնկվելուց ու հրշեջների ներս խուժելուց,– դրանք էլ հասարակ բաներ են։ Հատուկ մեր տան դժբախտությունը մի գինեսեր աղախին էր, որի պատճառով մեզ պորտր վաճառող խանութպանի հաշիվների մեջ անդադար այս տեսակ անմեկնելի հոդվածներ էին առաջ գալիս։ «Քառորդ լիտր ռոմ (մրս. Կ.)։ «Եվս քառորդ ջին[72] ու մեխակ (մրս. Կ.). «Մի բաժակ պունչ ու անանուխ (մրս. Կ.)»։ Փակագծերն ակնարկում էին Դորային, որ ուրիշների կարծիքով, ինչպես հետո իմացանք, այդ բոլոր կազդուրիչները միշտ ինքն է վայելել։

Մեր առաջին տնային խնջույքը Տրեդլսին տրված ճաշն էր։ Ես նրան քաղաքում պատահեցի ու խնդրեցի երեկոյան մեզ մոտ գալ։ Նա խոսք տվեց, և ես Դորային մի տոմսակով իմաց տվի, թե մեր տուն կբերեմ ընկերոջս։ Եղանակը գեղեցիկ էր, և ճանապարհին իմ ընտանեկան երջանկության մասին էինք խոսում։ Տրեդլսը բոլորովին հափշտակված էր այդ նյութով։ Նա ասաց, որ եթե ինքն էլ մեր տան պես մի տնակ ունենա, ու Սոֆին նրան այդ տնակում սպասելիս լինի, իր երջանկությունը կատարյալ կլինի։

Ես չէի ցանկանա մի ավելի սիրուն կնիկ ունենալ, քան թե այն, որ իմ դիմացը՝ սեղան էր նստած, բայց կուզենայի, որ մեր սեղանը փոքր-ինչ ավելի մեծ լիներ։ Չգիտեմ՝ ի՞նչն էր պատճառը, որ չնայելով մեր երկու հոգի լինելուն, սենյակը միշտ անձուկ էր գալիս, թեև այնքան արձակ էր, որ ամեն բան մեջը կորում էր։ Երևի թե պատճառը սա էր, որ ոչ մի իր իր հատուկ տեղը չուներ, բացի Ջիպի մեհյանից, որ միշտ գլխավոր անցքը փակում էր։ Տրեդլսն այդ երեկո այնքան էր սեղմված մեհյանի, Դորայի պատկերակալի և իմ գրասեղանի միջև, որ համարյա թե հնար չէր գտնում իր դանակն ու պատառաքաղը շարժելու. բայց և այնպես իր սովորական բարությամբ, միշտ կրկնում էր. «Օվկիանոսի չափ արձակ է տեղս, Կոպպերֆիլդ։ Հավատա, օվկիանոսի չափ»։

Կուզենայի նույնպես, որ մի անգամ ընդմիշտ Ջիպին արգելեր մեր ճաշի ժամանակ սփռոցի վրա զբոսնել։ Ինձ թվում էր, թե նրա սեղանի վրա երևալն անգամ անվայել բան է, էլ չասենք, թաթիկն աղամանի կամ կարագի մեջ խոթելու վատ սովորությունը։ Հենց իմանաս պարտք էր համարում շարունակ հալածել Տրեդլսին, նրա վրա հաչել, նրա պնակի վրա այնպես համառորեն հարձակվել, որ կասեիր թե միայն ինքն իրավունք ունի ձայն հանելու սեղանի գլխին։

Սակայն գիտենալով, թե որքան Դորան զգայուն է և որքան կվշտանա իր սիրելի Ջիպի դեմ ուղղած նույնիսկ թեթև ակնարկից, ես ոչ մի հանդիմանություն չարի։ Միևնույն պատճառով էլ

[72] Gin – գինօղի։

բան չասացի հատակի վրա դեսուդեն ընկած ամանների մասին. ոչ էլ աղամանների անկարգ դիրքի մասին, որոնք բոլորն էլ սեղանի վրա մի տեղ էին խռնված. ոչ էլ Տրեդլսի դժվար կացության մասին, որ միանգամայն պաշարված էր աղցանի թափառական պնակներով և զանազան բաժակներով ու շշերով։ Բայց երբ որ ոչխարի զիստը բերին, որ ես պիտի մանրեի, ինքս ինձ ակամա հարցրի – ինչի՞ց է արդյոք որ մեր զիստերը միշտ մի տարօրինակ ձև ունեին, և մի՞թե մեր մսավաճառը երդվել է աշխարհիս ամենատգեղ ոչխարները մորթել։ Սակայն այս դիտողությունն էլ սրտիս մեջ թաքցրի։

– Սիրելիս,– ասացի ես Դորային,– այդ պնակում ի՞նչ ունես։

Չհասկացա, թե Դորան ինչո՞ւ էր վրաս նայում, շուրթերն այնպես շարժելով, որ կարծես ուզում էր համբուրել ինձ։

– Ոստրեներ, հոգիս,– պատասխանեց Դորան վարանելով։

– Ի՞նքդ ես մտածել ոստրեներ գնել,– հարցրի ես ցնծությամբ։

– Այո՛, Դոդի։

– Ա՛յ հրաշալի բան,– գոչեցի ես, խորոված մանրելու մեծ դանակը վայր դնելով։– Տրեդլսը, գիտեմ, սաստիկ ոստրե սիրող է։

– Այո, Դոդի։ Այդ պատճառով էլ մի ամբողջ տակառիկ գնեցի։ Խանութպանն ասաց, թե պատվական ոստրեներ են և առաջին տեսակից. բայց ես... հավատա, չգիտեմ, այս ի՞նչ է պատահել դրանց։

Դորան գլուխը շարժեց, և աչքերում արամանդներ ցոլացին։

– Դեռ չե՞ն բացված,– ասացի ես։– Բա՛ց վրայի խեցիները, սիրելիս։

– Ուզում եմ բանալ, բայց որ չեն բացվում... – պատասխանեց Դորան, ամբողջ ուժը գործ դնելով, և հուսահատ վրաս նայեց։

– Գիտե՞ս Կոպպերֆիլդ,– ասաց Տրեդլսը, պնակին զվարթ-զվարթ նայելով,– հիանալի ոստրեներ են... հիանալի, բայց առաջուց պետք էր բանալ, որ...

Հարկավ պետք էր նախ բանալ, բայց մենք տանը ոստրե բանալու դանակ չունեինք, գործածելու եղանակն էլ չգիտեինք։ Այս պատճառով մտիկ էինք անում ոստրեներին և ուտում կապարով համեմված ոչխարի միսը... գոնե դրա այն մասերը, որոնք անչափ հում չէին։ Հավաստի եմ, որ Տրեդլսը պատրաստ էր մեզ դուր գալու համար վայրենի դառնալ և մինչև անգամ ամենահում կտորներն ուտել. բայց ես չէի ուզում, որ նա իր անձը մեր բարեկամության սեղանին զոհի, և մի լավ ապուխտով հյուրասիրեցի նրան։

Չքնաղ կինս որ շատ տրտմել էր, կարծելով թե ես դժգոհ կլինեմ, այն աստիճան ուրախացավ, երբ նկատեց, որ ամենևին դժգոհ չեմ մեր ճաշի թերություններից, և երեկոն զվարթ անցավ։ Տրեդլսն ու ես, գինի վայելելով, խոսակցում էինք իրար հետ, և Դորան, բազկաթոռիս մեջքին հենված, ականջիս շշնջում էր, թե որքան լավ է, որ չարամիտ ու քրթմնջող տղա չեմ։ Այնուհետև նա սկսեց թեյ պատրաստել, գավաթներն ու բաժակներն այնպես ժիր-ժիր շարժելով, որ կարծես դրանք խաղալիքներ լինեին. նրա եռանդի վրա հիանալուց՝ մինչև անգամ չիմացա, թե ի՞նչ համ ուներ նրա թեյը։ Փոքր-ինչ հետո Տրեդլսն ու ես **կրիբբեջ**[73] խաղացինք, իսկ Դորան կիթառի վրա նվագեց ու երգեց։ Ամուսնական կյանքը մի հեշտալի երազ էր թվում ինձ և կարծում էի, թե այն երեկոն եմ դեռ վայելում, երբ առաջին անգամ ականջ էի դրել Դորայի ձայնին։

Երբ Տրեդլսը հեռացավ, և հետո ես դահլիճ մտա, կինս իր աթոռն իմի մոտ քաշեց ու ասաց.

– Տխուր եմ, Դոդի։ Չէի՞ր ուզի մի բան սովորեցնել ինձ։

---

[73] Թղթախաղի մի տեսակ։

– Դրա համար պետք կլիներ, որ նախ ինքս բան սովորեմ, սիրելիս, որովհետև ես էլ քեզ նման անփորձ եմ։

– Բայց դու կարող ես սովորել, Դոդի. դու հո խելոք ես, շատ խելոք։

– Դատարկ բան է, հոգի ջան։

– Երանի թե,– ասաց կինս մի քանի վայրկյան լռելուց հետո,– գոնե մի տարի Ագնեսի հետ գավառում ապրած լինեի։

Այդ ասելիս նա իր կզակը ուսիս վրա դրված ձեռքերին դեմ տվեց և կապույտ աչքերով երեսիս նայեց։

– Ինչո՞ւ ես ափսոսում, որ նրա հետ չես ապրել,– հարցրի ես։

– Ագնեսն անպատճառ կուղղեր ինձ, և ես շատ բան կուսանեի նրանից,– ասաց Դորան։

– Ամեն բանի ժամանակը կգա, սիրելիս։ Գիտես, որ Ագնեսը երկար տարիներից ի վեր պարտավոր էր իր հորը խնամել։ Նա մանկության ժամանակ էլ նույն Ագնեսն էր, ինչ որ այսօր է։

– Կցանկանայի, Դոդի, որ դու ինձ մի ուրիշ անուն տայիր,– ասաց Դորան առանց իր դիրքը փոխելու։

– Օրինակի համար,– հարցրի ես։

– Մի հիմար անուն,– ասաց Դորան, գանգուրները թոթվելով։– Երեխա-կին։

Ես ծիծաղեցի ու հարցրի երեխա-կնոջս, թե ինչո՞ւ է ուզում, որ իրեն այդպես անվանեմ։ Նա դարձյալ անշարժ մնաց. միայն թե կապույտ աչքերն ավելի երեսիս մոտեցան, որովհետև ես նրա իրանը գրկեցի։

– Այ անմիտ տղա,– ասաց նա,– հո չեմ ուզում, որ Դորայի տեղ այդ անունը գործածես։ Ուզում եմ միայն, որ իմ մասին այդպես մտածես։ Եթե պատահի, որ իմ վրա բարկանաս, մտքումդ ասա. «Էհ, սա հո իմ երեխա-կինն է»։ Եթե ես տխրեմ, ասա. «Էհ, հո վաղուց գիտեի, թե ի՞նչ պիտի սպասեմ իմ երեխա-կնոջից»։ Երբ տեսնես, որ ես այն չեմ, ինչ որ սաստիկ կուզեի լինել, բայց կարծեմ երբեք լինելու չեմ, դարձյալ ասա. «Ի՞նչ փույթ. չէ՞ որ երեխա-կինս, այնուամենայնիվ, ինձ սիրում է», որովհետև ես քեզ իրոք սիրում եմ, Դոդի։

Ես նրան լուրջ պատասխան չտվի. որովհետև չգիտեի, թե արդյոք ինքը լո՞ւրջ է խոսում։ Սակայն իմ անկեղծ խոսքերից նա իրեն այնքան երջանիկ զգաց, թեև աչքերը դեռ տամուկ էին արտասուքից։ Շուտով նա ցույց տվեց, որ իրավ երեխա-կին է, երբ չինական տնակի առջև չոքելով դրա բոլոր զանգակները հնչեցրեց չար Ջիպին պատժելու համար. մինչդեռ Ջիպը, իր պալատի շեմքի վրա անհոգ պառկած՝ աչքերը հազից քթթում էր և անգամ տեղից շարժվելն ավելորդ համարում։

Դորայի դիմումը ինձ վրա սաստիկ տպավորություն թողեց։ Թող նրա անմեղ պատկերը, որ այնքան սիրել եմ, անցյալի մշուշից դուրս գա, իր աննման աչքերով դարձյալ ինձ նայի, և ես համարձակ կասեմ, որ նրա փոքրիկ ճառը միշտ սրտիս մեջ ապրել է։ Գուցե նրա ճառից ես այն օգուտը չքաղեցի, որ կարելի էր քաղել, որովհետև ջահել էի, անփորձ էի, բայց և այնպես նրա պարզ ու աննենգ աղերսի առջև ես երբեք խուլ չեմ մնացել։

Այդ դեպքից փոքր-ինչ հետո Դորան ասաց, թե ուզում է մի օրինական տնտեսուհի դառնալ։ Այս որոշումով նա իր քարետախտակը մաքրեց, մատիտը սրեց, մի ահագին հաշվետետր գնեց, խոհարարության գրքի այն թերթերը, որ Ջիպը դուրս էր քաշել, խնամքով կարեց ու սկսեց սարսափելի ճիգ թափել, իր ասելով՝ լավ կին դառնալու համար։ Սակայն անպիտան թվանշանները չէին դադարում իրենց հին խաղը խաղալուց, չէին ուզում բարդվել։ Նոր էին հաշվեգրի երկու-երեք սյուները մանրակրկիտ թվանշաններով լցվել, երբ Ջիպը եկավ էջերի

վրա զբոսնելու և իր պոչով ամեն բան ջնջեց. Դորան էլ իր սիրուն մատը մինչև ոսկորը թանաքոտեց և, կարծեմ, այդ եղավ գործի արդյունքը։

Երբեմն, երեկոյան, երբ տուն գալով սկսում էի գրել (այժմ ես շատ էի գրում և արդեն սկսել էի հեղինակի հռչակ հանել), սիրելի էր ինձ վայր դնել գրիչս ու դիտել, թե ի՞նչ է անում լավ կին դառնալու հետամուտ երեխա-կինս։ Նախ և առաջ նա իր ահագին հաշվետետրն էր բերում և հառաչելով սեղանի վրա դնում։ Հետո բաց էր անում այն երեսը, որ անցյալ անգամ Ջիպը ջնջել էր, և նրան կանչելով ասում. «Տես անպիտան, ինչ ես արել»։ Դա նշան էր, թե տիրուհին քթին թանաք կքսի։ Այնուհետև նրան հրամայում էր իսկույն նեթ սեղանի վրա պառկել «առյուծի նման» (այդ Ջիպի ցույց տված հնարներից մեկն էր, թեև ճիշտն ասեմ, շատ նման չէր դուրս գալիս), և Ջիպը հնազանդվում էր, եթե միայն հնազանդվելու տրամադրություն ունենար։ Այնուհետև Դորան մի գրիչ էր առնում, սկսում էր գրել ու տեսնում, որ գրչի ծայրին մի մազ կա։ Հետո մի ուրիշ գրիչ էր վերցնում, սկսում էր նորից գրել ու կամաց ասում. «Օ՜հ, ինչ ճռճռան գրիչ է. սա քեզ կխանգարի, Դոդի»։ Դրանով էլ պարապմունքը վերջանում էր, և Դորան առյուծի գլուխը հաշվեգրով ջախջախելու սպառնական շարժում անելուց հետո, գիրքը տանում էր ու տեղը դնում։

Երբեմն էլ նա շատ լուրջ տրամադրությամբ բերում էր քարետախտակը և փոքրիկ զամբյուղը՝ իր զանազան հաշիվներով ու փասթաթղթերով, որոնք ավելի **պապիյյոտների**[74] նման էին, քան թե մի ուրիշ բանի, և ճիգ էր թափում մի գումար հանել նրանից։ Մեկը մյուսի հետ ուշի-ուշով համեմատում էր, քարետախտակը թվերով ծածկում, գրածը ջնջում, ձախ ձեռքի մատների վրա մի առ մի հաշվում և, վերջապես, այնքան տանջվում ու վհատվում, որ ես նրա սիրուն դեմքը մթանալը – այն էլ ինձ դուր գալու համար – տեսնելով, սրտագին կարեկցությամբ մոտենում էի նրան ու ասում.

– Այդ ի՞նչ է, Դորա։

Դորան հուսահատ աչքով նայում էր վրաս ու պատախան տալիս.

– Հոգիս հանեցին այս թվերը։ Գլուխս մաշեցի սրանց վրա, բայց էլի իմ ուզածը դուրս չի գալիս։

– Եկ, ուրեմն, միասին փորձենք։ Ես քեզ կօգնեմ։

Սկսում եմ գործնական մեկնություն տալ. Դորան խորին ուշադրությամբ լսում էր ինձ՝ գուցե մի հինգ րոպեի չափ, հետո սկսում սաստիկ հոգնել ու մազերիս հետ մատներով խաղալ կամ թե շապկիս օձիքը ներքև ծալել՝ աշխատանքը դյուրացնելու համար։ Երբ փորձում էի այդ խաղը մեղմով զսպել և մեկնությունս առաջ տանել, Դորան իսկույն տրտմում էր. ես էլ իսկույն հիշում էի այն բնական զվարթությունը, որի վրա հիացել էի առաջին անգամ նրան տեսնելիս և երեխա-կնոջս վշտացնելուց ամաչելով՝ մատիտը մի կողմ էի դնում ու աղաչում նրան՝ կիթառ ածել, երգ երգել։

Շատ աշխատանք ունեի ես, շատ հոգսեր, բայց բոլորն էլ ինձ համար էի պահում, որպեսզի երեխա-կնոջս նեղություն չտամ։ Այսպես անելս արդյոք լա՞վ էր, չգիտեմ. համենայն դեպս իմ ցանկությունն էր նրա համար աշխատել։ Սիրտս քննում եմ և բոլոր գաղտնիքս այս թերթերին վստահում։ Ասես թե ինձ մի բան էր պակասում, մի ինչ-որ բանի կարոտ էի, սակայն ոչ այնքան, որ դրա պատճառով դառնություն զգայի։ Երբ որ լավ եղանակին ես մենակ ման էի գալիս և ամառային օրերը հիշում, որ կարծես ամբողջ օդն իմ տղայական ցնորքներով լցված էր, զգում էի, որ երազներիս մի մասը անկատար է մնացել, բայց և ասում էի ինքս ինձ, թե այդ բոլորը անցյալի փառքն է, որ չի կարող ներկայի վրա տարածվել։ Երբեմն էլ անցողակի մտածում էի, թե լավ կլիներ, որ կինս իմ խորհրդակիցը լիներ, ավելի հաստատ բնավորություն, ավելի զորեղ կամք ունենար, փոքր-ինչ ավելի լրջմիտ լիներ, որ կարենար օգնել ինձ, ուղղել ինձ և այն դատարկությունը լցնել, որ զգում էի սրտիս մեջ, բայց և դարձյալ

[74] Ֆրանսերեն՝ papillote, անգլերեն՝ curl-paper գանգուրներ շինելու թղթիկ, թիթեռնիկ։

ասում էի, թե դա մի գերբնական երջանկություն կլիներ, որ այս աշխարհում ոչ եղել է, ոչ էլ երբեք կլինի։

Տարիքիս նայելով՝ ես մի համբակ ամուսին էի։ Ճանաչում է միայն այն վշտերի և կամ փորձերի մեղմիչ ազդեցությունը, որոնք հիշված են ներկա թերթերում։ Եթե ուրեմն, գուցե և շատ անգամ սխալվում էի, դրա պատճառը միայն թյուր հասկացած սերս էր և փորձարությանս թերությունը։ Գրածս զուտ ճշմարտություն է։ Քողարկելու կարիք չունեմ։

Եվ այսպես մեր կյանքի բոլոր հոգսերն ու բեռները միայն իմ վրա էին ծանրացած, և ես օգնական չունեի։ Մեր տնտեսությունը դարձյալ նույն եղանակով էր շարունակվում, այսինքն՝ անկարգ. միայն թե ես այդ վիճակին ընտելացել էի և գոհ էի, որ այժմ Դորան շատ սակավ է նեղանում կամ գրգռվում։ Նա վերստին երեխայի պես զվարթ ու ժիր էր, ջերմ սրտով ինձ սիրում էր և մանկական խաղերով զվարճանում։

Երբ Պառլամենտի պայքարները շատ տաղտկալի էին դառնում (իրենց երկարատևությամբ, ոչ թե բովանդակությամբ, որ գրեթե միշտ ձանձրալի էր), և ես ուշ էի տուն գալիս, Դորան, ոտքերիս ձայնը լսելուն պես, շտապով իջնում էր ինձ դիմավորելու։ Մինչև ես չվերադառնայի, նա չէր քնում։ Երեկոյան ժամերին, սղագրության գործ չունենալիս, որին այնքան տանջանքով ընտելացել էի, սիրում էի գրական աշխատանքի նվիրվել. և այդ միջոցին, որքան էլ ժամն ուշ լիներ, Դորան իմ դեմ սուսիկ նստում էր և այնպես լռիկ մնում, որ շատ անգամ կարծում էի, թե նիրհել է։ Սակայն գլուխս վերցնելուս պես տեսնում էի, որ նրա կապուտակ աչքերն իմ վրա անքթիթ հառված են միևնույն հանգիստ ուշադրությամբ, որի մասին մի անգամ հիշել եմ։

– Օ՜հ, իմ հոգնած տղաս,– ասաց Դորան մի գիշեր, երբ գրասեղանս գոցելիս նրա երեսին մտիկ արի։

– Օ՜հ, իմ հոգնած աղջիկս,– ասացի ես։– Այդ ավելի ճիշտ կլինի։ Մյուս անգամ դու քնելու գնա, սիրելիս։ Քեզ համար այս ժամանակը շատ ուշ է։

– Ո՜չ, ո՜չ, մի՛ հեռացնի ինձ, Դոդի,– աղաչեց Դորան, ինձ սեղմվելով։

– Դորա։

Զարմացա, որ նա լաց է լինում ուսիս վրա։

– Ուրեմն հիվա՞նդ ես, հոգյակ իմ, կամ թե անբա՞խտ։

– Շատ էլ առողջ եմ, շատ էլ երջանիկ,– ասաց Դորան,– միայն աղաչում եմ, թույլ տուր ինձ այստեղ մնալ և գրելուդ նայել։

– Ի՞նչ նայելու տեսարան է այդպիսի սիրուն աչքերի համար, այն էլ կես-գիշերվա ժամերին,– նկատեցի ես։

– Մի՞թե իմ աչքերը սիրուն են, իրա՞վ սիրուն,– գոչեց Դորան ծիծաղելով։– Շատ ուրախ եմ, եթե սիրուն են։

– Այ դու փոքրիկ սնապարծուկ,– ասացի ես։

Սակայն նրա խոսքերը սնապարծության նշան չէին, այլ մի պարզ ուրախության, որ նա զգացել էր իմ հիացումը տեսնելուց։ Ես այս գիտեի, դեռ Դորայի ասելուց առաջ։

– Եթե աչքերս իրավ սիրուն են, թույլ տուր ինձ, Դոդի, այստեղ նստել և գրելուց նայել։ Բայց դու իրա՞վ սիրուն ես գտնում։

– Շատ սիրուն։

– Ուրեմն ես միշտ այստեղ կմնամ և գրելուդ մտիկ կանեմ։

– Սակայն չեմ կարծում, Դորա, որ այդպես մտիկ անելուց աչքերիդ փայլն ավելանա։

– Կավելանա, Դոդի, կավելանա, որովհետև պարոն գիտնական, այն ժամանակ դու ինձ չես մոռանա լուռ խոկումներիդ միջոցին: Եվ գիտե՞ս, Դոդի, ի՞նչ հիմար բան պիտի խնդրեմ... սովորականից ավելի հիմար բան:

– Տեսնենք ի՞նչ է այ հրաշալի բանը:

– Թույլ տուր, որ ես քեզ գրիչներ տամ,– ասաց Դորան:– Չէ՞ որ ինձ էլ պետք է մի բան անել երկար պարապմունքներիդ միջոցին: Թույլ կտա՞ս, որ ես քեզ գրիչներ տամ:

Աչքերս ակամա արտասուքով թրջվում են այն բերկրությունը հիշելիս, որ Դորան հայտնեց, երբ ես այդ ասացի: Հետևյալ անգամ, երբ որ ես բան գրելու նստեցի, Դորան կողքիս նստեց, գրիչների մի մեծ փունջ բռնելով, և նույնը ամեն անգամ կրկնվում էր: Այդ կերպով աշխատանքիս մասնակցելուց նա զվարճանում էր, և երբ ինձ մի նոր գրիչ էր պետք լինում (գիտությամբ էի գրիչները շուտ-շուտ փոխում), նա հրճվում էր: Այդ հանգամանքը տեսնելով, ես երեխա-կնոջս ավելի ուրախացնելու համար մի նոր բան հնարեցի: Երբեմն-երբեմն կեղծում էի, թե իմ ձեռագրից մի երկու երես արտագրելու կարիք ունեմ: Այն ժամանակ Դորան ցնծում էր: Պետք էր տեսնել նրա պատրաստվելն այդ ահագին գործի համար, տեսնել նրա գոգնոցը հագնելը, գրչի ծայրը սրելու համար խոհանոցից լաթեր բերելը, իբր թե այդպես որ չաներ՝ գործը թերի կմնար, ավարտած պատճեն աչքիս առջև բռնելը և իր արածը գովելուս պես բերկրությամբ վզիս փարվելը... Որքան ինձ քաղցր են այդ հիշատակները, թեև չնչին կերևան ուրիշներին:

Փոքր-ինչ հետո Դորան բոլոր բանալիներն իր ձեռքն առավ և նրանց շղթան գոտուն կապած՝ սենյակում ման էր գալիս ահագին շխկոց հանելով: Թեև այդ բանալիներով փակվելու տեղերը համարյա թե միշտ բաց էին մնում, և նրանք մի ուրիշ պաշտոն չունեին, այլ միայն խաղալիք էին Ջիպի համար, այնուամենայնիվ Դորան գոհ էր. այդ հերիք էր, որ ես գոհ լինեի: Նա համոզված էր, որ այդ կարծեցյալ տնտեսությամբ արդեն շատ բան գլուխ է բերված, և ուրախ էր, կարծես թե մեր տունը մի մանկական տնակ լիներ, որ խաղի համար են սարքում:

Այդպես էլ անցնում էր մեր կյանքը: Դորան տատիս էլ գրեթե այնքան էր սիրում, որքան և ինձ, և նրան միշտ այն ժամանակը հիշեցնում, երբ «մի փնթփնթացող, չար պառավ» էր համարել նրան: Տատս երբեք ուրիշների հետ այն աստիճան բարեհամբույր չէր եղել, ինչպես որ այժմ: Նա Ջիպին անգամ շոյում էր, թեև Ջիպն այդ գգվանքից ամենևին չէր մեղմանում. ամեն անգամ ականջ էր դնում Դորայի կիթառ նվագելուն, թեև հիմք ունեմ կարծելու, թե երաժշտության ճաշակ չուներ. երբեք անշնորհք աղախինների վրա չէր հարձակվում, թեև հարձակվելու կարիքն, անշուշտ զգում էր. ամեն օր ոտքով գնում էր հեռավոր տեղեր՝ Դորայի համար մի ցանկալի բան գնելու, և երբ որ պարտեզի միջով մեզ մոտ էր գալիս և Դորային չէր հանդիպում, մենք լսում էինք նրա ձայնը, որ զվարթ հնչում էր.

– Որտե՞ղ է փոքրիկ Ծաղիկը:

Ե. ԳԼՈՒԽ
Մր. Դիկն տատիս գուշակությունը ճշմարտում է

Մի քանի ամիս կլիներ, որ դոկտորին թողել էի: Նրա հարևանը լինելով, շուտ-շուտ էի նրան տեսնում. երկու կամ երեք անգամ էլ բոլորս միասին թեյի կամ ճաշի էինք գնացել նրա մոտ: Հին Ջինվորն ընդմիշտ իր փեսայի հարկի տակ էր հաստատվել: Նա նույնն էր, ինչ որ առաջ, նույն անմահ թիթեռներն էլ նրա գլխանոցի վրա թրթռում էին:

Մրս. Մարկլիեմն, ինչպես և ուրիշ շատ մայրեր, որոնց ճանաչել եմ, իր աղջկանից ավելի էր աշխարհային զվարճություններ սիրում: Նա միշտ զվարճության կարոտ էր, և այդ կարիքը

հագեցնելիս, իբրև մի խորամանկ հին զինվոր աշխատում էր ցույց տալ, թե միայն իր զավակի հաճույնքն է կատարում։ Հետևաբար դոկտորի ցանկությունը՝ Աննիին որքան կարելի է զվարճացնել, միշտ անպայման հավանություն էր գտնում այդ պատվական զոքանչի կողմից։

Հավաստի եմ, որ մրս. Մարկլիեմն անգիտակցաբար էր խեղճ դոկտորի սրտի վերքը գրգռում։ Հարկավ այդ զոքանչն ուրիշ բան նկատի չուներ, բացի միայն իր սնոտի փափգները գոհացնել, որոնցից զուրկ չեն տարեց կանայք. սակայն անդադար դոկտորի հակումը գովելով՝ ջահել կնոջ կյանքը հեշտացնելու մասին, նա ալևորի երկյուղը սաստկացնում էր, այն երկյուղը, թե նրա և Աննիի միջև ոչ մի ներքին համակրություն չկա։

– Սիրելի դոկտոր,– իմ ներկայությամբ ասաց նա մի օր,– ինքներդ գիտեք, որ Աննիի համար միշտ փակված կյանք վարելը փոքր-ինչ ծանր է։

Դոկտորը գլխով բարեմիտ հավանության նշան արեց։

– Երբ որ նա իր մոր տարիքին հասնի. – ասաց մրս. Մարկլիեմն, իր հովհարը շարժելով,– այն ժամանակ բանը կփոխվի։ Ինձ գալով, կուզեք ինձ բանտ նստեցրեք, փույթ չէ, միայն թե մի լավ ընկերություն և **ուիստի** խաղակից ունենայի։ Բայց գիտեք, որ ես Աննին չեմ, Աննին էլ իմ մայրը չէ։

– Իրավ է, իրավ,– ասաց դոկտորը։

– Դուք մի պատվական, հիանալի մարդ եք... Ո՛չ, ներեցեք,– շարունակեց տիկինը, դոկտորի բացասական շարժումները տեսնելով,– ես ուղղալի երեսներիդ կասեմ, ինչ որ միշտ ձեր հետևից ասել եմ. դուք հիանալի մարդ եք. բայց բնական է, որ չեք կարող միևնույն ցանկությունները, միևնույն պետքերն ունենլ, ինչ որ ունի մեր Աննին։ Չէ՞, դոկտոր։

– Իհարկե ոչ,– ասաց դոկտորն տխուր ձայնով։

– Եվ բնական է,– վրա բերեց Հին Զինվորը։– Վերցնենք, օրինակի համար, ձեր բառարանը։ Բառարանից օգտակար բան մի՞թե կա։ Որ աստիճանի անհրաժեշտ բան։ Բառերի իմաստ, նշանակություն։ Եթե դոկտոր Ջոնսընը[75] և նրա նմանները չլինեին, ո՞վ գիտե, այսօր էլ մենք իտալական արդուկի տեղ՝ ավելի կոթ կասեինք։ Սակայն մի՞թե կարելի է մեր Աննիից պահանջել, որ նա բառարանով հետաքրքրվի, այն էլ անավարտ բառարանով։ Ի՞նչ եք կարծում, սիրելի դոկտոր։

Դոկտորը նորից գլուխը շարժեց։

– Եվ ահա ձեր այդ քնքուշ հոգատարությունն է, որ ես այնքան գովում եմ,– ասաց մրս. Մարկլիեմը, իր հովհարը դոկտորի ուսին դիպցնելով։– Դրանով դուք ցույց եք տալիս, որ նման չեք այն բազմաթիվ ծերերին, որոնք կուզենային ալևորված գլուխներ տեսնել պատանեկան ուսերի վրա։ Դուք Աննիի բնավորությունը լավ եք ուսումնասիրել ու հասկացել։ Ահա դա է հիացնում ինձ։

Նույնիսկ համբերատար դոկտոր Ստրոնգի երեսը դժգոհության նշան ցույց տվեց այդ գովասանքների զեղումից։

– Հետևաբար, սիրելի դոկտոր,– ասաց Զինվորը, մի քանի քնքուշ զարկեր տալով ծերունուն,– դուք միշտ կարող եք հրամայել ինձ, տարվա որ եղանակին ու ժամանակին կամենաք։ Արդ, իմացեք, որ ամեն ժամանակ ես ձեր խոնարհ սպասուհին եմ։ Ես պատրաստ եմ Աննիիի հետ օպերա գնալ, նվագահանդես, ցուցահանդես, պարահանդես. ուր էլ կամենաք, և երբեք երեսիս վրա հոգնության նշան չեք տեսնի։ Ինձ համար մայրական պարտքն ամեն բանից վեր է, սիրելի դոկտոր։

Եվ իրավ, Զինվորը իր խոսքին հավատարիմ էր։ Նա այն կարգի էակներից էր, որոնք երբեք չեն հափրանում աշխարհային վայելքներից և համառությամբ հետամուտ են լինում այդ բաներին։

---

[75] Samuel Johnson (1709-1784) – հայտնի գիտնական, որի «Անգլերեն լեզվի բառագիրքը» շատ անվանի է։

Օր չէր անցնի, որ լրագիր կարդալիս (և ամեն օր գոնե երկու ժամ կարդում էր իր փափուկ բազկաթոռի մեջ նստած և ակնոցը ձեռքին բռնած) մի նշանավոր բան չգտներ, որ իր կարծիքով Աննին անպատճառ ուզենար տեսնել։ Ջուր էր Աննին բողոքում, թե արդեն զզվել է այդ բոլորից։ Մայրը միշտ պատասխանում էր.

– Հարկավ դու ավելի լավ գիտես, սիրելի Աննի, սակայն պիտի ասեմ, հոգյակ իմ, որ վատ ես վարձատրում դոկտոր Ստրոնգի բարությունը։

Այդ ասվում էր սովորաբար նույնիսկ դոկտորի ներկայությամբ, և ինձ թվում էր, թե Աննին հատկապես այդ պատճառով է իր բողոքները ետ առնում։ Նա գրեթե միշտ զիջում էր մոր կամքին և գնում՝ ուր էլ տաներ Հին Զինվորը։

Այժմ հազիվ էր պատահում, որ մր. Մելդրնը նրանց ուղեկցեր։ Երբեմն տատս ու Դորան հրավիրվում էին զբոսանքներին մասնակցելու։ Երբեմն էլ միայն Դորան էր հրավեր ստանում։ Կար ժամանակ, երբ ես այդ հրավերներին հավանություն չէի տալիս. սակայն դոկտորի տան գիշերային դեպքից հետո կարծիքներս փոխվել էին։ Ես հավատացած էի, որ դոկտորն արդար է, և այլևս ոչ մի կասկած չունեի։

Տատս այդ մասին մենակ ինձ հետ խոսելիս քիթը տրորում էր ու ասում.

– Խելքին մոտ բան չի սա։ Սրտանց կուզենայի, որ նրանք երջանիկ լինեին. բայց ամենևին չի կարելի սպասել, որ մեր Զինվոր բարեկամը (այսպես էր անվանում Հին Զինվորին) այդ բանի հաջողությանը նպաստի։

Այնուհետև տատս պնդում էր, թե մեր բարեկամ Զինվորի փոքր-ինչ խելքի գալու առաջին նշանը այն կլինի, որ նա գլխանոցի թիթեռնիկները հանի և մի ծխնելույզ մաքրողի ընծայի, իբրև գարնան տոնի նվեր։

Մեծ էր սակայն տատիս վստայությունը մր. Դիկի վրա։

– Այդ մարդու գլխում անշուշտ մի գաղափար կա,– ասում էր տատս,– միայն թե հաջողվեր նրան այդ գաղափարն արտահայտել... դա է էական դժվարությունը։ Այնուհետև նա մի երևելի գործով կհռչակվի։

Այդ գուշակությանն անգիտակ մր. Դիկը շարունակում էր առաջվա դիրքը բռնել դոկտորի և նրա ամուսնու նկատմամբ։ Կարծես թե որոշել էր ոչ առաջ գնալ, ոչ ետ քաշվել։ Այդ դրության մեջ մի հաստահիմն շինվածքի պես հաստատ էր, և ես խոստովանում եմ, որ եթե նրա շարժվելը տեսնեի, նույնչափ կզարմանայի, որչափ մի տան ման գալուց։

Մի երեկո, սակայն, պսակվելուցս փոքր-ինչ հետո, մինչ մենակ նստած գրում էի (Դորան ու տատս թեյի էին գնացել թռչնիկների մոտ), մր. Դիկը գլուխը սենյակիս դռնից ներս խոթեց և ազդարար կերպով հազալուց հետո ասաց.

– Արդյոք չե՞մ խանգարի ձեզ, Տրոտուդ։

– Ամենևին, մր. Դիկ,– ասացի ես։– Խնդրեմ ներս հրամմեցեք։

– Տրոտուդ,– ասաց մր. Դիկը, ողջյունից հետո մատը քթին դնելով,– նստելուց առաջ կցանկանայի մի դիտողություն անել ձեզ։ Ճանաչո՞ւմ եք, ձեր տատին։

– Փոքր-ինչ,– պատասխանեցի ես։

– Նրա պես զարմանալի կին աշխարհիս երեսին չկա՛, սըր։

Այդ կարծիքը գնդակի պես իր միջից դուրս նետելուց հետո, մր. Դիկը նստեց սովորականից ավելի լրջությամբ ու վրաս նայեց։

– Այժմ, որդի,– ասաց նա,– մի բան եմ ուզում հարցնել քեզ։

– Մի բան չէ, որքա՛ն կուզեք։

– Ի՞նչ կարծիք ունեք իմ մասին, սըր,– հարցրեց մր. Դիկը, թևերը կրծ քի վրա խաչելով։

– Այն կարծիքը, որ դուք իմ հին բարեկամն եք։

– Շնորհակալ եմ, Տրոտուդ,– ասաց մր. Դիկը ծիծաղելով և աջս սեղմեց։

– Բայց բանն այդ չէ, ա՛յ տղա,– ասաց նա, նորից լուրջ կերպարանք ընդունելով։– Ոզում եմ իմանալ, թե ի՞նչ կարծիքի ես այս մասին։

Նա իր ճակատը շոշափեց։

Շվարունից չգիտեի՝ ի՞նչ անեմ, բայց նա ինձ մի բառով օգնեց։

– Տկա՞ր,– ասաց մր. Դիկը։

– Այո... գուցե փոքր-ինչ,– պատասխանեցի ես երկբայաբար։

– Ճիշտ այդպես,– գոչեց մր. Դիկը, ասես թր իմ պատասխանից հիացած։– Երբ որ մեկի գլխից ... հո գիտեք, ո՞ւմ գլխից շփոթության մի մասը հանեցին ու դրին... ինքներդ գիտեք, ո՞ւր դրին... այն ժամանակ...

Մր. Դիկն իր ձեռքերը պարզեց, հետո կցեց, հետո նորից արագ շրջեց մի խառնակություն պատկերացնելու համար, և ասաց.

– Ահա տեսա՞ր, ինչ արին ինձ։

Ես գլուխս կախեցի, նա էլ կախեց։

– Կարճ ասած, որդյակ իմ,– ասաց մր. Դիկը, հանկարծ ձայնը մեղմացնելով,– ես ապուշ եմ։

Ուզում էի հերքել նրան ասածը, բայց արգելեց։

– Այո՛, այո՛։ Նա պնդում է, թե ապուշ չեմ, լսել անգամ չի ուզում, բայց ես գիտեմ, որ ապուշ եմ։ Եթե նա բարեկամուհիս չլիներ, սըր, ո՞վ գիտի՝ մինչև այժմ որտեղ փակված կլինեի, թե ինչ թշվառ կյանք կվարեի։ Սակայն, միամիտ եղեք, ես նրան պարտքս կվճարեմ։ Ես արտագրելով վաստակած փողս խնայել եմ. ոչ մի պենի չեմ վատնել։ Այդ գումարը սնդուկի մեջ պահված է։ Կտակս արդեն պատրաստ է, և բոլորը նրան եմ թողնում։ Նա կհասկանա... փառավո՛ր ապրուստ կունենա։

Մր. Դիկը թաշկինակը հանեց ու աչքերը սրբեց։ Հետո մեծ խնամքով ծալեց այն, կամաց սեղմեց ու գրպանը դրեց, կարծես տատիս էլ նրա հետ միասին թաքցնելով։

– Ահա դուք կրթված մարդ եք, Տրոտուդ,– ասաց մր. Դիկը։– Շատ ուսյալ եք և լավ գիտեք, թե դոկտորը որքա՛ն գիտուն, իմաստուն է։ Միշտ տեսնում եք, թե որքա՛ն է ինձ հարգում։ Նա իր գիտությամբ չի հպարտանում, համեստ է, մարդասեր է, կարեկից է մինչև անգամ ապուշ Դիկին, որ ոչ մի բան չգիտի։ Անցյալ օրը ես, նրա անունը մի թերթիկի վրա գրելով, ֆոռանիս հետ դեպի երկինք բաց թողի, ուր արտույտներն են սավառնում։ Ֆոռանս ուրախ էր, որ նրա հետ ճախրում է, և երկինքն էլ ավելի պայծառ էր։

Ես հիացրի մր. Դիկին, սրտանց նրան ասելով, թե դոկտորը մեր խորին ակնածության ու հարգանքի արժանի անձ է։

– Եվ նրա սիրուն կինը մի աստղ է, մի լուսավոր աստղ,– ասաց մր. Դիկը։– Ես տեսել եմ նրա փայլը, սըր։ Բայց... (մր. Դիկն իր աթոռն ինձ մոտեցրեց ու ձեռքը ծնկիս դրեց) ամպեր կան, սըր... ամպե՛ր։

Նրա վարանումը տեսնելով, ես էլ վարանած ձևացա ու գլուխս շարժեցի։

– Ի՞նչ ամպեր են,– հարցրեց մր. Դիկը։

Նա այնպես լարված ուշադրությամբ երեսիս նայեց, որ ես շտապեցի ըստ կարելվույն հանդարտ ու հստակ խոսել, ինչպես որ անում են երեխային բան բացատրելիս։

– Նրանց միջև մի թշվառ պառակտում կա,– ասացի ես,– մի ցավալի բաժանման պատճառ։ Մի գաղտնիք։ Գուցե պատճառը նրանց հասակի տարբերությունն է և կամ թե մի չնչին բան։

Մր. Դիկը, որ յուրաքանչյուր բառիս վրա խորհրդավոր կերպով գլուխը հակում էր, մի որոշ ժամանակ աչքերը դեմքիս հառեց ու ձեռքը դնելով՝ լուռ մնաց։

– Արդյոք դոկտորը նրա վրա չի՞ բարկացած, Տրոտուդ,– հարցրեց նա վերջապես։

– Ո՛չ, դոկտորը նրան շատ է սիրում։

– Ուրեմն, ա՛յ տղա, ես գիտեմ, թե բանն ինչումն է,– գոչեց մր. Դիկը։

Այն հանկարծական ցնծությունը տեսնելով, որով նա ծնկին խփեց ու հոնքերը բարձրացնելով իր աթոռի վրա ետ ընկավ, ես կարծեցի, թե նա բոլորովին խելագարվել է։ Սակայն հանկարծ նորից զգաստացավ և անկեղծությամբ իր թաշկինակը հանելով, որ իբր թե իրոք իմ տատին էր ներկայացնում, դեպի ինձ թեքվեց ու ասաց.

– Աշխարհիս երեսին նրանից ավելի զարմանալի կին չկա, Տրոտուդ։ Ինչո՞ւ նա ոչինչ չարեց այդ բաներն ուղղելու համար։

– Այդպիսի փափուկ բանի մեջ խառնվելը նրա համար շատ դժվար է,– պատասխանեցի ես։

– Իսկ դուք, որ այդքան գիտնական եք,– ասաց մր. Դիկը, մատի ծայրով դիպչելով ինձ,– ինչո՞ւ դուք ոչինչ չարիք։

– Միևնույն պատճառով,– պատասխանեցի ես կրկին։

– Ուրեմն, տղա, ես գիտեմ, թե բանն ինչումն է,– ասց մր. Դիկը։

Եվ նա կանգնեց իմ առջև ավելի հաղթական քան առաջ, և գլուխը տատանելով մի քանի անգամ իր կուրծքն այնպես բախեց, ասես թե ուզում էր միջից ամբողջ շունչը դուրս մղել։

– Մի ողորմելի խենթուլիկ,– ասաց մր. Դիկը,– մի սակավամիտ, մի ապուշ... այսինքն՝ ձեր խոնարհ ծառան (այստեղ նա դարձյալ իր կուրծը բախեց)... կարող է այն անել, ինչ որ անգամ իմաստունները չեն կարող անել։ Ես նրանց կհաշտեցնեմ, ա՛յ տղա։ Կփորձեմ։ Ինձ ոչ ոք չի հակառակի։ Հիմարություն էլ որ անեմ, իմ վրա ոչ ոք ուշադրություն չի դարձնի։ Չէ՞ որ ես Դիկն եմ։ Ո՞վ է Դիկին բանի տեղ դնում։ Ի՞նչ է Դիկը։ Դիկը ոչի՛նչ է։ Փը՛հ։

Եվ նա մի թեթև արհամարհանքով փչեց, կարծես թե իր իսկ անձը հարդի պես դեն փչելով։

Նա երջանիկ էր, որ գոնե այդքան կարողացավ իր գաղտնիքը բաց անել։ Հենց այդ րոպեին պարտեզի դռնակի մոտ մի կառք կանգնեց, որից տատս ու Դորան իջան։

– Էլ ոչ մի խոսք, ա՛յ տղա,– շարունակեց մր. Դիկը շշնջալով։– Թող ամբողջ վնասը Դիկին հասնի... հիմար Դիկին, խելագա՛ր Դիկին։ Վաղուց արդեն մտածում էի, սըր, այդ մասին, և վերջապես ահա գտա։ Ձեր խոսքերից հետո հավատացած եմ, որ գտա։ Այժմ գործը հաջո՛ղ է։

Այդ նյութի մասին մր. Դիկն այլևս ոչ մի խոսք չասաց, այլ մի կես ժամ շարունակ (ապշեցնելով իմ տատին) հեռագրական նշաններով հրավիրում էր ինձ գաղտնիքը ծածուկ պահել։

Երկու-երեք շաբաթներ անցան, և զարմանում էի, որ մր. Դիկից լուր չունեմ, թեև շատ կցանկանայի նրա ջանքերի հետևանքն իմանալ. նրա արած եզրակացության մեջ ես մի ողջամիտ դատողության նշույլ էի նշմարել, էլ չասենք սրտի բարություն, որ ամեն ժամանակ հատուկ էր իրեն։ Վերջապես սկսեցի մտածել, թե իր երերուն ու թռուցիկ մտքի պատճառով իր դիտավորությունը մոռացած և կամ թողած կլինի։

Մի երեկո, երբ Դորան տանից ելնելու տրամադրություն չուներ, տատս ու ես որոշեցինք դոկտոր Ստրոնգի մոտ գնալ։ Արդեն աշուն էր, և Պառլամենտի պայքարները դադարած լինելով՝ երեկոյան զով օդը չէին պղտորում։ Հիշում եմ, որ թափված տերևները նույն

բուրմունքն էին արձակում, որ ծանոթ էին ինձ Բլենդրոտընի պարտեզից, և շնչող քամին տխուր, հին զգացումներ էր ազդում սրտիս։

Արևն արդեն մայր էր մտնում, երբ որ հասանք տնակին։ Մրս. Ստրոնգը նոր էր եկել պարտեզից, ուր մր. Դիկը, դանակը ձեռքին, դեռ շրջում էր, օգնելով պարտիզպանին մի քանի ձող սրելու։ Դոկտորը գրասենյակում մի այցելուի հետ էր զբաղված, բայց մրս. Ստրոնգն ասաց մեզ, թե հյուրը շուտով կհեռանա, ու խնդրեց մի քիչ սպասել։ Նրա հետ միասին դահլիճ մտանք և արդեն մթնած պատուհանի մոտ նստեցինք։ Իբրև հին բարեկամներ ու դրացիներ, իրարից շատ չէինք քաշվում։

Մի քանի րոպեից հետո մրս. Մարկլիեմը, որ միշտ պատրաստ էր ամեն առթիվ աղմուկ հանել, լրագրերը ձեռքին, աղմուկով ներս վազեց ու գոչեց.

– Ա՛խ, Աննի, ինչո՞ւ չասացիր, թե գրասենյակում հյուրեր կան։

– Չգիտեի, մայրիկ, թե կցանկանայիր իմանալ այդ,– պատասխանեց մրս. Ստրոնգը հանգիստ ձայնով։

– Կցանկանայի՛ր, ա՛յ քեզ բան,– ասաց մրս. Մարկլիեմն ու բազմոցի վրա ընկավ։– Օ՛հ, երբեք այսպես չէի վազել։

– Ուրեմն դու այնտե՞ղ էիր մայրիկ,– հարցրեց Աննին։

– Այդ ի՞նչ հարցմունք է, սիրելիս,– գոչեց սաստկությամբ նրա մայրը։– Հարկա՛վ այնտեղ էի։ Եվ իսկ ու իսկ այն րոպեի գրասենյակը մտա... երևակայեցեք իմ հուզումը, միս Տրոտուդ և դուք Դավիթ... ճիշտ այն րոպեին մտա, երբ մեր անգին դոկտորն իր կտակը գրելով էր զբաղված։

Այդ լսելուն պես աղջիկը պատուհանի մոտ արագ շուռ եկավ։

– Բան եմ ասում քեզ, Աննի,– շարունակեց մրս. Մարկլիեմը, լրագիրը սփռոցի պես իր ծնկների վրա փռելով ու շփելով,– ճիշտ այն րոպեին, երբ իր վերջին կամքն ու կտակն էր գրում։ Ինչպիսի՛ նախատեսություն և որքա՛ն սեր նրա կողմից։ Պիտի պատմեմ, թե այդ բանն ինչպե՞ս եղավ. անհրաժեշտ է, որ պատմեմ, գոնե դոկտորի ազնվությունը ցույց տալու համար։ Այո՛, այո՛, շատ ազնիվ է դոկտորը։ Գուցե ձեզ հայտնի լինի, միս Տրոտուդ, որ այս տանը սովորություն չկա մոմ վառելու, մինչև որ կարդացողի աչքերը, բառիս բուն նշանակությամբ, կոպիճներից դուրս չընկնեն, ամբողջ տանն էլ միայն գրասենյակում մի բազկաթոռ կգտնես, ուր կարելի է լրագիր կարդալ, այսինքն՝ այնպես կարդալ, ինչպես որ ես գիտեմ։ Այդ էր պատճառը, որ գրասենյակում լույս տեսնելուս պես այն կողմը գնացի, դուռը բացի։ Դոկտորի մոտ երկու պաշտոնական պարոններ էին գտնվում, որոնք անշուշտ իրավաբաններ կլինեին, երբեմն էլ սեղանի շուրջը կանգնած էին. սիրելի դոկտորը՝ գրիչը ձեռքին։ «Արդ, ջենտլմեններ, ասաց դոկտորը. Աննի, հոգյակս, լավ ականջ դիր այս խոսքերին՝ «կարծեմ այստեղ պա՞րզ հայտնված է, որ ես լիակատար հավատ եմ ընծայում մրս. Ստրոնգին և անպայման նրան եմ թողնում ամեն բան։ Պաշտոնյա պարոններից մեկը պատասխանեց. «Անպայման նրան եմ թողնում ամեն բան»»։ Այն ժամանակ ես շատ հասկանալի մայրական եռանդով գոչեցի. «Աստվա՛ծ իմ, ներեցեք», ետ փախա ու շտեմարանի մութ նրբանցքով շնչասպառ այստեղ վազեցի։

Մրս. Ստրոնգը պատուհանը բացեց և պատշգամբ դուրս գալով սյունին հենվեց։

– Արդ, խնդեմ ասացեք, մրս. Տրոտուդ, և դուք, Դավիթ,– ասաց մր. Մարկլիեմը, իր աղջկա շարժումները մեքենաբար դիտելով,– մի՞թե մեզ համար սփոփանք ու խրախուսանք չէ մի մարդ տեսնել դոկտոր Ստրոնգի հասակում, որ մի այդպիսի բան անելու հոգեկան ուժ ունի։ Դա հայտնապես ցույց է տալիս, թե որքա՛ն անսխալ եմ։ Դեռ այն ժամանակ, երբ դոկտորն իր շնորհաբեր այցելությամբ ինձ հարգել էր և Աննիին աջը խնդրել. ես ասացի աղջկանս.

«Տարակույս չկա, հոգյակ իմ, որ քեզ վայելչապես ապահովելու համար դոկտոր Ստրոնգն իր խոստացածից շատ ավելի բան կանի»։

Այդ րոպեին զանգակը հնչեց, և մենք հեռացող այցելուների ոտքերի ձայնը լսեցինք։

– Այժմ անպատճառ բանը վերջացած կլինի,– ասաց Հին Զինվորը փոքր-ինչ ականջ դնելուց հետո,– անգին դոկտորը ստորագրեց, կնքեց և ում որ պետք է հանձնեց կտակը, և արդեն սիրտը հանգիստ է։ Երանի՛ նրան։ Ահա մի պատվական մարդ։ Սիրելի Աննի, այժմ ես գրասենյակ կգնամ՝ մի քիչ լրագիր կարդալու. դու հո գիտես, որ ինձ թշվառ եմ զգում, մինչև որ լուրեր չիմանամ։ Մր. Տրոտռիդ, Դավիթ, խնդրեմ դուք էլ դոկտորի մոտ հրամեցեք։

Որքան հիշում եմ՝ մր. Դիկը, դանակը ծալելով կանգնած էր սենյակի մութ անկյունում, երբ մենք զոքանչի հետևից դոկտորի մոտ գնացինք. միտքս է նաև, որ տատս գնալիս իր քիթը սաստիկ տրորում էր, երևի թե մեր Զինվոր բարեկամի վրա զայրացած լինելը ցույց տալու համար. բայց թե ո՞վ առաջինը գրասենյակ ոտք դրեց, կամ թե ինչպե՞ս մրս. Մարկլիհեմը մի վայրկյանում բազկաթոռի մեջ նստեց, և կամ թե ինչպե՞ս տատս ու ես դռան մոտ միասին գտնվեցինք (գուցե նրա աչքերն իմից ավելի սուր էին, և նա ինձ ետ պահեց),– ամենևին չեմ հիշում։ Սակայն գիտցածս սա է, որ մենք դոկտորին ավելի առաջ նշմարեցինք, քան թե նա մեզ. նա սեղանի առաջ նստած էր ակներև հաճությամբ իր ահագին հատորների վրա ծռված։ Այդ րոպեին մրս. Ստրոնգը ներս մտավ. նա գունատ ու դողդոջուն էր։ Նրան ներս բերողը մր. Դիկն էր, որ մի ձեռքով նրա աջը բռնած՝ մյուսը դոկտորի ուսին դրեց. դոկտորը գլուխը բարձրացրեց ու մտամոլոր մեզ նայեց։ Հանկարծ կինը նրա ոտքն ընկավ, աղերսաբար ձեռքերը մեկնեց և աչքերը նրա վրա սևեռեց այն խորհրդավոր հայացքով, որ ես դեռ չեմ մոռացել։ Մրս. Մարկլիհեմն այդ տեսնելուն պես լրագիրը վայր գցեց, աչքերը չռեց ու դարձավ մի արձան, որ շատ հարմար էր «Ապշություն» կոչված նավի ցռուկին գրվելուն։

Գալով դոկտորի հեզիկ զարմանքին, նրա կնոջ ազնվությանը, որ երևում էր նրա աղաչավոր դիրքի մեջ, մր. Դիկի գորովալի կարեկցությանը ու տատիս ծանր լրջությանը, որով «Այս մա՞րդն է խելագար», ասաց ինքն իրեն,– այս բոլորը ես ոչ միայն հիշում եմ սույն տողերը գրելիս, այլ կարծես տեսնում ու լսում։

– Դոկտոր,– ասաց մր. Դիկը,– այս ի՞նչ է նշանակում։ Մի տեսեք։

– Աննի,– գոչեց դոկտորը։– Դո՞ւ ոտքիս տակ, սիրելիս։

– Այո,– ասաց կինը։– Աղաչում եմ, թախանձում, որ ոչ ոք սենյակից չհեռանա։ Ո՛վ իմ ամուսին, ո՛վ իմ հայր, վերջ դիր երկար լռությանդ։ Թող վերջապես իմանանք, թե ի՞նչ է պատահել մեր միջև։

Մրս. Մարկլիհեմը, որ նորից խոսելու ուժ էր ստացել և, կարծես, տոհմական հպարտությամբ ու մայրական բարկությամբ լցվել, բացականչեց.

– Աննի, վե՛ր կաց այս րոպեիս։ Մի՛ խայտառակիր ազգականներիդ, այդ աստիճան ստորանալով, եթե ո՛չ իսկույն խելքս կթռչի։

– Մայրիկ,– պատասխանեց Աննին,– միամիտ եղիր։ Ես իմ ամուսնուն եմ դիմում, և դու այստեղ գործ չունես։

– Ե՞ս գործ չունեմ, ե՞ս,– գոչեց մրս. Մարկլիհեմը։– Ցնորվե՞լ է այս աղջիկը։ Ջուր տվեք ինձ, մի բաժակ ջուր։

Ես այնքան զբաղված էի դոկտորով ու նրա ամուսնով, որ այդ խնդրին ուշք չդարձրի, ոչ ոք էլ ուշք չդարձրեց, և մրս. Մարկլիհեմին ուրիշ բան չմնաց անել, քան միայն հևալ, աչքերը չռել ու հովհարել ինքն իրեն։

– Աննի,– ասաց դոկտորը գորովանքով կնոջ ձեռքը բռնելով։– Սիրելի՛ ընկեր։ Եթե ժամանակի ընթացքում մեր ամուսնական կյանքի մեջ մի անխուսափելի փոփոխություն պատահած լինի,

մեղավորը հարկավ դու չես։ Հանցավորը ե՛ս եմ միայն, միայն ե՛ս։ Իմ զգացման, հիացման ու հարգանքի մեջ փոփոխություն չկա։ Միակ փափագս քեզ բախտավորեցնելն է։ Ես անկեղծ սիրում ու հարգում եմ քեզ։ Վե՛ր կաց, Աննի, աղաչում եմ։

Տիկինը, սակայն, չէր վեր կենում։ Մի քանի վայրկյան մարդուն ակնապիշ նայելուց հետո նա ավելի մոտեցավ նրան, ձեռքը նրա ծնկին դրեց ու գլուխը կախելով՝ ասաց.

– Եթե այս սենյակում ես մի բարեկամ ունեմ, որ կարող է ի նպաստ իմ կամ ամուսնուս մի խոսք ասել գործիս առթիվ, եթե կա մի բարեկամ, որ ձեռնահաս է իր ձայնը լսելի անել սիրտ մաշող կասկածանքի վերաբերմամբ, եթե կա մի բարեկամ, որ ամուսնուս հարգում է, ինձ էլ փոքր-ինչ կարեկից է և մի բան գիտի, որ կարող է մեր օգտին ծառայել, աղաչում եմ, թող այդ բարեկամը խոսի։

Տիրեց խորին լռություն։ Մի կարճատև, բայց տաժանելի վարանմունքից հետո ես սիրտ արեցի այդ լռությունը խզել։

– Մրս. Ստրոնգ,– ասացի ես,– ես գիտեմ մի բան, որ դոկտոր Ստրոնգի ստիպողաբար պատվերով մինչև այսօր ծածուկ էի պահել։ Սակայն ինձ թվում է, թե ավելի երկար թաքցնելը կեղծ զգուշություն կլիներ. ձեր հրավերն ազատում է ինձ տված խոսքիս կապանքից։

Տիկինը շուռ գալով վրաս նայեց. ես զգացի, որ իրավացի եմ։ Ես նրա աղերսական հայացքին չէի դիմադրի, եթե նույնիսկ վստահությունս շատ էլ հաստատ չլիներ։

– Մեր ապագա խաղաղությունը,– ասաց նա,– թերևս ձեր ձեռքին է։ Հավատացած եմ, որ ոչ մի բան չեք ծածկի։ Առաջուց գիտեմ, որ ոչ դուք, որ էլ մեկ ուրիշը մի այնպիսի բան չի ասի ինձ, որ կարենար իմ ամուսնու ազնիվ սրտին արատ դնել։ Ինչ էլ իմ մասին ասելու լինեք, համարձակ ասացեք։ Ես էլ իմ ասելիքը նրա առջև կասեմ ու ապա թե աստծու առջև։

Այդ հրավերից հետո ավելորդ համարեցի դոկտորից թույլտվություն խնդրել և միայն Ուրիահս Հիպի կոպիտ ոճերը մեղմացնելով, մանրամասն պատմեցի միևնույն սենյակում տեղի ունեցած գիշերվա դեպքը։ Պատմությանս միջոցին մրս. Մարկլհեմի արտահայտած շվարումը, խոսքերիս թելը կտրող սուր ու սաստիկ ճիչերը անհնարին է նկարագրել։

Երբ վերջացրի, Աննին մի քանի վայրկյան լուռ մնաց՝ առաջվա պես գլխիկոր։ Հետո դոկտորի աջը բռնեց, կրծքին սեղմեց ու համբուրեց։ Մեր ներս մտնելուց ի վեր դոկտորը նստած էր միևնույն դիրքով։ Մր. Դիկը կամաց բարձրացրեց Աննիին։ Տիկինը նրան հենվելով, ոտքի կանգնեց ու սկսեց ամուսնու երեսին մտիկ տալ, այդպես էլ մնաց։

– Ամեն բան ձեր առջև պիտի դնեմ,– ասաց նա համեստ, գողտրիկ ու հլու ձայնով,– ամեն բան, որով մեր ամուսնության օրից ի վեր իմ սիրտը լիքն է եղել։ Այն բոլորն իմանալուց հետո, ինչ որ հենց նոր իմացա, ես չեմ ապրի, եթե սրտումս գեթ մի հատ գաղտնիք մնա։

– Ո՛չ, Աննի,– ասաց դոկտորը հեզությամբ։– Ես երբեք կասկած չեմ ունեցել քո մասին, հրեշտակ իմ։ Ավելորդ է, բոլորովին ավելորդ։

– Ավելորդ չէ,– կրկնեց կինն առաջվա ձայնով,– այլ անհրաժեշտ է սիրտս բանալ քո վեհանձն, ճշմարտասեր հոգու առջև, որ օրեցօր ու տարեցտարի ավելի եմ սիրել։ Երկի՛նքը վկա։

– Եթե խելքս չի կորել. . . – գոչեց մրս. Մարկլհեմը։

(– Ի՞նչ խելք ունիս որ կորչեր, ա՛յ դու թութակ,– փնթփնթաց տատս զայրույթով)։

– . . . Պիտի ասեմ, որ հարկ չկա բնավ այս գործի մանրամասները հիշելու։

– Այդ բանի դատավորը միայն իմ մարդն է և ուրիշ ոչ ոք,– ասաց Աննին, շարունակելով դոկտորին նայել,– և նա անշուշտ ինձ կլսի։ Կներես, մայրիկ, եթե խոստովանությունս վշտացնի քեզ։ Ես ինքս շատ վիշտ եմ կրել ու համբերել։

– Ե՛ս ու իմ հոգին,– մրմնջաց մրս. Մարկլհեմը։

– Ես դեռ ջահել էի,– ասաց Աննին,– գրեթե մի փոքրիկ աղջիկ, երբ առաջին գաղափարներս աշխարհի մասին անբաժան էին մի երկայնամիտ բարեկամից ու վարժապետից... հանգուցյալ հորս ընկերից... որին ես միշտ հարգել եմ: Մի բան չկա, որ ես գիտենամ, որ նրա հրեշտակն այդ բանի հետ կապված չլինի մտքիս մեջ: Նա էր, որ գիտության առաջին գանձերով միտքս ճոխացրեց և այդ բոլորի վրա իր բնավորության կնիքը դրոշմեց: Հավաստի եմ, որ նրանք երբեք այնքան օգուտ չէին տա ինձ, ինչքան որ տվին, եթե մի ուրիշի ձեռքից ստացած լինեի:

– Ուրեմն մայրիկդ ոչի՛նչ է,– գոչեց մրս. Մարկլիեմը:

– Ո՛չ, մայրիկ,– ասաց Աննին:– Ես միայն ցույց եմ տալիս, թե նա ինչ էր, և այդ անելն իմ պարտքն է: Ես հասակ առա, և նա սրտիս մեջ դարձյալ առաջվա տեղն էր բռնում: Ես պարծենում էի նրա փութաջան հոգատարությամբ և սրտանց նրան երախտապարտ էի: Դժվար է ասել, թե ինչ աչքով էի նրա վրա նայում. ես համարում էի նրան մի հայր, մի ղեկավար, մի այնպիսի մարդ, որի գովասանքը մյուս ամեն գովասանքից տարբեր էր, մի մարդ, որին կշարունակեի վստահել ու հավատալ, եթե նույնիսկ ամբողջ աշխարհից հուսահատված լինեի: Գիտես, մայրիկ, թե որքա՛ն ջահել էի, որքա՛ն անփորձ, երբ դու հանկարծ հայտնեցիր, թե նա իմ նշանածն է:

– Այս բանը ես արդեն առնվազն հիսուն անգամ ամեն մեկիդ պատմել եմ,– ասաց մրս. Մարկլիեմը:

(– Ուրեմն ձայնդ կտրիր, աստծու սիրուն, է՛լ մի խոսի այդ մասին,– քրթմնջաց տատս):

– Այդ փոփոխությունը ինձ համար այնքան մեծ էր,– շարունակեց Աննին միևնույն ձայնով ու հայացքով,– և, ինչպես սկզբում կարծում էի, այնքան բան էի կորցնում, որ ես հուզվեցի և տրտմեցի: Ես դեռ մի անփորձ աղջիկ էի և, կարծեմ, վիշտ էի զգում, որ այսուհետև նրա վրա բոլորովին ուրիշ աչքով պիտի նայեմ: Իմ աչքում նա չեր կարող նույնը մնալ, ինչ որ էր. ես պարծանք համարեցի, որ նա ինձ արժանի դատեց ընտրելու, և մենք պսակվեցինք:

– Սուրբ Ալֆեջի եկեղեցում, Կենտրբրի,– նկատեց մրս. Մարկլիեմը:

(– Գրո՛ղը տանի այդ կնկան,– ասաց տատս:– Բնավ չի ուզում հանգստանալ):

– Երբեք մտքովս չէր անցել,– շարունակեց Աննին շիկնելով,– նկատի առնել այն նյութական բարիքները, որ բերելու էր ամուսինս: Նրան նվիրված դեռափթիթ սրտիս մեջ այդպիսի հաշիվների համար ամենևին տեղ չկար: Մայրիկ, ներիր, առաջինը դու էիր, որ ինձ առիթ տվիր մտածելու, թե գեթ մի մարդ կհանդգնի այդպիսի վիրավորիչ, ստոր հաշիվներ վերագրել ինձ:

– Ե՞ս,– գոչեց մրս. Մարկլիեմը:

(– Ա՛հ, իհարկե դուք,– նկատեց տատս,– և ձեր հովիարը շարժելով այդ բանը բնավ չեք հերքի, իմ Ջինվոր բարեկամ):

– Այդ էր նոր կյանքիս առաջին աղետը,– ասաց Աննին:– Բոլոր վշտերս այդտեղից առաջ եկան: Հետո դրանք այնքան բազմացան, որ համրել անգամ չեմ կարող. միայն թե ոչ այն պատճառով, որ դու ես ենթադրում, իմ վեհանձն ամուսին, որովհետև իմ սրտում մի գաղափար, մի հիշատակ և կամ հույս չկա, որ քո անձից բաժան լիներ:

Աննին աչքերը վերև ուղղեց, ձեռքերը կցեց և հրեշտակի պես սիրուն ու մաքուր երևաց ինձ: Այդ րոպեից սկսած դոկտորն անքթիթ մտիկ էր անում կնոջը, և կինը՝ նրան:

– Մայրս անմեղ է,– շարունակեց Աննին:– Նա երբեք իր համար քեզնից բան չի խնդրել. հավաստի եմ, որ երբեք էլ վատ դիտավորություններ չի ունեցել: Բայց ես տեսա, թե որքա՛ն են նեղացնում քեզ, իմ անվամբ քեզնից բան խնդրելով, երբ տեսա, թե որքա՛ն դու առատաձեռն ես և որքան շահերիդ պաշտպան մր. Ուիկֆիլդը այդ պատճառով գրգռվում է, այդ ժամանակ

առաջին անգամ զգացի, որ ես վատթար կասկածների նշավակ եմ դարձել. . . կասկածների, իբր թե իմ սերը քեզ վաճառել եմ, քեզ, որ մարդկանց մեջ իմ առաջին պաշտելին ես. . . և սոսկալով տեսա, որ քեզ էլ այդ անարժան նախատինքից չեմ ազատել։ Օ՜հ, անզոր եմ պատմել . . . մայրս երևակայել անգամ չէր կարող. . . թե ինչ դառն տանջանք է՝ այդ կասկածների ճնշման ներքո միշտ մաշվելն ու տառապելը, մինչդեռ սիրտս վկա է, որ հարսանիքիս օրը ես ուրիշ բան չեմ արել, բացի կյանքիս սերն ու պատիվը պսակելուց։

– Զավակասեր մոր հոգսերը ահա այդպես են վարձատրվում,– գոչեց մրս. Մարկլիեմը։– Երանի թե թուրք լինեի։

(– Եվ երանի՜ թե թուրքերի երկրում մնայիր,– ասաց տատս)։

– Այդ միջոցին էր, որ մայրիկս շատ զբաղված էր մեր ազգական Ջեկ Մելդրնի վիճակով։ Մի ժամանակ ես հավանում էի այդ մարդուն,– ասաց Աննին մեղմ ձայնով, սակայն առանց վարանելու,– ես շատ էի հավանում։ Մանկությունից իրար հետ մտերիմ էինք։ Եթե հանգամանքներն ուրիշ դարձված ստանային, գուցե ինքս ինձ համոզեի, թե իրոք նրան սիրահարվել եմ, և գուցե նրա հետ ամուսնանայի, և մի թշվառ կին դառնայի։ Թշվառ է այն ամուսնությունը, ուր գաղափարների ու ձգտումների միասնություն չկա։

– Մեր միջև ընդհանուր բան չկար,– ասաց Աննին։– Վաղուց գիտեի, որ չկար։ Եթե ես ուրիշ հիմքեր էլ չունենայի շնորհապարտ լինելու իմ մարդուն, արդեն այն մեկ բանը, որ նա անփորձ սրտիս առաջին սխալ շարժումից ինձ փրկեց, բավական էր, որ ես միշտ նրան երախտապարտ լինեի։

Աննին անշարժ կանգնած էր և այնքան լուրջ էր խոսում, որ նրա յուրաքանչյուր բառից սրտիս լարերը թրթռում էին, թեև ձայնը առաջվա պես հանգիստ էր։

– Երբ Մելդրնը սկսեց օգուտ քաղել քո վեհանձն նպաստներից, որ իմ պատճառով առատորեն շռայլում էիր նրան, և երբ ես սկսեցի տանջվել այն վարձկանի ստոր դերից, որ վերագրում էին ինձ այդ գործում, մտածեցի, թե լավ կլինի, եթե նա իր ջանքերով մի դիրք ստեղծի կյանքի մեջ։ Ինձ թվում էր, որ եթե նրա տեղը ես լինեի, անշուշտ այդպես կանեի, որքան էլ դժվար լիներ։ Մինչ նրա Հնդկաստան մեկնելու գիշերը ես ներողամիտ էի դեպի նա։ Միայն այդ գիշեր ես իմացա, թե ո՜ր աստիճան նա խարդախ ու անսիրտ է։ Նմանապես այդ գիշեր նշմարեցի մր. Ուիկֆիլդի՝ իմ վրա ուղղված երկմիտ հայացքը, և առաջին անգամ զգացի, թե ինչպիսի սև կասկած է նեմացնում իմ կյանքը։

– Կասկած, Աննի,– ասաց դոկտորը։– Ո՜չ, ո՜չ, ո՜չ։

– Քո սրտում կասկած չկար. այդ լավ գիտեմ, իմ ամուսին,– պատասխանեց տիկինը։– Բայց երբ ես նույն գիշեր քեզ մոտ եկա արտասուքով դյուրացնելու կրած վշտիս ու ամոթիս ծանր բեռը և պատմելու, թե իմ ազգականներից մեկը, որին դու իմ սիրուն՝ բարերար էիր հանդիսացել, ինձ այնպիսի բաներ ասաց, որ երբեք չպիտի ասեր, անգամ՝ եթե ես մի վարձկան, թշվառ էակ լինեի, ինչպես որ ինքն էր ենթադրել. ես սոսկացի այդ պիղծ պատմությունով լսելիքդ վիրավորելուց։ Ասելիքս շրթունքիս վրա մեռավ, և գաղտնիքն այն րոպեից մինչև այսօր սրտումս մնաց։

Մրս. Մարկլիեմը մի կարճ հառաչանք արձակեց, մեջքը հանգիստ բազկաթոռին դեմ տվեց ու հովհարով երեսը ծածկեց, ասես թե որոշելով այլևս երբեք նրա տակից դուրս չգալ։

Այն ժամանակից ի վեր ես նրա հետ ոչ մի բառ չեմ փոխանակել առանց քո ներկայության։ Արդեն մի քանի տարի կլինի, որ նա գիտի, թե այս տանը ինչ դիրք ունի։ Քո ծածուկ հոգատարությունը՝ նրան միշտ առաջ քաշելու, որի մասին հետո հայտնում էիր ինձ մտերմաբար՝ ինձ զվարճություն հասցնելու մտքով, հավատա, ավելի էր իմ գաղտնիքի թշվառ բեռը ծանրացնում։

Աննին դոկտորի առջև չոքեց, թեև դոկտորն ամեն կերպ աշխատում էր արգելել, և արտասվալից աչքերը նրա երեսին ուղղելով՝ ասաց.

– Դու դեռ մի՛ խոսի: Թույլ տուր, որ ես ասելիքս ավարտեմ: Իմ վարմունքը լա՞վ էր, թե՞ վատ, չգիտեմ, գիտեմ միայն, որ եթե պետք լիներ, դարձյալ այդպես կվարվեի: Չես կարող երևակայել, թե ինձ համար ի՞նչ էր նշանակում ի սրտե քեզ նվիրված լինել, և այդպիսի հին հիշատակներ ունենալ, և այդ կասկածն արդարացնող երևույթներով պաշարված մնալ: Ես շատ ջահել էի, խորհրդակից էլ չունեի: Մայրիկիս ու իմ միջև քեզ վերաբերող ամեն բանում մի ահագին անդունդ կար: Եթե ես ինքս իմ մեջ էի ամփոփվում, ինձ հասած վիրավորանքը թաքցնելով, պատճառը իմ խորին հարգանքն էր դեպի քեզ և այն ջերմ փափագս, որ դու էլ ինձ հարգես:

– Աննի, ով դու ազնիվ, անբիծ սիրտ,– ասաց դոկտորը:– Իմ անգին ընկերուհի:

– Փոքր-ինչ սպասիր, էլի մի քանի խոսք: Շատ եմ մտածել, որ դու կարող էիր հեշտությամբ մի ուրիշ կին առնել, որ քեզ այսքան նեղություն չպատճառեր և ավելի պատիվ բերեր քո հարկին. մտածել, որ լավ կլիներ, եթե ես սանիկդ մնայի, գրեթե զավակդ. երկյուղով մտածել, թե քեզ նման գիտնականի ընկերը լինելու արժանի չեմ: Եթե այս ամենը հարկադրում էր ինձ լռություն պահել՝ փոխանակ սրտիս տագնապը քեզ հայտնելու, միակ պատճառը իմ խորին հարգանքն էր դեպի քեզ և հույսը, թե դու էլ մի օր ինձ կհարգես:

– Այդ օրը վաղուց հասել է, Աննի,– ասաց դոկտորը,– և միայն մահովս կվերջանա:

– Էլի մի խոսք: Մտքումս դրել էի... հաստատ դրել... քեզնից բարերարված այն մեկի անարժանությունը ոչ ոքի չհայտնել: Եվ ահա վերջին խոսքս, ով իմ անզուգական, անգին ընկեր: Այս երեկո միայն իմացա, սրտիս այնքան ցավ բերող փոփոխությանդ պատճառը, որ մերթ նախկին կասկածովս էի բացատրում, մերթ ավելի ճշմարտանման կարծիքներով, և ահա այս երեկո մի բարեպատեհ դեպքի շնորհիվ իմացա անսահման հավատարմությունդ, որ հակառակ իմ սխալների, դու շարունակում ես ընծայել ինձ: Հույս չունեմ, որ ինչքան էլ քեզ սիրեմ, որքան էլ քեզ հարգեմ, կարողանամ այդ անգին հավատարմությանը լիովին արժանի հանդիսանամ, բայց գոնե կարող եմ համարձակ նայել ազնիվ դեմքիդ, քեզ, որին իբրև հորս պաշտել եմ, իբրև ամուսնուս սիրել եմ և իմ մանկության օրերից ի վեր իբրև ընկերոջս մեծարել, և հանդիսաբար ասել, որ ես երբեք քո պատիվը մտքումս անգամ չեմ անարգել, ամուսնական սուրբ պարտքից և սիրուց չեն շեղվել:

Նա փարվեց դոկտորի վզով: Դոկտորն իր գլուխը նրա ուսին դրեց, և ծերունու ալիքները կնոջ թխագույն հյուսերի հետ խառնվեցին:

– Թույլ տուր կրծքիդ վրա հանգչեմ, ով անձկալի ամուսին: Մի՛ մերժի ինձ, մի՛ մտածի և մի՛ ասի, թե հասակով տարբեր ենք, որովհետև տարբերությունը միայն իմ բազմաթիվ թերություններիս մեջ է: Օրեցօր ավելի պարզ եմ տեսնում այդ՝ և քեզ ավելի հարգում: Սեղմիր ինձ սրտիդ, ազնիվ ընկեր, սերս ժայռի վրա է հաստատված, ժայռի պես էլ անսասան է:

Այդ տեսարանին հաջորդող լռության միջոցին տատս հանդիսավոր և անշտապ մր. Դիկին մոտեցավ, նրան գրկեց ու մի ինչուն համբույր դրոշմեց երեսին, և շատ ի դեպ, որովհետև դրանով ազատեղ մր. Դիկին ծիծաղելի դառնալու վտանգից: Ես նկատեցի, որ հենց այդ րոպեին մր. Դիկը պատրաստվում էր իր ցնծությունն արժանապես հայտնելու համար մի ոտքի վրա կանգնել:

– Դու շատ երևելի մարդ ես, Դիկ,– ասաց տատս ամենահաստատ հավանության եղանակով:– Չհամարձակվես հակառակը պնդել, որովհետև ես քեզ լավ եմ ճանաչում:

Այդ ասելով տատս նրա թևից քաշեց և ինձ նշան արեց. երեքս միասին հանդարտ դուրս եկանք սենյակից ու տուն գնացինք:

– Ի՜նչ լավ հարված էր մեր Զինվոր բարեկամին,– ասաց տատս ճանապարհին։– Այս գիշեր հանգիստ կքնեմ, եթե ուրախանալու ուրիշ պատճառ էլ չլիներ։

– Նա, կարծեմ, բոլորովին շվարեց,– ասաց մր. Դիկն ամենաջերմ կարելցությամբ։

– Դատա՜րկ բան։ Ե՞րբ ես տեսել, որ կոկորդիլոսը շվարի,– հարցրեց տատս։

– Կյանքումս կոկորդիլոս չեմ տեսել,– հեզությամբ պատասխանեց մր. Դիկը։

– Այդպիսի բան ոչ մի ժամանակ չէր պատահի, եթե այդ պառավ անասունը չլիներ,– ասաց տատս սաստկությամբ։– Երանի թե մի քանի մայրեր՝ աղջիկներին պսակելուց հետո՝ նրանց հանգիստ թողնեին ու իրենց սերն այնքան բռնի չհայտնեին։ Այդ մայրերին նայելիս մարդ ակամա կարծում է, թե հենց որ նրանք մի թշվառ աղջիկ աշխարհ բերին... մեկ հարցնող լինի, թե թշվառը կամեցե՞լ է աշխարհ գալ... էլ ուրիշ փափագ չունեն, քան նրան այնքան տանջել, որ այս աշխարհից դուրս փախչի։ Ի՞նչ բանի մասին ես մտածում, Տրոտ։

Ես մտածում էի այդ երեկո խոսված բաների մասին։ Մտքումս անդադար հեղեղում էին մի քանի խոսք։ «Թշվառ է այն ամուսնությունը, ուր գաղափարների ու ձգտումների միություն չկա»։ «Անփորձ սրտի առաջին սխալ շարժումը»։ «Ժայռի վրա հաստատված սեր»։ Սակայն արդեն մոտեցել էինք մեր տանը։ Թափթված տերևները ոտքերիս տակ խշխշում էին, և աշնան քամին փչում էր։

Զ. ԳԼՈՒԽ
Լուր

Եթե թվերի մեջ փոքր-ինչ թույլ հիշողությանս ապավինելու լինեմ, պսակվելուս առաջին տարին կարծեմ, արդեն լրացել էր, երբ մի երեկո իմ հեղինակած գրքի մասին մտածելով՝ զբոսանքից տուն գալիս (ջանքերիս շնորհիվ հաջողությունս աճել էր, և ես առաջին վեպս շարադրելու վրա էի),– մրս. Ստիրֆորթի տան մոտով անցկացա։ Թեև Հայգեթում բնակվելուցս ի վեր սովորաբար աշխատում էի խորշել դրանից, բայց որովհետև դժվար էր առանց շրջան անելու մի ուրիշ ճանապարհ գտնել, սկսել էի այդ տեղով հաճախ անցնել։

Երբեք չէր պատահել, որ այդ տան մոտով արագ անցնելիս մի անգամից ավելի նայեի վրան։ Նրա տեսքը միշտ տխուր ու տրտում էր։ Լավ սենյակներից և ոչ մեկը դեպի փողոց չէր նայում, և նեղ ծանրակազմ ու հնաձև պատուհանները, որոնք երբեք գեղեցիկ չէին եղել, ավելի մռայլ էին թվում միշտ փակված ու վարագուրված լինելուց։ Քարահատակ ու փոքրիկ բակի միջով մի ծածկված անցք էր ձգվում դեպի տան մուտքը, որ երբեք չէր բացվում։ Մուտքի գլխին երևում էր սանդուղքի կլոր լուսամուտը, որ թեև մյուսների նման չէր վարագուրված, բայց նույնպես մի տխուր ամայության պատկեր ուներ։ Չեմ հիշում, որ երբևէ մի լույս կամ ճրագ տեսած լինեմ այդ տանը։ Եթե մի օտարական անցորդ լինեի, երևի կկարծեի, թե նրա մեջ մի անզավակ մարդու դիակ է հանգչում։ Եթե բախտ ունենայի այդ տան մասին ոչ մի բան չգիտենալու, ո՞վ գիտի ինչ տարօրինակ բաներ կենթադրեի նրան միշտ անփոփոխ տեսնելիս։

Այնուամենայնիվ աշխատում էի որքան կարելի է սակավ մտածել նրա մասին։ Բայց հոգիս չէր կարող մարմնիս նման անհոգ անցնել նրա մոտով, և նա իմ մեջ հազար մտքեր էր զարթնեցնում։ Մտքերիս կուտակումը, մանավանդ, այդ երեկո շատ բուռն էր. մանկության հիշատակներ էին պաշարել ինձ, ինչպես և պատանեկան ցնորքներ, թերակազմ հույսերի ստվերներ, որոնք կապ ունեին ինձ զբաղեցնող՝ նոր վեպիս նյութի հետ։ Եվ ես մտամոլոր անցնում էի տան մոտով։ Հանկարծ մի ձայն սարսառեցրեց ինձ։

Կնոջ ձայն էր և ես իսկույն մրս. Ստիրֆորթի փոքրիկ սպասուհուն հիշեցի, որ երբեմն մի կապույտ ժապավեն ուներ իր գլխանոցին: Այժմ կապույտը հանել էր, երևի թե հարմարվելով տան սգավոր պատկերին, և մի երկու անմխիթար ու մթագույն հանգույց կապել:

– Չէի՞ք հաճի, սըր, մեզ մոտ գալ ու միս Դարտլին տեսնել:

– Միս Դա՞րտլն է հրավիրում ինձ,– հարցրի ես:

– Այս երեկո չէ, սըր, միևնույն է թե երբ: Միս Դարտլը մի երկու օր առաջ ձեր անցնելը նկատել էր և ինձ պատվիրել, որ սանդուղքի վրա կարը ձեռքիս նստեմ և երբ դուք նորից անցնեք, ձեզ խնդրեմ, որ նրան տեսնելու գաք:

Ետ դարձա ու աղջկան հարցրի, թե մրս. Ստիրֆորթն ինչպե՞ս է: Սպասուհին ասաց, թե լեդին միշտ տկար է ու սակավ է տանից դուրս գալիս:

Տան գավթից սպասուհին ինձ պարտեզ տարավ և խնդրեց, որ ես ինքս գտնեմ այնտեղ միս Դարտլին:

Նա նստած էր նստարանի վրա դարափի ծայրին, որտեղից ահագին քաղաքը երևում էր: Երկինքը միգապատ էր, և միայն հորիզոնի վրա մի լուսավոր շերտ էր նշմարվում: Մռայլ Լոնդոնի տեսարանն իր վիթխարի շենքերով, որոնք ավելի խրոխտ էին թվում այդ լույսից, հարմար էր գալիս վայրագ ու դաժան օրիորդի մտքումս թողած հիշատակին:

Մոտենալս տեսնելուն պես նա վեր կացավ: Նա ավելի նիհար էր, ավելի գունատ, քան մեր առաջին տեսակցության ժամանակ. հրացայտ աչքերն այժմ ավելի ցոլուն էին, շրթունքի սպին ավելի որոշ:

Մտերմական չէր մեր հանդիպումը: Վերջին անգամ գրգռված էինք բաժանվել, և նրա երեսը մի տեսակ արհամարհանք էր ցույց տալիս, որ ամենևին չէր ուզում ծածկել:

– Լսեցի, միս Դարտլ, թե իմ հետ խոսել եք ուզում,– ասացի ես նրա մոտ կանգնելով ու ձեռքս նստարանի թիկունքին դնելով:

Նա նստելու նշան արեց ինձ. ես մերժեցի:

– Խնդրեմ ասացեք,– ասաց նա,– արդյոք այն աղջկան գտա՞ն:

– Ո՛չ:

– Եվ նա, սակայն փախել է:

Նկատեցի, որ օրիորդն ինձ նայելիս շուրթերը սեղմեց, ասես թե Էմլիին հայհոյելու փափագ զգալով:

– Փախե՞լ,– կրկնեցի ես:

– Այո, նրա ձեռքից փախել,– ասաց օրիորդն ու ծիծաղեց:– Եթե մինչև այժմ չի գտնվել, գուցե երբեք չգտնվի: Հավանական է, որ մեռած լինի:

Օրումս չէի տեսել մի ուրիշ դեմք, որ այդքան չարախինդ անգթություն արտահայտեր:

– Ոչ մի կին այն աղջկան մահից ավելի լավ բան ցանկանալ չէր կարող,– ասացի ես:– Ուրախ եմ, որ ժամանակը այդքան ձեր սիրտը մեղմացրել է, միս Դարտլ:

Նա խոսքերս պատասխանի արժանի չարեց, այլ նորից մի ամբարտավան ժպիտով ասաց.

– Այդ պատվական ու բազմահալած կույսի ազգականները ձեզ բարեկամ են: Դուք նրանց ջատագովն եք և իրավունքների պաշտպանը: Կցանկանայի՞ք իմանալ, թե ի՞նչ է հայտնի նրա մասին:

– Անշուշտ,– ասացի ես:

Նա մի ժանտ ժպիտով վեր կացավ, մերձավոր ցանկապատին մոտեցավ, որով այդ տեղը բանջարանոցից զատվում էր, և բարձրաձայն գոչեց. «Հե՛յ, ե՛կ»,– ասես թե մի պիղծ կենդանի կանչելիս լիներ։

– Հուսով եմ, մր. Կոպպերֆիլդ,– ասաց նա,– որ այստեղ կզգուշանաք պաշտպանության և կամ թե վրեժխնդրության որևէ քայլ անելուց։

Ես գլխով նշան արի առանց նրա միտքը հասկանալու։

– Եկ,– կրկնեց նա։

Եվ ես նկատեցի պատկառելի Լիտտիմերին, որ առանց իր մեծարգո ծանրությունը նվազեցնելու գլուխ տվեց ինձ և օրիորդի հետևը կանգնեց։ Միս Դարտլը նստարանի վրա նստեց ու երեսիս նայեց մի հաղթական չարությամբ, որի մեջ – զարմանալի բան – մի կանացի շնորհ չկար, մի ուրույն հրապույր. այդ միջոցին նա հեքիաթներում հիշվող անագորյուն իշխանուհու նման էր։

– Դե՛հ,– ասաց նա հրամայաբար՝ առանց սպասավորին մտիկ անելու և իր հին սպին շփելով, այս անգամ գուցե հաճությամբ, քան ցավով։– Պատմեցեք մր. Կոպպերֆիլդին այդ փախուստի հանգամանքները։

– Մր. Ջեյմսն ու ես, օրիորդ. . .

– Ինձ մի՛ դիմեք,– սաստեց օրիորդը, հոնքերը կիտելով։

– Ոչ էլ ինձ, աղաչում եմ,– ասացի ես։

Մր. Լիտտիմերը ամենևին չշփոթվեց, այլ լուռ հնազանդությամբ ցույց տվեց, թե ամեն բան, ինչ որ մեզ հաճելի է, իրեն էլ հաճելի է՝ և ասաց.

– Մր. Ջեյմսն ու ես նորատի կնոջ հետ արտասահման էինք գտնվում այն օրից ի վեր, երբ կինը մր. Ջեյմսի հովանավորությամբ Յարմաութից հեռացել էր։ Շատ տեղեր շրջեցինք, շատ երկրներ տեսանք։ Եղանք Ֆրանսիայում, Զվիցերիայում, Իտալիայում,– մի խոսքով ամեն տեղ։

Մր. Լիտտիմերն այդ ասելիս նստարանի քամակին էր նայում, հենց իմանաս իր խոսքերը դրան ուղղելով, և մատները վրան կամաց շարժում, ասես թե մի մունջ դաշնամուրի ստեղների վրա խաղալով։

– Մր. Ջեյմսը շատ էր նվիրված այդ կնոջը և բավական ժամանակ այնպես կանոնավոր կյանք էր վարում, որի նմանը չէի տեսել նրա մոտ ծառայելուս տարիների ընթացքում։ Ջահել կինը շատ առաջադեմ էր և օտար լեզուներ գիտեր. ոչ ոք չէր ասի, թե մի շինական աղջիկ է։ Նկատել եմ, որ ուր էլ գնայինք, ամենքը նրա վրա հիանում էին։

Միս Դարտլը իր ձեռքը սրտին դրեց։ Մր. Լիտտիմերը նրա վրա մի թռուցիկ հայացք նետեց և ժպտաց։

– Իրավ որ ամենքը ջահել կնոջ վրա զարմանում էին։ Արդյոք ի՞նչն էր պատճառը. հագո՞ւստը, օդի և արևի ազդեցությո՞ւնը, թե՞ նրան ընծայած մեծ խնամքը, չգիտեմ. բայց ինչևիցե է՝ նրա իսկական բարեմասնությունները ամենքին հրապուրում էին։

Սպասավորը մի վայրկյան լռեց։ Միս Դարտլի աչքերը հեռավոր տեսարանի մի կետից դեպի մյուսն էին ոստոստում, և նա իր ներքնի շուրթը կծում էր անհանգիստ բերանը զսպելու համար։

Մր. Լիտտիմերը նստարանի թիկունքը թողնելով՝ ձեռքերը կցեց, մի ոտքի վրա հենվեց. հետո աչքերը կախած և պատկառելի գլուխը փոքր-ինչ առաջ ու թեք բռնած, շարունակեց.

– Նորատի կինը մի որոշ ժամանակ այդպես էր ապրում, միայն թե երբեմն տխուր էր։ Վերջապես, կարծեմ, նրա տրտմությունն ու վիշտը մր. Ջեյմսի համար տախտկալի դարձան,

և մեր բանը թարս գնաց: Մր. Ջեյմսը նորից սկսեց հանդարտ կյանքի շաղվից դուրս գալ, և կնոջ թախիծը սաստկացավ: Ինձ գալով կասեմ, որ այդ ժամանակ դրությունս երկուսի միջև շատ դժվար էր: Բայց և այնպես նրանք իրար հետ մեկ խռով էին ու մեկ հաշտ, և այդ դրությունը, հավաստի եմ, շատ ավելի երկար տևեց, քան սպասելի էր:

Միս Դարտլը աչքերը հեռավոր հորիզոնից դարձրեց ու դարձյալ նայեց երեսիս: Մր. Լիտտիմերը մի երկու անգամ իր աջի մեջ թեթև հազաց ձայնը փոքր-ինչ մաքրելու համար, և ոտքերի դիրքը փոխելով, շարունակեց.

– Վերջապես շատ կռիվներից, շատ վեճերից հետո՝ մի առավոտ մր. Ջեյմսը Նեապոլի շրջակայքից, ուր մի ամառանոց ունեինք (ջահել կինը ծով սիրող էր), հեռացավ, պատճառաբանելով, թե մի երկու օրից կվերադառնա, և հեռանալիս ինձ պատվիրեց կնոջն ասել, թե նա վճռել է, ընդհանուր օգտի համար. . .

Մր. Լիտտիմերը նորից հազաց:

– . . . Ընդմիշտ հեռանալ: Պետք է ասել, որ մր. Ջեյմսի վարմունքը շատ ազնիվ էր. նա առաջարկեց, որ ջահել կինը մի պատվարժան մարդու հետ ամուսնանա, մի մարդու, որ պատրաստ էր անցյալը մոռացության տալ. և կինը, որ մի ռամիկ ընտանիքից էր, հարկավ այդ մարդուց ավելի հարմար անձ չէր գտնի օրինական եղանակով:

Սպասավորը ոտքերի դիրքը նորից փոխեց ու շուրթերը թրջեց: Ես համոզված էի, որ սրիկան իր մասին է խոսում. նույն համոզումը միս Դարտլի երեսի վրա էլ երևում էր:

– Այդ պատվերն էլ ես պատրաստ էի կնոջը հայտնել: Ես հոժար էի մր. Ջեյմսին նեղ դրությունից ազատելու համար ամեն բան անել և հաշտեցնել նրան իր որդեսեր մայրիկի հետ, որ այնքան մաշվել էր վշտից: Դրա համար էր, որ ես վերոհիշյալ պատվերը կատարելու խոսք տվի: Անկարելի է լեզվով պատմել, թե ջահել կինը որքան զայրացավ մր. Ջեյմսի հեռանալը լսելով: Նա բոլորովին խելքը թռցրեց, և եթե բռնի միջոցների չդիմեի, ինքն իրեն դանակով կմորթեր՝ և կամ ծովը կընկներ և կամ գլուխը պատին տալով կպատռեր:

Միս Դարտլը, որ նստարանին հենված էր, կարծես հրճվում էր այդ մարդու ասածները լսելիս:

– Իսկ երբ ես պատվերի երկրորդ կետին մոտեցա,– ասաց մր. Լիտտիմերը, ձեռքերն անհանգիստ տրորելով,– երկրորդ կետին, որի բարի նպատակն ամեն մարդ էլ կհասկանար, ջահել կինն իր իսկական դեմքը ցույց տվեց: Այդպիսի կատաղի կին դեռ օրումս չէի տեսել: Նրա վարմունքն ահռելի էր: Քարը, փայտը, երկաթը ավելի շատ երախտագետ, ավելի զգայուն կլինեին, ավելի շատ համբերություն, ավելի խելք կունենային, քան թե նա: Եթե ես փոքր-ինչ զգույշ չգտնվեի, նա անպատճառ արյունս կթափեր:

– Հենց դրանով նա բարձրանում է իմ աչքում,– ասացի ես բարկությամբ:

Մր. Լիտտիմերը գլուխը կախեց, իբր թե ասելու. «Մի՞թե, սըր: Սակայն դուք դեռ շատ խակ եք», և պատմությունը շարունակեց:

– Կարճ ասած՝ առժամանակ ամեն բան, որով կարող էր վնասել իրեն կամ ուրիշին, պետք եղավ հեռացնել նրանից և իրեն էլ փակված պահել: Բայց և այնպես մի գիշեր պատուհանի վանդակը, որ ինքս էի մեխել, կոտրեց ու որթատունկից ներքև սահելով՝ անհետացավ: Այնուհետև, ինչքան որ գիտեմ, նրա մասին ոչ ձայն կա, ոչ ծպտուն:

– Գուցե մեռել է,– ասաց ժպտալով միս Դարտլը, որ կարծեմ հոժարությամբ աքացի կտար թշվառ աղջկա դիակին:

– Գուցե ծովում խեղդված լինի, օրիորդ,– ասաց մր. Լիտտիմերը, առիթ գտնելով մեզնից մեկին դիմելու:– Եվ այդ շատ հավանական է: Կամ թե նավավարներից օգնություն ստացած լինի: Սիրում էր գոեհիկների ընկերությունը և շատ անգամ ծովափի մոտ նստելով, ձկնորսների երեխաների ու կանանց հետ էր խոսակցում: Ինքս տեսել եմ, թե ինչպես նա մր.

Ջեյմսի բացակայության միջոցներին, օրերով նրանց շրջանում զվարճանում էր։ Մի օր մր. Ջեյմսը շատ բարկացավ, երբ լսեց, թե նա երեխաներին պատմել է, թե ինքն էլ մի նավավարի աղջիկ է, ինքն էլ մի ժամանակ նրանց նման վազվզել է իր հայրենիքի ծովափին։

Օ՛հ, Էմլի։ Թշվառ գեղեցկուհի։ Ի՛նչ պատկեր ներկայացավ աչքերիս, երբ երևակայեցի քեզ օտար ծովափին նստած, անմեղ օրերդ հիշեցնող մանուկների շրջանում, որոնց քաղցրիկ թոթովանքին ականջ դնելիս՝ անշուշտ կասեիր, թե ինքդ էլ գուցե այդպիսի մանկանց մայր լինելու երջանկությունը կունենայիր, եթե մի խեղճ նավաստու կին լինեիր։ Այնինչ ծովը մշտամռունչ շառաչով քեզ կրկնում էր. «Ոչ երբեք, ո՛չ երբեք»։

– Երբ պարզվեց, որ էլ անելու բան չկա, միս Դարտլ. . .

– Մի՞թե չասացի, որ ինձ չդիմեք,– գոչեց միս Դարտլն արհամարհոտ խստությամբ։

– Դուք ինքերդ ինձ դիմեցիք, օրիորդ,– պատասխանեց սպասավորը։– Խնդրեմ՝ ներեցեք։ Իմ պարտքն է հնազանդվել։

– Եվ կատարեցեք ձեր պարտքը,– հրամայեց նրան օրիորդը։– Վերջացրեք ձեր պատմությունն ու հեռացեք։

– Երբ հայտնի եղավ,– շարունակեց սպասավորը պատկառելի վայելչությամբ ու շատ խոնարհ հլությամբ,– թե այլևս նրան գտնելու հնար չկա, ես գնացի մր. Ջեյմսի մոտ, այնտեղ, որ իր պատվերով նամակներ էի հասցնում իրեն, և եղելությունը պատմեցի։ Մեր միջև մի բանակռիվ ծագեց, և պատիվս ինձ հարկադրեց թողնել նրան։ Ես շատ եմ համբերել մր. Ջեյմսի վարմունքին և դարձյալ կարող էի համբերել. բայց այս անգամ նա չափը կորցրեց։ Ես էլ գիտենալով, թե ի՞նչ թշվառ երկպառակտություն կա նրա ու մեր միջև, և թե ինչպիսի տագնապ է կրում այդ մայրը, վստահացա վերադառնալ Անգլիա և պատմել. . .

– Իմ վճարած փողի փոխարեն,– ասաց միս Դարտլը ինձ դիմելով։

– Այո՛, օրիորդ. . . և պատմել նրան, ինչ որ գիտեմ։ Կարծեմ այլևս ասելիք չունեմ, հարեց մր. Լիտտիմերը մի քանի վայրկյան լռելուց հետո։ Այժմ անգործ եմ և կցանկանայի մի պատվավոր պաշտոն գտնել։

Միս Դարտլը վրաս նայելով հարցրեց. արդյոք չե՞մ կամենա մի բան հարցնել։ Ես հիշեցի մի հանգամանք ու ասացի.

– Կուզենայի իմանալ այդ. . . արարածից (ուժիցս վեր էր արտասանել մի ավելի մեղմ խոսք) – արդյոք բռնե՞լ են այն նամակը, որ տանից էր գրված աղջկան, թե՞ կարծում է, որ նամակը նրան հասել է։

Սպասավորը լուռ կանգնած էր՝ աչքերը կախ ու աջ ձեռքի մատների ծայրը ձախ ձեռքի մատների ծայրին դեմ տված։

– Թողություն կանեք, օրիորդ,– ասաց սպասավորը, մտմտուքից սթափվելով,– թեպետ ես մի սպասավոր եմ, և ձեզ հնազանդ սպասավոր, բայց ես էլ իմ դիրքն ունեմ։ Եթե մր. Կոպպերֆիլդը կամենում է ինձնից մի բան իմանալ, կհամարձակվեմ մր. Կոպպերֆիլդին հիշեցնել, թե կարող է անմիջապես ինձ հարցնել։ Ես տեր եմ իմ պատվին։

Ինքս ինձ հետ մի վայրկյան մաքառելուց հետո աչքերս նրան ուղղեցի և ասացի.

– Դուք հարցումս լսեցիք։ Համարեցեք, թե նա ձեզ էր ուղղված։ Ի՞նչ պատասխան կտաք ինձ։

– Սըր,– ասաց նա, հիշյալ ծայրերը փոփոխակի բաժանելով ու միացնելով,– իմ պատասխանը հանգամանքներին պատշաճ կլինի։ Մատնել մր. Ջեյմսի ինձ հավատացած գաղտնիքը նրա մոր առջև և մատնել ձեր առջև – երկու տարբեր բաներ են։ Հավանական չէ, ըստ իս, որ մր. Ջեյմսը հաշտ աչքով նայելիս լիներ այդ գրգռիչ ու դառնացուցիչ նամակների ստացվելուն. չէի կամենա սրանից ավելի բան ասել, սըր։

– Ա՞յդ է բոլորը,– հարցրեց ինձ միս Դարտլը։

Պատասխանեցի, թե էլ ասելու բան չունեմ։

– Բացի այն,– հարեցի ես, սպասավորի հեռանալը նկատելով,– որ լավ եմ տեսնում այդ արբանյակի խաղացած դերն այս եղեռնական գործի մեջ։ Եվ, որովհետև մտադիր եմ ամբողջ եղելությունն այն ազնիվ մարդուն հայտնել, որ աղջկա մանկությունից ի վեր նրա հարազատ հոր տեղն է բռնել, խորհուրդ կտայի այդ հեռացողին հաճախ չերևալ փողոցներում։

Սպասավորը կանգ էր առել և հանգիստ ականջ էր դնում ասածներիս։

– Շնորհակալ եմ, սըր։ Սակայն կներեք, եթե ասեմ, սըր, որ այս երկրում ոչ ստրուկներ կան, ոչ ստրուկ պահողներ, և ոչ մի մարդու թույլ չի տրված իր ձեռքով դատաստան տեսնել։ Եվ, եթե մեկն այդպես անի, ավելի իրեն կվնասի, քան ուրիշին։ Հետևաբար, սըր, ձեր սպառնալիքից վախենալու տեղիք չունեմ և ուր կամենամ, այնտեղ կերթամ։

Եվ քաղաքավարի կերպով գլուխ տալով ինձ, հետո միս Դարտլին, սպասավորը նույն ճանապարհով, որով եկել էր, հաճարուկի ցանկապատի հետևն անհետացավ։ Միս Դարտլն ու ես մի քանի վայրկյան մեկ-մեկու լուռ մտիկ էինք անում. նրա դեմքի արտահայտությունը նույնն էր, ինչ որ սպասավորին կանչելիս։

– Այն էլ է ասում,– նկատեց օրիորդը, շուրթերը թեթև սեղմելով,– թե իր տերն այժմ Իսպանիայի ափերն է չափչփում և դեռ երկար պիտի թափառե ծովերի վրա։ Սակայն ձեր համար դա նշանակություն չունի։ Այդ երկու գոռոզ անձանց, այդ մոր ու որդու միջև բացված վիհն այժմ ավելի լայնացել է, քան առաջ, և դժվար թե շուտով ծածկվի, որովհետև երկուսն էլ մի բնույթի են, և ժամանակը ավելի է սաստկացնում յուրաքանչյուրի համառությունն ու խրոխտությունը։ Բայց սա էլ ձեզ համար հետաքրքիր չէ, այլ միայն ասելիքիս առաջաբանը։ Այն դևը, որ ձեր աչքում մի հրեշտակ է... ուզում եմ ասել այն ստոր աղջիկը, որին Ջեյմսը ցեխից հանել էր (օրիորդը կրակոտ աչքով վրաս նայեց ու դողդոջ մատը բարձրացրեց)... գուցե դեռ կենդանի է, չէ՞ որ այդ գորշ արարածները շուտ չեն մեռնում։ Եթե կենդանի է, դուք հարկավ հոգ կտանեք, որ այդ անգին գոհարը գտնվի ու պահպանվի։ Մենք էլ նույնը կցանկանանք, որպեսզի Ջեյմսն ազատվի երկրորդ անգամ նրա ճանկն ընկնելու վտանգից։ Այսքանում ձեր ու մեր շահերը հավասար են. սա էր պատճառը, որ ես,– թեպետև աշխարհիս երեսին ցավ չկա, որ չուզենայի այդ գարշելի աղջկան հասցնել,– ձեզ կանչեցի, որպեսզի լսեք, ինչ որ լսեցիք։

Օրիորդի դեմքի փոփոխվելուց իմացա, որ մեկն իմ հետևից մոտենում է։ Դա մրս. Ստիրֆորթն էր։ Նա իր աջն ավելի մեծ սառնությամբ ինձ մեկնեց, քան երբեմն, և ավելի հպարտ վսեմությամբ, բայց ես նկատեցի, որ նա դեռ չի մոռացել իմ նախկին մտերմությունն իր որդու հետ, և այդ ինձ շատ հուզեց։ Տիկինը սաստիկ փոխված էր. նուրբ իրանը ճկված էր, գեղեցիկ դեմքը խորշոմած, մազերը գրեթե սպիտակած։ Այնուամենայնիվ նա դեռ սիրուն տիկին էր, և նրա պայծառ աչքերը դեռ պահպանել էին այն հպարտ հայացքը, որ նույնիսկ մանկական երազներիս մեջ լույսի նման փայլել էր։

– Արդեն ամեն բան գիտի՞ մր. Կոպպերֆիլդը, Ռոզա։

– Այո։

– Եվ նույնիսկ Լիտտիմերի՞ց։

– Այո. և ես իրեն հայտնեցի, թե ինչու էիր այդպես կամեցել։

– Լավ աղջիկ եք։ Ես ուրեմն թղթակցում եմ, սըր, ձեր նախկին ընկերոջ հետ,– ասաց լեդին ինձ դիմելով,– սակայն նա դեռ այնքան չի մեղմացել, որ նորից իր որդիական պարտքը ճանաչի։ Ուստի այս բանում ես մի ուրիշ նպատակ չունեմ, բացի այն, որ Ռոզան ձեզ հայտնել է։ Եթե ձեր բերած պարկեշտ մարդու վշտերը ժամանակով ամոքվեն (ես նրան ափսոսում եմ, և սա արդեն հերիք է), և որդիս ընդմիշտ չար թշնամու որոգայթից ազատվի, շատ լավ է։

– Տիկին,– ասացի ես հարգանքով,– հասկանում եմ։ Հավաստի եղեք, որ ես ամենևին մտադիր չեմ ձեր սրտի շարժառիթները թյուր մեկնել։ Սակայն այն զրկված ընտանիքը մանկությունից ճանաչելով, պարտավոր եմ ասել, նույնիսկ ձեզ, որ սաստիկ սխալվում եք, եթե կարծում եք, թե այն աղջիկը սառը նախատինք չի կրել, անգթաբար չի խաբվել և թե նա լավ չի համարի հազար անգամ մահ ընդունել, քան մի բաժակ ջուր ձեր որդուց։

– Հերիք է, Ռոզա, բավական է,– ասաց մրս. Սրիրֆորթը, նկատելով, որ Ռոզան ուզում է մի բան ասել։– Փույթ չէ, թող այդպես լինի։ Լսել եմ, սըր, թե դուք արդեն ամուսնացել եք։

Պատասխանեցի, որ մի քանի ժամանակից ի վեր ամուսնացել եմ։

– Եվ ձեր գործերը հաջո՞ղ են։ Ես աշխարհից այնքան հեռացել եմ, որ շատ բան չգիտեմ. բայց և այնպես լսել եմ, որ արդեն սկսել եք հռչակ ստանալ։

– Բարեբախտաբար,– ասացի ես,– տեսնում եմ, որ անունս փոքր-ինչ գովում են։

– Մայր չունե՞ք,– հարցրեց նա փոքր-ինչ ավելի մեղմ ձայնով։

– Չունեմ։

– Ափսո՛ս։ Նա կպարծենար ձեզ նման որդով։ Բարի գիշեր։

Ես նրա աջն առա, որ նա աննկուն հպարտությամբ մեկնել էր, և աջն այնպես հանգիստ էր, որ կասեիր թե խաղաղություն է թագավորում վիրավորված մոր սրտում։ Նրա գոռոզությունը ընդունակ էր նույնիսկ բազկերակի զարկը զսպել և երեսի վրա անդորրության քող սփռել, որի տակից նա ուղիղ առաջ էր նայում՝ հեռո՛ւ, հեռո՛ւ։

Դարաթափից հեռանալիս չէի կարող չնկատել, թե ինչպես այդ երկու կանայք անշարժ նստած անքթիթ մտիկ են անում հորիզոնին, որ հետզհետե նրանց շուրջը մթնում էր։ Հեռավոր քաղաքում մի քանի տեղ լապտերները սկսել էին պլպլալ. արևելյան երկնակամարի աղոտ լույսը դեռ չէր հանգել։ Իսկ մոտավոր հովտի խորքից թեթև մեգ էր բարձրանում, որ պատրաստ էր խավարում փռվող ծովի նման ալիքներով պատել այն երկու էակին։ Չեմ կարող այդ պատկերն առանց սոսկալու մտաբերել. որովհետև, երբ երկրորդ անգամ ետ նայեցի, նրանց ոտքերի տակ մի փոթորկվող ծով էր գոյացել։

Լսածներս լավ կշռելուց հետո պետք համարեցի ամեն բան մր. Պեգգոտիին հայտնել։ Հետևյալ օրը, երեկոյան դեմ, Լոնդոն գնացի նրան որոնելու։ Նա շարունակ թափառում էր իր թոռնիկին նորից գտնելու միակ փափագով, բայց ավելի հաճախ Լոնդոնումն էր պտույտ գալիս, քան ուրիշ տեղ։ Շատ անգամ տեսել էի նրան՝ փողոց-փողոց անցնելիս գիշերային լռության մեջ, տարաժամ շրջող ստվերների թվում այն անձին փնտրելով, և ուզում, և վախենում էր գտնել։

Նա սենյակ էր վարձել մի կրպակի վերին հարկում։ Հընդզիորդի շուկայի վրա, որի մասին արդեն առիթ եմ ունեցել մի երկու անգամ հիշելու, և որտեղից սկսել էր իր գթասեր թափառմունքը։ Ահա այնտեղ գնացի։ Հարձուփորձ անելիս տան բնակիչներից իմացա, թե նա դեռ դուրս չի եկել և կարելի է վերևի խցիկում գտնել նրան։

Նա նստած էր և բան էր կարդում պատուհանի մոտ, որի վրա մի քանի ծաղիկներ կային։ Սենյակը մաքուր ու կոկիկ էր։ Իսկույն տեսա, որ դա միշտ պատրաստ էր պահվում կորած աղջկան ընդունելու համար, և որ տերը ամեն անգամ այն հույսով է դուրս գալիս, թե գուցե կարելի կլինի նրան գտնել ու տուն բերել։ Նա դուռը թակելս չլսեց և միայն այն ժամանակ գլուխը բարձրացրեց, երբ ես ձեռքս իր ուսին դրի։

– Մաստր Դեվի։ Շնորհակալ եմ, սըր, սրտանց շնորհակալ այս այցելության համար։ Նստեցեք։ Գալդ բարի, սըր։

– Մր. Պեգգոտի,– ասացի ես, նրա առաջարկած աթոռի վրա նստելով,– ինձանից շատ բան մի՛ սպասեք, բայց մի քանի լուր ունեմ։

– Էմլիի՞ մասին։

Մարդը ցնցվելով իր ձեռքը բերանին դրեց ու սփրթնած դեմքով ինձ նայեց։

– Որտեղ գտնվելը չգիտեմ, բայց այլևս տղայի հետ չէ։

Նա նստած էր՝ աչքերը երեսիս հառած և պատմությանս ունկնդիր։ Չեմ մոռանա այն տպավորությունը, որ գործեց վրաս նրա պատկառելի, մինչև անգամ գեղեցիկ դեմքը, երբ համբերատար լրջությամբ աչքերը կախեց և ձեռքը ճակատին դնելով ներքև նայեց։ Ոչ մի անգամ խոսքս չընդհատեց, այլ մինչև վերջը լուռ մնաց։ Իմ ամբողջ պատմության մեջ կարծես միայն Էվլիին էր տեսնում և մյուս ամեն պատկերներն անտես թողնում, իբրև չնչին ստվերներ։

Երբ ավարտեցի, երեսը ծածկեց և շարունակեց լուռ մնալ։ Ես դեպի պատուհանը շուռ եկա, իբր թե ծաղիկները տեսնելու։

– Ի՞նչ եք կարծում այդ մասին, մաստր Դեվի,– հարցրեց նա վերջապես։

– Թե նա դեռ կենդանի է,– պատասխանեցի ես։

– Չգիտեմ։ Առաջին հարվածը գուցե անչափ սաստիկ էր, և նա իր կրակոտ սրտով... Զուր չէր սիրում կապույտ ծովի մասին խոսել։ Մի՞թե նրա համար էր ծովի մասին այնքան մտածում, որ իր գերեզմանը դրա մեջ գտներ։

Այս խոսքերը նա մի մտածկոտ եղանակով, զարհուրած ու մեղմ ձայնով ասաց. հետո սկսեց սենյակում ման գալ։

– Այնուամենայնիվ, մաստր Դեվի,– հարեց նա,– զգում եմ, որ դեռ կենդանի է։ Քնելիս ու զարթնելիս մի ինչ-որ ձայն ինձ ասում է, թե անպատճառ կգտնեմ նրան։ Այս հույսն էր՝ նրան որոնելու դրդում ինձ... այս հավատն էր ուժ տալիս ինձ... Անկարելի է, որ խաբված լինեմ։ Ո՛չ, ո՛չ, Էվլիս կենդանի է։

Նա ուժգնությամբ իր ձեռքը սեղանին դրեց, և արևակեզ երեսը մի անդրդվելի հաստատակամություն արտահայտեց։

– Այո, Էվլին կենդանի է, սըր,– ասաց նա վստահորեն։– Չգիտեմ որտեղից և ինչպես, բայց ես լսում եմ, որ ապրում է։

Այդ խոսքերն ասելիս ալևորը մի հոգեշունչ մարդու նման էր։ Ես մի քանի վայրկյան սպասեցի, մինչև որ նա կարողանա անբաժան ուշադրությամբ ինձ լսել, և ապա նրան մի խորհուրդ տվի, որ վերջին գիշերն էր միտքս ընկել։

– Շնորհակալ եմ, շատ շնորհակալ, ազնիվ սըր,– ասաց նա երկու ձեռքով աջս սեղմելով։

– Եթե նա Լոնդոն գա,– ասացի ես,– որ շատ հավանական է... որովհետև որտե՞ղ կարող է ավելի հեշտ թաքնվել, քան այս ահագին քաղաքում... և ուրիշ ի՞նչ բան կուզենա անել, եթե ոչ թաքնվել, եթե միայն որոշած լինի չվերադառնալ ձեր տունը...

– Իմ տունը չի վերադառնա՛,–խոսքս կտրեց ալևորը, գլուխը տրտում շարժելով։– Ուրիշ բան է, եթե իր կամքով թողած լիներ այն մարդուն. այն ժամանակ կարելի է իմ տունը վերադառնար. իսկ այսպես՝ ո՛չ երբեք, սըր։

– Եթե Լոնդոն գա,– շարունակեցի ես,– այստեղ ես մի կին ունեմ նկատի, որ ավելի հեշտ կգտնի նրան, քան մի ուրիշ մարդ։ Արդյոք հիշո՞ւմ եք... արիաբար ականջ դրեք ինձ... ձեր սուրբ նպատակը մի՛ մոռանաք... արդյոք Մարթային հիշո՞ւմ եք։

– Մեր քաղաքի Մարթայի՞ն։

Պատասխանելու հարկ չկար. բավական էր նրա դեմքին նայել։

– Գիտե՞ք, որ այժմ նա Լոնդոնումն է։

– Հանցիպել եմ նրան փողոցում,– ասաց ծերունին սարսռելով։

– Սակայն չգիտեք,– շարունակեցի ես,– որ Էմլին, դեռ փախչելուց առաջ, շատ լավություն է արել նրան Հեմի օգնությամբ: Այն էլ չգիտեք, որ երբ մենք մի գիշեր փողոցում հանդիպեցինք ու երկար խոսակցում էինք պանդոկի մեջ, Մարթան մեզ դռան հետևից ականջ էր դնում:

– Մաստր Դեվի,– ասաց բարեկամս ապշությամբ:– Ա՞յն գիշեր, երբ սաստիկ ձյուն էր գալիս:

– Հենց այն գիշեր: Ոչ մի անգամ այնուհետև չեմ տեսել նրան: Մեր բաժանվելուց հետո ես նրա հետևից գնացի, բայց չգտա: Չէի կամենում այն ժամանակ նրա մասին խոսել ձեզ հետ, ինչպես որ այս անգամ էլ չեմ կամենում. բայց, կարծեմ, մեզ պետք է նրա հետ բանակցել: Հասկանո՞ւմ եք:

– Լիովին, սըր,– պատասխանեց ալևորը:

Այս բոլորն իրար ասում էինք համարյա թե շշնջալով. այդպես էլ շարունակեցինք:

– Ասացիք, թե մի քանի անգամ պատահել եք նրան: Արդյոք նրան գտնելու հնար ունե՞ք: Ես կարող եմ միայն պատահմամբ տեսնել նրան:

– Կարծեմ գիտեմ, մաստր Դեվի, թե որտեղ պետք է որոնել:

– Արդեն մութն է: Արդյոք հենց այս գիշեր փնտրելու չելնե՞նք:

Բարեկամս հոժարություն հայտնեց ու սկսեց պատրաստվել: Ես տեսա, սակայն առանց ցույց տալու, թե իր արածը դիտում եմ, թե նա ինչ խնամքով իր փոքրիկ սենյակը հավաքեց, սեղանի վրա ճրագ դրեց, հետն էլ լուցկիներ, անկողինը սարքեց, վերջապես պահարանից մի զգեստ հանեց (կարծեմ մի ժամանակ տեսել էի Էմլիի վրա), որ մի քանի ուրիշ կտորների հետ լավ ծալված էր, հետո մի գլխարկ, և այդ բոլորը մի աթոռի վրա դարսեց: Նա ոչ մի ակնարկություն չարեց դրանց մասին. ես էլ չարի: Տարակույս չկա, որ դրանք շատ ու շատ գիշերներ էին անցկացրել Էմլիին սպասելով:

– Կար ժամանակ, մաստր Դեվի,– ասաց բարեկամս սանդուղքից ինձ հետ իջնելիս,– երբ ես Էմլիիս ոտքերի փոշուց ստոր էի համարում այդ աղջկան, այդ Մարթային: Թող աստված ինձ ների. այժմ բանն ուրիշ է:

Ճանապարհին՝ մեկ ծերունուն խոսեցնելու, մեկ էլ հետաքրքրությունս հագեցնելու համար, Հեմի մասին հարցրի նրան: Գրեթե առաջվա խոսքերով պատասխանեց, թե Հեմը միշտ միևնույն է, «սաստիկ աշխատանքով իրեն մաշում է՝ առանց իր կյանքը բանի տեղ դնելու, բայց երբեք չի տրտնջում և ամենքից սիրված է»:

Հարցրի, թե արդյոք գիտի՞ Հեմի ներքին դիտավորությունը իրենց թշվառության հեղինակի վերաբերմամբ: Արդյոք այդ դիտավորությունը վտանգավեր չէ՞: Ի՞նչ կաներ Հեմը, եթե, օրինակի համար, հանկարծ Ստիրֆորթին հանդիպեր:

– Չգիտեմ, սըր,– պատասխանեց մր. Պեգգոտին:– Ես ինքս այդ մասին շատ եմ մտածել, բայց դարձյալ ոչինչ չգիտեմ:

Հիշեցրի նրան Էմլիի փախստյան հաջորդ առավոտը, երբ երեքս միասին ծովափին էինք հավաքվել:

– Մտաբերո՞ւմ եք,– ասացի,– թե ինչպիսի վայրագ աչքերով ծովին նայեց ու ասաց. «Ամեն բանի վերջն այնտեղ է»:

– Ինչպես չէ:

– Ի՞նչ եք կարծում՝ ի՞նչ էր ուզում ասել Հեմը:

– Մաստր Դեվի,– ասաց ալևորը,– ես ինքս հազար անգամ հարցրել եմ ինձ, բայց պատասխան չեմ գտել: Զարմանալի բան... նա շատ բարի տղա է, բայց էլի ես չեմ համարձակվի այդ մասին բան հարցնել նրան: Նա ինձ երբեք մի անպատկառ խոսք չի ասի. բայց նրա միտքը այս ջրի նման չի, մի խոր ծովի նման է: Ո՞վ գիտե, ինչ կա նրա հատակում:

– Իրավ եք ասում,– նկատեցի ես,– և դա է, որ երբեմն ինձ վախեցնում է։

– Ինձ էլ, մաստր Դեվի,– ասաց մր. Պեգգոտին։– Չգիտեմ ի՞նչ բռնի միջոցների կդիմի, բայց հուսով եմ, որ այդ երկուսը երբեք իրար չեն հանդիպի։

Տեմպլ Բարից անցնելով Սիտի մտանք։ Ծերունին դադարեց խոսել։ Նա զբաղված էր իր կյանքի միակ նպատակով, և իր մտքերը այն աստիճան մի կետի վրա էին ամփոփված, որ նույնիսկ մարդաշատ բազմության մեջ մենավոր էր երևում։ Հանկարծ Բլեքֆրայերսի կամուրջի մոտ նա շուռ եկավ ու ցույց տվեց մի կնոջ, որ մենակ անցնում էր փողոցի մյուս կողմով։ Ես իսկույն ճանաչեցի Մարթային։

Մենք փողոցի այն կողմն անցանք ու մինչ շտապում էինք հասնել նրան, միտս ընկավ, որ նա գուցե ավելի շուտ կուզենար կորած աղջկա վիճակին մի կանացի կարեկցություն հայտնել, եթե մենք իր հետ խոսեինք մի հանգիստ տեղում, ուր ոչ ոք մեզ չնկատեր, քան թե խառն բազմության մեջ։ Այս պատճառով խորհուրդ տվի ընկերոջս՝ այժմ նրան չմոտենալ, այլ միայն հետևել. միևնույն ժամանակ մի անորոշ փափագ էի զգում, իմանալու, թե Մարթան արդյոք ո՞ւր կերթա։

Մր. Պեգգոտին խորհուրդս ընդունեց, և մենք աղջկա հետևից գնացինք, առանց աչքաթող անելու նրան, բայց և առանց շատ մոտենալու, որովհետև նա շարունակ դեսուդեն էր մտիկ անում։ Մի անգամ կանգ առավ երաժիշտների խմբին լսելու. մենք էլ կանգ առանք։

Նա շատ հեռու գնաց. մենք էլ գնացինք։ Քայլելու եղանակին նայելով երևում էր, որ մի որոշ նպատակի է դիմում։ Մեկ այդ հանգամանքը և երկրորդը այն, որ նա աշխատում էր մարդաշատ փողոցներով անցնել, և, վերջապես, այս խորհրդավոր հետամտության ուրույն ու դյութիչ հրապույրը դրդում էին ինձ մինչև վերջ հետևել նրան։ Ահա նա մի տխուր ու մռայլ փողոց մտավ, ուր ոչ բազմություն կար, ոչ աղմուկ։

– Այժմ կարող ենք խոսել նրա հետ,– ասացի ես։

Եվ փութացնելով քայլերը՝ շուտ-շուտ գնացինք հետևից։

Է. ԳԼՈՒԽ
Մարթան

Արդեն Ուեստմինստրի թաղումն էինք։ Մի անգամ ստիպված եղանք ետ դառնալ Մարթային հետևելու համար, որովհետև նա հանկարծ սկսեց դեպի մեզ գալ, և միայն Ուեստմինստրի Աբբայության մոտերքում հեռացավ բանուկ փողոցների աղմուկից ու լույսից։ Եվ երբ նա կամրջի վրա անցուդարձ անող բազմության միջից դուրս եկավ, այնպես շտապ առաջ դիմեց, որ մենք հազիվ կարողացանք հասնել նրան Միլբենկին կից գետեզրյա նեղ փողոցում։ Հենց այդ րոպեին նա ճանապարհի մյուս կողմն անցավ, կարծես թե իրեն հետամուտ քայլերի ձայնից խորշելով, և առանց ետ նայելու՝ ավելի արագ առաջ գնաց։

Գետի աղոտ փայլը, որ աչքիս դիպավ մի մութ բակի դռան միջով, ուր մի քանի սայլեր էին կանգնած, քայլերս զսպեց։ Առանց մի բառ ասելու ես ընկերոջս մշտեցի, և մենք չվստահացանք փողոցը կտրել, ինչպես արել էր Մարթան, այլ միևնույն կողմով շարունակեցինք առաջ գնալ, կարելվույն չափ տների ստվերում մնալով, բայց միշտ աղջկան հետամուտ։

Այդ ստորանիստ փողոցի ծայրում մի ժամանակ, ինչպես և սույն տողերը գրելուս օրը, մի փայտաշեն տնակ կար, որ երևի լաստավարի արդեն անպետք կայան էր։ Դա գտնվում էր ճիշտ այնտեղ, ուր փողոցը վերջանում և ճանապարհը բացվում է տների շարքի ու գետափի

միջով։ Մարթան ավերակին հասնելուն ու ջուրը տեսնելուն պես կանգ առավ, ասես թե նպատակին հասած լիներ, և հետո հանդարտ ներքև իջավ գետեզերքի երկարությամբ, շարունակ ջրին նայելով։

Ամբողջ ճանապարհին ես կարծում էի, թե նա որևէ տուն է գնում, և մի տկար հույս ունեի, թե այդ տունը որևէ կերպ կապված կլինի անհետացած աղջկա հետ։ Սակայն բակի միջով աչքիս դիպչող գետի մռայլ տեսարանից բնազդաբար զգացի, որ Մարթան ավելի հեռու չի գնալու։

Շրջակայքը տխրագին էր այդ ժամին. հազիվ թե Լոնդոնի շուրջը մի անկյուն գտնվի, որ գիշերով այնքան տրտում, ահարկու, ամայի երևա։ Ո՛չ նավամատույցներ կային սևաթույր ու լուռ բանտի մոտով անցնող ճամփի վրա, ո՛չ տներ։ Բանտի ստորոտը ողողված էր ճահճային փոսի տիղմով։ Ամբողջ մերձակա մորուտը փտած ու գարշահոտ մոլախոտով ծածկված էր։ Մի տեղ դժբախտ սկսված, անավարտ մնացած շենքերի խարխուլ կմախքներն էին երևում։ Մյուս տեղ գետնի երեսին ընկած էին ժանգոտ երկաթի կտորներ, այլանդակ շոգեկաթսաներ, անիվներ, թիակներ, խարիսխներ, ջրասուզակ մեքենաներ, հողմաղացի առագաստներ և ուրիշ՝ ինձ բոլորովին անհայտ տարօրինակ առարկաներ, որոնք մի անհաջող շահագետի ձեռքով միասին դիզված՝ ասես թե իրենց հատուկ ծանրությամբ ուզում էին հողում խրվել ու թաքնվել։ Գետի մյուս ափից զանազան գործարաններ կայծեր տարածելով ու շառաչելով գիշերային մթության մեջ, ասես թե փորձում էին ամեն բան հալածել ու վրդովել, բացի իրենց ժայթքած անվերջ ծխից, որ թանձր ու ծանր այուներով դեպի վեր էր սլանում։ Ցեխոտ արահետները ու շավիղները, արդեն փտած ու սիզապատ այուների մոտից անցնելով,– որոնց վրա ջրահեղձ մարդկանց համար վարձատրություն խոստացող հին թերթեր էին կպցված,– ոլոր-մոլոր մինչև տղմուտ գետափը։ Ավանդություն կար, թե այդտեղ գտնվող մի փոսի մեջ են թաղված եղել Մեծ Ժանտամահի զոհերը, և կարելի էր կարծել, թե շրջակայքի գարշ օդը նրա միջից է տարածվում։ Բայց գուցե և գետի դուրս վիժած աղբ ու կեղտից գոյացած լիներ այդ ամբողջ պղծությունը։

Մեր առջևից գնացող աղջիկը, իբրև այդ վիժվածքի մի մասը, որ դատապարտված էր ապականվել ու կորչել, դեպի գետափը ներքև իջավ և ջրին մենակ, անշարժ ու լուռ մտիկ անելով, գիշերային տեսարանի մեջտեղը կանգ առավ։

Սիկախառն եզերքի վրա մի քանի նավակ ու մակույկներ կային, և դրանք մեզ հնավարորություն տվին բավական մոտենալու աղջկան՝ առանց աչքի ընկնելու։ Ես մր. Պոգգոտիին նշան արի, որ իր տեղը մնա, և ինքս ստվերից դուրս ելա Մարթայի հետ խոսելու համար։ Մոտեցա նրան դողալով։ Նրա շտապ ընթացքի այդ խավար վերջակետն ու երկաթե կամրջի մութ շուքը, որի մեջ նա կանգնած էր՝ ջրի հորձանքում շեղ-շեղ ցոլացող լույսերին սևեռած աչքերով, ակամա սարսափ ազդեցին ինձ։

Նա, կարծես, ինքն իր հետ խոսում էր։ Շարունակ գետին ակնկառույց՝ նա վզի շալը ցած քաշեց ու սկսեց ձեռքերի մեջ ճմրթել այնպես անմիտ ու վայրենի շարժումներով, որ կասեիր, թե ավելի շուտ մի քնաշրջիկ է, քան արթուն կին։ Գիտեմ և երբեք չեմ մոռանա, որ նրա վայրագ ձևերը տեսնելուս պես ես համոզվեցի, որ նա աչքիս առջև ջուրը կնետվի, և այդ վայրկյանին էր, որ «Մարթա» գոչելով՝ նրա ձեռքը բռնեցի։

Նա զարհուրելի ճիչ արձակեց ու սկսեց փախչելու սաստիկ փորձեր անել. ես գուցե չկարողանայի մենակ ինքս պահել նրան, եթե նույն րոպեին մի ավելի զորեղ բազուկ նրան չբռներ։ Աղջիկը սարսափահար վերև նայեց և տեսնելով, թե ո՞վ է այդ բազկի տերը, դարձյալ մի փորձ արեց դուրս պրծնելու և ուժասպառ վայր ընկավ։ Մենք ալիքներից հեռացրինք նրան դեպի մի անկյուն, ուր մի քանի հատ չոր քարեր կային, և նստեցրինք։ Նա լաց էր լինում ու հեծում։ Այսպես նա մի քանի ժամանակ քարերի առջև նստած մնաց, թշվառ գլուխը ձեռքերի մեջ թաքցնելով։

– Օ՜հ, գետը,– գոչեց նա հուսահատ։– Օ՜հ գետը։

– Հանդարտ, հանդարտ,– ասացի ես։– Հանգստացեք։

Բայց նա անդադար կրկնում էր. «Օ՜հ, գե՛տը, գե՛տը», և հետո ասաց.

– Դա ինձ նման է, դրան եմ պատկանում։ Գիտեմ, միայն դա է ինձ նման թշվառների ընկերը։ Գալիս է սիրուն ու զվարթ դաշտերից, ուր իր ջրերը մաքուր էին... այժմ սահում է մթապատ փողոցներով՝ ապականված, անպիտան... սահում, գնում, կյանքիս նման, դեպի մշտածուփ օվկիանոսը... և ես զգում եմ, ինձ էլ պետք է նրա հետ գնալ։

Միայն այդ խոսքերի արտասանության եղանակից էր, որ կյանքումս առաջին անգամ իմացա թե հուսահատությունն ի՞նչ բան է։

– Չեմ կարող բաժանվել դրանից։ Չեմ կարող մոռանալ դրան։ Գիշեր ցերեկ աչքիս առջև է։ Ամբողջ աշխարհիս երեսին դա է միակ առարկան, որին ես հարմար եմ, կամ որն ինձ համար է։ Օ՜հ, ահռելի գետ։

Նայելով ընկերոջս, մինչ նա անշարժ ու լուռ մտիկ էր անում Մարթային, ինձ թվաց, թե կարող եմ նրա եղբոր աղջկա պատմությունն իր դեմքի վրա պարզ կարդալ, անգամ եթե ամենևին նրա հետ ծանոթ չլինեի։ Ոչ մի ժամանակ՝ ոչ նկարի վրա, ոչ էլ իրական կյանքի մեջ կարեկցության ու սարսափի զգացումները այդպես մտահար չէին երևացել աչքիս առջև։ Մր. Պեգգոտին սարսռաց և ընկնելու վրա էր, և երբ ես տագնապով նրա ձեռքը բռնեցի, մահու չափ պաղ էր այդ ձեռքը։

– Այժմ նա զառանցում է,– շշնջացի ընկերոջս։– Փոքր-ինչ հետո ուրիշ կերպ կսկի խոսել։

Չգիտեմ, ինչ էր ուզում պատասխանել ընկերս։ Մի քանի անգամ շուրթերը շարժեց (անշուշտ կարծում էր, թե պատասխան է տալիս) և ձեռքը մեկնելով մատնացույց արավ աղջկան։

Աղջիկը դարձյալ մի աղիողորմ ճիչ հանեց և նորից երեսը մեր ոտքերի տակ քարերի մեջ թաքցրեց, իբրև խայտառակության ու անկման մի գետնատարած օրինակ։ Գիտենալով, որ աղջկա հետ խոսելուց առաջ, պետք է նրա հուզման անցնելուն սպասել, ես ընկերոջս արգելեցի, երբ նա ուզում էր աղջկան բարձրացնել, և մենք լուռ մնացինք, մինչև որ նա փոքր-ինչ հանգստանա։

– Մարթա,– ասացի ես այնուհետև, նրան բարձրացնելու համար կռանալով (նա ուզում էր կարծեմ վեր կենալ ու հեռանալ, բայց այնքան թույլ էր, որ մի նավակի հենվեց)։– Մարթա, ճանաչո՞ւմ եք՝ ո՞վ է սա, հետիս մարդը։

Նա մի նվազ ձայնով պատասխանեց.

– Այո՛։

– Գիտե՞ք, որ այս գիշեր երկար ժամանակ հետևում էինք ձեզ։

Նա գլուխը շարժեց։ Չէր նայում ո՛չ ընկերոջս, ո՛չ էլ ինձ, այլ խոնարհ կանգնած էր՝ գլխարկն ու շալը մի ձեռքին, իսկ մյուսն ամուր սեղմած ճակատին։

– Արդյոք բավական հանգստացա՞ք,– ասացի ես։– Կարո՞ղ եք խոսել մի առարկայի մասին, որ այնքան ձեզ հետաքրքրում էր մի գիշեր... Աստված ձեզ զորություն տա հիշելու... Երբ սաստիկ ձյուն էր գալիս։– Աղջիկը նորից հեկեկաց և անկապ խոսքերով շնորհակալություն մրմնջաց, որ այն գիշեր նրան դռան հետևից չվռնդեցի։

– Իմ մասին բան ասելու պետք չունեմ,– ասաց նա մի քանի վայրկյանից հետո։– Ես մի թշվառ, կորած էակ եմ։ Էլ հույս չկա ինձ համար։ Սակայն, սըր, եթե ձեզ դժվար չլինի խնդիրս կատարել, ասացեք դրան (և աղջիկն ընկերոջիցս ետ քաշվեց), որ ես դրա անբախտության պատճառ չեմ եղել։

– Ոչ ոք էլ այդ կարծիքին չի եղել,– ասացի ես, լրջությամբ պատասխանելով նրա լրջությանը։

– Եթե չեմ սխալվում, դուք էիք, սըր,– ասաց Մարթան դողդոջ ձայնով,– որ խոհանոց մտաք այն գիշեր, երբ Էվլին ինձ այնքան գութ ցույց տվեց, այնքան սիրով ընդունեց, ինձ չմերժեց, ինչպես անում էին ուրիշները, և մարդասիրաբար ինձ օգնեց։ Դուք էիք չէ՞, սըր։

– Այո,– պատասխանեցի ես։

– Արդեն վաղուց ես այս գետի հատակում կլինեի,– ասաց Մարթան, մի զարհուրելի հայացք նետելով ջրի վրա,– եթե նրա առջև որևէ կերպ հանցավոր լինեի։ Մի գիշեր չէի ապրի, եթե անպարտ չլինեի նրա գործում։

– Նրա փախչելու պատճառն արդեն լիովին հայտնի է,– ասացի ես։– Այդ բանում դուք անմեղ եք։ Մենք վստահ ենք այդ մասին. միամիտ եղեք։

– Օ՜հ, եթե ես լավ սիրտ ունենայի, անշուշտ կփոխվեի նրա շնորհիվ,– գոչեց աղջիկն ամենաջերմ ափսոսանքով,– որովհետև նա միշտ բարի էր դեպի ինձ։ Երբեք նա ինձ մի բան չի ասել, որ ճշմարիտ ու սփոփական չլիներ։ Մի՞թե կարելի է, որ ուզենայի նրան էլ փչացնել ինձ նման։ Մի՞թե չգիտեմ, թե ի՞նչ եմ ես։ Ամեն բան կորցնելուց հետո, ինչով որ քաղցր է մարդուս կյանքը, ամենադառն ցավս այն էր, որ ընդմիշտ բաժանվել եմ նրանից։

Մր. Պեգգոտին, որ մի ձեռքը նավակի շուրթին դեմ տված վայր էր նայում, մյուսով երեսը ծածկեց։

– Դեռ այն ձյունաբեր գիշերից առաջ,– շարունակեց Մարթան,– ես լսել էի, թե ինչ է պատահել, և ամենից ավելի մաշվում էի մտածելով, թե մարդիկ կհիշեն նրա բարությունը դեպի ինձ ու կասեն, թե ես եմ նրան փչացրել։ Այնինչ աստծուն հայտնի է, որ պատրաստ էի կյանքս տալ, միայն թե կարենայի նրա բարի անունը ետ բերել։

Եվ աղջիկը, որ վաղուց կորցրել էր ինքն իրեն զսպելու ընդունակությունը, սոսկալի կերպով սկսեց տանջվել իր խղճի կշտամբանքից ու սուր խայթից։

– Կյանքս տալ... բայց ի՞նչ արժեք ունի իմ կյանքը... ես պատրաստ էի նույնիսկ ապրել,– աղաղակեց նա։– Հոժար էի ապրել, մնալ, պառավել այս գարշելի փողոցներում... քարշ գալով խավարի մեջ, արհամարված ամենքից... տեսնել արևի ծագելը ստվերամած տների վրա և հիշել, թե ինչպես երբեմն միևնույն արևը լույս էր շողացնում նաև իմ սենյակի մեջ ու զարթնեցնում ինձ... երջանիկի՜ս. այո, պատրաստ էի մինչև անգամ այդ անել, միայն թե կարենայի փրկել նրան։

Մարթան ընկավ քարերի վրա, վերցրեց մի քանիսն ու սկսեց այնպես տրորել ձեռքերի մեջ, որ կասեիր թե ուզում է փշրել։ Նա շարունակ փոխում էր իր դիրքը. մերթ ձեռքերը կծկում, մերթ երեսին սեղմում, հենց իմանաս ջանալով իր աչքերի վերջին լույսը դուրս քամել, և մերթ գլուխը խոնարհում, որ անշուշտ անտանելի հիշատակների բեռից ընկճված էր։

– Ի՞նչ է մնում ինձ անելու,– ասաց նա, վհատության դեմ մաքառելով։– Ինչպե՞ս շարունակեմ այսպես ապրել... ես, որ մի նզովք եմ ինքս ինձ և կենդանի նախատինք՝ ում որ միայն մերձենում եմ։

Հանկարծ նա ընկերոջս դիմեց.

– Ոտնակոխ արեք, սպանեցեք ինձ։ Երբ Էվլին ձեր պարծանքն էր, նրան անարգված կհամարեիք, եթե ես նրան արմունկովս դիպչեի փողոցում։ Կարող եք չհավատալ իմ շրթունքից ելած և ոչ մի վանկին... և ինչո՞ւ պիտի հավատաք... Այժմ էլ ամոթից կբռնկվեիք, եթե նա ինձ հետ գեթ մի բառ փոխանակեր։ Չեմ գանգատվում։ Չեմ հավասարում նրան ինձ հետ։ Գիտեմ, որ մեր միջև մի ահագին անդունդ կա։ Այլ միայն կասեմ, որ չնայելով մեղսաթաթավ, ողորմելի վիճակիս՝ ամբողջ սրտով շնորհակալ եմ նրանից ու սիրում եմ նրան։ Օ՜հ, մի՛ կարծեք, թե իսպառ զրկված եմ սիրելու շնորհից։ Մերժեցեք ինձ, ինչպես որ մերժում է աշխարհը։ Սպանեցեք ինձ, որ ես, մի անպետք կին, ճանաչել եմ նրան, բայց այդպիսի կարծիք մի՛ ունենաք իմ մասին։

Ընկերս մտամոլոր ապշությամբ մտիկ էր տալիս աղերսավոր աղջկան, և երբ աղջիկը վերջացրեց, քնքշաբար բարձրացրեց նրան։

– Մարթա,– ասաց մր. Պեգգոտին,– աստված չանի, որ ես քեզ դատապարտեմ։ Ինձ, մանավանդ, թող նա փրկի քեզ դատելուց, դստրիկ իմ։ Ուրեմն չգիտես, թե որքան եմ փոխվել այս միջոցին, եթե կարծում ես, թե ընդունակ եմ քեզ դատելու։ Է՛հ,– ասաց նա ու փոքր-ինչ լռելուց հետո շարունակեց. – չգիտես, թե ինչպե՞ս եղավ, որ այս ջենտլմենն ու ես քեզ հետ խոսելու որոշում արինք։ Չե՞ս հասկանում մեր միտքը։ Ուրեմն լսիր։

Ալևորի ազդեցությունն աղջկա վրա կատարյալ էր։ Մարթան անշարժ կանգնած էր նրա առջև, կարծես թե նրա հայացքին հանդիպելուց վախենալով. սակայն իր բուռն վիշտը համարյա թե մեղմացել ու լռել էր։

– Եթե գիտես,– ասաց մր. Պեգգոտին,– թե այն ձյունաբեր գիշերը մաստր Դեվիին ու ես ի՞նչ խոսեցինք, ուրեմն այն էլ գիտես, որ ես գնացել էի... էլ ուր ասես չէի գնացել... իմ սիրելի Էմլիին որոնելու։ Իմ սիրելի Էմլին,– շեշտելով կրկնեց բարեկամս։– Այժմ, Մարթա, նա է՛լ ավելի սիրելի է ինձ, քան առաջ։

Մարթան ձեռքերը երեսին դրեց, բայց ոչ մի ձայն չհանեց։

– Նրանից եմ լսել,– ասաց մր. Պեգգոտին,– թե դու արդեն փոքր հասակից որբ ես մնացել, ոչ մի նավաստի ընկեր չես ունեցել, որ քեզ խնամեր, հորդ ու մորդ տեղը բռներ։ Եթե մի այդպիսի ընկեր ունենայիր, գուցե իբրև հարազատ հորդ կսիրեիր և նրա համար այն կլինեիր, ինչ որ Էմլին է ինձ համար։

Այդ րոպեին Մարթան դողաց։ Մր. Պեգգոտին շալը գետնից վերցնելով՝ նրա ուսը ծածկեց։

– Ես գիտեմ,– շարունակեց բարեկամս,– որ Էմլին մինչև աշխարհիս վերջին ծայրն ինձ հետ կերթա, եթե նորից ինձ տեսնի. բայց մինչև աշխարհի վերջին ծայրն էլ կփախչի ինձ նորից չհանդիպելու համար։ Թեպետ նա գիտի, որ ես իրեն սիրում եմ, չի էլ կարող չգիտենալ,– հանգիստ կրկնեց բարեկամս, իր ասածի ճշմարտության հավատով,– բայց մեջտեղն ամաչել կա. դա է, որ նրան արգելում է գիրկս ընկնել։

Բարեկամիս ամեն մի բառից, խոսելու ազդու եղանակից բացահայտ երևում էր, որ նա իր նյութի յուրաքանչյուր մասը լավ կշռել ու քննել է։

– Մեզ հավանական է երևում, մաստր Դեվիին ու ինձ,– շարունակեց նա,– թե խեղճ Էմլին գուցե մի օր Լոնդոն գա։ Հավատում ենք... մաստր Դեվին էլ, ես էլ, մերոնք էլ, որ նրան հասած դժբախտության մեջ դու նույնքան անմեղ ես, որքան անմեղ է դեռ մոր արգանդից աշխարհ չեկած մի մանուկ։ Ասացիր, թե նա բարի էր, գթասեր էր, կարեկից էր դեպի քեզ։ Չեմ կասկածում, որ այդպես էր. աստծու օրհնությունը նրա վրա լինի։ Գիտեմ, միշտ այդպես էր ամենքի հետ։ Դու երախտագետ ես դեպի նա, սիրում ես նրան։ Դե, ուրեմն, օգնիր մեզ նրան գտնելու, և թող երկինքը քեզ վարձատրի։

Մարթան առաջին անգամ նայեց նրան, և այնպես արագ, որ ասես թե ասածին չէր հավատում։

– Դուք ինձ կհավատա՞ք,– հարցրեց նա զարմացած մեղմ ձայնով։

– Անպայման ու լիովին,– ասաց մր. Պեգգոտին։

– Եվ թույլ կտա՞ք, որ ես նրա հետ խոսեմ, եթե մի օր նրան գտնեմ, նրան պատսպարեմ, եթե ես ինքս մի պատսպարան ունենամ, և, վերջապես, առանց նրա գիտության ձեզ մոտ գամ և ձեզ նրա մոտ տանեմ,– շտապ-շտապ հարցրեց աղջիկը։

Երկուսս միաբերան ասացին. «Այո՛»։

Մարթան աչքերը բարձրացրեց և հանդիսավոր երդում տվեց, որ եռանդով ու հավատարմությամբ այդ գործին անձնատուր կլինի, որ դրանից չի շեղվի և դրան հետամուտ լինելուց չի թուլանա, մինչև որ հաջողության գեթ մի թեթև հույս մնա։ Իսկ եթե իր երդումը

դրժի, թող իր կյանքի վերջին րոպեին նա ավելի թշվառ լինի և, եթե կարելի է, ավելի հուսահատ, քան էր գետափի վրա այս գիշեր, և այնուհետև թող աստվածային ու մարդկային օգնությունից հավիտյան զրկվի։

Այդ խոսքերը շշնջալով ասաց և ձայնը ոչ թե մեզ, այլ երկնքին ուղղելով, հետո հանդարտ մտիկ արավ մռայլ գետին։

Այժմ մենք հարմար գտանք ամեն բան, ինչ որ գիտեինք, հայտնել նրան, և ես բոլորը պատմեցի։ Նա լսում էր մեծ ուշադրությամբ։ Երեսն անդադար փոխվում էր, բայց միևնույն հաստատ արտահայտությունը պահելով։ Մերթ-մերթ աչքերի մեջ կայծակներ էին շողշողում, և նա իսկույն զսպում էր դրանց։ Կարծես թե էլ հուզված չէ ու լիովին հանգիստ է։

Երբ որ ասելիքս վերջացրի, նա հարցրեց, թե որտե՞ղ կարող է մեզ տեսնել, եթե տեսնելու հարկ լինի։ Ես մոտեցա ճանապարհի միակ աղոտ լապտերին և իմ ու մր. Պեգգոտիի հասցեները հիշատակարանիս մի թերթի վրա գրեցի և թերթը պոկելով Մարթային տվի. նա վերցրեց ու ծոցը դրեց։ Հարցրի, թե նա ինքը որտե՞ղ է բնակվում։ Մի փոքր լռելուց հետո նա պատասխանեց, թե ոչ մի տեղ երկար չի մնում, և թե լավ է դրա մասին չհարցնել։

Մր. Պեգգոտին ինձ մի բան թելադրեց, որ իմ մտքովն էլ անցել էր։ Ես քսակս հանեցի, սակայն ինձ ամենևին չհաջողվեց համոզել աղջկան, որ մի գումար ընդունի, և կամ խոսք տա, թե գոնե հետո կընդունի։ Բացատրեցի նրան, թե չի կարելի մր. Պեգգոտիին մի չքավոր մարդ համարել, և թե մեզ երկուսիս էլ ծանր կլինի, եթե նա՝ Մարթան, Էմլիին որոնելիս իր փողը ծախսի։ Անդրդվելի մնաց Մարթան։ Նույնիսկ մր. Պեգգոտիի ազդեցությունն այս բանում իմի նման զուր անցավ։ Աղջիկը մի սրտագին շնորհակալություն հայտնեց նրան, բայց առաջարկը չընդունեց։

– Գուցե որևէ գործ գտնեմ,– ասաց նա։– Կփորձեմ։

– Գոնե մինչև այն ժամանակ մի փոքրիկ նպաստ ընդունեցեք,– խնդրեցի ես։

– Ինչ որ խոստացա կատարել փողով չի արվի,– պատասխանեց աղջիկը։– Եթե սովից էլ մեռնելու լինեմ, փող չեմ առնի։ Ինձ փող տալով, ձեր հավատարմությունը ետ առած կլինեք, ետ առած այն բանը, որ ինձ շնորհեցիք, ետ խլած այն միակ հավաստի գրավականը, որ ինձ փրկում է այս գետի մեջ կորչելուց։

– Հանուն մեծ դատավորի,– ասացի ես,– որի առջև բոլորս մի օր հաշիվ պիտի տանք, աղաչում եմ ձեզ, դեն ձգեցեք այդ սոսկալի միտքը։ Բոլորս էլ կարող ենք որևէ բարիք գործել, եթե կամենանք։

Մարթան ամբողջ մարմնով ցնցվեց. շուրթերը դողացին ու երեսի գույնը թռավ։

– Գուցե դուք երկնքից ներշնված եք մի թշվառ էակ փրկելու,– ասաց նա։– Դրա մասին մտածելուց անգամ սարսափում եմ. այդ շնորհին ես արժանի չեմ։ Եթե կամենամ մի որևէ լավ բան անել, այն ժամանակ գուցե հուսամ, թե փրկություն կգտնեմ. իսկ մինչև այժմ արածներիս հետևանքն ուրիշ բան չէր, քան միայն չարիք։ Երկար ու ձիգ ժամանակից հետո այս առաջին անգամն է, որ ձեր հանձնած գործի շնորհիվ թշվառ կյանքս երկարելու փափագ եմ զգում։ Ավելի ոչինչ չգիտեմ, չեմ էլ կարող սրանից ավելի բան ասել։

Նա դարձյալ իր արտասուքը զսպեց, որ սկսել էր թափվել, և դողդոջ ձեռքը մր. Պեգգոտիին դիպցնելով, ասես թե դրա մեջ մի բուժիչ զորություն լիներ, շուռ եկավ ու դեպի ամայի ճանապարհը հեռացավ։ Հավանական է, որ նա վաղուց հիվանդ էր. գունատ ու նիհար երեսը, խոր ընկած աչքերը նրա կրած զրկանքների ու ցավերի վկա էին։

Մի որոշ ժամանակ մենք հեռվից հետևեցինք նրան, որովհետև միևնույն ճամփով պիտի գնայինք, և միայն հետո մարդաշատ ու լուսավոր փողոցները մտանք։ Ես նրա խոստմանը այնքան վստահ էի, որ պետք համարեցի ընկերոջս նկատել, թե լավ կլինի այլևս Մարթայի հետևից չգնալ և նրան առիթ չտալ կարծելու, թե կասկածում ենք իր մասին։ Մր. Պեգգոտին էլ

նույն կարծիքը հայտնեց. նա էլ աղջկան վստահում էր: Եվ այսպես թողինք, որ Մարթան մենակ հեռանա, իսկ ինքներս դեպի Հայգեթ դիմեցինք: Ընկերս բավական ժամանակ ուղեկցեց ինձ: Բաժանվելու րոպեին, երբ այս նոր ջանքի հաջողության համար օգնություն էինք խնդրում աստծուց, նրա դեմքի վրա մի մտածկոտ արգահատանք, ցավակցություն նշմարեցի, որի պատճառը շատ հեշտ էր բացատրել:

Տուն որ հասա կես-գիշեր էր: Իմ դռնակի մոտ մինչ ականջ էի դնում ս. Պողոսի բամբ զանգակի ղողանջման, որ մյուս ժամացույցների հնչման հետ հասնում էր ինձ, հանկարծ տեսա, որ տատիս դուռը դեռ բաց է և շեմքի վրա մի աղոտ լույս է երևում:

Կարծեցի, թե տատս վերստին պաշարված կլինի արհավիրքով, անգո հրդեհների երկյուղով, և գնացի նրա հետ խոսելու: Զարմանքս մեծ եղավ, երբ նրա փոքրիկ պարտեզում մի մարդ նկատեցի:

Այդ մարդը մի շիշ ու բաժակ էր բռնել և խմելու վրա էր: Իսկույն ծառերի ստվերում կանգ առա, լուսինը դեռ նոր էր ծագել մութ ամպերի հետևից: Ճանաչեցի այն մարդուն, որին երբեմն մր. Դիկի երևակայության ծնունդն էի համարել, և որին մի անգամ հանդիպել էի տատիս հետ Լոնդոնի փողոցներում:

Մարդն ուտում ու խմում էր անասելի ախորժակով, միևնույն ժամանակ տատիս տնակն ուշի-ուշով դիտում, կարծես թե առաջին անգամն էր տեսնում դրան: Շիշը վայր դնելու համար կռանալիս՝ աչքերը պատուհանների վրա ուղղեց և անհամբեր շուրջը նայեց իբրև մի մարդ, որ շտապում է հեռանալ:

Մի վայրկյան շեմքի լույսը նսեմացավ, և տատս դուրս եկավ: Վրդովված էր երևում: Նա փող տվեց մարդուն: Արծաթների հնչյունը լսեցի:

– Սա քիչ է, ինչի՞ս է պետք այսքանը,– ասաց մարդը:

– Ավելին տալ չեմ կարող,– պատասխանեց տատս:

– Ուրեմն ես էլ չեմ հեռանա,– ասաց մարդը,– ետ առ փողդ:

– Վատ մարդ ես դու,– ասաց տատս գրգռվելով:– Մի՞թե ինձ հետ կարելի է այդպես վարվել: Բայց ինչո՞ւ եմ հարցնում: Վարվում ես, որովհետև թուլությունս գիտես: Քեզնից ընդմիշտ ազատվելու համար ինձ ուրիշ բան չի մնա անել, քան միայն ճակատագրիդ մատնել քեզ:

– Ինչո՞ւ ուրեմն չես մատնում,– հարցրեց մարդը:

– Եվ այդ հարցնողը դո՞ւ ես, ա՛յ անսիրտ մարդ,– նկատեց տատս:

Մարդը դժգոհ կանգնած էր, փողերը ձեռքում զնգզնգացնելով ասաց.

– Սրանից ավելի տալու չես, հա՞:

– Դա է, ինչ որ կարող եմ տալ,– ասաց տատս:– Հո գիտես, որ կորուստներ եմ ունեցել և այժմ ավելի չքավոր եմ, քան առաջ: Ես քեզ արդեն ասել եմ այդ: Ահա, ինչ որ ուզում էիր, ստացար, էլ ինչո՞ւ ես այստեղ մնում և ինձ տանջում, ցույց տալով, թե ինչ ողորմելի բան ես դարձել:

– Երևի թե իմ տեսքը շատ գծուծ է,– ասաց մարդը:– Ես բուի կյանք եմ վարում:

– Կարողությանս մեծ մասը վատնեցիր,– շարունակեց տատս:– Տարիների ընթացքում սիրտս աշխարհի դեմ զայրացրիր: Նենգաբար, ապերախտ, անգութ կերպով վարվեցիր ինձ հետ: Գնա զղջա արարքդ: Էլ նոր վիշտ մի ավելացնի այն անթիվ ցավերի վրա, որ արդեն ինձ հասցրել ես:

– Է՛,– ասաց մարդը:– Այդ որքան բարի կին ես: Լա՛վ, լա՛վ, առժամանակ այսքանն էլ բավական է:

Տատիս դառն արտասուքից մարդն ակամա ամոթ զգաց ու գլխիկոր հեռացավ։ Ես շուտով մի երեք քայլ առաջ անցա, իբր թե նոր եմ գալիս, և մենք իրար հանդիպեցինք պարտեզի դռնակի մոտ, որից նա դուրս էր գնում։ Նա ու ես աչքերով իրար չափեցինք, բայց ոչ բարեկամաբար։

– Տատի՛կ,– ասացի ես շտապով։– Այդ մարդը դարձյա՞լ վրդովում է ձեզ։ Ես կխոսեմ նրա հետ։ Ո՞վ է նա։

– Որդյակ,– ասաց տատս, թևիցս բռնելով,– ներս մտիր ու լուռ կաց գոնե մի տասը րոպե։

Նստեցինք փոքրիկ հյուրասենյակում։ Տատս իր կանաչ լուսարգելի հետևը քաշվեց, որ ամրացրել էր բազկաթոռի թիկունքին, և քառորդ ժամի ընթացքում մի քանի անգամ աչքերը սրբեց։ Հետո դուրս եկավ ու մոտս նստելով՝ հանգիստ ասաց.

– Տրոտ, նա ամուսինս է։

– Ձե՞ր ամուսինը, տատիկ։ Մի՞թե չի մեռել։

– Ինձ համար մեռած է,– պատասխանեց տատս,– բայց դեռ ապրում է։

Ապշությունից լուռ մնացի։

– Բեթսի Տրոտուդը նման չէ քնքուշ զգացումների ընդունակ կնոջ,– ասաց տատս հանդարտությամբ։– Բայց, Տրոտ, կար ժամանակ, երբ նա լիովին հավատում էր այդ մարդուն, երբ հոգով սրտով սիրում էր նրան, երբ պատրաստ էր ամեն զոհաբերություն հանձն առնել իր այդ սերը ցույց տալու համար։ Այդ բոլորի փոխարեն մարդը նրա գույքը վատնեց ու նրա սիրտը խորտակեց։ Այնուհետև Բեթսի Տրոտուդը այդ տեսակ զգացումներն ընդմիշտ թաղեց մի փոսի մեջ, փոսն էլ ծածկեց ու գետնի հետ հավասարեցրեց։

– Իմ սիրելի՛, բարի տատիկ։

– Ես նրանից վեհանձնաբար բաժանվեցի,– շատունակեց տատս, ձեռքը ձեռքիս վրա դնելով։– Այնքան տարիներ անցնելուց հետո՝ կարող եմ ասել, սիրելի Տրոտ, որ վեհանձնաբար բաժանվեցի նրանից։ Նա ինձ հետ այն աստիճան անգութ էր վարվում, որ ես կարող էի մի շատ ձեռնտու ապահարզան ստանալ, բայց չկամեցա պահանջել։ Նա շռայլեց, վատնեց, ինչ որ իրեն տվել էի. օրեցօր ստորացավ, կարծեմ հետո մի ուրիշ կին առավ և վերջապես մի բախտախնդիր, մի խաղամոլ, մի խաբեբա մարդ դարձավ։ Դու ինքդ տեսար, թե այժմ ինչ է։ Բայց մեր պսակի ժամանակ մի գեղեցիկ տղամարդ էր,– ասաց տատս այնպիսի ձայնով, որի մեջ իր անցյալ հափշտակության ու հիացման արձագանքը դեռ լսվում էր,– և ես, հիմարս, կարծում էի, թե ազնվության տիպար է։

Տատս իմ ձեռքը սեղմեց ու գլուխը թոթվեց։

– Այժմ նա ինձ համար ոչինչ է, Տրոտ, մինչև անգամ ավելի պակաս, քան ոչինչ։ Բայց փոխանակ իր հանցանքների համար նրան պատժելու (և անպատճառ կպատժեի, եթե մեր կողմերում շարունակեր թափառել), ես երբեմն, երբ գալիս է, իմ միջոցներից ավելի եմ տալիս նրան, միայն թե այստեղից հեռանա։ Ես տխմար էի, Տրոտ, երբ նրա հետ ամուսնացա։ Այժմ նա նախկին մարդուս լոկ ստվերն է, բայց ես այնքան անմիտ եմ, որ ի սեր եբեմն պաշտած կուռքիս, նրա ստվերի հետ անգամ չէի կամենա անսիրտ վարվել։ Չէ՞ որ հոգուս ամբողջ զորությամբ սիրել էի նրան։

Տատս մի խոր հառաչանք հանեց ու զգեստի ծալքերը կոկեց։

– Այսպես, սիրելիս,– ասաց տատս։–Այժմ ամեն բան գիտես. սկիզբը, մեջն ու վերջը։ Էլ դրա մասին չխոսենք։ Սա է, Տրոտ, իմ պատմությունը, և թող դա մեր մեջ մնա։

Ը. ԳԼՈՒԽ

Տան գործեր

Ժիր ջանքով աշխատում էի գրքիս վրա, առանց սակայն թերանալու իմ լրագրական պարտականություններից, և երբ որ նա լույս տեսավ, հաջողությունը շատ մեծ եղավ: Ես շփոթվեցի ականջիս հնչող գովասանքներից, թեև դրանք ինձ հաճելի էին, և ես ինքս երկիս մասին ավելի մեծ կարծիք ունեի, քան որևէ ուրիշ մարդ: Մարդկային բնությունն ուսումնասիրելով միշտ նկատել եմ, որ ինքն իրեն վստահանալու հիմք ունեցող անհատը երբեք չի պարծենա՝ իր վարկն ուրիշների առջև բարձրացնելու համար: Այս էր պատճառը, որ ես ինքս, ինձ հարգելով հանդերձ, համեստ էի մնում, քանի շատ էին գովում ինձ, այնքան ավելի էի աշխատում արժանավոր լինել:

Սակայն ես մտադիր չեմ այս գրքի մեջ բոլոր վեպերիս պատմությունը հիշել, թեև սա իր էական մասերով իմ կյանքի ճիշտ պատկերն է: Թող գրավոր երկերս իրենց մասին իրենք խոսեն, և թող այդ պաշտոնը նրանց մնա: Այս րոպեիս ես միայն այն պատճառով եմ հարևանցի հիշում, որովհետև նրանք իմ առաջադիմության մի մասն են:

Փոքր-ինչ հիմք ունենալով այդ միջոցին կարծելու, թե բնությունն ու հանգամանքները հեղինակ են դարձրել ինձ, վստահաբար նվիրվեցի կոչմանս: Եթե այս վստահությունը չլիներ, հարկավ գրականական զբաղմունքս կթողնեի և ջանքս մի ուրիշ ասպարեզի կնվիրեի: Համենայն դեպս, կաշխատեի իմանալ, թե բնությունն ու կյանքիս բերմունքը ի՞նչ բանի համար են պատրաստել ինձ և կփութայի միայն դրան, և ոչ թե ուրիշ բանի ծառայել:

Զանազան հանդեսներին ու լրագրերին աշխատակցելը այնքան ձեռնտու էր, որ մի նոր հաջողություն գտնելուցս հետ լավ համարեցի Պառլամենտի տաղտուկ պայքարներից միանգամայն հրաժարվել: Հետևաբար մի երջանիկ երեկո վերջին անգամ գրի առա Պառլամենտի պարկապզուկների նվագը, որ այնուհետև ոչ մի անգամ չեմ լսել, թեպետ այսօր էլ երկարատև նստաշրջանի միջոցին լրագրեր կարդալիս միևնույն երգն ականջիս մեջ տզզում է՝ առանց մի էական փոփոխության, միայն թե ավելի թմրեցուցիչ եղանակով:

Ամուսնանալս տարի ու կես կլիներ: Ես ու կինս մի քանի զուր փորձերից հետո տնտեսության հոգսերից, իբրև ավելորդ բաներից, բոլորովին ձեռք էինք վերցրել: Տունը ինքն իրեն էր կառավարվում, և մենք ունեինք մի մանկլավիկ, որի գլխավոր զբաղմունքն անդադար խոհարարուհու հետ կռվելն էր: Այս առմամբ նա մի իսկական Ուիտտինգտընն էր, միայն թե ոչ դրա կատուն ուներ, ոչ էլ մի օր լորդ-մեյր դառնալու հույս[76]:

Կարելի է ասել, որ նա կաթսաների տարափի տակ էր կյանք վարում: Նրա ամբողջ կյանքը մի կռիվ էր: Նա պատրաստ էր ամենից անժամանակ, օրինակի համար, երբ ճաշին մեզ մոտ հյուրեր էին լինում, «օգնեցեք» կանչել և խոհանոցից լեղապատառ ներս ընկնել, իր վրա նետված պղնձե սաներից փախչելով: Շատ էինք ուզում ազատվել նրանից, բայց նա սաստիկ մեզ կպած էր ու չէր կամենում հեռանալ: Վերջին աստիճանի լացկան տղա էր, և հենց որ մեր ծանոթությունը կտրելու մասին ակնարկ էր լինում, նա սկսում էր այնպես ճվալ, որ ակամա մեր տանն էինք թողնում նրան: Ոչ հայր ուներ, ոչ մայր, ոչ էլ մի ուրիշ ազգական, բացի մի քրոջից, որ հենց նրա՝ մեզ մոտ մտնելու օրը Ամերիկա էր փախել: Եվ այսպես նա մնացել էր մեզ մոտ, իբրև մի ընկեցիկ երեխա: Այդ չարաճճին իմ դժբախտ վիճակը շատ էր զգում. աչքերը իր ժակետի թևքերով էր սրբում կամ քիթը մաքրելիս իր փոքրիկ թաշկինակի ամենադրսի անկյունի վրա կռանում, որովհետև սովոր չէր երբեք թաշկինակը լիովին հանել գրպանից, խնայողության ու զգուշության համար:

---

[76] Անգլիական ժողովրդական գրականության մեջ շատ է հիշվում «Ուիտտինգտընը և իր կատուն» հեքիաթը: Այդ մարդն ապրուստի միջոցներից զրկվելով, որոշում է Հնդկաստան գնալ, ու մի քանի տարի անցնելուց հետո արդեն իբրև միլիոնատեր է վերադառնում: Նա միայն իր կատվի պատճառով էր նավի վրա ընդունվել. այդ կատուն վարպետ մուկ բռնող էր. իսկ նավի վրա անչափ շատ մկներ կային: Լոնդոն վերադառնալուն պես Ուիտտինգտընը Lord Mayor – քաղաքապետ է դառնում:

Այս թշվառ մանկլավիկը, որին չար ժամին վարձել էինք տարեկան վեց ստեռլինգ ու տասը շիլինգ ռոճիկով, ինձ համար անվերջ տագնապների աղբյուր էր դարձել։ Ես դիտում էի նրա աճումը – աճում էր իսպանական լոբու արագությամբ – և սոսկալով մտածում այն ժամանակի մասին, երբ ալևոր կամ թե ճաղատ կդառնար։ Ամենևին հույս չունեի երբևէ ազատվելու նրանից, և ապագան գուշակելով մտածում էի, թե ինչ բեռ կլինի մեզ համար, երբ լիովին ծերանա։

Մտքովս անգամ չէր անցել այն աղետալի դիպվածը, որ պիտի ազատեր մեզ այս դժվար դրությունից։ Տղան Դորայի ժամացույցը գողացավ, որ մեր տան մյուս բոլոր իրերի նման ոչ մի որոշ տեղ չուներ։ Ժամացույցի վաճառումից շահած փողը հիմարը վատնեց՝ դիլիժանսի կտրին նստած Լոնդոնից Ըքսբրիջ գնալ-գալու համար։ Նրան բռնեցին Բաու Ստրիտում, կարծեմ իր տասնհինգերորդ ճամփորդությունը կատարելու միջոցին, և մոտը գտան միայն չորս շիլինգ ու վեց պենս, մի հատ էլ սրինգ, որ հնչեցնել անգամ չգիտեր։

Այդ անակնկալ գյուտն ու դրա հետևանքն այնքան անախորժ չէին լինի ինձ, եթե պատանին զղջման չգար։ Բայց նա սաստիկ զղջում էր, և իրոք տարօրինակ եղանակով – ոչ թե միանգամից, այլ մաս-մաս։ Օրինակի համար, այն դեպքից մի օր հետո, երբ ես ստիպված էի նրա դեմ վկայել, նա հարկ համարեց ցուցմունք անել մառանում գտնվող մի կողովի մասին, որ կարծում էին, թե գինով լինքն է, այնինչ մեջը միայն դատարկ շշեր ու խցաններ էին մնացել։ Հավատացինք, թե տղան արդեն իր սիրտը թեթևացրեց և էլ ոչ մի ասելիք չունի խոհարարուհու դեմ, բայց երկու օրից հետո դարձյալ խղճի խայթ զգաց ու հայտնեց, թե խոհարարուհին մի փոքրիկ աղջիկ ունի, որ ամեն առավոտ գալիս տանում է մեր հացը, և թե ինքն էլ, այսինքն՝ տղան, կաշառված է ամեն օր ածուխ տալու կաթնավաճառին։ Դարձյալ մի երկու օրից հետո ոստիկանության սպասավորից իմացա, որ մեր տղայի ցուցմունքով՝ սուկիի ահագին կտորներ են գտնվել խոհանոցի մի ծածուկ տեղում և սավաններ՝ հին լաթերի տոպրակում. փոքր-ինչ հետո էլ՝ մեր տղայի ցուցմունքները բոլորովին մի նոր ուղղություն ստացան. նա խոստովանեց, թե մոտակա պանդոկի աշկերտը ավազակային դիտավորություն ունի մեր գույքերի նկատմամբ, և աշկերտին հենց նույն օրը բռնեցին։ Ես այնքան ամաչում էի այդ բոլոր չարիքների զոհը լինելուց, որ պատրաստ էի որքան ասես, փող վճարել սպասավորիս՝ նրա լեզուն զսպելու համար, և կամ նույնիսկ ոստիկանին կաշառք ուտեցնել, միայն թե թույլ տային, որ նա փախչի արգելանոցից։ Դժվար դրությունս սաստկանում էր և այն պատճառով, որ սպասավորս ինձ հասցրած նեղության մասին ամենևին գաղափար չուներ և ընդհակառակը՝ կարծում էր, թե իր ամեն մի ցուցմունքով ինձ անչափ լավություն է անում, էլ չասենք՝ վրաս երախտագիտության պարտքեր դիզում։

Վերջ ի վերջո, երբ տեսնում էի, որ ոստիկանը գալիս է մի նոր զեկուցում բերելով, ես ինքս տանից փախչում էի և սկսում թափառական կյանք վարել. այսպես տևեց, մինչև որ սպասավորիս դատը վերջացավ և վճռեցին աքսորել նրան։ Դատավճռից հետո անգամ նա չէր ուզում հանգիստ մնալ, այլ անդադար մեզ նամակներ էր գրում, մեկնելուց առաջ Դորային տեսնելու այնպիսի փափագ հայտնելով, որ Դորան նրա մոտ գնաց, բայց վանդակապատի մյուս կողմն անցնելուն պես ուշաթափ եղավ։ Կարճ ասած, ես հոգեկան հանգիստ չունեի, մինչև որ չտարագրեցին այդ տղային և, ինչպես հետո իմացա, խաշնարած չարին «ծովի այն կողմը», բայց թե հատկապես որտեղ, չգիտեմ։

Այդ բաներն ինձ խորը մտածելու առիթ տվին ու մեր տնտեսական սխալների վրա մի նոր լույս սփռեցին։ Այնպես, որ չնայելով քնքուշ սիրուս դեպի Դորան, մի երեկո ես ստիպվեցի նրան հայտնել իմ մտքերն այդ մասին։

– Հոգյակ իմ,– ասացի ես,– ինձ շատ ծանր է տեսնել, որ մեր անկարգ տնտեսության պատճառով ոչ թե միայն ինքներս ենք վնասվում (այդ բանին արդեն սովոր ենք), այլև ուրիշները։

– Վաղուց, Դոդի, հանգիստ էիր. այժմ նորի՞ց ես ուզում կռիվ սարքել,– ասաց Դորան։

– Չէ՛, հոգիս, հավատա, չէ, թույլ տուր ասելիքս պարզեմ։

– Չեմ ուզում իմանալ ասելիքդ։

– Բայց հարկավոր է, որ իմանաս, սիրելիս։ Վայր դի՛ր Ջիպին։

Դորան շնիկի դունչը քթիս մոտեցրեց ու «բոհ» ասաց։ Ուզում էր ծանր մտքերս փարատել, բայց տեսնելով, որ փորձը զուր անցավ, հրամայեց Ջիպին մեհյանը մտնել, իսկ ինքը ձեռքերը ծալած առջևս նստեց, վրաս ուշադիր նայելով։

– Բանն այս է, աչքիս լույս,– ասացի ես,– որ ցավը մեր մեջն է և արդեն սկսել ենք ուրիշներին էլ վարակել։

Մտադիր էի այսպիսի այլասացիկ ոճերով ասելիքս շարունակել, եթե Դորայի սարսափած դեմքից չիմանայի, որ նա ինձնից պատրաստի մի նոր եղանակ է սպասում մեր ցավի դեմ և կամ թե բժշկության մի նոր դարման։ Ուստի ինքս ինձ պահեցի ու պարզ կերպով ասացի.

– Սիրելիս, մեր անհոգությունը ո՛չ միայն դրամի կորուստ, նյութական վնաս ու հոգեկան ցավ է պատճառում մեզ, այլև ծանր բարոյական պատասխանատվության ենթարկում, որովհետև մեր սպասավորներին և մեզ հետ որևէ գործ ունեցողներին փչացնում ենք։ Սարսափելով տեսնում եմ, որ հանցավորը միայն մի կողմը չէ. այդ մարդիկ նրա համար են փչանում, որ մենք ինքներս մեզ ուղղելու անփույթ ենք։

– Օ՛հ, ինչ ահռելի մեղադրանք,– գոչեց Դորան ապշելով։– Ուրեմն ժամացույցը ե՞ս եմ գողացել։ Վա՛յ ինձ, վա՛յ ինձ։

– Հոգի ջան, այդպիսի անմիտ, անտեղի բաներ մի ասի,– նկատեցի ես։– Ո՞վ է ժամացույցի մասին գեթ մի թեթև ակնարկ անում։

– Ով, եթե ոչ դու,– պատասխանեց Դորան։– Ինքդ էլ գիտես, որ արիր։ Մի՞թե չասեցիր, թե ես ինքս ինձ ուղղելու անփույթ եմ և սպասավորի հետ չհամեմատեցի՞ր ինձ։

– Ո՞ւմ հետ։

– Մանկլավիկի հետ,– ասաց Դորան հեկեկալով։– Որքան անգութ ես, որ մի աքսորված մանկլավիկի հետ ես համեմատում քեզ սիրող կնոջդ։ Ինչո՞ւ դու մեր պսակից առաջ ինձ չհայտնեցիր, թե ի՞նչ ես մտածում իմ մասին։ Ինչո՞ւ առաջուց չասացիր, ով դու քարասիրտ, թե ես մի աքսորական մանկլավիկից էլ վատթար եմ։ Օ՛հ, այս ինչ սոսկալի կարծիք ես ունեցել իմ մասին։ Աստված իմ, աստված իմ։

– Բավական է, Դորա ջան,– ասացի ես, աշխատելով նրա թաշկինակը ետ քաշել, որ դրել էր աչքերին։– Ասածներդ ոչ միայն ծիծաղելի, այլև անարդար բաներ են։ Նախ և առաջ՝ այդ բոլորը սուտ է։

– Ինչպե՛ս թե սուտ,– գոչեց Դորան հեծելով։– Դու միշտ նրան ստախոս էիր անվանում։ Այժմ ի՞նձ էլ ստախոս ես դուրս բերում։ Օ՛հ, ի՞նչ անեմ ես, ի՞նչ անեմ։

– Առանց հանաքի աղաչում եմ քեզ, հրեշտակ իմ,– նկատեցի ես,– խոհեմ եղիր, ասելիքս ականջ դիր։ Սիրելի Դորա, մինչև մենք ինքներս չսովորենք մեր պարտքը սպասավորների նկատմամբ կատարել, նրանք էլ իրենց պարտքը մեր վերաբերմամբ չեն սովորի կատարել։ Արդյոք մենք ինքներս նրանց չե՞նք տալիս վատություն գործելու առիթ, որ չպիտի տայինք։ Նույնիսկ եթե հոժար կամքով այսպես անհոգ լինեինք մեր տնային գործերում (որ սակայն ուղիղ չէ), անգամ եթե սիրեինք անհոգ լինել և այդ բանից ախորժեինք, (որ նմանապես ուղիղ չէ),– դարձյալ մեզ աններելի կլիներ այս ճանապարհով առաջ գնալ։ Մենք ուղղակի փչացնում ենք մեր մարդկանց։ Մեր պարտքն է լավ մտածել այս մասին, և ես, Դորա, չեմ կարող չմտածել։ Այս խնդիրը հալածում է ինձ, երբեմն սաստիկ տանջում։ Սա էր բոլոր ասելիքս, հոգյակ իմ։ Դե, հերիք է, հանգստացիր։

Բայց Դորան երկար ժամանակ թույլ չէր տալիս, որ թաշկինակը ետ քաշեմ: Նա դեմքը թաքցնում էր ու լալով ասում, որ եթե ես տանջվում եմ, ուրեմն ինչո՞ւ ամուսնացա: Ինչո՞ւ հենց մեր պսակի օրը, դեռ եկեղեցի չգնացած, իրեն չասացի թե ես պիտի չարչարվեմ, և պսակվելուց չհրաժարվեցի: Եթե չեմ կարող կնոջս համբերել, ուրեմն ինչո՞ւ նրա հորաքույրերի մոտ՝ Պուտնի չեմ վերադարձնում, և կամ Ջուլիա Միլսի մոտ՝ Հնդկաստան: Ջուլիան կուրախանար նրան տեսնելով ու նրան մանկլավիկ չէր անվանի: Այդպիսի փիս անուններ չէր տա նրան: Մի խոսքով՝ Դորան այնպես տրտմած էր, ինձ էլ այնպես տրտմեցրեց, որ ավելորդ տեսա ջանքերս շարունակել, նույնիսկ շատ մեղմ եղանակով, ու մտածեցի մի ուրիշ հնար բանեցնել:

Բայց ի՞նչ հնար: «Զարգացնել կնոջս»: Ահա մի սովորական, հուսադրական, լավ հնչող խոսք, և ես վճռեցի Դորայի միտքը զարգացնել, կրթել, մշակել:

Անմիջապես ձեռք զարկի գործին: Հենց որ Դորան սկսում էր երեխայի պես խաղալ, ես շտապում էի, թեև ինքս էլ անչափ կցանկանայի նրա հետ միասին զվարճանալ, ծանր ու զգոն երևալ... և թե՛ նրա քեֆը, թե՛ իմը փչացնում: Խոսում էի նրա հետ ինձ զբաղեցնող նյութերի մասին, կարդում էի Շեքսպիրի երկերից... և չարաչար հոգնեցնում նրան: Փորձում էի իբր թե պատահմամբ, հաղորդել նրան մի քանի օգտակար գիտելիք, մի քանի առողջ գաղափար... և սկսելուս պես նա փախչում էր, ասես թե դրանք վառոդալից ճայթյուններ լինեին: Որքան զգույշ լինեի փոքրիկ կնոջ խելքն ու միտքը զարգացնելու փորձերի մեջ, նա իսկույն նպատակս զգում էր ու սարսափի զոհ դառնում: Ակներև էր մանավանդ, որ Շեքսպիրը նրա համար մի սոսկալի հրեշ է: Զարգացումը շատ դանդաղ էր առաջ գնում:

Տրեդլսին էլ առաջ քաշեցի այս գործին աջակցելու, բայց առանց իր գիտության: Հենց որ գալիս էր մեզ մոտ, ականներս նրա գլխին էի պայթեցնում, որպեսզի Դորայի միտքը ճոխացնեմ: Այս կերպ Տրեդլսի վրա տեղացած գործնական իմաստության գանձերիս պաշարն անհուն էր և ընտիր. սակայն Դորայի վրա այդ պաշարը վիատությունից զատ ուրիշ ազդեցություն չէր անում, նա սարսափով սպասում էր, թե հերթն իրեն էլ կհասնի: Տեսա, որ ես Դորայի համար մի դպրոցական խալիֆա եմ, մի թակարդ, մի ծուղակ եմ, սարդի պես մի բան, որ անդադար դուրս նետվելով իմ բնից, չարչարում է խեղճ զոհին:

Բայց և այնպես միշտ հուսալով, թե մի օր կգա, երբ Դորայի և իմ միջև մի կատարյալ համակրություն կհաստատվի և ուրախություն կունենամ վերջ ի վերջո տեսնելու, թե Դորայիս միտքը զարգացել է, ջանքերս ամբողջ ամիսներ շարունակեցի, համբերությամբ այնպես զինված, ինչպես որ ոզնին կամ թե խոզուկը՝ փշերով: Սակայն դարձյալ ոչ մի արդյունք չունեցա և ինքս ինձ ասացի, թե Դորայի զարգացումը երևի արդեն լրացած է, վերջացած:

Ավելի երկար մտածելուց հետո այդ ենթադրությունն այնքան ինձ հավանական թվաց, որ զարգացման ծրագիրս բոլորովին դեն ձգեցի. դա իր տեսական կողմերով ավելի հրապուրիչ էր, քան իրական արդյունքով: Այնուհետև որոշեցի կնոջս մանկական, զվարթ ու պարզ բնավորությամբ գոհանալ և նրան փոխելու փորձեր չանել: Ես ինքս արդեն հոգնել էի խորիմաստ փիլիսոփա ձևանալուց, և նազելի կնոջս տանջելուց: Այս պատճառով մի օր գնացի Դորայի համար մի զույգ սիրուն օղ գնեցի, մի հատ էլ վզնոց Ջիպի համար, և տուն եկա Դորայիս հետ հաշտվելու:

Այդ չնչին ընծաներս ընդունելիս Դորան հիացավ և ինձ սրտանց համբուրեց. այնուամենայնիվ, մեր միջև դեռ ստվերի նման մի բան կար, որ չէի ուզում որ լինի: Եթե անհրաժեշտ էր, որ մի այդպիսի ստվեր մնա, թող իմ սրտի մեջ մնար:

Ես կնոջս կողքին բազմոցի վրա նստեցի և իմ ձեռքով հագցրի նրան օղերը. հետո ասացի, թե մի քանի ժամանակից ի վեր իրար հետ այնքան մտերիմ չէինք, որքան առաջ, և թե ես եմ հանցավորը այդ բանում: Ես այդ անկեղծ զգում էի, և իրոք էլ այդպես էր:

– Բանն այս է, Դորա, որ ուզում էի իմաստուն դառնալ,– ասացի ես:

– Եվ ինձ էլ իմաստուն դարձնել,– ասաց Դորան երկչոտ ձայնով:– Այդպես չէ՞, Դոդի:

Ես գլխով հաստատելու նշան արի, իբրև պատասխան այդ սիրուն հարցին, ու նրա կիսաբաց շրթունքը համբուրեցի։

– Դա մեզ համար ավելորդ բան է,– ասաց Դորան, գլուխը թոթվելով ու օղերը շարժելով։– Ինքդ գիտես, թե ես որքան երեխա եմ և, իհարկե, չես մոռացել այն անունը, որ հենց սկզբից խնդրել էի, որ տաս ինձ։ Եթե չես կարող այդ անունով անվանել ինձ, ուրեմն դու ինձ երբեք չես սիրել։ Արդյոք վստա՞հ ես, որ երբեմն չես մտածել, թե գուցե ավելի լավ կլիներ, եթե. . .

– Եթե ի՞նչ, հոգյակ,– հարցրի ես, որովհետև նա կանգ առավ։

– Ոչինչ,– ասաց Դորան։

– Ոչի՞նչ,– կրկնեցի ես։

Նա վզովս փարվեց, ծիծաղեց, սագի ձագուկ անվանեց իրեն և գլուխը ուսիս վրա թաքցրեց, և նրա թավ գանգուրները այնպես առատությամբ փռվեցին, որ հազիվ կարողացա բաժանել նրանց՝ իր սիրուն դեմքին նայելու համար։

– Իրավ, մտածել եմ, որ ավելի լավ կլիներ, եթե ամենևին չփորձեի մանուկ կնոջս զարգացնել,– ասացի ես, ինքս իմ վրա ծիծաղելով։– Այդ էիր ուզում հարցնել, չէ՞։ Համոզված եմ, որ այդ կլիներ։

– Ա՞յդ էր փորձերիդ նպատակը, այ չար տղա,– գոչեց Դորան։

– Էլ ոչ մի անգամ չեմ փորձի,– ասացի ես։– Ես նրան ճիշտ այդպես եմ սիրում, ինչպես որ կա։

– Իրա՞վ ես ասում,– հարցրեց Դորան, ավելի պինդ սեղմվելով ինձ։

– Ի՞նչ հարկ կա փոխելու այն, ինչ որ այնքան ժամանակ ինձ սիրելի էր,– ասացի ես։– Դու հրաշալի ես, սիրելի Դորա, քո բնական իսկությամբ։ Ցնորական փորձերը թողնենք։ Եկ առաջվա պես ապրենք և այդպես լինենք երջանիկ։

– Այո, երջանիկ,– կրկնեց Դորան։– Միշտ երջանիկ։ Եվ դու երբեք չե՞ս բարկանա, եթե մեր գործերը երբեմն թարս գնան։

– Երբե՛կ, երբե՛կ,– ասացի ես։

– Եվ երբեք չե՞ս ասի, թե փչացնում ենք ուրիշներին,– ասաց Դորան փաղաքշելով։– Չե՞ս ասի։ Հո ինքդ էլ գիտես, թե ինչ սարսափելի բան է դա։

– Երբե՛ք, երբե՛ք,– կրկնեցի ես։

– Լավ է ես հիմար լինեմ, քան թե տխուր, չէ՞, Դոդի,– հարցրեց Դորան։

– Լավ է լինես ինչ որ ես. պարզ եղիր, Դորա, քան աշխարհի թագուհին։

– Աշխարհի։ Ա՛հ, Դոդի, աշխարհ ասածդ մեծ տեղ է։

Դորան գլուխը շարժեց, զվարթ աչքերով երեսիս նայեց, համբուրեց ինձ, քրքջաց ու փախավ Ջիպի վզնոցը փորձելու համար։

Այսպես վերջացավ վերջին փորձերս որևէ փոփոխություն առաջ բերելու Դորայի մեջ։ Բոլոր ջանքերս զուր անցան. անտանելի էր ինձ՝ մեկի հետ միայնակ մտքերս չբաժանել, և ես տանջվում էի, որովհետև չէի կարող հաշտեցնել դրանց Դորայի նախկին ցանկության հետ, այսինքն՝ մի երեխա-կին համարել նրան։ Ես վճռեցի հանդարտ կերպով և ըստ կարելվույն մենակ ուղղել մեր գործերը. բայց առաջուց տեսնում էի, որ ինչ էլ անեմ, գրեթե ոչինչ դուրս չի գա, և ես դարձյալ մի դարանակալ սարդի պաշտոն վարած կլինեմ։

Իսկ ի՞նչ եղավ այն ստվերը, որ այլևս իջնելու չէր մեր միջև ու միայն իմ սեփական սրտում պիտի մնար։

Իմ առաջվա տաժանելի զգացումը ամբողջ կյանքս վարակեց։ Նա ավելի արմատացավ սրտիս մեջ, սակայն առաջվա պես անորոշ մնալով, իբրև մի տխուր նվագ, որ հազիվ է լսվում գիշերվա ժամին։ Ես ի սրտե սիրում էի կնոջս, բախտավոր էի, բայց դա այն բախտավորությունը չէր, որ մի ժամանակ երազել էի,– և ինձ մի բան պակասում էր։

Հավատարիմ մնալով նպատակիս՝ ճշտությամբ պատկերացնել իմ կյանքը, դարձյալ մի անգամ ուզում եմ ինքս ինձ քննել, որ սրտիս մեջ ոչ մի գաղտնիք չմնա։ Ինչ որ ինձ պակասում էր, ես համարում էի – և միշտ էլ համարել եմ – մի պատանեկան ցնորք, մի երազ, որ երբեք չպիտի իրագործվի. և, բնականաբար, նույն ցավն էի զգում, ինչ որ ամեն մարդ զգում է այդպիսի գյուտ անելիս։ Այնուամենայնիվ չէի կարենում չխոստովանել, որ ավելի լավ կլիներ, եթե կինս փոքր-ինչ ավելի ինձ օգներ և մասնակցեր այն բազմաթիվ մտքերիս, որոնց համար ես ընկեր չունեի. և որ դա մի կարելի բան էր,– չէի կասկածում ամենևին։

Ես երկու անհաշտելի եզրակացությունների միջև տատանվում էի, առանց պարզ որոշելու նրանց փոխադարձ հակադրությունը,– մեկ՝ որ իմ կրածը մի ընդհանուր, անխուսափելի բան է, երկրորդ, որ իմ վիճակը մի մասնավոր բան է, որ կարող էր և ուրիշ լինել։ Պատանեկությանս երազները հիշելով, որոնք օդային պիտի մնային, հիշում էի և այրական տարիներին նախորդող ավելի լավ հասակը, որ ինձ համար կորել էր,– և այն ժամանակ աչքիս առջև մեռելային ստվերների պես կանգնում էին՝ Ագնեսի տանը նրա հետ միասին վայելած երջանկության օրերս, որոնք գուցե կարող են կրկնվել, մյուս աշխարհում, բայց երկրիս վրա երբեք չպիտի նորոգվեն։

Երբեմն էլ մտքովս անցնում էր, թե ի՞նչ կլիներ, եթե Դորան ու ես բնավ իրար հետ ծանոթացած չլինեինք։ Բայց դա գոյությանս հետ այնքան սերտ կապված էր, որ այդ միտքն ինձ մի ցնորական բան էր թվում և աշնանային տերևի պես թռչում կորչում օդի մեջ։

Ես միշտ սիրում էի Դորային։ Ինչ որ այժմ նկարագրում եմ, որ քնած էր սրտիս ծածուկ հատակում,– միայն երբեմն էր վայրիվերո արթնանում՝ իսկույն նորից քնելու համար։ Այս մտքերն ու զգացումները շոշափելի պատկերով չէին երևում, և չեմ կարծում, որ խոսքերիս կամ գործերիս վրա որքան էլ լիներ՝ ազդեին։ Բոլոր մանր հոգսերի ու սեփական դիտումների ծանրությունը ես մենակ էի կրում. Դորան գրիչներս բռնում էր, և երկուսս էլ զգում էինք, որ այն ենք անում, ինչ որ ամեն մեկիս վիճակված է։ Նա սրտանց սիրում էր ինձ և իր ամուսնով պարծենում. և երբ երբեմն Ագնեսը լրջորեն նրան գրում էր, թե իմ աճող համբավի համար բարեկամներս ուրախանում են և գիրքս կարդալիս իբրև թե իմ ձայնը լսում, Դորան ցնծության արտասուքով այդ տողերն ինձ կրկնում էր և իր սիրելի, իր փառավոր, իր խելոք տղան անվանում ինձ։

«Անփորձ սրտի առաջին սխալ շարժում»։ Մրս. Ստրոնգի արտասանած այդ խոսքերը շարունակ ականջիս հնչում էին, մտքիցս չէին դուրս գալիս։ Կես գիշերին էլ որ զարթնեի, հիշում էի նրանց. մի գիշեր երազումս տեսա, որ նրանք մինչև անգամ պատերի վրա գրված են։ Այժմ գիտեի, որ իմ սիրտն էլ անփորձ էր, անհրահանգ, երբ առաջին անգամ Դորային սիրեց։ Գիտեի, որ եթե հրահանգված լիներ, երբեք մեր ամուսնանալուց հետո այն չէր զգա, ինչ որ զգում էր գաղտնի փորձով։

«Թշվառ է այն ամուսնությունը, ուր գաղափարների ու ձգտումների միություն չկա»։ Այս խոսքերն էլ չէի մոռացել։ Փորձեցի Դորայի բնությունը իմին հարմարեցնել. հաջողություն չունեցա։ Այժմ կմնար, որ ես ինքս նրա բնությանը հարմարվեմ, նրա հետ միասին կիսեմ, ինչ որ միայն կարելի է, և գոհ լինեմ. ես ինքս կրեմ ուսերիս վրա, ինչ որ միայն տանելի է, և դարձյալ գոհ մնամ։ Սա էր այն կրթությունը, որի մեջ աշխատում էի սիրտս հանգստացնել այն ժամից ի վեր, երբ սկսել էի մտածել։ Դրա շնորհիվ ամուսնությանս երկրորդ տարին շատ ավելի երջանիկ էր, քան առաջինը, և որ ավելի էական է Դորայի կյանքն արփիական լուսնի նման զվարթ էր։

Սակայն այդ տարվա վերջերը Դորան սկսեց տկարանալ: Հույս ունեի, թե իմից ավելի քնքուշ ձեռքեր կարող կլինեն նրա բնավորությունը վերակազմել, և թե մանկան ժպիտը մի իսկական կին կդարձնի երեխա-կնոջս: Զուր հույս: Աշխարհ գալու ոգին միայն մի վայրկյան իր փոքրիկ բանտի շեմքի վրա խաղաց և իր գոյությունը չիմանալով՝ դեպի երկինք սլացավ:

– Հենց որ ինձ կարելի լինի նորից վազվզել, տատի,– ասաց Դորան,– Ջիպին կստիպեմ, որ թռչկոտի: Տեսնում եմ, շատ է ծուլացել:

– Երանի թե միայն ծուլացած լիներ, հոգյակ իմ,– ասաց տատս, որ հանգիստ նստած էր կնոջս մոտ, մի ինչ-որ բան գործելով:– Նա ծերացել է, Դորա ջան:

– Ծերացե՞լ,– հարցրեց Դորան զարմանքով:– Մի՞թե Ջիպը կարող է ծերանալ:

– Ծերությունը մի այնպիսի ցավ է, որին բոլորս էլ ապրելով ենթարկվում ենք, սիրելիս,– ասաց տատս զվարթությամբ:– Ես էլ զգում եմ, որ այժմ դրանից այնքան ազատ չեմ, ինչքան որ առաջ էի, հավատա:

– Բայց Ջիպը,– ասաց Դորան, կարեկցաբար նայելով շնիկին,– մի՞թե Ջիպն էլ, այս իմ խեղճուկ ընկերն էլ:

– Դա դեռ անշուշտ երկար կապրի, Ծաղիկ իմ,– ասաց տատս, Դորայի այտը շփելով, երբ Դորան բազմոցից կռացավ Ջիպին նայելու, որ այդ ուշադրության փոխարեն հետևի թաթերի վրա կանգնեց ու հեևալով փորձեց դեպի տիրուհին բարձրանալ:– Այս ձմեռ պետք կլինի ֆլանել փռել դրա տնակում և վստահ եմ, որ գարունը գալուն պես ծաղիկների նման կթարմանա ու կբացվի: Այ, չարաճճի արարած,– գոչեց տատս:– Կարծեմ, եթե հարյուր կատվի կյանք էլ ունենա և բոլորը միասին կորցնելու լինի՝ չի դադարի իր վերջին շնչով վրաս հաչելուց:

Դորան իսկույն Ջիպին օգնեց բազմոցի վրա բարձրանալ: Այնտեղից շնիկը շարունակեց տատիս դեմ այնպես կատաղել, որ էլ չէր կարենում ուղիղ կանգնել ու կծկվում էր հաչելիս: Եվ որքան ավելի էր նայում նրան, այնքան էլ շնիկի զայրույթն աճում էր, որովհետև վերջին ժամանակներս տատս սկսել էր ակնոց հագնել, իսկ Ջիպը անձնական թշնամի էր համարում ակնոցը,– չգիտեմ թե ի՞նչ անքննելի պատճառով:

Վերջապես Դորան իր կողքին պառկեցրեց նրան և շնիկի ձայնը կտրելուց հետո սկսեց նրա երկար ականջներից մեկը շփել, տխուր կրկնելով. «Օ՜հ, մի՞թե Ջիպն էլ, այս իմ խեղճուկ ընկերն էլ»:

– Ջիպի թոքերն առողջ են,– ասաց տատս զվարթ ձայնով,– դեռ շատ համարձակ է արտահայտում իր զզվանքը: Միամիտ կաց, դեռ երկար կապրի: Բայց եթե դրա հետ վազվզել ես ուզում, դա շատ փափուկ կյանք վարելուց ծուլացել է, չի վազի, ես քեզ մի ուրիշ շնիկ կընծայեմ, հոգյակ իմ:

– Շնորհակալ եմ, տատի,– ասաց Դորան թույլ ձայնով:– Հարկավոր չէ:

– Չէ՞,– հարցրեց տատս, ակնոցը հանելով:

– Չեմ ուզում մի ուրիշ շնիկ՝ Ջիպից բացի,– ասաց Դորան:– Չեմ ուզում Ջիպին վշտացնել: Ես չեմ կարող մի ուրիշ շան հետ այնպես լավ մտերիմ լինել, ինչպես որ Ջիպի հետ եմ: Ոչ մի ուրիշ շուն չի ճանաչել ինձ ամուսնությունիցս առաջ և Դոդիի վրա չի հաչել, երբ Դոդին մեր տուն եկավ առաջին անգամ: Կարծում եմ, տատիկ, թե ես ոչ մի ուրիշ շուն այնպես չեմ սիրի, ինչպես Ջիպին:

– Օ՜, հարկավ,– ասաց տատս ու նորից շոյեց Դորայի թշիկը:– Իրավ ես ասում:

– Եվ դուք ինձնից չե՞ք նեղանում,– հարցրեց Դորան:– Չե՞ք նեղանում, որ մի ուրիշ շնիկ չեմ ուզում:

– Ա՛հ, որքան զգայուն ես, փոքրիկս,– կարեկցաբար գոչեց տատս, Դորայի վրա հակվելով։– Ինչպե՞ս մտքովդ անցավ, թե կարող եմ քեզնից նեղանալ։

– Ո՛չ, ո՛չ, այդպիսի բան չեմ մտածել,– ասաց Դորան,– միայն թե փոքր-ինչ թուլացել եմ և կարծես թե հիմարացել... գիտեք, որ միշտ խենթուլիկ եմ... Ջիպի մասին խոսելիս՝ է՛լ ավելի խենթացա։ Ջիպն ինձ ճանաչել է կյանքիս բոլոր հանգամանքներում, չէ՞, Ջիպ։ Եվ ես չեմ կարող նրան դեն ձգել միայն փոքր-ինչ փոխվելու համար... այնպես չէ՞, Ջիպ։

Ավելի քսմսվելով տիրուհուն, Ջիպն սկսեց նրա աջը ծույլ-ծույլ լիզել։

– Դու հո դեռ այնքան ծույլ չե՞ս, որ ուզենաս թողնել ինձ,– ասաց Դորան։– Մենք դեռ երկար ընկեր կլինենք իրար հետ։

Հոգյա՛կ Դորաս։ Երբ մի շաբաթ անցնելուց հետո մի կիրակի օր նա ներքև իջավ ճաշելու և մեր հին բարեկամ Տրեդլսին տեսնելով ուրախացավ (Տրեդլսն ամեն կիրակի մեզ մոտ էր գալիս), բոլորս էլ կարծեցինք, թե մի քանի օրից հետո առաջվա պես կսկսի սենյակից սենյակ վազվզել։ Բայց մեզ ասացին, թե պետք կլինի դարձյալ սպասել մի քանի օր. հետո դարձյալ մի քանի օր. սակայն Դորան ոչ վազվզում էր, ոչ ման գալիս։ Նա շատ զվարթ էր, շատ սիրուն, բայց իր ոտիկները, որոնք առաջ այնպես թեթև ցատկոտում էին Ջիպի շուրջը, այժմ անշարժ ու տկար էին։

Ես սկսեցի ամեն առավոտ ձեռքերիս վրա սանդուղքից ներքև իջեցնել նրան և երեկոները վերև տանել։ Նա փարվում էր վզիս ու ծիծաղում, հենց իմանաս խաղալու համար եմ այդպես անում։ Ջիպը հաչելով ոստոստում էր մեր շուրջը, առաջ ընկնում ու հևալով ետ նայում։ Տատս, որ աշխարհիս ամենալավ, ամենազվարթ հիվանդապահն էր, անթիվ բարձեր ու շալեր էր բերում մեր հետևից։ Մր. Դիկը ոչ ոքի չէր զիջում մոմը ձեռքին մեր ճանապարհը լուսավորելու պաշտոնը։ Տրեդլսը հաճախ սպասում էր մեզ սանդուղքի ներքևում և Դորայից ուրախ լուրեր ընդունում՝ իր աննման նշանածին հասցնելու։ Մենք մի զվարթ թափոր էինք կազմում, և ամենից զվարթը իմ երեխա-կինն էր։

Բայց երբեմն, երբ նրան գրկելիս տեսնում էի, որ բեռս թեթևացել է, մի զարհուրելի բան էի զգում. ասես թե մի սառցային, դեռ չտեսնված աշխարհի էի մոտենում, ուր ամեն կյանք դադարում է։ Դեռ չէի վստահանում այդ զգացման անունը տալ, խորշում էի նրան ճանաչելուց։ Բայց մի գիշեր այդ զգացումը սկսեց սաստիկ ճնշել ինձ, և երբ տատս «Բարի գիշեր, Փոքրիկ Ծաղիկ» գոչելով կնոջս, հեռացավ, ես սեղանիս առջև նստեցի ու լաց եղա։ Օ՛հ, օրհասական ահեղ անուն։ Մի՞թե ինձ վիճակված է Փոքրիկ Ծաղկիս իր ոստի վրա թառամելը տեսնել։

Թ. ԳԼՈՒԽ
Մի խորհրդավոր գաղտնիքով պաշարված եմ

Մի առավոտ Դոկտորների Համայնքում իմ հասցեին ուղղված մի նամակ ստացա Կենտըրբըրիից և ապշությամբ հետևյալը կարդացի.

«Սիրելի սըր.

Կամքիցս անկախ հանգամանքները բավական ժամանակից ի վեր խզել են այն մտերմությունը, որ միշտ սրտիս լարերին քաղցր շարժում էր ազդել. բայց այսօր անգամ, նույնիսկ բազմազբաղ պաշտոնիս մեջ, երբ հազիվ եմ մի ազատ վայրկյան գտնում անցյալի տեսարաններն ու դեպքերը մտաբերելու,– որոնք այժմ հիշողության տեսակ-տեսակ գույներով են ներկված,– շարժումը նորոգվում է, հավիտյան էլ պիտի նորոգվի ամենաջերմ

բաբախումով։ Այժմ, երբ ձեր հոյակապ տաղանդի շնորհիվ արդեն փառքի գերագույն գագաթին եք հասել, դժվար է ինձ առաջվա մտերմությամբ նախկին ընկերոջս դիմել և նրան պարզ՝ Կոպպերֆիլդ անվանել։ Սակայն բավական է ասել, որ այդ անունը միշտ անմոռաց կմնա և որպես մի անգին գանձ սիրով կպահվի մեր տան դիվանում (այսինքն՝ մրս. Միկաբրի այն մատյանում, ուր մեր հին վարձաբնակների հիշատակն արձանագրված է)։

Վայել չէ ինձ նման մարդուն,– որ, անձնական սխալների ու չարագետ դեպքերի հանկարծական բերումով, եթե կարելի է այսպես ասել, մի խորտակված նավի դրության մեջ է, վայել չէ կոմպլիմենտներ և կամ թե շնորհավորանք ուղղել ձեզ։ Թող այդ անեն ավելի ճարտար, ավելի մաքուր ձեռքերը։

Եթե կարևոր զբաղմունքները թույլ տան ձեզ աչքի անցկացնել (որ հուսալ անգամ դժվար է) իմ այս թշվառ գրությունը, անշուշտ կհարցնեք, թե նամակիս շարժառիթն արդյոք ի՞նչ է։ Թույլ տվեք ասեմ, որ այդ հարցումը շատ հիմնավոր կլինի, ուստի և սկզբից կփութամ հայտնել, թե նամակս ոչ մի դրամական միտում չունի։

Առանց ուղղակի ակնարկելու իմ այն թաքուն զորության վրա, որով կարող էի վրեժխնդրության շանթեր նետել ու բարկաճայթ կրակներ թափել ում գլխին և կամենաք, հարևանցի միայն կասեմ, որ կյանքիս ժպտուն ու զվարթ հույսերը փշրվել են... հոգուս հանգիստը կորել է... զվարճանալու, զվարճացնելու փայլուն ձիրքս չքացել է... սիրտս ջախջախվել է... և այսուհետև ես ընկերներիս երեսին համարձակ նայել չեմ կարող։ Փտությունը բույն է դրել ծաղկի մեջ։ Դառնության բաժակը լցվել է։ Որդն արդեն կրծում է և շուտով իսպառ կուտի իր զոհին։ Եվ որքան շուտ, այնքան լավ։ Սակայն ինչո՞ւ եմ շեղվում բուն նյութից։

Տագնապը այն աստիճան սրտիս վրա տիրացել է, որ նույնիսկ մրս. Միկաբրի եռակի ազդեցությունը – իբրև կին, իբրև ամուսին, իբրև մայր – չի կարող այլևս իմ ցավերը ամոքել։ Այս պատճառով մտադիր եմ ինքս ինձնից փոքր-ինչ փախչել, և գոնե մի երկու օր, երկու գիշեր մայրաքաղաքի այն վայրերում անցկացնել, որոնք մի ժամանակ իմ զվարճության տեղերն էին։ Այդ ընտանեկան հանգստության օթևաններից, ուր երբեմն ինձ վիճակված էր խաղաղություն ճաշակել, հարկավ մեկն էր և Արքունի Բանտը, որին նմանապես մի այցելություն պիտի նվիրեմ։ Ներկա նամակիս նպատակին հասած կլինեմ, եթե ձեզ հայտնեմ, որ քաղաքային հանցավորներին պատսպարող այդ շենքի հարավային որմի մոտ վաղը չէ մյուս օրը, ճիշտ երեկոյան ժամը յոթին (Deo volente) ես անձամբ կգտնվեմ։

Վստահություն չունեմ խնդրելու, որ իմ նախկին բարեկամ մր. Կոպպերֆիլդն ու հին բարեկամ Տոմաս Տրեդլսը, եթե այդ ջենտլմենը դեռ ողջ է, բարեհաճեն ինձ տեսնել և մեր անցյալ հարաբերությունները նորոգել (ըստ կարելվույն)։ Բավականանում եմ միայն ասելով, որ ժամադրված վայրում անշուշտ կգտնվի այն

փլած

բերդի

ավերակը,

որպիսին

եմ և կամ

Ուիլկինս Միկաբր։

Հ. Գ. Թերևս ավելորդ լինի հարել, որ մրս. Միկաբրն իմ վերոդրյալ դիտավորությանը անտեղյակ է»։

Մի քանի անգամ այդ նամակը կարդացի։ Նկատի առնելով մինչև անգամ մր. Միկաբրի փքուն ոճն և ամեն՝ կարելի թե անկարելի դիպվածների առթիվ ձիգ նամակներ շարադրելու

անսպառելի ախորժակը, չէի կարող չենթադրել, որ այդ մանվածապատ գրության խորքում մի կարևոր բան է թաքնված։ Այդ գաղտնիքի մասին մտածելով նամակը սեղանի վրա դրի, հետո կրկին վերցրի՝ երկրորդ անգամ կարդալու, և դեռ կարդում էի, տարակուսանքի ծփանքի մեջ ընկղմված, երբ Տրեդլսը ներս մտավ։

– Սիրելի ընկեր,– ասացի ես,– երբեք այսպես չէի փափագել քեզ տեսնել։ Այս րոպեիս շատ կարոտ եմ առողջադատ խորհրդիդ։ Ահա տես, Տրեդլս, մի շատ նշանավոր նամակ եմ ստացել մր. Միկաբրից։

– Մի՞թե,– գոչեց Տրեդլսը։– Այ քեզ բա՛ն։ Իսկ ես մրս. Միկաբրից եմ նամակ ստացել։

Այդ ասելուն պես Տրեդլսը գրպանից նամակը հանեց ու ինձ տվեց. ես էլ իմը նրան տվի։ Շտապ-շտապ գալուց նա կարմրել էր ու գլխի մազերը ցցվել էին, հենց իմանաս մի ուրվական տեսած լիներ։ Ուշի-ուշով մր. Միկաբրի գրությունը կարդալիս նա մերթ հոնքերը կիտում էր, մերթ բարձրացնում։ Վերջապես աղաղակեց.

– «Վրեժխնդրության շանթեր նետել ու բարկաճայթ կրակներ թափել»։ Օ՛հ, օ՛հ, օ՛հ, այս ի՞նչ բան է, Կոպպերֆիլդ։

Ես մրս. Միկաբրի նամակի մեջ խորասուզվեցի։ Նա գրում էր.

«Խորին հարգանքս մր. Թոմաս Տրեդլսին։ Եթե նա չի մոռացել այն անձին, որ մի ժամանակ նրա մտերմությունը վայելելու բախտ ուներ, կհամարձակվեմ խնդրել նրան, որ ինձ մի քանի ազատ վայրկյան նվիրի։ Հավատացնում եմ մր. Թ. Տ.-ին, որ այս խնդրով չէի նեղացնի նրան, եթե արդեն հասած չլինեի խելագարության սահմանակից վիճակին։

Ցավելով եմ ասում, որ մր. Տրեդլսին դիմելուս և նրա օգնությունը խնդրելուս բուն պատճառը մր. Միկաբրի օտարանալն է իր կնոջից ու զավակներից,– մր. Միկաբրի, որ երբեմն այնքան ընտանեսեր էր։ Մր. Տ. Երևակայել անգամ կդժվարանա մր. Միկաբրի բնավորության մեջ առաջ եկած փոփոխությունը, նրա վայրենությունը, նրա բռնությունը։ Այս բոլորը հետզհետե սաստկանալով մի մտավոր մոլորության ձև է ստացել։ Թող մր. Տրեդլսը հավատա ինձ. մի օր անգամ չի անցնում, որ մի պարոքսիզմ չպատահի։ Մր. Տրեդլսը հարկավ չի պահանջի, որ նկարագրեմ, թե ինչ վիշտ եմ զգում ամեն օր, երբ նույնիսկ մր. Միկաբրից լսում եմ, թե նա իր հոգին Ս-ին (սատանային) է ծախել։ Անսահման մտերմությանը՝ վաղուց արդեն մի խորհրդավոր ծածկամտություն ու գաղտնապահություն է հաջորդել։ Ամենաչնչին հարցումս անգամ, օրինակ՝ թե ի՞նչ կցանկանար, որ ճաշի համար պատրաստեմ, նրան գրգռում է և ասել տալիս, թե կցանկանար բաժանվել։ Դեռ անցյալ երեկո, երբ երկվորյակներս նրանից երկու պենսի խնդրեցին՝ շաքարած նուշ գնելու համար (այստեղ սիրված անուշեղեն), նա մի ահագին դանակ ցույց տվեց նրանց։

Աղաչում եմ մր. Տրեդլսին վեհանձնաբար ներել ինձ այս մանր բաները պատմելուս համար։ Եթե չպատմեի, մր. Տ-ն սոսկալի դրության մասին մի թեթև գաղափար անգամ չէր կազմի։

Արդ՝ արդյոք կարո՞ղ եմ այս նամակիս նպատակը մր. Տ.-ին հայտնել։ Արդյոք նա թույլ կտա՞ ինձ իր մտերմական կարեկցությանն ապավինել։ Օ՛հ, անշուշտ. չէ՞ որ ես նրա սիրտը ճանաչում եմ։

Սիրող կնոջ արթուն աչքը սրատես է, և դժվար է նրան խաբել։ Մր. Միկաբրը որոշել է Լոնդոն գնալ։ Այս առավոտ, նախաճաշից առաջ, նա մի հասցե գրեց՝ այն փոքրիկ պայուսակին կպցնելու համար, որ շատ երջանիկ օրեր է տեսել։ Թեև թերթիկը գրելիս ձեռքով ծածկում էր, բայց ամուսնական անձկության արծվի աչքը կարողացավ դրոն վերջավանկը պարզ կարդալ։ Նրա դիլիժանսը կանգնելու է Ուեստ Էնդում, «Ոսկե Խաչ» պանդոկի առջև։ Կարո՞ղ եմ արդյոք թախանձել մր. Տ.-ին, որ նա մր. Միկաբրի ու նրա հուսահատ գերդաստանի միջև մի հաշտություն հաստատելու փորձ անի։ Օ՛հ, ո՛չ. այս խնդիրն արդեն ճափազանց հանդուգն կլիներ։

Եթե փառազարդ մր. Կոպպերֆիլդը դեռ հիշում է ինձ նման անշուք էակին, մր. Տ.-ն հարկավ կուզենա հայտնել նրան իմ անհատական հարգանքը և միևնույն խնդիրքը: Համենայն դեպքս, թող նա հաճի **սույն գրությունը ծածուկ պահել և սրա մասին ոչ մի, նույնիսկ թեթև ակնարկ չանել մր. Միկաբրի ներկայությամբ:** Եթե մր. Տ.-ն կամենա պատասխանել գրությանս (անչափ համարձակ ենթադրություն),– «Մ. Է. Կենտըրբրրի, Poste restante» հասցե կրող մի նամակ այնքան դառն հետևանքներ չի ունենա, որքան կունենար մի ուրիշ նամակ, որ շիտակ ուղղված լիներ այն անձին, որն իր ծանրագույն թշվառության մեջ պատիվ ունի ստորագրելու

Մր. Թոմաս Տրեդլսի խոնարհ բարեկամ

և աղերսող

Էմմա Միկաբր»:

– Ի՞նչ կասես,– հարցրեց Տրեդլսը, աչքերը վրաս ուղղելով, երբ արդեն երկու անգամ կարդացել էի մրս. Միկաբրի նամակը:

– Իսկ դու ի՞նչ կասես մյուսի մասին,– ասացի ես, տեսնելով որ նա դարձյալ կիտած հոնքերով այդ նամակը սկսեց կարդալ:

– Կարծում եմ, Կոպպերֆիլդ,– ասաց Տրեդլսը,– որ մր. ու մրս. Միկաբրի բոլոր մյուս նամակներից շատ ավելի իմաստ ունեն այս երկու գրությունները,– բայց ես անկարող եմ այդ իմաստն ըմբռնել: Պարզ է, որ երկուսն էլ անկեղծ սրտով են գրված՝ առանց հեղինակների կանխահոժար համաձայնության: Խե՛ղճ արարած,– գոչեց Տրեդլսը, նայելով մրս. Միկաբրի նամակին, որ այժմ համեմատում էինք մյուսի հետ,– արդեն լոկ մարդասիրությունը մեզ հարկադրում է գրել նրան, թե անպատճառ մր. Միկաբրին կտեսնենք:

Ես լիակատար հոժարություն հայտնեցի, մանավանդ որ տիկնոջ առաջին նամակի հետ փոքր-ինչ թեթև վարվելուս համար արդեն սկսել էի զղջալ: Այդ նամակի մասին, ինչպես որ արդեն ասել եմ, շատ էի մտածել, սակայն իմ անձնական գործերով զբաղված լինելով, ընտանիքի բնավորությունը ճանաչելով և այնուհետև ոչ մի նոր լուր չստանալու պատճառով քիչ-քիչ մոռացել էի նրան: Հաճախ էի մտածել Միկաբրների մասին, բայց միայն ինքս ինձ հարցնելու համար, թե արդյոք ի՞նչ «Դրամական հանձնարարություններ» հաստատած կլինեն Կենտըրբրիում և ինչո՞ւ մր. Միկաբրն Ուրիաս Հիպի գործակալը դառնալուց հետո սկսել էր խորշել ինձնից:

Ես գրեցի մրս. Միկաբրին պատասխան իմ ու Տրեդլսի կողմից, որ և միասին ստորագրեցինք: Այնուհետև դուրս ելանք՝ նամակը փոստ տանելու և մի երկար խոսակցություն ունեցանք, հազար ու մի ենթադրություն անելով, որ սակայն այստեղ կրկնել ավելորդ է: Ճաշից հետո տատիս էլ մեր միտքը հայտնեցինք և այս բոլորի հետևանքն այն եղավ, որ անհրաժեշտ գտանք ժամադրված տեղում տեսնել մր. Միկաբրին:

Եվ թեպետ մենք սահմանված ժամանակից մի քառորդ ժամ առաջ բանտի հարավային պարսպին հասանք, մր. Միկաբրը արդեն այնտեղ էր: Ձեռքերը խաչաձև կրծքին դրած՝ նա մի այնպիսի գորովանքով էր մտիկ անում պարսպի սուր ժանիքներին, որ ասես թե դրանք այն ծառերի ստվերաշատ ճյուղերը լինեին, որոնք նրան հովանի էին եղել իր մանկության ժամանակ:

Երբ որ նրան ողջույն տվինք, նա փոքր-ինչ շփոթվեց. նախկին օրերի անբռնազբոսիկ վայելչությունը էլ չուներ: Պաշտոնական սև զգեստից հրաժարվել էր և հին վերարկու ու նեղ տաբատ հագել, բայց ոչ առաջվա շքեղությամբ: Խոսակցության միջոցին նա հետզհետե իր սովորական ձևերն ընդունեց, սակայն իր ակնոցն անգամ հին օրերի թեթևությամբ չէր շարժվում և նույնիսկ շապկի օձիքները, չնայելով նախկին մեծության, այլևս տնկված չէին, գրեթե անփույթ կախ էին ընկել:

– Ջենտլմեններ,– ասաց մր. Միկաբրն առաջին բարևներից հետո,– դուք հարազատ բարեկամներ եք: Նեղության ժամին օգնության հասնող բարեկամներ: Թույլ տվեք արդի մր. Կոպպերֆիլդի և ապառնի մրս. Տրեդլսի ֆիզիկական առողջությունը հարցնեմ... ընթադրելով, թե իմ բարեկամ Տրեդլսը դեռ իր ջերմ սիրո առարկայի հետ չի միացել՝ ամուսնության չարն ու բարին նրա հետ միասին կրելու համար:

Սրտանց շնորհակալություն հայտնեցինք նրա քաղաքավարի ուշադրության համար: Այնուհետև նա մատնացույց արեց պարսպի վրա ու շարունակեց.

– Հավաստի եղեք, ջենտլմեններ...

Բայց ես նրան կանգնեցրի, որ այդպիսի հանդիսավոր եղանակով չդիմի մեզ, այլ առաջվա պարզ ձևով:

– Սիրելիդ իմ Կոպպերֆիլդ,– գոչեց նա և աջս սեղմեց:– Խոնրահվում եմ ձեր սրտազին բարեկամության առջև: Այդ վեհանձն վարմունքը մի խորտակված տաճարի բեկորի հետ, որի անունը երբեմն **Մարդ** էր... եթե ներելի է այսպես ասել... բացահայտ ապացույց է ձեր սրտի ազնվության, որ մարդկային բնության պարծանքն է: Մտադիր էի ասել, թե ահա վերստին աչքիս առջև է այն անդորրավետ ապաստանը, ուր երբեմն անցել են կյանքիս գերերջանիկ ժամերից մի քանիսը:

– Գերերջանիկ՝ անտարակույս շնորհիվ մրս. Միկաբրի,– ասացի ես:– Ինչպե՞ս է նրա առողջությունը:

– Շնորհակալ եմ... վատ չէ,– ասաց մր. Միկաբրը փոքր-ինչ խոժոռած դեմքով:– Վատ չէ... և ահա Բանտը,– շարունակեց նա՝ գլուխը կոր ու տրտում,– այն օթևանը, ուր երկար փոթորկալի տարիներից հետո առաջին անգամ լռեցին դրամական պահանջ հայտնող անտանելի ձայները, որոնք ամեն առավոտ շեմքիս առջև հնչելով՝ մինչև անգամ տանից դուրս գալ չէին թույլ տալիս, ուր դռան վրա մինչև անգամ հնչակ չկար, որ պարտապանը հնչեցներ, ուր պարտապանի սպառնական բռունցքներից ազատվում էի և անգութ բանտարկողները ստիպում էին վանդակապատի դրսի կողմը կանգնած մնալ: Ջենտլմեններ,– ասաց մր. Միկաբրը,– երբ այս աղյուսաշեն շրջապատի գագաթից երկաթե ձողերն ստվեր էին գցում հրապարակի ավազին, ես տեսնում էի, թե ինչպես զավակներս վազվզում էին մայթի վրա նկարվող մանվածո նախշերի ուղղությամբ և ցատկում մութ-մութ շերտերի վրայից: Այստեղ քար չկա, որի հետ ես ծանոթ չլինեմ, և դուք հարկավ չեք նեղանա, որ հուզվում եմ այդ ամենը հիշելիս:

– Այն ժամանակից ի վեր բոլորս էլ այս աշխարհում ցավեր կրեցինք, մր. Միկաբր,– ասացի ես:

– Մր. Կոպպերֆիլդ,– նկատեց դառնությամբ մր. Միկաբրը,– քանի որ ես այս ապաստանի բնակիչ էի, համարձակ կարող եմ մերձավորիս երեսին նայել ու նրա գլուխը ջարդել, եթե հանդգներ վիրավորել ինձ: Այսպիսի համարձակ հարաբերություն այլևս չկա մերձավորիս ու իմ միջև:

Մր. Միկաբրը բանտի պարսպից կորագլուխ հեռացավ և մի կողմից Տրեդլսի թևին հենվելով, մյուս կողմից իմ, առաջ գնաց:

– Գերեզման տանող ճամփու վրա կան ուղեցույց նշաններ կամ կապարներ,– ասաց մր. Միկաբրը և գորովանքով ետ նայեց,– որոնց մոտով մարդ կուզենար երբեք չանցնել, եթե այդ ցանկությունը մի անբարշտություն չլիներ: Արկածալից կյանքիս մեջ պարտապանների բանտը մի այդպիսի նշան է կամ կապար:

– Այսօր շատ հոռետես եք, մր. Միկաբր,– ասաց Տրեդլսը:

– Այո՛, սըր, հոռետես,– հաստատեց մր. Միկաբրը:

– Կցանկանամ հուսալ, որ դրա պատճառն իրավաբանությունից զզվելը չէ,– նկատեց Տրեդլսը։– Հո գիտեք, որ ես էլ իրավաբան եմ։

Մր. Միկաբրը ոչ մի խոսք չարտասանեց։

– Ինչպե՞ս է ձեր բարեկամ Ուրիաս Հիպը, մր. Միկաբր,– հարցրի ես մի կարճատև լռությունից հետո։

– Սիրելի Կոպպերֆիլդ,– ասաց մր. Միկաբրը, հանկարծ զայրույթից սփրթնելով,– եթե իմ գործատերին ձեր բարեկամն եք համարում՝ շատ ափսոսում եմ. իսկ եթե իմ բարեկամը, ես միայն սարդոնյան ծիծաղով կպատասխանեմ։ Ինչ մտքով էլ նրա մասին հարցնելու լինեք, ուրիշ պատասխան չպիտի տամ... խնդրեմ ներեցեք... բայց միայն այս – ինչպես էլ լինի նրա առողջությունը, բայց դեմքն աղվեսի է, իսկ սիրտը՝ սատանայի։ Թույլ կտաք, որ ես իբրև մի սոսկ անհատ, երկար չխոսեմ այս նյութի մասին, որ պաշտոնական գործունեությանս միջոցին հուսահատության անդունդին է հասցրել ինձ։

Ջղջանք հայտնեցի անգիտակցաբար այդպիսի նյութ շոշափելու համար, որ նրան ակներև գրգռում էր, և ասացի.

– Կարո՞ղ եմ գոնե հարցնել, թե ինչպե՞ս է իմ հին բարեկամների՝ մր. Ուիկֆիլդի ու նրա դստեր որպիսությունը։

– Միս Ուիկֆիլդը,– ասաց մր. Միկաբրը, այս անգամ շիկնելով,– ամեն կանացի առաքինությունների մի պայծառ օրինակ էր, է և կլինի։ Սիրելի Կոպպերֆիլդ, նա է կյանքիս խավար հորիզոնի միակ լուսատու փայլուն աստղը։ Սրտանց հարգում եմ այդ նորատի օրիորդին, հիանում եմ նրա առաքինի բնավորությամբ, հավատարիմ անձնվիրությամբ դեպի իր հայրը, նրա անսահման բարությամբ, քնքշությամբ... հեռացրեք ինձ մի ուրիշ տեղ,– գոչեց մր. Միկաբրը,– որովհետև պատիվս վկա է, էլ չեմ կարող ինքս ինձ տիրապետել։

Քաշեցինք նրան մի անձուկ փողոց. այնտեղ նա թաշկինակը հանեց ու մեջքը մի պատի դեմ տվեց։ Եթե ես էլ այնքան լուրջ էի մր. Միկաբրին նայելիս, որքան Տրեդլսը, չեմ կարծում, որ մեր ընկերությունը շատ քաջալերիչ երևար նրան։

– Ճակատագիրս է,– ասաց նա, իրոք լաց լինելով, բայց և աշխատելով իր նախկին վայելչության գեթ մի մասը պահպանել,– ճակատագրիս գիրն է, ջենտլմեններ, որ ինձ համար մարդկային բնության ամենանուրբ զգացումներն անվերջ տանջանքի աղբյուր են դառնում։ Միս Ուիկֆիլդին ընծայած մեծարանքս նետի նման սիրտս խոցեց։ Լավ կանեք, որ ինձ թողնեք մի շրջմոլիկի պես մենակ թափառել երկրիս երեսին. ինձ ուտող որդի գործը կրկնապատիկ կհեշտանար։

Առանց պատասխանելու այդ խնդրին, լուռ կանգնած էինք։ Մր. Միկաբրը թաշկինակը գրպանը դրեց, շապկի օձիքը շտկեց, գլխարկը մի կողմ թեքեց և իր արտասուքն անցորդներից թաքցնելու համար մի զվարթ երգ շվշվացրեց։ Այն ժամանակ ես նրան ասացի (առանց իսկապես գիտենալու, թե ի՞նչ կորուստ կունենայինք, եթե նրան մենակ թողնեինք), թե շատ կցանկանամ նրան տատիս ներկայացնել, եթե նա հաճի Հայգեթ գալ, ուր միշտ կգտնվի մի ավելորդ անկողին։

Դուք մեզ համար մի բաժակ պունչ կպատրաստեք, մր. Միկաբր,– ասացի ես,– և անցյալի զվարթ ժամերը հիշելով՝ ձեր սրտի ներկա վիշտը կփարատենք։

– Կամ եթե կարծում եք, մր. Միկաբր, թե ավելի շուտ թեթևություն կզգաք այդ վիշտը ձեր բարեկամներին հայտնելով, մենք պատրաստ ենք լսել ձեզ,– նկատեց Տրեդլսը խոհեմաբար։

– Ջենթլմեններ,– գոչեց մր. Միկաբրը,– ինչ կամենաք արեք ինձ հետ։ Ես մի շյուղ եմ օվկիանոսի երեսին՝ ահեղագոչ փորոտիքներից հալածված... ներեցեք... ուզում էի ասել փոթորիկներից։

Նորից թև-թևի տված առաջ գնացինք, հենց դիլիժանսի մեկնելու րոպեին նստեցինք և առանց արկածի հասանք Հայգեթ։ Ճանապարհին ես շատ անհանգիստ էի. չէի իմանում, թե ինչ ասեմ կամ անեմ. կարծեմ Տրեդլսն էլ այդպես էր։ Մր. Միկաբրը շատ տխուր էր. միայն մերթ-մերթ աշխատում էր հագուստը դրստել և իր երգի մի մասնիկը մրմնջալ. սակայն, չնայելով շատ ծուռ դրված գլխարկին ու մինչև աչքերը վերև քաշված օձիքներին, որոնք նրան կարծես ծաղրում էին, նրա տխրությունը ավելի ազդեցիկ էր երևում։

Դորայի տկարության պատճառով մենք լավ համարեցինք ուղղակի տատիս մոտ գնալ և ոչ թե իմ տունը։ Երբ նա մեր գալն իմացավ, մր. Միկաբրին շնորհալի մտերմությամբ ընդունեց։ Մր. Միկաբրը նրա աջը համբուրեց և դեպի պատուհանը քաշվեց, ուր թաշկինակը հանելով ոգորում էր իր վշտերի բռնության դեմ։

Մր. Դիկը տանն էր։ Նա ի բնե ուրիշի վշտին այնքան կարեկից էր և այդ վիշտն այնքան արագ ըմբռնող, որ հինգ րոպեի ընթացքում առնվազն տասն անգամ մր. Միկաբրի աջը սեղմեց։ Մի անծանոթ անձի այդ սրտառուչ վերաբերմունքից հուզվելով, մր. Միկաբրը յուրաքանչյուր սեղմումից հետո չէր կարենում ուրիշ բան ասել բացի «Սիրելի սըր, հիացած եմ ձեր սքանչելի բարության վրա»։ Մր. Դիկն էլ, այդ խոսքերով քաջալերված շարունակում էր ավելի ամուր սեղմել նրա աջը։

– Այս ջենտլմենի բարությունը,– ասաց տատիս մր. Միկաբրը,– եթե ինձ թույլ տաք մեր կոպիտ ազգային խաղերի բառարանից մի ոճ փոխ առնել... կլտիպուզ է անում ինձ[77]։ Մի այսպիսի ընդունելության հանդիպումը արդարև սփոփանք է բյուր վշտերով ու ցավերով ընկճված մարդուն։

– Մր. Դիկը երևելի անձ է,– ասաց տատս հպարտությամբ։

– Հավաստի եմ, լեդի,– ասաց մր. Միկաբրը։– Ազնիվ սըր,– շարունակեց նա, երբ մր. Դիկը նորից նրա աջը սեղմեց,– անչափ զգացված եմ ձեր մտերմությունից։

– Ձեր առողջությունն ինչպե՞ս է,– հարցրեց մր. Դիկը, անձկությամբ նրա երեսին մտիկ անելով։

– Է՛հ, ոչ լավ, ոչ վատ, սիրելի սըր,– պատասխանեց հառաչելով մր. Միկաբրը։

– Վհատվել պետք չէ,– ասաց մր. Դիկը։– Ընդհակառակն՝ աշխատեցեք որքան կարելի է զվարթ լինել։

Այդ սիրալիր խոսքերից և մր. Դիկի աջը նորից իր աջում գտնելուց մր. Միկաբրը բոլորովին հուզվեց։

– Մարդկային կյանքի մշտափոփոխ տեսարանում երբեմն ինձ պատահել է մի օազիս,– ասաց մր. Միկաբրը։– Սակայն մի այսպիսի գալարագեղ, ջրառատ ու զովարար օազիս աչքերս դեռ չէին տեսել։

Մի ուրիշ ժամանակ այդ համեմատությունը ծիծաղս կշարժեր, բայց այժմ զգում էի, որ բոլորս էլ մի շատ դժվար դրության մեջ ենք։ Ես դիտում էի մր. Միկաբրին, որ ակներև տատանվում էր մի գաղտնիք հայտնելու և ոչ մի բան չհայտնելու հակընդդեմ փափագների մեջտեղում, և արդեն սկսել էր տագնապել։

Աթոռի եզրին նստած Տրեդլսը, որի փուշ-փուշ մազերը սովորականից ավելի էին դիզացել, ակնապիշ մտիկ էր անում մերթ հատակին, մերթ մր. Միկաբրին, և ոչ մի ձայն չէր հանում։ Խորաթափանց աչքերով նորեկ հյուրին դիտող տատս մեզնից ավելի հանգիստ էր թվում, որովհետև շարունակ նրա հետ խոսում էր, ստիպելով նրան կամա ակամա պատասխան տալ։

---

[77] To floor — անգլիական բռնցկամարտիկների լեզվով նշանակում է մեծ հարվածով տապալել, զգետնել ոսոխին։

– Դուք եղբորորդուս հին բարեկամն եք, մր. Միկաբր,– ասաց տատս։– Ափսոսում եմ, որ զուրկ եմ եղել ավելի առաջ ձեզ ճանաչելու հաճույքից։

– Տիկին,– պատասխանեց մր. Միկաբրը,– երանի թե կյանքիս հին շրջաններից մեկում ձեզ տեսած լինեի։ Այն ժամանակ ես մի խորտակված նավի նման չէի, ինչպես որ եմ այս րոպեիս։

– Հուսով եմ, սըր, որ մրս. Միկաբրն ու ձեր ընտանիքը ողջ առողջ են,– ասաց տատս։

Մր. Միկաբրը գլուխ տվեց։

– Այնքան են առողջ, ազնիվ տիկին,– պատասխանեց նա հուսահատ ձայնով,– որքան կարող են տարամերժված ու աքսորված թշվառներն առողջ լինել։

– Աստվա՛ծ իմ,– գոչեց տատս։– Այդ ի՞նչ է ձեր ասածը։

– Ասածս այն է, արգո տիկին,– պատասխան տվեց մր. Միկաբրը,– որ գերդաստանիս գոյությունը մի հատիկ թելից է կախված։ Իմ գործատերը...

Մր. Միկաբրը շատ անհարմար րոպեին լռեց և սկսեց այն լիմոնները կճպել, որ պատվիրել էի նրա առջև դնել պունչի մյուս նյութերի հետ։

– Ձեր գործատե՞րը, սըր... – ասաց մր. Դիկը, նրա թևից կամաց քաշելով, որպեսզի խոսքը շարունակի։

– Շնորհակալ եմ սըր, որ ասելիքս հիշեցնում եք,– վրա բերեց մր. Միկաբրը։ (Նրանք դարձյալ իրար աջ սեղմեցին։) – Իմ գործատերը, տիկին... մր. Հիպը... մի օր շնորհ արեց ինձ նկատելու, որ եթե ես մեր պայմանի զորությամբ ինձ հասանելի ռոճիկը կանոնավոր չստանայի, այժմ անշուշտ գյուղե գյուղ շրջող, սուր կուլ տվող ու կրակ լափող մի աճպարար կդառնայի։ Շատ հավանական է, որ մի օր որդիքս մի կտոր հաց ճարելու համար օյինբազ դառնան և կամ լարախաղաց, իսկ մրս. Միկաբրն ստիպված լինի թշվառներին ուղեկցել, երգեհոնիկ ածելով։

Մր. Միկաբրն այդ ասելիս կածես թե պատահական, բայց ազդու շարժումով դանակը ճոճեց, իբր թե իմացնելու, որ իր մարգարեությունը չի կատարվի, քանի որ ինքը կենդանի է, հետո վշտահար դեմքով շարունակեց լիմոնները կճպել։

Տատս իր արմունկը փոքրիկ սեղանին դեմ տված, ուշի-ուշով դիտում էր նրան։ Թեև ես չէի ուզի մր. Միկաբրից որևէ հնարքով գաղտնիք որսալ, որ նա չէր վստահանում դուրս բերել, բայց այդ միջոցին դարձյալ կդիմեի, եթե ապշած չմնայի նրա տարօրինակ վարմունքից։ Այդ իսկ րոպեին նա լիմոնի կտորները սանը ձգեց, ունելիով շաքար վերցրեց, դատարկ պնակի մեջ սպիրտ ածեց և վրայից իսկույն աշտանակը շուռ տվեց, հուսալով թե դրա միջից եփ ջուր կհոսի։ Պարզ էր, որ ճգնաժամը մոտեցել էր։ Հանկարծ մր. Միկաբրը այդ բոլոր անոթներն ու նյութերը մի կողմ հրեց, ոտքի ելավ, թաշկինակը հանեց, լաց եղավ։

– Սիրելիդ իմ Կոպպերֆիլդ,– ասաց նա թաշկինակի տակից,– այս գործը մի այնպիսի գործ է, որ ամենից ավելի մի հանգիստ սիրտ և ինքնահարգություն է պահանջում։

– Մր. Միկաբր, խնդրեմ հայտնեցեք, ի՞նչ է պատահել ձեզ,– ասացի ես։– Չէ՞ որ բոլորս էլ ձեզ բարեկամ ենք։

– Բոլորդ էլ բարեկամ եք, այո, սըր,– գոչեց մր. Միկաբրը, և ինչ որ մինչև այժմ իր սրտում թաքնված էր, միանգամից դուրս պայթեց։– Աստված իմ, եթե ես բարեկամներիս հետ չլինեի, այս հոգեկան տագնապի մեջ էլ չէի լինի։ Ուզում եք, ջենտլմեններ, իմանա՞լ, թե ինձ ի՞նչ է պատահել։ Լավ կլիներ հարցնեիք, թե ի՞նչ չի պատահել։ Ստորություն է պատահել, չարություն է պատահել, վատթարություն է պատահել, խաբեություն, խարդախություն, դավաճանություն – ահա թե ինչ է պատահել, և այս բոլոր ոճիրների մարմնացումը ուրիշ մարդ չէ, եթե ոչ **Հիպը**։

Տատս ծափ տվեց, և բոլորս սարսռացինք։

– Պատերազմը վերջացավ,– ասաց մր. Միկաբրը, թաշկինակը սաստիկ ճոճելով ու բազուկներն այնպես շարժելով, որ ասես թե գերբնական արգելքների դեմ լողալիս լիներ։– Էլ զորություն չկա այս կյանքին դիմանալու։ Ես մի թշվառ արարած եմ, չարաչար զրկված ամեն բանից, որով քաղցր է մարդուս կյանքը։ Ես թաբուի[78] տակ էի այդ անզգամի դժոխային ծառայության մեջ։ Ետ տվեք ինձ կնոջս, վերադարձրեք զավակներիս, այնպես արեք, որ կոշիկներովս ման եկող նվաստ էակը նորից Միկաբր դառնա, և ապա թե ինձ հրամայեցեք սրեր կուլ տալ, և կուլ կտամ։ Եվ կտեսնեք, ի՛նչ ախորժակով։

Այդ աստիճան զայրացած մարդ ես օրումս չէի տեսել։ Փորձեցի նրան հանգստացնել, որ մի խելացի բան ասի, բայց նա չուզեց ոչինչ լսել ու ավելի տաքացավ։

– Ոչ ոքի ձեռք չեմ մեկնելու,– շարունակեց մր. Միկաբրը՝ սուզվողի պես հևալով ու փնչալով,– մեկնելու չեմ, մինչև որ... չջախջախեմ... կտոր-կտոր չանեմ... այդ գարշելի օձին... այդ **Հիպլին**։ Ոչ մի մարդու այցելություն չեմ անելու... մինչև որ... Վեզուվ սարին չստիպեմ... հուր ժայթքել այդ ավազակ... **Հիպլի** գլխին։ Կուլ չեմ տալու... մանավանդ այս հարկի տակ... և ոչ մի զովարար հեղուկ... ոչ էլ պունչի մի կաթիլ... մինչև որ այդ գողը... այդ նենգավոր... այդ սրիկա... **Հիպլի** աչքերը չհանեմ։ Ո՛ւֆ... ոչ ոքի հետ չեմ խոսելու... ոչ ոքի չեմ տեսնելու... ոչ մի տեղ... չեմ ապրելու... մինչև որ... ո՛ւֆ ոտնակոխ չանեմ... անտեսանելի փոշի չդարձնեմ... այդ գերագույն խաբեբային... այդ ծայրագույն կեղծավորին ... այդ չարարվեստ ուխտանենգին... այդ **Հիպլին**։

Արդեն սկսել էի վախենալ, որ չլինի թե մր. Միկաբրը հենց տեղն ու տեղը հոգին փչի։ Այդ կցկտուր խոսքերն այնպես խեղդուկ էր արտասանում։ Հիպլի անվան մոտենալիս՝ այնպես սաստիկ ճիգ էր թափում և այնպես ուժով շեշտում, որ լսողը կսարսափեր։ Բայց երբ վերջ ի վերջո քրտնելով, երեսի գույնը նետելով, աչքերը դեպի վեր չռելով ու շնչասպառ խռկալով իր աթոռի վրա ընկավ, կարծեցի թե ահա հոգին փչում է։ Իսկույն ևեթ մոտեցա նրան օգնելու, բայց նա ձեռքի նշանով ինձ հեռացրեց ու ասաց.

– Ո՛չ, Կոպպերֆիլդ... Ոչ մի հաղորդակցություն չպիտի լինի մեր միջև... մինչև որ... ո՛ւֆ... վիրավորված միս Ուիկֆիլդի... վրեժը չհանեմ... այդ իժի ծնունդ... չար Հիպլից։

Հաստատ համոզված եմ, որ մր. Միկաբրը երեք բառ անգամ անզոր կլիներ արտասանել, եթե վերջին անունը մի առանձին ուժ չազդեր նրան։

– Անդրժելի գաղտնիք... ո՛ւֆ... շարունակեց նա,– ամբողջ աշխարհի համար... առանց բացառության... մինչև որ այս օրվանից մի շաբաթ հետո... առավոտյան... նախաճաշի ժամին... բոլորիդ ներկայությամբ... որպես և միս Տրոտուդի և այս ազնիվ ջենտլմենի... Կենտրբրի պանդոկում... ուր մի ժամանակ մրս. Միկաբրն ու ես... ձեզ հետ միասին... խմբով երգում էինք... այդ վատթար արարածին... այդ ստոր **Հիպլին** խայտառակ չանեմ։ Էլ չեմ կարող ոչ խոսել... ոչ լսել... ոչ հասարակության երես տեսնել... այլ իսկույն ևեթ արշավում եմ... սլանում... բռնելու այդ եղեռնագործ... ժանտ **Հիպլին**։

Եվ այդ մոգական անունը վերջին անգամ ավելի սաստիկ արտասանելուն պես մր. Միկաբրը տատիս սենյակից դուրս վազեց մեզ թողնելով այնպիսի անհանգստության, ակնկալության ու շփոթման մեջ, որ մեր դրությունը իր վիճակից լավ չէր։ Բայց այդ րոպեին անգամ նա չկարողացավ նամակ գրելու անզուսպ տենդին դիմադրել, և մինչև մենք այդ անհանգստության, ակնկալության ու շփոթման մեջ նստած էինք, ինձ հետևյալ նամակը բերին մի մոտավոր պանդոկից, ուր նա մտել էր գրելու.

«Հույժ գաղտնի ու մտերմական։

Սիրելի սըր.

---

[78] Թաբուն մի բանադրանք է Խաղաղ օվկիանոսի կղզիաբնակ ազգերի մեջ։

Թույլ տվեք ձեր միջնորդությամբ, ներողություն խնդրել ձեր պատվական տատից իմ վերջին բորբոքման համար։ Երկար ճնշված հրաշունչ լեռան պայթյունը հետևանք էր իմ ներքին կռվի, որ ավելի հեշտ է ըմբռնել, քան նկարագրել։

Հուսով եմ, որ բավական պարզ հասկացրի ձեզ, թե այս օրվանից իսկ և իսկ մի շաբաթ հետո կփափագեմ տեսնել ձեզ Կենտրբրիի այն պանդոկում, ուր մի ժամանակ մրս. Միկաբրն ու ես պատիվ ունեինք ձեզ հետ միասին հնչեցնելու երգերն անմահ մաքսավորի[79], որ մեծացել էր Տուիդ գետի այն կողմում։

Մի անգամ որ պարտքս կատարեմ, վրեժխնդրության գործն ավարտեմ ու նորից մերձավորներիս երեսին շիտակ նայելու հնար գտնեմ, այնուհետև թող մարդկությունն ինձ մոռանա։ Այնուհետև միակ փափագս այն կլինի, որ ինձ մի անկյուն շնորհվի հասարակաց հանգստարանում։

Ուր հավիտյան քնած են գյուղի անհայտ պապերը

Իրենց անշուք շիրմի տակ,–

միայն այս տապանագրով՝

Ուիլկինս Միկաբր»։

Ժ. ԳԼՈՒԽ
Մր. Պեգգոտիի երազը կատարվում է

Մարթայի ու մեր տեսակցությունից հետո, որ ունեցել էինք գետափին, արդեն անցել էր մի քանի ամիս։ Այնուհետև ոչ մի անգամ չէի տեսել նրան, իսկ նա մի քանի անգամ պատահել էր մր. Պեգգոտիին։ Նրա եռանդուն ջանքերը զուր էին անցել. մր. Պեգգոտիի խոսքերից երևում էր, որ Էմլիի հետքն անգամ չի հայտնվել։ Խոստովանում եմ, որ այդ աղջկան գտնելու հույսս արդեն կտրվելու վրա էր. ես օրեցօր հակվում էի կարծելու, թե նա մեռած կլինի։

Մր. Պեգգոտիի համոզմունքն անխախտ էր։ Որքան գիտեի,– և կարծեմ այդ մարդու ազնիվ սիրտը պարզ էի տեսնում,– նա իր թոռնիկին գտնելու հանդիսավոր վստահության մեջ ոչ մի անգամ չթուլացավ։ Նրա համբերությունն անսպառ էր։ Եվ թեպետ ես զարհուրում էի մտածելիս, թե նրա համար ինչ սոսկալի հարված կլինի, եթե մի օր այդ զորեղ վստահությունը չքանա, բայց նրա հավատն այնպես սուրբ էր, այնքան խոր արմատացած նրա մաքուր սրտի մեջ, որ ես օրեցօր ավելի էի սիրում ու գնահատում այդ մարդուն։

Միայն հուսալով պարապ նստող մարդ չէր նա։ Ամբողջ իր կյանքը գործի էր նվիրել և քաջ գիտեր, որ պարտավոր է ամեն բան ինքն անել, ուրիշի օգնությանը չապավինել։ Ինձ հայտնի էր, որ երբեմն կես-գիշերին ոտքով է գնում Յարմաութ, կասկածելով, թե գուցե ճրագ դրած չլինի հին նավատան պատուհանում։ Ինձ հայտնի էր, որ երբ լրագիր կարդալիս կարծում էր, թե Էմլիի հետ մի կապ ունեցող բան է գտել, գավազանը վերցնում էր ու քառասուն կամ վաթսուն մղոն ճանապարհ կտրում։ Հենց որ այդ ամենը նրան պատմեցի, ինչ որ իմացել էի միս Դարտլի ներկայությամբ, նա ծովով Նեապոլ գնաց ու ետ եկավ։ Այս բոլոր ուղևորությունները ամենախիստ չարքաշությամբ էր կատարվում, և հավաստի լինելով, թե Էմլիին վաղ թե ուշ պիտի գտնի, իր փողը նրա համար էր պահում։ Ոչ մի ժամանակ չլսեցի, որ

[79] Այսինքն՝ Ռոբերտ Բեռնսի (Burns), որ ծնված էր Շոտլանդիայում՝ Տուիդ գետից դեպի հյուսիս։ Երևելի ժողովրդական բանաստեղծ։ Այգեպանի որդի էր, ինքն էլ երկրագործ մշակ, հետո՝ գինու մաքս հավաքող (1759-1796)։

այդ երկար երթևեկություններից գեթ մի անգամ գանգատվեր, մի անգամ ասեր, թե հոգնած է կամ վհատված։

Մեր հարսանիքից հետո Դորան շատ անգամ էր տեսել նրան ու սիրել։ Այսօր էլ աչքիս առջև պատկերացնում եմ, թե ինչպես այդ ձկնորսն իր կոպիտ գլխարկը բռնած՝ գալիս կանգնում էր երեխա-կնոջս բազմոցի մոտ, և Դորան նրա կապուտակ աչքերով հիացած՝ մտիկ էր անում դեմքին։ Երբեմն, երբ երեկոյան դեմ էր գալիս, նրան մեր պարտեզն էի տանում, որ իր չիբուխն ազատ ծխի, և մենք ման գալով՝ իրար հետ հանգիստ խոսում էինք։ Այն ժամանակ մտքիս մեջ ակներև արթնանում էին նրա ամայի տան պատկերը և մանկական աչքերս այնքան հրապուրող գիշերային հավաքումները վառարանի կրակի առջև, մինչ քամին մռնչում էր տան շուրջը։

Մի երեկո մր. Պեգգոտին ինձ պատմեց, թե մի օր առաջ Մարթային տեսել է իր բնակարանի դռան մոտ սպասելիս, և թե աղջիկը նրան խնդրել է ամենևին չհեռանալ Լոնդոնից, մինչև որ դարձյալ մի անգամ նրան չտեսնի։

– Բայց չասա՞ց, թե ինչի համար,– հարցրի ես։

– Փորձեցի իմանալ, մաստր Դեվի,– պատասխանեց բարեկամս,– բայց Մարթան շատ խոսել չի սիրում. խոսք առավ ինձնից ու հեռացավ։

– Եվ հայտնե՞ց, թե երբ նորից կտեսնեք նրան։

– Ոչ, մաստր Դեվի,– ասաց մր. Պեգգոտին լրջությամբ, իր ճակատը շփելով։– Այդ էլ հարցրի, բայց ասաց, թե չի կարող պատասխանել։

Վաղուց արդեն դադարած լինելով քաջալերել բարեկամիս մազի վրա կախված հույսերը, ես այն իրիկուն ոչ մի կարծիք չհայտնեցի, այլ միայն նկատեցի, թե հավանական է, որ շուտով կտեսնի Մարթային։ Լավ էի համարում նրա հաղորդած լուրի առթիվ իմ մեջ ծագած մտքերը նրան չհայտնել, որովհետև շատ կարևոր բաներ չէին։

Մի երկու շաբաթ հետո, երեկոյան դեմ, ես մեր պարտեզում մենակ զբոսնում էի։ Լավ եմ հիշում այդ երեկոն։ Դա մր. Միկաբրի ժամադրած շաբաթվա երկրորդ երեկոն էր։ Ամբողջ օրն անձրև էր եկել, օդի մեջ խոնավություն կար։ Թրջված տերևները, ճյուղերի վրա ծանրանալով՝ անշարժ էին. երկինքը դեռ ամպոտ էր, բայց երգեցիկ թռչուններն արդեն սկսել էին ուրախ-ուրախ ծվծվալ։ Վերջալույսը մթության էր տեղի տալիս, ծիտիկները քիչ-քիչ հանդարտվեցին և իմ շուրջը մի խորին լռություն տիրեց. միայն տերևներից մեկ-մեկ սահող կաթիլների չփչփալն էր լսվում։

Մեր տնակի կողքին պատատուկով պատսպարված փոքրիկ ճեմլիք կար, որտեղից երևում էր դրսի մեծ ճանապարհը։ Շատ բաներ մտածելով աչքս այդ կողմ դարձնելիս՝ հասարակ շալի մեջ փաթաթված մի կին տեսա, որ կարծես ինձ էր նշան անում աչք ու ձեռքով։

– Մա՞թթա,– ասացի ես, երբ որ ավելի մոտեցա նրան։

– Կարո՞ղ եք արդյոք ինձ հետ գալ,– հարցրեց նա մի դողդոջուն մրմունջով։– Ծերունու մոտ էի, բայց տանը չէր։ Գրեցի այն տեղի անունը, ուր կարող է գտնել մեզ, և իմ ձեռքով սեղանի վրա դրի։ Ասացին, թե շուտով տուն կգա։ Նրան ասելու բաներ ունեմ։ Կարո՞ղ եք իսկույն հետս գալ։

Փոխանակ պատախան տալու նույն վայրկյանին պարտեզի դռնով դուրս եկա։ Մարթան ձեռքի արագ շարժումով նշան արեց, որ լռեմ, և շտապեց դեպի Լոնդոն, որտեղից, ինչպես որ շորերը վկայում էին, ոտքով պիտի աճապարած լիներ։

Հարցրի, թե որտե՞ղ ենք գնում, և նրա այո-ի արագ նշանը տեսնելուն պես՝ մի պարապ կառք կանգնեցրի, և իսկույն նստեցինք։

– Ո՞ւր պատվիրեմ, որ տանի,– հարցրի Մարթային։

– Դեպի Գոլդն Սքուեյրի, միայն թե շուտ,– ասաց Մարթան։

Հետո անկյունում կուչ եկավ, մի ձեռքով երեսը ծածկեց ու մյուսով առաջվա նշանն արեց՝ հասկացնելու, թե չի կարող մարդու ձայն լսել։

Հուսո ու երկյուղի մեջ տատանվելով՝ շվարած մտիկ էի անում ուղեկցիս ու սպասում, թե մի բացատրություն կլսեմ, սակայն տեսնելով, որ վճռել է լուռ մնալ և զգալով որ ես ինքս էլ խոսելու տրամադիր չեմ, չուզեցի լռությունը խանգարել։ Գնում էինք առանց մի խոսք ասելու։ Երբեմն-երբեմն նա լուսամուտից դուրս էր նայում, կարծես կառքի ընթացքը դանդաղ համարելով, այնինչ իրոք արագ էր,– և լուռ ու մունջ մնում։

Նրա ցուցումով կանգ առանք ու իջանք Գոլդն Սքուեյրի մուտքի առաջ, ուր ես կառապանին պատվիրեցի, որ մեր վերադարձին սպասի։ Մարթան թևիցս բռնեց ու շտապով տարավ մի մռայլ փողոց, որի նման շատերը կային այդ թաղում, ուր մի ժամանակ տները ջոկ ընտանիքների համար շինված սիրուն-սիրուն շենքեր էին, իսկ այժմ չքավորներին սենյակ առ սենյակ վարձու տրվող բնակարաններ։ Մարթան այդ տներից մեկի բաց դուռը մտնելով, թևս արձակեց ու նշան արեց, որ իրեն հետևեմ դեպի վեր տանող սանդուղքը։ Դա փողոցի հետ միացած մի ընդհանուր միջանց էր։

Տունը բնակիչներով լիքն էր։ Մեր բարձրանալու միջոցին սենյակների դռներն ամեն վայրկյան բացվում էին ու անդադար զանազան գլուխներ դուրս նայում. պատահում էին և ներքև իջնող մարդիկ։ Դեռ դրսից վերև նայելիս նկատել էի, որ մի քանի կանայք, պատուհանների մոտ նստած ծաղկե փարչերի հետևից ներքև էին նայում։ Ակներև էր, որ մենք նրանց ուշադրությունը գրավել էինք, որովհետև հենց նրանք էին կիսաբաց դռների միջով մեզ դիտում։ Սանդուղքը լայն էր, սալահատակ և մթագույն սև փայտե ստվար բազիրքով եզերված, դռների պսակները պտուղներ ու ծաղիկներ պատկերող զարդեր ունեին, պատուհանները՝ լայն նիստեր։ Սակայն անցած շքեղության այդ բոլոր նշաններն ամենաթշվառ անկման մեջ էին գտնվում և կեղտոտ էին. խոնավության, փտության ու հնության պատճառով հատակն արդեն մաշվել էր և վտանգավոր դարձել։ Նկատեցի, որ տեղ-տեղ փորձել են այդ զառամ մարմնի մեջ մի նոր արյուն հոսեցնել և վաղեմի նուրբ քանդակներն անշահ նյութերով նորոգել. սակայն այդ գծուծ կարկատանը նման էր մի սնանկացած հին իշխանի ամուսնության՝ մի գոեհիկ աղջկա հետ – երկու կողմն էլ իրարից դժգոհ։ Սանդուղքի պատուհաններից շատերը կամ փակված և կամ բոլորովին խցված էին. իսկ մյուսների մեջ գրեթե ոչ մի ողջ ապակի չէր մնացել։ Խարխուլ շրջանակների միջով, որոնք միայն նեխած օդ էին ներս քաշում, այլ ոչ թե դուրս թողնում, ուրիշ ամայի պատուհաններ էի նշմարում, ուրիշ կիսավեր շինություններ, և սոսկալով տեսնում ոտքերիս ներքև մի խոր բակ, մի գարշելի փոս, որ ամբողջ տան աղբանոցն էր։

Ամենավերին դստիկոնն էինք բարձրանում։ Ստվերների միջով անցնելիս ես մի երկու անգամ կարծես թե մի կանացի պատկեր նշմարեցի, որ մեր առջևից էր գնում, և երբ մենք վերջին պտույտն անելով սանդուղքի գավթին պիտի հասնեինք, ուր արդեն կտուրն էր, պարզ տեսա, որ միևնույն կինը մի դռան առջև կանգ առավ։ Նա բանալին շարժեց ու ներս մտավ։

– Այդ ի՞նչ բան է,– շշնջաց Մարթան։– Իմ սենյակն է մտնում, և ես չգիտեմ, թե ով է։

Իսկ ես գիտեի, թե ով է։ Զարմանալով ճանաչել էի միս Դարտլին։

Շտապով ասացի ողեկցիս, թե այդ լեդին ինձ հայտնի է, և դեռ խոսքս չէի ավարտել, երբ սենյակից նրա ձայնը հնչեց, բայց թե ինչ էր ասում չհասկացանք։ Մարթան շվարած վրաս նայեց, առաջվա պես ինձ լուռ մնալու նշան արեց ու հանդարտ մինչև գավիթ հասցրեց։ Այնտեղ նա, թեթև հրելով, մի հետևի դռնակ բաց արեց, որ կարծես թե փականք չուներ, և մենք մտանք մի նեղ առաստաղով ամայի խցիկ, որ փայտաշեն դարանի չափ մի բան էր։ Խցիկի և այն սենյակի միջև, որ Մարթան իրենն էր անվանել, մի կիսաբաց, փոքրիկ դուռ էր գտնվում։ Այդ դռան մոտ կանգ առանք՝ վեր ելնելուց գրեթե շնչասպառ, և Մարթան ձեռքով բերանս

փակեց։ Ես կարողացա միայն տեսնել, որ կից սենյակը բավական լայն է, որ մեջը մի մահճակալ կա, իսկ պատերի վրա՝ մի քանի հասարակ նավի պատկեր։ Միս Դարտլին չէի տեսնում, ոչ էլ այն անձին, որին նա դիմում էր։ Մարթան էլ հարկավ չէր տեսնում, որովհետև իր կանգնած տեղն իմից ավելի անհարմար էր։

Մի որոշ ժամանակ գերեզմանային լռություն տիրեց։ Մարթան մի ձեռքը շուրթերիս դրած, մյուսը մեկնեց՝ ուշադրություն արտահայտելով։

– Ի՞նձ ինչ, որ նա տանը չէ,– գոռոզաբար ասաց Ռոզա Դարտլը։– Ես նրան չեմ ճանաչում, չեմ էլ ուզում ճանաչել։ Ես եկել եմ քեզ տեսնելու։

– Ի՞նձ,– պատասխանեց մի քնքուշ ձայն։

Այդ ձայնի հնչյունը լսելուս պես, մարմնիս միջով սարսուռ անցավ։ Էմլիի ձայնիկն էր այն։

– Այո,– ասաց միս Դարտլը,– հատուկ եկել եմ քեզ տեսնելու։ Ի՞նչ։ Չե՞ս ամաչում ցույց տալ ինձ այդ խայտառակ երեսդ։

Այդ սառն ու սուր ձայնի մեջ միս Դարտլի անհագ, անգութ ատելությունը, նրա զսպված կատաղությունն այնպես պարզ արտահայտվեց, որ ասես թե իմ առջև տեսա նրան իր հրացայտ աչքերով, զայրույթից սփրթնաց երեսով, շրթունքի վրա դողացող սպիտակ սպիով։

– Եկել եմ տեսնելու,– ասաց նա,– տեսնելու, Ջեյմս Ստիրֆորթի խելքը թռցնող փերիին, այն աղջկան, որ նրա հետ փախել էր և խոսակցությունների առարկա դարձել իր բնագավառի ռամիկների շրջանում. տեսնել Ջեյմս Ստիրֆորթի պես մի մարդու հանդուգն, վարպետ, լիրբ ու լկտի տարփածուին։ Վաղուց կցանկանայի իմանալ, թե ինչի՞ է նման մի այդպիսի արարած։

Մի դղրդյուն լսվեց, ու թշվառ աղջիկը, որի գլխին այդ թշնամանքը թափվել էր, հենց իմանաս փախչելու փորձ արեց, իսկ թշնամացողը նրա ճանապարհին արագ կտրեց։ Այնուհետև մի կարճ լռություն հաջորդեց։

– Կա՛ց,– գոչեց միս Դարտլը, ատամները կրճտելով ու հատակը դոփելով,– կա՛ց, եթե ոչ այս տան բոլոր բնակիչների առջև դիմակազերծ կանեմ քեզ։ Մի հուսա փախչել իմ ձեռքից. մազերդ փետելով քեզ կբռնեմ ու քարերն անգամ քո դեմ ոտքի կհանեմ։

Միայն մի սարսափելի ճիչ լսելի եղավ՝ այդ նախատինքին ի պատասխան։ Հետո լռություն հաջորդեց։ Ես չգիտեի՝ ի՞նչ անեմ։ Փափագով կփափագեի վերջ դնել այդ տեսակցությանը, բայց զգում էի, որ իրավունք չունեմ ներկայանալու աղջկան. միայն մր. Պեգգոտին իրավունք ուներ նրան տեսնելու ու պաշտպանելու։ Սակայն ինչո՞ւ չէր գալիս։

– Ահա՛,– ասաց Ռոզա Դարտլն արհամարհոտ ծիծաղով,– վերջապես տեսնում եմ սրան։ Եվ ինչպե՞ս նա կարողացավ այս սուտ պարկեշտի թակարդն ընկնել։

– Օ՛հ, աստծու սիրուն գթացեք ինձ,– գոչեց Էմլին։– Ով էլ լինեք, ձեզ հայտնի է ողորմելի պատմությունս։ Աստծու սիրուն գթացեք ինձ, եթե ուզում եք, որ ձեզ էլ գթան։

– Ինձ գթան,– գոռաց միս Դարտլը մոլեգնաբար։– Ի՞նչ կա իմ ու քո միջև, որ ընդհանուր լիներ։

– Ոչինչ, միայն մեր սեռը,– ասաց Էմլին սաստիկ լալով։

– Սե՛ռը,– գոչեց միս Դարտլը։– Եվ քեզ նման մի խայտառակ արարած համարձակվում է մեր սեռին դիմում անել։ Գիտե՞ս արդյոք, որ եթե ատելությունից ու գարշանքից զատ ուրիշ զգացում չունենայի էլ դեպի քեզ, արդեն այդ միակ բառը բավական էր սառույց դարձնելու իմ սիրտը։ Մեր սեռը։ Պարծանք ես բերում մեր սեռին։

– Արժանի եմ այդ հանդիմանության,– ասաց Էմլին հեկեկալով,– բայց սարսափում եմ լսելուց։ Օ՛հ, տիկին, ազնիվ տիկին, վեհանձն եղեք. մտածեցեք, թե որքան եմ չարչարվել ու ի՞նչ պատճառով այսպես ընկել։ Օ՛հ, Մարթա, շուտով հասիր։ Օ՛հ, մեր տունը, մեր տո՛ւնը։

Միս Դարտլը կիսաբաց դռան դեմուդեմ աթոռի վրա նստեց և ներքև նայեց, ասես թե իր ոտներն ընկած Էմլիին դիտելով։ Այդ րոպեին ես նրա դողդոջ շուրթերն ու անագորյուն աչքերը պարզ տեսա. դրանք վայրագ խնդությամբ մի կետի էին սևեռված։

– Լսիր, ինչ եմ ասում,– հրամայեց նա,– և այդ կեղծ քնքշաքդ քո խաբած հիմարների համար պահիր։ Իսկ ինձ ոչ արտասուքովդ կշարժես, ոչ էլ ժպիտովդ կհրապուրես, այ դու ծախու գերուհի։

– Օ՜հ, գոնե փոքր-ինչ ողորմած եղեք դեպի ինձ,– գոչեց Էմլին։– Գեթ փոքր-ինչ կարեկից եղեք թշվառիս, եթե ոչ, խելագարված կմեռնեմ։

– Դա մի թեթև ապաշխարանք կլիներ ոճիրներիդ փոխարեն,– ասաց Ռոզա Դարտլը։– Արդյոք գիտե՞ս, ինչեր ես արել։ Մտածե՞լ ես այն տան մասին, որ քո պատճառով քանդվել է։

– Օր չի անցել, գիշեր չի անցել, որ մտածած չլինեմ նրա մասին,– աղաղակեց Էմլին։

Այժմ տեսա, որ նա չոքած է՝ հերարձակ գլուխը ետ ձգած, գունատ երեսը վերև ուղղած և մեկնած ձեռքերը վիատությամբ իրար կցած։

– Օ՜հ, մի րոպե անգամ չի եղել, թե արթուն լինեի, թե քնած, որ այդ սիրելի տունը ճիշտ այնպես չներկայանար աչքիս առջև, ինչպես էր այն օրը, երբ ես ընդմիշտ, ընդմիշտ թողի նրան։ Օ՜հ, անձկալի տուն, հայրենի տուն։ Օ՜հ, իմ անգին, իմ սիրելի հորեղբայր, եթե գեթ մի վայրկյան գուշակած լինեիր այն տանջանքը, որ ուղիղ ճամփից շեղվելուցս ի վեր հասցնելու էր ինձ քո սերը, առատասեր չէիր լինի դեպի ինձ. գոնե մի անգամ կյանքիս ընթացքում կսաստեիր ինձ, և ինձ համար դա մի սփոփանք կլիներ։ Ո՜չ, ո՜չ, երկրիս վրա ինձ համար ոչ մի սփոփանք չի մնացել, որովհետև նրանք բոլորն էլ ինձ անչափ էին սիրում։

Էմլին երեսի վրա ընկավ աթոռի վրա նստած գոռոզամիտ կնոջ առջև և ուզեց աղերսական հառաչանքով նրա զգեստի քղանցքը համբուրել։

Ռոզա Դարտլը պղնձե արձանի պես անշարժ նայում էր աղջկան։ Նա շուրթերը պինդ սեղմել էր և (գրում եմ, ինչ որ իրոք ճշմարիտ եմ համարում) կարծես սաստիկ զսպում էր իրեն, որ իր առջև տարածված չքնաղ մարմինը ոտնահար չաներ։ Ես նրան հայտանպես տեսա. ակներև էր, որ իր կամքի ամբողջ ուժը գործ էր դնում ինքն իրեն սանձելու համար։

Ե՞րբ կհասնի ծերունին։

– Այս գետնաքարշ սողունն էլ իր տնով է պարծենում,– գոչեց միս Դարտլը, երբ իր կրծքում ալեկոծվող ցասումը այնքան ընկճվեց, որ նորից խոսելու հնարավորություն ստացավ։– Քո տունը։– Մի՞թե երևակայում ես, թե երբևէ դրա մասին մտածած լինեմ, կամ ենթադրեմ, թե կարող ես մի որևէ զրկանք հասցնել այդ որջին, ուր կարելի է արծաթի գնով ամեն պղծություն կատարել։ **Քո** տունը։ Բայց դու այդ տանը ապրանք էիր, որ ձերոնք վաճառում էին, ինչպես ամեն ծախու բան։

– Օ՜հ, ո՜չ, ո՜չ,– գոչեց Էմլին։– Իմ մասին ինչ ուզում եք ասացեք, բայց իմ խայտառակության մասնակից մի՜ անեք այն մարդկանց, որոնք նույնքան պատվարժան են, որքան և դուք։ Անգութ եղեք դեպի ինձ, բայց գոնե նրանց հարգեցեք, որովհետև լեդի եք։

– Ես խոսում եմ **նրա** տան մասին,– ասաց միս Դարտլը առանց Էմլիի աղերսանքներին որևէ ուշք դարձնելու և իր զգեստը ետ քաշելով, որը կարծես պղծվել էր նրա շոշափումից,– լսո՞ւմ ես, **նրա** տան մասին, ուր ինքս էլ ապրում եմ։ Եվ ահա,– գոչեց միս Դարտլը, մի արհամարհոտ հեգնությամբ մտիկ անելով գետնատարած աղջկան,– ահա մի մեծարգո մոր և ջենտլմեն որդու երկպառակտության երևելի պատճառը, այն աղջիկը, որ դառնություն, վիշտ ու ցավ, վեճ ու կռիվ է ձգել մի տան մեջ, ուր ինքը մինչև անգամ խոհանոցում ծառայելու անարժան էր։ Անարգ արարած, որին մի վայրկյան տիղմից հանել են՝ դարձյալ տիղմը նետելու համար։

– Ո՛չ, ո՛չ,– աղաղակեց Էմլին, ձեռքերը կոտրտելով։– Երբ նա առաջին անգամ ճամփիս վրա պատահեց, օ՜հ, երանի թե ինձ համար այն օրը բնավ լուսացած չլիներ, ես առաքինության կանոններով էի դաստիարակված, ինչպես և դուք կամ թե մի ուրիշ ազնիվ կին, և հարսնացու էի մի այնպիսի լավ մարդու, որի հետ ամեն մի ձեզ նման լեդի պատիվ կհամարեր ամուսնանալ։ Եթե դուք նրա տանն եք ապրում, եթե նրան լավ եք ճանաչում, ուրեմն գուցե գիտենաք, թե ինչ սոսկալի ազդեցություն կարող էր անել ինձ նման անզոր ու սնոտի աղջկա վրա։ Ինքս ինձ պաշտպանել, արդարացնել չեմ ուզում, բայց հաստատ գիտեմ, նա էլ գիտի, կամ թե իր հոգեվարքի րոպեին, երբ որ խղճի տագնապ զգա, կիմանա, որ ամեն հնարք գործ դրեց ինձ խաբելու, մինչ ես նրան հոգով սրտով հավատում ու սիրում էի։

Ռոզա Դարտլը տեղից թռավ, ետ ցատկեց և կատաղած ետ ցատկելիս մի սոսկալի հարված տվեց, բայց դա նպատակից վրիպելով, օդի մեջ կորավ։ Միս Դարտլը դիվահարի պես դողդողում ու հևում էր և աչքերից ծայրագույն ատելության, բարկության ու մոլեգնության կրակ թափելով՝ մտիկ էր անում աղջկան։ Օրումս այդպիսի պատկեր չէի տեսել և երանի թե ուրիշ անգամ չտեսնեմ։

– **Դու** նրան սիրո՞ւմ էիր, **դո՞ւ**,– գոռաց նա, բռունցքը սեղմելով ու ցնցվելով, ասես թե միայն մի զենք էր ուզում, որ իր ատելության առարկայի սիրտը մխի։

Էնլին անհետացավ իմ աչքից։ Էլ ոչ մի պատասխան չլսեցի։

– Եվ **ի՞նձ** ես ասում այդ բանը ապականված շուրթերովդ,– շարունակեց միս Դարտլը։– Օ՜հ, ինչո՞ւ չեն գանակոծում այս գարշելի էակներին։ Եթե հնար լիներ, ես այս աղջկան մինչև մահ խարազանով ծեծել կտայի։

Եվ հավաստի եմ, որ նա այդ կաներ։ Տանջանք չկա, որ միս Դարտլը գործ չդներ, գոնե այդ րոպեին, երբ նրա դիվային հայացքը չարություն էր շնչում։

Այժմ նա սկսեց քիչ-քիչ ծիծաղել ու մատնացույց անել Էմլիին, իբրև աստծու և մարդկանց առջև նշվակելի առարկա։

– Եվ **սա** սիրում է, ո՜վ երկինք,– ասաց Ռոզա Դարտլը։– Այս դիակը, այս լեշը։ Եվ ջենտլմենը սիրաբանել է **սրա՞** հետ։ Եվ **սա** ինքն է ասում։ Հա՜, հա՜, հա՜։ Որքան ստախոս են այս վարձկան կանայք։

Ռոզա Դարտլի ծաղրը բացահայտ կատաղությունից էլ վատթար էր։ Եթե ինձ վիճակվեր այդ երկուսից մեկի զոհը լինել, ես երկրորդը կընտրեի։ Սակայն նա իր կատաղության վիժմունքը վայրկենաբար էր դուրս ժայթքում և իսկույն իր կրծքի մեջ շղթայում, չնայելով որ դա պայթելու վրա էր։

– Եկել եմ այստեղ, ով դու սիրո վճիտ աղբյուր,– շարունակեց նա,– եկել եմ, ինչպես որ սկզբից ասացի, տեսնելու, թե ինչի՞ ես նման։ Տեսա և գոհ եմ։ Եկել եմ նաև քեզ ասելու, որ իսկույն ևեթ այստեղից կորչես, գնաս ձերոնց մոտ թաքնվես. պատվական ազգականներդ արդեն վաղուց քեզ սպասում են, և անշուշտ բերած փողովդ կսփոփվեն։ Երբ այդ բոլորը ծախսվի, դու մեկ ուրիշին կճանկես, նորից կհավատաս, նորից կսիրես։ Կարծում էի, թե արդեն մի մաշված, մի կոտրված խաղալիք ես, մի անպետք ու դեն ձգելու շրջանակ[80]։ Բայց այժմ տեսնելով, որ զուտ ու մաքուր ոսկի ես, մի իսկական լեդի ես, մի հալածված անմեղություն, որի սիրտը դեռ թարմ ու ջերմ է և հավատով ու սիրով լի,– չէ՞ որ պետք է այդպես կարծել, և այդ բոլորը շատ հարմար է պաշտոնիդ,– դարձյալ քեզ մի բան կասեմ։ Լսո՞ւմ ես ինձ, չքնաղ փերի։ Ինչ որ կասեմ այն էլ կանեմ։

Ռոզա Դարտլի կատաղությունը դարձյալ մի անգամ կապակտոր դուրս պրծավ, բայց միայն մի վայրկյան, և նրա դեմքը կծկվելով, մի նոր ժպիտի տեղի տվեց։

---

[80] Srangle, ֆրանսերեն՝ elinguent ոսկեզօծ կամ արծաթազօծ պղնձե թիթեղ, փուլ։

– Գնա թաքնվի՛ր,– շարունակեց նա,– եթե ոչ ձեր տանը, գոնե մի ուրիշ տեղ, մի հեռավոր տեղ: Գնա ապրիր, ավելի լավ է՝ գնա մի անհայտ ու խավար անյունում մեռիր: Եթե սիրող սիրտդ մինչև այսօր չի խորտակվել, զարմանում եմ, թե ինչպե՞ս դու ինքդ նրան լռեցնելու հնար չես գտել: Մի այդպիսի հնար գտնելը, լսել եմ, որ դժվար չի:

Էմլիի հեկեկանք ընդհատեց նրան: Ռոզա Դարտլը կանգ առավ, ասես թե մի զմայլական երաժշտություն լսելով:

– Իմ բնավորությունը գուցե քեզ տարօրինակ երևա,– սկսեց նորից միս Դարտլը,– բայց ես չեմ կարող ազատ շնչել այն օդը, որ դու ես շնչում: Դա ինձ համար թունավոր է: Այս պատճառով կամենում եմ քո ժանտահոտ ներկայությունից մաքրել օդը: Եթե մինչև վաղը չանհետանաս, կյանքիդ ամբողջ պատմությունն այս տան բնակիչների առջև հռչակել կտամ: Լսել եմ, որ այստեղ պարկեշտ կանայք են ապրում. ափսոս կլինի, եթե քեզ նման մի լույս նրանց աչքից ծածկված մնա: Իսկ եթե բնակարանդ թողնելով կամենաս այս քաղաքի մի ուրիշ մասում պատսպարվել մի ազնիվ կնոջ դիմակի տակ, այլ ոչ թե քո իսկական նկարագրով (միամիտ կաց, ոչ ոք քեզ չի արգելի այդ նկարագրով երևալ), այն ժամանակ՝ ուր էլ լինես, քեզ կգտնեմ ու համբավդ կտարածեմ: Եվ այդ կանեմ մի ջենտլմենի օգնությամբ, որ դեռ նոր էր թեկնածել ամուսինդ դառնալու մեծ պատվին:

Մի՞թե ծերունին երբեք չի գա, երբե՛ք: Մինչև ե՞րբ այս բոլորը լսեմ: Մինչև ե՞րբ դիմանամ:

– Վա՛յ, վա՛յ ինձ,– ողբաց թշվառ Էմլին այնպիսի ձանով, որից ամենակարծր սիրտն անգամ կհուզվեր: Բայց Ռոզա Դարտլի ժպիտի մեջ ոչ մի գութ չերևաց:– Ի՞նչ անեմ ես, ի՞նչ անեմ:

– Ի՞նչ անես,– կրկնեց մյուսը:– Կերթաս կապրես երջանիկ անցյալիդ հիշատակների մեջ թաղված: Կմտաբերես գորովալից Ջեյմս Ստիֆորթին... չէ՞ որ նա կամեցել էր իր սպասավորի հետ նշանել քեզ... և կամ երախտագետ սրտով կհիշես այդ ազնիվ սպասավորին, որ հոժար էր իբրև ընծա ընդունել քեզ նրա ձեռքից: Կապրես այդ փառավոր հիշատակներով, կսփոփվես քո հազվագյուտ առաքինություններով, կպարծենաս այն պատվավոր դիրքով, որ ստացել ես բոլոր մարդակերպ էակների աչքում: Իսկ եթե այդ բոլորը քեզ քիչ թվա, այն բարի մարդու հետ կամուսնանաս և նրա ներողամիտ զիջողության շնորհիվ երջանիկ կլինես: Իսկ եթե այդ էլ քեզ չօգնի, կմեռնես: Քեզ նման արարածների համար անթիվ աղբանոցներ ու փոսեր կան. մեկը կգտնես, մեջը կընկնես... և այնտեղից դեպի երկինք կսլանաս:

Սանդուղքի կողմից հեռավոր քայլերի ձայն լսեցի: Իմացա, թե մոտեցողն ով է: Փառք աստծու, եկողը մր. Պեգգոտին էր:

Ռոզա Դարտլը վերջին խոսքերն ասելուն պես տեղից հեռացավ և իմ աչքերից չքացավ:

– Չմոռանաս ասածներս,– հարեց նա խիստ եղանակով և մյուս դուռը բաց արեց, որ դուրս գա:– Ինձ հայտնի պատճառներով և անձնական ատելությունից դրդված ես վճռել եմ հալածել քեզ, մինչև որ իմ ազդեցության շրջանից անհետանաս և կամ թե այդ անմտության սիրուն դիմակը դեն ձգես: Այս էր ասելիքս, և ինչ որ ասացի, այն էլ կանեմ:

Քայլերն ավելի մոտեցան, մոտեցան... մինչ Ռոզա Դարտլը հեռանում էր... և մեկը շտապով ներս ընկավ:

– Հորեղբա՛ր:

Մի զարհուրելի ճիչ հաջորդեց այդ խոսքին: Ես մի րոպե սպասեցի և ներս նայելով մր. Պեգգոտիին տեսա, որը գրկել էր ուշաթափ եղբոր աղջկան: Նա մի քանի վայրկյան աղջկա երեսն անքթիթ դիտեց. հետո կռացավ, համբուրեց նրան – օ՛հ, ինչպես ջերմ էր այդ համբույրը – և թաշկինակով ծածկեց նրան:

– Մաստր Դեվի,– ասաց նա հուզումից դողացող ձայնով։– Գոհանամ մեր երկնավոր հորից, իմ երազը կատարվեց։ Փառք քեզ տեր, փառք քեզ, որ անքննելի կամքովդ սիրասուն զավակիս հասցրիր ինձ։

Այդ ասաց, և անզգա Էմլիին գրկելով ու իր երեսը նրա ծածկված երեսին սեղմելով, հանդարտաքայլ ներքև տարավ նրան։

ԺԱ. ԳԼՈՒԽ
Մի ավելի երկար ուղևորության սկիզբ

Հետևյալ օրը, առավոտյան վաղ ժամին, մինչ տատս ու ես իմ պարտեզում զբոսնում էինք (այժմ նա շարունակ սիրելի Դորայիս խնամելով, ուրիշ տեղ չէր գնում ման գալու), ինձ հայտնեցին, թե մր. Պեգգոտին ինձ տեսնել է կամենում։ Դիմավորելու որ ելա, նա արդեն պարտեզումն էր և գալիս էր գլխարկը հանած, ինչպես որ միշտ սովոր էր անել իմ տատին տեսնելիս, որին հարգելով հարգում էր։ Գիշերվա դեպքն արդեն տատիս պատմել էի։ Առանց մի բառ ասելու, նա մոտեցավ եկվորին, նրա աջը սիրով սեղմեց ու թեթև թեթև զարկեց։ Եվ այդ արեց մի այնպիսի մտերմությամբ, որ ամեն բառերից ազդու էր։ Մր. Պեգգոտին հասկացավ նրան, ասես հազար խոսք լսած լիներ։

– Այժմ, Տրոտ, մեր Ծաղկին տեսնելու կերթամ,– ասաց տատս։– Երևի շուտով կզարթնի։

– Մի՞թե իմ պատճառով եք հեռանում, տիկին,– ասաց մր. Պեգգոտին։

– Իրար ասելու բան կունենաք, սիրելի բարեկամ,– նկատեց տատս,– և առանց ինձ ավելի ազատ կլինեք։

– Շատ ուրախ կլինեմ, տիկին,– ասաց մր. Պեգգոտին, եթե մնաք ու շնորհ անեք լսելու, թե ի՞նչ բաներ դուրս կտամ, եթե միայն ձեզ գլխացավանք չլինի։

– Իրա՞վ։ Ուրեմն կմնամ,– պատասխանեց տատս իր կարճաբան եղանակով։ Եվ մր. Պեգգոտիի թևը մտնելով՝ մեր պարտեզի հովանոցը տարավ նրան, ուր և նստեց. ես էլ նրա կողքին նստեցի։ Մր. Պեգգոտիի համար էլ նստելու տեղ կար, բայց նա լավ համարեց ոտքի վրա մնալ, ձեռքը փոքրիկ փայտե սեղանին դեմ տված։ Եվ մինչ այդպես կանգնած էր, դեռ խոսել չսկսած՝ իր գլխարկին նայելով, չէի կարող չնկատել, թե նրա ջլապինդ ձեռքերը որքան կամք ու զորություն են արտահայտում և որքան լավ հարմարվում նրա ազնիվ ճակատին ու գորշագույն մազերին։

– Այս գիշեր,– սկսեց մր. Պեգգոտին, աչքերը մեր վրա ուղղելով,– մանկանս վերցրի և իմ սենյակը տարա, ուր վաղուց նրան սպասում էի և ամեն բան նրա համար պատրաստել էի։ Ժամեր անցան, մինչև որ ինձ ճանաչեց, և ճանաչելուն պես ոտքերս ընկավ և ամեն բան անկեղծ պատմեց, ինչպես մի աղոթքի մեջ։ Նրա ողբագին ձայնը լսելիս, որ մի ժամանակ այնքան զվարթ էր, և նրան այդպես փոշու մեջ ընկած տեսնելիս,– ուր ուրեմն իր օրհնած աջով բան էր գրել մեր փրկիչը,– հավատացեք, սիրտս կտոր-կտոր եղավ, չնայելով որ գոհությունից ու աստծուն փառք տալուց թրթռում էր։

Մր. Պեգգոտին իր երեսը թևով սրբեց՝ առանց թաքցնելու, թե ինչո՞ւ, և ավելի հաստատ ձայնով շարունակեց.

– Բայց սրտիս ցավը շուտ անցավ, չէ՞ որ զավակս գտնված էր։ Այս միջոցին բավական էր, որ ամեն ցավ մոռանամ։ Չեմ հասկանում, թե ինչո՞ւ եմ այս բոլորը հիշում։ Դեռ մի րոպե առաջ իմ մասին մի խոսք ասել մտքովս չէր անցնում, բայց բերնիցս թռավ, ինքս էլ չգիտեմ, թե ինչպես։

– Դուք մի անձնվեր հոգի եք,– ասաց տատս,– և աստված ձեզ փոխարենը կշնորհի։

Մր. Պեգգոտին, որի երեսի վրա խաղում էր տերևների ստվերը, ապշությամբ գլուխ տվեց տատիս՝ այդ բարի կարծիքի համար շնորհակալություն հայտնելով և նորից իր պատմության կարգին անցավ։

– Էմլին գիշերով է փախչում այն տնից, ուր նրան փակել էր մաստր Դեվիին լավ ծանոթ չար օձը... թող աստված պատժե այդ օձին... գիշերով է փախչում իր բանտից։ Մութ գիշերով, բայց երկնքում աղեր են փայլել։ Խեղճը գժվում է. վազ է տալիս ծովափ, կարծելով թե այնտեղ մեր հին նավը կգտնի, և վազելիս լալով գոռում է. «Ահա գալիս եմ, երեսներդ ծածկեցեք»։ Լացողը ինքն է, բայց իրեն թվում է, թե ինքը չէ, մեկ ուրիշն է. և սուր-սուր քարերի վրայով վազելիս ոտքերը խոցոտում է, բայց ցավ չի զգում, ասես ինքն էլ մի քար լիներ։ Շարունակ այդպես վազում է, աչքերը բռնկում են, ականջները դժժում։ Հանկարծ... իմանում եք, գոնե նրան է այդպես թվում... հանկարծ օրը լուսանում է, մի խոնավ ու քամոտ օր, իրեն ընկած է տեսնում մի քարոտ ափին, ուր մի կին իր երկրի լեզվով նրան հարցնում է, թե այդ ի՞նչ է պատահել քեզ։

Մր. Պեգգոտին իր պատմածը պարզ տեսնում էր։ Նրա աչքին ամեն մի բան այնպես ճիշտ էր պատկերանում, և պատմելիս նա ամեն բան այնքան պարզ էր նկարագրում, որ ես չեմ կարող նույնն անել։ Դեռ այսօր էլ, տարիներ անցնելուց հետո, ինձ թվում է, թե այն բոլոր տեսարաններին ես ինքս անձամբ ներկա եմ եղել – այնպես խորն են տպավորված մտքիս մեջ իրենց իրական գույներով։

– Երբ Էմլիի մթնած աչքերը պարզվում են,– շարունակեց մր. Պեգգոտին,– նա այն կնկան ճանաչում է. ծովեզերքին ման գալիս շատ անգամ նրա հետ խոսած է եղել։ Թեև Էմլին, ինչպես ասացի, գիշերով է փախչում ու շատ է հեռանում, բայց առաջ էլ այդ ծովափը ոտքով թե կառքով ու նավակով չափչփել էր և այդ կողմերն իրեն լավ ծանոթ էին։ Հարցնող կինը դեռ ջահել էր, երեխա չուներ, բայց շուտով բերելու էր։ Աստված տա, որ մայրն այդ զավակով մինչև իր վերջին շունչը բախտավոր լինի, որ զավակը նրան սիրի, նրան հարգի, պատիվ բերի ու ծերությունը սփոփի։ Մաղթում եմ, որ նա մի հրեշտակ լինի իր մոր համար այժմ և հավիտյան։

– Ամեն,– ասաց տատս։

– Սկզբում այդ կինը շատ քաշվող ու երկչոտ էր,– շարունակեց մր. Պեգգոտին,– և միշտ մի բան մանելով կամ հյուսելով՝ մի կողմ քաշված, նստած էր մնում, երբ Էմլին ծովափ էր գալիս մանուկների հետ խաղալու։ Բայց Էմլին նրան նկատում է և մի օր նրան մոտենալով սկսում է հետը խոսել. այնուհետև նրանք մտերմանում են, որովհետև ջահել կինն էլ երեխաներին շատ էր սիրում։ Եվ այնքան են մտերմանում, որ այն օրից սկսած ամեն անգամ, երբ Էմլին ծովափ է գալիս, կինը նրան ծաղիկներ է ընծայում։ Ահա այդ կինն է, որ այժմ հարցնում է Էմլիին, թե նրան ի՞նչ է պատահել։ Էմլին պատմում է, և ջահել կինը... իր տունն է տանում նրան։ Այո, ուղիղ իր տունը,– կրկնեց մր. Պեգգոտին, իր երեսը ծածկելով։

Այդ մարդասիրական գործը հիշելով, մր. Պեգգոտին այնպես հուզվեց, ինչպես Էմլիի անհետանալու գիշերվանից ի վեր դեռ երբեք, որքան գիտեմ, չէր հուզվել։ Տատս ու ես նրան խանգարելուց զգուշացանք։

– Ի՞նչ պիտի լիներ այդ տունը,– ասաց նա,– մի փոքրիկ խրճիթ, բայց կինը կարողանում է մի անկյուն տալ Էմլիիս... այդ միջոցին մարդը ծովի վրա էր... ծածուկ պահել Էմլիին, հարևաններին էլ ապսպրել, որ գաղտնիքը չտարածեն։ Էմլին սաստիկ ջերմով հիվանդանում է, և զարմանալի բան... գիտուն մարդիկ գուցե իմանան թե դա ինչ է, բայց իմ խելքը չի հասնում... նա հանկարծ այն երկրի լեզուն մոռանում է ու սկսում միայն իր մայրենի լեզվով խոսել, որ ոչ ոքի հասկանալի չէ։ Այժմ երազի պես մտաբերում է, թե պառկած տեղը շարունակ մայրենի լեզվով է խոսել ու միշտ կարծել, թե մեր հին նավը մոտիկ է՝ հենց մոտակա ծովախորշում, և անդադար աղաչել ու թախանձել է, որ գնան մի լուր տան, թե ինքն արդեն մեռնում է, և մեր կողմից մի ներողության լուր բերեն, գոնե մի խոսք։ Ամեն րոպե նա կարծում

է, թե այն մարդը, որ նրան այդ դրության էր հասցրել, պատուհանի տակ թաքնված է... և կամ թե ներս է մտնում, որ նրան փախցնի... և լալով տանտիկնոջն աղաչում է, որ իրեն մենակ չթողնի, և միևնույն ժամանակ իմանում, որ իրեն հասկացող չկա, և անվերջ սարսափ զգում, թե այն մարդը նրան կբռնի ու կտանի: Էմլիի գլուխն ասես թե կրակով այրվում է. ականջները որոտաձայն դժժում են. ոչ այսօրն է իմանում, ոչ վաղը, ոչ էլ երեկը. այլ ամեն բան, ինչ որ նրա կյանքում պատահել էր և կամ կարող էր պատահել, և ամեն բան, ինչ որ երբեք չէր պատահել, չէր էլ կարող պատահել,– այդ բոլորը նրա գլխում խառնվում է... և թեպետ նա ոչ մի որոշ ու սփոփական բան չի տեսնում, բայց երգում ու ծիծաղում է: Այդ վիճակը որքան է տևում, չգիտեմ. բայց հետո քնում է և փոխանակ այդ քնով կազդուրվի՝ բոլորովին ուժից ընկնում է և երեխայի պես թուլանում:

Մր. Պեգգոտին կանգ առավ, ասես թե իր իսկ պատմած հիվանդության սարսափներից հանգստանալով, և մի քանի վայրկյան լռելուց հետո շարունակեց.

– Մի պայծառ երեկո նա զարթնում է, և օդն այնպես խաղաղ է լինում, որ նա զարթնելիս ծովի թեթև ծփանքից զատ մի ուրիշ ձայն չի լսում: Սկզբում իրեն թվում է, թե մեր տանն է գտնվում, այն էլ մի կիրակի առավոտ. բայց մտիկ է տալիս պատուհանից երևացող որթատունկի տերևներին ու շրջակա բլուրներին – բոլորն էլ օտար են, հայրենի չեն: Ներս է գալիս տանտիկինը՝ նրա կողքին նստելու և Էմլիի միտքն է ընկնում, որ հին նավն մոտակա ծովախորշում չէ, այլ հեռո՛ւ է, շատ հեռու. հետո է իմանում, թե ինքը որտեղ է պառկած և ինչու, և սկսում է լաց լինելով արտասուք թափել բարեսիրտ կնոջ գրկում... որի մեջ այժմ այն կինը իր մանկանը փայփայելիս կլինի ու նրա սիրուն աչուքների վրա հիանալիս...

Մր. Պեգգոտին չէր կարող առանց արտասվելու հիշատակել իր Էմլիի բարեկամուհուն: Ջուր էր փորձում զսպել իրեն: Արտասուքի կայլակները աչքերից դուրս ցայտեցին, և նա արտասանեց. աստված օրհնի այն կնկան:

– Այդ լացից Էմլիի սիրտը թեթևանում է,– ասաց մր. Պեգգոտին իր սրտագին հուզումից հետո, որին ես էլ մասնակից եղա, մինչ տատիկս արդեն ջերմ լալիս էր:– Էմլիս սփոփված շունչ է քաշում ու սկսում է ամրանալ: Բայց այն երկրի լեզուն բոլորովին մտքից ընկել էր, և նա ստիպվում է նշաններով խոսել: Օրեցօր լավանում է, թեև քիչ-քիչ, բայց լավանում է: Սկսում է հասարակ բաների անունը տալ... որ կարծես առաջ ամենևին չէր իմացել... և մի երեկո, մինչ պատուհանի մոտ նստած մտիկ է անում ծովափի վրա խաղացող մի փոքրիկ աղջկա վազվզելուն, այսպիսի դեպք է պատահում: Աղջիկը հանկարծ իր թաթիկը բարձրացնում է և ասում... եթե մեր լեզվով ասենք... «Ձկնորսի աղջիկ, ահա քեզ մի խեցիկ»: Պիտի իմանաք, որ առաջ սովոր էին «Սիրուն լեդի, սինյորա» կանչել նրան, իսկ նա միշտ ասել է, որ իրեն «Ձկնորսի աղջիկ» անվանեն: Աղջիկն էլ հանկարծ կանչում է. «Ձկնորսի աղջիկ, ահա քեզ մի խեցիկ»: Էմլին աղջկան հասկանում է և սրտի ուրախությունից լաց է լինում ու նորից հիշում ամեն բան:

– Երբ որ Էմլին կազդուրվում է,– ասաց մր. Պեգգոտին դարձյալ փոքր ինչ լռելուց հետո,– սկսում է մտածել, թե ինչպես բարի կնոջից բաժանվի ու դեպի տուն վերադառնա: Կնոջ մարդն արդեն ետ էր եկել: Մարդ ու կին նրան մի փոքրիկ նավ են նստեցնում, որ Լիվորնո պիտի գնար, այնտեղից էլ Ֆրանսիա: Էմլին փոքր ինչ փող է ունենում, բայց այդ բարի ամուսինները շատ քիչ են վերցնում իրենց այնքան ծառայության համար... Օրհնվեն նրանք: Հավատացած եմ, որ իրենց արածը կգանձվի այնտեղ, ուր ոչ ցեց կա, ոչ ուտիճ, ոչ էլ գող: Այդ բանը, մաստր Դեվի, ավելի ապահով է, քան աշխարհիս բոլոր գանձերը:

Էմլին գալիս է Ֆրանսիա և նավահանգստի հյուրանոցներից մեկի մեջ ուղևոր լեդիներին ծառայելու պաշտոն է ստանում: Այդտեղ նորից հայտնվում է այն օձը... Տեր, մի՛ արասցե, որ նա ինձ հանդիպի: Էլ չգիտեմ՝ ինչ կանեմ նրան: Հենց որ Էմլին նրան տեսնում է... օձը դեռ նկատած չի լինում Էմլիին... իր առաջվա ահն ու սարսափը ետ է գալիս... Նա շտապով Անգլիա է փախչում և Դուվր իջնում:

– Հաստատ չգիտեմ,– ասաց մր. Պեզգոտին,– թե ե՞րբ է առաջին անգամ Էմլիի սիրտը վհատվում, բայց ամբողջ ճանապարհին նա փափագում է իր ծննդավայրը տեսնել, և Անգլիա հասնելուն պես քայլերը մեր տունն է ուղղում: Բայց վախենալով, թե ներում չի ստանա, վախենալով, թե իրեն կայպանեն, վախենալով, թե մեզնից մեկը կամ մյուսը իր պատճառով մեռած կլինի... նա չի վստահանում առաջ գնալ ու ճանապարհից շեղվում է: «Ապե՛ր. ապե՛ր», ասաց նա ինձ, «Ամենքից սարսափելին այն վախն էր, թե ես արժանի չեմ այն բանին, ինչ որ սիրտս կարոտելով ուզում էր անել: Ես ետ դարձա ճանապարհից, մինչդեռ հոգիս աղոթում էր, որ ինձ թույլ տրվի գոնե գիշերով մեր հին շեմքին մոտենալ, անարժան շուրթերովս նրան համբուրել ու նրա վրա մեռած գտնվել առավոտյան»:

– Գալիս է Լոնդոն,– շարունակեց մր. Պեզգոտին՝ արդեն ահաբեկ շշուկով:– Լոնդոն... որ իր օրում չի տեսել... գալիս է մենակ... այսպես սիրուն: Այդ տագնապիչ դրության մեջ՝ եկած-չեկած նա գտնում է, իր կարծիքով մի բարի կին, մի պատվավոր կին... Կինը խոսում է կար ու ձևից, խոստանում է նրա համար գործ գտնել. նրան իր մոտ է հրավիրում, գիշերը քնելու տեղ է տալիս և հանձն առնում թաքուն իմանալ, թե ինչպե՞ս ենք ես ու մերոնք: Բայց հենց այն րոպեին, երբ զավակս,– գոչեց մր. Պեզգոտին մի այնպիսի երախտագիտության բուռն զգացումով, որ ոտքերից մինչև գլուխը նրան ցնցեց,– երբ զավակս արդեն խորխորաթի եզերքին մոտ էր... որի անունն անգամ արտասանել սոսկում եմ... Մարթան իր խոսքը կատարում է ու փրկում է նրան:

Ես չկարողացա ցնծության աղաղակ չարձակել:

– Մաստր Դեվի,– ասաց բարեկամս, իմ ձեռքն իր զորեղ աջի մեջ սեղմելով,– դուք էիք առաջինը, որ նրա մասին հիշեցրիք ինձ: Շնորհակալ եմ, սըր: Նա խոստումը կատարեց: Իր կյանքի դառն փորձով նա գիտեր, թե որտեղ պետք է զգուշանալ, որտեղ հսկել և ինչ անել: Եվ ինչ որ պետք էր արեց: Աստված էլ նրան օգնեց: Եվ այսպես նա շտապով մտնում է Էմլիի մոտ, որ դեռ քնած էր, և ասում. «Վեր կաց, մահից էլ վատթար վտանգից փախիր ու ինձ հետ եկ»: Տան մարդիկ աշխատում են բռնել նրանց: Բայց ավելի հեշտ էր ծովի կատաղի ալիքը բռնել: «Հեռացե՛ք ինձնից, գոռում է Մարթան, «ես ուրվական եմ, որ եկել եմ սրան ետ կանչելու իր առջև բացված գերեզմանից»: Հետո պատմում է Էմլիին, թե ինձ տեսել է, թե գիտե, որ ես նրան սիրում եմ, որ ես նրան ներել եմ: Այս պատմելիս օգնում է նրան շուտ-շուտ հագնվել և թույլ թևից բռնելով՝ իսկույն տանում է դեպի դուրս: Էլ չի լսում՝ ի՞նչ են ասում տան մարդիկ... հենց իմանաս ականջ չունի: Ջավակիս հետ ամբոխի միջով անցնում է և ուրիշ բան չի մտածում, քան թե նույն գիշերը փրկել նրան կորստյան սև անդունդից:

– Նա խնամում է Էմլիիս,– շարունակեց մր. Պեզգոտին, իմ աջն արձակելով ու իր տրոփող սրտին դնելով,– մինչև հետևյալ երեկոն դարմանում է ուժասպառ ընկած Էմլիիս, հետո դուրս է գնում ինձ փնտրելու, հետո ձեզ, մաստր Դեվի: Չի ասում Էմլիին, թե ո՞ւր է գնում և ինչո՞ւ... վախենում է, թե նա կվհատվի ու կուզենա մեզնից թաքնվել: Ինչպե՞ս էր այն չար լեդին իմացել, որ նա Մարթայի մոտ է, չգիտեմ, գիտենալ էլ չեմ ուզում: Բավական է, որ Էմլիս գտնված է:

– Ամբողջ գիշեր մինչև լույս Էմլին ու ես անքուն նստեցինք,– ասաց մր. Պեզգոտին:– Այդ միջոցին նա շատ բաներ պատմեց ինձ. պատմածն էլ կոտրված սրտի խորքից պատմեց, հառաչելով ու լալով: Դեռ չեմ կշտացել նրա քաղցրիկ դեմքը դիտելուց, այն դեմքը, որ սրտիս վրա է բողբոջած: Բայց մինչև առավոտ նա փարված էր իմ վզով, և իր գլուխն ահա այստեղ՝ ուսիս վրա էր հանգստանում: Այժմ մենք շատ լավ գիտենք, որ կարող ենք իրար ապավինել, և ապավինել հավիտյան:

Մր. Պեզգոտին լռեց, և նրա աջը սեղանի վրա բոլորովին անշարժ մնաց, բայց այնպես հաստատ, որ կարող էր մի առյուծ անգամ նվաճել:

– Սիրտս ցնծում էր, Տրոտուդ,– ասաց տատս, իր աչքերը սրբելով,– երբ ես որոշել էի Բեթսի Տրոտուդի կնքամայրը լինել, այն քրոջդ, որ հույսերս չիք դարձրեց: Այնպիսի ուրախություն

մինչև այսօր չեմ ունեցել մինչև անգամ, բայց անշուշտ կունենայի, եթե ինձ հաջողվեր այն ջահել կնոջ երեխայի կնքամայրը դառնալ։

Մր. Պեգգոտին գլուխը կախեց իմացնելու համար, թե տատիս զգացումը հասկանում է, բայց չվստահացավ, նրա համակրության առարկայի անունն ասել։ Բոլորս էլ լուռ մնացինք՝ մեր մտքերով զբաղված, միայն տատս մերթ աչքերը սրբում էր, մերթ ժպտում և մերթ իրեն հիմար պառավ անվանում։ Վերջապես ես մր. Պեգգոտիին դիմեցի ու ասացի.

– Հարկավ արդեն որոշած կլինեք, սիրելի բարեկամ, թե այսուհետև ինչ պիտի անեք։ Կարծեմ այդ մասին հարցնելն էլ ավելորդ է։

– Լիովին որոշել եմ, մաստր Դեվի,– պատասխանեց նա։– Անելիքս Էմլին էլ գիտի։ Այստեղից հեռու շատ ընդարձակ երկներ կան։ Մեր ապագան ծովի այն կողմում կանցկացնենք։

– Մտադիր են գաղթել, տատիկ,– ասացի ես։– Լսեցի՞ք։

– Այո,– հաստատեց մր. Պեգգոտին հուսալի ժպիտով։– Այնտեղ, Ավստրալիայում, ոչ ոք չի կշտամբի իմ սիրասուն զավակին։ Այնտեղ նոր կյանք կսկսենք։

Հարցրի նրան, թե մեկնելու ժամանակը մոտավորապես որոշե՞լ է։

– Այս առավոտ, լուսադեմին, մաքսատուն էի գնացել,– ասաց նա,– իմանալու, թե ի՞նչ գնացող նավեր կան։ Մեկը մեկնելու է մի կամ երկու ամսից հետո։ Այն նավը տեսա։ Մեջն էլ մտա։ Հարմար նավ է։

– Եվ միայն երկուսո՞վ կերթաք։

– Այո, մաստր Դեվի. քույրս այնքան ձեզ ու ձերոնց սիրում է և այնքան է սովոր միայն իր ծննդավայրի մասին մտածել, որ դժվար թե նրան տանելը լավ լինի։ Այս էլ կա, մաստր Դեվի, որ նրա խնամքին մի մարդ է հանձնված, որ այդ մարդուն չի կարելի մոռանալ։

–Խեղճ Հեմ,– ասացի ես։

–Բարեսիրտ քույրս նրա տնտեսության մասին հոգ է տանում, տիկին. Հեմն էլ նրան շատ է սիրում,– ավելացրեց մր. Պեգգոտին ի գիտություն տատիս։– Հեմը երբեմն մտերմաբար խոսում է նրա հետ, մինչ ուրիշների առջև բերանը անգամ կդժվարանա բաց անել։ Խեղճ տղա,– ասաց բարեկամս, գլուխը շարժելով։– Նրա մոտ գրեթե բան չի մնացել... երանի թե այդ քիչն էլ պահեր։

– Իսկ մրս. Գը՞միջը,– հարցրի ես։

– Է՛հ, նրա բանը փոքր-ինչ ավելի դժվար է,– ասաց մրս. Պեգգոտին վարանումով, որ հետզհետե փարատվեց իր խոսելու միջոցին։– Գիտեք, երբ մրս. Գըմիջը մի անգամ իր ծերուկին հիշեց, էլ չի կարելի շատ դուրեկան ընկերուհի անվանել նրան։ Մեր մեջ մնա, մաստր Դեվի... և ձեր, տիկին... հենց որ մրս. Գըմիջը սկսի «վայ ինձ, վայ ինձ» փնթփնթալ, տեսնողները կկարծեն, թե զահլա տանող պառավ է, որովհետև չեն ճանաչել նրա մարդուն։ Բայց ես ճանաչել եմ ողորմած հոգուն։ Լավ մարդ էր. այս պատճառով պառավի վիշտը հասկանում եմ։ Բայց ամենքն էլ հո հանգուցյալի հետ ինձ նման ծանոթ չեն եղել, ուրեմն, մի՞թե կարող են բանի էությունը հասկանալ։

– Իհարկե ոչ,– պատասխանեցինք տատս ու ես։

– Բացի այդ,– շարունակեց մր. Պեգգոտին,– գուցե քույրս կարծի... չեմ ասում, թե կկարծի, այլ գուցե կարծի... թե մրս. Գըմիջը մի անտանելի պառավ է։ Այս պատճառով չեմ ուզում նրանց մոտ թողնել պառավին, և մտքիս դրել եմ նրա համար մի առանձին անկյուն ճարել ու գնալուցս առաջ մի փոքրիկ թոշակ կարգել, որ կարողանա փոքր ի շատե իր քեֆին ապրել։ Պատվական կին է։ Նրա հասակի, այն էլ նրա պես դժբախտ ու միայնակ նանիկից չի կարելի պահանջել, որ մեզ հետ միասին նավի վրա չարչարվի, հեռավոր երկրի անտառներում դեսուդեն ընկնի։

Ոչ ոքի չէր մոռացել մր. Պեգգոտին։ Մտածում էր ամեն մեկի կարիքը հոգալ, բացի իր անձնական կարիքից։

– Խեղճ Էմլիս,– ասաց նա,– մինչև մեր գնալն իմ մոտ կմնա. նրան հարկավոր է հանգստանալ ու հանդարտվել։ Մինչև այն ժամանակ ճամփու շորերը կպատրաստի, և հույս ունեմ, որ քիչ-քիչ իր վշտերը կմոռանա, կոպիտ, բայց իրեն սիրող ապոր տանն ապրելով։

Տատս գլխով նշան արեց այդ հույսը վավերացնելու համար, և դրանով մր. Պեգգոտիին մեծ բավականություն պատճառեց։

– Հետո մի բան էլ կա, մաստր Դեվի,– ասաց մր. Պեգգոտին ու ծոցից զգուշությամբ մի փոքրիկ ծրար հանեց, որ արդեն մի անգամ տեսել էի։– Սրանք բանկի տոմսակներ են... մեկը հիսուն, մյուսը՝ տասը ստեռլինգի։ Սրանց վրա այն գումարն էլ կավելացնեմ, որ Էմլին ծախսել էր ետ գալիս։ Այդ մասին արդեն իրեն հարցրել եմ (առանց ասելու, թե ինչո՞ւ), և ահա բոլորն էլ այստեղ է։ Ես համրելու վարպետ չեմ։ Խնդրեմ տեսեք, որքա՞ն է։

Նա ինձ մի թերթիկ տվեց, իբրև իր թվաբանական հմտության ապացույց, և սպասեց, մինչև որ իր գրած հաշիվը վերստուգեմ։ Հաշիվը ճիշտ էր։

– Շնորհակալ եմ, մաստր Դեվի,– ասաց նա, թերթիկը ետ վերցնելով։– Եթե անվայել չգտնեք, հենց ճանապարհ ընկնելուս օրն այս գումարը նրա հասցեին մի ծրարի մեջ կդնեմ, իսկ այս գումարը մի ուրիշ ծրարում կդնեմ նրա մոր հասցեին։ Երկար բան չեմ գրի մորը. միայն կգրեմ, թե այս փողն ինչի գին է և կասեմ, որ իր մոտ մնա, որովհետև արդեն մեկնել ենք։

Կարծիք հայտնեցի, թե իրավ պետք է այդպես անել, և թե համոզված եմ, որ նա չի կարող մի անարդար բան անել։

– Ասել էի, թե միայն անելու մի բան կա, մաստր Դեվի, բայց դուրս է գալիս, որ երկու հատ կա,– ասաց մր. Պեգգոտին, ծրարը տխուր ժպիտով իր գրպանը դնելով։– Այս առավոտ տանից դուրս գալիս դեռ չգիտեի՝ արդյոք մեզ վիճակված մեծ բախտը Հեմին հայտնելու գնա՞մ թե չգնամ։ Վերջապես նրան նամակ գրեցի ու փոստ տարա։ Գրեցի ամեն բան, ինչ որ պատահել է, այն էլ գրեցի, թե ինքս էլ վաղը նրա մոտ կլինեմ, մի քանի մանր բաներ կհոգամ և գուցե ընդմիշտ մնաս բարով կասեմ Յարմաութին։

– Կցանկանա՞ք, որ ես էլ ձեզ հետ գամ,– ասացի ես, տեսնելով, որ նա մի ինչ-որ բան չասաց։

– Եթե կամենաք ինձ շնորհ անել, մաստր Դեվի,– պատասխանեց մր. Պեգգոտին,– վստահ եմ, որ ձեզ տեսնելով գոնե փոքր-ինչ կզվարթանա։

Խնդրի որոշումը Դորային թողինք, և որովհետև նա իրեն լավ էր զգում ու սրտանց փափագում, որ գնամ, բարեկամիս խոսք տվի, որ անպատճառ կուղեկցեմ իրեն։ Եվ այսպես հետևյալ առավոտյան միասին դիլիժանս նստեցինք՝ դարձյալ մի անգամ ինձ լավ հայտնի ճանապարհը կտրելու։

Երեկոյան, ծանոթ փողոցով անցնելիս (իմ պայուսակը, բոլոր բողոքներիս հակառակ, Պեգգոտին էր տանում), մի ակնարկ ձգեցի Օմրի ու Ջորեմի կրպակի վրա և նկատեցի իմ հին բարեկամ մր. Օմրին, որ նստած ծխում էր։ Կցանկանայի ներկա չլինել մր. Պեգգոտիի առաջին հանդիպումին իր քրոջ ու Հեմի հետ. մր. Օմրը լավ պատրվակ էր, որ ետ մնամ։

– Ինչպե՞ս է մր. Օմրը։ Վաղուց իրար չենք տեսել,– ասացի ես ներս մտնելով։

Մր. Օմրը ծխի ամպերը հեռու փչեց՝ ավելի լավ տեսնելու համար եկվորիս, և ամենամեծ ուրախությամբ ճանաչեց ինձ։

– Վայել կլիներ, որ վեր կենայի, սըր, այս պատվաբեր այցելության համար շնորհակալություն հայտնելու,– ասաց նա,– բայց ոտքերս փետացել են, այժմ ինձ սայլակով են քարշ տալիս։ Բայց, եթե ոտքերս ու շնչառությունս հաշվից հանենք, փառք աստծո, դեռ լիովին առողջ եմ։

Շնորհավորեցի նրա գոհ դեմքն ու զվարթ ոգին, և այդ միջոցին աչքիս ընկավ, որ նրա բազկաթոռն անիվներ ունի։

– Շատ հանճարեղ բան է, չէ՞,– հարցրեց նա աչքերիս հետևելով և աթոռի բազուկը շփելով։– Փետրի նման թեթև է, դիլիժանսի պես հանգիստ։ Ապրի Միմիկս... նա թոռնիկս է, իմ Միննիի աղջիկը... Ի՞նչ ուժ ունի, ոչ մի ուժ... բայց բավական է, որ կառքս ձեռքով հրի, և սա որ կողմն ուզենաս, առոք փառոք կսահի, և տեսնողի քեֆը կգա։ Գիտե՞ք, ինչ կասեմ... հիանալի աթոռ է՝ մեջը նստած ծխելու համար։

Օրումս չէի տեսել մի ծերունի, որ այնքան ընդունակ լիներ ամեն բանի միայն լավ կողմը տեսնելու և դրանից հաճույք զգալու, որքան մր. Օմրը։ Նա այնպես զվարթ էր, որ հենց իմանաս իր աթոռը, հազը և անդամալույծ ոտքերը թութուն ծխելու դժվարությունը սաստկացնող մի մեծ գյուտի զանազան ճյուղերը լինեին։

– Այս աթոռում նստած ես ավելի եմ աշխարհը տեսնում, քան թե առաջ, հավատացեք,– ասաց մր. Օմրը։– Կզարմանաք, երբ իմանաք, թե որքան մարդ է այստեղ գալիս դեսից-դենից խոսելու։ Ճշմարիտ որ կզարմանաք։ Այն օրից, որ այս աթոռին նստեցի, կարծես թե լրագրերն էլ ավելի շատ լուր են տալիս, քան առաջ։ Կարդալուն գալով, աստված իմ, էլ բան կա՞, որ կուլ չտամ։ Եվ, գիտեք, հենց դա է ինձ ուժ տվողը։ Եթե աչքերս կուրանային, ինձ ի՞նչ կմնար անել։ Եթե ականջներս խլանային, իմ հալն ի՞նչ կլիներ։ Բայց, փառք աստծո, միայն ոտքերս են փետացել. ոտքերս ինչացո՞ւ են... Քանի դեռ սրանց բանեցնում էի, շունչս ավելի ծանրանում էր։ Իսկ այժմ հենց որ ուզենում եմ փողոց և կամ ծովափ դուրս գալ, կկանչեմ Դիկին... Ջորեմի փոքրիկ աշակերտին... և կառնեմ, կերթամ իմ սեփական կառքը նստած՝ Լոնդոնի լորդ մերի պես։

Մր. Օմրը, գրեթե խեղդվում էր ծիծաղից։

– Օրհնվեք, որդի,– շարունակեց նա, չիբուխը քաշելով,– մարդս պետք է իր ճակատագրից գոհ լինի։ Ջորեմի գործերը հաջող են, շատ հաջող։

– Շատ ուրախ եմ,– ասացի ես։

– Գիտեի, որ կուրախանաք,– ասաց մր. Օմրը։– Եվ Ջորեմն ու Միննին զույգ տատրակի նման են։ Էլ ի՞նչ եք ուզում։ Դրանից հետո մարդուս ոտքերը ի՞նչ նշանակություն ունեն։

Ինձ շատ զվարճալի էր թվում այդ գերագույն արհամարհանքը դեպի ոտքերը, մինչ նա այդպես նստած ծխում էր։

– Եվ այն օրից, որ սկսել եմ շատ կարդալ, դուք էլ սկսել եք բաներ գրել, չէ՞, սըր,– ասաց մր. Օմրը, վրաս հիանալով։– Այն ի՛նչ պատվական գրքեր եք գրել։ Ի՛նչ հրաշալի ոճեր կան մեջը։ Ամեն մի բառը կարդացի... ամեն մի բառը։ Եվ հարցրեք, թե քունս տարա՞վ։ Ամենևին։

Ժպտալով հաճություն հայտնեցի նրան, բայց պիտի խոստովանեմ, որ այդ գաղափարների կցորդումը նշանակալից երևաց ինձ։

– Պատիվս վկա, սըր,– ասաց մր. Օմրը,– երբ այդ գիրքն առջևս եմ դնում ու թիկունքին մտիկ տալիս... երեք ամփոփ հատորներ... առաջին, երկրորդ, երրորդ... հավատացեք, պարծանք եմ զգում, որ շնորհ եմ ունեցել ձեր գերդաստանը ճանաչելու։ Էէէ՛... երբ էր այն, շատ վաղուց, այնպես չէ՞, մր. Կոպպերֆիլդ։ Բլենդրոտընում... մի սիրունիկ մեռել էր պառկած մյուսի կշտին... Դուք էլ մի փոքրիկ երեխա էիք։ Աստված իմ։

Խոսակցության նյութը փոխելու համար ես Էմլիի անունը տվի և հիշեցնելով մր. Օմրին, թե ինչպես նա մի ժամանակ այդ աղջկան կարեկից էր, համառոտ պատմեցի Մարթայի օգնությամբ նրա ետ բերելը մր. Պեգգոտիի մոտ։ Գիտեի, որ այս լուրը կուրախացնի ծերունուն։ Նա ուշի-ուշով ինձ լսեց և երբ վերջացրի, հուզվելով ասաց.

– Շատ ուրախ եմ այդ բանի համար, սըր։ Վաղուց մի այդպիսի ավետիք չէի լսել։ Փառք քեզ, տեր։ Իսկ մյուս խեղճի, այն Մարթայի բանն ի՞նչ կլինի...

– Մի այնպիսի խնդիր եք շոշափում, մր. Օմր, որ երեկվանից ի վեր ինձ զբաղեցնում է, և որի մասին, սակայն, մի որոշ բան ասել դեռ չեմ կարող։ Մր. Պեզգոտին իր միտքը չի հայտնել, ես էլ նրան հարցնելուց քաշվում եմ։ Բայց հավաստի եմ, որ այդ աղջկան չի մոռանա։ Նա սովոր չի առաքինի ու բարի գործը մոռանալու։

– Որովհետև գիտեք,– ասաց մր. Օմրը, իր խոսքն այնտեղից շարունակելով, ուր որ իրեն ընդհատել էի,– ես էլ կցանկանայի մասնակցել այն բոլորին, ինչ որ նրա համար անելու կլինեն։ Գրեցեք իմ անունով ինչ գումար էլ կամենաք և հետո ինձ իմաց տվեք։ Ոչ մի ժամանակ չեմ կարծել, որ այդ աղջիկը բոլորովին փչացած լիներ, և ուրախ եմ, որ չեմ սխալվել։ Միննիս էլ կուրախանա։ Ջահել կանայք տարօրինակ էակներ են. շատ անգամ հակառակելու համար այնպիսի բաներ են դուրս տալիս, որ իրենք էլ չեն հավատում... Միննիիս մայրն էլ այդպես էր... բայց նրանց սիրտը միշտ բարի է, գթոտ է։ Եթե Միննիս երբեմն տաք-տաք է խոսում Մարթայի դեմ, այդ միայն ցույցի համար է, բայց թե ցույցն ինչացո՞ւ է, այդ չեմ կարող հասկանալ։ Բայց գիտեմ, բոլորն էլ ցույցի համար է, հավատացեք։ Ամեն լավություն պատրաստ է անել Մարթային, միայն թե ծածուկ։ Այս պատճառով աղաչում եմ, իմ կողմից էլ, ինչքան որ հարմար դատեք, նշանակեցեք և իմաց տվեք, թե ո՞ւր հասցնեմ։ Արևս վկա,– գոչեց մր. Օմրը,– երբ հասնում ես այն կետին, ուր կյանքի երկու ծայրերը միանում են, և տեսնում, որ ինչքան էլ ամուր լինես, ստիպված ես երկրորդ անգամ մի այլ տեսակ սայլի մեջ պառկել ու գլորվել, այն ժամանակ իրավ պիտի ուրախանաս, որ կարող ես մի որևէ լավ բան անել։ Ո՞վ չի կարոտ մերձավորի օգնության։ Խոսքս միայն իմ մասին չէ, բայց տեսնում եմ, սըր, որ բոլորս էլ, ինչ հասակի մեջ էլ լինենք, բլրի գլխից ներքև ենք սահում, որովհետև ժամանակը մի վայրկյան չի ուզում կանգնել։ Դե, ուրեմն ամեն ժամանակ բարիք գործենք ու դրանով ուրախանանք։ Ճշմարիտ։

Նա չիբուխը թափ տվեց և բազկաթոռի թիկունքի վրա դրեց, որ նրա համար մի առանձին խորշ էր շինված։

– Ահա, օրինակի համար, մր. Պեզգոտիի եղբորորդին, որ Էմլիի հետ պիտի նշանվեր,– շարունակեց մր. Օմրը ձեռքերն իրար շփելով,– ամբողջ Յարմաութում նրանից լավ տղա չեք գտնի։ Շատ անգամ ինձ մոտ է գալիս, հետս խոսակցում է, երբեմն էլ ինձ համար ամբողջ ժամերով բաներ կարդում։ Չէ՞ որ այդ էլ բարություն է։ Նրա ամբողջ կյանքը բարություն է։

– Գնալու եմ նրան տեսնելու,– ասացի ես։

– Իրա՞վ, գոչեց մր. Օմրը։– Ասացեք նրան, որ ես զվարթ եմ ու նրան սրտանց բարևում եմ։ Միննին ու Ջորեմը տեսնելով կուրախանային։ Միննին քիչ է տանից դուրս գալիս, իբր թե իմ պատճառով։ Ես էլ այս երեկո նրան սպառնացի, որ եթե պարահանդես չգնա, ժամը վեցին կպառկեմ։ Եվ դրա հետևանքն այն եղավ, որ նա ու Ջորեմն այժմ պարում են։

Եվ մր. Օմրն այդ խորամանկության հաջողությունից հրճվելով՝ իր աթոռի հետ միասին երերաց։

Ես նրա ձեռքը սեղմեցի ու բարի գիշեր մաղթեցի։

– Խնդրեմ էլի մի կես րոպե սպասեցեք, սըր,– ասաց նա։– Եթե գնաք առանց իմ փոքրիկ փղին տեսնելու, ամենալավ տեսնելու բանը կարցրած կլինեք։ Այդպիսի բան դեռ երբեք չեք տեսել։ Միննի՛կ։

Վերևից մի քաղցրիկ ձայն հնչեց. «Ահա գալիս եմ, պապիկ», և երկար ու շեկ գանգուրներով մի սիրուն աղջիկ ներս վազեց։

– Ահա իմ փղիկը, սըր,– ասաց մր. Օմրը, իր թոռնիկին փայփայելով։– Ջուտ Սիամի արյուն է, սը՛ր։ Չէ՞, փղիկ։

Փղիկը մի դուռ բաց արեց դեպի հետևի սենյակը, որ վերջերս ննջարան էր դարձել արդեն վեր բարձրանալու անկարող մր. Օմրի համար, և իր ճակատը բազկաթոռի թիկունքին դեմ տալով, թավ մազերը վրան սփռեց։

– Գիտե՞ք, սըր,– ասաց մր. Օմրը, ակնարկելով դեպի ինձ,– փիղ ասածդ մի բանի դեմ գնալիս ճակատը կախում է։ Դեհ, փղիկ։ Մեկ, երկու, երեք։

Այդ նշանը տրվելուն պես փղիկը մի զարմանալի վարպետությամբ հրեց և առանց դռան շրջանակին դիպցնելու՝ շիտակ դեպի ննջարանը սահեցրեց, ի մեծ զվարճության մր. Օմրի, որ գնալիս ետ էր նայում իմ վրա՝ հասկացնելու համար, թե թոռնիկի այդ ճարպկությունն իր ամբողջ կյանքի ճգնության ու ջանքերի ամենափառավոր արդյունքն է։

Քաղաքում փոքր-ինչ թափառելուց հետո Հեմի տունը գնացի։ Պեգգոտին այժմ նրա մոտ էր բնակվում, իսկ իր սեփական տունը, կառքն ու ձին լավ գնով վարձու էր տվել մր. Բարկիսի հաջորդին։ Կարծեմ այդ ձին դարձյալ նույն ծույլ կենդանին էր, որին մի ժամանակ մր. Բարկիսն էր քշում։

Պեգգոտին մաքուր խոհանոցում նստած էր մրս. Գըմիջի հետ, որին ինքը մր. Պեգգոտին քաշել բերել էր հին նավից։ Չեմ կարծում, որ մի ուրիշ մարդ, կարողանար այն կայանից հանել նրան։ Ակներև էր, որ մր. Պեգգոտին արդեն ամեն բան պատմել է նրանց։ Պեգգոտին ու մրս. Գըմիջը իրենց աչքերը գոգնոցով սրբում էին, իսկ Հեմը նոր էր գնացել «ծովափի վրա պտույտ անելու»։ Շատ չանցած նա ետ եկավ և շատ ուրախացավ ինձ տեսնելով. հավաստի եմ, որ իմ գնալն ամենքին էլ թեթևություն պատճառեց։ Սկսեցինք խոսել զվարթության փոքր-ինչ մոտիկ եղանակով, թե ինչպես մր. Պեգգոտին նոր աշխարհում կհարստանա և ինչ հրաշքներ կհաղորդի իր նամակներում։ Էմլիի անունը չէինք տալիս, բայց նրա մասին մի քանի անգամ ակնարկություն եղավ։ Հեմն էր ամենից զվարթը մեր մեջ։

Սակայն Պեգգոտին ճրագը ձեռքին ինձ մյուս սենյակ տանելիս,– ուր կոկորդիլոսների գիրքը սեղանի վրա պատրաստ կենում էր,– լալով պատմեց, թե Հեմը դարձյալ միևնույնն է, թե նրա սիրտը կոտրված է, թեև ինքն առաջվա պես սիրելի է, կտրիճ է և բոլոր շրջակա նավաշեններից ավելի ժրաջան ու բանուկ։

– Լինում են երեկոներ,– ասաց դայակս,– երբ Հեմը հին նավատան անցյալ կյանքը սիրով հիշում է, մանուկ Էմլիին էլ հիշում է, բայց հասակավոր Էմլիի մասին մի խոսք անգամ չի ասում։

Հեմի դեմքից նկատել էի, որ նա կցանկանար ինձ հետ առանձին խոսել։ Այս պատճառով մտքիս դրի հետևյալ օրը հանդիպել նրան, երբ գործից վերադառնալիս կլիներ։ Այս որոշումն անելուս պես քուն եղա։ Շատ ու շատ գիշերներից հետո այդ գիշեր առաջին անգամ ճրագը վերցվեց հին նավատան պատուհանից։ Մր. Պեգգոտին նորից ճոճվում էր, և առաջվա պես հողմը նրա շուրջը մռնչում։

Ամբողջ հետևյալ օրը նա զբաղված էր իր ձկնորսական նավի ու դրա կազմվածքի մասին կարգադրություն անելով, կապկպում էր և Լոնդոն առաքում այն բոլոր տնտեսական անոթներն ու կարասիները, որոնք կարող էին պետք գալ իրեն, իսկ մնացածը մրս. Գըմիջին թողնում։ Սա էլ ամբողջ օրը նրա հետ էր։ Ես մի տխուր փափագ ունեի՝ դարձյալ մի անգամ այդ տունը տեսնել, քանի դեռ ընդմիշտ չէին հեռացել, և ժամադրվեցի երեկոյան դեմ նրանց մոտ գնալու, բայց ժամերս այնպես հաշվեցի, որ նախ և առաջ Հեմին տեսնեմ։

Նրան հանդիպելը դժվար չէր, քանի որ գիտեի, որտեղ է աշխատում։ Պատահեցի նրան ծովի ամայի եզերքում, որտեղով, անշուշտ, անցնելու էր, և ետ դարձա իր հետ միասին, որպեսզի հնարավորություն ունենա հետս խոսելու, եթե իրոք մի բան ունենար ինձ ասել։ Նրա երեսը չէր խաբել ինձ։ Դեռ նոր էինք մի քանի քայլ արել, երբ նա ասաց՝ առանց վրաս նայելու.

– Տեսա՞ք նրան, մաստր Դեվի։

– Միայն մի վայրկյան, երբ նա ուշաթափ էր,– պատասխանեցի ես կամացուկ։

Դարձյալ անցանք մի քանի քայլ, և նա ասաց.

– Էլի մի անգամ կտեսնե՞ք նրան, մաստր Դեվի։

– Գուցե շատ ծանր թվա նրան,– ասացի ես։

– Ես էլ այդպես եմ կարծում,– նկատեց Հեմը։– Ծանր կթվա, շատ ծանր։

– Սակայն Հեմ,– ասացի ես հանդարտ ձայնով,– եթե չկարենամ էլ բերանացի նրա հետ խոսել, կարող եմ գրել ձեր կողմից, եթե կամենաք իմ միջոցով բան հայտել նրան, և ձեր պատվերն ամենայն սրբությամբ կկատարեմ։

– Հավաստի եմ, որ կկատարեք։ Շնորհակալ եմ, սըր, ձեր բարության համար։ Իրավ մի բան կա, որ կուզենայի՝ ասվեր նրան կամ գրվեր։

– Եվ ի՞նչ։

Լուռ-լուռ առաջ գնացինք, ու Հեմն ասաց.

– Ոչ թե միայն ասվեր կամ գրվեր, թե ես նրան ներում եմ... դա շատ քիչ է. այլ թե ես եմ նրանից ներողություն խնդրում, որ իմ սիրովս բեռ եղա նրա համար։ Շատ անգամ մտածել եմ, որ եթե նրանից ամուսնանալու խոսք չառնեի, նա ինձ հետ ավելի մտերիմ կլիներ, իր սրտի ցավն ինձ կհայտներ, ինձ հետ խորհուրդ կտեսներ, և ես գուցե փրկեի նրան։

Սեղմեցի նրա աջն ու հարցրի.

– Ա՞յդ է բոլորը։

– Էլի կա մի բան, մաստր Դեվի,– ասաց նա,– միայն թե կարենայի հասկացնել։

Ճանապարհը շարունակեցինք և բավական հեռու անցանք. ապա նա սկսեց խոսել։ Նա լաց չէր լինում ընդհատումներ անելիս, ուր ես կետեր եմ դնելու, այլ միայն իր միտքն ամփոփում՝ ասելիքն ավելի պարզ հայտնելու համար։

– Սիրում էի նրան... և նրա հիշատակը սրտիս մեջ այնքան սիրելի... այնքան խորն է, որ զուր կլիներ նրան հավատացնել, թե ես իրավ երջանիկ եմ։ Երջանիկ կլինեի... եթե հնար ունենայի մոռանալ նրան... և կարծեմ ինձ անտանելի կլիներ, եթե մեկը նրան ասեր, թե կարող եմ մոռանալ։ Բայց եթե դուք, մաստր Դեվի, որ այնքան գիտնական եք, կարենայիք մի կերպ համոզել նրան, թե ես անչափ վշտահար չեմ, նրան շարունակ սիրում եմ ու նրա հիշատակով մորմոքվում... մի այնպիսի բան ասեիք, որ նրան հավատացներ, թե ես դեռ կյանքից չեմ զզվել և հուսով եմ պարզերես տեսնել նրան այն աշխարհում, ուր այլևս չարերը լավերին չեն նեղում և հոգնածները հանգիստ են գտնում ցավերից... մի այնպիսի բան, որ նրա թախիծը փարատեր և միևնույն ժամանակ կարծել չտար, թե երբևէ ես կամուսնանամ և կամ թե մեկին կգտնեմ, որ ինձ համար այն լիներ, ինչ որ նա էր... կաղաչեմ ձեզ այս բոլորն ասել նրան... և ավելացնել, որ ես միշտ նրա համար աղոթում եմ... որ դեպի ինձ այնքան բարի էր։

Դարձյալ մի ամգամ լավ սեղմեցի Հեմի աջն ու խոսք տվի, որ իր խնդիրը կարեցածիս չափ կկատարեմ։

– Շնորհակալ եմ, սըր,– ասաց նա։– Մեծ լավություն արիք, որ ինձ տեսնելու եկաք. այն էլ մեծ լավություն էր, որ այս միջոցին ապորս մենակ չթողիք։ Շատ լավ գիտեմ, մաստր Դեվի, որ թեև հորաքույրս նրանց մեկնելուց առաջ Լոնդոն կերթա, և նրանք դարձյալ իրար կտեսնեն, բայց ես ապորս էլ չեմ տեսնի։ Հաստատ գիտեմ, որ չեմ տեսնի։ Այս մասին մենք իրար հետ չենք խոսել. բայց բանն այդպես կլինի... և լավ է, որ այդպես լինի։ Վերջին անգամ նրան որ տեսնեք... վերջին րոպեին... ամենաջերմ շնորհակալությունս ու սրտագին ողջույնս հայտնեցեք նրան. ես մի որբ եմ, և նա ինձ համար հարազատ հորից ավելի էր։

Այդ էլ խոստացա սրբությամբ կատարել։

– Շնորհակալ եմ նորից, մաստր Դեվի,– ասաց նա, ձեռքս ամուր սեղմելով։– Գիտեմ՝ ուր եք գնում։ Տեր ընդ ձեզ։

Հեմը շուռ եկավ ու հեռացավ, ձեռքն այնպես շարժելով, որ իմացնի, թե չի կարող այլևս հին տնակի շեմքը տեսնել։ Ես մտիկ էի անում, մինչ նա գնում էր ծովափով, և նկատեցի, որ մի քանի անգամ աչերը դարձրեց ջրի երեսին պսպղացող արծաթափայլ շերտի վրա, և այդպես գնալով ստվերի մեջ անհետացավ։

Հին նավի դուռը բաց էր, և ներս մտնելիս տեսա, որ բոլոր կարասիները տարվել են, բացի հին սնդուկից, որի վրա մրս. Գըմիջը՝ ձեռքին մի կողով բռնած՝ նստած էր։ Նա նայում էր մր. Պեգգոտիին, որ արմունկը վառարանի քիվին դեմ տված՝ ակնապիշ մտիկ էր անում կիսաշեջ կրակին։ Ներս մտնելուս պես նա իսկույն գլուխը շտկեց ու զվարթ ձայնով ասաց.

– Ինչպես ասել էինք, այնպես էլ արինք, մաստր Դեվի։ Այժմ բավական դատարկ է, չէ՞։

Այդ ասելիս նա ճրագը բարձր բռնեց։

– Տեսնում եմ, որ ժամանակ չեք կորցրել և ամեն բան հավաքել եք,– ասացի ես։

– Այո, չենք կորցրել։ Մրս. Գըմիջն այնպես էր բանում... այնպես էր բանում, որ էլ չգիտեմ, ինչ ասեմ,– գոչեց մր. Պեգգոտին, զուր ջանալով ավելի ազդու գովասանք գտնել պառավի համար։

Մրս. Գըմիջը հենվեց կողովին ու բան չասաց։

– Ահա, սըր, այն սնդուկը,– ասաց շշուկով մր. Պեգգոտին,– որի վրա մի ժամանակ սիրում էիք նստել Էմլիի հետ։ Ես ինքս դրան ամենից հետո կտանեմ։ Այս էլ ձեր հին ննջարանն է... տեսեք, մաստր Դեվի։ Ո՛ւֆ, ինչպես ցուրտ է այս գիշեր... էլ ի՞նչ կուզեք։

Թեև հողմը սաստիկ չէր, բայց նրա հեծեծելն ամայացած տան շուրջը այնպես տխուր էր, որ սարսուռ էր բերում մարդու վրա։ Արդեն տանից ամեն բան տարված էր, մինչև անգամ և սադաֆով շրջանակած փոքր հայելին։ Հիշեցի, թե ինչպես էի պառկել այդ տանը, երբ մեր տանը այնքան մեծ փոփոխություն էր կատարվում։ Հիշեցի կապտաչյա մանկիկին, որ ինձ այնքան դյութել էր։ Հիշեցի և Ստիրֆորթին... և սրտիս մի սարսափելի արհավիրք տիրեց – միգուցե նա մոտիկ լինի և հանկարծ աչքիս երևա...

– Երկար ու երկար ժամանակ կանցնի մինչև այս տունը նոր բնակիչներ ունենա,– ասաց մր. Պեգգոտին տխուր ձայնով։– Ամենքն էլ սրան դժբախտ տուն են համարում։

– Ո՞վ է սրա տերը,– հարցրի ես։

– Յարմաութում ապրող մի կայմագործ,– պատասխանեց մր. Պեգգոտին։– Հենց այս գիշեր բանալին նրան կտամ։ Մյուս խցիկն էլ աչքի անցկացրինք և ետ եկանք մրս. Գըմիջի մոտ, որ այժմ էլ սնդուկի վրա նստած էր։ Մր. Պեգգոտին ճրագը վառարանի քիվի վրա դնելով՝ պառավին խնդրեց վեր կենալ, որովհետև ուզում էր դեռ մոմը չմարած դուրս տանել սնդուկը։

– Դանիել,– ասաց մրս. Գըմիջը, հանկարծ կողովը դեն ձգելով ու մր. Պեգգոտիի թևից բռնելով,– սիրելի Դանիել, ահա թե վերջին անգամ ինչ եմ ասում այս հարկի տակ. դու չպիտի ինձ թողնես։ Ինձ թողնելը մտքովդ էլ թող չանցնի։ Օ՜հ, ո՛չ, մի՛ թողնի ինձ, Դանիել։

Մր. Պեգգոտին ասես թե քնից սթափվելով մրս. Գըմիջին նայեց, հետո ինձ, հետո նորից նրան։

– Չես թողնի, չէ՞, իմ ազնիվ Դանիել,– արագ գոչեց մրս. Գըմիջը։– Ինձ էլ առ տար Էմլիի հետ։ Ես ձեր հավատարիմ, անձնվեր աղախինը կլինեմ։ Եթե այն երկրում, ուր գնալու եք, գերիներ կան, ես ձեր գերին, ձեր ստրուկը կլինեմ և ինձ երջանիկ կզգամ, միայն մի՛ թողնի ինձ, Դանիել. աղաչում եմ, մի՛ թողնի։

– Հոգյակ իմ,– ասաց մր. Պեզգոտին,– չգիտես, թե ճանապարհը որքան հեռու է և այնտեղի կյանքը որքան դժվար։

– Գիտեմ, Դանիել, գուշակում եմ,– գոչեց պառաը։– Բայց ահա ձեզ վերջին խոսքս այս հարկի տակ. թե ինձ էլ հետդ չտանես, այստեղ կպառկեմ ու կմեռնեմ։ Ես կարող եմ գետին փորել, Դանիել, կարող եմ աշխատել, ամենաչարքաշ կյանք վարել։ Կարող եմ, Դանիել, այնպիսի համբերություն ու սեր ցույց տալ, որ երևակայած անգամ չես... միայն թե ուզենայիր փորձել ինձ։ Չեմ դիպչի այն կենսաթոշակին, որ նշանակել ես ինձ. կարոտության մեջ մեռնելու էլ լինեմ, չեմ դիպչի. բայց քեզ ու Էմլիի հետ մինչև աշխարհի ծայրն էլ կերթամ, միայն թե ինձ էլ տանեիր։ Գիտեմ, գիտեմ բանի էությունը... կարծում ես, թե ես մի փնթփնթան ու մռթմռթան պառավ եմ. բայց, անգին իմ, այն առաջ էր, որ այդպես էի, վշտերիդ մասին մտածելով, մենակ նստեցի այս տնակում, իբրև պահապան։ Այդ ինձ համար անօգուտ չանցավ։ Մաստր Դեվի, աղաչում եմ, գոնե դուք ինձ համար բարեխոս եղեք։ Ես սրա սովորությունները ճանաչում եմ, Էմլիի սովորություններն էլ ճանաչում եմ. երկուսի ցավերն էլ ինձ հայտնի են. ես կարող եմ երբեմն օգնել նրանց, սփոփել, նրանց փոխարեն աշխատել։ Դանիել, իմ ոսկի Դանիել, մի՛ թողնի ինձ, հետդ տար։

Մրս. Գըմիջը մր. Պեգգոտիի աջը բռնեց և երախտագիտության ջերմ եռանդով ու ջերմ սիրով համբուրեց, որին նա իրոք արժանի էր։

Մնդուկը հանեցինք, ճրագը մարեցինք, դռները դրսից գոցեցինք և թողինք հին նավատունը,– իբրև մի սև բիծ ամպամած գիշերվա մեջ։ Հետևյալ օրը, երբ դիլիժանսի կտրին նստած՝ դեպի Լոնդոն էինք վերադառնում, մրս. Գըմիջն էլ իր կողովով մեր կառքում նստած էր և երջանիկ էր։

ԺԲ. ԳԼՈՒԽ
Ներկա եմ մի պայթման

Երբ մր. Միկաբրի խորհրդավոր ժամադրությունն այնքան մոտեցավ, որ միչև նրա լրանալը միայն քսանչորս ժամ մնաց, ես ու տատս մտածեցինք, թե ինչպե՞ս վարվենք, որովհետև տատս չէր ուզում Դորային մենակ թողնել։ Ա՛հ, որքան այժմ ինձ հեշտ էր սանդուղքի վրայով վերև տանել ու իջեցնել Դորային։

Չնայելով մր. Միկաբրի պայմանին տատիս ներկա լինելու մասին, որոշեցինք, որ նա տանը մնա, իսկ մր. Դիկն ու ես նրան փոխարինենք։ Բայց Դորան մեր որոշումը տակնուվրա արեց և հաստատ հայտնեց, որ երբեք ո՛չ իրեն, ո՛չ էլ իր հիմար տղին թույլ չի տա, որ տատս որևէ պատրվակով տանը մնա։

– Ձեզ հետ ամենևին չեմ խոսի,– ասաց Դորան տատիկին, յուր գանգուրները թոթվելով։– Միշտ ձեզ հակառակ կլինեմ. Ջիպին էլ միշտ կգրգռեմ, որ ձեր դեմ հաչի։ Եվ եթե չգնաք, միշտ կկարծեմ, թե չար պառավ եք։

– Սսս՛... հոգյակ իմ,– ասաց տատս ծիծաղելով։– Մի՞թե չգիտես, որ չես կարող առանց ինձ մնալ։

– Շատ էլ կարող եմ,– պատասխանեց Դորան։– Դուք ինձ ամենևին հարկավոր չեք։ Ե՞րբ եք ինձ տեսնելու համար բարձրացել, ե՞րբ եք իմ կողքին նստել ու Դոդիի մասին բաներ պատմել. ե՞րբ եք պատմել, թե ինչպես նա մի ժամանակ պատառոտած կոշիկներով էր ման գալիս ու բոլորովին փոշոտ էր... խեղճ տղան։ Չէ՞ որ երբեք սրտիս ուզածը չեք անում. այդպես չէ՞, սիրելի տատիկ։

Դորան իսկույն տատիս համբուրեց, ասես թե վախենալով, որ տատս իրոք այդ խոսքերին նշանակություն կտա, և գոչեց.

– Ո՛չ, ոչ, միշտ անում եք. ասածս միայն հանաք էր: Բայց, տատիկ,– հարեց Դորան քնքշանքով,– լսեցեք, ինչ եմ ասում: Պետք է որ գնաք, անպատճառ գնաք: Ես ամեն օր ձեզ կտանջեմ, եթե չգնաք. այս չար տղին էլ հանգիստ չեմ թողնի, մինչև ձեզ չհամոզի, որ գնաք: Անտանելի կդառնամ, Ջիպն էլ անտանելի կդառնա: Ես ձեզ այնքան կնեղեմ, որ ինքներդ հետո կափսոսաք, թե ինչո՞ւ չգնացիք: Բացի այդ,– ավելացրեց Դորան, իր մազերը ետ քաշելով և ապշությամբ մերթ ինձ ու մերթ տատիս նայելով,– ինչո՞ւ երկուսդ էլ միասին չգնաք... Ես հո այնքան հիվանդ չեմ: Մի՞թե հիվանդ եմ:

– Այդ ի՞նչ հարցմունք է,– գոչեց տատս:

– Ո՞վ գիտի, էլ ի՞նչ բաներ կհնարես,– հարեցի ես:

– Այո՛, գիտեմ, որ խենթուլիկ եմ,– ասաց Դորան, երկուսիս էլ մեկ-մեկ մտիկ անելով, երկուսիս էլ համբուրելու համար իր շուրթերն ամփոփելով: Ուրեմն երկուսդ էլ պիտի գնաք ու կերթաք. եթե ոչ՝ էլ ոչ մեկիդ չեմ հավատա և անդադար լաց կլինեմ:

Տատիս դեմքից նշմարեցի, որ նա արդեն տեղի տալու պատրաստ է. Դորան էլ այդ նկատեց ու զվարթացավ:

– Եվ երբ որ ետ գաք,– շարունակեց Դորան,– այնքան նորություններ կբերեք, որ գոնե մի շաբաթ պետք կլինի՝ այդ բոլորն ինձ հասկացնելու համար: Եթե նորությունների մեջ մի կարևոր բան գտնվի, հո շուտով չեմ հասկանա. և անպատճառ կգտնվի: Իսկ եթե հաշվելու բաներ էլ պատահեն, էլ չգիտեմ քանի շաբաթ հարկավոր կլինի, որ խելք հասցնեմ: Թող այն ժամանակ այս չար տղան ինձ սպասի, քիթն ու պռունգը ծռելով: Այ ձե՛զ: Այժմ հո կերթա՞ք: Շատ-շատ՝ մի-մի գիշեր միայն բացակա կլինեք. այդ միջոցին Ջիպն ինձ կպահպանի: Գնալուց առաջ Դոդին ինձ վերև կտանի, և մինչև որ վերադառնաք, ներքև չեմ իջնի: Ես ձեզ մի սարսափելի նամակ կտամ, որ Ագնեսին հասցնեք. չարաչար պիտի կշտամբեմ նրամ, որ ամենևին ինձ տեսնելու չի գալիս:

Առանց երկար մտմտալու որոշեցինք, թե մեզ երկուսիս էլ պետք է գնալ, և թե Դորան մի չարաճճի մանկիկ է, որ հիվանդ է ձևանում, որպեսզի իրեն ավելի երես տանք ու փայփայենք: Նա շատ ուրախացավ ու գոհ մնաց: Միևնույն երեկոյան չորսս միասին, այսինքն՝ տատս, մր. Դիկը, Տրեդլսն ու ես Դուվրի **մեյլկոչը**[81] նստելով, ճանապարհ ընկանք դեպի Կենտըրբրի:

Մր. Միկաբրի նշանակած հյուրանոցում, ուր կես-գիշերին իջանք, ես մի նամակ գտա, որով նա հայտնում էր, թե առավոտյան ճիշտ իննուկեսին մեզ տեսնելու կգա: Այդ իմանալուց հետո մեզնից ամեն մեկը գիշերվա ցրտից դողալով, իր սենյակը քաշվեց. մեր անցած ոլոր-մոլոր նրբանցքներից մի այնպիսի հոտ էր փչում, որ հենց իմանաս դարերից ի վեր լուծվող թանի ու թրիքի մեջ էին դրված եղել:

Առավոտյան վաղ դուրս ելա հին քաղաքի աննշուկ փողոցներում զբոսնելու ու դարձյալ մի քանի պտույտ արի հինավուրց կամարների ու տաճարների ստվերի մեջ: Առաջվա պես որորները մայր տաճարի աշտարակների շուրջը սավառնում էին և միևնույն աշտարակները, միևնույն ճոխ շրջակայքին ու գեղաժպիտ գետակներին վերևից մտիկ անելով, հանգիստ-հանգիստ կանգնած էին առավոտյան ջինջ օդի մեջ, կարծես թե փոփոխություն ասված բանը երկրիս վրա գոյություն անգամ չուներ: Բայց և այնպես զանգակների տխրահնչյուն մեղեդին տիրաբար ինձ հիշեցնում էր, որ ամեն բան փոփոխական է. այդ մեղեդին հիշեցնում էր նույնիսկ զանգակների ծերությունը և Դորայիս մատաղ հասակը. նա պատմում էր, որ հազարավոր ջահել մարդիկ, միևնույն հնչյունը լսելով, ապրել, սիրել, մեռել են և ապա համատարած օդում կորել, ինչպես ջրի երեսին անհետացող շրջաններ:

---

[81] Mailcoch — փոստի կառք:

Փողոցի անկյունից հին տանը մտիկ արի, բայց նրան չմոտեցա, որպեսզի աչքի չընկնեմ և ակամա չվնասեմ այն գործին, որի հաջողվելուն նպաստելու էի եկել: Առավոտյան արեգակը իր պայծառ ճառագայթներով շողշողում էր հինավուրց տան պատուհանների ու կտուրի վրա, և կարծես թե դրա նախկին խաղաղության նշույլներից մի քանիսը սրտիս մեջ էին կաթկթում:

Շրջակայքումն էլ մի ժամի չափ ման եկա և հետո վերադարձա մեր փողոցը, որ արդեն գիշերվա քունը թոթափել էր: Կրպակներում շարժվող մարդկանց միջև աչքիս ընկավ հին թշնամիս՝ մսագործը, որ այժմ երկարավիզ կոշիկ ուներ և մի որդի: Նա կերակրում էր իր մանկան և հասարակության հաշտ անդամի նման էր:

Նախաճաշի նստելիս շատ անհանգիստ դրության մեջ էինք. և քանի իննուկեսը մոտենում էր, այնքան էլ մեր տագնապը, որով սպասում էինք մր. Միկաբրի գալուն, սաստկանում էր: Վերջապես բոլորս էլ, բացի մր. Դիկից, անտես թողինք նախաճաշը, որ միայն ձևի համար էինք պատվիրել, և տատս սկսեց ման գալ սենյակում: Տրեդլսը բազմոցի վրա նստեց, իբր թե լրագիր կարդալու, մինչդեռ աչքերն առաստաղին էին մտիկ անում. իսկ ես պատուհանի մոտ նստեցի, որ մր. Միկաբրի ժամանելը նկատելուս պես՝ մյուսներին իմաց տամ: Եվ երկար չսպասեցի, որովհետև նա իսկ և իսկ իննուկեսին դրսի դռան մոտ հայտնվեց:

– Գալիս է, գալիս,– գոչեցի ես,– բայց պաշտոնական զգեստով չի:

Տատս իր գլխանոցի կապերն ամրացրեց (նախաճաշին գլխարկը չէր հանել) և շալի մեջ ամուր փաթաթվեց, ասես թե մի ծանրակշիռ ու վճռական գործի համար պատրաստվելով: Տրեդլսն իր զգեստի բոլոր կոճակները արագ-արագ կապեց: Այդ ահեղ երևույթներից վրդովված՝ մր. Դիկն էլ հարկ համարեց իր գլխարկն ուժով հագնել, որ և սակայն իսկույն հանեց ներս մտնող մր. Միկաբրին ողջունելու:

– Պարոնայք և տիկին,– ասաց մր. Միկաբրը,– բարի լույս: Սիրելի սըր,– հարեց նա մր. Դիկին, նրա աջը սաստիկ թոթվելով,– անչափ բարի եք:

– Արդյոք նախաճաշե՞լ եք, սըր,– հարցրեց մր. Դիկը:– Չէի՞ք կամենա մի կոտլետ անուշ անել:

– Բնավ երբեք, սըր,– գոչեց մր. Միկաբրը, արգելելով նրան զանգակը հնչեցնել:– Ախորժակն ու ես արդեն վաղուց օտարացել ենք իրարուց, մր. Դիքսըն:

Մր. Դիքսընն այն աստիճան ուրախացավ իր նոր անունից, որ նորից մր. Միկաբրի աջը սեղմեց և երեխայի պես ծիծաղեց:

– Դիկ, զգուշություն,– ասաց տատս:

Մր. Դիկը կարմրելով ուշքի եկավ:

– Դե, սըր,– ասաց տատս մր. Միկաբրին, ձեռնոցները հագնելով,– պատրաստ ենք թեկուզ Վեզուվ սարի գագաթը ելնել և կամ էլ ուր հրամայեք:

– Հուսով եմ, տիկին,– ասաց մր. Միկաբրը,– որ շուտով մի հրավիժման ականատես կլինեք: Մր. Տրեդլս, հավաստի եմ՝ թույլ կտաք ինձ այստեղ հայտնել, որ դուք ու ես փոքր-ինչ համերաշխ ենք:

– Իրավ այդպես է, Կոպպերֆիլդ,– ասաց Տրեդլսը, որին ապշած մտիկ էի անում:– Մր. Միկաբրն իր անելիքի մասին խորհուրդ էր հարցրել ինձնից, և ես արդեն նրան հայտնել եմ իմ խոնարհ կարծիքը:

– Եթե չեմ սխալվում, մր. Տրեդլս,– շարունակեց մր. Միկաբրը,– դուք կհաստատեք, որ իմ անելու հայտնությունը արդարև մի կարևոր բան է:

– Անչափ կարևոր,– պատասխանեց Տրեդլսը:

– Հավաստի եմ, տիկին և պարոնայք,– ասաց մր. Միկաբրը,– որ շնորհ կանեք, առժամանակ, մի մարդու առաջնորդության տակ մտնել, մի մարդու, որ որքան էլ անարժան լինի մի ուրիշ

բան համարվելու, բայց եթե անողոք կյանքի ալիքներով դուրս վիժված մի անպետք իր, այնուամենայնիվ դարձյալ ձեր մերձավորն է, թեև անձնական սխալների ու բազմազան դիպվածների հավաքական զորությամբ իր առաջին պատկերից զրկված։

– Լիովին վստահ ենք ձեր վրա, մր. Միկաբր, և ինչ որ ասեք, այն էլ կանենք,– ասացի ես։

– Մր. Կոպպերֆիլդ,– պատասխանեց մր. Միկաբրը,– ձեր վստահությունը զուր չի լինի այս դեպքում։ Խնդրում եմ միայն, որ ինձ թույլ տաք հինգ րոպե ձեզնից առաջ դուրս գնալ, որպեսզի պատիվ ունենամ միս Ուիկֆիլդի մոտ ընդունելու ձեզ, Ուիկֆիլդի ու Հիպի գրասենյակում, ուր խոնարհս թոշակավոր գրագիր եմ։

Տատս ու ես մտիկ արինք Տրեդլսին, և նա հավանության նշան արեց։

– Էլ ասելու բան չունեմ, առժամանակ,– նկատեց մր. Միկաբրը։

Ասաց և ինձ սաստիկ զարմացնելով՝ մեզ ամենքիս մի ընդհանուր ողջույն տվեց և անհետացավ։ Նրա ձևերը զգուշավոր էին և դեմքը շատ գունատ։

Երբ Տրեդլսին նայեցի՝ իմանալու, թե այդ բոլորն ի՞նչ է նշանակում, նա ժպտաց ու գլուխը շարժեց (գագաթին ցցված մազերով)։ Այն ժամանակ ժամացույցս հանեցի ու սկսեցի հինգ րոպեի լրանալուն սպասել. տատս էլ նույնն արեց, իր ժամացույցին նայելով։ Վերջապես Տրեդլսն իր թևն առաջարկեց նրան, և բոլորս միասին դեպի հին տունը գնացինք՝ առանց մի բառ ասելու։

Մր. Միկաբրին գտանք աշտարակի ցածի գրասենյակում, սեղանի առջև նստած, ուր փութաջան մի բան գրելու վրա էր։ Նրա բաճկոնի գոգին մի ահագին քանոն էր խոթված, որի ծայրը մի ոտնաչափից ավելի դուրս էր նայում, մի նորատեսիլ ժաբոյի պես։

Նկատելով, որ խոսելու սկիզբն ինձնից են սպասում,

– Ինչպե՞ս եք, մր. Միկաբր,– ասացի ես բարձրաձայն։– Ողջ-առո՞ղջ։

– Հուսամ, դուք էլ ողջ-առողջ եք, մր. Կոպպերֆիլդ,– ասաց մր. Միկաբրը լրջությամբ։

– Տա՞նն է միս Ուիկֆիլդը,– հարցրի ես։

– Մր. Ուիկֆիլդը հիվանդ պառկած է անկողնում, սըր,– պատասխանեց նա,– իսկ միս Ուիկֆիլդը անտարակույս ուրախ կլինի իր հին բարեկամների տեսության։ Խնդրեմ ներս հրամեցեք, սըր։

Նա մեզ դեպի սեղանատուն առաջնորդեց (իմ առաջին ոտք դրած սենյակն այդ տան մեջ) և մր. Ուիկֆիլդի նախկին գրասենյակի դուռը բանալով, բարձր ձայնով ասաց.

– Միս Տրոտուդ, մր. Դավիթ Կոպպերֆիլդ, մր. Թոմաս Տրեդլսը և մր. Դիքսընը։

Ապտակից ի վեր չէի տեսել Ուրիաս Հիպին։ Մեր այցելությունը նրան ապշեցրեց, թերևս այն պատճառով, որ ինքներս էլ ապշած էինք։ Նա հոնքերը չկիտեց, որովհետև այլևս հոնքեր չուներ, այլ նրանց մեջտեղն այնպես պռստեց, որ փոքրիկ աչքերը համարյա թե գոցվեցին, մինչդեռ զզվելի ձեռքի արագ դիպչումը կզակին հայտնի դարձրեց, որ նա շփոթված ու տագնապած է։ Այս բոլորը, սակայն, մեր ներս մտնելու րոպեին միայն նկատեցի, երբ մտիկ էի անում տատիս ուսի հետևից։ Մի վայրկյան անցնելուց հետո Ուրիասը դարձյալ քծնում ու սողում էր, ինչպես միշտ։

– Այս ինչ անակնկալ ուրախություն է,– գոչեց նա։– Բոլոր բարեկամներիս այսպես միասին խմբված տեսնել... ճշմարիտ, որ սա ինձ համար մի տոն է։ Մր. Կոպպերֆիլդ, անշուշտ առողջ եք և... եթե ներեք խոնարհաբար հարցնելու... միշտ ձեր նախկին բարեկամներին անձնվեր։ Հուսով եմ, որ մրս. Կոպպերֆիլդը կազդուրվելու վրա է։ Հավատացեք, սըր, անցյալ օր մենք բոլորս տրտմեցինք, լսելով, որ նա հիվանդ է։

Ամաչում էի նրան թույլ տալ, որ ձեռքս բռնի, բայց ինչպե՞ս արգելեի։

– Այն օրից ի վեր, միս Տրոտուդ,– ասաց Ուրիասը կեղծ ժպիտով,– երբ ձեր պոնիի սանձն էի բռնել, ինչպես մի խոնարհ գրագիր, այս տան գործերը փակված են, չէ՞: Բայց ես բնավ չեմ փոխված, միս Տրոտուդ:

– Ուղիղն ասեմ,– պատասխանեց տատս,– դուք լիովին արդարացրիք, ինչ որ կարելի էր ձեզնից սպասել... եթե խոսքերս ձեզ ախորժելի չթվան:

– Շնորհակալ եմ, միս Տրոտուդ, ձեր բարի կարծիքի համար,– ասաց Ուրիասն իր սովորական գալարումով:– Միկաբր, ասացեք, որ իմաց տան միս Ագնեսին... և մորս: Մայրս անշուշտ կուրախանա, երբ տեսնի, թե ինչ հյուրեր են շնորհ բերել մեզ,– հարեց Ուրիասը, աթոռները շարելով:

– Երևի թե շա՞տ եք զբաղված, մր. Հիպ,– ասաց Տրեդլսը, նրա խորամանկ հայացքը նկատելով, որ միանգամայն և՛ քննում էր մեզ, և՛ խույս տալիս մեզնից:

– Ոչ, մր. Տրեդլս,– պատասխանեց Ուրիասը, իր պաշտոնական տեղը նստելով ու ոսկրոտ ձեռքերը ոսկրոտ ծնկերի մեջ սեղմելով,– ոչ այնքան, ինչքան որ կցանկանայի: Սակայն գիտեք, փաստաբանները, շնաձկներն ու տզրուկները միշտ անհագ են: Բայց և այնպես Միկաբրն ու ես բավական զբաղված ենք, որովհետև մր. Ուիկֆիլդը այլևս գործի ընդունակ չէ, սըր: Նրա փոխարեն աշխատելը ոչ միայն պարտք է, այլև իսկական զվարճություն: Դուք, մր. Տրեդլս, կարծեմ մր. Ուիկֆիլդի հետ ոչ մի հարաբերություն չունեք: Ես էլ կարծեմ միայն մեկ անգամ եմ ձեզ տեսնելու պատիվ ունեցել:

– Այո, մր. Ուիկֆիլդի և իմ միջև հարաբերություն չի եղել,– պատասխանեց Տրեդլսը,– եթե ո՛չ արդեն վաղուց պատիվ կունենայի ձեզ ներկայացնելու, մր. Հիպ:

Ուրիասն այդ խոսքերը լսելով, դարձյալ մի չար ու կասկածոտ ակնարկ նետեց Տրեդլսի վրա, սակայն նրա բարի երեսը, պարզ ձևերն ու տնկված մազերը տեսնելուն պես՝ կասկածանքը դեն ձգեց և ամբողջ մարմինը և մանավանդ կզակը ցնցելով, համարձակ ասաց.

– Շատ ցավում եմ, մր. Տրեդլս: Եթե մր. Ուիկֆիլդին մոտիկից ճանաչեիք, դուք էլ մեզ պես նրա վրա կհիանայիք: Նրա փոքրիկ թերություններն անգամ ձեզ սիրելի կերևային: Սակայն եթե կամենաք ճարտար գովասանքներ լսել ընկերոջս մասին, մր. Կոպպերֆիլդին դիմեցեք: Մր. Կոպպերֆիլդը շատ կորովի պերճաբան է այս գերդաստանի մասին խոսելիս:

Եթե ուզենայի էլ այդ կոմպլիմենտը մերժել, ժամանակ չկար. այդ րոպեին Ագնեսը ներս մտավ, հետն էլ մր. Միկաբրը: Ագնեսը կարծես առաջվա նման ինքնավստահ ու հանգիստ չէր. երևում էր, որ շատ հոգսեր ու վշտեր է կրել: Սակայն հենց այդ պատճառով նրա բարեհամբյուր հեզությունն ու պարկեշտ գեղեցկությունն ավելի էին փայլում:

Նկատեցի, որ մինչ Ագնեսը մեզ ողջունում էր, Ուրիասն ուշի-ուշով դիտում էր նրան: Այդ միջոցին նա հրեշտակ լրտեսող չարանենգ դև երևաց ինձ: Միևնույն ժամանակ մր. Միկաբրն ու Տրեդլսը իրար հետ մի թեթև ակնարկ փոխանակեցին, և ես միայն տեսա, որ Տրեդլսը դուրս գնաց:

– Միկաբր, այստեղ մնալու պետք չունեք,– ասաց Ուրիասը:

Մր. Միկաբրը ձեռքը բաճկոնի տակից դուրս նայող քանոնին դրած՝ դռան մոտ ուղիղ կանգնել էր, համարձակ մեկին նայելով, և այդ մեկը իր գործատերն էր:

– Էլ ի՞նչ եք սպասում,– ասաց Ուրիասը:– Մի՞թե չլսեցիք, Միկաբր, որ ձեր ներկայությունն ավելորդ է:

– Լսեցի,–պատասխանեց մր. Միկաբրն առանց իր տեղից շարժվելու:

– Ուրեմն էլ ինչո՞ւ եք մնում,– հարցրեց Ուրիասը:

– Որովհետև, կարճ ասած՝ այսպես եմ ուզում,– պատասխանեց մր. Միկաբրը բռնկվելով:

Ուրիասը երեսի գույնը նետեց. նրա այտերը վատառողջ դալուկով ծածկվեցին, որի տակից կարմիր բծեր երևացին: Սրտի ուժգին թնդյունից համարյա թե ուժասպառ՝ նա անքթիթ մտիկ էր անում մր. Միկաբրին:

– Դուք մի անշնորհք արարած եք, ինչպես որ ամենքն էլ գիտեն,– ասաց նա, ջանալով ժպտալ,– և ես, կարծեմ, ստիպված կլինեմ վռնդել ձեզ: Հեռացեք: Իսկույն ձեզ հետ կխոսեմ:

– Եթե կա աշխարհիս երեսին մի սրիկա, որի հետ արդեն չափից շատ եմ խոսել,– գոչեց մր. Միկաբրը փոթորկալի բարկությամբ,– այդ սրիկայի անունը... Հիպ է:

Կարծես զարկեցին կամ խայթեցին Ուրիասին. նա ետ թռավ ու չար աչքերը շուրջը պտտեցնելով, կամացուկ ասաց.

– Հը՛մ: Այս ի՞նչ է: Դավադրությո՞ւն: Ժամադի՞ր եք եղել այստեղ: Միաբանվե՞լ եք գրագրիս հետ: Այո՞, մր. Կոպպերֆիլդ: Զգուշացեք: Դրանով ոչինչ չեք անի: Ես և դուք իրար լավ ենք ճանաչում: Սեր չկա մեր միջև: Հենց այն օրից, որ առաջին անգամ այս տունը ոտք դրիք, դուք հպարտ տղա էիք, և այժմ իմ բարձրանալը տեսնելով ձեր նախանձին չեք դիմանում, այդպես չէ՞: Սակայն իմ դեմ դավ մի դնեք. ես ձեր տակը մի այնպիսի ական կփորեմ, որ ինքներդ զարմանաք: Միկաբր, դուրս կորեք: Այս րոպեիս կխոսեմ ձեզ հետ:

– Մր. Միկաբր,– ասացի ես,– այս մարդը հանկարծ փոխվել է: Գոնե մի ճշմարիտ բան ասաց: Այդ ապացույց է, որ թակարդն է ընկել: Ցույց տվեք դրան, թե ի՞նչ բանի է արժանի:

– Լավ մարդիկ եք, խոսք չկա,– ասաց Ուրիասն առաջվա պես, ճակատի մածուցիկ քրտինքը սրբելով,– կաշառել եք իմ գրագրին, որ հասարակության նույն տականքն է, ինչ որ մի ժամանակ դուք էիք, Կոպպերֆիլդ... հիշո՞ւմ եք, քանի դեռ մի տիկին ձեզ չէր գթացել... և ուզում եք այդ թշվառի խաբեբա լեզվով զրպարտե՞լ ինձ: Միս Տրոտուդ, աշխատեցեք, որ այդ բանին վերջ դրվի, եթե ոչ ես ձեր մարդուն այն տեղը կդնեմ, որ դուք ինքներդ էլ չուրախանաք: Ջուր չէ, որ ձեր պատմությանը լավ տեղյակ եմ, արգո լեդի: Միս Ուիկֆիլդ, եթե ձեր հորը փոքր ի շատե սիրում եք, այս խմբակի հետ մի՛ ընկերանաք: Նա կկորչի, եթե ինձ ականջ չդնեք: Դե՛, հեռացեք: Ձեզնից մի քանիսն արդեն տափանիս տակն ընկած են: Լավ միտք արեք, քանի դեռ ձեզ չեմ ջարդել: Աչքերդ բաց, Միկաբր, եթե չես ուզում, որ քեզ ջախջախեմ: Խորհուրդ եմ տալիս, որ հեռանաս և ինձ սպասես, ա՛յ դու հիմար: Որտե՞ղ է մայրս,– աղաղակեց Ուրիասը, հանկարծ Տրեդլսի բացակայությունը նկատելով ու զանգակի լարից քաշելով:– Ահա մի ազնիվ վարմունք, այն էլ իմ սեփակա՛ն տանը:

– Մրս. Հիպն այստեղ է, սըր,– ասաց Տրեդլսը, պատվական որդու պատվական մոր հետ հայտնվելով:– Համարձակություն առա ինքս անձամբ ծանոթանալ նրա հետ:

– Ո՞վ եք դուք, որ նրա հետ ծանոթանաք,– գոչեց Ուիրիասը:– Եվ ինչո՞ւ եք այստեղ եկել:

– Ես մր. Ուիկֆիլդի գործակալն եմ և բարեկամը, սըր,– պատասխանեց Տրեդլսը մի գործնական մարդու հանդարտ ու սառը եղանակով:– Եվ գրպանումս նրա հավատարմագիրն ունեմ՝ բոլոր գործերում իր փոխարեն վարվելու ձեզ հետ:

– Ծեր էշն արդեն այնքան է խմել, որ խելքի մնացորդ էլ կորցրել է,– ասաց Ուրիասը, ավելի չարանալով:– Այդ թուղթը դուք նենգությամբ եք կորզել նրանից:

– Այո՛, գիտեմ, որ մի քանի բան նենգությամբ նրանից կորզված է,– ասաց Տրեդլսը հանգիստ:– Այդ դուք էլ գիտեք, մր. Հիպ: Թողնենք, որ այդ հանգամանքը ձեր հաճությամբ մր. Միկաբրը լուսաբանի:

– Ուրիա՛ս... – ասաց մրս. Հիպը տագնապալից շարժումով:

– Սո՛ւս կաց, մայրիկ,– սաստեց որդին:– Լեզուդ բռնիր, որ չսխալվես:

– Բայց Ուրիկ իմ...

– Լեզուդ բռնիր, ասում եմ քեզ. ես կխոսեմ:

Թեև ես վաղուց գիտեի, որ Ուրիասի քծնությունը շինծու է և վարմունքը խաբեական, բայց և այնպես նրա կեղծավորության չափի մասին ճիշտ գաղափար չունեի, մինչև որ նա ինքն իր դիմակը չհանեց։ Այն արագությունը, որով նա դեն ձգեց դիմակը, երբ տեսավ, որ անօգուտ է. այն զայրույթը, ատելությունն ու լրբությունը, որ երևան հանեց, այն դիվային խնդությունը, որ մինչև անգամ այդ րոպեին իր իսկ գործած չարիքներից զգաց, թեև վհատված էր, որ չէր կարող մեզ նորից խաբել,– այդ բոլորը տեսնելով ես անգամ զարմացա, ես, որ այնքան ճանաչում էի նրան ու նրանից գարշում։

Չեմ հիշի այն հայացքը, որ իմ վրա նետեց, մինչ մի առ մի մեզ դիտում էր, լավ գիտեի, որ ինձ ատում է, և չէի մոռացել ապտակիս հետքը նրա այտի վրա։ Բայց երբ նրա հայացքն Ագնեսի վրա կանգ առավ, և երբ տեսա, թե ինչ կատաղություն զգաց, որ այլևս նրա վրա իշխանություն չպիտի ունենա, երբ այն գարշելի տոփանքը տեսա, որով հետամուտ է օրիորդին, որի առաքինությունը բնավ չէր կարող գնահատել,– այն ժամանակ ես սոսկացի, որ Ագնեսը դատապարտված էր գեթ մի ժամ այդ զզվելի մարդու հետ միևնույն օդը շնչել։

Ուրիասը կզակը շփեց ու մեր վրա չար-չար նայելուց հետո՝ դարձյալ մի անգամ ինձ դիմեց մասամբ քծնի, մասամբ ժպիրի եղանակով։

– Ուրեմն, Կոպպերֆիլդ, դուք, որ ձեր ազնվությամբ ու դրա բոլոր մասերով այնքան փքվում եք,– ի՞նչ եք կարծում՝ իրավացի՞ է, որ գողի նման ներս եք սպրդնում իմ տունը և գրագրիս հետ ինձ լրտեսում։ Չէի զարմանա, եթե ես անեի այդ բանը. ես հո ջենտլմեն ձևանալու հավակնություն չունեմ (թեև երբեք ձեզ նման փողոցներում չեմ քարշ եկել, Միկաբրի ասելով). բայց դուք ինչպե՞ս չեք էլ մտածում, որ ես կարող եմ վրեժխնդիր լինել ձեզնից, օրինակ ձեզ հալածել դավադրության ոճրի համար և այլն։ Շատ լավ, կտեսնե՛ք... Մր. Այսինչ, ինչպե՞ս է ձեր անունը, դուք կարծեմ մտադիր էիք մի բան հարցնել Միկաբրին։ Ահա կանգնած է։ Ինչո՞ւ չեք հրամայում, որ խոսի։ Տեսնում եմ, որ նա իր դասն անգիր գիտի։

Նկատելով որ իր խոսքերը մեզ վրա ամենևին չազդեցին, նա սեղանի ծայրին նստեց, ձեռքերը գրպանների մեջ խոթեց, ոտքերն իրար վրա դրեց ու համառությամբ սկսեց սպասել, թե ի՞նչ կլինի։

Մր. Միկաբրը, որի եռանդը մինչև այժմ ես հազիվհազ զսպել էի, և որ Ուրիասի ճառն անդադար ընդհատել էր «սրիկա» բառի առաջին վանկով՝ առանց արտասանելու երկրորդը,– վերջապես բռնկվեց, քանոնը ծոցից դուրս քաշեց (որպես մի պաշտպանիչ զենք) և դիվանական թղթի պես ծալած մի մեծ թերթ հանեց գրպանից։ Իր նախկին վայելչությամբ այդ թերթը բանալուց հետո՝ բովանդակությունը լավ դիտեց, կարծեմ թե շարադրության ոճից զմայլվելով, և ապա հետևյալը կարդաց.

– «Գերարգո միս Տրոտուդ և պարոնայք...»

– Աստված փրկի այդ մարդուն,– ասաց տատս կիսաձայն։– Եթե գանգատը մի էական ոճրի դեմ է, դրա բողոքին մի օզմա թուղթ չի բավի։

Մր. Միկաբրն այդ չլսեց և շարունակեց.

«Աշխատելով ձեր առջև՝ ամբաստանելու մի անզգամ սրիկա, որի նմանը դեռ աշխարհում չի տեսնված (մր. Միկաբրը շարունակ թղթին նայելով քանոնը դեպի Ուրիաս Հիպը մեկնեց, ինչպես մի կախարդական փայտ),– աղաչում եմ, որ իմ անձը նկատի չառնեք։ Մանկությանս օրերից դրամական տագնապների զոհ եղած մի մարդ եմ ես։ Նախատինք, կարիք, հուսահատություն, խելագարություն – սրանք են ահա ամբողջ կյանիքս ընկերները, թե՛ ամբողջությամբ, թե՛ ջոկ-ջոկ։

(Ոչ մի բան չէր կարող հավասարվել այն զվարճության, որ մր. Միկաբրն զգում էր, իր անձն այդ աղետների զոհ լինելը նկարագրելիս,– բայց եթե նամակը կարդալուց վայելած հաճույքը և այն մեծարանքը, որ նա ինքը գլուխը շարժելով նվիրում էր իր գրության, երբ նկատում էր, որ իր միտքը կրտուկ է արտահայտված)։

Մի օր, երբ խայտառակությունը, կարիքը, վհատությունն ու խելագարությունը գլխիս վրա միահամուռ կուտակվեցին, ես մի գրասենյակ մտա և կամ մեր ֆրանսիական հարևանների ասությամբ, մի բյուրո,– Ուիկֆիլդ. . . և **Հի՛պ** կոչված բյուրոն, որ սակայն միայն մեկի, և հատկապես. . . **Հիպի՛** ձեռքով է կառավարվում, միայն **Հիպի՛**: **Հի՛պն** է, **Հի՛պն** է միայն այդ մեքենան պտույտ բերում: Միայն Հի՛պն է բուն խաբեբան, բուն սրիկան»:

Գունատ Ուրիին այդ խոսքերը լսելուն պես կապտելով տեղից թռավ՝ նամակը շորթելու և կտոր-կտոր պատռելու համար: Մր. Միկաբրը մի զարմանալի վարպետությամբ կամ թե անգիտաբար նրա մատներին քանոնով խփեց և աջ ձեռքը թուլացրեց: Ուրիասի դաստակը կոտրածի նման կախ ընկավ, հարվածն այնպես շաչեց, որ հենց իմանաս չոր փայտի էր դիպել:

– Գրողը քեզ տանի,– գոռաց Ուրիասը, սաստիկ ցավից կծկվելով:– Սպասի՛ր, իմ ձեռքից չես պրծնի:

– Հապա՛, էլի մոտեցիր, դու. . . դու. . . դու գարշելի Հիպ,– գոչեց մր. Միկաբրը,– և եթե գլուխդ մի չոր գանգ չէ, ես դրան կջարդեմ: Մոտեցի՛ր տեսնեմ, մոտեցի՛ր:

Այդ տեսարանի պես ծիծաղելի բան չէի տեսել: Մր. Միկաբրը իր քանոնը զինվորական սրի նման ճոճելով, շարունակում էր «Մոտեցի՛ր, մոտեցի՛ր» գոռալ, մինչ ես ու Տրեդլսը ճգնում էինք դեպի անկյունը հետ քաշել նրան, որտեղից անդադար դուրս էր նետվում:

Նրա թշնամին, ինքն իրեն քրթմնջալով, ձեռքը տրորեց, թաշկինակով կապեց ու նորից սեղանի մոտ նստեց, դաժան աչքերը գետնին հառած:

Մր. Միկաբրը փոքր-ինչ հովանալուց հետո շարունակեց կարդալ:

«Շաբաթական քսաներկու շիլինգ ու վեց պենսի չնչին գումարից ավելի չէր այն թոշակը, որի հույսով ստիպված էի մտնել. . . **Հիպի** բյուրոն (այս անվան առջև նա կանգ էր առնում և ապա սաստիկ թափով արտասանում): Մնացածը պիտի պաշտոնական վարպետությանս չափով որոշվեր, և կամ ավելի ճիշտ ասած՝ անբարոյական նմանության իմ և. . . **Հիպի** միջև: Պե՞տք է արդյոք հիշատակել, որ շատ չանցած՝ ինձ հարկ եղավ դրամական նպաստ խնդրել... **Հիպից՝** մրս. Միկաբրի և մեր անբախտ, բայց միշտ աճող ընտանիքի պես-պես կարիքները հոգալու համար: Պե՞տք է արդյոք հիշատակել, որ այդ հարկը նախատեսված էր... **Հիպի** կողմից, որ այդ ավանսներն **օրենքով**, մուրհակներով, պետության սահմանած ամեն տեսակ կարգերով ապահովված էին, և որ ես վերջ ի վեջո այդ խորամանկ սարդի ոստայնի մեջ կապված մնացի, ոստայնի, որ ի կորուստ իմ... Հիպն էր հյուսել»:

Մր. Միկաբրը այնքան էր ախորժում իր թշվառությունը նկարագրող նամակի ոճից, որ իր կրած իրական վիշտն ու տառապանքը կարծեմ իսպառ մոռացել էր: Նա շարունակեց.

Այնուհետև էր որ... **Հիպն** սկսեց այնքան ինձ հավատալ, որքան պետք էր իր դիվային գործերը հոգալու համար: Այնուհետև էր, որ ես սկսեցի,– եթե ինձ ներվի Շեքսպիրի պես հայտնել միտքս,– հյուծվել, մաշվել, դալկանալ: Ես նկատեցի, որ իմ օգնությունը միշտ այնտեղ է պահանջվում, ուր պետք էր մի թուղթ նենգել և կամ թե մի մարդ խաբել, որին ես մր. Ու. կանվանեմ: Նկատեցի, որ մր. Ու-ին չարաչար գռփում, կողոպտում են, թեպետև անզգամ... **Հիպը** չէր դադարում նրա անձնվեր ու շնորհապարտ բարեկամը ձևանալուց: Այս բոլորը հարկավ վատ է, բայց ինչպես որ ասում է Դանիայի փիլիսոփա արքայորդին մի մեծահռչակ երկրի մեջ, որի հեղինակը եղիսաբեթյան դարի պարծանքն էր,– «վատագույնը դեռ պիտի գա՛»:

Մր. Միկաբրը այնպես էր հրճված իր պարբերությունը լավ բոլորող վկայությամբ, որ ինքն իրեն և մեզ բավականություն տալու համար միևնույնը նորից կարդաց, պատճառաբանելով, թե վերջակետի տեղը կորցրել է:

«Մտադիր չեմ,– շարունակեց նա,– սույն նամակի սահմանների մեջ մի առ մի թվել (այդ արել եմ մի այլ տեղում) հիշյալ մր. Ու-ին վնասելու համար մեքենայացած այն բազմաթիվ մանր-

մունր խարդավանքները... որոնց ես էլ մասնակից էի լռելայն: Երբ մի անգամ ես վերջ դրի թոշակ առնելու կամ մերժելու, հաց ուտելու կամ չուտելու, ապրելու կամ մեռնելու ներքին պայքարիս, նպատակս եղավ մերկացնել ու հրապարակ հանել այն գլխավոր չարիքները, որ... Հիպն արել էր ջենտլմենին վնասելու համար: Քաջալերվելով մի ներքին լուռ ազդարարից և մի արտաքին համակրելի ու սրտաշարժ հուշարարից, որին միս Ռ. կանվանեմ, ես ձեռնամուխ եղա մի ծածուկ ու դժվար հետազոտության, որ խղճիս ու մտքիս վկայությամբ ոչ պակաս, քան տասներկու ամիս տևեց՝ ըստ տոմարի»:

Մր. Միկաբրն այդ կտորը Պառլամենտի գործերից քաղված մի պատճենի պես կարդաց: Նա հափշտակված էր իր իսկ խոսքերի հնչյունով:

«Սրանք են ահա ամբաստանությանս կետերը, որ առաջ եմ բերում... **Հիպի** դեմ»,– կարդաց նա Հիպին նայելով և քանոնը, որ կարող էր պետք գալ իրեն, ձախ թևի տակ ուղղելով:

Մեր շունչը կարծեմ բռնված էր. Հիպինը՝ անշուշտ:

«Առաջին,– կարդաց մր. Միկաբրը,– երբ զանազան պատճառներով, որոնց մասին երկարաբանելու հարկ չեմ տեսնում, մր. Ռ-ի հոգու և մտքի կարողությունները սկսեցին շփոթվել ու թուլանալ... **Հիպը** գիտությամբ գրասենյակի բոլոր գործերը խառնեց: Հենց որ մր. Ռ-ն իր գործերով պարապելու ուժը կորցնում էր... **Հիպը** նրան հարկադրում էր պարապել, և այդ միջոցին շատ կարևոր փաստատղթեր ստորագրել տալիս, ասելով թե դրանք անպետք, չնչին թղթեր են: Այս ձևով... չար **Հիպը** տասներկու հազար վեց հարյուր տասնչորս ստեռլինգ երկու շիլինգ և ինը պենսի հավատարմագիր որսաց նրանից, պատճառաբանելով, թե այդ գումարն անհրաժեշտ է բյուրոյի պետքերը հոգալու և պարտքերը վճարելու համար, մինչդեռ դրանք արդեն վճարված և կամ բնավ գոյություն չունեցող բաներ էին: Եվ այդ անելիս աշխատում էր ցույց տալ, թե պարտքերը նույնիսկ մր. Ռ-ի անազնիվ ձգտումներից, նրա անարգ գործերից են առաջ եկել, որպեսզի նրան ավելի չարչարի ու ճնշի»:

– Դուք պարտավոր կլինեք ապացուցել այդ, Միկաբր,– գոչեց Ուրիասը սպառնական ձայնով:– Ամեն բանի ժամանակը կգա:

– Հարցրեք... **Հիպին**, մր. Տրեդլս, թե իրենից հետո ո՞վ էր ապրում նրա տանը,– ասաց մր. Միկաբրը, ընթերցումը ընդհատելով:– Խնդրեմ հարցրեք:

– Մի ավանակ, որ այժմ էլ այնտեղ է ապրում,– ասաց Ուրիասն արհամարհանքով:

– Հարցրեք... **Հիպին**,– ասաց մր. Միկաբրը,– արդյոք այդ տանը նա մի հուշատետր չէ՞ր պահում: Խնդրեմ հարցրեք:

Նկատեցի, որ Ուրիասը հանկարծ կզակը շփելուց դադարեց:

– Կամ թե հարցրեք, նա այնտեղ մի հուշատետր չի՞ այրել,– շարունակեց մր. Միկաբրը:– Եթե ասի, թե այո, և հարցնի, թե մոխիրը որտե՞ղ է, ասացեք, որ Ուիլկինս Միկաբրին դիմի: Այն ժամանակ նա կլսի մի քանի բան, որ իրեն շատ ախորժելի չեն թվա:

Այդ խոսքերի արտասանության հաղթական եղանակից Հիպի մայրը զարհուրեց ու շփոթվելով աղաղակեց.

– Ուրի՛, Ուրի՛: Խոնարհվիր, որդյակ, և հաշտությամբ վերջացրու այդ գործը:

– Մայրիկ, լռի՛ր,– գոչեց Ուրիասը:– Վախենալուց ինքդ էլ չգիտես՝ ի՞նչ ես ասում: Խոնարհվել,– կրկնեց նա, խոժոռ-խոժոռ վրաս նայելով:– Իմ խոնարհությունով ես արդեն վաղուց ստորացրել եմ դրանց նման շատերին:

Մր. Միկաբրը վայելչաբար շապկի օձիքը շտկեց ու շարունակեց կարդալ:

«Երկրորդ: **Հիպը** շատ անգամ, ինչպես որ հավաստի գիտեմ, քաջ տեղյակ եմ ու համոզված...»

– Այդ բոլորը մի գրոշի արժեք չունի,– մռմռաց Ուրիասը:– Մայրիկ, դինջ կաց:

– Կաշխատենք, սըր, որ ունենա՝ ձեր բերանը փակելու համար,– պատասխանեց մր. Միկաբրը։

«Երկրորդ։ **Հիպը** շատ անգամ, ինչպես որ հավաստի գիտեմ, քաջ տեղյակ եմ ու համոզված, կեղծել է մր. Ո-ի ստորագրությունը զանազան թղթերում, գրքերում ու հաշիվներում. և այդ արել է մանավանդ մի գործի մեջ, որ ես կարող եմ հայտ առնել, ապացուցել ու հաստատել, օրինակի համար, հետևյալ կերպ, այսինքն...»

Մր. Միկաբրը սիրում էր իր ասելիքն ավելորդ ու ծիծաղելի բառերով խճողել, և պիտի ասեմ՝ այդպես անողը միայն նա չէ։ Կյանքիս ընթացքում տեսել եմ, որ այդ սովորությունն ուրիշ շատերին էլ հատուկ է, և կարելի է ասել մի ընդհանուր կանոն է։ Երդման ժամանակ, օրինակ, մարդիկ միևնույն միտքը հայտնելու համար կարծես հաճույք են զգում մի քանի բառեր իրար հետևից շարելուց։ Ես հրաժարվելով հրաժարվում եմ, կասեն նրանք, երես եմ դարձնում, խույս եմ տալիս, գարշում, խորշում եմ այսինչ բանից և այլն։ Հին բանադրանքներն էլ, ինչպիսիք են՝ դատապարտեմ, անիծեմ, նզովեմ, մերժեմ, պարսավեմ և այլն, այդ իսկ սկզբունքով են շարադրված։ Խոսում ենք բառերի բռնության մասին, և սակայն, ինքներս նրանց բռնահարում ենք. ուրախ ենք, որ բառերի ահագին պաշար ունենք հանդիսավոր դիպվածներում բանեցնելու համար, և մեզ թվում է, թե նրանք հնչուն ու վայելուչ են։ Ինչպես որ մեծ ցույցերի ժամանակ մեզ փույթ չի թե մեր սպասավորների լիվռեներն ի՞նչ որակի են, միայն թե շքեղ ու բազմաթիվ լինեն,– այնպես էլ մեր գործածած բառերի բուն իմաստին երկրորդական արժեք ենք տալիս, միայն թե կարողանանք նրանցով փքանալ և մարդիկ շլացնել։ Եվ ինչպես որ այդ լիվռեների պերճության շնորհիվ ջոկ-ջոկ անձինք պարտքերի մեջ են թաղվում, և կամ ինչպես ստրուկները, եթե մեծաթիվ լինեն, տերերի դեմ ապստամբում են,– այնպես էլ, կարող եմ ցույց տալ, մի ազգ կա, որ անթիվ փորձանքներ է կրել ու պիտի կրի բառերի կուտակում սիրելուց։

Մր. Միկաբրը շարունակեց կարդալ, գրեթե բերանը լիզելով.

«... որ ես կարող եմ հայտ առնել, ապացուցել ու հաստատել, օրինակի համար, հետևյալ կերպով, այսինքն՝ այսպես որովհետև մր. Ո-ն տկար էր և հավանական էր թվում, թե նրա մահը մի քանի բան երևան կհանի և կկործանի... **Հիպի** իշխանությունը մր. Ո-ի ընտանիքի վրա... ինչպես որ ես, ներքո ստորագրյալ Ուիլկինս Միկաբարըս, ստույգ գիտեմ... եթե Ո-ի դստեր որդիական սիրուց օգուտ քաղելով օրիորդին չդրդեն ընդդիմանալ բյուրոյի հին գործերի քննության... ուստի այդ... **Հիպն** անհրաժեշտ դատեց մր. Ո-ի ստորագրությունը կրող մի պարտամուրհակ ունենալ վերոհիշյալ տասներկու հազար վեց հարյուր տասնչորս ստեռլինգ, երկու շիլինգ և ինը պենս գումարի՝ տոկոսներով հանդերձ, ուր ասված է, թե այդ գումարը... **Հիպն** է տվել մր. Ո-ին՝ նրան անարգանքից փրկելու համար,– մինչդեռ երբեք այդպիսի գումար ո՛չ տրվել է, ո՛չ էլ ստացվել։ Այդ մուրհակի ստորագրությունը, որ իբր թե մր. Ո-ի ձեռքով է գրված և Ուիլկինս Միկաբրի գրչով վավերացված... **Հիպն** է կեղծել։ Ես ունեմ մի հուշատետր, որի մեջ մր. Ո-ի ատորագրության բազմաթիվ նմանություններ կան... այո՛, կրակից փոքր-ինչ վնասված, սակայն լիովին դյուրընթեռնելի։ Մի այդպիսի փաստաթուղթ ես երբեք չեմ վավերացնի, և այժմ այդ փաստաթուղթն իմ մոտ է։

Ուրիաս Հիպը տեղից թռավ, գրպանից բանալիների մի կապոց հանեց ու սեղանի աչքը բաց արեց. սակայն հանկարծ միտքը փոխեց և առանց սեղանի մեջ նայելու նորից դեպի մեզ շուռ եկավ։

«Եվ այժմ այդ փաստաթուղթը,– կրկին կարդաց մր. Միկաբրը, քարոզի բնաբանը կարդացողի պես շուրջը նայելով,– իմ մոտ է, այսինքն՝ իմ մոտ էր այս առավոտ, երբ արդեն սույն տողերը գրված էին, բայց հետո մր. Տրեդլիսն հանձնեցի»։

– Ճշմարիտ է,– հաստատեց Տրեդլսը։

– Ուրիաս, Ուրիաս, հնազանդ եղիր ու հաշտվիր,– գոչեց մայրը։– Գիտեմ, որդիս կխոնարհվի, պարոններ, եթե նրան մտածելու ժամանակ տաք։ Մր. Կոպպերֆիլդ, դուք հո գիտեք, որ իմ որդին միշտ խոնարհ էր։

Զարմանալի էր, որ մայրը դեռ շարունակում էր իր հին խաղը բանեցնել, մինչդեռ որդին այն վաղուց արդեն դեն էր ձգել, իբրև մի անպետք բան։

– Մայրի՛կ,– ասաց Ուրիասը, զայրույթից ձեռքին փաթաթված թաշկինակը կրծելով,– լավ կանես, եթե մի լցված հրացան վերցնես ու գլխիս կրակես։

– Բայց չէ՞ որ ես սիրում եմ քեզ,– ճչաց մրս. Հիպը։

Հավատում եմ, որ այդ ճշմարիտ է. հավաստի եմ, որ Ուրիասն էլ մորը սիրում էր, որքան էլ այդ տարօրինակ թվա։ Իրար պատշաճ զույգ էին նրանք։

– Չեմ համբերի,– շարունակեց մայրը,– որ այդ ջենտլմենին կռվի կանչես և քեզ ավելի վնասես։ Ես ինքս ասացի նրան... երբ նա այս առավոտ ինձ հայտնեց, թե ամեն բան բացված է... ես ինքս խոսք տվի, որ դու կխոնարհվես և հանցանքդ իսկույն կուղղես։ Օ՛հ, տեսեք, պարոններ, թե ես որքան խոնարհ եմ, և մի՛ նայեք դրան։

– Դե, բավ է, մայրիկ,– զայրացած նկատեց Ուրիասը ոսկրոտ ցուցամատը դեպի ինձ ուղղելով։– Կոպպերֆիլդը հարյուր ստեղինգ կընծայեր քեզ այն բոլորի կեսը լսելու համար, ինչ որ դու ձրի ես տալիս։

Ուրիասը հատկապես իմ դեմ էր զայրացած. կարծում էր, թե գլխավոր դավադիրը ես եմ,– մի մոլորություն, որ ամենևին չուզեցի հերքել։

– Ի՞նչ անեմ, Ուրի,– աղաղակեց պառավը։– Ես չեմ կարող տեսնել, որ այդքան հպարտանալով ինքդ քեզ վնասես։ Լավ է՝ զիջիր ու խոնարհվիր, ինչպես որ միշտ արել ես։

Ուրիասը մի քանի վայրկյան լուռ մնաց, թաշկինակը կծոտելով, հետո իմ վրա մի բարկացայտ ակնարկ նետեց ու ասաց.

– Էլ ի՞նչ ունեք ասելու։ Դուրս թափեցեք, ինչ որ ունեք։ Ի՞նչ եք այդպես վրաս նայում։

Մր. Միկաբրն իսկույն իր թղթին դարձավ, նա սիրով պատրաստ էր իր դերը շարունակել, որ այնքան զվարճություն էր պատճառում իրեն։

«Երրորդ։ Վերջապես կարող եմ ապացուցել... **Հիպի** խարդախած գրքերով և... **Հիպի** իսկական հիշատակարանով (որ մրս. Միկաբրը պատահմամբ գտել էր մեր այժմյան բնակարանի վառարանից հանված մոխրակույտում),– կարող եմ հաստատել, որ չարաբաստիկ մր. Ու-ի տկարությունը, սխալները, թերությունները, նույնիսկ առաքինի հատկությունները, մինչև անգամ հայրական սերն ու պատվի զգացումը տարիներից ի վեր հարստանալու գործիք են եղել այդ ընչաքաղց, այդ նենգամիտ, այդ գարշելի... **Հիպի** ձեռքում, որ տարիներից ի վեր այդ... **Հիպը** խաբում, գռփում, կողոպտում էր մր. Ու-ին. որ ագահությունից զատ այդ... **Հիպի** գլխավոր նպատակն էր իսպառ նվաճել, ստրկացնել մր. Ու-ին և միս Ու-ին (լռության եմ տալիս նրա վերջին չար մտքերն օրիորդի նկատմամբ)։ Ես պատրաստ եմ ապացուցել և... **Հիպի** նորագույն, դեռ երեք ամիս առաջ գլուխ բերած ստորությունը։ Նա հարկադրեց մր. Ու-ին մի թուղթ գրել, թե մր. Ու-ն իր ամբողջ մասն ընկերության գործերի մեջ և նույնիսկ իր տան ամբողջ կարասիքը... **Հիպին** է թողնում՝ այն պայմանով, որ... **Հիպը** նրան տարին չորս անգամ... եռամյա թոշակ վճարի։ Եվ հենց այդ միջոցին, երբ մր. Ու-ն մի քանի անզգույշ առևտուր արած լինելով, իրոք դրամի կարոտ էր իր օրինական ու բարոյական պարտավորությունները կատարելու համար... **Հիպը** սկսեց նրա գործերի վիճակը վատ գույներով ներկայացնող տագնապիչ և շինծու լուրեր տարածել և ապա նրան զարհուրելի տոկոսներով փող առաջարկել, որ իբր թե... **Հիպը** իր կողմից էր նրան տալիս. այն, ինչ իրոք նույն ինքը մր. Ու-ից թոցրել էր և խարդախությամբ ուրիշ գործերում շահեցրել։ Ահա այսպիսի խաբեպատիր ու չարամիտ հնարներով պարավանդեցին, կաշկանդեցին, կապեցին,

թակարդեցին թշվառ մր. Ու-ին: Մր. Ու-ն էլ վերջ ի վերջո կարծելով, թե անունն ու պատիվը վտանգված են, թե սնանկությունը մոտալուտ է, իր միակ հույսն այդ մարդակերպ հրեշի վրա դրեց (մր. Միկաբրը մի առանձին հաճույքով մարդակերպ հրեշ խոսքերը շեշտեց, իբրև մի նոր ասացված)... որ իրեն անհրաժեշտ էր դարձրել՝ նրա կործանումը լրացնելու համար: Ես հանձն եմ առնում այդ ամենն ապացուցել. հավանորեն և դեռ ուրիշ շատ բաներ»:

Ես մի քանի խոսք շշնջացի Ագնեսին, որ, տրտմության ու սփոփանքի արտասուք թափելով, իմ կողքին լուռ նստած էր, և ունկնդիրների մեջ շարժում ընկավ. կարծեցին, թե մր. Միկաբրն ավարտել է: Բայց նա հանդիսաբար ասաց. «Կներեք ինձ, և մի խորին վհատության ու բուռն ցնծության խառն թափով ընթերցումը շարունակեց:

«Արդ վերջացրի: Կմնա միայն, որ իմ ամբաստանության ճշմարտությունը հաստատեմ և ապա թե թշվառության դատապարտված գերդաստանի հետ միասին այս միջավայրից անհետանամ, ուր մենք կարծես մի բեռ ենք: Եվ այդ շուտով կկատարվի: Իրավամբ կարելի է ենթադրել, թե մեր ստնտու մանուկը, որ գերդաստանիս ամենաքնքուշ անդամն է, ամենից առաջ շունչը կփչի անոթի մնալուց, և թե երկվորյակ եղբայրներն էլ նրա օրինակին կհետևեն: Եղիցե կամք տյառն օրհնյալ: Ինձ գալով, Կենտըրբրին արդեն բավական տրորեց ինձ. մնացածը բանտն ու սովը կլրացնեն: Հույս ունեմ, սակայն, որ այս տաժանելի ու մեծաջան հետազոտությունը, որ անդուլ տոկունությամբ սովամահ լինելու վտանգով, հսկելով ու տքնելով կատարել եմ արշալույսի, վերջալույսի և մութ գիշերվա լռիկ ժամերին,– այն էլ մի արթուն լրտեսի աչքերի տակ, որին Դև անվանելը քիչ կլիներ... ավելացրեք՝ ծնողական կարիքների դեմ մաքառելով,– հույս ունեմ, որ այս հետազոտությունը իմ մահվան խարույկի վրա գեթ մի շիթ քաղցրության ցող կկաթեցնի: Եվ ինձ համար դա հերիք է: Ես գոհ կլինեմ, եթե իրավամբ իմ մասին ասեն, ինչ որ երբեմն ասվել է մի ծովային քաջ հերոսի մասին, որի հետ, սակայն, համեմատվելու լրբություն չունեմ,– թե այս բոլորը ես արել եմ ոչ թե շահամոլ ու եսական հաշիվներից դրդվելով, այլ միայն հանուն

Անգլիայի, հայրենաց և գեղեցկության:

Կամ և մնամ և այլն, և այլն.

Ուիլկինս Միկաբր»:

Մր. Միկաբրը սաստիկ հուզված, բայց և անչափ գոհ սրտով նամակը ծալեց, գլուխ տալով՝ տատիս հանձնեց, իբրև մի բան, որ նա գուցե պահել կուզենար:

Այդ սենյակում մի երկաթե պահարան կար, որ դեռ իմ առաջին այցելության ժամանակ էի նկատել: Բանալին փականքի վրա էր: Հանկարծ Ուրիասի միտքը կասկած ընկավ. նա մր. Միկաբրի վրա մի արագ հայացք նետեց, շտապով պահարանին մոտեցավ ու շառաչմամբ դուռը բացեց: Դատարկ էր:

– Գրքերը որտե՞ղ են,– աղաղակեց նա սոսկալով:– Ո՞վ է գողացել գրքերը:

Մր. Միկաբրը իր կրծքին քանոնով խփեց և ասաց.

– Ես եմ արել, և արել եմ այս առավոտ, երբ ինքներդ բանալին ինձ հանձնեցիք:

– Միամիտ կացեք,– ասաց Տրեդլսը:– Գրքերն ինձ մոտ են, և ես նրանց կպահեմ արդեն հիշված իրավունքիս զորությամբ:

– Ուրեմն դուք գողացված բաներ թաքցնո՞ղ եք,– գոչեց Ուրիասը:

– Այսպիսի դեպքերում՝ անշուշտ,– պատասխանեց Տրեդլսը:

Որքան զարմացա, երբ տատս, որ մինչև այժմ շատ ուշադիր ու հանգիստ էր, հանկարծ Ուրիասի վրա ընկավ և երկու ձեռքով նրա օձիքից բռնեց:

– Գիտե՞ս, ի՞նչ եմ պահանջում,– ասաց տատս:

– Մի խելագարի շապիկ,– դուրս տվեց Ուրիասը։

– Ո՛չ։ Իմ ստացվածքն եմ պահանջում,– ասաց տատս։– Հոգյակ իմ, Ագնես, քանի կարծում էի, թե իմ կայքը հայրդ է կորցրել, մի խոսք անգամ չէի ասում, թե այդ կայքը նրան եմ հանձնել. . . Տրոտին անգամ չէի ասում։ Բայց այժմ, երբ գիտեմ, որ պատասխանատուն այս անզգամն է, ետ եմ պահանջում իմ կայքը։ Տրոտ, եկ, վերցրու, խլի՛ր սրանից։

Արդյոք Տատս այս րոպեին ի՞նչ էր մտածում՝ չգիտեմ, բայց այնպես էր քաշքշում Ուրիաս Հիպի օձիքը, որ առիթ էր տալիս ենդադրելու, թե իր փողերն այդ «օձիքի» մեջ է տեսնում։ Ես փութացի բաժանել նրանց և տատիս խոսք տվի, թե կստիպենք Ուրիասին ամեն բան վերադարձնել, ինչ որ նա իրոք յուրացրել է։ Տատս մի վայրկյան մտածելուց հետո հանգստացավ ու նստեց՝ առանց վրդովման նշան անգամ ցույց տալու (ինչ որ, սակայն, չէր կարելի ասել նրա գլխանոցի մասին)։

Մրս. Հիպը չէր դադարում որդուն լալով աղաչել, որ «խոնարհվի», բոլորիս առջև ջոկ-ջոկ չոքում էր և հիմար-հիմար խոստումներ տալիս։ Վերջապես որդին նրան նստեցրեց, կողքին կանգնեց և նրա ձեռքը բռնելով ու ծուռ-ծուռ վրաս նայելով, ասաց.

– Ի՞նչ եք ուզում, որ անեմ։

– Ես կասեմ ձեզ, թե ինչ պիտի անեք,– ասաց Տրեդլսը։

– Մի՞թե այդ Կոպպերֆիլդը լեզու չունի,– քրթմնջաց Ուրիասը։– Ես ձեզ մի լավ բան կտայի, եթե առանց ստելու ասեիք, թե նրա լեզուն կտրել են։

– Ուրիասն անպատճառ կխոնարհվի,– ճչաց մայրը։– Խոսքերին ականջ մի՛ դնեք, ով ազնիվ պարոններ։

– Ահա թե ինչ պիտի անեք,– ասաց Տրեդլսը։– Նախ և առաջ, և այս րոպեիս, դուք ինձ կտաք մր. Ուիկֆիլդի այն փոխանցման գիրը, որով իր կայքը ձեզ է թողնում։

– Դիցուկ թե մի այդպիսի գիր չեմ ստացել,– ընդհատեց Ուրիասը։

– Սակայն ստացել եք,– ասաց Տրեդլսը,– հետևաբար հարկ էլ չկա այդ ենթադրությունն անելու։

Խոստովանում եմ, որ իմ նախկին դպրոցական դասընկերոջ կորովի, առողջ, համբերատար ու պարզ միտքն առաջին անգամ այդ րոպեին հարգեցի։

– Հետո,– շարունակեց Տրեդլսը,– կպատրաստվեք այն բոլորը ետ դարձնել, ինչ որ չարաչար հափշտակել եք, և ետ դարձնել մինչև վերջին ֆարթինգը[82]։ Գրասենյակի բոլոր գրքերն ու գործերը մեզ մոտ կմնան. նմանապես և ձեր թղթերն ու տետրերը, ձեր հաշիվներն ու մաուրհակները. մի խոսքով՝ այստեղ եղած ամեն բան։

– Իրա՞վ,– պատասխանեց Ուրիասը։– Չէի իմացել, որ անհրաժեշտ է այդպես անել։ Ինձ ժամանակ է պետք մտածելու համար։

– Անշուշտ,– ասաց Տրեդլսը,– բայց առժամանակ, մինչև որ պահանջը կատարվի, այս բոլորը մեզ մոտ կպահենք ու ձեզ կխնդրենք կամ պարզ ասած. . . կստիպենք ձեր սենյակում նստած մնալ և ոչ ոքի հետ հաղորդակցություն չունենալ։

– Այդ չեմ անի,– ասաց Ուրիասը երդվելով։

– Այն ժամանակ բանտում կնստեք, ուր ավելի ապահով կլինեք,– ասաց Տրեդլսը։– Եվ թեպետ օրենքը մեզ ավելի ուշ բավարարություն կտա, և մեր պահանջն այնպես լրիվ չի կատարի, ինչպես որ դուք կանեիք, բայց այնուամենայնիվ կասկած չկա, որ նա սաստիկ կպատժի ձեզ։

---

[82] Farthing – ¼ պեննի։

Սակայն, դուք ինքներդ էլ այդ լավ գիտեք։ Կոպպերֆիլդ, խնդրեմ Դիլգհոլ գնացեք և մի երկու ոստիկան բերեք։

Մրս. Հիպը նորից արտասվալից աղաչանքով Ագնեսի ոտքն ընկավ, որ նա բարեխոս լինի, և կրկնեց, թե իր որդին խոնարհ է, և եթե մեր պահանջը չկատարի, նա ինքը՝ մայրը որդու փոխարեն ամեն բան կանի։ Սիրասուն որդուն սպառնացող վտանգից պառավը գրեթե խելագարվել էր։ Հարցնել, թե այդ որդին ի՞նչ կաներ, եթե գեթ փոքր-ինչ արիություն ունենար, միևնույն է, թե հարցնել – ի՞նչ կաներ մի անպիտան շուն, եթե վագրի ոգի ունենար։ Նա ոտքով-գլխով մի վատասիրտ երկչոտ էր և իր տագնապած տեսքով և հուսահատ դաժանությամբ այժմ լիովին իր բնության ստրկությունը ցույց տվեց։

– Կա՛ց,– մռնչաց նա դեպի ինձ և իր քրտնած երեսը սրբեց։– Մայրիկ, հերիք է ճվաս։ Թող վերցնեն այն թուղթը։ Գնա բե՛ր։

– Խնդրեմ այդ կնոջն օգնեցեք, մր. Դիկ,– ասաց Տրեդլսը։

Մր. Դիկը այդ պատվերն իրեն պարծանք համարեց և պառավի հետ այնպես գնաց, ինչպես որ մի հովվի գամփռ կերթար ոչխարի հետ։ Բայց մրս. Հիպը նրան շատ նեղություն չտվեց, որովհետև իսկույն ևեթ ետ եկավ՝ ոչ միայն պահանջված պայմանագիրը բերելով, այլև դրա տուփը, որի մեջ մի հաշվեմատյան և ուրիշ թղթեր էլ կային, որոնք հետո պիտանի եղան։

– Շատ լավ,– ասաց Տրեդլսն այդ ամենը ստանալուց հետո։– Այժմ, մր. Հիպ, կարող եք մտածելու համար հեռանալ։ Լավ մտածեք. այս ասում եմ բոլորիս կողմից... որ ձեզ մի բան միայն կմնա անել, որը արդեն հայտնել եմ, և անհապաղ անել։

Ուրիասն ակնկոր ու ձեռքը կզակին դրած դանդաղ դեպի դուռը գնաց և շեմքի մոտ կանգնելով ասաց.

– Կոպպերֆիլդ, ես ձեզ միշտ ատել եմ։ Դուք ինձ միշտ խոչընդոտ եք հանդիսացել, ինձ հակառակ էիք։

– Կարծեմ մի անգամ ձեզ ասվեց,– պատասխանեցի ես,– որ դուք էիք ամենքի դեմ չարիք նյութում ձեր ագահ ու խորամանկ բնավորությամբ։ Իմացած եղեք, գեթ ապագայի համար, աշխարհիս երեսին դեռ տեսնված չէ, որ ագահությունն ու խորամանկությունը չափ ու սահմանից չանցնեն և իրենք իրենց չվնասեն։ Սա մի ստույգ բան է, ինչպես ստույգ է, որ բոլորս էլ վաղ թե ուշ մեռնելու ենք։

– Ինչպես ստույգ է և այն բանը, որ քարոզում էին մեզ դպրոցում (ուր սովորել եմ այսքան խոնարհ լինել),– ասաց Ուրիասը չար հեգնությամբ։– Առավոտյան ժամը իննից մինչև տասնմեկը մեզ ասում էին, թե աշխատանքն անեծք է. իսկ տասնմեկից մինչև մեկը՝ թե օրհնություն է, զվարթություն է, բարիք է և էլ չգիտեմ, թե ինչ բան։ Դուք էլ այնպես տրամաբանորեն եք վարդապետում, ինչպես և մեր վարժապետները։ Ի՞նչ շահ տեսա խոնարհությունից։ Սակայն ես ինչպե՞ս ընկերակցիս ձեռքն ու ոտքը կկապեի, եթե խոնարհ չլինեի։ Միկաբր, ծեր ավանակ, ես դեռ քո հախիցը կգամ։

Մր. Միկաբրը արհամարհոտ վեհությամբ Հիպի սպառնական չոր մատին նայեց և նրա հեռանալուց հետո ինձ դառնալով առաջարկեց՝ «վկա լինել և իր և մրս. Միկաբրի լիակատար հաշտության»։ Այնուհետև բոլորիս էլ հրավիրեց գնալ այդ սրտաշարժ հանդեսը տեսնելու։

– Ինձ ու նրան բաժանող վարագույրը վերջապես պատռված է,– ասաց նա։– Ջավակներս և նրանց գոյության հեղինակը այժմ կարող ենք իրար պարզերես մոտենալ։

Մենք բոլորս նրանից շնորհակալ էինք, բոլորս կցանկանայինք, ինչքան որ մեր այն հուզված ու շփոթ դրության մեջ կարելի էր, ցույց տալ նրան, որ իրոք շնորհակալ ենք. ուստի բոլորս էլ միասին կգնայինք, եթե Ագնեսն ստիպված չլիներ հոր մոտ վերադառնալ,– որին մինչև այժմ չեն համարձակվել մի ուրիշ բան ներշնչել, բացի միայն մի տկար հույսից, և եթե մեզնից մեկն էլ պարտավոր չլիներ Ուրիասի մոտ պահապան մնալ։ Այդ պաշտոնը Տրեդլսին վիճակվեց,

որից հետո մր. Դիկը պիտի փոխարիներ, և այսպես մր. Միկաբրի հետ մր. Դիկը, տատս ու ես գնացինք: Իմ երախտավոր սիրելի Ագնեսից շտապով հրաժեշտ առնելիս՝ հիշեցի այն սոսկալի վտանգը, որից նրան... չնայելով իր վեհանձն արիության... գուցե այդ առավոտ փրկեցինք, և սրտանց շնորհակալ եղա իմ մանկության աղետներից, որոնց շնորհիվ ծանոթացել էի մր. Ուիլկինս Միկաբրի հետ:

Նրա տունը հեռու չէր. դրսի դուռն ուղղակի դեպի դահլիճն էր բացվում: Մր. Միկաբրը միայն իրեն հատուկ արագությամբ ներս վազեց, և մենք իսկույն նրա ընտանիքի գիրկն ընկանք:

– Էմմա, աչքիս լույս,– գոչեց մր. Միկաբրը իր ամուսնուն փարվելով:

Մրս. Միկաբրն աղաղակեց և ամուսնու վզին փաթաթվեց: Մրս. Միկաբրը, որ մր. Միկաբրի վերջին նամակում հիշատակված նորեկին էր որոնում, սաստիկ հուզվեց: Նորեկը խայտաց: Երկվորյակները մի քանի անվայել, բայց և անմեղ ցույցերով ցնծում հայտնեցին: Մաստր Միկաբրը, որի սիրտը վաղաժամ հուսախաբումների պատճառով դառնացել ու երեսը խոժոռել էր, այժմ գորովանքից մեղմացավ ու հեծկլտաց:

– Էմմա,– ասաց մր. Միկաբրը,– սիրտ ճնշող մութ ամպերը փարատված են: Այնքան տարիներ մեր միջև թագավորող մտերմությունը նորոգված է, և ընդմիշտ: Արդ, ողջույն քեզ, ով չքավորություն. բարով գաս, տնանկություն, օրհնյալ լինեք մուրացկանի գավազան, ցուրտ ու սով, ցնցոտիներ ու փոթորիկ: Փոխադարձ մտերմությունը մինչև վերջը զորավիգ կլինի մեզ:

Այս ճառն ասելուն պես մր. Միկաբրն մրս. Միկաբրին աթոռի վրա նստեցրեց և իր գերդաստանի բոլոր անդամներին համբուրեց, ապագա աղետների մի անվերջ շարք ողջունելով, որ շատ սփոփիչ չերևաց նրանց, և հրավիրելով նրանց դուրս գնալ Կենտըրբրիի փողոցներն ու երգել, որովհետև էլ հաց ճարելու ուրիշ հնար չկար:

Բայց որովհետև ուժգին հուզումից ջլատված մրս. Միկաբրն այդ րոպեին ուշաթափվել էր, հետևաբար ամենից առաջ, մինչև անգամ երգեցիկ խումբը կազմելուց առաջ, պետք եղավ նրան ուշքի բերել: Այդ մասին տատս ու ինքը մր. Միկաբրը հոգ տարան: Հետո տատս ներկայացավ, և մրս. Միկաբրը ինձ ճանաչեց:

– Ներեցեք, սիրելի մր. Կոպպերֆիլդ,– ասաց խեղճ կինը, ձեռքն ինձ մեկնելով:– Ես տկար եմ, և չէի կարող դիմանալ այն ցնծության, որ մր. Միկաբրի ու իմ մեջ ծագած վերջին թյուրիմացության չիք դառնալու առթիվ զգացի:

– Ա՞յս է ձեր բոլոր ընտանիքը, տիկին,– հարցրեց տատս:

– Առայժմ այս է,– պատասխանեց մրս. Միկաբրը:

– Տեր ողորմյա, միտքս այդ չէր,– ասաց տատս:– Ուզում էի միայն իմանալ, թե բոլորն էլ ձե՞րն են:

– Տիկին, բոլորն էլ մերն են ուղիղ հաշվով,– հաստատեց մր. Միկաբրը:

– Իսկ այդ հասուն ջենտլմենը ի՞նչ բանի է պատրաստված,– շարունակեց տատս:

– Այս քաղաքը որ եկա,– պատասխանեց մր. Միկաբրը,– մտադիր էի եկեղեցու պաշտոնյա անել Ուիլկինսին և կամ ավելի ճիշտն ասած՝ երգեցիկ խմբի անդամ. բայց որովհետև պատկառելի տաճարում, որ իրավամբ այս քաղաքի պարծանքն է, մի **վերնաբաժամ** երգչի համար տեղ չկար, Ուիլկինսը սկսեց... մի խոսքով սովորություն դարձրեց՝ փոխանակ այդ սրբավայրի... պանդոկներում երգելու:

– Սակայն միտքը բարի է,– նկատեց մրս. Միկաբրը գորովանքով:

– Անտարակույս, սիրելիս,– ասաց մր. Միկաբրը,– սակայն նրա բարի մտքերի բարի պտուղը դեռ չեմ տեսել:

Մաստր Միկաբրը դարձյալ դեմքը կնճռեց ու տաք-տաք հարցրեց, թե ի՞նչ կհրամայեն, որ անի։ Արդյոք հյո՞ւսն դառնալ, թե կառապա՞ն, կամ դարբի՞ն։ Միևնույն է, թե պահանջեն թռչուն դառնալ, քանի որ ինքն այդ կոչումների համար չի ծնված։ Արդյոք հենց առաջին փողոցը գնա և դեղատո՞ւն բանա, վազելով հենց առաջին դատարանը մտնի ու փաստաբա՞ն հանդիսանա. թե՞ օպերայի բեմը բռնի դուրս գա ու բռնաբար հաջողություն ձեռք բերի։ Արդյոք կարո՞ղ է այդ բոլորից գեթ մեկն անել, քանի որ ոչինչ չի սովորել։

Տատս փոքր-ինչ խորհեց և ապա ասաց.

– Մր. Միկաբր, զարմանում եմ, որ մինչև այժմ չեք մտածել գաղթելու։

– Տիկին,– գոչեց մր. Միկաբրը,– դա իմ պատանեկության երազանքն էր և հասուն հասակիս խաբուսիկ հույսը։

Հավաստի եմ, որ այդ մասին նա իր օրում չէր մտածել։

– Իրա՞վ,– ասաց տատս, իմ վրա ակնարկ նետելով։– Ի՞նչ կլիներ, մր. Միկաբր, եթե իրոք վճռեիք գաղթել։

– Իսկ արծաթը, տիկին, արծաթը,– նկատեց մր. Միկաբրը ողբագին ձայնով։

– Դա է գլխավոր և կարող եմ ասել միակ արգելքը, սիրելի մր. Կոպպերֆիլդ,– ասաց մրս. Միկաբրը։

– Արծա՞թ,– գոչեց տատս։– Բայց դուք միշտ բոլորիս այնքան լավություն եք անում և կամ արդեն արել եք, որ ձեր բորբոքած կրակի տակից անշուշտ շատ բան դուրս կգա։ Այն ժամանակ ինչո՞վ պիտի երախտահատույց լինենք ձեզ, եթե ոչ՝ ձեզ հարկավոր դրամագլուխը ճարելով։

– Չէի կամենա իբրև պարգև ընդունել այդ,– ասաց մր. Միկաբրը ջերմությամբ։– Սակայն ուրիշ բան է, եթե հնար լիներ փոխարինաբար մի բավարար գումար տալ ինձ հինգ տոկոսով և իմ անձնական պատասխանատվությամբ, օրինակի համար՝ տասներկու, տասնութ և կամ քսանչորս ամիս անցնելուց հետո հատուցելու պայմանով, մինչև որ գործերս հաջող ընթացք ընդունեն... այն ժամանակ...

– Հնար լինե՞ր,– գոչեց տատս։– Խոսք չկա, որ կլինի, և ձեր ուզածին պես կլինի։ Այս բանը լավ կշռեցեք։ Ահա Դավթի բարեկամներից մի քանիսը շուտով Ավստրալիա պիտի գնան։ Եթե դուք էլ որոշեք գնալ, ինչո՞ւ միևնույն նավով չգնաք։ Դուք կարող եք օգնել միմյանց։ Լավ մտածեցեք այս մասին, մր. և մրս. Միկաբր։ Ժամանակ գտեք և այս բանը լավ կշռեցեք։

– Մի բան միայն կցանկանայի իմանալ, մեծարգո տիկին,– ասաց մրս. Միկաբրը։– Արդյոք այնտեղի կլիման առողջարա՞ր է։

– Սքանչելի՛ կլիմա է,– պատասխանեց տատս։

– Շատ լավ,– ասաց մրս. Միկաբրը։– Երկրորդ հարց. Արդյոք այն երկրի պայմաններն այնպե՞ս են, որ մր. Միկաբրի նման մի ճարտար մարդ հասարակության սանդուղքի վրա մի վայելուչ դիրք բռնելու հույս ունենար։ Չեմ ասում – արդյոք կարո՞ղ էր գավառապետի, նահանգապետի և կամ այս տեսակ մի պաշտոն ունենար. այլ կուզեի միայն իմանալ, արդյոք նրա առջև մի պատշաճավոր ասպարեզ կբացվի՞, ուր նա իր ձիրքերը գործ դնի ու հետզհետե ազատորեն զարգացնելու հնար գտնի։

– Ոչ մի տեղ ավելի արձակ ասպարեզ չկա մի ջանասեր ու բարեբարո մարդու համար,– ասաց տատս։

– Ջանասեր և բարեբարո,– կրկնեց մրս. Միակբրը լրջությամբ։– Ճշմարիտ է։ Պարզ տեսնում եմ, որ Ավստրալիան է մր. Միկաբրի գործունեության արժանավոր ասպարեզը։

– Ես էլ համոզված եմ, արգո տիկին,– ասաց մր. Միկաբրը,– որ ներկա հանգամանքներում միայն դա է ինձ ու գերդաստանիս համար պատշաճավոր երկիրը, և որ անշուշտ մեր բախտը այդ երկրի սահմաններում պիտի ժպտա: Հեռու էլ չէ... համեմատաբար. և թեպետ ձեր սիրալիր առաջարկը լուրջ քննության արժանի է, բայց հավատացեք, դա միայն մի ձևական բան է, երկար մտածելու հարկ չկա:

Մի՞թե կարող եմ մոռանալ, թե ինչպես նա մի վայրկյանում ամենահուսալից մարդը դարձավ, իր ապագա երջանկության մասին ցնորելով, և կամ ինչպե՞ս մրս. Միկաբրը կենգուրուների բարքի մասին սկսեց ճառել: Կարո՞ղ եմ արդյոք Կենտըրբըրիի շուկան մտաբերել՝ առանց հիշելու, թե ինչպես մր. Միկաբրը, մեզ հետ շուկայով անցնելիս, հեռավոր երկրից եկած քաջ ու կոպիտ օտարական ձևացավ և ավստրալիական մշակի աչքով սկսեց դիտել վաճառքի բերված անասունները:

ԺԳ. ԳԼՈՒԽ
Մի նոր հետաղարձ հայացք

Դարձյալ մի անգամ պիտի կանգնեմ: Օ՜հ, իմ երեխա-կին: Հիշողությանս մեջ շարժվող բազմությունն աչքի անցկացնելիս ահա տեսնում եմ մի հանգիստ ու լուռ պատկեր, որ իր մանկական գեղեցկությամբ ու սուրբ սիրով ասել է ինձ. «Փոքր-ինչ կանգ առ ինձ հիշելու, ետ նայիր ու տես, թե Փոքրիկ Ծաղիկդ ինչպես է թոշնում»:

Կատարում եմ այդ պատվերը: Ուրիշ ամեն բան աչքիս առջև նսեմանում ու ջնջվում է: Ես դարձյալ Դորայի հետ եմ, մեր տնակում: Չգիտեմ, երբվանի՞ց է հիվանդ: Այնքան եմ նրա հիվանդությանն ընտելացել, որ չեմ կարող դրա սկիզբը լավ հիշել: Եթե շաբաթներով, ամիսներով հաշվելու լինեմ, իսկապես վաղուց չէ. սակայն կրած վշտերիս որ նայեմ, շատ վաղուց է, շա՜տ վաղուց:

Այլևս չեն ասում ինձ. «Էլի մի երկու օր սպասեցեք»: Արդեն սկսել եմ վախենալ, թե բնավ չեմ տեսնի այն օրը, երբ երեխա-կինս նորից կսկսի վազվզել իր հին ընկեր Ջիպի հետ:

Ջիպը կարծես հանկարծ ծերացել է: Գուցե իր տիրուհու մեջ չի գտնում այն առույգ ոգին, որ ժրություն է տալիս իրեն. նա թմրած է, տեսողությունը թուլացել է, ուժը սպառվել: Տատս ափսոսում է, որ շնիկն այլևս նրա վրա չի հաչում, այլ միայն դանդաղ մոտենում է ու հանդարտ նրա ձեռքը լիզում, երբ նա նստում է Դորայի մոտ:

Դորան պառկած է ու ժպտալով մեզ է նայում. նա գեղեցիկ է. ո՜չ մի տրտունջ, ո՜չ մի գանգատ չի հայտնում: Ասում է, թե շատ բարի ենք դեպի նա. թե նա գիտի իր սիրելի ամուսինը որքան է տանջվում. թե տատիկը քուն չունի, գիշեր-ցերեկ նրան խնամում է, միշտ արթուն է, միշտ հսկում: Թոչնանման օրիորդները երբեմն գալիս են նրան տեսնելու. և երբ գալիս են, սկսում են մեր հարսանիքն ու նախկին երջանկության օրերը հիշել:

Ի՜նչ տարօրինակ հանդարտություն, ինչպիսի՜ դադար կյանքիս մեջ... թե՜ տանը, թե՜ դուրսը... նստած եմ լռիկ, կոկիկ, հովանավոր սենյակում, և կինս իր կապուտակ աչքերով վրաս նայում է ու փափուկ մատիկներով իմ ձեռքը սեղմում: Շատ ժամեր եմ այդպես նստած անցկացրել: Բայց այդ բոլոր ժամերից միայն երեքի հիշատակն առանձնապես թարմ են մնացել մտքիս մեջ:

Առավոտ է: Տատիս ձեռքով պճնված Դորան ցույց է տալիս, թե ինչպես իր մազերը դեռ գալարվում են բարձի վրա, ինչպես երկար ու փայլուն են և ինչպես ինքը սիրում է, որ նրանք թույլ-թույլ հավաքված մնան իր հագած ցանցի մեջ:

– Չկարծես թե մազերովս պարծենում եմ, ա՛յ չար տղա,– ասում է նա, ծիծաղելս տեսնելով,– այլ ասում եմ, որովհետև մի ժամանակ դու սիրում էիր այսպես տեսնել մազերս, և որովհետև երբ ես սկսեցի առաջին անգամ քո մասին մտածել, սովոր էի հայելուն նայելիս հարցնել ինձ – արդյոք դու կուզենայի՞ր սրանց մի փնչիկն ունենալ։ Քիչ էր մնում գժվեիր, երբ որ մեկը քեզ տվի, հիշո՞ւմ ես։

– Այդ այն օրն էր, երբ դու սկսեցիր իմ բերած ծաղիկներն ընդօրինակել, և ես ասացի, թե որքան եմ քեզ սիրում, Դորա։

– Բայց այն ժամանակ ես չէի ուզում քեզ պատմել,– ասում է Դորան,– թե որքան եմ լացել այդ ծաղիկների վրա, հավատալով, որ դու իրոք սիրում ես ինձ։ Երբ նորից սկսեմ վազվզել, Դոդի, այն տեղերը տեսնելու կերթանք, ուր այնքան գժություն ենք արել միասին։ Հետո կերթանք մեր հին զբոսանքները կրկնելու։ Հայրիկիս էլ չենք մոռանա, չէ՞, Դոդի։

– Այո՛, կերթանք ու դարձյալ երջանիկ օրեր կունենանք։ Բայց դու շտապիր առողջանալ, հոգի ջան։

– Է՛հ, ես շուտով կառողջանամ։ Չգիտես, թե որքան եմ կազդուրվել։

Երեկո է։ Նստած եմ միևնույն բազկաթոռի վրա, միևնույն անկողնու մոտ և միևնույն դեմքն է դեպի ինձ ուղղված։ Լուռ ենք մենք որոշ ժամանակ։ Նա ժպտում է։ Արդեն դադարել եմ թեթև բեռս վերև տանել ու ներքև բերել։ Այլևս նա սենյակից դուրս չի գալիս։

– Դոդի։

– Անգին Դորաս։

– Ասելիքս անտեղի չե՞ս գտնի այն բանից հետո, ինչ որ դու անցյալ օրը մր. Ուիկֆիլդի հիվանդության մասին պատմեցիր։ Կցանկանայի Ագնեսին տեսնել. շատ կցանկանայի տեսնել նրան։

– Ես նրան կգրեմ, սիրելիս։

– Կգրե՞ս։

– Անմիջապես։

– Ինչ լավ տղա ես, Դոդի ջան։ Բարձրացրու ինձ։ Հավատա, որ ցանկությունս քմահաճույք չէ։ Ես իրավ նրան շատ եմ կարոտել։

– Հավատում եմ։ Բավական է որ այդ մասին նրան գրեմ, և նա անշուշտ կշտապի գալ։

– Այժմ դու ներքևի սենյակումդ շատ մենակ ես, չէ՞, Դոդի,– շշնջում է նա զվարթ ժպիտով,– առանց քո խեղճուկ, անշնորհք, հիմար Դորայի։

– Հոգի ջան, աշխարհիս երեսին ո՞վ ունեմ, որին ավելի կարոտեի, քան քեզ։

– Ով անձկալիդ իմ, Դոդի։ Որքա՜ն ուրախ եմ և որքա՜ն տրտում։

Դորան ավելի ամուր է ինձ փարվում և երկու ձեռքով ավելի ամուր վզիս փաթաթվում։ Նա ծիծաղում ու լալիս է, հետո քիչ-քիչ հանդարտվում, և կարծես թե երջանիկ է։

– Այո՛, լիովին երջանիկ,– ասում է նա։– Ագնեսին սրտանց ողջունիր և ասա, որ շատ եմ ուզում տեսնել նրան, այո՛, շատ-շատ։ Ուրիշ ոչինչ չեմ ուզում։

– Բացի առողջանալուց, Դորա։

– Օ՛հ, Դոդի, երբեմն ինձ թվում է... չէ՞ որ ես միշտ խենթուլիկ եմ... թե այդ երբեք չի լինի։

– Այդպիսի բան չասես, Դորա։ Աչքիս լույս։ Մտքովդ էլ թող չանցնի։

– Չեմ ասի, Դոդի, եթե միայն կարողանամ։ Բայց դարձյալ երջանիկ եմ, թեև սիրելի մարդս ինքն իրեն մենակ է զգում իր երեխա-կնոջ ամայացած աթոռի առջև։

Գիշեր է, և ես դեռ Դորայի մոտ եմ: Ագնեսը եկել է և ամբողջ օրը մեր տանն է: Նա, տատս ու ես առավոտից սկսած Դորայի հետ էինք: Շատ չէինք խոսում, բայց Դորան անչափ գոհ ու զվարթ էր: Այժմ մենակ ենք:

Արդյոք գիտե՞մ, որ երեխա-կինս շուտով ինձ թողնելու է: Ինձ այդպես ասացին, այդ լուրը ինձ համար նոր չէ, բայց և այնպես հավատալս չի գալիս: Չեմ կարող դա ըմբռնել, չեմ կարող դրա հետ հաշտվել: Այսօր մի քանի անգամ հեռացել եմ լալու համար: Հիշեցի նրան, որ լաց էր եղել կյանքի ու մահվան անջատման ժամին: Մտաբերեցի այս սքանչելի ու սրտաշարժ պատմությունը: Փորձեցի հպատակվել ճակատագրիս, սիրտ առնել, արիանալ, սակայն ջանքերս զուր անցան: Ո՛չ, ես չեմ կարող հավատալ, թե վախճանն անշուշտ գալու է: Դորայի աջն իմիս մեջ է. նրա սիրտը իմին եմ սեղմած, տեսնում եմ նրա սերը դեպի ինձ՝ դեռ կենդանի, վառ սերը: Չեմ կարող հրաժարվել այն ստվերային, աղոտ հույսից, թե նա կապրի:

– Մի բան ունեմ քեզ ասելու, սիրելի Դոդի, որ վերջերս շատ անգամ ուզում էի ասել: Այժմ ասե՞մ,– հարցնում է Դորան սրտաճմլիկ հայացքով:

– Ասա, հոգիս:

– Չգիտեմ, թե ի՞նչ կմտածես և կամ արդյոք մտածե՞լ ես այդ մասին: Գուցե շատ անգամ միևնույն բանը քո մտքովն էլ անցած լինի: Ինձ այնպես է թվում, անգին Դոդի, թե ես անչափ ջահել եմ:

Գլուխս բարձին եմ դնում, նրա երեսի մոտ: Նա աչքերիս մտիկ է անում ու մի բան ասում ամենամեղմ ձայնով: Ես կոտրված սրտով քիչ-քիչ զգում եմ, որ իր մասին խոսելիս նա իրեն մի անցած բան է համարում:

– Կարծում եմ, հոգիս, թե ես անչափ ջահել ու անհաս էի: Չեմ ասում միայն տարիքով տհաս, այլև փորձով, խելքով, ամեն բանով: Ես այնքան հիմար մանուկ էի: Լավ չէ՞ր լինի, եթե մենք իրար սիրած լինեինք իբրև մի փոքրիկ տղա ու աղջիկ և հետո իրար մոռացած: Ինձ թվում է, թե ես կին լինելու հասունություն չունեի:

Աշխատում եմ արտասուքս բռնել և ասում.

– Ինչպես որ ես էլ էրիկ լինելու, Դորա ջան:

– Չգիտեմ,– ասում է Դորան, գանգուրները թոթվելով:– Գուցե այդպես է: Բայց եթե ես կին լինելու հասունություն ունենայի, քեզ էլ հարկավ ավելի լուրջ մարդ կդարձնեի: Այս էլ կա, որ դու շատ խելացի ես, իսկ ես՝ ոչ:

– Մի՞թե մենք երջանիկ չէինք, անգին Դորա:

– Ես երջանիկ էի, շատ երջանիկ: Սակայն տարիների ընթացքում մանուկ մարդս կձանձրանար իր երեխա-կնոջից: Կինը հետզհետե կդադարեր նրա ընկերը լինելուց: Հետզհետե մարդը կզգար, թե իր տանը ի՞նչ է պակասում, իսկ կինը միշտ չզարգացած կմնար: Լավ է, որ այդպես է:

– Օ՜հ, Դորա, հոգյակ Դորա, այդպիսի բան մի՛ ասի ինձ: Ամեն մի խոսքդ կշտամբանք է:

– Խոսքերս կշտամբանքի նշույլ անգամ չունեն,– ասում է Դորան, ինձ համբուրելով:– Դու ինձ երբեք կշտամբելու առիթ չես տվել, հոգի ջան. և սրտագին սերս դեպի քեզ թույլ չէր տա, որ գեթ մի անգամ քեզ լրջորեն կշտամբեի: Այդ էր միակ արժանիքս... բացի սիրուն լինելուց... կամ քեզ այդպես երևալուց... Ուրեմն ներքևի սենյակու շա՞տ մենակ ես, հա՞, Դոդի:

– Շատ մենակ:

– Մի՛ լար: Իմ աթոռն այնտեղ է:

– Իր հին տեղում:

– Օ՜հ, ինչպե՞ս է գառնուկս լաց լինում: Սո՜ւս, սո՜ւս: Այժմ ինձ մի բան խոստացիր: Ուզում եմ խոսել Ագնեսի հետ, երբ ներքև իջնես, ասա նրան, որ վերև գա, և մինչ նա իմ մոտ կլինի, ոչ ոքի ներս չթողնես. մինչև անգամ տատիկին: Նրա հետ առանձին պիտի խոսեմ, բոլորովին առանձին:

Խոստանում եմ իսկույն ևեթ ուղարկել Ագնեսին, բայց սաստիկ վշտից անկարող եմ Դորայից բաժանվել:

– Ասացի՝ լավ է, որ այդպես է,– շշնջում է նա, սեղմելով ինձ իր գրկում:– Հավատա, Դոդի, մի քանի տարի անցնելուց հետո չէիր կարողանա երեխա-կնոջդ այնքան սիրել, որքան այժմ. դարձյալ մի քանի տարուց հետո՝ նա քեզ այնքան կձանձրացներ, այն աստիճան կհիասթափեիր, որ այժմյան սիրուդ կեսն անգամ չէիր տա նրան: Գիտեմ, շատ ջահել ու տխմար էի: Այսպես լավ է:

Ներքև եմ իջնում. Ագնեսն այնտեղ է: Դորայի կողմից խնդրում եմ նրան վերև գնալ: Նա գնում է, թողնելով ինձ Ջիպի հետ:

Ջիպի չինական տնակը վառարանի մոտ է: Բրդի մինդարի վրա պառկած՝ նա մռմռալով փորձում է քնել: Լուսինը պայծառ շողշողում է երկնքում: Մենակ նայում եմ գիշերային շրջակայքին, և աչքերիս արտասուքը կաթիլ-կաթիլ թափվում է, իսկ ըմբոստ սիրտս սաստիկ տանջվում է... շա՜տ սաստիկ:

Նստում եմ կրակի առջև և մի անորոշ խղճահարությամբ այն բոլոր գաղտնի զգացումները մտաբերում, որոնք ինձ հուզել էին ամուսնանալուս օրից ի վեր: Հիշում եմ Դորայի ու իմ միջև պատահած ամեն մի չնչին բան և հասու լինում այն ճշմարտության, որ կյանք ասածդ այդ չնչին բաների գումարն է: Հիշողությանս ծովից բացահայտ բարձրանում է նազելի էակի պատկերը, ինչպես որ ճանաչել էի սկզբում, իմ ու նրա մատաղ սիրով և այդ սիրո թովչական հրապույրներով առատորեն զարդարված: Մի՞թե իրոք ավելի լավ կլիներ, եթե իրար սիրեինք իբրև մի փոքրիկ տղա ու աղջիկ, և ապա իրար մոռանայինք: Պատասխան տուր ինձ, ստամբակ սիրտ:

Չեմ իմանում, թե ժամերն ինչպես են անցնում. վերջապես երեխա-կնոջս հին ընկերը սթափեցնում է ինձ: Ջիպն իր տնակից անհանգիստ դուրս է սողում, անհանգիստ վրաս նայում, դռանը մոտենում ու հեծելով փորձում վերև բարձրանալ:

– Այս գիշեր չի կարելի, Ջիպ, չի կարելի:

Նա վնգստալով ետ է գալիս, աջս լիզում ու մարած աչքերով մտիկ անում երեսիս:

– Օ՜հ, Ջիպ, գուցե երբեք կարելի չլինի:

Նա պառկում է ոտքերիս տակ, հենց իմանաս քնելու համար տարածվում, և մի ցավագին հառաչանքով... շունչը փչում:

– Օ՜հ, Ագնես, ե՛կ տես, ե՛կ տես:

... Նայում եմ Ագնեսի վշտահար, ահաբեկ դեմքին, աչքերից վտակի պես հոսող արտասուքին, հանդիսաբար դեպի երկինքն ուղղած ձեռքին:

– Ագնե՞ս:

Վերջացավ: Խավար է պատում աչքերիս և առժամանակ ամեն բան անհետանում մտքիս միջից:

ԺԴ. ԳԼՈՒԽ
Մր. Միկաբրի գործողությունները

Տեղը չէ նկարագրել, թե հոգիս ինչ զգաց այդ դառնաղետ պատահարից։ Ինձ թվում էր, թե իմ առջև ապագան մի քարե անջրպետով փակված է, կյանքիս ուժն ու եռանդը սպառված, և գերեզմանից բացի, ուրիշ ապաստան չի մնում ինձ։ Սակայն այս թախիծը միայն հետզհետե հոգուս վրա բռնացավ, այլ ոչ թե վշտիս սկզբին։ Եթե իմ պատմելիք դեպքերը իսկույն ևեթ իմ շուրջը չդիզվեին՝ նախ վիշտս շփոթելով ու հետո աճեցնելով, գուցե հենց սկզբից վհատության մեջ ընկնեի։ Ինչևիցե՝ իմ սեփական թշվառության ամբողջ բեռն զգալուցս առաջ մի որոշ ժամանակ անցավ, երբ մինչև անգամ սկսել էի կարծել թե ցավերիս ամենասուր ճգնաժամը լրացել է, և թե քիչ-քիչ սիրտս կսփոփվի այն ջինջ ու սիրուն պատկերները հիշելով, որոնց գողտրիկ պատմությունն արդեն ընդմիշտ փակված էր։

Չեմ կարող ճիշտ մտաբերել՝ հատկապես ե՞րբ ինձ առաջին անգամ խորհուրդ տվին և կամ ինչպես որոշվեց, թե անհրաժեշտ է, որ ես հեռանամ ու ճամփորդեմ հոգեկան հանգիստ գտնելու համար։ Ագնեսի ոգին այն աստիճան թափանցում էր ամեն բան, ինչ որ մտածում, ասում ու գործում էինք այդ տրտմության օրերում, որ ես վստահանում եմ այդ ծրագիրը նրա ազդեցությանը վերագրել։ Բայց այդ ազդեցությունն այնպես անտեսանելի էր, այնպես լռիկ, որ ուրիշ ոչինչ չեմ կարող ասել դրա մասին։

Արդեն իրոք մտածում էի, թե զուր չէր, որ մի ժամանակ ես նրա պատկերը եկեղեցու գունավոր պատուհաի հետ էի շաղկապել, և թե դա մի մարգարեական գուշակություն էր այն բոլորի, ինչ որ ինձ համար լինելու էր Ագնեսը տառապանքիս օրերում։ Սկսած այն րոպեից,– որ երբեք չպիտի մոռանամ,– երբ նա դեպի երկինքն ուղղած ձեռքերով առջևս կանգնեց, նա մի բարի ոգի էր իմ ամայի ու սգավոր տնակում։ Երբ մահվան հրեշտակն այցելություն արեց սրան, երեխա-կինս, ինչպես որ հետո ինձ պատմեցին, Ագնեսի գոգում իր հոգին ժպտալով ավանդեց։ Ագնեսի կարեկից արտասուքն էր, որ ամենից առաջ վհատական թմրությունս փարատեց. նրա հուսադիր ու ամոքիչ խոսքերն էին, որ ինձ սփոփեցին. նրա քաղցրիկ դեմքն էր, որ ասես թե երկնքին ավելի մոտիկ ու մաքրափայլ սահմաններից իմ վրա իջնելով՝ անդորրություն շնորհեց սրտիս և սրա ցավերը մեղմացրեց։

Թույլ տվեք շարունակեմ։

Ինձ պետք էր ճամփորդել։ Այդ բանը հենց սկզբից որոշված էր։ Իմ կնոջ հողեղեն մնացորդը հողն արդեն ընդունել էր. ես սպասում էի միայն այն բանին, ինչ որ մր. Միկաբրի ասելով «Հիպի վերջնական փոշիացումը» պիտի լիներ, և գաղթականների մեկնելուն։

Տրեդլսի առաջարկությամբ, Տրեդլսի, որ տրտմությանս միջոցին մի անձնվեր ու սրտակից ընկեր էր, մենք բոլորս, այսինքն՝ տատս, Ագնեսն ու ես Կենտըրբրի վերադարձանք։ Ժամադրության համաձայն՝ իսկույն գնացինք մր. Միկաբրի մոտ, որ մեզ արդեն սպասում էր։ Մեր փոթորկալի ժողովից հետո Տրեդլսը երկար աշխատել էր հաշիվները կարգի բերել թե՛ մր. Միկաբրի և թե՛ մր. Ուիկֆիլդի տանը։ Խեղճ մրս. Միկաբրը սաստիկ հուզվեց ինձ սևազգեստ տեսնելով. չնայած երկարամյա աղմուկներին ու հոգսերին, նրա սրտում դեռ շատ բարություն կար։

– Դե, ի՞նչ կասեք մր. և մրս. Միկաբր,– ասաց տատս՝ հենց որ նստեցինք։– Կուզեի իմանալ, արդյոք գաղթելու առաջարկությունս կշռեցի՞ք։

– Շնորհաշուք տիկին,– ասաց մր. Միկաբրը,– այն եզրակացությունը, որին հասել ենք միասին, այսինքն՝ մրս. Միկաբրը, ձեր խոնարհ սպասավորս և կհամարձակվեմ ավելացնել՝ մեր զավակները, չեմ կարող ավելի լավ արտահայտել, քան մի բանաստեղծի նշանավոր խոսքերով, որ ասում է.

«Նավս կանգնած է կազմ և պատրաստ,–

Պատրաստ թիակ և առագաստ»։

– Շատ լավ,– ասաց տատիկս։– Վստահ եմ, որ մեր իմաստուն վճիռը բարի հետևանք կունենա։

– Տիկին, մեծ պատիվ եք շնորհում մեզ,– պատասխանեց մր. Միկաբրը և հուշատետրը բաց անելով շարունակեց,– գալով նյութական օժանդակության, որ մեզ միջոց պիտի տա մեր նավը ձեռնարկությանց օվկիանոսի մեջ առաջ մղելու, այդ կարևոր կետը դարձյալ մի անգամ աչքի անցկացրի ու քննեցի, և ահա խնդրում եմ ձեզ ընդունել իմ հատուկ ձեռքով գրված... և իհարկե Պառլամենտի օրինական պահանջնեիրն ու երաշխավորության բոլոր կարգերին համեմատ՝ դրոշմաթղթի վրա գրված... մուրհակները տասնութ, քսանչորս և երեսուն ամսից հետո հատուցանելու պայմանով։ Նախկին առաջարկիս մեջ տասներկու, տասնութ և քսանչորս ամիս էի նշանակել. սակայն վախեցա, որ միգուցե այդ ամիսները հերիք չլինեն գործերիս մի այնպիսի զարկ տալու, որ... շոշափելի արդյունք ստացվեր։ Կարող է պատահել,– ասաց մր. Միկաբրը, սենյակն աչքի անցկացնելով, որ կարծես մի քանի հարյուր օրավար պարունակող լավ մշակված արտ լիներ,– կարող է պատահել, որ հատուցման առաջին պայմանաժամին մեր նոր հունձը թերի դուրս գա և կամ տակավին հավաքված չլինի։ Չէ՞ որ դժվար է միշտ պատրաստ մշակներ գտնել մեր գաղութային կալվածքներում, ուր պիտի կոչված լինենք թեև պարարտ, բայց կուսական երկրի հետ մաքառելու։

– Ինչպես կուզեք, այնպես արեք,– ասաց տատս։

– Տիկին,– պատասխանեց մր. Միկաբրը,– մրս. Միկաբրը և ես ինքս ի խորոց սրտե հուզված ենք մեր բարեկամների ու մտերիմների այդ մարդասեր վերաբերմունքից։ Իմ փափագն է իրոք գործնական և իրոք ճշտասեր մարդ լինել։ Արդ, ես կոչված եմ մի բոլորովին նոր էջ բանալ կյանքիս գրքում, որ և անշուշտ պիտի բանամ, և մի հեռաթռիչ ոստում անել դեպի առաջ... շատ կարևոր է անձնական պատիվս հարգելու, որդուս էլ օրինակ տալու համար, որ ներկա գործը վերջացնենք, ինչպես մարդը մարդու հետ։

Ի՞նչ իմաստ էր ուզում տալ մր. Միկաբրը այդ վերջին ասածին, չգիտեմ. չեմ էլ կարծում, որ դա մի բան նշանակեր. բայց և այնպես նա սիրում էր ազդու հազով միշտ կրկնել «ինչպես մարդը մարդու հետ»։

– Առաջարկս մի փոխանակագիր է,– ասաց մր. Միկաբրը։– Առևտրական աշխարհում միշտ ընդունված է այս գիրը, որի գյուտից կարծեմ հրեաներին ենք պարտական, և ինձ թվում է, թե նրանք այս գյուտը հենց սկզբից անչափ շատ են շահագործել։ Առաջարկում եմ մի փոխանակագիր, որովհետև դա մի վաճառելի բան է։ Սակայն եթե մի ուրիշ ապահովության թուղթ, տոմսակ, և կամ մուրհակ պահանջեք, սիրով կտամ։ Ինչպես որ մարդը մարդու հետ։

Տատս նկատեց, թե ոչ մի դժվարություն չի կարող ծագել այս գործում, ուր երկու կողմն էլ միաբան են։ Մրս. Միկաբրն էլ միևնույն կարծիքը հայտնեց։

– Խնդրեմ, տիկին,– ասաց մր. Միկաբրը մի առանձին հպարտությամբ,– թույլ տվեք ինձ հիշատակել այն տնային միջոցները, որով կցանկանայինք սպառազինվել մեզ սպասող նոր ասպարեզի համար։ Ամեն առավոտ ուղիղ ժամը հինգին, ավազ դուստրս մեր հարևանի գոմն է գնում՝ հմտանալու կով կթելու արվեստին... եթե կարելի է արվեստ անվանել այդ բանը։ Կրտսեր զավակներիս հրամայված է խոզերի ու հավերի բարքն ու վարքը ըստ կարելվույն լավ դիտել քաղաքիս զանազան մասերում... մի զբաղմունք, որի պատճառով որդիքս արդեն երկու անգամ տիղմերի մեջ խրվեցին։ Ես ինքս վերջին շաբաթվա ընթացքում մի առանձին ուշադրություն ընծայեցի հաց թխելու արվեստին. իսկ Ուիլկինս որդիս մի քանի անգամ գնացել է մականը ձեռքին ձրի նախրապանություն անելու. բայց ի նախատինս մարդկային բնության, պիտի ասեմ, որ անտաշ ու կոպիտ հովիվներն ընդհանրապես ամենալիրբ հիշոցներով վռնդում էին նրան։

– Այդ բոլորը շատ լավ է,– խրախուսելով ասաց տատս։ Մրս. – Միկաբրն էլ զբաղված էր անշուշտ։

– Սիրելի տիկին,– ասաց մրս. Միկաբրը բազմահոգ եղանակով,– համարձակ կհայտնեմ, որ մինչև այժմ անասնապահության կամ թե մշակութայն հետ սերտ կապ ունեցող գործերին շատ սակավ եմ մասնակցել, թեև քաջ գիտեմ՝ երկուսն էլ օտար երկրում գրավելու են ուշադրությունս: Այս միջոցին, որքան տնային գործերս ներում էին, ես զբաղված էի մի ընդարձակ թղթակցությամբ մեր գերդաստանի հետ: Ինձ թվում է, սիրելի մր. Կոպպերֆիլդ,– հարեց մրս. Միկաբրը (որ իր սովորությամբ՝ ում հետ էլ խոսեր, անպատճառ ինձ պիտի դիմեր),– ըստ իս արդեն ժամանակն է անցյալը մոռացության մեջ թաղելու. ժամանակն է, որ ազգականներս մր. Միկաբրին ձեռք մեկնեն, իսկ մր. Միկաբրն ազգականներիս ձեռք մեկնի... մի խոսքով... առյուծը գառի մոտ պառկի և իմ գերդաստանը մր. Միկաբրի հետ հաշտվի:

Ասացի, թե իմ կարծիքն էլ այդպես է:

– Ես գոնե բանի վրա այդպես եմ նայում, սիրելի մր. Կոպպերֆիլդ,– շարունակեց մրս. Միկաբրը:– Մինչ հայրիկիս ու մայրիկիս մոտ էի ապրում, հայրիկս որևէ խնդիր քննելիս սովոր էր հարցնել. «Տեսնենք Էմման ի՞նչ կասի»: Գիտեմ, հայրս իմ նկատմամբ միշտ կողմնապահ էր. սակայն ինձ ներելի է իմ սեփական կարծիքն ունենալ մր. Միկաբրի ու գերդաստանիս միջև միշտ տիրող սառցային ցրտության մասին, որքան էլ դա անհիմն լիներ:

– Հարկավ կարող եք ունենալ տիկին, և այդ բնական է,– նկատեց տատս:

– Իրոք բնական,– հաստատեց մրս. Միկաբրը:– Կարող եմ սխալվել և հավանական է, որ սխալվեմ. սակայն դարձյալ կարծիքս սա է, որ գերդաստանիս ու մր. Միկաբրի մինջև այնպիսի վիհ չէր բացվի, եթե ազգականներս չվախենային, թե իմ մարդը նրանց դրամական օգնությանը կդիմի: Անհնարին է չընդունել,– ավելացրեց մրս. Միկաբրը մի նրբամիտ ճարպկությամբ,– թե գերդաստանիս անդամներից մի քանիսը հենց սկզբից ենթադրել են, թե մր. Միկաբրը կպահանջի նրանց անունը գրված տեսնել... ոչ թե մեր մանկանց մկրտության մատյանի մեջ, այլ մուրհակների տակ:

Մրս. Միկաբրի այս սրամիտ գյուտը, որ իբր թե մինչև այժմ ոչ ոքի մտքով չէր անցել, կարծես զարմացրեց տատիկիս, որը հանկարծ վրա բերեց.

– Եթե ձեր ասածը ճշմարիտ էլ լինի, զարմանալու բան չկա:

– Դիցուկ թե չկա,– ասաց մրս. Միկաբրը,– բայց քանի որ մր. Միկաբրն արդեն վճռել է մինչև այժմ իրեն կաշկանդող դրամական շղթաները փշրել և մի նոր աշխարհ հեռանալ, ուր իր առատ ձիրքերի առջև ասպարեզ պիտի բացվի... այս կետը շատ կարևոր է, որովհետև մի ընդարձակ ասպարեզ է հարկավոր... ուստի ըստ իս, լավ կլիներ, որ այս առթիվ գերդաստանիս անդամներն առաջ գային, մի փառավոր խնջույք տային ու նրանց ավազը մր. Միկաբրի կենաց բաժակն առաջարկեր, իսկ մր. Միկաբրն իր մտքերը նրանց առջև պարզ հայտնելու առիթ գտներ:

– Սիրելիս,– ջերմությամբ ասաց մր. Միկաբրը,– հիմիկվանից կասեմ, որ եթե մտքերս մի այդպիսի ժողովի առջև պարզելու լինեմ, դրանք շատ խայթիչ կերևան նրանց. որովհետև ազգականներդ, բոլորը միասին առնված՝ լրբեր են, իսկ ջոկ-ջոկ՝ մի-մի անսիրտ սրիկա:

– Ո՛չ, Միկաբր,– ասաց մրս. Միկաբրը, գլուխը շարժելով:– Դու նրանց երբեք չես հասկացել, նրանք էլ քեզ չեն հասկացել:

Մր. Միկաբրը հազաց:

– Նրանք էլ քեզ չեն հասկացել,– կրկնեց մրս. Միկաբրը:– Գուցե չէին էլ կարող հասկանալ: Եթե այդպես է, նրանք թշվառ են, և ինձ կմնա ափսոսալ նրանց:– Շատ ցավում եմ, սիրելի Էմմա,– ասաց մր. Միկաբրը ավելի մեղմ եղանակով,– որ ինձ թույլ տվի մի քանի խոսք արտասանել, որոնք հեռվից անգամ կարող են փոքր-ինչ խիստ երևալ: Ես ուզում էի միայն ասել, թե պատրաստ եմ և առանց ազգականներիդ տեսնելու՝ մեկնել... կարճ ասած՝ առանց նրանց սառնաժպիտ «բարի ճանապարհը» լսելու. թե լավ եմ համարում իմ ազատ կամքով

Անգլիան թողնել, քան թե նրանց փութացուցիկ դրդմունքով։ Մյուս կողմից, սիրելիս, եթե նրանք հաճին նամակներիդ պատասխան տալ,– որ երկուսիս փորձառության նայելով՝ մի հրաշք կլիներ,– աստված չանի, որ ես ցանկությանդ արգելք լինեմ։

Գործն այսպես կարգադրելուց հետո՝ մր. Միկաբրը մրս. Միկաբրին ձեռք մեկնեց ու Տրեդլսի առջև դիզված թղթերին նայելով, ասաց, թե մեր կամքին է թողնում մեզ. այդպես էլ արեց հանդիսաբար։

– Սիրելի Կոպպերֆիլդ,– ասաց հետո Տրեդլսը մի այնպիսի գորովով, որից աչքերը կարմրեցին ու մազերն ամեն տեսակ ձևեր ստացան,– ներողություն չեմ խնդրում, որ քեզ անհանգիստ պիտի անեմ. գիտեմ այս գործը քեզ էլ կհետաքրքրի և տխուր մտքերդ կփարատի։ Հո հոգնած չե՞ս, ընկեր իմ...

– Ամենևին,– ասացի ես մի կարճատև լռությունից հետո։– Ամենից առաջ մեզ պետք է տատիս մասին մտածել։ Քեզ հայտնի է, թե որքան չարչարանք կրեց։

– Իրավ է, իրավ,– պատասխանեց Տրեդլսը։– Ո՞վ կարող է այդ մոռանալ։

– Բայց կարծես այդ էլ քիչ լիներ,– շարունակեցի ես։– Ահա երկու շաբաթ է, որ նոր վշտեր են հասել նրան։ Ամեն օր Լոնդոն է գնում։ Երբեմն շատ վաղ է դուրս գալիս և մինչև երեկո ուշանում։ Դեռ երեկ համարյա թե կես-գիշերին ետ եկավ, թեև առավոտյան ինձ հետ այստեղ պիտի գար։ Դու լավ գիտես, թե որքան նա ուրիշներին կարեկից է։ Սակայն չի ուզում ինձ ասել, թե իր նոր հոգսերի պատճառն ի՞նչ է։

Խոսելուս միջոցին տատս անշարժ ու գունատ նստած էր. վերջապես մի քանի կաթիլ արտասուք տեսա նրա խորշոմած երեսի վրա, և նա իր ձեռքն իմի վրա դրեց։

– Բան չկա, Տրոտ, բան չկա, էլ պրծա՛վ։ Շուտով կիմանաս։ Այժմ, Ագնես, եկ մեր գործով զբաղվենք։

– Արդարությունը վրաս հարկ է դնում ասելու,– սկսեց Տրեդլսը,– թե որքան էլ մր. Միկաբրը իր անձնական շահերի մասին անհոգ լինի, սակայն ուրիշների համար աշխատելիս վերին աստիճանի ջանասեր, անխոնջ է։ Նրա նման մարդ քիչ եմ տեսել։ Զարմանալի է այն եռանդը, այն քրտնալից մոլեգնությունը, որով գիշեր-ցերեկ խորասույզ էր լինում թղթերի ու հաշիվների քննության մեջ. էլ ի՞նչ ասեմ այն անթիվ նամակների մասին, որ ինձ գրում էր այստեղից մինչև մր. Ուիլֆիլդի տունը, շատ անգամ էլ սեղանի մի կողմից դեպի մյուսը, մինչ ինքն իմ դեմ էր նստած լինում, թեև մեզ իրար հետ բերանացի խոսելն ավելի հեշտ էր։

– Նամակնե՞ր,– գոչեց տատս։– Նա կարծեմ երազներն անգամ նամակով է տեսնում։

– Մր. Դիկն էլ հրաշքներ գործեց,– ասաց Տրեդլսը։– Հենց որ նա Հիպի վրա հսկելու պարտքը լրացրեց, մի պարտք, որ անօրինակ զգոնությամբ էր կատարում, մր. Ուիկֆիլդին սկսեց խնամել։ Մեզ օգնելու ժիր փույթն ու մեր գործին աջակցելու աշխույժը, որ ցույց էր տալիս մեկ թղթեր արտագրելով ու քաղվածքներ անելով, մեկ՝ բերելով, մեզ շատ նպաստեց։

– Դիկը շատ նշանավոր մարդ է,– գոչեց տատս,– և ես միշտ կրկնել եմ այդ։ Դու գիտես, Տրոտ։

– Քաղցր է ասել, միս Ուիկֆիլդ,– շարունակեց Տրեդլսը մի աննման զգուշությամբ,– որ ձեր բացակայության միջոցին մր. Ուիկֆիլդը շատ և շատ լավացել է։ Ազատվելով իրեն տանջող հրեշից ու տաժանելի երկյուղներից, այժմ մի ուրիշ մարդ է դարձել։ Մինչև անգամ ընդունակ է երբեմն ուշքն ու միտքը մի նյութի վրա ամփոփել. դրանով էր, որ մեզ օգնեց գործերի քննության միջոցին մի քանի կարևոր կետեր պարզեց, որ մենք ինքներս շատ կդժվարանայինք և կամ բնավ չէինք կարողանա պարզել։ Սակայն եթե բոլոր իմ դիտած հուսադիր պարագաները մի առ մի թվելու լինեմ, խոսքս երբեք չի վերջանա. լավ է՝ գործի արդյունքը ցույց տամ ձեզ։

Ակներև էր, որ բարի Տրեդլսը այդ բոլորը նրա համար ասաց, որ սիրտ առնենք, և Ագնեսն իր հոր անունը հանգիստ լսելու հնարավորություն ունենա։ Այնուամենայնիվ նրա ընթացքը դուր եկավ մեզ։

– Ահա,– ասաց Տրեդլսը, նայելով իր առջև դրված թղթերին։– Մենք մեր դրամների վիճակը քննեցինք, և նախ՝ առանց չար դիտավորության խառնակված և երկրորդ՝ գիտությամբ շփոթված ու խարդախված հաշիվները գտնելով, հայտնապես տեսանք, որ մր. Ուիկֆիլդը կարող է հենց այսօր պարտքերը վճարել և այս գործից բոլորովին մաքուր դուրս գալ։

– Փառք քեզ տեր,– գոչեց Ագնեսը սրտի խորքից։

– Սակայն,– շարունակեց Տրեդլսը,– ապրուստի համար մի այնպիսի չնչին գումար կմնա... գուցե մի քանի հարյուր ստեռլինգ... ենթադրելով, որ տունն էլ կծախվի... որ մր. Ուիկֆիլդը լավ կանի, եթե շարունակի իր գործը առաջ տանել։ Բարեկամները կարող են նրան խորհրդով օգնել, քանի որ այժմ նա բոլորովին ազատ է։ Դուք ինքներդ, միս Ուիկֆիլդ... Կոպպերֆիլդը... ես...

– Արդեն մտածել եմ դրա մասին,– ասաց Ագնեսը ինձ նայելով,– և զգում եմ, որ հարկավոր չէ այդպես անել, թեկուզ մեր բարեկամը կպահանջեր, որին այնքան պարտական եմ ու շնորհակալ։

– Պահանջելու իրավունք չունեմ,– նկատեց Տրեդլսը։– Միայն կարևոր համարեցի այդ կետը հիշել. ուրիշ ոչինչ։

– Շատ ուրախ եմ, եթե այդպես է,– ասաց Ագնեսը հաստատ կերպով,– որովհետև դա ինձ հույս և գրեթե վստահություն է ներշնչում, որ մենք լիովին համամիտ ենք։ Մր. Տրեդլս և մր. Տրոտուդ, իմ ազնիվ բարեկամներ, քանի որ հայրս ազատ է, և նրա պատիվն անարատ, էլ ի՞նչ կմնա ինձ փափագել։ Իմ մշտական ցանկությունն էր՝ տաժանելի հոգսերից վերջապես ազատված տեսնել նրան, իմ կյանքը նվիրել նրան և գեթ մասամբ փոխարինել այն հայրական գութն ու սերը, որ առատապես շնորհել է ինձ։ Տարիներից ի վեր փափագներիս գերագույն կետը այդ է եղել։ Միայն թե նա իր պարտքերից ու գործերից ազատվեր, այնուհետև ինձ համար մի ավելի մեծ երջանկություն չի լինի, քան մեր ապագա պետքերը ես ինքս հոգամ։

– Բայց միջոցների մասին, մտածե՞լ եք, Ագնես։

– Շատ անգամ, սիրելի Տրոտուդ, և հաջողության վրա վստահ եմ։ Այստեղ ինձ այնքան ճանաչում են և այնքան բարեկամ մարդիկ կան, որ կարող եմ վստահ լինել։ Միամիտ եղեք իմ մասին։ Մեր կարիքերը շատ մեծ չեն։ Եթե մեր սիրելի հին տունը վարձու տամ ու մի փոքրիկ դպրոց բանամ, թե՛ օգտակար, թե՛ երջանիկ կլինեմ։

Նրա զվարթ ու ջերմ ձայնին ականջ դնելիս, ես նախ այն սիրելի տունը հիշեցի և հետո իմ ամայացած տնակը, և սիրտս այնպես հուզվեց, որ ոչ մի բան չասացի։ Տրեդլսը զբաղված էր թղթերով։

– Այժմ ձեր կայքին գանք, միս Տրոտուդ,– ասաց նա։

– Շատ լավ,– ասաց տատս ու հառաչեց։– Դրա մասին ուրիշ բան չունեմ ասելու, միայն այս՝ եթե կայքս կորած է, կդիմանամ, եթե կորած չէ, ուրախությամբ ետ կառնեմ։

– Ձեր սկզբնական դրամագլուխը, կարծեմ ութ հազար ստեռլինգ էր, չէ՞, տիկին,– հարցրեց Տրեդլսը։

– Ճիշտ այդքան,– հաստատեց տատս։

– Այնինչ ես կարող եմ միայն հնգի հաշիվը տալ,– ասաց Տրեդլսը տխուր ձայնով։

– Հինգ հազա՞ր ստեռլինգի,– հարցրեց տատս անօրինակ սառնությամբ։

– Հինգ հազար ստեռլինգի,– ասաց Տրեդլսը։

– Նրա մոտ եղած ամբողջ գումարս էլ հենց այդքան էր,– ասաց տատս նույն սառնությամբ։– Երեք հազարը ես ինքս էի ետ առել։ Այդ երեքից մեկը, սիրելի Տրոտ, քեզ համար վճարեցի Դոկտորների Համայնքին. մյուս երկուսը մոտս է։ Մայր գումարը կորցնելուց հետո մնացորդի մասին լավ էի համարում ոչինչ չասել, այլ սև օրվա համար պահել։ Ուզում էի տեսնել, Տրոտ, թե փորձանքից ինչպե՞ս դուրս կգաս. և քո հարատև վստահությամբ, քո սեփական ջանքերով, քո անձնուրաց տոկունությամբ ազնվաբար դուրս եկար։ Դիկն էլ այդպես արեց... էլ հետս մի՛ խոսեք. նյարդերս փոքր-ինչ գրգռված են։

Ոչ ոք, սակայն, այդպիսի բան չէր կարծի ուղիղ նստած տատիս երեսին նայելով. զարմանալի էր նրա հանգիստ ինքնազսպումը։

– Ուրեմն կարող եմ շնորհավորել,– գոչեց Տրեդլսը զվարթերես ցնծությամբ,– որ ձեր ամբողջ դրամը գտնված է։

– Շնորհավորելու բան չկա,– բացականչեց տատս։– Հապա տեսնեմ, ի՞նչ կերպով, սըր։

– Կարծել էիք, թե մր. Ուիկֆիլդը ձեր փողը վա՞տ է գործ դրել,– հարցրեց Տրեդլսը։

– Անշուշտ,– ասաց տատս։– Այդ պատճառով էլ լռում էի։ Ագնես, ոչ մի խոսք։

– Եվ իրոք,– շարունակեց Տրեդլսը,– ձեր տոմսերը վաճառված էին ձեր իսկ տված իրավունքով։ Ավելորդ է ասել, թե ո՞վ է վաճառել և ո՞ւմ ստորագրությամբ։ Հետո այդ անզգամը հանդգնում է մր. Ուիկֆիլդին կեղծ թվանշաններով հավատացնել, թե փողերը գանձարանի պակասը լրացնելու և նեղ դրությունը պարտակելու համար են գործ դրված։ Մր. Ուիկֆիլդի միակ թերությունն այս է եղել, որ նա հոգեպես սրիկայից ընկճված լինելով, մի քանի անգամ ձեր դրամի տոկոսները ձեզ վճարում է, թեև համոզված, որ այդ դրամը գոյություն չունի։

– Եվ ի վերջո, բոլոր նախատինքն իր վրա առնում,– հարեց տատս։– Նա գրել էր ինձ մի անմիտ նամակ, ուր գողության ու անլուր ստորության մեջ էր մեղադրում իրեն։ Այնուհետև մի առավոտ ես նրա մոտ գնացի, ճրագ պահանջեցի և նամակն այրելով ասացի նրան, որ եթե մի օր իր պարտքն ինձ վճարելու հնարավորություն գտնի, թող վճարի, իսկ եթե ոչ՝ այդ մասին լռություն պահի՝ գոնե իր աղջկա սիրուն... Չհամարձակվեք ինձ բան ասել, թե չէ իսկույն կանհետանամ այստեղից։

Բոլորս էլ լուռ մնացինք։ Ագնեսը ձեռքերով երեսը ծածկեց։

– Ուրեմն, ազնիվ բարեկամ,– շարունակեց տատս,– դուք իրոք այդ սրիկայի ձեռքից դրամը խլեցի՞ք։

– Հարկավ,– պատասխանեց Տրեդլսը։– Մր. Միկաբրն այնպես սաստիկ պաշարեց նրան և նրա դեմ այնքան զորեղ ու անսպառ փաստեր ուներ, որ սրիկան չէր կարող փախուստ տալ։ Դիտելու արժանի է, որ Հիպը ոչ այնքան ագահությունից, որքան Կոպպերֆիլդին ատելուց էր հափշտակել դրամը։ Այդ մասին համոզված եմ։ Նա ինքն ինձ հայտնի կերպով այդպես ասաց։ Նա ասաց, թե պատրաստ էր՝ ինչ ասես զոհել, միայն թե կարենար մի վնաս և կամ զրկանք հասցնել Կոպպերֆիլդին։

– Տեսա՛ր,– ասաց տատս, հոնքերը կիտելով ու մի մտածկոտ հայացք ուղղելով Ագնեսի վրա։– Ո՞ւր կորավ նա այժմ։

– Չգիտեմ,– պատասխանեց Տրեդլսը։– Նա հեռացավ մոր հետ, որ անդադար լաց էր լինում, պաղատում էր ու ցուցմունք տալիս։ Նրանք Լոնդոն մեկնող գիշերվա կառքով Կենտըրբրին թողին։ Հիպի մասին ուրիշ ոչինչ չգիտեմ, բացի այն, որ հեռանալիս ինձ ու մր. Միկաբրին մի սաստիկ ատելություն ցույց տվեց, և ես նրան ասացի, թե պատվի տեղ եմ ընդունում այդ։

– Ի՞նչ ես կարծում, Տրեդլս, նա փող ունի՞,– հարցրի ես։

– Անշուշտ ունի,– պատասխանեց Տրեդլսը։– Հավաստի եմ, որ այս կամ այն եղանակով մի կլոր գումար թոցրած կլինի։ Սակայն կարծում եմ, Կոպպերֆիլդ, դու էլ կտեսնես, եթե նրա

ընթացքը դիտելու լինես, որ այդ գործը չարիք գործելուց չի փրկի նրան։ Նա մի մարմնացած կեղծավոր է, որ ինչ բանի էլ դիմելու լինի, ծուռ ճանապարհով կդիմի։ Նա դրանով է իրեն վարձատրում այն բռնազբոսության փոխարեն, որ դնում է ինքն իր վրա։ Նա սովոր է սողալով ձգտել իր չնչին նպատակներին և մեծացնել ամեն բան, որ հանդիպում է նրան ճամփի վրա. ուստի յուրաքանչյուր անցվոր, որքան էլ անմեղ լինի, նրան կասկածի և ատելության առիթ կտա։ Այս պատճառով նրա խոտորնակ ճանապարհը ավելի ոլոր-մոլոր կդառնա, մինչև անգամ եթե նա կասկածելու ոչ մի առիթ չգտնի։ Այդ գուշակությունն անելու համար բավական է նրա այստեղի վարմունքը աչքի անցկացնել։

– Նա մի վատթար հրեշ է,– ասաց տատս։

– Իրավ չգիտեմ,– նկատեց Տրեդլսը ուրախությամբ,– այս մարդուն պիտի նորից գովեմ։ Մենք ոչ մի բան գլուխ չէինք բերի, որ հիշատակության արժանի լիներ։ Եվ անհրաժեշտ է նկատի առնել, որ այս գործում մր. Միկաբրի առաջնորդը միմիայն արդարությունն է. չմոռանանք, թե որքան կարող էր Հիպից շահել, եթե կամենար լուռ մնալ։

– Ես էլ այդպես եմ կարծում,– նկատեցի ես։

– Ուրեմն ի՞նչ տանք նրան,– հարցրեց տատս։

– Այդ խնդիրը շոշափելուց առաջ,– ասաց Տրեդլսը փոքր-ինչ շփոթվելով,– հարկ եմ համարում խոստովանել, որ այս գործում, սկզբից մինչև վերջ ապօրինի գործում... սրա մեջ ամեն բան ապօրինի է... ստիպված եմ եղել զգուշության համար երկու կետ բաց թողնել. առաջին՝ մր. Միկաբրի մուրհակները, որ տվել է Հիպին կանխիկ առած ռոճիկի փոխարեն...

– Հարկավ, պետք է այդ բոլորը վճարել,– ասաց տատս։

– Այո՛, սակայն չգիտեմ, թե այդ մուրհակները ե՞րբ կներկայացնեն դատարանին և կամ թե այժմ որտե՞ղ են,– ասաց Տրեդլսը, աչքերը չռելով։– Վախենում եմ, չլինի թե մր. Միկաբրը՝ դեռ Անգլիայից չմեկնած՝ շարունակ ձերբակալվի իր պարտքերի համար։

– Մենք էլ շարունակ կազատենք նրան,– ասաց տատս։– Որքա՞ն է նրա ամբողջ պարտքը։

– Մր. Միկաբրը այդ բոլոր գործողությունները... նա գործողություն է անվանում այդ... մեկ-մեկ հիշատակել է իր ելևմտի մատյանում,– ասաց Տրեդլսը ժպտալով,– և նրա հաշվով՝ ընդհանուր գումարը մի հարյուր երեք ստեռլինգ ու հինգ շիլինգ է։

– Ուրեմն որքա՞ն տանք նրան, այդ գումարն էլ հաշվելով,– հարցրեց տատս։– Սիրելի Ագնես, ձեր և իմ բաժինների մասին հետո առանձին կխոսենք։ Ուրեմն որքա՞ն։ Հինգ հարյուր ստեռլի՞նգ։

Այդ պահին Տրեդլսն ու ես միաբերան ասացինք, թե պետք կլինի մր. Միկաբրին մի փոքրիկ գումար տալ, իսկ Հիպին տված մուրհակները հետզհետե վճարել՝ առանց նրա գիտության։ Հետո առաջարկեցինք նրա գերդաստանի ճանապարհի ծախսն ու պիտույքը հոգալ և բացի այդ՝ նրան մի հարյուր ստեռլինգ տալ և այդ կանխույթների փոխարեն մի պարտամուրհակ պահանջել նրանից, որպեսզի նա օրենքի առջև պատասխանատու համարի իրեն, որ նրա համար անշուշտ փրկարար կլինի։ Այս բոլորի վրա ես ավելացրի թե նրա բնավորության ու անցյալի նկատմամբ մի քանի կարևոր տեղեկություններ կտամ վստահելի մր. Պեգգոտիին ու սրան առանձին հարյուր ստեռլինգ կհանձնեմ, խնդրելով, որ իր հայեցողությամբ, այն էլ հետո, մաս-մաս վճարի իր ուղեկցին։ Միևնույն ժամանակ հանձն առա տրամադրել մր. Միկաբրին հոգուտ մր. Պեգգոտիի և ձկնորսի պատմությունից այնքան բան հաղորդել նրան, ինչքան որ անհրաժեշտ էր երկուսի միջև մի օգտակար մտերմություն հաստատելու համար։ Բոլորն էլ առաջարկներս ջերմ-ջերմ ընդունեցին, և կավելացնեմ, թե երկու կողմն էլ, որոնց այս ամենը վերաբերում էր, փոքր-ինչ հետո կատարյալ սիրով ու հաճությամբ միևնույնն արին։

Տեսնելով որ Տրեդլսը դարձյալ մի անգամ տատիս վրա անհանգիստ նայեց, հիշեցրի նրան, թե մտադիր էր երկու կետի մասին խոսել։

– Հուսամ, որ դու ու տատդ կներեք ինձ, Կոպպերֆիլդ. . . ասաց Տրեդլսը վարանելով,– եթե մի շատ փափուկ առարկա շոշափեմ, որ ստիպված եմ, սակայն, շոշափել. . . Այն օրը, երբ մր. Միկաբրը հանդես էր ելել իր կարևոր ամբաստանությամբ, Ուրիաս Հիպը մի սպառնալիք ակնարկ արեց. . . տատիդ ամուսնու մասին։

Տատս առաջվա պես անշարժ և կարծես թե հանգիստ նստած՝ հաստատական նշան արեց։

– Գուցե մի հանդուգն հանաք էր,– շարունակեց Տրեդլսը։

– Ոչ,– պատասխանեց տատս։

– Ուրեմն. . . ներեցեք. . . մի այդպիսի անձ իրոք կա՞ր,– ասաց Տրեդլսը,– այն էլ լիովին Հիպի ազդեցության ներքո գտնվո՞ղ։

– Այո՛, սիրելի բարեկամ,– հաստատեց տատս։

Տրեդլսը շվարած դեմքով սկսեց բացատրել, թե նա գործը կարգադրելիս, բնավ չի կարող այդ կետը շոշափել, ինչպես որ անկարող է և մր. Միկաբրի մուրհակները մեջբերել. թե մենք արդեն Ուրիաս Հիպին բաց ենք թողել, և թե այդ մարդը երբ էլ ուզենա, հնար կունենա մեզնից մեկին կամ բոլորիս վնասել։

Տատս շարունակում էր հանգիստ մնալ. բայց աչքերից արտասուքի մի երկու անզուսպ կաթիլ դուրս սահելով, այտերի վրա գլորվեցին։

– Իրավ այդպես է,– ասաց նա։– Լավ եք անում, որ հիշեցնում եք այդ մասին։

– Արդյոք չէի՞նք կարող. . . ես կամ Կոպպերֆիլդը. . . մի բան անել,– հարցրեց մեղմությամբ Տրեդլսը։

– Ոչ մի բան պետք չի անել,– ասաց տատս։– Շատ և շատ շնորհակալ եմ ձեզնից։ Այն սպառնալիքը մի գրոշ չարժի, սիրելի Տրոտ։ Կանչեցեք այստեղ մր. Միկաբրին ու տիկնոջը։ Էլ ոչ մի խոսք չասեք ինձ։

Այս ասելով տատս զգեստի ծալքերը շտկեց և առաջվա պես ուղիղ նստեց՝ աչքերը դռանը սևեռած։

– Այսպես ուրեմն, մր. և մրս. Միկաբր,– ասաց նա, երբ որ նրանք ներս մտան,– ձեր գաղթելու գործը մենք արդեն քննեցինք և ներողություն ենք խնդրում, որ այսքան ժամանակ ձեզ սպասել տվինք։ Ահա թե ինչ ենք առաջարկում ձեզ։

Տատս մեր որոշումները բացատրեց ի մեծ ուրախություն գերդաստանի. . . բոլոր երեխաներն էլ ներկա էին. . . և մր. Միկաբրի՝ դրամական գործողություններ կատարելու սերը հանկարծ այնպես բորբոքվեց, որ նույն րոպեին նա դուրս վազեց դրվագավոր թղթեր գնելու, որպեսզի իսկույն ևեթ մուրհակներ գրի։ Սակայն այդ ոգևորությունը մի արագահաս հարված ստացավ. հինգ րոպե չանցած՝ նա ոստիկանական ծառայողի ուղեկցությամբ իբրև կալանավոր ետ եկավ և արտասվելով ազդարարեց, թե ամեն բան կորած է։ Արդեն սպասում էինք այդ դեպքին, որի հեղինակն անտարակույս Ուրիաս Հիպն էր, և գումարն իսկույն հատուցեցինք։ Դարձյալ հինգ րոպե անցնելուց հետո՝ մր. Միկաբրն արդեն սեղանի առաջ նստած՝ դրոշմավոր թղթեր էր գրում մի այնպիսի լուսափայլ դեմքով ու զմայլանքով, որի նմանը ուրիշ ոչ մի բանից չէր կարող զգալ, բացի մուրհակներ գրելուց և կամ թե պունչ պատրաստելուց։ Տեսնել նրան, թե ինչպես տոմսերը հրճվանքով էր շփում և արվեստագետի հաճույքով աչքի ծայրով նրանց դիտում, ապա հուշատետրի մեջ թվեր ու գումարներ նշանակում և այդ բոլորն ավարտելուց հետո՝ գոհ-գոհ նայում իր գործին, դրա գերազանց արժեքին հավատալով, իրավ որ շատ զվարճալի էր։

– Դե, մր. Միկաբր,– ասաց տատս մի որոշ ժամանակ նրան լուռումունջ նայելուց հետո,– եթե ինձ ներեք համեստ կարծիքս հայտնելու, այսուհետև ամենից լավն այն կլինի, որ այդպիսի բաներ շարադրելուց մի անգամ ընդմիշտ հրաժարվեք։

– Տիկին, հրաժարվելով հրաժարվում եմ,– գոչեց մր. Միկաբրը,– և պատրաստ եմ այս երդումս ապագայի կուսական էջում արձանագրել։ Թող մրս. Միկաբրն էլ երդմանս վկա լինի։ Ես վստահ եմ,– հանդիսավոր ասաց մր. Միկաբրը,– որ իմ որդի Ուիլկինսը մինչև իր վերջին շունչը չի մոռանա, որ նրա համար անհամեմատ լավ կլինի իր ձեռքը կրակի վրա բռնել, քան թե այն օձերին դիպչել, որոնք իր թշվառ հոր կյանքի արյունը թունավորել են։

Խոր հուզված և մի վայրկյանում հուսահատության արձան դարձած մր. Միկաբրը գարշությամբ նայեց օձերին (թեև դրանց համար ունեցած սերը դեռ նշմարվում էր իր աչքերում), ծալեց ու գրպանը դրեց։

Դրանով վերջացան այդ երեկոյան գործերը։ Բոլորս էլ աշխատանքից ու հոգսերից հոգնած էինք։ Տատս ու ես որոշեցինք առավոտյան Լոնդոն վերադառնալ։ Նույնպես որոշվեց, որ մր. Միկաբրը իր բոլոր կահ-կարասիքը վաճառելուց հետո՝ ընտանիքով հանդերձ մեզ մոտ գա, որ Տրեդլսը մր. Ուիկֆիլդի գործերը ըստ կարելվույն շուտով կարգի դնի, իսկ Ագնեսը մինչև այն ժամանակ մեզ մոտ կբնակվի, Լոնդոնում։ Գիշերեցինք հին տանը, որ Հիպերի ներկայությունից ազատվելով՝ ասես թե ժանտախտից մաքրվել էր, և ես քնեցի իմ սենյակում, իբրև մի նավաբեկ ուղևոր։

Հետևյալ օրը տատիս տունն իջանք, ոչ թե իմ մոտ, և երբ որ քնելուց առաջ նա ու ես մենակ մնացինք, ինչպես երբեմն, տատս ասաց.

– Տրոտ, ուզո՞ւմ ես իմանալ, թե վերջին օրերս ի՞նչ հոգսեր ունեի։

– Հարկավ ուզում եմ, տատիկ։ Ես շատ թշվառ կլինեի, եթե գեթ այժմ չկարենայի ձեր հոգսերին կամ վշտերին մասնակցել։

– Դու ինքդ արդեն բավական վշտեր կրեցիր, որդի,– ասաց տատս գորովանքով։– Ի՞նչ հարկ կար, որ իմ չնչին տառապանքն էլ ավելացնեի դրանց վրա։ Քեզնից բան ծածկելու ուրիշ շարժառիթ չունեի, Տրոտ։

– Լավ գիտեմ այդ, բայց և այնպես՝ պատմեցեք։

– Կցանկանայի՞ր վաղն ինձ հետ կառքով պտույտ անել,– հարցրեց տատս։

– Հոժարությամբ։

– Առավոտյան ժամը իննին,– ճշտեց նա։– Այն ժամանակ կպատմեմ քեզ։

Ժամը իննին արդեն գնում էինք դեպի Լոնդոն։ Մի քանի փողոցներ անցնելուց հետո՝ մի ահագին հիվանդանոցի մոտեցանք։ Դռան առջև մի հասարակ դագաղակիր կառք էր կանգնած։ Կառապանը ճանաչեց տատիս և նրա ակնարկով առաջ քշեց։ Մենք էլ հետևից գնացինք։

– Իմացա՞ր այժմ, սիրելի Տրոտ,– ասաց տատս։– Մեռավ պրծավ։

– Հիվանդանոցո՞ւմ։

– Այո՛։

Տատս անշարժ նստած էր կողքիս, բայց դարձյալ նրա այտերի վրա ներքին հույզը մատնող արտասուքի կաթիլներ նշմարեցի։

– Առաջ էլ մի անգամ այդտեղ էր,– ասաց տատս։– Վաղուց արդեն հիվանդ էր... քայքայված ու ջարդված։ Վերջին անգամ հիվանդանոցում պառկելիս պատվիրել էր, որ ինձ կանչեն։ Արդեն շատ էր զղջացել... շա՛տ։

– Եվ դուք, անշուշտ, գնացիք։

– Այո՛, գնացի, և շատ անգամ։

– Եվ նա հոգին ավանդեց մեր Կենտըրբրրի գնալուց մի գիշեր առա՞ջ։

Տատս գլխով հաստատական նշան արեց։

– Այժմ ոչ ոք չի վնասի նրան,– ասաց նա։– Այն սպառնալիքը դատարկ բան էր։

Քաղաքից դուրս եկանք և Հորնսիի գերեզմանոցը մտանք։

– Այստեղ ավելի հանգստություն կունենա, քան փողոցներում,– ասաց տատս։– Այստեղ էլ ծնվել էր։

Կառքից իջանք և անշուք դագաղին հետևեցինք մինչև մի որոշ անկյուն, որ լավ հիշում եմ։ Այնտեղ էլ թաղման կարգը կատարվեց. . .

– Այսօր մեր ամուսնության երեսունվեցերորդ տարեդարձն է, որդյակ իմ,– ասաց տատս, երբ որ նորից կառք նստեցինք։– Ես էլ մի օր ամուսին էի։ Ներիր ամենքիս, ո՛վ աստված։

Երկար ժամանակ լուռ էինք. տատս իմ ձեռքից բռնել էր։ Վերջապես նա լաց եղավ և ասաց.

– Շատ գեղեցիկ էր, երբ ես նրան մարդու գնացի, բայց հետո սաստիկ փոխվեց։

Այդ հուզմունքը կարճատև էր։ Սիրտն արտասուքով թեթևացնելուց հետո՝ տատս հանգստացավ, մինչև անգամ զվարթացավ և ասաց, թե իր նյարդերը փոքր-ինչ թուլացել են. այդ որ չլիներ, նա թույլ չէր տա, որ իր աչքերից արտասուք ցայտի։ Ողորմյա մեզ, ո՛վ աստված։

Վերադարձանք Հայգեթ, ուր գտանք մր. Միկաբրի հետևյալ նամակն՝ առավոտյան փոստով եկած.

«Կենտըրբրրի,

ուրբաթ։

Մեծարգո տիկին և Կոպպերֆիլդ.

Ավետյաց երանելի երկիրը, որ սկսել էր հորիզոնի վրա երևալ, արդեն սև մեգերով քողարկվել է և ընդմիշտ ծածկվել այն բազմաչարչար թշվառի աչքից, որի կորուստը անդարձ է։

Ուեսմինստրի Արքունի դատարանը (ըստ հրամանի Նորին Մեծության) մի երկրորդ արգելման գիր արձակեց՝ Հիպի պահանջմամբ **Միկաբրի** դեմ, և պարտապանն արդեն ոստիկանի ճանկերումն է։

Պատերազմի ժամը վերջին
Արդ հասել է. չար թշնամին
Սպառնում է ինձ շղթա, զրկանք,
Եվ գերություն, և անարգանք...

Այս բոլորից հետո էլ ապրելու հնար չկա (որովհետև մարդս կարող է միայն մինչև մի որոշ աստիճան իր ցավերին դիմանալ – ոչ ավելի), և ասպարեզս վերջացել է։ Տե՛ր ընդ ձեզ, տե՛ր ընդ ձեզ։ Գուցե մի օր մի ուղևոր, հետաքրքրությունից, հուսամ և մարդասիրությունից դրդվելով, այս քաղաքի պարտապաններին հատկացված բանտն այցելի և խոր մտածության նյութ գտնի, երբ որ կարդա՝ բանտի ժանգոտ մեխով փորագրված՝

այս անշուք սկզբնատառերը՝

Ու. Մ.

Հ.Գ. Նամակս բաց եմ անում ձեզ հայտնելու, որ բոլորիս բարեկամ մր. Թոմաս Տրեդլսը (նա փառք աստծո, ողջ առողջ է) ազնվամիտ մրս. Տրոտուդի վեհ անունից թե՛ պարտքերս և թե՛ դատական ծախքերս արդեն վճարեց, և որ ես ու գերդաստանս երկրային երջանկության ամենաբարձր կատարի վրա ենք»։

ԺԵ. ԳԼՈՒԽ
Մրրիկ

Այժմ մոտենում եմ կյանքումս պատահած մի դեպքի, որ այնպես անջնջելի, այնպես ահեղ է և հազար տեսակ թելերով այն աստիճան սերտ է կապված նախորդ էջերի նյութի հետ, որ պատմությանս հենց սկզբից նա իմ առջև հարթ հավասար դաշտում կանգնած մի վիթխարի աշտարակ է պատկերացել, որին ինչքան մոտենում էի, այնքան ավելի էր աճում, նույնիսկ մանկությանս անցքերի վրա մի չարաշուք ստվեր գցելով։

Այդ դեպքից հետո տարիներ անցան, բայց նա դարձյալ երևում էր երազներիս մեջ։ Ես անկողնուց ցատկում էի այնպես սաստիկ տագնապած, որ ասես թե նրա կատաղությունը գիշերվա ժամին էլ մռնչում էր իմ անդորրիկ սենյակում։ Այժմ անգամ այդ դեպքից երազներս վրդովվում են, թեև անորոշ և ավելի երկար ընդհատումներով։ Այդ դեպքն ու մոլեգին հողմը և կամ նույնիսկ «ծովափ» բառը մտքիս մեջ այնքան հարակից են, որ մեկի գաղափարն անհրաժեշտ կերպով մյուսինն է արթնացնում։ Կփորձեմ ճիշտ այնպես նկարագրել այդ դեպքը, ինչպես որ ներկայանում է աչքիս առջև։ Ես ոչ միայն հիշում են նրան, այլև տեսնում, որովհետև նորից է կատարվում իմ առջև։

Գաղթականների նավի մեկնելու օրն արագ-արագ մոտենում էր։ Պառավ դայակս, որ ինձ տեսնելով քիչ մնաց ուշաթափվեր, Լոնդոն էր եկել։ Ես ամեն օր գնում էի նրա մոտ և եղբոր մոտ, ինչպես և Միկաբրները (նրանք ակներև աշխատում էին մտերմանալ իրար հետ), սակայն երբեք չէի տեսնում Էմլիին։

Մի երեկո, մեկնելու օրից քիչ առաջ, Պեգգոտին, ես ու նրա եղբայրը միասին էինք։ Խոսք բացվեց Հեմի մասին։ Պեգգոտին պատմեց, թե ինչպես Հեմը սրտաշարժ հրաժեշտ առավ նրանից, թե ինչպես վերջերս Հեմը հանգիստ ու քաջ էր, թեև հենց այդ միջոցին նրա սիրտը, դայակիս ասելով, ավելի շատ էր կեղեքված։ Բարի պառավը չէր կշտանում այդ նյութի մասին խոսելուց, և մենք նույնքան նրա պատմությանը ուշադիր էինք, որքան նա ոգևորված էր պատմելիս։

Տատս ու ես այդ միջոցին երկու տնակները դատարկել էինք. ես մտադիր էի ճամփորդել, իսկ տատս որոշել էր Դուվրի տունը տեղափոխվել։ Առժանակ Կովընտ Գարդընի մոտերքումն էինք մի բնակարան վարձել։ Վերոհիշյալ երեկոյան խոսակցությունից հետո՝ մինչ ես տուն էի վերադառնում այն բանի մասին մտածելով, ինչ որ պատահել էր Յարմաութում Հեմի և իմ վերջին տեսակցության միջոցին, հանկարծ սկսեցի հարցնել ինձ – արդյոք լավ չի՞ լինի՝ փոխանակ նավի մեկնելու ժամին մր. Պեգգոտիին տալու այն նամակը, որ մտադիր էի Էմլիին գրել, այժմ գրել և անմիջապես իրեն ուղարկել։ Նամակս ստանալով գուցե ուզենա հրաժեշտի ողջույն հասցնել իր տարաբախտ նշանածին, ասում էի ես։ Անհրաժեշտ էր, որևէ առիթ տալ նրան։

Այս պատճառով հենց նույն գիշերը նստեցի գրելու և գրեցի, թե տեսել եմ Հեմին, և նա ինձ հատուկ խնդրել է հայտնել նրան (Էմլիին) այն բոլորը, ինչ որ արդեն պատմված է իր տեղում, նույնը ճշտությամբ կրկնեցի. բան ավելացնելու հարկ չկար, իրավունք էլ չունեի։ Հեմի խորին հավատարմությունն ու բարությունը ոչ մի սեթևեթանքի կարոտ չէր։ Մի տոմսակ էր մր. Պեգգոտիին գրեցի, խնդրելով, որ նամակը Էմլիին հանձնի, և ծրարները տանելու կարգադրություն անելուց հետո՝ անկողին մտա համարյա թե արշալույսին։

Շատ ուժատ լինելուս և արդեն արևի ծագելուց հետո քուն մտնելու պատճառով բավական ուշ վերկացա, սակայն առանց կազդուրվելու։ Զարթնեցի տատիս լռիկ ներկայությունից սնարիս մոտ. դեռ քնիս մեջ զգացել էի, որ նա ներկա է։ Կարծեմ ամեն մարդ այդպիսի բան զգացած կլինի։

– Սիրելի Տրոտ,– ասաց նա, երբ որ աչքերս բացի,– չէի կամենում քունդ վրդովել։ Մր. Պեգգոտին այստեղ է, կանչե՞մ նրան։

Խնդրեցի կանչել, և մր. Պեգգոտին ներս մտավ։

– Մաստր Դեվի,– ասաց նա աջս սեղմելով,– հանձնեցի Էմլիին ձեր նամակը, սըր, և նա այս տոմսակը գրեց, խնդրելով, որ կարդաք և եթե մեջը մի ավերող բան չգտնեք, շնորհ անեք մեր Հեմին հասցնել։

– Իսկ դուք կարդացե՞լ եք,– հարցրի ես։

Նա տրտմությամբ գլուխը կախեց։ Բացի նամակը ու հետևյալը կարդացի.

«Ստացա ձեր պատգամը։ Օ՜հ, ի՞նչ գրեմ ձեզ այդքան բարության և մարդասիրության փոխարեն շնորհակալություն հայտնելու համար։

Ձեր պատվիրած նամակն ամուր սեղմել եմ սրտիս։ Այդ նամակի խոսքերը մինչև իմ վերջին շունչը պիտի պահեմ։ Դրանք սուր-սուր փշեր են, բայց և քաղցր, բարերար փշեր։ Ես դրանց վրա աղոթք արի, և ինչպես ջե՜րմ։ Երբ տեսնում եմ, թե դուք ի՞նչ եք, մեր ապերն ի՞նչ է, հասկանում եմ, թե ինքն աստված ի՞նչ պիտի լինի, և դիմում եմ նրա գթության՝ արդեն առանց երկյուղի։

Հավիտյան մնաս բարով, իմ անգին, իմ անձկալի բարեկամ։ Եթե այն աշխարհում ներողության արժանանամ, գուցե երեխայի պես մաքուր զարթնեմ ու վերստին քեզ մոտենամ։ Անչափ շնորհակալ եմ, և թող աստված օրհնի քեզ։ Մնաս բարով, միշտ ողջ»։

Ահա դա էր արտասուքով թրջված նամակը։

– Իրավունք կտա՞ք, մաստր Դեվի, ասել նրան, թե նամակի մեջ անպատեհ բան չեք գտնում, և բարի կլինե՞ք Հեմին հանձնել,– հարցրեց մր. Պեգգոտին։

– Անշուշտ,– ասացի ես,– միայն թե...

– Ի՞նչ կհրամայեք, մաստր Դեվի։

– Լավ կլինի, որ ես ինքս Յարմաութ գնամ։ Ես կերթամ և դեռ ձեր նավի մեկնելուց առաջ ետ կգամ։ Միտքս շարունակ նրանով է զբաղված. խեղճն այնքան մենակ է։ Եթե կարենամ նամակը նրան հասցնել և ձեզ հնար տալ հենց նավի մեկնելու ժամին աղջկան ասելու, որ Հեմը նամակն ընդունեց,– երկուսն էլ շատ կսփոփվեն։ Ես այս պատվական տղային իր պատվերը կատարելու հաստատ խոսք էի տվել, և կցանկանայի լրիվ կատարել։ Յարմաութ գնալը ոչինչ բան է։ Չէ՞ որ արդեն հանգիստ չունեմ. լավ է շարժման մեջ լինեմ։ Հենց այս երեկո կերթամ։

Մր. Պեգգոտին թեև փորձեց տարահամոզել ինձ, բայց ես տեսա, որ նա գնալուս հավան է, և այդ արդեն բավական էր, որ որոշումս ավելի ամրանա, չնայելով, որ ամրացնելու պետք չկար։ Իմ խնդրանքով նա գնաց կայարան՝ ինձ համար դիլիժանսի տեղ վարձելու, և երեկոյան ես դարձյալ կտրում էի այն ճանապարհը, որ առաջ էլ այնքան անցել էի շատ տարբեր պարագաներում։

– Ի՜նչ տարօրինակ երկինք է,– ասացի ես կառապանին հենց առաջին իջևանում։– Այսպիսի բան դեռ չէի տեսել։

– Ես էլ չեմ հիշում, որ տեսած լինեմ,– պատասխանեց կառապանը։– Դա մրրիկի նշան է, սըր։ Վախենում եմ, որ այժմ ծովի վրա մեծ փորձանքներ կպատահեն։

Սևաթույր և կարծես մասամբ թաց փայտի գորշ ծխով ներկված ամպերը շուտ-շուտ ու խառնաշփոթ սլանում էին և նրանց պես-պես կույտերը դիզվում էին իրար վրա, ահագին սարեր ու սարերի մեջ անդնդախոր ճեղքեր կազմելով. իսկ լուսինը, կարծես թե բնության օրենքների իրարանցումից սարսափած և իր շաղվից մոլորված՝ գահավեժ ընկնում էր այդ վիհերի մեջ։ Ամբողջ օրը քամին փչում էր, սակայն այժմ նրա մռնչյունը սաստկացել էր, ու բնությունը՝ զորացել։

Գիշերը վրա հասավ, և մութ ամպերը խտանալով, ամբողջ երկինքը պատեցին. քամին սկսեց ավելի կատաղել։ Նա այնպես սաստիկ էր փչում, որ ձիերը հազիվ էին կարողանում նրա դեմ գնալ։ Շատ անգամ գիշերային խավարի մեջ (արդեն սեպտեմբերի վերջին քառորդն էր. գիշերները կարճ չէին) առջևի ձիերը գլուխները շուռ էին տալիս և հանկարծ կանգնում. ամեն րոպե սպասում էինք, թե դիլիժանսը շուռ կգա։ Մրրկածուփ անձրևի տարափը մերթ ընդ մերթ պողպատե սլաքներով հարվածում էր, և մենք մի պարիսպ կամ ծառ գտնեինք թե չէ, շտապում էինք պատսպարվել, որովհետև այդ հարվածների ուժգնության դեմ մաքառելու հնար չկար։

Լուսադեմին հողմը սկսեց ավելի ահեղ մռնչալ։ Ես եղել էի Յարմաութում փոթորիկների ժամանակ, երբ նավաստիների ասելով, հողմը ռմբակոծում էր. բայց այժմյան որոտման պես սոսկալի բան դեռ չէի լսել։ Իփսուիչի կայարանը շատ ուշ հասանք. Լոնդոնից տասը մղոն դենը յուրաքանչյուր քայլափոխը ստիպված էինք կռվելով անել։ Շուկայում մեծ բազմություն կար. մարդիկ տանիքների ու ծխնելույզների փուլ գալուց վախենալով, արդեն կես-գիշերին էին վեր կացել։ Կառքի ձիերը փոխելու ժամանակ իջևանի բակում հավաքված մարդիկ մեզ պատմում էին, թե քամին եկեղեցու աշտարակից թիթեղի ահագին թերթեր է պոկել և փողոցի մեջտեղը շպրտել։ Մյուսներն ասում էին, եկվոր գեղջուկների հաղորդածը կրկնելով, թե քամին վիթխարի ծառեր է խլել արմատից, դեսուդեն ձգել ճանապարհի ու դաշտի վրա։ Սակայն փոթորիկը դեռ չէր մեղմանում, այլ գնալով սաստկանում էր։

Երբ որ սկսեցինք ծովին մոտենալ, որտեղից որ հողմը փչում էր, նրա բռնությունն արդեն սարսափելի էր։ Դեռ ծովը չտեսած՝ նրա աղի փրփուրն արդեն շուրթերով զգում էինք և նրա սրսկումից թրջվել էինք։ Ջուրը մղոնների տարածությամբ Յարմաութի տափարակը ծածկել էր, ամեն մի թումբ ու պատվար պատռելով, հեղեղի պես մեր դեմ էր հորդում։ Իսկ երբ ծովի տեսարանը բացվեց, նրա կոհակներն այնպես էին լեռնանում երերածուփ անդունդից, որ կասեիր, թե հեռավոր ափի աշտարակներ ու բուրգեր լինեին։ Երբ վերջապես քաղաք մտանք, անձրևակոծ մազերով, մարդիկ դռներից դուրս էին նայում ու զարմանում, որ մեր դիլիժանսն այդպիսի ահեղ գիշեր է անցկացրել ճամփի վրա։

Ես հին պանդոկն իջա և հետո ծովը դիտելու գնացի։ Ավազով, ծովասիզով ու փրփուրով ծածկված փողոցում ամեն մի քայլում գայթում էի. կտուրներից ընկնող կղմինդրներն սպառնում էին գլուխս ջախջախել. անկյուններում ստիպված էի մարդկանց փարվել, որ քամու հոսանքից չտարվեմ։ Ծովափին մոտենալիս ոչ միայն նավաստիներ տեսա, այլև բնակիչների մեծ մասը՝ տների մոտ ու պատերի տակ հավաքված, ոմանք փոթորկի դեմ խիզախելով, մերթընդմերթ ծովափին նայելու էին դուրս գալիս, բայց և իսկույն հողմահալած ետ փախչում։

Միացա այդ խմբերին։ Տառեխ և կամ ոստրե բռնելու համար ծով ելած ձկնորսների կանայք լաց էին լինում. հավանական է, որ այդ մարդիկ արդեն ընկղմված լինեին։ Ալևոր նավաստիները, ծովի երեսից դեպի երկինք նայելով, գլուխները շարժում էին և իրար հետ փսփսում. նավատերերը գրգռված էին ու հուզված. մանուկները մեծերի շուրջն էին խռնվում և ուշի-ուշով նրանց երեսին մտիկ անում. ամենաքաջ նավաստիներն անգամ այլայլված ու շփոթված էին, մինչ պարսպի հետևից դիտակներով դիտում էին ծովը, հենց իմանաս մի թշնամու սպասելով։

Երբ, չնայած կուրացուցիչ հողմին, օդում թռչող ավազին ու քարերին, հնար էի գտնում ծովի կողմը նայելու, նրա պատկերը զարհուրանք էր պատճառում ինձ։ Իրար հրող լեռնակուտակ

ալիքների թավալվելը և սոսկալի բարձրունքից եզերքի վրա գրոհ տալն ու փշրվելը տեսնելիս՝ կարելի էր կարծել, թե նրանցից մեկն անգամ հերիք է, որ քաղաքը կլանի: Խուլ գոռումով ետ նահանջող ալիքները այնպիսի խոր փոսեր էին թողնում ափի մեջ, որ հենց իմանաս մտադիր են ական փորել գետնի տակ: Երբ փրփրադեզ կոհակներից մեկը որոտաձայն խորտակվում էր՝ դեռ եզերքին չհասած, նրա յուրաքանչյուր բեկորը կարծես թե ամբողջ ուժով մելեգնում էր և իսկույն մյուսների հետ միանում մի նոր հրեշ կազմելու համար: Շարժական լեռները դաշտանում էին, շարժական դաշտերը՝ լեռնանում, և նրանց վրա հանկարծ որևէ ճայ էր երևան գալիս: Ջրակույտի սաստկաշառաչ հարվածներից ծովեզերքը դղրդում ու դողում էր: Ամեն մի ալիք գոռալով խուժում էր մյուսի վրա, նրա ձևը փոխում, ինքն էլ իսկույն մեկ ուրիշի տեղի տալիս: Հորիզոնի անգո ափն իր աշտարակներով ու բուրգերով մեկ բարձրանում էր, մեկ իջնում. հոծ ամպերն արագավազ սլանում էին: Կարելի էր ասել, թե ամբողջ բնությունն ապստամբվել և ինքն իրեն կեղեքում է:

Այդ նշանավոր ալեկոծությունը դիտելու համար ծովափ հավաքված ամբոխի մեջ Հեմին չգտնելով, ես նրա տնակը գնացի: Դուռը փակ էր, բաց անող չկար: Այնուհետև ոլոր-մոլոր շավիղներով նրա գործարանը գնացի: Այնտեղ ասացին, թե նա Լոուըստոֆտ է կանչվել մի վնասված նավ նորոգելու, որ միայն նա կարող էր նորոգել, և մյուս առավոտյան ետ կգա:

Իմ պանդոկը վերադարձա, երեսս լվացի, հանվեցի և ուզում էի քնել, բայց իզուր. երեկոյան ժամը հինգն էր: Սեղանատուն իջա: Նոր էի նստել վառարանի առջև, երբ սպասավորը կրակն արծարծելու պատրվակով ներս մտաց ու սկսեց բաներ պատմել: Նա ասաց, թե ծովափից միայն մի քանի մղոն հեռու երկու ածխակիր նավեր են սուզվել՝ միջի բոլոր նավաստիներով ու բեռով, իսկ մյուս նավերը եզերքից հեռու մնալու ճիգ են թափում:

– Եթե այս գիշերն էլ երեկվա գիշերվա պես պիտի լինի, թող աստված հասնի այդ նավերին,– ասաց նա:

Սիրտս ընկճված էր, շատ տխուր էի. Հեմի բացակայությունն ինձ տանջում էր: Վերջին դեպքերը չարաչար ազդել էին վրաս, և փոթորիկը շփոթել էր ինձ: Մտքերիս ու հիշատակներիս խառնվելուց ժամանակի ու տարածության պարզ ըմբռնումը կորցրել էի. և եթե փողոցում մեկին տեսնեի, որ այդ միջոցին իմացածիս նայելով, անշուշտ, Լոնդոնում պիտի գտնվեր, չէի զարմանա: Մի տարօրինակ ապշություն էր տիրել ինձ. այնուամենայնիվ միտքս շրջակայքի դեպքերով էր զբաղված, որոնք շատ որոշ էին պատկերանում աչքիս առջև:

Այս հոգեկան դրությանս մեջ սպասավորի վշտագին պատմությունը նավերի մասին Հեմի պատճառով զգացած տագնապս սաստկացրեց: Երկյուղս, թե նա Լոուըստոֆտից ծովով մեկնած ու կորած կլինի, համոզման չափ հաստատ էր: Տագնապս այնպես սաստկացավ, որ որոշեցի մի անգամ էլ ճաշից առաջ գործարանը գնալ և նավ շինողին հարցնել, թե արդյոք հավանական չի՞ համարում, որ Հեմը կուզենար ծովով ետ գալ: Եթե նա կարծիքս գեթ փոքր-ինչ հիմնավոր գտներ, ես մտադիր էի անմիջապես Լոուըստոֆտ շտապել ու ցամաքի ճամփով ետ բերել Հեմին:

Շտապով ճաշեցի և նավաշինության գավիթը գնացի: Արդեն ժամանակն էր՝ նավագործը լապտերը ձեռքին դռները փակելու վրա էր: Հարցումս լսելով, նա ծիծաղեց ու ասաց, թե վախենալու կարիք չկա, որովհետև այս փոթորկին ոչ մի խելացի, ոչ էլ անխելք մարդ նավ չի նստի,– ուր մնաց թե Հեմ Պեգգոտին, որ ի ծնե ծովագնաց է:

Թեև զգում էի, թե այդպես է, և հարցնելու համար ամաչում, բայց դարձյալ սիրտս անհանգիստ էր, երբ պանդոկը վերադարձա: Այնինչ հողմը սաստկանում էր, եթե միայն կարելի է, որ նա ավելի սաստկանար: Նրա ոռնալն ու մռնչալը, դռների ու պատուհանների ճռինչը, ծխնելույզի հեծեծանքը, նույնիսկ ինձ պատսպարող տան տատանումն ու ծովի ահեղագոռ որոտումը ավելի սոսկալի էին, քան առավոտյան: Մթնոլորտի խավարելուց փոթորկի ազդած իրական ու ցնորական արհավիրքն ավելի տագնապալի էր:

Չէի կարողանում ո՛չ ուտել, ոչ՛ նստել, ո՛չ էլ միտքս մի բանի վրա ամփոփել։ Իմ մեջ էլ դրսի փոթորկին արձագանքող մի բան կար, որ հիշատակներս հիմնիվեր աղմկում ու վրդովում էր։ Սակայն խռոված մտքերիս այդ իրարանցման մեջ անգամ Հեմի համար զգացած ահս էր առաջին տեղում։

Ինչպես որ ճաշս բերել էին, այնպես էլ վերցրին։ Փորձեցի մի բաժակ գինով կազդուրվել, զուր եղավ։ Ես վառարանի առջև թմրեցի, բայց ո՛չ փոթորկի, ո՛չ էլ գտնված տեղիս գիտակցությունը չկորցրի։ Դրանք երկուսն էլ մի անորոշ տագնապի էին տեղի տվել, և երբ ինձ կաշկանդող թմրությունից զարթնեցի, կամ լավ է ասել՝ սթափվեցի, ամբողջ մարմնովս մի անհայտ, անիմանալի սարսուռ անցավ։

Սկսեցի սենյակում առաջ ու ետ ման գալ, փորձեցի մի հին լրագիր կարդալ, հողմի ձայնին ականջ դնել... մտիկ անել կրակում երևացող տեսիլներին, դեմքերին ու ձևերին։ Վերջապես պատի ժամացույցի չիկ-չիկն այն աստիճան ինձ գրգռեց, որ վճռեցի պառկել։

Շատ գոհ էի, որ պանդոկի սպասավորներից մի քանիսը որոշել էին մինչև առավոտ արթուն մնալ այդ գիշեր։ Անկողին մտնելիս անչափ հոգնած ու ջարդված էի, բայց պառկելուս պես այդ զգացումներն կարծես թե անհետացան, և ես արթուն մնացի լիովին սթափ զգայարաններով։

Ժամեր շարունակ այդպես պառկած էի, հողմի ու ծովի մոլեգնության ունկնդիր. ինձ թվում էր, թե ծովի կողմից մերթ հեռավոր ճիչ եմ լսում, մերթ թնդանոթի գուժկան որոտ, մերթ տապալվող տների թնդյուն։ Մի քանի անգամ վեր կացա ու դեպի դուրս մտիկ արի, սակայն ոչինչ չտեսա, բացի ճրագի աղոտ լույսի անդրադարձից պատուհանի ապակու մեջ և իմ մեռելատիպ երեսից, որ դատարկ խավարից վրաս էր նայում։

Վերջապես վրդովմունքս այն աստիճան սաստկացավ, որ շտապով հագնվեցի ու ներքև իջա։ Ընդարձակ խոհանոցում, որի ձեղունից երշիկի ու սոխի շարքեր էին կախված, սպասավորները սեղանի շուրջը զանազան դիրքերով նստած հսկում էին։ Մի սիրուն աղախին, որ ականջները գոգնոցով ծածկել էր և դեպի դուռն էր մտիկ անում, ինձ տեսնելուն պես ճչաց, կարծելով թե ուրվական եմ. բայց մյուսներն ավելի քաջ էին և ուրախացան, որ իրենց խմբին միանալու եմ եկել։ Մեկը, իր սկսած պատմությունը շարունակելով, հարցրեց ինձ, թե ծովակուր նավաստիների հոգիներն արդյոք այժմ մրրիկի մեջ չե՞ն սավառնում։

Մոտ երկու ժամ խոհանոցում մնացի։ Մի անգամ բակի դուռը բացի և ամայի փողոցին մտիկ արի։ Ավազը, ծովասեզը, փրփրի շեղջերը փողոցով տարվում էին. ես ստիպվեցի մարդ կանչել, որ կարենամ դուռը փակել ու ճիգ դնել քամու դեմ։

Երբ վերև բարձրացա, սենյակս մութ խավարով պատված էր։ Ես այնքան հոգնած էի, որ այս անգամ անկողին մտա թե չէ՝ մի աշտարակից գլորվածի պես... քնի մեջ ընկա։ Թեև երազիս մեջ երկար ժամանակ ուրիշ տեսարաններ ու տեղեր էին պատկերանում, բայց ինձ թվում էր, թե հողմը դարձյալ փչում է։ Վերջ ի վերջո իրականության այդ հետին կապն էլ խզվեց, և ես՝ երկու մտերիմ ընկերոջ հետ, որոնց անունը միտս չէ, մի քաղաքի պաշարման էի մասնակցում, որ չարաչար ռմբակոծվում էր։

Թնդանոթների դղրդյունը այնպես զորեղ ու հարատև էր, որ ամենևին չէի կարողանում այն բանը լսել, ինչ որ անչափ ուզում էի, և երբ ջանք դրի լսելու... արթնացա։ Արդեն լույս էր. ժամը ութը կամ ինը կլիներ։ Ռումբերի տեղ փոթորիկն էր որոտում, և մի մարդ դուռս բախում։

– Ո՞վ է, ի՞նչ կա,– գոչեցի ես։

– Նավաբեկություն։ Հենց մեր ափի մոտ։

Անկողնից ներքև ցատկեցի, հարցնելով, թե ի՞նչ նավ է խորտակվում։

– Իսպանիայից կամ Պորտուգալիայից եկվոր մի **սքուն**[83], պտղով ու գինով բեռնավորված։ Շտապեցեք, սըր, եթե ուզում եք տեսնել նրան։ Ծովափի մարդիկ ասում են, թե մի րոպեից կսուզվի։

Շթոթված սպասավորն աճապարելով, ներքև վազեց սանդուղքից. ես էլ հապճեպ շորերս հագա ու դեպի դուրս շտապեցի։

Անթիվ մարդիկ վազելով դեպի եզերքն էին շտապում։ Ես շատերից առաջ անցա. աչքերիս առջև ամեհի ծովը բացվեց։

Հողմը գուցե մեղմացել էր, բայց շատ սակավ, և չէր կարելի այդ նկատել, ինչպես որ չէր նկատվի հինգ-վեց թնդանոթի լռելն այն հարյուր ու հարյուր թնդանոթներից, որոնք որոտում էին երազիս մեջ։ Բայց ծովն ամբողջ գիշեր մոլեգնած լինելով, այժմ շատ ավելի ահեղ էր, քան առաջ. սոսկալի էր տեսնել, թե նրա ալիքները որքան են դիզանում և մեկը մյուսին տապալելով, դեպի ափը գահավիժում։

Մրրիկի գոչյունը, կոհակների մռնչյունը, բազմության խլրտումը և քամու դեմ գնալու դժվարությունը սկզբում ինձ այնպես շփոթեցին, որ թեև ես նայում էի ծովին՝ վտանգված նավը տեսնելու համար, սակայն փրփրացող ալիքների գագաթից զատ ուրիշ ոչինչ չէի նկատում։ Մոտս կանգնած մի կիսամերկ նավաստի իր աջ բազկով (որի վրա դաստակի ուղղությամբ մի նետ էր դաճած) ինձ դեպի ձախ նշան արեց, և այն ժամանակ, ո՛վ աստված իմ, իսկ և իսկ մեր առջև այն հոգեվար նավը տեսա։

Կայմերից մեկը վեց կամ ութ ոտնաչափ կամրջից վեր ջախջախված էր և մի կողմ ընկած՝ բզիկ-բզիկ առագաստներով ու թոկերով խճճված. և մինչ նավն ամեհի ցնցումներով անդադար երերում ու տատանվում էր, այդ բոլոր բեկորները շարունակ նրա կողքն էին ծեծում, ասես թե նրան ճեղքելու համար։ Դեռ փորձում էին բեկորները կտրել և ծովը նետել, և երբ դեսուդեն ձգվող նավը իր ցռուկը դեպի մեզ ուղղեց, ես նրա վրա տապարով աշխատող նավաստիներ տեսա հայտնապես և մանավանդ մի գանգրահեր տղամարդ, որ ամենից շատ էր ճիգ թափում։ Սակայն հենց այդ րոպեին ափի կողմից մի զարհուրելի աղաղակ թնդաց, որ նույնիսկ մրրիկի որոտման մեջ լսելի եղավ. կատաղի ալիքները նավի վրա գրոհ տալով, նրա կողը թռցրին, և մարդիկ, կամուրջ, տախտակ, տակառ, գերան ու պարան – ամեն բան եռացող անդերի խորքը մղեցին, ինչպես մի չնչին խաղալիք։

Երկրորդ կայմն իր վրա ծածանվող առագաստի ծվեններով ու իրար թակող պարաններով դեռ կանգուն էր։ Նավը նստեց, ինչպես որ ասաց միևնույն նավաստու խռպոտ ձայնը, հետո բարձրացավ ու նորից նստեց։ Նույն մարդը հարեց, թե այժմ նավը մեջտեղից կճեղքվի, և հավանական էր, որովհետև ոչ մի մարդկային ձեռնակերտ այն հարվածներին ու զարկերին երկար չէր դիմանա։ Մինչ նավաստին խոսում էր, մի նոր ցավակցության աղաղակ հնչեց եզերքից... ծովասույզ նավի հետ անդնդի միջից չորս հոգի երևացին միակ կայմի թոկերին փարված, ամենից բարձր գտնվողը գանգրահեր կտրիճն էր։

Նավի վրա մի զանգակ կար, և մինչ նավը հուսահատությունից խելակորույս էակի նման դանդաղում էր ու դեսուդեն ընկնում, մերթ իր ամբողջ ամայի հարկը դեպի մեզ հակելով, մերթ ողը վիհատաբար դուրս տնկելով,– զանգակը հնչում էր, և քամին անբախտ մարդկանց մահվան բոթը մեզ գուժում։ Նավը դարձյալ անհետացավ, հետո նորից երևաց։ Չորս հոգուց երկուսն արդեն չկային։ Տագնապը ծովափի վրա սաստկանում էր։ Տղամարդիկ ձեռքերը կցելով հառաչում էին, կանայք երեսները շուռ տալով ճչում։ Մի քանիսը զժվածի պես վազվզում էին ծովեզերքին և օգնություն կանչում, ու ոչ մի օգնություն չէր կարելի հասցնել։ Վազողներից մեկն էլ ես էի. ես իմ բարեկամ նավաստիներին ջերմաջերմ աղաչում էի թույլ չտալ, որ այն երկու թշվառները մեր աչքի առջև զոհ գնան։

---

[83] Schooner — երկկայմ նավ։

Այլասայլված նավաստիները բացատրեցին (չեմ իմանում, թե ինչպե՞ս կարողացա այդ միջոցին բան հասկանալ), թե փոքր-ինչ առաջ մի ազատիչ նավակ էին թողել ծովի վրա, բայց ոչ ոք չհանդգնեց ծովն ընկնել նավին պարան հասցնելու համար. հետևաբար էլ օգնելու հնար չկա: Ափին կանգնած բազմությունն այդ րոպեին նորից խլրտաց, ճանապարհ տալով մի մարդու, որ շնչասպառ գալիս էր: Դա Հեմն էր:

Ես դեպի նա վազեցի ու կարծեմ միևնույն խնդիրս կրկնեցի: Սակայն որքան էլ օրվա բոլոր արհավիրքներից շշմած լինեի, հերիք էր միայն Հեմի վճռական դեմքն ու ծովին ուղղված հայացքը տեսնել,– այն իսկ հայացքը, որ տեսել էի Էմլիի փախչելու առավոտյան,– որ իսկույն ևեթ իմանայի, թե ինչ վտանգ է սպառնում նրան: Երկու ձեռքով նրան ետ քաշեցի ու սկսեցի նավաստիներին աղաչել, որ նրան չլսեն, արգելեն՝ ինքն իրեն սպանել, թույլ չտան ծովը նետվել:

Եզերքից մի նոր ճիչ թնդաց, և մենք նավին նայելով տեսանք, որ հողմահար առագաստն ուժգին զարկով ծովը շպրտեց այն երկուսից մեկին, որ ներքևն էր գտնվում, և մոլեգին հաղթանակով վերև սլացավ՝ կայմի ծայրին մնացած կտրիճին հարվածելու:

Մի այնպիսի տեսարանի հանդեպ և քաջ Հեմի անընկճելի արիության դեմ, որ արդեն սովոր էր իրեն շրջապատող նավաստիներին հրամայել, իմ աղաչանքն անզոր էր. միևնույն է թե ուզենայի փոթորիկը սանձահարել:

– Մաստր Դեվի,– ասաց նա, ձեռքս զվարթ սեղմելով,– եթե իմ ժամը հասել է, թող հասնի, իսկ եթե ոչ, կսպասեմ նրան: Տերը լինի ձեզ պահապան և ամենքիդ, ընկերներ: Դե՛, օգնեցե՛ք. գնում եմ:

Ինձ կամացուկ մի կողմ հրեցին և շրջապատելով, որքան հիշում եմ, հասկացրին, թե Հեմը վճռել է մինչև նավը մենակ լող տալ, և թե իմ ներկայությունն այն մարդկանց կշփոթի, որոնք նրան օգնելու են, զգուշության միջոցներ գործ դնելով: Չգիտեմ, ի՞նչ պատասխան տվի և կամ թե ինձ ինչ ասացին, միայն տեսա, որ մարդիկ շարժվեցին, վազեցին, չվաններ բերին և Հեմին աչքիցս ծածկեցին: Փոքր-ինչ հետո արդեն մենակ, նավաստու շապկով տեսա նրան. մի չվանի ծայրը գոտուն էր կապած, մյուսի ծայրը թևին էր փաթաթած. մի քանի ուժեղ տղամարդիկ բռնել էին փոքր-ինչ հեռվից այդ երկրորդ չվանը, որպեսզի պետք եղածին չափ արձակեն:

Պետք չէր նավաստի լինել տեսնելու համար, որ նավն արդեն խորտակված է: Ես նկատեցի, որ նա մեջտեղից ճեղքվել է. կայմի վրա երերվող միակ մարդու կյանքը թելից էր կախված: Սակայն նա դեռ կայմին ամուր փարված էր: Նա նավաստու կարմիր գլխարկով էր՝ սովորականից ավելի կարմիր. և մինչ նրան կորստից բաժանող գերանները ճարճատելով փշրվում էին ու զանգակը նրա մոտալուտ մահը գուժում,– նա դեռ այդ գլխարկը ճոճում էր: Սարսափից ու սոսկումից քիչ էր մնում ուշքս գնար: Այդ ճոճումը տեսնելուս պես մի հին ընկերոջ հիշեցի, որ երբեմն ինձ սիրելի էր:

Հեմը մենակ կանգնած էր. առջևը մրրիկ, հետևը՝ շունչը բռնած բազմություն: Նայում էր ծովին . և հենց որ կոհակը ետ նահանջեց, նա չվանը բռնող նավաստիներին նշան արեց և մի ոստյունով ջուրն ընկավ՝ մաքառելու ծովի դեմ: Մեկ ալիքների վրա էր ելնում, մեկ՝ վիհերի մեջ խորասուզվում ու փրփուրներում անհետանում: Վերջապես ծովը նրան դուրս վիժեց, և մարդիկ շտապով նրան ետ քաշեցին:

Նա ջարդված էր: Ես հեռվից նրա երեսին արյուն տեսա, բայց նա վերքի մասին անփույթ էր. նա շտապով հրահանգ էր տալիս չվանը փոքր-ինչ ավելի արձակելու – գոնե բազկի շարժումներից կարելի էր այդպես ենթադրել. և հետո դարձյալ ծովը նետվեց:

Նա ձգտում էր նավին հասնել, ալիքների դեմ կռվում էր, կոհակների հետ բարձրանում, նրանց հետ միասին վայր ընկնում, մերթ փրփուրի մեջ կորելով, մերթ դեպի ափը, մերթ դեպի նավը մղվելով, ոգորում էր ուժգնապես ու քաջորեն: Տարածությունը չնչին էր, սակայն կռիվը մահաբեր էր դառնում հողմի ու ծովի մոլեգնության պատճառով: Վերջապես նա մոտեցավ

նավին, գոնե այնքան, որ նորից բազկի մի հզոր զարկով նրա շուրթին կառչի... բայց ահա մի ահագին, լեռնաձև կանաչ կոհակ վրա հասավ, նավի մյուս կողմից դեպի ափը խաղալով... Հեմը մի զորեղ ոստյունով նրա մեջ ցատկեց և նավն անհետացավ։

Երբ մոտեցա այն տեղին, ուր մարդիկ չվանը ետ էին քաշում, ծովի երեսին մի քանի պտտվող բեկորներ տեսա, կարծես թե մի չնչին տակառ փշրված լիներ։ Ամենքի դեմքն ահ ու սարսափ էր ցույց տալիս. Հեմին ոտքերիս մոտ դուրս քաշեցին... անզգա... անկենդան։ Մարմինը մերձակա տուն տարան։ Այժմ ինձ ոչ ոք չէր բռնում. ես նրա մոտ մնացի, նրան դեպի կյանք դարձնելու փորձեր անելով մյուսների հետ, սակայն մեծ կոհակը նրան սպանել էր, և նրա ազնիվ սիրտը արդեն ընդմիշտ հանգստացրել։

Մինչ ես մահճի մոտ էի նստած, ուր այլևս հույս չկար և ամեն բան վերջացած էր, մի ձկնորս, որ ինձ Էմլիի ու իմ մանկության օրից ճանաչում էր, մեղմ ձայնով անունս տվեց։ Նրա հողմահար երեսի վրա արտասուք էր թափում, շուրթերը դողում էին։

– Սըր, չէի՞ք ուզի դուրս գալ,– ասաց նա։

Նրա աչքի մեջ մի հին հիշատակ կարդացի, որ դեռ նոր էի մտաբերել։ Շանթահար եղածի պես նրա բազկին հենվելով, որ մեկնել էր ինձ բռնելու, հարցրի նրան.

– Էլի՞ մի մարմին ափի վրա։

– Այո,– ասաց նա։

– Եվ ինձ ծանո՞թ։

Մարդը պատասխան չտվեց, այլ ինձ դեպի ծովափ տարավ։ Եվ ծովափի այն մասում, ուր մի ժամանակ Էմլին ու ես՝ երկուսս էլ դեռ մանուկ, խեցիներ էինք հավաքում, ուր ցիրուցան ընկած էին գիշերային մրրիկից ջարդված հին նավատան ավերակները,– այդ հյուրընկալ տան, որին նա այնքա՜ն չարիք էր հասցրել... տեսա նրան բեկորների միջև փռված, գլուխը թևին դեմ տված՝ ճիշտ այնպես, ինչպես որ շատ անգամ տեսել էի Սալեմ Հոուսի ննջարանում։

ԺԶ. ԳԼՈՒԽ
Մի հին վերք և մի նոր վերք

Հարկ չկար, ո՜վ Ստիրֆորթ, մեր վերջին տեսակցության ժամին, որ չէի կարծում, թե վերջին հրաժեշտի ժամը կլինի, ասել՝ «Միշտ բարով հիշիր ինձ»։ Այդպես էլ միշտ արել եմ, և մի՞թե կարող եմ այժմ փոխվել՝ այդ պատկերիդ նայելիս։

Մարդիկ մի պատգարակ բերին, մարմինը վերցրին ու վրան մի դրոշակ ծածկելով, քաղաք տարան։ Բոլոր հուղարկավորները նրան ճանաչում էին, նրա հետ շատ անգամ էին նավարկել, նրան միշտ կայտառ էին տեսել։ Քամին դեռ շաչում էր, մրրիկը որոտում։ Լուռ բազմությունը նրան դեպի այն տնակն էր տանում, ուր մահն արդեն ոտք էր դրել։

Բայց տան շեմքին հասնելուն պես՝ մարդիկ իրար մտիկ արին շշնջալով ու դեպի ինձ շուռ եկան։ Ես նրանց միտքը հասկացա. կարծում էին, թե լավ չի լինի այդ երկու մեռելները մի հարկի տակ իրար մոտ դնել։

Քաղաք մտանք ու մեր բեռը պանդոկ տարանք։ Ուշքի գալուս պես ես Ջորեմին կանչել տվի և պատվիրեցի նրան մի դիակառք գտնել՝ հենց նույն գիշեր մարմինը Լոնդոն տանելու համար։ Գիտեի, որ իմ պարտքն է այդ գործը հոգալ և ընկերոջս մորը նախապատրաստել որդու մահվան գույժը լսելու... և փութացի կատարել այդ պարտքը։

Գիտությամբ գիշերվա ժամ ընտրեցի, որպեսզի մեկնելու ժամանակ հետաքրքիր բազմությունից ազատ մնանք: Սակայն թեև արդեն կես-գիշեր էր, երբ կառք նստեցի դիակառքին ուղեկցելու, շատ մարդիկ էին սպասում նրան: Փողոցներում և նույնիսկ դրսի ճամփի վրա շատ խմբեր էին հանդիպում: Վերջապես երբ դաշտ ելանք, միայն մութ գիշերն էր ինձ ու մանկությանս ընկերի աճյունը պատում:

Պայծառ աշնան կեսօրին հասանք Հայգեթ: Արդեն ընկած տերևների անուշ բուրմունքը գետնի երեսից բարձրանում էր, մինչդեռ չընկած տերևները դեղին, կարմիր, թուխ գույներով պսպղում էին արևի տակ: Վերջին մղոնը ոտքով անցա անելիքս լավ կշռելու համար, իսկ կառքը կանգնեցրի, հրամայելով սպասել իմ պատվերին:

Ընկերոջս հայրենի տունն այնպես գտա, ինչպես որ էր վերջին անգամ տեսնելիս, ոչ մի վարագույր վերև չէր քաշված, սալահատակ, ամայի բակի մեջ կյանքի նշույլ չէր երևում և դեպի դուռը տանող անցքը բոլորովին լքված էր թվում:

Առաջին վայրկյանին սիրտ չարի դռան հնչակը քաշելու, իսկ երբ քաշեցի, նա կարծես թե բերած գույժս հնչեցրեց:

Ջահել աղախինը դուրս եկավ և դրսի դուռը բաց անելով՝ վրաս ակնապիշ նայեց ու ասաց.

– Ներեցեք, սը՛ր: Հիվանդ հո չե՞ք:

– Փույթ չէ, փույթ չէ: Շատ հոգնած էի ու հոգնած եմ:

– Ի՞նչ է պատահել... չլինի թե մր. Ջեյմսը...

– Հանդարտ,– ասացի ես:– Այո, մի բան է պատահել, որ մրս. Ստիրֆորթին պիտի հայտնեմ: Արդյոք տա՞նն է:

Աղջիկը շվարելով ասաց, թե այժմ տիկինը շատ սակավ է դուրս գնում, կառքով անգամ չի զբոսնում, ոչ մի հյուր չի ընդունում, սակայն ինձ կընդունի: Այժմ վերևն է միս Դարտլի հետ: Ի՞նչ կհրամայեմ ասել նրան:

Պատվիրեցի զգույշ լինել, բան չասել ու միայն իմ այցետոմսը տանել. իսկ ինքս դահլիճում նստեցի պատասխանի սպասելով: Դահլիճի նախկին զվարթ տեսքը կորել էր. պատուհանների փեղկերը կիսով չափ փակված էին: Քնարը վաղուց չէր գործածված: Այդտեղ էր մանուկ որդու լուսանկարը, նմանապես և գրասեղանը, որի մեջ մայրը սովորաբար նրա նամակներն էր պահում: Հարցնում էի ինձ – արդյոք հիմի էլ կարդո՞ւմ է և կամ նորից կկարդա՞:

Շուրջս այնպիսի լռություն էր տիրում, որ սանդուղքով իջնող աղախնի քայլերը լսեցի: Նա պատասխան բերեց, թե մրս. Ստիրֆորթը հիվանդ լինելով, չի կարող իջնել, սակայն ուրախ կլինի տեսնել ինձ, եթե ես հաճեմ վերև բարձրանալ: Մի քանի վայրկյան անցնելուց հետո՝ արդեն կանգնած էի լեդիի առջև:

Լեդին որդու սենյակումն էր, ոչ թե իր առանձին սենյակում: Պարզ էր, որ մայրն ի հիշատակ որդու այդ սենյակն է տեղափոխվել և նույն պատճառով նրա ճաշակի ու հաճույքի առարկաներն անշարժ թողել: Սակայն ինձ ընդունելու րոպեին անգամ նա մրմնջաց, թե նրա համար է որդու սենյակը քաշվել, որ իր սենյակի պատուհանից երևացող տեսարանը շատ միակերպ է. և այս ասաց հպարտ դեմքով, որպեսզի կասկածի նշույլ անգամ մտքովս չանցնի:

Ռոզա Դարտլը նրա բազկաթոռի մոտ էր կանգնած: Օրիորդի սև աչքերը տեսնելուս պես իմացա, որ գուժաբեր լինելս իրեն հայտնի է: Նույն րոպեին նրա բերանի սպին կարմրեց: Մրս. Ստիրֆորթի ուշադրությունից խորշելու համար նա մի քայլ ետ նահանջեց և սկսեց սուր նայվածքով ինձ դիտել, այն նայվածքով, որ ոչ մի բանից չէր շփոթվում կամ վախենում:

– Ցավում եմ, սը՛ր, որ սև եք հագել,– ասաց մրս. Ստիրֆորթը:

– Դժբախտաբար այժմ այրի եմ,– պատասխանեցի:

– Այդքան ջահել և այդպիսի մեծ կորուստ,– շարունակեց նա։– Շատ ցավում եմ, շատ ցավում։ Հույսով եմ, որ ժամանակը սփոփանք կբերի ձեր վշտին։

– Հուսանք, որ ժամանակը բոլորիս էլ կսփոփի,– ասացի ես նրանց նայելով։– Մեր պարտքն է, տիկին, ամենադառն փորձանքների մեջ անգամ այդ հույսն ունենալ։

Ձայնիս հնչույնն ու աչքերիս արտասուքը վրդովեցին նրան, նրա մտքերի ամբողջ ընթացքն ասես թե հանկարծ կանգ առավ ու փոխվեց։

Աշխատում էի որդու անունն արտասանելիս հուզումս զսպել, սակայն ձայնս դողդողաց։ Տիկինը մի երկու անգամ այդ անունն ինքն իրեն մեղմիկ կրկնեց, հետո բռնի հանգստությամբ հարցրեց ինձ.

– Որդիս հիվա՞նդ է։

– Շատ հիվանդ։

– Տեսե՞լ եք նրան։

– Տեսել եմ։

– Հաշտվե՞լ եք։

Չէի կարող ոչ այո ասել, ոչ էլ՝ ոչ։ Լեդին դեպի Ռոզան շուռ եկավ։ Այդ վայրկյանին հազիվ շուրթերս շարժելով շշնջացի օրիորդին. «Նա մեռել է»։

Որպեսզի մրս. Ստիրֆորթը երկրորդ անգամ ետ չնայի և Ռոզայի դեմքից չիմանա, ինչ որ դեռ իմանալու պատրաստ չէր, ես փութացի նրա հայացքին հանդիպել։ Ռոզան ձեռքերը հուսահատ սոսկումով բարձրացրեց և հետո երեսը ծածկեց։

Գեցեցիկ լեդին... օ՜հ, որքան որդուն նման էր... աչքերը վրաս բևեռեց ու ճակատը շփեց։ Խնդրեցի նրան հանգիստ լինել, ասելիքս քաջությամբ լսել, սակայն լավ կանեի, եթե աղաչեի լաց լինել, որովհետև նա արձանի պես անշարժ էր։

– Վերջին այցելությանս միջոցին,– ասացի ես կակազելով,– միս Դարտլը պատմել էր ինձ, թե ձեր որդին երբեմն նավարկում է։ Երեկ չէ մյուս գիշեր ծովը սաստիկ մրրկված էր։ Եթե այդ գիշեր նա ծովի վրա էր և վտանգավոր ափի մոտերքում... ինչպես որ լսել եմ... և եթե տեսնված նավը այն իսկ նավն է... որ...

– Ռոզա՛, ե՛կ,– ասաց մրս Ստիրֆորթը։

Ռոզան մոտեցավ, բայց առանց կարեկցության կամ սիրո։ Նրա աչքերը կրակ էին շանթում, մինչ ինքը զարհուրելի ծիծաղով մտիկ էր անում մոր երեսին։

– Դե՛,– ասաց նա,– ձեր գոռոզությունը վերջապես հագուրդ ստացավ, ո՛վ անմիտ կին։ Նա ձեզ գոհացրեց իր մահով... Այո՛, լսում եք, մահով։

Մրս. Ստիրֆորթը, որ փայտի պես ետ էր ընկել բազկաթոռում, միայն երկար հառաչեց ու պշնած աչքերը Ռոզայի վրա սևեռեց։

– Ալո,– գոչեց Ռոզան, կուրծքը սաստիկ ծեծելով,– ինձ նայեցեք։ Հեկեկացեք, ողբացեք ու նայեցեք ինձ։ Տեսեք,– հարեց նա, իր սպին ցույց տալով,– ահա ձեր մեռած որդու սիրո՛ւն գործը։

Մոր հառաչանքներից սիրտս կեղեքվում էր։ Նրանք միակերպ էին, միշտ խեղդուկ։ Հեծեծալիս գլուխը թույլ շարժում էր, բայց երեսը մնում էր անփոփոխ։ Շուրթերն անշարժ էին, ատամները սեղմված, ծնոտը փակ, դեմքի գծերը սառած։

– Հիշո՞ւմ եք, թե ե՞րբ արեց այս բանը,– շարունակեց Ռոզան։– Հիշո՞ւմ եք, երբ ձեզնից ժառանգած քարե գոռոզությամբ լրբանալով, այս վերքն ինձ հասցրեց և երեսս ընդմիշտ

այլանդակեց։ Նայեցեք վրաս, տեսեք նրա բարկության կնիքը, որ մինչը մահս պիտի կրեմ, և ողբացեք ձեր կրթած որդուն։

– Միս Դարտլ,– մեջ մտա ես,– աստծու սիրուն...

– Լռեցեք, ես եմ ուզում խոսել այժմ,– գոչեց նա, հրացայտ աչքերը վրաս ուղղելով։– Մտիկ արեք ինձ, ասում եմ, ո՛վ ամբարտավան և խարդախ որդու հպարտ մայր։ Լացեք, որ այդպիսի զավակ մեծացրիք. կոծեցեք, որ նրան փչացրիք, ողբացեք, որ նրան կորցրիք, և՛ս էլ նրան կորցրի։

Ռոզան ձեռքն ամուր սեղմեց, և նրա ամբողջ վտիտ մարմինը դողդողաց, կարծես թե իրեն լափող ամեհի կրքից քիչ-քիչ ճարակվելով։

– Դուք, որ զայրացած եք նրա կամապաշտ համառության վրա,– գոչեց նա,– դուք, որ վիրավորված եք նրա մեծամիտ հպարտությամբ, դուք, որ այդ ալևոր հասակում ոտքի ելաք ձեր իսկ ծնած կրքերի դեմ, դուք, որ նրա մեջ այդ ախտերն օրորոցից սկսած զորացրիք և հետո կամեցաք նրանց աճումը ճնշել, խեղդել... գո՞հ եք այժմ ձեր բազմամյա փույթ ու ջանքի արդյունքից։

– Ամաչեցե՛ք, միս Դարտլ... այդ ի՞նչ անգթություն է։

– Ձեզ ասված է, որ ես եմ ուզում խոսել դրա հետ,– պատասխանեց նա։– Աշխարհիս երեսին զորություն չկա, որ լեզուս կապեր, քանի որ այստեղ եմ կանգնած։ Մի՞թե նրա համար այսքան տարի լուռ մնացի, որ այսօր էլ սուս կենամ։ Ես ձեզնից ավելի էի սիրում նրան,– շարունակեց նա, գազանաբար մորը դիմելով։– Ես գիտեի նրան սիրել առանց փոխարենը պահանջելու։ Եթե ես նրա կինը լինեի նրա հաճույքների գերին կդառնայի, միայն թե նա ինձ գեթ մի հատիկ սիրո խոսք շնորհեր՝ գոնե տարին մի անգամ։ Այո՛, գերին կդառնայի։ Ո՞վ էր նրան ինձնից լավ ճանաչում։ Դուք խստապահանջ էիք, գոռոզ, մանրակրկիտ, ինքնասեր։ Իմ սերն անձնվեր էր... և ոտնակոխ կաներ ձեր գծուծ փնթփնթոցն ու լացը։

Ռոզան, աչքերից կրակ շանթելով, ոտքը հատակին խփեց, ասես թե իրոք մի ինչ-որ բան էր կոխկրտում։

– Տեսե՛ք,– ասաց նա ու վերստին շուրթերի սպին ցույց տվեց։– Հետզհետե հասակ առնելով՝ նա իր արարքը հասկացավ և զգաց։ Այնուհետև ես նրա համար սկսեցի երգել, նրա հետ խոսել և ցույց տալ, թե որքան եմ նրա գործերին համակրում, անդուլ ջանքով այն բոլորը սովորեցի, ինչ որ նրան սիրելի էր, և նրան հրապուրեցի, գրավեցի։ Այո, սիրեց ինձ։ Շատ անգամ նա գոհանում էր ձեզ մի չնչին խոսք ասելով և հետո գալիս ինձ իր սրտին սեղմելու։

Այս բոլորը Ռոզան ասաց մի հեգնական և գրեթե մոլեգին խրոխտանքով, բայց և ջերմ հիշատակով այն սիրո, որի մարած մոխրի միջից մերթ-մերթ մի ավելի քնքուշ զգացման կայծ էր ցայտում։

– Ես զիջեցի... ինչ որ չպիտի անեի, եթե նրա տղայական սիրով հափշտակված չլինեի... մի խաղալիք դառնալու, մի զվարճալիք, որի հետ կարելի է մի պարապ ժամ անցկացնել, հետո դեն գցել և ապա նորից վերցնել, նայելով րոպեի բերմունքին։ Երբ նա հափրացավ, ես էլ հափրացա։ Երբ նրա թռուցիկ սերը հանգավ, ես չուզեցի, թեև կարող էի, նորից նրան դեպի ինձ քաշել, ինչպես և չէի ուզի նրա կինը դառնալ, եթե նա ստիպվեր պսակվել ինձ հետ։ Մենք իրարից զատվեցինք առանց մի բառ ասելու։ Դուք թերևս այդ տեսաք, և գոհ էիք։ Այնուհետև ես երկուսիդ միջև ոչինչ էի, մի հին կարասի, մի առարկա, որ ոչ աչք ունի, ոչ ականջ, ոչ զգացում, ոչ էլ բնավ հիշողություն։ Հառաչո՞ւմ եք։ Հառաչեցեք և ձեր դաստիարակության հետևանքը ողբացեք, այլ ոչ թե ձեր սերը։ Ասում եմ ձեզ՝ մի ժամանակ այնպես ջերմ եմ սիրել նրան, ինչպես որ դուք ձեր օրումը չեք սիրել։

Բարկացայտ աչքերով Ռոզան կանգնած էր ակնապիշ, անշարժ լեդիի առջև, որի հեծեծանքը նույնքան էր նրա սիրտը հուզում, ինչքան կհուզեր մի անշունչ քար։

– Միս Դարտլ,– ասացի ես,– եթե այնքան անգութ եք, որ չեք կարող կարեկից լինել այս թշվառ մոր վշտերին...

– Իմ վշտերին ո՞վ կարեկից եղավ,– ճշաց Դարտլը զայրույթով։– Դա՞ չէր միթե, որ այս բոլորը սերմանեց։ Թող այժմ իր սերմանածը լալով հնձի։

– Եվ եթե որդու սխալները... – շարունակեցի ես։

– Սխալնե՛րը,– գոչեց օրիորդը, հանկարծ փղձկալով։– Ո՞վ կհամարձակվի բամբասել նրան։ Նա միլիո՛ն անգամ ավելի արժի, քան թե այն էակները, որոնց զիջում էր բարեկամություն ընծայել։

– Ոչ ոք ավելի չի սիրել նրան, ոչ ոք էլ ավելի նրա հիշատակը չի հարգի, քան թե ես,– պատասխանեցի ես։– Ասելիքս միայն սա է, որ եթե դուք մոր վշտերին չեք կարեկցում և կամ եթե որդու թերությունները ձեզ գրգռել են...

– Այդ սո՛ւտ է,– աղաղակեց նա, իր սև մազերը փետելով,– ես սիրում էի նրան։

– Եթե այս րոպեին անգամ անկարող եք նրա պակասությունները չհիշել,– շարունակեցի ես,– գոնե մի օտար կին համարեցեք այս կնոջը, մի անծանոթ արարած և գեթ փո՛քր-ինչ օգնեցեք։

– Անիծվե՛ք դուք,– ասաց նա ինձ և՛ կատաղի, և՛ վշտահար ձայնով։– Անիծված լինի ձեր այստեղ գալու առաջին ժամը։ Անե՛ծք ձեր գլխին։ Կորե՛ք։

Դուրս եկա սենյակից, բայց և իսկույն ետ դարձա՝ զանգակը հնչեցնելու, որ սպասավորներին ոտքի հանեմ։ Միս Դարտլը դեռ չոքած՝ գրկել էր մրս. Ստիրֆորդի անդգա մարմինը, արտասվագին համբուրում էր նրան, անունը տալիս, երեխայի պես կրծքին սեղմում, փայփայում ու շոյում նորից նրան ուշքի բերելու համար։ Արդեն վստահ էի, որ նրանք մենակ չեն մնա, և անշշուկ դուրս գալով, ծառաներին պատվիրեցի, որ շտապեն։

Երեկոյան դեմ նորից եկա և ննջեցյալի դին սպասավորների օգնությամբ մոր սենյակը դրի։ Ասացին, թե մայրը միևնույն դրության մեջ է, թե միս Դարտլը ոչ մի րոպե չի թողնում նրան, թե բժիշկերն ամեն դարման գործ են դրել, բայց լեդին արձանի պես անշարժ է և միայն աղիողորմ հեծեծանքներ է արձակում։

Անցա այդ սգավոր տան միջով ու բոլոր պատուհանների վարագույրները ներքև քաշեցի ամենից առաջ այն սենյակում, ուր դրված էր ննջեցյալը։ Հետո նրա կապարի պես ծանր աջը բռնեցի ու սեղմեցի սրտիս։ Ամբողջ աշխարհը լուռ ու մեռած թվաց ինձ. միայն մոր հեկեկանքն էր մերթընդմերթ հասնում ականջիս։

ԺԷ. ԳԼՈՒԽ
Գաղթականները

Այսքան հուզումներից դեռ ընկճված՝ ես մի ուրիշ բան էլ ունեի հոգալու։ Դա եղելությունը մեկնողներից ծածկելն էր, որ նրանք երջանիկ անգիտությամբ ճանապարհ ընկնեն։ Ժամանակ կորցնել չէր կարելի։

Միևնույն գիշեր մր. Միկաբրին տեսա և նրան խնդրեցի, այնպես անել, որ վերջին աղիողորմ դեպքի գույժը մր. Պեզգոտիին չհասնի։ Նա եռանդով հանձն առավ մր. Պեզգոտիի և այդ գույժի միջև պատվար լինելու պաշտոնը և թաքցնել այն բոլոր լրագրերը, որոնք կարող էին նրա ձեռքն ընկնել։

– Այդ գույժը նախ այս մարմնի միջով կանցնի,– գոչեց մր. Միկաբրը կուրծքը բախելով։

Պետք է ասել, որ մր. Միկաբրը, իրեն սպասող նոր վիճակին հարմարվելով, մի դիմագրավ, բայց ոչ անիրավ ծովահենի պես էր շարժվում: Կարելի էր կարծել, թե վայրենի բնության որդի է՝ երկար ժամանակ քաղաքակրթության սահմաններից դուրսն ապրելու սովորած, և այժմ պատրաստվում է իր մայրենի անտառը վերադառնալ:

Ի միջի այլոց, նա ճարել էր մի ձեռք մոմած քաթանի հագուստ և մի տափակ հարդե գլխարկ՝ կպրաներկ: Այդ կոպիտ հանդերձով, թևի տակ բռնած դիտակով և անդադար վերև նայող ու կարծես թե փոթորիկ գուշակող աչքերով նա ավելի էր նավորդի նման, քան թե մր. Պեգգոտին: Նրա ամբողջ ընտանիքն էլ, եթե կարելի է այսպես ասել, արդեն կռվի պատրաստ էր: Ես գտա մրս. Միկաբրին մի շատ դիմացկուն գլխարկ հագած և կրծքին մի ստվար ու կոպիտ շալ փաթաթած, որի ծայրերը պինդ կապված էին հետևից. մրս. Միկաբրն էլ, ինչպես որ տեսա, փոթորկի դիմադրելու վիճակի մեջ էր և իր վրա ոչ մի ավելորդ բան չուներ: Մաստր Միկաբրը հազիվ էր աչքի ընկնում իր լայն շապկի ու թավամազ բաճկոնի միջից, իսկ երկվորյակներն ամուր-ամուր դրված էին անթափանցիկ տուփերի մեջ, հենց իմանաս պահածո ուտելիք լինեին: Թե՛ մր. Միկաբրն ու թե՛ նրա ավագ որդին իրենց թևերը փոքր-ինչ սոթտած էին ցույց տալու համար, թե առաջին նշանը տալուն պես պատրաստ են առաջ նետվել, կայմի վրա բարձրանալ և առագաստները հավաքել:

Տրեդլսն ու ես այդպես գտանք երեկոյան դեմ մր. Միկաբրի գերդաստանը Հընգրֆորդ կոչված նավամատույցի կամրջի վրա, ուր նրանք իրենց գույքերը դեպի նավն էին կրել տալիս: Արդեն պատմել էի Տրեդլսին սոսկալի դեպքի հանգամանքները, և նա սաստիկ հուզված էր: Վստահ էի, որ նա գաղտնիքը կպահի, և նա եկել էր այդ գործում ինձ օգնելու: Այդ միջոցին էր, որ մր. Միկաբրին մի կողմ քաշեցի և վերոհիշյալ խոստումը նրանից առա:

Մր. Միկաբրի ընտանիքը Հընգրֆորդի մի փոքրիկ կեղտոտ ու հին պանդոկի մեջ էր բնակվում, որի փայտաշեն սենյակները պատշգամբի պես դեպի գետն էին ձգված: Տեսնելով, որ գաղթականները շրջակա հարևանների ուշադրությունը գրավել են ու դիտողներ հավաքել, մենք ընտանիքի բնակարանը քաշվեցինք: Գետը համարյա թե դրա տակովն էր անցնում: Ագնեսն ու տատս այնտեղ էին նստած և փոքրերի համար շորեր էին պատրաստում: Պեգգոտին հանգիստ օգնում էր նրանց՝ առջևն ունենալով իր ձեռագործի հին տուփը, մետրաչափն ու մեղրամոմի կտորը, որոնք այնքան բաներ էին տեսել աշխարհում:

Դժվար էր իմ դայակի հարցերին պատասխան տալ, ավելի դժվար՝ շշնջալ մր. Պեգգոտիին, երբ նրան մր. Միկաբրը ներս մտցրեց, թե նամակն արդեն հանձնված է և ամեն բան հաջող: Այնուամենայնիվ ես անելիքս արի, և նրանք երկուսն էլ գոհ մնացին: Որքան էլ դեմքիս վրա ներքին զգացումս նշմարվեց, իմ սուգն արդեն բավական էր, որ ունկնդիրներս ոչ մի կասկած չունենան:

– Ե՞րբ կմեկնի նավը, մր. Միկաբր,– հարցրեց տատս:

Մր. Միկաբրը պետք համարելով քիչ-քիչ նախապատրաստել տատիս և կամ իր կնոջը,– ասաց թե ավելի շուտ կմեկնի, քան սպասելի էր:

– Երևի թե նավակի մարդի՞կ այդպես ասացին,– ասաց տատս:

– Այո՛, տիկին,– հաստատեց մր. Միկաբրը:

– Շատ լավ,– ասաց տատս:– Ուրեմն նավն անշուշտ կեմկնի՞:

– Այո՛, տիկին, ինձ հայտնեցին, թե առավոտյան ճիշտ ժամը վեցին նավ կնստենք:

– Օհո՛, այդ շատ վաղ է,– նկատեց տատս:– Բայց նավորդների համար սովորական բան է, չէ՞, մր. Պեգգոտի:

– Իրավ է, տիկին: Նավը կմեկնի գետի առաջին խաղացքով: Եթե Դեվին ու քույրս ուզենային վաղը, երեկոյան դեմ Դրեյվսենդ գալ, դարձյալ մի անգամ իրար հետ հրաժեշտ կառնեինք:

– Անպատճառ կգանք,– ասացի ես։

– Մինչև այն ժամանակ, մինչև մեր ծովը մտնելու րոպեն,– ասաց մր. Միկաբրը, մի խորհրդավոր նշան անելով ինձ,– մր. Պեգգոտին ու ես մեր իրեղեններն ու հակերը միասին կհսկենք։ Սիրելի Էմմա,– շարունակեց նա, քնքաբար հազալով,– մր. Տրեդլսը կամացուք հաղորդեց ինձ, թե պատրաստ է պատվիրել, ինչ որ միայն անհրաժեշտ է այն խմիչքի համար, որ մեր մտքում սերտ կապված է մի հին անգլիական ռոստբիֆի հետ... Կարճ ասած՝ մի լավ պունչ։ Ուրիշ ժամանակ կքաշվեի այդ մասին զիջողություն խնդրել մրս. Տրոտուդից և միս Ուիկֆիլդից, բայց...

– Իմ կողմից կարող եմ ասել,– վրա բերեց տատս,– որ ամենայն սիրով ձեր կենացը մի բաժակ կպարպեմ, մր. Միկաբր։

– Ես էլ,– զվարթ-զվարթ հարեց Ագնեսը։

Մր. Միկաբրն իսկույն սեղանատուն իջավ և գոլորշի արձակող սափոր բերելով ետ եկավ։ Այնուհետև սկսեց լիմոնները կճպել իր ծալովի դանակով, որ գործնական գաղթաբնակի դանակի պես մի ոտնաչափ կլիներ, և ապա թեզանիքով հպարտ-հպարտ սրբեց նրան։ Նկատեցի, որ մրս. Միկաբրը և երկու ավագ որդիքն էլ այդպիսի ահեղ զենքեր ունեին, իսկ փոքրերը մի-մի հատ փայտե գդալ են կրում՝ հաստ չվանով ուսերից կախած։ Մր. Միկաբրը՝ կարծես հիմիկվանից ծովային և կամ վայրենի կյանքի պայմաններին վարժվելու համար՝ պունչը սեղանի վրա շարված գինու բաժակներով չառաջարկեց ամուսնուն ու որդիներին, այլ անագե վատ գավաթներով։ Երբեք չէի տեսել, որ ինքն էլ այնպես ախորժակով պունչ խմեր, ինչպես խմում էր կոպիտ գավաթից, որ երեկոն վերջանալուն պես մի առանձին զգուշությամբ իր գրպանի մեջ պահեց։

– Հրաժարվելով հրաժարվում ենք հին աշխարհի զեխությունից,– ասաց մր. Միկաբրը գոհ սրտով։– Անտառի բնակիչներին անվայել է հաղորդ լինել այս կիրթ երկրի նրբություններին։

Այդ րոպեին մի տղա ներս մտավ և ասաց, թե դուրսը մի մարդ է սպասում մր. Միկաբրին։

– Արդեն զգում եմ, որ ազգականերից մեկը կլինի,– գոչեց մրս. Միկաբրը, անագե գավաթը վայր դնելով։

– Եթե այդպես է, սիրելիս,– ասաց մր. Միկաբրը մի առանձին սաստկությամբ, որ սովոր էր ցույց տալ այդ նյութը շոշափելիս,– ով էլ լինի գերդաստանիդ անդամը՝ պարոն թե տիկին, որովհետև նա մեզ այցելությանը շատ երկար սպասել տվեց, այժմ թող այդ անդամը ինքը սպասի, մինչև որ ես հարմար դատեմ ընդունել նրան։

– Միկաբր,– ասաց կինը հեզությամբ,– մի այսպիսի խորհրդավոր ժամանակ...

– Անպատշաճ է մտաբերել, ամեն մի չնչին զրկանք,– լրացրեց մր. Միկաբրը Շեքսպիրի բուն խոսքերով ու ոտքի ելավ։– Էմմա, մեղավոր եմ քո առջև։

– Դու կորցնելու բան չունես,– շարունակեց մրս. Միկաբրը,– կորցնողը գերդաստանս է, և ոչ թե դու։ Եթե գերդաստանիս անդամները վերջ ի վերջո տեսել են, թե որքան եմ վնասվել իրենց անցյալ վարմունքից և այժմ փափագում են հաշտության աջ մեկնել մեզ, մի մերժի դրան։

– Թող այդպես լինի, սիրելիս,– պատասխանեց մր. Միկաբրը։

– Եթե ոչ նրանց սիրուն, գոնե իմ սիրուն,– ասաց կինը։

– Այդ տեսակետից խնդրին նայելը մի անդիմադրելի հրապույր ունի, սիրելի Էմմա,– ասաց մարդը։– Դեռ չեմ կարող ասել, թե գերդաստանիդ անդամի վզով կփարվեմ, ջերմությունը իմ պաղության չի հանդիպի։

Մր. Միկաբրը դուրս եկավ և մի որոշ ժամանակ չվերադարձավ, մինչ մրս. Միկաբրն ակներև վախենում էր, թե իր մարդու և գերդաստանի անդամի միջև մի բան պատահած կլինի։ Վերջապես միևնույն տղան նորից եկավ ու մատիտով գրված մի տոմսակ հանձնեց ինձ, որի

վերնագիրն էր՝ «Հիպի պահանջը Միկաբրից»: Այդ փաստաթղթից իմացա, որ մր. Միկաբրը վերստին ձերբակալված լինելով, արդեն հետին հուսահատության տագնապի մեջ է: Նա ինձ աղաչում էր, գրաբերի հետ ուղարկել իր ծալովի դանակը և անագե գավաթը, որոնք կարող էին իրեն պետք գալ զնդանում, որտեղ իր կյանքը կնքելու էր: Աղաչում էր նաև, իբրև բարեկամության վերջին նշան, որ իր ընտանիքին թաղական աղքատանոցում այցելեմ և ընդմիշտ մոռանամ, թե երբևէ ապրած է եղել նրա նման մի էակ:

Պատասխանս իհարկե այն եղավ, որ ներքև իջա ու պարտքը հատուցեցի: Մր. Միկաբրը լուռ նստած էր անկյունում, մռայլ նայելով իրեն բռնող ոստիկանին: Ազատվելուն պես նա ցնծությամբ ինձ համբուրեց և ամբողջ հաշիվն անմիջապես իր հուշատետրում նշանակեց, վիճելով ինձ հետ մի չնչին կես պեննիի համար, որ անզգուշաբար բաց էի թողել գումարից:

Այդ նշանավոր հուշատետրը մի ուրիշ գործողություն հիշեցրեց նրան: Մեր ետ գալուն պես նա ներողություն խնդրեց իր բացակայելու համար, որ իր կամքից անկախ պատճառով էր պատահել, և տետրից մի ահագին ծալած թերթ հանեց, որ մանրամասն հաշիվներով լիքն էր: Կարող եմ ասել, որ օրումս չէի տեսել մի թվաբանության դասագիրք, որ այնքան թվեր պարունակեր: Մր. Միկաբրի ասելով, դա քառասունմեկ ստեռլինգ, տասը շիլինգ, տասնեկ ու կես պենսի մայր պարտքի բաղադրյալ տոկոսների հաշիվն էր զանազան ժամանակների բաժանած: Հաշվի թվերը ճիշտ գումարելուց և իր միջոցներն ուշի-ուշով կշռելուց հետո՝ նա գտել էր, թե պետք է այն գումարն ընտրել, որ պարտքի քանակն էր ներկայացնում՝ բաղադրյալ տոկոսներով հանդերձ՝ երկու տարվա, վեց ամսվա և տասնչորս օրվա ընթացքում, սկսած ներկա թվականից և օրից: Այդ հիման վրա նա մի գեղեցիկ մուրհակ էր գրել, որ և հազար ու մի շնորհակալությամբ Տրեդլսին հանձնեց, որպես ամբողջ պարտքի գրավական:

– Սիրտս վկայում է,– ասաց մրս. Միկաբրը,– որ գերդաստանս մեր մեկնելու ժամից առաջ նավի վրա կերևա:

Անշուշտ, մր. Միկաբրն էլ այդ մասին նախազգացում ուներ, բայց թաքցրեց այն անագե գավաթի մեջ ու կուլ տվեց:

– Մրս. Միկաբր, եթե ճանապարհից նամակ գրելու լինեք, խնդրեմ մեզ էլ չմոռանաք լուր հաղորդել ձեր մասին,– ասաց տատս:

– Անչափ երջանիկ եմ, շնորհաշուք մրս. Տրոտուդ, որ գեթ մի մարդ փափագում է լուր առնել մեր մասին,– պատասխանեց մրս. Միկաբրը:– Զանց չեմ առնի գրել ձեզ: Մր. Կոպպերֆիլդն էլ, որպես մեր տան հին բարեկամ, հարկավ կուզենա երբեմն լուր ընդունել մի անձից, որ այն օրից է ճանաչել նրան, երբ երկվորյակները դեռ ինրեց անգիտակ էին:

Հույս հայտնեցի, թե ամեն անգամ, երբ նա գրելու պատեհություն ունենա, մի լուր կառնեմ նրանից:

– Փառք աստծո, պատեհություն միշտ կունենանք,– ասաց մր. Միկաբրը:– Այս միջոցին օվկիանոսը, նավատորմով ծածկված է, և մենք անշուշտ վերադառնող նավերի կպատահենք: Վերջապես ճանապարհն էլ շատ երկար չէ, մի կարճ անցք է,– հարեց մր. Միկաբրը ակնոցի հետ խաղալով,– մի կարճ անցք: Երկարությունը միայն երևակայական է, ավելի ոչինչ:

Հիշում եմ, թե որքան ծիծաղեցի, բայց և մր. Միկաբրի բնավորությանը որքան հատուկ էր, որ նա Լոնդոնից Կենտըրբրի գնալիս այնպես էր խոսում, իբր թե աշխարհիս մյուս ծայրը գնալիս լիներ. այնինչ այժմ, երբ Անգլիայից Ավստրալիա պիտի նավեր, ճանապարհը Լա-Մանշի պես մի կարճ անցք էր համարում:

– Կաշխատեմ ճանապարհին հեքիաթներով զբաղեցնել նրանց,– ասաց մր. Միկաբրը,– և հույս ունեմ, որ իմ Ուիլկինսի երգերը երեկոյան կրակի շուրջը նրանց քաղցրալուր կթվան: Մրս. Միկաբրն էլ, երբ որ նավի վրա անսայթաք սկսի ման գալ, զվարճալի երգեր կհնչեցնի: Ամեն օր նավի մոտով խոզուկներ ու դելֆիններ կանցնեն, և մենք թե՛ ձախ կողմից, թե՛ աջից

հետաքրքիր բաներ կտեսնենք։ Մի խոսքով... – ասաց մր. Միկաբրը նախկին վայելչությամբ,– այնքան ուշագրավ բաներ կունենանք տեսնելու թե՛ վերևում, թե՛ ներքևում, որ երբ հանկարծ մեր կայմի վրայից նավաստին կանչի «երկի՛ր, երկի՛ր», մենք շատ ապշած կմնանք։

Եվ այդ ասելուն պես նա իր անագե գավաթը ճոճեց, կարծես թե ուղևորությունն ավարտվել էր և առաջին կարգի մրցանակ տարել ամենահմուտ ծովագնացի ժողովում։

– Ինձ գալով, սիրելի մր. Կոպպերֆիլդ,– ասաց մրս. Միկաբրը,– հույսս սա է, թե մենք վերստին մայր երկրում կապրենք մեր գերդաստանի այս կամ այն ընձյուղի մեջ։ Հոնքերդ մի կիտի, Միկաբր։ Իմ գերդաստանի մասին չէ խոսքս, այլ մեր զավակների զավակաց մասին։ Որքան էլ փոխադրված ոստերը զորեղ լինեն,– ասաց մրս. Միկաբրը գլուխը շարժելով,– այնուամենայնիվ բուն ծառը չեն մոռանա. և երբ մեր սերունդը բարգավաճի ու հարստանա, ես կուզենամ, որ նրա հարստության հոսանքը դեպի մեծ Բրիտանիայի սնդուկները գնա։

– Մեծ Բրիտանիան տեղը մնաց, սիրելիս,– ասաց մր. Միկաբրը։– Պիտի ասեմ, որ նա ինձ համար երբեք շատ բան չի արել. ես էլ նրա համար դարդ անելու փափագ չունեմ։

– Այդ բանում անարդարացի ես, Միկաբր,– ասաց կինը։– Չէ՞ որ հեռավոր աշխարհ գնալիս նպատակդ է՝ Ալբիոնի հետ ունեցած կապերդ ամրացնել, ոչ թե թուլացնել։

– Կրկնում եմ, սիրելիս,– պատասխանեց մր. Միկաբրը,– երբեք այդ կապերը այնքան ինձ ախորժելի չեն եղել, որ կամենայի ամրացնել։

– Միկաբր, դարձյալ կասեմ՝ սխալվում ես,– կրկնեց մրս. Միկաբրը։– Դու ինքդ չգիտես, թե ինչ ձիրքերի տեր ես։ Ահա դրանք են, որ եթե Ալբիոնից հեռանաս էլ, քո ու նրա միջև եղած կապերը կամրապնդեն։

Մր. Միկաբրը հոնքերը փոքր-ինչ բարձրացնելով, բացկաթոռի վրա նստեց։ Մրս. Միկաբրի արտահայտած մտքերին նա մասամբ հավան էր, մասամբ հակառակ, թեև շատ գոհ էր կնոջ լավատես հայացքից։

– Սիրելի մր. Կոպպերֆիլդ,– ասաց մրս. Միկաբրը,– ես կամենում եմ, որ մր. Միկաբրը իր դիրքը լավ ճանաչի։ Ինձ համար վերին աստիճանի կարևոր է, որ մր. Միկբրը՝ դեռ նավ չմտած՝ քաջ գիտենա իր դիրքը։ Մեր բազմամյա բարեկամությունից, սիրելի մր. Կոպպերֆիլդ, արդեն ստուգած կլինեք, որ ես մր. Միկաբրի վառվռուն բնավորությունը չունեմ։ Իմ բնությունը, եթե կարելի է այսպես ասել, գերազանցորեն գործնական է։ Գիտեմ՝ երկար կլինի մեր ճամփան. գիտեմ՝ շատ նեղություն ու զրկանքներ կքաշենք։ Մի՞թե կարող եմ այդ իրական փաստերը չտեսնել։ Այն էլ, սակայն, քաջ գիտեմ, թե ի՞նչ է մր. Միկաբրը։ Ուստի և շատ կարևոր եմ համարում, որ մր. Միկաբրը իր դիրքը լավ ճանաչի։

– Հոգյակ իմ,– ասաց մր. Միկաբրը,– չնեղանաս, եթե ասեմ, որ իմ կարծիքով ես դիրքիս փոքր-ինչ գիտակ եմ։

– Այո՛, փոքր-ինչ, բայց ոչ լիովին,– պատասխանեց մրս. Միկաբրը։– Մր. Միկաբրի հանգամանքը հասարակ բան չէ, սիրելի մր. Կոպպերֆիլդ։ Մր. Միկաբրը մի հեռավոր երկիր է գնում, որպեսզի առաջին անգամ իրեն ուղիղ հասկանան և ըստ արժանվույն գնահատեն։ Ես ուզում եմ, որ մր. Միկաբրը նավի առաջամասին կանգնի և սաստակհնուն ձայնով գոչի. «Ես եկել եմ այս երկիրը նվաճելու։ Պատիվներ ունե՞ք։ Գանձեր ունե՞ք։ Ունե՞ք արդյունավոր ու շահաբեր պաշտոններ։ Այստեղ բերեք։ Բոլորն էլ իմս են»։

Մր. Միկաբրը, աչքերը մեր վրա դարձնելով, կարծես մտածում էր, թե այդ գաղափարը մասամբ ճշմարիտ է։

– Ես կցանկանամ,– շարունակեց մրս. Միկաբրը,– որ եթե կարելի է այսպես ասել, մր. Միկաբրն իր բախտի Կեսարը լինի։ Այս է ըստ իս, սիրելի մր. Կոպպերֆիլդ, նրա բուն դիրքը։ Փափագս այս է, որ նա ներկա ուղևորության հենց առաջին րոպեից նավի առաջամասին

կանգնի և բարձրաձայն հայտարարի. «Բա՛վ է, որքան զուր հուսացի, բա՛վ է, որքան չարչարվեցի: Այդ բոլորը հին աշխարհում պատահեց: Այժմ ես նորումն եմ: Դուք ինչո՞վ ինձ վարձահատույց կլինեք: Բերեք տեսնեմ»:

Մր. Միկաբրը ձեռքերն արիաբար կրծքին դրեց, հենց իմանաս իսկ և իսկ նավի առաջամասին կանգնած լիներ:

– Եվ երբ որ նա այդպես անի,– ասաց մր. Միկաբրը,– երբ իր դիրքը հաստատի, մի՞թե բանավոր միտք չեմ ունենա ասելու, թե այն ժամանակ կամրապնդի իր կապերը Բրիտանիայի հետ, ոչ թե կթուլացնի: Ո՞վ կարող է ուրանալ, որ մյուս կիսագնդի վրա բարձրացող մի նշանավոր դեմքի վարկ ու կշիռը մայր երկրում էլ կզգացվի: Մի՞թե այնքան ապուշ եմ, որ թուլություն ունենամ կարծելու, թե Ավստրալիայում հանճարի ու զորության գավազան շարժող Միկաբրը ոչինչ կլինի Անգլիայում: Ես մի հասարակ կին եմ միայն, բայց և այնպես ինքս ինձ ու հայրիկիս արժանի չէի լինի, եթե այդքան ապուշ լինեի:

Մրս. Միկաբրը իր պատճառաբանության անդիմադրելի ուժին ապավինելով, մի վեհ հպարտություն ցույց տվեց:

– Այս է պատճառը,– շարունակեց մրս. Միկաբրը,– թե ինչու կցանկանայի մի օր վերստին մեր հայրենի երկրում ապրել: Մր. Միկաբրը կարող է մի օր... չեմ թաքցնի, կարող է մի օր մի էջ գրավել պատմության մեջ, և այն ժամանակ արդարացի կլինի, որ այս երկրում ներկայացուցիչներ ունենա, երկրում, որ թեև նրան կյանք էր տվել, բայց պաշտոններ չէր տվել:

– Հոգյակ իմ,– ասաց մր. Միկաբրը,– անչափ հուզված եմ քո սիրուց և միշտ պատրաստ խոնարհվելու առողջադատ մտքիդ առջև: Ինչ որ լինելու է, կլինի: Քա՛վ լիցի ինձ չնվիրել հայրենի երկրիս, մինչև անգամ վերջին մասն այն հարստության, որ մի օր դիզվելու է մեր սերնդի ջանքերով:

– Այդ լավ է,– ասաց տատս, դիմելով մր. Պեգոտիին:– Խմում եմ ձեր ամենքի կենացը և մաղթում ձեզ բարի ճանապարհ ու հաջողություն:

Մր. Պեգգոտին իր գրկած երկվորյակներին վայր դրեց և մր. ու մրս. Միկաբրների հետ մեր բոլորիս արևշատության բաժակը պարպեց. այնուհետև մտերմաբար Միկաբրների աջը սեղմեց: Այդ միջոցին նրա թխագույն երեսի վրա մի քաղցր ժպիտ փայլեց, և ես զգացի, որ մր. Պեգգոտին, ուր էլ գնա, ամեն տեղ ճանապարհ կբանա, բարի անուն կվաստակի և մարդկանց սիրելին կլինի:

Մինչև անգամ տղաներին թույլ տվին, որ իրենց փայտե գդալներով մր. Միկաբրի պունչից մի-մի ումպ անուշ անեն և ընդհանուր բարեմաղթություններին մասնակցեն: Այնուհետև տատս ու Ագնեսը վեր կենալով հրաժեշտ տվին գաղթականներին: Վշտագին էր այդ հրաժեշտը: Բոլորն էլ լալիս էին: Մանուկները մինչև վերջին րոպեն Ագնեսից պոկ չէին գալիս, և մենք շատ հուսահատ թողինք մր. Միկաբրին. խեղճը լալով նստել էր մի հատ ճրագով լուսավորված սենյակում, որ գետի կողմից նայողին մի հին փարոս կթվար:

Հետևյալ օրը ես գնացի իմանալու, թե ուղևորները մեկնե՞լ են, թե՞ ոչ: Արդեն առավոտյան ժամը հինգին մեկնել էին նավակով: Թեև միայն մի գիշեր էի տեսել նրանց՝ փայտե սանդուղքով հին պանդոկում, այնուամենայնիվ, դա ինձ այժմ թափուր ու շատ տխուր երևաց, և ես նոր զգացի, թե այդ տեսակ մեկնումները որքան ցավալի ամայություն են թողնում:

Հետևյալ օրը ճաշից հետո ես ու դայակս Գրեյվսենդ գնացինք: Նավը դեռ գետի վրա էր՝ անթիվ մակույկներով շրջապատված: Քամին հաջող էր. մեկնելու նշանը ծածանվում էր ավագ կայմի գագաթին: Ես իսկույն մի նավակ վարձեցի, և նավի շուրջը խռնվող ծփծփուն բազմության միջից անցնելով, նրա վրա ելանք:

Մր. Պեգգոտին մեզ ծածկի վրա սպասում էր: Նա ինձ պատմեց, թե փոքր-ինչ առաջ մր. Միկաբրը դարձյալ մի անգամ (վերջին անգամ) բռնված է եղել Հիպի պատճառով, և մր.

Պեգգոտին անձամբ պարտքը վճարել էր, ինչպես որ ես խնդրել էի։ Հետո մեզ նավի միջնահարկը տարավ, և ես այնտեղ վստահացա, որ Յարմաութում պատահած աղետի լուրը այլևս նրան չի հասնի, որովհետև մր. Միկաբրը մութ անկյունից դուրս գալով, մտերիմ պաշտպանի պես նրա աջը սեղմեց և կամացուկ ինձ հայտնեց, թե երրորդ գիշերվանից ի վեր նա ու մր. Պեգգոտին ոչ մի վայրկյան իրարից չեն բաժանվել։

Շրջակա տեսարանն ինձ համար մի նոր բան էր, իրարանցման ու մթության պատճառով սկզբում ոչինչ չէի կարողանում որոշ տեսնել. աչքերս հեզհետե ընտելացան այդ շփոթին, և ես կարծեցի, թե Վան Օստադեի[84] նկարներից մեկի մեջտեղն եմ գտնվում։ Նավի ահագին հեծանների, գերանների, առողնակների ու լարերի մինջև քնելու թախտեր էին երևում, սնդուկներ, հակեր, տակառներ, դեզ-դեզ կուտակված կապոցներ՝ բոլորն էլ ձեղունների լապտերով ու ցերեկվա աղոտ լույսով լուսավորված, որ վերևի դռնակից և կամ կտավի խողովակից էր ներքև ընկնում։ Զանազան խմբեր շտապում էին իրար հետ ծանոթանալ և կամ իրարից հրաժեշտ առնել. ամեն տեղ զրույց, գոռում-գոչում, կերուխում, լաց ու ծիծաղ։ Ոմանք արդեն իրենց անձուկ խշտիկները բռնել էին, մանր-մունր իրերը կարգի բերել, և մանուկներին աթոռակների վրա նստեցրել. մինչ մյուսները չիմանալով, ո՞ր անկյունում հաստատվեն, անճարակ քարշ էին գալիս։ Բազմության մեջ կտեսնեիր դեռ նորածին երեխաներ և արդեն կորաքամակ, գուցե և մի շաբաթից մեռնելու պատրաստ ծերուկներ, կտեսնեիր մշակներ, որոնք բառիս բուն նշանակությամբ՝ հայրենի հողի մասնիկ էին տանում իրենց կոշիկների հետ, կտեսնեիր իրենց մաշկի վրա անգլիական ծխի ու մրի նմուշներ կրող դարբիններ, ամեն հասակի ու արհեստի բանվորներ – բոլորն էլ սեղմ ու նեղ միջնահարկում խռնված։

Շուրջս նայելիս կարծես թե Միկաբրի որդյակներից մեկի հետ դռան տակ նստած մի կին տեսա, որ Էմլիի նման էր. այդ զույգը ուշադրությունս գրավեց, երբ մի ուրիշ կին նստածին մոտենալով, նրան համբուրեց ու բազմության մեջ անհետացավ. այդ երկրորդը կարծես Ագնեսն էր. բայց ես ընդհանուր աղմուկի ու մտքերիս շփոթման մեջ նրա հետքը կորցրի։ Վերջապես նշան տվին, որ այցելուները նավից հեռանան, և ես նկատեցի, որ պառավ դայակս մի սնդուկի վրա նստած լաց է լինում, իսկ մրս. Գըմիջը փութով հավաքում է մր. Պեգգոտիի իրերը մի սևազգեստ ջահել կնոջ օգնությամբ, որի երեսը չկարողացա նշմարել։

– Էլ ի՞նչ կասեք, մաստր Դեվի,– ասաց մր. Պեգգոտին։– Գուցե էլի բան հիշեցիք մեր բաժանման րոպեից առաջ։

– Միայն մի բան,– ասացի ես։– Որտե՞ղ է Մարթան։

Ծերունին ձեռքը սևազգեստ կնոջ ուսին դիպցրեց։ Կինը շուռ եկավ։ Մարթան էր։

– Աստծո օրհնությունը ձեր վրա լինի, ո՜վ բարի մարդ,– ասացի ես։– Դրա՞ն էլ տանում եք ձեր հետ։

Մր. Պեգգոտիի փոխարեն՝ պատասխանը տվեց Մարթան արտասվելով։ Էլ չէի կարող բան ասել, միայն թե ծերունը աջը սեղմեցի։ Աշխարհիս երեսին ես ոչ մի մարդու այնքան սրտանց չեմ սիրել ու չեմ հարգել, որքան սիրել ու հարգել եմ այդ մարդուն։

Նավը գրեթե դատարկվել էր այցելուներից։ Պարտքիս այն մասը, որ ամենից դժվարն էր, դեռ անկատար էր մնում։ Ես հայտնեցի ալևորին, ինչ որ վերջին անգամ ավանդել էր ինձ ասել նրան ազնվասիրտ լուսահոգի երիտասարդը... Ծերը սաստիկ հուզվեց. բայց երբ ինքն էլ իր կողմից աղաչեց տանել հասցնել իր կարեկցության ու սիրո խոսքերն այն մարդուն, որ այլևս լսել չէր կարող, ես եղա ավելի սաստիկ հուզվողը։

Ժամանակը հասավ։ Համբուրեցի ալևորին, լացող դայակիս թևից բռնեցի ու շտապով հեռացա։ Կամրջի վրա հրաժեշտ առա խղճուկ մրս. Միկաբրից։ Նա դեռ անհանգիստ

[84] Նիդեռլանդացի նկարիչ ու փորագրող (1610-1685)։

սպասում էր իր գերդաստանի անդամներին, և նրա վերջին խոսքերն այն եղան, թե նա ոչ մի ժամանակ մր. Միկաբրից չի բաժանվի։

Մենք մեր մակույկն իջանք և փոքր-ինչ հեռանալով, կանգ առանք նավի շարժվելը տեսնելու համար։ Պայծառ արևը մայր մտնելու վրա էր։ Նավը մեր մակույկի ու հրափայլ հորիզոնի միջև էր կանգնած։ Նրա ամեն մի կայմը, առագաստն ու պարանը ջինջ օդի մեջ փայլում էր։ Այնուհետև ես չեմ տեսել այնքան սիրուն, այնքան տխուր, բայց և այնպես հուսալի բան, որքան այդ փառահեղ նավը, որ դեռ անշարժ կանգնած էր շառագույն ջրի երեսին, մինչ բոլոր նավորդները կամրջի վրա էին հավաքվել գլխաբաց, լուռումունջ։

Լռությունը տևեց մի վայրկյան։ Հենց որ առագաստները փքվեցին, և նավը սկսեց շարժվել, բոլոր շրջակա մակույկներից մի եռյակ «հուռա՛» թնդաց. նույնը թնդաց և նավի վրայից, և որոտալիր ձայները ծովափի վրա արձագանք տրվին։ Ձայների որոտից և անթիվ գլխարկներից ու թաշկինակների ճոճվելուց քիչ էր մնում սիրտս պայթեր... այդ րոպեին նրան տեսա։

Տեսա նրան իր ապոր ուսին հենված։ Ալևորը մատնացույց արեց դեպի մեզ, և Էմլին մի վերջին ողջույն առաքեց ինձ։ Գնա, Էմլի, դու սիրուն, հողմահար ծաղիկ. կպիր այդ մարդուն վիրավոր սրտիդ ամբողջ ուժով, որովհետև նա էլ միշտ քեզ էր կպած իր անհուն սիրո զորությամբ։

Վարդագույն լույսով ողողուն, երկուսն էլ իրար կռթնած՝ նավի վրա բարձր կանգնած էին, և այդպես հանդիսաբար անցան գնացին մեր առջևից։ Ծովափ որ հասանք, Կենտի բլուրներն արդեն մթապատ էին... իմ հոգին էլ մթապատ էր։

ԺԸ. ԳԼՈՒԽ
Բացակայություն

Հոգուս վրա մի խավար ու երկար գիշեր էր իջել՝ շատ հույսերի, շատ հրեշտակների, շատ սխալների, շատ վշտերի ու դառն զղջումների ուրվականներով վրդովված։

Ես թողի Անգլիան և մեկնելու ժամին անգամ չգիտեի, թե որքան մեծ հարված եմ կրում։ Ես թողի բոլոր սիրելիներիս և այն հույսով տարաշխարհ գնացի, թե ինձ հասած հարվածից բաժանվել եմ, և նա վաղուց անցել է։ Ինչպես որ ռազմի դաշտում մահառիթ վերք ընդունած զինվորը երբեմն չի զգում, թե խոցվել է, այնպես էլ ես, մենակ մնալով իմ անփորձ սրտի հետ, մինչև անգամ չգիտեի, թե որքա՛ն խորն է այն վերքը, որի կսկիծն ինձ մաշելու էր։

Գիտակցությունը հետո եկավ, բայց ոչ հանկարծ, այլ քիչ-քիչ, կամաց-կամաց։ Հեռանալուս րոպեին ինձ պաշարող անհաճո զգացումը ժամ առ ժամ սաստկացավ։ Սկզբում դա զրկանքներիս առթիվ զգացած մի անորոշ տրտմություն էր, մի ծանր թախիծ։ Հետո նա աստիճանաբար մի վհատեցուցիչ գիտակցություն դարձավ, գիտակցություն այն բոլոր կորուստների, որ կրել եմ... կորած սիրո, կորած բարեկամության, անհետացած եռանդի, գիտակցություն՝ իմ առաջին մտերմության, սրտիս առաջին հույզերի, կյանքիս օդային ամրոցների, որոնք խորտակվել էին և մի առ մի չքացել։ Այնուհետև ի՞նչ էր մնում ինձ իմ շուրջը՝ մի մռայլ, ավեր, ամայի անապատ։

Գուցե եսական զգացումներ էլ խառն լինեին վշտիս հետ, բայց այդ մասին ես դեռ ոչինչ չգիտեի։ Ես ողբում էի մանուկ-կնոջս, որ թոշնել էր ծաղկափթիթ հասակում, ողբում էի այն մեկին, որ կարող էր հազարների սերն ու հիացումը գրավել, ինչպես իմս էր գրավել. ողբում էի այն բեկված սիրտը, որ ալեծուփ ծովի մեջ էր հանգիստ գտել, և ողբում այն ջախջախված հին տնակը, ուր երբեմն ես, իբրև երեխա, ականջ էի դրել գիշերային հողմի մռնչյունին։

Բազմադիմի վշտերիս վիհից երբևէ ելք գտնելու հույսս արդեն հատել էր։ Թափառում էի տեղից-տեղ, ամենուրեք բեռս ինձ հետ կրելով։ Արդեն նրա ամբողջ ծանրությունն զգում էի, դրա ճնշման տակ ընկճվում էի և արդեն ինքս ինձ ասում, թե այլևս թեթևություն չեմ գտնի։

Սրտիս լքման ամենադառն րոպեներին կարծում էի, թե մահս արդեն հասել է։ Երբեմն մտքովս անցնում էր, թե լավ է տանը մեռնել, և քայլերս ետ էի ուղղում, որպեսզի շուտ մոտենամ հայրենիքիս սահմանին։ Երբեմն էլ շտապով շարունակում էի ճանապարհս մի քաղաքից դեպի մյուսը, չգիտեմ թե ի՞նչ բանի դիմելով և կամ ինչի՞ց խույս տալով։

Անզոր եմ սևաթույր թախծիս յուրաքանչյուր ելևէջը մեկ-մեկ գծել։ Երազներ կան, որ կարող են միայն թերի, անորոշ կերպով նկարագրվել. կյանքիս այդ շրջանը մտաբերելիս՝ դա էլ ինձ մի այդպիսի երազ է թվում։ Իմ առջևից անցնում են նոր քաղաքներ, պալատներ, տաճարներ, պատկերներ, դղյակներ, շիրիմներ, տարօրինակ փողոցներ՝ պատմության ու գեղարվեստի հին վայրեր, բայց ես, վշտիս բեռից ընկճված, համարյա թե չեմ տեսնում նրանց և կամ տեսնում եմ իբրև մտքից անհետք կորչող մի երազ։ Ամեն բանի անուշադիր, անտարբեր և միայն տագնապիչ ցավերիս անձնատուր,– ահա դա էր անփորձ սրտիս վրա ծանրացած գիշերը։ Սակայն դուրս գանք դրա միջից, ինպես որ, փառք աստծո, վերջ ի վերջո ես դուրս եկա... և սթափվելով այդ երկար ու տագնապիչ անուրջից, դեպի նորափայլ արշալույսը առաջ դիմենք։

Շատ ամիսներ ճամփորդեցի, այդ ծանր ամպը հոգուս վրա կրելով։ Միտքս պղտորող մի քանի անորոշ պատճառներ արգելում էին ինձ տուն վերադառնալ և ստիպում, որ թափառումս շարունակեմ։ Երբեմն ամենևին հանգիստ չառած մի տեղից դեպի մյուսն էի շտապում, երբեմն էլ միևնույն տեղում երկար մնում՝ առանց գիտենալու, թե ինչո՞ւ։ Ո՛չ նպատակ ունեի, ո՛չ էլ մի որոշ շարժառիթ։

Զվիցերիա էլ հանդիպեցի։ Մտա այնտեղ Իտալիայից՝ ալպիական մեծ կիրճով, և սկսեցի լեռներում շրջել մի առաջնորդի ուղեկցությամբ։ Արդյոք սրտիս դո՞ւր էին գալիս այց վեհավայր մենությունները,– չգիտեմ։ Հրաշալի էին սոսկալի վիհերն ու բարձրունքերը, որոտագոչ հեղեղները, ձյունի ու սառցի անապատները. սակայն միտքս նրանցից սնունդ չէր ստանում։

Մի երեկո, դեռ արևը մայր չմտած, իջնում էի մի հովիտ, ուր մտադիր էի գիշերել։ Սարի լանջից ոլորապտույտ շաղվով իջնելիս իմ դիմացը մի պայծառ տեսարան նշմարեցի, և դրա ամոքիչ ազդեցությամբ սրտիս մեջ գեղեցկության ու անդորրության մի քաղցր շարժում զգացվեց, որ արդեն վաղուց ինձ անհայտ էր։ Ես վշտահար կանգ առա, բայց վհատության վիշտ չէր դա, և ես սկսեցի թեթև հույս զգալ, թե իմ մեջ դեռ մի բարի փոփոխություն կառաջանա։

Երբ հովիտը մտա, երեկոյան արեգակը շողշողում էր ձյունապատ գագաթների վրա, որոնք հավիտենական ամպերի նման պարփակում էին նրան հեռվից։ Լեռների կանաչ ստորոտում մի փոքրիկ գյուղ էր նստած խորշի մեջ, իսկ քնուշ դալարից փոքր-ինչ վեր՝ եղևնու մութ անտառներ էին բարձրանում, ձմռան ձյունի հյուսերից պաշտպանելով հովիտը։ Ավելի վեր՝ շարեշար դիզվում էին գորշագույն ժայռեր, ապառաժներ, սառցի փայլուն զանգվածներ և տեղ-տեղ աչքի ընկնում կանաչագույն բծերի նման արոտներ՝ բոլորն պաղպաջուն ձյունով պսակված։ Սարերի լանջերին դեսուդեն նշմարում էի հատ-հատ տնակներ, որոնք հսկայական գագաթների առջև թզուկների խաղալիքի նման էին։ Այդպես էր թվում և հովտում փակված սիրուն գյուղը իր փայտաշեն կամրջով, որի ներքև գետակը քարերի վրայից թռչկոտում էր ու որոտալով ծառերի տակ անհետանում։ Անդորավետ օդի մեջ հեռվից մի հովվական երգ հնչեց, և մինչ մի ոսկեփայլ ամպիկ էր գալիս սարի լանջին նստելու, այն երգն ինձ ոչ երկրային, այլ երկնային երաժշտություն թվաց։ Եվ այդ խաղաղ ժամին մեծազոր բնությունը հանկարծ հետս խոսել սկսեց, և ես իմ հոգնած գլուխը, որ նրա սրտաշարժ

հորդորին հլու էր, խոտերին դրեցի ու լաց եղա։ Դռրայի մահից ի վեր, ես դեռ այդպես չէի լացել։

Իմ գյուղ գալուց փոքր-ինչ առաջ այնտեղ հասած նամակների մի ծրար գտա և վերցնելով դուրս եկա կարդալու, մինչև ընթրիքը պատրաստվեր։ Մյուս ծրարներն ինձ չէին հասել, և ես վաղուց լուր չունեի։ Ինքս էլ մեր տունը թողնելուց ի վեր շատ սակավ էի նամակ գրել, այն էլ կարճ, թե առողջ եմ և այսինչ տեղն եմ գտնվում. ավելի երկար գրելու ո՛չ սիրտ ունեի, ո՛չ փափագ։

Ծրարը ձեռքիս էր։ Բաց արի ու Ագնեսի նամակը կարդացի։

Նա երջանիկ է, ուրիշներին օգտակար է, գործերը հաջող են, ինչպես և հուսացել էր։ Միայն այդ էր գրում իր մասին. մնացածն ինձ էր վերաբերում։

Նա ոչ մի խորհուրդ չէր տալիս, ոչ մի պարտք վրաս չէր դնում, այլ իր սրտագին եռանդով հայտնում էր, թե ինձ ի՞նչ է սպասում։ Նրա ասելով՝ իմ բնության տեր մարդն ամեն աղետից մի փրկարար օգուտ կստանա։ Նա գիտի, որ կրած վշտերս հոգուս ուժերը կկազդուրեն, կամրացնեն։ Նա վստահ է, որ յուրաքանչյուր ցավիս մեջ մի նոր զարկ, մի նոր մղիչ կգտնեմ՝ ավելի վսեմ, ավելի ազնիվ նպատակների ձգտելու։ Նա, որ այդքան պարծենում է իմ փառքով և դրա աճելուն փափագում, լիովին հավաստի է, որ ես անդուլ ջանք կդնեմ ավելի առաջ գնալու։ Նրան հայտնի է, որ տառապանքն ինձ համար թուլության աղբյուր չի դառնա, այլ զորության։ Ինչպես որ մանկությանս աղետներով ես այն դարձա, ինչ որ եմ, այնքան էլ իմ ներկա վշտերը հոգուս կորովը կմարզեն և ինձ կօգնեն ավելի ազնիվ մարդ դառնալ։ Ինքս այսպես փորձվելով, մյուսներին էլ ավելի բան սովորեցնելու հնար կունենամ։ Նա հանձնում է ինձ աստծո գթության, որ անմեղ կնոջս դեպի ինքը կանչեց, և ուր էլ գնամ, միշտ ինձ մտքով հետևում է, միշտ ինձ հետ է, իբրև մի կաթոգին քույր։ Նա իմ գործերով պարծենում է և ավելի կպարծենա այն բոլորով, ինչ որ դեռ անելու եմ։

Նամակը կրծքիս դրի և մտածեցի, թե ի՞նչ էի դեռ մի ժամ առաջ։ Հովիվների երգը գնալով լռեց, երեկոյան հանդարտ ամպը մթացավ, հովտի գույները նսեմացան և լեռների ոսկեփայլ ձյունը գիշերվա երկնքի հետ ձուլվեց. բայց ես զգացի, որ հոգուս գիշերն անցել է, նրա խավար ստվերը փարատվել է, և թե այն սերը, որ ազդում էր ինձ Ագնեսը, անուն չունի, Ագնեսը, որ այնուհետև ինձ առաջվանից շատ ավելի պաշտելի էր։

Նորից մի քանի անգամ նրա նամակը կարդացի և միևնույն գիշերը պատասխան տվի։ Գրեցի, թե նրա օգնության անչափ կարոտ եմ, թե առանց նրան ես երբեք այն չէի լինի և չէի կարող լինել, ինչ որ կարծում է թե եմ, բայց քանի որ նա ինձ այդպես լինելու սիրտ է տալիս, ես կփորձեմ նրա ազդեցությանը հետևել։

Եվ փորձեցի։ Սգիս տարեդարձը երեք ամսից լրանալու էր։ Մտքիս դրի՝ այդ ամիսների անցնելուց առաջ ոչ մի բան չորոշել, ոչ մի գործ չսկսել, այլ միայն հովտում և դրա շրջակայքում ապրել։

Երեք ամիսը որ անցավ, որոշեցի դարձյալ հայրենիքից հեռու մնալ, առժամանակ Զվիցերիայում, որ ինձ այն երեկոյան հիշատակով սիրելի էր դարձել, վերստին գրիչս առնել և աշխատել։

Հլությամբ հետևելով Ագնեսի տված խորհրդին, ես սկսեցի բնությունից սփոփանք խնդրել, ու գտա. և մարդկային շահերը, որոնցից վերջերս օտարացել էի, սրտիս մեջ նորից արթնացան։ Հետզհետե հովտում այնքան բարեկամներ ունեցա, ինչքան ունեի Յարմաութում. և երբ ձմեռը Ժնևում անցնելուց հետո՝ գարնանը դարձյալ հովիտն իջա, նրանց մտերմական ողջույններն ախորժալուր թվացին ինձ, թեև անգլերեն չէին ասվում։

Վաղ առավոտից մինչև ուշ գիշեր՝ տոկուն համբերությամբ աշխատում էի։ Այդ միջոցին մի վեպ գրեցի, որի նյութը նոր վշտերիս հետ կապ ուներ, և ուղարկեցի Տրեդլսին. նա հանձն առավ հրատարակիչ գտնել շատ ձեռնտու պայմաններով։ Գրական հռչակս արագ աճում էր և

երբեմն ինձ պատահող ուղևորների բերանով ինձ հասնում։ Փոքր-ինչ դադար առնելուց հետո ես եռանդով սկսեցի մի ուրիշ վեպ գրել. վեպի գաղափարը վերին աստիճանի գրավել էր ինձ։ Որքան ես այդ երկը առաջ էի տանում, այնքան ավելի նրան նվիրվում էի, ճիգ թափելով, որ ըստ կարելվույն լավ ավարտեմ։ Դա իմ երևակայության երրորդ գործն էր։ Սակայն դեռ կեսին չհասած, մինչ հանգստանալու համար կանգ էի առել, որոշեցի տուն վերադառնալ։

Չնայած անդուլ մտային զբաղմունքներիս, ես վաղուց արդեն երկար ու դժվար զբոսանքներին վարժվել էի։ Անգլիայից մեկնելիս սաստիկ վնասված առողջությունս արդեն լիովին կազդուրվել էր։ Այն օրից ի վեր շատ բան էի տեսել, շատ բան դիտել, զանազան երկրներում եղել, և կարծեմ գիտությանս պաշարն էլ փոքր ի շատե ճոխացել էր։

Ինչ որ պետք էր մինչև ուղևորությանս այդ կետը հիշատակել, պատմեցի... բացի միայն մի բանից։ Այդ մեկը լռության տվի ոչ թե մի բան թաքցնելու համար,– ընթերցողին հայտնի է, որ ներկա պատմությունը կյանքիս վեպն է,– այլ որովհետև ուզում էի սրտիս ծածուկ գաղտնիքն առանձին պահել, և ապա թե հայտնել նրան։ Այժմ այդ նյութն եմ շոշափում։

Անզոր եմ, սակայն, սրտիս խորքը քննելիս նրա գաղտնիքն այնքան պարզել, որ ճիշտ ասեմ, թե ե՞րբ հատկապես սկսեցի մտածել, թե կարող էի նրա առաջին ու լուսավոր հույսերն Ագնեսի վրա կենտրոնացնել։ Չգիտեմ էլ, թե վշտակրությանս ո՞ր րոպեին առաջին անգամ մտքովս անցավ, թե իմ անհոգ երիտասարդության ժամանակ նրա սիրո անգին գանձը մերժել էի։ Թերևս լսած լինեի այդ հեռավոր գաղափարի թեթև շշունջը մի հին կորուստի և կամ որևէ փափագի մեջ, որ թեև չպիտի կատարվեր, բայց կցանկանայի, որ կատարվեր։ Այդ գաղափարն իբրև մի նոր հանդիմանություն ու նոր զղջանք միտքս ընկավ, երբ Դորային կորցնելով այնպես մենակ ու թշվառ էի մնացել։

Եթե այդ միջոցին միշտ Ագնեսի հետ լինեի, հավանական է, որ տրտմությանս րոպեին գաղտնիքս նրան հայտնեի։ Այդ անորոշ երկյուղն էր, որ մասամբ դրդել էր ինձ Անգլիայից հեռանալ։ Ես նրա քույրական սիրո մի մասն անգամ կորցնելուց վախենում էի. գաղտնիքս մատնելով, ես մեր միջև մի բռնազբոսություն կառաջացնեի, որ մինչև այն ժամանակ մեզ անհայտ էր, և մեր փոխադարձ մտերմությունը կպակասեր։

Չէի կարող մոռանալ, որ Ագնեսի այժմյան զգացումը դեպի ինձ իմ ազատ ընտրությունից ու վարմունքից էր սկիզբն առել։ Չէի կարող չտեսնել, որ եթե նա երբևէ ինձ մի ուրիշ սիրով էր սիրել,– և կար ժամանակ, երբ կարծես թե նա մի այդպիսի սեր ունեցել էր,– ես ինքս էի այդ սերը մերժել։ Մեր մանկության ժամանակից ես սովորել էի իմ վայրենի ցնորքներին անմատչելի էակ համարել նրան։ Իմ առաջին խանդակաթ սերը մի ուրիշ անձի էի նվիրել, և չարված թաղել, ինչ որ անել կարող էի, և եթե ինձ համար Ագնեսն այժմ մի քույր էր, այդ եղել էր իմ կամքով ու նրա սրտի ազնվության շնորհիվ։

Հետզհետե իմ մեջ ծագած փոփոխության սկզբին, երբ ես վճռել էի լավ հասկանալ ինքս ինձ, ավելի ազնիվ մարդ դառնալ, մեկ-մեկ մտածում էի, թե գուցե անորոշ ապագայում կարենամ անցյալիս սխալները ուղղել և Ագնեսի հետ ամուսնանալու երջանկությանը ունենալ։ Սակայն օրերն անցնում էին, և այդ վսեմ հեռապատկերը իմ աչքից անհետացել ու ծածկվել էր։ Եթե Ագնեսը մի ժամանակ սիրել էր ինձ, ուրեմն ես պարտավոր էի ավելի սուրբ համարել նրան, հիշելով մանավանդ, որ մոլորվող սրտիս բոլոր շարժումները նրան լիովին հայտնի են, և նա իր անձը զոհել էր և իր վրա հաղթանակ տարել, որպեսզի ինձ համար քույր մնա, ընկեր մնա։

Ես միշտ զգացել էի իմ թուլությունը նրա հաստատակամության ու զորության առջև, և այժ այս զգացումը ավելի էր սաստկացել։ Ինչ որ մի ժամանակ ես կարող էի նրա համար լինել և կամ թե նա կարող էր լինել ինձ համար, եթե նրան արժանի գտնվեի, այժմ ոչ ես կարող եմ լինել, ոչ էլ նա։ Ժամանակն արդեն անցել էր։ Ես պատեհ ժամը փախցրել էի և ինքս կորցրել Ագնեսին։

Այս մորմոքիչ մաքառումն ինձ շատ էր տանջում. բայց և այնպես ազնվության պարտք էի համարում ինձնից հեռու քշել՝ իմ զառամած հույսերով այդ պատվական օրիորդին դիմումն անելու գաղափարը, քանի որ ես ինքս էի մերժել նրան, երբ հույսերս դեռ թարմ էին, դեռ զվարթ։ Ես այլևս չէի աշխատում ինձանից թաքցնել, որ սիրելով սիրում ու լիովին նվիրված եմ նրան. սակայն մտքիս մեջ էլ կրկնում էի, թե արդեն ուշ է և պետք չէ մեր երկարամյա մտերմության բնույթը փոխել։

Շատ էի մտածում Դորայիս վերջին ակնարկների մասին, թե ինչ կպատահեր մեր կյանքում, եթե մեզ վիճակվեր ավելի երկար միասին ապրել։ Սկսել էի հասկանալ, թե շատ բաներ կան, որոնք թեև ոչ մի ժամանակ չեն պատահել, բայց երբեմն մեր վրա այնպես են ազդում, որ կարծես իրոք պատահած լինեն։ Նրա հիշած ապագան այժմ մի իրական եղելություն էր, որ եկել էր ինձ ուղղելու. այսպես էլ մի օր կլիներ, եթե նույնիսկ մեր մանուկ սիրո սկզբում իրարից բաժանված լինեինք։ Ես ձգտում էի իմ կատարելության միջոց դարձնել այն բանը, որ կարող էր իմ ու Ագնեսի միջև պատահել, բայց չէր պատահել, և աշխատում էի ջանք դնել, որ ավելի անձնուրաց, ավելի հաստատուն, ավելի գիտակից մարդ դառնամ և ինքնս ինձ լավ ճանաչեմ։ Եվ այսպես մտածելով, թե ինչ կարող էր լինել, եկել էի այն համոզման, թե այդ բանը երբեք չի լինի։

Մտքերս այդ հարատև ծփանքի մեջ էին տանից մեկնելուս օրից սկսած մինչև կրկին ետ գալս, այսինքն՝ ամբողջ երեք տարի։ Երեք տարվա ժամանակ էր անցել և գաղթականների նավի հեռանալուց ի վեր և այժմ ես միևնույն արևի մայր մտնելու րոպեին, միևնույն տեղում ինձ Անգլիա բերող նավի վրա կանգնած էի, միևնույն վարդագույն ջուրը դիտելով, որի մեջ երբեմն հեռացողների նավի պատկերն էր ցոլացել։

Երե՛ք տարի։ Երեք երկա՛ր տարիներ, թեև կարճ օրերից բաղկացած։ Եվ այժմ հայրենիքն ինձ տենչալի էր, Ագնեսն էլ տենչալի... սակայն նա իմս չէր... երբեք էլ իմս լինելու չէր։ Մի ժամանակ կարող էր, այո՛, իմս լինել, բայց այդ ժամանակն անցել էր։

ԺԹ. ԳԼՈՒԽ
Վերադարձ

Ես Լոնդոն հասա մի աշնանային ցուրտ երեկո։ Արդեն մութն էր, անձրև էր գալիս. ամբողջ տարվա ընթացքում այնքան մեզ չէի տեսել, ինչքան այժմ մեկ րոպեում։ Մաքսատնից իսկույն դեպի կոթողն անցա՝ կառք գտնելու, և թեպետ տների ցանկապատներն անգամ իրենց իրենց ջրահոս խողովակներով ինձ հին բարեկամներ երևացին, էլի չէի կարող ուրանալ, որ նրանք կեղտոտ բարեկամներ են։

Հաճախ դիտել եմ – հարկավ շատերն էլ նույնը դիտած կլինեն,– որ մի ծանոթ տեղից հեռանալուն պես՝ կարծես հեռանալդ արդեն նշան է տալիս, որ այնտեղ փոփոխություններ առաջ կգան։ Կառքի լուսամուտից նկատեցի, որ Ֆիշ-ստրիտ Հիլի հին տներից մեկը, որ մի դարից ի վեր ներկարարի, հյուսնի և կամ որմնագրի երես չէր տեսել, իմ բացակայության միջոցին փլվել է։ Իսկ հարևան փողոցը, որ իր անմաքրությամբ ու վատառողջ պայմաններով անվանի էր, չորացել ու լայնացել է։ Այս բոլորը տեսնելով, կարծում էի, թե ս. Պողոսի տաճարն է՛լ ավելի պառաված կգտնեմ։

Բարեկամներիս կյանքում եղած մի քանի փոփոխություններն արդեն ինձ հայտնի էին։ Տատս վաղուց Դուվր էր քաշվել, իսկ Տրեդլսը իմ մեկնելուս հենց առաջին ամիսներում փաստաբանության ձեռնարկվել։ Այժմ նա բնակվում էր Գրեյս Իննում, և վերջին նամակներից գիտեի, որ հույս ունի շուտով ամենաչքնաղ օրիորդի հետ պսակվելու։

Նրանք, ինձ սպասում էին Ծննդյան տոնին և չէին կարծում, թե այսպես վաղ տուն կգամ։ Ես ինքս էի նրանց սխալ լուր տվել, որպեսզի անակնկալ վերադարձովս նրանց զարմացնելու

ուրախություն ունենամ: Եվ, սակայն, միգապատ փողոցներով մենակ ու լուռ անցնելիս այնպես անախորժ ցուրտ զգացի, որ գոհ կլինեի, եթե ինձ գեթ մի մարդ դիմավորեր:

Բայց և այնպես ծանոթ խանութների զվարթ լույսը ժպտում էր ինձ, և երբ Գրեյս Իննի սրճատան առջև կանգ առա, աշխույժս արդեն ետ էր եկել: Իրավ է, նույն րոպեին այն շատ տարբեր ժամանակը միտքս ընկավ, երբ իջել էի Ոսկե Խաչում և այն օրից ի վեր պատահած դեպքերը հիշեցի, բայց դա մի բնական բան էր:

– Արդյոք չգիտե՞ք, որտեղ է բնակվում մր. Տրեդլսը,– հարցրի սրճարանի սպասավորին, մինչ տաքանում էի վառարանի մոտ:

– Հոլբորնի դատարանում, սըր: Երկրորդ համար:

– Մր. Տրեդլսը կարծեմ արդեն սկսել է փաստաբանների դասում հռչակ հանել,– ասացի ես:– Այնպես չէ՞:

– Շատ կարելի է, սըր,– պատասխանեց սպասավորը:– Սակայն այդ մասին ես ինքս դեռ բան չգիտեմ:

Այդ սպասավորը, որ մի միջահասակ ու նիհար մարդ էր, տեղեկություն հարցրեց մի ուրիշ սպասավորից, որ մի հաստ ու հուժկու ծերունի էր՝ կրկնակի կզակով, սև տաբատով ու գուլպաներով. դա դուրս եկավ դահլիճի ծայրում գտնվող վանդակապատի ետևից, որ ընկերություն էր անում գանձարանի, հաշվեգրի, հասցեների մատյանի, փաստաբանների ցուցակի և ուրիշ այդ տեսակ գործերի հետ:

– Այն մր. Տրեդլսը, որ երկրորդ համարն է բռնել,– ասաց նիհար սպասավորը:

Հաստ սպասավորը մի կողմ քաշվելու նշան արեց նիհարին և լրջորեն ինձ դիմեց:

– Կցանկանայի իմանալ,– ասացի ես,– թե ի՞նչ համբավ է վայելում փաստաբանների շրջանում մր. Տրեդլսը, երկրորդ համարի բնակիչը:

– Այդպիսի անուն ամենևին չեմ լսել, սըր,– պատասխանեց հաստը խռպոտ ձայնով:

– Ինչպես կարելի է, որ լսած չլինեք,– ասացի ես, տեր կանգնելով ընկերոջս:

– Գուցե դեռ անհայտ երիտասարդներից մեկը լինի,– նկատեց սեգ սպասավորը, խիստ աչքերը վրաս հառելով:– Ե՞րբ է սկսել իր ծառայությունը:

– Մոտ երեք տարի առաջ:

Երևի թե քառասուն տարի վանդակապատի հետևում ապրած սպասավորը չուզեց երկարաբանել մի այսպիսի չնչին առարկայի մասին, այլ միայն հարցրեց, թե ինչ կցանկանամ ճաշի համար պատվիրել:

Զգացի, որ դարձյալ Անգլիայում եմ, և իրոք խղճացի ընկերոջս: Հույս չկար, որ Տրեդլսը հաջողություն գտնի մեր երկրում: Համեստաբար ապսպրեցի փոքր-ինչ ձուկ ու բիֆշտեքս և բարեկամիս անհայտության մասին մտածելով, վառարանի առջև կանգնած մնացի:

Ավազ սպասավորին աչքով հետևելիս ինքս ինձ ակամա ասում էի, թե այն պարտեզը, որ նա հետզհետե բուսել և այդպիսի պերճ ծաղիկ էր դարձել, աճման ձեռնտու միջավայր չէ: Շատ ազդեցիկ, անչափ կարծր, հինավուրց, հանդիսավոր ու պապենական էր նրա տեսքը: Ճիշտ այդպիսի ավազ ցանել, երբ ավազ սպասավորը դեռ մանուկ էր, եթե միայն ունեցել էր մանկություն, որ դժվար է ենթադրել: Դիտեցի փայլուն սեղանները և տեսա դեմքիս արտացոլումը հին մահոգենի[85] վճիտ խորքերում. դիտեցի շողշողուն ու հստակ լապտերները, կանաչագույն շքեղ ու պերճ վարագույրներն իրենց արույրե ձողերով. երկու

[85] Mahwgany — ֆրանսերեն, acajou, Ամերիկայի կարմրափայտ ծառ, որի փայտից շինում են ընտիր կահ-կարասիք:

ահագին վառարաններն իրենց պայծառ կրակով. շարք-շարք կանգնած հպարտ շշերը, որոնք կարծես պարծենում էին իրենց միջի հին պորտվեյնով. դիտեցի այդ բոլորն ու հասկացա, որ Անգլիան ու իր օրենքը մի-մի բերդ են, որոնց չի կարելի հարձակումով հեշտ նվաճել։ Այնուհետև ննջարան մտա թրջված հանդերձս փոխելու, և ինձ այնպես թվաց, թե տախտակամած հին սենյակի մեծությունը (դա կարծեմ Գրեյս Ինն տանող նրբանցքի վրա էր գտնվում), քառասուն մահճակալի ահագին ծավալը և պահարանների աննվաճելի ծանրությունը միացել են անժպիտ դեմքով դիմավորելու Տրեդլսին, որ հանդգնել էր իր բախտն արագ հաստատելու հույսեր տածել։ Իջա ընթրելու, և սեղանի ծանր ու հանդարտ սպասն անգամ և տեղի հանդիսավոր լռությունը (հյուրեր չկային, որովհետև դատավորների արձակուրդը չէր վերջացել)... կարծես դավադիր էին եղել՝ բողոքելու Տրեդլսի մեծամիտ հավակնության դեմ և հատկապես նրան ասելու, թե նա զուր է իրեն խաբում քսան տարուց առաջ մի համեստ ապրուստ ճարելու հույսով։

Մեկնելուցս ի վեր այդպիսի բաներ չէի տեսել, և ընկերոջս մասին ունեցած հույսերս հօդս ցնդեցին։ Ավագ սպասավորը այլևս ինձ հետ գործ չուներ. նա ինձ արդեն թողել էր և ուշքն ու միտքը մի ծեր ջենտլմենի նվիրել, մատուցելով նրան մի շիշ պորտվեյն, որ կարծես ինքն իրեն մառանից ելավ, որովհետև ջենտլմենը ոչ մի պատվեր չէր տվել։ Երկրորդ սպասավորը փսփսալով հաղորդեց ինձ, թե այդ ծերը մի անչափ հարուստ պաշտոնաթող նոտար է, որ ասածներին նայելով իր ամբողջ փողերը մտադիր է իր լվացարարի աղջկան կտակել. թե դարձյալ ասածներին նայելով՝ նրա տանը ահագին քանակությամբ արծաթեղեն անոթներ կան՝ բոլորն էլ անգործ մնալուց սևացած. այնինչ նրա սեղանի վրա մի հասարակ պատառաքաղից ու դանակից զատ՝ ուրիշ բան երբեք չի տեսնված։ Արդեն այդ րոպեից Տրեդլսին կորած համարեցի ու վճռեցի, որ նրա համար էլ հույս չկա։

Բայց և այնպես սիրելի բարեկամիս տեսնելու փափագից ճաշս այնպես շտապելով ավարտեցի, որ ավագ սպասավորի համարումն իմ մասին անկարող էր բարձրանալ, և հետևի դռնով դուրս փախա։ Դժվար չէր դատարանի երկրորդ համարը գտնել։ Դռան նշանակը ցույց էր տալիս, որ Տրեդլսի սենյակները վերի հարկում են, և ես դեպի վեր բարձրացա մի անշուք ու հին սանդուղքով. դրա յուրաքանչյուր հարթակը անփայլ ապակու բանտում հյուծվող ձեթի պատրույգով էլ լուսավորված։

Աստիճան առ աստիճան բարձրանալիս մի քրքիջ լսեցի, որ ո՛չ փաստաբանի, ո՛չ դատախազի, ո՛չ էլ փաստաբանի կամ դատախազի գրագիրների, այլ երկու կամ երեք կայտառ ու զվարթ աղջիկների քրքիջ էր։ Բայց մինչ ուզում էի ականջ դնել, ոտքս մի փոսի մեջ խրվեց, ուր Գրեյս Իննի պատկառելի ընկերությունը մոռացել էր մի նոր տախտակ ամրացնել, և ես շռինդ հանելով վայր ընկա. երբ վեր կացա՝ ձայներն արդեն լռել էին։

Ճանապարհիս մնացած մասն ավելի մեծ զգուշությամբ անացա ու վերջապես հասա նպատակիս։ Սիրտս թնդաց, երբ մր. Տրեդլս վերնագրով դրսի դուռը բաց գտա։ Բախեցի։ Ներսի կողմից մի փոթորկալի դղրդոց թնդաց. ուրիշ ոչինչ։ Ստիպվեցի նորից բախել։

Դիմացս ելավ սպասավորի կամ գրագրի նման մի սրաչյա տղա, որ շնչասպառ ինձ չափչփեց, ասես թե իմանալու՝ արդյոք արժանի՞ եմ ներկայանալ իր պարոնին։

– Մր. Տրեդլսը տա՞նն է,– հարցրի ես։

– Այո՛, սըր, բայց զբաղված է։

– Կամենում եմ տեսնել նրան։

Դարձյալ մի անգամ շտապ-շտապ ինձ դիտելուց հետո՝ սրաչյա պատանին կարելի գտավ դեպի ներս առաջնորդել ինձ և դուռը լայն բանալով մի փոքրիկ նախասենյակ մտցրեց, հետո մի փոքրիկ հյուրասենյակ, ուր սեղանի առջև թղթերի մեջ թարթափելով նստած էր իմ սիրելի ընկերը (նմանապես հևալով)։

– Տեր ողորմյա,– գոչեց Տրեդլսը, ինձ տեսնելով։– Դո՞ւ ես, Կոպպերֆիլդ։

Եվ գիրկս ընկավ, ես նրան ամուր սեղմեցի։

– Ինչպե՞ս ես, սիրելի Տրեդլս։

– Շատ լավ, սիրելի Կոպպերֆիլդ։ Լավից լավ. էլ ուրիշ ասելիք չունեմ։

Եվ ուրախությունից երկուսս էլ լաց եղանք։

– Անգին բարեկամս,– ասաց Տրեդլսը ոգևորությունից գլխի մազերը դեպի վեր հրելով (որ մի ավելորդ գործողություն էր),– օ՜հ, Կոպպերֆիլդ, իմ վաղուց կորած ու միշտ անձկալի ընկերս, ինչպես ուրախ եմ, որ քեզ տեսնում եմ։ Ինչպես երեսդ թխացել է։ Որքա՜ն ուրախ եմ։ Արևս ու պատիվս վկա, այսպիսի ուրախություն ես օրումս չեմ զգացել, սիրելիդ իմ Կոպպերֆիլդ, այո, օրումս։

Ես էլ սաստիկ հուզված էի և գրեթե բան ասելու անկարող։

– Ազնիվ ընկեր, սրտակից ընկեր,– շարունակեց Տրեդլսը։– Մեծանուն մատենագիր, իմ փառավոր Կոպպերֆիլդ։ Աստվա՜ծ իմ, աստվա՜ծ իմ։ Գալդ բարի։ Ե՞րբ ես եկել, որտեղի՞ց ես եկել, ի՞նչ էիր անում։

Առանց սպասելու այդ հարցերից գեթ մեկի պատասխանին՝ Տրեդլսը, որ արդեն վառարանի մոտ բազկաթոռի վրա էր հրել ինձ, մի ձեռքով սկսեց կրակը խառնել, մյուսով փողպատս ամուր քաշել այն թյուր ենթադրությամբ, թե դա վերարկուիս օձիքն է։ Շարունակ կրակխառնիչը շարժելով, նա նորից վզովս փարվեց, ես էլ նրան գրկեցի. երկուսս էլ համ ծիծաղում էինք, համ լալիս, համ սրտանց իրար աջ սեղմում։

– Սիրելիդ իմ Կոպպերֆիլդ,– գոչեց ընկերս,– այս ինչ զարմանալի բան է, որ դու մեր սպասածից վաղ ետ եկար, բայց և այնպես մեր հանդեսին չհասար։

– Ո՞ր հանդեսին։

– Տեր արարիչ,– աղաղակեց Տրեդլսը, աչքերը մեծ-մեծ բանալով։– Մի՞թե վերջին նամակս չես ստացել։

– Եթե մի հանդես նկարագրող նամակ էր, չեմ ստացել։

– Ա՛յ քեզ զարմանալի բան,– ասաց Տրեդլսը մազերը երկու ձեռքով դեպի վեր մղելով, հետո երկուսն էլ ծնկների վրա դնելով։– Ուրեմն չգիտե՞ս, որ ես արդեն պսակված եմ։

– Պսակվա՞ծ,– բացականչեցի ես ցնծությամբ։

– Այո՛, փառք աստծո,– ասաց Տրեդլսը։– Եվ մեզ, այսինքն՝ Սոֆիին ու ինձ պսակող քահանան արժանապատիվ տեր Հորասն էր, Դեվոնշիրցի տեր. Հորասը։ Էլ ինչո՞ւ եմ երկար խոսում. չէ՞ որ կինս այս պատուհանի վարագույրի հետևն է։ Տե՛ս։

Այդ րոպեին ի զարմանս իմ, աշխարհիս ամենասիրուն աղջիկը ծիծաղելով ու կարմրելով խորշից ելավ։ Ես իրավ աշխարհում չէր տեսնված (ինչպես և շտապեցի հայտնել) մի ավելի սիրուն, ավելի գրավիչ, ավելի ազնիվ, ավելի զվարթ արարած։ Ես համբուրեցի նրան, ինչպես հին ծանոթիս, և երկուսին էլ երջանկություն մաղթեցի սրտիս ամբողջ զորությամբ։

– Ով կսպասեր,– ասաց Տրեդլսը,– որ այսպիսի բարեբախտ հանգամանքներում նորից իրար կտեսնենք։ Բայց դու սաստիկ թխացել ես, Կոպպերֆիլդ։ Որքա՜ն երջանիկ եմ, փառք քեզ, տեր։

– Ես էլ երջանիկ եմ,– ասացի ես։

– Ես էլ իրավ շատ երջանիկ եմ,– ասաց Սոֆին ժպտալով ու շիկնելով։

– Բոլորս էլ անչափ երջանիկ ենք,– հաստատեց Տրեդլսը,– աղջիկներն անգամ մեզ հետ միասին երջանիկ են։ Աստված իմ, քիչ էր մնում մոռանայի նրանց։

– Մոռանայիր նրա՞նց,– ասացի ես։

– Այո՛, աղջիկներին, Սոֆիի քույրերին,– պատասխանեց Տրեդլսը։– Նրանք հո մեզ մոտ են, եկել են Լոնդոնը տեսնելու։ Բայց բանն այս է, որ երբ... այն դո՞ւ էիր, որ սանդուղքի վրա գլորվեցիր։

– Ես էի,– ասացի ծիծաղելով։

– Ահա գլորվելուդ րոպեին էր, որ աղջիկներն ու ես իրար հետ էինք ընկել։ Ճշմարիտն ասեմ՝ մենք պահմտոցի էինք խաղում։ Հիանալի բան է... բայց որովհետև Ուեստմինստրի Հոլում մի այդպիսի խաղ խաղալն անհարմար է, մանավանդ եթե հանկարծ կլինենտ վրա հասնի, այս պատճառով բոլոր օրիորդները փախուստ տվին։ Այժմ, անշուշտ... ականջ են դնում,– ասաց Տրեդլսը, մյուս սենյակի դռան կողմն ակնարկելով։

– Ցավում եմ, որ այդ փախուստի պատճառը ես եմ եղել,– ասացի կրկին ծիծաղելով։

– Պատիվս վկա, դու չէիր ցավի,– գոչեց Տրեդլսը ցնծությամբ,– եթե տեսնեիր ինչպես փախան, երբ որ դուռը բախեցիր, հետո վազելով ետ եկան, որ մազերից դուրս թռած սանրերը հավաքեն, և հետո նորից շնչասպառ փախան։ Մի կանչես նրանց, Սոֆի ջան։

Սոֆին մյուս սենյակը վազեց, և մենք լսեցինք, որ նրան ծիծաղելով ընդունեցին։

– Հիանալի չէ՞ այդ երաժշտությունը, Կոպպերֆիլդ, և քաղցրալուր,– ասաց Տրեդլսը։– Դրանով է, որ այս հին տունը զվարթանում է։ Եվ որքան սփոփիչ է այդ երաժշտությունը մանավանդ ինձ նման ամբողջ կյանքը մենակ անցկացրած տղայի համար։ Օ՜հ, սքանչելի է, դյութական է։ Խեղճ աղջիկներ։ Նրանք մի ահագին կորուստ ունեցան, զրկվելով Սոֆիից... որ, հավատա, Կոպպերֆիլդ, աշխարհիս ամենալավ աղջիկն էր, և կլինի։ Անչափ գոհ եմ, որ այդ կորուստը կրելուց հետո էլ նրանք ուրախ են։ Աղջիկների ընկերությունը մի զվարճալի բան է, Կոպպերֆիլդ, և թեպետ անհաշտելի մի մասնագետ փաստաբանի պաշտոնի հետ... բայց և այնպես շատ զվարճալի։

Վերջին խոսքերն ասելիս Տրեդլսը փոքր-ինչ կմկմաց. բարեսիրտ ընկերս անշուշտ կարծեց, թե կանանց ընկերությունը գովելով, ինձ տրտմություն է պատճառում։ Նկատեցի այդ և եռանդով նրան ասացի, թե ես էլ հոգով-սրտով գովասանքին համամիտ եմ. ընկերս լիովին միամտացավ։

– Ճշմարիտն ասեմ,– շարունակեց նա,– մեր ընտանեկան նիստ ու կացն էլ շատ հարմար չէ իրավաբանական պաշտոնիս։ Նույնիսկ Սոֆիի ներկայությունն այս տան մեջ անպատշաճ է պաշտոնական կոչմանս։ Բայց մի ուրիշ տեղ բնակարան ճարելու միջոց որ չունենք, ի՞նչ անենք։ Է՛հ, ծովն ենք ընկել մի չնչին լաստով, ուզենք չուզենք դրանով պիտի գոհանանք։ Սոֆին վարպետ տանտիկին է։ Կզարմանաս, երբ իմանաս, թե ինչպես է տեղավորել այդ բոլոր աղջիկներին։ Ինքս էլ, սակայն չգիտեմ, թե այդ գործն ի՞նչ հնարքով է գլուխ բերել։

– Ուրեմն այդ ջահել օրիորդներից քանի՞սն են ձեզ մոտ,– հարցրի ես։

– Մեզ մոտ է Կարոլին անունով ավագը, որ գեղեցիկ է հռչակված,– ասաց ընկերս։– Հետո Սառան, որի մասին մի ժամանակ պատմել էի քեզ, թե ողնաշարի հիվանդություն ունի. այժմ ավելի առողջ է։ Հետո Սոֆիի դաստիարակած երկու կրտսեր քույրերը, հետո Լուիզան։

– Իրա՞վ,– գոչեցի ես։

– Այո՛։ Եվ պիտի ասեմ, որ մեր ամբողջ բնակարանը միայն երեք սենյակից է. բայց Սոֆին այնպես է կարգադրել, որ բոլորն էլ լավ են քնում։ Երեքն՝ այն սենյակում,– ասաց Տրեդլսը, սենյակի դուռը ցույց տալով,– երկուսն էլ՝ այն։

Ակամա շուրջս նայեցի տեսնելու, թե որտե՞ղ են հապա հանգստանում ինքը մր. Տրեդլսը և իր ամուսինը։ Տրեդլսը միտքս հասկացավ։

– Փույթ չէ, Կոպպերֆիլդ,– ասաց ընկերս։– Չէ՞ որ հենց նոր ասացի, թե ստիպված ենք մի չնչին լաստով գոհանալ. և ահա անցյալ շաբաթ մեր անկողինն այս հատակի վրա սարքեցինք։

Բայց հանկարծ տանիքի տակն էլ մի խցիկ ճարվեց, մի փոքրիկ անկյուն, ինչպես ինքդ էլ կտեսնես, և Սոֆին իր ձեռքով այն խցիկը հարդարեց: Մեր ննջարանն այժմ այնտեղ է: Ասես թե մի գնչուի վրան լինի. սակայն տեսնեիր՝ ինչ հիանալի տեսարան է բացվում այնտեղից:

– Վերջապես ամուսնացար ու երջանիկ ես, սիրելի Տրեդլս: Շա՛տ ուրախ եմ:

– Շնորհակա՛լ եմ, ընկեր իմ,– ասաց Տրեդլսը, ձեռքս ամուր սեղմելով:– Այո, այնքան երջանիկ եմ, ինչքան որ կարելի է երջանիկ լինել: Ահա վաղեմի ծանոթներդ, տեսնո՞ւմ ես,– շարունակեց ընկերս, թաղարը հանդիսաբար ցույց տալով:– Ահա և մարմարյա սեղանը: Մյուս բոլոր կարասիքն էլ թեև հասարակ, բայց պիտանի բաներ են: Գալով արծաթեղենին, աստված հասցնե, դեռ մի թեյի գդալ էլ չունենք:

– Հոգ չէ, հետզհետե կունենաք:

– Հարկավ կունենանք: Ամեն բան ժամանակով կլինի: Այժմ էլ հարկավ գդալներ ունենք – չէ՞ որ թեյը մի բանով պիտի խառնվի... բայց բոլորն էլ բրիտանական մետաղից են:

– Երբ մի օր արծաթեղեն ունենաք, ավելի փայլուն կերևա ձեզ,– ասացի ես:

– Մենք էլ հենց այդ ենք ասում,– գոչեց Տրեդլսը:– Գիտես, սիրելի Կոպպերֆիլդ,– ասաց նա վերստին ձայնն իջեցնելով,– հենց որ տարա **Ջայպսի** դատը **Ուիզըլի** դեմ, որ փաստաբանական համբավիս շատ նպաստեց, իսկույն Դեվոնշիր գնացի և մի լուրջ խոսակցություն ունեցա արժանապատիվ հայր Հորասի հետ: Ես գլխավորապես այն փաստը առաջ բերի, թե Սոֆին... հավատա, Կոպպերֆիլդ, աշխարհումս դրանից լավ աղջիկ չկա:

– Հավատում եմ:

– Իրավունք ունես հավատալու,– հաստատեց Տրեդլսը:– Բայց կարծեմ շեղվում եմ առարկայից: Հայր Հերասի մասին չէ՞ր խոսքս:

– Ասացիր, թե այն փաստը առաջ բերիր, թե...

– Այո՛, այն փաստը, որ Սոֆին ու ես արդեն վաղուց նշանված ենք, և թե Սոֆին, ծնողների հաճությամբ, իսկույն հոժար է միանալ ինձ հետ... անգամ եթե մեր մետաղը բրիտանական լիներ,– ավելացրեց ընկերս բարի ժպիտով:– Լա՛վ: Այնուհետև բացատրեցի հայր Հորասին... որ մի պատվական պաստոր է և նույնիսկ եպիսկոպոս դառնալու և կամ գոնե մի ապահով կյանք վարելու արժանավոր... բացատրեցի, թե քանի որ ես տարին երկու հարյուր հիսուն ստրոլինգ եմ վաստակում, իսկ հետևյալ տարին գուցե ավելի վաստակեմ, և հնար ունեմ սրա նման մի բնակարան սարքելու,– ուրեմն ինչո՞ւ Սոֆին և ես անմիջապես չամուսնանանք: Վստահացա այս էլ ասել պաստորին, թե Սոֆին ու ես այսքան տարի սպասելով, արդեն բավական համբերեցինք, և թե զավակասեր ծնողները չպիտի արգելեն, որ իրենց աղջիկը մարդու գնա, պատճառաբանելով, թե նա շատ օգտակար է իրենց տնային գործերում... ի՞նչ ես կարծում:

– Հարկավ չպիտի արգելեն,– ասացի ես:

– Ուրախ եմ, որ դու էլ իմ կարծիքին ես, Կոպպերֆիլդ: Առանց հայր Հորասին մեղադրելու կասեմ, որ այդպիսի դիպվածներում ազգականները, եղբայրները, քույրերը և այլն շատ ինքնասեր են: Լավ: Այն կետն էլ մատնանիշ արի տեր հորը, թե ամենաջերմ փափագս է՝ միշտ օգնել գերդաստանին, և եթե աստված մի արասցե՝ նրան... այսինքն արժանապատիվ հայր Հորասին մի փորձանք հասնի...

– Հասկանում եմ,– ասացի ես:

– ... Կամ թե մրս. Կրուլրին, ես երջանկություն կհամարեմ նրա աղջիկների համար հայր լինել: Արժանապատիվ հայր Հորասը մի շատ սիրուն ու սրտիս շատ հաճելի պատասխան տվեց և հանձն առավ մրս. Կրուլրի հավանությունը ձեռք բերել: Դժվար ու սոսկալի բան: Ոտքերից կրծքին դիպավ, կրծքից էլ գլխին...

– Ի՞նչը դիպավ,– հարցրի ես։

– Մրս. Կրուլրի ցավը,– պատասխանեց Տրեդլսը ծանրաբար։– Նրա բոլոր զգացումները դեպի գլուխը բարձրացան։ Արդեն մի ամգամ ասել եմ քեզ, Կոպպերֆիլդ, որ մրս. Կրուլրը շատ գերապանծ տիկին է, միայն թե վաղուց անդամալույծ։ Ինչ վիշտ էլ իրեն հասնի, իսկույն աչքերում ցավ կզգա. այս անգամ, սակայն, ցավը ոտքերից կրծքին անցավ, կրծքից էլ գլխին... մի խոսքով՝ ամբողջ մարմինը ցնցեց։ Բայց ընդհանուր ջանքով ու խնամքով նրան վերստին ուշքի բերին, և Սոֆին ու ես ամուսնացանք։ Երեկ էր, որ մեր պսակվելու երեք շաբաթը լրացավ։ Չես կարող երևակայել, Կոպպերֆիլդ, թե ինչ հրեշ թվացի ես ինձ, երբ գերդաստանի բոլոր անդամները միաձայն ճիչ հանեցին ու ուշաթափ դեսուդեն ընկան... Մեր մեկնելու րոպեին մրս. Կրուլրը տեսնել անգամ չէր ուզում ինձ... չէր ուզում ներել, որ իր աղջկան տանում եմ... բայց և այնպես մի բարի արարած է, և մենք շուտով հաշտվեցինք։ Հենց այս առավոտ ես նրանից մի սիրալիր նամակ ստացա։

– Կարճ ասած, բարեկամ, դու երջանիկ ես և երջանիկ լինելու արժանի։

– Օ՛, դու ինձ անաչառ չես դատում,– ասաց Տրեդլսը ծիծաղելով։– Սակայն իրոք ես շատ նախանձելի վիճակի մեջ եմ։ Եռանդով աշխատում եմ, անհագորեն ուսումնասիրում օրենքները։ Վեր եմ կենում առավոտյան ժամը հինգին, վեցին արդեն գործի եմ նստած։ Աղջիկներին թաքցնում եմ ցերեկով և միայն երեկոյան դեմ հետները խաղում։ Շատ ցավում եմ, ճշմարիտ, որ նրանք երեքշաբթի տուն են գնալու. հենց այդ օրն էլ Միքայելյան արձակուրդը կսկսվի... Սակայն ահա աղջիկները,– ասաց Տրեդլսը, մտերմական խոսակցությունը կտրելով ու ձայնը բարձրացնելով։– Մր. Կոպպերֆիլդ, միս Կարոլինե Կրուլրը, միս Սառա, միս Լուիզա, Մարգարիտ և Լյուսի։

Դրանք կատարյալ վարդեր էին՝ թարմ ու առողջ, բոլորն էլ սիրուն։ Միս Կարոլինեն շատ գեղեցիկ էր, սակայն Սոֆիի փայլուն աչքերի մեջ այնքան բարություն, զվարթություն ու գորովանք էր երևում, որ քրոջ շքեղ գեղեցկությունը նրա առջև նսեմանում էր. տեսնում էի, որ ընկերս իր ընտրության մեջ չի սխալվել։ Բոլորս նստեցինք կրակի առջև և սրաչյա պատանին, որ ինչպես այժմ իմացա, թափթփված քորոցները հավաքելուց էր շնչասպառ եղել, մնացածներն էլ ժողովեց ու թեյի անոթները պատրաստեց։ Այնուհետև հեռացավ, դուռն ամուր փակելով։ Մրս. Տրեդլսը գոհ տանտիկնոջ զվարթ հաճությամբ թեյ ածեց և վառարանի անկյունի մոտ նստելով, սկսեց **տոստ**[86] պատրաստել։

Այդ զբաղման ժամանակ նա ինձ պատմեց, թե Ագնեսին տեսել է։ Հարսանիքից հետո «Թոմի» հետ Կենտըրբրի գնալիս այնտեղ նրան էլ, տատիս էլ տեսել է. Ագնեսն էլ, տատս էլ առողջ են. երկուսն էլ ինձ հիշել են։ Սոֆիի ասելով՝ քանի որ ես բացակա էի, «Թոմը» մի օր անգամ ինձ իր մտքից չի հանել։ «Թոմը» նրա հեղինակությունն է ամեն բանում։ «Թոմը» նրա կուռքն է, որին ոչ ոք պատվանդանից շարժել չի կարող։ «Թոմին» պաշտել և բոլոր սրտով նրան սիրել, ինչ էլ ապագան բերեր,– այդ է Սոֆիի փափագը։

Շատ զվարճալի էր տեսնել, թե ինչպես նա ու Տրեդլսը ակնածում էին Գեղեցիկից։ Չեմ կարծում, որ այդ ակնածությունը շատ իրավացի լիներ, բայց և այնպես ինձ ախորժելի էր թվում, որովհետև մարդ ու կնոջ բնավորության մեկ մասն էր։ Հավաստի եմ, որ Տրեդլսը երբեք այնքան չէր զգում դեռ գնվելիք գդալների կարիքը, որքան Գեղեցիկին թեյ մատուցելու րոպեին։ Հավաստի եմ, նմանապես, որ եթե մի օր նրա համեստ կինը մեկի առջև հպարտանալու լիներ, գուցե միայն նրա համար հպարտանար, որ Գեղեցիկն իր քույրն է։ Գեղեցիկի բնավորության մեջ երևացող անձնահաճ ոգու նշաններն անգամ Տրեդլսի և նրա ամուսնու աչքում մի-մի բնածին արտոնություն էին ու բնական ձիրքերի հավաստիք։ Եթե Գեղեցիկը մայր մեղու ծնված լիներ, իսկ ընկերս և իր կինը մշակ մեղու, նրանք անշուշտ այդ վիճակից էլ գոհ կլինեին։

---

[86] Toast – կենաց բաժակ, նաև հացի շերտիկ՝ կրակի վրա չորացրած։

Մարդ ու կնոջ անձնուրացությունը միանգամայն հիացնում էին ինձ. նրանց պարծենալն այդ բոլոր աղջիկներով ու անպայման հպատակվելը նրանց բոլոր հաճույքներին պատիվ էր բերում իրենց հատուկ բնավորության: Եթե ամբողջ երեկոյի ընթացքում մրս. Տրեդլսը իր մարդուն միայն մի անգամ «սիրելիս» անվանեց, խնդրելով որ նա այսինչ բանը բերի, այս ինչ բանը տանի, այս ինչ բանը ցած դնի և կամ հեռացնի,– քույրերից յուրաքանչյուրը մի ժամվա ընթացքում միևնույն խնդիրն առնվազն տասն անգամ նրանց ուղղեց: Այս քույրերին էլ Սոֆին անհրաժեշտ էր: Եթե մեկի մազերը խառնվեին, Սոֆին միայն կարող էր շտկել: Եթե մեկը մի երգի եղանակը մոռանար, միայն Սոֆին կհիշեցներ: Եթե մեկը Դեվոնշիրի որևէ գյուղի անունը չհիշեր, միայն Սոֆին միտքը կձգեր: Եթե մեկն ուզենար մի նամակ գրել մայրիկին, Սոֆին միայն ժամանակ կգտներ գրելու և վերջացնելու նամակը: Եթե հանկարծ մեկի ձեռագործը խճճվեր, ո՞վ կարող էր թելերը ուղղել, եթե ոչ Սոֆին: Կարճ ասած՝ քույրիկները լիազոր տիկիններ էին բնակարանում, իսկ Տրեդլսն ու Սոֆին՝ նրանց հլու սպասավորները: Արդյոք Սոֆին իր կյանքում քանի՞ աղջիկ ու տղա էր կրթել,– անկարող եմ ճիշտն ասել. սակայն նրա հոչակը վկայում էր, թե նա ամեն մի մանկական երգ, որ երբևէ շարադրված է եղել անգլերեն, անգիր գիտեր, և նա քաղցրիկ ձայնով տասից ավելի երգ երգեց քույրերի պատվերին համեմատ (որոնցից ամեն մեկը մի ջոկ երգ էր պահանջում, մինչև որ ամենից հետո Գեղեցիկը վճիռ դներ),– և ես ապշած մնացի: Ամենից ավելի զվարճալին այն էր, որ բոլոր քույրերն էլ, չնայելով տարբեր պահանջներին, սրտանց հարգում ու սիրում էին թե՛ Տրեդլսին, թե՛ Սոֆիին: Երբ վերջապես ես վեր կացա մնաս բարով ասելու, և Տրեդլսն ուզեց մինչև սրճարան ուղեկցել ինձ, այդ միջոցին նրա թավամազ գլխի վրա այնքան համբույրներ տեղացին, ինչքան որ մի ուրիշի գլխի վրա չեն տեղացել:

Տրեդլսին բարի գիշեր ասելուցս հետո էլ երկար ժամանակ հաճությամբ մտածում էի այդ զվարթ տեսարանի մասին: Եթե հանկարծ Գրեյս Իննի վերևի հարկում հազար վարդեր բացվեին, ալևոր շենքը դրա կեսի չափ չէր զվարթանա իմ աչքում: Դեվոնշիրցի օրիորդների ներկայությունը այնքան փոշոտ թղթավաճառ կրպակների ու պրոկտրների շրջանում. թեյն ու տոստը և մանկական երգերն այդ թանաքի ավազի, մագաղաթի, կարմիր թեյի, կնքամոմի, թանաքի պես-պես շշերի, անդրոշմ ու դրոշմակիր թղթերի, դատական որոշումների, ծանուցումների, զեկուցումների, հաշիվների միգապատ մթնոլորտում՝ մի այնպիսի տարօրինակ բան էին, ինչպես որ տարօրինակ կլիներ, եթե Գրեյս Իննն Հոլում հանկարծ Սուլթանը երևար իր փառավոր ընտանիքով, արևելքի խոսող թռչնով, երգող ծառով և ոսկեհոս վտակով: Ինչևիցե՝ այդ գիշեր Տրեդլսից բաժանվելիս ես մտածում էի, թե ամենևին նրա մասին վիճատելու տեղիք չունեմ, և թե Անգլիայի բոլոր ավագ սպասավորներին հակառակ՝ նա անարգել առաջ կերթա իր ընտրած ճանապարհով:

Սրճարանի վառարաններից մեկի առջև ես մի աթոռ քաշեցի և մինչ ընկերոջս երջանկության մասին մտածելով և կրակի հրաշարժ ելևեջներն ու ձևերը դիտելով նստել էի, հետզհետե մտքիս մեջ իմ հատուկ կյանքի գլխավոր փոփոխությունները, կորուստներն ու վշտերը սկսեցին պատկերանալ: Անգլիայից մեկնելուցս ի վեր երեք տարի է, որ քարածխի կրակ չէի տեսել. բայց շատ էի տեսել իմ տխրության ժամերին, թե ինչպես բոցավառ ցախը, քիչ-քիչ մարելով, գորշագույն աճյուն է դառնում և թեթև մոխրով ծածկվում... մեռած հույսերիս հար և նման:

Այժմ ընդունակ էի լրջորեն, բայց և առանց դառնության, մտաբերել անցյալս, աներկյուղ ու համարձակ դիտել ապագաս: Տուն ասածդ, բառիս լավագույն իմաստով, ինձ համար արդեն գոյություն չուներ: Այն անձին, որ մի ժամանակ կարող էր ամուսնական սիրով ինձ հետ միանալ, ես վարժեցրել էի միայն քույր լինել ինձ համար: Նա ուրիշի հետ կամուսնանա, մեկ ուրիշը նրա գգվանքին կարժանանա, և նա երբեք չի իմանա, թե ինչպիսի սեր է վառել սրտիս մեջ: Եվ դա կլինի մի արդար պատիժ անմիտ կրքիս փոխարեն: Ես իմ ցանածն եմ հնձում:

Եվ մինչ փորձում էի վճռել, թե արդյոք սիրտս այնքան վշտերով խրատվա՞ծ է, որպեսզի ներկա վիճակիս դիմանա և օրիորդի առջև այն հանգիստ դիրքը բռնի, ինչ դիրք որ նա էր

բռնում իմ առջև,– աչքերս մի դեմքի վրա կանգ առան, որ ասես թե կրակից ելավ նախկին հիշատակներիս հետ միասին։

Փոքրիկ մր. Չիլիպը, այն դոկտորը, որի բարի ծառայության, ինչպես որ գրված է գրքիս սկզբում, ես շատ եմ պարտական, լրագրեր կարդալով լուռ նստած էր դահլիճի հակառակ սեղանի մոտ։ Տարիները հենց իմանաս չէին ազդել նրա վրա, և նա, որ մի փոքրիկ ու հեզ արարած էր, լավ էր դիմադրել ժամանակի հոսանքին ու համարյա թե այնպես մնացել, ինչպես որ եղած կլիներ այն գիշեր, երբ նստած էր մեր տանը, աշխարհի գալուս սպասելով։

Մր. Չիլիպը վեց տարի առաջ Բլենդրոտընից հեռացել էր, և այնուհետև ես նրան չէի տեսել։ Այժմ նա իր փոքրիկ գլուխը մի կողմ հակած ու դիմացը մի բաժակ գինի դրած՝ կարդում էր. և նրա պատկերն այնքան համեստ էր, այնքան հաշտասեր, որ կասեիր, թե լրագրից անգամ ներողություն է խնդրում, որ համարձակվել է նրան կարդալ։

Ես մոտեցա նրա աթոռին ու ասացի.

– Ինչպե՞ս է ձեր առողջությունը, մր. Չիլիպ։

Նա սաստիկ ցնցվեց մի անծանոթ մարդու այս անակնկալ հարցումից և հեզությամբ պատասխանեց.

– Շնորհակալ եմ, սըր։ Շատ բարի եք, սըր։ Հուսամ դուք էլ առողջ եք, սըր։

– Չե՞ք հիշում ինձ։

– Ինչպես չէ,– ասաց մր. Չիլիպը, մեղմ ժպիտով ու գլուխը թեթև շարժելով,– զգում եմ, որ ձեր դեմքն ինձ փոքր-ինչ ծանոթ է, բայց ճշմարիտ չեմ կարող, սըր, ձեր անունը մտաբերել։

– Այնինչ դուք ինձնից առաջ անունս գիտեիք։

– Մի՞թե, սըր,– ասաց մր. Չիլիպը։– Հետևաբար կցանկանաք ասել, թե պատիվ եմ ունեցել, սըր, պաշտոնական դեր կատարելու... երբ որ... երբ...

– Այո՛։

– Իրա՞վ,– գոչեց մր. Չիլիպը։– Բայց դուք, սըր, այդ դեպքից ի վեր շատ եք փոխված։

– Հավանական է։

– Ուրեմն, սըր,– նկատեց մր. Չիլիպը,– ներողամիտ կլինեք, եթե համարձակվեմ ձեր անունը հարցնել։

Ծերունին, անունս լսելով, շատ հուզվեց և իմ աջն ամուր սեղմեց,– մի դժվար գործողություն, որովհետև դոկտորի ձեռքը ձկան փոքրիկ թևճակի պես գաղջ էր, որ թեթև սահում էր ողջունողի աջի մեջ ու սասանվում, երբ որ մեկը նրան բռներ։ Այդ ձեռքն ազատելուն պես բժիշկը գրպանում թաքցրեց, ասես թե ուրախանալով, որ նա ողջ է մնացել։

– Օ՛հ, աստված իմ,– ասաց մր. Չիլիպը, դարձյալ աչքի անցկացնելով ինձ։– Մի՞թե նույն ինքը մր. Կոպպերֆիլդն եք։ Սակայն եթե սկզբից ձեր դեմքին շիտակ նայեի, ես ձեզ անշուշտ կճանաչեի։ Մեծ նմանություն ձեր ու ձեր խեղճ հոր միջև։

– Հորս տեսնելու բախտ չեմ ունեցել,– ասացի ես։

– Ճշմարիտ է, սըր,– նկատեց դոկտորը մեղմ ձայնով,– շատ ճշմարիտ և, համենայն դեպս, շատ ողբալի։ Նույնիսկ մեր գավառական անկյունում,– շարունակեց նա գլուխը թեթև շարժելով,– մեզ անհայտ չէ ձեր հռչակը, սըր։ Ձեզ մոտ մեծ գրգռություն է պատահում այստեղ,– ասաց մր. Չիլիպը, ցուցամատով ճակատին զարնելով։– Ձեր զբաղմունքը հատկավ շատ հոգնեցուցիչ է, սըր։

– Ո՞ր գավառում եք բնակվում այժմ,– հարցրի ես, դոկտորի կողքին նստելով։

– Այժմ հաստատված եմ Բըրի Սեյնտ Էդմընսի մոտերքում, սըր,– ասաց մր. Չիլիպը։– Կինս իր հորից մի փոքրիկ ագարակ ժառանգեց. ես էլ այնտեղ մի փոքրիկ պաշտոն ձեռք բերի, որ բավական հաջող առաջ եմ տանում, ինչ որ հաճությամբ կլսեք։ Աղջիկս արդեն մի չափահաս օրիորդ է, սըր,– ասաց մր. Չիլիպը, գլուխն արագ թոթվելով։– Անցյալ շաբաթ մայրիկը հարկ համարեց նրա շրջազգեստի փեշերը երկու ծալքի չափ երկարացնել։ Ժամանակը շուտ է թռչում, սիրելի սըր։

Այս խորհրդածությունն անելուց հետո փոքրիկ մարդը իր դատարկ բաժակը բերանին դրեց։ Ես խնդրեցի նրան նորից լցնել, և թույլ տալ մյուս բաժակով ընկերանալ իրեն։

– Թող այդպես լինի, սըր,– ասաց մր. Չիլիպը։– Թեև ավելի խմելը կանոնիս հակառակ է, բայց ձեզ հետ խոսակցելու հաճույքից չեմ կարող ինձ զրկել։ Կարծես երեկ էր, որ պատիվ ունեի կարմրուկից բժշկելու ձեզ։ Շատ լավ պրծանք այդ փորձանքից, սըր։

Շնորհակալ եղա այդ հաճոյական խոսքերի համար և պատվիրեցի սպասավորին նիգըս[87] բերել։

– Ահա մի անսովոր քեֆ,– ասաց մր. Չիլիպը, իր բաժակը խառնելով,– սակայն ինչպե՞ս ընդդիմանալ այս արտակարգ պատեհության։ Ընտանիք ունե՞ք, սիրելի սըր։

Գլուխս շարժեցի։

– Գիտեմ, սըր, որ շատ ծանր կորուստ եք կրել,– ասաց մր. Չիլիպը։– Այդ մասին լսել եմ ձեր խորթ հորքուրից։ Խիստ կին է, չէ՞, սըր։

– Այո՛, բավական խիստ,– ասացի ես։– Որտե՞ղ եք տեսել նրան, մր. Չիլիպ։

– Ինչպե՞ս թե որտեղ,– կրկնեց մր. Չիլիպը։– Մի՞թե չգիտեք, որ ձեր խորթ հայրը այժմ իմ հարևանն է։

– Չգիտեմ։

– Նա իրոք իմ հարևանն է, սըր։ Եվ ամուսնացել է մի ջահել լեդիի հետ և մի սիրուն օժիտ ստացել... մի փառավոր ագարակ։ Խեղճ աղջիկ... Սակայն ո՞վ գիտի, թե ձեր ուղեղն ինչ բորբոքման մեջ է, սըր։ Չեք զգում, որ գրական զբաղմունքը շատ հոգնեցնող բան է, սըր,– հարցրեց դոկտորը զարմանալով։

Խույս տվի պատասխանից և Մեորդստոնին ու նրա քրոջը վերադարձա։

– Ինձ անհայտ չէր, որ նա նորից ամուսնացել է,– ասացի ես։– Դուք նրա տան բժի՞շկն եք։

– Ոչ միշտ, բայց երբեմն հրավիրում են,– պատասխանեց մր. Չիլիպը։– Այո՛, թե՛ մր. և թե՛ մրս. Մեորդստոնի խստության գործարանի գանգաբանական զարգացումը շատ զորեղ է, սըր։ Այդ չի կարելի ուրանալ։

– Չի կարելի,– ասացի ես այնպես ազդու հայացքով, որ մր. Չիլիպը սիրտ առավ ու նիգըսով քաջալերված՝ գլուխը մի քանի անգամ ամուր շարժեց։ Հետո գոչեց.

– Է՛հ, էլ ի՞նչ ասեմ, մր. Կոպպերֆիլդ։ Մենք հո անցյալը հիշո՛ւմ ենք։

– Ուրեմն դարձյա՞լ իրենց հին էշն են քշում, այդ եղբայրն ու քույրը,– հարցրի ես։

– Ինչպե՞ս ասեմ, սիրելի սըր,– պատասխանեց մր. Չիլիպը։– Բժիշկներս, որ շատ տներում մուտք ունենք, պարտավոր ենք կույր ու խուլ լինել այն դեպքերում, որոնք անմիջապես մեր պաշտոնին չեն վերաբերում... Այնուամենայնիվ կարող եմ ասել, որ այդ եղբայրն ու քույրը սաստիկ դաժան ու անողոք մարդիկ են թե՛ այս կյանքի և թե՛ հանդերձյալի նկատամամբ։

[87] Negus — գինեխառն օշարակ։

– Ասենք թե հանդերձյալ կյանքում նրանց կամքը հարցնող լինի,– նկատեցի ես։– Ավելի լավ է իմանալ, թե այս կյանքի վերաբերմամբ ի՞նչ են անում։

Մր. Չիլիպը գլուխը թոթվեց, նիգըսը խառնեց ու մի քանի կաթիլ կուլ տվեց։

– Հիանալի տիկին է, սըր,– ասաց մր. Չիլիպը։

– Ո՞վ, նոր մրս. Մեորդստո՞նը։

– Այո՛, իրավ հիանալի կին,– կրկնեց դոկտորը,– շատ սիրելի, աննման։ Մրս. Չիլիպի ասելով ամուսնությունից հետո կնոջ հոգին միանգամայն ընկճվել է, և նա այժմ խելագարի պես բան է դարձել։ Սա է մրս. Չիլիպի կարծիքը, և դուք գիտեք, որ կանայք շատ սրատես են։

– Պետք է կարծել,– ասացի ես,– թե եղբայր ու քույր աշխատել են իրենց ատելի բարքին համեմատ նրա միտքը ծռել, թեքել։ Աստված օգնի խղճուկին։ Եվ, անշուշտ, հասած կլինեն իրենց փափագին։

– Այո՛, սըր,– հաստատեց մր. Չիլիպը։– Սկզբում տաք-տաք վեճեր կային նրանց միջև, իսկ այժմ թշվառ կինը մի կատարյալ ստվեր է... Մտերմաբար կասեմ, սըր, որ երբ քույրն էլ եկավ իր եղբորն օգնելու, քույր ու եղբայր միաբան ջանքով համարյա թե ապուշ դարձրին խեղճ կնոջը։

Ասացի, թե հեշտ է հավատալ այդ բանին։

– Համարձակ կասեմ,– շարունակեց մր. Չիլիպը, մի նոր կաթիլ կուլ տալով։– Մեր մեջ մնա, սըր. խեղճի մայրը գերեզման մտավ աղջկա վշտից։ Հավանական է, որ աղջիկն էլ շուտով գերեզման իջնի իր ամուսնու ու տալի բիրտ վարմունքից, բռնությունից։ Ամուսնանալուց առաջ նա մի առույգ, սիրուն էակ էր. այժմ բոլորովին մաշվել է։ Մարդն ու տալը նրա գլխին մի-մի դահիճ են։ Այդ էր, որ մրս. Չիլիպը դեռ անցյալ շաբաթ հաղորդեց ինձ։ Հավաստի եղեք, սիրելի սըր, որ կանայք սրատես դիտողներ են։ Մրս. Չիլիպն էր շատ սրատես է։

– Եվ մարդը դեռ շարունակո՞ւմ է բարեպաշտ ձևանալ,– ասացի ես։– Մինչև անգամ ամաչում եմ, որ կցում եմ այդ ածականը, մր. Մեորդստոնի անվանը։

– Իմ կնոջ զարմանալի նկատողություններից մեկն էլ դա է, սիրելի սըր,– ասաց մր. Չիլիպը, որի աչքերն արդեն խմիչքից կարմրել էին։– Մրս. Չիլիպը,– շարունակեց նա շատ մեղմ ձայնով,– համարյա թե ինձ շանթահար արեց, երբ ասաց, թե մր. Մեորդստոնը մի գերբնական կատարելություն է համարում իրեն։ Այդ լսելիս ես այնպես թուլացա, որ եթե ուզենայիք, մի փետրի թեթև շոշափումով կտապալեիք ինձ։ Տեսեք, սըր, որ աստիճան դիտող են կանայք։

– Ներքին բնազդով,– ասացի ես, հիացնելով մր. Չիլիպին։

– Անչափ ուրախ եմ, սըր, որ կարծիքս այդպես հաստատում եք,– հարեց նա։– Հավատացեք, ես սակավ եմ համարձակվում բժշկության չվերաբերող կարծիք հայտնել... Երբեմն Մեորդստոնն այնպիսի բաներ է քարոզում բազմամարդ միտինգների մեջ... այնպիսի բաներ, որ... Սակայն որքան նա բռնակալ է, այնքան էլ նրա քարոզած դավանանքն է բռնակալ և անգութ։ Այս ասողն էլ մրս. Չիլիպն է, սըր։

– Եվ անշուշտ ճշմարիտ է մրս. Չիլիպի ասածը,– վրա բերի ես։

– Այդ դեռ քիչ է,– շարունակեց քաջալերված բժիշկը։– Մրս. Չիլիպի ասելով՝ այդ մարդկանց կրոնը ուրիշ բան չէ, քան իրենց դատողությունն ու չարությունը ծածկող մի դիմակ։ Եվ գիտեք ի՞նչ կա,– ասաց բժիշկը, գլուխը թեթև հակելով,– ես չեմ գտնում Ավետարանի մեջ որևէ խոսք, որ մր. Մեորդստոնի ու միս Մեորդստոնի դավանանքն արդարացներ։

– Եվ չեք գտնի,– ասացի ես։

– Այս էլ կա,– շարունակեց մր. Չիլիպը,– որ նրանք սաստիկ ատված են։ Եվ որովհետև երկուսն էլ իրենց չսիրողներին ազատ, համարձակ նզովում են, հավանական է, որ մեր

գավառից շատերը գեհենի կրակին զոհ դառնան։ Բայց մրս. Չիլիպի ասելով, սըր, հարատև պատուհաս կրողը հենց իրենք են, որովհետև լոկ իրենց սիրտը պաշտելով, միայն դրանով են կերակրվում, մինչդեռ նրանց սիրտը շատ անպիտան սնունդ է։ Այժմ, սըր, եթե թույլ տաք, դարձյալ ձեր ուղեղին կգամ... Արդյոք անչափ չե՞ք գրգռում...

Այդ նյութից մր. Չիլիպին հեռացնելը դժվար չէր, քանի որ նիգըսի ազդեցությամբ ինքն արդեն իր ուղեղը գրգռել էր։ Ես հրավիրեցի նրան իր սեփական գործերից խոսել, և նա մի ամբողջ կես ժամ ճառելով, ի միջի այլոց հաղորդեց, թե այս անգամ իր Գրեյս Ինն գալու նպատակն է՝ բժշկական վկայություն տալ մի հիվանդի մասին, որ հարբելուց խելագարվել է։

– Եվ գիտեք, աըր,– ասաց մր. Չիլիպը,– այսպիսի պարագաներում ես չափազանց նյարդային եմ։ Անկարող եմ հանդարտ մնալ, զայրանում եմ։ Արդյոք գիտե՞ք, մր. Կոպպերֆիլդ, թե որքան ժամանակ պետք եղավ ինձ, մինչև որ նյարդերս կարգի բերի ձեր ծննդյան գիշերը, երբ նստած էի այն ահարկու լեդիի հետ։

Ասացի մր. Չիլիպին, թե առավոտյան գնալու եմ այն գիշերվա հրեշի մոտ. թե այդ հրեշն իմ տատն է, աշխարհիս ամենաբարի տիկինը, ինչպես ինքն էլ կստուգի, եթե միայն ավելի մոտիկ ծանոթանա նրա հետ։ Սակայն մր. Չիլիպն այդ տիկնոջը կրկին տեսնելու գաղափարից անգամ սարսափեց և դողդոջ ժպիտով հարցրեց. «Մի՞թե, սըր։ Իրա՞վ եք ասում»։ Եվ այդ ասելուն պես սպասավորին հրամայեց մի մոմ բերել և իսկույն ննջարանը փախավ, անշուշտ կարծելով, թե ուրիշ ոչ մի տեղ ապահովություն չի գտնի։ Չեմ ասի, թե նա նիգըսից դանդաղում էր, բայց հավաստի եմ, որ նրա փոքրիկ շնչերակը մի րոպեում գոնե երեք զարկ ավելի կտար, քան թե տատիս հուսախաբության այն նշանավոր գիշերը, երբ նա իր գլխանոցով դոկտորի գլխին հարվածեց։

Կես-գիշեր էր։ Հոգնած էի։ Դոկտորից հետո ես էլ քնելու գնացի։

Հետևյալ օրը դիլիժանսով Դուվր դիմեցի, ողջ-առողջ այնտեղ հասա և տատիս հյուրասենյակը մտա, ուր այժմ նա (ակնոցներ հագած) թեյ ընդունելու վրա էր։ Տատս, մր. Դիկը ու պառավ Պեգգոտին, որ տատիս տնտեսուհին էր, ուրախության արտասուքով ողջունեցին ինձ։ Առաջին հուզմունքից հետո, երբ սկսեցինք զվարթ խոսել, ես պատմեցի մր. Չիլիպի հետ տեսնվելս և այն սարսափը, որ նա դեռ զգում է տատիս հիշելիս, և տատս անչափ զվարճացավ։ Նա ու Պեգգոտին այդ առթիվ շատ բաներ հաղորդեցին խեղճ մորս երկրորդ ամուսնու և նրա «մարդասպան քրոջ» մասին... որին տատս, ինչ պատիժ էլ կրելու լիներ, ամենևին չէր հոժարվի մի քրիստոնեական և կամ ուրիշ անուն տալ։

Ի. ԳԼՈՒԽ
Ագնես

Տատս ու ես մինչև ուշ գիշեր խոսելով, նստեցինք։ Նա ինձ պատմեց, թե գաղթականներից միշտ ուրախալի և հուսալիր նամակներ են գալիս. թե մր. Միկաբրը մի քանի անգամ մանր-մունր գումար է ղրկել այն «դրամական հաշիվները» մաքրելու համար, որոնց մեջ միշտ պետք էր ճշտապահ լինել, ինչպես որ «մարդը մարդու հետ». Ջեննետը, որ նորից էր տատիս մոտ մտել, արական սեռն ատելու ուխտից վերջ ի վերջո հրաժարվելով, մի ունևոր գինեպանի հետ է ամուսնացել, և թե տատս անձամբ հավանություն է տվել այդ խորհրդավոր հրաժեշտին ու նրանց հարսանիքը իր իսկ ներկայությամբ պատվել։ Այս բոլորը տատս պատմեց ուրիշ բաների հետ միասին, որ արդեն իմ ստացած նամակներից փոքր ի շատե գիտեի. մր. Դիկին էլ չմոռացավ հիշել։ Իմացա, որ մր. Դիկն անդուլ զբաղված է ձեռքն ընկնող ամեն բան արտագրելով. թե նրան արդեն հաջողվել էր հեռու պահել Կառլոս Առաջին թագավորին. թե տատս անչափ երջանիկ է վերջապես թագավորից ազատված ու գոհ տեսնելով այդ մարդուն,

և թե (մի վերջաբան, որ շատ նոր չէր) իրենից զատ ոչ ոք չգիտի և չի կարող գիտենալ, թե ինչ արժի այդ մարդը։

– Իսկ Կենտըրբըրի ե՞րբ կերթաս, Տրոտ,– ասաց տատս, աջս շոյելով, մինչ նստած էինք վառարանի առջև։

– Հենց վաղը, միայն կցանկանայի, որ դու էլ գաս։

– Ո՛չ, Տրոտ,– ասաց տատս իրեն հատու եղանակով։– Ես իմ տեղը կմնամ։

– Ուրեմն ես մենակ կերթամ։ Այսօր անգամ այդ քաղաքում կանգ կառնեի, եթե չշտապեի քեզ տեսնել։

Տատս կարծես գոհ մնաց, բայց և այնպես պատասխանեց.

– Հը՛մ, իմ զառամած ոսկորները մինչև վաղն էլ կսպասեին, Տրոտ։

Եվ վերստին աջս շոյեց։ Ես մտահույզ մտիկ էի անում կրակին։ Այո՛, մտահույզ, որովհետև տուն հասնելուց և Ագնեսին այսպես մոտենալուցս հետո՝ չէի կարող չզգալ զղջանքի նորոգվելը սրտիս մեջ, այն զղջանքի, որ ինձ համար արդեն վաղուց մտածության նյութ էր դարձել։ Թեև այդ զգացումը սփոփական էր և այն տեսակետից խրատական, որ ինձ ցույց էր տալիս, ինչ-որ պիտի իմացած լինեի և զանց էի արել իմանալ իմ ջահել հասակում,– բայց և այնպես զղջանք էր։ Այժմ կարծես նորից էի լսում և ավելի լավ հասկանում տատիս խոսքերը. «Օ՛հ, Տրոտ, կույր ես, կո՛ւյր»։

Երկուսս էլ մի քանի րոպե լուռ էինք։ Տատս ուշի-ուշով դիտում էր ինձ. երևի թե մտքերիս ներքին ընթացքին էր հետևում։

– Այժմ նրա հայրը մի ալևոր ծերունի է,– ասաց տատս,– թեև մյուս կողմից մի ավելի արժանավոր, ուղղված մարդ։ Էլ չես տեսնի, որ մարդկային ամեն ջահերը, խինդն ու վիշտը անձնական կարճ ու գծուծ չափով չափեր։ Հավատա, որդյակ, այդ շահերն այնքան փանաքի բաներ չեն, որ ներելի լինի մի այդպիսի չնչին չափով չափել նրանց։

– Իրավ որ չեն,– ասացի ես։

– Իսկ Ագնեսին այնպես բարի, սիրելի, խելոք և անշահասեր կտեսնես, ինչպես միշտ էր,– շարունակեց տատս։– Եթե ես մի ավելի բարձր գովասանք գիտենայի, անշուշտ նրան կընծայեի, Տրոտ։

Դրանից ավելի բարձր գովասանք Ագնեսի հասցեին և ավելի սուր կշտամբանք իմ հասցեին չէր կարող լինել։ Օ՛հ, որքան մոլորված էի իմ շաղվից։

– Եթե նա իր շուրջը հավաքած աղջիկներին էլ այն հոգով է դաստիարակում, որ իր նման մարդիկ դառնան,– ասաց տատս հուզված սրտով,– այն ժամանակ երկինքն էլ կվկայի, Տրոտ, որ նրա կյանքը մի ազնիվ կյանք կլինի։ Երջանիկ լինել, ուրիշներին օգուտ տալով, ինչպես մի օր ինքն ասաց։ Եվ մի՞թե կարելի է ուրիշների օգտին նվիրել և անձնամբ երջանիկ չլինել։

– Արդյոք Ագնեսն ունի՞ մի. . .

Ես ավելի մտածում էի լսելի կերպով, քան խոսում։

– Մի ի՞նչ, հը՞,– հարցրեց տատս շեշտակի։

– Մի պաշտող,– ասացի ես։

–Ո՛չ թե մի, այլ տա՛սը հատ,– գրգռված հպարտությամբ գոչեց տատս։– Քո մեկնելուց հետո, հոգյակ իմ, քսան անգամ կամուսնանար, եթե ուզենար։

– Անտարակույս, սիրելի տատիկ։ Բայց մի այնպիսի խոսնայր ունի՞, որ լիովին նրան արժանի լիներ։ Պաշտողներ, անշուշտ, շա՛տ կունենա։

Տատս մի վայրկյան լուռ մնաց ու ձեռքը կզակին դեմ տվեց: Հետո ասաց, աչքերը վրաս հառելով.

– Ենթադրում եմ, Տրոտ, թե դեպի մեկը հակված կլինի:

– Եվ այն մեկից գնահատված,– հարեցի ես:

– Տրոտ,– ասաց տատս լրջորեն,– չեմ կարող պնդել: Արդեն ասածս էլ իրավունք չունեի ասելու: Այդ բանը նա ինձ երբեք չի հայտնել. դա իմ կարծիքն է, լոկ կասկած իմ կողմից:

Եվ տատս այնպես ուշադիր և զգույշ կերպով աչքերիս նայեց (մինչև անգամ դողաց), որ ես իսկույն տեսա, թե ուզում է ծածուկ միտքս ըմբռնել: Ինձ անհրաժեշտ էր օգնության կանչել այն բոլոր վճիռները, որ արել էի այնքան օրեր ու գիշերներ սրտիս դեմ մաքառելով:

– Եթե այդպես է, տատիկ,– սկսեցի ես,– և հուսամ, որ այդպես լինի...

– Չեմ ասում, թե այդպես է կամ այդպես չէ,– կտրողաբար նկատեց տատս:– Պետք չէ, որ իմ կասկածներով առաջնորդվես: Գուցե նրանք անհիմն են: Լավ է՝ դրանց գաղտնի պահիր: Ես խոսելու իրավունք չունեմ:

– Եթե այդպես է,– կրկնեցի ես,– մի օր Ագնեսն ինձ բանի էությունը կհայտնի: Մի քույր, որին այնքան վստահել եմ իմ գաղտնիքը, տատիկ, իրենն էլ հարկավ չի ծածկի ինձնից:

Տատս աչքերը հանդարտ մի կողմ դարձրեց և մի ձեռքով մտախոհ ծածկեց: Փոքր-ինչ հետո մյուսը ուսիս դրեց, և այսպես նստած մնացինք՝ առանց մի խոսք ասելու. ապա նա իր ննջարանը քաշվեց, ես էլ՝ իմը:

Առավոտը լուսանալուն պես վեր կացա ու դուրս եկա աշակերտության տարիներիս ասպարեզը տեսնելու: Չեմ կարող ասել, թե արդեն երջանիկ էի անձիս վրա տարած հաղթանակիս վստահությամբ և կամ Ագնեսին փոքր-ինչ հետո տեսնելու հույսով:

Ինձ լավ հայտնի ճանապարհը շուտով անցա և մտա այն լռիկ փողոցները, ուր յուրաքանչյուր քար դասագրքիս պես ինձ ծանոթ էր: Ոտքով մոտեցա հին շենքին, բայց և իսկույն հեռացա. սրտիս թնդյունից չէի վստահում ներս մտնել: Հետո նորից մոտեցա և անկյունի աշտարակի ցածր պատուհանից ներս նայելով,– ուր մի ժամանակ Ուրիաս Հիպն ու հետո էլ մր. Միկաբրն էր աշխատում,– նկատեցի, որ այժմ դա մի փոքրիկ հյուրասենյակ է, և ոչ թե գրասենյակ: Ուրիշ մասերին գալով, հին տունը դարձյալ նույնն էր՝ մաքուր ու կոկիկ, ինչպես որ իմ տեսնելուս առաջին օրը: Մի նոր սպասուհի դուռը բացեց: Ես խնդրեցի նրան միս Ուիկֆիլդին հայտնել, թե մի պարոն բարև է բերել նրա ուղևոր բարեկամից: Սպասուհին ինձ վերև հրավիրեց (զգուշանալով հին աստիճաններից, որոնց հետ ես իրենից ավելի ծանոթ էի), և ես մտա դահլիճը, ուր ոչ մի բան չէր փոխվել: Դարակների վրա միևնույն գրքերն էին շարված, որ մի ժամանակ Ագնեսն ու ես միասին էինք կարդացել, և այն փոքրիկ սեղանը, որի առջև այնքան գիշեր դաս էի սերտել, դարձյալ իր առաջվա անկյունումն էր: Հիպի ու նրա մոր ներս սողալով առաջ եկած մանր-մունր փոփոխությունները այժմ նորից վերացված էին, և ամեն բան նույն դիրքն ուներ, ինչ որ նախկին երջանկության օրերում:

Պատուհանին մոտեցա և սկսեցի հին փողոցի տներին նայել, մտաբերելով, թե ինչպե՞ս էի դիտում նրանց անձրևային երեկոները, երբ դեռ նոր էի այնտեղ եկել. ինչեր էի մտածում պատուհանների տակով անցնող մարդկանց մասին և ինչպես նայում ամեն մեկին, մինչ կանայք մայթի վրա մուճակներով շաչում էին և հորդ անձրևը ջրհորդաններից թափվելով, ամբողջ ճամփան հեղեղում էր: Այդ զգացումն էլ սրտումս վառ նորոգվեց, որով դիտել էի գիշերվա մթնով վերադարձող բեռնակիրներին, հոգնած, թրջված մշակներին, և ասես թե նորից զգացի գետնի, թաց տերևների ու թփերի բուրումը, ինչպես և օդը, որ երբեմն շնչել էի տաժանակիր թափառումներիս միջոցին:

Դռնակի ձայնից սթափվելով, շուռ եկա: Ագնեսի սիրուն ու ջինջ հայացքին հանդիպեցի: Նա կանգ առավ ու ձեռքը կրծքին դրեց: Ես գրկեցի նրան:

– Ագնե՛ս, իմ սրտակից ընկերուհիս։ Կարծեմ գալս անսպասելի էր։

– Ո՛չ, ո՛չ, Տրոտուդ։ Շատ ուրախ եմ տեսնել քեզ։

– Անգին Ագնես, որքա՛ն երջանիկ եմ ձեզ վերստին տեսնելով։

Ես նրան սրտիս սեղմեցի, և երկուսս էլ մի քանի վայրկյան լուռ մնացինք։ Հետո իրար մոտ նստեցինք, և ես նրա հրեշտակային երեսի վրա միևնույն քաղցր ժպիտը տեսա, որ տարիներից ի վեր օր ու գիշեր երևացել էր աչքերիս։

Նա այնպես պարկեշտ էր, այնպես գեղեցիկ, այնպես սիրելի, և ես նրան այնքան երախտապարտ էի, որ զգացումս արտահայտելու խոսք չգտա։ Ուզում էի օրհնել նրան, շնորհակալ լինել ու պատմել (ինչպես հաճախ պատմել էի նամակներով) թե նա իմ վրա ինչ ազդեցություն ունի. սակայն ջանքերս զուր եղան։ Իմ սերս ու ուրախությունը մունջ էին։

Նա իր հեզիկ անդորրությամբ հուզումս մեղմեց. հիշեցրեց մեր բաժանման ժամանակը. լուր տվեց ինձ Էմլիի վերաբերյալ, որին այն ժամանակ թաքուն այցելել էր մի քանի անգամ, և սիրով խոսեց Դորայի գերեզմանի մասին։ Նա իր ազնիվ սրտի անվրեպ բնազդով հիշողությանս լարերն այնպես թեթև շոշափեց, որ ոչ մի անհերդաշնակ ձայն չհանեցին, և ես ականջ էի դնում այդ տխրական ու հեռավոր նվագին՝ առանց ամենևին վախենալու նրա հարուցած հիշատակներից։ Եվ ինչո՞ւ պիտի վախենայի, քանի որ նվագի մեջ տիրաբար իշխողը կյանքիս բարի հրեշտակն էր։

– Իսկ դո՞ւք, Ագնես,– ասացի ես փոքր-ինչ հետո։– Ձեր մասին էլ կցանկանայի լսել։ Գրեթե ոչինչ չասացիր, թե ի՞նչ էիր անում այսքան ժամանակ։

– Ի՞նչ ասեի,– պատասխանեց նա զվարթ ժպիտով։– Հայրիկս առողջ է, և մենք հանգիստ նստած ենք մեր հին տանը։ Տագնապն անցավ. այս տունն այժմ դարձյալ մերն է։ Այսքանն իմանալուց հետո՝ ամեն բան գիտեք, սիրելի Տրոտուդ։

– Միթե Ագնես, ամե՞ն բան,– ասացի ես։

Նա փոքր-ինչ ապշած նայեց երեսիս։

– Եվ ուրիշ ոչի՞նչ, քույրիկ իմ։

Ագնեսի դեմքի գույնը հանկարծ թռավ, նորից ետ եկավ, նորից թռավ։ Նա կարծես թե տրտմությամբ ժպտաց։

Ուզում էի նրա միտքը տատիս ակնարկած նյութի վրա ուղղել, որովհետև ինչքան էլ ինձ նրա խոստովանությունը դառը լիներ, ես պարտավոր էի սիրտս սանձել և կատարել պարտքս դեպի նա։

– Շա՞տ եք զբաղված, սիրելի Ագնես։

– Իմ դպրոցո՞վ,– ասաց նա ու վերստին զվարթ-զվարթ նայեց երեսիս։

– Այո՛։ Շատ դժվար գործ է, չէ՞, Ագնես։

– Բայց և այնքան զվարճալի, որ հանցանք կլիներ դժվարությունից խոսել։

– Աշխարհումս բարի գործ չկա, որ ձեզ համար դժվար լիներ,– ասացի ես։

Ագնեսի գույնը նորից եկավ, նորից գնաց, և երբ նա գլուխը կախեց, ես դարձյալ առաջվա տրտում ժպիտը տեսա։

– Հարկավ կուզենաք հայրիկին տեսնել,– ասաց Ագնեսը զվարթությամբ,– և այսօր անշուշտ մեզ մոտ կմնաք։ Գուցե և ուզենաք ձեր հատուկ ննջարանում գիշերել։ Այդ սենյակը մենք միշտ ձերն ենք անվանում։

Այդ անել չէի կարող, որովհետև նույն գիշերը վերադառնալու խոսք էի տվել տատիկիս. սակայն մեծ սիրով հանձն առա ամբողջ օրը հյուր մնալ։

– Առժամանակ փոքր-ինչ անելու բան ունեմ և պիտի գնամ,– ասաց Ագնեսը,– բայց ահա, Տրոտուդ, ձեր հին գրքերը, ձեր դաշնամուրը։

– Անգամ և հին ծաղիկները, կամ թե նույն տեսակները,– ասացի ես, շորջս նայելով։

– Ձեր բացակայության միջոցին ինձ համար մի առանձին հաճույք էր ամեն բան այնպես պահել, ինչպես որ էր մեր մանկության օրերում։ Որքան երջանիկ էինք այն ժամանակ։

– Օ՛հ, աստված իմ, այո՛, այո՛։

– Եվ ամեն մի չնչին բան, որ եղբորս էր հիշեցնում, սրտիս համար մի ցանկալի ընկեր էր,– ասաց Ագնեսը, մտերմաբար վրաս նայելով։– Մինչև անգամ ահա սա էլ կարծես,– ավելացրեց նա, գոտուց կախված բանալիների փոքրիկ քսակը շարժելով,– մի հին երգ էր հնչեցնում։

Ասաց, ժպտաց ու հեռացավ նույն դռնով, որով մտել էր։

Ինձ կմնար այդ քույրական սերը երկյուղածությամբ պահել. միայն դա էր մնացել ինձ. դա էլ արդեն մի գանձ էր։ Եթե տարիների սովորությամբ հաստատուն այդ սուրբ մտերմության հիմունքը գեթ մի անգամ խախտեի, ես այդ գանձից կզրկվեի և դա ընդմիշտ կկորչեր։ Այժմ հաստատ որոշեցի զգուշանալ այդ վտանգից։ Որքան Ագնեսին շատ էի սիրում, այնքան էլ աշխատում էի չմոռանալ այդ։

Մի պտույտ արի փողոցներում, տեսա նախկին հակառակորդիս՝ այժմ ոստիկան դարձած մսագործին,– որի իշխանության գավազանը կրպակի մեջ կախված էր,– աչքի անցկացրի այն տեղը, ուր մի օր ես ու նա կռվել էինք, և հիշեցի միս Շեֆրդին և ավագ միս Լարկինսին և այն բոլոր ունայն կրքերը, չնչին հակումներն ու խորշոմները, որոնք հուզել էին ինձ մի ժամանակ։ Հիշողությանս մեջ՝ Ագնեսից զատ՝ գրեթե ոչինչ չէր մնացել այն օրերից, և նա, որ հանապազ կյանքիս աստղն էր, այժմ ավելի պայծառ էր փայլում հորիզոնի վրա։

Ետ որ եկա, մր. Ուիկֆիլդն արդեն տանն էր, այժմ նա քաղաքից դուրս մի պարտեղ ուներ, ուր ամեն օր զբաղված էր։ Ես նրան այնպես գտա, ինչպես որ տատիկս էր նկարագրել։ Ճաշի նստեցինք մոտ վեց-յոթ փոքրիկ-փոքրիկ աղջիկների հետ. տանտերը կարծես պատի վրա կախված իր սիրուն պատկերի ստվերն էր։

Այդ տան նախկին խաղաղությունն ու հանգիստը վերստին սկսել էր թագավորել նույն հարկի տակ։ Ճաշից հետո, որի միջոցին ո՛չ մր. Ուիկֆիլդը գինի խմեց, ո՛չ էլ ես, վերև բարձրացանք։ Ագնեսը և իր սանիկները սկսեցին երգել, խաղալ, ձեռագործով պարապել։ Թեյից հետո երեխաները մեզ թողին, և մենք երեքս միասին մնացինք, անցյալի մասին խոսելով։

– Այդ անցյալի մեջ շատ բան կա,– ասաց ալևոր մր. Ուիկֆիլդը,– որ ինձ զղջանք, դառն զղջանք, դառն ապաշավանք է պատճառում. և ձեզ հայտնի է, Տրոտուդ, թե ինչո՞ւ, այնուամենայնիվ չէի կամենա մտքիցս հանել նրա հիշատակը, անգամ եթե կարենայի։

Սիրով հավատացի այդ բանին. չէ՞որ Ագնեսը նրա կողքին էր։

– Անցյալի հիշատակը ջնջել,– շարունակեց ալևորը,– կնշանակի մի այնպիսի համբերության, անձնվիրության, հավատարմության ու մանկական սիրո հիշատակ ջնջել, որ միշտ գեթ սրտումս անջինջ մնա, եթե ոչ մտքումս։

– Գիտեմ, սըր, ձեր զգացումը, որ և միշտ հարգել եմ,– ասացի ես մեղմ ձայնով։

ըՈչ ոք, սակայն, չգիտի, և դու անգամ չգիտես,– ասաց ծերունին,– թե որքան է համբերել, ինչ է քաշել և ինչ է արել իմ սիրելի Ագնեսը։

Հոր ասելիքն արգելելու համար՝ Ագնեսը իր աջը մեղմիկ նրա ուսին դրեց։ Ագնեսի երեսն այժմ գունատ էր, շա՛տ գունատ։

– Լա՛վ է, լա՛վ, հոգյակ,– հառաչեց հայրը, ասես թե ուզելով աղջկա սրտից մի ինչ-որ վիշտ փարատել, որ նա կրել էր, գուցե հիմի էլ կրում էր (հիշեցի տատիս ակնարկությունը)։– Սրա մոր մասին ես երբեք բան չեմ ասել, Տրոտուդ։ Բայց թերևս մեկ ուրիշն ասած լինի։

– Երբեք, սըր։

– Այդ պատմությունը թեև կարճ էր, բայց սրտաշարժ. . . նա ինձ հետ իր հոր կամքին հակառակ էր ամուսնացել, և հայրն ուրացավ աղջկան։ Ագնեսը դեռ աշխարհ չեկած՝ կինս հորից ներողություն խնդրեց։ Հայրը մի անողոք մարդ էր. մայրն արդեն վաղուց մեռած։ Հայրն աղջկան մերժեց ու նրա սիրտը խորտակեց։

Ագնեսը հոր ուսին հենվեց, հետո նրա վզով փարվեց։

– Հանգուցյալի սիրտը շատ քնքուշ էր,– ասաց մր. Ուիկֆիլդը,– և այդ սիրտը չդիմացավ։ Ես նրա բարի բնավորությունը լավ էի ճանաչում. նա ինձ սրտանց սիրում էր, բայց բախտավոր չէր։ Նա ներքին վշտից մաշվում էր։ Արդեն հոր վերջին մերժման ժամանակ տկար ու թույլ էր, և այդ վիշտը նրան սպանեց։ Նա մեռավ, թողնելով երկու ամսական Ագնեսին և այս սպիտակ մազերս, որոնք ծանոթ են քեզ, Տրոտուդ, արդեն մեր տունը մտնելու օրից։

Ծերունին աղջկան համբուրեց։

– Իմ սերը դեպի դստրիկս հիվանդոտ սեր էր, որովհետև հոգիս էլ այն ժամանակ հիվանդ էր։ Սակայն բավ է։ Խոսքս իմ մասին չէ, Տրոտուդ, այլ Ագնեսի ու սրա մոր։ Ասածս էլ բավական է, որ հասկանաս, թե ի՞նչ եմ ես և ի՞նչ էի։ Իսկ թե ի՞նչ է Ագնեսը, բացատրելու հարկ չկա։ Նրա բնավորության մեջ ես միշտ իր թշվառ մոր պատմությունն եմ կարդացել։ Այս էր, որ կամենում էի ասել այս գիշեր, երբ այնքան փոփոխություններից հետո երեքս էլ վերստին միասին ենք նստած։ Վերջացրի։

Ալևորի խոնարհած գլուխն ու դստեր հրեշտակային դեմքը, որ որդիական գորով էր արտահայտում, ավելի լրացրին այդ սրտաշարժ պատմության իմաստը։ Արդեն այդ բնորոշ տեսարանը բավական էր, որ մեր տեսակցության առաջին գիշերվա հիշատակն ընդմիշտ ապրեր մտքիս մեջ։

Ագնեսը վեր կացավ և դաշնամուրին մոտենալով մի քանի հին եղանակներ նվագեց, որ շատ էի լսել այդ սենյակում։

– Արդյոք մտադիր եք նորից ճամփորդել,– հարցրեց ինձ Ագնեսը, երբ որ ես իր մոտ կանգնեցի։

– Քույրս ի՞նչ կասի այդ մասին։

– Կարծեմ չեք գնա։

– Ուրեմն ես էլ, Ագնես, չեմ կարող կարծել, թե կերթամ։

– Քանի որ ինձ եք հարցնում, Տրոտուդ, անկեղծ կասեմ, որ ձեզ պետք չի հեռանալ,– ասաց Ագնեսը մեղմ ձայնով։– Ձեր աճող գրական հռչակն ու հաջողությունը բարիք գործելու նոր միջոց են տալիս ձեզ։ Փութացեք լավ գործադրել այդ միջոցը։ Որքան էլ ես եղբորիցս գոհ լինեմ,– ասաց Ագնեսը աչքերը վրաս հառելով,– ժամանակն ավելի բան կպահանջի նրանից։

– Ինչ որ եմ, ձեզնով եմ, Ագնես։ Այդ լավ գիտեք։

– Ինձնո՞վ, Տրոտուդ։

– Այո՛, Ագնես, անգին քույրիկ,– ասացի ես, կռանալով դեպի նա։– Այսօր ձեզ տեսնելուս պես ուզում էի մի բան ասել, որ Դորայի մահվանից ի վեր մտքումս եմ պահել։ Հիշո՞ւմ եք, ինչպես այն րոպեին մեր սենյակն իջաք և դեպի երկինք մատնացույց արիք։

– Օ՛հ, Տրոտուդ,– ասաց Ագնեսն արտասվալից աչքերով։– Որքան մարդասեր էր, որքան մտերմիկ ու ջահել։ Մի՞թե կարող եմ երբևէ մոռանալ նրան։

– Եվ ինչ որ դուք այն րոպեին էիք ինձ համար, քույրիկ իմ, նույնն էլ միշտ եղել եք – միշտ դեպի վեր մատնանշող, միշտ դեպի բարին առաջնորդող, միշտ դեպի լավագույնը, գերազանցը ուղևորող։

Ագնեսը միայն գլուխը շարժեց։ Նրա արտասուքի միջից դարձյալ առաջվա տրտում ժպիտը նշմարեցի։

– Եվ ես ձեզ այնքան երախտապարտ եմ, Ագնես, այնքան շնորհապարտ, որ խոսք անգամ չեմ կարող գտնել սրտիս զգացումն արտահայտելու համար։ Ես կփափագեի իմացնել ձեզ, թեև չգիտեմ ինչ կերպով, որ մինչև կյանքիս վերջին շունչը ձեզ պիտի նայեմ ու ձեզնով միայն առաջնորդվեմ, ինչպես որ արել եմ անցյալ խավար օրերումս։ Ինչ էլ ապագային պատահի, ինչ նոր կապեր էլ հաստատեք, ինչ փոփոխություն էլ լինի մեր միջև, ես միշտ պիտի ձեզ մտիկ անեմ ու ձեզ սիրեմ, ինչպես որ հիմի եմ անում և հանապազ արել եմ։ Դուք միշտ իմ ապավենն ու սփոփիչը կլինեք, ինչպես և միշտ եղել եք։ Մինչև իմ վերջին շունչը, ազնիվ քույրիկ, ես տեսնելու եմ ձեզ աչքիս առջև՝ միշտ դեպի վեր մատնանաշելիս։

Նա ձեռքս բռնեց ու ասաց, թե ինձնով պարծենում է, թեև ես իր արժեքից շատ ավելի եմ գովում իրեն։ Հետո հանդարտ շարունակեց նվագել, սակայն առանց աչքերն ինձնից դարձնելու։

– Գիտե՞ք, Ագնես,– ասացի ես,– այն բոլորը, ինչ որ այս երեկո զգում եմ, կարծես թե այն զգացման մի մասն է, որ ազդել էիք ինձ, երբ առաջին անգամ երևացիք աչքիս. . . և ազդում էիք, մինչ ձեզ մոտ նստած պարապում էի աշակերտությանս օրերում։

– Դուք գիտեիք, որ մայր չունեմ,– ասաց Ագնեսը ժպտալով,– և բնական է, որ կարեկցեիք ինձ։

– Ավելի քան այդ, Ագնես։ Ես զգում էի՝ իբր թե գիտեմ ձեր հոր հաղորդած պատմությունը, գիտեի, որ դուք ձեր շուրջը մի անբացատրելի, մի քաղցր, մի ամոքիչ ազդեցություն եք տարածում, մի զվարթություն, որ տրտմության հավասար կգար (ինչպես որ այժմ հասկանում եմ), եթե ձեր տեղը մեկ ուրիշը լիներ։

Ագնեսը մեղմիվ շարունակում էր նվագել ու վրաս նայել։

– Ծիծաղելի չե՞ն թվում ձեզ այն ժամանակվա ցնորքներս, Ագնես։

– Ո՛չ։

– Եվ չե՞ք ծիծաղի, եթե ասեմ, որ ես մինչև անգամ այն միջոցին վստահ էի, որ ինչքան էլ հանգամանքները դառը լինեն, բայց կարող եք սրտանց սիրել և մինչև ձեր վերջին շունչը հաստատ սիրել։ Չե՞ք ծիծաղի։

– Ո՛չ, ո՛չ, ո՛չ։

Նրա երեսի վրա տրտմության ստվեր խաղաց և իսկույն անցավ։ Նա շարունակ նվագում էր ու հանդարտ ժպիտով վրաս նայում։

Երբ մութ գիշերով Լոնդոն էի վերադառնում և քամին մղում էր ինձ, մի անվանելի հիշատակի պես մտքերիս միջով այն էր անցնում, թե Ագնեսը բախտավոր չէ։ Ես ինքս էլ բախտավոր չէի, բայց գոնե ինձ հաջողվել էր մի կնիք դնել անցյալիս վրա. անցյալն արդեն ետ չէր գա։ Ագնեսի դեպի վեր ուղղած ձեռքերը հիշելով, մտածում էի այն խորհրդավոր երկնքի մասին, ուր մի օր արժանի կլինեմ երկրիս վրա անծանոթ սիրով սիրել նրան և պատմել, թե որքան եմ մաքառել սրտիս հետ, մինչ այս աշխարհումն էի սիրում նրան։

ԻԱ. ԳԼՈՒԽ
Երկու երևելի զղջացողներ

Առժամանակ... համենայն դեպս, մինչև գրքիս ավարտելը, որի համար դեռ մի քանի ամիս կպահանջվեր... ես տատիս մոտ Դուվրում բնակվեցի և այնտեղ՝ պատուհանի առջև նստած, որից երբեմն մտիկ էի անում ծովի մեջ փայլող լուսնի ցոլքին, հանգիստ-հանգիստ առաջ էի տանում իմ գործը։

Հավատարիմ մնալով որոշմանս՝ այն ժամանակ միայն իմ սեփական երկերը հիշատակել, երբ որ նրանք կյանքի զանազան դեպքերի հետ որևէ կապ ունենա,– չպիտի խոսեմ գրական ձգտումներիս, բերկրանքներիս, տագնապներիս ու հաղթանակներիս մասին։ Արդեն ասել եմ, որ հոգուս ամբողջ զորությամբ և ամենամեծ լրջությամբ նվիրվել էի գրականությանը։ Եթե շարադրած գրքերս գեթ փոքր-ինչ արժեք ունեն, իրենք կխոսեն իրենց մասին, իսկ եթե չունեն, ասել է թե զուր են գրված, և մնացածը ոչ ոքի համար հետաքրքիր չի։

Երբեմն Լոնդոն էի գնում՝ կյանքի շարժման մեջ ինքս ինձ մոռանալու և կամ թե Տրեդլսի հետ գործերիս մասին խորհրդակցելու։ Բացակայությանս տարիներին դրամական գործերս նա լավ էր կարգավորել և նրա շնորհիվ դրանք շատ բարգավաճ դրության մեջ էին։ Երբ համբավս աճեց և ինձ անծանոթ անձերից կսկեցին վրաս նամակներ տեղալ,– ըստ մեծի մասին այնպես դատարկ, որ շատ դժվար էր պատասխանել,– ես Տրեդլսին խնդրեցի, որ իմ անունն էլ իր գրասենյակի վրա նշանակի։ Ժիր թղթաբերն այնտեղ էր թողնում իմ հասցեին եկած նամակները. ես էլ պարբերաբար այնտեղ էի տանջվում նրանց կարդալով, ինչպես մի ներքին գործոց նախարար, սակայն առանց թոշակի։

Նամակների մեջ երբեմն շատ սիրալիր առաջարկներ էին երևան գալիս Համայնքի շուրջը թափառող այլևայլ անհատներից՝ իմ անվան տակ դատ վարելու, արդյունքից այսինչ տոկոս ինձ վճարելու պայմանով, եթե միայն հանձն առնեի պրոկտրի պաշտոն ճարել նրանց համար։ Ես մերժում էի այդ առաջարկները, որովհետև առանց այն էլ Համայնքն անկոչ ու կեղծ միջնորդներով վխտում էր և հարկ չկար, որ ես էլ այդ կողմից նրա վիճակի ապականելուն նպաստեի։

Երբ անունս Տրեդլսի դռան վրա լույս տեսավ, աղջիկներն արդեն հեռացել էին, սրաչյա սպասավորն այնպես էր ձևանում, իբր թե լսած չկա Սոֆիի մասին, որը սակայն հետևի սենյակը քաշված՝ կարում կամ գործում էր, մեկ ներքևի ծխոտած պարտեզին մտիկ անելով, մեկ նրա միջի ջրհանին։ Բայց ես միշտ գտնում էի, որ նա զվարթ տանտիկին է և սիրում է երգել, երբ մանավանդ սանդուղքի կողմից մի եկվորի ձայն չէր լսվում։

Սկզբում զարմանում էի, որ Սոֆին հաճախ մի բան է գրում, որ ներս մտնելուս պես սեղանի մեջ էր թաքցնում։ Սակայն գաղտնիքը բացվեց։ Մի ձյունաբեր խոնավ օր Տրեդլսը, դատարանից տուն գալով, գրակալից մի թուղթ հանեց ու հարցրեց ինձ, թե ի՞նչ կասեմ ձեռագրի մասին։

– Ա՛յ, Թոմ, այդ ի՞նչ ես անում,– գոչեց Սոֆին, որ մարդու հողաթափները վառարանի առջև տաքացնելու վրա էր։

– Ի՞նչ կա որ, սիրելիս,– ասաց Թոմը ժպտալով։– Ի՞նչ կասես, Կոպպերֆիլդ։

– Հիանալի ձեռագիր է, վերին աստիճանի սիրուն ու պարզ։ Օրումս չեմ տեսել սրանից ավելի հաստատ ձեռք։

– Կնոջ ձեռքի նման հո չէ՞,– ասաց Տրեդլսը։

– Կնո՞ջ,– կրկնեցի ես։– Կմնա որ սագի թաթի ասեիր։

Տրեդլսը սրտանց ծիծաղեց և հայտնեց, թե թուղթը Սոֆիի գրածն է. թե Սոֆին վճռել է իր մարդու մոտ գրագրի պաշտոն կատարել. թե նա այդ ձեռագիրը մի ընտիր օրինակից յուրացրել է և թե մի ժամում էլ չեմ հիշում քանի մեծագիր թերթեր կարող է արտագրել։ Սոֆին շատ շփոթվեց, երբ մարդն այդ բաներն ինձ պատմեց, և ասաց, որ եթե «Թոմը» դատավոր

անգամ դարձած լիներ, չէր շտապի այդ մասին այնպես արագ լուր տարածել, ինչպես որ շտապում է նրա ձեռագիրը հռչակել։ «Թոմը», սակայն, հերքեց այդ, ասելով թե համենայն դեպս, իր կնոջ ձեռագրով պիտի պարծենա։

– Ի՛նչ պատվական, շնորհալի կին է, սիրելի Տրեդլս,– ասացի ես, երբ որ Սոֆին ծիծաղելով դուրս գնաց։

– Այո՛, Կոպպերֆիլդ, առանց բացառության աշխարհիս առաջին աղջիկն է,– պատասխանեց Տրեդլսը։– Մեկ տեսնեիր՝ ինչպես է կառավարում այս տունը, ինչպես հմուտ է տնտեսության գործերին, որքան խնայող է, կարգապահ, որքան զվարթ է, Կոպպերֆիլդ։

– Արդարև իրավունք ունես նրան գովելու,– ասացի ես։– Երջանիկ մարդ ես, ա՛յ տղա։ Հավաստի եմ, որ դուք իրար հետ աշխարհիս գերերջանիկ մարդիկն եք։

– Վստահ եմ, որ մենք իրոք երջանիկ ենք,– հաստատեց ընկերս։– Պատիվս վկա, երբ տեսնում եմ, թե ինչպես լուսադեմին վեր է կենում, ամեն բան հավաքում, գրագիրների գալուց էլ առաջ վատ ու լավ եղանակին շուկա գնում, հասարակ մթերքներից անգամ համեղ ճաշեր պատրաստում, պուդինգներ ու գաթաներ շինում, ամեն բան մաքուր պահում, ինքն էլ երեկոները, որքան էլ երկար աշխատեմ, կոկիկ ու սիրուն կողքիս նստում և զվարթ դեմքով հոգի ու սիրտ ներշնչում ինձ... Դժվարանում եմ հավատալ, Կոպպերֆիլդ, որ այդ բոլորը ինձ համար է։

Տրեդլսը պատրաստ էր մինչև անգամ կնոջ տաքացրած հողաթափներով ոգևորվել, երբ նրանք հագնելով, ոտքերը հաճությամբ վառարանի վանդակի վրա տարածեց։

– Իրավ որ անհավատալի է,– կրկնեց Տրեդլսը։– Հապա մեր զվարճությունները։ Որքա՛ն էժան են, բայց և որքա՛ն ախորժելի։ Երբ երեկոները տանն ենք մնում, դուռը գոցում և այս վարագույրները, որ ինքն է շինել, ցած ենք թողնում. որտե՞ղ կգտնես մեր բնից ավելի դուրեկան բույն։ Երբ երեկոյան, լավ եղանակին, զբոսնելու ենք դուրս գալիս, հազար տեսակ հաճույք ենք գտնում փողոցներում։ Մտիկ ենք անում գոհարավաճառ խանութների պատուհանին, և ես ասում եմ Սոֆիին, թե ո՞ր ականակուռ ապարանջանը նրա համար կգնեի, եթե միջոց ունենայի. իսկ Սոֆին ցույց է տալիս, թե ո՞ր ոսկե ժամացույցը շղթայով ու զարդերով ինձ կընծայեր, եթե միջոց ունենար։ Հետո ընտրում ենք, թե՞ որ արծաթե գդալները, դանակներն ու պատառաքաղները, կարագի ու մրգի սրիկները, շաքարի ունելիները կառնեինք, եթե մեր գրպանը հաստ լիներ, և հեռանում, ասես թե այդ բոլորն արդեն գնած լինեինք։ Երբեմն՝ մեծ փողոցներում ման գալիս՝ տեսնում ենք մի վարձու տուն և իրար ասում, թե վատ չի լինի վարձել այն, երբ որ ես դատավոր դառնամ, և իսկույն սենյակները բաժանում՝ որը մեզ համար կլինի, որը մեր քույրերի համար և այլն. ապա այն վճռին գալիս, թե վարձելը կամ չվարձելը հանգամանքներից կախված կլինի։ Երբեմն էլ գնում նստում ենք թատրոնի էժան տեղերը, ուր օդը անգամ ինչ ասես արժի, և հոգեպես զվարճանում։ Բեմից հնչող ամեն մի խոսքին Սոֆին սրտանց հավատում է. նույնպես էլ ես։ Վերադարձին կարկանդակ և կամ թե խեցգետին ենք առնում և տանը փառավոր ընթրիք անում, մեր տեսած բաների մասին զրուցելով։ Դե, հավատա, Կոպպերֆիլդ, որ եթե ես լորդ կանցլեր էլ լինեի, մեզ չէր հաջովի այս բոլորը անել։

– Ինչ էլ լինեիր, ազնիվ Տրեդլս,– մտածում էի ես,– սրտիդ միշտ սիրելի ու բարի բան կլիներ։– Այժմ հարկավ էլ կմախքներ չես նկարում,– ասացի ես բարձրաձայն։

– Ի՞նչ ասեմ, Կոպպերֆիլդ,– պատասխանեց նա ծիծաղելով ու կարմրելով,– չէ ասել չեմ կարող։ Դեռ անցյալ օրը, մինչ գրիչը ձեռքիս նստած էի քրեական ատյանի դահլիճում, խելքիս փչեց մեկ փորձ՝ դեռ որքա՞ն եմ հմուտ այդ արվեստին։ Եվ կարծեմ սեղանիս վրա մի կմախքի պատկեր մնաց... կեղծամով։

Երկուսս էլ ծիծաղեցինք, և Տրեդլսը մր. Կրիկլին հիշեց։

– Մեկ տեսնեիր, թե ինչպես է ծերացել,– ասաց նա բարեհամբյուր ժպիտով։

– Մի նամակ եմ ստացել այդ սրիկայից,– ասացի ես։

Ոչ մի ժամանակ այդ սրիկային ներելու այնքան դեմ չէի, որքան այժմ, երբ նրանից անվերջ ծեծված Տրեդլսը գրեթե պատրաստ էր գթալ նրան։

– Մր. Կրիկլի՞ց, մեր տեսչի՞ց,– գոչեց Տրեդլսը։– Դա ի՞նչ հրաշք է։

– Նա էլ այն անձերից մեկն է,– ասացի ես, նամակներս քրքրելով,– որոնք հռչակիս շնորհիվ դիմում են ինձ և այն գյուտը հաղորդում, թե ամեն ժամանակ անչափ սիրել են ինձ։ Կրիկլն այժմ տեսուչ չէ։ Նա վարժարանը թողել է և պաշտոնյա է դարձել Մեդիլսեքսում։

Կարծում էի, թե Տրեդլսը կզարմանա, բայց ամենևին չզարմացավ։

– Ի՞նչ ես կարծում՝ ի՞նչ հնարով է Միդլսեքսի պաշտոնյա դարձել,– հարցրի ես։

– Ո՞վ գիտե,– ասաց Տրեդլսը։– Գուցե մի քվե տված լինի մեկի օգտին, կամ թե մեկին փող պարտք տված, կամ թե մեկից մի բան գնած, կամ թե մեկին մի ուրիշ բանով պարտավորած և կամ թե մի գործ արած մեկի համար, որ մի ծանոթի միջնորդությամբ կարող էր կուսակալին խնդրել, որ նրան մի պաշտոն տան գավառական ատյանում։

– Համենայն դեպս, նա ատյանի անդամ է,– նկատեցի ես։– Եվ ինձ գրում է, թե կփափագեր գործադրության մեջ ցույց տալ ինձ բանտային կարգապահության այն միակ ազդու եղանակը, այն անվրեպ եղանակը, որով կարելի է մի անկեղծ ու հարատև զղջանքի բերել կալանավորներին, և այդ եղանակը, ինչպես գիտես՝ առանձնակի արգելման դրություն է։ Ի՞նչ կասես։

– Այդ գրությա՞ն մասին,– հարցրեց Տրեդլսը լրջորեն։

– Ո՛չ, այլ թե արդյոք հրավերն ընդունե՞մ և քեզ էլ ինձ հետ այնտեղ տանեմ։

– Հակառակ չեմ,– ասաց Տրեդլսը։

– Ուրեմն կգրեմ նրան։ Դու հո կհիշե՞ս, թե ինչպես այդ իսկ Կրիկլը իր որդուն տանից վռնդեց և ինչ կյանք էր վարել տալիս կնոջն ու աղջկան. էլ չեմ ասում ինչպես էր տանջում բոլորիս։

– Շատ լավ,– ասաց Տրեդլսը։

– Սակայն, եթե նրա գրությունը կարդաս, կտեսնես, որ աշխարհիս երեսին չարագործ չկա, ավազակ չկա, որին այդ մարդը չգթար, թեև նրա գութը կարծեմ ուրիշ արարածների վրա չի տարածվում։

Տրեդլսը ուսերը թոթվեց և ամենևին չզարմացավ։ Որոշեցինք, թե երբ գնանք և ըստ այնմ ես նամակ գրեցի մր. Կրիկլին։

Որոշված օրը, և կարծեմ հենց հետևյալ առավոտյան, Տրեդլսը ու ես այն բանտը գնացինք, որ լիազոր մր. Կրիկլի տեսչությանն էր հանձնված։ Բանտը մի ամրակուռ, վիթխարի տուն էր՝ ահագին ծախսով շինված։ Դրա դարբասին մոտենալիս մտածում էի, թե մեր երկրում ինչ աղմուկ կհանեին, եթե մի միամիտ մարդ հանդգներ ասել, թե ավելի լավ կլիներ, եթե այդ շենքի կես գնով մի արհեստագիտական ուսումնարան և կամ ծերերի պատսպարան հիմնեին։

Բաբելոնյան աշտարակի գետնահարկը լինելու արժանի ամրաշեն գրասենյակում մեզ ներկայացրին մեր նախկին մանկավարժին, որ երկու-երեք արթուն օգնականներով և մի քանի նորեկ այցելուներով շրջապատված էր։ Նա չընդունեց ինձ իբրև մի մարդ, որ երբեմն միտքս կրթել էր և քնքուշ սիրով ինձ սիրել։ Տրեդլսին տեսնելով, մր. Կրիկլն ավելի պակաս եռանդով ասաց, թե նրան էլ է կրթել, դաստիարակել և մտերիմ ընկերը եղել։ Արդեն բավական ծերացել էր մեր գերագահ տեսուչն և հարկավ չէր գեցեցկացել։ Դեմքը դարձյալ դաժան էր, իսկ փոքրիկ աչքերը ավելի էին խորն ընկել։ Գլխի առաջվա նոսր ու գորշ մազերից մի հետք անգամ չէր մնացել, և ճաղատ գանգի երակներն ավելի բարետեսիլ չէին դարձել։

Այդ ջենտլմենների բավական երկար խոսակցությունից հետո,– որից պետք էր հետևություն անել, թե աշխարհիս երեսին ոչ մի բան այնքան լուրջ ուշադրության արժանի չէ, որքան կալանավորների գերագույն օգուտը, և թե բանտից դուրս՝ երկրիս վրա էլ հոգալու բան չկա,– սկսեցինք շրջել։ Ճաշի ժամն արդեն հասել էր, նախ մեծ խոհանոցը մտանք, որ յուրաքանչյուր կալանավորի բաժինը ջոկ-ջոկ որոշվում էր, որպեսզի խցիկում տրվի նրան ժամացույցի ճշտությամբ։ Ես կամաց նկատեցի Տրեդլսին, թե արդյոք զարմանալի չէ՞ այդ առատ ու լավ կերակուրների տարբերությունը այն առօրյա սննդից, որ ստանում են՝ էլ չասենք մեր աղքատները, այլ զինվորները, նավաստիները, մշակները, մեր ազնիվ բանվորների մեծ մասը, որոնց հինգ հարյուրից հազիվ թե հինգ հոգի այդպիսի ընտիր ճաշ վայելեն։ Սակայն իմացա, որ «դրությունը» ամեն տարակույս փարատող է և ամեն կասկածի վերջ դնող. մտածել անգամ չէի ուզում, թե կարող է լինել և մի ուրիշ դրություն կամ սիստեմ, որի մասին արժեր խոսել։

Երբ անցնում էինք հոյակապ նրբանցի միջով, ես կամեցա մր. Կրիկլից ու նրա ընկերներից իմանալ, թե ո՞րն է հատկապես այդ գերազանց ու միակ դրության արժեքը, և լսեցի, թե արժեքն այն էր, որ կալանավոր անհատները բոլորովին անջատ են պահվում... այնպես որ ոչ մեկը մյուսի մասին բան չիմանա և հետզհետե այն փրկարար վիճակին հասնի, ուր սրտի անկեղծ ապաշավն ու զղջումն է սկսվում։

Այդ բանն ինձ փոքր-ինչ տարօրինակ թվաց, երբ որ սկսեցինք անհատներին իրենց խցերում աչքի անցկացնել, նրբանցքներում պտույտներ անել, խցերի լուսամուտներին նայելով, և իմացանք, թե ինչպե՞ս են անհատները մատուռ տարվում և այլն։ Անկարելի էր չենթադրել, որ նրանք իրար բավական լավ են ճանաչում և իրար հետ բանակցելու գրեթե ազատ միջոց ունեն։ Այդ հանգամանքը փոքր-ինչ հետո կարծեմ լիովին հաստատվեց, բայց որովհետև մեր այցելության միջոցին անգամ մի թեթև կասկած հայտնելը հայհոյելուն հավասար կլիներ, ես լռեցի ու գոհացա զղջացողներին դիտելով։

Այնտեղ էլ մի մեծ տարակույս ծագեց մտքիս մեջ։ Զղջման տեսակները այնքան միակերպ թվացին ինձ, որքան զգեստավաճառի կրպակների բաճկոններն ու վարտիքներն են միակերպ։ Լսեցի անթիվ մեղայականներ, որոնք իրարից շատ սակավ էին զանազանվում և գրեթե միևնույն բառերով արտահայտվում, որ վերին աստիճանի կասկածելի երևույթ էր։ Տեսա բազմաթիվ աղվեսներ, որոնք պարսավելով պարսավում էին անմատչելի խաղողով լի այգիները, բայց և ոչ մի աղվես չտեսա, որին կարելի լիներ գեթ մի ողկույզ հավատալ։ Նկատելի էր մանավանդ, որ ամենից շատ խոստովանող անհատներն ամենից ավելի են ուշադրություն գրավում, և որ նրանց ինքանհաճ սնապարծությունը և մարդ խաբելու, շլացնելու կարիքը (որ ոմանց մեջ անչափ մեծ էր, ինչպես որ հենց իրենց պատմությունից էլ երևում էր), նրանց դրդում էր ավելի երկարաբան մեղաներ ասել ու մինչև անգամ հաճույք գտնել այդ բանում։

Սակայն մեր այցելության ժամանակ ես այնքան գովասանք լսեցի մի ինչ-որ Քսանյոթ համարի մասին, որը վարչության ասելով մի օրինակելի կալանավոր էր, որ պետք համարեցի բանտի մասին մի վերջնական կարծիք չհայտնել, մինչև որ անձամբ այդ Քսանյոթ համարը չտեսնեմ։ Քսանյոթ համարն էլ, ասացին ինձ, մի պայծառ աստղ է բանտի մեջ, միայն թե դժբախտ այն բանից, որ Իր փայլը փոքր-ինչ նվազ է Քսանութի արտասովոր շողերից։ Այն Քսանյոթ համարը, նրա բարեպաշտիկ հորդորակները և իր մորը գրած սքանչելի նամակները (որոնցով կարծես հրավիրում էր նրան կորստյան ճամփուց ետ կանգնել) այնքան գովեցին, որ ես արդեն նրան տեսնելու փափագ էի զգում։

Պետք եղավ սակայն, անհամբերությունս փոքր-ինչ զսպել, որովհետև Քսանյոթ համարը պահված էր՝ մեր վրա վերջին ազդեցությունն անելու համար։ Վերջապես հասանք նրա խցի դռան, և մր. Կրիկլը, մի փոքրիկ լուսամուտից ներս նայելուն պես, մեծ հիացումով մեզ հայտնեց, թե Քսանյոթ համարը սաղմոս է կարդում։

Նույն վայրկյանին վեց-յոթ գլուխ միասին խցի լուսամուտը պաշարեցին՝ տեսնելու, թե ինչպե՞ս է Սաղմոս կարդում Քսանյոթ համարը, այնպես որ փոքրիկ ծակը բոլորովին փակվեց։ Այդ անհարմարության առաջն առնելու և մաքրափայլ Քսանյոթի հետ հեշտ խոսակցելու համար՝ մր. Կրիկլը հրամայեց խցի դուռը բանալ և Քսանյոթին հրավիրել, որ դուրս գա։ Այդպես էլ արին, և որքան մեծ եղավ Տրեդլսի ու իմ զարմանքը, երբ տեսանք, որ այդ զղջացած, այդ փառավոր Քսանյոթ համարը ուրիշ մարդ չէ, բայց եթե ինքը Ուրիաս Հիպը։

Նա մեզ իսկույն ճանաչեց ու դուրս գալուն պես օրորվելով ասաց.

– Ինչպե՞ս եք, մր. Կոպպերֆիլդ։ Բարով ձեզ, մր. Տրեդլս։

Այդ ողջույնը բոլորին շվարեցրեց. մարդիկ կարծես ապշեցին, որ Քսանյոթ համարը զիջանում է մեզ ուշադրություն շնորհելու։

– Դե, Քսանյոթ,– ասաց մր. Կրիկլը վշտագին հիացումով,– ինչպե՞ս եք այսօր։

– Շատ խոնարհ, սըր,– պատասխանեց Ուրիաս Հիպը։

– Դուք միշտ խոնարհ եք, Քսանյոթ,– ասաց մր. Կրիկլը։

Այդ միջոցին մի ուրիշ ջենտլմեն ջերմ հետաքրքրությամբ հարցրեց.

– Արդյոք հանգի՞ստ եք։

– Շնորհակալ եմ, սըր, հանգիստ եմ,– պատասխանեց Ուրիաս Հիպը, ջենտլմենի կողմը նայելով։– Շատ ավելի հանգիստ եմ այստեղ, քան որևէ ուրիշ տեղ։ Ես այժմ եմ մոլորություններս տեսնում, սըր։ Եվ սա է, որ կացությունս այս բանտում հեշտացնում է։

Այցելուներից մի քանիսը շատ հուզվեցին, և երրորդ ջենտլմենը, մի քայլ առաջ անցնելով, կարեկցաբար հարցրեց.

– Ինչպե՞ս եք հավանում բիֆշտեքսը։

– Շնորհակալ եմ, սըր,– ասաց Ուրիասը նոր ձայնի կողմը նայելով։– Երեկ բիֆշտեքսը իմ սիրածից ավելի կոշտ էր, սակայն իմ պարտքն է համբերել։ Մոլություններս անթիվ էին, պարոնայք,– շարունակեց Ուրիասը, ժպտերես շուրջը նայելով,– ուստի հետևանքն էլ անտրտունջ պիտի կրեմ։

Հանդիսականների մեջ մասամբ գոհության շշունջ լսվեց Քսանյոթի հոգու այդ երկնային վիճակի առթիվ, մասամբ էլ ցասման՝ անտեսի դեմ, որ գանգատի առիթ էր տվել Քսանյոթին (որ և մր. Կրիկլն իսկույն նեթ իր տետրում նշանակեց)։ Իսկ ինքը՝ Քսանյոթը այնպես էր կանգնած մեր առջև, որ կասեիր մի մեծարժեք թանգարանի ամենագլխավոր առարկան է։ Հրաման տրվեց,– մեր տհաս միտքը միանգամայն լուսո հոսանքով շլացնելու համար,– որ Քսանութ համարն էլ դուրս բերվի։

Ես արդեն այնքան ապշած էի, որ այլևս զարմանալու կարողություն չունեի, երբ մր. Լիտտիմերը դուրս եկավ, մի հոգեշահ գիրք կարդալով։

– Քսանութ,– ասաց մի ակնոցավոր ջենտլմեն, որ մինչև այժմ չէր խոսել,– բարեկամ, անցյալ շաբաթ դուք գանգատավոր էիք կակաոյից։ Այժմ ինչպե՞ս է կակաոն։

– Շնորհակալ եմ, սըր,– ասաց մր. Լիտտիմերը,– այժմ ավելի լավ է պատրաստվում։ Սակայն եթե համարձակություն տաք ասելու, կասեմ, որ կակաոյի կաթը շատ անարատ չէ։ Բայց ո՞վ չգիտի, սըր, որ Լոնդոնում կաթը խարդախում են և անխառը կաթ գտնելը դժվար է։

Ես նկատեցի, որ ակնոցավոր ջենտլմենը ուզում է իր Քսանութով պարծենալ մր. Կրիկլի Քսանյոթի դեմ. յուրաքանչյուրն ուզում էր իր մարդուն փայլեցնել։

– Ինչպե՞ս է ձեդ հոգու տրամադրությունը, Քսանութ,– հարցրեց ակնոցավորը։

– Շնորհակալ եմ, սըր,– պատասխանեց մր. Լիտտիմերը։– Մոլություններս այժմ տեսնում եմ, սըր։ Սիրտս բացվում է, երբ հիշում եմ, նախկին ընկերներիս մեղքերը, սըր. բայց հուսով եմ, որ թողություն կգտնեն։

– Ինքներդ, սակայն երջանի՞կ եք,– հարցրեց միևնույն ջենտլմենը քաջալերիչ եղանակով։

– Լիովին, սըր,– ասաց Լիտտիմերը։

– Չունե՞ք արդյոք մի որևէ ասելու բան, Քսանութ։ Եթե ունեք, ասացեք։

– Սըր,– ասաց մր. Լիտտիմերն առանց աչքերը բարձրացնելու,– եթե աչքերս ինձ չեն խաբում, այստեղ ներկա է մի ջենտլմեն, որ մի ժամանակ ինձ ճանաչել է։ Գուցե այդ ջենտլմենին օգտակար լինի իմանալ, սըր, որ ես անցած հանցանքներս այն բանին եմ վերագրում, որ երիտասարդ պարոններին ծառայելիս շատ անմիտ կյանք էի վարել և նրանցից այնպիսի ախտերով վարակվել, որոնց չէի կարող դիմադրել։ Հուսով եմ, սըր, որ ջենտլմենն իմ ազդարարությունից կզգաստանա և համարձակությանս վրա չի նեղանա։ Խոսքերս իր օգտի համար են։ Հին մոլություններս քաջ գիտեմ ու հավաստի եմ, որ նա էլ այն չարություններն ու մեղքերը կապաշավի, որտեղ ինքը մասնակից էր։

Տեսա, որ պարոններից ոմանք մի ձեռքով իրենց աչքերը ծածկեցին, ասես թե նոր մտան եկեղեցի։

– Այդ ձեզ պատիվ է բերում, Քսանութ,– նկատեց հարցնողը։– Ես ուրիշ բան չէի էլ սպասում ձեզնից։

– Սըր,– ասաց մր. Լիտտիմերը, ոչ թե աչքերը, այլ միայն հոնքերը բարձրացնելով,– ես ճանաչում էի մի նորատի կին, որ անառակության մեջ էր ընկել. զուր փորձեցի փրկել նրան։ Այժմ խնդրում եմ ջենտլմենին, որ բարեհաճի, եթե հնար լինի, հայտնել այն ջահել կնկան, թե ես նրա վատ վարմունքը դեպի ինձ ներում եմ և հրավիրում, որ զղջա։

– Աներկբա եմ, Քսանութ,– ասաց հարցնողը,– որ ձեր ակնարկած ջենտլմենը... ինչպես և մենք... ձեր վայելուչ բացատրության իմաստը խորապես կզգանք։ Չենք ուզում այլևս նեղացնել ձեզ։

– Շնորհակալ եմ, սըր,– ասաց մր. Լիտտիմերը։– Պարոններ, մնաք բարով։ Հուսով եմ, որ բոլորդ էլ, թե՛ անձամբ, թե՛ ընտանիքով, կուզենաք մեղքերդ զգալ և քավել։

Ասաց ու հեռացավ Քսանութը՝ Ուրիասի վրա մի այնպիսի հայացք նետելով, որից կարելի էր պարզ տեսնել, թե նրանք իրար անծանոթ չեն և իրար հետ բանակցելու հնար գտել են։ Դուռը նրա հետևից փակվելուն պես հանդիսականների խմբի միջով մի ընդհանուր շշունջ անցավ, թե Քսանութ համարը մի շատ արգո անհատ է և գեղեցիկ օրինակ։

– Դե, Քսանյոթ,– ասաց մր. Կրիկլը, նորից դիմելով իր մարդուն,– եթե մի որևէ կարիք ունեք, հայտնեցեք։

– Խոնարհաբար ձեզ կխնդրեի, սըր,– ասաց Ուրիասը, իր անարգ գլուխը հակելով,– որ դարձյալ ինձ թույլ տայիք նամակ գրել մայրիկիս։

– Անպատճառ թույլ կտրվի,– ասաց մր. Կրիկլը։

– Շնորհակալ եմ, սըր։ Անհանգիստ եմ մորս մասին։ Կարծում եմ, որ նրա գործն ապահով չէ։

Մեկն անզգուշաբար հարցրեց, թե ի՞նչ վտանգ է սպառնում մորը, սակայն իսկույն «Սո՛ւս, սո՛ւս» ձայներ լսվեցին։

– Ապահով չէ նրա հանդերձյալ փրկությունը, սըր,– ասաց Ուրիասը, դեպի հարցական ձայնը կծկվելով։– Կցանկանայի, որ մայրս էլ իմ հոգեկան վիճակը վայելեր։ Ես երբեք այս վիճակին չէի հասնի, եթե այս բանտը չբերվեի։ Եվ անշուշտ ամեն մարդու համար լավ կլիներ, եթե բռնվեր և այստեղ բերվեր։

Այս վճիռը պարոններին շատ դուր եկավ, իբր թե մինչև այժմ մի ախորժելի բան իրենց օրում չէին լսել։

– Այս բանտը բերվելուցս առաջ,– ասաց Ուրիասը, մեր վրա այնպես նայելով, որ կասեիր, թե պատրաստ է, եթե միայն ձեռքից գա, ամբողջ աշխարհը, որին մենք պատկանում էինք՝ կործանել,– ես մոլորություններով շաղախված էի, բայց այժմ ճանաչել եմ նրան։ Դրսի աշխարհը մեղքերով լի է։ Մայրս էլ բավական մեղքեր ունի։ Մեղքը տիրում է ամենուրեք, բացի միայն այստեղից։

– Ուրեմն լիովին փոխվե՞լ եք,– ասաց մր. Կրիկլը։

– Օ՛հ, այո՛, սըր, փոխվել,– գոչեց ապաշով հանցավորը։

– Նորից մեղքի մեջ չե՞ք ընկնի, եթե արձակվեք,– հարցրեց մեկը։

– Հարկավ ոչ, սըր։

– Լավ ուրեմն,– ասաց մր. Կրիկլը։– Այս բոլորը շատ գոհացուցիչ է ու հաճելի։ Դուք, Քսանյոթ, դիմել էիք մր. Կոպպերֆիլդին։ Կցանկանա՞ք արդյոք այլևս մի բան հարցնել նրան։

– Դուք ինձ ճանաչել եք շատ առաջ, քան իմ այստեղ գալն ու փոխվելը, մր. Կոպպերֆիլդ,– ասաց Ուրիասը, չարաչար վրաս նայելով։– Ճանաչել եք ինձ, երբ չնայելով մոլություններիս, ես հպարտների հետ խոնարհ էի, իսկ գոռոզների հետ՝ հեզաբարո։ Դուք ինձ հետ խրոխտ էիք վարվում, մր. Կոպպերֆիլդ։ Մի օր ինձ ապտակ տվիք, հիշո՞ւմ եք։

Ընդհանուր ցավակցություն։ Մի քանի զայրագին հայացք դեպի ինձ։

– Սակայն ներում եմ ձեզ, մր. Կոպպերֆիլդ,– շարունակեց Ուրիասը, իր անհիշաչար բնությունը մի այնպիսի հայհոյական ու անբարիշտ համեմատության նյութ անելով, որ չեմ կարող երկրորդել։– Ես ամենքին ներում եմ։ Որևէ մեկի դեմ ոխ զգալն ինձ անվայել կլիներ։ Ձեզ էլ հոժար սրտով ներում եմ և հուսով եմ, որ ապագայում ձեր կրքերը կսանձեք։ Հուսով եմ, նույնպես, որ թե՛ մր. Ու-ն, թե՛ միս Ու-ն և թե՛ այդ բոլոր մեղսաթաթավ ամբոխը մի օր, անշուշտ, կապաշխարհի։ Ձեզ մի ծանր վիշտ է հասել, և դա հարկավ ձեզ համար անօգուտ չի անցնի. սակայն լավ կանեիք, եթե այս բանտն ընկնեիք։ Մր. Ու-ն էլ լավ կաներ, եթե այս բանտն ընկներ, նմանապես և միս Ու-ն։ Չեմ կարող ձեզ մի ավելի լավ բան մաղթել, մր. Կոպպերֆիլդ, և ձեզ բոլորիդ, պարոնայք, բայց եթե այս, որ բոլորդ էլ բռնվեք, բոլորդ էլ այստեղ բերվեք։ Անցյալ մեղքերս հիշելով և հոգուս այժմյան վիճակը տեսնելով, հավաստի եմ, որ ձեզ համար դրանից ավելի փրկարար բան չէր լինի։ Վա՛յ նրանց, որոնք այս բանտը չեն բերված։

Ուրիասն իր խուցը սողաց, և նրա հետևից գովասանքներ թնդացին։ Տրեդլսն ու ես մեծ թեթևություն զգացինք, երբ դուռը փակեցին։

Այդ ամբողջ «մեղայի» բնորոշ հատկությունը նկատելով, քիչ էր մնում հարցնեի, թե հատկապես այդ երկուսը ի՞նչ են արել, որ արժանի են դատվել բանտարկության։ Պարոնները հարկավ փափագ չէին զգա պատասխանելու այն հարցին։ Դիմեցի երկու պահապան սպասավորներին, որոնց երեսից երևում էր, որ ամբողջ խաղի արժեքը նրանց լավ հայտնի է։

– Արդյոք չգիտե՞ք,– հարցրի մեկին, երբ անցնում էինք նրբանցքով,– թե ի՞նչ էր Քսանյոթի վերջին ոճիրը, որ նա «մոլություն» է անվանում։

Պատասխանն այս եղավ, թե դա մի բանկային դեպք էր։

– Մի խարդավա՞նք անգլիական բանկի դեմ,– հարցրի ես։

– Այո, սըր։ Խարդավանք, դավ ու նենգություն։ Նա մենակ չէր, բայց ինքն էր խմբի առաջնորդը։ Դավադրության նպատակն էր մի ահագին գումար թռցնել. դատավճիռն է՝ ցմահ աքսոր։ Ամենից ճարպիկը խմբի մեջ Քսանյոթն էր. քիչ էր մնում մաքուր դուրս գար. բայց հաջողություն չունեցավ։ Վերջապես բանկը նրա պոչից բռնեց։

– Իսկ Քսանութի հանցանքն ի՞նչ էր։

– Քսանութը,– կամացուկ ասաց պահապանը, շարունակելով ետ նայել, որպեսզի Կրիկլն ու մյուսները իր անպատկառ խոսքերն այդ անբիծ զոհերի մասին չլսեն,– նմանապես դատապարտված է աքսորի։ Նա մտել էր մի երիտասարդ պարոնի մոտ ծառայելու և այդ պարոնի ճանապարհ ընկնելու նախօրեին երկու հարյուր հիսուն ստեռլինգ գողացել նրանից։ Այդ դեպքը լավ եմ հիշում, որովհետև գողին բռնողը մի թզուկ էր։

– Թզո՞ւկ։

– Մի գաճաճ կին։ Անունը մոռացել եմ։

– Մաուչր չէ՞ր։

– Իսկ և իսկ։ Հետամուտ ոստիկանների որոնումից Քսանութն արդեն պրծել և մի սպիտակ կեղծամ ու շինծու մորուք հագնելով, այնպես, որ սատանան էլ նրան չէր ճանաչի, պատրաստվել էր Ամերիկա փախչել. բայց Սաութ-հեմփտնի ծովափին այն փոքրիկ կինը նրան տեսնում է, իր սուր աչքերով մի վայրկյանում նրան ճանաչում, իսկույն ոտքերի տակ ընկնում, որ վայր ձգի... և սրունքին կպած մնում մահվան պես։

– Ապրի պատվական միս Մաուչրը,– գոչեցի ես։

– Այո՛, անպատճառ այդպես կասեիք, եթե դատաստանի ժամանակ ինձ նման տեսնեիք նրան վկաների բաժնում՝ մի աթոռի վրա կանգնած։ Քսանութը գետնին ընկնելիս բռունցքով ջարդել էր նրա երեսը, չարաչար ծեծել էր խեղճին, բայց թզուկը չէր ուզեցել պոկ գալ նրանից, մինչև որ նրան չձերբակալեն։ Եվ թզուկն այնպես ամուր է կպած լինում նրա մարմնին, որ ստիպվում են երկուսին էլ միասին վերցնել։ Նրա ցուցմունքն այնքան զվարճալի էր, այնքան պարզ էր, որ ատյանը նրան շնորհակալություն հայտնեց, և ժողովուրդը հանդիսաբար տուն տարավ։ Թզուկն ասաց դատավորի առջև, որ գիտենալով այդ սրիկայի ինչ պտուղ լինելը, նա՝ թզուկը, եթե մի ձեռք անգամ ունենար, իսկ սրիկան Սամսոնի ուժ, դարձյալ նրան կբռներ։ Ես կարծում եմ, որ իրոք այդպես կաներ։

Ես էլ այդպես կարծեցի, և սկսեցի ավելի հարգել միս Մաուչրին։

Ինչ որ արժանի էր բանտում տեսնել, արդեն տեսանք։ Զուր կլիներ մր. Կրիկլի պես մի պաշտելի մարդու առջև բացատրել, թե Քսանյոթն ու Քսանութը մի մազի չափ չեն փոխվել, այլ դարձյալ նույնն են, ինչ որ էին, այսինքն՝ այդպիսի տեղում հրապարակավ մեղա ասելու ընդունակությամբ հատուկ օժտված կեղծավոր ու նենգ սրիկաներ, որոնք, եթե աքսորվեն էլ կամ արձակվեն, դարձյալ պիտի շարունակեն կեղծել ու խաբել,– մի խոսքով՝ թե այդ բոլորը մի ուրիշ բան չէ, բայց միայն անշահ, դատարկ ու փտած գործ։ Մենք թողինք այդ «դրությունն» ու դրա արբանյակներին և դժգոհ սրտով վերադարձանք դեպի տուն։

– Գուցե և լավ է, Տրեդլս, այդ բոլորը,– ասացի ես։– Քանի շատ առաջ քշեն մի անպետք ձի, այնքան նա շուտ կսատկի։

– Անտարակույս,– ասաց Տրեդլսը։

ԻԲ. ԳԼՈՒԽ
Ճանապարհիս վրա լույս է շողում

Անգլիա վերադառնալս երկու ամիս կլիներ, և Ծննդյան տոներն արդեն մոտ էին։ Ագնեսին շուտ-շուտ տեսնում էի։ Որքան էլ գրական հռչակս թնդար և ջանքերս կրկնապատկելու խրախուսեր, Ագնեսի մի թեթև գովասանքն ավելի էր վրաս ազդում, քան ամբողջ հասարակության դրվատանքը։

Շաբաթը գոնե մի անգամ, երբեմն էլ ավելի հաճախ, գնում էի Կենտըրբրի ու երեկոն նրա մոտ անցկացնում։ Սովոր էի գիշերները ձիով ետ գալ, որովհետև հին թախիծս դարձյալ սկսել էր ինձ պաշարել, մանավանդ, երբ հրաժեշտ էի առնում Ագնեսից. ես զգում էի, որ ավելի լավ է ձի նստած դաշտ ու ձոր չափչփել, քան ներսը փակված՝ անցյալի տխուր հիշատակներով մորմոքվել։ Եվ շատ այդպիսի գիշերներ ձիու թամբի վրա լուսացրի, հին վշտերս նորոգելով, որոնք այնքան ինձ հալածել էին երկարատև բացակայության միջոցին։

Սակայն ճշմարտությունն ավելի լավ հայտնած կլինեմ, եթե ասեմ, թե այդ վշտերի միայն արձագանքն էր հասնում ինձ։ Նրանք ինձ հետ հեռվից էին խոսում։ Ես նրանց մերժել էի, հեռու քշել, կամ թե կամավ մի այնպիսի դիրք բռնել, որից փախչել չէր կարելի։ Երբ իմ նոր երկն էի կարդում Ագնեսին, երբ նրա ուշադիր աչքերն էի դիտում, նրա լալն ու խնդալը լսում, հոգով-սրտով այն երևակայական աշխարհի հետ ձուլվելը տեսնում, որի մեջ ես ինքս էլ ապրում էի, անդադար մտածում էի՝ ի՞նչ կլիներ իմ վիճակը, եթե... բայց միայն մտածում, ինչպես որ Դորայի հետ պսակվելիս այն կատարյալ կնոջ մասին էի մտածել, որի նման կցանկանայի որ ամուսինս լիներ։

Իմ պարտքը դեպի Ագնեսը, դեպի նրա քույրական սերը, որ չէի կարող վրդովել առանց թշվառ անձնասիրության մի անուղղելի քայլ գործելու. իմ հասունացած համոզումը, թե ես ինքս եմ իմ բախտն ավիրել, թե ես եմ Ագնեսին ստիպել, որ նա ինձ՝ իմ թելադրած զգացումը նվիրի, թե ուրեմն ես գանգատվելու իրավունք չունեմ, այլ պարտավոր եմ միայն լռելու ցավ կրել – սրանք էին մտքերիս ու վշտերիս առարկան։ Սակայն ես նրան սիրում էի և այն հույսով ինձ սփոփում, թե գուցե կգա մի օր, մի ժամ, երբ հնարավորություն կունենամ պարզերես հայտնելու նրան գաղտնիքս,– մի հեռավոր ժամ, երբ ամեն բան անցած կլինի, և ես նրան կասեմ. «Ագնես, ահա այս էր հոգուս վիճակը, երբ հայրենիք վերադարձա։ Այժմ ծերացել եմ, բայց այն օրից ի վեր քեզ սիրելուց չեմ դադարել»։

Նրա ընթացքի ու վարմունքի մեջ դեպի ինձ ոչ մի փոփոխություն չէր նշմարվում։ Ինչ որ միշտ էր, նույնն էլ այժմ էր. ոչ ավելի ոչ պակաս։

Վերադարձիս օրից սկսած տատս ու ես խուսափել էինք այս նյութի մասին խոսելուց, չնայելով, որ լռելու պայման չէինք դրել, և երկուսս էլ ներքին բերումով դրա մասին էինք մտածում՝ առանց խոսքերով արտահայտելու մեր միտքը։ Երբ մեր հին սովորության համեմատ՝ երեկոյան կրակի առջև նստած էինք լինում, մեր մտքերը բնականաբար այդ նյութի վրա էին ամփոփվում, և մենք այդ գիտեինք, կարծես թե իրար հետ ազատ խոսած լինեինք։ Այնուանենայնիվ, երկուսս էլ միշտ լռություն էինք պահպանում։ Ես հավաստի էի, որ նա իմ միտքը կարդացել է, գոնե մասամբ կարդացել հենց առաջին երեկոյան, շատ էլ լավ հասկանում է, թե ինչո՞ւ այդ միտքը մի որոշ կերպով չեմ հայտնում։

Ծննդյան տոները հասել էին, բայց Ագնեսը դեռ ոչ մի բան չէր ասել ինձ։ Արդյոք սրտիս վիճակը հասկացե՞լ էր և վախենում էր վշտացնել ինձ, մի անկեղծ խոստովանություն անելով։ Այս կասկածը չարաչար տանջում էր ինձ։ Եթե ենթադրությունս ուղիղ է, մտածում էի, ուրեմն բերած զոհս ոչինչ է, և ես պարտքս չեմ կատարել դեպի նա։ Եթե մեր միջև իրոք մի այդպիսի պատվար կար, պետք էր հաստատ ձեռքով իսկույն խորտակել։

Մի ցուրտ, խստաշունչ ձմռան օր էր – օ՜հ, որքան այդ օրն ինձ հիշելի է։ Մի քանի ժամ առաջ ձյուն էր եկել, որ այժմ գետնի երեսին պինդ սառած էր։ Հյուսիսային քամին փոթորկվում էր իմ պատուհանից երևացող ծովի վրա։ Հիշում էի նրա շառաչելը Զվիցերիայի ձյունապատ լեռներում, որ այդպիսի ժամանակ ոչ մի մարդ չէր համարձակվի ոտք դնել, և մտածում, թե ո՞րն էր ավելի ամայի – լեռների սառնակո՞ւյտը, թե անապատ օվկիանոսը։

– Արդյոք դուրս գնալո՞ւ ես, Տրոտ,– ասաց տատս սենյակիս դռնից ներս նայելով։

– Այո՛, տատիկ, ձիով պիտի Կենտըրբրի գնամ. իսկ և իսկ ձիով ման գալու եղանակ է։

– Կուզենայի, որ ձիդ էլ այդպես մտածեր,– ասաց տատս։– Բայց նա ականջները կախ է արել դռան առջև. անշուշտ լավ կհամարեր ախոռում մնալ։

Ի դեպ կասեմ, որ տատս իմ ձիուն թույլ էր տալիս նվիրական մարգագետնի վրայով անցնել, թեև էշերին դարձյալ զրկում էր այդ իրավունքից։

– Փույթ չէ, տատիկ, նա շուտով կսթափվի,– ասացի ես։

– Գոնե նրա տերն, անշուշտ կսթափվի,– նկատեց տատս,– մտիկ անելով սեղանիս վրայի գրքերին։– Ա՛խ, որդյակ, չափից շատ ես աշխատում։ Առաջ գրքեր կարդալիս մտքովս էլ չէի անցկացրել, թե որքան դժվար է մի գիրք գրելը։

– Երբեմն գիրք կարդալը ավելի դժվար է, սիրելի տատիկ։– Գրելը գոնե մի այնպիսի հրապույր ունի, որ ընթերցողին անհայտ է։

– Այո՛, այո՛,– ասաց տատս։– Փառք, գովասանք, համակրություն ստանալու տենչ և ո՞վ գիտե՝ էլ ինչ բաներ. այնպես չէ՞։ Ինչ ասեմ ձեր խելքին։

Այդ ասելուն պես տատս ուսիս թեթև զարկեց և նստեց։

– Մինչև այժմ մի նոր բան չիմացա՞ր, տատիկ,– ասացի ես մոտենալով նրան,– . . . մի նոր բան Ագնեսի սիրային հակման մասին։

Տատս անքթիթ նայեց ինձ և ասաց.

– Կարծեմ մի բան իմացել եմ, Տրոտ։

– Եվ առաջվա ենթադրությունդ հաստատվո՞ւմ է,– հարցրի ես։

– Կարծեմ, այո՛։

Եվ նա շարունակեց մի այնպիսի կասկածով, կարեկցությամբ ու գորովով վրաս նայել, որ ես դժվարացա զվարթերես երևալ նրան։

– Եվ բանն այս է, Տրոտ, որ...– ասաց տատս։

– Որ ի՞նչ։

– Որ Ագնեսը, կարծեմ, մարդու է գնում։

– Աստված նրան բախտ շնորհի,– ասացի ես զվարթ սրտով։

– Աստված օրհնի Ագնեսին,– ասաց տատս։– Նրա մարդուն էլ աստված օրհնի։

– Ամեն։

Այս ասելով ես տատիս մնաս բարով մաղթեցի, սադուղքից արագ ներքև իջա, ձին հեծա ու նույն րոպեին ճանապարհ ընկա։ Այժմ ավելի հիմք ունեի որոշումս կատարելու, քան առաջ։

Որքան լավ եմ մտաբերում այդ ձմեռվա արշավը. – հողմահար ձյունը ուղիղ երեսիս էր խփում, կոշտ ճանապարհի վրա տրոփող ձիուս սմբակները թնդում էին. արագ պտտվող ձյունը դիզվում էր փոսերի մեջ. խոտաբարձ սայլեր քաշող քրտնած ձիերը կանգ էին առնում բլուրների գլխին բոժոժները հնչեցնելով. մթագույն հորիզոնի վրա տարածվել էին սարերի սպիտակ գագաթներն ու կողերը, որոնք կարծես կավճով գծված լինեին մի հսկայական քարետախտակի երեսին։

Ագնեսին մենակ գտա։ Նրա սանիկները տոնի պատճառով արձակված էին, և նա վառարանի մոտ մենակ կարդում էր։ Ներս մտնելս տեսնելուն պես նա գիրքը ցած դրեց և սովորական ողջույնից հետո ձեռագործը վերցնելով, պատուհանի խոռոչում նստեց։

Նրա մոտ նստեցի, և սկսեցինք զրուցել, թե ի՞նչ եմ անում, ե՞րբ կվերջացնեմ իմ երկը, որքա՞ն եմ առաջ գնացել վերջերս։ Ագնեսը շատ զվարթ էր և ծիծաղելով գուշակում էր, թե շուտով այնքան կհռչակվեմ, որ հասարակ բաների մասին հետս խոսելու հնար էլ չի լինի։

– Այդ պատճառով էլ,– ասաց Ագնեսը,– ինչպես տեսնում եք, շտապում եմ ժամանակից օգուտ քաղել և ձեզ հետ խոսել, քանի որ դեռ կարելի է:

Մինչ մտիկ էի անում նրա չքնաղ երեսին, որ ձեռագործի վրա էր կախված, նա գողտրիկ աչքերը բարձրացնելով նկատեց, որ ես դիտում եմ իրեն:

– Այսօր շատ մտածկոտ եք երևում, Տրոտուդ:

– Ասե՞մ, Ագնես, թե ինչ բանի մասին եմ մտածում: Հենց դրա համար էլ եկել եմ:

Նա ձեռագործը մի կողմ դրեց, ինչպես սովոր էր անել, երբ մի կարևոր խնդիր էինք քննում, և ամբողջ ուշադրությունը վրաս ամփոփեց:

– Ազնիվ Ագենս, մի՞թե դեպի ձեզ անկեղծ լինելս կասկածելի է ձեր աչքում:

– Ամենևին,– ասաց նա, ապշությամբ վրաս նայելով:

– Հիշո՞ւմ եք, որ երբ հայրենիք ետ եկա, իսկույն փորձեցի պատմել ձեզ, թե որքան եմ ձեզ պարտական, սիրելի Ագնես, և որքան եմ ձեզ նվիրված:

– Լավ եմ հիշում,– հեզությամբ պատասխանեց Ագնեսը:

– Դուք մի ինչ-որ գաղտնիք ունեք: Հայտնեցեք ինձ, սիրելի Ագնես:

Ագնեսը դողաց:

– Անկարելի էր, որ վաղ թե ուշ չիմանայի... թեև զարմանալի է, չէ՞ Ագնես, որ ուրիշից եմ իմանում, և ոչ թե ձեզանից... թե մեկը կա, որին ձեր սիրո գանձը նվիրել եք: Ինչո՞ւ եք ինձնից մի այդպիսի բան թաքցնում, որ այնքան կապված է ձեր բախտի հետ: Եթե կարող եք ինձ հավատալ, ինչպես որ միշտ ասել եք, թույլ տվեք ինձ ձեր եղբայրը, ձեր ընկերը լինել, մանավանդ այդ դեպքում:

Նա մի աղերսական, համարյա թե կշտամբական հայացք նետեց իմ վրա ու վերկացավ. բայց մի քանի շտապ քայլ անելուց հետո՝ ասես առանց իմանալու, թե ուր գնա, ձեռքերով երեսը ծածկեց և սկսեց այնպես հեկեկալ, որ ես մինչև սրտիս խորքը ցնցվեցի:

Բայց և այնպես նրա լացը սրտիս մեջ հուսո նման մի բան շարժեց: Առանց իմ գիտության՝ նրա արտասուքը հիշողությանս մեջ հաստատված այն քաղցր ու տրտում ժպիտի հետ կապվեց, որ իմ հոգուն ավելի շատ խրախույս էր ազդել, քան թե երկյուղ կամ վիշտ:

– Ագնե՛ս: Քույրի՛կս: Հոգյա՛կս: Ի՞նչ արի ձեզ:

– Թողե՛ք, Տրոտուդ, հեռանամ: Փոքր-ինչ տկար եմ, այլայլված եմ... մի ուրիշ անգամ: Ես ձեզ կգրեմ: Այժմ հետս ոչ մի խոսք: Աղաչում եմ, մի խոսեք:

– Ագնես, ես չեմ կարող այդ դրության մեջ թողնել ձեզ ու մտածել, թե ես եմ դրա պատճառը: Սիրելի աղջիկ, անգին ընկեր, որից ավելի թանկ բան այս աշխարհում ես չունեմ, եթե անբախտ եք, թույլ տվեք, որ ես էլ ձեր անբախտությանը մասնակցեմ: Եթե մի խորհուրդ կամ օգնություն է հարկավոր ձեզ, թույլ տվեք, որ հասցնելու փորձ անեմ: Եթե իրոք ձեր սիրտը որևէ բեռով ճնշված է, թույլ տվեք փորձեմ թեթևացնել այդ բեռը: Ես ո՞ւմ համար եմ այժմ ապրում, Ագնես, եթե ոչ ձեզ համար:

– Օ՛հ, գթացեք ինձ... Ես լավ չեմ... Մի ուրիշ անգամ...

Այդքանը միայն հասկացա նրա կցկտուր խոսքերից:

Մի՞թե դարձյալ սխալվում էի և կամ թե եսասիրությո՞ւնս էր, որ դրդում էր ինձ մոլորվել: Թե, ընդհակառակն, այդ բոլորի մեջ մի հուսո նշույլ, մի այնպիսի ավետիք կար, որի մասին փոքր-ինչ առաջ մտածել անգամ չէի հանդգնի:

– Պիտի խոսեմ: Ես չեմ կարող ձեզնից այսպես բաժանվել: Ի սեր աստծո՝ այս բոլոր տարիներից հետո, այսքան դեպքերից հետո թող այլևս մեր միջև թյուրիմացություն չմնա:

Ասելիքս անկեղծ կասեմ։ Եթե դուք գեթ մի թեթև կասկած ունեք, թե ես կնախանձեմ այն մարդուն, որին բախտավոր պիտի անեք, թե ես չեմ կարողանա ձեր իսկ ընտրած արժանավոր պաշտպանի ձեռքում ձեզ տեսնել, թե չեմ կարողանա իմ հեռավոր անկյունից ձեր երկուսի երջանկության գոհ սրտով վկա լինել,– այդ կասկածը փարատեցեք, որովհետև դա արդար չէ։ Կրած վշտերս զուր չէին։ Ձեր դասերը զուր չեն անցել։ Իմ զգացման մեջ դեպի ձեզ եսականություն չկա։

Այժմ Ագնեսը հանգիստ էր։ Փոքր-ինչ հետո գունատ երեսը դեպի ինձ դարձրեց և թեպետ մեղմ ու կցկտուր, բայց լիովին պարզ ձայնով ասաց.

– Տրոտուդ, ձեր ազնիվ ու մաքուր բարեկամությունը... որի մասին իրոք երբեք չեմ կասկածել ... վրաս պարտք է դնում ասելու, թե սխալվում եք։ Անկարող եմ սրանից ավելի բան ասել։ Եթե այս տարիների ընթացքում երբեմն օգնության ու խորհրդի կարոտ եմ եղել, դրանք ինձ հասել են։ Եթե երբեմն դժբախտ եմ եղել, այդ զգացումն արդեն անցել է։ Եթե երբևէ սրտիս վրա մի բեռ եմ ունեցել, արդեն թեթևացել է։ Եթե ունեցել եմ մի գաղտնիք... արդեն նոր չէ, և համենայն դեպս, ոչ թե այն... որ դուք եք ենթադրում։ Ես չեմ կարող ո՛չ հայտնել այդ, ո՛չ էլ ուրիշին մասնակից անել։ Վաղուց արդեն դա իմն էր և միշտ իմը կմնա։

– Ագնես։ Սպասեցեք։ Միայն մի վայրկյան։

Ուզում էր հեռանալ. ես նրան բռնեցի ու մեջքը գրկեցի։ «Եթե այս տարիների ընթացքում»... «Արդեն նոր չէ»... Հոգուս մեջ նոր մտքեր ու հույսեր փոթորկվեցին, և կյանքիս բոլոր գույները զվարթացան։

– Անգին Ագնես, իմ պաշտելիս, իմ հարգելիս... ես քեզ հոգով-սրտով սիրում եմ։ Այս առավոտ այստեղ գալիս կարծում էի, թե աշխարհումս ոչ մի ուժ այս խոստովանությունը չի կորզի ինձնից, կարծում էի, թե մինչև մեր երկուսիս ծերանալը սրտիս խորքում պահված կմնա։ Սակայն, Ագնես, եթե այժմ իմ մեջ մի նոր հույս ծագեց, թե կարող եմ այնուհետև մի ուրիշ անուն... քրոջից տարբեր անուն տալ ձեզ։

– Ագնես, առաջնորդս, ամենից լավ ապավենս։ Եթե ձեր մասին ավելի մտածած լինեիք, քան թե իմ, երբ մենք միասին այս տանն էինք աճում, իմ շրջմոլիկ երևակայությունը հարկավ ձեզնից չէր հեռանա։ Բայց դուք այնքան ինձնից լավ էիք, այնքան կարևոր ինձ համար՝ բոլոր մանկական խաղերիս ու վշտերիս մեջ, որ ամեն բանում ձեզ հավատալը, ամեն դեպքում ձեզ դիմելը ինձ համար երկրորդ բնություն էր դարձել, և այդ բնությունը առժամանակ փոխարինեց իմ առաջին, ավելի վսեմ ու ավելի լավ բնության, որով ես ձեզ սիրում էի, ինչպես որ ահա հիմա եմ սիրում։

Այժմ էլ Ագնեսը լալիս էր, բայց նրա աչքերից հոսողը տրտմության արտասուք չէր, այլ խնդության։ Եվ ես ամուր գրկեցի նրան, ինչպես որ երբեք չէի գրկել, չէի էլ երազել գրկելու։

– Երբ որ սիրում էի Դորային... սրտանց սիրում, ինչպես որ դուք էլ լավ գիտեք...

– Այո՛, այո՛,– գոչեց Ագնեսը եռանդով։– Շատ ուրախ եմ, որ գիտեմ։

– Դորային անգամ սիրելիս, սերս թերի կլիներ՝ առանց ձեր համակրության։ Այդ համակրությունը վայելում էի, և դրանով երջանկությունս լրանում էր։ Եվ երբ Դորային կորցրի, ինչ կդառնայի առանց ձեզ, Ագենս։

Եվ ես դեռ նրան գրկած էի, ավելի ամուր սեղմելով սրտիս. նրա ձեռքն ուսիս վրա դողում էր և քաղցրիկ աչքերը արտասուքի միջից վրաս էին նայում։

– Սիրում էի ձեզ, անգին Ագնես, երբ արտասահման գնացի։ Այնտեղ էլ շարունակում էի ձեզ սիրել։ Վերադարձա, և դարձյալ նույն սիրով լի եմ։

Եվ այժմ սկսեցի սրտիս ներքին մաքառումն ու վերջնական հետևանքը Ագնեսին պատմել։ Փորձեցի միանգամայն հոգիս բանալ և ոչ մի բան չծածկել։ Ջանացի պարզել, թե որքան էի

աշխատել ավելի լավ ճանաչել նրան, նույնպես և ինձ. թե ինչպես էի որոշել մինչև վերջը հնազանդ մնալ իբր թե անսխալ համոզմանս և այդ իսկ մտքով նրա մոտ եկել նույն օրը: Եթե նա ինձ այնպես է սիրում (ասացի), որ պատրաստ է ամուսինս դառնալ, ապա ուրեմն այդ բախտին արժանանալու միակ պատճառը ոչ թե իմ արժանիքը կլինի, այլ երկար վշտով հասունացած՝ իմ ճշմարիտ, ամուր սերը: Դա է, որ ինձ հարկադրեց ամեն բան խոստովանել: Եվ այդ իսկ րոպեին, Ագնես, պայծառ աչքերիդ միջից մանուկ-կնոջս ազնիվ ոգին էր վրաս նայում, հավանություն շնորհելով ինձ ու հրավիրելով քո մեջ գտնել ամենաքնքուշ հիշատակն այն Ծաղկի, որ թառամել էր կոկոնում:

– Երջանիկ եմ, Տրոտուդ... սիրտս այնպես լցված է... բայց մի բան կա, որ պիտի ասեմ:

– Ի՞նչ բան, հոգյակ:

Եվ նա ձեռքերն ուսիս դնելով, հանդարտ նայեց երեսիս:

– Չե՞ս գուշակում, թե ի՞նչ է:

– Ո՛չ, Ագնես: Վախենում եմ բան գուշակել: Ինքդ ասա, հոգյակ իմ:

– Ես քեզ միշտ սիրել եմ:

Օ՛հ, մենք երջանիկ էինք, երջանիկ: Մեր փորձանքներն անցել էին, և մենք միասին լալիս էինք, բայց ոչ թե նրանց հիշելուց, այլ այսպես իրար պատկանելու, այլևս երբեք չբաժանվելու բերկրանքից:

Այդ ձմռան երեկոյին դաշտ ելանք զբոսնելու: Բնությունը կարծես թե դաշնակցում էր մեր սրտում տիրող երանավետ անդորրությանը: Ջինջ երկնքում աստղիկներ սկսեցին շողալ, և մենք նրանց նայելով, փառք էինք տալիս աստծուն, որ մեզ այս տենչալի հանգստյանն էր հասցրել:

Գիշերը որ իջավ արդեն կանգնած էինք հին պատուհանի խորշիկում: Ագնեսը խաղաղ նայում էր լուսնին. ես հետևում էի նրա հայացքին: Այն ժամանակ մտքիս առջև մի շատ երկար ճանապարհ բացվեց, և ես տեսա մի լքյալ, անտեր պատառոտուն, հոգնած տղա, որ գալիս էր մի սիրտ գտնելու, մինչև անգամ այն սիրտը, որ այժմ իմի հետ միասին էր թնդում:

Հետևյալ օրը ընթրիքի դեմ, միասին երևացինք տատիս աչքին: Պեգգոտին ասաց, թե տատիկը սենյակումս է, թե նա պարծանք է համարում միշտ ինձ համար մաքուր պահել այդ սենյակը: Գտանք նրան վառարանի առջև նստած, ակնոցը քթին:

– Աստված իմ, ասաց նա, մեր կողմն անշարժ նայելով:– Այդ ո՞ւմ ես տուն բերել, Տրոտ:

– Ագնեսին,– ասացի ես:

– Որովհետև որոշել էինք շատ բան չասել սկզբում, տատս փոքր-ինչ շփոթվեց: «Ագնես» անունը լսելուն պես նա իմ վրա մի հուսալից ակնարկ նետեց, բայց տեսնելով, որ ես սովորականի պես հանգիստ եմ, ակնոցը զայրույթով հանեց ու նրանով քիթը շփեց:

Այնուամենայնիվ, նա Ագնեսին շատ սիրալիր ընդունեց, և բոլորս միասին լուսավոր սեղանատունն իջանք ընթրելու: Տատս երկու-երեք անգամ ակնոցը քթին դրեց ինձ նորից դիտելու, բայց այդքան անգամ էլ դժգոհ-դժգոհ ներքև քաշեց ու նրանով քիթը շփեց, ի մեծ այլայլումն մր. Դիկի, որ լավ նշան չէր համարում այդ շարժումը:

– Ի դեպ, տատիկ,– ասացի ես ընթրիքից հետո,– արդեն խոսել եմ Ագնեսի հետ այն ձեր ասած բանի մասին:

– Եվ վատ ես արել, Տրոտ, որ տված խոսքդ չես պահել,– ասաց տատս կարմրելով:

– Հո չբարկացա՞ր, սիրելի տատիկ։ Հավաստի եմ՝ չես բարկանա, եթե իմանաս, որ Ագնեսը իր հակման մեջ անբախտ չէ։

– Հիմար-հիմար դուրս մի տուր, Տրոտ,– գոչեց տատս։

Նրա դժգոհությունը սաստկացել էր. ուրեմն լավ էր դրան միանգամից վերջ դնել։ Ես աջս Ագնեսին մեկնեցի, և մենք երկուսս էլ տատիս նստած բազկաթոռին մոտենալով, նրա առջև չոքեցինք։ Տատս մեր այդ դիրքը տեսնելուն պես ձեռքերն իրար զարկեց և ջղերի հարված ստացավ՝ առաջին ու մեկ ջղային հարվածը իր կյանքում, ինչքան որ ինձ հայտնի էր։

Ջղերի հարվածի հետ Պեգգոտին էլ հասավ։ Միևնույն րոպեին տատս սթափվեց, Պեգգոտիի վզովն ընկավ, նրան հիմար պառավ անվանեց ու ամբողջ ուժով նրան գրկեց։ Հետո գրկեց մր. Դիկին (որ թեև այդ պատվից շատ գոհ էր, բայց և անչափ շվարած). հետո երկուսին էլ իր վարմունքի պատճառը հայտնեց։ Եվ մենք բոլորս ուրախացանք։

Ոչ մի ժամանակ ես հնար չունեցա իմանալու, թե արդյոք տատս, վերջին անգամ ինձ հետ խոսելիս, մի բարեմիտ խաբեությո՞ւն բանեցրեց, թե՞ իրոք հոգուս վիճակին անգետ էր։ «Իմ ասածը միայն սա էր», կրկնում էր նա ինձ, «թե Ագնեսը պատրաստ է մարդու գնալ։ Դու ինքդ այժմ ինձնից ավելի լավ գիտես այդ»։

Ագնեսն ու ես երկու շաբաթից հետո ամուսնացանք։ Մեր համեստ հարսանիքին ներկա էին միայն Տրեդլսն ու Սոֆին, դոկտոր Ստրոնգն ու նրա կինը։ Մենք նրանց շատ ուրախ թողինք և նույն գիշերը կառք նստելով հեռացանք։ Ես գրկումս ամուր բռնել էի կյանքիս բոլոր սուրբ ներշնչումների աղբյուրը, նույն իսկ **եսիս** կենտրոնը, կյանքիս շրջանակը, իմ... իմ, իմ կնոջը, որին սիրում էի ժայռի վրա հաստատված սիրով։

– Սիրելի ամուսինս,– ասաց Ագնեսը,– այժմ, երբ կարող եմ քեզ այս անունը տալ, էլի քեզ մի բան ունեմ ասելու։

– Ի՞նչ բան, հրեշտակ իմ։

– Մի բան, որ ծագում է Դորայի մահվան գիշերից։ Նա քեզ խնդրե՞լ էր, որ ինձ իր մոտ կանչես։

– Այո՛։

– Այն գիշերը նա ինձ ասաց, թե մի բան է ավանդում ինձ։ Կարո՞ղ ես գուշակել թե ինչ։

Կարծում էի, թե կարող եմ, և այդ պատճառով ավելի ամուր գրկեցի կնոջս, որ սիրել էր ինձ այնքան երկար ժամանակից ի վեր։

– Նա ինձ ասաց, թե մի վերջին խնդիր ունի և մի վերջին պարտք է դնում իմ վրա։

– Եվ ի՞նչ պարտք...

– Որ այս պարապ տեղը միայն ես բռնեմ։

Եվ Ագնեսը իր գլուխը կրծքիս դրեց ու լաց եղավ։ Ես էլ նրա հետ լաց եղա, թեև երկուսս էլ երջանիկ էինք։

ԻԳ. ԳԼՈՒԽ
Մի այցելու

Ինչ որ մտքիս դրել էի պատմելու, համարյա թե պատմեցի, բայց դարձյալ մի նշանավոր դեպք կա, որ միշտ սիրով հիշում եմ։ Պետք է դա էլ արձանագրել, եթե ո՛չ հյուսած ոստայնիս մի թելի ծայրը դուրս կմնա։

Գրական համբավս ու նյութական կարողությունս առաջ էին գնացել. ընտանեկան երջանկությունս կատարյալ էր. արդեն տասը տարի է, որ բարեբախտ ամուսնական կյանք էի վարում: Ագնեսն ու ես մի գարնան երեկո մեր Լոնդոնի տանը վառարանի մոտ նստած էինք, և մեր երեք մանուկները սենյակի մեջ խաղում էին, երբ սպասավորն ինձ իմաց տվեց, թե մի անծանոթ մարդ է եկել ինձ տեսնելու:

Հարցրել են նրան, գործո՞վ է եկել, և նա ասել է, թե ոչ, այլ եկել է միայն ինձ տեսնելու, այն էլ մի հեռավոր տեղից: Սպասավորիս ասելով՝ մի ծեր մարդ էր և մշակի նման:

Այդ խորհրդավոր լուրը փոքր-ինչ վրդովեց մանուկներին, որովհետև նրանց միտքը ձգեց մոր պատմած հեքիաթի սկիզբը, ուր մի չարասիրտ վհուկ էր երևալու: Մեր տղաներից մեկը վտանգից ազատվելու համար գլուխը մոր գոգնոցի մեջ թաքցրեց, իսկ փոքրիկ Ագնեսը (անդրանիկը), տիկնիկը իր աթոռի վրա թողնելով, պատուհանի վարագույրի հետևը մտավ՝ այնտեղից ոսկեհեր գլուխը տնկելով՝ սպասելու, թե արդյոք ի՞նչ կպատահի:

– Ներս հրավիրեցեք,– ասացի ես:

Դուռը բացվելուն պես շեմքի վրա մի հուժկու, ալևոր մարդ երևաց: Ագնեսիկը, եկվորի գրավիչ դեմքով քաջալերված՝ նրա կողմը վազեց, և մինչ ես նրա երեսը դիտելու վրա էի, կինս հանկած տեղից թռավ և ուրախ ձայնով աղաղակեց, թե մր. Պեգգոտին է:

– Այո՛, մր. Պեգգոտին էր, այժմ շատ ալևոր, բայց կարմրայտ, ուժեղ, զվարթ ծերունի: Մեր առաջին հուզումից հետո նա վառարանի մոտ նստեց ու մեր փոքրերին իր ծնկների վրա նստեցրեց: Կրակի լույսը նրա դեմքին փայլ էր տալիս. նա մի քաջառույգ, զորեղ, նույնիսկ սիրուն ծերունի էր, որի նմանը դեռ օրումս չէի տեսել:

– Մաստր Դեվի... – ասաց նա:

Եվ հին բարեկամիս արտասանած հին անունը շատ քաղցր հնչեց ականջիս:

– Ահա, մաստր Դեվի, աստված ինձ արժանի արեց էլի մի անգամ ձեզ տեսնելու, այն էլ ձեր պատվական կնոջ հետ: Այս ի՞նչ ուրախալի րոպե է:

– Իրավ, որ ուրախալի, հին բարեկամ,– գոչեցի ես:

– Եվ այս ինչ սիրուն երեխաներ են,– ասաց մր. Պեգգոտին:– Ամեն մեկը մի ծաղիկ: Չես կշտանա նայելուց: Մաստր Դեվի, դուք այս փոքրից էլ փոքր էիք, երբ առաջին անգամ ձեզ տեսա: Էմլին էլ մի պստլիկ բան էր, իսկ մեր խեղճ տղան... աստված հոգին լուսավորի... դեռ մի փոքրիկ գաճաճ էր, ուրիշ ոչինչ:

– Ժամանակն ինձ ավելի է փոխել, քան թե ձեզ, մր. Պեգգոտի,– ասացի ես:– Բայց այս չար ձագուկները թող գնան քնեն: Որտե՞ղ են ձեր հակերը, բարեկամ, իսկույն կասեմ, որ բերեն: Ամբողջ Անգլիայում ամենից առաջ այս տան պարտքն է ձեզ ընդունել: Առաջվա սև պայուսակը, որ այնքան ձեզ հետ միասին թափառել էր, էլի կա՞: Թող բոլորն էլ մեր տունը բերեն: Իսկ մենք, առժամանակ, մի-մի բաժակ Յարմաութի գրոգ անուշ կանենք և տասը տարվա բաների մասին կխոսենք:

– Մենա՞կ եք,– հարցրեց Ագնեսը:

– Այո՛, տիկին,– ասաց մր. Պեգգոտին, նրա ձեռքը համբուրելով,– մեն-մենակ:

Նստեցրինք նրան մեր միջև ու չգիտեինք, թե ինչպե՞ս փայփայենք: Նրա վաղածանոթ ձայնին ականջ դնելիս, ինձ թվում էր, թե ծերունին դարձյալ շարունակում է թափառել ու թոռնիկին որոնել:

– Այն ինքան ջուր պետք էր անցնել, որ մի քանի շաբաթով այստեղ գայի,– ասաց մր. Պեգգոտին:– Բայց ջուրը, մանավանդ երբ աղի է, ինձ համար մի նոր բան չէ, և ահա ես ծովեր անցա, ձեզ տեսնելու արժանացա... Տեսեք, ոտանավոր է,– ասաց մր. Պեգգոտին, ինքն էլ զարմացած իր գյուտից,– բայց, հավատացեք, ինքն իրեն եղավ:

– Եվ մտադիր եք այդ ջրերն ու ծովերը նորի՞ց այդպես շուտով անցնել,– հարցրեց Ագնեսը։

– Այո՛, տիկին,– ասաց ալևորը։– Հենց մեկնելիս այդպես եմ խոստացել Էմլիին։ Ինքներդ տեսնում եք, որ տարիներն ինձ չեն ջահելացրել. եթե այս անգամ չգայի, էլ երբեք չէի գա։ Բայց վաղուց սիրտս դեպի ձեզ էր քաշում, տիկին, շատ էի ուզում ձեր երջանիկ ընտանեկան կյանքը տեսնել։ Արդեն շատ եմ ծերացել։ Հիմի որ չգայի, ե՞րբ գայի։

Այնպես էր մտիկ անում մեզ, որ ասես նայելուց չէր կշտանում։ Ագնեսը ժպտալով ծերունու ճակատից ալիքների երկար փունջը հեռացրեց, որպեսզի նա ավելի լավ մեզ տեսնի։

– Այժմ, մր. Պեգգոտի,– ասացի ես,– ամեն բան պատմեցեք մեզ ձեր կյանքից։

– Իսկապես պատմելու բան էլ չկա, մաստր Դեվի։ Հարստություն չենք դիզել, բայց մեր գործերը հաջող էին և հաջող են։ Պետք եղավ շատ աշխատել, քրտինք թափել։ Սկզբում բանը դժվար էր, հետո հեշտացավ։ Ոչխարներ բազմացրինք, եզ ու կովեր գնեցինք, դաշտ ու արտեր մշակեցինք, այս արինք, այն արինք, ու մեր ջանքերն աստված օրհնեց,– ասաց մր. Պեգգոտին և երկյուղածությամբ գլուխը կախեց։– Եվ այժմ մեր գործերը շատ լավ են։ Երբ մարդ սրտանց աշխատի, հաջողությունն ինքն իրան կգա։

– Իսկ Էմլին ինչպե՞ս է,– հարցրինք միասին Ագնեսն ու ես։

– Գիշեր չի անցնի, տիկին, որ այնտեղ՝ մեր հեռավոր տնակում աղոթք անելիս ձեր անունը չհիշեր։ Մեր մեկնելու երեկոյան, այն արևի մայր մտնելու միջոցին, երբ մաստր Դեվին մեզ թողեց, Էմլին սաստիկ տխուր էր, և հավատացած եմ, որ եթե նա իմանար, ինչ որ մաստր Դեվին իմաստուն կերպով մեզնից թաքցրել էր,– չէր դիմանա, կմեռներ... Բայց նավի վրա խեղճ մարդիկ կային, հիվանդներ կային, և Էմլին սկսեց նրանց խնամել։ Երեխաներ էլ կային նավի վրա, նրանց էլ Էմլին իր հովանավորության տակ առավ։ Այսպես ուրիշների հետ զբաղվելով, ուրիշներին բարիք անելով, ինքն էլ քիչ-քիչ իր վշտերից թեթևացավ։

– Ե՞րբ լսեց նա խեղճ Հեմի մահվան գույժը,– հարցրի ես։

– Այդ գույժն առաջ ես առա, ու նրանից մի տարի ծածուկ պահեցի,– ասաց մր. Պեգգոտին։– Այն ժամանակ մի լռիկ տեղ էինք ապրում, սիրուն-սիրուն ծառերի միջև. վարդի թփերը մեր տան կտրին էին հասնում։ Մի օր, մինչ ես արտում աշխատում էի, մեզ մոտ մի ուղևոր անգլիացի եկավ Նորֆոլկի՞ց, թե Սուֆոլկի՞ց, լավ չեմ հիշում... մենք էլ նրան ընդունեցինք, կերակրեցինք, հարգեցինք։ Այդպես է մեր սովորությունը գաղութներում։ Օտարականը մի հին լրագիր էր բերել իր հետ, որի մեջ այն մրրիկը մանրամասն նկարագրված էր։ Էմլին էլ բանի էությունը ահա այս թերթից իմացավ։ Երեկոյան, երբ տուն եկա, նա արդեն ամեն բան գիտեր։

Այդ խոսքերն ասելիս մր. Պեգգոտին ձայնը մեղմացրեց, և նրա դեմքը լուրջ արտահայտություն ստացավ, որ ինձ այնքան ծանոթ էր։

– Եվ այդ լուրը նրա վրա շա՞տ ազդեց,– հարցրինք մենք։

– Այո՛, շա՛տ, և ազդեցությունը գուցե այսօր էլ մնացել է,– ասաց ծերունին, գլուխը շարժելով։– Բայց առանձնությունը նրա համար կարծեմ օգտակար է։ Գործ ասածդ անպակաս է ագարակում, միշտ պետք է հավերին նայել, ներսը դուրսը հավաքել, դրանով մարդուս վիշտն անցնում է։ Բայց, մաստր Դեվի,– ասաց ալևորը տրտմությամբ,– չեմ կարծում, որ ճանաչեիք Էմլիին, եթե այժմ տեսնեիք։

– Մի՞թե այնքան փոխվել է։

– Հավատացեք, չգիտեմ։ Ես ամեն օր նրան տեսնում եմ ու չեմ կարող նկատել, բայց երբեմն աչքիս փոխված է երևում։ Մարմինը թեթև ու նիհար է,– շարունակեց մր. Պեգգոտին, մտիկ անելով կրակին,– այտերը գունատ, կապույտ աչքերը՝ տրտում, սիրուն գլուխը՝ փոքր-ինչ կախ, ձայնը՝ հանդարտ, քայլերը՝ երկչոտ... Այդպես է այժմ իմ Էմլին։

Լուռ դիտում էինք ծերունուն, մինչ նա ակնապիշ նայում էր կրակին։

– Ոմանք կարծում են,– ասաց նա,– թե Էմլին մի անբախտ սեր է ունեցել. ուրիշները, թե մահն է նրա պսակը քանդել: Բայց բանի իսկությունը ոչ ոք չգիտի: Նա կարող էր տասն անգամ մարդու գնալ, ուզողներ շատ կային. «բայց չէ ապեր» ասում է նա «էլ ես մարդու չե՛մ գնա»: Ինձ հետ միշտ զվարթ է, ուրիշների առջև զգույշ ու զգաստ: Սիրում է հեռու տեղեր գնալ երեխաներին դաս տալու, հիվանդներին նայելու կամ թե հարսնացու աղջիկներին որևէ բանով օգնելու. շատերին արդեն օգնել է, թեև ոչ մեկի հարսանիքին ինքը ներկա չի եղել: Սրտանց սիրում է իր ապորը, համբերող է, մեծ ու փոքրին՝ սիրելի ու մանավանդ նրանց, ովքեր որ վշտակիր են,– ահա այսպես է Էմլիս:

Ծերունին երեսը շփեց ու մի թեթև հոգոց հանելով, աչքերը կրակից շուռ տվեց:

– Իսկ Մարթան դեռ ձեր մո՞տ է,– հարցրի ես:

Մարթան հենց մեր գաղթելու երկրորդ տարին մարդու գնաց, մաստր Դեվի: Մի ջահել մշակ, որ իր տիրոջ ագարակից սայլ նստած շուկա էր գնում մեր տան մոտով... ճանապարհը ետ ու առաջ մի հինգ հարյուր մղոն կլինի... հավանեց նրան և իսկույն ուզեց (մեր կողմերում կին ասածդ հազվագյուտ է): Մարթան խնդրում էր, որ իր ամբողջ պատմությունը ինչպես որ կա, տղային պատմեմ: Պատմեցի: Նրանք պսակվեցին և այժմ ապրում են իրենց սեփական ագարակում, մեր ագարակից չորս-հինգ հարյուր մղոն հեռու, ուր բացի իրենց ձայնից ու թռչունների ծլվլոցից, ուրիշ ոչինչ չեն լսում:

– Իսկ մրս. Գըմի՞ջը,– հարցրի ես:

Պետք է կարծել, որ այդ հարցը մի շատ զվարթ լարի դիպավ, որովհետև մր. Պեգգոտին սաստիկ քրքջաց ու սկսեց իր ծնկները վերից վար շփել, ինչպես որ առաջ ուրախության րոպեներին սովոր էր անել Յարմաութի նավե տնակում:

– Ինչ եք կարծում, նրան էլ ուզող գտնվեց,– գոչեց մր. Պեգգոտին:– Եթե մի նավի խոհարար, որ գաղթական է դարձել, իր աջն ու սիրտը մրս. Գըմիջին առաջարկած չլինի, կախեցեք ինձ, մաստր Դեվի: Սրանից ավել էլ ի՞նչ ասեմ:

Դեռ երբեք Ագնեսի այնքան զվարթ ծիծաղելը չէի տեսել: Մր. Պեգգոտիի անակնկալ ոգևորությունը նրան այնքան զվարճացրեց, որ չէր կարողանում ծիծաղը բռնել, և որքան նա ավելի էր ծիծաղում, իմ ծիծաղն էլ շարժելով, այնքան էլ մր. Պեգգոտին հափշտակվում էր ու ծնկներն ավելի ամուր շփում:

– Ի՞նչ պատասխան տվեց մրս. Գըմիջը,– հարցրի ես, երբ որ փոքր-ինչ հանգստացա:

– Դժվար թե կարենաք այդ բանը գուշակել,– ասաց մր. Պեգգոտին:– Փոխանակ պատասխանելու, ինչպես որ ընդունված է. «Շնորհակալ եմ, պարոն, մեծ շնորհ եք անում ինձ, բայց այս հասակումս մտադիր չեմ կյանքիս վիճակը փոխել»,– մրս. Գըմիջը ջրով լիքը դույլը վերցրեց ու խոհարարի գլխին հագցրեց: Մարդն սկսեց չարաչար գոռալ ու կխեղդվեր, եթե ես վրա չհասնեի:

Մր. Պեգգոտին նորից քրքրջաց. մենք էլ նրան ընկերացանք:

– Բայց պիտի ասեմ,– շարունակեց նա, երեսի քրտինքը սրբելով,– ինչ խոստում որ այդ պառավը մեզ տվել էր Անգլիայից մեկնելիս, այն ճիշտ կատարեց: Այժմ աշխարհիս երեսին նրանից ավելի անձնվեր, նրանից հեզ, նրանից ազնիվ ու ջանասեր կին չեք գտնի: Ոչ մի անգամ չլսեցի, որ տրտնջար ու փնթփնթար, թե անօգ է, մենակ է, և մինչև անգամ երբ նորեկ էինք գաղութում և ոչ մի ծանոթ չունեինք: Իսկ ծերին գալով, հավատացեք, մաստր Դեվի, ոչ մի անգամ նրան չի հիշել, ինչ հեռացել է Անգլիայից:

– Կցանկանայինք այժմ մր. Միկաբրի մասին էլ բան լսել,– ասացի ես:– Նա արդեն այստեղի բոլոր պարտքերը վճարել է... մինչև անգամ Տրեդլսին տված մուրհակը, չէ՞, Ագնես: Ուրեմն նրա գործերը հաջող կլինեն: Կուզենայինք, սակայն, մի նոր բան իմանալ նրան մասին:

Մր. Պեգգոտին մեղմ ժպտաց և իր աջը ծոցի գրպանը դնելով մի լավ ծալած ծրար դուրս բերեց ու միջից մեծ զգուշությամբ մի տարօրինակ լրագրի թերթիկ հանեց։

– Իմացած եղեք, մաստր Դեվի,– ասաց նա,– որ մենք արդեն մեծ անտառը թողել ենք և Սիդլբեյ Հարբրում հաստատվել, որ քաղաքի պես մի բան է։

– Իսկ առաջ մր. Միկաբրն էլ ձե՞զ հետ էր։

– Հարկավ, և երանի թե տեսնեիք՝ ինչ աշխատասեր էր։ Ես միշտ զարմացել եմ, մաստր Դեվի, որ նրա ճաղատ գլուխը չէր հալվում արևի տակ քրտնելիս։ Այժմ նա մեր դատավորն է։

– Դատավո՞րը, ինչ եք ասում,– գոչեցի ես։

Մր. Պեգգոտին լրագրի մի անկյունը ցույց տվեց, և ես հետևյալը կարդացի «Port Middlebay Times»-ում։

«Երեկ հյուրանոցի շքեզ դահլիճում տեղի ունեցավ մեր մեծանուն քաղաքակից և Միտլբեյ Հարբըրի ավագ դատավոր գերարգո Ուիլկինս Միկաբրի, Esquire[64] պատվին տրված հանդիսավոր հացկերույթը։ Դահլիճը հյուրերով լի էր։ Հաշված է, որ միայն մի սեղանի շուրջը ավելի քան քառասունութ պարոն ու տիկին էին նստած, բացի այն բազմությունից, որ սանդուղքի վրա ու նրբանցքի մեջ էր խռնվում։ Միդլբեյի հասարակության ամենից ընտիր, ամենից ազնիվ ու նուրբ մասը հավաքվել էր իր հարգանքը մատուցելու մեծահանճար ու ժողովրդական ջենտլմենին։ Կոչունքի գահերեցը դոկտոր Մելն էր (Պորտ Միդլբեյի միջնակարգ դպրոցի տեսուչ), և գերարգո հյուրը նրա աջ կողմն էր բազմած։ Սփոռոցը հավաքելուց ու մեր ազգային Non Nobis-ն երգելուց հետո (հարկ է ասել, որ այս օրհներգը հիանալի կերպով երգվեց, և քաղցր է մանավանդ հիշատակել, որ **Կրտսեր Ուիլկինս Միկաբրի** Esquire զանգակի պես հնչող ձայնը բոլորին հիացրեց) կարգը հայրենասիրական բաժակներին հասավ, որոնք և ամենաջերմ հրճվանքով ընդունեցին։ Դոկտոր Մելը մի ոգեշունչ ճառ խոսեց՝ «Հարևշատության պանծալի հյուրի, որ քաղաքիս թագն ու զարդն է։ Թող նա իր բազմարդյունք գործերով մեր միջև այնքան փառավորվի, որ այլևս կարիք չզգա հեռանալու այս շրջանից»։ Այս կենացի հարուցած ոգևորությունն ու ցնծությունը նկարագրել անհնարին է։ Կեցցեների որոտմունքը օվկիանոսի ալիքների նման մեկ բարձրանում, մեկ իջնում էր։ Վերջապես ամեն բան լռեց, և ինքը՝ Ուիլկինս Միկաբրը, Esquire, ոտքի ելավ անձամբ շնորհակալություն հայտնելու։ Ցավում ենք, որ մեր թերթի տակավին թերի միջոցները չեն ներում ամբողջապես տեղադրել մեր կորովաբան քաղաքակցի հոյակապ պերճաբանության ողորկ ու սահուն ոճերը։ Հերիք է ասել, որ նրա ճառը հռետորական արվեստի մի գլուխ գործոց էր։ Քաջարի սրտերն անգամ արտասուքով լցվեցին, երբ ատենախոսն, իր ասպարեզի սկզբնակետը հիշելով, ունկնդիր բազմության երիտասարդ անդամներին հորդոր կարդաց՝ խորշելով-խորշել դրամական պարտքեր անելուց, որոնք, եթե չվճարվեն, ծովածածուկ խութերի նման մահ կսպառնան անզգույշներին։ Հետո կենացներ առաջարկեցին ի պատիվ **դոկտոր Մելի, մրս. Միկաբրի** (որ մի շնորհալի պատասխան տվեց ավագ դռան մոտից, ուր նորափթիթ գեղեցկուհիները մի հարդագողի ծիր էին կազմել աթոռների վրա՝ ականատես լինելու և փայլ տալու այդ շքեղ տեսարանին). **Մրս. Ռիջըր Բեգսի** (նախկին միս Միկաբր), **Մրս. Մելի, Ուիլկինս Միկաբրի, Esquire, կրտսեր** (որ ամենքի ծիծաղը շարժեց իր սրամիտ նկատողությամբ, թե ճառ ասելու ձիրք չունենալով, պատրաստ է իսկույն իր շնորհակալությունն երգով հայտնել). մր. Միկաբրի ընտանյոց (որ ավելորդ է ասել՝ քաջածանոթ է մեր երկրում), և այլն, և այլն։ Հանդեսի վերջը, ասես թե դյութական թովչությամբ, բոլոր սեղաններն անհետացան, և պարող զույգերի համար արձակ ասպարեզ բացվեց։ Մինչև արևի առաջին ճառագայթները Տերփսիքորի[88] երկրպագուները խայտացին ու կայթեցին և նրանց մեջ ամենից ավելի աչքի ընկան Ուիլկինս Միկաբրը, Esquire, կրտսերը, և դոկտոր Մելի չորրորդ դուստր՝ չքնաղագեղ միս Հելենան»։

---

[88] Պարի մուսան։

Մինչ ես առանձին ուրախությամբ դոկտոր Մելի անունն էի հիշում, այն թշվառ մր. Մելի, որ երբեմն իմ վերակացուն էր և արտաքսված էր մր. Կրիկլի դպրոցից, մր. Պեգգոտին ինձ լրագրի մի ուրիշ մասը ցույց տվեց, ուր կարդացի։

«Հոչակավոր մատենագիր՝

Դավիթ Կոպպերֆիլդին, Esquire.

Սիրելի պարոն.

Տարիներ են անցել այն օրից, երբ ես վերջին անգամ աչքովս տեսա այն դեմքը, որի գծերն այժմ արդեն քաջ ծանոթ են քաղաքակիրթ աշխարհի մեծագույն մասի երևակայության։

Սակայն, թեպետ անվանելի դեպքերի բերմամբ (որոնք իմ կամքից անկախ էին), երիտասարդությանս բարեկամի անմիջական ընկերությունից զրկվել եմ, բայց և այնպես, սիրելի սըր, չեմ դադարել անքթիթ աչքով հետևել նրա հանճարի վերասլաց թռիչքին։ Եվ թեպետ մենք

«Բաժանված ենք որոտակոչ ծովերով» (Բերնս)

ես միշտ վայելել եմ այն առատ ու ճոխ մտավորական սնունդը, որ նա շնորհում է բոլորիս»։

Հետևաբար, այս խորհրդավոր րոպեին, երբ Եվրոպա է մեկնում ձեզ ու ինձ շատ հարգելի մի անձ, չեմ կարող, ազնիվ սըր, թե իմ և թե, համարձակ կասեմ. ամբողջ Պորտ Միդըլբեյի հասարակության կողմից, ջերմագույն շնորհակալություն շառաչել ձեզ այն վսեմ հաճույքների փոխարեն, որ վայելում ենք ձեր շնորհիվ։

Դե, սիրտ առեք, սիրելի սըր։ Անծանոթ չեք այս երկրում. ձեր հանճարը այստեղ ևս գնահատված է։ Թեև **հեռացել** ենք Անգլիայից, այնուամենայնիվ ո՛չ **անգգա** ենք, ինչպես ոմանք ասում են, ո՛չ **անտարբեր**, ո՛չ էլ **բթամիտ**։ Շարունակեցեք սավառնել ձեր արծվի թևերով։ Պորտ Միդըլբեյի բնակիչները չպիտի դադարեն ցնծությամբ, հիացմամբ ու հոգեշահ զմայլանքով դիտակն ի վեր մտիկ անել ձեր օդաչու վերաթևմանը։

Երկրագնդիս այս մասից այսպես վերամբարձ դեպի ձեզ ուղղված աչքերի մեջ՝ հանապաղ արթուն կմնա, քանի որ ունենա կյանք ու լույս, և այլն

աչքը,

որ

պատկանում է

Ուիլկինս Միկաբր Դատավորին»։

Թերթի բովանդակության մյուս մասերն էլ աչքի անցկացնելով նկատեցի, որ մր. Միկաբրը նրա մշտական եռանդուն աշխատակիցն է։ Միևնույն համարում տպված էր նրա ուրիշ նամակը մի կամրջի շինության մասին. այդտեղ էլ հայտարարված էր, թե շուտով պիտի լույս տեսնի, երկրորդ տպագրությամբ, նրա նամակների մի հատոր ժողովածուն՝ «կարևոր հավելվածներով հանդերձ»։ Եթե չեմ սխալվում, լրագրի առաջնորդող հոդվածն էլ նրա գրչի արգասիքն էր։

Քանի որ մր. Պեգգոտին մեր հյուրն էր, շատ անգամ նրա հետ խոսակցություն ունեցանք մր. Միկաբրի մասին։ Հյուրը մի ամսի չափ մեր տանը մնաց։ Նրա քույրն ու տատս Լոնդոն եկան նրան տեսնելու։ Ագնեսն ու ես նավի վրա հրաժեշտ առանք նրանից. հավանական է, որ այդ հրժեշտը վերջինը լինի այս աշխարհում։

Սակայն դեռ մեկնելուց առաջ՝ նա ու ես Յարմաութի հանգստարանը գնացինք այն շիրիմը տեսնելու, որ կանգնեցնել էի տվել խեղճ Հեմի գերեզմանի վրա։ Մինչ ես մր. Պեգգոտիի խնդրանքով արտագրում էի պարզ տապանագիրը, նա կռացավ, գերեզմանի ծաղիկներից մի փունջ քաղեց, մի բուռ էլ հող վերցրեց։

– Էմլիի համար,– ասաց նա, բոլորը միասին ծոցը դնելով։– Խոստացել եմ նրան, մաստր Դեվի։

ԻԴ. ԳԼՈՒԽ
Մի վերջին հետադարձ հայացք

Ահա պատմությունս վերջանում է։ Սակայն այս թերթերը դեռ չփակված՝ ուզում եմ մի անգամ ևս... վերջին անգամ... ետ նայել։

Ագնեսն ու ես անցնում ենք կյանքի ճանապարհով։ Շուրջս տեսնում եմ մեր երեխաներին, բարեկամներին. լսում եմ և բազմաթիվ ձայներ, որոնք դեպի ինձ անտարբեր չեն։

Ովքե՞ր են, սակայն, ամենից որոշ աչքիս առջև պատկերանում այդ բազմությունից։ Հարցնելուս պես՝ ահա բոլորն էլ շուռ են գալիս դեպի ինձ։

Ահա նախ տատս՝ ավելի զորավոր ակնոցով, մի ութսունամյա, եթե ոչ ավելի, պառավ կին, որ սակայն դեռ առույգ է և պատրաստ հինգ-վեց մղոն ճանապարհ կտրել նույնիսկ ձմռան ցուրտ օրին։

Նրանից անբաժան, միշտ անբաժան է հին դայակս՝ նմանապես ակնոցավոր Պեգգոտին։ Գիշերները կար կարելիս քիթը գրեթե լապտերին է կպցնում, և երբեք գործի չի նստում, մինչև որ կողքին չդնի մի մոմի կտոր, մի մետրաչափ ու ձեռագործի մի տուփ՝ ս. Պողոս եկեղեցու պատկերով։

Պեգգոտիի բազուկներն ու թշերը, որոնք մանկությանս օրերում այնպես կարմիր ու կլոր էին, որ զարմանում էի, թե ինչո՞ւ թռչունները՝ փոխանակ խնձոր կտցելու՝ այդ թշերն ու բազուկները չեն կտցում,– այժմ խորշոմած են. և նրա աչքերը, որոնք երբեմն իմ դեմքի բոլոր գծերը նսեմացնում էին, արդեն նվազել են (թեև դարձյալ ոչ անփայլ), սակայն դերբուկ ցուցամատը, որ մի ժամանակ հնդընկույզի կեղևի նման էր, այժմ էլ նույնն է, և երբ տեսնում եմ, որ վերջին որդիս, իր երեքուն քայլերով տատիկից դեպի դայակը տմբտմբալիս՝ այդ մատն է շտապում բռնել,– միտքս են ընկնում մեր Բլենդրոտընի փոքրիկ սենյակն ու այն օրերը, երբ ինքս էլ դեռ նոր էի սկսել քայլերս փոխել։ Տատիս հին հուսախաբությունը վերջ ի վերջո փարատված է. նա վերջապես կնքամայր է աշխարհումս իրոք ապրող մի Բեթսի Տրոտուդի, և Դորան (մեր երկրորդ դստրիկը) սովոր է ասել, թե տատիկը շատ է նրան երես տալիս։

Պեգգոտիի գրպանում մի բան կա։ Դա ուրիշ բան չէ, դա կոկորդիլոսնեի հայտնի գիրքն է, որ այժմ մի ողբալի ձև է ստացել՝ տեղ-տեղ պատռած ու ասեղով կարկատած, բայց Պեգգոտին չի դադարում ցույց տալ գիրքը մանուկներին, իբրև անցյալ ժամանակի մի նվիրական մնացորդ։ Զվարճալի է տեսնել, թե ինչպես իմ իսկ մանկական դեմքը, կոկորդիլոսների պատմությունից հիացած, պշնելով վրաս է նայում, և այդ դեմքի հետ հիշել նաև մր. Բրուքսին՝ նախկին շեֆիլդցի ծանոթիս։

Զավակներիս խմբի մեջ, ամառվա արձակուրդին մի ծերունի է ման գալիս, որ մի ահագին ֆոռան է թողնում և անասելի հրճվանքով դրա թռիչքը դիտում։ Նա բերկրությամբ ինձ ողջունում է և խորհրդավոր կերպով աչքն ու ունքը շարժելով, կամացուկ շշնջում է ականջիս.

– Տրոտուդ, քեզ անշուշտ ցանկալի է իմանալ, որ ես հիշատակարանս կվերջացնեմ, երբ այլևս ուրիշ անելիք չունենամ, և որ այս աշխարհում քո տատի պես նշանավոր տիկին չկա, սիրելի սըր։

Ո՞վ է այն լեդին, որ կորակոր առաջ է գնում՝ ձեռնափայտի վրա հենված։ Երեսի վրա հպարտության ու գեղեցկության հին հետքեր են նշմարվում, և ինքը դեռ մաքառում է իր գոռոզ, գրգռոտ ու մոլորված ոգու թուլության դեմ։ Նա պարտեզումն է, հետն էլ սպի կրող

շրթունքով մի թխադեմ, խորշոմած ու նիհար կին է ման գալիս։ Լսենք, թե նրանք ի՞նչ են խոսում։

– Ռոզա, մոռացել եմ այդ ջենտլմենի անունը։

Ռոզան հակվելով ասում է նրան. «մր. Կոպպերֆիլդը»։

– Ուրախ եմ, սըր, տեսնել ձեզ։ Շատ ցավում եմ, որ սգավոր եք։ Հուսամ ժամանակը ձեզ կսփոփի։

Նեղսիրտ ընկերուհին հանդիմանում է պառավին, ասելով թե ես սգավոր չեմ. հրավիրում է նրան զառանցանքից ուշքի գալ և երեսիս լավ մտիկ անել։

– Տեսաք որդուս, այնպես չէ՞, սըր,– ասում է պառավ լեդին։– Արդյոք հետը հաշտվեցի՞ք։

Ապա անքթիթ վրաս նայելով, ձեռքը դնում է ճակատին, հառաչում է և հանկարծ սոսկալի ձայնով ճչում.

– Ռոզա, շուտ մոտեցիր, նա մեռել է։

Եվ Ռոզան առջևը չոքած մերթ գգվում է նրան, մերթ կշտամբում, մերթ կատաղի վայրենությամբ գոռում-գոչում. «Ես ավելի էի սիրում նրան, քան թե դու», և մերթ նրան իր կրծքի վրա փայփայում, ասես թե լեդին մի հիվանդ երեխա լիներ։ Այդպես էի թողել նրան, այդպես էլ նրանց միշտ տեսնում եմ. նրանց կյանքը տարեցտարի այդպես է անցնում։

Այդ ի՞նչ նավ է գալիս Հնդկաստանից, և ո՞վ է այդ անգլիացի տիկինը՝ ամուսնացած մի կախականջ Շոտլանդացի Կրեսոսի հետ։ Ուրիշ ո՞վ, եթե ոչ Ջուլիա Միլսը։

Այո՛, դժվարահաճ ու զարդարուն Ջուլիա Միլսն է, մի խափշիկ նրան նամակներ ու տոմսեր է մատուցում ոսկեձույլ ափսեի վրա, մյուս կողմից էլ սպիտակ հագած ու վզին կարմիր շղարշ փաթաթաց մի պղնձագույն մուլատ նաժիշտ նախաճաշ է բերում նրա համար։ Սակայն Ջուլիան այլևս հիշատակարան չի գրում, մահագուշակ մեղեդիներ չի երգում, ոչ. նա շարունակ վիճում է ծեր Կրեսոսի հետ, որ իր խամրած երեսի մորթով նման է դեղին արջի։ Ջուլիան մինչև կոկորդը ոսկու մեջ է թաղված, միայն ոսկու մասին է խոսում։ Սահարայի անապատում նա ավելի էր դուր գալիս ինձ։

Բայց գուցե Սահարայի անապատը հենց այդ է։ Ջուլիայի ապարանքը հոյակապ լինի, որքան էլ նրա շրջանը՝ շքեղ, որքան էլ սեղանը՝ փարթամ,– ես նրա շուրջը նորածիլ, թարմ բողբոջներ չեմ տեսնում. բան չեմ տեսնում, որ ժամանակով ծաղիկ բերեր ու պտուղ տար։ Տեսնում եմ, թե ինչ է Ջուլիա Միլսի «ընկերությունը»։ Նրա մշտական հյուրը մր. Ջոն Միլդրընն է, որ իրեն պաշտոն տվող բարերարի ձեռքը ծաղրում է և դոկտորին «մի զվարճալի հնություն» անվանում։ Սակայն, Ջուլիա, եթե «ընկերություն» ասածդ այդպիսի փուչ պարոններից ու տիկիններից է բաղկացած և եթե դրանք ուրիշ ոչինչ չեն կարող ծնել, բայց միայն անտարբերություն դեպի ամեն բան, որով մարդկության առաջադեմ ընթացքը արագացնում կամ խափանվում է,– այն ժամանակ բոլորս էլ իրոք այդ Սահարայի անապատում կարող ենք կորչել, և լավ կանենք, եթե ժամ առաջ դրա սահմանից դուրս փախչելու հնար գտնենք։

Ահա և դոկտոր Ստրոնգը. մեր պատվական բարեկամը, միշտ զբաղված է իր բառարանով (արդեն հասել է Դ տառին) և երջանիկ իր տուն-տեղով ու կնոջով։ Ահա և Հին Զինվորը. դա արդեն մեղմացել է և էլ չունի այն ազդեցիկ միջոցները, որ մի ժամանակ բանեցնում էր։

Վերջապես ահա և իմ անգին Տրեդլսը, որ Տեմպլում անդուլ զբաղված է իր առանձին գրասենյակի մեջ։ Գլխի մազերը (գոնե դրանց մնացորդը) ավելի ըմբոստ են դարձել միշտ փաստաբանի կեղծամի հետ շփվելուց։ Սեղանի վրա թղթի ահագին դեզեր են բարդված, և ես, շուրջս նայելով, ասում եմ.

– Եթե գրագիրդ այժմ Սոֆին լիներ, շատ անելիք կունենար։

– Անշուշտ, սիրելի Կոպպերֆիլդ։ Բայց երանի այն օրերին, երբ Հոլբորնի դատարանումն էինք։

– Երբ Սոֆին գուշակում էր, թե մի օր դատավոր կդառնաս, թեև այն ժամանակ քաղաքում այդ մասին դեռ խոսող չկար։

– Համենայն դեպս,– ասաց Տրեդլսը,– եթե մի օր դատավոր դառնամ. . .

– Լավ գիտես, որ կդառնաս։

– Եթե մի օր դատավոր դառնամ, սիրելիդ իմ Կոպպերֆիլդ, այն ժամանակ քեզ Սոֆիի մեծ գաղտնիքը կհայտնեմ։

Թև-թևի տված դուրս ենք գալիս ընկերոջս հետ։ Այսօր նրա մոտ հանդիսավոր հացկերույթ կա . Սոֆիի ծննդյան տարեդարձն է։ Ես էլ հրավիրված եմ։ Ճանապարհին Տրեդլսը իր երջանիկ կյանքի մասին է խոսում։

– Ինչ որ սիրտս ամենից շատ էր փափագում, Կոպպերֆիլդ, ահա բոլորն էլ ձեռք բերի։ Արժանապատիվ Հորասը այժմ տարեկան չորս հարյուր հիսուն ստեռլինգ է ստանում։ Իմ որդիքը պատվական դաստիարակություն են ստանում. նրանք դպրոցում հայտնի են իբրև ամենից ընկերասեր ու փութաջան աշակերտներ։ Կնոջս երեք քույրերը լավ-լավ մարդու գնացին. մյուս երեքը մեզ մոտ են. մնացած երեքն էլ, մրս. Կրուլրի մեռնելուց հետո, հայր Հորասի տունն են կառավարում։ Բոլորն էլ երջանիկ են։

– Բացի, գուցե...– ասացի ես։

– ... Գեղեցկուհուց,– լրացրեց ընկերս։– Այո՛, դժբախտաբար մի անպիտան էակի հետ է ամուսնացել. բայց այդ թշվառը այնքան սիրուն էր, այնքան թովիչ, որ խելքից հանեց աղջկան։ Ինչևիցե, այժմ Գեղեցկուհին մեր տանն է ապրում, անպիտանից արդեն ազատ է։ Գուցե կարողանանք սփոփել նրան։

Տրեդլսն այժմ այն իսկ տանն է բնակվում, որ մի ժամանակ Սոֆին ու նա զբոսնելիս իրենց համար ընտրել էին և միջի սենյակները բաժանել։ Դա մի ընդարձակ շինություն է, բայց Տրեդլսը ննջարանումն է աշխատում, իր թղթերն էլ կոշիկների հետ այնտեղ պահում։ Սոֆին ու նա վերնահարկի հետին անկյունն են քաշվել, մինչ ամենալավ ու զարդարուն սենյակները Գեղեցկուհուն ու քույրերին են պատկանում։ Ամբողջ տանը մի հատ ազատ սենյակ չկա, որովհետև «աղջիկները» միշտ այնտեղ են մի որևէ պատճառով։ Ներս մտանք թե չէ՝ նրանք խմբովին դեպի դուռը վազեցին ու սկսեցին իրենց անվերջ համբույրներով Տրեդլսին խեղդել։ Խեղճ գեղեցկուհին կարծեմ ընդմիշտ այդ տանը պիտի մնա իր դստրիկի հետ։ Սոֆիի ծննդյան տարեդարձին սեղանի շուրջը նստած են երեք արամբի քույրերն ու նրանց ամուսինները, և սրանցից մեկի եղբայրը, մյուսի եղբորորդին ու երրորդի քույրը, որ կարծեմ այդ եղբորորդու հետ նշանված է։ Առաջվա պես պարզ ու բարի Տրեդլսը ահագին սեղանի ծայրին է բազմած նահապետի նման, իսկ Սոֆին մյուս ծայրից նրան է նայում զվարթերես։ Նրանց միջև մի երկար ու զվարթ տարածություն է ձգված, որին այժմ փայլ տվողը հարկավ բրիտանական մետաղը չէ։

Եվ մինչ ես այս երկը կնքում եմ, անվերջ շարունակելու փափագս զսպելով, ահա այդ բոլոր դեմքերն իմ առջև անհետանում են։ Սակայն երկնային լույսի նման մի դեմք, որի շնորհիվ է, որ տեսնում եմ ամեն մի ուրիշ առարկա, ջոկ կանգնած է ամենից վեր։ Եվ դա մնում է։

Շուտ եմ գալիս և տեսնում նրան իմ կողքին իր սրտառուչ գեղեցկությամբ։ Լապտերս արդեն մարելու վրա է. կես-գիշերն անցել է, ես շարունակ գրում էի. սակայն անգին էակը, առանց որի ես ոչինչ կլինեի, դեռ սեղանիս մոտ հսկում է։

Օ՛հ, Ագնես, հոգուս հատոր, թող երեսդ իմ առջև այդպես փայլի նաև վերջին րոպեիս, երբ աշխարհի երևույթներն իմ երևակայության ստվերների պես աչքերիցս կանհետանան։ Թող այն խորհրդավոր րոպեին էլ իմ առջև տեսնեմ քեզ՝ ձեռքդ դեպի երկինք մեկնած։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ
Ա. ԳԼՈՒԽ Իմ ծնունդը
Բ. ԳԼՈՒԽ Ես դիտում եմ
Գ. ԳԼՈՒԽ Փոփոխություն
Դ. ԳԼՈՒԽ Աչքից ընկել եմ
Ե. ԳԼՈՒԽ Հեռացված եմ մայրական տնից
Զ. ԳԼՈՒԽ Ընդարձակում եմ բարեկամներիս շրջանը
Է. ԳԼՈՒԽ Իմ առաջին կիսամյակը Սալեմ Հռուսում
Ը. գլուխ Արձակուրդը և մանավանդ մի երջանիկ երեկո
Թ. ԳԼՈՒԽ Մի անմոռանալի ծննդյան օր
Ժ. ԳԼՈՒԽ Ինձ անտես են թողնում, հետո խնամում
ԺԱ. ԳԼՈՒԽ Սկսում եմ գլխիս ճարն ինքս տեսնել, և այդ ինձ դուր չի գալիս
ԺԲ. ԳԼՈՒԽ Մտքումս դրի մի վճռական քայլ անել
ԺԳ. ԳԼՈՒԽ Համարձակ քայլիս հետևանքը
ԺԴ. ԳԼՈՒԽ Տատս որոշում է իր անելիքն իմ մասին
ԺԵ. ԳԼՈՒԽ Նորից եմ սկսում
ԺԶ. ԳԼՈՒԽ Շատ կողմերով նոր տղա եմ
ԺԷ. ԳԼՈՒԽ Մեկը նորից լույս է ընկնում
ԺԸ. ԳԼՈՒԽ Մի հայացք անցյալի վրա
ԺԹ. ԳԼՈՒԽ Շուրջս նայելով մի գյուտ եմ անում

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ
Ա. ԳԼՈՒԽ Փոքրիկ Էմլին
Բ. ԳԼՈՒԽ Հին բեմի վրա նոր անձինք
Գ. ԳԼՈՒԽ Հաստատում եմ մր. Դիկի կարծիքը և ընտրում եմ մի նոր ասպարեզ
Դ. ԳԼՈՒԽ Իմ առաջին զեղծումները
Ե. ԳԼՈՒԽ Բարի և չար հրեշտակներ
Զ. ԳԼՈՒԽ Գերի եմ ընկնում
Է. ԳԼՈՒԽ Թոմի Տրեդլս
Ը. ԳԼՈՒԽ Մր. Միկաբրի ասպետական ձեռնոցը
Թ. ԳԼՈՒԽ Դարձյալ այցելում եմ Ստիրֆորթին՝ իր տանը
Ժ. ԳԼՈՒԽ Մի կորուստ
ԺԱ. ԳԼՈՒԽ Մի ավելի մեծ կորուստ
ԺԲ. ԳԼՈՒԽ Մի երկար ուղևորության սկիզբը
ԺԳ. ԳԼՈՒԽ Երջանիկ
ԺԴ. ԳԼՈՒԽ Տատս ապշեցնում է ինձ
ԺԵ. ԳԼՈՒԽ Լքում
ԺԶ. ԳԼՈՒԽ Ոգևորություն
ԺԷ. ԳԼՈՒԽ Մի քիչ սառը ջուր
ԺԸ. ԳԼՈՒԽ Ընկերության լուծվելը
ԺԹ. ԳԼՈՒԽ Ուիկֆիլդ և Հիպ
Ի. ԳԼՈՒԽ Թափառականը

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ
Ա. ԳԼՈՒԽ Դորայի հորաքույրները
Բ. ԳԼՈՒԽ Չարիք

Գ. ԳԼՈՒԽ Դարձյալ մի հետադարձ հայացք
Դ. ԳԼՈՒԽ Մեր տնտեսությունը
Ե. ԳԼՈՒԽ Մր. Դիկն տատիս գուշակությունը ճշմարտում է
Զ. ԳԼՈՒԽ Լուր
Է. ԳԼՈՒԽ Մարթան
Ը. ԳԼՈՒԽ Տան գործեր
Թ. ԳԼՈՒԽ Մի խորհրդավոր գաղտնիքով պաշարված եմ
Ժ. ԳԼՈՒԽ Մր. Պեգգոտիի երազը կատարվում է
ԺԱ. ԳԼՈՒԽ Մի ավելի երկար ուղևորության սկիզբ
ԺԲ. ԳԼՈՒԽ Ներկա եմ մի պայթման
ԺԳ. ԳԼՈՒԽ Մի նոր հետադարձ հայացք
ԺԴ. ԳԼՈՒԽ Մր. Միկաբրի գործողությունները
ԺԵ. ԳԼՈՒԽ Մրրիկ
ԺԶ. ԳԼՈՒԽ Մի հին վերք և մի նոր վերք
ԺԷ. ԳԼՈՒԽ Գաղթականները
ԺԸ. ԳԼՈՒԽ Բացակայություն
ԺԹ. ԳԼՈՒԽ Վերադարձ
Ի. ԳԼՈՒԽ Ագնես
ԻԱ. ԳԼՈՒԽ Երկու երևելի զղջացողներ
ԻԲ. ԳԼՈՒԽ Ճանապարհիս վրա լույս է շողում
ԻԳ. ԳԼՈՒԽ Մի այցելու
ԻԴ. ԳԼՈՒԽ Մի վերջին հետադարձ հայացք